

բարատայՆիդ գաւառի Բջնոյ վիճակի մէջ, Արասաձորի մօտ: Վանացո եկեղեցին շինուած է սրբատաշ քարերով, սրոյ տանիքը խոնարհած է և մնացած են միայն սրմունքը: Եկեղեցւոյս դրանց և որմոց վրայ կան բաւական թուով արձանագրութիւններ, որոնք կը վերաբերին ժԲ և ժՊ գարուց: — Գեղարքոռնի, 364—366:

ԱՐՏԱՒԱԶՐԻԿ. Տես ԱՐԳԱՒԱՍԻԿ:

ԱՐՏԱՒԱԶՐՈՒՅ ԳԻՒՂ. — Հին գիւղ Սիւնեաց աշխարհի, կը յիշուի իբրև արեւմտեան սահման Կոլխական գաւառի Նորաշինիկ գիւղի:

ԱՐՏԱՒԱՆԵԱՆ ԳԱՒԱՒ. — Վասպուրականի հին գաւառներէն մին:

ԱՐՏԱՒԻՎ, կամ ԷՐՏԵՊԻՎ, Գղ. ARDABIL. — Հնութեամբն նշանաւոր քաղաք Արարատականի, Գաղբէժէն 5 օրուան ճանապարհ զէպի արեւելք, ընդարձակ դաշտավայրի մը վրայ: Գաշաի արեւմտեան հիւսիսային կողմը բարձրացած է Սալալան լեռը 12197 ոտք բարձր ձիւնապատ գագաթով, որուն ստորտը կան բազմաթիւ հանքային ջրի աղբիւրներ: Արտաւիլի դաշտը ծովէն կը բաժնուի Կիլանի անտառապատ լեռնաշղթայով. ծովի և անտառի մօտաւորութեան պատճառով օդը խիստ խոնու է, ձմեռը մեղմ իսկ ամառը բարեխան: Քաղաքս ունի շատ հնութիւններ, այստեղ են Սէֆէլի ցեղի նախահայր Շէյխ Սաֆիէաթին Իոհակի և իւր եղբոր Շահ Իսմայիլի դերեզ մանները, որոց վրայ կառուցուած է Շէյխի կաշուած հրաշալի մզկիթ մը: Երկու դերեզմաններն ևս շինուած են անփուտ փայտէ և թանկագին ծածկութեամբ պատած, իրենց բանդակներով, սակիէ, արծաթէ, փղսկրէ, սատափէ և փերուզէ զարդերով արուեստի հրաշալի գործ մի են: Մզկիթի սրահներէն մին լի է մետաղէ, ձենապակիէ և հողէ հին անօթներով, որոնք նախկին ուխտաւորներու բերած նուէրներու մնացորդներ են. սերիչ սրահ մ'ալ յատկացուած է ձեռագիրներու: Կը պատմեն թէ 1827 թուին, երբ Ռուսները այս քաղաքը գրաւեցին, ձեռագիրներու մէկ կարեւոր մասը Փեթրպուրի փոխադրեցին. այն օրէն ի վեր պարսիկ ժողովրդեան համար ուխտաւեցի լինելէն զարդեր է, համարուելով իբրև բրիտանականներէն պղծուած:

Թէև դարերու ազդեցութիւնը հեղհեղեղ կ'եղծանէ այս շէնքը, և զօղութեամբ կամ անհոգութեամբ կ'անհրեւութեան շատ իրեր, սակայն դարձեալ կրնայ համարուիլ հնութեանց անուշագին թանգարան մը:

Քաղաքին կից արեւելեան հարաւային անկիւնը շինուած է բերդը, հողէ կրկին պարսպներով. հոն է կառավարչի բնակարանը, բանար՝ ուր կը զրկուին Պարսկաստանի այն յանցաւորները, որոնք զխատուելէ ազատ պէտք է մնան: Արտաւիլի շուրջը գտնուող աւերակներէն կ'երեւի, որ ժամանակաւ շատ ընդարձակ և նշանաւոր է եղեր. այժմ՝ ընկած դրութեան մէջ է, տները հողաշէն, վաճառանոցը աղքատ, արտահանութեան ոչ մի բերք չունի. եթէ բիչ մը կենդանութիւն ունի, այն ալ Աթթարա նաւահանգստի մօտ գտնուելովն է: Կիլանի լեռնաշղթան կիրճ մը ունի, որ Կասպից ծովէ սկսելով կ'երկնայ զէպի արեւմուտք մինչև 40 վերտա. գծուար է երեւակայել այսպիսի ճանապարհ մը՝ որ Կասպից ծովի և Արարատականի հազարգակցութեան միակ միջոցն է: Զիերը և Ջորիները միայն կրնան մեծ գծուարութեամբ այս ճանապարհով երթիւնել. այդ պատճառաւ Ուրմիայէն, Մարաղայէն և Գաղբէժէն եկած ուղտի ահագին կարուանները ստիպուած են իրենց բեռները Արտաւիլ թողուլ, ոսկից բիչ բիչ կը փոխադրեն ծովեզերք: Ատարախանէն և Բագուէն եկած սուսական ապրանքներն ալ Աթթարա նաւահանգստէն Արտաւիլ կը բերեն և ապա կը տարածեն Արարատականի միւս գաւառները:

Քաղաքին բնակչաց թիւն կը համարուի 12000, մեծամասնութիւնը թուրք են, կան նաև բիչ թուով Հրեայք: Հայք 31 տուն են 220 հոգի, որք զաղթած են Գաղբէժէն և կ'ըբազին տնտեսութիւն: Գեռ ժԹ դարու սկիզբները թէև կային այստեղ սակաւթիւ հայ վաճառականներ, սակայն չունէին եկեղեցի: 1850 թուականէն վերջ կ'սկսին բիչ բիչ շատնալ Արտաւիլի Հայք: Նշանաւոր եղած է Հայոց մէջ իւր մարդասէր և ազնիւ բնուարութեամբն Պ. Խաչատուր Դանրաւզեանց, որոյ առաջարկութեամբ 1878 թուին շինեցին և աւարտեցին քաղաքին մէջ զեղեցիկ, ապիւստշէն և գմբէթաւոր եկեղեցի մը:



Ունին նաև սևուցնարան մը, թատերական փոքրիկ սրահ մը և գրադարան — ընթերցարան: — Այրարատ անաբերք, ԼԱ. 503—504: Մշակ, Բ. 128:

ԱՐՏԻ. — Հայանուն՝ բայց այժմ այլադաբնակ զիւղ Այրարատայ Հաւնունեաց գաւառի մէջ:

ԱՐՏԻՄԷՎ. Տես ՎԱՂԱՐՇԱՊԱՏ:

ԱՐՏԻՆ. — Այս անուամբ կը կոչուէր ի հնուն Այրարատայ Արագածոտն գաւառի լեռներէն մին:

ԱՐՏԻՅ ԳԱՒԱՌ. Տես ՍՈՂԲ:

ԱՐՏԻՅ ԿՆԻՂ. — Ի հնուն զիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Ս. Կարապետի վանքի մօտ, որ ըստ Յոհան Մամիկանեանի (44) սնէր նաև ամրոց:

ԱՐՏԻՈՒՆՔ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւմտեան կողմը, զբնթէ 50 տուն բնակչօք:

ԱՐՏԻՈՒՆՔ. — Գիւղ Տիգրանակերտի, 30 տուն հայ բնակչօք:

ԱՐՏՈՍ. — Վաստուրականի բարձր լեռներէն մին, որ կ'ինկնայ Ռշտունեաց գաւառի մէջ: Թ. Արծրունին (328) հետեւեալ նկարագիրն կ'ընէ. «Այլ և ի հարաւակողմն կուսէ ամրոցին (Ոստանայ) կայ բարձրաբերձ լեռանն Արտոս, որ ի գարնանայինն հասարակաւորութենէն մինչև ցաշնանայինն եղանակ ամբարեալ պահէ յինքեան զգալարութիւն արմատոց և ծաղկանց, . . . : Նաև ի զլիւս լերինն հասեալ իջանն զեար սահանակարկաջը յարգահօսք, որով սողանի երկիրն առ հասարակ»: Արտոս կը ձեւացընէ Ոստանայ հովիտը, որուն երկայնութիւնն է հիւսիսէն հարաւ 2<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ, և արեւելքէ արեւմուտք զբնթէ 1 ժամ:

ԱՐՏՈՍ. — Գիւղ և լեռ Բարձր Հայոց այժմեան Կամախ վիճակին մէջ:

ԱՐՏՈՍՎ. — Գիւղ Վերին Բասենի (Այրարատ) համանուն գետին վրայ. ի հնուն Հայոց նշանաւոր շէն մը եղած կը թուի: — Այս անուամբ զիւղ մ'ալ կայ Կիւմիւշխանէի հիւսիսային արեւմտեան կողմը:

ԱՐՏՈՍՎ. — Մեծ զիւղ Այրարատայ Վանանգ գաւառի մէջ, գետակի մը եզերքը, Ազգապա լեռան հիւսիսային կողմը: Գիւղիս մէջ կայ հին և մեծ եկեղեցոյ մը անբակչ

ներն. այժմեան բնակիչը Մանախէն եկած Յոյներ են, 70 անուոր:

ԱՐՏՈՅ ԳԵՏ. Տես ՎԱՅՈՅ ՁՈՐ:

ԱՐՏՕՆ. — Կը յիշուի իբրև բերդ Չորրորդ Հայոց մէջ:

ԱՐՏՕՆԿՆ. — Հին անուն գետի մը, Այրարատայ Շարուր գաւառի մէջ, որուն կը համապատասխանէ այժմեան Չանախէր գետը:

ԱՐՏՕՆՔ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւելեան հարաւային կողմը: Ունի 100 տուն հայ, և 6 տուն բուրդ բնակիչ:

ԱՐՏՕՍՐ. Տես ԱՐՆ:

ԱՐՅԱԽ կամ ԱՐՉԱԽ. — Հայոց Մեծաց 15 նահանգաց շատերէն փոքրագոյն է ամուր նահանգն Արցախ, որոյ սահմաններն լին Վազարշակ թագաւորի ժամանակ Երասխ գետը, Արցախեան ամենաբարձր սարերու գագաթնագիծը և Հնարակերտ ամրոցը: Այս սահմանաց և Կովկաս մեծ լեռան մէջ տարածուած երկրի վրայ կուտակալ զբուած էր նոյն Վազարշակ թագաւորէն, Սիսական ցեղէն Առան անուամբ խելացի մարդ մը: Բայց Աղուանից Արշակունի թագաւորութիւնը սկսելով, Հայոց և Աղուանից մէջ հակառակութիւն կը ծագի սահմանաց համար, և նոյն ժամանակ Արցախի և Աղուանից երկրի մէջ սահմանագիծ կ'որոշուի Կուր գետը: Հինգերորդ դարուն Աղուանից թագաւորութեան կ'ենթարկուի ամբողջ Արցախեան նահանգը: Մեծ Սիւնեաց թագաւորները ձգնելով իւրացնել Արցախի մի քանի գաւառները, կը ծագի երկարատեւ հակառակութիւն և խռովութիւն Մեծ Սիւնեաց և Աղուանից թագաւորութեանց և հոգեւոր իշխանութեանց մէջ: Այս դարաւոր խռովութեանց վերջ տարու համար Հայոց Սարգիս կաթողիկոսը ՆԾԵ (=1006) թուին հանեց յատուկ շրջաբերական կոնդակ, յորմէ կ'երևի, թէ նոյն ժամանակները Արցախի սահմանագիծն եղած է Երասխ, Կուր, Խրամ և Հազարի գետերու և Կայնիւի, Տիլիմանի, Գեղամեան ամենաբարձր լեռանց գագաթնագիծի մէջ եղած տարածութիւնն:

Խորենացին (609) թէևս գրած է թէ 13 գաւառ ունի Արցախ, բայց ԻԶ նահանգի գաւառներու շարքին մէջ կը յաւելու « . . . և







և բարերեր գաշտաձև հովիտք. յորս գտա-  
 նին զեռեա կիսակործան և մամապատեալ  
 ամայի վանօրայք և բերգորայք ասնելի իշ-  
 խանաց . . . և ի կողմանէ ամբուլմեան ոչ վրի-  
 պի սք կոչել զսա երկրորդ կովիտս. ծաղկա-  
 ծին են լիբինք, յորպջուք և անտառաշատ» :  
 Արցախեան լեմաշղթայի գլխաւոր սարերէն  
 յիշենք հեռեւեալները. Արուշիւանայ սար,  
 Մուս, Քիթ, Քերթի, Կայեկի լեռներ, Մրդուզ,  
 Ս. Գեորգի սար, Քեարակ, են : Գեաներէն  
 մեծերը են. Կուր և Երասխ, խի գետակ-  
 ներն են. Քեօնդալան, Գարգար, Խաչեկա-  
 գետ, Թարրաւ, Ղարա—ւայ, Կոշրակ, Ու-  
 կանապատի կամ Գանձակ, Բանակ, Ծամ-  
 քոր, Զակաւ, Տաւուշ, Զորագետ, են : Կա-  
 հանցիս մէջ կան ասան աւելի լեռներ և  
 մի քանի հանքային տար և պղ ջրեր : Ար-  
 ցախի բազմաթիւ անտառները լի են կաղնի,  
 ճարի, լայնատերեւի, կազնենի, տիկի,  
 թեղի, հացի, բեխի, կիչի, լորի, տոստի, և  
 այլ ծառերով : Խի սաղուզի, սուտ ընկու-  
 զի և կարմրափայտ ծառերն կը գանուին միայն  
 Կուր գետի անտառի մէջ և Քու կոչուած աւ-  
 դը : Գի և բուսկնի Կիւրխտանի անտառները,  
 Թարթառի ձորերը և Գիգափայտի լեանաշղթ-  
 թայի զէպի Երասխ խանարհած մասերը,  
 մայրի և վայրի սուսի Տիլիմանի անտառ-  
 ները. կազամախի, սոսի, բարախի և փշախի  
 ծառեր միայն գաշտային մասերու մէջ : Պազա-  
 սու ծառերէն յիշենք. ճրս տանձի, ծախ  
 տանձի, ճրս խնձորի, զկոխ (զգեարի), սգնի,  
 սալորի, հանի, տիպնի (արքայակաղնի), ըն-  
 կուզի, մխրատանձի և լիթնի : Երկիրը ա-  
 սաջ կը բերէ սերիշ շատ առեակ թուփեր,  
 կանաչեղէններ և գոյնզգոյն ծաղիկներ : Ան-  
 տառները և սարերը լի են վայրի սուրբ կեն-  
 զանիներով, սրբ են . բօշ, այծ, եղջերու, եզն,  
 կիւնձ, խոզ. ամայի գաշտերու մէջ այժեալն,  
 և անպաստանաց մէջ նապաստակ : Գազաննե-  
 րէն կը գանուին ասիւժ խիտ սակու, վագր՝  
 նոյնպէս, ինձ, բորենի, արջ, գայլ, աղուէս,  
 սեւեականջ, շագալ, սամայր, սիլուս, անկա,  
 խլուրդ, ջրուն : Թռչուններն են. արծիւ,  
 բազէ՛ չորս տեսակ, ցին, սուրբ, չորթան-  
 զոց, բու, հողմահար, գայլագաւ, կաշա-  
 զակ, կոցահար, փասեան, սալամբ, կաքաւ,  
 կոտնկ, արագիլ, ծիծեռնակ, հաւփալ, աղաւ-

նի, տատրակ, լորամարդի, մոշահաւ, ար-  
 տուս, արսս, սազ, բազ, կու, յոպոզ, ս-  
 խակ, լծի, շլածիտ, զեղձանի, շիւշիւրոյ,  
 են. են : Կան շատ առեակ օձեր, մոզէզ, կրիա,  
 խեցեալին, սգնի, կարիճ, և սերիշ զեանոց  
 և միջասաց գանաղան տեսակներ : Հարուստ  
 է նաև ընտանի կենդանիներով՝ սրբ են. զո-  
 մէշ, եզն, կով, արջառ, երկնջ, սլխար, այծ,  
 խոզ, ուզա, ձի, ջորի, էշ, են :

Բերքերն են. ցորեն, գարի, կորեկ, ս-  
 րիզ, հաճար, սորիկ, կաւաւա, սոպ, սիստ,  
 բակրայ, լուբայ, խաշխաշ, վարունց,  
 դում, սոխ, սխտոր, բոզի, ճակնգեղ, գա-  
 զար, գեանտինձոր, սեխ, ձմերուկ, սմբուկ  
 (սե պատինձան), կարմիր տումթ, պղպեղ,  
 տանձ, խնձոր, զեղձ, սերկեկիլ, թուզ, նուսն,  
 ընկուզ, զգեար, արքայակաղնի, խազոզ, դի-  
 նի, օզի, բխժ, մեաքոս, բամբակ, բուրգ :  
 Արցախ սնի նաև հանրեր՝ սակի, արծա-  
 թի, սղնձի, երկաթի, երկանաքարի և ս-  
 րիշ շինութեանց բարերու. Ուսի Ասանձնակ  
 գաւառի մէջ այ կայ նախմահանք : Կահան-  
 զիս բերդերու վրայ տեղեկութիւն կը արտի  
 իրաքանչիւր գաւառի նկարագրին մէջ :


Արցախ նշանաւոր է մեր պատմութեան  
 մէջ իւր մի քանի հոշակաւոր վանքերով.  
 Իւր մէջ է Ամարաս՝ յորում ամբողջուած են  
 Գրիգորիս Աղուանից Կաթողիկոսի նշխարնե-  
 րը. հոն է Գանձասարու վանք, սք մինչև  
 վերջին ժամանակներս կը նախին Աղուանից  
 կաթողիկոսները : — Արցախ, 1—4 Յ/ : Ստորգր.  
 ձիւ հայս. 301—316 : Զաւարեան. Ճանա-  
 պարնորոշքիւն, Բ. 350—366 : Կւ այլն :

ԱՐՓԱ. — Հին և նշանաւոր զիւզ Սիւ-  
 նեաց Վայոց ձոր գաւառի մէջ, համա-  
 նուն գետոյն եզերքը : Օրբելեաններէն յա-  
 սաջ զիւզիս հին բնակիչը կը յիշուին  
 Ախրաւարեան գաղմբն : Օրբելեան իրօտ  
 իշխանը Տարայիճ՝ հոս շինած էր իրեն  
 դարպաս, որ և աստ վախճանելով 1290ին,  
 տարին թաղեցին Կորախանի մէջ : Ասոր  
 ժամանակ Կորախանից Սարգիս եպիսկոպո-  
 սը, յիշատակաց արժանի գործ մի բրաւ,  
 այն է, Արփայի մէջ գետոյն վրայ «կանգ-  
 նեաց կամուրջ գարմանայի, սաշածոյ լիճոք,  
 յոյժ բարձր և ընդարձակ և լայն, հիացու-  
 ցիչ տեսողաց, բազում ծախիւք և անշափ



աշխատութեամբ, հրամանաւ բարեպաշտին և մեծափառ իշխանին Տարսայիճին»։ Պատմի զօլառանական խօսքերն կը հաւաստեն մեծագործ կամրջին մինչև ցայսօր մնացած աւազելի աւերակներն, յորոց կը յայտնուի, թէ եռակամար եղած է և ամբողջ մոխրագոյն սրբատաշ քարերով կառուցուած։ ԺԳ վարուն Արփայի մէջ կը բնակէր նաև կա-

նաւիւն, բաց ի կիսակործան և ամայի և կեղեցիէն։ Ստեփանոսի յաջորդ Յովհաննէս եպիսկոպոսն կառուցած է փոքրիկ և վայելուչ եկեղեցի՝ յանուն Ս. Աստուածածնի, որ 1840ին խախտելով սիրուն կաթուղիկէն ալ խոնարհած է։ Ամբողջապէս շինուած է մարտը սրբատաշ վեղին քարերով, քառակուսի ձևով, ունի չորս լուսամուտ իւրա-



170. Արփա գիւղի աւերակ եկեղեցին :

պանեցի Մահուանեան իշխանաց սրայգաան՝ Ամիրա սրդի Զուրջի, որ Տարսայիճէն 4000 զրամով գնելով Աղբայ կոչուած այգին, նուիրեց ՆորաՎանից, և Ստեփանոս եպիսկոպոսն ալ սահմանեց իրեն համար հինգ պատարագ ամէն տարի անխափան կատարել։ Հին Արփայի մէջ չկայ իշխանական ապարանք և հուսկեամբն աչքի ինկնող մի շէ-

բանչիւր կողմը մէկ մէկ հատ, և երկու դռներ արեւմտեան և հարաւային կողմերը։ Եկեղեցւոյ ներքի կողմը խաչածու է, առանձնակի բարձրացած չորս բոլորակ սիւներ կը վերջնեն տանիքը՝ որ սրբատաշ քարերով սալած է։ Դեռ եւս անխափա մնացած են բեմն, սեղանը, վեմբարն և երկու կողմնակի խորաններն։ Եկեղեցւոյ արեւմտեան դռնէն



կը մտցուէր երբեմն զեղեցիկաշէն ժամատու-  
նը, որ այժմ աւերակ է. նոյն դրան վրայ  
կիսաբոլորի մէջ կայ Տիրամօր քանդակա-  
պատկերը, Յիսուս զիրկը զահի վրայ նստած,  
ամբողջ նրբադուռազ ողկուղներով և ծաղիկ-  
ներով զարդարուած շրջանակի մէջ առնուած:  
Շրջանակէն դուրս քանդակուած է ՉՀԱ  
(= 1322) թուականին շինողի արձանագրու-  
թիւնը. սրիշ արձանագրութիւն մի եւս կայ  
հարաւային դրան վրայ: Գաւթի մէջ կան  
բաւական թուով խաչքարեր և քանդակա-  
զարդ տապաններ՝ հանդերձ արձանագրու-  
թեամբք: Տապանաքարերու արձանագրու-  
թեանց նորագոյն թուականք կը հասնին  
մինչև մեր դարը:

Հին Արփա զիւրը այժմ ամայի է, վասն  
զի ժամանակի ընթացից մէջ զետը մաշած  
ըլլալով այն հողաբլուրն որոյ վրայ կը զըտ-  
նուէր զիւզն, բնակիչք զբեթէ զար ու կէս  
տառջ, Արփայէն քիչ մը աւելի ցած դէպ ի  
արեւմուտք փոխադրուած և նոր զիւր մը  
հիմնած են հնոյն անուամբ: Այժմեան Արփա  
զիւրը սնի 60 տուն հայ բնակիչ, որոնք  
իրենց մեռեալները կը թաղեն հին Արփայի  
զերեզմանատան մէջ: Գիւղիս բնակիչները,  
տարին մէկ անգամ ուխտի կ'երթան հին  
Արփայի եկեղեցոյն, սը պատարագ եւս  
մատուցանել կու տան: — Արփայէն քիչ  
հետո Գարս—սոշ (Սե ջուր) կոչուած աղ-  
բերակի մօտ, քարաբլուր մը ստորտար կան  
երկու նահատակաց ուխտական զերեզման-  
ներ: Վերոյիշեալ աւերակ կամրջի արեւմու-  
կողմն ալ բլրակի վրայ՝ որոյ սահմանն կը  
կոչուի Վարդապետի հող, կայ սրմնայարկ  
խաչարձան մը ՉԾԲ (= 1303) թուականի  
արձանագրութեամբ:

Ժէ գարու սկիզբը Արփայի բնակչաց մէկ  
մասը սրիշներու հետ զերի գնաց ի Պարու-  
կաստան, որոց միջէն Գրիգոր անուամբ մէկը,  
ըստ Աւարել պատմչի (ԺԳ) «պարթեւահա-  
սակ և յաղթանդամ, և սրաինն արի, բանիւք  
և խիւօք հանձարեղ, և հաւատալն և սիրովն  
Քրիստոսի հաստա և ջերմագոյն», կը բնա-  
կէր Փարսոյ գաւառի Խոյիկան կոչուած զիւրը,  
և կը քաջալերէր զերեկիցները հաստատուն  
կենալ իրենց հաւատոց մէջ. որ և ի վերջոյ  
պինգ կենալով քրիստոսական հաւատոց վը-

րձաշխ. Բառարան

րայ, վկայօրէն կատարեցաւ 1621 թուին:  
Այս զիւրէն էր նաեւ Խաչիկ անունով մէկուն  
Աղիղ կոչուած զուտորը, որ սուտ ամբաստա-  
նութեամբ մը յուրացութիւն ստիպուելով,  
հաստա կեցաւ հաւատոց մէջ, և Նախճա-  
ւանէն դուրս մերիւրայէն պարանով կախելով  
վար ձգուեցաւ. քրիստոնեայք վերցնելով  
պատուով թաղեցին, 1679 թուին: — Սի-  
սական, 181—184: Հնոշրիւնք Վանօրէից,  
Թ. 266: Եւ այլն:

ԱՐՓԱ. — Լճակ Սիւնեաց Սողբ գաւառի  
մէջ:

ԱՐՓԱ ՁԱՅ. Տես ԱՍՈՒՐԵԱՆ:

ԱՐՓԱՎԵՏԻՔ. — Լեւ Սիւնեաց Աղահէճք  
գաւառի հարաւ արեւելեան կողմը:

ԱՐՓԱՆԵԱՆ. — Կը յիշէ Եղիշէ (117) Հա-  
յաստանի այն բերդերուն հետ, զորս Հայք  
առին ի Պարսից Վարդանանց ժամանակ:

ԱՐՓԱԵՆ. — Գիւղ Տայոց կող գաւառի  
մէջ: Այժմեան բնակիչք քուրդ են 36 տուն:

ԱՐՓԱՌՈՒՏ. — Հայքանակ զիւր Խարբեր-  
զու (Փոքր Հայք) վիճակին մէջ: Բնակիչք 70  
տունն աւելի են. սնին Ս. Գեորգ եկեղեցի  
մը: — Այս անուամբ Հայոց զիւր մ'ալ  
կայ Շամախու մէջ:

ԱՐՓԻ. — Հայքանակ փոքր զիւր Աղձնեաց,  
Մօտիկան գաւառակի մէջ:

ԱՐՓՈՒՆՁ. Տես ՍՈՂՔ:

ԱՐՔԱՅԿԱՂՆԻ ՎԱՆՔ. — Կիլիկիոյ եր-  
բեմն հոչակագանձ և եպիսկոպոսանիստ վան-  
քերէն մին էր սա, որ կ'ինկնար Մսիսի ա-  
րեւելեան հարաւակողմը Նուր լեռան Պող  
Աղաճի կոչուած կաղնիներու, սօսիներու,  
բուկնիներու, թթեմիներու և ձիթեմիներու  
անտառի մէջ: Կաղնիներու մէջ ծածկուած  
լինելուն պատճառաւ անշուշտ այսպէս կո-  
չուած է. կը կոչուէր նաեւ Խճկտոր (այ-  
սինքն Հաճկատար), ուսկից կը զուշակուի թէ  
եկեղեցին նուիրուած էր Ս. Աստուածածնի,  
վասն զի սովորաբար Հաճոյակատար մակղի-  
րը Տիրամօր կը տրուի: Յայանի չէ վանացս  
սկզբնաւորութեան պատմութիւնը, բայց կը  
յիշուի ԺԲ զարու կիսուն. 1167ին, Մեծին  
Լեւոնի հօր՝ Ստեփանի խաշուած զիակը  
բերին հոս թաղեցին: Նոյնպէս 1203ին հոս  
հանդուցաւ Գրիգոր Ալիբաա կաթողիկոսի  
մարմինը: Նոյն ժամանակի վանահայրն Գա-



ւիժ արքեպիսկոպոս, որ Լեւոնի թագադրութեան հանդէսին ներկայ եղող եպիսկոպոս, ներս շարքին մէջ առաջին նշանակուած է, քանի մը տարի վերջը կաթողիկոսական զահը բարձրանալով իւր հայրապետութեան առաջին երկու տարիները (1206—8) բնակեցաւ վանացս մէջ:

Չնուազանց յիշատակարաններու մէջ վանքս կոչուած է «... հոյակապ մայրաքաղաքացեալ սոշրք սեւապատս Արքայա-կաղնիս»: այնչափ բարձր և պատուաւոր անուններ ունենալուն մէկ պատճառն ալ այն է, որ Լեւոնի ժամանակ Մամեստիա քաղաքը, որուն եպիսկոպոսը կը նստէր վանացս մէջ, զեռ Հայոց մայրաքաղաքը կը համարուէր:

Արքայակաղնի վանքը ունէր բազմաթիւ միաբաններ, իրեն գրազարանը լի էր հագուագիւտ ձեռագիրներով, և մեզուաջան աշխատակր կրօնաւորները շարունակաբար կը գրէին և կ'ընդօրինակէին ուրիշներ: 1269 տարւոյ մեծ երկրաշարժէն սաստիկ վնասուեցաւ մենաստանս, ինչպէս նաեւ իւր շուրջը գտնուած բազմաթիւ ճգնարանները, աղօթանոցները կործանեցան: Ժամանակակից գրիչ մը ողորալով կը նկարագրէ այդ տխուր պատահարը: Այս կործանմանէն վերջ թէեւ յոմանց նորոգուած կը համարուի Արքայակաղնի վանքը, սակայն ինչպէս կ'երեւի չէ կարողացած երկրորդ անգամ հասնիլ իւր նախկին պայծառութեան և փառքին:

Վանքս մեծ հռչակ ստացած է իբրև հայկական երաժշտագիտութեան կեդրոն. բազմազան եղանակներով մեղեդիներ և այլ եկեղեցական երգեր հնարուած են Արքայակաղնիի երաժշտապետներէն և երաժշտասերներէն: Այս երգերը յատկապէս կը կոչուին Մանրոշառնէք և Կցոշրդք. բազմաթիւ օրինակներ ընդօրինակուած են այդ երգերէն, բոլոր գեղեցիկ դունազոյն ոսկենկար զարդերով, և տարածուած են թէ Կիլիկիոյ և թէ Հայաստանի միւս վանքերը: Մի և նոյն երգը քանի մը տեսակ եղանակներ ունէր և ամէն եղանակ առանձին անուամբ կը կոչուէր: Արքայակաղնի վանքի եղանակներու տեսակն կը հասնէր եօթանասունի. մեր այժմեան եկեղեցական երաժշտութեան մէջ

անոնցմէ հազիւ մէկ քանին մնացած են: Սխռուան, 253—254:

ԱՐՔԱՅԻՅ ԳԱՒԱՌ. — Մոկաց աշխարհի գաւառներէն մին:

ԱՐՔԱՌԻՆԷՐ. Տես ՍՈԳՔ:

ԱՐՔԱՎԱՆՔ կամ ԱՐԳԱՎԱՆՔ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ գաշտի մէջ: Բնակիչք Հայք են 60 անլ աւելի, բայց աւարառութեանց և թշուառութեանց են թակայ:

ԱՐՔԵՎԱՆ. — Հայանուն՝ բայց թաթարերն (200 տուն) զիւղ Բագուայ կուսակալութեան մէջ: — Այս անուամբ զիւղ մ'ալ կայ Վրահայաստանի մէջ:

ԱՐՔՈՅ. Տես ՀԱՐԱՆԻ և ԱՂԱՀԵՃՔ:

ԱՐՔՈՅՔԱ. Տես ՃԱՀՈՒԿ:

ԱՐՔՈՒՆԱԳԻՏ. — Աւան Սիւնեաց Աղահէնք գաւառի մէջ, զոր յիշէ Կողանկայտուցի (Գ. Ի) Վիլիթ ստիկանին արշաւանքը պատմած ժամանակ: Գիւղիս եկեղեցին կը կոչուէր Ս. Գրիգոր:

ԱՐՔՈՒՆԱՇԷՆ. — Հին Գիւղ Գուգարաց Չորափոր գաւառի մէջ: Հայրենիք՝ Սահակ Գ կաթողիկոսի:

ԱՐՔՈՒՆԻ. — Գիւղ Կարնոյ (Բարձր Հայք). ունի 25 տուն հայ, և Ս. Յակոբ եկեղեցի մը:

ԱՐՔՈՒՆԻՍ. — Գիւղ Օլթիի (Տայք) գաւառի մէջ, այժմեան բնակիչք թուրք են, 51 տուն:

ԱՐՍՍ. — Գիւղ Տուրուբերանի Վարաժնունիք (Խնուս) գաւառի մէջ, 50 տուն բնակչօք, յորոց 10ը թուրք են և մնացածը հայ: Հայք ունին նորաշէն եկեղեցի մը և ծագիոց մը 40—50 ուսանողաց համար: Ժողովուրդը ջերմեռանդ է, և մեծ աւր ունի ուսման և գաստիարակութեան: Գիւղիս գերեզմանատան մէջ աւերակ հին եկեղեցի մը կայ, շինութեան թուականն անձանօթ է, բայց կը համարուի ՃԵ դարու գործ, որոյ շէն եղած ժամանակ, կը պատմուի, թէ զիւղս ունէր 250 տուն հարուստ բնակիչ: Տապանաբարերը շինուած են ձիու կամ ուղտի կերպարանօք: Արօսի արեւմտեան հարաւակողմը երկու բարձնկէց հետո լերան մը լանջին մէջ կայ միակտուր քարէ փորուած եկեղեցի մը, որոյ արձանագրութիւնք բոլոր



բովին անընթեանը զարձած են. մէջը ցարդ կան մկրտարանը և խորանը: Կը տեսնուին նաև քանի մը հին խաչեր եկեղեցւոյս պատերու ներսի կողմերուն վրայ: Գիւղիս արեւելեան հարաւակողմն ալ մէկ ժամ հետո կայ ընտիր քարահանք, որոյ զիւրատաշ քարերէն շինուած են, այժմեան եկեղեցւոյ շորս սիւները 6 մետր միակտուր բարձրութեամբ: — Նկարգր. Ոչղեւորոչքիւն, Ա. 28—29:

ԱՐՐՐ. — Սիւնեաց Վայոց ձոր գաւառի հին զիւղերէն մին:

ԱՐՐՐԱԿ, ԱՐԱՒԻԱԿ կամ ԱՐԱՒՐԱԿԱՅՈՅՈՅ ՔԱՂԱՔ. — Ի հնունն այս անուամբ քաղաք մը կար Փոքր Հայոց մէջ, Եկեղեաց գաւառի մօտ, ուսկից էր Ս. Եւստրատիոս, որոյ մարմինը նահատակութենէն վերջ հոս ամփոփեցաւ տապանի մէջ:—Յայտմ. 13 դեկտ. ԱՅՈՒՆԵՐՍ. — Պարսկահայոց հին գաւառներէն մին:

ԱՒԱԳՎԱՆՔ. Տես ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔ. Վ. ԱՒԱԳԱՆ կամ ԱՒԱԳՎԱՆ. — Գիւղ Լեռնային Կիլիկիոյ, Զէյթունի արեւմտեան հարաւակողմը. նշանաւոր մեծութեամբ և բազմամարդութեամբ. թուրքերէն կը կոչուի Մըխալ կամ Մոռդալ: Բնակչաց թիւն 3000ի կը հասնի, ունին եկեղեցի մը Ս. Սարգիս:

ԱՒԱԳԱՆԱՆ ԱՂԲԻՐ. — Փոքրիկ վտակ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, որ անցնելով Արկազն զիւղի հարաւային կողմի գաւառերէն և Մալիշիայի ջրաղացներէն կու գայ Մոզն զիւղը:

ԱՒԱԳՆԵՐ կամ ԵԶԻՏԱԿ. — Գիւղ Լեռնային Կիլիկիոյ, Զէյթունէն երկու ժամ հետո: Բնակչաց թիւն 200ի կը հասնի:

ԱՒԱԶԱՆ. Տես ՍՈՒՔ:

ԱՒԱԾ. Տես ԱՐԱԾ:

ԱՒԱՆ. — Նշանաւոր աւան Այրարատայ Կոտայք գաւառի մէջ, Երեւանի մօտ արեւելեան հիւսիսային կողմը, համանուն Աշակ կամ Գրքագուրաց զետակի եկերբը: Յովհաննէս կաթողիկոսը քաղաքագեօղ կոչած է զիւրս: Մովսէս կաթողիկոսի մահէն վերջ, երբ Յոյները և Պարսիկները վերստին մեր աշխարհը բաժնեցին, և յունական մասին առաջնորդ եղաւ Յովհաննէս Սիւնալիան՝ սա հայրապետական աթոռը հոս հաստատեց և փառաւոր եկեղեցի մը շինեց: Յետոյ պա-

տերազմի ժամանակ փախաւ Կարին՝ ուր ուրիշներու հետ գերի բռնուելով տարուեցաւ Ահմատան՝ և հոն մեռաւ 610 թուին ու մարմինը բերին թաղեցին Աւան զիւղը իւրաշէն եկեղեցւոյն մօտ: Նոյն ժամանակները Աւանայ վանաց երէցն էր Յուսան կամ Յուսան անունով մէկը, որ գտնուեցաւ Արաահամ կաթողիկոսի ժողովի մէջ: Գիւղիս մէջ ցարդ կան հին քարաշէն եկեղեցւոյ աւերակներ, և արտաքին սրմոյն վրայ 1285 թուականաւ արձանադրութիւն: Այժմեան եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին. բնակչաց թիւն 500ը կ'անցնի: — Այրարատ, 292—3: — Այս անուամբ ուրիշ զիւղ մ'ալ կայ Արագածոտն գաւառի մէջ, որոյ բնակիչք թաթար են:

ԱՒԱՆ-ԱՄՈՒՐ. — Գիւղ Աղուանից Հողի գաւառի մէջ Կոկիսոսի աջ ափին վրայ, Վանքաշինի զմայց: Գիրքն ամուր, տեսարանն սքանչելի, օդն, կլիման և ջուրը պատուական: Բնակչաց թիւն 1000ի կը հասնի, ունի նորաշէն եկեղեցի մը Ամենափրկիչ, և միգասեան ուսումնարան մը որ կը կոչուի Գեորգեան:

ԱՒԱՆԻԿ. — Հին զիւղ Այրարատայ Մազազ-Ոստան գաւառի, որ երբեմն եղած է կալուած Հաւուց թառայ և ապա թեմ Խոր Վիրապի վանաց:

ԱՒԱՆՃՈՒԿ. — Ըստ Վախուշտի հին զիւղ Գուգարաց Տաշիր գաւառի հիւսիսային կողմը, Բողնոփորի կամ Գմանիքի մէջ:

ԱՒԱՆՑ կամ ԱՒԱՆՍ. — Վասպուրազ կանի Տոսպ գաւառի զիւղերէն առաջինն է, որ Վան քաղաքէն հազիւ <sup>3</sup>/<sub>4</sub> ժամ հետո է, ծովեզերքը զէպ ի հիւսիս: Թուրքերը զիւրս կ'անուանեն Իսկելի քեօյիւ այսինքն նաւաանագատի գիւղ ըստ սրում զիւրս է առաջին նաւահանդիստ ոչ միայն Վանայ այլ և ամբողջ Բզնունեաց ծովակին: Գիրքն տափարակ է և տեսարանն հիանալի. ունի պաղատու ծառատաններ և բաւական թուով մեծամեծ և պատուական խաղովի այգիներ: Գիւղիս սկզբնաւորութիւնը շատ հին լինելու է. Մեծին Ներսէսի պատմութենէն կը տեղեկանանք, որ 360 թուականի ժամանակները, Մեսրոպ երէցի զրածի համեմատ, սուրբ հայրապետը Վասպուրականի կողմերը



երթալով շատ օրեր կեցեր է այս մեծ և ա- նուանի գիւղաքաղաքս՝ խիստ հաճնելով ասոր ծովահայեաց սրանչելի զրիցը, երկնաման եկեղեցեաց և առողջարար ջրերուն, որ և ասկէ մեկնած ժամանակ օրհներ է Աւանս բոլոր իւր սահմաններով ըսելով «Մի նոռա- զեցիս ի բարոտրեանց քոց յաշխուեան»:

Ծովակի կատաղի այրքները երբէք հան- զիստ չեն թողուցած զիւլիս բնակիչները, որոնք շարունակ ստիպուած են իրենց խեղճ անակները ծովեզրէն գէպ ի վեր փոխադրել: Այժմ՝ զրեթէ բոլորովին փոխուած է Աւանց իւր նախկին տեղէն. Ս. Յովնանենու անուամբ հին եկեղեցին ալ զրեթէ 70 տարի առաջ ծովի իւր մէջն առաւ: Այժմեան եկեղեցին եւս կը կոչուի Ս. Յովնանենու՝ որ նախորդ եկեղեցիէն 60—70 մետր հեռու կառուցած են չափաւոր մեծութեամբ և վայելուչ զիրքով. մօտը կայ վարժարան մը, որուն աշակեր- տաց թիւը կը հասնի 80ի: Աւանց 300 տու- նէն աւելի բնակիչ ունի, ամբողջ Հայ, սրբ խիստ ճարտար են և ընդհանրապէս կը զրտ- զին նաւավարութեամբ, երկրագործութեամբ, այգեգործութեամբ և բորակ հանելու արհես- տով: Եւստիւրոթեան մէջ այնչափ ճարտար են, որ զիշերուան ամենախաւար առններն անգամ ծովուն վրայ ճամբորդութիւն կ'ընեն առանց կողմնացոյցի: Վանայ ծովային վա- ճառականութեան միակ ճանապարհն և զուն լինելով աշխոյժ և շարժուն վիճակ մ'ունի: Բորակագործները ծովակի մակերեւութէն ա- լելի ցած ածուներու մէջ կ'անեն ջուրը, ուր արեգական ջերմութեամբ ջրային մա- սունքն գոլորշիանալով 120 օր վերջը, ածու- ներուն երեսը կը մնայ 3—5 մատ թանձրու- թեամբ ծովային աղը կամ բորակը: Այս բորակը ապա սղոցով քառակուսի կտորնե- րու վերածելով վաճառելու կը զրկեն ի Վան, Բաղէշ, Սղերդ և մինչեւ Պարսկաստան: — Արժոշի Վասպուրական, 262—264: Եկա- րագր. Ուղեւորութիւն, Բ. 202—212:

ԱՒԱՐԱԳԵՏՔ. Տես ԲԱՂՔ:

ԱՒԱՐԱՍ. — Հին գիւղ Սիւնեաց Աղահէճք գաւառի մէջ:

ԱՒԱՐԱՅՐ. — Հոշակաւոր և պատմական դաշտ Վասպուրականի Արտազ գաւառի մէջ, որոյ վրայ կատարուեցաւ Վարդանանց մեծ

պատերազմը: Եոյն գաւառի մէջ էր նաև համանուն Աւարայր գիւղը, Տղմուս գետի մօտ, զոր կը յիշեն մեր պատմիչները: Ըն- դարձակ բննական յօդուածներ գրուած են Աւարայրի վրայ գանազան անգամներ ազգա- յին թերթերու մէջ: — Ստորգր. Նիկ Հայ. 205: Հիշատածք, Գ. 117—121: Արա- րատ անագիր. Ե. 423—6, 463—470. Զ. 185—188: Եւ այլն:

ԱՒԱՐԻՍ. — Կը յիշուի Մոկաց մէջ:

ԱՒԵԽՈՒՍ. ԱՅՏՈՒԱԾԱԾԻՆ. Տես ԱՎԵԽՈՒՍ, ԱՒԵՍՈՐ. Տես ԱՒԻՍԱՍ:

ԱՒԵՏԱՐԱՆՈՅ ԱՒԱՆ. — Գիւղաքաղաք Արցախի Վարանդա գաւառի մէջ, Շուշիէն հեռու է 17 վերստ. այլազգիք Չանախչի կը կոչեն: Կառուցուած է Քեօնդաւան ձորի ձախ եզերքի վրայ, արեւելահայեաց գիր- քով. օդն, կլիման և ջուրն պատուական են: Եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին, կառուցուած է չորս սիւներու վրայ՝ փոքրիկ կաթուղիկով. զրան ճակատի քարին վրայ կայ «ԹՎ. ՌՃ.» եկեղեցույս մէջ կան եր- կու աւետարան, մին ՌՃԻ ( = 1671 ), և միւսն ՌՃԸ ( = 1659 ) թուին գրուած Քա- րահատ գիւղի մէջ: Բնակչաց թիւն է 1822 հոգի, բաժնուած 265 տան, որոնք կահա- տրուած են մեծաւ մասամբ զեղեցիկ և եւ- րոպական ճաշակով: Խանութներն շինուած են վայելուչ. կան նաև երեք մետաքսի գոր- ծարաններ: Բնակիչք կը պարապին երկրա- գործութեամբ, անասնապահութեամբ, այգե- գործութեամբ և առեւտրով. գիւղաքաղաքիս մօտ կը գտնուի Կուսանաց Ասպաւոր (Տես ի կարդին) և հին մէլիքներու մի քանի ա- պարանքներ, որոց սմանք կտրճանած են: Արեւմտեան հարաւային կողմն է հին գերեզ- մանատունը ուր կան բազմաթիւ ուշադրու- թեան արժանի քանդակագործ ատպանա- քարեր: — Արցախի 94—95: Վարանդա, 31—33:

ԱՒԵՏԵԱՅ ԲԱՌԻՐ. Տես ԱՐԵՒՈՅ ԱԱՌԻՐ:

ԱՒԵՏԵԱՅ ԽԱՁ. — Այս անուամբ տեղ մը կը յիշուի Այրարատայ Ծաղկոտն (Տիապին) գաւառի մէջ, ուր ըստ Յայսմաւուրաց (27 օգոստ) երեւցած է Գրիստոս սրբոց Սուրբա- սանց:

ԱՒԵՐ ՎԱՆՔ. — Վասպուրականի Արճի-



շակովիտ գաւառի մէջ, Արճիշէն ժամ մը հետո, որոյ եկեղեցին կանդուն է և շինուած է ՊՂԱ (= 1442)թուին, ինչպէս կը ցուցնէ արձանագրութիւնը:

ԱԻԵՐ ՔԱՂԱՔ. — Այսպէս կը կոչուին հին Արծն քաղաքի աւերակները:

ԱԻԵՐԱԿԻ. — Հայաբնակ գիւղ Վասպուրականի Տոր գաւառի մէջ, Վանայ շրջակայքը: Բնակիչք 100 ասուն, ունին Ս. Ստեփանոս քարաշէն եկեղեցի մը:

ԱԻԵՐԱԿԻ կամ ԷՎԷՐԷԿ. — Գիւղ Բաբերդի (Բարձր Հայք). վերջին դէպքերէն առջև ունէր 82 ասուն հայ բնակիչներ և 2 եկեղեցի:

ԱԻԵՐԱԿԻ. Տես ՃԱՀՈՒԿ:

ԱԻԵՐՔ. Տես ԲԱՂՔ:

ԱԻԶԱՂԻՒԻՒՐ. — Հայաբնակ գիւղ Տուրուբրանի Տարօն գաւառի մէջ, 100 անէն աւելի բնակիչ ունի: — Այս անուամբ ուրիշ գիւղ մ'այ կայ նոյն գաւառի մէջ:

ԱԻԶՈՒՏ. — Գիւղ Տուրուբրանի Տարօն գաւառի մէջ, 40 ասուն հայ բնակչօք, կան նաև 16 ասուն քուրդ: Գիւղէս կէս ժամ հեռու բլրակի մը վրայ կայ եկեղեցի մը, որոյ գիմաց Աւգարիմ անուամբ անցք մը կայ:

ԱԻԷՃՈՒՐԻԿ. — Գիւղ Խորխոտունեաց գաւառի մէջ, Սիփան լեռան հիւսիսային աւրեմտեան կողմը:

ԱԻԷՇ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, զոր 1261 թուին Լիպարտի որդին Սմբատ Անպատ գիւղի հետ նուիրեց Նորափանից: Այժմ թաթարաբնակ է և կը կոչուի Հաւուշ կամ Ալուշ:

ԱԻԸՆԳԱՆՔ. — Գիւղ Մոկը Առանձնակ գաւառի մէջ, Ապարանից սիսի մօտ, որուն եկեղեցին, շարականի մը յիշատակարանին համեմատ, նուիրուած էր սրբոցն Պետրոսի Պօղոսի և Գէորգայ զօրավարի:

ԱԻԸՆԿԱՅ. Տես ԱԻՆԻԿ:

ԱԻԹՄՆԱ. — Վանք Տիփրիկոյ գաւառի մէջ: 1348 թուականաւ յիշատակարանի մը մէջ կը յիշուի վանացս եկեղեցին Ս. Աստուածածնի անուամբ:

ԱԻԺԷՆ. — ԱՂԷԷՃՔ:

ԱԻԻՍԱ կամ ԱԻԵՍՈՐ. — Ծնբուշի վանաց առաջնորդ կը դրուի 1703ին Աբիսոսցի կամ Աւետարեցի Եղիազար անուն վարդապետ մը:

ԱԻԱՏ. — Հին գիւղ և գետ Գուգարաց Թոնդը գաւառի մէջ:

ԱԻԱՌԻ կամ ԱԻԱՌՅ. — Գիւղ Վարին կեղի:

ԱԻԿԱՄԻ կամ ՕԿԱՄԻ. — Բազմամարդ աւան Այրարատայ Բասն գաւառի մէջ, Ծիրանիս լեռան ստորոտը, զոր կը յիշէ Լասարիվրոցին (Գլ. ԺԸ). այժմ կը կոչուի Ոկամի:

ԱԻԿԱՐՄ. — Գիւղ Սասնոյ:

ԱԻՆԻԿ կամ ԱԻԸՆԿԱՅ ԳԵՕՂ. — Այրարատայ Հաւուսնեաց գաւառի իշխանանիստ վայրն է, որոյ այժմեան բնակիչք մահմէտական են և կը թուին սերունդը Հայոց: Ամբողջ գիւղը ձեւացած է 60 կէս ստորերկրեայ աներէ: — Աւելի որ ըստ թուրքաց ձիվան գալիսի կը կոչուի գիւղիս մօտ բարձր ապառածի վրայ գտնուած հին ամրոց մ'է: — Ն. Հայս. 89: Ստոր. ձիվ Հայս. 386:

ԱԻՇԱԿԱՆ. Տես ՕՇԱԿԱՆ:

ԱԻՇԱՐԱՆ Տես ԲԱԳԱՒԱՆ:

ԱԻՇԷՆ. — Այլ կերպ դրուած Ալշէնի, զոր տես ի կարգին:

ԱԻՍԻ. — Գիւղ Աղբակ գաւառի, ուր Ս. Խաչի վանքի մէջ կը թաղուի Վասպուրականի Աշոտ իշխանը ՅԻԷ թուին:

ԱԻՍԻԿ. Տես ԹԻԿՈՒՐԱՆ:

ԱՒՍՏՐԻԱ. Գրմ. OSTERREICH. Գղ. AUTRICHE. Իտ. AUSTRIA. — Եւրոպոյի գլխաւոր արեւմտեաներէն մին, որ Հունգարիոյ հետ միացած կը ձեւացնէ կայսրութիւն մը, որոյ մայրաքաղաքն է Վիեննա: Լեւոն Միծագործի օրով կը յիշուի նաև Աւարիոյ դքսին գետպանը ի Կիլիկիա, բայց յայտնի չէ վաճառակա նուժեան թէ ուրիշ գործի համար. նոյնպէս յայտնի չէ միջին դարուց մէջ Հայոց Աւարիացուց հետ վերաբերութիւն ունենալն. բայց անտարակոյս Լեհահայոց վաճառականները վերաբերութիւն ունեցած են Աւարիոյ հետ: Եւրոպայի ժամանակ սկսած են Զուգայեցիք երթեկեկել. ինչպէս 1715ին Յովն. որդի Առեռեաց Վենեակէն հոն կ'երթար, և ազգայիններէն սմանք երզնուրով նօտարի գիմաց կը վկայեն թէ բարի և ուղղափառ բրիտանեայ է նա: Նոյն դարու վերջերը և ԺԸի սկիզբը Ներսէս անունով հայ քահանայ մը կայսեր շատ հաճոյանալով անոր դրան երեց-



ներուն կարգը անցած էր: Նոյն ժամանակները հոս կը գտնուէր նաև Տէր Յովնանէն անունով քահանայ մը, որ 1719 թուին 114 տարեկան լինելն կը վկայուի: Անկէջ վերջ սակայ կը յիշուին հայ երիցունը Վիեննայի մէջ, Տէր Միկաս 1729իև, Տէր Մանուէլ Քեֆեցի, † 1740, Բարդողիմեոս վարդապետ 1733. Քարոզողաց կարգէն Հ. Գաւիդ, 1737. և այլն: Այս միջոցիս վաճառակա նութեան համար ոչ սակաւ Հայք Վիեննայի մէջ հաստատուելով, քաղաքին արքեպիսկոպոսը իրենց սատու մը տուաւ 1752ին, Ս. Ստեփանոս մայր եկեղեցւոյն մօտ: Այս ժամանակի մէջ եղած հայերէն յիշենք մի քանին. Առաքել սուրհանդակ (courier), Մարգար Ղանվեհի (1737-51), Յարոչքիւն Պարսկահայ ակնաւաճառներու մանեաթիկ (1749), Օգոստինիոս Աղաւաղեան արքունի թարգման: Հայերը 1771ին Աւստրիոյ կայսրէն առանձին հրովարտակ ստացան Վիեննայի մէջ վաճառականութիւն ընելու համար: Հայոց պիտուր անուտուրը կամ արուեստն էր ոսկերչութիւն և ակնաւաճառութիւն, ինչպէս է նաև այժմ: Նշանաւոր է Վիեննայի մէջ Միլիթարեան Հարց մեծ տպագրատունը, որ տպուած են և կը տպուին ոչ միայն ազգային բազմութիւն գրքեր, այլ և օտարազգի գրքեր և թերթեր: Միլիթարեան Հարց մենաստանը որ թրիեստէն փոխադրուած է աստ Եթ գարու սկիզբը, կը կոչուի Պաշտպան Ս. Աստուածածիւն: Բաց ի տպարանէ անուանի է ձեռագրատունը, գրատունը, և հին գրամոց հաւաքածոյն: Թրիեստ կամ Տրիեստ քաղաքն որ Աւստրիոյ կայսրութեան առաջին ծովային քաղաքն է, ասպնջական եղաւ նաև հայ վաճառականաց թէ՛ անցեալ և թէ՛ ներկայ դարուս մէջ: Միլիթարեանը հոն բնակելն առաջ (1775), մայր եկեղեցւոյն (Ս. Յուստոս) մէջ թաղուած են կարսպետ և պիսկոպոս Բաղիշոյ (1756) սուրբ վարքով և մեծ համբաւով, նոյնպէս Յարոչքիւն Բաւեցի (1796): Այժմ ևս քաղաքին մէջ կան բաց ի մի քանի հայ վաճառականներէ և ընտանիքներէ, մի քանի Հայոց խաւաքացած սերունդներ, որոց մէջ նշանաւոր է Հերմի-

լեւանց տունը, որ պատուուած է նաև քաղաքական պաշտօններով: — Սիւսկան, 451-2: ԱՒՏԻ. Տես ՈՒՏԻ:  
 ԱՒՏՈՒՌՆ. Տես ԲԱՂՔ:  
 ԱՒՏՈՍԿ. — Գիւղ Տայոց Պարտիզացիոր (Օլթի) գաւառի մէջ. բնակիչք թուրք են:  
 ԱՒՐԱՆ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ գաղտին մէջ. 150 անէն աւելի հայ բնակիչ ունի:  
 ԱՓԱՍԱՐ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ:  
 ԱՓԿԷՍ կամ ԱՓԿԻՍ. Տես ԱՐԵՒԻՔ:  
 ԱՓՆԱԳԵՂ կամ ԱՔՆԱԳԵՂ. — Գիւղ Այրարատայ Նիզ գաւառի մէջ, Քասաղ գետոյն եզերքը, Պաղարճուս գիւղի արեւելեան կողմը, երեք մղոն հեռաւորութեամբ: Գիւղիս մօտ Տալու գետակը կը խառնուի Քասաղի հետ: Զարբարիա պատմիչ և Սիմէոն կաթողիկոս կը գրեն Աքնապետ: Ունի 111 տուն հայ բնակիչ, 866 հոգի: Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի:  
 ԱՓՇԵՐՈՆ. Տես ԲԱԳԱՒԱՆ:  
 ԱՔԱՅ. — Կը յիշուի Սիսիանձորի մէջ:  
 ԱՔԱՂԱՅՈՒ ԿԱՍԱՐ. — Այս անուամբ բլուր մը կը յիշէ թ. Արժրունին (242):  
 ԱՔՈՒՆԻՍ. — Գաւառի կամ Նօրաբղի մէջ: Տեղեկութիւնք կը պակսին:  
 ԱՔՈՒՌԱՒԱՆ. — Այսպէս կը կոչէ թուոնք ֆոր Ակոսի գիւղը:  
 ԱՔՊՈՒՂԱՂ կամ ԱՂՔՈՒՂԱՂ. — Փոքրիկ հայաբնակ գիւղ Աղուանից Կոկիտան գաւառի մէջ: Օգն, կիման և ջուրը վատ ատող: Բնակչաց թիւն է 120, որք գաղթած են Արցախի և Սիւնեաց մի քանի գիւղերէն: Եկեղեցին նուիրուած է Ս. Մեսրոպի:  
 ԱՔՓԻԱՔԵԱՆ. — Գիւղ Աղուանից Խեչնի գաւառի մէջ, շինուած է Պօղ-տաղի լեռնաշղթայի վրայ. տեսարանն հիանալի, օգն, կիման և ջուրն պատուական: Բնակչաց թիւն է 460, որոց նախնիք գաղթած են Զորաբղի, Խաչենի և Խոյի գաւառներէն: Եկեղեցին կը կոչուի Ս. Միկաս: Գիւղիս արեւմտեան կողմերը, իրարու մօտ կան մի քանի գիւղատեղիք և աւերակ եկեղեցիներ ու հանգաւարաններ: — Աղուանք, 231:  
 ԱՅԻՌՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. Տես ԳԱՐԱՀԻՍԱՐ:



ԲԱԲԱՆՔ կամ ԲԱԲՈՒՆՔ. Տես ՃԱՀՈՒԿ, ԲԱԲԱՋԱՆ. — Գիւղ Գուգարաց Չորսփոր գաւառի մէջ:

ԲԱԲԱՏՈՒԼԱ. Տես ՊԱՊԱՏՈՒ:

ԲԱԲԱՔԻՇԻ կամ ՊԱՊԱՔԻՇԻ. — Գիւղ Այրարատայ վարաժնունիք գաւառի մէջ, վտակի մը եզերքը. 65 տուն հայ բնակչօք, որք ունին Ս. Յովնանեկ եկեղեցի մը: — Այս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ Նիզ գաւառի մէջ, որոյ բնակիչք թաթար են 68 տուն:

ԲԱԲԵՐԴ, ԲԱՅԲԵՐԴ կամ ՊԱՅՊՈՒՐԹ. BAÏBOURT. Թ. بايبرث. Յն. Παύπερτε կամ Βαυπερδων. — Ի հնումն նշանաւոր բերդաքաղաք Հայաստանաց, և այժմ՝ գլխաւոր քաղաք կամ աւան համանուն գաւառակին: Կառուցուած է Սիւսի ծովէն 5040' բարձր բլրակաձեւ գաշտալայրի մը վրայ. արեւելեան և արեւմտեան կողմերէն պարսպեալ է ցած լեռներով, իսկ հիւսիսային կողմը արձանացած է բարձր բարաշիւ մը՝ երկննալով արեւմուտքէ արեւելք. միայն հարաւային կողմը ազատ և հարթ է, ուսկից կ'երթըցուի կարին՝ որ կ'ինկնայ քաղաքիս արեւելեան հարաւային կողմը 121 հզրմ. հեռաւորութեամբ Տեղույս գիւրքը, անունը և մերձակայ բովոց սահմանները կարծի կու տան թէ Հայոց հնագոյն քաղաքներէն մին լինի սա, և թերեւ շինուած լինի Հայկազն Երսնանդեան Տիգրանի Բար որդիէն, կամ լաւ իւր Բայ անուամբ մէկէ մը, վասն զի

հնագոյնները Բաբերդ կ'անուանեն. աւանդութիւն մ'ալ կայ, թէ Սկիւթացիք շինած են Մեծին Աղեքսանդրի ժամանակ:


Մեր հին պատմութեան մէջ առաջին անգամ կը յիշուի Ա. գարու վերջերը Երուանդայ օրերը, նոյն տառնները Սմբատ Բիւրատեան քաջը «... գերկուս գտերս իւր՝ զՍմբատանոյշ և զՍմբատուհի նստուցանէ ի Բայբերդի, արս քաջս թողով ի վերայ ամբոցին: ... Առաքէ Երուանդ և սատակէ զքաջն ի Բայբերդի, զերեալ զգտերսն Սմբատայ՝ պահէ յամբոցին Անի ոչ վտարապէս»: Խոր. Բ. 12, 13: Ասկէց կ'երեւի թէ ժամանակին ամառ բերդերէն մին է եղեր: Կը կարծուի, թէ Բարձր Հայոց Սպեր գաւառի մէջ բնակող Բաղրատունիները, աիրած լինին նաեւ Խաղտեաց սահմաններուն և ամառ բերդաքաղաքիս: Յուսալի նիւնոս կայսրը Զ գարու մէջ զեռ աւելի ամրացուց քաղաքս, նոր բերդ կառուցանելով հիւսիսային լեռան գագաթը, որուն աւերակները տակաւին կը տեսնուին: ԺԱ գարու կիսուն Տուղբիլի զօրքերը Խաղտեաց աշխարհի վրայ ասպատակած ժամանակ, և կան նաեւ մինչեւ բերդաքաղաքիս մօտ, բայց «... Հանդիպի անդ զունդ մի ի զօրացն Հոռոմոց որ կոչին Փոանկը, որք յանգևտս միմեանց ի զիմի հարեալք ճակատեցան. և յողորմութենէ Աստուծոյ զօրացան զունդն Հոռոմոց, և յաղթեալ թշնամեացն՝ զզլուս զօրուն սպանին և զբազումս բնդ նմա, և



զայլն ի փախուստ դարձուցեալ, դառ և զգերի զամենայն թափեցին»։ Լատ. 65. սակայն այս դէպքէն բիշ վերջը, կը թուի թէ դարձեալ այլազգեք վրէժինդրութեամբ յարձակելով քաղաքիս վրայ, տիրած են և մէջը իշխանութեան աթոռ հաստատած։ ԺԲ դարու վերջերը կը յիշուի Բաբերդի Հայ ուկիսը Աստուածատուր անունով բարեպաշտ մէկը, որ զրել տուած է Մշոյ Առաքելոց վանքի մէջ պահուած միծ և սուուար տօնականը կամ ճառքնաիրը։ Նոյն անձը ԺԳ

ուրիշ վենետիկեցի ճանապարհորդ մը՝ Ճէ. մելլի, Բաբերդէն անցաւ։

Հինաւորց բերդն կը գտնուի քաղաքին հիւսիսային կողմը բրդաձեւ քարալեռան մը գագաթան վրայ, որ երեք կողմանէ անմատոյց է։ Շրջապատուած է կրկին պարիսպներով, որոնց հիմունքը ձգուած են քարալեռան անհարթութեան համեմատ տեղ մը բարձր, տեղ մը ցած և ներս ու դուրս. այդ պարիսպները 1828ին Ռուսաց յարձակման ժամանակ մեծաւ մասամբ կործանեցան, և



171 • Բաբերդ :

դարու սկիզբը անիրաւ տեղը սպանուցեալ քաղաքիս Ալաատին ամիրայէն : 1307ին Սոսյ ժողովքին մէջ կը յիշուի քաղաքիս անուամբ եպիսկոպոս ոմն Սահակ : ԺԳ դարու սկիզբը Բաբերդէն անցաւ վենետիկցի Մարկոս Պօղոսը՝ որ և կը յիշէ քաղաքին հիւսիսային արեւմտեան կողմը, կիւմիւշխանէի ճանապարհի վրայ գտնուող արծաթահանքը : Յաջորդ դարու մէջ 1474ին անցաւ վերնոյն հայրենակից Յովսէփ Պարպարոյ, որ քաղաքին ամրութիւնը կը բոլէ և մէջը 1500 տուն կը հաշուէ : ԺԷ դարու վերջերն ալ

այժմ քայքայեալ վիճակի մէջ են : Նոյն յարձակման միջոց ներքնապարսպի մէջ գրանուած տուներն ամբողջապէս քանդուցան և կործանեցան, և այժմ բերդը անբնակ է և պահապան անգամ չունի : Կ'ըսուի թէ 1828ին Ռուսները Բերդի պահարաններէն միոյն մէջէն հանած են շատ գէնքեր, կահեր և արծաթեայ որորան մը :

Բերդի մէջ բովէ բով կան երկու ջրամբարներ կամ քարափոր ջուր բերելու ճանապարհներ. ասոնց շինուածքն և ձեւն նման են Եպոկիոյ և Ամասիոյ ջրամբարներուն,



առ ի շեղ սանդղաձեւ փորուած մինչեւ զեւեղերը . առհր. եւ խանգարուած և քայքայուած են : Բերդի արտաքին զբան աջ և ձախ կողմերը կան առիւծի և ընձու անարուեստ բարձրաքանդակ պատկերներ, և շատ մը արարացի արձանագրութիւններ թէ՛ զբռնելու և թէ ներքնապարսպի վրայ, որոց մէջ կը կարգացուի Ղլիճ Առլանի անունը : Բայց բերդին շինուածոց մէջ կը տեսնուին նաեւ յունական ձեռաց մնացորդներ, ինչպէս հին կործանեալ եկեղեցի մը, և յունարէն եղծուած արձանագրութիւն մը . ուրիշ անեղծ արձանագրութիւն մ'ալ Երասպացիք վերցուցած տարած են :

Ճորոխ զեառ կ'անցնի քաղաքիս մէջէն հարաւէն դէպ ի հիւսիս և երկու մասերու կը բաժնէ զայն, որը իրարու հետ կապուած են 3—4 կամուրջներով : Գետս իւր ընթացքին մէջ ունեցած երբեմն ազմկալից շառաշման համար, բնակիչներէն կը կոչուի Տէլի (Յիւմար) Ճորոխ, որ քաղաքիս առաջին բնական զարդն է : Իւր երկու կողմը բաւական ընդարձակութեամբ ծառազարդ պարտէզներ, եղբրքներուն վրայ եւ կարգաւ ծառեր անկուած են : Տեղուոյ բոլոր ջրազացները կը դառնան զետոյս երազնիմաց ջրերով . Ճորոխի վրայով անտառներէն կը տրուած փայտերը կը բերեն Բաբերդ : Գետային ճանապարհով քաղաքս միացած է Ռուսաստանի Պաթում քաղաքի հետ, որմէ հեռու է զբեթէ 126 հզրմ : Հակառակ իւր այս համեմատաբար նպաստաւոր զրից, որով մէկ կողմանէ ցամաքային ճանապարհով կը միանայ Տրապիզոնի, Կարնոյ և Պարսկաստանի հետ, և միւս կողմանէ Ռուսիոյ հետ, այսօրուան օրս Բաբերդ այն աստիճանի ծաղկած չէ ինչպէս երբեմն : Սակայն իւր շրջակայից երկրագործական արդիւնաբերութիւնը խիստ առատ և նշանաւոր են . ընտիր են արմտիքն՝ ընդեղէններ, պտուղներ, ձի, արջառ, ոչխար, և այլն : Բաբերդ արհեստներու մէջ եւս իւր լաւ համբաւն պահած է տակաւին : Մէկ խօսքով, թէ և իւր նախկին մեծութենէն ինկած կ'երեւի, բայց ապագային մէջ անտարակոյս պիտի ստանայ աւելի նոր փայլ մը և վաճառականական ծագկած վիճակ մը :

Բնաշխ. բառարան

Բաբերդ քաղաքի բնակչաց թիւն որոշ չենք զիտեր, բայց յայտնի է որ բազմութեան կողմանէ առաջ են Մահմետականք, յետոյ Հայք և ի վերջոյ Յոյք : Իսկ համանուն զաւառակի բնակիչք ըստ Վ. Քինէի կը հաշուին 58313 հոգի, հետեւեալ կերպով բաժնուած .

Մահմետականք . . . . .	46812	հոգի
Հայք . . . . .	10379	»
Յոյք . . . . .	589	»
Այլեւայլք . . . . .	555	»
<hr/>		
Գումարն . . . . .	58515	հոգի :

Քաղաքին տները մեծաւ մասամբ միայարկ են, ընդհանրապէս անշուր և ոգորմիլի տեսքով և հողայարկ . զետին եղբրքներէն երթալով կը բարձրանան մինչեւ լեռանց ստորտը և նոյն իսկ անոնց բարձրութեան կէտը կը հասնին : Այս սլաճատով տուներէն շատերը մէկ կամ երկու կողմերէն խրած են հոգի մէջ և տանիքները հաւասարած են բլրոյն : Քաղաքի մէջ կայ կառավարչի (միւթէտարքի) պալատը, զօրանոց, բանտ, 3 բաղնիք, 15 հասարակաց աղբիւրներ, 481 կրպակ և վաճառատունք, 40 խան, 177 ցորենի ջրաղացք, 3 կառաւտի հնձան, 19 փուռ, 1 կաշեպործարան, 2 ոճառի, 1 ներկի և 1 մոմի գործարաններ : Նշանաւոր է հոյակակ և քառազմբեթ պեղեքեքը, բայց ներքը խիստ մթին է և աղտոյի : Մզկիթներէն հնաշէնը և զլխաւորը Ուրուճամի, հին ժամանակ եկեղեցի եղած է : Հայոց եկեղեցիները թուով չորս են՝ Ս. Աստուածածին, Հրեշտակապետք, Աստուածամայր և Ս. Յովհանն : Առաջին երկուքը կը յիշուին ժէ՛ զարու սկիզբը զրոց յիշատակարանաց մէջ : Ս. Աստուածածին եկեղեցին՝ 1848 թուին զեղեցիկ ձեւով մը նորոգուած է Կիւրինցի Կարապետ վարդապետի առաջնորդութեան օրովը, տեղացի Տէր Յովհաննէս աւագ քահանայի աջակցութեամբ : Միւս եկեղեցիները ներքուստ մթին են և արտաքին երեւոյթնին ալ խեղճ : Դոպոզուրը եկեղեցիներու թուով թաղերու բաժնուած են . ունին արական և իգական սեռի յատուկ մէկ մէկ վարժարան : Քաղաքին արեւելակողմը բարձր զրից վրայ տարածուած է Հայոց ընդարձակ



զերեզմանատունը, ուր կան մինչև 422 ( = 1437) թուականաւ արձանագրութիւնք: Իսկ արեւմտեան կողմը զաշտալայրի վրայ կան թրքաց երկու ուխտական շիրիմներ, մին բոլորշի բարձր պատուհանով և կործանած գմբէթով և միւսն բազմանկիւն՝ և մէջը կայ պազաղաձեւ երկայն զերեզման:

**Վ.Ի.ՃԱԿԱԳԻՐ ԲԱՐՅԵՐԳԻ**

ՀԱՅԱՐԵՆԱԿ ԳԻՒՂՈՐԷՒՅ

ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՅ	Տուժ	Եկեղեցի
Լուսհոնք . . . . .	150	2
Վարդուհան . . . . .	145	2
Էրկի . . . . .	56	2
Բլրակ . . . . .	65	1
Քարաւերակ . . . . .	150	2
Ասիւձկայ . . . . .	50	1
Խոփուզ կամ Խոփս . . . . .	80	1
Կիւ . . . . .	43	1
Քասնթա . . . . .	200	2
Ալճկա . . . . .	20	1
Բուձէլի կամ Աւուձէլի . . . . .	50	1
Մալասա . . . . .	60	1
Խայէկ կամ Կէլիք . . . . .	50	2
Գոմեայ Թոմեան . . . . .	57	1
Բընջրկա . . . . .	45	1
Օձաեղ . . . . .	50	1
Պալախու . . . . .	90	2
Ս. Թորոս . . . . .	62	1
Բլուր . . . . .	112	1
Հինաէ . . . . .	65	2
Աւերակ կամ Էլէրէկ . . . . .	82	2
Սղբի . . . . .	50	1
Չաճմանց կամ Զաճմանս . . . . .	55	1
Նիւ . . . . .	50	1
Վերի Քրզի կամ Կուզի . . . . .	50	1
Վարի Քրզի . . . . .	20	—
Սարաճըք . . . . .	10	1
Խընձաւերակ . . . . .	12	—
Ռուշաի . . . . .	28	1
Քիստիսի . . . . .	5	—
<b>ԳՈՒՄԱՐՆ . . . . .</b>	<b>1760</b>	<b>56</b>

Քարերդի զաւառակն կ'ինկնայ Կարնոյ կուսակալութեան տակ, և ունի 186 զիւզեր, յորս գլխաւորաբար 30ը հայաքնակ են, ուրոնք վերջին զէպքերու ժամանակ մեծապէս վնասուեցան, քաղաքն եւ իւր վնասներն և զոհերն ունեցաւ:

Երկրագործութիւն. — Քարերդի և իւր բոլոր զիւզերու գլխաւոր բերքերն են՝ արմը-

տիք, կաւաւա, լուրիա, սիսեռ, սոխ, կազամբ, շողգամ և ամէն տեսակ պտուղներ, յորս բնտիր և առաւ են տանձ, կեռաս, խաղող և թուխ: Գաւառակս Սպերու հեռ միասին ունի 27000 փեթակ, որոնց մեկըրը մեծաւ մասամբ կը սպասեն Կարնոյ կուսակալութեան մէջ, և մամբ եկեղեցիներու և մզկիթներու հարկաւոր եղածին շափ առնելէն վերջ, փնացածը Տրապիզոնի ճամբով կը զրկեն Գաղղիա:

Անասունք. — Գարձեալ Բարերդի և Սպերու զաւառակներու մէջ կը սնուցանեն բազմաթիւ ընտանի անասուններ, որոնց ամբողջական թիւն կը հաշուով կը հասնի 380 000ի: Արջառոց ցեղէն 60000էն աւելի, ոչխարներու տեսակէն 310 000էն աւելի, ձիոց տեսակէն մօտ 6000 և իշոց տեսակն 2600ը կ'անցնի:

Ճարտարարուեստը. — Քարերդի մէջ և շրջակաները կը գործեն մետաքսէ և ոսկեթել գեղեցիկ զորգեր, որոնք շատ յարգի են: Անուանի են զաւառակիս զինագործները, իրենց շինած ամէն տեսակ կատարելագործուած զէնքերով: Գանակագործութիւն, թամբագործութիւն և ամէնէն աւելի պղնձագործութիւնը, լաւ գործունեայ և շահաբեր վիճակի մէջ են, և իրենց արտադրած ապրանքներն կը փնտառին: Քարերդի մէջ կարուած կոշիկներն և մուճակներն մեծ համբաւ ունին բոլոր կուսակալութեան և մերձակայ բնակչաց մէջ: Երկաթագործները կատարելապէս կ'աշխատին թէ՛ երկաթի և թէ՛ ուրիշ տեսակ մետաղաց վրայ: Ոսկերիչներն և գոհարավաճառներն կը շինեն արծաթէ, վրան սեւաւ կիտուածներով զարդարուած, ամէն տեսակ իրեղէններ, այս արհեստով կը զբաղին միայն Հայք, և իրենք զարգացուցած են, թէ՛ թուրքիոյ զանազան քաղաքաց և թէ՛ Ռուսիոյ և Վրահայաստանի մէջ:

Քարերդը տարին մէկ անգամ մայիս և յունիս ամիսներու մէջ տօնավաճառ ունի, որ առաջ հինգ վեց շաբաթ և այժմ 15 օր կը տեւէ: Այդ աւուրց մէջ բոլոր զիւզացիք տեսակ տեսակ վաճառքներով քաղաք կը թափին և Քարերդը աւելի շարժուն և կենդանի զիւր մը կ'անուու: — Տեղգր. Հայաս. 68-70: Ճեպրձ. Քար. 212-214: Նկրգր.



Ոչդեռորոշրիւն, Ա. 11-14: Վ. Քիւնե, Ա. 222-226: Եւ այլն:

ԲԱՅԵՐԶ. — Հին Գիւղ Սիւրաստիոյ. կը յիշուի 1570ին գրուած Մաշթոցի մը յիշատակարանին մէջ:

ԲԱՅԵՐՅԻՔ. — Հին Գիւղ Եկեղեցաց (Բարձր Հայք) գաւառի. կը յիշուի գարձեալ ձեռագրի մը յիշատակարանին մէջ:

ԲԱՅԻՐՍԱ. Յն. Βαβυρσα. — Այս անուամբ

ձակ հոգեր սակայն երկիր մշակելու համար բաւական կենդանիներ չունենալով՝ գրիթէ երկրագործութիւնը թողած են: Գիւղիս արեւմտեան կողմը շինուած է հոյակապ եկեղեցի մը Ս. Յարութիւն անուամբ. իսկ արեւելեան կողմը մարգագետիններու մէջ, սեւաց ծառերու մէջէն կը հոսէ զով ազբիր մը սրոյ բով կայ մատու մը՝ զոր զիւղացիք Լռասպտոշոյ Ս. Սանակ կը կոչեն, սը



172. Բաբերդի ուրիշ տեսարան մը:

ամրոց մը կը յիշէ Ստրաբոն Այրարատայ Մաղաղ-Ոստան գաւառի մէջ, Արտաշատայ հիւսիսային կողմը: Ամրոցիս մէջ կը պահուէին Տիգրան Բէ գանձերը:

ԲԱՅՇԵՆ կամ ՓԱՓՇԵՆ. — Գիւղ Աղձնեաց Սախնաձոր գաւառի, Բաղիշոյ հիւսիսային կողմը, 2 փամ Խախուէֆ զիւղէն հեռու գէպի հարաւային արեւմուտք: Ունի 40 տուն հայ բնակիչ, որոնք ընդհանրապէս բրաւովեամբ կ'ըզրաղին. թէև ունին ընդար-

շարունակ աշաց ցաւ ունեցողները կը յաճախեն և իրենց բարեպաշտութեամբ շատ անգամ բժշկութիւն կը գտնեն: Բարշէնի մօտ կայ մեծ բարաշէն իջեան կամ խան մը կարուանաց և ճանապարհորդաց համար, որ զիւղի անուամբ Բարշէնոշ խան կը կոչուի: — Լռմայ, 1900 Ա. 214:

ԲԱԳԱՌԻՒ. Տես 200Բ:

ԲԱԳԱՌԻՃ կամ ԲԱԳԱՅԱՌԻՃ. — Հին և նշանաւոր աւան Բարձր Հայոց Դերջան գա-



ւառի մէջ, Մամախաթունի հիւսիսային արեւմտեան կողմը: Տիգրան Բ աւանիս մէջ կանգնեց Եփեսոս զից կուսքը զոր Արտաշէս Ա բերած էր Յունաստանէն. շինեց մեհեանս և մեհենին առջեւ բազին: Եփեսոսս որովհետև հրոյ շատուած է, անոր համար Հայք զայն Միհր համարեցան, ուստի և վերայիշեալ մեհեանն ալ Ագաթանգեղոսէն (593) Մրհական մեհեան կոչուած է. «Գայր հասանէր (Ս. Գրիգոր) ի Մրհական մեհեանն անուանեալ որդւոյն Արամազդայ, ի զիւզն զոր Բագայատիճն կոչեն՝ ըստ պարթեւական լեզուին: Եւ զայս ի հիմանց բրեալ խլէին, և դգանձս մթերեալս աւար հարկանէին և աղքատաց բաշխէին, և զտեղիսն նուիրէին եկեղեցոյ»: Այս մեհենին տեղը հիմայ կը կարծուի թէ ըլլայ այժմեան Բագատիճ գիւղի մէջ բարձրացած քարաբլրոյն արեւելակողմը, ուր երեք փոքր քարանձաւներ փորուած են. բլրոյն զագաթը կ'երեւան հիմանց նշաններ, ուր որ բուն բազինն եղած կը համարուի: Այժմ՝ ևս Գերջանի բարդաւած գիւղերէն մին է Բագատիճ ունի 5-600 տուն բնակիչ՝ երեք մասը հայ և մէկ մասը մահալան: Գիւղի կեդրոնն է հին բերդն բնական ժայռերու վրայ, որ ունի զեանուղի ճամբայ փախստեան և ջուր հանելու համար: Կ. Ս. Ղազանճեան տեսած է աստ 14 հատ սեպածե գրեր, որ ձաքարերու մէջ փորուած: — Բագատիճի անուամբ կը կոչուի քովի մեծ դաշար, ուր 990 թուին սպանուեցաւ Չորտուանէլ մագիստրոսը, Վրահայ Թոսնիկ արեղայի եղբորդին, Վասլի կայսեր զօրաց հետ պատերազմած ժամանակ: — Ստորգր. հիւն Հայս. 24-25:

ԲԱԳԱՌԻՃ ՎԵՐԻ. — Գիւղ Բարձր Հայոց Գարանաղեաց (Կամախ) գաւառի մէջ, ունի 80 տուն հայ բնակիչ և Ս. Աստուածածիւն եկեղեցի մը:

ԲԱԳԱՌԻՃ ՎԱՐԻ. — Նոյնպէս գիւղ Գարանաղեաց, ունի 130 տուն հայ բնակիչ և Ս. Յակոբ եկեղեցի մը: Այս գիւղերս որ կը կոչուին նաև Մեծ ու Փոքր Բագատիճ, վերջին գէպքերէն մեծապէս փաստեցան:

ԲԱԳԱՐԱՆ կամ ԲԱԳՐԱՆ. — Ի հնումն անուանի բազաք Այրարատայ Արշարունիք

գաւառի մէջ, Ախուրեան գետոյն աջակողմեան ափունքը և Երուանդաշատի հիւսիսային կողմը հինգ մղոն հեռաւորութեամբ: Երուանդ Բ շինել տուած է քաղաքս Երուանդաշատի նման, որ և մէջը մեհեաններ կառուցանելով, երբ արքունիքը Արմաւրէն փոխադրեց յԵրուանդաշատ, հոն գտնուած կուսքերն ալ հոս բերաւ, և շատ բազիններ ունենալուն համար կոչուեցաւ Բագարան կամ Քաղաք կոոց: Երուանդայ Երուագ եղբայրն քրմապետ դրուած էր բազաքիս մեհենաց, զոր բունել տալով Սմբատ՝ հրամայեց գետը նետել և անոր տեղ Մոզզաշէն անունով մէկը դրին: Սմբատ Արտաշիսի տարաւ Երուանդայ գանձերը և հինգ հարիւր ծառաները: Քաղաքս որ ի հնումն անուանի էր իբրև գլուխ Հայոց հեթանոսական պաշտօնատեղեաց և միջին պարս մէջ սուրբ կրօնից պաշտամամբ, և Բագրատունիներու շինութեամբ և բնակութեամբ, այժմ՝ ախոր և աւերակ վիճակի մէջ կը գտնուի: Հրաբխէ մը և մեծ երկրաշարժէ կործանած կը թուի Բագարան. հին հեթանոսական ժամանակներու վերաբերեալ մնացորդ մը դեռ յայտնուած չէ և ոչ նախնի բազիններէն կտոր մը:

Արտաշէս Բէ օրերէն, որ բազարանը անշք-քացոյց՝ հեթանոսական պաշտամունքները փոխադրելով յԱրտաշատ, մինչև ԹԲԻ զարչի յիշուիր քաղաքիկս պատմութեան մէջ և իբրև աննշան մնացած կը թուի. վասն զի Կամարականներն իրենց ոստանը հաստատեցին Մարմէտի մէջ: Բայց երբ Աշոտ Մսակեր անոնց գաւառը գնեց, Բագարանի մէջ դրաւ իւր աթոռը, ուր և իւր բարեբաղոյ թոռը Աշոտ Ա հաստատեց իւր արքունիկան ապարանքը, ինչպէս կը պատմէ Յովհ. կաթողիկոս, որ և շատ կը յստիարակէ հոն: Աշոտ 862 թուին նոյն ապարանքի մէջ իրեն դուստրը հարսնացոյց Արծրունեաց տան պայագատ Գրիգոր Դերենիկի: Բայց իւր որդին Սմբատ Ա աթոռը Երազգաւորը փոխադրեց, անկէջ վերջն ալ հաստատուեցաւ Անուոյ մէջ: Հ. Ն. Սարգիսեան որ անձամբ այցելած է տեղւոյս, կը յիշէ քաղաքիս բերդը բարձր քարածայտի վրայ, երեք կողմերը խորանդունդ, և չորրորդը անմատչելի, բազաքին հարաւային կողմէն միայն ունենալով



վերելք մը: Տարածութիւնը անձուկ և երկայնաձև է, արեւելեան ծայրը ունի աշտարակ մը, իսկ պարիսպները կիսափուլ են: Բերդի արեւելեան ծայրը աշտարակին զիմաց կը գտնուի առաջին եկեղեցին Ս. Գեորգ փոքր և կիսախորձան, զոր այժմեան 50 անուոր հայ բնակիչը ՃԹՊ գարու կիսուն նորոգեր են տախտակամաձ, շինելով նաև գաւիթ մը: Եկեղեցւոյն մէջ կայ փոքրիկ մատուռ խորանին աջ կողմը, և մէջը որոցաձև շիրիմ, որոյ տակ ամփոփուած կը համարուի Ս. Գեորգայ նշխարներէն մասն մի, որուն բազմաթիւ ուխտաւորներ կուգան մանաւանդ Վարագայ Խաչի տօնին, և բժշկութիւնը ևս կը լինին: Երկրորդ եկեղեցին կը գտնուի բերդը

զարձած է: Սա էր Բագարանի մայր եկեղեցին կամ Միանձանց ուխտը, արտաքին ձևովն բազմանկիւնի քառաթեւ է, և իւրաքանչիւր թեւի մօտ երկու կողմերէ կան դարձեալ ուրիշ անկիւններ, իսկ ներքուտ չորս թեւերն ալ կիսաբոլոր են, երկայնութիւն և լայնութիւն հաւասար, թեւէ թեւ 17 մետր: Ունի չորս ոչ միակտուր սիւներ, կործանած է գմբէթը և քովը գտնուած մատուռը, ասոր շուրջը կան բազմաթիւ հին խաչքարեր և շիրիմներ: Իններորդ գարու կիսուն կամ քիչ վերջը շինուած կը թուի այս եկեղեցին, յորում կան տասն և մէկ արձանադրութիւնք և ՆԵ (= 956), և ՆՁԳ (= 1034) թուականները, բայց հնագոյնը անվերձանելի է: Հինգերորդ եկեղեցին կը կոչուէր Տապանատան Ս. Կարդիկէ, վասն զի իւր մէջ կը թաղուէին Բագրատունի իշխանազունք: Յովհ. Կաթողիկոս յեշելով Աշոտի որդի Շապուհ սպարապետի թաղումը, կը նշանակէ ասոր բարձրաւանդակ զիրքը, երբ կ'ըսէ. «Եղին գնա ընդ հարս իւրում ի Լիբիեն Գեարակացն որ ի քողաքապետն Բագրանու»: Հոս փոխադրուեցան նաև Մուշեղի և իւր հօր



173. Բագաւամայ Ս. Յովհաննէս եկեղեցին:

տանոց ճանապարհի կիսուն վրայ և առաջինէն աւելի մեծ է, սակայն հիւսիսային որմը միայն անկործան մնացած է և ՉԾ թուական մը. մօտը կան շիրիմներ: Երրորդ եկեղեցին փոքր է և գմբէթաւոր, քարաժայռի մը ծայրը: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ և կեղեցին շինած է թագաւորի մը ազլիկը, իբր թէ, ասոր շինուելէն առաջ, մեծահանդէս տօնի մը օր ուշանալով հասնելու ժամերգութեան, իւր բնակարանի մօտ շինած է այս եկեղեցին: Չորրորդ եկեղեցին քաղաքի աւերակներէն քառորդ մը հետո է հարաւային կողմը, և ասոր ալ հիւսիսային որմը կանգուն կը կենայ: Հինգերորդ չորրորդին մօտ է, որուն չորս կողմի հին պարտիզաց և այգիներու տեղը այժմ արօտատեղի


բազմաշարձար խոստովանող թագաւորին Ա Սմբատայ մարմինները, որոնք պատվ սպանուեցան Յուսուպին՝ Դունայ մէջ: Քաղաքին եկեղեցիներէն այս վերջինն կը թուի ձեռակերտ Աշոտի, Սմբատ Ա թագաւորի Շապուհ եղբօրը որդւոյն, որ ըստ պատմչին «Ի սկզբան սպարապետական պայազատութեանն՝ խորհուրդ բարեաց զանձամբ արկեալ, շինէ ապա զպճնապայծառ եկեղեցին Բագրանու՝ որ ի վերայ Ախուրեան գետոյ, և զարպրէ բազում երեւելի սպասուր, և անէ նաւապատիս աստուածային գոգցես պատշաճոգութեամբ»: Արձանագրութիւններէն կը յայտնուի, որ Բագարան ևս ՃԳ գարու սկիզբը նուաճուեր և նորոգուեր է Թամարայ թագուհւոյն Չարարեանց զօրաւարներէն, որոնց ժամանակ կը յիշուի (1211ին) Գրիգոր Պարոն Բագարանայ, այսինքն քաղաքապետ կամ կող-



մեակալ, և 1224ին վարդ՝ սայխ սլաույ անուամբ: Նոյն ժամանակները Միաձանց ուխտի կամ Տաղանասան վանաց առաջնորդ էր վարդան, և անկէ վերջ 1233-5 տարիները Մխիթար սին: Որովհետև այս թուականէն վերջ ուրիշ արձանագրեր չկան, կը կարծուի թէ քիչ տարի վերջ սկսեր է ամայանալ և աւերիլ Բագարան, կամ ինչպէս ըսինք մեծ երկրաշարժէ մը և կամ թաթարաց արշաւանքներէ: — Ստորգր. հին Հայտ. 394-395: Տեղգր. Հայտ. 200-204: Այրարատ, 64-69: Եւ այլն:

ԲԱԳԱՐԱՆ. — Ի հնումն աւան Այրարատայ կողմիւ գաւառի մէջ. այսպէս կոչուած է վե-

րիցաւան ըստ Պարթևաց լեզուի, և Բագնաց աւան: Կառուցուած է Նգատ լեռան հիւսիսային ստորոտին վրայ: Հիմանսու թեան ժամանակ երեւելի էր աւանիս մէջ, վերջին Տիգրանայ եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանը, սը կար բազին և հիւրընկալութեան իջեան. յորում նաւասարդի առաջին օրը մեծ տօն կը կատարուէր: Խորնացին Բարգաձանէն աննելով կը յայտնէ թէ Տիգրան շինել տուաւ այդ բազինը և իջեանը որպէս զի զոհերէն բոլոր ձանապարհորդները վայելին և զիշերները հիւրընկալուին: Իսկ վերջն ալ վազարշ հաստատեց աշխարհախումբ հանպէս նոր տարւոյն



174. Հին արձանագրութիւն Ս. Յովնանու որմնց վրայ:

րոյիշեալ բազարի անուամբ: Սմբատէն շինուած է աւանս, որ հոս բերու բնակեցուց Երուզղայ ծառաները, զորս գերած էր Արշարունեաց Բագարան բազարէն: Այժմ ծանօթ է Աւան անուամբ, Քանաքեռ գիւղի արեւմտեան կողմը: Կը յիշուի Չ դարու վերջերը իբրև հայրենիք Յովնան կաթողիկոսի յանական մասին Հայոց: — Ստորգր. հին Հայտ. 447-8: Այրարատ, 493-95:


ԲԱԳԱՆԱՆ կամ ԲԱԳՈՒԱՆ. — Թէ՛ հիթանսութեան և թէ՛ քրիստոնէութեան ժամանակ հոշակաւոր աւան Այրարատայ Բագրեանդ գաւառի մէջ, Եփրատայ ձախ ափին վրայ: Մեր պատմիչներէն կոչուած է նաև

սիկրը: Գլխաւոր բազինն էր հիւրընկալութեան վանատրի շաստուծոյն: Արտաշիր Սասանեան, որ կրակապաշտութիւնն նորոգեց և աճեցուց Պարսից մէջ և քանի մը տարի Հայոց իշխեց, բազարաւոր կարծեց զինքն որ աւանիս մէջ դասա նաև կրակի բազին, և հրամայեց մշտաժառ պահել «զՀուրն Որմզդական» որ ի վերայ բազինն որ ի Բագրեան»: Խոր. Բ շէ: Մինչդեռ Ս. Լուսաւորիչ Կեսարիայէն դանալով ի Հայս կը գտնուէր Տարօնի մէջ, Տրդատ իւր զօրքերը աննելով, ինչպէս նաև Աշխէն տիկինը և Խոսրովիդուխ բոյրը, կու գար կը հասնէր աւանս, և կ'ըստպանէր անոր զալստեան գրեթէ ամիս մը




ժամանակ: Այդ միջոցին յայտնի է թէ նա տապալել էր հիմնաստան մեհեաններն և նոր ու սուրբ կրօնից պաշտաման տեղ կը պատրաստէր: Ս. Լուսաւորիչ հասնելով, հիմունք դրաւ և սկսաւ կառուցանել եկեղեցի, յորում գետեղեց Ս. Յովհաննու և Աթմանազինեայ նշխարներէն մասն ինչ: Գրեթէ երեսուն օր աղօթիւք և պահօք անցնել վերջ, աւանիս մօտ, Եփրատայ եզերքը թապաւորն, իշխանագունք, մեծամեծք, և ժողովրդեան բազմութիւնը մկրտուեցան ի Սրբոյն Գրիգորէ և ընդունեցան սուրբ կրօնքը: Աւանիս եկեղեցին մեր հին մատենադրաց համեմատ կը կոչուէր Տեղի կամ Մա-

է աւանիս վանքը: Եօթներորդ դարուն Հեռակը կայսրը Պարսից վրայ գացած ժամանակ, կ'երեւի թէ դադարած է հոս կամ այցելած սխտատեղւոյն, և յետոյ անոր վերաշինութեան սատարած 634 թուին՝ ինչպէս կը գուշակուի թղթափ մեծատառ արձանագրութենէն, որ փորագրուած է միատող եկեղեցւոյն հարաւային, արեւելեան և հիւսիսային սրմնց վերի կողմերը արտա-



175. Քաղզէացի արձանագրութիւն:

տուն Ս. Գրիգորի, բայց սովորաբար և աւելի սակայ և մինչև ցայժմ կը կոչուի Ս. Յովնանեն, և այլազգիներէն իռչ-քիլիսե (Երեք եկեղեցիք), երեք խորանաց համար: Ս. Սահակ հայրապետը, գահընկէցութենէն վերջ հրաժարելով Վազարշապատի աթոռէն, հոս եկաւ վերջացնելու իւր արդիւնաշատ կեանքը, սակայն այս տեղէն ալ հալածուելով, Բլուր գիւղի մէջ հանգեաւ: Ս. Գրիգորէն շինուած ուրիշ մատրանց և եկեղեցիներու պէս անշուշտ փորք և անպարզ էր նաև այս Բագաւանայ եկեղեցին և չի յիշուիր, թէ Ս. Սահակ և կամ ուրիշ մէկը ընդարձակած լինի զայն: Յայտնի չէ թէ երբ շինուած



176. Քաղզէացի արձանագրութիւն:

բուտ: Ճարտարապետն եղած է իւրայէլ անուամբ մէկը. շինուածոյն վայելչութիւնը և մեծութիւնն կայսեր արժանաւոր էր. վասն զի Հայաստանի բոլոր հին եկեղեցիներէն մեծագոյն է, և 1260 տարիներէ ի վեր, շատ փորձանքննու հանդիպելով հանգերձ, տակաւին կանգուն է: Ափսոս որ այս արժանաւոր շինուածոյս լուսատիպ պատկերն չգտնելով, ստիպուած եմ հոս ներկայացնել անոր ձեռանկար պատկերը (թ. 173): Որմերը խիտ հաստ են և ամուր, և գմբէթը վեր բունոզ սիւններն ցած են և լայն: Ընդարձակ խորանին երկու կողմերը կան մէկ մէկ մատու: Երկու խորաններ ևս ի վերջոյ շինած են երկու մատրանց կամ խորանաց կանակը: Եկեղեցին բոլոր շինուած է մեծ մեծ սրբատաշ բարերով, և բոլոր մատանց մէջ կը տեսնուի գեղեցիկ չափակցութիւն, բայց հին եկեղեցեաց նման մթին է, մանաւանդ որ նորոգութեան միջոց պատուհաններէն ոմանք գոցած են: Եկեղեցւոյս մէջ չկան և կամ ծանուցուած չեն տակաւին ու-



րիչ հին արձանագրութիւնք, եղածներն ալ յետին դարուց կը վերաբերին և դեռ մէկէն հրատարակուած չեն: Հետաքրքրական են արտաբերին սրմնց մէջ հիւսուած բանի մը հին քարեր, որոց վրայ կան պակասաւոր քաղղեարէն կամ հին ասորերէն արձանագրութիւններ (թ. 174-5-6), և կը թուին մեր տասնից գիւտէն առաջ գրուած, թերեւ Տրդատայ և Ս. Գրիգորի օրերէն մնացած:

Վանացս մէջ Վարդավառի տօնին գտնուելով Կերսէս Գ կաթողիկոսը, և տեսնելով որ պատկանները ժամերգութեան ատեն աւուր պատշաճի շարականները փոփոխելով շիփթութիւն կը ձգեն, հրաման տուաւ ձոն մականուանուած վարդապետի մը, որ շարականներէն ընտիրները գտաւ, որոնք կաշտեցան ճոնրեախրք: Ութերորդ դարու վերջերը Յակովբ կաթողիկոսի ժամանակ վանքս շատ ճոխացած էր սոկի և արծաթի սպաններով, զորս յափշտակելու համար, 778 թուին Եղիտ ստաիկանի Սփի գործակալը զրպարտութեամբ կոտորել տուաւ վանքի միաբանները, որոց թիւը ըստ Յովհն. կաթողիկոսի 40 է աւելի էր: Վանացս եկեղեցոյ նման պարիսպն ևս հաստ և վիթխարի էր, որով ոմանք ամրացի կը նմանցնեն, մեծամեծ և երկաթապատ դռներով և մարտկոցաձեւ բուրգերով: Թէպէտ և ասոր շինութիւնն ալ հին լինելու է, սակայն յայտնի է թէ եկեղեցիէն աւելի սակայ նորոգուած է, շատ անգամներ առաջակ Քրդերէ վնասուելուն համար, մանաւանդ աշխարհաւեր Լէնկթիմուրէն, որուն հարուածներէն դարերով ամայի մնացած է այս սրբազան վայրը: Վերտաին սկսեր է շինութիւն և բնակութիւն ունենալ Ժէ գարու կիսէն վերջ: Այս ժամանակները Բաղրեանդայ կամ Վաղարշակերտի եպիսկոպոսական աթոռը հոս փոխադրուեցաւ: Թաղէի վանաց իսահակ եպիսկոպոսը 1685ին շրջաբերական թղթով մը օգնութիւն և նպաստ կը խնդրէ Եւրոպա զանուող հայ վաճառականներէ, վանացս եկեղեցիին նորոգելու համար, որուն վրայ 6 տարի աշխատեր են և չեն կարողացեր աւարտել: Ուխտական տեղ մը լինելուն համար թէև շատ նուէրներով կը ճոխանար և կը բարգաւաճէր վանքս, բայց միանգամայն շրջապատուած լինելով Քրդէ-

րէ, շատ անգամներ կը կողոպտուէր: Այսպէս գարու մէջ ևս սակայ տխուր զէպքերու հանդիսատես եղած է վանքս, և ամբաշէն լինելուն պատճառաւ, շրջակայ գիւղերու բնակիչներն ևս վաճառի ժամանակ իւր մէջ կ'պատտանէին: Երեւանի խանը 1821ին Ալաշկերտի վրայ արշաւած ժամանակ, մեծ դեր խաղաց ճաւճանցի Խաչատուր վարդապետը, որ օգնական էր վանացս առաջնորդ Սահակ եպիսկոպոսին, ոչ միայն մէջը ապաստանողները այլ և գերի բռնուողներն ազատելով: Թէպէտ յետոյ բռնուելով տարի ու կէս Երեւանի բանտը մնաց, բայց վերջը ազատեցաւ: — 1862 թուին առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը վանացս պարիսպները և հիմանց նորոգեց և 1864ին ժառանգաւորաց վարժարան բացաւ: Վերջին Ռուսաց և Օսմանեանց պատերազմաց ժամանակ (1877-8) և անոնց բանակաց այս կողմերէն մեկնելէն վերջ, ասպատակող Քրդերէ և անկարգ զինուորներէ մեծապէս վնասուեցաւ վանքս, որոյ աղիտալի անցքերն ծանօթ են ազգայնոց: Իսկ 1808 էն 1829 տարիներու մէջ հանդիպածներն երկարօրէն գրած է Պօղոս Յ. Մաշրատեան: Նոյն 1877ի պատերազմի ժամանակ վանացս ձեռագիրները գետնի տակ թաղելով ի կարուստ մասնուած են: Այժմ ունի ձեռագիր և ապագիր ընդամենը 250 կտոր գիրք:

Անցեալ դարու սկիզբը Վանացս մէջ և դաւ ժողով և կաթողիկոս օծուեցաւ Գանիկ Սուրմանեցին. այս ժողովքին ներկայ էին Ալաթամարայ կարապետ կաթողիկոսը, Թաղէի վանաց Գևորգ արքեպիսկոպոսը և ուրիշ 12 եպիսկոպոսներ զանազան կողմերէ, և բազմաթիւ վարդապետներ: — Բաղրեանդայ վերջին գաղթականութիւններու պատճառաւ վանացս թեմերը նուազեցան: Ամբողջ Չիրաւայ գաշտի մէջ հազիւ 6 հայ գիւղեր կան խեղճ վիճակի մէջ: Վանացս պարսպի արեւմտեան կողմը է Վաւերի գիւղ կոչուածն, որ 30 տուն բնակիչ ունի, որք մեծ մասամբ ծանրացած են վանքի վրայ: Վանացս մօտ արեւելեան կողմը շինուած է չորս աչքէ ջրաղաց մը, որ միշտ կը բանի: Իսկ արեւմտեան կողմը գրեթէ մզոն մը հետո գետոյն վրայ ձգուած է գեղեցիկ քարաշէն կամուրջ մը որ շինուած կը համարուի Ժէ գարու առաջին կիսուն, թե-










Բագարան. — Եկեղեցի Ս. Շուշանայ :



Բագարան. — Մնացորդը Եկեղեցու :



S.N.

Բագանյր. — Ս. Աստուածածնի և Ս. Գրիգորի Եկեղեցիք :



րևս աւելի հին, որոյ խորտխներէն մին քայքայուելով, 1867ին նորոգուեցաւ: — Ըստ սմանց հին Բագաւանը լինելու է այժմեան վանքի գիմաց կարաւանի ճանապարհի վրայ, Եփրատայ աջ կողմը, ուր տեսնուած են բազմաթիւ աւերակներ, կը նշմարուին նաև մեծ եկեղեցւոյ մը հիմերը, որոնք քննութեան կը կարօտին: — Ստորգր. հին Հայտ. 406-410: Տեղգր. Հայտ. 221-2: Այրարատ, 527-533: Բագրեւանդ, 272-283: Եւ այլն:

ԲԱԳԱՒԱՆ. — Փայտակարանի հին գաւառներէն մին, Աշարակ կամ Ափշերուն երկրաչեզուի վրայ:

ԲԱԳՆԵՆՈՒԿ. — Այս անուամբ կրկին Վերի և Վարի գիւղեր կան Չորրորդ Հայոց Հաշտեանը (Ճապաղջուր) գաւառի մէջ:

ԲԱԳՆԱՆՔ կամ ԲԱԳՈՒՆՆՔ. — Արշակ թագաւորի ժամանակ այս անուամբ տոհմ մը և իշխանութիւն կար ի Հայոս:

ԲԱԳՆԱՅՐ կամ ԲԳՆԵՐ. — Գիւղ և ի հնունն նշանաւոր վանք Այրարատայ Եփրակ գաւառի մէջ, գրեթէ երկու փարսախ Անիէն հեռու արեւմտակողմը, նոյնչափ ևս հեռու է Արածա լեռան գագաթէն, անոր հիւսիսային ստորոտին վրայ գեղեցիկ գերբով: Տասներորդ դարու վերջերը Պահլաւանի իշխանները հոս կանգնեցին նոյն ժամանակի հոչակաւոր վանքերէն մին: Ըստ պատմաց վանացս բուն կանգնողն է Սմբատ Մաղիսարոս: Բագնայր գիւղը կը կարծուի թէ Բագարանի նման հեթանոսութեան ժամանակ շատ բազիններ ունենալուն այսպէս կոչուեր է: Նախնիք վրան յիշատակութիւն մը բրած չեն, և այժմ ամայացած է ի Հայոց, կը կոչուի Ղօզլիճա, և ունի 60 տուն թաթար բնակիչ: Գիւղիս վանքը բոլորովին կործանած գետնի հաւասարած է. կանգուն կայ տակաւին իննգարեան հոյակապ եկեղեցին Ս. Աստուածածնի հանդերձ գմբեթովը, որ աւանդ բոլորովին լքեալ մնացած է, մէկ մասը այլազգեաց ամբարանոց լինելով և մէկ մասն ալ գոմ: Քիչ շատ նման է Հոտամսի վանաց եկեղեցւոյն, և անոր պէս բաժնուած է տաճարի և ժամատան. բայց ասոր տաճարը աւելի նեղ է, իսկ գաւիթը ընդարձակ քառակուսի: Չորս գեղեցիկ և մեծամեծ սիւներ կը բարձրանան ժամատան մէջտեղէ և

12 որմայեց սիւներ վեր կը բռնեն կամարակապ ձեղունը: Ճիշդ արեւմտեան դրան գիմաց՝ կայ ուրիշ գուռ մը գէպի արեւելք, ուսկից կը մտցուի տաճարը, յորում չորս ստուար և բազմանկիւնի որմայեց սիւներ և երկու փոքր ևս արեւմտեան կողմէն կամարակրցած իրարու հետ, ինչպէս նաև երկուք ալ խորանին երկու կողմերէն, վեր կը բռնեն վայելչաշուք գմբեթը: Տաճարին լայնութիւնն հազիւ 8 մետր է և երկայնութիւնը 14: Տաճարի հարաւային կողմն ալ գուռ մը կայ և գիմացը ցած գաւիթ մը երկու կարգ սիւներով և կամարակապ: Ասոր ծայրը կան իւրարու մօտ երկու հաւասարաչափ և գմբեթաւոր մատուաներ, որոց մին որ անմիջապէս տաճարի մօտ է, այժմ բնակարան դարձած է այլազգեաց, և կը պատուի մօտը գանուոյ առանց արձանագրի շիրիմ մը, որուն համար կ'աւանդեն թէ Ս. Լուսաւորչի է: Բայց եթէ Ս. Գրիգորի նշխարներէն ամփոփած են Բագարանի մէջ, աւելի հաւանական է որ լինէր երկրորդ մատրան մէջ, սրբըստ արձանագրաց նուիրուած է Ս. Գրիգորի: Գիւղիս մեծ եկեղեցին ունի թէ՛ ներքուստ և թէ՛ արտաքուստ բազմաթիւ արձանագրութիւններ, որոնց ծանօթ թուականներն կը վերաբերին ԺԱ-ԺԲ դարուց: Եկեղեցւոյն շուրջը, մէջը աննելով նաև կրկին մատուաները ի հնունն սլարոպապատ էր և այժմ միայն հետքերը կ'երեւին: Պարսպապատէն զուրս քարքնիկց մը հեռու եկեղեցւոյ հիւսիսային կողմը կան ուրիշ երկու մատուաներ իրարու մօտ, որոց մին մեծագոյն է և ունի կաթուղիէ, դրան վրայ ևս կայ 1223 թուականաւ համառօտ արձանագրութիւն մը: — ԺԱ դարու առաջին կիսուն Բագնայրի մէջ իմաստութեամբ կը փայլէր Մխիթար վարդապետ, զոր ուրիշ գիտնական վարդապետաց հետ՝ Պետրոս Գետապարձ կաթողիկոսը տարաւ ի Կոստանդնուպոլիս: — Տեղգր. Հայտ. 176-189: Եփրակ, 111-121: Եւ այլն:

ԲԱԳՆԱՅ ԱՒԱՆ ՏԵՍ ԲԱԳՈՒՄԱՆ:


ԲԱԳՈՒ կամ ՊԱՔՈՒ. Գղ. BAKOU. Ռ. Баку. — Հին և նշանաւոր գաւառագլուխ քաղաք Փայտակարանի Բագաւան գաւառի, ծովեզերայ մասին վրայ շինուած: Պատմու-



Թեան մէջ ծանօթ է խիստ կանուխ, մինչև 1500 տարի առաջ: Խորենացոյ աշխարհազրուծեան մէջ Աղուանից 12 նահանգաց շարքի մէջ կ'երեւի և Բագուն՝ Բագաւան անուամբ: Կ'երեւի նաև կրակոտ երկիրը Եօթնփորակեան Բագինք անուամբ, որ այժմ կ'ըսուի Սուրախանի, և կրակի բոցը այժմ ևս գեանէն կը բարձրանայ երբ քանի մը մետր կը փոքեն և հորի մէջ լուցկի կը վառեն: Այս կրակոտ երկիրը Քրիստոսի 500 թուին Աղուանից Վաչագան թագաւորը, որ կը նստէր Պարտաւ քաղաքը, օժիտ տուեր

Շէնքերը կառուցուած են մաս մը բարձր գիրքով և մաս մը տափարակ տեղոյ վրայ. առջեւ ունի խաղաղ և վաճառաշահ նաւահանգիստ, որոյ նաւերը Անգլիասոսեան աշխարհէն կը բերեն զեղեցիկ գործուած գորգեր, շալեր, մետաքսեայ գործուածներ, ընտիր և անուշահամ սեխ, կն. Ռուսաստանէն կը բերեն ուստի սպորանքներ, արծաթեայ և ոսկեայ անօթներ, կն. իսկ Պարսկաստանէն լիման, նարինջ, ձիթապտուղ և ուրիշ տեսակ մրգեղէններ:

Բագունի մէջ իբրև նշանաւոր հնութիւն կը



177. Բագու քաղաքի ընդհանուր տեսարանը:

էր իւր Վարսենիի գտեր, որոյ ձմերոցը Բագուն էր, իսկ ամարանոցը Շամախին:

Քաղաքս կառուցուած է Կասպից ծովի արեւմտեան եզրերին վրայ անձանօթ ժամանակներէ, միայն Բագու անունը կը յիշեցնէ նախնի բաղնեաց պաշտամունքը՝ զոր կը մատուցանէին կրակապաշտ Պարսից մուգերը և բուրմերը ինքնաբոլոյն կրակին, որ հրաբուլոյնի պէս միշտ կը մխար և կը վառուէր Բագունի շրջակայքը Ափշերոնի թերակղզոյն մէջ Սուրախանի ըսուած տեղը, ուր տակաւին մնացած է հին ատրուշան մը:

Համարուի հին խաներու պալատն և ամրոցն, որ կրկնապարիսպ է, ունի բաւական ընդարձակութիւն և ծովահայեաց գիրք: Պարիսպներու բարձրութիւնն է 8-10 մետր և լայնութիւնն 2 մետրէն աւելի: Թէ՛ պարիսպները և թէ՛ բուրգերը ամբողջապէս շինուած են տորոնագոյն սաշած քարերով: Կանգուն կայ նաև բարձր աշտարակ (մինարէ) մը, որ Ռուսաց տիրապետութեան ժամանակէն սկսեալ մինչև ցայժմ կը ծառայէ իբրև լուսատու փարոս նաւաւարաց: Արտաքին պարսպի հիւսիսային զրան վրայ զետեղուած է հին ցլա-



զուրկ արձան մը: Բերդի գրանց, աշտարակաց և պալատի որմնց վրայ կան բազմաթիւ քիւֆի և արաբ գրով արձանագրութիւններ: Յայտնի նշաններէ և հետքերէ կը յայտնուի թէ երբեմն նորոգութիւններ եղած են պարսպաց և միւս մասանց վրայ: Ազգային ճանապարհորդ մը կը համարի թէ քաղաքիս բերդը մնացած լինի Հայոց Արշակունի թագաւորաց ժամանակէն: Բազուն հետզհետէ անցած է Հայոց, Աղուանից, Պարսից, Թաթարաց, կրկին՝ Պարսից, և ի վերջոյ 1808ին Ռուսաց ձեռքը: Յիցիանով ուս զօրավարը 1806ին գալով գրաւելու քաղաքիս բերդը, թշնամոյն նենգութեամբ կ'սպանուի, սրուն մահարձանը կանգնեց հայկազն Թովմաս Յովհաննիսեան Ալվազեանց: Բազուն երբեմն (1850—1860) կը համարուէր Շամախու արտորանոցն. իսկ 1860 թուէն սկսեալ մինչև ցայժմ օր աւուր զեղեցկանալու, բարդաւածելու և յառաջադիմելու վրայ է բաղաքս: Ասկէց 40 տարի առաջ ունէր հազիւ 50 տուն հայ և քանի մը հարիւր տուն թուրք բնակիչ, որք կը պարապէին ձկնորսութեամբ և առետրով. իսկ այժմ գրեթէ 2200 կը հաշուին Հայոց բնասնեակր աները, կան նաև բազմաթիւ Հայեր որք բնասնեաց տէր չեն: Հետեւեալ ցուցակի (1893տ.) մէջ կը ներկայացնենք Բաղուի մէջ ապրող բնակչաց թիւը, ըստ իրենց ազգութեան.

	Ար.	Իգ.	Գումարն
Հայք. . . . .	17483	7007	24490
Մահմէտականք . . . . .	22974	14556	37530
Ռուսք . . . . .	12570	9020	21590
Լեհք, Հրեայք, ևն.	1996	1203	5201
<b>Գումարն. . . . .</b>	<b>34825</b>	<b>51788</b>	<b>86614</b>


Հայք բնդհանրապէս կրպակաբնակ են, և կ'ապրին վաճառականութեամբ, արհեստով, և ծառայութեամբ նաւային ու նաւթային գործոց և գործարանաց մէջ, ինչպէս նաև ուրիշ քաղաքական և պետական պաշտօններով: Մահմէտականները, որ կը բնակին բերդի և քաղաքի հարաւային կողմը, բարձրովին անկարգ և խան ի խուսն շինած են իրենց աները և խանութները. բնդհակառակն բարեկարգ և գեղեցիկ շինուած են Հայոց աները, խանութները և իջեւանները:

Ծովեղբերը պարսպուած է մեծամեծ աշած բարերով, իբրև պատուար ծովու պէկոծութեանց պէմ: Բազուի մէջ կան 3 գործարանը շոգենաւեր և առադասանաւեր նորոգելու համար, և ուրիշ 10 գործարանը ձուլելու և գործիքներ շինելու համար: Սեւ քաղաք կոչուած մասին մէջ ալ կան 180 գործարանը միայն նաւթ սպիտակացնելու համար: Բազուի բնակչաց կենցաղաւարութեան, ապրուստի, կառավարութեան, սովորութեան և ամենայն հանգամանաց համար պետար է գրել, ըստ սրում գանազան աշխարհներէ, քաղաքներէ և վելզերէ ժողոված, գրեթէ իւրաքանչիւրը մէկ մէկ սովորութիւն ունի իւր երկրի և տեղոյ կառավարութեան համաձայն: Քաղաքս ունի 3 Ռուսաց, 2 Հայոց, 1 Կաթոլիկաց եկեղեցիներ, Լուսերականաց տաճար մը և 11 մզկիթ: Հայոց եկեղեցիները քարաշէն են, մին՝ Ս. Աստուածածին կը գտնուի հին թաղը բերդի մէջ ծովեղբերի մօտ, տարածութեամբ փոքր է, նեղ պարբապի մէջ անուած, որ նորոգուած է 1799 թուին հին մատուռի մը տեղը: Այլ հին մատուր, ըստ աւանզութեան, շինուած է եղեր այն բազնեաց տեղը, որ կանգնած էին մին իբրև կրակի շատուած և միւսն ծովի, զորս կործանեց Եղիշէ առաքեալը Աղուանից աշխարհը պացած միջոց, և տեղը կանգնեց Քրիստոսի խաչի նշանը, որ յետոյ Մեսրոպ թարգմանիչը շինեց մատուռ յանուն Տիրամօրն: Իսկ Աղուանից Վաշագան բարեպաշտ թագաւորը փրկչական 500 թուականին կառոյց եկեղեցի. ըստ այժմ Բազուի ամենէն հին և նշանաւոր ուխտատեղին է Ս. Աստուածածնի եկեղեցին: Եկեղեցոյս վերջին նորոգոյն է Նախիջեւանցի վաճառական Մարկոս աղա Թառաւուսեանց և եղբարքն՝ Չօնրապ, Յովհաննէս և Կարապետ: Շինութեան և նորոգութեան արձանագրութիւն չունի: Ներսը կան միայն մի քանի գերեզմանաց վրայ ապանագրութիւնք: Իսկ երկրորդ եկեղեցին նուիրուած է Ս. Գրիգոր Լոռաստորչի, և կը գտնուի մեծ հրապարակի վրայ: Ժողովրդեան արօք (մօտ 16000րորդի) շինուած է 1863—1869 տարիներու մէջ, և շրջապատուած չափաւոր պարսպով, սա ևս արձանագրութիւն չունի: Քաղաքիս Հայք երթա-



լով բազմանալով, վերջին տարիներս երրորդ եկեղեցւոյ մը ևս պէտք գգացին, որոյ համար յատուկ անդ մը ևս ստացան երկաթուղւոյ կայարանի թաղի մէջ: Բագուի մէջ նշանաւոր է նաև Հայոց գերեզմանատան նորաշէն փոքրիկ մատուռն Ս. Յարաշրեան, որ գեղեցիկ և բարձր զիրք ունի: Այս մասրան ծախքն բրած է Տփլիսեցի Հայազգի Մարիամ Գրիգորեան Միքառձե, որ յատուկ արձանագրութիւն մ'ալ 1894 թուին գետեղել տուաւ հիման մէջ: Հայոց այս և

անկար և անտէր աղբաւաններ: Այս Մարգասիրական Ընկերութիւնն իւր գրամական օժանդակութիւնը և խնամքը կը տարածէ նաև Աղուանից գաւառներու աղբատ գլորոցներու և այլ չքաւոր ուսանողներու վրայ: Մարգ. Ընկերութիւնն ունի նաև ճոխ մատենագարան մը հայերէն, սուսերէն և գաղղիերէն բազմաթիւ գրքերու և ազգային ու օտարազգի թերթերու և հանդէսներու: Բագուն ունի նաև Հայոց սպարան մը՝ Արօրի տպարան, որ երբեմն երբեմն կը հրատարակէ



178. Բագուի Հայոց Ս. Լուսաւորչի եկեղեցին:

կեղեցիներն ունին նորաշէն, փառաւոր, և ուայարկ ուսումնարան մը, որ ունի մեծ սենեակներ և դասարաններ. այս ուսումնարանի երրորդ յարկը կը ծառայէ իբրև թատրոն: Ս. Մեսրոպեան երկդասեան ուսումնարանը ունի մօտ 200 աշակերտ. իսկ Ս. Հռիփսիմեան օրիորդաց երկդասեան ուսումնարանն ունի 180 աշակերտուհիք: Վաղաքս ունի նաև Հայոց Մարգասիրական Ընկերութիւն հաստատուած Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ, որ շինած է իւր ծախքով փառաւոր Աղբատանոց, ուր կը պատասպարուին շատ

գրքոյկներ, և տակալին նշանաւոր գործ մը և արգիւնք մը յառաջ բերած չէ: Բագուի ազգայինք ընդհանրապէս նիւթական լուսարութեան մէջ կը գտնուին, և երանի թէ փոյթ և խնամք տանէին ազգային լուսարութեան և յառաջադիմութեան գործին: — Ամրան ծանր է քաղաքիս օդը և կլիման, իսկ ջուրը բիշ մը աղահամ և անախորժ, որոյ համար քաղաքապետութիւնը կ'աշխատի ու կը մտածէ կուր գետէն ջուր բերել տալ: Ինչպէս Բագուն հեռադիրներով հարկակցութիւն ունի ամէն աւրութեանց եր-



կիրներու հետ, նոյնպէս հան ամէն նաւթա-  
հանք, ամէն գործարան և հիւրանոց, մէկ  
խօսքով ամէն մարդու գրասենեակ հաղորդակ-  
ցութիւն ունին միմեանց հետ հետախօս լծե-  
լերով:

Բազու բառի ստուգաբանութեան կամ  
նշանակութեան համար տեղացիք Հայք և  
Թուրքք կը յիշեցնեն Բաղքիշ բառը՝ որով  
կ'անուանեն Բագո ի բերդը, որ Ֆարսերէն  
կը նշանակէ հօգմահար, իբրև հիւսիսային  
մշատեւ հոյի առաջն առնող, որ կը կո-  
չուի նաև Խաղրի կամ Խաղրաց բամի,  
վասն զի կը փչէ Խաղրաց (Չերքէզ — Չէչէն)

և տեսակ, այսինքն սպիտակ, կանաչ և սև:  
Հանքերը կը պատկանին զանազան ընկե-  
րութեանց և սնձանց, զոր օրինակ՝ Կաս-  
պեան ընկերութեան, Արարատեան ընկերու-  
թեան, Գաղթան ընկերութեան, Մասիս ընկե-  
րութեան, և այլն: Իսկ Սուրխանի կոչուած  
տեղը կը բղխէ միայն սպիտակ նաւթ: Ի  
սկզբան մենափաճառի (monopole) ժամա-  
նակ արտահանուած նաւթի քանակութիւնը  
քիչ էր, իսկ մենափաճառի վերնալէն վերջ  
տարի տարուան վրայ արտահանութիւնը  
շատցած է: 1876ին հանած են 195000  
տակառաշափ հում նաւթ և 55000 տկոչփ:



179. Տեսարան Բագուի նաւթաղբիւրներու:

աշխարհէն: — Քաղաքիս լճակները կամ փո-  
ղոցները կը կոչուին հետեւեալ կերպով.  
Հայոց փողոց, Վարակցոյվսկի, Յիցիանոյվս-  
կի, Ծովեզերքի փողոց, Ռոշասց ևոր և,  
կեղեցոյ փողոց, Եանախոշ ձանապարձի  
փողոց, Հայոց ոշուսմեարանի փողոց, Մա-  
լսկանի այգոյ փողոց, Երկարոշոշոյ կայա-  
րանը տանող փողոց, Գերեզմանատուն տա-  
նող փողոց, Բարեառիկնկի փողոց, Գոշի-  
բագիկնկի, Գազանարի, Բայիլի, Բիբիկէյ-  
բար, Չամբարարեանը:

Բագուէն 10 վերտո հեռու դէպի հիւսիս կը  
գտնուին նաւթահանքերը Բալախանի ըսուած  
տեղը, որ կը բղխէ առատ նաւթ երեք զոյն

գտուած նաւթ, իսկ 1890ին 3000000  
տկոչփ. հում և 1000000 տկոչփ. գտուած  
նաւթ: Նօրելեան եղբարք առաջինը եղան,  
որք քաղաքիս մէջ հիմնեցին հոշակաւոր տուն  
և գործարան, բարեկարգելով և զվարցնելով  
նաւթային գործը զանազան եւրոպական նոր  
նոր մեքենաներով և գործիքներով: Միւս  
գործարանատեարք ևս հետեւելով Նօրելեան  
գրութեան, այժմ մեծ քանակութեամբ և աւելի  
զիւրին կերպով նաւթ կ'ստանան: Նաւթը մար-  
բող գործարաններն՝ որ Սեւ քաղաք անունով  
լճակի մէջ կը գտնուին, Բալախանէն նաւթը  
կ'ստանան ընդերկրեայ լճափուս երկաթեայ  
խողովակներով, և գտել ու մարբել վերջ



կ'ուղարկեն այլ և այլ աշխարհներ ի վաճառ: 1894 թուին լժե ցամաքով և թէ ծովով արտահանուած է Բագուէն 4722760 տակառաչափ նաւթ: — Այս նաւթահանքերու մօտ՝ 5 վերստ հետու կը գտնուին ինքնաբոս հրաբուխներ Սուրախանի կոչուած տեղը, ուր Հնդկաստանէն եկած կրակապաշտներ մնացած են մինչև Բագուի շէննալը և բազմամարդանալը, և ուր կայ տակաւին, ինչպէս յիշեցինք կանխաւ, ասորուան մը: Քառակուսի և բարձր շէնք մի է մեր եկե-



180. Բագուի նաւթաղբիւր:

ղեցեաց գանգակատուններու նման, ուր մշտավառ անշէջ կրակը կը պահէին ու կը պաշակին: — Բագու քաղաքը նաւթէ զատ որ յայտնի է ամբողջ Ռուսաստանի, Պարսկաստանի, Եւրոպիոյ և Ամերիկոյ, վերջին առած տեղեկութեանց համեմատ, իւր շրջակայքը ունի նաև սոսիւղ հանք: Մասնական բերքերն են քրքոււմ, խալոզ, սեխ, ձմերուկ և այլ ամէն տեսակ պտուղներ: — Բագուցիներու զբօսավայրերն են Բայիլ և Բիրէէյրաթ անունով քաղաքի շրջակայքը, երկաթուղոյ կայարանի ծառուղին և բազաբամիլի ճեմերը. գարնան զլիւսուր զուարճութեան և

կերութումի տեղ է Զիրա կոչուած կղզեակը: Բագու նահանգի տարածութիւնն է 39306 քառ. կրմ. և բնակչաց թիւն է 820318 (1894), 27 առ 1 քա. կրմ. այս բնակիչներէն 63,000 հոգի հայ են: — Նկարգը. Ծամախոյոյ րեմի, 368—504: Աղոշակը, 150—154: Եւ այլն:

ԲԱԳՈՒԱՆ. Տես ԲԱԳՒԱՆ:

ԲԱԳՐԱՆ. Տես ԲԱԳՐԱՐԱՆ:

ԲԱԳՐԱՆԷՔ. — Հին գիւղ Ալիէթաձորի (Վրահայր) մէջ. կը յիշէ Վախուշա:

ԲԱԳՐԱՏԼՎԱՅ. — Վախուշաէն յիշուած հին գիւղ Ալիէթաձորի (Վրահայր):

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ. — Հին տոհմ և մեծ նախարարութիւն Հայոց, որոնց նախահաւն էր Վաղարշակ թագաւորի Բագարատ իշխանը: Ասոնց իշխանութիւն և պաշտօն տրուած էր Վաղարշակէն, Արշակունեաց թագաւորներուն թագ գնելու: Ասոնք ծագամբ Եբրայեցի լինելով՝ երկար ժամանակ իրենց աստուածապաշտութեան կրօնքը պահեցին, որուն համար շատեր ևս նահատակուեցան մեր կոսպաշտ թագաւորներէն, ու վերջը Ս. Լուսաւորչայ օրով քրիստոնեայ եղան: Այս տոհմէն ունեցած ենք շատ երեւելի անձինք, բարեպաշտ իշխաններ, քաջ և զօրաւոր թագաւորներ: Բագրատունեաց թագաւորութիւնը հաստատուեցաւ 885 թուին, և տեւեց 160 տարի մինչև 1045: Այս թագաւորութեանն ունեցանք տասուերկու թագաւորներ, որք նստան յԱնի և ուրիշ քաղաքներ, որոց առաջինն եղաւ Աշոտ՝ քաջին Սմբատայ որդին: Բագրատունեաց բնակութեան վայրն եղած է նախ Բարձր Հայոց Սպեր գաւառը, և յետոյ Այրարատ նահանգի Կոզովիտ, Արշարունիք և Շիրակ գաւառները: — Այս ցեղէն ուրիշ Բագարատ անունով իշխան մը՝ որ ազգական էր Սմբատ խոստովանողի և փեսայ Արծրունեաց, Ամիրադեան հաստատեցաւ Պատրիկ մեծ իշխան Հայոց, տիրելով Սիւմ լեւան իշխանական փառքով: — Հմախօս. Հայտ. Բ. 96—108:

ԲԱԳՐԵՒԱՆԻ. — Այրարատ նահանգի հարաւային գաւառներէն մին է Բագրեւանդ՝ որ ըստ ձեռագրաց կը գրուի նաև Բագրաւանդ: Տարածութեամբն ընդարձակագոյն կը



համարով Այրարատայ միս գաւառներէն. երկնցած է արեւելքէ արեւմուտք. սահմանքն են՝ արեւելքէն Մարդկոտն, հարաւն Տուրուբերան, արեւմուտքէն Բասեն, իսկ հիւսիսէն Հաւնունիք, Գարեղէնք և Ճակատք: Ըստ արդի աշխարհագրական բաժանման հին Բագրեւանդ գաւառին այժմ կը համասպատասխանեն Տիատին, Գարաքիլիսէ, Ալաշկերտ և Անթապ վիճակներն: Բնական գիրքով գաւառս բաժնուած է երկու գեղեցիկ դաշտադեղիններու: Արեւելեան դաշտագեղինը որ պատմութենէ ծանօթ է Չիրաւ անուամբ, կը տարածուի Նպատ լեռան հիւսիսային և արեւելեան կողմերը: Այս գաշտի միջառայրէն կը հոսի Եփրատ (Մուրատ) գետի արեւմուտք, այստեղ է Ս. Յովհաննու հոշակաւոր վանքը՝ հին Բագրեւանի կամ Դիցաւանի տեղը, ինչպէս նաև Տիատին գիւղաքաղաքը, որոյ հարաւային կողմն կան բազմաթիւ ջերմուկներ: Արեւմտեան դաշտագեղինը կը տարածուի Սուկաւէտի արեւելեան հարաւը մինչև Չիրոյ հայ գիւղը: Բագրեւանդայ արեւմտեան մասն որ Ալաշկերտ ևս կը կոչուի, բնած է մեծաւ մասամբ Շէտեան գետոյն ձախ հովիտը, յորում են Թօփրաբգալէ (Վաղարշակերտ) և Գարաքիլիսէ վիճակազուն գիւղաքաղաքները:

Բագրեւանդ գանուելով մեր նախնեաց Հայկազանց հնագոյն բնակառայրերու մէջ տեղ, այսինքն Այրարատայ հարաւակողմը և Տուրուբերանի Հարք և Ապահունիք գաւառաց հիւսիսակողմը, տարակոյս չկայ թէ իւր մէջ բնակեցան Հայկայ սերունդները: Ի սկզբանէ յարակից մասն եղած է Այրարատայ, և անուան կազմութիւնն ալ յատուկ ձեւ մը ունի, և ո՛ր և է տոհմի մը կամ ազգի սեփհականուած չէ: Գոտար է անուանս ճիշդ ստուգաբանութիւնն ընել, թէ և անդ մասնիկը ծանօթ է տեղական նշանակութեամբ հանդոյն ուրիշ քանի մը գաւառաց, ինչպէս Վանանդ, Մարաւոյ, Չարեւանդ, ևն. բայց բուն անունը Բագը կամ Բագրեւ չի գիտցուիր հայկական է, թէ պարթեական Բագ (գիւղ) անունն է, որ աւելի հաւանական կը թուի, իւր պիտաւոր շէնը լինելով Բագրեւան կամ Բագնեաց աւան: Մեր զբոսութենէն առաջ, օտար ազգաց ծանօթ և

զած սակաւաթիւ անուններէն մին է և Բագրեւանդ, վասն զի կը յիշատակուի Պաղովտան (Ե. ԺԳ) Բագրաւանդեան կոչմամբ Βαγρυσανδραγί, և զանազան ձեռագրաց գրութեան համեմատ Բագրաւանդեան Βαγρυσανδραγί: Արքունի սեփհականութեան մասն լինելով ի հնունն, չունի առանձին առհմային պատմութիւն և ոչ զօրաց գունդ աշխարհախումբ բանակի մէջ, ինչպէս նաև նախարարներ և իշխաններ: Քաղաքականէն աւելի նշանաւոր եղած է գաւառս եկեղեցականին, կամ լաւ ևս կրօնականին մէջ. վասն զի քրիստոնէութենէն իսկ առաջ հոս հաստատուած են կրօնական պաշտամունք և գաւառիս պայծառութեան և զարգացման մեծապէս նպաստած: Հին հեթանոսական պաշտամանց Ս. Լուսաւորչի ձեռքով յաջողեցին քրիստոնէական տօներ և հանդէսներ: Ս. Գրիգորէն հաստատուած է գաւառիս եպիսկոպոսութիւնը. այս եպիսկոպոսներէն սմանք կը յիշուին ի գիրս: Մինչև Մ. Խորենացիի ժամանակը գաւառիս եպիսկոպոսը կ'իշխէր նաև Արշարունեաց վրայ: Գաւառիս Տուրք անուն եպիսկոպոսը կը յիշուի Մակարոյ Երուսաղէմի հայրապետի թղթոյն մէջ, յորում կը կոչուի նաև եպիսկոպոս Բասենոյ, և ինչպէս կ'երևի սա փառասիրութեամբ կ'ուզէր ստանձնել նաև արքեպիսկոպոսական պատիւ: Մեծն Ներսէս Յունաստան գացած միջոց, Ս. Խալէ որ նոյն ժամանակ սարկաւազապետ էր, եպիսկոպոս ձեռնադրեց գաւառիս և Արշարունեաց: Խալայ յաջողեց իւր փեսայն Ասրիկ: Հինգերորդ դարուն Վարդանանց ժամանակ Բագրեւանդայ եպիսկոպոս կը յիշուի Արտաշատու ժողովին մէջ, Եզնիկ կամ Եզնակ ոմն, որ կը կարծուի կողբացին, և ասոր յաջորդած կը թուի Մովսէս Խորենացին: Ասկէց գրեթէ դար մը միջոց չեն յիշուիր գաւառիս եպիսկոպոսներ, բայց միայն 525 թուին Տիրիկ և քանի մը տարի վերջը ոմն Մարկոս. յետոյ Ը դարու սկիզբը Ստեփանոս: Ստեփանոսէն վերջ Բագրեւանդայ անուամբ եպիսկոպոսը ծանօթ չեն և կամ չեն յիշուիր մինչև ԺԳ դար, յորում կը յիշուի Թադէոս եպիսկոպոս Բագրեւանդայ: ԺԳ դարէն մինչ ԺԷ ժամանակամիջոցի եպիսկո



պոստեր ևս յայտնի չեն. իսկ ժէ. զարէն սկսեալ մինչև ցայժմ՝ դաւառիս եպիսկոպոս կը համարուին Ս. Յովհաննու վանաց առաջնորդները :

Բագրեւանդ իւր մէջերկրեայ զիրքովը և երկայն տարածութեամբը, շատ բազաբական դէպքերու ենթակայ և ականատես եղած է : Յունաց և Պարսից բազմամեայ պատերազմաց ժամանակէն կը յիշուի. իսորով Ա Անուշուկան (576ին) Փոքր Հայոց սահմանները զիմած ատեն գաւառէս անցաւ :



181. Անմահ Մուխթար Փաշայ սպարապետ :

ինչպէս նաև Հերակլ կայսրը Պարսից վրայ զիմած ժամանակ : — Արշակունեաց թագաւորութեան վերնալէն վերջ՝ մեր աշխարհի արեւմտեան մասին հետ, դաւառս ալ կը թուի թէ անցած է Յունաց կայսերաց տիրապետութեան տակ. իսկ առանձին հայկական սեփհականութիւն եղած կը թուի՝ նախ կամ սարական իշխաններու, որոնց բնիկ երկրին Երասխաձորի սահմանակից ևս էր հարաւային կողմէ. և Արաբացոց հին պատմիչները, կը վկայեն, թէ իրենց աշխարհակալութենէն առաջ, Շիրակ և Բագրեւանդ մէկ իշխանի

վիճակ էին. և կ'ըսեն թէ Հայոց կողմանց առաջին նուաճողն է Հայկիզ զորավարը : Արաբացոց նուազելէն կամ Հայոց յունական բաժինը մեկնելէն վերջ, (Ը դարուն), կ'երեւի թէ Բագրեւանդ վիճակած է Մամիկոնեանց առհմին, և մնացեր է անոնց ձեռքը մինչ ժ զար, որոնք անբաւ քաջութիւններ և պատերազմեր բրին Արաբացոց բռնակալութեան միջոց. ինչպէս Մուշեղ Հրամստ կոմսին որդին (771—3 թուականներուն) հարստահարող հարկահանները իւր բնիկ Տարօնոյ գաւառէն հալածելէ վերջ, և կաւ նաև Բագրեւանդ և քաջութեամբ յաղթեց այլազգեաց : Ժ դարուն վերջերը, այլազգիք մասամբ մը ապականեցին այս գաւառս, երբ ի վրէժինդութիւն բնոյզմ Պաւթի կիւրապաղատի Մամիկոն ոստիկանին ձեռքով խմբուած էին, և ինչպէս կը գրէ Ասդիկ (Գ. 18), « . . . զամբարօք և ջահիր այրեցին զգիշերն ամենայն զկողմն Բագրեւանդայ՝ յուով շէնս՝ որ ըստ արեւելից. և ինքեանք զարձան յերկիր իւրեանց » : Ռւրիշ բազմաթիւ պատերազմերէ զատ յիշելու արժանի է գաւառիս մէջ երկու խորխտ բռնակալաց Լէնկթիմուրի որդւոյն Նահ—Ռուհի և Գարա Էուսուֆի որդւոյն Սրէնտերայ պատերազմը, որ տեղի ունեցաւ 1422 թուին : Թ. Մեծօփեցոյ պատմութիւնէն յայտնի է որ գաւառս Թուրքմանաց բանակի տեղի եղած է, զուցէ անոնցմէ իսկ առաջ ծաւալած էին այս կողմերը Քրդերը, ուր իրենց զխաւոր ցեղը Բագուշի կը կոչուէր : Գարուս սկիզբները և այժմ այս կողմանց հզօր և բազմաթիւ ցեղը կը կոչուի Սեպիքսելը կամ Սիվքանը, որը ազգակից են Հայտերանը Քրդաց : Օսմանեանց և Ռուսաց առաջին պատերազմաց ժամանակ, երբ Ռուսք նըւաճեցին Պայէզիար, ապստամբեցան նաև գաւառիս Հայք, բայց հաշտութեան պայմանէն վերջ, վախնալով Թրքաց վրէժխնդրութիւնէն, հարիւրաւոր ընտանիքներ թողլով իրենց հայրենի հողը և զերեզմանները, Ռուսաց բանակին հետ գաղթեցին Շիրակայ արեւելեան մասին մէջ, ուր կը բարգաւաճին մինչև ցայսօր զանազան զիւղերու մէջ տարածուելով : — Այսպիսի պատերազմական դէպքեր և գաղթականութիւններ եղան նաև



1877 տարւոյ պատերազմի միջոց: Վասն զի Ռուսները Տիւտինի և Պայէլիտի նուաճելէն վերջ, մայիսի կիսուն իջան այս գաւառս հայկազն Տէր Ղուկասովի առաջնորդութեամբ, և շատ օրեր Բագաւանի մէջ բանակելով, յետոյ յունիս կին եկան արեւելից նաև Գարաքիլիսէ աւանին, որովհետև անկէջ ալ հետացած էին Թուրքերը, և ապահովեցին Շամ-Կոյի լեռնանցքը, որով և իրենց Կազդուան դանուդ գնդին հաղորդութիւնը: Յետոյ առաջ գալով տին Ալաշկերտ գիւղաքաղաքը և Զէյտիկեան գիւղը: Ասկէջ վերջը մինչ կ'ուղկին արշաւել Բասնի գաշաքը օսմանեան բանակին վրայ, անոնց քաջ սպարապետը Ահմէտ Մուխթար փաշայ, փութով զրկեց ասոնց վրայ զՄեհմեդեա Փաշայ, որ անցնելով Տրոս լեռան Սեա Կապանէն (Գարա-աւերջնա), բանակ դրաւ յարմար տեղ մը, այն լեռանց լանջաց վրայ՝ որ կը նային Ալաշկերտի գաշաք: Յունիսի 16ին բանակները բաղխեցան, և մեծ կռիւ լինելէն վերջ, Թուրքաց զօրավարը ինկնալով, ետ մղուեցաւ անոնց զօրքը, որոնց հետ նաև անգլիացի Քեմպոլ զօրավարը: Ռուսներն ալ ետ գտնուալով բանակ զրին Տաղար գիւղի մօտ Տրոս լեռան ստորաքը, ուր իրենց հասաւ Մուխթար սպարապետը (յունիս 20ին), և մեծ ջանքով քարալեռան մը վրայ հանել տուաւ երեք մեծամեծ լծողանօթներ, որուն համար Թուրքերը այն լեռը Թօփ-տաղ կոչեցին: Արտոյլ օր մը յաջողութեամբ սումը ձգեցին Ռուսաց բանակը, որը նոյնպէս քաջութեամբ պատերազմեցան, բայց Տէր Ղուկասով տեսնելով թէ մթերքները կը պակսին, 500 հոգի կորսնցնելով ետ դարձաւ. իսկ Մուխթար լսելով որ լծնամեաց ուրիշ գունդ մը կը գիմէ իւր Զայիմի բանակին վրայ, փութաց այն տեղ Լօսիս Մելիքովը վանելու: Ռուսները Բագրեւանդէն մեկնելէ վերջ, շրջակայ լեռներէն վար իջան Քրդերը, ոչ միայն Տէր Ղուկասովի բանակին լծողածները աւարելու, այլ և Հայոց գիւղերը կորստաբերու համար: Այս պատճառաւ և Թուրքաց երկիւղէն 2000էն աւելի հայ ընտանիքներ Ռուսաց բանակին հետ անցան Ռուսաստան, շատ առաւպանքներ կրելով օտարութեան մէջ, որոնց

մէ շատերը մեռան խեղճութենէ, կէսը մնացին իրենց պացած տեղերը, և կէսն ալ ազդակցաց սղարմութեամբ վերադարձան իրենց ամայացած աւուները: Վերջին տարիներս ալ ոչ սակաւ թշուառութեանց ենթակայ եղան գաւառիս Հայք, և շատեր գաղթեցին Ռուսաց բովինը: Գաւառիս վրայ առանձին գիրք մը հրատարակած է Ս. Հայկունի Բագրեւանդ Զրարաշի գաւառ վերնագրով, տպուած 1894ին Ս. Էջմիածնի տպարանը: — Այրարատ, 520-526: Ստորգր. հիւն Հայաստ. 402-412: Եւ այլն: Տես ԱՎԱԿԻՆՔՏ:

ԲԱՒԵՈՅ.— Եթեմանասուն կամ ութսուն անէ բազկացած վիճակ մի է Տուրուքերանի Ապահունեաց գաւառի արեւելակողմը. ըստ այժմեան բաժանման կ'ինկնայ Մանազկերտի, Արճէշի, Անթապի և Երզրկան գաւառի միջալայրը և կը պատկանի Անթապի կառավարութեան: Երեք հայ գիւղեր կան վիճակին մէջ, որոց վրայ կ'իշխէ Հայտարարի Հիւսկին ազան: Այս տեղ խանութ անունով աղջկան մը գլխէն անցած են մեծ գետերը՝ Գիւլիգարէն աւելի, զոր փախցնել տուաւ Մուսա Պէյ: Բազոնց բնութեանց կը կարօտի, ունի հին եկեղեցիներ և սրտանմիկ աւերակաց կոյսեր, ինչպէս նաև 3-4 սեպածե արձանագրութիւններ: Վիճակիս հայ բնակիչը գաղթած են ի Ռուսիա, այդ պատճառաւ այժմ խիստ սակաւաթիւ են: Երկիրը ընդհանրապէս գաշտային է և խտաւաւ: — Բագրեւանդ, 319-320:

ԲԱՒԻՆԹԻՎ.— Գիւղ Զմիկածագու առաջնորդական լծովին. ունի 1 եկեղեցի Ս. Յակոբ, և 12 տուն հայ բնակիչ:

ԲԱԶ.— Հեքիարիի վիճակներէն մին:

ԲԱԶ.— Գիւղ Վասպուրականի Արեւրանի գաւառի մէջ:

ԲԱԶԱՅԵՐԿ կամ ԲԱԶԱՅԻՔՏ.— Գուգարաց Երտրիոր գաւառի մէջ, անառիկ զգեակ մ'է բլրակի մը կատարը, զոր կառուցած է Հայոց Բագ նահապետը, ինչպէս կը պատմէ Վարդան: Կրաշէն է և մեծամեծ քարերով. շրջապատեալ է արուարձաններով, հոս կը տեսնուին խիտ առ խիտ բնակութեանց տեղեր, և մայրի ծառեր: Բերդս կ'ինկնայ խոռակերտ աւանին արեւմտեան հիւսիսային կողմը. զիմացէն խոխոջալով կը վազէ Լալվա-



րու գետակը: Բազարերդ շատ անգամ ապաստանարան եղած է բրիտանեկց, և Պարսից կատաղի յարձակմանց գիմաց մնացեր է անտոխի: — Զաչալ. Ճեպրն. Ա. 83:

ԲԱԶԱՐՈՒՆ. — Գիւղ Չմէկաձագու առաջնորդական թեմի. ունի 1 եկեղեցի Ս. Աստուածածին: և 21 տուն հայ բնակիչ:

ԲԱԶԱՐԱՇԷՆ. — Կը յիշէ այս անուամբ բնդարձակ երկիր մը, Սիմէն կաթողիկոս, որ սեփհականութիւն է եղեր Այրարատայ Կոտայք գաւառի Չազախանուց:

ԲԱԶԱՐ ԶԱՅ. Տես ՊԱԶԱՐ ԶԱՅ:

ԲԱԶ-ԲՈՒԹ. — Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական երրորդ թեմի. ունի 6 տուն հայ բնակիչ:

ԲԱԶԵՆԻՅ ՎԱՆՔ (Ս. ԱՍՏՈՒԱՅՄԱՐԵՆ). — Մոկաց աշխարհի Սպարկերտ գաւառակի մէջ: Մենաստանս այժմ անշուք և ողբայի վիճակ մ'ունի: Նոյն գաւառակի մէջ, վանացս մտա կայ Բաղնիկց, ըստ ոմանց Բազմենից, հայաբնակ գիւղ մը, որ ունի քարաշէն եկեղեցի մը՝ Ս. Թեոդորոս:

ԲԱԶԷԻ ԲԵՐԻ. — Կիլիկիոյ հին բերդերէն մին:

ԲԱԶԿԱՌԻԶ. — Կարնոյ գաշտի գիւղերէն մին, քաղաքէն 3 1/2 ժամ հեռու հիւսիս առեւմտեան կողմը. ունի 25 տուն բնակիչ՝ մեծամասնութիւնը Թուրքք:

ԲԱԶԿԵՐՏ. Տես ԲԱԶԱՐԵՐԳ:

ԲԱԶՄԱՅՄԱԿ. Տես ՀԱՄԱՆԿ:

ԲԱԶՄԱՂԻԻԻՐ ԱՒԱՆ. — Բարձր Հայոց Մանանդի գաւառի սահմանաց մէջ. կը յիշէ Լաստիվերացին:

ԲԱԶՄԱՇԷՆ կամ ԲՈԶՄԱՅԷՆ. — Գիւղ Այրարատայ Բազրեանդ գաւառի, Մօլլա Չատէի արեւելեան կողմը. ունի 15 տուն:

ԲԱԶՄԱՌԻ. — Հայանուն՝ բայց Թաթաբարնակ փոքրիկ գիւղ, Սիւնեաց Գողթն գաւառի՝ Վանանդաձորի մէջ:

ԲԱԶՄԵՆԻՅ. Տես ԲԱԶԵՆԻՅ:

ԲԱԶՈՒ-ՁՈՐ. — Այս անուամբ ձոր մը կը յիշուի Այրարատայ Կոզովիտ գաւառի մէջ:

ԲԱԶՈՒՄ կամ ԲԱԶՈՒ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ գաշտի մէջ, Ս. Կարապետէ 1 ժամ հեռաւորութեամբ. բնակիչք Հայք և Թուրքք խառն: Ի հնունս քաղմամարդ աւանագիւղ մի էր սա, որուն

համար Զենոր (38) կ'ըսէ. «Իսկ Բազում որ թարգմանի Բազմաց կայան, (ունի) երգս՝ երեք հազար երկիրիւր. հեծեալս՝ հազար քառասուն, աղեղնաւորս՝ ութ հարիւր քառասուն, և տիգաւորս՝ վեցհարիւր ութսուն»: Գիւղս Ս. Կարապետի վանաց աստուերկու կալուածներէն մին էր:

ԲԱԶՈՒՄ. — Լեռ Գուպարաց Տաշիրը գաւառի մէջ:

ԲԱԶՈՒՆԻՔ. — Վարդան այս անուամբ ևս կը կոչէ Բազարբերդ: Անշուշտ նոյն բերդի շուրջը գտնուած աներու աւերակները, հին ժամանակ աւան կամ քաղաք մը կը ձեւացնէին, որ կը կոչուէր Բաղունիք:

ԲԱԶՊԷՆ. — Գիւղ Կիւմիւշխանէի, ունի պատուական, սպիտակ և շատ քաղցր մեղր:

ԲԱԶՐԻԱ. — Գիւղ Արգուինի, 40 տուն թուրք բնակչոր:

ԲԱԹՈՒՄ. Տես ՊԱԹՈՒՄ:

ԲԱԹՈՒՆԸ. — Թրքարնակ գիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, որ Արբերդու վիճակին յեախն սահման կը համարուի: Գրիգոր Մակուեցի կաթողիկոսը 1431-2 թուականներուն գնեց գիւղս Պարսից Ռոստոմ աւիրայէն, և համարուեցաւ Էջմիածնի սեփհական եօթն գիւղերէն մին, զոր վերջը նորէն Պարսիկները գրաւեցին: Բաթոնն էր երբեմն կաթողիկոսներու ամարանոցը, և հոն էին խոս հնձողք և իրենց արօաները:

ԲԱԹՈՒՆԻՔ կամ ԲՈՒՆԻՔ. — Վասպուրականի հին գաւառներէն մին: Խորենացին այս անուամբ գետ մը ևս կը յիշէ Բժունեաց գետ, Հոխիսիմեանց ճանապարհորդութեան պատմութեան մէջ:

ԲԱՆԱ ԲԱՆԱՅ. — Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական երրորդ թեմին. ունի 8 տուն հայ բնակիչ:

ԲԱՆԱԲԱՆԻ. Տես ԲԱԿՈՒ:

ԲԱՆԱԽԱՏԱՓ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:

ԲԱՆԱԽՈՂՈՎԻՏ. Տես ԲԱՆՈՂՈՎԻՏ:

ԲԱՆԱԽՈՒ կամ ՊԱՆԱԽՈՒ. — Գիւղ Բաբերդի՝ գրեթէ շորս ժամ հեռու արեւմտեան կողմը, Կիւմիւշխանէի ճանապարհին վրայ: Կառուցուած է բարեբեր գաշտի մը վրայ, 5015 սաք ծովուն երեսէն բարձր, հոս կ'իջեանի կարաւանը: Բնակիչք Հայք և Թուրքք խառն. Հայք 90 տուն ևս, և ու



նին 2 եկեղեցի: Ինծիճեան կը յիշէ զիւրիս մէջ Ս. Գեորգ անուամբ մենաստան մը, որոյ այժմեան միճակն անձանօթ է:

ԲԱԼԱԽՈՎԻՏ. — Վասպուրականի հին գաւառներէն մին:

ԲԱԼԱՀՈՎԻՏ կամ ԲԱԼԱԽՈՂՈՎԻՏ. — Չորրորդ Հայոց մէկ գաւառը, որուն գլխաւոր քաղաքն է Բալուս:

ԲԱԼԱՍ ՁՈՐ. — Կը յիշուի Այրարատայ վանանդ գաւառի մէջ:

ԲԱԼԱՔ. — Գիւղ Սիւնեաց Երզնէի գաւառի: ԲԱԼԻ. Տեօ ՊԱԼԻ:

ԲԱԼԻՆՁԷ. — Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական Էր<sup>Պ</sup> թեմին. ունի 10 տուն հայ:

ԲԱԼՈՎԻՏ. — Անատոսիա հովիտ Համշէնի, լի գազաններով: Հոս կը գտնուի վայրի այժ, որ մինչև հորթու շափ կը մեծնայ, և տարուան մէջ երեք անգամ մորթին գոյնը կը փոխէ. կը գտնուի նաև արջ: Հովտիս միջէն կ'անցնի Բաղովիտ անուամբ ջուր մը, որ կը խառնուի Համշէնի գետոյն հետ:

ԲԱԼՈՒ. Գղ. PALOU. — Գլխաւոր քաղաք համանուն գաւառակին, Տիգրանակերտի կուսակալութեան Արզանայի գաւառին մէջ: Ըստ հին աշխարհագրութեան կ'իսկնայ Չորրորդ Հայոց Բալահովիտ գաւառի մէջ: Կառուցուած է Արեւելեան Եփրատի կամ Արածանիի հիւսիսային ափի մօտ, 37° 44' արեւելեան երկայնութեան և 38° 45' հիւսիսային լայնութեան մէջ. 90 հզրմ. Տիգրանակերտէն հետո հիւսիսային արեւմտեան կողմը, և Արզանայի հիւսիսային արեւելեան կողմը 50 հզրմ. հեռաւորութեամբ: Քաղաքիս զիրքը խիստ աճեւ, ել և էջ և խորտ ու բորդ է. փողոցներն ալ անկանոն: Քալուս բառը կը թուի թէ հին անուն լինի, և հաւանական է որ Հայոց հեթանոսութեան ատեն Քանդ անուն կուռքին մնացած լինի. աւանդութեամբ կը պատմեն նաև, թէ այս սեղ քաղաք և բնակութեան սեղի դասալէ ատաջ՝ Բելլուսի խիստ առ խիստ անասու է եղեր, միանգամայն Քալի ծառեր, որ ցարդ կը գտնուին. երթեւեկոյ ճանապարհորդը և վաճառականը աւազակներէ միշտ կողոպտուելնուն՝ սկսեր են բնակութիւն հաստատել, որպէս զի երթեւեկոյաց ապահովութիւն լինի. որով կ'երեւի թէ քաղաքս

իւր անունն առած է Քալուսէն կամ Բալէն, և կամ Բանալէն:

Քաղաքս զետեղուած է հովտի մը մէջ, որոյ մի ծայրը օձապտոյտ ճանապարհով կ'սկսի արեւելքէն և մինչև Բալուս կը աւել տասը ժամէն աւելի. նոյն հովտին մէջէն կ'անցնի Արածանի գետը, որուն երկու կողմերը և զէմ առ զէմ լեռանց սաորոտները զարդարուած են այգիներով և պարտէզներով: Գետս Բալուսայ արեւմտեան կողմը բարձրացած ժայռի մը կը զարնուի, որ եթէ չլինել քաղաքը մեծամեծ փնաններու ենթակայ պիտի լինէր, ջրոց յորդութեան ժամանակ: Արածանին երեք կողմանէ կը շրջապատէ քաղաքս, որով թերակողի մը կը ձեւանայ. թաղերը, շուկայն և կառավարութեան պաշտօնատունը այս բաժնին մէջ են: Գետոյն վրայ փայտաշէն կամուրջ մը կայ բաւական երկայն, որուն միւս կողմը կիրճ է և կապան: Արածանիի ջուրը խիստ քաղցրահամ լինելուն՝ բնակիչք մեծաւ մասամբ կը գործածեն իրրի բույսեր ջուր. մէջը ունի պատուական ձկներ: Բալուսի բոլոր բնակիչք առհասարակ ամէն երեկոյ գետոյս զուարճագեղ ափունքը կ'ըջոնուն:

Տեղոյս օդն ծանր է, և գետէն զատ բմպելի լաւ ջուրեր չունենալուն, բնակիչք ընդհանրապէս վատաոողջ են և զեղնած զէմքերով. զրեթէ սպիտակ մազերով մէկը չի տեսնուիր հոս, և քիչեր կան որ յիսուն տարին լրացուցած մեծին: Կենաց ճաշակը խանդարեալ, մտքերն ևս հիւանդ. ծանրահամ և փաստկար թուրթի օդին ջրի բաժակով կը խմեն. և կուտարար, խարսկ, հայհոյոց անձինք են մեծաւ մասամբ. ընդհանրապէս շրջակայ զիւրացիք լաւ կեանք կ'անցնեն, ազնիւ են և առողջանձն:

Բալուն ի հնունն ունեցեր է բազմաթիւ բնակիչներ, որոնք գաղթելով նուազեր են, և 1892ին ըստ վ. Քիմելի ունէր միայն 7500 բնակիչ հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմադականք և Քուրդք.	5500
Հայք . . . . .	1700
Ասորի արաբք . . . . .	1000
Ասորի եւզուպիք . . . . .	1500
Գուճարն . . . . .	7800



Այս վիճակագրութիւնը ըստ մեզ ճիշդ չէ նկատմամբ Հայոց, որովհետեւ ուրիշ ազգային տեղագրողք աւելի շատ կը գնեն Հայոց թիւը. 1880ին ունէր մօտ 5000 Հայ բնակիչ, իսկ 1885ին քաղաքիս Հայոց ասնց թիւն էր 550. նորագոյն գրող մ'ալ կը գնէ 2600 Հայ: 1870 թուականէն սկսեալ քաղաքին և շրջակայից Հայ բնակիչք օր ըստ օրէ կը նուազին. գաղթականութիւնը բաւական ժամանակէ ի վեր մնաւ գտած է այս տեղ և կը շարունակուի: Հայոց գրեթէ հինգերորդ մասը գաղթած է Կիլիկիոյ կեդրոնն Ատանա, իսկ մնացեալները մաս մաս գաղթեցին Խարբերդ, Տիգրանակերտ, Պազըր Մաաէն, Սեբաստիա, Մալաթիա և Քոյի: Գաղթող Հայոց երրորդ մասին շափ հազիւ կ'աւելնան նորեկ Մահմետականք, որոնք կու գան Խարբերդէն, Ճապաղջուրի շրջակայքէն և այլ կողմերէ:

Քաջուն նշանաւոր է իւր հին կիսակործան բերդովն, և հեթմանոսական ու քրիստոնէական ժամանակաց վերաբերեալ նուիրական մնացորդներով: Հիւսիսային կողմը կը բարձրանայ Ս. Մեսրոպոյայ լեռը, որուն բարձրութիւնը կը համարուի 3098 սոք: Լեռանս գագաթը կը գտնուի հինաւորց բերդը, որ մեր նախնիներէն շինուած կը կարծուի: Երբ մէկը վեր ելնէ այս բերդը գիտելու, ամէն բայլափոխի կը հանդիպի վիթխարի պարսպաց աւերներու ու բեկորներու. բայլբայլուած մեծ գոնէ մը կը մտցուի միջնաբերդը, ուր կը տեսնուին շտեմարանաց, սենեկաց աւերակներ և գեանայարկ կամարափուլ շէնքեր: Այս բնակութեանց հետքերէն կը կարծուի՝ որ ժամանակաւ քաղաքը կատուցուած է եղբր բերդի մէջ: Բերդի հիւսիսային կողմը կը գտնուի բեւեռածեւ արձանագրութիւն մը քանդակուած ժայռի վրայ, 28 սոգ բաւական լաւ մնացած, զոր օրինակեց և հրատարակեց Լայնարա. հրատարակեց և մեկնեց Մորգման: Սրուանձ տեանց՝ որ աչօք տեսեր է այս հնութիւնը, կ'ըսէ. « 22 սոգ վերը և 7 սոգ վարը քանդակուած. մէջ տեղը բաց ձգուած էր, ուր սոգ մը արարերէն գիր փորագրած էին » . եթէ Հայ ուղևորիս գրածն ճիշդ է, արձանագրութիւնս 29 սոգ լինելու է և ոչ

28 ըստ երեսպացի գիտնաց: Արձանագրութեան վար գրան պէս տեղ մը կայ, որ կ'առաջնորդէ քարէ փորուած մի բանի մեծ սենեակներ, որոց միոյն մէջ գերեզմանի ձեւով քար մը կայ, որ Ս. Մեսրոպոյայ գերեզման կ'անուանուի մինչև ցայսօր. տեղացի Հաջք երբեմն երբեմն ուխտի կ'երթան հոն և կը պնդեն աւանդութեամբ, թէ Հայոց գրերը հոս գտնուեցան: Այս աւանդութիւնը կը հաստատէ նաև Վարդան պատմիչ բեկով. « Ի լեւան Քաջունայ սրբու առկաւին ցուցանի գրողին աստուածագիծ վիմին և նկարը գրերոյն, և պատուի տեղին խորհովք և ջահիւր միշտ ի տաճկաց և ի քրիստոնէից բնակչաց տեղայն »: Եոյն լճի գաբու մէջ, այս սրբանուէր ճգնարանին մէջ պայծասացաւ Գրիգոր վարդապետը՝ որ նա հաստակուեցաւ ի Խարբերդ, որուն « յանձնեցին զսուրբ Մեսրոպոյայ աղօթանոցն և կայարանն որ առ անտակի պղեակն, և զսուրբ Յակոբ՝ որ էր առաջի նորա, զոր յանձնեաւ և շինեաց վերստին պեկեղեցին և ըզվանքն, և կացոյց անդ կրօնաւորս և առաջնորդս » (Յայտմ.). այժմ աւերակ դարձած է այս վանքս և մնացորդքն բնութեան կը կարօտին: Այս քարանձաւաց մէջ տակաւին կը ցուցնեն այն տախտակը, որուն վրայ սուրբն գրած է Հայկական գրերը: Անտարակոյս Ս. Մեսրոպոյ պատրաստ գաած է այս քարայրները, որ իրմէ առաջ ո՞ գիտէին նպատակի համար կոնր կոփեր են. բեւեռածեւ արձանագրութիւնն ալ մտածել կուտայ թէ շատ հին գործ է: Բերդի գագաթին մինչև գետի եզերքը գեթնի տակէն ճանապարհ մ'ալ կայ հինգ վեց հազար կանգուն երկայնութեամբ՝ Քաղաքիս հարաւային կողմի լեռան գագաթը՝ Գոճանակը կը կոչեն աւանդութեամբ, և ուխտի կ'երթան Հայք. հիւսիսային կողմի լեռան վրայ Ս. Պողոս անուամբ վանք մը կայ եղբր ժամանակաւ, որ այժմ կ'երծանած է. հոն ես ուխտի կ'երթան ժողովուրդը: Բերդի ետեր վեպի հիւսիս հինգ հարիւր տնէ բազկացեալ տաճկաց թաղ մ'է, ուր կան երկու աղբիւր և երկու մզկիթ: Մզկիթներէն մին նորոգուած պահուն՝ հիմանց և պատերուն մէջէն քարէ խաչեր դուրս ելեր են, որոնք յա



նի նշան են թէ ժամանակաւ Հայոց եկեղեցի եղած է այդ մզկիթը :

Տներուն մեծ մասը տարածուած է Ս. Մեսրոպայ լերան զսոխիվայրին վրայ, իսկ մէկ մասն ալ նոյն լերան ստորտը: Լերան ճակատը աններուն մօտ, Ս. Թորոս անուամբ Հայոց ուխտասեղի մը կայ: Տները ընդհանրապէս կիսով մասամբ շինուած են բոլորովին հողէ և վրան հողածածկ տանիք, և կիսով մասամբ ալ հող և կէսը փայտ: Կան նաև երկայարկանի տներ, որ առջեւնին ունին փայտաշէն վանդակներով պատշգամբ, ամառը ճեմելու և ննջելու համար: Հայոց եկեղեցիները չորս են. Ս. Սահակ, Ս. Լուսաւորիչ, Ս. Աստուածածին և Ս. Կիրակոս:

Մայր եկեղեցին է Ս. Լուսաւորիչ, որ խիստ հաստատուն և հոյակապ շէնք է, խաչածեւ և գմբեթաւոր. համակ շինուած է կոխածոյ սրբատաշ քարերով, և ունի բարձր և գեղատեսիլ կաթնուղիկէ: Ս. Սահակ եկեղեցին ասկէ պրիթէ 25 տարի առաջ մասամբ մը նորոգուելու ժամանակ՝ աւագ խորանի ներքեւն բաւական մեծակ շիշ մը միտոն գանուեր է հին ժամանակէ մնացած: Քաղաքիս եկեղեցիներէն միայն Ս. Աստուածածնի և մայր եկեղեցոյ մէջ ժամասցուծիւն կ'ըլլայ, ժողովրդեան նուազութեան պատճառաւ:

Հայք ունին երկու երկսեռ պարոջներ 150—170 աշակերտներով և 80—90 աշակերտուհիներով, որք կ'ուսանին հայերէն, թուրքերէն և գաղղիերէն: Քաղաքիս Հայոց մէջ կան 30 տուն բողոքականներ, որք ունին ժողովարան և երկսեռ պարոջ մը: Չորս եկեղեցիներու անուամբ՝ չորս թաղերու բաժնուած են Բալուի Հայք՝ որոց մեծ մասը յետին աստիճանի սղէա, նախապաշարեալ և երկչոտ են: Կանայք խարրերու և Չարսանճապի կանոնոց նման չիթով կամ եագմայով կը ծածկեն բոլորովին իրենց գլուխը ու երեսները, և չեն երեւար ու չեն խօսիր մարդոց, բայց շատ աշխատաւոր են, անարար և բարեպաշտ: Տեղւոյս Հայոց գլխաւոր աստն կամ պակասութիւնն այն է, որ իրարու հետ սիրով չեն, միշտ զիրար կ'ատեն ու կը թշնամանեն: Գովեստից արժաւ

նաւոր են Մեսրոպեան ընկերութիւնը որ կը նպաստէ վարժարանաց, և Բարեխրոց ընկերութիւնը, որոյ նպատակն է տեղւոյն սղբատաց օգնութեան հասնիլ: Բալուցիք

Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ի Բ Բ Ա Լ Ո Ւ Ա Յ

Հ Ա Յ Ա Բ Ն Ա Կ Գ Ի Բ Գ Ո Ր Է Ի Յ

ԱՆՈՒԱՆՔ ԳԻՆՂԻՑ	Եկեղեցի	Տուժ
1. Հաւաւ . . . . .	2	160
2. Մըջման մեզրէ . . . . .	1	27
5. Ղամիշլի . . . . .	1	11
4. Արղղան, Արթիւան . . . . .	1	51
5. Խարաբօղբ, Ղարբօղբ . . . . .	1	25
6. Կրպոյ մեզրէ, Կրբօղբ . . . . .	—	8
7. Օղու, Եղ, Օխու . . . . .	1	27
8. Թէփէ . . . . .	1	40
9. Տիլիմիլի . . . . .	1	4
10. Քուրտիքան . . . . .	—	4
11. Գումբէթ . . . . .	1	20
12. Ղամպէր-շէյխ . . . . .	—	5
15. Ճանիկ . . . . .	—	25
14. Պաղին . . . . .	—	6
15. Քարնձոր . . . . .	—	5
16. Խանի . . . . .	—	5
17. Տէմիրճի . . . . .	—	2
18. Ղարաղայայ . . . . .	—	4
19. Տէփէճի . . . . .	—	15
20. Իսապէկ . . . . .	1	50
21. Խոճմաթ . . . . .	1	82
22. Նպշի . . . . .	1	20
25. Նրխի . . . . .	1	28
24. Ապրանք . . . . .	1	20
25. Շնալ, Չինալ ? . . . . .	1	45
26. Սղամ . . . . .	1	35
27. Սաղարթ . . . . .	1	55
28. Չէթ . . . . .	1	70
29. Ոգուն Օպայ, Ոգունովա . . . . .	1	25
50. Ոգունովայի մեզրէ . . . . .	—	6
51. Կաճառ, Խաճար . . . . .	1	15
52. Ալլափու . . . . .	—	15
55. Պաշարաթ . . . . .	—	10
54. Հլալգոմ, Հաղար գոմ . . . . .	1	20
55. Ղարակէլիկ . . . . .	1	12
56. Կիւլիւշկեր . . . . .	1	20
57. Արմեան . . . . .	1	47
58. Նոր գիւղ . . . . .	1	18
59. Նոր գիւղի մեզրէ . . . . .	1	20
40. Գաւթիք գիւղ . . . . .	1	20
41. Նորշնակ, Նորշնակ . . . . .	—	5
42. Սրին . . . . .	1	7
45. Պաղին . . . . .	1	170
44. Նաճարան . . . . .	1	15
45. Թրխէ . . . . .	1	44
46. Թիլ . . . . .	1	25
47. Քէնիէպէ . . . . .	—	20
48. Չայիրի մեզրէ . . . . .	—	15



մաքուր հայերէն կը խօսին և տեղական պիտոյից ամէն արհեստներն գիտն թէ՛ քաղաքացիք և թէ՛ դիւզացիք, շատ ալ ազբառ չունին:

Քալուն իւր գիւղերով միասին, բազմամամբ խարրերդի, Փերիի, Արարիկերի, Պազրի՝ Մատենի և Կիւմիւշ Մատենի, առաջինն է բարեբերութեան կոչմանը: Իւր բերքերն են ցորեն, դարի, բամբակ, շուշմոյ, կըտաւառ, սոպ, սիսեռ, կանեփ, խաղող, գինի, պանիր, խոզ, մեղր, ընտանի անասուններ. գուրս վաճառքի կը զրկէ խէժ, շրէզ, սլխարի և այլի մարթ, բուրդ, մեղրամամ, նուշ, ազուկենի, կն: Լեբանց մէջ կան պղնձի և արծաթի և ուրիշ հանքեր: Քաղաքի մէջ բաւական ծաղկած է կոշկակարութիւնը, ընտիր կոշիկներ կը պատրաստուին ու կ'արտահանուին. նոյնպէս տարածուած է մանասագործութիւն, սրուն գործարանաւերն են. Պաշեան և Ֆառիշեան եղբարք. այս տեղ կը պատրաստեն ընտիր մանուսներ և կաւներ, ու կը փոխադրեն խարրերդ, Տիգրանահերա, Քօյի, Ճապողջուր, Մուշ և Չարտանճագ: Տեղւոյս բամբակը անուանի է, հայ գիւղացիներու մէջ 10000—աւոր լիար բամբակ հանող ընտանիքներ կը գանուին, սր կը փոխադրեն Եգիպտոս և այլ տեղեր: Խօշմամբեան, Արամեան, Փոսոյեան, Լարճեան և ուրիշ մի քանի վաճառականներ, ամէն տեսակ ապրանքներ կը ստանան կ. Պոլսէն և Բերիայէն: Իսկ Քամասիոսէն մեծ քանակութեամբ գումէշի կաշի կ'արտահանեն Բարսեղեան և Թուրիկեան եղբարք: Միւս արհեստները ամբողջովին Հայոց ձեռքն են. թէև այլազգիք Հայերէն եռապատիկ շատ են, բայց ամէնքն ալ առանց արհեստի են կամ թափառաշրջիկ, կամ այգեպան, պարտեզպան և մրգավաճառ:

Քալուի գաւառակի մէջ հոգերը գրեթէ բոլորովին պէկերու և աղաներու սեպակաւնութիւն են. Հայք և Քուրդք յաճախ ջանքերը բրած են խնդիր մատուցանելով կառավարութեան, սակայն չեն յաջողած պէկերէն իրենց վրայ գարձընելու հոգերը. հարիւրէն մէկը հազիւ Հայոց սեփհականութիւն կայ, զորս մասն առ մասն գնած են. բայց տներն

և այգիները տեղացոց սեփհականութիւնն են: — Պաւառակիս տարածութիւնն է 3376 քառ. հազարամասր, հետեւեալ կերպով բաժնուած.

Հերկելու երկիր .	2453	քառ.	հզրմ.
Լեռնային մասեր .	514	»	»
Անտառք .	427	«	«
<hr/>			
Գումարն . . .	3376	քառ.	հզրմ.

Արդի աշխարհագրական բաժանման համեմատ, ինչպէս կը գնէ Վ. Քինէ, Քալուն ունի 8 վիճակներ և 365 գիւղեր: Մենք առանձին տախտակով կը ներկայացնենք Քալուայ առաջնորդական վիճակի հայաբնակ գիւղերը, սրանց թիւն 48ի կը հասնի: Այդ գիւղերու վիճակագրութիւնն կազմած ենք Սրտանճաեանցի (184ա.) և Եսթմանեանի (1880ա.) տեղագրութեանց համեմատ: — Քալուի լեռներէն յիշենք նշանաւորները, Գոհանաւ, Կապան—տաղ, Մալը—տաղար, սրանք զարգարած են ընտիր անտաներով, ուր կ'աճին կաղնի, բարդի, գափնի, նոճի, սափ, կաղամախի, բնկօղի, ձմրան խնձորենի, ձմրան տանձենիներ և սալորենիներ: Արածանիէ զատ հոս կան քանի մը գետակներ՝ Վարդէկիկ—չայ, Պարգայա—չայ, Տերեկեան Սոշյուշ և Ճաւոս—չայ, Ուղուկեղ—չայը. ամէնքն ալ կը թափին Արածանիի մէջ: Քալուն ունի նաև նշանաւոր ջրվէժ մը, քաղաքի հարաւ—արեւելեան կողմը, Արածանիի հարաւային ափանց մտա, Գահանամի լեռնաշղթայի և Կապան լեռանց մէջ տեղը, սր գետի մակերեւութէն 300—350 ոտք բարձր բարձայուն կը թափի Ծառքանց կոչուած ձորի մէջ, և առաջ վազելով Մուրաթ—Քեօփրիի արեւմտեան կողմէն կը խտնուի Արածանիի հետ: Մուրաթ—Քեօփրուքը բուած կամուրջը ձգուած է Արածանիի վրայ Քալու քաղաքի ճիշդ դիմացը: մտաւորապէս 200 տարուան շինութիւն է, տաշուած սեւ և ըսպիտակ բարերով. 8 կամարներէ կը բաղկանայ՝ իւրաքանչիւր բար հաստ երկաթով և կապարով ամրապնդուած է: Քալուն ունի երկու վանք. Հաւաւոյ վանք կամ Քաղցրահայեաց Ս. Աստուածածին, և Պաղիմու կամ Ս. Խաչի վանք, սրանց նկարագրութիւնը իրենց կարգին: — Արտուր Հայտա. 15—102:



Թորոս Աղբար, Բ. 154-171: Արարս, 1897 Բ. 38-44: Եւ այլն:

ԲԱՂՈՒԱ. — Փորբրիկ զիւղ Գուգարաց Տաշրաց գաւառի: (Վախռշտ):

ԲԱՂՔԱՆ. Տես ԲԱՂԷՇ:

ԲԱՂՇԻ կամ ՀԱՃԻ ԳԻՒՂ. — Արցախի Գարդման գաւառի մէջ, կառուցուած է ձուրակի մը ձախակողմը: Բնակիչք 1870 թուին եկած են հոս Հաճի-բեանց ամարանոցէն, կառավարութեան հրամանով: Ունին քարուկիր եկեղեցի մը, Ամենափրկիչ, ներսը ունի 1630 թուականու արձանագրութիւն: Գիւղս յայտնի չէ թէ երբ աւերակ դարձած է. ունի ընդարձակ հին գերեզմանատուն: Բախշիի այժմեան բնակիչք են 36 տուն:

ԲԱՂՈՒԱՆՅ. — Գիւղ Վասպուրականի Ռըշտունեաց գաւառի մէջ. ունի 30 տուն հայ բնակիչ, և Ս. Աստուածածիկ եկեղեցի մը:

ԲԱՂՈՒՍ. — Գիւղ Տիգրանակերտի չորրորդ թեմին մէջ. հայ բնակիչք են երեք տուն:

ԲԱԿ. — Հայաբնակ փորբրիկ զիւղ Շատախու (Վան). ունի Ս. Քրիստափոր քարուկիր եկեղեցի մը:

ԲԱԿԱՎԱՆՔ. Տես ՋՈՐՔ:

ԲԱԿԱՓՈՐ. Տես ՍՈՒՔ:

ԲԱԿԵԱՐ. — Բերդ Վասպուրականի Թոսնուան կամ Ճուռաշ գաւառի մէջ, զոր յիշէ Ասողիկ (Գ. ԺԳ):

ԲԱԿԵՐ. Տես ԱԿ:

ԲԱԿԵՐՏ. Տես ՎԱՅՈՅ ՋՈՐ:

ԲԱԿՈՒՐ. — Կը յիշուի Արցնոյ մէջ. աւելուցութեան կը պատկին:

ԲԱԿՈՒՐԱԿԵՐՏ. — Աւան մի էր Վասպուրականի Մարանդ գաւառի մէջ. հոս հիւանդանալով մեռաւ Հայոց Արտաշէս Բ թագաւորը: Թ. Արծրունին նոյն Արտաշէս Բ թագաւորի վարուց մէջ այս աւանս կը գնէ Մարաց աշխարհի մէջ, ըսելով. «Գայ գտանէ վախճանեալ զթագաւորն Արտաշէս ի Մարինդ, և մեռանի անձամբ ընդ այլ շղմարարսն յաշխարհին Մարաց ի Բաղաշրակերտ աւանի»: Կարելի է որ նոյն ժամանակները Վասպուրականի այս մասն Մարաց իշխանութեան ներքոյ գտնուելով, կը կոչուէր Մարաց աշխարհ:

ԲԱԿՈՒՐԻ ՎԱՆՔ. Տես ԲԱՂՔ:

ԲԱՂԱՅԵԿ. — Գիւղ Տիգրանակերտի եր-

րորդ առաջնորդական թեմի մէջ. ունի տասը տուն հայ:

ԲԱՂԻՋԱՋՈՐ. Տես ՀԱՅԱՆԿ:

ԲԱՂԼԵԻԱՆ. — Հայաբնակ զիւղ Շամախույ: ԲԱՂՈՒԲԵՐԿ. Տես ԲԱՂՔ:


ԲԱՂԱՅԵՐԿ կամ ՊԱՂԱՅԵՐԿ. — Հոչաւ կաւոր և հին բերդ Բաղաց սահմանակից Սիւնեաց Չորք (Կապան) գաւառի մէջ: Օրպէկեան (Գլ. Բ) ամրոցիս վրայ այսպէս կը գրէ. «Իսկ ամուրբ անառիկը ի սմա, որ ի մարդկան հնարից հեռացեալ են, բայց միայն թէ Տէր մասնեցէ, Բաղաբերդ. որ և մի սն ի գարմիցն Սիսակայ Բագակ անուն, առեալ զայս գաւառ մասն ժառանգութեան, շինէ զբարն Բաղակու ամրոց, որ կոչի Բաղակի քար և ամրացուցանէ զբերդն, և կոչէ Բաղաբերդ»: Այս ապրիւն կը յայտնուի որ Բաղակ նահապետը իւր անուամբ կոչեց նախ քարալեռը, որուն զագաթը յետոյ կառուցանել տուաւ անառիկ բերդս, որ ծանօթ է ցարդ իւր անուամբ: Այս բերդս Յովհաննէս կաթողիկոսէն կը կոչուի Ամրոց Բաղաց, և Սիւնեաց աշխարհին ամենէն աւելի ամուր բերդն էր. այդ պատճառաւ պատմութեան մէջ յաճախ կը տեսնուի, որ երբ երկրին բնակիչները փախչել կ'ուզէին, առոր մէջ կ'ամրանային: Հոս ամրացան բոլոր բնակիչները և Անդակ իշխանը, Տիգրան քաղաքը կողոպտելէ վերջ. և Պարսից Շապուհ թագաւորն երեք անգամ բոլոր զօրքերովը յարձակեցաւ բերդիս վրայ, և միշտ յաղթուեցաւ, և երբ չորրորդ անգամ կ'ուզէր յարձակիլ, Պարսից մեծամեծ նախարարները Շապուհի առջեւ ինկնալով. «Աղաչեցին մի ևս պատերազմել ընդ անպարտելի ամրոցին Բաղաբերդու, և տալ կտտորել զարեաց զունդս». (Օրպէր. Գլ. Ը): Ուրիշ շատ անգամներ ևս ապաստան եղած է բերդս Սիւնեաց իշխաններու և ժողովրդոց: Ըր' զարուն Բուղայի հարուածոց ժամանակ. «յոլովը ի տերանցն կուտակալաց (կ'ըսէ Յովհ. կաթ.) յանառիկ ամրոցն Բաղաց զիմեալը՝ հաւաքեալք փրժանէին ի ձեռաց նեղչացն»:

Ժ գարու կիսուն Սիւնեաց Յակոբ եպիսկոպոսը, ապստամբելով Անանիա Մոկացի կաթողիկոսէն, իրեն պաշտպան ունենալով Բաղաց և բերդիս Զուանշիր իշխանը, տա-



որ տարի հոս ընակեցաւ, մինչև մահը: — Օրպէեանի (Գլ. Կ) պատմածի համեմատ, 1126 թուին Ամիր Հարոնը եկաւ առաւ «քարն Բաղախու որ էր վանք յորում միև

թուականին, ըստ պատմչին, կրկին բարկանալով Աստուած Սինեաց նահանգին վրայ, ամենուն ապաւէնը և ապաստանաւանը Բաղաբերդ անառիկ ամրոցը մատնեց



182 • Քաղէշ քաղաքի տեսարանը :

բեալ կայր բազում սրբութիւնք, խաչ և վկայարանք ոսկի և արծաթի և կաակարանք, որ գաղթեալ Լին ի գաւառացն — և ամենայնն ի գերութիւն մասնեցան » : Իսկ 1170

այլապիսեաց ձեռքը որք խաբւթեամբ բերդիս տիրեցին, և սաստիկ կատորած ընել վերջ, մէջը պահուած բոլոր եկեղեցանկան թանկազին անօթները և սպաները կողոպտեցին :



Այժմ բնութեան և ուսումնասիրութեան կը կարօտին հոգևոր բերդիս աւերակ մնացորդներն : Բերդիս անուամբ Բաղաբերդ կոչուած է երբեմն շրջակայ վիճակն կամ գաւառն : — Այրարատ, 294—295 :

ԲԱՂԱԽԱՆԻՔ. — Կը յիշուի Սիւնեաց (Քաշունիք) մէջ :

ԲԱՂԱԽԱՐ. — Կը յիշուի Գանձակի ճեւանշիր գաւառի մէջ :

ԲԱՂԱԿԻ ՔԱՐ. Տես ԲԱՂԱԲԵՆՊ :

ԲԱՂԱՆՈՍ. — Փայտակարանի հին գաւառներէն մին :

ԲԱՂԱՐՁՔ. — Գիւղ՝ Սերաստիոյ արեւելեան հարաւային կողմը :

ԲԱՂԷՇ կամ ՊԻԹԼԻՉ. Կղ. BITLIS. Թ.

بیتلیس. — Գեղեցիատեօիլ, վաճառաշահ և անուանի բազաք Ազնեաց Սաւնայ ձոր գաւառի մէջ : Իթովի մակերեւութէն 4837 սանաչափ բարձր է, կը գտնուի Վանայ ծովակի արեւմտեան հարաւային կողմը, զբիթէ 5 ժամ հեռու, և Մշոյ հարաւային արեւելեան կողմը 12 ժամ հեռուորութեամբ : Մեր հին պատմիչները իններորդ դարէն առաջ չեն յիշեր քաղաքիս անունն. առաջին անգամ Թովմա Արժրունին կը յիշէ գայն՝ կոչելով շահաստան : Իսկ Վարդան աշխարհազիրը Քաղէշը կը գնէ Տուրուբերանի Բլնունեաց գաւառի մէջ : Քաղաքիս անունն աւելի սակայ կը յիշուի վերջին դարերու հեղինակութեանց և զրոյց յիշատակարանաց մէջ, և մինչեւ անգամ եպիսկոպոսաւիտ քաղաք կոչուած է, բայց յայտնի չէ թէ երբ սկսած և հաստատուած է այս տեղ եպիսկոպոսական աթոռ : Անցեալ դարերու մէջ յիշուած Բաղէշու առաջնորդներէն յայտնի են՝ ոմն Մեսրոպ վարդապետ, 1685 թուին, Աւետիք վարդապետ, Ստեփանոս եպիսկոպոս, և այլն : Քաղէշ անուան ծագման համար աւանդութեամբ հետեւեալը կը պատմուի. մէկու մը էշը՝ որ բնակչաց կարծիքով ցուրտին ամենազիմացիուն կենդանին է, ձմեռը Չլիֆտա կոչուած ձորէն անցած ծամանակ ձեանց մէջ իրելով՝ ստանի կամ պաղեր է, և այդ զիպուածէն տեղը կոչուեր է Պաղ էշ, որ յետոյ, իբր թէ, աղաւղած և եղած է Բաղէշ :

Կառուցուած է մասամբ ձորերու մէջ և

ԲՈՅՈՒՆ. Բառարամ

մասամբ լեռանց ապառաժներու վրայ, և ամէն կողմէն շրջապատած լինելով բազմաթիւ ձորերով և դուարամտաշէրի լեռներով՝ հրաշալի և նկարչական զուարճալի զիրք մ'ունի : Չորս ձոր՝ արեւելքէն, յարեւմտից, հիւսիսէ և հարաւէն երկնայով կը միանան քաղաքիս մէջ. առաջին երեք ձորերու միջէն կը վազեն հետեւեալ վտակներն, Անգա կամ Համպա ջուր, Աւեխոչ ջուր, Խոցերոչ կամ Խոսրոպա ջուր՝ որ բրդերէն Ամիրտօլ—չայր կը կոչուի : Այս վտակները իրենց անունները առած են նոյնանուն գիւղերէն. քաղաքիս մէջ իրարու հետ միանալով կը ձեւացընեն Քաղէշոչ ջուր կամ Այի—Պիրիդ գետակը, որ վաղելով հարաւային ձորի միջէն, և մի քիչ դէպ ի արեւմուտք շրջան ընելէ վերջ, ուղղակի դէպ ի հարաւ կ'ընթանայ ընդունելով ուրիշ վտակներ, ու կը թափի Տիգրիսի մէջ : Քաղաքս թէ և պարսպապատ չէ, բայց զխաւօր փողոցներու ծայրերը գտնուելի, որոնք են. ա. Վան—գափոշուր, բ. Չիր—ձիլեր—գափոշուր, գ. Արապ—չարսոչ—գափոշուր, դ. Ամիրտօլ—չարսոչ—գափոշուր (Ամիրտօլ շուկայի դռան), և. Մեյվանակ—գափոշուր և գ. Օդրուչ—գափոշուր, որ շատ չի գործածուիր և հայերէն Գադուան դռան կը կոչուի :

Տները վերոյիշեալ ձորերու միջէն անցնող վտակներու եզրերէն սկսելով և հեռզհեռ աստիճանաձեւ կարգ կարգ դէպ ի վեր բարձրանալով՝ տարածուած են լեռանց գագաթ ի վայրերուն վրայ. մեծաւ մասամբ իրարմէ հեռու են և ծառազարդ պարտէզներու և արտերու մէջ զուարճալի զիրք մ'ունին : Ընդհանրապէս երկայարկ են և արտաքուստ ոչ այնչափ ճաշակաւոր. շինուած են մսիրազոյն սրբատաշ փխրուն (փուս քար՝ ըստ տեղացւոց) բայց զիմացիուն քարէ, որոյ հանքը շատ առատ է քաղաքիս մէջ և շրջակայքը, կան նաեւ զոյնզոյն քարերով շինուած տներ և մի քանի ուշագրութեան արժանի ապարաններ և կամարակապ շինութիւններ : Չորսբերաններու ճիշդ կեդրոնը, հիւսիսէն դէպ ի հարաւ երկնցած քարանձաւի մը վրայ շինուած է բերդը : Յայտնի չէ թէ ո՞վ և երբ կառուցած է բերդս. աւանդութեամբ այս միայն գիտենք, որ Լէնկթիմուր աշխատեր է բայց չէ յաջողիւր բեր-



զիս տիրելու: Հարաւային կամարակապ և աւերակ զբան վրայ արաբերէն արձանա-  
 գրութիւն մը կայ, որ կը յայտնէ, թէ բերդս  
 շինուած է տաճկաց 902 թուականին (1496  
 քրիստոսնէից թուականին) սուլթաններէն  
 միոյն ձեռքով: Բայց կ'երեւի՝ որ նայն թուա-  
 կանին սուլթան մը նորոգած է միայն զայն  
 և իւր շինութիւնն աւելի հին է: Հնագոյն  
 լատիններէն անվերծանելի արձանագրութիւն  
 մը, և ուրիշ յիշատակարաններ և աւանդու-  
 թիւններ կը ցուցնեն, թէ Քաղէշ ի հնուց  
 Հայոց ճոխ ու բազմամարդ քաղաքներէն մին  
 եղած է, և մեր իշխանութեան կործանման  
 ժամանակ և վերջը, ուրիշ քաղաքներու  
 պէս հայ բնակչաց բազմութենէն և ճոխու-  
 թենէն զրկուեր է: Քարանձաւի ամէն կող-  
 մի երեսներն խորատորոտ են, և վերէն վար  
 ուղղահայեաց զիրք մը ունենալուն պատ-  
 ճառու շրջապատոյտ ճամբայ մը շինուած է,  
 վրան քարաշէն բարձր կամարով ծածկած:  
 Այժմ բերդս աւերակ, լքեալ և ամայի վի-  
 ճակի մէջ կը գտնուի. զոնէն սկսելով ամէն  
 կողմ՝ աւերակաց կոյտեր կը ներկայանան,  
 տեղ տեղ ալ կ'իտակործան շէնքեր՝ զանա-  
 զան ձեւերով: Անցեալ զարու սկիզբները  
 կան եղեր նաև երկար ժամանակ քաղա-  
 քին տիրապետող Պարսից խաներու տպա-  
 րաններ, որոց հետքն անգամ աներեւոյթ  
 եղած է այժմ. տակաւին մնացած են միայն  
 քանի մը թրքաց հին տուններ և փոքրիկ  
 մզկիթ մը: Բերդի հիւսիսային ծայրէն քիչ  
 հեռու բլուր մը կայ և վրան քառակուսի  
 աշտարակաձեւ շէնք մը: Կը պատմեն թէ  
 ասիկ զար մը առաջ այդ շէնքի վերի ծայ-  
 րէն զէպ ի բերդը կամար մը ձգուած էր,  
 որուն վրայէն քարաշէն խողովակներու մէջ  
 անցուցած հողէ թրծուած խողովակներով  
 ջուր կու գար հիւսիսային կողմի լեռան աղ-  
 բլուրէն և երեք մասի կը բաժնուէր. մէկ մասը  
 բերդին, միւսը կ'երթար Կարմրակ եկեղեց-  
 ւոյն բակը և երրորդը թրքաց Կէօք-Մէյտան  
 մզկիթի բակը: Այժմ այս անցքերը բուր-  
 րովին խանգարուած են, վերոյիշեալ կա-  
 մարն ալ փլած և միայն տեղ տեղ կը տես-  
 նուին խողովակներու մնացորդներ: Բերդի  
 արեւելեան և արեւմտեան ստորտարը մէկ  
 մէկ խոռոչներ կան, ուրիկ զէպ ի վեր-տանող

բարէ աստիճաններով զաղանի նեղ ճանա-  
 պարհներ փորուած են: Կ'ըսեն թէ ուրիշ  
 զեանափոր ծածուկ ճանապարհ մը եւս կար,  
 մէկ մղանէն աւելի երկայնութեամբ, որ քա-  
 ղաքին հարաւային կողմը վտակին վրայ շի-  
 նուած Քաղխեկց անուն կամարջին քովը  
 կը հանէ եղեր, որուն զոներն այժմ չեն  
 տեսնուիր:

Քաղէշ ի հնումն խիստ բազմամարդ էր  
 և ըստ Հ. Ինճիճեանի ունէր մօտ 25,000  
 տուն, բայց անդապար խոռովութիւններէ և  
 մանաւանդ ԺԶ զարու մէջ պատահած սաս-  
 տիկ սովէն ստիպուած քաղաքացիք՝ ցրուեր  
 են զանազան կողմեր, այնպէս որ անցեալ  
 զարու սկիզբը կան եղեր միայն 5000 տուն  
 բնակիչ, յսրոց 1500 տուն հայ, 200—300  
 տուն եազուպի ասորի և սակաւաթիւ նես-  
 տորականներ. իսկ մնացածը բուրդ և թուրք:  
 Ազգային ուղեւորն Քարունակ պէյ (1847  
 թուին) կը հաշուէ ընդ ամէնը 25,600 հօգի  
 բնակիչ, որոնց 20,000ը բուրդ և թուրք,  
 5000ը հայ և 600ի չափ ասորի և եազու-  
 պի: Վ. Քինէ (1892ին) քաղաքիս և նոյնա-  
 նուն վիճակի բնակչաց թիւն միահամուտ կը  
 հաշուէ 38,886 հօգի, հետեւեալ կերպով  
 բաժնուած.

Հայք Կուսուսըչական	•	16086
» Բաղըքական	•	200
Մահմետականք	•	20800
Եազուպի ասորի	•	1800
		Գումարն . . . 38886

Ըստ ազգային Պատրիարքարանի 1880  
 թուի վիճակազրութեան, Քաղէշ ունէր 1532  
 Հայոց տուն և 10726 հայ բնակիչ: Նոր  
 և ստոյգ մարդահամար մը չունենալով՝ քա-  
 ղաքիս բնակչաց այժմեան թուոյն վրայ տե-  
 զեկութիւն չենք կարող տալ. բայց յայտնի  
 է որ Հայք թէև վերջին զէպերուն մեծա-  
 պէս փնտոռեցան և շատ (զրեթէ 1000 անձ)  
 զոհեր ունեցան, սակայն այժմ եւս 10000էն  
 աւելի լինելու են, որովհետև 1880էն մինչև  
 1900 թուականը համեմատաբար 1000—  
 1500 անձ բազմացած պէտք են լինել:

Հայք ունին չորս քարաշէն եկեղեցիներ.  
 ա. Կամրակ Ս. Նշակ, որ Ս. Կիրակոս եւս



կը կոչուի. վեց սիւներու վրայ հաստատուած գմբեթաւոր եկեղեցի մ'է, կախուղ սրբատաշ քառակուսի քարերով շինուած. նորոգուած է 1844 թուին: Ի հնուան կը կոչուէր Ս. Կիրակոս, բայց երբ վարդապետ սմն Սպահանէն հոս բերաւ Կենաց փայտի մատուցը, որ ամփոփուած է փոքրիկ քառակուսի արծաթէ տուփի մէջ, և վրան ալ կարմրադոյն գոհար մը կայ, նոյն օրէն ստացաւ Կարմրականունը: Այս մատուցը ներկուած կը համարին Փրկչի արկնով և մեծապէս կը պատուեն, նոյն իսկ այլազգիք կ'երդնուն Կարմրակ ճախի իչուէն, բոշով: Եկեղեցոյս մէջ կը պահուի նոյնպէս Ս. Ստեփանոս նախավկայի մատուցը: Գ. Ս. Սարգիս, որոյ աւագ սեզանի տակէն առատ ու անուշ ջուր մը կը բլլի, և սառերիբեայ ջրմուղներով քաղաքին զանազան թաղերու մէջ կը բաժնուի. բնակիչներէն շատերը այս ջուրը կը գործածեն: Գ. Հինգ խորան, կը գտնուի վերոյիշեալ եկեղեցոյն դիմաց, այսպէս կոչուած է հինգ խորաններ ունենալուն համար: Դ. Ս. Գեորգ եկեղեցի, Աւերմկանայ թաղին մէջ: Այս եկեղեցիներու հնութիւնը, ինչպէս յայտնի է թուականներէն, երկու և կէս դարէն անդին չեն անցնիր:

Բազէշ այս եկեղեցիներէն զատ ունի չորս վանքեր, երեքը քաղաքին արեւելեան, հարաւարեւմտեան և հիւսիսարեւելեան կողմերը, և մին քաղաքին մէջ, որ կը կոչուի Ակրտօլու կամ շու եւս Ամիրղույ վանք, վասն զի կառուցուած է Սրբոյն Յովհաննու Կարապետի անուամբ, համանուն թաղին մէջ: Աւանդութեամբ կ'ըսուի նաեւ, թէ Ամիր և Տօլ անուն երկու եղբայրներ նորոգած լինելով այս վանքը և եկեղեցին, այս պատճառաւ իրենց անուամբ Ակրտօլու վանք կոչուած է. բայց ստոյգ չի թուիր այս աւանդական ենթադրութիւնը: Շինուածքը գոլութեան արժանի բան մը չունի, բայց զիրքը խիստ գեղեցիկ և զուարճալի է: Դիմացէն կ'անցնի անրնոցհաս խոխոջմամբ մեր վերը յիշած նոյնանուն զետակն, որուն եզերք բոլոր վանքի երկայնութեամբ պարտէզ է: Եկեղեցին սիւնազարդ է և գմբեթաւոր, միւս վանքերու և քաղաքի եկեղեցիներէն ամենէն մեծն է: Դասին մէջտեղը թաղուած են իրարու մտ

Վարդան և Բարսեղ վարդապետները, որ իրենց ժամանակին երեւելի եղած են. երկորդը առաջնոյն աշակերան է: Քաղաքիս առաջնորդներն առաջ այս վանքիս մէջ կը նստէին բայց այժմ առաջնորդարանը փոխուած է Կարմրակ եկեղեցին: Վանքիս հիւսիսային կողմը, քարընկեց մը հետեւ և աւելի բարձր զիրքով կը գտնուի Ս. Սիմեոն եկեղեցին, որ այժմ մզկիթ եղած է. ժամանակաւ կար նաեւ Ս. Կղեմէս եկեղեցի մը, որ նոյնպէս այժմ մզկիթ դարձած է: Միւս երեք վանքերն կը կոչուին, Գունաց Աստուածածնի վանք, Ալեխու Ս. Աստուածածին, Թնդրակատար Աստուածածնի վանք, որոց նկարագիրն բնած են իրենց կարգին: Բազէշի Եղազպիներն եւս ունին եկեղեցի մը, իսկ բողոքական Հայք ժողովարան մը: Մահմեդականք սնին 15 մզկիթ, յորոց գլխաւորներն կը կոչուին. Էմիր-Շէմսէտեան, Ճամիլ-Աթիք, Գրգըլ-Մեհմետ, Մեհմետի-Թաթուս և Շէրիֆէ, այս վերջինը ամենէն աւելի մեծագործ է և գմբեթը կիսագնդի ձեւ ունի. միւս մզկիթներու ոմանց գմբեթը սրածայր է: Հայք ունին չորս վարժարաններ՝ Վարդանեան, Մեհրոպեան, Լուսաւորչեան և Ս. Սարգիս: Բողոքականք եւս ունին իրենց վարժարանները:


Նշանաւոր է Բազէշ վաճառականութեամբ, թէեւ չունի ազնիւ գործուածքներ սկիւթել և մետաքսեայ զիպակներու և սրիշ բարակ նիւթէ զգեստեղինաց, սակայն իւր կարմիր ներկած պատուական կտան տարածուած է Հայաստանի շատ գաւառաց մէջ, որ և կը կոչուի Բազէշու շիլէ: Ժամանակաւ բազմութիւ հայ կտաւագործներ կամ ջուլհակներ կային հոս, որք հետզհետէ ցրուելով շատ նուազեցան: Կտաւագործներու շատ կ'օգնեն քաղաքիս մէջ գտնուող բորակային ջրերը, յորս ներկարարները կը լուան իրենց կտաւը: Տեղոյս կտաւը դեռ չներկած՝ գործուածքին խոշորութիւնն կ'երեւի, բայց արտոնով կարմիր ներկուելէն վերջ, շատ ազնիւ է և թաւշի բնութիւնով կը սասանայ: Բազէշի գրեթէ բոլոր կանայք, թէ տան մէջ և թէ դուրսը, իրենց մեծազին զգեստուց և զարդուց վրայէն՝ իրրեւ ծածկոյթ կը հագնին այս կտաւէն կարած երկար շապիկներ: Միւս ար-



Հետաաւորներէն կը գտնուին սոկերիչ, գեր-  
 ձակ, երկաթագործ, կօշկակար, խաղախորդ,  
 և այլն: Առեւտարին համեմատ չէ խանութ-  
 ներու և շուկայի գեղեցկութիւնն, անշուք  
 են և շատ մթին: Շուկայի տանիքն որ հա-  
 ղայարկ է, կը ծառայէ իբրեւ ճե-  
 մելու տեղ, որ կը վաճառուին  
 նաեւ ցորեն և այլ մթերքներ: Շու-  
 կայի միջէն կը վազէ հիւսիսային  
 կազմէն եկող վտակը, որուն վրայ  
 տեղ տեղ կան քարաշէն կա-  
 մարջներ: Մտավաճառներու և  
 մանրավաճառներու շուկաները  
 լայն, բարձրակամար և աեղի կա-  
 նոնաւոր շինուած են: Վաճառա-  
 տանց և կրպակաց թիւն 900էն  
 աւելի է: Կան քանի մը մեծ և  
 փոքր քարաշէն խաներ, հին խան,  
 նոր խան, և այլն, երեք մեծ  
 քարաշէն բազնիքներ, խան-հա-  
 մաւեր, Իւնի-համաւեր, Փաշա-  
 համաւեր: Ունի 9 փուռ, 4 մեծ  
 սրճարան, յորում լրագիրներ կը  
 կարդան, և ուրիշ 12 սրճարան-  
 ներ և 11 ջրաղացներ:

Շատ գեղեցիկ և առողջարար  
 է Բաղէշի օդն, որոյ գարունը և  
 ամառը միշտ գոլուած է շրջա-  
 կայ գաւառաց մէջ: Այդ եղա-  
 նակաց մէջ, քաղաքացիք իրենց  
 բոլոր ազատ ժամանակները կ'ան-  
 ցընեն այգիներու և պարտիզաց  
 մէջ, զուարճանալով բնութեան  
 գեղեցկութեամբ: Իսկ ձմեռն ընդ-  
 հակառակը շատ գառնաշունչ և  
 անտանելի է այս տեղ: Նշանա-  
 ւոր է քաղաքս նաեւ ջրի առա-  
 տութեամբ, անուշահամ վտակ-  
 ներէ զատ, հոս գրեթէ ամէն  
 սուն սնի իւր աղբիւրը, սրանց  
 գլխաւորներն են. Լօլօլ, Ռաշօ,  
 Շէրիֆ խանի և Մաթաշ աղայի  
 աղբիւրները, Սեֆէր պէկնց աղ-  
 ները, և այլն: Ընդհանրապէս գարնան ժա-  
 մանակ վտակներու մէջ առատութեամբ կը  
 գտնուին վլանայ ծովակի տառեխ ձկան տե-  
 սակին նման մանր ձկներ:

Բաղէշի բերքերն են՝ մեղր, գլթուր, խէփ,  
 ծխախոտ, լոշաակ, խաղող, գինի, օղի, սուս,  
 նուռ, թութ, թուզ, խնձոր, տանձ, սալոր,  
 սերկեւիլ, ծիրան, կաղին, ընկոյզ, կեռաս,  
 բալ, ձմերուկ, սեխ, և այլն: Քաղաքիս Հայք



183. Բաղէշի բերքը:

խիտ ճարպիկ են և գործօն, և զրամ ու  
 հարստութիւն զիզելու մեծ յաջողակութիւն  
 ունենալով, այս կողմանց առաջին վաճա-  
 ռականներն են: Իրենց մէջ գատարկ և ծոյլ



ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԲԱՂԻՇԻ

Հ Ա Յ Ա Բ Ն Ա Կ Գ Ի Ի Ղ Ո Ր Է Ի Յ

ԱՆՈՒԱՆՔ ԳԻՆԴԻՑ		ՏՈՍ	ՀՈՒՔ	ԱՆՈՒԱՆՔ ԳԻՆԴԻՑ		ՏՈՍ	ՀՈՒՔ	
Տասնի քառասուն	Ղուլթիկ, Խուլթիկ . . . . .	534	1779	Գառաւան . . . . .	70	512		
	Մանկօնէս, Մանկօնք . . . . .	45	291	Խնձորիկ . . . . .	22	170		
	ԿեալՏօք, ԳլՏուկ . . . . .	27	184	Թախ . . . . .	41	272		
	Կեիւր . . . . .	19	147	Փրխուս . . . . .	107	1511		
	Պաս . . . . .	58	441	Խուլիկ . . . . .	11	196		
	Ոստիկ . . . . .	27	154	Ջամաղան . . . . .	18	160		
	Ծղկամ . . . . .	41	245	Ազրակ . . . . .	7	65		
	Վանիկ . . . . .	60	562	Մասնավանք . . . . .	17	155		
	Սասիկ . . . . .	27	158	Չարիկնք . . . . .	15	84		
	Շէն . . . . .	12	75	Ծղակ . . . . .	89	865		
	Սափ . . . . .	7	41	Հերանք, Յերանք . . . . .	19	205		
ԳՈՒՄԱՐՆ . . . . .	635	5855	Թեղուս . . . . .	174	1475			
Կիւղիւմեզ (Ազնուաց ձոր) քառասուն	Հանդ . . . . .	58	258	Աշաղ . . . . .	20	159		
	Տոփ . . . . .	20	114	Տափավանք . . . . .	80	695		
	Տաշասփ . . . . .	15	70	Մեծք . . . . .	20	202		
	Որձաղ . . . . .	8	57	Կաշտեան . . . . .	50	504		
	Սաղ . . . . .	47	295	Սօխուրթ . . . . .	24	159		
	Նէլ . . . . .	27	181	Ճղիւթ, Ճիղիւթ . . . . .	8	70		
	Կարք . . . . .	40	555	Ջարթափ . . . . .	58	554		
	Խուժն . . . . .	20	162	Խարապաշէհր . . . . .	25	500		
	Կուլթ . . . . .	57	514	Սփռածար . . . . .	51	247		
	Խարդիթ . . . . .	25	168	Նաղիկ . . . . .	8	75		
	Խարդ . . . . .	8	64	Կծուակ . . . . .	71	642		
	Ջլլքան . . . . .	7	50	Մաղիկ . . . . .	15	95		
	Սնդեան . . . . .	5	22	Կարմունջ . . . . .	85	570		
Ոնուս . . . . .	8	60	ԳՈՒՄԱՐՆ . . . . .	1038	9456			
Ալբերդ . . . . .	2	21	Կարք . . . . .	6	42			
Կասով . . . . .	4	59		Բրուսք . . . . .	12	84		
Բալքան . . . . .	5	48		Ողբուկ . . . . .	12	84		
Աղքձար . . . . .	9	55		Որձէնք . . . . .	8	60		
ԳՈՒՄԱՐՆ . . . . .	559	2459		Գլեխ . . . . .	14	106		
Պանայի մէջ	Գամք . . . . .	58		502	Մէրէթաղ . . . . .	4	26	
	Մղրէ . . . . .	20		154	Հաւաթաղ . . . . .	9	70	
	Բաշէն . . . . .	55		525	Խար . . . . .	15	97	
	Պաս . . . . .	46		592	Վերին Ասպնջեր . . . . .	15	100	
	Կամախ . . . . .	41		266	Ներքին Ասպնջեր . . . . .	15	91	
	Ջուար . . . . .	17	86	Կնձու . . . . .	25	175		
	Խարխու . . . . .	51	207	Մցու . . . . .	16	109		
	Ալամէք . . . . .	4	28	Քաշախ . . . . .	25	146		
	Ջրհոր . . . . .	57	516	ԳՈՒՄԱՐՆ . . . . .	174	1188		
	Շամիրամ . . . . .	26	214	Մեծ ձոր . . . . .	5	21		
ԳՈՒՄԱՐՆ . . . . .	515	2270	Մրձանք . . . . .	5	55			
Բաղէի նարաւորդը	Փարխանա . . . . .	51	551	Բողնուս . . . . .	15	97		
	Ամլ . . . . .	8	55	Շէն . . . . .	40	292		
	Խմելջոր . . . . .	12	74	Արփի . . . . .	15	99		
	Վ. Մարգարդ . . . . .	7	55	Նիլ . . . . .	11	96		
	Ն. Մարգարդ . . . . .	25	182	Կրխու . . . . .	55	510		
	Հորմեղ . . . . .	14	80	ԳՈՒՄԱՐՆ . . . . .	124	950		
	Կորվու . . . . .	60	575	ՀԱՄԱԳՈՒՄԱՐ . . . . .	2846	21554		
	Խարթիկաղ . . . . .	4	48	ԳՈՒՄԱՐՆ . . . . .	181	1578		



Սկը չի գտնուիր. շարունակ կ'երթեւեկեն այլեւայլ գաւառներ կտաւեղէններ և այլ նիւթեր վաճառելու համար: Տղայք անգամ հազիւ թէ բիշ մը գրել կարգալ կը սորվին, անմիջապէս արուեստի կը մանեն: Այս պատճառաւ ամբողջ քաղաքին մէջ դժուար է գտնել զիտնական և զբազէտ անձինք: Բնատրութեամբ աշալուրջ են, խարուիլ չգիտեն, բայց լաւ կերպով կը խարեն. իրենց քաղաքին մէջ արիասիրտ են, իսկ քաղաքէն դուրս երկչուտ: Բաղէշցոց հայ լեզուն թէև մօտ է Մշեցոց բարբառին, սակայն երկրի զրից պատճառաւ, կամ լաւ եւ, բրդեբու ազդեցութեան տակ՝ որոնց շատերն եւս հայերէն կը խօսին, առանձին յատկութիւններ ունի, աւելի ծանր և գծուարհասկնալի է շրջակայ գաւառաց Հայոց: Տեղւոյս Հայք եւս ունին իրենց ինքնուրոյն ազգային սովորութիւններն և երգերն. ինչպէս Համարձման տօնին միծակի սովորութիւնը, և այլն:

Բաղէշի արեւելեան կողմը գտնուած բարձր լեռան գագաթին վրայ քառակուսի զիրքով կիսակործան կամարակապ շէնք մը կայ Տերտիվան անուամբ, որ Պարսից խաներու ժամանակէն մնացած է. այս տեղէն կ'երեւայ քաղաքին ամէն կողմը, նաեւ Ռանչայ կոչուած հովան մէկ մասը. Ս. Գևորգ եկեղեցին այս լեռան ստորաբ շինուած ըլլալով, լեռն ալ նոյն անուամբ կը կոչուի: Այս լեռը զոյացած է սեւ կակուղ բարի հանքէ, յորոց կը շինուին գիր գրելու բարետախտակներ: Լեռանս զիմացը ուրիշ բարձր բլուր մը կայ և վրան բերդանման շէնքի աւերակներ, որ անցեալ դարու սկիզբները քաղաքիս տիրող Շէրիֆ պէյի ապարանը եղած է ժամանակաւ:

Քաղքիս անուամբ կը կոչուին գաւառ մը և նահանգ. գաւառի սահմանքն են հիւսիսէ և արեւմուտքէ Մշոյ գաւառը, արեւելքէ Վանայ նահանգը և հարաւէն Սղեբտու գաւառը: Ունի 4 գաւառակ, 108227 բնակիչ և 434 գիւղ: Բաղէշի նահանգը ձեւացած է 1875 թուին. կ'ինկնայ 38° 8' 40" 42' արեւելեան երկայնութեան և 37° 45' 39" 30' հիւսիսային լայնութեան մէջ. շրջապատուած է հիւսիսէն Կարնոյ, արեւելքէն Վանայ, հարաւէն և արեւմուտքէն Տիգրանակերտի նա-

հանգներէն: Տարածութիւնն է 29 850 քառ. հազարամետր՝ գրեթէ 400 000 բնակչօք: Բամուած է չորս գաւառաց, որոնք կը ստորարածանին 19 գաւառակաց և միահամուռունին 2088 գիւղ:

Նահանգս առհասարակ լեռնային է և ունի շատ ձորեր. երկիրը շատ տեղ ապառաժուտ է և սակաւաբեր, բայց կը գտնուին նաեւ պարարտարօտ և բերրի վայրեր: Չմեծամանակ երբեմն սաստիկ բուքեր կ'ընէ և կը ձեւանան բարձր լեռանց վերին մասերը և խոր ձորերու վերին եզերքը վաանգաւոր ձեան հիւք կամ տեղական բարբառով ուսիւնք, որոնք զարնան յանկարծ սարսափելի որոտամամբ կը փչին, վնասելով կամ թաղելով ինչ որ իրենց կը հանդիպի: Անասները սակաւաթիւ են և օր աւուր նուազելու ենթակայ, որովհետեւ անկանոն կերպով և անխնայ կտրուած են և կը կտրուին եղածները: Այս պատճառաւ քաղաքի և գիւղերու աները ծածկելու հարկաւոր դերանները և տախտակները կը պատրաստեն կամ պաղատու ծառերէ և կամ բարտի ծառէ, որ մեծ խնամքով կը բազմացնեն: Բարձրաբերձ և անմատոյց լեռանց վրայ տեղ տեղ կը գտնուին բնկուզի մեծամեծ ծառեր՝ բնկուզասէր ագռաներէ անկուած, որոնց համար աւանդաբար կը պատմեն, թէ «ագռան շատ ագահ է բնկուզի, որով կշտանալէն յետոյ՝ մի քանի հատ կը տանի և կը թաղէ անմատոյց լեռանց վրայ հողին տակ, իրբեւ իրեն պաշար այն ժամանակուան, երբ այլ եւս ծառոց վրայ իր փորը չի կրնար կշտացնել բնկուզով, իրեն նշան դնելով ամբը: Գրած նշանը հաստատուն չլինելով, ամէն անգամ ագռաւը չի կրնար գտնել իւր պահած բնկոյզն, որ հողի տակ կը մնայ և բուսնելով մեծ ծառ կը գտնայ այդ անմատոյցի վայրաց մէջ»: Նահանգիս մէջ կան շատ տեսակ խոտեր, ծաղիկներ և բոյսեր, զորս կը զործածեն գեղերու տեղ: Պաղոց կողմանէ եւս առատ է և ունի բնտիր տեսակներ մանաւանդ տանձի և խնձորի. հարաւային ձորալայրերու մէջ կը գտնուի նաեւ ձիթենի: Թուշտններէն յիշենք կարաւ, լոր, տատրակ, արօս, սարեակ, հազարան պիւլպիւլ՝ որ լորի կը նմանի՝ գլուխը և ալին սեւ, իսկ մարմինը ծիրանի



ղեղին և ձայնը բաղցր, վայրի բազ, սազ, և այլն : Չորրօտանի կենդանիներն ունի եղջիբու, այծեալն, ձի, ջորի, էշ, կով, եղ, սլխար, այծ, վարազ, աղուէս, արջ՝ սպիտակ և սև, կան նաև փնտտակար օձեր՝ բայց սա- կաւաթիւ, և այլն :

Տարուան մէջ Բաղէշի նահանգը, միջին հաշուով յառաջ կը բերէ 2956000 զլուի կենդանի, հետեւեալ կերպով բաժնուած .

Ուլխար և այծ . . . . .	2 000 000	զլուի
Գումէշ, եղ և կով . . . . .	800 000	»
Ձի . . . . .	90 000	»
Էշ . . . . .	60 000	»
Ջորի . . . . .	6 000	»
Գումարն... 2 956 000 զլուի :		

Նահանգիս բերոց վրայ ընդհանուր գա- ղափար մ'առնելու համար ի ստորև կը գնենք ըստ Վ. Քինէի, միջին հաշուով, տարուան մէջ վաճառքի գուրս զրկած նիւթերը, հան- ղերձ իրենց արժէքով :

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒԱՆՔ ԲԵՐՈՑ	ԱՐԺԷՔՆ օսմ. ոսկի
Գաղի լուէտ սպիտակ . . . . .	2000
» կարմիր . . . . .	1200
Գեղին հունա . . . . .	7000
Գղթոր սև . . . . .	7000
» սպիտակ . . . . .	8000
Կսեղ ծառոց (կաղնիի, և այլն) . . . . .	2000
Մսմ . . . . .	1500
Մեղր . . . . .	800
Գինի . . . . .	2000
Չամիչ . . . . .	2500
Ուլխար . . . . .	14000
Այծի մորթ . . . . .	6000
Գամշու մորթ . . . . .	2000
Մուշտակներ . . . . .	4000
Չոր աղիքներ . . . . .	1200
Կարմիր կաւ . . . . .	8000
Չանազան նիւթեր . . . . .	5000
Գումարն... 74000	

Իսկ հետեւեալ տախտակէն կը տեղեկա- նանք, թէ տարուան մէջ որչափ արժէքով և ինչ տեսակ բերքեր կը ներմուծուին նա- հանգիս մէջ :

ՆԵՐՄՈՒԾՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒԱՆՔ ԲԵՐՈՑ	ԱՐԺԷՔՆ օսմ. ոսկի
Հիւսուածք բամբակի . . . . .	50000
» մետաքսեղէնք և զորգեր . . . . .	55500
Բամբակ . . . . .	3500
Շաքար . . . . .	1500
Սուրճ . . . . .	3500
Քարիւղ . . . . .	500
Երկաթ . . . . .	600
Տորսնի արմատ . . . . .	1200
Երկաթեղէնք . . . . .	20000
Չանազան նիւթեր . . . . .	5000
Գումարն... 117900	

Որով արտածութենէն կը գոյանայ

զրեթէ . . . . .	1700000	Ֆրանկ
և ներածութենէն... . . . . .	2700000	»
Գումարն... 4400000 Ֆրանկ :		

Ունի նաև հանքեր զեղին, կարմիր, սպի- տակ և սև մարմարիններու, ինչպէս նաև երկաթի, պղնձոյ, սկւաչ և արծաթի, որոնք այժմ բարեբաղաբար գործածութեան մէջ չեն : Առատութեամբ կը գտնուի նաև ծծումբ, և Բաղէշ քաղաքէն խնդրակաւար Առտուա- ծածնայ վանքը ամառը ձոր մը կայ որ կը կոչուի Գառախոտիկ՝ նայն տեղւոյն ծծմբային գարշահոտութեան համար : Նշանաւոր է բազ- մաթիւ հանքային ջրերով. հարուստ է նաև աղահանքերով, բայց տէրութիւնը կը գործ- ւածէ միայն 6 աղաւազաններ, անգործ թող- լով տասնեւեօթը ընտիր քարացեալ աղա- հանքեր : — Երբ Հայաստան, 161—174 : Տեղագր. Հայտ. 239—246 : Ճնչդրերդ. ի Բարեղն, 142—152 : Վ. Քինէ, Բ 523— 628 : Եւ այլն :

- ԲԱՂԷՇՈՒ ԶՈՒՐ. Տես ԲԱՂԷՇ :
- ԲԱՂԷՇԱՂ կամ ԲԱՂՇԱՆ. — Այլաղ- ղաքնակ զիւղ Ակինի :
- ԲԱՂՆԻՔ. — Հայաբնակ զիւղ Բարձր Հայոց Գարանաղի (Կամախ) գաւառի, յի- շուած ինճիճեանէ :
- ԲԱՂՂՈՒ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ գաղաթի մէջ :
- ԲԱՂՆԱՏՈՒՆ. Տես ՊԱՂՆԱՏՈՒՆ :



ԲԱՂՆԷԿՈՒՆՔ. — Գիւղ Կիլիկիոյ, Ասանայի մօտ:

ԲԱՂՆԻՔ. — Գիւղ Կարնոյ Հիւսիսակողման լեռանց ստորտար գանուղ բնդարձակ բլրոյ մը կողին վրայ: Գիրքն և տեսարանն բաւական լաւ է: Ունի 100 տուն բնակիչ, 60ր հայ և մնացեալը թուրք: Հայք ունին Ս. Յակոբ անուամբ գետնափոր և անշուք եկեղեցի մը: Գիւղիս մերձակայ լեռանց մէջ կը գանուի կովձուճ՝ որ սշխարաց կաթը ծըծելով կենդանին կը թունաւորէ, այդ պատճառաւ բնակիչք գանազան գեղեր կ'ընեն թոյնը դուրս բերելու համար, ինչպէս արիւն ասնել, պաղ ջրով ծծերը լուալ, են: Գիւղիս այժմեան անունն է, ըստ այլազգեաց, Ումնուում = Յոյս:

ԲԱՂՆԻՔ. — Գիւղ Չարսանձագի փերին թեմին. ունի 15 տուն հայ բնակիչ և Ս. Միկաէ եկեղեցի մը: Այս անուամբ սրիշ գիւղ մ'ալ կայ յԱրարկեր, որոյ բնակիչք այլազգի են:

ԲԱՂՇՏԱՇ. Տես ԲԱՂՇՏԱՂ:

ԲԱՂԶԷՃԻԿ. — Գիւղ Տիգրանակերտի մօտ. ունի 10 տուն հայ բնակիչ: — Ուրիշ գիւղ մ'ալ կայ Չմշկածագու առաջնորդական թեմին մէջ: Ունի 15 տուն հայ, և Ս. Աւետուածածիկ եկեղեցի մը: Տես ՊԱՐՏԻՉԱԿ:

ԲԱՂՔ. — Սիւնեաց նահանգի հարաւալ կողման գաւառներէն մին, որ բարգաւաճած և առաջնութեան պատիւ ստացած է ժ. դարու վերջերէն սկսեալ մինչև ժ.բ. կէտը, որովհետեւ այդ միջոցին Սիւնեաց թագաւորական գահը հաստատուեցաւ գաւառիս մէջ: Շրջագատուած է Սիւնեաց Հարանդ, Իրզուկ, Չորք և Կովսական գաւառներէն, արեւելալ կողման սահմանքն անորոշ են: Գաւառիս անունն ելած է Բաղրակ անունով Սիւնեաց իշխանէ մը, յորմէ շինուած է նաև մերձակայ հոշակաւոր Բաղարեթոյ ամրոցը: Պատմութեան մէջ մասնաւոր զեպք մը չի յիշուիր գաւառիս վրայ սկսեալ Բաղակ նահապետէն մինչև ութերորդ դար: Բաբան բնաւորի 821 տարւոյ մեծ կտորածէն վերջ, Սիւսկան իշխանաց Սիւնեաց գաւառները բաժնած ժամանակ, Վահան անունով մէկը ժառանգորդ կը լինի Բաղաց, որուն պայազատները կը յիշուին կարգաւ մինչև ժ. գաւառ

ու վերջերը: Այս իշխանական տոհմն առաւ նուէրներով ճորտացոց Տաթևի եկեղեցին. այս տոհմէն Վաճան անունով մէկը կրօնաւորեցաւ և յետոյ կառոյց Վաճանու վանք կոչուած անուանի մենաստանը: — Ժ.Ա. դարու վերջերը և մինչև ժ.բ. կէտը Սիւնեաց թագաւորութեան վերջանալէն յետոյ Բաղաց մէջ նշանաւոր կը հանդիսանայ Համտունեանց տոհմը, որոնց նախահայրն կը կոչուի Մսճն Համտուն, իսկ իւր որդին Հասան՝ ժ.բ. դարու սկիզբը կը կոչուի «մեծափառ իշխան Բաղաց, որ ունէր բնդ ձեռամբ գամենայն ազատս թագաւորութեանն այնմ». ասոր մէկ որդին և յաջորդն էր Համտուն Բ, և միւս որդին Յովհաննէս՝ եղիտկոցոս էր Յովհաննու վանաց, որ աշխարհին աւերման համար, գնաց Վայոց ձոր գաւառը, որ և շինելով հոշակաւոր Կորաւ վանքը, հոն առանձնացաւ և մեռաւ: — Այլազգիները 1104 թուին տիրեցին Սիւնեաց թագաւորներու Կապան կոչուած ամուր քաղաքին, և հնազանդ ուրիշ ամրոցներու, և հուսկ ուրեմն 1170ին ամենէն ամուր և թագաւորանիստ Բաղարեթոյն. բայց թագաւորը կանխաւ իմանալով, փախեր էր իւր հայրենիքը՝ Խաչէն: Այսպիսով վերջացաւ, կամ ըստ պատմչին, հայկական թագաւորական այս ջահնալ շիջաւ. և երկիրը Սիւնեաց ուրիշ գաւառաց նման օտարներէն սոսնակիս և աւերակ դարձաւ: Սիւնեաց հարստութեան ժամանակ, Բաղաց թագաւորներու իշխանութեան ներքև կը գտնուէին 1400—2000 զիւղեր, 43 բերդեր՝ յորոց նշանաւոր էին 12ը, և 48 վանքեր: Գրեթէ 550 տարի վերջ, Գաւիթ բլկի օրով, Բաղաց գաւառի բնակչաց մէջ ևս ծագեցաւ և վառեցաւ քաջագործութեանց սէրը, բայց հոշականուն հայրենասիրի մահէն վերջը, երկիրը մնաց առաջին զրից մէջ:

Ի հնումն միայն Բաղք անուամբ ծանօթ էր գաւառս, բայց ի վերջոյ, բնական զրից համեմատ բաժնուած է կրկին վիճակաց, մէկ մասն՝ արեւմտեանը կոչուելով Բաղք կամ Անանան, և արեւելեան մասը կոչուելով Միւս Բաղք՝ որ ծանօթ է նաև Քաշունիք և Բարկուշատ անուամբ. ժ.բ. դարուն սկիզբը, գաւառս իւր զրից համար կոչուած է նաև Բաղաւոր: Բա-



դաց գլխաւոր գետերն են Չաշընդոշը, Չեմի  
և Ագարակու գետ: Երկիրը այս գետակաց  
ընթացից համեմատ, բնդհանրապէս խորտ  
ու բորտ է և անառախիտ, թէպէտ չունի  
այնչափ մեծամեծ լեռներ, բայց կը գտնուին  
ոչ սակաւ պարսպածե բարձրութիւններ, ու  
րոնք խորեր և ձորեր կը ձեւացնեն, որոնց-  
մով կերպով մը ամուր և անմատոյց կը դառ-  
նայ երկիրը:

Գաւառիս Սիւնեաց եկեղեցւոյն հարկատու  
գեղերու անուանք՝ հանդերձ իրենց արից  
բաժնովը՝ հետեւեալք են, հին ցուցակի հա-  
մեմատ.

Ա. ԲԱՂՔ = ԱՃԱՆԱՆ

Աչաղու, Աճիլու . . . . .	8
Աճանան . . . . .	12
Բարեվայր, Բարձրվայր . . . . .	6
Շէկք . . . . .	12
Վարդավանք . . . . .	6
Տորթն . . . . .	26
Տափեար . . . . .	6
Աւարագետք . . . . .	10
Տագամայր . . . . .	20
Խոտանան . . . . .	12
Եղինգն . . . . .	6
Նորաշինիկ . . . . .	6
— Միւս . . . . .	6
Հիւնեաց ձոր . . . . .	6
Ուխ . . . . .	6
Կոտեվանք . . . . .	12
Ատու . . . . .	10
Արուքս . . . . .	6
Հողար . . . . .	8
Կրաւագետ . . . . .	6
Խմայն . . . . .	6
Կաւարտ . . . . .	8
Արկանիձոր . . . . .	10
Տոգող . . . . .	6
Չարերիկերտ . . . . .	10
Տամնետիշէն . . . . .	10
Տերմուղատ . . . . .	8
Ագարակ . . . . .	20
Թուրք . . . . .	12
Մակարագ . . . . .	6
Աւագոն . . . . .	7
— միւս . . . . .	7
Գեղարունի . . . . .	10

Պարքոն . . . . .	6
— միւս . . . . .	6
Կմեզ . . . . .	10
Գուկական . . . . .	10
Փառաւակ . . . . .	8
Մեծամարգ . . . . .	12
Կովսական գիւղ . . . . .	12
Արձանաձոր . . . . .	6

Բ. ՄԻՒՍ ԲԱՂՔ = ՔԱՇՈՒՆԻՔ

Երէց . . . . .	12
Խողկանի . . . . .	10
Դաստակերտ . . . . .	6
Տանձավայր . . . . .	8
Վանանդ . . . . .	10
Մահ . . . . .	7
Անամտաձոր . . . . .	6
Շոռնիփոխայ . . . . .	8
Լերմենիշէ . . . . .	6
Խախտք . . . . .	12
Եւեղի . . . . .	7
Հատատուք . . . . .	6
Մոգք . . . . .	6
Մատախոնի . . . . .	10
Իցան . . . . .	6
Տողր . . . . .	6
Աւերք . . . . .	6
Տաճկաձոր . . . . .	6
Տեխք . . . . .	8
Կոճարու . . . . .	7
Մաղճնատուք . . . . .	6
Խոտի . . . . .	6
Չաւեք, ճաւտք . . . . .	8
Տուտուստուք . . . . .	7
Անձնեակ . . . . .	6
Ակն . . . . .	6
Բակուրի վանք . . . . .	12
Տախն, Դախն . . . . .	12
Մերթակերտ . . . . .	6
Հացնեան . . . . .	6
Ծղու . . . . .	8
Տատայ . . . . .	12
Բարկուշատ . . . . .	12
Խիք . . . . .	12
Տրեայ . . . . .	12
Ագատի . . . . .	8
Ճակկուժ, Ճապկուտ . . . . .	6
Կորակիժ . . . . .	6
Աղուկաբերդ . . . . .	12



Նակորգան . . . . .	20
Արտէն . . . . .	40
Նախջաւանիկ . . . . .	40
Արժիկ . . . . .	40
Թով . . . . .	8
— միւս . . . . .	7
Աղանորդ . . . . .	40
Բահուբերդ . . . . .	7
Աժդակ . . . . .	42
Աթխոյք . . . . .	42
Երուանդակերտ . . . . .	6
Վաժնուհիք . . . . .	8
Կումն . . . . .	6

Այս գիւղերէն զատ նորագոյն ցուցակաց մէջ նշանակուած են ուրիշ գիւղերու անուններ, (Ա) Աճանանի, (Բ) Բարկուշատի, (Գ) Մաղանջի և (Գ) Զաւրնգուրի մէջ:

Ա. Թիլիկլանց	Խամժուճաղ
Հումանց	Ակաղի
Խլամաղ	Փոօչանց
Թախան	Կաշկառուտ
Մողէս	Խոտորանց
Արջածոր	Գ. Երիցամուկ
Շրուենանց	Պաշարաջուր
Զորեր	Հուռխուտի
Ղամար	Մաղմէ
Հալիծոր	Սեմանց
Խնկանց	Շինոխու
Ըստամանց	Գուշլրանց
Քօլու	Քօսաքարեր
Վլքան	Նոր գիւղ
Գրկոմ	Նակամուար
Սրհակ	Գ. Նատիր
Ընակեան	Զան
Պէճանիշէն	Սարաշէն
Բ. Փակահան	Կեղցահանդ
Բերդիկ	Քարագլուխ
Զափնի	Թօփ
Ըրկենանց	Աւտուռն
Սեւաքար	Խործոր
Երեցվանիկ	Տնկունակերտ
Սուսնակ	Կարմրահողուտ
Կումն միւս	Հանդիքուշան
Վեմանանց	Անձանակի
Խաչտափ	Զանալուշէն
Շաւիկ	Պրժեղանց
Աղնամաս	Քօթանլար
Ղարիպանց	Ղզրլարաղան

Գաւառիս նշանաւոր տեղեաց նկարագիրները կը գրուին իրենց կարգին, առ միայն ըսենք, թէ բազմաթիւ հին գիւղերու անուններէն՝ այժմ բիշերուն կը հանդիպինք աշխարհացոյց բարտիտաց վրայ, շատերն աւայացած են, և ոմանք ալ անուններն փոխած: — Սիւսկան, 272—285:

ԲԱՃԱԼԱ. ՏԵՍ ՊԱՃԱԼԱ:

ԲԱՄԲ. — Գիւղ Այրարատայ Նիզ (Ալեքսանդրապոլ) գաւառի, Ապարանի վիճակի հիւսիսային ծայրը, Բամբակի լեռանց ստորտար: Ունի 48 տուն հայ բնակիչ: Արեւելեան կողմը չորս մղան հեռու՝ կը բարձրանայ Քեմերլի-Բաւր կոչուած լեռը, որուն հարաւային կողմը փարստի մը հեռու կը գտնուի ուրիշ գիւղ մը՝ Քրդի Բաւր՝ 40 տուն բարդ բնակչօք:

ԲԱՄԲԱԿ ԿՈՄ ՓԱՄԲԱԿ. — Այս անուամբ ծանօթ է իբրև վիճակ հին Գուգարաց Տաշիր գաւառի ստորին մասը. հարաւային և հիւսիսային կողմերէ շրջապատուած է շղթայածե անտառախիտ և բարձրագագած լեռներով: Վիճակս երկայնածե և ու կը տարածուի Տիլիշանէն սկսելով մինչև Ազրուլի մերձաւոր Զալուս լեռը, մօտ 70 վերստ երկայնութեամբ: Վիճակս առատ է ջրերով՝ իւր գլխաւոր և պատմական գետն է Բամբակ, որ արեւմտեան կողմէն սկսելով կը կտրէ գրեթէ ամբողջ վիճակս, և իւր այս ընթացից մէջ կ'ընդունի ուրիշ վտակներ՝ որոնք կը կոչուին գիւղերու անուններով: Այս գետակաց մէջ կը գտնուին երեք տեսակ ձկներ, կարմրախայտ, մուրժի և ճապալ: Վիճակս իւր գլխաւոր գետոյն ձեւացած ձորահովտին պատճառաւ ի հնուց կոչուած է Բամբակի ձոր, ինչպէս կ'ըսէ նաև Վարդան աշխարհագիրը. «Տաշրացոց գաւառն Բամբակի ձորն է»: Թէ ինչ պատճառաւ Բամբակ կոչուած է վիճակս, յայտնի չէ, թերեւ բամբակի բուսոյն համար լինի, սակայն Վախուշա վիճակիս բերոց մէջ չի յիշեր այդ բոյսն, այլ միայն կ'ըսէ. «Բամբակի ձորն լեռնոտ է և արգաւանդ, կը բուսցընէ ցորեն, գարի, վուշ, վարսակ»: Բամբակի գլխաւոր լեռն է Մայմեխ՝ որ 8000' էն աւելի բարձր կը համարուի ծովի մակերեւոյթէն. յետոյ կու գան Դվալ և Զաւրուս լեռները:



Բամբակի մէջ կան 3/4 գիւղեր, յորոց 25ը Հայոց են, 7 Թրքաց և 2 Ռուսաց: Մենք զանց ընելով օտարաց նկարագիրն, մի քանի խօսք բռնեք միայն Հայոց վրայ: Ընդհանրապէս երկրագործ են, կը զբաղին նաև խաշնագործանութեամբ, տուտարով և արհեստներով: Հաս կը գործեն նաև պարսկական և նոր սնով գորգեր: Վիճակիս Հայք գրեթէ ամենքն ալ 70—80 տարուան դադարականներ են, որոնք եկած են Կարնէն, Երեւանէն, Բասնէն և Բայազիտէն: Ըն-

զրկեն Ալեքսանդրապոլ: Բանջարեղէններն կը բուսնին հոս կաղամբ, բակլայ, սոխ, սիսոր, են: Պաղատու ծառերն կը գտնուին խնձորենի, տանձենի և զանազան տեսակ սալորենիներ և կեռասնի: Հանքերու մասին ես հարուստ է. գործածութեան մէջ է Սիսի պղնձահանքը. պղնձահանքեր կան վիճակիս գրեթէ ամեն կողմերը: Կ'ըսեն թէ կը գտնուին նաև արծաթի, երկաթի և քարածուխի հանքերու հետքեր, բայց գիւղացիք տեղերը ցոյց չեն տար, վախնալով որ իրենց հողերը



184. Բայազիտ քաղաքի տեսքը:

տանեկան սովորութիւնները, կա՛հ կարասիքը և երկրագործական բոլոր գործիքները նահապետական են: 1890 թուին ամբողջ վիճակիս մէջ հազիւ հայկական 3 ուսումնարան կար: Բամբակի ուսումնական վիճակն տակաւին անկեալ գրութեան մէջ կը զբառնուի, այդ մասին յառաջագիտած է միայն Ղարաբեղիսա աւանը:

Վիճակս բնական հարստութեան կողմէ նշանաւոր է իւր անտառներով, յորոց շինութեան և վառելու փայտ կը ստանան, կը պատրաստեն նաև ածուխ՝ որ վաճառքի կը

ձեռքերնէն կ'անեն: Այսպիսի հանքային և բուսական հարստութիւններով լի երկիր մը, հարկաւ բազմաւոր պէտք է լինի, միայն թէ ընդ մտզովուրդը յարմարութիւն և միջոցներ ունենայ օգտուելու այդ բերքերէն: Անտառներու մէջ կը գտնուին հետեւեալ ծառերը և թփերը. անարի, կազնի, փիջուի, լորի, մայրի, բարաի, ուսի, թիսի, թեղի, ճինաւի, ալաժահրի, մասրի, մոշ, ալանի, ցիրացի, գերմաստի, և այլն, և այլն: Շինութեանց համար ընդհանրապէս կը գործածեն կազնիի, փիջուիի և լորիի փայտերը,



մասամբ ևս անարիւի: Բամբակի անտառները երթալով հեղհեռէ կը նուազին. կան անգիւր որ ժամանակաւ հարուստ անտառներ են եղեր, իսկ այժմ մնացեր են միայն թփեր: Ասոր պատճառն այն էր, որ ի սկզբան անմշտութեամբ և անխնայ կտրեր են, առանց արգելոյ մտածելու. կը յուսանք թէ ներկայ կառավարութեան շնորհիւ այսուհետեւ կանոնաւորապէս կը կտրուին մնացեալ անտառները: Վիճակիս մէջ հնութիւնները շատ քիչ են, և եղածներն ալ ըստ մեծի մասին լաւ

Բամբակի մէջ կան նաև մի քանի հանրային ջրեր: Մայմեխի ստորտը Ղարփու ձորը անտառի մէջ կայ սաք ջուր. Համզաշիման և Բեղալիլալ զիւզերու մէջ ալ ձմեռային ջրեր կար: — Վիճակիս մշակութեան հոգը շատ քիչ է բազդատմամբ բնակչաց, այդ պատճառաւ ընդհանրապէս արգաս են բնակիչը: — Նոր-Գար, է. 129-135: Մշակ, յի: 181-2: Եւ այլն: ԲԱՄԲԱԿԻ ԶՈՐ. Տես ԲԱՄԲԱԿ: ԲԱ ՄԷԹԻՆ. — Գիւլ Տիգրանակերտի



185. Բայազիլի բերդը:

քննուած չեն, որով և անյայտ մնացած: Սակայն այստեղ ևս հայկական ուխտատեղիներ պակաս չեն, յայտնի ուխտատեղիներն հետեւեալներն են. Շարուզ՝ Համզաշիմանի մէջ, Ս. Կիրակի՝ Վարդանիլի գիւղը, Ս. Սարգիս՝ Եղարշի մէջ, Ս. Աստուածածին՝ Մեծ Ղարաբլիխա գիւղը, Ամենափրկիչ՝ Սարմուսախիլի մէջ, Կամակատար՝ Ղշլախի մէջ, Կարմիր աւետարան՝ Որթաւի մէջ, Ս. Սարգիս՝ Թափանլիլի մէջ: Ուխտագնացութիւնը վաս պահուած է զիւղացուց մէջ. գրեթէ ամէն կիրակի օր այդ սրբատեղիներն ունին իրենց ուխտաւորները:


Վեցերորդ առաջնորդական թեմի: Գիւղիս Հայր սակաւութիւ են: ԲԱՅ. — Սակաւաբնակ Հայոց գիւղ Տուրուբերանի Ազիլիլա (Արճէշ) գաւառի: ԲԱՅԱԶԻԴԻ ԿՈՄ ՊԱՅԷԶԻՏ. ԳԴ. BAYAZID. — Պատմական նշանաւոր զինուոր քաղաք, Կարնոյ նահանգի համանուն գաւառի մէջ: Ըստ ազգային հին աշխարհագրական բաժանման՝ քաղաքս կ'ինկնայ Ալբրաբատայ Կոպալիս գաւառի մէջ: Ի հնուն մասով է Գարդիսը հռչակաւոր բերդի անուամբ, այդ պատճառաւ տեղույս հին պատմական գեղքերն կը նկարագրենք իրենց կարգին Գաւ-



րոյնք անուան ներքոյ: ԺԵ դարէն սկսեալ մինչև ցայժմ կոչուած է Բայազիտ, և ինչպէս հին Գարոյնը հայկական բերդն հռչակաւոր եղած է պատմութեան մէջ, նոյնպէս և սա ոչ նուազ նշանաւոր եղած է նոր պատմութեան մէջ, բազմազմի պատերազմական գեպքերով: Կը կարծուի թէ քաղաքս իւր անունն առած ըլլայ, Օսմանեան Սուլտան Բայազիդ Ա՛ն, և թէ անոր հրամանաւ շինուած է, ընդդէմ Լէնկիթիմուրի մղած պատերազմերու ժամանակ, սակայն շատ հաւա-

տեւրած էր: Երբ Օսմանեանց տէրութիւնը Հայաստանի տիրեց Եահսէֆեանց ձեռքէն աննելով, ժամանակին սուլտանները Բայազիդի կողմերը յանձնեցին մերձաքնակ Քըրպաց ձեռքը, որոնց զխաւոր առհմն կը կոչուէր Սիլվանլի, անոր համար գաւառն ալ կոչուած կը գտնենք Սիլվան: Այս Քըրքերը իբրև կէս տիրապախ կ'իշխէին այս կողմանց վրայ, որոնց իշխանութիւնը հասաւ գրեթէ մինչև մեր օրերը:

Անցեալ դարու սկիզբը (1705ին) կը յի-



186. Բայազիդի պալատը և մզկիթը:

նական չի թուիր այս կարծիքն, որովհետև նոյն ժամանակները Օսմանեանք գիտ այնչափ առաջ գացած՝ Եփրատէն անցած և Մեծ Հայոց մէջ մտած չէին: Մեր պատմիչներէն առաջին անգամ Առաքել (Գլ. Լ) կը յիշէ նոր անունս՝ գրելով Բերդն Բիազատի, զոր հանած է 1451ին գրուած Յայսմաուրբի մը յիշատակարանէն: Սուլտան Սելիմ Սիլվանսն որպէս արշաւանաց ժամանակ 1554ին, Թուրքաց զօրքերը բանակեցան Բայազիդի բերդին մօտ, որ նոյն ատեն

չուի Մեհմեմետ պէկ Բայազիդի իշխոյ, որուն ձեռքէն բերդն աննելով Սիւլեյման պէկը զինքը կը խզէ, որով և մեծ խռովութիւն կը լինի: Իսկ նոյն դարու վերջերը կը պայազատէ Մանուշտ փաշայ, որ հռչակաւոր է ահարկու բանակաւորութեամբը, ինչպէս նաև պերճասիրութեամբը, որուն յիշատակներն կը մնան տակաւին (բայց գրեթէ աւերակ) ճարտարաշէն և հոյակապ մզկիթը և պալատը. որոնց շինողն է հայ ճարտարագետ մը, անունը անյայտ, բայց գործն անմահական



և հիացուցիչ բազմաթիւ երոպացի ճանապարհորդաց:

Բայազիդ բազարը կառուցուած է Ալա տաղ կոչուած լեռան կողին վրայ՝ գետնուած Գլղլ տաղ և Շարան բարաբլուրներու մէջ, գրեթէ 5735' բարձրութեամբ, կանաւիկ գետակի մօտ, սրուն վրայ ձգուած է գեղեցիկ, միակամար և բարաշէն կամուրջ մը, հայկ մը կառուցուած: Քաղաքին հիւսիսային կողմը Անտոնի դար բարձրագագաթ բարածայտի վրայ կը բարձրանայ հինաւորց

այն համեմատ կը շրջապատեն: Ռմբաձիգ անօթներու գիւաէն առաջ բաղաբս և բերդս՝ մեր աշխարհի ամուր բաղաբներէն մին կը համարուէր, ձեռագործ ամրութիւններէն աւելի բնական զիրքոյն, ապառաժուտ ցցուած լեռներով և կիրճերով:

Բերդի գրան մօտ կառուցուած է սպիտակ և կարմիր բարերով բոլորապէս մզկիթ մը, իսկ փաշայի կարմրաբար հոյսկապ պալատը բիշ մը աւելի վար է պարսպապատ գուհուանպի մը վրայ: Մեծ գահլիճն զարդա-



187. Վին Ռեթամուտական քունդակ Բայազիդի մէջ:

բերդը. գերմանացին Վակներ, « յանուզն և հրաշակերա շէնք մը է, կ'ըսէ, այնպիսի անդերու վրայ հաստատուած, ուր բազէներն ու անոգները հագլի թէ կը համարձակին բոյն գնելու»: Սա՞ն է բուն հին Գարունից բերդը, որ յետին դարուց մէջ նորոգուելով հանգերձ՝ տակաւին հին կ'երեւի, զոր երոպացիներէն ամանք համարեցան ժԲ կամ ժԳ դարու զործ: Լեռան բոյր բարացած սասերուն վրայ կան մէկ մէկ բարձր և բարձր աշտարակներ պարիսպները, լեռան ձե-

րուած էր գանազան գրուագներով և ծագկանց ու թուհոց նկարներով: Մզկիթի մօտ կը գանուին բերդս կառուցանողի Մահմուտի և իր կնոջ կճեայ շիրիմներն: Մի բանի գուբեր և խոտչներ կան այս ապառաժուտ վայրերը, սրոցմէ միոյն մէջ, շատ տարիներ բանտարգել մնաց բնաւոր փաշայէն, գազդիացի ժուպէր գիտնականը, որ Նափոլէն մեծէն գեսպանութեամբ զրկուած էր Պարսկաստան, 1805 թուին: Այժմ՝ բնակիչը շատ բաներ կը պատմեն Մահմուտ



փաշայի վրայ, որ ազգաւ քուրդ էր և մահւանուամբ Քեյ, վայրագ բայց մեծահոգի: Սա ուզելով յոյժ չընազ և փառաւոր պալատ մը շինել կանչեր և քններ և բոլոր ճարտարապետները, և վերջապէս ընտրեր Լ հայազգի մը և շատ հաւններ է անոր գործին. բայց շար նախանձով, որպէս զի ուրիշի մը ալ իրենին նման ապարանք չչինէ, ճարտարապետին ձեռքերը կարել տուեր է, որով և մարդը մեներ է: Քիչ ժամանակ վերջը ժանտախտէ բռնուելով մեներ և նաև բռնաւորը, ինչպէս նաև իւր որդին և յաջորդը Անմետ, որուն յետոյ յաջորդեր է եղբայրը Պանդիշ, որուն օրով՝ հայազգի բանապետին մեծանձնութեամբ վերոյիշեալ Ժողկըր գաղղիացին ազատեր է: Բանաի դրոյն մօտ քարալեբան և որմնյն մէջ տեղ մնացած նեղ անցքին մէջ, կայ նշանաւոր հնութիւն մը՝ քանդակուած ժայսին վրայ: Ինչպէս պատկերէն (Թ. 187) կ'երեւի, բանդակուած են երկու քուրմեր՝ հայկական սպաւարտաձեւ խոյրերով և մէջտեղը բազնի վրայ նուիրական եղջերու մը. քուրմերէն մին անմօրուս ձեռքը բռնած կը թուի գաւազան մը, իսկ միւսն ձեռունի է և ձեռքերը բարձրացուցած կ'ազօթէ: Երբանոր մանր քննութեանց և խուզարկութեանց կը կարօտին լեբանս բարանձաններն: Քննելի են նաև Ս. Գրիգոր կոչուած եկեղեցոյ աւերակներն, որուն մօտ է Լուսաղբիւր ուխտատեղին:


ԺԸ գարու կիսուն կը յիշուին բաղաբիս մէջ 2000 Հայոց տուն. իսկ Թուրքաց և Ռուսաց առաջին պատերազմաց ժամանակ ունէր 1735 տուն Հայոց և 340 տուն մահւմէտականաց՝ չորս թաղերու մէջ, որոց անուանք են Բանանիկ, Զիշախանե, Տեղիչիկ և Ապտիկոր կամ Ապրիկոր, վերջնոյս մէջ էր Հայոց Ս. Վարդան եկեղեցին: Պարսից 1824 տարւոյ պատերազմէն և սրածուծեանէն, շատ վտանգուած էր Բայազիդ, և հազիւ թէ քիչ մը հոգի առած էր, սիրասաւ 1828ին մեծ կոխք. որուն մէջ Պահլիւ փաշան, ծածկապէս Ռուսաց կողմէն էր և պատերազմել էր զըտչանար. բայց երբ Քրդաց հրոտակախուսմը սկսաւ թշնամանալ Ռուսաց, ինքն ալ անոնց հետ ոտք ելաւ: Ռուսաց զօրավար վրացի Զաւլուացէ իշխա-

նը, անցնելով Խաչկեսուշի լեռնանցքէն (օգոստոս 28ին) վանեց Թուրքաց հեծելազօրէն գունդ մը, և բանակ դրաւ բաղաբիս մօտ Զանկիլօրի մէջ: Քրդաց գունդ մ'ալ վանել վերջ, քիչ ամբակոծութեամբ Բայազիդի տիրեց (29 օգոստ.) և Պահլիւ անձնատուր եղաւ: Յաջորդ տարին (1829) յունիսի կիսուն վանայ փաշան եկաւ բաղաբս պաշարելու և աննելու զօրաւոր գնդով, զոր Ռուսները բաւական ամրացուցած էին, որոնց հետ միացան և զէնք առին ինքնակամ հազար Հայք, և բաժնուեցան գունդ գունդ ամբողջի գանազան կողմերը. բայց չկրցան Թուրքաց բազմութեան պէմ գնել, որոնք յետ սաստիկ պատերազմի տիրեցին պարսպաց և արեւելեան մարտկոցին. սակայն չկրցան տիրել բաղաբիս և վերջապէս ճարտարապետաւ 2000 մարդ կորսնցնելով ետ դարձան, և քրիստոնեաներէն մեռան զերթէ 500 հոգի: Այս պատերազմի մէջ բաջմութեամբ և հնարագիտութեամբ մեծապէս հռչակուեցան Պանիոշախիկ և Պոպով զօրավարները, որոնց հետ նաև ոչ սակաւ Հայք, յորս նշանաւոր են Բարսեղ և Մկրտիչ Բայազիդեցիք: — Հաշտութենէ վերջ Հայերէն շատերը գաղթեցին Ռուսաց բաժինը. Պանիւշ գարձաւ նորէն Բայազիդ, թէպէտ քիչ մը տան գրկուեցաւ իշխանութենէն, ձէլալի քրդերը շանձահարելուն պատճառաւ և տեղը դրուեցաւ Տեմիր փաշայ, բայց շուտով վերահաստատուեցաւ Պահլիւ իւր հայրենի ճոխ պալատէն իջնելով բնակեցաւ քաղաքի աներէն միոյն մէջ. ոչ միայն հոյակապ պալատը անշքացաւ, այլ և գրեթէ բոլոր բաղաբը ոչնչացաւ, իբարու յաջորդոյ նորանոր պատերազմաց պատճառաւ: Ռուսները երկրորդ անգամ տիրեցին քաղաքիս 1854 թուի յուլիս 29ին. բայց ամէնէն աւելի բազմազէտ պատերազմեւ եղաւ 1877ին: Հայկազն Ալշակ Տէր Ղուկասով Ռուսաց զօրավարը իկտիրի կողմերէն գալով (ապրիլ 26ին) և անցնելով Զիւնիլի լեռներէն մտաւ Կոպովիս, և Արծափ գիւղի արեւմտակողման Շամուռ լեռնէն ևս անցնելով, նախ տիրեց Զանկիլօրի և յետոյ մայիսի սկիզբը մտաւ Բայազիդ, ուսկից Ալի Քեւաւիլ փաշան անպատրաստ լինելով զինուորաց հետ խոյս տուած էր, բա-



դաբը յանձնելով Ռուսաց մարդասիրութեան: Հայ և մահաձուլական բազարացիներէն մեծաւորանքով ընդունուեցան Ռուսք՝ և փութով նորոգեցին բերդի և մարտկոցներու պարիսպները, և թողլով 2000 պահապաններ զնոցին (մայիս 8ին) Ծաղկտան և Բազրեանդ: Ռուսաց բուն բանակին բազարիս սահմաններէն հեռանալէ վերջ, վանայ կուսակալ Պայիր փաշան, բազմաթիւ վայրաց Հայսէ-

կարտի սահմանները: Սակայն բերդի մէջ տպաստանաճներն սակաւին կը դիմանային սաստիկ ծարաւի և սովու, վասն զի ջրի ճանապարհն թշնամին արգիլած էր, և սախուլուած կ'ուտէին մինչև անգամ՝ ձիու միս: Այսպիսի վիճակով բերդի միջի Ռուսք և Հայք դիմացան երեք շաբաթ, և գուժկան զրկեցին հայ Ապարանցի պատանի մը, որ Քրդաց տարազ ծպտելով և խնդ ձեւանալով անցաւ



188. Սըշակ Տէր Ղուկասով:

բանդի բրդերով և սասնորդութեամբ ձեռլեռտախն և Խոյատ Ոչլիսն գլխաւորաց, յարձակեցաւ բերդին վրայ (յունիս 18ին). ահաւոր զէպրեր շնաց որ չկատարուէին նոյն օրերը: Մոլեղին բուրդերը ամբողջ քաղաքը հրով և սրով փճացուցին, կենդանի մնացած մարդիկ ալ որէ անցուցին կամ՝ դերի տարին, զրեթէ Հայերէն 300 տուն, միայն 100 տուն ապատեցան և փախան Մակուայ և

թշնամեաց միջէն և լուր տարաւ Ռուսաց բանակին: Յուլիս 10ին հասաւ Տէր Ղուկասով և Թուրքաց երկու գունդերը ցրուեց, որոնց օգնութեան չկարենալով հասնիլ Պայիր՝ որ բանակած էր Թէփերիզ գիւղը, պաշարումը վերցուց և մեկնեցաւ: Այս պատերազմի մէջ Ռուսք կորսնցուցին 120 հոգի և Քովալեարի հրամանատարը, ունեցան 300 վիրաւոր և մնացած զօրքն ալ տկար և հիւանդոտ



լինելով, զրհուեցան առողջանալու տեղեր, ասոնց հետ մեկնեցան նաև Քրդաց կառուածէն ազատած Հայք՝ աւերակի և ամայի դարձած քաղաքի բնակիչք: Յետոյ կիսաւեր բերդովն հանդերձ քաքաքս ձգեց Տէր Ղուկասով և դարձաւ իդտիր: Այս պատերազմի պատմութիւնն զեղեցիկ կերպով վիպասանօրէն գրած է Ռաֆֆի:

Քաղաքիս բնակչաց թիւն այժմ կը համարուի 2000, հետեւալ կերպով բաժնուած.

Հայք Լուսաւորչական	.	.	.	1200			
Մահաձառականք	{ <table border="0"> <tr> <td>Թուրքք.</td> <td>255</td> </tr> <tr> <td>Քուրդք.</td> <td>454</td> </tr> </table> }	Թուրքք.	255	Քուրդք.	454	.	669
Թուրքք.		255					
Քուրդք.	454						
Այլ և այլք	.	.	151				
				Գուժարն... 2000			

Հայք ունին Ս. Կարապետ քարաշէն՝ բայց փայտայարկ եկեղեցի մը. շինութիւնն շատ հին է, ինչպէս կը յայտնեն շինութեան և նորոգութեանց արձանագրութիւնք՝ որք կը վերաբերին 1754-1879 թուականներուն. 1818ին դարձեալ նորոգուեր է, Եփրեմ կաթողիկոսի ժամանակ: Հնագոյն եկեղեցին Ամենափրկիչ՝ որ կը գտնուի քաղաքին արեւմտեան հարաւակողմը, Հայոց նոր գերեզմանաց մէջ, այժմ բոլորովին քայքայած և աւերակ վիճակի մէջ է. ունի մի քանի պահասուոր կիսեղծ արձանագրութիւններ: Կ'աւանդեն՝ թէ այս եկեղեցւոյ մէջ թաղուած է Սմբատ անուշով Հայոց սպարապետ մը. հոս կան նաև և կը պատուին Թուրք մանուկ, Ս. Սիմոն և Ղըրոյ և Գառնիկ աղբիւր, նուիրական ուխտատեղիք: Հայրենասէր և քաջ խուզարկու ձեռաց քննութեանց կը կարօտին այս աւերակ դարձած նուիրական վայրերն և Գարօնից բերդի մնացորդներն:

Այժմեան Բայազիդ գաւառին սահմանքն են՝ հիւսիսէն Ռուսաստան, արեւելքէ՝ Պարսկաստան, հարաւէն՝ Վանայ նահանգն և արեւմուտքէն՝ Խնուս և Բասն գաւառակները: Բաժնուած է հինգ վիճակաց Բայազիդ, Տիւաթին, Գարա-Գիլիս, Ալաշկերտ և Անթապ, որոնք ունին 448 զիւղ և 8448 տուն: Այս վիճակագրութիւնն է ըստ Քիլիկի, ինչպէս նաև գաւառիս բնակչաց թիւն՝ որ է 52544, հետեւեալ ազգութիւններէն ձեւացած.

Բնաշխ. բառարան

Մահաձառականք	.	.	41474	հոգի
Հայք Լուսաւորչականք	.	.	8652	»
» Կաթողիկէայք.	.	.	1754	»
» Բողոքականք.	.	.	99	»
Այլ և այլք	.	.	568	»
				Գուժարն... 32544 հոգի:

Բայազիդի երկրագործական բերքերը տարուան մէջ միջին հաշուով յառաջ կու գան.

Յորեն.	.	2050000	չինիկ = 5 հախայ	
Գարի.	.	1569000	»	
Կաւաւտ	.	54000	»	
Կորեակ	.	26000	»	
Ոսպ	.	1000	»	
				Գուժարն... 5260000 չինիկ:

Լուբիա.	.	.	7000	հախայ
Բակլայ.	.	.	2000	»
Սեխ և պաստեղ	.	.	50000	»
Սսխ	.	.	25000	»
Եղիպտացորեն	.	.	25000	»
Գեանախնձոր	.	.	2000	»
Ծիրան.	.	.	2000	»
Շողգամ	.	.	15000	»
Կաղամբ	.	.	55000	»

Գուժարն... 185000 հախայ:

Կենդանիներէն տարուան մէջ Բայազիդի գաւառը կը սնուցանէ.

Եզ, կով, գոմէշ, ևն.	.	.	147000	զլուխ
Զի և քուռակ	.	.	26500	»
Էշ և շորի	.	.	15500	»
Ուլտար, խոյ, գառնուկ, այծ, ևն.	.	.	701400	»

Գուժարն... 888100 զլուխ:

Ուրիշ բերքերէն տարին յառաջ կու գան.

Բուրդ	.	.	80000	հախայ
Այծամազ կամ պրօն	.	.	7000	»
Կաշի և մորթ եզան և գոմշու.	.	.	2000	կտոր
« ոչխարի և այծի	.	.	2000	»


— Այրարատ, 499-507: Նոր Հայաստան, 113-114: Վ. Քիլեկ, Ա. 228-234: Եւ այլն:

ԲԱՅԱԶԻԳ ՆՈՐ կամ ԳԱՒԱՌ. — Գաւառագրութիս քաղաք Նոր Բայազիդի, կը համապատասխանէ հին Գաւառ աւանի, և կ'ինկ-



նայ Սիւնեաց Գեղարբունի գաւառի մէջ, համ-  
անուն գետի մօտ, գրեթէ չորս մղոն ծով-  
եզերքէն հեռու, Երեւան տանող արբունի  
ճանապարհի վրայ, և Անեղի հիւսիսային  
կողմը մղոն մը հեռաւորութեամբ: Հեղահե-  
տէ բազմամարդ եղած և քաղաք դարձած  
է հին Քայազիլի գաղթականներով և այդ  
պատճառաւ այժմ կը կոչուի Կոր-Քայազիլ:

Քերպի գրոշխ կը կոչուի. մօտը կան քարայր-  
ներ և ձեռագործ սենեակներ, և մէկ մղո-  
նէն աւելի երկայնութեամբ գետնափոր ճա-  
նապարհ մը, որ պէպի գետը կը տանի, հոս  
գանուեցան կաւեղէն կուրքեր՝ աչքերը ու-  
լունք ազուցուած: Խանգարուած լինելով հին  
եկեղեցին, փայտով ծածկեցին գաղթական-  
ները և կոչեցին Ս. Կարապետ, իրենց հայ-



189. Նոր Քայազիլի = Գաւառ:

Հին Գաւառ անունը քիչ անգամներ կ'ը-  
րեւի գրոց մէջ, և Սիւնեաց պատմիչի գիւ-  
ղերու ցուցակի մէջ չի յիշուիր: Քաղաքիս  
արեւելեան կողմը վայելչագեղ ձորակի մը  
մէջ քարաբլրի վրայ կան ժ.Չ.՞ գարու  
վերաբերեալ տապանաքարեր: Այս գերեզ-  
մանատեղին ի հնուն մէկ կողմէն պարբա-  
պուած կը բերպի ձեռով, այն պատճառաւ


րենեաց Հին Քայազիլի եկեղեցւոյն անուամբ:  
Ուրիշ մեծ եկեղեցի մ'ալ կատուցին Միքիւ-  
նաշոր Ս. Աստուածածին անուամբ, որուն  
շինութեան նիւթապէս շատ նպաստեց Բար-  
սեղ Աղա Արծրուհի: Քաղաքիս վաճառա-  
կանութիւնն շատ զարգացած չլինելով, թէև  
ոչ սակաւ հարուստներ մեկնեցան ասկէ,  
սակայն այժմ ունի 4428 տուն և 7488



րնակիչ. յորոց հազիւ 50 հոգի օտարազգի կը գտնուի, մնացեալը ամբողջ Հայք են: Բնակիչը աւելի երկրագործական շահերով կ'զրազին քան թէ արուեստներով և առեւարտով:

Քաղաքին գերեզմանաց մէջ, վերոյիշեալ բերդատեղւոյն դագաթը կայ Ս. Ստեփաննոս մատուռ մը: Գերեզմանաբարերը զարդարուած

Գեորգ անուամբ ուխտական մատուռը: Եկեղեցւոյ սպասուց մէջ կան քանի մը սրբական մատենաներ, Մեծին Ներսիսի բազիլի նշխարը, երկու երկաթեղէն խաչեր՝ մէջտեղերը ունենալով ակունքներ՝ որոնց համար աւանդաբար կ'ըսեն, թէ շինուած են Ս. Թադէոսէն՝ այն կանքէն՝ որուն մէջ մանկացեալ Փրկիչը լուացուեցաւ: Մեր ներկայացու-



190. Նոր Բայազիդի եկեղեցւոյ սպասները:

են զեկեցիկ քանդակներով, ուր կը տեսնուին փորուած զգեստուց տարազներ, զանազան զէնքերու ձեւեր, արհեստաւորաց դրոժիներ և մեր իշխանաց շքանշաններ. բայց այս յիշատակաց քարերէն շատերը անխնայ կերպով քակած և զործածած են եկեղեցւոյ շինութեան: Ս. Յովնանեկս յիւսան (մարդ) կոչուած տափարակին մօտ կը գտնուի Ս.

ցած պատերի (թ. 190) մէջ կը տեսնուին բաղաբիւ եկեղեցւոյ սպասներէն նշանաւորները: Ասկէց փոխադրուած է յէջմիածին Ս. Անդրէաս և Մատթէոս տաաբիւց նշխարաց արծաթէ տապանակ մը, որ նորոգուած է 1725 թուին Գառաւեցի Սիւնոն վարդապետի հրամանաւ: Նոր Բայազիդի գաւառն բաժնուած է չորս վիճակաց և ունի 96423




բնակիչը՝ յորոց 61367ը Հայք են: Չա-  
րաչեան, Բ 124-125: Սիսական, 42-45:

ԲԱՅԱՍ կամ ՊԱՅԱՍ. — Ծովային կիլի-  
կիոյ մէջ Սյուսի ճիշդ զիմացը, Հայոց ծոցի

բնակիչ, կէտը հայ և կէտը թուրք: Աւանիս  
օղը մերձակայ ճահիճներու պատճառաւ վատ-

առողջ է, մանաւանդ ամառը: Մէջը կան  
նշանատուր հին մզկիթ (Թ. 191) մը, բերդ, Խ-



191 • Բայասի մզկիթը •

արեւելեան ծովափի վրայ, համանուն վտակի  
մօտ հաստատուած այս քաղաքը, որ իր  
շրջականերով ժամանակաւ պատմական մեծ  
զեպքերու ասպարէզ եղած է, այժմ փոքրիկ  
աւան մը դարձած է: Ունի գրեթէ 6000

ջեւանատուն, բազանիք, եկեղեցի, և այլն:  
Բայասէն կ'անցնի Ատանայի և Ալեքսանդ-  
րեկի կարաւանի ճանապարհը, ինչպէս նաև  
նորաշէն կառուղին: Հին դարերու մէջ քա-  
ղաքիս ունեցած պատմութիւնը շատ որոշ



չէ: Ռուբինեան թագաւորներու օրով Բայաս կը յիշուի իբրև ճիւղի գաւառի մէկ մասը, սրոյ իշխանը՝ Լեւոն Ա՛ թագադրութեան հանդիսի ժամանակ աշխարհականներու կարգին մէջ առաջին նախաթոռ բազմեր է: Լեւոն Ա՛ 1214ին պարգեւագրի մէջ կը յիշուի Բայաս՝ Abaessa գրուած. իսկ խաչակրաց պատմիչները կը յիշեն բաղաբա կոչուանաց կամ Աղջկանց բերդ անունով: Հայկական Ուկե (= 1216) թուին Բայասը գիւղ կուշուած է, ինչպէս կը տեսնուի նոյն տարին տեղւոյս Ս. Աստուածածնի եկեղեցւոյ մէջ գրուած մաշտոցի մը յիշատակարանէն: — Ութնամեամբորդ գարու վերջերը Բայասը ընկեր է Գիւշիկ Ալինկամ խաչիլ պէյ աւան րմնաւորի ձեռքը, որ աւազակութեամբ սարսափ ձգեր է շրջակայքը և մինչև անգամ կը կողոպտէ եղեր Մէրքէի տխտագնացները: Ասոր յաջորդը Տէաէ պէյ ձերբակալուելով կը գլխատուի 1817ին: Նոյն գարու մէջ Նալեան պարսիարքը հետեւեալ կերպով կ'ընէ տեղւոյս նկարագիրը. «Փայաս է Ատանայու ծովեզերեայ քաղաք մի, դէպ հարաւ. շէն, հաստատ և բերդաւոր. ունի և մզկիթս և պանդոկս վաճառականաց... թէպէտ ցած հաւայ ունի՝ բայց վաճառատեղի է. իլիմոնն և թուրքինն առատ է. և ապահով լեանն մի նորա կից է»: Իտալացի ճանապարհորդ մը ժէ գարու սկիզբը, զովութեամբ կը յիշէ Բայասի բամբակի և բրդի վաճառքները:

Բայաս գաւառակը ունի 49 գիւղ և մօտ 20000 բնակիչ: Երկրի ծովեզերեայ զիրքը և գաղջ կլիման, երկրագործական և առեւտրական զարգացման շատ կ'օգնեն: Նարնջի և լիմոնի ծառերով ծաղկած պարտէզներէն և շերամի որթ սնուցանող թթենիներէն բաւական հասոյթ կը գոյանայ, ինչպէս նաև բրնձի արտերէն՝ սրմբ ի հնուց մեծ համբաւ ունին եղեր: Գաւառակի մէջ կան նշանաւոր գիւղեր, Չօգ Մերգվեև, Էօզեյրի, Օձագլը և Էրգիև, իրարու գրեթէ կից են և ունին 1000 տունն աւելի՝ 800ը Հայոց: Զէյրուեղուք (Զիթաստան) կաշուած լայնատարած անասոր, որ երբեմն Սոսի կաթողիկոսութեան կալուած էր, և այժմ պետական զարձած է, կը սկսի Բայասի գաւա-

ռակի արեւմտեան հիւսիսակողմէն: — Սիւտան, 413-415: Կիլիկիա, 220-225:

**ԲԱՅԵՍ.** — Գիւղ Սիւնեաց Ճահուկ գաւառի մէջ, որ է անշուշտ Տաթևի վանքի հարկատու գիւղերու ցանկի մէջ յիշուած Պահեստը:

**ԲԱՆԱԶՈՒՐ.** — Գիւղ Արցախի Գիւղակ (Ճիւղրայիլ) գաւառի մէջ. կառուցուած է ապառաժուած ձորի մը աջ լանջի վրայ, Յոր գիւղի հարաւային կողմը: Բնակիչք 1000էն աւելի են, և ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը՝ շորս սիւներով: Թէև տեղւոյս օդն, կլիման և ջուրն վատատոյջ են, սակայն 70-80 տարի ապրողներ կը գտնուին:

**ԲԱՆԱԿԵՏՂ.** — Այսպէս կը կոչուի Սիւնեաց Սողբ գաւառի մէջ՝ ծովեզերքի մօտ Սիւանայ գիմաց գտնուած այն տեղն, ուր Աշտա Ա 883 թուին վրաց կողմերէն գառնալով բանակ գրած էր: Այս տեղ Սիւան աւազատի շինող հուշակաւոր Մաշտոցը՝ բարեպաշտ իշխանէն ընդունեցաւ կենաց փայտի մասը:

**ԲԱՆԱՆԵԱՐ.** — Ուրիշ անուն Ապարաների՝ զոր նկարագրեցինք ի կարգին:

**ԲԱՆԱՆՑ, ԲԱՅԵԱՆ** կամ ՄԵՍ ԲԱՆԱՆՑ. — Բաղամարդ Գիւղ Արցախի Գարգման (Գանձակ) գաւառի, համանուն հասարակութեան մէջ: Կառուցուած է Բաւեանց կամ Արուքիւն (Ղու Ղարա) վտակի ձախ ափը, երկու երկար և ցած բլրակներու վրայ, և շրջապատուած է Փոփաւտ, Ծակ-քար, Ժիքի սեւ և Տաւթ սեւ լեռներով: Ըստ աւանդութեան, այս գիւղը հիմնուած է Գանձակի հետ, և մի և նոյն ժողովուրդը բնակութիւն հաստատած է այս երկու տեղերը: Ուրիշ աւանդութիւն մ'ալ կ'ըսէ, թէ Բանանց անունը ծագեր է Բան-անոց (գործարան) բառէն, որովհետև այստեղ եղած են քարհատի, երկաթ հալելու գործարաններ:

Գիւղս կանոնաւոր փողոցներ չունի, բայց ընդհանրապէս տներու սենեակները կանոնաւոր են. կան նաև սակաւաթիւ գետնափոր խուղեր: Եկեղեցին՝ որ նուիրուած է Ս. Լուսաւորչի, կառուցուած է 1863 թուին ապառաժի մը վրայ, և բաւական ընդարձակ է ու գեղեցիկ: Այն տաճարի մէջ կը պահուին տասուրերէ աւելի աւետարաններ, ու



րոց յիշատակարանները հրատարակած է Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը :

Գիւղի արեւմտեան կողմը բլրակի վրայ կը գտնուի հին հանգստարան մը, ուր կայ նաև խաչարձան մը ԶԻԶ (=1477) թուականաւ անձանագրութեամբ : Բանանցի կլիման սաստիկ տաք է և խեղդիչ . բուսականութիւնն շատ հարուստ է և ամբողջ ձորակը ծածկուած է պաղատու ծառերով : Բնակիչները մեծ մասամբ բնիկներ են , ամբողջ հայ լուսաւորչական , մտա 2000 հոգի՝ բա Բնուած 27/4 տան : Մտաւորապէս բաւական զարգացած են . 1872 թուին ունեցեր են ծխական պարոց . այժմ բացուած է նաև պետատական : Այս գիւղէն են բժիշկ Տէր Միքայէեան , ճարտարապետ Լեւոն Տէր Միքայէեան , իրաւաբան Յով . Տէր Խորայէլեան , ինչպէս նաև Ստեփան Տէր Աւետիբեանը , որ ծանօթ է Բանանց գիւղի կեանքէն զրաձ պատկերներովը : — Բնակիչները բնոջանրապէս արհեստաւոր են , արծաթագործ , ոսկերիչ , դերձակ , քարտաշ , հիւս , որժնագիր , սայլագործ , վաճառական , են : — Արցախ , 278—284 : Ազգագրական Հանդես , 1889 Ե գիրք 308—309 :

ԲԱՆԱՆՅ ՓՈՔՐ կամ ԳԱՄԲԼԱԶՈՐ . — Աւերակ գիւղատեղի , Մեծ Բանանցէն մըն մը հետո , նոյն վտակի աջ կողմը : Հոս կայ կիտաւեր եկեղեցի մը և մի քանի կըրձատեալ արձանագրութիւնք : Գիւղիս մտա կը գտնուի Նաճատակ անուամբ ուխտատեղի մը . իսկ ասոր դիմաց ձորի ձախ կողմը կայ քարայր մը Ճգնաւորի տեղ կոչուած , ուր , կըրտն , ճգներ է ճգնաւոր սին :

ԲԱՆԻԿ . — Գիւղ Այրարատայ ճակատք գաւառի Սուրմառի վիճակի մէջ : Ունի 144 տուն հայ բնակիչ : — Համանուն գիւղ մ'ալ կայ Արտահանի շրջանակի կեօլէ վիճակին մէջ , 23 տուն բուրդ բնակչօք :

ԲԱՆԻՍԼՈՒ . — Գիւղ Սիւնեաց Վայոց ձոր (Չանգեղուր) գաւառի մէջ , 36 տուն հայ բնակչօք :

ԲԱՆԻՐԳ կամ ԳԱՆԻՐԳ . — Գիւղ Լեոնային Կիլիկիոյ . ունի 120 հայ և 570 այլազգի բնակիչներ :

ԲԱՆՈՆ . — Գիւղ Արճէչ (Վան) գաւառի մէջ . ունի 50 տուն հայ բնակիչ և Ս .

Գեորգ անուամբ պարզ եկեղեցի մը : Գիւղս ճանապարհի վրայ գտնուելով , գրեթէ միշտ անպակաս են բազմաթիւ ազգային և օտար հիւրեր : Բանոնի բնակչաց համար ստիւրական բան է 80էն 100 տարի ապրիլը :

ԲԱՆՁՈՒ . — Քաղաքաւան Մոլաւովոյ (Բումանիա) , Ֆորշանի հիւսիս-արեւմտաւ կողմը 22 հզրմ . հեռաւորութեամբ . ունի 2500 բնակիչ : Քաղաքաւանիս մէջ կան 150 Հայք :

ԲԱՆՁԱՐԿՈՒՏ . — Կը յիշուի Աշոցքի մէջ : ԲԱՆՁՐՈՒՏ . — Գիւղ Տայոց Բերդացիոր գաւառի մէջ , Գաղևշ լեռանց ստորոտքը , բարեբեր հովտի մը մէջ , յորում կան եկեղեցիներու աւերակներ և քարանձաւներ : Գիւղիս այժմեան բնակիչք յոյն են՝ 43 տուն :

ԲԱՇԸՄԸՎ . — Գիւղ Տիգրանակերտի (Սլիվան) առաջնորդական չորրորդ թեմի , ունի 5 տուն հայ :

ԲԱՇԽԱՅ . — Գիւղ Տիգրանակերտի (Սլիվան) առաջնորդական չորրորդ թեմի . ունի և կեղեցի մը և 30 տուն հայ բնակիչ :

ԲԱՇԵՆՂ . — Հայաբնակ գիւղ Տիգրանակերտի առաջնորդական հինգերորդ թեմի . ունի 1 եկեղեցի , 1 վարժարան և 70 տուն հայ բնակիչ :

ԲԱՇՈՒՔ . Տես ՍՈՒՔ :

ԲԱՌ . — Գիւղ Մոկայ մէջ . բնակիչ Հայք և Քուրդք խառն : Հայք ունին Ս . Գեորգ եկեղեցի մը :

ԲԱՌԱԿՁ . — Աւանս կը յիշէ Բուզանդ (Գ . ԺԿ) հետեւեալ տողից մէջ . «Եւ տինն զնա (զձերունին Գանիւլ) և ածին առ թագաւորն Տիրան ի գաւառն Աղձնեաց , ի ԲԱՌԱԿԱԿՁ աւան » :

ԲԱՌԻԶԱԿՈՎՅՍ կամ ԲԱՌԻԼՈՎՅՍ . — Վասպուրականի հին գաւառներէն մին :

ԲԱՌՆԱԿՈՒՏ կամ ԲԱՌՆԱՌՒՏ — Հայանուն՝ բայց այժմ այլազգաբնակ գիւղ Այրարատայ ճակատք գաւառի մէջ , համանուն Բաւնառա գետակի եզրքը : Թովմաս Մեծոփեցին Լէնկթիմուրի արշաւանաց ժամանակ 1394 թուին , կը յիշէ այս անուամբ առանձին վիճակ մը . «Եկին ի վերայ ճակատուց երկրին՝ Սուրմառու և Կողբայ , և ի վերայ Բաւնալուտլին , և գաւառին Արդիշոյ . այս երեք գաւառս ցրուեալ էին . առ հասարակ



զամենեան կողոպտեցին, և ողորմութեամբն Աստուծոյ գերին ազատեցաւ ի ձեռաց նս-  
ցա»: — Այրարատ, 116:

ԲԱՍԵՆ կամ ԲԱՍԵԱՆՔ. — Առաջին և  
ընդարձակագոյն գաւառ Այրարատայ, որուն  
հարաւային արեւմտեան ծայրը տարածուած  
է, և սովորաբար ծանօթ է եղակի կոչմամբ,  
բայց մեր նախնիք յաճախ կը գրեն Բա-  
սեանք, ինչպէս նաև թուրքերը՝ Բասենլիք:  
Մեր ազգի ինքնիշխանութեան օրերէն սկը-  
սեալ արդէն երկու գաւառակներու բաժնուած  
էր, Վերին և Ստորին Բասեն: Հին ժամա-  
նակ, Անվայտ կամ Վերին Բասեն: կը կո-  
չուէր Վանանդ գաւառն՝ որ երբեմն այս  
ընդարձակ գաւառի մասն կը կազմէր, և  
Արշակ Ա՛ օրով զատուեցաւ առանձին գա-  
ւառ եղաւ: Հինգերորդ դարու մէջ Բասենի  
սահմանքն էին հիւսիսէն Տայք, արեւելքէն՝  
Վանանդ և Երասխաձոր, հարաւէն՝ Բաղրե-  
անդ և Տուրուբերան, իսկ արեւմուտքէն՝  
Բարձր Հայոց կարնոյ գաւառը:

Գաւառս իւր անունն առած է հին Բա-  
սեանք անձմի անունէն: Օտարազգի մասե-  
նապիւրներէն այս անձմի հնագոյն յիշատա-  
կողն Փ գրով կը գրէ Փասեանս Փասսուսո:  
Բնական երկրի գիրքն ընդարձակ հովտա-  
ձեւ գաշտաձայր է, ինչպէս կը յիշէ Խորե-  
նացին, Հովիտ մեծ Բասենոյ գրելով և ու-  
րիշ տեղ մը Քաջ ընդարձակ հովիտն Բա-  
սենոյ անուանելով. ուր Արտաշէս Բ՛ սպա-  
րապետ Սմբատը հալածեց Գովհարանոսի  
զօրքերը: — Չորրորդ դարու կէսէն վերջ ա-  
նուամբ կը յիշուի Բասենի իշխան՝ Մանակ,  
և Չ դարու սկիզբները՝ Ներսէհ, որ շատ  
բաջութիւններ ըրած է Գեթաց պատերազ-  
մերու մէջ Յուստինիանոս կայսեր օրով:  
Չօրաբաժնին մէջ եղակի կը յիշուի Բասե-  
նացին, որ կու տար 600 զինուոր, Որ-  
դունիներէն զատ, որք կու տային 700, նոյն-  
պէս զրացի Արեւդենից, Հաւնունեաց և Գա-  
րեղենից նախարարութիւններէն զատ, որոնք  
կու տային 300 տկան մարդ:

Այս կողմանց առաջին եպիսկոպոս կը  
Եշտալիտս՝ զոր կարգեց Ս. Գրիգոր քրմաց  
որդիներէն: Սրբոյն Վրթմանէի ժամանակ  
գաւառիս եպիսկոպոսն էր Տոռք. ուրիշ  
ծանօթ եպիսկոպոսներն են՝ Արաթի, Մով-

սեւ, Տիրիկ: Ե դարուն Պարսից նամակի  
պատասխանը զրոգ եպիսկոպոսներէն մին  
կը Թարիկ եպիսկոպոսն Բասենոյ. Է՞ր դարու  
մէջ Ստեփ. Օրպէլեան կը յիշէ գաւառիս Մա-  
նասե եպիսկոպոսը, ինչպէս նաև Քրիստոս-  
ւատոռը՝ Գֆէայ ժողովին մէջ, և Յեւոն՝ Մա-  
նազկերտի ժողովին մէջ: Նոյնպէս ԺԳ դա-  
րուն կը յիշուի Բասենի Տիրատոռը եպիս-  
կոպոսը Սոյ ժողովին մէջ: Վաղարշակ թա-  
գաւորը Բասենի մէկ մասին վրայ հաստա-  
տեց Որդունեաց նախարարութիւնը: Նոյն  
թագաւորի ժամանակ հաստատուեցան Արե-  
ղենից, Հաւնունեաց և Գարեղենից նախարա-  
րութիւնները Բասենի մէջ, որոնց երկիրները  
կարելի է համարել գաւառիս վիճակներն:

Վերին Բասեն (ըստ Տաճկաց Բասեն-  
իշլեա) կը կոչուի նաև Բարձր, գրեթէ 5000՝  
բարձր լինելով ծովու երեսէն: Երասխ գետը  
գրեթէ արեւմտահարաւէն դէպի արեւելահիւ-  
սիս ոլորտապտոյտ ընթացքով վազելով, Վե-  
րին Բասենը կը բաժնէ Ստորին կամ Վա-  
րին Բասենէն (ըստ Տաճկաց Բասեն Սիւթ-  
լե): Այս երկու մասերն իրարմէ մեծապէս  
կը տարբերին. Վերին Բասեն իւր բոլոր  
տարածութեամբ տափարակ գաշա է հիւ-  
նալի տեսարանաւ, ի բաց տեալ հիւսիսային  
մէկ փոքրիկ մասը, որ անտառոտ է: Ստորին  
Բասենը սնի գանազան լեռնահովիտներ, մեծ  
ու փոքր ձորակներ, խառն ի խառն բլրակ-  
ներ, շատ տեղ ալ գաշտեր և հիւսիսային  
կողմը գեղեցիկ և ընդարձակ անտառներ,  
ուր կան բազմաթիւ մայրի մեծամեծ ծառեր:

Բասեն գաւառը իւր պատուական և ար-  
գաւանդ հողերով կարնոյ գաւառի տեւական  
շտեմարանը կը համարուի, յորմէ զուրս կու  
զան ամեն տարի մեծ քանակութեամբ ըն-  
տիր ցորեն, զարի և ընդեղէնք: Տեղոյս  
Հայ, Տաճիկ և Քուրդ բնակչաց անհոգու-  
թեան և աղիտութեան պատճառաւ այս գե-  
ղեցիկ և զուարճալի երկիրը, հակառակ իւր  
տնեցած յարմարութեան, մանաւանդ հողին,  
և կենսատու օդին, գրեթէ ամենապարզ  
պտուղներէ զուրկ կը մնայ, վասն զի անձա-  
ռաստան է, և սովորութիւն չկայ գայնս անկե-  
լու և մշակելու: Մասնաւորապէս Վերին Բա-  
սենի մէջ շատ տեղեր վառելու փայտ ան-  
գամ չի գտնուիր, այդ պատճառաւ և ի նախ-




նեաց սևփայտ անուրն առած է: Գաւառիս Հիւսիսակողմը զեղեցիկ, խոտաւտ և ջրաբքի լեռանց մրայ, ամառ եղանակին կը լեցուին բազմաթիւ վրանաբնակ բրդեր՝ իրենց ընտանեօք և խաշինքներով: Ըստ Ազգային Պատրիարքարանի վիճակագրութեան Վերին և Ստորին Բասեն միասին ունին 29478 բնակիչ և 20 զիւղեր. Հայոց թիւն 12000ի կը հասնի: Վ. Քինէ Բասեն գաւառակի (գաղա) մէջ կը գնէ 171 զիւղ և 46651 բնակիչ, յորոց միայն 7275 հո-

ԲԱՍՈՐԻԿ. — Այս անուամբ երկու Հայաբնակ զիւղեր կան Տիգրանակերտի առաջնորդական երրորդ թեմի մէջ. մին ունի 15 տուն, միւսն 25 տուն և մէկ եկեղեցի:

ԲԱՍՈՒ. — Գիւղ Չարսանճազի առաջնորդական առաջին թեմի մէջ: Ունի 25 տուն Հայ բնակիչ և Ս. Լուսաշորիչ եկեղեցի մը:

ԲԱՍՏ. — Հայաբնակ Գիւղ Աղձնեաց նահանգի, այժմեանն Խիզան վիճակի մէջ: Ունի մօտ 100 տուն բնակիչ և Ս. Ստեփանոս քարաշէն եկեղեցի մը:



192. Բարդող լեռը:

o. Ոփիտ (Ophite). — m. Մաւն զեղնակարմիր. — ma. Նշաքար (Amygdaloide). — mr. Կիճակիր (Marmoralk). — s. Յճաքար (Serpentine). — sa. Կայծքար-գուարց (Silifite-Quartz).

զի կը հաշուէ Հայ: Այս մասին քանի որ նոր վիճակագիր շունինք, շենք կարող հաւասար տեղեկութիւն տալ: — Ստորգր. հիւն Հայաստ. 380—387: Այրարատ, 15—44: Նկարգր. ոչդեռորոչրիւն, Ա. 20—22: Հիւստաճք, Գ. 92—94: Եւ այլն:

ԲԱՍԿԱՆ. — Գիւղ Տարսուբերանի, Վարդոյ վիճակին մէջ. ունի 566 Հայ բնակիչ, բաժնուած 85 տան:

ԲԱՍՈՐ. — Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական ութերորդ թեմի, ունի 15 տուն Հայ բնակիչ:

ԲԱՍՏԱՄ. Տես ՍՈՒԲ:

ԲԱՎՂՈՒՍ կամ ԲՈՂՈՒՍ. — Գիւղ Արթիւ գաղատ գաշտի մէջ. բնակիչք մեծաւ մասամբ Հայ են: Չմեռ ժամանակ ստեղծ հոս կ'օթեւանի Կ. Պօլէն Եւրոպիա գացող կաբաւանք:

ԲԱՍԱԿԱՆՑ. — Գիւղ Վասպուրականի Ուշտունեաց գաւառի մէջ, Վանայ ծովակի հարաւային եզերքը: Կ'ըսեն թէ շինուած է Բատ անուամբ իշխանէ մը: Գիւղիս մօտ կը գտնուին Մանանճիւրի բերդի մնացորդները:



ԲԱՏԱՐ. — Ամուր գիւղ Սիւնեաց Աղա-  
հէճը գաւառի մէջ: Այս անուամբ ուրիշ մի  
քանի գիւղեր եւ կան, մեծ մասամբ այլազ-  
գաբնակ:

ԲԱՏԸԿԱՆԷ-ՔԷՇԷ. — Գիւղ Տիգրանա-  
կերտի առջնորդական շարքորդ թեմի:

ԲԱՏԻ կամ ՊԱՏԻ ԳԻՒՂ. — Կը գտնուի  
Գանձակէն 67 վերստ հետո՛ւ՝ դէպի արեւմտա-  
հիւսիս, Պատաձորի հասարակութեան մէջ,  
բարձր տափարակի մը վրայ: Գիւղիս արեւ-  
մրտեան կողմէն կը վազէ Պատա գետը, որ  
սկիզբն կ'անու խաչ-եւալ և Էօքիւզ-տաղ  
լեռնաշղթաներէն: Կէս զար առաջ այս գիւ-  
ղը կը գտնուէր այժմեան տեղէն բիշ մը ա-  
ւելի հիւսիս՝ ձորակի մէջ, ուր են այժմ  
այգիները. սաստիկ տաքէն սախալուեր են  
բնակիչները տեղափոխուիլ աւելի բարձրը:  
Բնակիչքն են 1720 հոգի՝ բաժնուած 246  
տան. ունին մէկ հին աւերակ և մէկ նոր ե-  
կեղեցիներ:

ԲԱՏԻՆ ՎԱՆՔ. — Երուսաղէմի մէջ յի-  
շուած ազգային վանքերէն մին, որ յատկա-  
պէս Շիրակացոց կոչուած է ի նախնեաց,  
որ և ի վերջոյ անուանուեր է Կնկղաւորաց  
վանք:

ԲԱՏՐՈՅ ՎԱՆՔ. — Նոյնպէս հին վանք  
Հայոց, Երուսաղէմի մէջ, Գաւթի աշտարա-  
կի մօտ, որ կը կոչուէր յանուն Ս. Աստուա-  
ծածնի:

ԲԱՐ. Տես ՍՈՂՔ:

ԲԱՐԱ. Տես ՊԱՐԱ:

ԲԱՐԱԶԱՆ ԼԵՐԻՆՔ. — Կը գտնուին Այ-  
բարատայ Բազրեանդ գաւառի մէջ, Ալաշ-  
կերտի դաշտի արեւմտակողմը, որը Շեսեւ-  
նայ գլխոյ արեւմտեան կողմը շրջագատած  
են և տարածուած խաչեղակ արեւելեան հա-  
րաւային բարձունքը մինչև Կելիս լեռը: Այս  
լեռները Բարազցի կոչուած քաղական քաջ  
ցեղի մը ամբարնոցներն են:

ԲԱՐԱԼԷԹ. — Գիւղ Գուգարաց Չաւախք  
(Ախալքալաք) գաւառի մէջ, գետակի մը ե-  
զերքը: Բաժնուած է երկու թաղերու, մին՝  
գետի աջ կողմը և միւսը՝ ձախ: Գիւղիս հա-  
րաւային մասի մէջ գետ կ'երեւին հին մարա-  
կոցի մը պարիսպները, իսկ հիւսիսային  
կողմը կէս վերստ հետո կը գտնուի սրբա-  
տաշ քարէ Ս. Ստեփաննոս անուամբ ուխ-

տական մատուռ մը, որուն ձեղունը քան-  
զուած է և հարաւային դրան վրայ ազուա-  
զուած արձանագրութիւն մը կայ: Գետի աջ  
կողմը կառուցուած են Հայոց և Վրաց քա-  
րաշէն և բաւական գեղեցիկ եկեղեցիները.  
գետի միւս կողմը կը գտնուի 1867 թուին կա-  
ռուցուած արքունի գիւղական միդասեան դպրո-  
ցը. այժմ այս դպրոցը երկդասեան է և սնի  
գիշերօթիկներ: Տները կիսաղեանափոր են, և  
փողոցները, ուրիշ գիւղերու բաղդատմամբ՝ բիշ  
մը կանոնաւոր: Բնակիչներէն 91 տուն՝ 512  
հոգի Հայք են, 13 տուն 386 հոգի Վրա-  
ցիք, 2 տուն Քուրդք և 3 տուն Թուրքք:  
Վրացիք և 10 տուն Հայք բնիկներ են, իսկ  
միւսները գաղթած են Արասահանէն: Գիւղիս  
բնակիչք կը պարապին երկրագործութեամբ  
և անասնապահութեամբ: — Չաւախք, 31-  
33:

ԲԱՐԲԱՆԿ. Տես ՀԱԲԱՆԿ:

ԲԱՐ-ԲԸՇ. — Գիւղ Տիգրանակերտի ա-  
ռաջնորդական եօթներորդ թեմի:

ԲԱՐԳՈՂ. — Հրաբխային լեռ Այբարա-  
տայ ճակատք գաւառի մէջ, Կողբայ հարա-  
ւակողմը և Չնչաւատի արեւմտակողմը: Բարձր  
է գրեթէ 7060 ոտնաչափ: Այլազգիք Թա-  
րեալքու կը կոչեն լեռս, արեւելեան ստորո-  
տը գտնուող նոյնանուն գիւղի անուամբ: Լե-  
րանս ընդհանուր կազմութիւնը օժաքարու  
է, թխազոյն և բիրեղակերպ. հրաբխի  
վճէն ժամանակաւ զօւրս նետուած են զա-  
նազան դոյներով կճափայլ և կրային մե-  
ծամեծ կոշեր, որոնց տարբալուծութիւնն  
ըրած է Այլիս երկրաբանը: Ունենալով քա-  
նի մը ինքնարուղիս աղբիւրներ, կը բուցնէ  
տեսակ տեսակ ծաղիկներ և բանջարեղէններ:  
Լէնկթիմուրի առաջին արշաւանաց ժամանակ  
1387ի, Կողբացի Մարտիրոս անուն քաջ  
զօրական մը, իւր գիւղի քաջերն հետն առած,  
լեռանս վրայ ելաւ, և քաջութեամբ պատե-  
րագմեցաւ անօրինաց զէմ: — Այբարատ,  
117:

ԲԱՐԳՈՒՂԻՄԷՍՍ Ս. ԱՌԱՔԵԼՈՅՆ ՎԱՆՔԸ.  
— Վասպուրականի Աղբակ գաւառի մէջ կը  
գտնուի հինաւուրց և հռչակաւոր վանքս:  
Կառուցուած է կոփածոյ ընափր քարերով,  
ահաւոր և հսկայաշէն զիրքով, բարձր բլրոյ  
մը վրայ: Վանքիս շինութեան որոշ թուա-




կանն յայտնի չէ, որովհետեւ այդ յիշատակագիրն կը գտնուի վաղեմի մեծակառոյց զբան երկու կողերուն վրայ, որ ի վերջոյ ծածկուեր է նոյն զբան մէջ շինուած մի ուրիշ փոքր զբան կամարի առի: Բայց կը կարծուի, թէ չորրորդ դարու մէջ հիմնուած է, և թերեւս ժամանակակից բլլայ էջմիածնայ քանի մը տարի տարբերութեամբ: Վանքիս տաճարը կը բաղկանայ երեք գլխաւոր մասերէ. ա. միջին մասը, որ է Առագ սեղան. բ. աջակողմանը Հագարպետի սեղան. գ. ձախակողմանն՝ փոքրիկ մատուռ մը, որ է սուրբ առաքելոյն գերեզմանը, որոյ հին աւագանաքարի վրայ առանց թըւականի հետեւեալ արձանագրութիւնը կայ. «Այս է տապան քանդակուած Սրբոյն Բարդուղիմէոսի Սրբազան Առաքելոյն առաջին Լուսաւորչին Հայաստանեայց աշխարհի»:

Այս տապանաքարին վրայ կայ ուրիշ նորագոյն մարմարեան տապանաքար մը և ՌՄԼԷ (= 1688) թուակախու արձանագրութիւն մը:

Ս. Բարդուղիմէոսի մեծակառոյց եկեղեցին հաստատուած է վեց կլորակ քարէ սիւներու վրայ՝ որոնց վերի գլուխներն հրաշակերտ արուեստով բարձրանալով կը խառնուին հսկայական կամարին, որոյ ճարտարապետութեան և ամբողջական վրայ նայողն կը հիանայ. մի և նոյն տեսակ կամար մը կը կազմէ տաճարի առաստաղը: Այս երկու ներքին կամարաց կեդրոնական ուղղութեամբ գեպի դուրս շինուած են երկու միջակ մեծութեամբ կամթուղիկներ: Վանքս շրջապատուած է զրեթէ 1 1/2 մետր լայնութեամբ պարսպով՝ որոյ անկիւնաւոր տեղերն կան զարմանալի ձեւով կերտուած պահարաններ: Պարսպի թէ՛ ներսի և թէ՛ դրսի կողերուն վրայ, քանդակուած կան բազմաթիւ խաչեր, որոնք բարեպաշտ ուխտաւորաց յիշատակարաններ են:

Վանքիս եկեղեցւոյ զբան արտաքին ճակատին վերի կողմը, սքանչելի արուեստի

բանդակուած կայ Հայր Աստուծոյ պատկերը, նման Եղեկիէլ մարգարէի տեսչեան, առիւծներով և հրեշտակներով: Վարի կողմը Ս. Բարդուղիմէոս աէգը ձեռքը, նոյնպէս ծածկուածն է վիթխարի կողերուն վրայ փորագրուած են վանքի շորս ճարտարապետաց պատկերները բնական մեծութեամբ և իւրաքանչիւր ճարտարապետ իւր գործածած գործիքն ձեռքը բռնած է. առնց մէջակող կը գտնուի նաև Յովնանէս Մկրտչի գլուխը, և զբան երկու կողմերը երկու մարդ բուրվառ ի ձեռքն: Այս արհեստական նշանաւոր գործերն ան



193. Բարդուղիմէոսի վանքը:

գամ ընդունած են կոպիտ թշնամեաց հարուածները և տեղ տեղ կուտրած են: Հայկական ՌՔՃ (= 1754) թուին վանքիս աջ թեւն՝ որ երկրաշարժէ փաստուած է եղեր, նորոգուեր է Հաքարու (Հեքեարի) էջաին Շէրիֆ Խոսրով փաշայի իշխանութեան օրով, ինչպէս կը յայտնէ յատուկ արձանագրութիւն մը:

Հնչակաւոր մենաստանիս մեծ կամթուղիկէն նորոգուած է, վանահայր Եղիազար վարդապետի օրով, զրեթէ 25 տարի առաջ: Նոյն վարդապետը 28 տարի վանահայրութեան պաշտօն վարելով՝ աւնեամեծ խնամ



տարած է վանքի շինութեան, պայծառութեան և բարեկարգութեան: Ս. Բարդուղիմէոսի այս վանքը ունեցած է երբեմն արտաքոյ կարգի պայծառութիւն և նոյնպէս երբեմն արտաքոյ կարգի անշքութիւն. ունեցած է ինչպէս շատ ուրախայի ուխտական մեծ հանդէսներ, նոյնպէս տեսարան և հանդիսաւոյր եղած է բաղմաղիմի սրտածմլիկ անցքերու: Կը պատմեն՝ թէ ժամանակաւ Ս. Բարդուղիմէոս բաղմաղիմի միաբանական ուխտ ունեցեր է, հանդերձ հարուստ և ճոխ սպասներով և եկամտաւորով, սակայն զանազան ժամանակներ թշնամեաց աւարտութեանց ենթակայ եղած է, ինչպէս եղաւ նաև վերջին տեսուր դէպքերու միջոց: Բարձրագիր վանքս ունի եղական տեսարան, պատուական օդ, ջուր, ընդարձակ մարգագետինը և գաշտօրայք:

Վանքիս անմիջապէս քովը 20 անկ բաղկացած Հայոց գիւղ մը կայ, որոյ բնակիչք Վանքցի կ'ըսուին, վասն զի գիւղն մենաստանի սեփհականութիւնն է: Ժամանակաւ գիւղի Հայոց բնակութեանց թիւն 75ի կը հասնէր, որոնք երթալով նուազեցան. այժմ կը բնակին նաև 25-30 տուն քուրդ: Այս գիւղի թէ՛ հայ և թէ՛ քուրդ բնակիչք առհասարակ կ'ապրին վանքիս հողերով և եկամտաւորով: Ս. Բարդուղիմէոսի տարեկան հասոյթն կը լինի 150-200 սակի, սակայն եթէ օրինաւոր վիճակի մը մէջ դրուի, շատ աւելի պիտի լինի: Եթէ միջոցներն ներեն, և քաջիմաց առաջնորդի մը ձեռք յանձնուի այս վանքն՝ բիշ ժամանակէն ամբողջ Ազգակ գաւառի և շրջակայից համար լուսաւորութեան կեդրոն կրնայ գտնաւ: Չանց կ'ընենք աստ կարգաւ գնելու վանքիս նկատմամբ եղած աւանդութիւնները: Ս. Բարդուղիմէոսի վանքէն բիշ հետու դէպի արեւելահայաստան կը գտնուի Վիշապոս հէր (այր) կոչուած քարանձաւ մը: — Նկարագրական Ոչդեւորոչքիւն, Բ 73-97:

ԲԱՐԵՐՈՒԻ. Տես ԻՆՏԱԿՆԵԱՆ ՎԱՆՔ:  
 ԲԱՐԵՒԻԱՐԵԱՆ. — Հին գաւառ մը, զիրքն և սահմանքն անորոշ:  
 ԲԱՐԵԶԱՍ ԱՂԲԵՒԻ. — Ուխտատեղի Բարձր Հայոց Գարանաղի գաւառի, Սիպուհ լեռան մէջ: Այս աղբիւրէն բմպեց Ս. Լուսաւորիչ,

ինչպէս կ'աւանդէ Յովհանն կաթողիկոս, քննելով. «Չոգոյ ի Բարեձաւ աղբիւրիկն . . . որ և երաստայ վիճօք պարփակեալ շարջանակի և դրամքք պատուեալ, և յորոյ տեղոյ մատուակեալն իսկ էր յարբեցումն իւր՝ սուրբ և անբիծ ձեռքն Գրիգորի»:

ԲԱՐԵՉՈՐ կամ ԲԱՒԱՍՈՐ. — Սակաւաբնակ գիւղ Աղձնեաց այժմեան Խիզան վիճակի մէջ:

ԲԱՐԵՎԱՅՐ. Տես ԲԱՂՔ:

ԲԱՐԹՈՍՄԵՅ. — Հայանուն՝ բայց այլադգաբնակ գիւղ Թորթուսի, 10 տուն բնակչօք:

ԲԱՐԻԱՆՉՈՐ ԳԵՏ. — Կը յիշուի Արցախի մէջ:

ԲԱՐԻՉՈՐ. — Կը թուի այլ անուն Աղձնեաց նահանգի Աղնուաձոր գաւառի:

ԲԱՐԻՉՈՐՈՅ ՎԱՆՔ կամ ԵՕԹՆ ԽՈՐԱՆ. — Վանք Աղձնեաց այժմեան Խիզան վիճակի մէջ, Փալասօր գիւղի հարաւային կողմը:

ԲԱՐԻՍ կամ ՊԱՐԻՍ. — Գիւղ Գանձակի Ղարաշինար հատարակութեան մէջ. կը գրտնուի Էրշէք գիւղի մօտ, լեռան մը լանջի վրայ: Բնակիչներն են հայ 363 հոգի, որք գաղթած են Հին Բարիսէն, որուն բնակիչները այժմ ուս մալականներ են:

ԲԱՐԻՈՒ. — Գիւղ Տուրուբերանի այժմեան Կինձ վիճակի մէջ:

ԲԱՐԻՍՓԻ կամ ԲԱՐՁԱՓԻ. — Գիւղ Այրարատայ Կոտայք գաւառի մէջ, Պաշքէնաւէն բիշ հետու՝ արեւմտակողմը: Ունի 62 տուն հայ բնակիչ և Ս. Յովնանէս եկեղեցի մը: Գիւղս կը կոչուի նաև Էրքոյան կամ Երդաշան:

ԲԱՐԿԱՇԱՏ. — Աւերակ՝ Վանայ ձովակի հիւսիսային ափունքը, Արծկէի արեւելեան հարաւային կողմը:

ԲԱՐԿԱՏ. — Գիւղ Տուրուբերանի Խորխոսունեաց (Արծկէ) գաւառի մէջ:

ԲԱՐԿՈՅՔ կամ ՊԱՐԿԻՍ. — Գիւղ Սիւնեաց Սոքք գաւառի մէջ:

ԲԱՐԿՈՒՇԱՏ, — Այս անուամբ ծանօթ է իրբև առանձին վիճակ, Սիւնեաց Բաղք գաւառի արեւելեան մասը: — Սիւնեաց մէջ կայ նաև Բարկուշատ անուամբ գետ մը:

ԲԱՐՁԱԿ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ գաշախ մէջ:



ԲԱՐՁԱՆ. — Նոյնպէս գիւղ Մշոյ գաշտի: ԲԱՐՁԱՆՅՑ կամ ԲԱՐՁՐ ԼԵՌ. — Գուգաւրաց Տաշիր գաւառի մէջ:

ԲԱՐՁԻՇԷՆ. Տես ՎԱՅՈՑ ՉՈՐ:

ԲԱՐՁՐԱՔԱՇՈՒՂ. — Եղիշէ կը յիշէ Հայոց ուրիշ ամուր տեղերուն հետ, զորս Վարդանանք Պարսից ձեռքէն առին:

ԲԱՐՁՐԱՀԱՅԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Նշանաւոր վանք Չորրորդ Հայոց այժմեան Արղանա գաւառի մէջ. կառուցուած ապառաժ ահագին բարձրութեան մը վրայ՝ որ կը կոչուի Արկեոյ բերդ, ուր կը տեսնուին բերդի պարսպաց մնացորդներ: Այսպէս կոչուած է բարձր գրից համար. եկեղեցին, կ'ըսեն՝ թէ հիմնուած է Ս. Թադևոս առաքեալէն, յանուն Ս. Աստուածածնի. բայց երբ ԺԳ դարու մէջ Տիգրանակերտի Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսը, տեսնելով Նփրկերտի աւերումը, հոն գտնուած բազմաթիւ սրբոց նշխարները, գրաստներու վրայ բառնալով տարաւ ամփոփեց Մշոյ Ս. Կարապետի վանքը և ուրիշ տեղեր, եօթը բեռ ալ հոս բերաւ, և նորէն կառոյց գմբեթաւոր եկեղեցին ՉԽԳ (= 1394) կամ ԲՍԱՌՄԱՆՅ ՊԳ (= 1354) թուին, ինչպէս արձանագրուած է գրան ձևատար: Իսկ վանքի շինութիւնն եղած է ՌՃԺԲ (= 1663) թուին, Եղիազար Անթապոյի ձեռքով, որ յետոյ կաթողիկոս եղաւ: Բաղիշեցի Նուրաինեան առաջնորդի օրով այրեցան վանքի փուռը, խոհանոցը և մատանը, զորս վերջը դարձեալ շինեց Կարապետ վարդապետն Լուսիկ, սուլդան Մուսթաֆայի ժամանակ: Վանքիս թէ սուրբ տաճարը և թէ միւս շէնքերը քարաշէն են, թէպէտ հոյակապ շէնք չունի, բայց բազմատմամբ երկրին այլ շինուածոց, իբրեւ նշանաւոր հոշակուած է. բազմաթիւ բայց խառն ի խառն սենեակներ ունի, և ջրոյ աղբիւր չունենալով, կը գործածեն երկու սառնիճներ:

Արդնոյ առաջնորդական թեմին ամթոնն է այս վանքս: Առաջնորդարանին դարպասը ամէնէն չքեղ շէնքն է, ընդարձակ և կոկիկ. իր ձակասն և մէկ կողմը շինուած են զրագաթաններ՝ յորս զետեղուած են ձեռագիր և տպուած բազմաթիւ գրքեր, բաւական խնամքով պահպանուած: Գրագարանաց անկիւնը փոքրիկ գուռ մը կայ՝ վրան նկարուած Ե-

րիբովէն ողկոյզ կրողաց պատկեր մը. այս զանէն ներս կը մացուի փոքրիկ սենեակ մը յախձապակիով. և մէջը հազուապէս թանկագին անօթներ, սափորներ, ևն.: Երկու դարանաց գուռն կը ծածկեն երկու ահաւոր պատկերներ Պետրոս և Պողոս առաքելոց. այս սենեակը կը կոչեն ջսմեսոյ օտաւսի արքայութեան օթեանս:

Տաճարին մէջը յախձապակիով է, մինչեւ կամարները. ունի խորան մը յանուն Ս. Աստուածածնի, սեղանոյն վրայի Տիրամօր և Մանուկ Յիսուսի պատկերը հոշակաւոր է, զոր Յոյնք ևս կը պատուեն աւանդելով թէ Ս. Ղուկաս Աւետարանչին ձեռանկարն է: Պատկերը տնուած է արծաթ շրջանակի մէջ՝ սրուն վրայ յունարէն տառերով գրուած է 1786 թուականը: Իսկ Յիսուսի կուրծքին վրայ հայերէն սխալատաւ գրուած է. «Յշակ է Մատանու գահանից, իշխանաց և համօրէն ժողովրդոցն, աւուրն Սասնոցի Կարապետ վարդապետին. ԹՎ. Հայոց 1784 (?), մարտ ժե»: Պատուանդանին վրայ գրուած արձանագրութիւն մ'ալ կը յայտնէ, թէ պատկերս նկարուած է ի Ղալաթիա Կ. Պօլսի, Եղիազար վարդապետի միջոցով, ՌՃԳ (= 1655) թուականին:

Վանքիս մէջ կան զանազան արձանագրութիւնք նորոգութեանց և շինութեանց, ինչպէս նաև քանի մը տապանաքարեր հանդերձ գրութեամբք: Մեծ հոշակ ունին Բարձրահայեաց վանքի սուրբ անօթները և զգեստները: Այս տեղի անօթները և մատանները և այլ հազուապէս նիւթեր, հեղձհեղձ ժողովուրդ են, իբրև ապահով և ամուր վայր մը, շրջակայ վանքերէն և եկեղեցիներէն: Այս հոշակաւոր վանքս ալ, վերջին դէպքերուն, բողոքովէն կողոպտուեցաւ և միաբանները զոհ գացին: — Թորոս Աղբար, Բ. 173-179.

ԲԱՐՁՐԱՇԷՆ. Տես ԾՎՈՒԿ:


ԲԱՐՁՐ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. Տես ԳԵՏԱՀԱՅԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ:

ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ կամ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ. — Հին վանք Գուգարաց Չորրորդ կամ աւելի Տաշիր գաւառի Գրսեղ աւանի մօտ, ձորակի մէջ: ԺԱ դարուն երբ Մամիկոնեաններէն ումանք եկան բնակու-



թիւն հաստակցին Լուսի շերանց մէջ, Գրսեղ աւանը, իրենց հետ բերին իրենց աւանդութիւնները, որ տակաւին ժողովրդեան բերանն են: Նոքա այս աշուկի ձորերու մէջ կամուրջներ կառուցին, յուշարձաններ և աղօթարաններ կանգնեցին, որոնք տակաւին կը մնան կանգուն կամ կիսակործան վիճակի մէջ: Նոյն ժամանակները Մամիկոնեանները կառուցին իրենց յատուկ արձմահան

դիպելով պէտք է մտնել ձորը: Անտառի մէջ տկանջի կը զարնէ Ս. Գրիգորի աղբիւրի տխուր խորտջիւնը: Աղբիւրէն անցնելով, ճանապարհին կը հանդիպին վանքի ձիթահանքի ահագին բարերը, վրան գրուած Սարգիս Մարծպանի որդւոց անունները: Քիչ մ'ալ առաջ երթալով կանաչ անտառի մէջ յանկարծ մէջ տեղ կ'ենին Մամիկոնեաններու Բարձրաբաշտաճարի սպիտակ աւերակներ:



194. Բարձրաբաշ Ս. Գրիգորի արեւելեամ կողմը:

գերեզմանատուն և աղօթարան այս Բարձրաբաշ Ս. Գրիգորի ճերմակ վանքը, և ապա հովիցին ընդարձակ կալուածներով և զիւղերով, ինչպէս կը յիշուին արձանագրութեանց մէջ: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ այնչափ բարձր էր վանքի կաթնուղիկէն, որ ծայրի խնձորը դաշտէն կ'երեւնար: Վանքի ճանապարհը, ըստ երեւութիւն, հնումն ուրիշ կողմը և սալայատակ է եղեր: Կործանուած ջա թղուած խաչարձաններու հանք


ը: Արեւելեան պատի հարաւային մասն կտոր մը կործաներ է, և բոլորովին կը զկործանէր, ինչպէս կ'ըսեն զիւղացիք, եթէ Յս. վակիմ (ուզրաշի) անունով մէկը, բարերով չամրացնէր: Այս պատի վրայ կայ զիւղաքանդակ երկգլխանի թեւատարած արձիւ՛ճանկերու մէջ գտնն բոնած: Վանքիս կաթնուղիկէն կործանած լցուած է մէջը. բեկորներու կոյտերու միջէն բարձրացած են ահագին ծառեր: Աւերակ և ամայի վանքիս արք



ձանազրութիւնները հրատարակած է Չաչալեան, Բ 108. — Արարս, 1897 Բ 47-48.

ԲԱՐՁՐԲԵՐԳ. — Հին ամրոց Լեւոնային Կիլիկիոյ. Մշտնի արեւելեան և Սոսի հիւսիսային արեւմտեան կողմը, Չամանցի գետի հովտի մէջ: Ըստ Արարաց կը կոչուի Պերպերդ: Ինչպէս անունէն կը յայտնուի, կառուցուած էր շատ բարձր զիրբով, և

կարող երաշխաւորել, որովհետեւ ուրիշներ կ'ըսեն, թէ Ռուբէնի առաջին արեւապետութիւնն Փոխկիայի մէջ էր, բայց յայտնի է, թէ սր և հայ իշխան մը կանխապէս գրաւած էր Բարձրբերդը: Ժամանակ մը թագաւորահայր Կոստանդին սեփականութիւնն էր, և մօտը կար Կաստրոնոց անուամբ գիւղ մը: ԺԳ զարու վերջերը եղերական զորքեր կառարուեցան հոս, այն է Հեթում Բէ աչաց



195. Բարձրաբաշ Ս. Գրիգորի վանքը:

այնչափ ասուր էր, որ հայ թագաւորաց դանձր իր մէջ կը պահուէր: Կիրակոս պատմչի խօսքին համեմատ, Ռուբինեանց առաջին իշխանը Ռուբէն, Բարձրբերդի շրջակայքը կառաւորութեան պատելու ժամանակ, ճաշի կը հրաւիրուի բերդի եպիսկոպոսէն, և անոր ծառայից բացակայութենէն օգտուելով կ'սպաննէ եպիսկոպոսը և բերդիս կը ախրէ: Թէև այս պատմութեան ստուգութեան չենք

խարուն, Սմբատ թագաւորի հրամանով, և միւս եղբօր Թորոսի՝ թաթարօրէն խեղճութիւն (յուլիս 23ին, 1299): Նոյն ժամանակները գիտութեամբ հռչակաւոր կը հանդիսանար վարդան Բարձրբերդի վարդապետը:

Լեւոն Գե թագաւորութեան միջոց (1319-41) Բարձրբերդ՝ Նորի կոչուած իշխանականց ձեռքն էր, որոնք սերած էին թագա



տրահայր Կոստանդին մեծին զարմէն: Բարձրբերդի իշխան Եղրենց Պաղտին մարաշախար, գաշինք կնքելու համար Եգիպտոս զրկուած ժամանակ (1335ին), Հալէպի Ալթուն Բուգայէն խարեւթեամբ բնուեցաւ և բանախ մէջ մեռաւ: — Այս բերդս է հաւանականօրէն Մանուրլիէ Անգղիացի հոշակաւոր ճանապարհորդի յիշած Փարսիպէն (Pharsipee): Անշուշա բերդս Կոստանդին իշխանութեան ներքոյ մնաց իւր թագաւորութեան ժամանակ, անկէ վերջ Հայոց թագաւորութեան վերջն հասնելով, կը բնն բերդին ազգային յիշատակներն, բայց կը կարծուի՝ թէ այնուհետև ևս կանգուն մնացած է բերդս հզօր հայ իշխանի մը ձեռաց տակ, ինչպէս եղած են Տաւրոսի և Կիլիկիոյ գահուն ուրիշ բերդերը: Եհնուար Զիւլգաթեան 1467ին նուաճեց Կիլիկիոյ մեծ մասին հետ, նաև Բարձրբերդը: Մինչև ժԲ զար բնակութիւն ունէր բերդս և համանուն աւանն. իսկ անկէջ վերջ աւազակաց երկիւղէն անբնակ դարձաւ: Բերդին անուամբ կը կոչուէր շրջակայ գաւառը: — Բարձրբերդ ունեցեր է յատուկ եպիսկոպոսներ, յորոց կը յիշուին ԺԳ զարու սկիզբը ս՞ն Ստեփաննոս՝ Սսի և Ատանայի ժողովոց մէջ, և յետոյ Մխիթար կաթողիկոսի ժամանակ, Սսի ժողովին մէջ ս՞ն Բարսեղ 1342ին: — Սիւտուան, 147—149: Կիլիկիա, 290—191:

ԲԱՐՁՐ ՀԱՅՔ. — Հին Հայաստանի ասուջին նահանգն, որոյ սահմանքն էին արեւելքէն՝ Այրարատ, հարաւէն՝ Չորրորդ Հայք, արեւմուտքէն՝ Փոքր Հայք և հիւսիսէն՝ Տայք: Նահանգս կոչուած է Բարձր Հայք երկրին բարձրութեան համար, և մեր հին աշխարհագիրքը, ժամանակին կարծեաց համեմատ, կ'ըսէ. «Բարձր քան զամենայն երկիր», ա նոր համար Կատար երկրի ևս կոչուած է: Կը կոչուի նաև Կուրծք երկրի, որովհետև չորս կողմերը գետեր կ'արձակէ, ինչպէս կը գրէ նոյն աշխարհագիրքը. «Կի բոլսէ չորս գետս զօրեզս, զԵփրատ՝ յարեմուտս և զԵրասխա յարեւելս, զՔայլ ի հարաւ, զԱկաւս սիս՝ որ է Վոն ի հիւսիս»: վերջինս կը համապատասխանէ այժմեան Ճորոխ գետոյն, որ խաղահայոց սահմաններէն բոլորով կ'ընթանայ գլպի հիւսիս Պնտոս. իսկ Քայլ

ըսածը, որ հարաւարկողը կը վազէ, թերեւս չլինի ծանօթ Քայլ գետը՝ որ Երզնկայի մտ Եփրատի հետ կը խառնուի, այլ ուրիշ Քայլ գետ մը, որ նահանգին հարաւային սահմաններէն բոլորով Չորրորդ Հայոց մէջ կը թափի յԱրածանի:

Նահանգս մեր մտահնագիրներէն շատ անգամ կը կոչուի Կարնոց Աշխարհ, իւր գլխաւոր գաւառի անուամբ:

ԲԱՃԱՆՈՒՄԸ ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ

Հին ԳԱՒԱՌՔ	ՆՈՐ ՎԻՃԱԿԸ
Ա. ԳԲՐԱՆԱՂԻ	ԿԱՄԵԹ, ՏՈՒԺԿ
Բ. ԱՌԻԻՄ	ԿԷՐՃԱՆԵՍ, ԵՆՈՒՅԱՆ
Գ. ՄՆՁՈՒՐ (ՄՁՈՒՐ)	ԳՈՒՐՈՒՉԱՅ, ՄՈՒՆՁՈՒՐ
Դ. ԵԿԵՂԱՅ	ԵՐՁՆԿԱ
Ե. ՄԱՆԱՆԱՂԻ	ՇՈՒՇԱՐ, ԹԷՔՄԱՆ
Զ. ԳԵՐՁԱՆ	ԳԵՐՁԱՆ
Է. ՍՊԵՐ	ԻՍՓԻՐ
Ը. ՇԱՂԱԳՈՒՄՔ	ԹՈՐԹՈՒՄ
Թ. ԿԱՐԻՆ	ԷՐՁԻՐՈՒՄ, ՕՎԱՃԸԿ

Բնական գիրքով լինային է, իւր սահմանաց մէջ են Բիրաւինեան շղթայի բարձր գագաթները և հովիտները: Ունի նաև հարթածաւալ բարձրաւանդակներ կամ բնագրձակ գաշտեր, ինչպէս Կարնոյ, Երզնկայի, Գերչանայ կամ Բագաւիձոյ, են: Մեր հին աշխարհագիրները երեք կամ չորս մեծամեծ լեռներ կը յատկացնեն նահանգին, առանց յանուանէ յիշելու. բայց այլեւայլ գրոց մէջ անուամբ կը յիշուին հետեւեալ լեռները. Լեռիկը Կարնոյ, Լեռիկը Սպերոյ, Լեռիկը Գարաւաղեաց, Սեպրոն լեռան, Սմբատայ լեռիկը, Պախրայ լեռիկը, են:

Զրի կողմանէ ևս առատ է Բարձր Հայք և ունի շատ գետոց աղբերակուներ. գետերէն նշանաւորագոյնք են, Եփրատ՝ արեւմտեան Ասիոյ առաջին գետը, և Երասխա՝ Հայաստանի սեփական գետը. միւս գետերէն և վտակներէն յիշենք Քարա—սուշ, Քեօմիշր—սուշ, Գերչանայ ջուր, Մանաւաղոյ ջուր, են: Գետերէ գառ Բարձր Հայք ունի նաև Կարնոյ ձովը կամ լճաձեւ Ջրշեղջը, և շատ ջերմուկներ և աղբիւրներ, մանաւանդ Կարնոյ գաւառի և Պինկէօլ լեռանց մէջ:

Բերքերու առատութեան կողմանէ, նա



Հանգստի թէպէտ ցրտին է բարձր դրից պատճառաւ և շատ չեն անտառները, սակայն շատ բարեբեր է: Հողը արգաւանդ լինելով և ջրաշատ, յուսթի է և խոտաւէտ, բանջարաշատ, պողատու, և բազմաթիւ ծաղիկներով զարդարուած: Հոշակուած են Պինկէոյի կողմերը, և մինչեւ Ալամայ զբոստին տեղը հոն կարծուեր է, նոյնպէս Երզնկայի և Գերջանի հովիտները: Լեռանց մէջ կը գտնուին նաև տեսակ տեսակ սրսական երէններ, բօշ, եղջերու, այծեամբ, վիթ, վարազ, են: Թռչուններէն՝ կարաւ, արօս, արազիլ, են: — Հանքերու կողմանէ Բարձր Հայք ունի գանգան տեսակ հողեր և առատ քարացած աղ:

Քաղաքական տեսակետով այս նահանգս կ'երեւի թէ յաճախ խոտուեր է սահմանակից Փոքր Հայոց հետ, վասն զի այն կողմէն հաստատուն և բնական սահման ալ չունի: Երբեք չի յիշուիր նախարար որ միպետ Բարձր Հայոց կամ Կարնոյ, մանաւանդ որ Վաղարշակ թագաւորը արեւմտից կոմնակալ զրած լինելով Անգեղ տան իշխանը, կը թուի որ նահանգիս մէկ մասը ի հոսոց ինկած է Անգեղ տան իշխանաց ձեռք: Արշակունիներու ժամանակ, և զուցէ անոնցմէ ալ առաջ, նշանաւոր էին նահանգիս արեւմտեան հարաւային գաւառները, Անահատայ վից պաշտամունքներով, որոնց վրայ աւելցան նաև Քրիստոսէ առաջ հելլենական շաստուածները և պաշտամունքները: Իսկ Գգարու սկիզբը, քրիստոնէական կրօնքը և եկեղեցիները շատ բարգաւաճեցին նոյն տեղերը՝ սրբուելով շարչարանօք, բնակութեամբ և ժառանգութեամբ Ս. Գրիգորի Լուսաւորչի և իւր որդւոց, որոց ձեռակերտաց և նշխարաց մնացորդները կը մնան զեւ մինչեւ ցայսօր: Յաջորդ գարու մէջ պայծառացան Կարնոյ կողմերը, շինութեամբ Թեոդուպոլիս քաղաքի և բնակութեամբ Արշակունիներու յետին շառաւիղաց. և անոնց հարստութեան վերնալէն վերջ, այս կողմերը շատ աարիներ Յունաց բաժնի մասն կզան մինչև Հագարացոց և Թուրքաց զօրանալը: Յունաց և Հռովմայեցոց շատ զօրավարներ և կայսրներ անցած են այս նահանգէս Բ գարէն սիսեալ: Միջին գարու

մէջ ալ Թաթարաց և Թուրքաց ասպատակութիւններէն շատ աւերածութիւններ և արենհեղուցութիւններ եղած են. նոյն գեղերը շարունակարար կրկնուած են նաև յաջորդ գարերու մէջ և մինչև մեր օրերը: — Ստոր. հիւն Հայստ. 1-2:

ԲԱՐՄ. — Հին աւան կամ երկիր Վասպուրականի Աղբակ գաւառի մէջ, ուր կատարեցաւ Ս. Բարդուղիմէոս առաքեալը: Տես ԱՐԵՒԲԱՆՈՍ:

ԲԱՐՁԵՆԻՍ. — Այրարատայ ճակատք գաւառի նոյնանուն վիճակի մէջ կան այս անուամբ երկու այլազգաբնակ գիւղեր. Բարչեկիս Գալալա և Բարչեկիս Խարապա:

ԲԱՐՁԻ. — Գիւղ Այրարատայ Շարուր գաւառի. ունի 18 տուն հայ և 52 տուն այլազգի բնակիչներ:

ԲԱՐՍ. — Սակաւարնակ գիւղ Հայոց, Աղձնեաց նահանգի այժմեան Խիզան վիճակի մէջ:

ԲԱՐՍԵՂԱՆՅ ԱՆԱՊԱՏ. — Կիլիկիոյ Սեաւ լեռան վանքերէն մին: 1114 թուին Խաչի գիւտի կիբակի օրը եղեղեցօրհնէքի ժամանակ այս տեղ պատահեալ է մեծ երկրաշարժ, և եկեղեցին կործանուելով տակը մնացեր են երեսուն հայ կրօնաւորներ և երկու վարդապետք:

ԲԱՐՍՂԻ ՎԱՆՔ. — Աւերակ մենաստան Առաջին Հայոց մէջ, Թումարձա գիւղէն բիշ հեռու արեւելեան կողմը, լեռան մը ստորոտը:

ԲԱՐՍՈՒՄ. — Գիւղ Արցախի Փառխոս գաւառի մէջ, կառուցուած Շամքոր գետակի ձախ ափի վրայ, Գանակերէն գրեթէ Մղոն մը վար: Գեղիս տեղը խոր ձոր է, հորիզոնը նեղ և տեսարանը խափանուած: Բնակիչք, որ այժմ կը հաշուին 154 տուն և մօտ 1100 հոգի, զաղթած են Անի քաղաքէն, ունին նորաշէն եկեղեցի մը: Բարսումի մօտերը կան կանգուն կամ կիտակործան եկեղեցիներ և երկու վանքեր: Վանքերէն մին կը գտնուի գիւղի արեւելեան կողմը այգիներու մէջ. մեծութիւնն է միջակ, պատերն քարուկիր, ծածրն՝ փայտաշէն և անսունն՝ անյայտ: Երկրորդ վանքն կը կոչուի Սուրբ Հռիփսիմէ այգիներու մէջ. ամբողջապէս քարուկիր եղած է, որոյ առաստաղը յետոյ



խնարհուելով՝ փայտաշէն ծածկած են: Այս է Մխիթար Գոշի ակնարկած Ս. Հովհաննէսի մենաստանը: Բարսում գիւղը շրջապատւած է բնդարձակ հանգստարաններով: Տեղացի ծերունիները կը պատմեն, թէ Լեկզիննրու գէմ՝ միշտ ի կրիննրու ժամանակ, նահատակուած բոլոր Հայերը թաղուած են այդ գերեզմանոցներու մէջ, և այդ պատճառաւ այդչափ բազմաթիւ են գերեզմանները: Այս գիւղէն Լը կողմանցս իշխող Մէլիք Առտամը, որոյ նախնիք ծագած են Բագբասունի իշխանազանց սերնդէն: — Արցախ, 318—319:

**ԲԱՐՍՊԻ.** — Կը յիշուի իբրև թեմ՝ Աղթաւ մարայ:

**ԲԱՐՍՍՈՆ.** — Կը յիշուի գիւղս 1697 թուին գրուած մաշտոցի մը յիշատակարանին մէջ. «... Մեր Մահմուտ Ազաին շէրի թոն գԲարսասե զամենն այրեաց և աւար և թաղան տարաւ ի Ճիւլամերկ...»:

**ԲԱՒ.** — Մշոյ արեւելեան կողմի գիւղերէն մին:

**ԲԱՒԱՋՈՐ.** — Ստեփանոս Աստղիկ կը յիշէ այս անուամբ գիւղ մը Այրարատայ Շիրակի գաւառի մէջ, ուր զամարեցան Դաւիթ կիրապապատի և Կարսի Մուշեղ թագաւորի զօրքերը՝ ընդդէմ Սմբատ Բ Շահնշահի, որ յափշտակած էր իւր հօրեղբոր (Մուշեղի) Շաաիկ գիւղը:

**ԲԱՒԱԿՆ** կամ **ԲԱՒՈՆ.** — Հին գիւղ Տուրաբերանի Գաննաւորը գաւառի մէջ: Կը համարուի հայրենիք Սին կաթողիկոսի:

**ԲԱՔԱՆ** կամ **ԲԱՔՈՒՍԵԱՆ.** — Վասպուրականի հին գաւառներէն մին:

**ԲԱՔԱՍԵՐ.** — Բուզանդ (Գ. ԺԳ) կը յիշէ անունս հետեւեալ տողից մէջ. «Արշակ երթայր ընդ առաջ նորս (Մեծին Ներսէսի) մինչև ի կողմանս Բաքասերոյն»:

**ԲԱՔՍ** կամ **ԲՈՔՍ.** Տես ՀԱՔԱՆԻ:

**ԲԳՆԵՐ.** Տես ԲԱԳՆԱՅՐ:

**ԲԻՒՌԻՃ** կամ **ԲԹԱՌԻՃ.** — Գիւղ Բարձր Հայոց Եկեղեցաց (Երզնկա) գաւառի մէջ, Երզնկա բազաքէն շորս ժամ հեռու: Բնակելը 50 տուն Հայք՝ ունին Ս. Սարգիս և

կեղեցի մը: Գիւղէն քառորդ մը հեռու կը գտնուի Ս. Նիկողայոսի վանքը:

**ԲԳՆԻ** կամ **ԲԹՆԻ.** — Լես Բարձր Հայոց Եկեղեցաց (Երզնկա) գաւառի մէջ. ստորաբ կը գտնուի Ս. Կիրակոսի վանք:

**ԲԵԹԱՆԵԱ.** — Տփղիսի մօտ վանք և տաճար մային գերեզմանատուն Օրբելեանց. ուր հանդիսով թաղեցին քաջն Լիպարիտ:

**ԲԵԹՂԵՆԷՄ.** — Հոշակաւոր քաղաք և սեփառեցի քրիստոնէից, ուր ծնաւ Փրկիչն արեւելեաց: Միջերկրական ծովէն 845 մետր բարձր է, և Երուսաղեմի հարաւային կողմը 12 հազարամետր հեռու լեռան մը վերայ կառուցուած է և շորս կողմը ձորերով պա-



196. Բեթղեմէմ:

տած: Արգարու կիրը Հեղինէ բարեպաշտ թագուհին, սուրբ այրը մաքրել տուաւ և պատով մի շրջապատելով երկրպագութեան տեղ ուրշեց. բիշ տարիներ յետոյ ուրիշ բրիտանեայք աղօթարան մը շինեցին վրան, զոր 135ին Ազրիանոս կայսրն եկաւ բակեց և տեղը անառով մը շրջապատելով՝ նուրբեց Ազոնիս շատուածոյն և մտերին վրայ Ափրոդիտեայ արձանը կանգնեց: Ըստ աւանդութեան, Մեծին Կոստանդիանոսի մայրը Հեղինէն, կամ նոյն ինքն Կոստանդիանոս կրկին մաքրել տալով սրբազան տեղը՝ շինութեան ձեռք զարկաւ, կամ ինչպէս ազգային աւանդութիւն մը կը հաստատէ, Տըրգատ թագաւորը լրացուց շէնքը փառաւոր



ու հոյակապ տաճար մը կանդնելով: Ըստ ազգային պատմաց, Եօթներորդ դարուն եկեղեցւոյն երկայնութիւնը 2000, իսկ լայնութիւնը 1000 կանդուն էր և 90 մարմարեայ սեանց վրայ բարուկիր կամարնեքով հաստատուած: Սակայն նոյն ժամանակէն վերջ, եկեղեցին զանազան վտանգներու և դէպքերու ասօթի իր մեծութիւնը և շքեղութիւնը կորսնցուց: Լատին պատմաց համեմատ խաչակրաց Ս. Երկրէն հեռանալէն յետոյ՝ եկեղեցին անտերունջ մնալով քայքայեցաւ և Արարայիք տանեաց կայսրներով՝ հրացանի գնդակներ կը շինէին: Սակայն զանազան յիշատակարանք հակառակը կը հաստատեն, որ Հայք միշտ պահած ու պահպանած են եկեղեցին, ինչպէս 1227ին Տէր Աբրահամ և Տէր Առաքել անուամբ հայ եկեղեցականք իբրև ակը և իշխոյ տաճարին՝ ներքին զուրը շինել կու տան տախտակեայ պատուական բանդակագործութեամբ զարդարուած, հեռեւեալ արձանապրութեամբ, « ԹՎԻՑ. ՈՂՁ. Կազմեցաւ դուստր Ս. Աստուածածնիս ձեռամբ Տէր Աբրահամի և Տէր Առաքելոյ. ի բազուսորտեան Հայոց Հերմոյ որդւոյ Կառասնդի. Քրիստոս Աստուած որորմի աշխատարաց » . կայ նաեւ գրեթէ նոյն սնով արարայիք արձանապրութիւն: Ս. Կննդեան արդի եկեղեցին՝ սինազարդ պաթէն որմնով բաժնուած է, և երեք դասէ կը բաղկանայ. հարաւային կողմը և միջին Աւագ Սեղանը՝ որոյ տակն է Սուրբ Այլը, Յունաց սեփհական են. իսկ հիւսիսային դասը Հայոց սեփհականուած է 1813 թուականէն ի վեր, Սուլթան Մահմուտի հրովարտակաւ: Հայք շատ անգամներ վէճեր ունեցած են թէ Յունաց և թէ Լատինաց հետ, և բաւական իրաւունքներ կորուսած էին, բայց վերոյիշեալ թուականին բարձրագոյն հրովարտակի զօրութեամբ կարողացան դարձեալ հանապազօրեայ Պատարաց մատուցանել Ս. Այլին սեղանին վրայ և Յունաց ու Լատինաց ունեցածներուն համեմատ կանթեղներ կախել և պատկերներ հաստատել: Ս. Կննդեան եկեղեցին հինգ կարգ սրահ ունի ատեանէն ու երկու պսակներէն զուրս, որոնք պատով զատուած են ժողովրդոց կայնելու սրահներէն, և այս հինգ սրահները չորս կարգ կարճաբար միա-

կաուր սիններով զատուած են, որք ընդ ամենը 50 հատ են: — Բեթղեհէմի բնակիչք 5000 են, Հայք, Յոյնք, Լատինք և Մահմաականք. Հայք թէև սակաւթիւ (100 հոգի) են, բայց միւս ազգաց վրայ ազդեցութիւն ունին: — Բազմալեզ, Ա. 364-366: Պատմաքրիւն որբազան տեղեաց, 200-209:

ԲԵԼՍԻ կամ ԲԵԼՍԻ. — Գիւղ վասուրականի Ռշտունեաց գաւառի արեւելեան՝ և Ընձաքիտար լեռան հարաւային կողմը: Կրտսի՝ թէ այսպէս կոչուեր է, իւր մէջը Ներքովթայ կամ Բելայ գերեզմանը զանուելուն համար: Գիւղիս հիւսիսկողմը կայ ամայի վանք մը, փոքրիկ, գեղեցիկաշէն և զմեթաւար:

ԲԵԼՍԻԿԱՄ. — Ուտի նահանգի մէջ հին բաղաբի մը անուն:

ԲԵԼՍԻ կամ ԲԵԼՍ. — Գիւղ Սիւնեաց կողական գաւառի մէջ, Խոչատուի լեռան հիւսիսային ստորոտը: Սիւնեաց ամրոյն հարկատու հին գիւղերէն մին էր Բելս, զոր 871 թուին Զեանշիր իշխանը խնդրելով առաւ եպիսկոպոսէն և փոխարէն տուաւ Բազաց գաւառի Արուքս գիւղը: Ղափանցոց պատերազմաց ժամանակ 1726ին կամ 1728 թուին, Օսմանեանց կողմնակալ զօրավարը հոս գալով բանակ զբաւ գրեթէ շաբաթ մը, և ջանաց նենդել Գաւիթ բէկը և իրենները. բայց հայ քաջերը գիշերանց « ի վերայ հասին նոցա, հարին կատորեցին զբազումս ի նոցանէ, և զփաշայն հայածական արարին » : Ժէզարու երկրորդ կիսուն այս գիւղէն էր Տաթեի Ղազար եպիսկոպոսը, որ գետը ինկնալով կորսուեցաւ: Բելսի փոքրիկ եկեղեցին կը կոչուի Ս. Գեորգ. փափաք կայ ուրիշ նոր մի ևս կառուցանելու: Բնակչաց թիւն է 267, բաժնուած 29 տան. սրոց մեծագոյն մասն է Փարսաղանեան մէլիքներու սոհմէն:

ԲԵԼՍԵԼԻՔԻ. — Հին գիւղ Սիւնեաց կողական գաւառի մէջ. որոյ համապատասխան կը կարծուի այժմեան Պաղասպարձի գիւղն, որ ունի Ս. Հռիփսիմէ եկեղեցի մը:

ԲԵԼՍՈՐՈՏ. Տես ԲՈՒԽՈՐՈՒՏ:

ԲԵՂԵՍՆԻ կամ ՊԵՂԵՍՆԻ. — Քաղաքական Երրորդ Հայոց (Մեխլիսիէ), համանուն



գաւառակի մէջ: Բնակիչք մեծաւ մասամբ մահաւանդական են: Հայք ունին 1 եկեղեցի Ս. Փրկիչ և 1 վարժարան Երեսիսեան: Բենկեանի կառուցուած է բարուա լեռան մը կողին վրայ, սնեբը ցրուած են, ուր կան նաև մնացորդներ հին ամրոցի մը, զոր 1146ին առաւ Եզեմիոյ Պալատին իշխանը: Քաղաքաւանիս մտան կ'անցնի Սալրուէ գետակը, որ թէև խոր չէ, բայց լայն է և սրբնթաց մանաւանդ առատացած ժամանակ: Շուրջը ունի պարսէզներ և այգիներ, խաղողի սրանչելի և մեծահատիկ ախակներ: Նոյնանուն գաւառակն ունի 45000 բնակիչք:

ԲԵՆԱԴ. — Լեռ Այրարատայ Ծագիսան (Տիատին) գաւառի մէջ:

ԲԵՆԿԵԱՆ, ԲԵՆԿԵԱՆ կամ ԲԵՆԿԱՅ. — Հին և նշանաւոր աւանազիւց Ակնայ (Փոքր Հայք): Գիրքն խիստ ամուր է, և կրնայ համարուիլ ազատամարան մը կամ ամրոց՝ ժայտերուն փակած: Ունի նեղ և խոր կիրճեր, որոց միջէն Եփրատ գետը կ'ծկելով, սղմուելով կ'անցնի պառչարնթաց: Անուանի է Բենկեանայ կամուրջը՝ որ ամէն երեկոյ զաներով կը փակուի, և եթէ թշնամի ունենան՝ կամուրջը կը վերցնեն, որով գետը անանցանելի կը լինի: Բենկեանցի Հայք հոչաւ



197. Բենկեանի կամուրջը:

յորոց այժմ միայն 3000ը Հայք են: Բենկեանիի գլխաւոր վաճառքն են տախտակ և գերան, վասն զի ունի մեծամեծ անտառներ:

ԲԵՆԿԵԱՐ. — Գաշտային կիլիկիոյ մէջ, Սսի մտ բարանձաւանման ամուր տեղ մը: Եզիպտացոց առաջին արշաւանաց ժամանակ (1266թուին), մայրաքաղաքի բնակիչներն հոս ազատանեցան, բայց մասամբ մը անորէն թշնամիէն սպաննուեցան, և մասամբ մ'ալ գերի տարուեցան: Տեղւոյս անունն ի հնուսէն կը կոչուէր Կեմայ:

ԲԵՂԱՄԷՉ. — Տեղւոյ մը անուն Պարտաի և Բելուկամայ (Ուաի) մէջտեղ:

ԲԵՂԱՊԱՏ. — Կը յիշուի Ուաիի մէջ:

կուած են իրենց բաջալթեամբք. ընտիրնձոյգանի ունին, բաջալարժ հեծեալներ են, և արագոսն գիսեն վագիլ բարեր ու լեւները: Տեղւոյս Հայք՝ հարուստ, բազաքակիրթ և բաջարի են. և եթէ իրարու հետ սիրով լինին, բոլոր հայութեան կրնան օրինակ լինիլ: Բենկեանի ստորտը բանի մը տուն թուրքեր կը բնակին զատ, և կ'ապրին Հայոց շուրհի: Թուրքաց թագը կ'անուանի Ուարար, և իրօք աւանագիւղիս հին անունը Հարար եղած կը համարուի, զոր Սենեքերիմայ Բենիկ իշխանը նորոգեր է, և այնուհետև կոչուեր է Բենկայ կամ Բենկան տուն: Բնակիչք 1000ի կը հասնին



և ունին երեք եկեղեցիք. Հրեշտակապետ, Աստուածածին, Երեք Մանկո՜ւնք, և երկու վարժարան՝ Մեքսիկոյան և Նոնեան: Բենեկեանի շուրջը կը գտնուին Ս. Թագաւոր, Ս. Նիկողայոս, Ս. Խաչ, Ս. Յակոբ և Խանակատար եկեղեցիներու աւերակներ: Վերջին գեպերուն աւանդիլոս այրեցաւ և ժողովուրդը շինեցր իտալացի փարան: Բայց ի վերջոյ նորէն սկսաւ շինուլ: — Թորոս Աղբար, Ա. 238—240:

ԲԵՀՐԻՎԱՅ. — Սակաւաբնակ զիւղ Ատրպատականի Մարտոյ գաւառի մէջ, Մարտա քաղաքէն 40 վայրեան հետո՛ւ արեւմտեան կողմը: Ունի փոքրիկ եկեղեցի մը: Բնակչաց մեծ մասը փոխադրուած են քաղաքը:

ԲԵՇ. Տես 200-րդ:

ԲԵՌԵԱՒԱՍ. Տես ԲԵՌԵԱ:

ԲԵՌԵԻԿ. — Գիւղ Տայոց Բերդացիոր գաւառի մէջ:

ԲԵՍՍՅԱՅ. — Կը յիշուի իբրև գիւղ՝ Գուգարաց Ծորոփոր գաւառի մէջ:

ԲԵՐԱՆ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:

ԲԵՐԻ. — Օրբելեան կը յիշէ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, Յուրայ վանքի զիմաց, այս անուամբ աւագակաց տեղ մը: — Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:

ԲԵՐԻ. — Գիւղ Արցախի Քուտար գաւառի մէջ, կառուցուած Տաւուշ գետակի ձախակողմը: Այլազգիներէն Թովուզ-Ղալա կը կոչուի: Բնակիչը ամբողջ հայ են՝ մօտ 1000 հոգի. ունին Ս. Գրիգոր անունամբ եկեղեցի մը որ այժմ՝ փայտածածք է. ներքուստ արեւմտեան որմի վրայ արձանագրութիւն կայ: Գիւղիս արեւմտեան կողմը կը գտնուի Ս. Սարգիս քարուկիր սխտական մատուռ մը և ընդարձակ հանգստարան: Ս. Սարգսէն վեր կայ գարձեալ որիչ քարուկիր մատուռ մը՝ Աւագ Ս. Նշան, և մօտը ուխտաւորաց համար խուցիք: — Արցախ, 329—330:

ԲԵՐԻ. — Գիւղ Տուրուբերանի Ապահունեաց (Մանազկերա) գաւառի մէջ: Ունի 65 տուն հայոց և 100 տուն Քրդաց:

ԲԵՐԻ. — Գիւղ Տուրուբերանի Հարթ (Խնու) գաւառի մէջ: Ունի 160 տուն հայոց և 127 տուն Քրդաց:

ԲԵՐԻԱ. — Գիւղ Արցախի Չաւէ գաւառի

մէջ, Կողբ գիւղէն քիչ մը վար, նոյնանուն վտակի մը աջ կողմը. այլազգիներէն կը կոչուի Ղալաչայ: Բաժնուած է երկու թագի, Արեւելեան և Արեւմտեան թագ, որոնց մէջ կան մէկ մէկ քարուկիր եկեղեցիներ՝ Ս. Գեորգ և Ս. Աստուածածին: Բնակիչը են 1075 հոգի, բաժնուած՝ 160 տան:

ԲԵՐԻԱԳԱՒԱՍ. — Այլ անուն Այրարատայ Մազազ գաւառի:

ԲԵՐԻԱԳՐԱԿ կամ ԲԵՐԻԵԳՐԵԿ. — Հին զիւղ Տայոց Առեացիոր գաւառի նոյնանուն վիճակի մէջ: Կառուցուած է Ճորոխի եղբրքը, Արսիս գիւղի արեւմտեան հիւսիսային կողմը: Խնչակն զիւղիս, նաև Բերդագրակ վիճակի զիւղերու բնակչաց մեծամասնութիւնն ուլթեատաներորդ գարս վերջերը սանկացած են: Տակաւին կը մնան Բերդագրակի հին եկեղեցիները, որոնք քննութեան կը կարօտին:

ԲԵՐԻԱԹԱԳ. — Այսպէս կը կոչուին Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, Կատուարար բլուրի մօտ գտնուող բերդի մը աւերակները:

ԲԵՐԻԱԿ. — Գիւղ Այրարատայ՝ Վերին Բասենի մէջ, Գու գիւղի մօտ՝ հիւսիսակողմը:

ԲԵՐԻԱԿ. — Գիւղ Տուրուբերանի Տարոն գաւառի, Մշոյ դաշտի մէջ: Ունի մօտ 150 տուն հայ բնակիչ:

ԲԵՐԻԱԿ. — Գիւղ Վասպուրականի Տար (Վան) գաւառի մէջ, Չուստանէն երեք քառորդ հետո: Կառուցուած է ձորի մէջ, և իր անունը առած է, մերձակայ փոքրիկ բլրակէն, որուն վրայ ի հնումն բերդ կար: Բնակիչը 60 տուն ամբողջ հայ են և ունին Ս. Յովնանէն անուամբ գեղեցիկ եկեղեցի մը, յորում կը պահուի ԺԵ դարուն գրուած Յայտնաւորք մը: Բերդակցիք երկրագործութենէ գառ լաւ քարահատութիւն ևս գիտեն: Տեղւոյս յատուկ բերքն է սեսակ մը միսրագոյն աւազուս բար՝ որ կրակի շատ զեմանալուն, վառարանաց և հացի փուտերու կը գործածեն, և վաճառականութեան մեծ նիւթ գարձած է: Գիւղէս քիչ մը վեր աւերակ վանք մը կայ Ս. Աստուածածին անուամբ: — Արձուշի Վասպուրական, Գ. 63:

ԲԵՐԻԱԿ. — Սակաւաբնակ և փոքրիկ ամուր գիրքով զիւղ Աղձնեաց նահանգի այժմեան Խիզան վիճակի մէջ: Կառուցուած է



անտառախիտ բլրակի մը կառարին վրայ, Բասա գիւղէն 10 վայրկեան հեռու՝ արեւկեան կողմը:

ԲԵՐԳԱԿ. — Գիւղ Չորրորդ Հայոց, Չարսանձաղի առաջնորդական առաջին լծովին մէջ: Ամուր գետն մի կը համարուի Տէրսիմի, և այն կողմանց գլխաւոր վաճառատեղին է: Իր մէջի հին շէնքերը կը ցուցնեն Բերդակայ հին բնակչոց վայելչասիրութիւնը: Արդի բնակիչք Հայք և Թուրքք կրթութենէ զուրկ են: Հայք կը հաշուին 69 տուն և ունին երկու եկեղեցիներ Ս. Աստուածածին և Ս. Շառնշեն: Գիւղիս վերի ծայրը կը գանուի Ս. Թորոս կամ Ս. Տիկիկ կոչուած հին և հոյակապ վանքն, կիսակործան վիճակի մէջ: Վանքիս գմբէթն կործանած է. կառուցուած է մեծամեծ քարերով, ընդարձակ է և ղեղեցիկաշէն: Մեծ դրան տակէն կը բոյսէ սանտրակ և յորդառատ ջուր մը:

ԲԵՐԳԱԿ. — Սակաւարնակ գիւղ (Վան) կարկաս վիճակի մէջ. ունի Ս. Անտոն եկեղեցի մը: — Այս անուամբ գիւղ մը կը յիշուի նաև Արցախի կամ Ռաիի Տուչքատակ գաւառի մէջ:

ԲԵՐԳԱԿԱՌ. — Կերակոս պատմիչ կը յիշէ այս անուամբ հովոցաց տեղի Ալուանից կաթողիկոսաց Ռաիի մէջ. «Սա (Յովհաննէս) փոխեաց զկաթողիկոսարանն ի Բերդակոյր իւրեանց հովոցաց տեղի, յորժամ հանուի Պարտաւայ»: Կարելի է որ լինի Բերդակաձոր:

ԲԵՐԳԱԶՈՐ կամ ԲԵՐԳՉՈՐ. — Արցախի հարաւային գաւառներէն մին, որուն կը համարուի մասնաւորն այժմեան Ճիւղբայիլ գաւառի մէկ մասը: Գաւառիս բնակչաց մեծամասնութիւնը այժմ մահմեդական են: Հեռուեալ գիւղերը որ կանխաւ հայաբնակ եղած են, այժմ մահմեդականաբնակ են, որոյ մէջ կան եկեղեցիներ և հանգստարաններ, սկսելով Երասխի ձախ ափէն մինչև Ղալաղշրայ գիւղը:

- Դիրի                    Հատք
- Թուխս                Գաշտահատ
- Բաշար (Բաշարար)    Չեք
- Հին-Փոքր Թաղար    Փարաջան
- Հորնաշատ            Հին-Մեծ Թաղար

- Եւաշրին-Խոշք        Սարգիս
- Երկարաշոր        Չղջիկ (Չաղջիկ)
- Սարիան                Սպիտակ շէն
- Թուձասար:        Չամիկ-գով
- Ամուտուշիս        Գառնակաշ
- Խոջիկ                Երակարի
- Պատար

Գաւառիս հայաբնակ գիւղերն են այժմ միայն հեռուեալները. Դորանլար, Խանձաձոր, Յարար, Խցարերդ, Ղալաղշրայ: Բերդաձոր սնի ի հնուց մնացած չորս բերդեր. ա. Անու Տեղ Աւիւոց, կառուցուած նոյնանուն լերան վրայ. բաւական մեծ է, սրան շէլի է տեսարանն և զիրքն ամուր: Ունի տակաւին կանգուն մնացած քարուկիր սլառական մատուռ մը, զերեզմաններ, և վիմափոր բժշկարար աւազան մը: բ. Թուխս բերդ, կառուցուած է համանուն առանձնակ լերան մը վրայ, և ունի աւերակ փոքրիկ եկեղեցի մը: գ. Ղալալու բերդ, նոյնպէս կառուցուած է քարձք սարի վրայ. մէջը կան շատ հին շինութեանց բեկորներ և աւերակ մատուռ մը: դ. Խցարբերդ, որոյ մէջ կը բնակին Հայք և ունին եկեղեցի. ունի ամուր պարիսպ, պատուական ջուր և զմայլելի տեսարան: — Արցախ, 399-402:

ԲԵՐԳԱԶՈՐ. — Կը յիշուի Վասպուրականի Ռշտունեաց գաւառի մէջ: Ի հնունն Բերդաձորոշ Ս. Աստուածածին կը կոչուէր՝ այժմեան Կարմրակ վանքը:

ԲԵՐԳԱԶՈՐ. Տես ՍՈՂԹ և ԳԱՂՏԵՐԷՍԻ:

ԲԵՐԳԱՂ. — Գիւղ Վասպուրականի Արձնէ (Ականց) գաւառի մէջ: Բնակիչք 25 անէ աւելի. ունին Ս. Աստուածածին քարուկիր եկեղեցի մը: — Այս անուամբ գիւղ մ'ալ կը յիշուի Այրի վանքի արձանագրութեանց մէջ:

ԲԵՐԳԱՎԱՆԹ կամ ՓԵՐԹԷՎԱՆ. — Բարձր Հայոց կարնոյ գաւառի գիւղերէն մին, այժմեան բնակիչք մահմեդական են:

ԲԵՐԳԱՏԱԿ. Տես ԵՂՈՒԿ:

ԲԵՐԳԱՅՓՈՐ կամ ԲԵՐԳԱՓՈՐ. — Տայոց հին գաւառներէն մին:

ԲԵՐԳԱՔԱՐ. — Արցախի Հաթիբք գաւառի բերդերէն մին:

ԲԵՐԳԵԳՐԷԿ. Տես ԲԵՐԳԱԳՐԱԿ:



ԲԵՐԳԻ ԳՂՈՒԽ. Տես ԲԱՅԱԶԻԻ ՆՈՐ:  
 ԲԵՐԳԻԿ. — Գիւղ Այրարատայ Վանանդ  
 գաւառի մէջ, համանուն գետակի եզերքը:  
 Այժմեան բնակիչք ըսուր կն 12 տուն:

ԲԵՐԳԻԿ. — Գիւղի մը աւերակ տեղը,  
 Գուգարայ Զարոփոր գաւառի մէջ, անասու-  
 ներով և քարաժայռերով շրջապատուած:  
 Բերդիկի հարաւակողմը կը գտնուին խաչ-  
 արձաններով զերեզմանաւաներ, և երկու սա-  
 գաշէն քարակերտ մատուներ՝ հանդերձ ար-  
 ձանագրութեամբք: Գիւղատեղոյս մօտ ձու-  
 րի մէջ Գերեգայ գետոյն վրայ կը տեսնուի  
 տակաւին Բռնք անուն իշխանէմը շինուած  
 քարաշէն կամրջի մը հիմնարկութիւնը: Այս  
 կիսկաաար կամրջի մօտ կառուցած է 1273  
 թուին Յովհաննէս ուն քահանայ քարուկիր  
 կամուրջ մը. ուր կայ նաև հսկայաձեւ սեւ-  
 տական քարէ խաչ մը՝ յանուն Ս. Յովհան-  
 նու, որոյ պատուանդանի վրայ փորագրուած է  
 կամրջի շինութեան յիշատակարանը: Այս  
 կամուրջը կործանուելով նորոգուած է 1836  
 և 1843 թուականներուն:

ԲԵՐԳԻԿ. — Կը յիշուի Սիւնեաց Երնջակ  
 գաւառի մէջ: — Տես ԲԱՂՔ:

ԲԵՐԳԻՄԱՅՐ. — Հին և մեծ գիւղ Սիւ-  
 նեաց Վայոց ձոր գաւառի, որոյ գիրքն ան-  
 յայտ է:

ԲԵՐԳԻՍ. — Գիւղ Տայոց Պարտիզացիոր  
 գաւառի մէջ: Այժմեան բնակիչք մահմե-  
 տական են:

ԲԵՐԳԻԱՆ ԲԵՐԳ. — Կիլիկիոյ հին ամ-  
 բոցներէն մին:

ԲԵՐԳԻԱՆԵՐԻՉ. — Հին գիւղ Սիւնեաց  
 Ծղուկ գաւառի: Տես ԱՐՆԻ:

ԲԵՐԳԻԱՅ ԳԻԻՂ. Տես ՊՈՐՏԻԿ:

ԲԵՐԳԻՈՒՆԵՔ. — Հին գիւղ Այրարատայ  
 Բազրեւանդ գաւառի: Տես ԱՐՄԱԿ:

ԲԵՐԳՁՈՐ. Տես ԲԵՐԳԱՁՈՐ:

ԲԵՐԳԻՆ. — Հայտնակ գիւղ Ատրպատա-  
 կանի (Գարատաղ) քէլջվան գաւառակի մէջ:  
 Ունի 40 տուն բնակիչ և 1 եկեղեցի:

ԲԵՐԳՈՒՍ. — Հին քաղաք և բերդ Կի-  
 լիկիոյ, Մարաշի հիւսիսային կողմը. երբեմն  
 եպիսկոպոսանիստ և իշխանանիստ էր: Ռու-  
 բինեանց հարստութեան սկիզբները, Բեր-  
 գուս Գոզ Վասիլի ձեռքն էր: Նոյն ժամա-  
 նակ (1107ին) Գոզ Վասիլ կը յաղթէ պար-

սիկ սապատակներուն և Քեսունի կողմը կը  
 վերապանայ: Գոզ Վասիլի մահէն և Ա.  
 Լեւոնի գերութենէն վերջ, օտարները տի-  
 րեցին անոնց վիճակներուն, բայց երբ Թու-  
 ռոս Բ վերադարձաւ, իւր եղբայրը Ստեփա-  
 նէ գրաւեց այդ տեղերը. քիչ վերջը Բեր-  
 գուսը Թորոս Բ կողմէն, խաղաղութեան  
 համար, տրուեցան Գրլըճ Ասլանին (1157):  
 1208 թուին ես Իկոնիոնի սուլտան Խոսրով  
 շահը, Յովհաննէս Մեծաբորոյ կաթողիկո-  
 սի գրգմամբ եկաւ րանց բերդատէր Գրիգոր  
 իշխանը և Բերգուսի տիրեց: — Կիլիկիա,  
 348—349:

ԲԵՐԳՔ. — Հին գիւղ Սիւնեաց Գեղար-  
 բունի գաւառին, զոր Աշուս Ա թագաւորը  
 նուիրեց Սեւանայ վանքին:

ԲԵՐԻԱ կամ ՀԱՆԵՊ. Գղ. ALEP. Յն.  
 Βεροια. — Գլխաւոր քաղաք համանուն կու-  
 սակալութեան Ասորոց երկրի մէջ. կը գտնուի  
 34° 45 արեւելեան երկայնութեան, և 46°  
 13 հիւսիսային լայնութեան մէջ. Ալեքսան-  
 դրեկի նաւահանգստէն հեռու է 135 հա-  
 զարամետր՝ հարսու արեւելեան կողմը: Ունի  
 հիւանալի տեսարան, բարձր է 300 մետր,  
 կառուցուած բլրակներու ստորտը հովտի  
 մէջ. նշանաւոր է բարձր բերդովը, պարիսպ-  
 ներով և շէնքերու հնութեամբք: Բերիա  
 շրջապատուած է ամբողջ լայն պարիսպով,  
 և ունի երկաթէ եօթը գոնիք՝ որոնք ա-  
 բարական անուններ ունին: Հին տունները  
 շինուած են ծանր քարուկիր խիտա զմայ-  
 կուն. տակաւին կը գտնուին մինչև 2000  
 տարի յառաջ շինուած շէնքեր: Թաղերը, փո-  
 ղոցները շինուած են ոլորուն ձեւով, ամէն  
 թաղի գլուխ կայ երկաթեայ գուս. տուններու  
 այն պատերը որ շինուած են փողոցի կող-  
 մը՝ բարձր և առանց լուսամտաւի են. լու-  
 սամուանները առններու բաց գաւիթներու վրայ  
 են: Այժմ նոր տուն շինողներ՝ կը շինեն  
 նոր ձեւով, պարսպէն գուրս Ազիզիէ ան-  
 ուամը նոր և գեղեցիկ թաղ մը շինուած  
 է և օր աւուր կը շահանան նոր տուններ: Սու-  
 վորական լեզուն արաբերէն է. Հայք, Թուրքք,  
 Յոյնք, Ասորիք, Խալաիք, ամէնքն ալ նոյն  
 լեզուով կը խօսին. մայրենի լեզու գիտցող-  
 ները բացառութիւն կը համարուին: Արաբերէն  
 են նաև թաղերու և իջեւաններու անուանք:



Շէնքերը ամէն բանէ աւելի հետաքրքրական են իրենց հնութեամբ. յաւիտենական քաղաք մ'է Բերիա, Արրա՛համ նահապետէն սկսեալ, Հագարացոց, Խաչակրաց, Լէնկիմուրի, Հայոց, Ասորոց և այլ իշխանութեանց յիշատակներն ամէն կողմ կերելին: Բերդը 4000 տարուան շէնք է կ'ըսեն, և դեռ հազիւ սկսած է քայքայիլ. այն ալ երեսէ ձգուելուն համար, եթէ քիչ մը նորոգութեան հոյ տարուի դեռ շատ դարեր կրնայ զիմանալ:

Հագարացոց, Խաչակրաց և Լէնկիմուրի ժամանակ, սրսնք կը բանուէին, կը կողակուէին, կ'սպաննէին և աւերակ դարձնելու կ'աշխատէին այս նշանաւոր քաղաքը, սակայն շէնքերու ամբութեան, Ասորոց և Արարացոց հաստատամտութեան և խորամանկութեան շնորհիւ, դարձեալ կը մնար անսասան. ներքին խռովութիւններ ևս պակաս չէին: Պամանեան իշխանութեան ներքոյ մանալէ վերջ (1500) սկսաւ տակաւ առ տա-



198. Բերիա — հալէպ քաղաքի տեսարանը:

Լէնկիմուր քաղաքս գրաւած ատեն, 10000 մարդ յատկացուցած է բերդս քանդելու, սրսնք հազիւ գառ ի վայր բլուրին վրայի սալայատակը բիշ մը կը քանդեն, և յուսահատած կը թողուն: Բերդի մէջ 400 կտոր շէնքերու աւերակներ կը նշմարուին և Հոսովմայեցոց ժամանակէն մնացած եկեղեցոյ մը աւերակը և աւազանը: Ամէն կողմ լի են քիւռֆի գրով արձանագրութիւններ:

Բերիա շատ բարգաւաճած էր Արարացոց ձեռքը, թէև շատ վտանգներ անցան

կաւ իտղազանալ և աւելի պայծառանդով, դարձեալ շահաստան եղաւ վաճառուց Ասորոց, Միջագետաց, Արարիոյ և Հայոց: 1822ին մեծ դեմնաշարմէն Բերիոյ մեծ մասը կործանեցաւ աւերակ դարձաւ, բնակիչներն ալ նուազեցան և բիշ մը ժամանակ վաճառականութիւնն ինկաւ, բայց վերջը նորէն զարգացաւ: Շատ կարաւաններ կը յաճախեն հս. սկսեալ Բարելունէ, Եզեսիայէ, Տիգրանակերտէ, Խարբեբլէ, Արաբկերէ, Անթապէ, Մարաշէ և ուրիշ քաղաքներէ. հա-



ղորդակցութիւն ունի նաև Եւրոպայի, Գամասկոսի, Եզիպտոսի և Հնդկաստանի հետ: Ծովային վաճառականութիւնը կ'ըլլայ ընդհանրապէս սեզոնային և ձմեռային միջոցառումներով, մեծ քանակութեամբ ապրանք կու գայ Եւրոպայէն, մանած, կառուց, շաքար, կոնյակ, և մեծ քանակութեամբ կ'երթայ ցարեն, բամբակ, պիտակ, մորթի և մետաքսեայ կերպաններ, որ աստ կը շինուին խիստ ճարտար արուեստի և վայելչուշ, ունի շատ ձիթապատուղ, որոյ երկրորդ անգամ ելած իւղով կը շինեն ածառ՝ որ հոշակուած է Փոքր Ասիոյ ամէն կողմը: Բերիա մեծ կեցրոն է անուտերի, ունի վաճառատունք և հարուստ վաճառականներ, բայց հոս ալ Եւրոպացիք մուտ գտնելով սկսած են հեղահեղ իրենց ձեռքը անցնել շահաւոր գործերը: Բերիոյ ժողովուրդը աշխատասէր է, արթուն, խորամանկ, հեռատես, շահասէր վաճառական և յատաշար մտածեան սիրահար: Հոս կը գործեն զուտ մետաքսէ, խառն մանածէ և խառն սկիւթի լավ շատ անասի նիւթեր, փողոցներ, վարագուրներ, շալեր, ևն.:

Քաղաքիս բնակչաց թիւն, ըստ Վ. Քիւնի, կը հասնի 127449 հոգւոյ, հետեւեալ կերպով բաժնուած.

ՄԱՏՄԵՏԱԿԱՆՔ	
Ատրի Արաբք, Թուրքք, ևն.	97451
ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔ	
Ատրի Կաթողիկէայք . . . . .	5704
Յոյնք (Մէլքէայք) . . . . .	8004
Հայ Կաթողիկէայք . . . . .	5000
» Լուսաւորչականք . . . . .	2550
Մարոնիք . . . . .	2989
Փաղչէայք . . . . .	450
Լատինք . . . . .	1058
Հրեայք . . . . .	7790
Այլ և այլք . . . . .	155

Գումարն . . . 127449

Բերիոյ մէջ կան բազմաթիւ մզկիթներ՝ որոյ մի քանին կանխաւ եկեղեցի եղած են. բրիտանոնայք ալ ունին իրենց եկեղեցիները, մենք օտար ազգացը թողլով ծանօթանանք միայն ազգային եկեղեցիներու հետ: Իր հնութեամբն նշանաւոր է Հայոց Քառասուն Մանկանց

մայր եկեղեցին՝ որ կը գտնուի ամբար սարսուպաւոր և ընդարձակ թաղի մը մէջ, ուր կը բնակին զանազան ազգք բրիտանոնէից: Այս եկեղեցին է հնուին պաճուճեալ Էր բնաիր գարգերով, շինական յախճապակիներով և միսին նկարներով: Աւագ խորանի կամարի ամբողջութեան շարիւղ յասկապէս Չինաստան շինուած և խնամով բերուած շարուած էր Ս. Աւետարանչաց, հրեշտակաց և այլ պատկերներ, հանգերձ հայաստա արձանագրութեամբք: Ականատեսն Կ. Ս. Ղազանձեան, կ'ըսէ «... այսպիսի մի սքանչելի բան այսպիսի մի յիշատակ քանդել կու տան, այսինքն այն պատուական շինիները իբր հնութեան մի կոշտութիւն փրցունելով կիրով կը ծեփեն, և այն շինիներու կտորուանքը կը լեցնեն եկեղեցւոյն մի անկիւն»: Եկեղեցւոյս դրան վրայի հին յիշատակագիրն կորսուած է, այժմեան արձանագրութիւնը նոր կը համարուին: Եւրոպացիներ կը կատարուի միշտ ֆառասուն Մանկանց եկեղեցւոյն մէջ, իսկ երկրորդ եկեղեցւոյն մէջ, որ Ս. Աստուածածին կը կոչուի և կը գտնուի նոյն թաղին մէջ, ասոնի օրեր: Կաթողիկէայ Հայք ևս ունին ընդարձակ և փառաւոր եկեղեցի մը: Երկու հայ հասարակութիւններն ալ ունին իրենց յատուկ երկեսս վարժարանները և առաջնորդարանները:

Բերիոյ արք կ'զգենուն արարական, եւրոպական, թուրքական և հին հայկական զգեստներ, և շատեր գլուխին ճեմակ կը կապեն. պանդուխտ մը երբ քաղաք մանէ բնաւ չի կրնար ճանչնալ իւրամը կամ բրիտանոնայն, ոչ զգեստէն, ոչ լեզուէն և ոչ անունէն: Կանանց զգեստները և զարդերը խիստ ծանրագին են, շատ մը ազամանդներու հետ նաեւ իրենց վերարկուներու շուրջը կը շարեն մարգարիտներ: Սովորութիւնը բոլորովին արարական և ասորական են. հիւրասիրութեան մէջ քաղաքավարական ձեւերը ծայրայեղութեան տարած են: Միջին հաշուով քաղաքիս մէջ կան 150 մզկիթ, 114 մէսնիա, 23 թէքքէ (վանք), 15 եկեղեցի, 4 ժողովարան, 73 հասարակաց աղբիւր, 64 բազնիք, 7500 կրպակ, 1000ի շար վաճառատուն, 160 սրճարան, 20 դիզարան, 4 հիւրանոց, 2 հիւանդանոց, 11



կամուրջ, են: Բերիոյ շուրջը կան 600ի չափ պիստակի, 300էն աւելի ձիթապտուղի և 4-500ի չափ սուրբական պարաւզներ, որոնց բանէն աւելի յատկացած են հասարակութեան, ուր կը գիտնեն բազմութեամբ դրօսանաց համար: Օտար տէրութիւններէն Գաղղիա, Ռուսիա, Գերմանիա, Անգղիա, Աւստրիա, Իտալիա, Պելճիա, Պարսկաստան, Յունաստան, Փորթոկալ, Տանիմարքա, Շուեա և Նորվեկիա և այլք, բազաքիս մէջ ունին իրենց հիւպատոսները: — Խառն Նամակներ, 149-175, Վ. Քիեն, Բ 109-171:

ԲԵՐԿԱ. ՏԵՍ ԲՈՐԿԱ:

ԲԵՐԿԻՐԱՅԻՌՈՅ ԳԱՒԱՌ.— Այսպէս կոչուած է Վասպուրականի Արեւրանի գաւառը. յայտնի է թէ՛ իւր մէջ գանձուող Բերկլի պիստուր բազաքի համար:

ԲԵՐԿԻՐԻ.— Գլխաւոր գիւղաքաղաք Վանայ կուսակալութեան համանուն գաւառակի մէջ. Վանէն հեռու է 77 հազարամետր, հիւսիսային արեւելեան կողմը: Նշանաւոր է Բերկրի հին պատմութեան մէջ գանազան պատերազմական դէպքերով: Տակաւին կայ հինաւորք բերդն կառուցուած քարաժայռի վրայ, որ և գանազան անգամներ նորոգուած է: Մեր պատմիչները կը յիշեն բազաքիս Պարսից և Յունաց ձեռքը անցնելը: ԺԱ գարու մէջ Գաւճի անուամբ հայ իշխան մը ևս տիրեր է Բերկրի, բայց այլազգիները վերստին աւսեր են: Յունաց Միքայէ կայսրը շատ զօրք զրկելով բազաքիս տիրեց, բայց բիշ վերջը Տուզրի սուլտանը պաշարելով Բերկրի տիրեց և մէջի բրիտանեայ իշխանները կապանօք գերի աւարաւ:

Այժմ Բերկրի ունի 3400 բնակիչ, յսրոյ 2400ը Հայք են և մնացածը թուրք և Հրեայք: Քաղաքաւանիս մօտէն կ'անցնի Բերկրի կամ Պաւտոսիանի գետը, որոյ վրայ ձգուած է հնաշէն բազմակամար քարէ կամուրջ մը:

Բերկրի գաւառակը կը համարուի Վասպուրականի հին Արեւրանի (Տես) գաւառին: Սահմանքն են հիւսիսէն՝ կարնոյ նահանգը, արեւելքէն՝ Պարսկաստան և Հէքքեարիի գաւառը, հարաւէն՝ Վանայ գաւառը, արեւմուտքէն՝ Արճէշի գաւառակը և Վանայ

ծովակը: Գաւառակիս մէջ Հայք ունին ինը գիւղ և իրենց թիւն 8000ի կը հասնի, մինչդեռ Քուրդք (Աշիրաթք, Հէյաւարանցիք, Լըւեցիք, Եզլիաթք), թուրք և Հրեայք կը հաշուին 7000 հոգի: Բերկրիի ազգային նախական վայրերէն յիշելու արժանի է Տէր Յուսէփի Արղլի անուն վանքը: Գաւառակիս մէջ է Սպանակ կեօշ կոչուած լճակն՝ բաժակաձեւ փոքրիկ լեռան մը վրայ՝ Գործոթ գիւղի մօտերը, որոյ ջուրը կ'ստոգէ շրջակայ դաշար: Հոս է նաև Թոնիթ բուսած հրաբուխ լեռը, որոյ ստորոտներէն ձծուսը կը հանեն, և նախի կամ քարիւղի ազրիւրներ գանուեցան Առաւելեանց Պ. Նազարէթի ձեռքով, բայց նոյն անձի մահուամբ՝ որ զսէ գացեր է նոյն աշխատութեան, մնացեր են անգործազրկելի: — Ստոր. հիւն Հայս. 194-193: Մասիս, 3219, 3803:

ԲԵՐԿԻՐԻ.— Սակաւարնակ Հայոց գիւղ վերին կարկասու (Վան). ունի քարակիր եկեղեցի մը՝ Ս. Աստուածածին:

ԲԵՐԿԻՐՈՅ ԳԱՅՏ.— Այսպէս կը կոչուի Բերկրիի շուրջը տարածուած բնագրծակ դաշար, որ այժմ աւելի ծանօթ է Ապաղա (Տես) անուամբ:

ԲԵՐԿԻՐՈՅ ՁՈՐ.— Այս անուամբ ձոր մը կը յիշէ Ասողիկ Վասպուրականի Արեւրանի գաւառի մէջ:

ԲԵՐՁՈՐ.— Այս կերպ գրուած անուն Արցախի Բերկաձոր գաւառի:

ԲԵՐՁՈՐ.— Գիւղ Բարձր Հայոց Գերջան գաւառի:

ԲԵՐՔՆԻ. ՏԵՍ ԿՈՎԱՍԱԿԱՆ:

ԲՉԱԽԷԹ.— Հայտնակ գիւղ Գուգարաց Զաւարք գաւառի մէջ. ունի 366 բնակիչ, բաժնուած 43 տան:

ԲՉՂՈՆ.— Հին գիւղ Սիւնեաց Ճահուկ գաւառի. այժմ աւերակ է:

ԲՉՄՐՇԷՆ.— Գիւղ իտարբերկի տաջնորդական թեմի մէջ: Ունի 240 տուն հայ բնակիչ և Ս. Աստուածածին եկեղեցի մը:

ԲՉՆՈՒՆԵԱՅ ՅՈՎ.— Տես ՎԱՆԱՅ ՅՈՎ:

ԲՉՆՈՒՆԻՔ ԿԱՄ ԲՉՆՈՒՆԵԱԿԱՆ ԳԱՒԱՌ.— Տարբերանի հին գաւառներէն մին, որ անունը առած է Հայկայ Բազ թոտան անունէն, որ Մանաւազայ որդին էր, և բնակեցաւ Աղի ձովուն արեւմտեան հիւսիսային



եղերքը, որոյ անուամբ ծովն ալ կոչուեցաւ Բզնուեանց ծով, որ այժմ սովորաբար կը կոչուի Վանայ ծով: — Թէպէտեւ գաւառիս եւ պիտկոստական ամրան հաստատուած է Ս. Գրիգոր Լուսաւորչէն, բայց գրաւոր կերպով մեզ ծանօթ է նախ Սոսրմակ եպիսկոպոսը, որ սրբոյն Սահակայ հակառակամտ եղաւ և յետոյ գաւառիս եպիսկոպոս, և Յովհաննու կաթողիկոսի և այլոց աւանդածի համեմատ, սրբոյն Յովսեփայ տեղակալութեան միջոց, սա կը կատարէր ձեռնադրութիւն, որ գանուեցաւ նաև Արտաշատու ժողովի մէջ: Երանելին Աբրահամ Ղեւոնդեանց աշակերտը արքսրանքէն գտնուել վերջ գաւառիս եպիսկոպոս գրուեցաւ: Գաւառիս ծանօթ եպիսկոպոսներէն կը յիշուին Յովնան՝ Գիւլայ ժողովոյն ստորագրութեանց մէջ, և Թեոդորոս եպիսկոպոս՝ Իմաստասիրի ժողովոյն մէջ: Էջմիներսրդ գարու վերջերը և ութերորդի սկիզբը, կաթողիկոս լինելէն առաջ, գաւառիս եպիսկոպոս եղաւ Եղիա: Իսկ ԺԲ գարու մէջ Հոսիկայու ժողովոյն մէջ կը յիշուի Ստեփանոս եպիսկոպոս Բզնուեանց: Եւ այլն:

Վազարշակ թագաւորը, իբրև առանձին նախարարութիւն հաստատեց նաև Բզնուեանց տոհմը, բայց վերջը խոսքով թագաւորի օրով ոչնչացաւ այս նախարարութիւնը, որուն պատմութիւնն կը կարգանք Բուզանդայ մէջ (Գ. Ը): Հայոց խոսքով թագաւորը կը հրամայէ Բզնուեանց Գատարէն զլխաւորին որ Պարսից գէմ պատերազմի, սակայն սա նենգութեամբ Պարսից կողմը կը բռնէ, բայց երբ Հայք Վաչէ զօրափարի ձեւքով կը յաղթեն Պարսից, կը բռնեն գաւաճան Գատարէնը և կը քարկոծեն խոսքովու գիմաց. «Եւ զազգ նորա և զկին և զօրդիս գաանէր յամբոցի անդ իշխանին Ռշտունեաց յանուանեալն յԱղթամար կըզգւոջ. ի նաւ կըկալ Վաչէ սպարապետն, անցեալ ի կղզին՝ առ հասարակ ոչ զէզ թողոյր և ոչ գարու: Եւ այսպէս բարձաւ ազգաստձմ նախարարութեանն այնորիկ և գաուն նոցա յարբունիս կալան»: Թէպէտեւ Մերսոպ Արշակ ԲԷ ժամանակ ևս կը յիշէ այս տոհմը:

Գաւառիս զլխաւոր քաղաքն էր Խլաթ որ յատկապէս Քաղաք Բզնուեանց ևս կոչուած

է. իւր մէջ էին նաև Արծկե, Բաղէշ, Հիզակ, Գատուսան, ևն: Բզնուեանց գաւառի այժմ կը համապատասխանեն Խլաթ և Արծկէ գաւառակները:

ԲՁՈՎԱՆԵՐԻ ԿԱՄ ԲՈՒՋԱՒԱՆԵՐԻ. — Այս անուամբ երեք Գըս-Բզնուեանց, Գոշրա-Ալի Բզնուեանց և Ախուշեա Բզնուեանց գիւղեր կան Այրարատայ Ոստան գաւառի մէջ: Այժմ այլազգարնակ են. մտերը կան շատ աւերակներ՝ քննութեանց կարօտ:

ԲԷՋԱՔԼՈՒ. — Գիւղ Այրարատայ կուտայք գաւառի մէջ: Բնակիչներն Սպահանի գաւառներէն գաղթած եկած են 1875 թուին մտա յիսուն տան չափ, և կառուցած են այս գիւղս: Ունին եկեղեցի մը Ս. Յակոբայ նախրուած:

ԲԷ ԽԱՄՍ. — Գիւղ Տիգրանակերտի երրորդ առաջնորդական թեմի մէջ:

ԲԷԼԱՆԵԺ. — Գիւղ Արարատականի Բարանդուզ գաւառի. ունի 100 բնակիչ հայ և մէկ եկեղեցի:

ԲԷԼՈՒ. ՏԵՍ ԲԵԼՈՒ:

ԲԷԿԼԻ ՆԵՐՍԷՍ. — Երբեմն հայարնակ՝ բայց այժմ թուրքարնակ գիւղ Սիւնեաց Գեղարբունի գաւառի մէջ: Թուրքերը այժմ կը կոչեն Բեղրուշ Հիւսեիկ-քեկա Սարաչու. անօրէնները հազիւ թողած են եկեղեցւոյ հետքեր. տակալին կան մի քանի գերեզմաններ՝ վերջին գարերու վերաբերեալ արձանագրութիւններով:

ԲԷԿԼԱՐ-ՔԵԱՆԵՐԻ. — Գիւղ Աղուանից Հոյի (Արաշի) գաւառի մէջ: Բնակչաց նախնիք գաղթած են խաչեն, Ջրաբերդ և Վարանդա գաւառներէն. այժմ կը հաշուին 750 հոգի, բաժնուած 142 տան: Ունի եկեղեցի մը Ս. Ստեփանոս և Ս. Մերսոպեան ուսումնարան: Գիւղիս գերեզմանատան մէջ կը գրանուին բաւական հին տապանաքարեր:

ԲԷՈՒՉԵՆՁ ԿԱՄ ՓԱՐՉԱՆՁ. — Բազմամարդ հայարնակ գիւղ Խարբերդի առաջնորդական թեմի մէջ: Ունի 220 տուն բնակիչ և Ս. Փրկիչ եկեղեցի մը:

ԲԷՌԵԱ ԿԱՄ ԲԵՌԵԱՒԱՍ. — Գիւղ Այրարատայ վանանդ գաւառի մէջ. ունի 58 տուն հայ բնակիչ: Եկեղեցին կը կոչուի Ս. Լուսաւորիչ: Հին արձանագրութիւն կը նշմարուի եկեղեցւոյ սեմնոց վրայ, և գիւղիս ա-



րեւելեան կողմը կայ գերեզմանատուն՝ հին ձիաձև և սրբոցածե տապանաբարերով. բիշ մը հետուն այ կան վանքի աւերակներ:

ԲԵՔԵՐՈՒՆԻՔ. ՏԵՍ ԳՈՒԼՔՆ:

ԲԵՕԼԻԻՔ ԲԱՇԻ. — Բազմամարդ այլազգարնակ զիւզ Այրարատայ Բազրեւանդ գաւառի խաչեագի միճակի մէջ: Այս տեղ կը տեսնուին եկեղեցւոյ և վանքի աւերակներ, պարսպի հետքեր և բնդարձակ հայկական գերեզմանատուն, սրոյ խաչարարէն շատերը տարած են: Մինչև Հասան խանի պաւերազմեհրու ժամանակ, ինչպէս ամբողջ խաչեագ՝ նոյնպէս այս զիւզս հայ էին, ունէին բազմաթիւ ձիեր, ոչխարաց հօտեր և անասնոց նախիր: — Բագրեշաւոյ, 82-83:

ԲԸՂՎԱՆ. — Գիւղ Բարձր Հայոց Եկեղեցի (Կրօնիկ) գաւառի մէջ: Ունի 52 տուն հայ բնակիչ:

ԲԸԼ-ԲԸԼ. — Գիւղ Տիգրանակերտի առաջնորդական շորրոյ թեմի: Ունի 14 տուն հայ բնակիչ:

ԲԸԼ-ԽՈՐԱՆ. — Գիւղ Տիգրանակերտի ասաներոյ թեմի մէջ:

ԲԸՆՋՐԿԱ. — Ստիպարնակի զիւղ Բարերգի. ունի մէկ եկեղեցի:

ԲԸՐԹՈՆ ԿՈՄ ԲԸՐԻՒՆԻՔ. — Գիւղ Բարձր Հայոց Կարնոյ գաւառի մէջ: Այժմեան բնակիչք զրեթէ բոլորը այլազգի են:

ԲԹԱԽԻՃ. ՏԵՍ ԲԻԱԽԻՃ:

ԲԹՆԻ. ՏԵՍ ԲԻՎԻՆ:

ԲԻԺԱՆՂԱՆՂԱՆԻ. ՏԵՍ ԲԻՃԱՆՂԱՆԻ:

ԲԺՆՈՒՆԻՔ. ՏԵՍ ԲՈՒՅՈՒՆԻՔ:

ԲԻԲԻՍ ԿՈՄ ՃՈՒԱՍՁ. — Հայքնակ աւան (Արցախ) Ղազարի գաւառի մէջ, 2200՝ բարձր զիրբով. ունի 35 տուն:

ԲԻՎԵՆ. ՏԵՍ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ:

ԲԻԼԻՍԱՆ. — Հայքնակի զիւղ Աղուանից Գարդման գաւառի. ունի բարձր և հիւսիսահայկաց զիրբ, ատոյջարար օղ և ջուր: Բնակիչք 31 տուն գաղթած են Վարանդա գաւառէն: Ունին մէկ եկեղեցի փայտաշէն ձեղունով, նուիրուած Ս. Աստուածածնի:

ԲԻԹ. ՏԵՍ ԲԵՆ:

ԲԻՃԱՆՂԱՆԻ ԿՈՄ ԲԻՃԱՆՂԱՆՂԱՆԻ. — Փայտակարանի հին գաւառներէն մին:

ԲԻՆԱՍՈՒՍ. — Թուրքարնակի զիւղ (Այրարատ) Վերին Բասենի մէջ:

ԲԻՆԵԱԹԻՍԻ ՇԷՆ. — Գիւղ Արցախի Պաղկանք գաւառի մէջ. կառուցուած է Զիւանի սարի շարունակութեան վրայ: Բնակիչք 26 տուն են և գաղթած են 1840 թուականին Գարատաղէն. ունին Ս. Աստուածածին նուրաշէն եկեղեցի մը:

ԲԻՆԻՓ. — Աւերակ զիւղատեղի Այրարատայ Ուրծ և Արած գաւառի մէջ:

ԲԻՆԻՋՈՐ. — Այս անուամբ անտառ մը կայ Գուգարաց այժմեան Պօռչալու գաւառի մէջ, Շուլավէր զիւղի մօտ: Անտառիս մէջ բոլոր Բըրբըրակ և Հաճարկոչտ աղբիւրները, ջուր կու տան Շուլավէր բազմամարդ զիւղին:

ԲԻՆԿԵԱՆ. ՏԵՍ ԲԵՆԿԵԱՆ:

ԲԻՋԱՆԻՍ. — Այլազգարնակի զիւղ Զանգեզուր (Սիւնիք) գաւառի մէջ:

ԲԻՋԵՆԱԿ. ՏԵՍ ԲՋԵԱԿ:

ԲԻՍՏ. ՏԵՍ ԲՈՒՍՏ:

ԲԻՐՉԵՆԱՆ. — Այլազգարնակի զիւղ Սիւնեաց Բաղք (Զանգեզուր) գաւառի մէջ:

ԲԻՒՋԱՆԻՒՄՆ. ՏԵՍ ԿՈՆՏԱՆԿԵՆՈՒՊՈԼԻՍ:

ԲԻՒՍԱԿԱՆ. — Գիւղ Այրարատայ Արած գաւառի գաւառի մէջ:

ԲԻՒՐԱԿԱՆ. — Գլխաւոր զիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի հին Արերից և այժմեան Ոչխարակի միճակի. Արերիցոչ գետակի ձախակողմը և Էրիով զիւղի մօտ գէպի արեւելեան հարաւ: Այլազգիներէ կը կոչուի Բիւրական. ունի 1000էն աւելի բնակիչ, ամբողջ հայ: Եկեղեցին նուիրուած է Ս. Յովնանէն. զիրքն սարահարթ է, և ունի այգիներ և պաշար: Արերից գետակը ոչ միայն կ'ոտոյէ Բիւրականը, այլ և կու տայ կարմրախալս ըսուած ձուկը: — Գիւղս առաջին անգամ յիշուած կը գտնենք Քարու սկիզբը Յովհան կաթողիկոսի պատմութեան մէջ: Նոյն կաթողիկոսի սեփնա-

կանութիւն է եզեր Բիւրական, յորում կը յիշուի ամբողջ մը և վանք. իսկ եկեղեցին շինուած էր, ըստ պատմչին, «... հաստա-հեղոյս կոփածոյ բարամբը պերճապատեղծ շքեղութեամբ և նկարակերտ յօրինուածով, ...» Ամբոցի և վանքի շինութիւնը չկան, այլ մնացած է միայն եկեղեցին չափաւոր մեծութեամբ, անխն է և երկու կողմերը ունի մէկ մէկ մասուռ, սրացմէ միոյն մէջ, տեղ-



ւոյս նորեկ բնակիչները կը կատարէին աստուածային պաշտամունքը, որովհետեւ եկեղեցւոյ տանիքը կործանած էր, բայց 1841 թուին փայտաքարի շինեցին և հոն սկսան կատարել: Գիւղիս բնակիչք նորեկ կամ գաղթականներ են, որովհետեւ հին բնակիչները արարացաց արշաւանքներու ժամանակ սպանուեցան, զերի տարուեցան և զիւզն ամալացաւ: — ԺԵ գարու մէջ (1467ին) ևս կը յիշուի Մեկարան Բիւրականի Ս. Աստուածածիկ և Ս. Յովնան եկեղեցիներով, որ Մկրտիչ անուամբ քահանայ մը ընդօրինակած է Յիւսաւս որդի զիրքը: Այդ գրքի յիշատակարանէն կը տեսնուին որ Բիւրականի Սարգիս Վարդապետը շինեց է Տեղեղոյ Ս. Աստուածածինը. հոն կը յիշուին նաև տասնհինգէն աւելի քահանաներ Անբերդի և Բիւրականի, և երեք եպիսկոպոսներ Կարապետ, Մկրտիչ և Թաղէոս: Գրեթէ 200 տարի վերջ Յակոբ Դ կաթողիկոսը ուրիշ քանի մը զիւղերու հետ Բիւրականն ալ սեփհականեց Էջմիածնի աթոռին: — Կողմանցս օդոց յստակութեան և ջրոց էպատուականութեան համար, 1835 թուին Ռուսները Բիւրականի արեւելեան սահմանները ամարանոցներ շինեցին: Գէորգ Դ կաթողիկոսն ալ 1874ին իրեն համար հայրապետական ամարանոց շինեց Բիւրականի մէջ, և կհետոյ առխտակի մը վրայ գրեց իւր յիշատակարանը: Գրեթէ տասն երկու տարի անաջ Բիւրականի սահմանները գտնուեցաւ սահմանաքար մը, որ կարծուեցաւ մեր Արաշէս Ա՛ն կանգնուած կաթողներէն մին. այդ քարը այժմ կանգնած են եկեղեցւոյ մօտ: — Այրարատ, 156-158:

ԲԻԻՐԱԿՆ, ԲԻԻՐԱԿՆԵԱՆ կամ ԲԻԻՐԱԿՆԵՐ. — Այս անուամբ կոչուած է շատ անգամ հայ տեղագրողներէ Այրարատայ Սրմանց կամ Պիկեղ լեռը:

ԲԻԻՐԱԿՆԵԱՆ. Տես ԲԻԻՐԱԿՆ:

ԲԻԻՐԱԿՆԵՐ. Տես ԲԻԻՐԱԿՆ:

ԲԻԻՐԱՊԱՏ. — Հայաստան՝ բայց այժմ այլազգարնակ զիւղ Այրարատայ Բաղրեանոյ գաւառի մէջ: Գիւղիս արեւելեան հիւսիսային կողմը 1/3 ժամ հեռաւորութեան վրայ կը գտնուի բլուր մը, որոյ գագաթը կայ

բերդ մը սրբատաշ քարերով: Գիւղացիք մեծաւ մասամբ քանդած են բերդս, և մէջն տեղ տեղ պեղելով գտած են մեծամեծ կարասներ, արծաթեայ ապարանջաններ, ջրի բաժակներ, հին գրամներ, և այլն: — Բագրեւանդ, 166-167:

ԲԻԻՐՈՏԻ ՎԱՆՔ. Տես ԾՂԱՍԿ:

ԲԻԻՐՔ. — Հայասրնակ զիւղ Շապին Գաւահիսարու. ունի 120 տուն բնակիչ:

ԲԼԻԱԿ ԾԷՆ. — Արցախի Վարանդա գաւառի մէջ: Ունի 15 տուն բնակիչ, որք և կեղեցի շունենալով, իրենց հոգեւոր պետքերը կը կատարեն Սիստորաշէն զիւղի եկեղեցւոյ մէջ:

ԲԼԵԿԱՆՅ. Տես ԾՂԱՍԿ:

ԲԼԷԹԱՆՅ. — Զաւարեան կը յիշէ այս անուամբ հայասրնակ զիւղ մը Սիսեանց մէջ, որ ունի սագաշէն եկեղեցի մը երկու սիւներու վրայ կառուցուած 1696 թուին:

ԲԼԷՅ ԴԱՐ. — Գիւղ Տիգրանակերտի երրորդ աստիճանական թեմի մէջ. ունի 50 տուն հայոց և մէկ եկեղեցի:

ԲԼԷՋԱՆ. — Բարձրագոյն և զլիաւոր լեռ Տուրուբերանի այժմեան Պուլանրիս գաւառի: Բնկած լինելով Պուլանրիսի մէջ տեղը՝ կը բաժնէ զայն երկու մասանց Վերիկ և Ներքիկ Պոռչակըիսներ: Լեռս ունի բազմաթիւ թեւեր և գագաթներ, որոնցմէ նշանաւորներն են՝ Տիւնան, Բերդի սար, Շըխ-խս, Զոջ-Հալար, Փոքր Հալար, Խանձաւ, Քօսայ սար, Զոջ Ժախնոց, Շարար պոռչաղ, և այլն: Բլէջան անունը կ'ստուգարանուի իբր Բեւայջան (Բեւայ մարմին), որ հաւանական չէ. ծերերու պատմածին նայելով ոմն Բլեջան թագաւոր, երբմն տիրելով այս կողմերուն, լեռս կոչուեր է անոր անուամբ Բլեջան: Լեռանս վրայ կայ սրբատաշ քարերով կառուցուած բերդ մը, որուն հսկայական պատերը տակաւին կանգուն են և միայն տանիքը քանդուած է:

ԲԼՈՒՐ. — Մեծ զիւղ Այրարատայ ճաւառք գաւառի մէջ. ունի 200 տուն հայ բնակիչ:

ԲԼՈՒՐ. — Կը յիշուի այս անուամբ հին զիւղ մը Այրարատայ Բաղրեանոյ գաւառի մէջ: Հիւանդանալէն վերջ հոս բերուեցաւ Ս. Սահակ և հոս աւանդեց սուրբ հոգին.



ուսկից յետոյ մարմինը տարին Աշտիշաա: Կորին՝ Բըրըցաց գիւղ կը գրէ: Գիւղս այժմ ունի մօտ 80 տուն հայ բնակիչ:

**ԲՆՈՒՐ.** — Սակաւաբնակ գիւղ Բարձր Հայոց այժմեան թորթումի վիճակին մէջ:

**ԲՆՈՒՐ.** — Գիւղ Բարձր Հայոց Կարնոյ գաշտի մէջ, 3 ժամ քաղաքէն հեռու: Բնակիչք 40 տուն հայ և 30 տուն թուրքք: Հայք ունին եկեղեցի մը և մէկ ուսումնարան 30 աշակերտներով:

**ԲՆՈՒՐ.** — Հայաբնակ գիւղ Բարեղի: Ունի 112 տուն հայ բնակիչ և մէկ եկեղեցի:

**ԲՆՈՒՐ.** — Գիւղ Տուրուբերանի այժմեան վերին Պուրանըի վիճակի մէջ: Ունի 26 տուն Հայոց և նոյնչափ Բրդաց:

**ԲՆՈՒՐ** կամ **ԲՆՈՒՐՍ.** — Բարձրադիր մեծ աւան Այրարատայ վերին Բասեն գաւառի մէջ: ԺԱ գարուն իրբև պարսպապատ և աւանը վայր մը Մէլչուկեանց արշաւանաց ժամանակ հոս ապաստանեցան բոլոր մերձակայ գիւղերու և վանքերու բնակիչք. և անօրէն թշնամիք կործանելով պարսպը մէջը գանուածներ բոլոր կտորեցին: Սպանուածներու թիւը կը հասնի 7000ի և 60 ալ կրօնաւոր:

**ԲՆՈՒՐԵԿ.** — Սակաւաբնակ գիւղ Հայոց Տուրուբերանի Բոնաշէն վիճակի մէջ:

**ԲՆՈՒՐՄԱԿ.** — Գիւղ Վասպուրականի այժմեան Արճէշ գաւառի. ունի 60 տուն հայ և նոյնչափ քուրդ բնակիչ: Հայք ունին եկեղեցի մը և ուսումնարան: Բլուրմակ գրւարձակի գիրք ունի և բնութեան սքանչելի տեսարան, միայն ծառաստանը անպատու կն: Հոյր զօրաւոր է և խիստ յարմար բարակ ծառեր հասցնելու, այնպէս որ 8-10 տարուան անկուած բարակն կրնայ համարուիլ օրինաւոր հաստ գերան: Հայ բնակիչք սովորաբար ցորենի մշակութեամբ կ'ըրարին:

**ԲՆՈՒՐՍ.** Տես **ԲՆՈՒՐ:**

**ԲՆՐԱԿ.** — Հայաբնակ գիւղ Բարեղի: Ունի 65 տուն բնակիչ և մէկ եկեղեցի:

**ԲՆՐՈՑ ՎԱՆՔ** կամ **ԲՆՐՅՅ ԱՆԱՊԱՏ.** — Կիլիկիոյ հին վանքերէն մին, գիրքն անյայտ:

**ԲՆՐՈՑԱՅ ԳԻՒՂ.** Տես **ԲՆՈՒՐ:**

**ԲՆԻԾՍ.** Տես **ՊԵՆԾՍ:**

**ԲՆԱՅՐ, ԲՆՐԱՅՐ** կամ **ԲՆՐԱՅՐԻՎՈՄ.** — Այս անուամբ գիւղ կը յիշուի Այրարատայ Կողովիս կամ Տուրուբերանի Ասպագունիք գաւառի մէջ:

**ԲՆԱՅՐՁ.** — Գիւղի մը անուն, որոյ գիրքն անյայտ է: Այս գիւղէն էին սուրբն թաթուլ և Վարոս, որոց սխտասեղիք տակաւին կան Այրարատայ Գարեղէնք գաւառի մէջ:

**ԲՆԵՆ, ԲՆԱՆ.** — Գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի: Այս անուամբ Բղենոյ զաւառ մը կը յիշուի Սիւնեաց մէջ, ինչպէս նաև Բղենոյ բերդ և Բղենոյ ջուշ:

**ԲՆԱՅԵՂ.** — Բերդ Չորրորդ Հայոց Ծովք (Չմշկաձագ) գաւառի մէջ: Բերդիս մէջ Տիրան թագաւորը սպաննեց զսուրբն Յուսիկ: Բուզանդ արքունի բերդ կ'անուանէ և կը յիշէ նաև եկեղեցին՝ որոյ պաշտօնեայք սրբոյն մարմինը փոխադրեցին Գարանաղեաց թորական գիւղը: Բնաբեղ անունը սխալմամբ գրուած և տպուած կը գանանք Բնաբերդ:

**ԲՆԱՍԱՐ.** — Կը յիշուի Սիւնեաց մէջ Իրբև սահման Տաթևի վանաց:

**ԲՆԱՍԵՈՒ.** — Վերնոյն նման կը յիշուի Սիւնեաց մէջ:

**ԲՆՈՒՆԻՍ** կամ **ԲՆՈՒՆԻՔ.** — Հայաբնակ գիւղ Սիւնեաց Ծղուկ (Սիւխան) գաւառի մէջ, Ախաթեան գիւղէն քիչ մը դէպի արևելք, Լաստ լեռան հիւսիսային կողմը, փոքրիկ ձորակի մը մօտ, որտեղէն կը հոսէ սուռակ մը: Հարաւային կողմը կը բարձրանայ բլուր մը՝ որոյ ստորաբ կայ աւերակ եկեղեցի մը: Գիւղիս հիւսիսային կողմը կը գանուի հին գերեզմանատուն մը, ուր կայ գեղեցիկ և քանդակազարդ դամբարան մը ԺԳ գարու արձանագրութեամբ. կան նաև հնագոյն թուակնաւ տապանաքարեր: ԺԿ գարու վերջերը Բնունիք և Կիրակոսիկ գիւղերու տէրն էր Մարտիրոս անունով մէկը որ ժառանգած էր իւր նախնիքներէն, որ և իւր միակ որդւոյն Օրպէլի մահուան պատճառով նախրեր է այս գիւղերը Տաթևի վանքին: — Գերեզմաններէն մին որ ունի Գրիգորի քաջ վարդապետ տապանագիրը՝ գիւղացիներէն սուրբ համարուած է և շատ հիւանդներ կու գան բժշկութիւն խնդրելու: ԺԷ գարու մէջ այս գիւղէս էր Աղաման



Զաքարիա վարդապետար, որ շատ լեզուներ գիտէր, քարոզած է կաթողիկէութիւնն Հայաստանի մէջ և յետոյ Հովմայ Ս. Մարիամ Էջմիացի կոչուած եկեղեցւոյ մէջ Հայոց խոստովանահայր եղած է և հաւատոյ ծաւարման սովորանք հայերէն գրքերու սրբազրիչ: Մեծեր է Հովմայ մէջ 1688ին, ինչպէս կը յայտնէ տապանագիրք, և իւր ստացուածքը թողեր է վերոյիշեալ եկեղեցւոյն: — Սիւսական, 245—246: Զաքեղոս, Ա. 77—79:

ԲՆՈՒՑ. — Հին գիւղ Այրարատայ Ռարծ և Արած (Վէտի—Պատար) գաւառի մէջ: Այժմեան բնակիչք այլազգի են 26 տուն: Գիւղիս մէջ կը ածուցին եկեղեցիներու աւերակներ և հայկական գերեզմաններ:

ԲՇՆԿՈՅ. — Բարձր Հայոց Թորթում միւսակի գիւղերէն մին:

ԲՈՎՈՒՆԻՒԲ ԲՈՒՄՆԻՒԲ կամ ԲՈՒՎՈՒՆԻՒԲ. — Վասպուրականի հին գաւառներէն մին:

ԲՈՒԻ կամ ՊՈՒԻ. — Գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ. ունի 15 տուն բարդ բնակիչ: Ի հնումն կալուած կամ բրնիկ թեմ էր գիւղս Ս. Յովհաննու վանաց:

ԲՈՒՄՆԻՒԲ. Տես ԲՈՒՎՈՒՆԻՒԲ:

ԲՈՂԱՆԻՍ. — Գիւղ Արցախի Զրարերդ գաւառի մէջ, գետակի մը ձախակողմեան բարձրութեան վրայ: Բնակիչք հայ են 15 տուն, ունին Ս. Մրնաս եկեղեցի մը: — Գիւղիս մօտ կը գտնուի Ս. Մրնաս անուանով սխտասեղի մը, ուր կայ հին քարուկիր եկեղեցի մը և մօտք աւերակ գիւղատեղի և հանդսարան:

ԲՈՂՆԻՍ. Տես ԲՈՂՆԻՍ:

ԲՈՂՍ ՍԱՐ. — Լեռ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ:

ԲՈՂՐԱԲԵՐԻ. — Հին բերդ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ: Այս անուամբ Բողրաբերդոյ Մնապաս մի ևս կը յիշուի ժԷ դարուն զրուած յիշատակարանի մը մէջ. այդ մենատանի եկեղեցին նուիրեալ է ևս զեր Ս. Աստուածածնի և Ս. Կարապետի:

ԲՈՂՐԱՊԱՂԱԿ. — Սյու անուամբ պահապատուն կամ իջեւան կը յիշուի Այրարատայ Բասեն գաւառի մէջ:

ԲՈՂՐԻՒՈՂ. Տես ՏԱԹԵԻ:

ԲՈՂՐՊՈՃ. — Կը յիշուի Արցախի Խաչեն գաւառի մէջ:

ԲՈՂՐՃՈՒ. Տես ՏԱԹԵԻ:

ԲՈՂ. — Սակաւարնակ Հայոց գիւղ Մուկաց աշխարհի այժմեան Շատախ վիճակի մէջ. ունի Ս. Աստուածածնի եկեղեցի մը:

ԲՈԿ. — Անուն կը յիշուի Վասպուրականի Թոնուան գաւառի մէջ:

ԲՈԿԱԹՈՒ. Տես ԶՈՐԲ:

ԲՈՂԱՐԱՅԻՐ. — Կը գտնուի բլուրս Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ Նորշէն գիւղէն կէս ժամ հեռու. այժմ ծանօթ է Շատար անուամբ: Բողարեր հարաւակողմը Մեղրագեան է և Նորշէն գիւղը, հիւսիսային կողմը Յրօնք և հիւսիս արեւելեան կողմը Հացիկ գիւղը: Գաղաթման վրայ կը գտնուին երիվարի և արջառի ձեւով քարեր: Բլրանս վրայ կը բուսնի Բաղ անուամբ բոյս մը, որ ժախի կը նմանի և անոր պէս բրնակիչք կ'աղեն և կ'ուտեն մեծ պահոց մէջ. Բողարեր ստորաքը գտնուած ագարակները հերկելու միջոց, գիւղացիք կը գտնան հնութիւններ, խեցիի բեկորներ, սանդ, սեանց խարտիւններ, ևն. ուստի հաւանական է որ ժամանակաւ այդ տեղ կայ եղեր գիւղ և բնակութիւն:

ԲՈՂԱՆԵՆ. — Կը յիշուի (Սիւնիք) գիւղս Մարենոցայ վանքի նուիրատուի մը արձանագրութեան մէջ:

ԲՈՂԱՅԻՐԻ. — Հին ամուր բերդ հաւանօրէն Այրարատայ Բասեն գաւառի մէջ, սրոյ գիրքն անյայտ է: Վազար Փարպեցի՝ «ամուր բերդն Բասենոյ» կը կոչէ: Պարսից Շապուհ զօրավարը Գու գիւղէն յԱրայ (Թորթում) գացած ժամանակ, Ներսէհ և Հրահատ կամարական իշխանաց կանայքը թուղոց այս բերդիս մէջ, յանձնելով գտնուր Յրդատ—Վշնասպ անուն բերդակալին:

ԲՈՂԱՆՆ կամ ԲՈՂԱՆՆ. — Հին գիւղ Սիւնեաց Հարանդ գաւառի:

ԲՈՂԻ. — Կը յիշուի Տուրուբերանի այժմեան Կինճ վիճակի մէջ:

ԲՈՂՆԵԱՅ կամ ԲՈՂՆԻՍ ԳԵՏ. — Գուղարաց Բողնոփոր գաւառի մէջ, կ'անցնի Բողնիս գիւղի մէջէն:

ԲՈՂՆԻՍ կամ ԲՈՂՆԻՍ. — Այս անուամբ երկու հայաբնակ գիւղեր կան վրահայոց Բողնոփոր գաւառի և կամ այժմեան Պտուշալու վիճակի մէջ: Այս գիւղերէն մին կը



կոչուի յառկապէս Բողնիս-Խաչէն կամ Մնծ Բողնիս. Տարախակա զիւղէն հետու է 10 վերտա, կը գտնուի լեռներով պատած հովտի մը մէջ: Այժմ՝ սննի Գ1 տուն հայ բնակիչ, որոնք պահած են իրենց բարբառը և որոց նախնիք Մելիք-Արսլի ժամանակ գաղթած են Կարաբաղի խաչէն գաւառէն: Գիւղիս արեւմտակողմը կայ Սիւն անուամբ հին բարաշէն և կամարակապ եկեղեցի մը, որ ունի վրացիբէն արձանագրութիւն. եկեղեցոյս մէջէն հանած են մեծամեծ կարասներ: Մօտերը կը գտնուին 12 փոքր եկեղեցիներու աւերակներ: Գիւղի հարաւային կողմը, անասապատ բլրի մը լանջին վրայ կայ բնագրծակ բարաշէն Մուղլուղաշէն կոչուած մենաստան մը, պանաձեւ փոքրիկ կաթնղիկէով: Թէ՛ եկեղեցոյ որմերու և լուսամուաներու և թէ՛ կաթնղիկէի բանդակները շինուած են գարմանաւի նրբութեամբ կատարելագործուած արհեստով: Մենաստանս շրջապատուած է պարբուպով և խցերով, որոնք աւեր են: Թէ՛ վերոյիշեալ Սիւն եկեղեցին և թէ՛ այս՝ անկասկած Հայոց են, որովհետեւ հին ժամանակները միայն հայ բնակիչներ են եղեր այս կողմերը և այդ պատճառով Սօմխէթ կոչուած է. իսկ վերջերը թերեւս Վրացիք բնակելով այս տեղերը տիրեր են ժամանակաւորապէս այս եկեղեցիներուն:

Գիւղս այժմ ունի ծխական նորակառոյց բարաշէն եկեղեցի: Տեղւոյս բնակիչք մինչև ցայժմ՝ պահպաններ են իրենց նախնեաց բաժնութիւնը. շրջապատուած լինելով թուրքերէն, ստիպուած են եղեր միշտ զէնքը ձեռին պաշտպանուելու: Բողնիսի նշանաւոր բերքն է բնտիր գինին: Գիւղիս մօտ գանրուող Ելաաւարիեֆէյը կամ Ռաւտեւան գերմանացի գաղթաշէնը, ազգեցութիւն ունեցեր է Բողնիսի բնակչաց վրայ, որով բոլոր իրենց աները շինած են ճաշակաւոր ձեւերով և շատերը նաև երկյարկանի: Հայերը Գերմանացիներէն ստիպեր են նաև այրեղործութիւն գինեգործութիւն. իսկ Գերմանացիք ալ փոխազարծարար Հայերէն ստիպած են հողագործութիւն: Գիւղիս օդը թէևս վատասողջ է, բայց պատուական ջրոյ և գինւոյ գործածութեամբ ժողովուրդը չի փնասուիր,

մանուանդ որ ամառն ալ կը գնան լեռնային հովասուն տեղեր: Բողնիսի հարաւակողմը պաշտի մէջ կայ մեծ հնձան մը, որոյ մասին աւանդութիւնը կ'ըսէ, թէ այնքան գինի կը բամբը, որ սաբի մը ձմեռատան ջրերու ստոած ժամանակ անոր տէրը եօթն օր գինւով բանեցուցեր է ջրաղացը: Գիւղիս գերեզմանատան մէջ կայ ուրիշ եկեղեցի մը կարմրաւառ անունով, որ ունի փոքրիկ գանգակատան: Գիւղս երկու վերտա հետու կայ փոքրիկ եկեղեցի մը Ս. Կառև կառար անուամբ, որ Համբարձման տօնին ուխտի կ'երթան գիւղացիք մատաղով և կը խնդրեն անոր պաշտպանութիւնը իրենց անգերը և այրիները բնական պատահարներէ զերծ պահելու: Հայրենիք է գիւղս մեր վիպական և մանկավարժական գրականութեան մէջ յայտնի Պ. Վազարոս Աղայեանցի: Համանուն Բողնիս գետը կ'անցնի գիւղի միջով, որ ունի համեզ ձուկն: Բողնիսէն երեք վերտա հետու բլրի ստորտար կայ սրբատաշ բարուկիր վանք մը՝ Նախշուհ վանք անուամբ: Իսկ գիւղիս արեւելակողմը գործեալ երեք վերտա հետու որմեթեամբ Երրտ բարայ բլրան գաղաթը կայ Ս. Գեորգ անուամբ մատուռ մը, որ ուխտատեղի է մանուանդ մահճեռականներու համար:

Մեծ Բողնիսէն հինգ վերտա հետու կը գրտնուի Փոքր Բողնիս, որ բարձր բլրի վրայ կայ Ս. Գեորգայ Հնչակաւոր բարաշէն ուխտական եկեղեցի մը, որ կը զիմեն բազմաթիւ ուխտաւորներ և յառկապէս նոյնբեր 10 ին: Եկեղեցոյ հարաւային և արեւելեան կողմերը կան ուխտաւորաց համար սենեակներ: Այս տեղ կան նաև տապանաբարբեր Մելիք-Արսլի ժամանակէն: Ռախտասեղւոյս հիւսիսակողմը բլրի ստորտար շինուած է Փոքր Բողնիս գիւղը, սակաւաթիւ հայ և վրացի բնակիչներով: Գիւղիս անունը չկարողացանք գտնել այժմեան վիճակացոյց և աշխարհացոյց տախտակաց մէջ, բնդճակառակն գտանք Բողնիս-Խաչէնի հիւսիսային կողմը Բողնիս — Բեփեկեկձի այսպէս անուանակ գիւղը 155 տուն բնակչօք: — Բողնիսեցոյց մէջ մինչև ցայսօր կենդանի մնացած է հրոշակաւոր Մելիք-Արսլի յիշատակը, տեղ մը ցոյց կու տան անոր տան աւերակը ու-



րիշտեղ մը անոր բացած առուն, որ տակաւին կը կոչուի Մէրիք-Արտի արխ: Այս առուով նա սողել տուած է բնագրծակ տարածութեամբ բամբակի արտեր:—Չարչեակեց, Բ 82-84: Արձագանգ, Գ 42:

ԲՈՂՆՈՒՏ. — Հայաբնակ գիւղ Ալճնեաց Սալնաձոր (Բաղէշ) գաւառի այժմեան Մօսկան գաւառակի մէջ. ունի 15 տուն բնակիչ:

ԲՈՂՆՈՒՓՈՐ կամ ԲՈՂՆԻՍ. — Գուգարաց կամ Վրահայոց գաւառներէն մին: Գծուար է որոշելն թէ Գուգարաց հին գաւառներէն որուն կը համապատասխանէ այս նոր անուամբ գաւառ: Գաւառիս երկիրը արգաւանդ է, ունի թաւաթուփ անտառներ, ծաղկազարդ լեռներ, անուշահամ և կարկաջահոս աղբիւրներ, աղիներ և պարտէզներ: Ի հնամենի ունէր նաև հոյակապ մենաստաններ և մատուռներ, ամբար բերդեր և բազմամարդ գիւղեր, որոց մեծամասնութիւնն այժմ ամացի և աւերակ տխուր վիճակի մէջ կը գտնուի:

ԲՈՂՈՆ ԱՄՐՈՅ. — Պրոկոպիոս կը յիշէ ամրոցս Թէոդոսուպոլի մօտ:

ԲՈՂՈՏԻ ՋՈՒՐ. Տես ԵՂՈՒԿ:

ԲՈՂՐԻԱՆ. — Սար Արցախի վարանդա գաւառի մէջ:

ԲՈՂՐԻԱՆԻ ՎԱՆՔ. — Վանքս կը գտնուի Արցախի վարանդա գաւառի մէջ, համանուն սարի հարաւ արեւելեան կողմը երկնցոյ ձորակի մը ձախակողմը: Եկեղեցին կառուցուած է անտաշ կաթնաղբիւրն քարով. ունի մի մեծ և մի փոքր խորան, մի գուռն, երեք լուսամուտ և երկու խորհրդարան: Վանքս շրջապատուած է պարսպով, որուն հարաւային և արեւմտեան կողմերը ներքուստ շինուած են բազմաթիւ խցեր. անիստ կը մնայ միայն վանահօր սենեակը, միւսները բոլոր կիւտակեր են: Անտառապատ է վանքին շուրջն և ունի պատուական ջուր և մարուր օդ: Արցախս, 109: Վարանդա, 50-51:

ԲՈՅԼՔ. — Գիւղ Բարձր Հայոց Դերջան գաւառի մէջ:

ԲՈՇԱՏ. — Գիւղ Տիգրանակերտի (Սիւլան գաւառ) չորրորդ առաջնորդական թեմի. ունի 20 տուն հայ բնակիչ:

ԲՈՇԻԵՆՅ ՎԱՆՔ, Տես ԽԱՉ (Ս.):

ԲՈՍՏ. Տես ԿՈՎՍԱԿԱՆ:

ԲՈՎԱԶՈՐ. — Կը գտնուի Բողնոփոր (Գուգարք) գաւառի մէջ: — Այս անուամբ ձոր և կամուրջ կը յիշուին Հոսոմոսի վանաց արձանագրութեանց մէջ:

ԲՈՐ կամ ՓՈՒ. — Գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, որ կը յիշուի նաև Սիւնեաց եկեղեցւոյ հարկատուաց ցուցակի մէջ: Ինչպէս կ'երևի, ի հնամենի մեծ գիւղ է եղեր. իսկ այժմ ունի 50 անէ աւելի Պարսից բաժնէն գաղթող հայեր և սակաւաթիւ այլազգիներ: Քաջբերունին տեսած է հոս ԺԳ և ԺԴ դարուց վերաբերող տապանաքարեր: Բորի սահմանները գեղեցիկ և արգաւանդ են:

ԲՈՐԻ. — Կը յիշուի Բողնոփոր (Գուգարք) գաւառի մէջ:

ԲՈՐԿԱ կամ ԲԵՐԿԱ. — Բարերդի հիւսիսային կողմի գիւղերէն մին:

ԲՈՐՈՏԱՆ կամ ԲՈՐՈՐՆԱՅ ԲԵՐԿ. — Սիւնեաց աշխարհի հին բերդերէն մին:

ԲՈՐՏԻ. — Այս անուամբ Ներքին և Վերին երկու գիւղեր կը յիշուին Սիւնեաց Եղուկ գաւառի մէջ:

ԲՈՅԻԿ. — Լեռ Այրարատայ Հանունեաց գաւառի մէջ:

ԲՈՒԱՆ. — Հայաբնակ գիւղ Մոկաց աշխարհի Մոկք Առանձնակի (Մամրտանք) գաւառի մէջ: Ունի Ս. Գեորգ անուամբ եկեղեցի մը:

ԲՈՒԿ. Տես ԲՈՒԹ:

ԲՈՒԿՈՒՆԻՔ. Տես ԲՈԳՈՒՆԻՔ:

ԲՈՒԹ կամ ԲՈՒԿ. — Գիւղ Վասպուրականի Բողունիք գաւառի մէջ, որոյ բնակիչք այժմ այլազգի են բացի մէկ հայ անէ: Գիւղիս մօտ է Բուլթայ Ս. Աստուածաճիւն կոչուած հինաւուրց վանքը: Վանաց արեւելեան հիւսիսային կողմն են Շիւնակաւ լեռները, հիւսիսային կողմը Կառոռչի ձոր, արեւմտակողմը Մանկաւեղ լեռ և արեւելակողմը Ս. Սարգիս լեռը: Կ'աւանդուի թէ վանքս շինուած է Ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց օրով: Կառուցուած է խիստ հաստատուն, ամրաշէն հիմերով և պարիսպներով, որոց մէջ կը գտնուին գեղեցկայարմար պահարաններ, յորս աննշան մաս մը քայքայած է վերի կողմերէն, անինսով



մնալուն պատճառաւ: Վանքս այժմ՝ ամա-  
յացած է, սենեակներէն ոմանք փլփրած և  
ոմանք կիտակործան: Ունի բաւական թուով  
խաչարարեր, բայց արձանագրութիւնը կը  
պակիսին, եղածներն ալ անընթեանլի գար-  
ձած են: Բաթայ վանաց արեւելակողմը եր-  
կու բարրնկէց հետու կը գտնուին հայկա-  
կան գերեզմանաքարեր, իսկ արեւմտակողմը  
մէկ բարրնկէց հետու լերան ստորոտէն կը  
բղթէ ահալին քանակութեամբ պատուական  
ջուր մը, որ կը բանեցնէ երկու ջրաղացներ:  
Գարձեալ նոյն լերան վրայ կը տեսնուի  
Խանասալ բուրդ բէկէն շինուած բերդի  
մը աւերակ մնացորդքն. ինչպէս կը նշմա-  
րուի այդ բերդի շինութեան գործածած են  
գերեզմանասան քարեր: Հրաշալի է անդույս  
տեսարանն, օգն կենսատու և ջուրն անու-  
շահամ: — Եկարագրական Ողեւորութիւն,  
Բ 35-38:

ԲՈՒԹԱԿ. — Գիւղ Այրարատայ Վերին  
Բառն գաւառի մէջ:

ԲՈՒԹԱԿՈՒ Ս. ԳԵՈՐԳ. — Հինուտը վանք  
Մոկաց աշխարհի, կ'ինկնայ Մոկք բաղա-  
քէն շատ ժամեր հետու գէղի Ռշտունեաց  
գաւառը, լերանց մէջ: Իրբև ապաստանարան  
ուղևորաց, ճանապարհի վրայ լինելով, շատ  
մեծ ծառայութիւններ կ'ընէ, ամառը անցորդ-  
ները գովանելով, արևու տապէն, և պաշա-  
պանելով գանձեր ցրտէն: Չմեռը ճամբորդ-  
ները շատ անգամ օրերով շարաթնելով իսկ,  
կը պատահի, որ վանքը մնան, երկրին յա-  
տուկ ձիւնի և ցրտի պատճառաւ: Վանքի  
մէջ վաղեմի սովորութիւն կայ արագալ մը  
պահելու. ճմեռը մինչև այդ արագալը չկան-  
չէ, ճամբորդները չեն համարձակիր ճամբայ  
կրնելու, և մեծ հաւատք գոյացեր է երկրի  
ժողովրդեան մէջ, որ եթէ առանց արագա-  
լի ձայնելուն ճամբորդեն, անպատճառ ձիւ-  
նի և բուրբ կը բռնուին: Քրդերն ալ շատ  
մեծ հաւատք կ'ընծայեն այս վանքին, և չեն  
փնտեր վանքի ապրանաց, ս'չ ալ ոչխար-  
ներուն, որք ազատ համարձակ լինելը կ'ա-  
րածին: Այս բանը Հայաստանի մէջ առած է  
գարձեր, երբ զիւղի մը ոչխարը ամբողջ տարին  
անփնտս կը մնայ թաղանիէ յափշտակութենէ,  
« Բաթկու մալ է գարձեր » կ'ըսեն, և սրպէս զի  
իրենց ոչխարն ու անասունները ազատ լի-

նին այս վատ ենթարկութիւններէն, պմէն  
տարի նուիրական պարբ մը կ'զգան, զրե-  
թէ ամէն տուն, ըստ կարողութեան ուլ,  
գառ կամ հարթ մը նուէր տալ վանքին,  
Ս. Գէորգի պաշտպանութիւնն հրաւիրելով  
իրենց անասնոց վրայ:

Ինչպէս որ Ս. Սարգիս զօրավարն ցա-  
մարի վրայ արագահատ կը գաւանդն զիւղա-  
ցիք, Ս. Գէորգ զօրավարն ալ ջրերու վրայ  
պաշտպան սուրբ կ'ընդունին: Աւանցի նա-  
ւաւարները երբ փութորիկ մ'ունենան, Բաթ-  
կու Ս. Գէորգը օգնութեան կը կանչեն, ու  
նաւի մէջ գանուող ամէն մէկէն յանուն  
Բաթկուի նուէր կը հաւաքեն: Վանքս հո-  
գեւորապէս Ողթամարայ իրաւասութեան են-  
թարկուած է: Հայոց, Թրքաց, Քրդաց, Ա-  
սորաց, Եզդիականաց, նաև շատ Աշխրէթեա-  
րու մէջ ժողովարարներ աւնի այս վանքի  
վանապանը, որ Բաթկուպան կ'ըսուի: Ող-  
թամարէն 130 սոկիի կը ծախուի այս վան-  
քի բոլոր նուէրներու շահաբերութիւնն, ու  
այդ մենավաճառն բնորոնող աշխարհականը  
կը լինի վանքի բացարձակ տէր, Բաթկու-  
պան: Վանքս կրօնական վանահայր չունի.  
Բաթկուպանը կը պահէ վանքը և կը մշա-  
կէ վանքի բաւական բնագրձակ արտերը: —  
Արեւելք, 1143:

ԲՈՒԹՆԱ. — Բումանիոյ գաւառներէն մին,  
որուն գլխաւոր բաղաքն է Ֆօքշան: Թէ՛ բա-  
ղաքի և թէ՛ գանազան զիւղերու մէջ ցրուած  
Հայոց թիւն, 1884ին պատրաստուած վի-  
ճակագրի մը համեմատ, կը հասնի 1100  
հոգւոյ:

ԲՈՒԹԿԱՆ ԳԱՒԱՌ. — ԺԵ գաւառ մէջ այս  
անուամբ կը յիշուի Այրարատայ Եկզ գա-  
ւառի արեւելեան մասը:

ԲՈՒԹՈՒՆԻՔ. — Այսպէս ևս գրուած կը  
գտնենք վաստղութեանի հին Բաթուիք գա-  
ւառն: Տես ԲԱԹՈՒՆԻՔ:

ԲՈՒԹԿ. — Այս անուամբ կրկին Վերին  
և Ստորին զիւղեր կան Այրարատայ Արշա-  
րունեաց (Կաղզուան) գաւառի մէջ: Վերին  
Բուլիկ հայաբնակ է, ունի 441 բնակիչ,  
բաժնուած 51 տան, իսկ Ստորին կամ  
Սուլիլա Բուլիկ ունի 67 տուն բուրդ բնակիչ:

ԲՈՒԼԱՂ-ԱՅՏԻՆ. — Գիւղ Աղուանից Շա-  
քէ գաւառի մէջ: Ունի 50 տուն հայ բնա-



կիչ, որոնց նախնիք գաղթած են խաչն և Զրարերդ գաւառներէն: Եկեղեցին նուրում է Ս. Աստուածածնի:

ԲՈՒՂԵՆՑ. — Գիւղ Մսկաց աշխարհի մէջ, սնի 30 տուն հայ բնակիչ և Ս. Գեորգ եկեղեցի մը:

ԲՈՒՂՈՒՆ. — Թորթումի (Բարձր Հայք) գիւղերէն մին:

ԲՈՒԽԱ կամ ԲՈՒՍԱ. — Տայց աշխարհի հին գաւառներէն մին:


ԲՈՒԽՐՈՒՍ, ԲԵԽՐՈՍ կամ ԲՈՒՀՐՈՒՍ. — Հայաստան՝ բայց այժմ՝ թաթարաբնակ գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի մէջ: Տես ԱԶԱԽ:

Ունի 274 բնակիչ, բաժնուած 35 տան: — Այս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ նոյնպէս Գուգարաց այժմեան Թրիալէթ վիճակի մէջ, 29 տուն հայ բնակչօք:

ԲՈՒՌՈՍ կամ ԱՌՈՍ. — Փայտակարանի հին գաւառներէն մին:

ԲՈՒՍԻԱՆ. — Այլագարնակ գիւղ Այրարատայ Շարուր գաւառի մէջ:

ԲՈՒՍ կամ ԲԻՍ. — Հին և մեծ գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի Բասաաձոր (Աղուլիս) վիճակի մէջ, համանուն գետակի եզերքը: Ունի 633 հայ բնակիչ, բաժնուած 52 տան և 630 թաթար: Գիւղս ունի հին և



199. Բուստ. — Ս. Ստեփանոս եկեղեցի:

ԲՈՒՆ. — Գիւղ Բարձր Հայց Գերջան գաւառի մէջ, յորում ժամանակաւ կը նըստէին քուրդ բէկեր:

ԲՈՒՇԱԳ. — Գետակ Սիւնեաց վայց ձոր գաւառի մէջ, ձախակողմեան օժանդակ Արփա գետոյն:

ԲՈՒՇԵՐԻԿ. — Յիշատակարանի մը մէջ կը յիշուի այս անուամբ գաւառ:

ԲՈՒՌԱՆՈՍ. — Հրաբխային լեռ կիլիկիոյ մէջ:

ԲՈՒՌՆԱՇԷՍ. — Հայաբնակ գիւղ Գուգարաց Զաւախք (Ախալքալաք) գաւառի մէջ:

Կեղեցի մը և վանք: Այս գիւղէս էր Յակովբ վարդապետը աշակերան Յովհ. Որոտնեցոյ և Գր. Տաթևացոյ, որուն խնդրանքով Գր. Տաթևացին գրեց Փոքր հարցմանց գիրքը: ԺԷ՝ զարու սկիզբը (1708ին) կը յիշուին Բասացի ոմն Տէր Ղուկաս, որ Ազուլեցի Տէր Փիլիպպոսի և այլոց հետ ախտի կ'երթար յերուսողէմ: Աբրահամ կաթողիկոսը գիւղիս անունը կը գրէ Պուստ, կարգանք իւր հետեւեալ գովասանական տողերը. «Պուստ մեծ գիւղն, յորում կայր պատուական եկեղեցին. և յիս ուխտելոյ յեկեղե



ցին, ելի ի Վանքն աղանանման ազինա-  
սարաս, ի վայելուչ բարձրանիսա տեղի, լի  
պարտիզօք, ջրաբբի և բարերեր հոգով և  
պարզ և առողջարար օգով. զուարճացաւ  
սիրա խմ, մոռանալով զաշխատութիւնս ճա-  
նապարհին. այլ և առաջնորդ Տէր Պետրոս  
վարդապետն այր խոհեմ և բարերարայ. միա-  
բանք՝ սիրով և հնազանդ. և մնացի անդ  
երկու օր»։ Անծանօթ է սոսա նկարագրուած  
վանքի ներկայ վիճակը։ Բուստի անուանի  
պարտիզաց բերքերէն իրենց տեսակին մէջ  
ընտրելագոյն են ընկուզը և խնձորը։ —  
Սխական, Յ 44։

ԲՈՒՐԱՆԻ. — Գիւղ Մոկաց աշխարհի մէջ.  
բնակիչք Հայք և Քուրքը խաան։ Հայք ու-  
նին Ս. Աստուածածին եկեղեցի մը։

ԲՈՒՐԳ. — Գիւղ Աղշարօվայի, Ճապին  
Գարահիսարու նահանգի մէջ։

ԲՈՒՐՈՒՏ. — Գիւղ Այրարատայ Գարե-  
ղէնք գաւառի մէջ։

ԲՈՒՐՁՈՅ. — Աւերակ գիւղ Այրարատայ  
Ռսաան գաւառի մէջ։

ԲՈՒՐՍՈՒԼ. — Կը յիշուի Հին Չըբար  
(Կարս) վիճակի մէջ։

ԲՈՒՐՎԻԼ. — Գիւղս կը յիշէ Վախուշա,  
Իրակաձորի մէջ։

ԲՁԱՆԻՄ. — Այրարատայ Աղահէճք գա-  
ւառի մէջ, այլազգաբնակ մեծ գիւղ։

ԲՋՆԱՎ, կամ ԲՆՋԻՆԱՎ. — Լեռ Սիւնեաց  
ճահուի գաւառի հիւսիս արեւելեան կողմը։  
Լեռանս հարաւային կողմը կը գտնուի  
Բնջալ գիւղն։

ԲՋՆԻ կամ ԲՃՆԻ. — Նշանաւոր և Հին  
գիւղ Այրարատայ Նիզ գաւառի արեւելեան  
մասի մէջ, Հրազդան գետոյն աջակողմը։  
Հինգերորդ դարու երրորդ քառորդի մէջ կը  
յիշուի գիւղս և իւր ամուր բերդն։ Ասից  
էր սրբակեաց Աթլի քահանայն, որ հաւատոյ  
պաշտպանութեան համար Վահան Մամի-  
կունանի հետ միաբանողներէ երգումն առաւ։  
Պահլաւանեաց պայտապատութեան ժամանակ,  
որոնց սոսանն եղաւ, խիստ բարգաւաճե-  
ցաւ ԲՋնի, այնպէս որ ժ գարէն վերջը եւ  
կող պատմիչք, քաղաք և բերդաքաղաք  
կը կոչեն զայն. ժԱ գարու սկիզբն ալ եւ  
պիտեկոպտանիսա եղաւ, ինչպէս կը յայտնէ եւ  
կեղեցւոյն արձանագրութիւնը։ — Պահլաւ

ւանեաց սոհմն սոսա կը յիշուի ժ գարու  
առաջին կամ երկրորդ քառորդի մէջ. Գեղմը-  
կաց մինչև ԲՋնիի սահմանները յարձկած  
ժամանակ, քաջն Վասակ՝ (Գր. Մագիստ-  
րոսի հայրը) ամրոցիս աէրը, ելաւ իւր  
գնդովը վանեց թշնամին, բայց ինքն ալ  
սպանուեցաւ Սերիւղի մէջ։ Այս գէպքը  
մանրամասն կը պատմէ Մատթ. Ռուհայե-  
ցին։ Քիչ տարիներ վերջ Վասակայ որդին  
խմաստատէր Գրիգոր Մագիստրոսը, վերջ-  
նոյն Գագկայ թագաւորութեան ժամանակ  
1043 թուին, նոյնպէս քաջութեամբ պա-  
տերազմեցաւ սասաւակ թուրքաց գէմ։ —  
Մեծահոջակ և հանճարաշատ Մագիստրոսս,  
որ յատկապէս Բջնեցի կը կոչուի, կառու-  
ցանել տուաւ ԲՋնիի մեծ և հոյակապ եկե-  
ղեցին, նուիրուած Ս. Աստուածածնի, որ  
և մինչև ցարդ կանգուն է։ Երկայնութիւնն  
է, ըստ Շահնաթմուհեանի, 21 քայլ և լայ-  
նութիւնն 17. անսխն է և կամարներու  
վրայ բարձրացած է գեղատեսիլ կաթնօղի-  
կէն։ Սեղանոյ երկու կողմերն կան աւան-  
գատունք, արեւմտեան աւազ զուր խցուած  
էր ի յիանոց և կը գործածուէր հարաւայինը,  
որուն մօտ գրեւն արձանագրուած է շինու-  
թեան յիշատակարանը, հայկական ՆՁ (= 1031) թուականաւ։

ԲՋնիի եպիսկոպոսական թեմն ի սկզբան կը  
տարածուէր արեւելքէն Գեղամայ ծովէն մին-  
չև Ախուրեան գետը և հիւսիսէն Գուգարաց  
սահմաններէն մինչև բնիկ ԲՋնի վիճակին  
հարաւային ծայրը, բայց յետոյ այս կող-  
մէն գետ աւելի տարածեցաւ։ ԺԲ գարէն  
սկսեալ համարուած է չորս գլխաւոր աթոռ-  
ներէն մին, որոց միաբանութիւնը հարկա-  
ւոր էր կաթողիկոսի բնարութեան համար։  
— Պետրոս Գեառգարձը որ Յովհ. Սմբա-  
տայ հաւանութեամբ հաստատեց այս աթոռ-  
որ, քիչ վերջը (1035ին) նոյն թագաւորէն  
մերժուելով հայրապետական աթոռէն, տարի  
մը բնակեցաւ ԲՋնիի մէջ՝ հիւրընկալուելով  
իւր մտերիմ Մագիստրոսէն։ Մագիստրոս  
երկար ժամանակ չվայլեց ամուր բերդաքա-  
ղաքս և իւրաչէն պայծառ եկեղեցին, վասն  
զի Բագրատունեաց թագաւորութեան վեր-  
նալու միջոց, ինքն ալ գնաց (1045ին) Եւանաց  
թագաւորին զիմաց և անոր յանձ-



նեց Բջնիի բանակները և բոլոր իւր հայրենի ժառանգութիւնը. այս գործով բնագոնեցաւ մաղխարտութեան սլափը և իրեն բնակութեան անդ, զիսկեր և քաղաքներ Միջագետաց սահմանաց մէջ: — Կրնանք բնել թէ հազիւ կէս դար փայլուն վիճակ ունեցաւ Բջնի. այնուհետեւ դար ու կէս մինչև ՎԳ դարու սկիզբը յիշատակութեան մը չենք հանդիպիր: Առաքինիքն և նորոգողք մեծն Չաքարիա և իւր իւսնէ կողայրը 1204ին Բջնին այլազգեաց ձեռքէն առին: Ասոնց իշխանութեան օրով, ինչպէս կը ցուցնէ 1209 թուականաւ արձանագրութիւն մը, Վաճաճ անունով մէկը կը կառուցանէ Իշխանավանից մեծ եկեղեցին և կը նորոգէ Բջնիի Ս. Աստուածածնի եկեղեցին: Մինչև ՎԳ դարուն կէսէն սնդին կը գտնուին Չաքարեանց տաճարի Բջնիի ժառանգողաց յիշատակներն: Մեծին Չաքարիայի Շահանշահ սրբոյն օրով, 1251 թուին Բջնիի երկու կախկոպոսք, տաճարի հարաւային դրան վրայ կ'արձանագրեն, Կոստանդին կաթողիկոսի հրամանը, նկատմամբ օրինաւոր ձեռնադրութեան: ՎԳ դարու վերջերը իւսնէի թոսնորդին Չաքարէ, ապահարկ բրաւ Բջնին, իւր հրամանը արձանագրելով վերոյիշեալ արձանագրութիւնէն վեր: Յաջորդ դարուն սկիզբը (1303—1306) քանի մը նուիրատուներ, գրած են իրենց արձանագրութիւնը տաճարին ներքը հարաւային սրմնյն վրայ: Ամէնէն վերջը 1358ին, տոհմին սլապազատը Աթարէկ Ամիր Չաղայ, վերստին առեր է Բջնին այլազգեաց ձեռքէն, սրոնք շատ փլաններ հասուցիր են քաղաքին և բրխատնէից. ինչպէս երկարօրէն արձանագրուած է եկեղեցւոյ հարաւային կողմի պատուհանին ներքեւ: Նոյնը արձանագրուած է նաև, բիշ փոփոխութեամբ, հիւսիսային սրմնյն վրայ:

Ս. Աստուածածնի մեծ եկեղեցիէն զատ կան նաև ուրիշ փոքրերու աւերակներ, որոց մէջ արձանագրութիւնք չեն նշմարուիր. բայց հարաւային սրմնյն և դրան մօտ կայ փոքրիկ մասաւս մը, որ ունի 1272 թուականաւ անվերծանելի արձանագրութիւն մը: — Մեծ եկեղեցին շրջապատեալ է բնդարձակ պարսպով, որուն մէջ արեւելեան կողմնէր քայքայուած կախկոպոսարանը, զանա-

զան քարակերտ շինութիւններ արեւմտեան կողմը՝ բիշ շատ աւերակ, և մեծ դուռ մը հարաւային կողմը, եկեղեցւոյ հարաւային դրան գիմաց: Եկեղեցւոյ արեւելակողմը կանգնած կան շորս մեծամեծ պատուանդանաւոր խաչովմեր, յայտնի չէ թէ որոնց յիշատակին են, վասն զի միոյն արձանագրութիւնը միայն բիշ մը կարգացուեցաւ ու 1249 թուականը:

Աշխարհաւոր Լէնկթիմուրայ հարուածոց ևս հանդիպեցաւ Բջնի 1387 թուականին, և նոյն միջոց սպանուեցաւ իմաստուն, գիտնական և ողորմած կախկոպոսն Տէր Վանական: — Գրեթէ 120 տարի վերջ կը յիշուի Բջնի աւետարանի մը յիշատակարանին մէջ, յորում անաթիկ դղեակ կոչուած է: Իսկ այնուհետեւ քաղաքս աւերակ գտնուելով, քանի մը դարու միջոց անյիշատակ կը մնայ, և զարձեալ տխուր վիճակի մէջ կը յիշուի Վ: զարու սկիզբը ճէլալեանց ասպատակութեանց ժամանակ: Բայց նոյն դարու կէսէն առաջ սկսաւ Բջնի զարձեալ շէննալ, Տէր Փլլիպպոսի ասպնորգութեան օրով, որուն՝ 1634ին Մովսէս կաթողիկոսը յանձնած էր Բջնիի վանքը: Այս միջոցին նորոգուեցաւ եկեղեցւոյ տանիքը Չուզայեցի Խօջայ Պետրոսի ծախքովը. շինեցին նաև ձիթահանքը և ջրաղացը: Փիլիպպոսի աշակերտն և յաջորդն Մովսէս վարդապետ, վասնաց շուրջը պարիսպ շինել տուաւ և բարեկերով ամրացուց: — Նոյն ժամանակները կը հանդիպի զազգիացի Շարտեկ երեւելի ուղեւորին գալուստն ի Բջնի, որ 1673 տարույ մարտ 6ին գիշերօթեց վանքի մէջ, որուն նկարագիրն գովութեամբ հրատարակեց յետոյ իւր ուղեւորութեան գրոց Բ հատրին մէջ: Նոյնպէս գովելով կը յիշէ Բջնի Թուռնըֆոր բուսարանը, որ այցելեց անդոյս 1700 տարոյն յուլիս 31ին:

Մինչև ՎԳ դարու կէսը կը յիշուին Բջնիի վանաց ասպնորգներ, վասն զի հին կախկոպոսարանը վանքի փոխած էին. նաև իւր օրերը (1763—80 տարիները) իրրեւ շէն՝ կը յիշէ Բջնի Սիմէոն կաթողիկոս, անուամբ թուելով անոր թիմերը, յիսունի չափ զիւղեր կոտայք և վարածնունիք գաւառներու, Կոտայք գաւառի մէջ գնեւելով նաև



Բջնին և ուրիշ զիւղեր, որ Նիզ գաւառին յատուկ են: Եւ 53 տարուան (1688—1741) ընթացքի մէջ կը յիշէ քսանէ աւելի նուիրատուներ (շասերը Բջնեցի) եկեղեցւոյն և վանաց, որոնց իւրաքանչիւրի կնքով հաստատուած յեակարներ և մուրհակները, պարսկերէն կամ հայերէն գրով կը պահուէին Էջմիածնի զիւանի մէջ: Այդ ժամանակէն վերջ կը թուի թէ զազրած է վան-

և փոքր գմբէթաւոր մատուց մը տանց արձանագրութեան: — Այրարատ, 270—276: Շանխարուզնեանց, Բ 180—188: Գեղարքունի, 316—334: Եւ այլն: ԲՈՒՍԵՆԻՒԿ կամ ԲՐԱՍԵՆԻՒԿ. — Գիւղ Սեբաստիոյ, 37 տուն հայ և 34 տուն թուրք բնակչօք: ԲՈՒՍԹՈՒՄԲ. — Այս անուամբ տեղ մը կայ Սիւնեաց Բագք գաւառի մէջ:



200. Շարտեմ, ծն. ի Փարիզ 1643, † ի Լոնտրա 1713:

քի միաբանութիւնն և մեծ եկեղեցին մնացեր է անինամ մինչև վերջին ժամանակներս: — Բջնիի վանաց եպիսկոպոսներէն և առաջնորդներէն արձանագրութեանց և գրոց մէջ ծանօթ են 19 հոգի: Այժմ Բջնի զիւղն ունի մօտ 700 հոգի հայ բնակիչ, բաժնուած 94 տան և 76 տուն այլազգի: — Գիւղիս ամրոցի արեւելակողմը երկնցած է լերան ստա մը, յորում կան գերեզմաններ,

ԲՈՎՆԻՔ կամ ԲՐՎՆԻՔ. — Սեբաստիոյ արեւելակողմը ժամ ու կէս հեռու կը գտնուի զիւղս, որոյ բնակիչք բոլոր կաթողիկէ հայեր են, և կը հաշուին 1300 հոգի: Եկեղեցին նուիրեալ Ս. Սարգսի, նորաշէն է մեծ և քարակերտ, 20 մետր երկայնութեամբ և 14 լայնութեամբ: Հետաքննին ազգային ուսումնասէր մը, փափաքելով գիտնալ զիւղիս նախկին պատմութիւնն, գտաւ 1634ին գրուած Ս. Նշանի



վանաց գրքի մը յիշատակարանին մէջ հետեւեալ տողերը. « Բազմապատու ինք, այն է Բազմապատու, ի սմանէ ասի յամանց թէ էին ի ցեղէն Բագրատունեաց, և եկեալ աստ արարին Հիմնարկութիւն, և էին տունք իբր եօթն. և յետոյ ի գոհակաց զարձուցեալ զԲագրատունիքն Բոգնիք, և է իբր ժամա և կիսով հետի ի քաղաքէ Սերաստիոյ. և այժմ են ի սմա տունք իբրև հնգետասան. ի թուին Հայոց ՌՁ»: Բագրատունեաց սերունդներէն մաս մը մեր աշխարհի վրայովմանց միջոց եկած հաստատուած են այս աեղ. ինչպէս նաև խոտխոտունեաց ցեղէն ալ բնակած են Սերաստիայէն 9 ժամ հեռու, ջրաբրի և զուարճալի գաշաի վրայ, իրենց անուամբ զիւղին տալով խոտխոտ անունը. Բոգնիքի մէջ կը լսուի տակաւին խոտխոտ մականունը: Գարձեալ կարնոյ Պինկէօլ լեւանց կողմերէն եկողները, բնակութիւն հաստատեցին Սերաստիայէն երեք ժամ հեռու արևելեան հարաւային կողմը, աղահանքներու մօտ, և այն սեղը Պինկէօլ կը կոչուի մինչև ցայժմ: 1827 թուին նամակագիր մը կ'ըսէ թէ նոյն ուսումնասէր անձը գտեր է Սերաստիոյ մեծ զիւանապրին մէջ զիւղիս անունը գրուած Պաթրուսի՛ որ Բրոգնիքէն աւելի մօտ է Բագրատունիքի: Բրոգնիք զիւղի հնութեան վկայ է նաև ՁԺՁ (= 1267) թուականա խաչքար մը որ կը գտնուէր հին եկեղեցւոյ մէջ, և այժմ աղուցած են նոր եկեղեցւոյ արևմտեան սրմին մէջ, բարձրը: Եկեղեցւոյ բնին առջև կ'ընայ վիմափոր շիրմի մէջ ամփոփած կը մնան, 1708 տարւոյ մայիս 6ին նահատակուած Տէր Մնջայէլ քահանայի ոսկերք, որ նախ թաղուած էր հասարակաց գերեզմանասան մէջ, և եկեղեցւոյ շինութեան ժամանակ հոն փոխադրուեցաւ: Բոգնիքի Արեւանց ընտանիքէն էին, Մեծին Մխիթարայ Աբրայի վարաց մէջ յիշուած երկու հոգեւտես կոչուած կուսանքն Մարգարիս (Մանաս) և Թեղիս (Մարիամ): — Բնակչաց կէսը ջուրեղան են, բայց կառայ ճանապարհ շինուելէ վերջ, սկսելով սայլեր գործածել, ջորեպաններու մեծ փնա հատաւ: մնացած մասն ալ երկրագործ են, բայց իրենց երկիրը քիչ լինելով և հողը անբեր, շատ ան-

գամ հազիւ իրենց ուսելու ցորեն կը հանեն: Այս անյաջող հանգամանքներէն ստիպուած շատեր կը գիմեն ի կոստանդնուպոլիս իրենց և ընտանեաց պարէնն ճարելու. բնահանրապէս աշխատակէր լինելով սր և է կերպով իրենց ապրուստն կը գտնեն: Բաւական ընդարձակ և նոր շէնք մ'է զիւղիս աղջկանց վարժարանը, կառուցուած եկեղեցւոյ մօտ, այս վարժարանը կը կառավարեն հայազգի Անարատ Յղութեան Քորը: — Գիւղէս քիչ հեռու կան երկաթային աղբիւրներ, ուր կը յաճախեն բազմաթիւ Սերասացի բնասնիքներ և կը բնակին վրաններու աակ յունիս և յուլիս ամիսներու մէջ: — Տեղոր. Հայս. 64:

ԲՈՒ ԵՂՅԷ (ԵԿԵՂԵՑԻ). — Այսպէս կը կոչէ ժողովուրդը Արցախի Վարանդա գաւառի մէջ, Հացի զիւղէն զէպի արևելք, սարի մը լանջին վրայ գտնուող հին հանդըստարանը, և երկու եկեղեցիները. հոն կան նաև երկու մատուռ և երեք բնա: Առաջին եկեղեցին կը գտնուի լեւան գագաթը. շինուած է սպիտակ անտաշ քարով, անսին և կամարակապ, առանց գմբէթի: Ունի նեղ աւազ խորան մը և երկու խորհրդարան, սրոնց գոնիքը գեղեցիկ զարկերով և խաչերով եզրափակուած են: Եկեղեցիս արևմտեան կողմէն կից ունի գաւթի, և երկուքը միասին չափելով երկայնութիւնն է մեար 14,76 և լայնութիւնը մեար 8,20: Մէջը կան բաւական թուով գերեզմաններ. արձանագրութեանց ծանօթ հնագոյն թուականն կը վերաբերի ՎՊ գարու:

Երկրորդ եկեղեցին վերնոյն արևմտեան կողմն է երեք մեար հեռաորութեամբ. երկայնութիւնն է մ. 6,50 և լայնութիւնը մ. 4,18: Արևմտեան պատը գրեթէ ամբողջովին ծածկուած է խաչերով. միակ գրան շուրջը կան գեղեցիկ բարձրաքանդակներ. ինչպէս առաջին նոյնպէս և այս եկեղեցւոյ արձանագրութեանց մեծ մասը եղծուած են թէ՛ տաղանաքարերու և թէ՛ խաչարձաններու վրայէն: Մատուռներն ևս մեծաւ մասամբ կանգուն են և ունին արձանագրութիւնք: Երեք բնակն կը գտնուին իրարմէ ոչ այնչափ հեռու. ունին գեղեցիկ խաչարձաններ և արձանագրութիւններ, կիս-



եղծ վիճակի մէջ: — Արցախ, 124-127, վարանդա, 47-48:

ԲՈՆԱԿԱՊԱՆ. — Հայաստան գիւղ կարնոյ արեւմտեան ծայրը, աւելի Գերջան գաւառի մէջ: Ունի 35-40 տուն բնակիչք, որոց լեզուն թէեւ թուրքերէն է, բայց բարուք, սովորութեամբք և այլ յատկութեամբք աւելի Հայոց կը նմանին:

ԲՈՆԱԿՈԹ. — Հին և մեծ երբեմն մեղիքանիստ գիւղ Սիւնեաց Կրդուկ (Սիսիան) գաւառի, կիսնկնայ ընդարձակ հովտի մը մէջ, փոքրիկ վտակի մը մօտ: Գիւղի միջով կը հոսեն առուակներ, որոնց ափերը անկրւած են ստեղծներ: Կանոնաւոր փողոցներ չկան, աները շինուած են ցիխէ և շրջապատեալ են ցիխէ պարիսպներով: Կան միայն քանի մը երկրորդանի աներ, որոնց մէջ նշանաւոր է Մելիք-Թանգեաններու (Թանկեան) նախկին ապարանքը: Գիւղի արեւելեան մասի մէջ կը գտնուի Ս. Գրիգոր եկեղեցին, որ ունի զմբլժաւոր գանդակատուն: Վերջինս շիներ է մելիք Թանգի Բ, ուր և թաղուած են ինքը, իւր կինը, որդին, Գուկաս բէկը և մելիք Աղբէկը: Եկեղեցոյ գաւիթը կը գտնուի Հայոց ծխական գործոցը:

Գիւղի արեւմտեան կողմը կը գտնուի հին եկեղեցոյ մը: աւերակ, զոր գիւղացիք կ'սոյ կ'անուանեն, սրան կայ ՌՃՆԻԹ թուականա՝ եկեղեցոյ շինողի Աստուածատուր վարդապետի յիշատակարանը: Եկեղեցոյ մօտ կան երկու միմեանց մօտ տապանաքարեր, որոց միոյն արձանագրութիւնը ունի ՉՃԵ (= 1326) թուականը: Գիւղիս մօտ կայ նաև Խաչեր կոչուած ուրիշ աւերակ եկեղեցի մը, բիշ մը նորոգուած, որուն մօտ կը տեսնուի գիւղատեղի և գերեզմանատուն: — Բնակչութիւնը կ'աւելան խոր մը, Պակերի-ձոր կոչուած: Բնակչացած է կարմիր հողէ և կարմիր ժայռերէ. հոս փորուած կան 10-15 արհեստական այրեր, որ կը ներկայացնեն մեծ և փոքր սենեակներ, որոնց մասին Բնակչութեանք աւանդութիւն մը չունին: Գիւղիս բնակիչք բնիկներ են 2060 հոգի, բաժնուած 178 տան: Կը պարապին երկրագործութեամբ և անասնապահութեամբ: — Զանգեզուրի Գաւառ, Ա 75-76:

ԲՈՆԱՇԷՆ. — Գաւառս կ'ինկնայ Տուրուբերանի հին Խոյլժ գաւառի արեւմտակողմը, Շատախու արեւելակողմը և Մշոյ գաւառին հարաւային կողմը: Երկիրը առ հասարակ լեանային է և անդրախոր ձորերով. ունի բազմաթիւ կաղնիի ծառեր, իսկ մշակութեան համար բիշ տեղ: Գաւառիս մէջ նշանաւոր է հնաշէն Աղբերկայ վանքը, զոր նկարագրած ենք իւր կարգին: Բնաշէնի գիւղերը սակաւաթիւ են ձորերու մէջ. գլխաւոր գիւղն կը կոչուի Բնաշէն և ունի 100 անէ աւելի հայ բնակիչներ:

ԲՈՆԱՎԷՏ. — Այս անուամբ շահաստան մը կը կարծուի թէ կար Սիւնեաց մէջ: Ուրծայ կողմիկ իշխանին վարազներէ հարգին, որ միարանած էր վահանայ հեռ և ուխտած սուրբ կրօնից համար պատերազմելու ընդդէմ անորինաց, իւր ուխտի զէմ ընկելով, «երթեալ աւերէր զՇախաստանն Բնաավիտի»:

ԲՈՆԱՔ. — Կը յիշուի Սասնոյ մէջ:

ԲՈՍԱՁՈՐ. — Սիւնեաց Գողմն գաւառի ձորահովիտներէն ընդարձակագոյնը և ամենէն երկայնը: Այսպէս կոչուած է Բուսս գիւղի անուամբ: Այժմ ծանօթ է Գեղան կամ Կլեան անուամբ:

ԲՐԱԲԵՐԻ. Տես ԲՈՒԱԲԵՐԻ:

ԲՐԱԻ. Սակաւարեանի Հայոց գիւղ Չմշկածաղու տաջնորդական թեմին մէջ:

ԲՐԱՁՈՒՐ կամ ԱՂԲԱՁՈՒՐ. — Գիւղ Արցախի Գարգման գաւառի մէջ, Միրզիկ գիւղի հիստիային կողմը: Բնակիչք ամբողջ հայ են 33 տուն. ունին եկեղեցի մը Գարբիեյ հրեշտակապետի անուամբ: Գիւղիս հարաւային կողմը կայ կայծաքարի և սպիտակ քարի հանք:

ԲՐԱՍԻՔ. — Հայոց գիւղ Չմշկածաղու տաջնորդական թեմի մէջ: Ունի Ս. Աստուածածին եկեղեցի մը:

ԲՐԳԱՇԷՆ. — Գիւղ Տուրուբերանի այժմեան Երբբին Պուլանրիս գաւառակի մէջ. ունի 38 տուն հայ և 7 տուն քուրդ բնակիչներ:

ԲՐԳԱՀՈՆՁԻՆ կամ ԲՐԳԱՈՒՆՁԻՆ ԵՎՅԻՆ. — Արցախի վարանդա գաւառի մէջ, Քեօն գաւառի աջ կողմը, Շեխեր տանոց ճամբուն վրայ կայ այս անուամբ հին եկեղեցի մը:



որոյ գուռը կործանած է և շինութիւնը տեղ տեղ խախտած . հիւսիսային սրմի վրայ կայ խաչքար մը , խաչու Շառուսիւն արձանագրութեամբ : Կիկեղցւոյս արեւմտեան կողմը , բարբնիկէց հեռաւորութեամբ , սենեակներու նման կայ բարուկիր հին շինութիւն : Կը կարծուի թէ այս տեղ վանք եղած լինի , վասն զի եթէ գիւղ լինէր , պէտք էին նշմարուիլ սննորու աւերակներ և գերեզմաններ : — Արցախ , 90 :

ԲՐԳԱՆՁԻՆ կամ ԲՐԳԱՌԻՆՉ ՂԱՒԱ . — Արցախի վարանդայ գաւառի մէջ , Ներքին

ընեւեան ստորաբ կը բղխէ աղբիւր մը , որ հաւանականօրէն ժամանակաւ ջուր կը մատակարարէր բերդիս : Այժմ՝ բերդս ամբողջովին ծածկուած է խիտ անտառով : — Արցախ , 134-135 ; վարանդա , 52-53 :

ԲՐԳԱՆՈՐ . — Փոքրիկ գիւղ Գուգարաց աշխարհի այժմեան Պօռչալու վիճակի մէջ , շրջապատած է անտառներով : Բնակիչք կը հաշուին 132 հոգի , բաժնուած 10 տան . ամբողջ հայ են , որոնք հոչակուած են իւրենց քաջութեամբ , սարսափ ձգելով նոյն խիւ աւազակներու վրայ : Այր և կին , ծեր



201 • Բօլու սար == ելլամ տաղ :

Թագավարդի արեւելեան կողմը կը գտնուի 3300 սանաչափ բարձրութեամբ առանձնացած սար մը , որոյ արեւելեան , հարաւային և արեւմտեան կողմերը ահագին ժայռեր են , իսկ հիւսիսային կողմը սասափկ գառ ի վայր : Այս կողմը ձգուած է ժայռէ ժայռ կրկնապարիսպ , արտաքին պարիսպ ունի նաև բուրգեր : Ահա այս է Բրգաունչն , որ միայն մէկ գուռ ունի արեւելեան կողմէն : Լերան գագաթը կը գտնուի միջնաբերդն , ուր կան բնակարաններու հետքեր : Կը տեսնուին քանի մը սյրեր և ջրի աւազաններ : Բերդիս մէջ աղբիւր չկայ , միայն ա-

և տղայ , Բրգաձորի բոլոր բնակիչները հրացանակիր են և հարկաւոր եղած ժամանակ միահամուռ կը յարձակին իրենց թշնամեաց վրայ : Գիւղս հիմնած է Սանահնեցի Գիթ-Վերսն անուն կարիճ հայկազնը , որ Արգաթեաններու խառութենէն փախչելով ընտանիքով բնակութիւն կը հաստատէ խոժոնի և Խչ-Քիլիսէյի մէջ տեղ գտնուող անտառապատ ձորերէն միոյն մէջ : Յետոյ գիւղն կը կոչուի Բրգաձոր , իւր ընտանիքը կ'անի , կ'ունենայ վեց սրբի : Գիթ-Վերսն կ'ապրի 116 տարի և իւր մահէն վերջ սրբիքը թէև կը բաժնուին , սակայն մէջերնին միշտ կը



անէ Համերաշխութիւն: — Արձագանգ, Լ. 753:

ԲՐԿՈՆ կամ ԲՐԿՈՆՔ. Տես ԲԸՐԹՈՆ:

ԲՐԵՆԻ. — Հայտնակ զիւղ Չմշկածազու առաջնորդական թեմի մէջ: Ունի մօտ 30 տուն բնակիչ, և եկեղեցի մը՝ Ս. Գեորգ:

ԲՐՈՒՆՅ. — Այս անուամբ զիւղ մը կը յիշէ Առաքել պատմիչ՝ Աղուանից մէջ: ԲՐՈՒՆՅՑ. — Հայտնակ զիւղ Աղձնեաց նահանգի այժմեան Խրղան վիճակի մէջ: Գիւղի մօտ է Եօրև Խորան կամ Բարեւ ձորոյ վանքը:

ԲՐՈՒՏՔ. — Գիւղ Հայոց Աղձնեաց Սալնաձոր (Բաղէշ) գաւառի այժմեան Մօական գաւառակի մէջ:

ԲՐՏԱՆՅ կամ ՓԸՐԹԱՆՕՍ. — Այլազգաբնակ զիւղ Կարնոյ:

ԲՐՏԵՆԻՔ. — Կը յիշուի անունս Կիթանոցի (Գեղարքունի) արձանադրութեանց միոյն մէջ:

ԲՐՏԻ ԱՅՐՔ. — Հին զիւղ և վանք Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, որուն կը համապատասխանէ այժմեան այլազգարնակ Դաշքեռ զիւղը: Մէջը կան շինուածեանց և պարսպաց աւերակներ և արհեստական բարանձաներ: Ունի կրկին սաղաշէն կոփածոյ հասարակ բարերով եկեղեցիներ, հանդերձ արձանադրութեամբը: Կազանկատուացին (Բ. Ծ) կը յիշէ զիւղիս վանքը զրելով... «գնացի ես Յովսէփ անապատական, ի գաւառէ Գեղամայ, յԱնապատէ Պրտի այրեաց»: — Սիսական, 72-73:

ԲՔԼԻՅ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ գաշտի մէջ. ունի մօտ 50 տուն հայ բնակիչ:

ԲՕԼԻԵՍ. Տես ԲԱՎԼԻՈՒՍ:

ԲՕՋԱՒԱՆԴ. — Գիւղ Աղուանից Կոկիտան գաւառի մէջ, Կոկիտան գետի ձախակողմը՝ վանքաշինի ուղղութեամբ: Գիւղս բնական բարձր զիրքովը կատարեալ ամուր բերդ մի է. ունի միայն երկու մուտք՝ արեւելեան և արեւմտեան հարաւային կողմերէն: Հոգն ար-

զիւնարեր է. նշանաւոր են ցորենը և այլիները: Բնակիչք ամբողջ հայ են 50 տուն, որոց նախնիք գաղթած են Գոնավարդ, Հատուրթ և Հոսրդի զիւղերէն: Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի:

ԲՕԼՈՒ ՍՍԸ. — Լեւ կրկնազգաթմ 7503՝ բարձրութեամբ, Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ, Քանայ վանքի հարաւային կողմը: Այժմ ծանօթ է Երլան սաղ անուամբ: Հին ժամանակները լատին կրօնաւորներ, զոգնալով Ս. Հոփսիմեանց նշխարներէն մաս մը, բերին պահեցին այս լեռանս մէջ, բայց վերջը Աստապատցի Ալրուէն Աշետիքի սախլմամբ, որ աէրութեան հրամանով եկած էր զանոնք գանձու, սեղը յայտնեցին: Ասոր յիշատակին հոս շինուեցաւ փոքրիկ մատուռ մը սուրբ Կուսանոց անուամբ, և ուխտատեղի է մերձարնակ Հայոց, որք Հարսն ու Փեւայ անունը կու տան լեռանս, և կ'աւանդեն թէ նորապսակ ամուսիններ փախչելով աւազակաց ձեռքերէն, լեռանս գլուխը ելեր են և քար դարձեր: — Սիսական, 368:

ԲՕՍԱՔԻՆՏ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ գաշտի մէջ: Ունի 50 տուն հայ և քանի մը տուն քուրդ բնակիչներ:

ԲՕՐԱՎԱՆ. — Գիւղ Թաթարաց Թերեք գետոյն արեւելեան կողմը: Հին ժամանակ այստեղ կը բնակէին հարուստ հայ վաճառականներ, որոնք Սեւ ծովով Կ. Պոլսի, և Կասպից ծովով Պարսկաստանի և Հնդկաստանի հետ վաճառականական վերաբերութեան մէջ էին: Ի վերջոյ իրենց ձոխութեամբ նախանձելի լինելով այլազգեաց և անոնց սուած նեղութիւններէն ձանձրացած՝ բոլորովին թուզուցին այս գիւղս և փոխադրուեցան յԱստրախան և Ղզլար: — Չալալեանց, Բ 448:

ԲՕՐՈՄԻ. — Աւերակ զիւղաքաղաքս կը գանուի Ուաի Առանձնակ գաւառի մէջ, Կուր գետի աջ կողմը: Մէջը կայ Ս. Յովնանեան անուամբ ուխտատեղի մը:



ԳՍԲԵՂԱՆՔ կամ ԳՍԲԵՂԷՆՔ. — Այս-  
 րատայ Հին գաւառներէն մին՝ սահմանակից  
 Արեղենից: Մեր աշխարհի մի քանի ուրիշ  
 գաւառներու նման Գարեղէնից ճիշդ սահ-  
 մանքն ևս որոշելն դժուար է: Ըստ Հ. Ալիշանի  
 գաւառիս սահմանքն ևն արեւելքէն՝ ճակատք  
 և Արշարունիք, հիւսիսէն՝ Վանանդ, արեւ-  
 մուտքէն՝ Արեղէնք և Հանուսիք (Բասեն),  
 և հարաւէն՝ Բաղբուսնդ: Իսկ վայրացս ա-  
 կանատեսն Հայկունի, հետեւեալ սողերը  
 կը գրէ գաւառիս վրայ. «Ըստ իս Հինն Գա-  
 րեղեանք այս երկու (Խալեազի և Սիւնեկ)  
 բնդարձակ լեռնահովիտներէն մին լինելու  
 է. որոց մինն, որպէս գիտենք, բուն Ալաշ-  
 կերտի գաշտի յարեմուտս բարձր գիրք մի  
 բռնած է խալեազ անունով, երկրորդն՝ յա-  
 րեւելս Սիւնեկ անունով հանդէպ իրարու: —  
 Առաջնոյն մէջ՝ մօտ 20 քրդական գիւ-  
 ղեր կան. Գալբալուս և Գաբա գիւղերն ևս  
 այս տեղ են, որք ինձ կարծել կտան թէ  
 Գարեղեան անուան աղաւաղումն եղած լի-  
 նին: Երկրորդի մէջ այսօր 160 տան մօտ  
 եղտի և թուրք ու քուրդ ժողովուրդ կը բնա-  
 կին: Երկուքին մէջ ևս Մարգամիր (Թագա-  
 ւորական մարզեր) անունով լեռնադաշտեր  
 կան. առաջնոյն ի հարաւ արեւմուտս և եր-  
 կրորդին ի հիւսիս արեւմուտս: — Պատմա-  
 գիրներու վիպաութեան նայելով Վարդիհօր  
 վանքը Գարեղեանց սահմանի վերայ լինե-  
 լու է. և արդէն երկուքին միջավայրը կը  
 գտնուի այս վանքը. իսկ չինք գիտեր թէ

որ կողմն լինելու է Գարեղեանք: — Եթէ  
 Գարաղ նշանակուած է խոտի կոյտերու վե-  
 րայ հսկող, երկու յիշեալ վայրերն ևս մին  
 քան զմիւսն խոտաւէտ են. սակայն ըստ իմ  
 կարծեաց Գարաղ նշանակուած լինելու է  
 ձեան կոյտերու առջև արդելուած կարաւանի  
 վերայ հսկող և կարգադրող, որ ամենակա-  
 րելորն է, այսօր ևս քանի քանի կարաւանք  
 և անձինք բրահեղձ կը լինին»:

Ինչպէս որ Արեղենից երկիրն կանխա-  
 Բասենի մասն էր, յայտնի է թէ այս գա-  
 ւառս ալ ուրիշ զօրագոյն տոհմի մը վիճա-  
 կած էր, և վերջը Վաղարշակ զատելով,  
 Գաբալ անունով մէկու մը ժառանգութիւն  
 տուաւ և տոհմին նախարարութիւն և գա-  
 ւառ ձեւացուց: Պատմական զանազան դէպ-  
 քերու մէջ կը յիշուին Գարեղեանց տոհմի  
 պատմականներն մինչև ԹԻՎ գարու մէջ: —  
 Գարեղենից անուամբ եպիսկոպոս չի յիշուիր  
 պատմութեան մէջ, բայց յայտնի է, թէ կար  
 գէթ քորեպիսկոպոս մը: Յետին գարուց մէջ  
 միայն Վարդիհօր վանքը եղաւ եպիսկոպո-  
 սանիստ, և առաջին եպիսկոպոսը կը յիշուի  
 Գրիգոր 1470ին. թէ՛ գարու կէսէն առաջ,  
 Ոսկանայ վիճակագրութեան համեմատ, վեր-  
 ցուած է տեղւոյս եպիսկոպոսական աթոռը.  
 Բայց գրեթէ նոյն գարուն կէսէն վերջ, կը  
 յիշէ Ճարալէն գաղղիացի ճանապարհորդը,  
 տեղւոյս եպիսկոպոսը կաղզուանի մօտ: Գար-  
 ձեալ 1802ին ևս Բաղբուսնդայ Ս. Յով-  
 հանու վանաց ժողովին մէջ գտնուեցաւ



Վարդիհօր վանքի Մանուէլ եպիսկոպոսը: — Այրարատ, 45-54: Բագրեւանդ, 366-368:

ԳԱՔԵՂԵՆՔ. Տես ԳԱՔԵՂԵԱՆՔ:

ԳԱՔԻԹԵԱՆ. — Վասպուրականի հին գաւառներէն մին էր, Պարսկահայոց սահմանի մօտ: Ունէր համանուն բազաբ մը, և Քապոտան (Ուրմիա) ծովակը: — Խորեն. աշխարհ:

ԳԱԳ. — Լեւ Արցախի սահմանակից Գուգարաց կողքոխոր գաւառի, Գագայ դաշտի մէջ, գրեթէ 6 վերսա կոթ գիւղէն հետո: Պատմական դանազան ժամանակներու մէջ նշանաւոր է եղեր լեռս խրանուն Գագայ բերդով, որուն երբեմն կը տիրէին Աղուանից թագաւորները: Տասներորդ դարու վերջերը Տաշրաց իշխանն Գաիթ՝ եղբորսրդին Գագկայ Շահնշահի, բնդարձակելով իւր իշխանութեան սահմանները, կը տիրէ նաև բերդիս, որոյ նախկին տիրապետող հայ իշխանը, որ բնգուններ էր վրաց գաւառութիւն և Գիմար անուն, որպէս զի վրացիներէն օգնութիւն դանէ Գաւթի գեմ, փախչելով կ'ազատի: ԴՊ գարուն թաթարաց յարձակմանց միջոց շատ բերդեր կ'անուսին, շատ տեղեր կ'ամառանան և բնակիչը գերի կ'ընկնան. իսկ Գագայ բերդը անտառիկ սպաստանարան կը լինի շրջակայ հայ ժողովրդոց կենաց և գոյքի. և երբ Մուլար Նուին թաթար գործակալը փրկանք կը պահանջէր վանական վարդապետի համար, անոր կեանքը մեծ գնով գնեցին և գրկեցին այս ամուր բերդը: — Ամրոցաւոր բարձայս լեռանս տափաբակ գագաթի վրայ շինուած է Ս. Սարգսի հռչակաւոր ուխտատեղին, որ ծանօթ է Գագայ Ս. Սարգիս անունով, և որոյ սկզբնաւորութիւնը մեր եկեղեցական պատմութիւնը Ս. Մեսրոպի կու տայ, որ Ս. Սարգսի մէկ ատամը խաչի մէջ անցընելով օրհներ և հոս կանգներ էր, ինչպէս կը յիշեն սակայ մեր ԴՊ գարու պատմիչը և վարդապետը, վանական, վարդան և կիրակոս: Նոյնը կը հաստատէ նաև Ս. Սարգսի շարականի հեռեւեալ տունը. « Խաչաշարչար սուրբ գիտապետ, նշանադրած անուամբ ի խաչ և յեկեղեցի առաւել պայծառ ի գլուխ Գագայ, ի գագաթան տեղուջ օրհնեալ սրբոյն

Մեսրոպայ»: Այս ուխտատեղիս սրբատաշ բարաշէն մատուռ մի է, առջեր ունի փոքրիկ գաւթ իւր կաթուղիկէով: Կայ նաև ուրիշ ցած և փոքրիկ մատուռ մը, կոփածոյ բարով, վերնոյն արեւելակողմը: Թէ՛ այս երկու մատուռները և թէ՛ գաւթի պատերէն թափած բարերն, իւր սեփհական ծախքով նորոգեր և իրենց տեղն է գրեր կոթի զեղացի Արզուման Տէր Սահականցը, 1838 թուին: Բարի և գովելի է այլ պարունի գործն, սակայն նա աշնպէս արձանագրեր է իւր յիշատակարանն գաւթի և ցած մատարան գրանց վրայ, իրր թէ ի հիմանց ինքն է կառուցեր: Ս. Սարգսի մատարան, գաւթի և փոքր մատարան մէջ կան ուրիշ դանազան կիսեղծ արձանագրութիւններ, որոց յայտնի հնագոյն թուականները ԴՊ գարու կը վերաբերին. սակայն այս շինութիւններն զեռ աւելի հին ժամանակ կառուցուած լինելու են, որովհետեւ ԴՊ գարու արձանագրութիւնը ևս նորագուծեան յիշատակութիւն կ'ընեն և ոչ ի հիմանց շինութեան:

Մեծագիր լեռանս շորս կողմը, գագաթէն բիշ մը վար փորուած են բազմաթիւ այրեր, որոնք ժամանակաւ եղեր են սպաստանաւան կամ բնակարան զինուորաց: Այլ այրերէն երկուքի մէջ կան ժայռի վրայ փորագրուած հայկական արձանագրութիւններ, բայց մաս մը հնութեամբ և մասն մը, այրերու մէջ ձմեռ ժամանակ ոչխար պահող թուրք մընեանցներու շարամուտեամբ եղծուած լինելով, կարգացուած է միայն մի քանի բառ և ՈՅԼ ( = 1208) թուականը: Նոյն այրերու մօտ կայ ժայռի մէջ փորուած ջրամբար մը: — Լեռանս հարաւակողմը կը բարձրանան երկու ուրիշ լեռներ, միոյն հիսսիսային կողի վրայ միակտուր քարէ փորուած է փոքրիկ եկեղեցի մը, որուն մօտ կայ նաև ջրամբար: Լեռան շորս կողմը տարածուած են տներու և պարիսպներու աւերակներ. իսկ արեւմտեան կողմը բնդարձակ գերեզմանատուն, մեծ մասամբ հողի հեռահասարած և ծածկուած: — Արձագանգ, է 161-162:

ԳԱԳ ԲԼՈՒՐ. — Այսպէս ևս կոչուած է վերոյիշեալ Գագ լեռը:

ԳԱԳԱՅ ԳԱՇՏ. — Գաշաս կը գանուի Գու-



գարաց կողմից գաւառի մէջ. սահմանակից է Արցախի: Իւր վրայ կը բարձրանան Գագ, Գաշարգիւն և այլ լեռներ:

ԳԱԳԱՅ Ս. ՍԱՐԳԻՍ. Տե՛ս ԳԱԳ:

ԳԱԳԱՎԱՆՔ. Տե՛ս ԿՈՎԱՍԱՎԱՆ:

ԳԱԳԻԿ. — Ազգային տեղագրող ոմն այս անուամբ քաղաք մը կը գնէ Աղձնեաց Գոգեղ (Խիզան) գաւառի մէջ:

ԳԱԳԱԿԵՐՏ. — Գաղիկ Արծրունի վասպուրականի Մարանդ գաւառի մէջ Օձ ձորոյն զլուխը այս անուամբ զիւզ շինել տուաւ և գորաց բանակեալ:



202. Բեւեռարձան Գագանցի գիւղի:

ԳԱԳԱՅԻՔ ԹԵՐԵԱ ԳԱԳԱՎԱՆ. — Հին գիւղս կը կարծուի թէ կը գտնուէր Այրարատայ Արշարունեաց գաւառի մէջ: Խժկոնից վանքի Ս. Սարգսի եկեղեցւոյ արձանագրութեան մը մէջ կը յիշուի այդուէտ գիւղս, Երասխայ եզերքը, որ 1033 թուին Երզրտ անունով մէկու մը սրբիներէն արուած է ի ժառանգութիւն Տեկորի վանաց:

ԳԱԳԱՎԱՆՔ. Տե՛ս ՀԱՅԱՆԿ:

ԳԱԶԱ. — Հին ծովեզերեայ քաղաք Պաղեսախու, 15 փարսախ ֆերրոնէն հեռու, բարերեր գաշտի մը մէջ: Քաղաքս անուանի

էր ի հնումն փղշտացւոց իշխանութեան ժամանակ, նոյնպէս Ասիացոն, Գէթ, և ուրիշ քաղաքներ: Բնակիչք կը հաշուին 16000, յորոց 300ը բրիտանեացք: Հայք ունին Ս. Հրեշտակապետաց անուամբ վանք մը:

ԳԱԶԱՆԱՅԻՔ. — Այս անուամբ ծակեր կամ այրեր կան Այրարատայ Գարեղէնք գաւառի մէջ: Ասոցիկ (Բ. Բ) կ'ըսէ Ս. Թաթւոյ համար, թէ « . . . երթեալ ի վայրս զճնգակս՝ ընդ գազանաց և վիշապաց բնականայր ի տեղին՝ որ այժմ առի Գագանաճակք կամ Թաթւոյ վանք »:

ԳԱԶԱՆԻՔ. — Գիւղ ծովային կիլիկիոյ, Մերսինի արեւելեան կողմը: Կէս գար ստաջ, Կղիկոսացոց տիրապետութեան ժամանակ, զիւզս էր Տարսոնի նաւահանգիստը, բայց յետոյ ծանծաղացած լինելուն պատճառաւ, նաւահանգիստը Մերսին փոխադրեցին: Գիւղս ունի բազմաթիւ հնութիւններ:

ԳԱԶԱՆՃԻ ԿԱՄ ԳԱԶԱՆՉԻ. — Թաթարանակ գիւղ Սյրարատայ ձախտք գաւառի Սուրմուռի վիճակի մէջ, Երասխի աջ ափանց վրայ. ունի 106 տուն: Գիւղիս մէջ 1886ին գտնուեցաւ բեւեռաձև արձանագրութիւն մը սափակ և բոլորակ սկաւառակի ձևով բարի մը վրայ մէկ սող (Թ. 202):

ԳԱԶԱՆՃԻ ԿԱՄ ԳԱՅԳՈՒԼԻ ԳԱԶԱՆՃԻ. — Գիւղ Այրարատայ Աշոցք (Ալեքսանդրապոլ) գաւառի մէջ. Շիշթէֆէ գիւղի հիւսիսային և Քարադրիւրի հարաւային կողմը, նուր Ահմէտ (2070') լեռան ստորոտը: Եկեղեցին քարակերտ՝ կառուցուած է 1865 թուին, յանուն Ս. Առաքածածնի: Բնակիչք 537 հոգի, բաժնուած 52 տան, ամբողջ կաթնղիկէ Հայք:

ԳԱԶԱՆՃԻ ԿԱՄ ԳԱԶԱՆՃԻ. — Հայարանակ գիւղ Այրարատայ Շիրակ (Ալեքսանդրապոլ) գաւառի արեւելեան մասին մէջ, Իկլիսպի հարաւ արեւելեան կողմը հինգ վերստ հեռաւորութեամբ: Առատ ջուր ունենալով՝ որ Ղազանձցոց ջուր կը կոչուի, ունի նաև շատ



ծասեր. եկեղեցւոյ բակը գեղեցիկ ծառաստան է, զլխաւորաբար բալի, խնձորենի, սև սաւ լորենի, են: — Եկեղեցւոյ վերաշինութեան ժամանակ հիմքի տակէն անյայտ գերեզման մը գտնուելը է. ոսկրատիր այժմ ամփոփած են եկեղեցւոյ մէջ և դամբարան մը շինած: Բաւական ախաւարներ կու գան շրջակայ գիւղերէն և արդիւնքը յատկացուցած են ուսումնարանին. եկեղեցւոյ մէջ կայ նաև մեծագիր մագաղաթեայ երկաթագիր աւետարան մը՝ վերջի թերթերը և յիշատակարանը սրակաս: Գիւղի բնակիչը կը հաշուին 825 հոգի, բաժնուած 98 տան. և կամ են կարսի Պաշ-Շօրակիւղէն և քանի մը տուն ալ Բասնի Պրդասուն գիւղէն: Գազանճիի հիւսիսային կողմը շղթայած և բլուրներու վրայ բերլի մնացորդներ կ'երևին. սրբուհիներ ընկելով գտնուելու են պղնձեղէն և երկաթեղէն դանդաղ գործիքներ և անական կարասիներ: Բերլի տակը մեծ քարայր է, որ կան բազմաթիւ օձեր: — Արեւելեակ Մաւնոյ, ԻՐ 889-890: Տես ԳԱԶԱՆՖԻ:

ԳԱԶԱՆՖԱՐ կամ ԳԱԶԱՆՖԱՐ. — Գիւղ Այրարատայ հին Երկ գաւառի այժմեան Ապարանի վիճակի մէջ: Աւելի 1216 հայ բնակիչ, բաժնուած 1/4 տան: — Այս անուամբ սրբիչ գիւղ մ'ալ կայ Արագածոտն (Սուրբառի) գաւառի մէջ. բնակիչը բարդ են:

ԳԱԶԱՐ. — Գիւղ և գետ Աղձնեաց Սղերս քաղաքաւանի մօտ:

ԳԱԶԱՌՈՒՆ ՎԱՆՔ. — Այս անուամբ մեր նահանգներէն վանք մը շինուած կը յիշուի յերեսուղէմ Ս. Յարութեան գրան մօտ, որ և յատկապէս նուիրուած էր սրբոյն Հովհաննայ և Գայրանեաց:

ԳԱԶՈՅՈՒՆԻ կամ ԿԱՍԵՆԻ. — Լեռ Սիւնեաց Իջուկ գաւառի մէջ, որ ի նահանգ «մեծ և գիտաւոր սար» կոչուած է. Տաթևի արեւմտեան կողմը: Բարձր է 10550՝:

ԳԱԶՈՂԳԵՂԱՂԸ. — Գիւղ Այրարատայ այժմեան Սուրբառի գաւառի մէջ. ունի 293 հայ և 354 թաթար բնակիչներ:

ԳԱԶՂՔ ՔՕՓԱՐԱՆ. — Այրարատայ ճակատը գաւառի Տէրէքէն վիճակի մէջ, Բաւնաւ վտակի եզերքը, կայ այս անուամբ ամրոց մը, և մօտը հանրային ջրեր:

ԳԱԶԻՄԱՂԱՐԱ. — Սիրասիայէն 9 ժամ հեռու գէպի հարաւ կը գտնուի այս անուամբ հայարեակ գիւղ մը 30-40 տուն բնակչօք, որք ունին քարաշէն եկեղեցի մը և գոլթոց:

ԳԱԶՂՈՒ ԿԵՕԼ կամ ՍԱՔՈՒՅ ԼԻՃ. — Լճակը կը գտնուի Այրարատայ Կոզմովա գաւառի մէջ:

ԳԱԶԿԻԻԼԻՆ. — Լեռ Սիւնեաց Հարանոյ գաւառի մէջ, Կոթլսի հիւսիսային կողմը, 6620՝ բարձրութեամբ:

ԳԱԶՐԻԿԵԱՆ կամ ԳԱԶՐԻԳԵՆ. — Վաւարականի հին գաւառներէն մին:

ԳԱԹԱՐԻՆԵՆՖԵԼՏ, ԵԿԱՏԱՐԻՆՖԵԼՏ կամ ՌԱՏԵԻԱՆ. — Գերմանական գաղթաշէն Վրահայոց Քոնշափոր ձորագաւառի մէջ, Խրամայ աջակողմեան օժանդակի մը եզերքը, Բողնիս գիւղի մօտ հիւսիսային կողմը: Եթ գարու սկիզբները, Նափուէն ԱՔ պատերազմներու ժամանակ աշխարհիս վերջն հասնելու վախ մը ինկաւ Գերմանացի ազանդաւորաց մէջ, մանաւանդ Վիրթմանգէրկցոց, որք համոզուած լինելով որ Քրիստոս նորէն պիտի գայ ի Պաղեստին, և լան իրենց երկրէն՝ ընդ առաջ երթալու երկնաւոր գաւառորին: 1818ին էր որ հազարաւոր երկիւղածներ թողուցին տան տեղ, ուղեցին քաղելով Գերմանիայէն մինչև Կրասնայէմ երթալ, գանազան աշխարհներէ անցնելով, սմանք ճանապարհի նեղութիւնէ մեռան, աւսնցմէ մտտ մ'ալ Ռուսաց և Կովկասի սահմանները հասնելով կամայ և սկամայ համոզուեցան առանց աւելի առաջ երթալու՝ այն տեղերը մնալ և սպասել: Շատերը կան Հայոց կողմերը, և Տփլիսէն սկսեալ մինչև ալտանոյ հինոյ վեց գաղթականութիւն հաստատուեցին որոց անուանք են Նոր Թիֆլիզ, Ալեքսանտրակիլֆ, Էլիզապէթքալ, Մարիէնֆելտ, Փերրատորֆ և Գարարիէնֆելտ: Այս Գերմանացիները իրենց պարզ, կոկ և բարեկարգ սծովը, բիշ ժամանակի մէջ զարգացան, ի մեծ զարմանս Հայոց, Վրաց, Թաթարաց, Թուրքաց և Պարսից: 1826 տարուայ Պարսից և Օսմանեանոց պատերազմի ժամանակ Գաթարինէնֆելտի մէջ 85 տուն կային, յորոց 30 հոգի սպանուեցան և 430 ալ գերի գնացին: Պատերազմէն վերջ, երբ Ռուսք յաղթեցին Պարսից և Թուրքաց,



ողջ մնացող գերիներն դարձան իրենց զինքը և սկսան շինութեամբ ծաղկեցնել նորէն զիւզըս և բազմանալ: — Այժմ՝ աւանս ունի 1304 բնակիչ, բաժնուած 253 տան, յարոց 36 տունը Հայոց, 2 Վրաց, 3 Ռուսաց և 212 Գերմանացոց կը վերաբերին: — Նշմարք, Ա 49-20:

**ԳԱԹՂՐԱՌԻ.** — Այս անուամբ Վերին և Ստորին կրկին այլազգայնակ զիւղեր կան Այրարատայ ճակատք (Սուրմատի) գաւառի մէջ:

**ԳԱԹՐԱՆ-ՏԷՐԷՍԻ.** — Փոքրիկ ձորակ քառային կիլիկիոյ մէջ. այսպէս կոչուած է

Աս-քարեաք կոչուած Հին քաղաքասեղին, ուր կը տեսնուին իրարու մօտ թումբեր, որոնցմէ մին պեղելով գտան կամարայարկ մատրանաձև քարակերտ շինուած և համարեցան գերեզմանի տապան: Վննութեան արժանի են այս տեղերը, վասն զի Հին Արմարի ալ մօտ կը գտնուին:

**ԳԱԼԱՆՏԱՐ.** — Էւս Այրարատայ ջրաղկտան գաւառի մէջ, Նսպատ լեռան մօտ: Ստորաքը կը գտնուին կակուղ սպիտակ և գեղնորակ քարեր: Ռամիկը այլ քարերէն մին արծաթախաւն կը կարծէ և միւսն սուկիտան:



203. Գալթարիննէնֆէլտ:

մախրի ծառեր շատ ունենալուն համար, որուն թուրքը Գաքրան-աղաձի կը ըսեն:

**ԳԱԼԱՄԵԼԼԱ.** Տես ԳԱՐԱՄԵԼԼԱ:

**ԳԱԼԱՄՇԵԱՆ.** — Գիւղ Գուգարաց այժմեան Պոռչալու գաւառի մէջ. ունի 13 տուն հայ և 18 տուն վրացի բնակիչներ:

**ԳԱԼԱՄՈՒՍ.** — Կը յիշուի Կամախի մէջ:

**ԳԱԼԱՅԱՐԻ** կամ **ԳԱԼԷ-ԱՐԻ.** — Հայաբնակ զիւղ Այրարատայ Արագածսան (Սարատարպատ) գաւառի մէջ, Շահրիարի մօտ: Ունի 486 բնակիչ, բաժնուած 62 տան: Էկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի: Գիւղիս արեւմտեան հարաւային կողմը Երասխայ սառնանքու մէջ կը գտնուի Քիւռն-

**ԳԱԼԱՇՊԷԿ.** — Հանգրուան Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասի մէջ:

**ԳԱԼԱՉԱ.** — Գիւղ Այրարատայ Նիզ (Ապարան) գաւառի մէջ. ունի 439 հայ բնակիչ, բաժնուած 46 տան:

**ԳԱԼԱՉԱ.** — Հայաբնակ զիւղ Արցախի Ղազախ գաւառի մէջ. ունի 1209 բնակիչ, բաժնուած 157 տան:

**ԳԱԼԱՉԻ.** — Փոքրիկ զիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւմտեան մասի մէջ, Պաշնա գիւղի արեւելեան կողմը:

**ԳԱԼԷ-ԱՐԻ.** Տես ԳԱԼԱՅԱՐԻ:

**ԳԱԼԷԼԻ.** — Հայաբնակ զիւղ Այրարատայ Կոտայք գաւառի, այժմեան Հաճի Էայլա



վիճակի մէջ, Երեւանէն 10 վերստ հեռու: Ունի 323 բնակիչ, բաժնուած 52 տան:

ԳԱԼԵՂԻ կամ ՔԵԱԼԱԼԻ. — Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասի, Պախաուրի հարաւային կողմը երեք վերստ հեռաւորութեամբ, փոքրիկ ձորակի մը մէջ: Բնակիչք հայ են 36 տուն, որոց նախնիք 1828ին եկած են Կարսի վիճակէն:

ԳԱԼԵՃԻԿ կամ ԳԱԼԱՅՃԸՔ. — Գիւղ Անկիւրիոյ հուսակալութեան մէջ, Գրգըլ-բրմազի մէկ օժանդակին եզերքը, Անկիւրիա քաղաքին հիսսիս արեւելեան կողմը 52 հազարամետր հեռաւորութեամբ (թ. 204): Բնակիչք են 6790 հոգի, յորոց 375 Հայք և մնացեալը Թուրքք: Ապաստաւորան գաղաթը ունի փոքրիկ բերդ մը, աները և շուկան կառուցուած են լեռան ստորոտքը: Այգիներով և պարտէզներով զարդարուած են աւանիս շրջակայքը. նշանաւոր և առատ բերքն համարուած է զգտորն: Հայք ունին Ս. Կարապետ եկեղեցի մը, յորում կը պահեն պատուով երկաթադիր թերի աւետարան մը, զոր դասած են հոգի տակ եկեղեցոյ նորոգութեան միջոց: Ունին նաև Լուսինեան վարժարան մը, և ազգային սովորութեանց ջերմ պաշտպան են, որոց վրայ գրուած է 1899 տարւոյ Բիւրակնի 648-550 էջերուն մէջ:

ԳԱԼԵՃԻԿ. — Հայաբնակ փոքր գիւղ Այրարատայ վանանոց գաւառի Զարիշատի վիճակի մէջ. ունի 71 բնակիչ, բաժնուած 9 տան: Տես ԳԱՐԱ ԳԻԼԻՍԷ:

ԳԱԼԵ ՊԱՇԻ. — Գիւղ Այրարատայ, Ստարին Բասենի մեջ:

ԳԱԼԵ ՍՈՒ. — Այսպէս կը կոչուի Երասխի Հասանդալէի մտան անցած ժամանակ:

ԳԱԼԵ ՔԵՕՅ (Բերդագիւղ). — Կիլիկիոյ մէջ և մեր բնաշխարհի ուրիշ կողմերը այս անուամբ քանի մը գիւղեր կան:

ԳԱԼԵՏԷՐԷՍԻ կամ ԲԵՐԳԱՋՈՐ. — Բազմամարդ գիւղ Սիւնեաց Արաշէճք գաւառի մէջ, 4480' բարձր գիւրբով: Ունի 2631 հայ բնակիչներ, բաժնուած 387 տան:

ԳԱԼԵ ՏԻՊԻ (Բերդատակ). — Այլազգաբնակ գիւղ Այրարատայ Մաղազ գաւառի մէջ:

ԳԱԼԻԳՈՒԼԱ. — Բնակից Չէլէպի այս անունս կու տայ Կարնոյ:

ԳԱԼԻԼԵԱ. Տես ՎԱՐԱԳ:

ԳԱԼԿՈՆՅ. — Կը յիշուի Բարձր Հայոց Սպեր գաւառի մէջ:

ԳԱԼՈՒ ԱՆԱՊԱՏ կամ ԳԱՅԼՈՒ ՎԱՆՔ. — Հին վանք Հայոց, գաշապին Կիլիկիոյ մէջ: Կը յիշուի 1325 և 1336ին, Սիմէոն քահանայէ մը գրուած երկու Մանրուսումն երգարանաց մէջ. «յաստաւածարնակ անապատս, որ կոչի Գալու, ընդ հովանեա Ս. Աստուածածնիս, և այլ սրբոցս որք աստ»: Կիլիկիոյ ժամանակագիրն ուրիշ կարեւոր տեղեկութիւններ կու տայ վանացս վրայ, որուն շինողն եղած է Մեծն Լուսն: Կարգանք իւր գրածն երբ. «Եւ ասն ոմանք՝ թէ եղեալ է եր-



204. Գալէսիլի տեսարանը:

բնն որ վանն սրբութեան վանացն առաջնորդին կամ միաբանիցն, որ գայլն է արածեալ զոչխարան, վանն այն կոչի Գայլ վանք. և այժմ Սոսցիք Զերմադրիչը վանք կոչեն, որ է հանդէպ Սոսայ»:

ԳԱՆՏԸ կամ ԱՆԼՏԻ. — Գիւղ Սերաստիոյ՝ մէկ ժամ հեռու հարաւային կողմը: Գիւղիս անունը Լէնկթիմուրէն մնացած է. վանն զի երբ այս մարդախոշոշ բնաւորը՝ բազմաթիւ կոտորածներ, զիւզեր, քաղաքներ աւերել և արեան հեղեղներ վազցնելէն վերջ, կը սեռնէ որ այս գիւղս ալ իւր բնաւորական անյագ կրից զոհելու համար օրը իրիկուն եղած է՝ այս մնաց կ'ըսէ, Պոռ գաղտը և առկէ կ'անուր Գաղտը անունը. ինչպէս կ'աւանդեն նաև տեղացիք: Հայք 30 տուն կը հաշուին, ունին Ս. Յակոբ եկեղեցի մը և մէկ գաղտոց: Գիւղիս մէջ կան նաև այլազգիներ, որոնք մեծամասնութիւն կը կազմեն:



ԳԱԼՎՐԱՍՍ. — Այլազգայրնակ գիւղ Բարձր Հայոց կամախի գաւառի մէջ:

ԳԱԼՖԱԼՈՒ. Տես ԽԱԼՖԱԼՈՒ:

ԳԱՀԱՐ. Տես ԳԱՐՀԱՐ:

ԳԱՀԻՐԷ. Տես ԵԳԻՊՏՈՍ:

ԳԱՀԳԱՀԱ. — Այս անուամբ բերդ մը կը յիշէ Քեաթիպ Զէլէպի, Երասիր նկարագրած միջոց, Գարաճա լեռան մօտ:

ԳԱՂ. — Հին գիւղ Սիւնեաց Երնջակ գաւառի, Բօլուսարի և Շոտթիայ մէջ անդ, որուն ժողովուրդը Գեաղ կամ Կեաղ կ'ըսէ, ինչպէս նաև Գեաղ-Պարաժառ: Շինուածոց մնացորդներն բերդի և պարսպոց կ'ը վիսյին թէ Շոտթիայ նման ժամանակաւ մեծ և հարուստ զիւղաւան եղած է, նոյնպէս նաև արդի հայ բնակիչը (20 տուն), որոց մէջ կան նաև նորեկներ, կ'աւանդեն թէ երբեմն 700 տուն ունէր և հարուստ վաճառականներ, որոնք Նասիր շահի և յաջորդաց հարստահարութեանց համար ցրուեցան զացին զանազան կողմեր, և շատեր ի Զմիւսիա: Բազմամարդութեան կը նպաստէր տեղւոյս լաւ օդն և պատուական ջուրն: Այժմ ևս բուսարեքութիւնն յուսթի է և զեղատեսիլ: Բնակչաց կէտը կը պարտով աշխատեալ և զաշատերու մշակութեամբ, իսկ այլը խաշնագարմանութեամբ և մեղուարածութեամբ: Մեծ և հաստակառոյց եկեղեցին նորոգուած է Յակոբ կաթողիկոսի օրով, ունի չորս սառար սիւներ որոնց վրայ կը բարձրանայ կաթողիկէն խախտած 1840ի շարժէն: Սեղանոյն երկու կողմերը կան մէկ մէկ փոքր աւանդատներ, աւերած է քարաշէն և աղիւսաշէն ընդարձակ գաւիթը: Եկեղեցւոյս զանազան խաչքիւնքով մրայ կան արձանագրութիւններ, որոց հնագոյն թուականը կը վերաբերի ժ.Չ վարու:

Գիւղէն զուրս արեւմտակողմը կան մատուներ, մին Ս. Յովնանէն քարաշէն է և անկործան, միւսն՝ Նաճատակ կը կոչուի և կը դանուի առաջնոյն արեւմտեան կողմը լեռան ստորոտը. մօտէն կը բլիսէ զազջ ջրի աղբիւր, ուր կը գիմեն բազմաթիւ ախտաւորը և ախտաժէտը: Երկրորդ մատրան ևս արեւմտակողմը բլրակի մը վրայ կան Աշերակ կոչուած մատրան մը մնացորդները: Գիւղի հիւսիսային կողմը լեռան մը որս-

ծայր կատարին վրայ կայ կիտաւեր Ս. Եղիս անուամբ մատու մը. իսկ արեւմտեան հարաւային կողմը պղծեալներուն մէջ կ'երեսի եկեղեցւոյ մը աւերակն, զոր վանք կը կոչեն, և ժամանակաւ այնպէս եղած է: Գիւղի արեւելեան կողմն է կիտաքանդ պարիսպներով բերդ մը, որ շատ անգամ բնակչաց ապաստան եղած է. ուրիշ երկու բերդեր ալ կան մին արեւմտեան կողմը և միւսն հիւսիսային՝ Ս. Սարգիս կոչուած, որոյ մօտ կան խաչքիւնք: Գիւղս ունի քանի մը ջրամբարներ, մին Առաքելի կեօլ (լիճ) կոչուած, շինողին անուամբ:

Գաղայ վաճառականութեան բարդաւանման յիշայ կը մնան քանի մը յիշատակներ հետուոր օտար աշխարհաց մէջ, ինչպէս ի վենետիկ, ուր կը յիշուին 1697-1725 տարիներու մէջ ոմն Տիրացու Աստուածատուր, Յովնան, և Յակոբ որ իւր անունը փորագրած է Ս. Մարկոսի եկեղեցւոյ արտաքին դրան սիւներէն միոյն վրայ: Նշաւուոր է հարստութեամբն նաև Գաղեցի ոմն Պաղտատար, որ մեռնելով 85 տարեկան, թաղուած է Ս. Խաչի եկեղեցւոյ մէջ 1733ին: Այս վաճառականներէն աւելի հին են Գաղեցի եկեղեցականներ Միաբանոցաց կարգէն, Թոսկանայի Փլորենտիա բազարին մէջ 1571ին դրուած լատինահայ ճաշոցի մը մէջ կը գրէ ոմն «Տէր Աբել Գաղեցի», և ուրիշ մը. «Ես ֆրա վարդանս որդի Յարուսիս գրեցի զայս յիշատակարանս ի թիփն մեր Հայոց Ռ-ժիթ»: — Հնոքիւնք Հայրենեաց, 1442-1451: Սիսական, 359-360:

ԳԱՂԱՏԱՅ կամ ԳԱՂԱՏԱՍ. — Հին գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի, որ տարին 10 բն հարկ կու տար Սիւնեաց եկեղեցւոյն:

ԳԱՂԱՏԻԱ. — Փոքր Ասիոյ հին գաւառներէն մին, որուն սահմանակից էին հիւսիսէն՝ Պափղագոնիա, արեւելքէն՝ Կապադովիա, հարաւէն և արեւմտաքէն՝ Փոլսիա: Գաւառիս անուամբ կը կոչուի նաև գլխաւոր քաղաքն, զոր մենք նկարագրեցինք Անկիւլիս անուան տակ:

ԳԱՂՋՄԱՆ. Տես ԿԱՂՋՈՒԱՆ:

ԳԱՂՂԻԱ. Տես ՖՐԱՆՍԻԱ:

ԳԱՂՏԱ. — Գիւղս կը յիշուի Բագնայրի (Շիրակ) արձանագրութեանց միոյն մէջ:



ԳԱՂՏԱՌԻՃ. — Այս անուամբ Մեծ և փոքր կրկին զիւղեր կան Բարձր Հայոց կարնոյ գաւառի մէջ. երկուքն ալ այլազգաւրնակ են:

ԳԱՄԱՂԻԵՂԻ ՎԱՆՔ. — Հին վանք Աղձանեաց Գղեղ (Խիղան) գաւառի մէջ: Վանացո հիմնարկութեան համար, կանգակին մէջ գրուած է, թէ թագէսս առաքեալը Գամազիէի զուտը իւր հեռ բերելով, շինած է այս վանքս նոյն սրբոյն անուամբ: Այժմ մէջը միաբանութիւն չկայ. մեր ուրիշ շատ վանքերու նման սա ես տեսը յիճակ մ'ունի:

ԳԱՄԸՇԻԿ. — Այս անուամբ այլազգաւրնակ զիւղեր կան Այրարատայ ճակատը և վանանոց գաւառաց մէջ. ինչպէս նաև ուրիշ կողմեր:

ԳԱՄԸՇԻՃՐՔ. — Փոքր զիւղ լեռնային կիլիկիոյ, կապանի սահմանաց մէջ:

ԳԱՄԻՐՔ. Տեա ԿԱՊԱԴՈՎԿԻՍ:

ԳԱՄՐԻՍ կամ ԳԵԱՄՐԻՍ. — Հայարնակ հին զիւղ Այրարատայ կոտայք գաւառի մէջ, Էրեւանի արեւելեան հիւսիսային կողմը, 10 վերստ հեռաւորութեամբ, և Աղազօր զիւղի մօտ՝ հարաւակողմը: Ունի 962 բնակիչ, բաժնուած 115 տան: Կիկեղեցին Ս. Յովնանէն, սագաձև է, շինուած կոփածոյ քարերով հին ժամանակաց մէջ: Հիմնարկութեան թուականն չգիտենք, բայց յայտնի է որ 1679 թուականի մեծ երկրաշարժէն վերջ նորոգուած է: — Գիւղին արեւմտեան կողմը կայ Ս. Աստուածածնի փոքրիկ մատուռ մը, որ ունի 1258 թուականու նորոգութեան արձանագրութիւն, հարաւային սրմի վրայ: Արձանագրութենէն կը յայտնուի, որ նորոգել տուողն է Լիւսնա անուն իշխան մը: Հիւսիսային կողմն ալ քարի մը վրայ կայ նուիրատուի մը յիշատակարանն: Գամրիսի աջակողմէն վազող գետակի վրայ ձգուած է հնաշէն սրբատաշ քարերով կամուրջ մը, որ կիսով չափ նորոգուած է 1855 թուին: Այս կամրջի տակէն անցնող ջուրը սիկոյն կ'առնու այն յորը և անուանի աղբւրէն՝ սրոյ անուամբ՝ զիւղս երբեմն Աղբերից գիւղ կոչուեր է: Գիւղս զարգարուած է գանաղան պտղատու ծառերով. ջուրը բաւական լաւ է և օգն առողջարար: Գիւղի մէջ կայ Թռչի Մանուկ անուամբ մատուռ մը. իսկ արեւ-

մանան կողմը քիչ մը հեռու ձորի մէջ կան ծառեր, լաւ աղբւր մը և Ս. Սարգսի մատուռն, հասարակ քարով շինուած: Գամրիսի մօտ հողաբլուր մը կար, որ 1888 ին յորդահոսան հեղեղներէ քանդուելով, յայտնուեցան բաւական թուով պարսկական արձաթ գրամներ: Պարսից Շահ Սէֆի թագաւորը, այս զիւղին մէջ բնակեցուց Մակուցի հայերը, երբ հրաման հանեց Մակուայ բերդը քանդել և բնակիչները գաղթել տալ: — Այրարատ 287: Գեղարքունի, 261-263:

ԳԱՅԱՂԻ (Ապառաժոռտ). — Այլազգաւրնակ զիւղ Սիւնեաց վայոց ձոր (Զանգեղուր) գաւառի մէջ, գետակի մը մօտ, որուն աջ կողմը կը տեսնուին քարաշէն կամրջի մը մնացորդներ:

ԳԱՅԱ-ԽԱՐԱՊԱ. — Այլազգաւրնակ փոքրիկ զիւղ Այրարատայ ճակատը (Սուրմատի) գաւառի մէջ:

ԳԱՅԱՃԸԳԻԿ. — Գիւղ լեռնային կիլիկիոյ մէջ:

ԳԱՅԱՊԱՇԻ կամ ԳԱՅԱԲԱՇԻ. — Հայարնակ զիւղ Աղուանից Հողի (Արաշի) գաւառի մէջ. կը վերարբերի Կուխիի յաջորդութեան և կը գտնուի Կուխիէն 40 վերստ հեռու գէպի արեւելք: Ծինուած է Արշիակ գետակի ձախակողմը և կովկասեան լեռանց ստորաք, տափարակի մը վրայ: Հիւսիսային, արեւելեան և հարաւային կողմերը կան բնդարձակ տափաստաններ, յորս առատօրէն կը բուսնի ցորեն, և այլ առատութեան շնորհիւ, զիւղին ժողովուրդը ամէնքն ալ հարուստ են: Այս զիւղն էր որ 1879 թուին, ցորենի պակասութեան միջոց կերակրեց Կուխիի յիճակը: Գայապաշի արեւմանան կողմէն անցնող Արշիակ գետակը կը մատակարարէ թէ՛ խմելու և թէ՛ այլիներն և մարգագետինները ոռոգելու ջուր: Գետակի երկու կողմերն են թթնիներ և խաղողի այգիներ՝ որ բաւականին առատօրէն և լաւ գինի կու տան: Օգն և ջուրն առողջարար լինելով Գայապաշիք առողջակաղմ, յաղթանպամ մարդիկ են, և այս տեղ հազիւ կը պատահի հիւանդութիւն, միայն ամառը շոգ լինելուն պատճառաւ երբեմն անասուններու մէջ հիւանդութիւն կ'ինկնայ: Գիւղս ունի 1438 բնակիչ, բաժնուած 226 տան,



որոյ նախնիք զաղթած են Պարոկաստանի խոյ քաղաքէն և գաւառներէն: Եկեղեցին կը կոչուի Ս. Ստեփանոս, ընդարձակ է, չորս սիւներով, ամբողջ քարաշէն: Գիւղիս Հին եկեղեցւոյ նորոգութեան արձանագրէն կը յայտնուի, թէ խոյեցիք այս ակոյ գալէ առաջ, արդէն կան եղեր Հոս Հայ բնակիչներ և եկեղեցի: Խոյեցիք Շաքի երկիրը փոխադրուած են 1807ին, բայց անոնցմէ մաս մը Հաստատուած է գիւղիս մէջ 1824ին: Հին եկեղեցին նորոգուած է 1830ին, ժողովրդեան արդեամբ. իսկ այժմեան եկեղեցին ի Հիմանէ կառուցուած է 1890 թուին: Բնակիչք ածնեք և կիրակի օրեր ուրբ պահելու մեծապէս պաշտպան են. անփոփոխ պահած են իրենց նախկին բարբառը, սուփորութիւնները, հազուստը, հացի և կերակորներու տեսակները, են: Գիւղս ունի Ս. Ներսիսեան անուն ուսումնարան մը 66է աւելի աշակերտներով: Վայսպաշի հարաւային կողմի գաշակի վրայ կայ Հին եկեղեցւոյ և գիւղի աւերակ, Շիւնատեղ անուամբ, ինչպէս նաև հանգստարան, անտաշ, կոպիտ և անարձանագիր տապանաքարերով: — Նոր Գար, Գ 207: Աղոռանք, 224-225:

ԳԱՅԱՊԵՆԻ կամ ԳԱՅԻՆԻ. — Հայաբնակ (30 տուն) գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Ալաշիբաթի Գարա-Գիլիսէ տանող ճանապարհի վրայ: Գիւղս թոփրագ-Գալէն 2 ժամ հեռու, գէպի արեւելեան հասար, գաշտի մէջ փոքրիկ վտակի մը եզերքը կառուցուած է: Ղայրէկցիք ունին բազմաթիւ արտօրայք և բերրի հող: Գիւղս ունի ջրաղաց և ձիթահանք: Գլխաւորաբար կը սնուցանեն դոմշեղէն, արօտ չունենալով ոչ խորեղէն շատ քիչ կը պահեն:

Գիւղս ունի խարխուղ գետնափոր եկեղեցի մը, որոյ շուրջը գերեզմանատուն է 1000ի շափ կոշտ տապանաքարերով: Ղայրէկի բնակիչաց կէտը ցեղ մը կը կազմեն, որուն քոյերը Գորսնիք (ղայլեր) անունը կու տան, և կ'աւանդուի թէ Գայլ վահանէն սերած են: Գիւղիս մէջ կայ թղթեայ ընտիր ձեռագիր աւետարան մը, զարգարուած բազմաթիւ ձեռանկար գեղեցիկ պատկերներով:

ԳԱՅԱՊՈՒՌԻՆ. — Լեռ Այրարատայ կողմի գաւառի մէջ, Պայտաղիսի մաս:

ԳԱՅԱ ՏԷՐԷ. — Լեռնակ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ:

ԳԱՅԳՈՒԼԻ ՉԻՖՏԱԼԻ կամ ՉԻՖՏԻԿ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասի մէջ, Գարախաշ լեռան սարոտը: Աւնի 348 բնակիչ, բաժնուած 39 տան:

ԳԱՅԳՈՒԼԻ ՏԻԶՔԷՆՏ. — Նոյնպէս Հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի, արեւելեան հարաւային կողմը: Աւնի 424 բնակիչ, բաժնուած 56 տան: Մօտը կայ Քար-Խարապու աւերակք: Մէջը ևս լինելու է Հին եկեղեցի և վանք. աղբկաթիւնը կը պակսին: — Տես ԳԱՅԱՆՆԻ:

ԳԱՅԻԱՆԵՆԻ (Ս.) ՎԱՆՔ. — Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Էջմիածնի արեւելեան հարաւային կողմը կը գտնուի աւուանի և Հինաւուրց վանքս: Այգաթանգեղոսի գրութեան համեմատ, կառուցուած է ճիշդ այն ակոյը, ուր նահատակուեցաւ որբութիւն Գայիանէ երկու ընկերաց հետ: Կորն Գրիգոր 304 թուականին, բազմաթիւ հաւատացեալաց հետ Հիմնադրած է վիպարանս, և մէջը ամփոփած Ս. Գայիանէի և երկու ընկերաց նշխարները: Վանքս իւր առաջին շինութենէն վերջ, գրեթէ 329 տարւոյ շափ, չի յիշուիր յաճախ պատմութեան մէջ, հանդոյն Ս. Հովնաթիւ վանաց: Էզր կաթողիկոսը 630 թուին, տեսնելով որ Ս. Գայիանէի եկեղեցին խիստ մթին և խեղճ շինուած էր, քակել տալով աւելի ընդարձակ և փասաւար կառուցանել տուաւ զայն կոթածոյ քարերով, և ինչպէս կ'ընէ Եւֆրատէս կաթողիկոս. « և յարաբուսա յարգարէր կայանս բնակութեան քահանայական գասուց ի պաշտօն աստուածային խորանին »:

Հազար տարիէն աւելի մեզ յայտնի չէ թէ ինչ գէպքեր հանդիպեցան վանքիս, միայն Առաքել պատմիչ մանրամասն կը նկարագրէ, թէ շատ տարիներ անցնելով բոլորովին աւերած էր Ս. Գայիանէի տաճարը, վասն զի սանիքք խոնարհած էր և միայն չորս սիւները և որմերը կանգուն մնացած էին: Փիլիպպոս կաթողիկոսը 1654 թուին սկսաւ տաճարիս նորոգութիւնն, և շատ ծախս ընելով ի Հիմանց մինչև զազաթը գեղեցկաշէն աւարտեց և գմբէթի վրայ գնել տուաւ:



աէրունական խաչի նշանը: Եւ որովհետեւ աւագ խորանի ներքեւ շինուած մատուռ ուր գրուած էին սուրբ կուսանաց նշխարները, բարբոսիին աւերած էր, և նոյն խակ աւագ բեմը քանդուած էր մինչև յատակը, Յովհաննէս անուամբ արեղայ մը, ծածկապէս հիմունքը պեղելով գաւաւ երեք տապաններ, եկեղեցոյ հիման աակ, մին՝ հարաւային կողմը, միւսն՝ հիւսիսային կողմը և երրորդը՝ արեւելեան կողմը, և պատմչի գրածին հա-

տուաւ նաև երկու փոքրիկ կաթնօղիկներ՝ իրրե զանգակատուն: Նոյն Եղիազար կաթնօղիկուր կառոյց նոյնպէս բնակարաններ միարանտիմեան համար, և շրջապատեց բուր վանքը պարսպով, որանց համար յատակ յիշատակարան մը արձանագրեց եկեղեցոյ արեւմտեան պատի գրան աջ կողմը, որ և կը մնայ մինչև հիմա: Եկեղեցոյ աւագ գրան աջ կողմը կամարի աակ կայ գեղեցիաքանդակ կարմրաքար խաչարձան մը,



205. Ս. Գայիամեի վանքը:

մեմատ, Ս. Գայիանէի ու երկու բնկերաց նշխարներէն մասն մի առնելով, ապաւաննւրը վերստին հոգով ծածկեց և անյայտ բրաւ:


Հոռմկայեցի Եղիազար կաթնօղիկուր 1688 թուին, եկեղեցոյ արեւմտեան գրան պիմաց շինեց բուրբոսիին նոր և գեղեցիկ գաւիթ մը, և երկու ծայրերը մէկ մէկ փոքրիկ խորան Պեարոս և Պօղոս առաքելոց անուամբ, որոց պատկերներն ալ սրմնց վրայ նկարել տուաւ, ինչպէս նաև իւր պատկերը գրան աջակողմը: Այս խորաններու վրայ շինել

որ հնութենէ և անգութ ձեռքերէ խանգարուած է, և ունի հետեւեալ արձանագրութիւնը. « ԹՎ. 26 (626) ԽԱՒԻԱ ԳԺԱՂ » . այս թուականը եթէ ստոյգ է, Եղրի ժամանակին կը վերաբերի: Զարբախտ սարկաւազ պատմագիրը յիշելով Եղիազար կաթնօղիկուսի շինութիւնները, կ'ըսէ նաև թէ գաւթի հիւսիսային կողմը եղած խորանի առջև շինեց և իւր գերեզմանը: — Թէպէտև Էջմիածնի վանքը ունի իրն մօտ յատուկ գերեզման նատուն, սակայն երկու գարէ աւելի է, որ



սովորութիւն դարձած է, կաթողիկոսները թաղել Ս. Գայիանէի վանքի գաւիթը, բաց ի մէկ քանիէն, որոնք դանազան պատճառներով թաղուած են ուրիշ տեղեր: Եղիազար կաթողիկոսի և ուրիշ մի քանի տապանաքարեր պատերազմաց ժամանակ անհետ եղած են կամ հղծուած, իսկ արձանագրութիւններով հանդերձ՝ ծանօթ տապանաքարերն կը վերաբերին. Ա. Ղազար Ջահկեցւոյն, † 1751. Բ. Յակովբ Շամախեցւոյն, † 1763 (21 մարտի - 1 ապրիլ). Գ. Սիմէոն

200 տարի վանքս մնացած կը թուի առանց վերանորոգութեան և խնամքի: Գեղեցկաշէն եկեղեցւոյն կաթողիկէի մէկ մասը և մի քանի կամարներ ճեղքուած էին վտանգաւոր կերպով, որմերն ալ ներսէն և դրսէն խնւարուած և քարերէն շատերը խախտած: Կեղեցւոյ մէջ կը տիրապետէր սաստիկ մթութիւն և խոնաութիւն, պատուհաններէն շատերը հիւսած էին, և մնացած էին միայն հինգ վեց փոքրիկ պատահաններ: Վանքը քանի մը մութ և խորխուր սենեակներէ զատ



206. Ծառաստան Ս. Գայիանէի և Երեմիանի լճակի մէջտեղ:

Երեւանցիին † 1780 (26 յուլ. 6 - օգոստ.). Դ. Ղուկաս Կարնեցւոյն † 1799 (29 դեկտ. 9 յունուար 1800). Ե. Յովսէփ Արզումանցի † 1801 (9-21 մարտի). Զ. Գաւրիմ Էնէղէթեցւոյն † 1817 (նոյեմբ. 1-13), և Է. Մատթէոս Կ. Պոլսեցւոյն † 1865 (26 օգոստ. 7 սեպտ.). ինչպէս նաև Աբրահամ Բ Մշեցւոյն † 1734 և Միմաս Ակնեցւոյն † 1753, որոնց տապանաքարերն կը պակսին:

Եղիազար կաթողիկոսէն վերջ, զրեթէ

րնակարան չունէր. արտաքին պարիսպն ալ տեղ տեղ փլեր էր: Վանացս վանահայրերու մէջ հռչակաւոր հանդիսացած է Վահան Բաստամեան՝ որ 1872 թուին Գէորգ Գ կաթողիկոսէն ստանձնելով վանահայրութեան պաշտօն, կարևոր նորոգութիւններով պայծառացուց վանքս: Հիւսուած պատուհանները բացաւ և մեծցուց 18 պատուհան, նորոգեց գմբեթը և որմերը. եկեղեցւոյն մէջն ալ զարդարեց բլրերղեայ ջահով, կարևոր պատկերներով, խաչերով և այլ սպասներով:



խարխալուած պարխապներն ալ նորոգելով, եկեղեցւոյն մեծ դրան զխմաց, բոլորովին նոր պարսպի վրայ բացաւ կամարակապ մեծապիւր զաներ: Նոյնպէս կառոյց վայելուչ բնակարան վանահօր՝ չորս սենեակներով և կարեւոր կահ կարասիքով, փոքրիկ զպրօց մը և սպազբառուն՝ ուր կը սպազբէր Գպրոց անուամբ ամուսնաբլթ մը, որ հազիւ երկու տարի տեւեց, շատ ծախուց և իրեն Եւրոպա գտնուելուն պատճառաւ: Եւրոպայէն գտնուելով 1879ին, վանացս մէջ հաստատեց Ազգագրական քանգարան մը, Հայոց զգեստներու, տարազներու, կահ կարասեաց, ձեռագործաց և այլ իրաց, բայց ավստն որ շուտով վախճանեցաւ 1881ին (10 նոյ. — 12 դեկտ.), իրեն օրէնսդատական հմտութեանց յիշատակ թողլով զովելի գրուածքն՝ Իրաւաբանական ձեռագորտոչքիւն Գատաւսանակարոց Միտիթար Գոշի: Յաւալի է բռնին, որ Վ. Բատամանցի յաջորդներն, նոյն կերպով առաջ չեն տարած իրենց վանահայրութեան պաշտօնն, հոյ տանելով վանացս նորոգութեանց և պայծառութեան: — Ստոր. Կարողիկէ Էջմիածնի, Ա. 273—280: Արարատ ամապիւր, Է. 29—32: Արարատ, 241—244: Եւ այլն:

ԳԱՅԻՆԼԻ կամ ԳԱՅԼՆԵԼԱՐ. — Գիւղ Այրարատայ, Ստորին Բասնի մէջ, համանուն գետակի մօտ: 1829ին ստոր մօտ տեղի ունեցան Ռուսաց և Թուրքաց պատերազմները:

ԳԱՅԼ. — Այս անուամբ գետ մը սկիզբն կ'անու փոքր Հայոց մէջ, որուն Յոյնք Լիգոս անունը կու տան, որ գայլ կը նշանակէ: Կ'անցնի Բարձր Հայոց Էկեղեցաց գաւառի մէջէն և Երզնկայի հարաւ արեւմտեան կողմէն կը միանայ Եփրատի հետ: Աղաթմանդեղոս (49) կը յիշէ գետս հետեւեալ առոգերու մէջ. «Եկին հասին յէկեղեցաց գաւառ ի գեօզն Երիգա ... Իջին բանակեցան առ ավն գետոյն՝ զոր Գայլն կոչեն»: Գարձեալ ուրիշ անգամ մը ես կը յիշէ Երէզ աւանի մօտերը: — Գետոյս այժմ այլազգիք Չարսազ—սոչ անունը կու տան, Չարսազ լիբան ստորտաներէն բղխելուն համար: — Տես ԶԱՊ—ՍՈՒ: — Գայլ գետի անունէն ածանցած Բայրիք կամ Բեյրիք կը կոչուի Էկեղեցաց հիւսիսային արեւմտեան

կողմը ինկնող լեռնայի և քիչ արգաւանդ փոքր գաւառ մը:

ԳԱՅԼԳՈՄ. — Կը յիշուի Վասպուրահանի մէջ, Պաշլալէի հարաւակողմը:

ԳԱՅԼԱԶՕՐ. Տես ԳՈՒՅԼԱՍԱՐ:

ԳԱՅԼԱԽԱԶՈՒՏ. — Լեռ Բարձր Հայոց Մանանդի գաւառի մէջ:

ԳԱՅԼԱԿԱԼ. — Հին գիւղ Սխենաց ճահակ գաւառի մէջ: Կը յիշուի նաև Գայլակալի շուք, որ անշուշտ գիւղիս մօտէն անցնող վտակ մի է:

ԳԱՅԼԱՌՈՒՃ. — Կը յիշուի Երզնկայի (Բարձր Հայք) մէջ:

ԳԱՅԼԱՏՈՒ կամ ԳԱՅԼԱՏՈՒԱՅ ԾՈՎԱԿ. — Կը գտնուի Այրարատայ կողովի գաւառի մէջ: Բաւական բնագրձակ լինելուն պատճառաւ ծովակ կոչուեր է, վասն զի Վանայ, Գեղամայ և Հիւսիսային (Պաշլակցիս) ծովակներէ վերջ, մեծութեան կողմանէ մեր բնիկ աշխարհի չորրորդ լիճն է սա: Իսկ ծովու երեւէն մեր բոլոր ծովակներէն աւելի բարձր է, գրեթէ 2237 մետր, և շրջապան է 20 մղոն: Գեղամայ ծովակի նման ջուրը անուշ է, և անկէ աւելի ձկնաշատ, անոր համար այժմ այլազգիներէն Պալըզ — կեօլ (Չկնալիճ) կը կոչուի: Չկնըր համեղ են և մինչև գտնուալ մեծութեամբ, կանոնաւոր ձկնորսութեամբ կարելի է տարին կէս միլիոն գահեկանի ձուկ որսալ: Խիստ գուարձալի և գեղեցիկ են ծովակի շրջակայքը, ծաղկազարդ լեռներով և յուսթի մարդապետիներով: Գայլատայ ծովակի հիւսիսային կողմը, արեւելեան ակէն կէս մղոն հասու կայ կղզեակ մը հանգերձ մենաստանով, որ այժմ լքեալ և ամայի աւերակ վիճակի մէջ է, եկեղեցւոյ որմերու վրայ կան խաչարձանք: Այս մենաստանս յատուկ բնութեան կը կարօտի: — Այրարատ, 491—492:

ԳԱՅԼԱՏՈՒՍ. — Սերիտս այս անուամբ բաղաք մը կը յիշէ, որ կը գտնուէր անշուշտ վերոյիշեալ ծովակի մօտ: Եթեմերսոյ գարուն նուաճեր է բաղաքս խոտով Ազրուէզ պարսիկն, բնորէմ Բիւզանդացոց մը գած պատերազմներու ժամանակ:

ԳԱՅԼԳՈՄ. — Գիւղ Տայոց Պարսիկացիօր (Օլթի) գաւառի մէջ:



ԳԱՅԼԵՉՈՐ, ԳԱՅԼԻՉՈՐ կամ ԳԼԱՉՈՐ. — Սխնեաց վայոց ձոր գաւառի մէջ կը գտնուի ԺԳ-ԺԳ դարուց հոշակաւոր մենաստանս: Վարդան վայոց ձորի վանքերու հետ կը յիշէ նաև «գրայրեճոք, որ վարժարանն է և ամսո սուրբ վարդապետաց մերոց»: Ուրիշ աշխարհագիր մը վանացս ձիւղ սահմանն կու տայ բնելով, «Գայրու ձորն՝ ի սահմանս Եղեգեցձորոյ»: Կ'երևի թէ ի հնումն ուրիշ անուն ունի եղեր վանքս, վասն զի Մխիթար Սաննեցիի վարուց մէջ կ'ըսուի, «Ի վանն՝ որ այժմ ասի Գլաձոր»: Իսկ յիշատակագիրներէն մէկը (Յովհաննէս) կը յայտնէ առաջին անունը, գրելով 1291 ին, «Ի մենաստանս՝ որ կոչի Աղբերց վանս և մականուն Գլաձոր»: Վանացս ո՛չ շինու թեան ժամանակն և ո՛չ առաջին և վերջին դէպքերն յայտնի են: Երանօթ է միայն այն, թէ ԺԳ դարու կէսէն մինչև ԺԳին կէսը հոշակուած էր ժամանակին բոլոր վանքերէն աւելի՝ և նոյն միջոց այս տեղ բարգաւաճեց ազգային դպրութիւնն, մանաւանդ Եսայի վարդապետ Նշեցոյ (1284-1338) առաջնորդութեան օրով, որ յաջորդեց Ներսէս Մշեցիին († 1284): Ներսէս՝ հմուտ էր յանարէնի, Գայրեճօր գալով աշակերտեցաւ վանական վարդապետի աշակերտ Վարդանայ, որուն մահէն վերջ, անոր ամուսնուր նստաւ, «... և լուսափայլեաց զազգս Հայոց ուսմամբ գրոց, և հասնալ ի բարիօք ծերութեան՝ հանդեա ի Քրիստոս ի նոյն վանս Գլաձորոյ»: Քայց Ներսեսի աշակերտն և յաջորդն Եսայի, զինքը գերազանցեց, որ գրեթէ յիսուն եւ հինգ տարի առաջնորդութիւն և վարդապետութիւն բրած է: Կ'ըսեն թէ երեք հարիւր վաթսուն քահանայից վարդապետական գաւազան սուեր է, որոց մէջ ամէնէն նշանաւորն է Յովհաննէս Երզնկացի: Եսայի Նշեցոյ աշակերտներէն գրուած գրոց յիշատակարանաց մէջ, կը գտնենք գովասանական տողեր վանացս համար, ինչպէս, մայր իմաստից, հաւալարան, երկրորդ Արեւիկ և մայրաքաղաք ամենայն իմաստից: Մեր նիւթէն գուրս կը լինի աստ յիշելն այն ամենայն մատենագիրք՝ որք ուսումն առած են վանացս մէջ:

Վանքս յիշողներէն ամէնք կը վկայեն,

թէ եկեղեցին նուիրեալ էր և կը կոչուէր Ս. Ստեփաննսի կամ Ս. Նախաւկայի առնուամբ: Եկեղեցիէն զատ կը կարծուի թէ կար մատուս մը Ս. Նշան անուամբ: — Յայտնի չէ վանացս զիրքն և շէնքերու ինչ տեսակ լինելն. միայն կը կարծուի թէ ջրաբուլոյն և առանձնացած ու բարձր տեղ մը կը գտնուի, և հարկաւ ձմեռ ժամանակ ցուրտ: Ասոր վկայ կրնան լինել Մխիթար Երզնկացիի 1314 թուին առաջապիելով գրած յիշատակագրի մը հետեւեալ տողերն.

«Թուղթըն անկոկ ու գրիչ չկայ,  
Աւարքըս ցուրտ ու պարզկայ,  
Չարատխս բարձր ու կրակ չկայ,  
Դաներս չոր ու սպաս չկայ.

Եւ այս Գլաձորն ո՛վ գիտենայ»: Եւ այլն: Վերջացնելով հոշակաւոր վանացս սակաւաբան նկարագրութիւնն, ազգային ուղեւորաց բնութեան կը յանձնենք զայն, վասն զի եկեղեցոյ և գերեզմանաց արձանագրութեամբք՝ եթէ հետախոյզ ոմն հրատարակէ, պիտի ընդարձակի տեղւոյս նկարագիրն, և այն ժամանակ միայն պիտի կարենանք աւելի ձիւղ տեղեկութիւններ տալ: — Սխական, 130-137:

ԳԱՅԼԵՉՈՐ կամ ԳԼԻՉՈՐ. — Այսպէս կոչուած է ի հնում Այրարատայ Շիրակ գաւառի մէջ ձորակ մը, Անոյ արեւելեան կողմը: Այս ձորակս տանող դուռն ալ կը կոչուէր Գռան Գայրեճօրոյ:

ԳԱՅԼԻ կամ ՔԵՅԼԻ. — Հայաբնակ գիւղ Սարրերդի առաջնորդական թեմի մէջ: Ունի 30 տուն բնակիչ և Ս. Կիրակոս եկեղեցի մը:

ԳԱՅԼՈՅ ՎԱՆՔ. Տես ԾՂՈՒԿ:

ԳԱՅԼՈՒ ՎԱՆՔ. Տես ԳԱՅԼՈՒ ԱՆԱՊԱՏ:

ԳԱՅՊՈՅ կամ ԿԱՅԲՈՅ. — Կիլիկիոյ լեռներէն մին:

ԳԱՅՍԵՐԻԷ. Տես ԿԵՍԱՐԻԱ:

ԳԱՆԱՄԵԼԼԱ. Տես ԳԱՐԱՄԵԼԼԱ:

ԳԱՆԼԸ. — Գիւղ Այրարատայ վանանդ գաւառի մէջ: Ունի 30 տուն հայ բնակիչներ և Ս. Յակոբ եկեղեցի մը: Գիւղիս հիւսիսային կողմը, երկրի տակէն գտնուեցան բրտեղէն անօթներ և անգիր գերեզմաններ:

ԳԱՆԼԸԳ. Տես ԲԱՆԼԸԳ:

ԳԱՆԼԸՃԱ. Տես ՂԱՆԼԻՃԱ:



ԳԱՆՆՈՒ ՏԵՐԷ. — Այս անուամբ ձորակ մը կայ Կարինոյ և Բարերդի մէջ տեղ:

ԳԱՆԿԱԼ. — Բերդաքաղաք Սերաստիոյ կուսակալութեան համանուն վիճակի մէջ: Բնակիչք մեծաւ մասամբ հայ են: Յուովի և խոտաւէտ են շրջակայքը, որով և անասունները պարարտ են: Բնաիր են այս կողմանց սերն ու մածուր, ինչպէս նաև մեղրը: Համանուն Գանկալ վիճակի մէջ կան 8000է աւելի հայք, իսկ այլազգիք 2000ի շին հասնիր:

ԳԱՆՁԱ. — Գիւղ Գուգարաց, այժմեան Պոռչալու գաւառի մէջ: Ունի 1046 հայ բնակիչ, բաժնուած 119 տան, և 3 տուն այլազգի:

ԳԱՆՁԱԿ, ԳԱՆՁԱՅ կամ ԵՎԻՍԱԲԵԹՈՒՊՈԼ, Գղ. ELISABETHPOL. Ռ. ЕЛИЗАВЕТПОЛЬ. — Կոստանդական և գաւառական քաղաքը կը գտնուի Աղուանից համանուն գաւառի մէջ, կ'ինկնայ 40°41 հիւսիսային և 64°6' աւրեւելեան երկայնութեան աստիճանաց տակ. 1449 սոնաչափ բարձր գիւրքով: Քաղաքի մէջէն կ'անցնի Գանձակ գետը, բաժնելով դայն երկու նշանաւոր՝ Հայոց և Թուրքաց մտտերու: Հայոց մասը որ կ'ինկնայ գետի աջ կողմը, բաժնուած է Քիլիսաքեանդ և Մոլլաշալու թաղերու: Թուրքաց մասը գետի ձախ կողմը, բաժնուած է Երեւանցոց, Թուրքաց, Բաղրանչիլար և Նորաշէն թաղերու: Երեւանցոց թաղի մէջ կը գտնուին Ս. Գեորգ եկեղեցին, քաղաքային ժողովարանը, գեղեցիկաշէն պալատներ, հիւրանոցներ և ամենալաւ խանութներ: Թուրքաց թաղի մէջ՝ ընդարձակ հրապարակը, մզկիթը, ևն: Բաղրանչիլար թաղը կը տարածուի Թուրքաց թաղէն դէպի արևմուտք մինչև այգիներու մէջ, որոյ բնակիչք մեծաւ մասամբ Թուրքեր են: Նորաշէն թաղը կը գտնուի մեծ հրապարակէն դէպի արևմտահիւսիս՝ Թուրքաց թաղի հետը: Այս տեղ են Ս. Աստուածածակ եկեղեցին և Ս. Սարգսի ուխտատեղին: Եթէ համեմատենք Հայոց և Թուրքաց մասերը, կը տեսնենք որ Թուրքաց մասը կը բռնէ ամենալաւ, հարթ տարածութիւնը, իսկ Հայոցը աւելի բարձր և համեմատաբար աւելի վատ տեղը, բայց փողոցներն, շէնքերը և մաքրութիւնը դիտելով, Հայոցը աւելի

բարձր և գերազանց է: Երեւանցոց և Քիլիսաքեանդ թաղերու փողոցները կանոնաւոր և լայն են, իսկ միւս թաղերը, բաց ի մի բանիսէն, ընդհանրապէս անկանոն են և նեղ:

Գանձակի զարդը մեծ հրապարակն է, որ կը տարածուի Թուրքաց թաղի մէջ, զլիսաւոր մզկիթի առջև. ունի մօտ 150 սոսժէն երկայնութիւն և 40ս. լայնութիւն. բարձր, հարիւրամեայ շինարի ծառեր շարուած են շորս բոլորը, մէջ տեղը խոխովալով կը վազէ շորս ակով ազրիւր, բազմաթիւ խանութներ կը շրջապատեն հրապարակը. իսկ հազար ու մէկ տեսակ մրգեր և ուտելիղէններ, որ անկարգ ու անկանոն կերպով դիւրած են ծառերու ստուերներու տակ, հրապարակին արասկարդ գեղեցիկութիւն կու տան: — Գանձակի երկրորդ սրանչիլէքը փողոցներու երկու կողմը բարձրացող հին շինարի ծառերն են, որոնց մօտէն կը հոսեն ջրեր: Այս շինարիները չափազանց բարձր և հտտա են, մինչև անպամ անոնցմէ միոյն փուճ կոճղի մէջ կօշկակարի մը խանութ է բացուած. ձիաքարշի դիժն քաղաքիս փողոցներէն անցնելու պատճառաւ ստիպուեցան կարելու այդ ծառերը: Հասարակաց այգին կամ պարտէզն ևս զարգարուած է բարձրուղէ շինարի ծառերով:

Քաղաքիս մօտ քարահանը շինելով, շէնքերը ընդհանրապէս ազիւսով կառուցուած են: Տներէն նորերը բաւական կանոնաւոր, գեղեցիկ և բարձր են, իսկ հները, մանաւանդ Թուրքացը անկանոն, աճեւ և ցած են: Հասարակաց շինածոց մէջ ամէնէն հինը Թուրքաց զլիսաւոր մզկիթն է, որ նշանաւոր է նաև ճարտարապետական տեսակէտով: Ծինուած է Շահ Աբ ժամանակ, և կը զբոսնուի հրապարակի հարաւային ծայրը. շրջապատուած է պարսպով, որոյ զլիսաւոր դրան երկու կողմը կը բարձրանան կրկին մինարներ. գաւթի մէջ կայ շատուան, հոս է Թուրքաց տղայոց դպրոցը: Թուրքերը ունին նաև ուրիշ երկու աննշան մզկիթներ:

Շահ Աբասի մզկիթէն վերջ քաղաքիս ամենահին շէնքն է Հայոց Ս. Յովնանէս Մրկրայի մայր եկեղեցին, որ կը գտնուի Քիլիսաքեանդ թաղի մէջ: Կառուցուած է քարակիր՝ միջակ բարձրութեամբ: Ունի վեց միւս



պաղաղ և բազմաթիվ սխնեհար, կանանց վերահաստան, երկու գուռն արեւմտեան և հարաւային կողմերը, մէկ աւազ և չորս միմեանց վրայ շինուած փոքր խորաններ: Եկեղեցւոյ շինութեան թուականն է ՌՁԲ (= 1633), ինչպէս կը տեսնուի հարաւային որմի վրայ արեւի ժամացոյցի տակ եղած արձանագրութեան մէջ: Եկեղեցւոյս զիմացը կայ գաւիթ փոքրիկ կաթուղիկէով որ է միանդամայն դանդակատուն: Ինչպէս արձանագրուած է, գաւթի շինութիւնն եղած է 1816 թուին, Մահաբի Տէր Գէորգ Տէր Յովհաննիսեանի ծախքով: Իսկ կաթուղիկէի արձանագրութիւնն կը յայտնէ, թէ շինուած է 1862 թուին, Մահաբի Աղաջան խաչատուրեանի սեփական արդեամբ: Այս եկեղեցւոյ գաւթի մէջ թաղուած են Գանձակի գրեթէ բոլոր նշանաւոր մարդիկը, ինչպէս Աղուանից «Սուրբ Ներսէս» կաթուղիկոսը հարաւային խորանի տակ, 1742ին: Մեյիբ Հաթմաի որդին՝ Արէլ Նոյն տեղը՝ 1776ին. Եղիշէ վարդապետ (1757) գաւթի մէջ, ինչպէս նաև հետեւեալները. Չարարեղցի Աթմանաս վարդապետը (1764), Երուսաղեմի նուիրակ թոխաթցի Ֆարաւան վարդապետը (1786), Մուսթ անապատի առաջնորդ Յարութիւն վարդապետը (1800), Ս. Ստեփանոս նախապիկայի միարան Ստեփանոս վարդապետը (1834), և այլն: Արաքուստ գաւթին արեւմտեան գրան առջև ամիրու փուած է Գաղաթիբ Ղարաբաղի գրքի զիցցողներէն Գալի-Մահրասայի մարմինը (1796), հանդերձ տապանաքարով և արձանագրութեամբ: Երկրորդ զիցցող մի ևս թիւրքի-Արզումանը (1796): — Ս. Յովհաննէս և կեղեցին ունի չորս քահանայ, 14 հաս ձեռագիր աւետարան, և չորս մատուցներ՝ որք են Տեառնեղբոր Յակոբոսի, Յովհաննու կարապետի, Պանտալիոն բժշկի և Ս. Մինասի. ասոնք ամիրոփուած են արձանագրութեամբ մէջ: Այս եկեղեցիս բաւական հարուստ է, և ուրիշ անշարժ կալուածներէլ գատ, ունի նաև բազանիք մը, որոյ արդինքը յատկացուած է ծխական երկուսուսուսմարանին, որ ունի մօտ 350 աշակերտ և աշակերտուհի: Հայոց երկրորդ եկեղեցին Ս. Լուսաւարիէ՝ կը գտնուի Գիլի-

տանքեանդի վերի մասին մէջ գեղեցիկ շրջապարսպով: Հոյակապ շէնք է և ընդարձակ, հաստատուած չորս սխնեհար վրայ, գմբէթն աւարտած չէ: Բացի լուսամտաներու մեծութենէն սրոնք նեղ ու երկար են, եկեղեցւոյս ձեւն և մեծութիւնը նման է Երուսաղէմի Հայոց Ս. Յակոբեանց վանքին: Ունի երեք գուռն՝ հարաւային, արեւմտեան և հիւսիսային կողմերը, խորքանշիւր գուռն արաքուստ ունի փոքր և գեղեցիկ գաւթի: Եկեղեցւոյս երկայնութիւնն է 30½ մետր և լայնութիւնը գրեթէ 20 մետր: Արեւելեան որմի վրայ արաքուստ կայ արձանագրութիւն, յորմէ կը յայտնուի, թէ եկեղեցւոյս հիմքը դրած են 1853 թուին և օծած 1869ին: Այս եկեղեցիս ալ ունի երկուսուսուսմարան մը, մօտ 200 աշակերտներով: Հայոց երրորդ եկեղեցին Ս. Գեորգ՝ հողաշէն և անշուք, կը գտնուի գետի ձախ կողմը, Մեծ-Շուկայի մօտ: Եկեղեցւոյս մէջ կը պահուի Ս. Գէորգի մատուցն, զոր բերած է ծխական ժողովուրդը 1814ին Երեւանէն գաւթած ժամանակ: Չորրորդ եկեղեցին Ս. Աստուածածիւն՝ հիմնուած է քաղաքի հիւսիսային կողմը Նորաշէն թաղի մէջ: Եկեղեցւոյս ծխականները գաղթած են Երեւանէն 1712ին, և կառուցած են քարուկիր, բարձրաշէն և հոյակապ եկեղեցիս 1713 թուին: Եկեղեցիս ունի մեծատառ ձեռագիր աւետարան մը՝ գրուած 1322 թուին. ունի նաև թագկոս ստաբեակի մատուցն՝ արձանագրութեամբ խաչի մը մէջ հաստատուած: — Այս եկեղեցիներէն գատ Հայք ունին նաև Ս. Աստուածածիւն, Ս. Սարգիս և Ս. Կիրակոս և Յուշիտա ուխտատեղիները, որ կիրակի և ասոնի օրեր կը հաւաքուին բազմաթիւ ուխտաւորներ: — Ռուսներն ևս ունին բաւական հոյակապ, փոքրիկ եկեղեցի մը:

Միւս շինութեանց մէջ նշանաւոր են նաև հանդակապետի ասուր, ազայոց զիմնաղը, Յիւրալովի հիւրանոցը, քաղաքային ժողովարանը, Հայոց յաջորդարանը, արհեստանոցայն զպրոցը, և այլն: — Քաղաքիս ջուր կը մատակարարէ Պ. Պետրոս Նանասեանէ Գիլիստաբեանց թաղի մէջ շինուած աղբիւրն, ինչպէս նաև մեծ հրատարակի մէջ պարսկի մը շինած աղբիւրը. Նորաշէն թաղը կը գործ-



ածէ Ջրհորի ջուր: Գանձակի մէջէն կ'անցնի ձիաքարշ երկաթուղի, սկսեալ Փիլիսաբեանդի վերի մասէն մինչև շոգեշարժ երկաթուղոյ կայարանը, որ կը գտնուի քաղաքէն դէպի հիւսիս 3 վերստ հեռուորութեամբ: Վաղաքս շրջապատած է այգիներով, որոնց մէջ նշանաւոր է Էջմիածնապատկան ընդարձակ այգին: Գանձակի բնակիչները 1886 թուի աշխարհագրի համեմատ են 11543 ար. և 8751 իգ. ի միասին 20294 հոգի, յորոց 8944ը Հայք են, 11139 Թուրքք, և մնացածը Ռուսք, Վրացիք, և այլն: Իսկ 1897 ի միօրեայ աշխարհագրի համեմատ, քաղաքիս բնակիչները աճեր են և եղեր 18238 ար. 1485 իգ. ի միասին՝ 33090 հոգի: Գանձակի մէջ ամփոփուած են համանուն նահանգի և գաւառի բոլոր նահանգական և գաւառական վարչական հիմնարկութիւնները: Այս անգ է նաև գաւառին հոգևոր կառավարութիւնը, որ ենթարկուած է վրաստանի և իմերէթի առաջնորդական թեմին: Վաղաքիս պատմական դէպքերն կը յիշենք ի ստորև, նոյն գաւառի նկարագրին մէջ:

ԳԱՆՁԱԿ գաւառը իւր այժմեան սահմաններով կը բռնէ հին Ռուսեաց աշխարհի Շահաշէն, Գարդման և Արցախի փառիսոս գաւառները: Ասոր մէջ կը մտնեն նաև Ջրաբերդի Գիւլիստանը, բաց ի Թալիշ գիւղէն, Գիւլիստան բերդէն և Հոսեկայ վանքէն: Այս գաւառն ալ, ինչպէս կ'աւանդէ խորենացին, վաղաքշակ Ա Արշակունի թագաւորի ժամանակ ենթարկուած էր Սիսական Առան կուսակալին, բայց յետոյ անցաւ Աղուանից թագաւորութեանը: Սակայն Հայք շուտով կրկին տիրեցին գաւառիս, ինչպէս կ'ըսէ Բուզանդ (Է. ԺԳ). «Էւ թափէր (սպարապետն Մուշեղ) ի նոցանէ (յԱղուանից) բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՌուսի, զՇահաշէն և զձորն Գարդմանայ, զԿոզլթ, և այլն»: Խորենացոյ ժամանակ Աղուանները կրկին կը տիրեն գաւառիս, բայց Սմբատ Ա (892-914) նորէն յետ կ'անուս, իսկ իւր որդին Աշոտ Բ (915-928), որ շատ կը սիրէր Ռուսեաց աշխարհը, երբեմն պատերազմով և երբեմն սիրով նուաճած կը պահէր զայն: Իններորդ դա-

ռու մէջ այս գաւառս ևս, ենթակայ եղեր է Բուզայի արշաւանքին, որ 855ին եկած է Գարդմանցոց գաւառը, ուր փախած էր Վասակ Սիսականը ջարդելով Բուզայի զօրքերը և անոնց զօրապետը իւր ձիու սարերու ասկ կոխկռակելով: Ինչպէս այժմ, գաւառիս նշանաւոր քաղաքն է Գանձակ, նոյնպէս ի հնումն անուանի եղած է Հին Գանձակը: Մոլոխ



207 • Գանձակի զխաւոր մզկիթի մուտքը:

կազանկատուացի լուսծի (էջ 265) համեմատ, Պաղատի ամիրայի հրամանով և արքունի գանձով 836 թուին Շահաշէն գաւառը գաւով արար խաղը-Փասկոսի որդին, կը հիմնարկէ Գանձակ քաղաքը: Քիչ ժամանակի մէջ Գանձակը կը գտնայ Աղուանից մայրաքաղաք, և հոն կը փոխադրուի Աղուանից կաթողիկոսարանը: Տասներորդ դարու վերջերը Փալատն ամիրան կը տիրէ Գանձակի և իւր յաջորդաց ձեռքը կը մնայ մինչև 1088 թուականը, երբ Պարսից Մեւլիք շահի հրամանով Պուզան սպարապետը պարսպի մէկ կողմը քանդելով քաղաքին կը



տիրէ և իւր կողմէն կուսակալ կը նշանակէ: 1139 թուին սաստիկ երկրաշարժէ Գանձակը կործաներ է, շինութեանց փլատակներու տակ թաղելով բնակիչները: Նոյն ժամանակ վրաց Գեմեաթէ թագաւորը, Գաւթի և Գէորգայ հայրը, եկեր և տարեր է քաղաքի գոները իւր աշխարհը: Կիրակոս. էջ 65. վարդ. Բարձր. 162: Վերստին կը շինուի Գանձակ ձիշղ իւր փլած տեղւոյն վրայ: Սակայն 1235 թուին գարձեալ կ'աւերի. թաւ թարները կը յարձակին Մուղանի գաշտէն, բնակիչք ի սկզբան կը սլաշապանուին, բայց երբ թշնամիք մեքենաներով սարխոսները կը քանդեն, քաղաքացիք յուսահատած իրենց ստացուածքը գեանի տակ կը պահեն և կրակ տալով աներուն կը փախչին: Թաւթարք ներս կը խոտեն սպաննելով մնացածները և խնայելով միայն մանկանց. յետոյ գեանի տակ պահուած զանձերն գտնելով և քաղաքը թաւանելով կը մեկնին: Չորս տարի այնուհետև ամայի մնալէն վերջ, Չարմազան նորէն քաղաքը շինել կու տայ: 1239ին շինուած Գանձակը 1606ին կը կործանէ Շահ Աբաս Ա., կտորելով բոլոր քրիստոնեաները, և հին քաղաքէն մի քիչ հեռու կը կառուցանէ այժմեան Գանձակը: Տակաւին կ'երևին հին քաղաքի աւերակները նորէն բաւական վար գետակի աջ ու ձախ փոխու վրայ: Կը տեսնուին շուկաներու, տներու, բերդերու, աշտարակներու մնացորդներ, ինչպէս նաև մի քանի կիտակործան կամուրջներ: Գեո կը մնայ Հայոց գմբէթաւոր մատու մը, որուն այժմ Գեօղ-Իսլամ անունը կու տան այլազգիք և իրենց ուխտատեղի բրած են: Հայկական աւանդութեան համեմատ, այս մատարան մէջ թաղած են Հայք բնիկ Գանձակեցի խոսրով նահատակն, որ՝ զՔրիստոս չաբանալուն համար նահատակուեր է: Իսկ սլաբական աւանդութիւնն կ'ըսէ, թէ սա մահմեդականութիւն ընդունելուն համար նահատակուեր է քրիստոնեաներէն: Գեօղ-Իսլամ մզկիթի ժամանակաւ հայկական մատուան կամ եկեղեցի լինելուն ապացոյց են գաւթի մէջ գտնուած գերեզմանները, և գմբէթի վրայ կանաչագոյն խաչաձև վարդերը: Հին Գանձակի մէջ ծնած և սնած են Մխիթար Գոշ և պատմաբան Կիրակոս

Գանձակեցին: Նոր Գանձակն ունեցեր է ուսուցարսկական պատերազմներ, նախ 1804 տարոյ գեղեմներ Յին Ռուսները կը յաղթեն և կը տիրեն քաղաքին: Երկրորդ անգամ 1826ին պատերազմով Պարսիկները բռնորովին վերջնական կերպով կը յաղթուին, և Ռուսները ի պատիւ իրենց Եղիսարէթ կայսրուհւոյն զայն կ'անուանեն Եղիսարէթապոլ: Այս վերջին պատերազմի մէջ Հայերէն նշանաւոր հանդիսացան ինչպէս իշխան Մատաթոյր, նոյնպէս և հայ հեծելազունը, Մանուշարեան Գրիգոր եպիսկոպոսի առաջնորդութեամբ: — Գանձակ գաւառի մէջ եղեր են հետեւեալ հայ մելիքութիւնները, Մելիք Բէկլարեան, Մելիք Մնացականեան, Մելիք Շահնազարեան և Մելիք Ռոստոմեան: Ասոնցմէ առաջինը իշխեր է Կիրմիկոյր կամ Գիւլիստան մահալին, որ նախնի բաժանմամբ կ'ինկնար Ղարապաղի խանութեան մէջ: Այս մելիքութիւնը կը կազմէր խամայի (հինգ) մելիքութիւններէն մին, որ ի սկզբան բռնորովին անկախ եղած է և յետոյ ենթարկուած Ղարապաղի խաներուն: Միւս մելիքութիւնները կը գտնուէին Գանձակի խանութեան մէջ, և գրեթէ շարունակ Գանձակի խաներու ձեռաց տակ են եղած: Այս մելիքներու պատմութեան փափաքողք կրնան ծանօթանալ կարգաւով Ելալայեանցի Գանձակի գաւառ գրքի Ա մասի 11-61 էջերը: — Նշանաւոր էր ի հնումն Գանձակի բերդը, որ կը գտնուէր քաղաքի հիւսիսային կողմը, հարթ դաշտի վրայ: Բազմաթիւ պատերազմներու ասպարէզ զանալէ վերջ, 1870 թուին հիմնովին քանդուեցաւ Ռուսաց կառավարութեան կարգադրութեամբ: Այժմ այս տեղ շինուած են և կը շինուին զանազան շէնքեր: Գանձակի բերդը խիստ ընդարձակ էր, սենք վեց աշտարակ և տարածութիւնն մէկ քառակուսի վերսալն աւելի էր: Այժմեան Գանձակ գաւառը կ'ինկնայ 41°9' և 40°4' հիւսիսային լայնութեան և 63°7' և 64°60' արեւելեան երկայնութեան մէջ: Տարածութիւնն է 8398, 2 քռ. վերսակամ 9557, 3 քռ. հազարամետր: Այս թիւէն կը յայտնուի որ Գանձակի գաւառը Անգրկովկասի բոլոր գաւառներէն մեծագոյնն է, բաց ի Բաղու նահանգի Չուատու գաւառ



սէն: — Գաւառիս հարաւային և հարաւ-ա-  
րեւմտեան սահմանները, գրեթէ 125 վերստ  
երկայնութեամբ կ'երկնայ Հայ-Պանձակեան  
լեռնաշղթան, Շահ-տաղէն մինչև Մասւ լե-  
ւոր: Այս լեռնաշղթան կը ծառայէ իբրև  
ջրաբաշխ այն գետերուն, որք կը լծափին  
մէկ կողմէ կուր գետը, և միւս կողմէ Սե-  
ւանայ լիճը: Հայ-Պանձակեան լեռնաշղթ-  
թայի միջին բարձրութիւնը կը հասնի 9600' ի-  
ւր գագաթներէն նշանաւոր են Ղարա Ար-  
խաւ (10084'), Սառանախաւ, Օղորոջա  
(10936'), Գիկաղ-տաղ (11057'), Քեկեօլ-  
շաղի, Բագիրկեան, Ղաւիշ (12263') և  
Մաս (11219'): Այս գլխաւոր լեռնաշղթ-  
թայէն զատ կան նաև ուրիշ փոքր լեռանց  
շղթաներ, յորոց սմանք ունին նշանաւոր գա-  
գաթներ, ինչպէս են՝ Ղոչղարա (11035'),  
Հասան Դանա, Քեպխաւ, և այլն: Գլխա-  
ւոր լեռնաշղթայի Պանձակի նայող կողմը,  
կը ներկայացնէ անտառէ զուրկ ալպեան եր-  
կիր. նոյնպէս անտառէ զուրկ են կողմնակի  
ծիւղաւորութեանց վերին մասերը, որոնք կը  
կազմեն ամանային ընդարձակ արօտանե-  
ղինք: Անտառներով ծածկուած են ընդ-  
հանրապէս լեռնաշղթաներու և անոնց ծիւ-  
ղերու լանջերը. գետոց և գետակներու հո-  
վիաները, ինչպէս նաև կուրի գետափը: Պու-  
զի, Փալան Թէօքէնի և Մուրազայի շղթա-  
ները, որոնց բարձրութիւնները աննշան են,  
կը ներկայացնեն անտառէ զուրկ ձմեռնային  
արօտանեղինք: — Հայ-Պանձակեան լեռ-  
ները կազմուած են կրանիտի և սորփիւրի  
տեսակներէ. մասնաւորապէս հիւսիսային կու-  
ղերու մէջ առատ կը գտնուին կաւձային  
կազմութեամբ կրաքարեր: Լեռան ստորոտ-  
քը կազմուած են նեպտունայլուանական  
ծալումն ունեցող հրաբուլիներէ, կարծր կրա-  
քարէ, են: — Գաւառիս գետերէն գլխաւորն  
է կուր, որ թէպէտ մօտ 125 վերստ ըն-  
թացք կ'ընէ գաւառիս մէջ, բայց իւր ան-  
կողմին խոր լինելով, չեն կարող բնակիչ-  
ները ստգման համար ջուր անուլ: Միւս  
գետերն են. Ինձա-լայ, Ղարա-լայ, կուրակ,  
Պանձակ, Շահքոր, Զակաւ, և այլն: Գան-  
ձակ գաւառն ունի նաև մի քանի փոքր լճեր,  
որք են՝ Գեօզ-կեօզ, Աստծոչ ծով, Սիշիշկե-  
կածով կամ Զալի-կեօզ:

Գաւառս շատ հարուստ է հանքերով, որ  
որ կը գտնուին նորանոր հանքերու տե-  
ղեր, և ժողովուրդը, կարծես հանքային տեղ-  
քով բնուած, հանքեր գտնելու համար կ'ինկ-  
նայ սար ու ձոր: Հանքերէն շատ քիչերը կա-  
նոնաւորապէս կ'արտահանուին, և դեռ նոր  
կ'սկսուին ընկերութիւններ կազմուիլ, ա-  
նոնց մշակութեան համար: Հանքերու տե-  
սակներն են՝ քիչ քանակութեամբ ոսկի և  
արծաթ, խիստ առատ պղինձ, երկաթ, պող-  
լեղ, նաւթ, և այլն: Այս հանքերու վրայ  
աշխատողներն են բազմութեան կարգաւ,  
պարսիկներ, թաթարներ, հայեր, սուսներ,  
գերմանացիներ, յոյներ, և այլն: — Գան-  
ձակի գաւառն շատ հարուստ է նաև բուսա-  
կանութեամբ. կլիմայի և հողի յատկութեան  
տարբերութիւնները պատճառ կը գտնան  
բուսականութեան բազմազանութեան: Լա-  
լայեանց՝ կը յիշէ գաւառիս 6/4 տեսակ գա-  
նազան բուսոց, խոտեղինաց և ծառոց ա-  
նունները: Հովիտները բնուած են պար-  
ակներով, ուր կը մշակուին խնձորենի,  
սանձենի, թթնի, գեղձի, նոննի, սերկե-  
ւիլի, շագանակի, և այլն: Գաշապին ցած  
մասերը տարածուած են խաղողի ընդարձակ  
այգիները, որ առատութեամբ կու տան խա-  
ղողի բազմաթիւ տեսակներ, որոց անուանք  
են. Լկենի, Թաւրիղենի, Տեղացի, ասոնց-  
մով ընտիր գինիներ կը շինուին. Իծապառկ  
կարմիր և սև, Կանաչկենի և Մարանկենի՝  
ասոնք տաւելու խաղողներ են: Գաւառս զուրկ  
չէ նաև դանազան տեսակ կենդանիներէ և  
թռչուններէ, վերջիններէն յիշենք սարեակ,  
արտոյտ, ծիծեռնակ, պիրող, ճարեկ, սոխակ,  
խաղալանիկ, անծեղ, խածկափի, յոզոսլ,  
և այլն: Այս թռչունները կը պատկանին  
երգեցիկներու խմբին, և ոչ միայն օդաւէտ  
են իրենց երգերով մարդս զուարճացնելով,  
այլ և կը սննջացնեն քանի մը փոսակար  
միջատներ, թրթուրներ և ձուեր: Անտառային  
աւելի մեծ թռչուններէն նշանաւոր են՝ կկու  
և կացահարի քանի մը տեսակները: Վի-  
շատիչներէն յիշենք սղիտակազի արծիւ, սև  
անոզ, շահէն, և այլն: Ընտանի կենդանի-  
ներէն կան՝ կով, գոմէշ, ձի, էջ, ջորի, ուղտ,  
ոչխար, այծ, խոզ: Իսկ վայրիներէն՝ աղուէս,  
գայլ, արջ, եղջերու, նապաստակ, և այլն:



Փանձակ գաւառի մէջ կը բնակին գլխաւորապէս Հայք, Թուրքք, Ռուս ազանդաւորներ և Գերանացիներ. վերջին երկու ազգերը գաղթականներ են: Հայոց մեծագոյն մասը բնիկներ են, իսկ փոքրագոյնը՝ գաղթականներ Պարսկաստանէն, Զուանշիրի, Երևանի և Ղազախի գաւառներէն: Գաւառիս Հայոց զգեստուց, զարդուց, զանազան սովորութեանց, կերակուրներու, հիւանդութեանց, դեղոց, և այլն, վրայ մանրամասն կը խօսի Լալայեանց իւր Փանձակի գաւառ գրքի Բ հատորի մէջ: — Բի բանի խօսք ևս Փանձակի կուսակալութեան կամ նահանգի վրայ, որոյ տարածութիւնն էր վերջին հրատարակութեանց համեմատ 44436 քառ. հազարամետր. և ունէր 888954 բնակիչ, ըստ 1897 տարուայ վիճակագրին: Բնական բերքերէն 1891 տարուայ մէջ հանած են 39000 տակառաչափ զանազան հանքեր: Երկիրը յառաջ կը բերէ ամէն տեսակ արմըր և բարեխառն կլիմայի ամէն տեսակ պտուղներ: Կլիմայի մշակութիւնը աւելի տարածուած է Փանձակի, Արաշի, Ղազախի և Նուխի գաւառաց մէջ. 1892ին 166 գիւղեր 184 հարիւրակալ տարածութեան վրայ 1391 անկադրութենէ, ստացած են 332 տակառաչափ ծխախոտ: Այլիներն աւելի տարածուած են Փանձակի գաւառի մէջ, և գրեթէ տարուան մէջ 80000 հարիւրակալ գինի կը շինուի: Շերամարտութիւնը խիստ շատ տարածուած է Փանձակի նահանգի մէջ. 540 շերամոյցներ 1886—1890 տարիներու մէջ միջին հաշուով սուած են 1565 տակառաչափ բոժոժ (որուն կէսէն աւելին Նուխի գաւառէն): Մատուտակի մշակութիւնը խիստ շատցած է վերջին ժամանակներու. ամէնէն աւելի տարածուած է Փանձակի, Արաշի և Զուանշիրի գաւառաց մէջ, և տարին յառաջ կուզան 35000 տակառաչափէն աւելի արմատներ, որոնց հիւթն հանելով տեղական գործարանաց մէջ կը զրկուի Հիւսիսային Ամերիկոյ Միացեալ Նահանգները: Փանձակի պտուղներն, մանաւանդ դեղձն, տանձն և նուռն խիստ անուանի են, նոյն իսկ նահանգէն դուրս: — Անասնապահութիւնն ևս խիստ զարգացած է նահանգիս մէջ, 1890թուին կը հաշուէին 69870 ձի,

3878 ջորի, 31406 էշ, 66797 գամէշ, 393612 եղ, 1236502 ոչխար, 745 ուզա, 65555 այծ, 33966 խոզ: Նշանաւոր են Ղարապաղի ձիերն, որոնք կը գանուին նահանգին հիւսիսային կողմը: Մեղուարուծութիւնն խիստ քիչ տարածուած է, և այն ալ աւելի լինանականաց մէջ: Անասնները կը բնեն 933000 հարիւրակալ տարածութիւն. որոնց մեծամասնութիւնը կեդրոնացած է Ղազախի և Զանգեզուրի գաւառաց մէջ: — Արհեստներու վերաբերեալ մեծ գործարաններ քիչ կան, և երկրին արհեստնոյները փոքր են և աւելի անական: Այս արհեստանոցաց մէջ կը պատրաստուին բրդեղէն և մետաքսեղէն սպրանքներ: 1893ին կային միայն 63 մեծ արհեստանոցներ, որոնք առաջ բերին մօտ 4600000 ֆրանկի սպրանք. 1891 տարուայ մանրամասն վիճակագրութեան համեմատ, ամբողջ նահանգին մեծ ու փոքր գործատանց թիւն կը հասնէր 1547ի, յորս կ'աշխատէին 7795 աշխատաւորք, և տարեկան արդիւնքն կը հասնէր մօտ 8 միլիոն ֆրանկի: Այս գործարաններն են՝ շերամոց, զաւարան, բրտանոցք, կաշույ, մետաքսեղինաց, ծխախոտի, սճառի, հալոցք, են.: Փանձակի արտաքին վաճառականութիւնն բաւական բանուկ է և օր աւուր զարգացման մէջ. 1890ին նահանգէն դուրս զրկուեցան 55000 տակառաչափ սպրանք, յորոց գլխաւորներն էին. արմուիք, պտուղք, գինի, մատուտակ, բնկոյզ, պղինձ, բուրդ, խաղող, գորգ, փայտ, մետաքս, կաշի, բամբակ. իսկ ներս բերին 42000 տակառաչափ սպրանք, յորոց գլխաւորները էին. քարիւղ, աղ, շաքար, երկաթ պողպատ, և այլն: — Արցախ, 35—53, Փանձակի գաւառ, Ա 5—10 և 61—94, Եւ այլն:

ԳԱՆՁԱԿ կամ ՔԷՍՍԷ—ՄԷՉՄԷՏ. — Գիւղ Սիւնեաց Գեղաբընուի գաւառի մէջ, կը կարծուի հին Գանձաղանտառ գիւղը: Անցեալ զարու մէջ բարգաւաճեր է գիւղս նոր գաղթող Հայերով. այժմ բնակչաց թիւն 1600ի կը հասնի, բաժնուած 150 տան: Աւելի հին եկեղեցի մը Ս. Փետրոճ բոլորովին նման Նորատուսի եկեղեցւոյն, կարծես մի և նոյն վարպետ է և մի և նոյն ժամանակ կառուցուած



լինէր. զմբէլմն կործանած լինելով, նոր գաղթականներէն փայտայարի ծածկուած է: Ունի մի քանի արձանադրութիւններ, որոց հնագոյն թուականն կը հասնի 1513 տարւոյն: 1889 թուին, Արսէն Զարարեան՝ իրեն ծախքով եկեղեցւոյն շորս կողմը պարիսպ բաշեց. և ուսնիներով զարդարուած հովանաւոր ճեմելիքներ պատրաստեց: — Սխական, 42:

ԳԱՆՁԱԿ. — Աւերակ զիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ:



208. Քանդակ Գամծակ զիւղի եկեղեցւոյն:

ԳԱՆՁԱԿ կամ ԳԱՆՁԻ. — Գիւղ Սիւնեաց Գողմն գաւառի մէջ, այլազգիներէն կը կոչուի Գանսայ կամ Գեանսա: Գիւղս Միաբանողաց զիւղերէն ամենէն հեռագոյնն է: 1512ին կը յիշուի Գանձակի զիւղապեան (Մէլիք) Սիլուան (Siluan) անուամբ մէկը: Ժէ. (1603) զարու սկիզբը ունէր 70 տուն, 200 հոգի չափահաս և 150 մանկուանք, և 20 տուն մահամտականաց: Գիւղէս քիչ հեռու կար փոքր վանատուն մը և եկեղեցի յանուն Ս. Առաքելոց Անդրէի և Յակովբայ: Եոյն զարու կիսուն 1 տուն և 5 հոգի մնացած էին Միաբանողներէն, և եկեղեցին կը կոչուէր յանուն Տիրամօր. 1725 ին ալ կը յիշուի այս վանաց հայրն Տէր Պետրոս: Այժմ զիւղս բոլորովին այլազգարնակ է և

ունի 28 տուն: Գանձակայ եկեղեցւոյ մէջ կայ թիւ 208 քանդակն, որ կը թուի խաչի պատուանդան, վասն զի վրան գրուած էր 1476 ին. ԽԱՆԱ ՅԱՆԱՍԱԿ ԹՎ. ՋԻԵ: — Սխական, 320-321:

ԳԱՆՁԱԿ. — Հայարնակ զիւղ Վասպուրականի Ռշտունեաց գաւառի մէջ, Կարեկայ վանքէն 4 ժամ հեռու ծովակի եզերքը: Ունի Ս. Աստուածածին եկեղեցի մը և մօտ 50 տուն բնակիչ: Գիւղէս քառորդ ժամ հեռու, լերան մը կողմն վրայ կառուցուած է Լուսավորող Ս. Սահակ փոքրիկ և անշուք մեծանատանը: Այս տեղ, զեռ շէնք շեղած, ազօթելու կու գար Կարմրակայ վանաց միաբան ոմն ճգնաւոր, Սահակ անուամբ. և որովհետեւ ինքը միականի էր, կը խնդրէր Տիրամօրէն որ միւս աչքին ալ լոյս տայ՝ որ զինքը տեսնայ, և այսպէս փափաքով կը տեսնայ զՏիրամայրը, և կոյր աչքը կը լուսաւորի, իսկ լուսաւորը կը խաւարի: Այդ զէպքէն մինչեւ ցայժմ այս տեղ ուխտասեղի գարձած է և բոլոր աչքի ցաւ ունեցողները հոս կը գիմեն: — Տեղոր. Հայս, 252:

ԳԱՆՁԱԿ. — Հայարնակ զիւղ Վասպուրականի Արճիշակովիտ (Ականց) գաւառի մէջ: Ունի Ս. Աստուածածին եկեղեցի մը: Գիւղիս մօտ է, զէպ ի հիւսիս Կենսափորի կամ Գլինաբերոյ վանքը:


ԳԱՆՁԱԿ. — Գիւղ Աղուանից Կոկիտոն գաւառի մէջ, կառուցուած է գողաւոր սարահարթի մը վրայ: Օգն և կլիման լաւ են, բայց ջուրը վատ. բերքերէն նշանաւոր է ցորենն: Բնակիչք ամբողջ հայ են 1037 հոգի, բաժնուած 144 տան. գողթած են Գիւղակի և Վարանդայի Հատրութ, Թաղլար, Կինկի, Կինի և ուրիշ զիւղերէ: Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի, կառուցուած 1842 ին ժողովրդեան ծախքով. երկրաշարժէ փլասուած է: Ունի նորաշէն ուսումնարան, որ կառուցուած է Գանձակիս և Թուրի զիւղի հասարակութեան ծախքով. այս զիւղերը իրարմէ միայն կէս ժամ հեռու են: Ուսումնարանի մօտ եղած հին հանդատարանի խաչքարերու ձեւն, հետախոյզներու բռածի համեմատ, կը վերաբերին ութերորդ զարու: Ասոնցմէ միոյն վրայ գտած են Հայկական ՄԹ (== 760) թուականը: — Գիւղիս հա-



բաւային կողմը ձուածեւ բլրի մը զագաթը կայ Սուրբ Գանձակ անուամբ ուխտատեղի, ուր կը յաճախեն բազմաթիւ ուխտաւորներ: Սեխտատեղոյո շուրջը ամփոփուած են շատ հին ննջեցեալներ, ինչպէս կ'երևի հին աւ պանարարեքէն: — Աղոռանք, 195—196:

ԳԱՆՁԱԿ. — Այս անուամբ վերլն և Ներքին կրկին գիւղեր կան Սյրարատայ ճակատք (Սուրմասի) գաւառի մէջ: Սակայն երկուքին ևս բնակիչք այլազգիք են:

ԳԱՆՁԱՍԱՐ. — Արցախի ամենէն հոշակաւոր վանքս կը գտնուի խաչեն գաւառի մէջ, Գանձասար լեռան հարաւային ստորոտը, գեղեցկագիր և տեսարանաւոր բարձրաւանդակի մը վրայ: Երբեմն վանքին մօտ կար նոյն անուամբ գիւղ մը, որոյ բնակիչները կը բնակին այժմ վանք գիւղը. մինչև ցայժմ կը նշմարուին Գանձասար գիւղի մնացորդները: Վանքս իւր անունն առած է Գանձասար լեռնէն, որ այս կողմանց բնակչաց պատմածի համե



209. Գանձասարի վանքը:

ԳԱՆՁԱՀԱՆՔ. — Կը յիշուի Շիրակայ (Սյրարատ) Հոռոմոսի վանաց արձանագրութեան մը մէջ:

ԳԱՆՁԱՀԱՆՔ. — Հայրենակ գիւղ Կարնոյ առաջնորդական վիճակի մէջ: Ունի 300ի չափ բնակիչ և Ս. Կարապետ եկեղեցի մը: — Այս անուամբ գիւղ մի ևս կայ Օլթի գաւառի մէջ, որ այժմ տաճկարնակ է:

ԳԱՆՁԱՂԱՆՏԱՌ. ՏԵՍ ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:

մատ, արծաթի հանք ունենալուն համար այսպէս կոչուած է: Այս հոշակաւոր վանքի հիմնարկութեան ժամանակն յայտնի չէ, բայց Ջալալ-Գօլա իշխանէն աւելի առաջ եղած է, որ յամանց կը կարծուի անոր շինողն, վասն զի Սիւնեաց պատմչէն կը յիշուի ժգարու կիսուն, և Միսիթար Գոշէն ժիգալու մէջ: Իւր որ Ետեւ Ջալալայ տոհմին ապականատունը այս վանքէն մէջ էր, և Ջա



լալ-Դօլայի հայրը կապով պատուիրած էր իրեն որ հայրենի հանդսարանին վրայ եկեղեցի շինէ, ուստի սա իւր հօր կամքն յարգելով վանքս նորոգեց և շինեց այժմեան հոյակապ եկեղեցին 1216—38 թուականներուն, որուն ընդարձակ արձանագրութիւնն տակաւին անփնաս կը մնայ: Եկեղեցւոյ շինութիւնը մանրամասն կը պատմէ կիրակոս: Կառակատիքը մեծահանդէս կատարուել է 1249 թուին վարդափառի տօնին, այդ հանդիսին ներկայ եղեր են Աղուանից Տէր Երեսէս կաթողիկոսը, շատ եպիսկոպոսներ, Վանական վարդապետը, բազմաթիւ քահանաներ և երիցունք: Եկեղեցին շինուած է ամբողջապէս սրբատաշ ազնիւ քարով, չորս հրաշակերտ կամարներու վրայ, և նուիրուած է Ս. Յովնանեկ Մկրտչի: Ունի հրաշակերտ կաթողիկէ, մէկ աւագ և ութ փոքր խորաններ, մէկ դուռն արեւմտեան կողմէն, ութ փոքր, երեք միջակ, չորս բոլորակ և չորս մեծ լուսամտաներ և մէկ աւագան: Երկայնութիւնն է մեար 16,95 և լայնութիւնն մ. 12,25: Եկեղեցւոյ արեւմտեան կողմը կից շինուած է փաստուր գաւիթ մը սրբատաշ քարով, որ ունի վեց որմնակից և երկու միապագա միջնասրիներ: Մէկ մէկու մէջէ անցած չորս խաչաձև կամարներու վրայ հանդշած է զանգակատան զեղեցիկաբանակ գմբէթը: Գաւիթս եւս ունի իւր շինութեան արձանագրութիւնը, յորմէ կը տեսնուին Թէ Զալալ-Դօլա, ամուսինն Մամբան և հարազատ որդին Աթարէկ, եկեղեցւոյ շինութիւնն աւարտելէ վերջ հիմնարկած են այս հրաշալի գաւիթը: Ինչպէս կ'երևի գաւթի շինութիւնն սկսուած է Զալալ-Դօլայի կենդանութեան օրով և աւարտած է նորա մահէն վերջ, իսկ արձանագրութիւնն գրուած է շինութիւնը աւարտելէ վերջը, սրովհետեւ կը կրէ ՉժԵ (= 1266) թիւը: Եկեղեցւոյ շինութեանն տասուերկու տարի վերջը, Զալալ-Դօլա Ղազուին քաղաքը կը նահատակուի անգութ Արղուն խանէն և կը ձգուի ցամաք ջրհորի մը մէջ, որոյ մարմինը յետոյ Աթարէկ որդին բերել տալով կ'անդրդէ Գանձասարի գաւիթը տաճարի դրան մօտ: Հայրենի իշխանութեան և միանգամայն բարեպաշտութեան ժառանգն Աթա-

րէկ, վանացս պայծառութեան շատ օժանդակեց. իրեն հրամանով իւր հօրեղբորորդին և վանացս Յովհաննէս առաջնորդը 1271 թուին Գանձասարի կալուածները շատացուց, նոյնպէս իւր քոյրը Մամախաթուն՝ պարսն Ումէկի կինը, որ ուխտի եկաւ 1280 ին: Ուրիշ բազմաթիւ իշխանագունք և բարեպաշտք ոչ սակաւ նուէրներով պայծառացուցած են ուխտս, որոնց արձանագրութիւնք տակաւին կը կենան անեղծ եկեղեցւոյ ներքին և արտաքին որմոց վրայ: Գաւթի որմերու վրայ եւս արտաբուսա փորագրուած են բոլոր շարժական և անշարժ կալուած և ինչք նուիրողաց արձանագրութիւնները: Իշխանագուն պայտատք և Աղուանից կաթողիկոսները շէն պահեցին վանքս մինչև ԺԶ դարու կէսը. յետոյ կը թափ թէ ամբողջ գար մը անշուք լիճակի մէջ մնացած է, վասն զի արձանագրութիւնը կը դազրին. և ապա 1657 ին Յովսեփայ որդին Աբով թաւրիշայ մելիքը, նորոգել է եկեղեցւոյ և գաւթի տանիքը, ինչպէս նաև խախտած որմերը. մելիք Աբովի արձանագրութիւնն կը գտնուի գաւթի դրան վրայ: Վանքս ունի բազմաթիւ արձաթագապ նշխարներ:

Գանձասար անուանի եղած է Աղուանից վերջին կաթողիկոսարանն լինելով, սկսեալ 1555 թուականէն: 1815 թուին Էջմածնի Աթոռոյն և Ռուսիոյ տէրութեան ձեռքով Աղուանից կաթողիկոսութիւնն վերցաւ, և եղաւ մետրապօլտոսիւն: 1836 ին Աղուանից վերջին կաթողիկոսի և մետրապօլտի Սարգիս Է՛ յաջորդն, Բաղդասար Հասան Զալալեան արքեպիսկոպոսը, Գանձասարէն աթոռ փոխադրեց Շուշի: Գաւթի մէջ են կաթողիկոսաց ոմանց զերեզմանները, հանգերձ արձանագրութեամբը: Վանքս շրջապատուած է պարսպով, որ ունի երեք դուռն արևելեան, հարաւային և արեւմտեան կողմերը: Ունի քանի մը հին սենեակներ, որոնք թափուր են վանականներէ, միայն մէկ վանահայր վարդապետ կայ այս տեղ: Գանձասար, ինչպէս յայտնի է արձանագրութիւններէն, երբեմն ունէր ընդարձակ հոգեր, կալուածներ և անասուններ, որոնք օր աուր յափշտակուելով, այժմ մնացել է միայն 9000 արտալար հող ու անասաւ: Այսպիսի հստա-




կատար վանք մը փոխանակ զարգանալու և բնաշխարհի առաջնակարգ վանքերէն մին լինելու, այժմ անխնամ ձգուած է, բարոյապէս և նիւթապէս քայքայուելով շարունակարար: Հետզհետէ քարերը կը թափին, եկեղեցոյ տանիքն խախտած լինելով շարունակ կը կաթէ. սարիսպը եւս տեղ տեղ քանդուած է: Գողջած են այնքան ընտիր ձեռագիրներն, մնացածներն ալ խոնաւութեան և անխնամութեան զատապարտուած են: Ամիսներով հողեւորական պաշտամունք, ժամասացութիւնք չեն կատարուիր այս տեղ: Վանացոյցի իմացէն կ'անցնի խաչեկ գետակը: — Զարպէակց, Ա. 184-152: Արցախ, 172-180: Էս այլն:

**ԳԱՆՁԱՓԱՐԱԽ.** — Հ. Ինճիճեան և Ալիշան կը գտնեն այս անուամբ անապատ մը Սիւնեաց մէջ, որ անշուշտ առական սխալմամբ կրուած է, և լինելու է Հաւանականօրէն Բաղք գաւառի Տանձափարախն:

**ԳԱՆՁԱՎԱՆՔ.** — Այս անուամբ վանք մը կայ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Օրտակուէն 3 վերտահեալ: Կողմանցս բնակիչք ամայի վանքիս, այժմ Անգիլր վանք կ'ըսեն, ըստ որում, մէջը ոչ մի գրիչնչան չի գտնուիր: Տաճարի շինութիւնը խաչաձեւ է, միջակ կրութեամբ. կառուցուած է բարձր քարափի վրայ՝ ծովու մօտ, Հաստ ու կարծր քարակիր սրմերով: Վանքիս մօտէն կ'սկսին շատ Հին նահապետական գարու շինուած բերդի և պարսպի մնացորդներ:

ԳԱՆՁԵ. — Կիլիկիոյ Հին բերդերէն մին Տաւրոս լեռան ստորտար: Սիմէն ոմն գրել



210 • Գամնիստէի Պոն շէնքերու անկախմբը •

1335ին այս տեղ կրած է ճաշոցի մը մէկ մասը, և միւս մասն ալ Մաշտոցիի գիւղը: **ԳԱՆՁԻ. Տես ԳԱՆՁԱԿ.** **ԳԱՆՆԻՏԵԼԻ.** — Ծովային Կիլիկիոյ մէջ,



Լամսի արեւմտակողմը, այս անուամբ հին աւերակներով նշանաւոր տեղ մը կայ, զոր Լանկլուա համարեց իտալերոյ Նէապօլիսը: Մնացորդաց մէջ նշանաւոր է հռոմէական տարագոյլ վեց բարձրաքանդակ սրտակերներով և յունատան արձանագրութեամբ մահարձան մը (Թ. 244): Բաւական շատ են նաև քաղաքին շինութեանց աւերակներն: Յայտնուած հինոց եկեղեցիներէն գլխաւորին ընեն, կոնքը և մի բանի այլ մասերը միայն մնացած են, զրան վրայ կայ յոյն արձա-


րաշի և Սոսյ մէջանդ, աւելի վերջնոյն մտա: Բնակիչք Հայք և Թուրքք խառն:

ԳԱՌՆԿԵՐՏ. Տես ԳԱՌՆԱԿԵՐՏ:

ԳԱՌԿԱԳՕՆՄԱԶ. — Գիւղս կը գտնուի Այրարատայ Որագածոտն (Թալին) գաւառի մէջ:

ԳԱՌԿԱՍԼ. — Այս անուամբ կրկին գիւղեր կան վերին Կիլիի (Չորրորդ Հայք) մէջ, Բալուէն Տ քամ հետու:

ԳԱՌԿԱՊԱԶԱՐ. — Կրկին գիւղեր կան Գանձակու և Երեւանու նահանգաց մէջ. երկուքն ալ թաթարաբնակ են: — Այս անուամբ



211. Յունական մահարձան Գաննիտէլի մէջ:

նագիր, որմերու վրայ ևս կը նշմարուին նկարներ: — Սխռուան, 344-345:

ԳԱՆՋԱՅ. Տես ԳԱՆՋԱԿ:

ԳԱՊԱԳ-ԹԷՓԷ. — Էն Այրարատայ վանանց գաւառի հարաւային սահմանածայրը: — Այս անուամբ ընտ մը ևս կայ ճակատք գաւառի մէջ: — Կիլիկիոյ մէջ ալ կայ համանուն գիւղ մը տանկաբնակ, Սոսյ հիւսիսային արեւմրտեան կողմը:

ԳԱՊԱԽՈՒ. Տես ԳԱՓԱԽՈՒ:

ԳԱՊԱՍԱԳԱՆ. — Գիւղ Որատայի հարաւ արեւմտեան կողմը:

ԳԱՊՈՒՐԿԱՍԼ. — Գիւղ Կիլիկիոյ, Մա-

բմաշխ. Բառարան

լես մ'ալ կայ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ:


ԳԱՌԿԱ ՏԵՐԷՍԻ. — Կիրճ կեսարիոյ նահանգին մէջ, Մակա օվառի կոչուած գաւառավայրին մտա:

ԳԱՌՆԱԿԵՐ. — Գիւղ Արցախի Փառխոս գաւառի մէջ. հիմնուած է Շամքոր գետակի ձախ կողմը: Գիրքն իսր ձոր է և տեսարանն խեղդուած: Օդն փոփոխական է և կլիման տենդաբեր: Բերքերն են, գինի, օղի, սերկեիլ, զեղձ, ասնձ, խնձոր, կն: Բնակիչք բնիկ են և կը հաշուին 1150 հոգի, բաժնուած 80 տան: Բլենին եկեղեցի մը՝



Ս. Աստուածածին, կառուցուած երեք կամարներու վրայ 1838ին: Գիւղիս մօտերը կան մի քանի վանքեր և ուխտատեղիներ: — Ծաղկոց վանք, հիմնարկուած է Շամբոր զեռտակի ձախ ափի վրայ ժայռի մը զլուխը: Վանքս ոչ սիւներ ունի և ոչ կաթողիկէ. այլ ունի սոփորականէ շատ մեծ դուռն, և նեղ նեղ լուսամուտներ: Հիմնարկութեան թուականն անյայտ է, ներքուստ ունի ՌՃԼԸ (= 1698) թուականաւ համառօտ յիշատակարան մը: Վանքս ունեցեր է նաև փայ-

մ'է, երկու ձուածու բարձրացած սարերու մէջ տեղ, ուր կան երեք հնադարեան խաչարձաններ: Ծիրանաւոր՝ կաղնի խաչէն բաւական վեր, աւերակ եկեղեցի մ'է, ուր կայ նաև զիւղատեղի և հանգստարան: Աստուակ՝ Շամբոր զեռի աջ ափի վրայ, զիւղի հիւսիս արեւելեան կողմը, ձեղունն փայտաշէն մատուռ մի է, յորում կայ անուր անյայտ նահատակի մը գերեզմանը: Իրարմէ ոչ այնչափ հեռու են նաև Հարանց և Ճգնարան կոչուածները. տաջինը հին հանգստարան



212. Գամնիտէլի աւերակ եկեղեցի:

տաշէն գաւիթ, զոր ի վերջոյ հնութեան պատճառաւ քակեր և նոր շիներ են Գառնակերցիք: Այս մենաստանէն մի քիչ վեր է Գաբրիէլ և Միքայէլ Հրեշտակապետաց անուամբ շինուած վանք մը, որ նոյնպէս զեռտակի ձախ ափին կառուցուած է սաղաձեւ: Ունի երկու փոքր և մի աւագ խորան, և ՌՄԿԷ (= 1816) թուականաւ շինութեան արձանագրութիւն: Վանքս ունի ինը հին խուցեր՝ նեղ լուսամուտներով. այգի մը ևս ունի և թթենի, կեռասի, ընկուզի, և այլ ծառեր: Կաղնի խաչ՝ Գառնակերի արեւմտեան հիւսիսային կողմը ուխտատեղի

մի է, և երկրորդն քարայր մը՝ երեք խաչքարերով: — Արցախ, 345—317, Տես Գեղարթունի:

ԳԱՌՆԱԿԵՐՏ կամ ԳԱՌՆՎԵՐՏ. — Հայաբնակ զիւղ խարրերկու տաջնորդական թեմի մէջ: Ունի Ս. Թովմաս եկեղեցի մը:

ԳԱՌՆԵԿԵՆ. Տես ԳԱՌՆԸ ԵԱՐԸԳ:

ԳԱՌՆԸ ԵԱՐԸԳ կամ ՔԻՐՎԱՆՍԷՐԱՅ ԳԻՒՎ (Կարաւանի գիւղ). — Իլը գտնուի Այրարատայ շին Վարաժնունեաց և այժմեան Տարաշիշակ գաւառի մէջ, Ռնտամալի հարաւային և Մայրավանից հիւսիսային կողմը: Ունի 1486 հայ բնակիչներ, բաժնուած 139


Digitized by Google



ասան: Եկեղեցին նուիրուած է Մ. Աստուաճածնի: Գիւղիս հարաւային կողմը Մոռաեօքիէ անուամբ մեծ ապստամբ մը կայ, Հրազդան գետակի եզերքը, որուն երբեմն ջուրերը զարնուելով կը յորդեն և ճանապարհի անցքը կ'արգելուն: Տիպուա այս գիւղիս Գառնեկին անունը կու տայ: — Տես ԱՐԱՅԻ Լեռ:

ԳԱՌՆԻ կամ ԳեՂԱՄԻ. — Հին պատմութեան մէջ նշանաւոր բերդիս և քաղաքաւորս աւերակներն կը գտնուին Այրարատայ

Խը շինասէր գիտաւորութեանցը կը հետեւի նաև իւր թոռն Գառնիկ, որ իւր պատուն կանգնածը պայծառացուց ընդարձակեց և իւր անուամբը Գառնի անուանեց: Խորենացին (Ա. ժԲ) տեղույս գիրքը և նկարագիրը հետեւեալ կերպով կ'ընէ. «առ սամբ նորին լերինն, ի ձորակի միում ամրոջ, շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնկայ թոռանէ նուրս՝ անուանեցաւ Գառնի». նոյն անուամբ կը կոչուի մինչև ցայսօր: Այրարատայ հզօ-



213. Գառնոյ բերդի յատակածեր և սահմանները:

1. Բնակարաններ. — 2. Պալատը. — Տըղատայ թաղար. — 4. Գուռն. — 5. Փողոց. — 6. Ազուգաներ, — 7. Գառնոյ գետ. — 8. Պատուտեան սիւնածեւ քարեր. — 9. Հրաբուլիս հասանք:

Մազազ գաւառի մէջ, Երեւանայ արեւելեան հարաւային կողմը 4-5 ժամ հեռու, Գեղ լեռան հարաւային ստորոտը Ազատ կամ նոյնանուն Գառնոյ գետակի եզերքը: Հայկազանց առաջին դարերուն մէջ, Հայկայ թոռան թոռն Գեղամ իր հայրենաժառանգ երկիրները սրբուցը մէջ բաժնելէ վերջ, կու գար այս տեղ, ու անշուշտ զբից զեղեցիութեանը և ամբուլթեանը զմայլած, կը կանգնէր իւր անուամբ Գեղամի գաստակերտը, իւր մնացեալ կեանքը հոն պսակելու մտքով:

բազոյն ամրոցներէն մին համարուած է, ասոր կը վկայէ նաև Եղիշէ Ե դարու կիսուն, «անմատոյց ամուրն Գառնի» կոչելով. զոր ուխտապահ նախարարները ազատեցին Պարսից ձեռքէն և յետոյ ուրացող վասակը աւերեց: Խորենացին կը պատմէ նաև Գառնիի նոր շինութիւնը Տըղատ Մեծին ձեռքով. բայց ամրոցին առաջին շինութիւնը, եթէ Գառնիկէն ալ եղած չլինի, սակայն շատ հին բան զՏըղատ, և այն է հին Գառնիի նշանաւոր մասը, որ Տըղատայ և իւր



որդոյ խոսրովու շինութիւններով աւանա-  
ցաւ և զիւղաքաղաք դարձաւ: Փորժըր անդ-  
զիացին այցելած է աեղույս, և ընդարձակ  
աւերակներն խիստ հետաքրքրական գտած:  
նոյն ժամանակ տեսած է հինգ աւերակ եւ  
կեղեցիներ, որոնց շինութեան ոճն շատ տար-  
բեր գտած է բերդի աւերակներէն: Տիւպուա  
ևս այցելած է նշանուոր աւերակացս և հե-  
տեւեալ նկարագրին մեղ թողած: «Երեսնէն  
15-17 վերստ հեռու, Գառնի գետն նեղ  
անցքի մը բերնէն Երասխայ գաշտին մէջէն  
կ'անցնի: Մենք այս գետին եղերքէն 20



214. Գառնոյ Ս. Կարապետի մատուռը:

վերստ գէպի վեր գնացինք մինչև Գառնի:  
Այս գետեղերացս սկիզբները հերձաքար ու  
կոպիճ լեռներէ պատած է, որոնց ստորաբ  
ողորկ ու հատուածեալ է. լեռանց երեսը  
թերթ թերթ կաւճէ ու հրաբղխային բուսա-  
կան հողերէ ձեւացած է: Լեռանց անց-  
քէն 6 վերստ գէպի վեր, գետը լաւայի ա-  
հագին յորձանքի մը ստորոտէն կ'անցնի,  
և այս լաւային տակը կաւիճ ու բոլորովին  
հրաբղխային հող է: Յորձանքը յանկարծ  
կը կենայ, ու վերջին ծայրը խոշոր կտոր-  
ներէ սեպաձեւ ժայռեր ձեւացած են: Մենք  
այս լաւային հոսանքին վրայ ելանք, որ  
մինչև Գառնի կը տարածուի: Երեսը խոր

աւերորս հրաբղխացեալ ժայռերու կտորնե-  
րով ծածկուած է: Այս լաւային հոսանքը  
Գառնիին արեւմտեան կողմը կ'ինկնայ. իսկ  
Գառնի գետը քաղաքին արեւելեան կողմէն  
ահագին հեղեղատի մէջ կը թաւալի: Երե-  
կոյեան դէմ՝ պարիսպներու, աներու աւե-  
րակաց յաճախութենէն, աւրուած ջրանցք-  
ներէն, ու ջարդուած անտառի մը քանի մը  
մինակ մնացած ծառերուն նման՝ աստին ան-  
գին ցրուած աւերակաց կոյտերէն խմացանք որ  
Մեծ Գառնին հասած էինք»: Տիւպուա այս  
խօսքերէն վերջ կարգաւ կը նկարագրէ բեր-  
դը, Տրդատայ թաղաբը, և ուրիշ աւերակ-  
ները: 1679ի մեծ երկրաշարժէն մեծապէս  
փաստուեցաւ Գառնի: Տիւպուայի այցելութեան  
ժամանակ կիտակործան կեղեցիներէն, ի-  
բնն գեղեցիկագոյն երեւցաւ քաղաքաւանին  
հիւսիսային արեւմտեան կողմը գտնուող Ս.  
Կարապետ մատուռն (Թ. 214), որ արձա-  
նագրութիւն ևս ունի եղեր:


Գառնի՝ Տրդատայ և խոսրովու արքունի  
շինութեանց պատճառաւ, կը թուի թէ պա-  
տուուած է նաև կեղեցեական աթոռով իր-  
բև մեծ քաղաք, մանաւանդ որ նոյն ժա-  
մանակ անշքացած էր Արտաշատ: Վասն զի  
Աւրաի Բե օրով ԳԽԵ դարու կէսէն վերջ,  
կը յիշուի Գէորգ անուամբ ոմն Գառնոյ եւ  
պիտկոպոս: Տեղույս կեղեցեական բարգա-  
ւածանաց և մեծութեան վկայ են նաև յա-  
ջուրդ դարուց մէջ Գառնեցի կաթողիկոսունք  
և վարդապետք: Ինչպէս ԸԽԵ դարու վերջերը  
Սողոմոն կաթողիկոս, Գէորգ Բ իններորդ  
դարու վերջերը, որուն յաջորդն ալ Մաշ-  
տոց կաթողիկոս՝ թաղուեցաւ « ի Գառնի  
հուպ առ դարմանալի թաղան Տրդատայ, և  
շինեցին ի վերայ նորա վայելուչ կեղեցի»:  
Կիր. պատմիչ, 45-46: Ասոր յաջորդն ալ  
Յովհաննէս Զ պատմիչ, ըստ կիրակոսի՝ Գառ-  
նեցի է, բայց սորա բուն հայրենիքն Գրաս-  
խանակիրտ է, որ անշուշտ Գառնիի և Գու-  
նայ մէջ անկ լինելուն պատճառաւ, պատ-  
միչը այնպէս կոչած է. ինչպէս Ասողիկ ալ  
նոյն կաթողիկոսն Գառնեցի կոչած է: ԺԱ  
դարու առաջին կիսուն Հայոց խմաստնա-  
գոյն վարդապետաց կարգը դասուած էր ոմն  
Գառնեցի, առանց յատուկ անուան: Երկու  
հարիւր տարի վերջ հստակաւոր եղած է



Գառնեցի Յովնաննէս վարդապետը, որուն վրայ երկարօրէն կը խօսի Կիրակոս (ԿՐԻ), ինչպէս նաև Յայտմաւորը և ուրիշներ: Կոյն ժամանակներն էր Գաւլիմ մոլորեցուցիչը, որ ինք զինքը Գառնեցի կ'անուանէր և Արշակունեաց տոհմէն: Գառնեցիք կամ

քոչիկէիս և այլ սուրբ եկեղեցեացս»: Կոյն մարդը ժամանակին կաթողիկոսը՝ Պողոս Բ՝ Գառնեցի կը կոչէ:

Մեծ հռչակ ունեցող ամբողջ, զոր Բազանդ արքրոշնի անբոց կը կոչէ, շինուած է կամ ի Հայկազանց և կամ առաջին Արշա-



215. Տրդատայ Թաղա՛կամ Խոսրովիղխոյ հովանոց:


նոյն տեղացի քանի մը տոհմեր, իրենք զիրենք Արշակունեաց սերունդ կը կարծէին, և Տրդատայ օրերէն մինչև 1000 տարի Գառնիի վրայ թագաւորական շուք ու շնորհք կար. զոր 1428ին յիշատակագիր ոմն աւտռածապան գիշդարսդարք կոչած է, հոն գրելով «առ դրան սուրբ և հրաշափառ կա-

կունիներէն, և կը թուի, թէ Ուրան և Բաբերս ամբոցաց հանգոյն, պատերազմաց միջոց աշխարհին իշխողաց գանձուց և անձանց պատսպարան եղած է: Տարեգիրն Տակիտոս կը հաւատտէ այս (ԺԲ. ԽԴ, ԽԵ), Գոռնէաս (Gorneas) անունը տալով տեղւոյս, կ'ըսէ. «էր բերդն այն ամուր՝ տե-



զեան և պահակապանօք, որոց զօրավար է Կելիա Պողոսն և հարիւրացեա Կասպէրիտս)։ Հոս մագապուրծ ինկաւ փրկչական 51 թուականին, վրաց Փարսամայ թագաւորին Միւրղատ եզրայրը, որ ի Հոսվմայեցոց Հայոց թագաւոր կարգուած էր, և զոր զաւով բոնել կ'ուզէր իւր եզրօրորդին Հրատամիրք և փոխանակ իրեն թագաւորել։ Թէ ինչպիսի զէպքեր հանդիպեցան բերդիս Միհրդատէն սկսեալ մինչև մեր Տրդատը, զրե-

կաթագամ և կապարով մածուցեալ)։ Բերդս կը գտնուի հրարդիական մնացուածովք ծածկուած քարածայրի մը գահաւանդի վրայ, որ կարկառած էր զեռի խորածորին վրայ, աւանին արեւելեան կողմը։ Չեւք քառակուսի է, կ'ըսէ Տիւպուա, 2-300 սաք երկայն ու քիչ մ'ալ պակաս լայն։ Այն կողմը, որուն տակէն Գառնի զեարը 4-500 սաք խորութենէ կ'անցնի՝ սեպածու է. իսկ արեւելեան և արեւմտեան կողմերը, քիչ քիչ ցածնա-



216. Խոսրովիդիսոյ հովանոցին դրուագները ։

թէ երեք զար ժամանակ, յայտնի չէ. բայց կը կարծուի թէ Պարթեւաց և Հոսվմայեցոց բազմաթիւ պատերազմներով բաւական խանգարուած է. նաև յայտնի չէ թէ Տրդատ այս անդ նորոգեց, թէ ինչպէս որ հաւանաբայն կը ցուցնէ խորենացին, բոլորովին նոր շինեց։ Կ'երևի թէ այս շինութեան շատ ժամանակ գացած է. վասն զի պատմչին համեմատ՝ Նիկիոյ ժողովոյն ժամանակները « կատարէ Տրդատ զշինուած Ամիրոցին Գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, եր-


լով կը հաւատարին ձորի կողերուն. այս կողմանց աւելի ամրութեան համար, մանաւանդ արեւմտեանին, որ ի բնէ լաւ պարսպուած չէ, շինած են պարիսպներ և բուրգեր, հրարդիսային ժայռի մեծամեծ կոշկուտներով. բաց լաւ կոփուած և ողորկուած են հոսվմէական արաւեստադիտաց ճարտարութեամբ, ինչպէս կը վկայեն կրկին եւրոպացի ուղեւորքն Տիւպուա և Քէր Փորթըր։ Հիւսիսային կողման պատուարները կը ներկայացնեն քաղաքըմոյ և աշտարակաց կարգ



մը, որոնց ծայրերը կը մտանան արեւելեան և արեւմտեան կողմանց երկու ծայրերուն հետ: Միայն մէկ գուռ կերեւի այժմ, արեւմտեան հիւսիսային կողմը՝ երրորդ աշտարակին մօտ: Բերդիս հիւսիսային արեւմտեան կողմն են աւերակաց մեծագոյն մնացորդը, որոնց մէջ խառն կը գտնուին նաև մեծամեծ քարեղէն սուժեր կամ գունտեր, ոչ հրանօթներէ, այլ հին ժամանակաց յատուկ պատերազմական մեքենաներէ նեոտած: Հոն կը կարծուի լինել արբունի ապարանքը կամ դղեակը, որոյ դոյզն՝ բայց գեղեցիկ մնացորդը, երկար ժամանակէն և երկրաշարժներէ մաշուելով հանդերձ, կրնան վիայել նախկին շքեղութեանը: Մեր պատմագիրներէն վերջինը Զաքարիա Սարկուազ (Բ. ՆԱ), Երեւանի մեծ երկրաշարժէն կործանած շէնքերը թուած ժամանակ, փոխանակ Գառնիի՝ Տրդատակերտ անունը կու տայ տեղւոյս, Արբունի դատակերտներն, ինչպէ՛ս նաև եկեղեցիները, զորս անշուշտ մեծ խնամքով և ճշտութեամբ կառուցած էր, բոլորն, ալ աւերակ դարձած են, և կը թուի թէ հսկայ թաղաւորին ոգին տակաւին կը սաւառնի անմոռանալի վայրացս վրայ:

Գառնիի շինուածոց մէջ սքանչալից արժանի եղած է Տրդատաշէն Հովանոցը, զոր կառուցանել տուաւ իւր Խոսրովիլուռլիստ քրոջ համար: Խորենացին ասոր նկարագիրն ևս կ'ընէ, ըսելով. « յամրոցի անդ շինեալ և Տուն Հովանոց, մահարձանօք, սքանչելի գորշուածովք, բարձր քանդակօք, ի համար քու իւրոյ Խոսրովիլիստոյ»: Այսպէս ճարտարաբանս շինուածոյս Հովանոց Տրդատայ անունը տուած են հիները, իսկ վերջին յիշատակողները ԺԳ դարէն սպին՝ ճահապէս կոչած են զրիցը համեմատ Սարաւոյթ Տրդատայ, իսկ գեռ աւելի վերջին գրիչներէն և մինչև մեր օրերը կոչուած է Թաղտ Տրդատայ: Կառուցուած է ամրոցին հարաւային արեւելեան ծայրը, գետոյն ձորեզերքին մօտ, ուր 1350 տարիներէ աւելի կանգուն մնալով, և բազում մեծաւ մասամբ անմատոյց լինելով աւերածու ձեռաց, կը հրաշացնէր զինքը տեսողները: Կիրակոս պատմիչը ԺԳ դարու մէջ երկու անգամ Գառնին յիշած միեւնոց, չէ կրցած զանց ընել և այս հրաշակերտը, ըսելով, « Ուր

գարնանալի Սարաւոյթն է Տրդատայ». կամ « հուպ առ գարնանալի Թաղտն Տրդատայ ». նոյնպէս վարդան աշխարհագիրը. « Գեղեցկաշէն և գարնանալի Թաղտն Տրդատայ»: Երեւանի մեծ երկրաշարժով կործանեցաւ հոյակապ շէնքս և 222 տարիներէ ի վեր, խորտակուած սիւներու, չքնաղ խոյակներու, խարխիւներու և զանազան դրուագազարդ քարանց բեկորներու կոյս մը, սրտածմբիկ և տխուր տեսարան մը կը ներկայացնէ: Հիւլեւտիացի մանրախոյզ բննողն տեղւոյս, կ'ընէ թէ երկրաշարժը այն աստիճանի այս գեղեցիկ շէնքը խախտած է, որ քար քարի վրայ մնացած չէ: Սեանց հիմունքը մեծաւ մասամբ բնաջինջ եղած են, կ'իմացուի որ ամենէն



217. Խոսրովիլիստոյ հովանոցի յատակի մնացորդ:

ստաջ աստնք խախտած են ու բոլոր շէնքին կտորներուն տակը թաղուեր են: Գարձեալ Տրդատայի ըտածին համեմատ, Հայք այնչափ յարգ կու տային անոր որ կտոր մը անգամ չեն վերուցած իրենց ատանձին շինուածոցը գործածելու և օտարաց ալ թոյլ չեն տար: Բերդի քարերէն շատերը վերուցած են, բայց Թաղտի կտորները այնպէս ամբողջ են, որ ատանց կտոր մ'ալ պակսելու՝ ամբողջ շէնքը կրնայ շինուիլ: Հովանոցիս ձեւը քառակուսի էր, 34 ոտք երկայնութեամբ ճակատը՝ կը նայէր գէպ ի բերդին դուռը, ու 6 յոնիական գեղեցիկ սիւներ ունէր: Սիւներուն շրջապատն էր 25 բթաչափ, իւրաքանչիւրի բարձրութիւնը 22 ու կէս ոտք. շէնքին ամէն կտորն ալ փառասոր էր, քիւքը սալածներու զլուխներով զարդարուած, և անոր ներքեր կարգ կարգ տեսակ տեսակ քանդակազարդեր: Տրդատա կործանած մասունքներէն են թաղրիւով դած



է Հովանոցի ճակատին ձեւը (Թ. 215), ուրիշ եւրոպացի այցելուներ ևս նկարած են գանազան բեկորներու ձեւեր (Թ. 216, 217): Ճակատին նման ճոխ կերպով զարդարուած էր նաև ձեղունը: Գետոյն վրայ նայող կողմն ալ ճակատին պէս շինուած էր բիշ փոփոխութեամբ. միտ երկու կողմերն ալ սիւնադարձ էին, և ամբողջ շէնքը 2/4 սիւներով շրջապատեալ էին, ինչպէս կը վկայէ Սիմէոն Ապարանեցին: Հովանոցի արեւմտեան կողմն էր Խոտորովիխոտոյ բուն պալատը, որ աւելի պարզ ու հեղեղատի քարերով շինուած էր. և Հովանոցի պէս գեանի հաւատար էր: Եւրաստապարտ լինելու ենք այն եւրոպացի ուղեւորաց, որք մեզ հասուցին այս հայկական Պարթևոնիս գէթ նշմարները, և գմեղ բարերազը համարելու ենք նաև անով, որ մեր թշնամի մարդկային սրբապիղծ ձեռքերէ կործանած չէ չքնադակերա շէնքս, այլ երկրի աննուանելի շարժումներէն: Սիմէոն Ապարանեցին ԺՁ գարու վերջերը 1593ին սքանչացմամբ և միանգամայն հառաչական ողբերով նկարագրած է տաղաշափօրէն այս Տրդատայ Թաղար, նշանակելով սեանց թիւը, աստիճանները, և այլ մասունքը:

Գառնիի սահմանները իրենց զրից համար նշանաւոր եղած են քաղաքական և պատերազմական դիպաց մէջ: Չ գարուն վերջերը Պարսից Խոտորով Ապուէլ թագաւորը Յոյներէն օգնութիւն գտնելով, անոնց թողուց արեւմտեան Հայաստանը և կոտայից գաւառը մինչև Գառնի աւանը, և Աղաս (Գառնի) կամ Հրազդան գետը անջրպետ կը լինէր երկու կողմանց: Շատ գարերէ և անցքերէ վերջ, ԺԲ գարուն վրացիք զորանալով նաև մեր աշխարհի կողմերն նուաճելու ժամանակ, Իւսակ Օրպէրեան Ապուէլ թի սրբին, որ Գեմեարէ թագաւորէն տեղապահ գրուած էր Անույ, 1131 թուին ասպատակեց Գառնիի վրայ, բայց զօրքերը յաղթուեցան տեղւոյն Խոռքե անուն զօրախորէն: Գրեթէ դար մը վերջը (1225 թուին), նոյնպէս ձախորդութեան հանդիպեցաւ Իւսակ Արսակէն, վասն զի ձէլալէատին Խորազմիլ Շահը՝ Թաթարներէն հալածուելով, բազմաթիւ զօրքերով եկաւ տիրեց Գուհայ ամբողջ գաշտին և Գառնոյ սահմանները տարածուեցան իւր զօրաց

վրաններն: Նոյն միջոցին փութաց Լաւնէ վրաց և Հայոց զօրքերով, իրեն նիզակակից աննելով Գագայ տէրը վանքաւ և ուրիշներ, յարձակեցաւ թշնամեաց զօրաց վրայ: Ի սկզբան սկսան կոտորել այլազգեաց զօրքերը, բայց յետոյ սխալ հասկացողութեամբ, զօրաց մէկ մասը որ յետոյ պիտի միանար պատերազմին, փոխանակ պատերազմի գաշար վազելու ետ փախեր են իրենց վրանները և կարասին թողլով: Եւ այնպէս շփոթած վազած միջոց, ետեւէն կը յարձակին թշնամիք, շատերը կը կոտորեն և շատերն ալ կը գահալիթեն Գառնոյ ձորը: Մեր ԺԳ գարու բոլոր պատմիչները կը յիշեն այս ազնաալի գէպը այլ և այլ հանգամանքներով: Այլազգիք ևս մանրամասն կը պատմեն, 60 կամ 70000 հաշուելով Հայոց և վրաց զօրքը, և 20000 ալ իրենցմէ կոտորած կամ գահալիթած Գառնոյ ձորը: — Գառնին այժմ յօտարաց կը կոչուի Պաշ-Գառնի, և ունի 1236 հայ բնակիչներ, բաժնուած 115 տան: — Բագմալեպ, ԺՁ. 174-178: Այրարատ, 361-370: Եւ այլն:

ԳԱՌՆԻ ԿԱՄ ԳՈՒՆԻ. — Սակաւարնակ դիւղ Բարձր Հայոց այժմեան կամախ վիճակի մէջ:

ԳԱՌՆԻԿ ԱՂԲԻԻՐ. — Ուխտատեղի Այրարատայ կողովիտ գաւառի մէջ, Պայազիտի մօտ:

ԳԱՌՆԻ-ՊԱՍԱՐ. — Այսպէս կոչուած է վերջին ժամանակաց մէջ Այրարատայ Մազազ գաւառը:

ԳԱՌՆԿՈՅ. — Գիւղ Բարձր Հայոց այժմեան Թորթումի վիճակի մէջ:

ԳԱՌՆՈՅ ԳԱՒԱՌ. — Գառնի քաղաքաւանի անուամբ՝ այսպէս կոչուած է երբեմն Այրարատայ Մազազ գաւառը:

ԳԱՌՆՈՅ ԳԵՏ ԿԱՄ ԳԱՌՆՈՅ ԶՈՒՐ. — Հին Աղաս գետն, Գառնոյ զխմացէն անցնելով այսպէս կոչուած է:

ԳԱՌՆՈՅ ԶՈՐ. — Կը գանուի Այրարատայ Մազազ գաւառի մէջ, և ժամանակաշատուի լեռնային վիճակ մը կը ձեւայնէր: Այս տեղ էր վարդան աշխարհապէն տանց անուան յիշած վանքերէն մին, զոր Ժ գարու սկիզբը Սմբատ Ա թագաւորը պարգեւեց Տաթարի կեղեկոյն իբրև կալուած,



«Ի Քասնսձորի ՂԳոտող վանս», ինչպէս կը  
գրէ Սինեայ պատմիչը (Գլ. ԽԱ.):

ԳԱՌՆՈՅ ԶՈՒՐ ՏԵՍ ԱԶԱՏ ԳԵՏ:

ԳԱՌՆՈՎԻՏ. — Կը յիշուի Այրարատայ  
Արշարունեայ դաւառի, Բագարանու եկեղե-  
ցիներէն միոյն արձանագրութեան մէջ:

ԳԱՍԱՊԱ ԿՐԻՄ ԳԱՍԱՊԱ. ԳՂ. KASSABA.

— Քաղաքս կ'ինկնայ Զմիւնիոյ հիւսի-  
սային կողմը. Այաշէհիւր և Ուշագ գա-  
ցող երկաթուղին կ'անցնի իւր առջեւէն և  
93<sup>1</sup>/<sub>4</sub> հազարամետր Զմիւնիայէն հեռու է:  
Կառուցուած է գեղեցիկ դաշտի մը վրայ, և  
Մանիսայէն երկաթուղով կէս ժամու չափ  
հեռու է: Կլիման բարեխան է, ջուրն ու  
պտղատու ծառերն առատ: Անուանի են Գա-  
սապայի սերն, կարապը, մեղրը, սեխը և  
ձմերուկը: Քաղաքէն գրեթէ ոտքով քառորդ  
ժամ հեռու շինուած է երկաթուղոյ կայա-  
րանը: Եւնքերը ընդհանրապէս միայրակ են,  
քանի մը սուն զուրս հանելով, որոնք կրկին  
յարկ ունին: Տներէն շատերը պարակ է ու-  
նին և մէջը աղբիւր մը: Փողոցները, թէ-  
պէս քարայրատակ՝ բայց անմաքուր են:  
Գասապայի արեւելեան կողմը կը տեսնուի՝  
ոչ այնչափ բարձր լեռանց շղթայ մը, և այս  
շղթային առջեւ կը գտնուին փոքրիկ բլու-  
րակներ, որոնց տեղացիք Պիե պիթ քեփե  
անունը կու տան: Քաղաքս չունի ճարտա-  
բարեկառուական կամ հնութեանց վերաբերեալ  
շէնքերու մնացորդներ, միայն վերոյիշեալ բլու-  
րակաց կողմերը կան այլեր և ծածկուած  
հնութիւններ: Այս բլուրներէն միոյն տակ,  
որուն տեղացիք Էրսեհի քեփեսի կ'ըսեն,  
վերջերս գտած են քանի մը կտոր հին քարէ  
արձաններ, զորս քաղաք բերելով երկու  
կտոր դրած են Հայոց եկեղեցոյ պարակը,  
ուրիշ մ'ալ Յունաց հիւանդանոցի պարակ-  
դին մէջ: Քաղաքս ունի 1000 վաճառատուն,  
4 բամբակ մաքրելու գործարան, 27 ջրա-  
ղաց, 9 խան, 46 փուն, 286 աղբիւր: Հա-  
տարակաց շէնքերէն ունի նաև 5 բաղնիք, 3/4  
մզկիթ, 2 Բունաց և 1 Հայոց եկեղեցիներ,  
2 Հրէից ժողովարան, 56 գաղոց՝ 1324  
աշակերտօք, երկու սեւր ի միասին հաշուե-  
լով: Գասապայի բնակչաց թիւն բոս վ.  
Քինէի, է 23000, հետեւեալ կերպով բաժ-  
նուած.

Մահէտականք.	19900	հոգի
Յոյնք.	1500	»
Հայք.	1000	»
Հրեայք.	600	»
Գումարն...		25000 հոգի:

Քաղաքիս Հայք ի հնումն նշանաւոր  
գիրք մը ունեցած են, բայց այժմ ինկած:  
Զունին և շեն կազմած մասնաւոր թաղ մը,  
այլ ցիր ու ցան կը բնակին, սակայն անե-  
րէն շատերը կը գտնուին եկեղեցոյ մտա-  
Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի.  
շէնքը ամբար է մէկ մետր հաստութեամբ  
պատերով, շուրջը կայ պարակէզ: Այս գրան  
սեամբը զարդարուած են մարմարինոն քարե-  
լով. ճակատը հաստատուած է քար մը՝  
որուն վրայ արձանագրուած է շինութեան  
յիշատակարանը, 1840 թուին: Եկեղեցիս  
կառուցուած է բարեպաշտօն իշխանաց և  
ժողովրդոց արդեամբք և աշխատանօք: Ի ներ-  
քուստ անգար է. 17<sup>1</sup>/<sub>2</sub> մետր երկայնութեամբ  
և 10<sup>1</sup>/<sub>2</sub> մետր լայնութեամբ. կամարակապ ձե-  
ղունը հաստատուած է որմերու վրայ, միայն  
աւագ դրան կողմը կան երկու սիւնակներ,  
որոնք վերնատունը հաստատուն կը բռնեն:  
Աւագ՝ Ս. Աստուածածնի մարմարինոնէ խո-  
բանէն գատ, կան նաև երկու խորաններ աջ  
ու ձախ կողմը, մին՝ Ս. Գրիգոր լուսաւորչի  
պատկերով և միւսն՝ Ս. Ստեփանոսի: Աւե-  
լի հնագոյն եկեղեցի մը ևս ունեցած են  
Գասապայի Հայք, որուն վերաբերեալ ար-  
ձանագրութիւն ունեցող քար մը գրուած է  
նորակառոյց գաղոցի պատին մէջ, սակայն  
այդ արձանագրութեան թուականը յայտնի  
չէ: Վերջին տարիներս եկեղեցոյ գիմաց  
պարակչի դրան կից շինուած է գանգակա-  
տունը, որ տեղոյն գեղեցիկ տեսք կու տայ:  
Եկեղեցին ունի իրեն սեփհական բոլորակ  
կտրուած կապարեայ դրամ, մէկ կողմը խաչ,  
և երկրորդ կողմը գրութիւն մը: Եկեղեցոյ  
պարակչին մէջ հարաւային կողմը կառուցուած  
է քարուկիր և կրկնայարկ Հայոց երկսեռ  
վարժարանը 60 աշակերտներով: Այս շէնքը  
գատ գատ գտնելով բաժնուած է երկու մա-  
սանց. երկու դրանց վրայ ևս կայ հայկա-  
կան արձանագրութիւն 1893 թուականու:  
Վասն զի նոյն տարին շինուած են արդեամբ



և ծախիւք Զմիւռնիացի վաճառական Յակոբ ճէվաճիրճեանի . անոր համար մանչերու զպրօքը կը կոչուի ճէվաճիրճեան, և աղջկանց Տիգրանուճեան, նոյն վաճառականի անկնոջ անուամբ: Պարակէր կը գործանեն իրրև գերեզմանատուն, ուր կան նաև արձանագրութեամբ տասպանաքարեր 1838 թուականէն սկսեալ: Քաղաքիս Հայք կ'ըրադին վաճառականութեամբ և պողպատաճառութեամբ, կան նաև գերձակ, սակերիչ, կոշկակար, երկաթագործ, պայտար և հացագործ արուեստաւորներ: Ասոնց նախնիք զազթած են Պարոկաստանէն. գործունեայ են, սակաւագետ և հանդարտ: — Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, Բ. 153-161: Վ. Քիւնե, Գ. 552-556:

ԳԱՍԱՊԱ. — Գիւղ քարային կիլիկիոյ, Գարաման քաղաքէն 10 կամ 12 մղոն հեռու արեւմտեան կողմը, Գարատաղ և Հաճիպապա լիւանց մէջ տեղ, 1060 մետր բարձր գիբրով: Գիւղս ժամանակաւ պարբուպապատ եղած է, որ այժմ կ'իտակործան և քայքայեալ վիճակի մէջ է:


ԳԱՍԹԷՄՈՒՆԻ կամ ԳԱՍԹԱՄՊՈՒ. Գղ. CASTAMOUNI. — Գլխաւոր քաղաք համանուն կուսակալութեան և գաւառին. կ'ինկնայ 34°29' երկայնութեան և 41°22' լայնութեան մէջ, ինէպօլիի նաւահանգստէն 90 հազարամետր հեռու՝ հարաւային կողմը: Բնակիչք 15567 կը հաշուին, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահճակականք.	. . . . .	15260	հոգի
Յոյնք	. . . . .	4795	»
Հայք	. . . . .	512	»

Գուճարն... 15567 հոգի:

Քաղաքս ունի 1 եկեղեցի Հայոց և 1 Յունաց, 63 մղկիթ, 4 հիւանդանոց, կուսակալի պալատ, հեռագրատուն, սպարան, 15 բաղնիք, 112 աղբիւր, 12 կամուրջ, 3487 տուն, 1754 կրօզակ, 80 վաճառատուն, 42 խան կամ պանդոկ, 30 սրճարան, 5 ջրաղացք, 25 փունն, են.: Գլխաւոր վաճառքներն են այժմաճաղ, բուրդ, բամբակեղէնք արմաթք պտուղք, ծխախոտ, խաշխաշ, և այլն: Գաւթէմունի կուսակալութեան մէջ գտնուող Հայոց ամբողջական թիւն կը հասնի 1262 հոգոյ:

ԳԱՍՄԱՆ կամ ԿԱՍՄԱ. — Գիւղ Տիւրիկու. ունի եկեղեցի մը Ս. Աստուածածիկ և վարժարան մը Ս. Մեսրոբեան՝ 50 աշակերտներով, բոտ վերջին վիճակացոյցի վարժարանի անունն եղած է Ս. Լուսաւորչեան: Գիւղիս բնակիչք Հայք և թուրքք խան են. առաջիններուն թիւը կը հասնի 500ի, բաժնուած 100 տան, իսկ երկրորդներուն 200ի, բաժնուած 40 տան:



218. Գարազալէի մէջ շիրխ:

ԳԱՎԱԳ. — Գիւղ կիլիկիոյ տաջնորդական վիճակի մէջ, յորում Հայք ունին վարժարան մը՝ սակաւաթիւ աշակերտներով: — Տես ՍԱՐԸ ԳԱՎԱԳ:

ԳԱՏԱԿԵԱՆ. — Վախուշուն յիշուած գիւղ Գիմանիքի (Վրահայաստան) մէջ:

ԳԱՏԸ ՔԷՕՅ. Տես ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ:

ԳԱՏԻՆԻ. — Այլազգարնակ գիւղ Այրարատայ Ուրծ և Արած գաւառի մէջ:

ԳԱՐԱԱՐԻԱԶ. — Լեւ Սիւնեաց Գեղարբունի գաւառի Արեգունի վիճակին մէջ:



ԳԱՐԱՐԱԶԱՐ. — Գիւղ Ալյարատայ Բազմաբնակ գաւառի մէջ, որ 1877ին սինէր 30 և 1882ին 10 տուն հայ բնակիչներ: ԳԱՐԱԳԱԼԷ կամ ԶՈՂԿԵՐՏ. — Գիւղ և

ւոր մեծութիւն սնի, կառուցուած է հրաբուխային բլրակի մը գլուխը Էրասիի ծանծաղաւի մը վրայ. հարաւային կողմէն նեղ ցամաքով մը կը միանայ գիւղի հետ, որ



219. Գարագալէ = Զողկերտ:

ամուր նշանաւոր բերդասեղի Ալյարատայ Ճակատը (Սուրմատի) գաւառի մէջ Երասիայ մտա, Սուրմատիի հարաւային արեւելեան կողմը: Այսպէս կոչուած է, շինուածքին սեւադոյն բարանց համար: Բերդը՝ որ շտիւ-

կառուցուած կային պաշտպանութեան համար երկու ամուր աշտարակներ, պարսպի շուրջն ալ կան շատ կիսախորժան աշտարակներ, բայց արձանագրութիւնը կը պակսին: Երեք կողմերէ բերդս պաշտպանուած էր Ե-



բասխէն և խորաձորերով, իսկ նեղ ցամաքի կողմէն ալ պարսպով շինուած կոփածոյ կարմրագոյն պորփիւր քարերով և սեւ խանձաքարով, իրստ վայելուչ և ճարտար, յարում կ'երեւին տեղ տեղ հայկական խաչքարեր: Պարսպաց մէկ մասը նորոգուած է վերջին ժամանակաց մէջ՝ խոշոր քառակուսի սեւ խանձաքարերով, բայց հին շէնքին վայելութենէն դուրի է: Գիւղի վարի կողմը կ'երեւին ի հնուց երեսի վրայ ձգուած հնձանաց և այգիներու տեղեր: Մինչև Ռուսաց և Պարսից պատերազմին ժամանակ, աստ կը բնակէին Պարսիկք, որոնց արձանագրութիւն ունեցող գերեզմանները կան Հայոց հին խոյածեւ և այլ տեսակ գերեզմանաց մօտ, որոնց մէջն է նաև սրագմբէթ (թ. 248), 12 կողմանի շիրիմ մը, կոփածոյ կարմրախայտ քարերով շինուած: Չի գիացուիր թէ երբ Հայք բոլորովին լքած են այս գիւղս, որ ի հնուքն եղած կը թուի քաղաքաւան: Տիւրուս այս կողմերս քննած միջոց, (1834, մարտ 18ին), կը յիշէ թէ քանի մը հայ բնաւանիքներ, զեռ նոր մտած էին բնակելու Պարսից լքած աները. բայց կ'երեւի ի վերջոյ ասոնք ալ տեղափոխեր են, վասն զի այժմեան բնակիչք միայն քուրդ են 22 տուն: Բերդաւանիս աւերակաց մօտ, Երասուխի եղերքը կը տեսնուին, հին ժամանակներէն ձգուած կամուրջի մնջթեր: Տեղւոյս բոլոր ընդարձակ աւերակները և հոյակապ շինուածոց մնացորդները, կը վկայեն թէ ժամանակաւ մեծ շէն մը եղած լինելու էր, զոր՝ Տիւրուս չգիտեմ ինչ հիմամբ Տիգրաւնակերտ քաղաք կ'անուանէ. ուրիշ մը՝ կը համարի Արտսգերից բերդը կամ Սարաբոնի յիշած Արշաւուր. տմանք ալ համարեցան Երուանդայ դաստակերտ մը, վասն զի մօտ է անոր շինուածոց: Հ. Ալիշան՝ հասաստի կը համարէ, թէ սա լինի Չողկերտ աւանը՝ զոր Եղիշէ կը թուէ մեր Արշակունի թագաւորաց զօրաց կայաններու և ձմերոցներու հետ, որոնց տիրեցին ուրացեալ Վասակի կողմնակիցները: Մեր բժշկարանաց և Համասփիւս ծաղկան հետեւեալ առասպելախառն պատմութեան մէջ Չողկերտ կը կոչուի. «Եւ այլք ասացին՝ թէ գտանի ծաղիկն ի Սուրմարի, ի գեղն որ կոչի Չողկերտ. երթ,

փորեա չափ տեղի և գտանես զնա» . . . : «Ասաց Անանէ. Ես գտայ ի Չողկերտ, և չարն փորձեցի. երանի է նմա որ գրարին գործէ»: Նշանաւոր եղած է ի հնուքն Չողկերտ, և յատուկ Չողկերտեայք անուամբ ասում կը յիշուի Հայոց թագաւորութեան բարձակալ իշխանաց և սոհմերու կարգին մէջ: Նորանոր քննութեանց կը կարօտի տեղս, որովք միայն պիտի կարողանանք հասաստի տեղեկութիւններ ստանալ, նշանաւոր աւերակացս հին պատմութեան վրայ: — Այրարատ, 122—124: — Այս անուամբ ուրիշ մի քանի գիւղեր և բերդեր կան մեր աշխարհի զանազան կողմերը: Գիւղերէն մէկ բանիին մէջ կան սակաւաթիւ Հայք, խառն ընդ օտարաց: — Տես ԳԱՐԱԳԱԼԱ:

ԳԱՐԱԳԱՅԱ (Սեւ սար). — Այլազգարնակ գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, վարդամարց գիւղի հիւսիսային կողմը՝ գրեթէ 2 մղոն հեռու: Գիւղիս սահմանները կը գտնուին հայկական եկեղեցիներու և գերեզմանաց հետքեր: — Այս անուամբ սար մը կայ Սիւնեաց Մրդուի գաւառի մէջ:

ԳԱՐԱԳԱՅԱՆ. — Այս անուամբ հայաբնակ երկու գիւղեր կան վարի Էղլիի մէջ: Այսպէս կոչուած են սեւագոյն քարերուն համար:

ԳԱՐԱԳԱՇԼՈՒ կամ ԳԱՐԱՀԱՃԻԼԻ. — Գիւղ Սիւնեաց այժմեան Զանգեզուր գաւառի մէջ: Ունի 1465 հայ և 252 այլազգի բնակիչներ:

ԳԱՐԱԳԱՅՈՒ (Սեւ դռակ). — Լեռ և նեղ անցք կիլիկիայ մէջ: Եգիպտական պատերազմի ժամանակ, Իսրայէլի փաշայ այս կայանը անանցանելի ըրաւ տեղւոյն ապաստանելու մեծամեծ կտորներով լեցնելով. բայց յետոյ հովիտները դարձեալ բացին, իրենց հօտերը անցնելու չափ բաւական ճամբայ մը:

ԳԱՐԱԳԱՓՈՒԼՈՒ. — Լեռնակ Այրարատայ Ծիրակ գաւառի մէջ: Էր թուի, թէ այսպէս կոչուած է աւերակ բերդի մը համար:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ կամ ԳԱՐԱՅԻԼԻՍԷ. — Վիճակ և աւան Այրարատայ Բաղրեանդ գաւառի մէջ: Վիճակս կը բռնէ Բաղրեանդայ արեւմտեան գաշափ արեւելեան մասը, և Ալաշկերտէն կը բաժնուի Տաշլի գետակով: Հիւսիսային կողմէն կը տարածուի մինչև



Ախտայ և Թանտուրակ լեռները, Հիւսիսային արեւելքէն Սինէկ լեռները և Հարաւային արեւելքէն մինչև Նոպա: Գարազիլիսէի անմիջապէս Հարաւային կողմն է խամուրայ լինակը, որ կը բաժնուի Մուրաս գետով: Բազրեւանդայ այս մասը լծէն այժմ առանձին լինակ կը կարգէ և Ալաշկերտի չափ և աւելի ևս բնակիչ ունի, բայց բնական բաժանմամբ ի հնումն, կը կարծուի լծէ վաղարշակերտի (Ալաշկերտ) մասն եղած լինի: — Գարազիլիսէ՝ այժմեան կառավարչանիստ վայրը, նախ զիւզ մ'էր Պարսկաստանի կառաւանի ճանապարհին վրայ: 1860—70 թուականներուն, իրև եկեղեցոյ կալուած, 16—15 կրպակներ շինուեցան այս տեղ հաստատուած կարգ մը Բաղիշեցի Հայ վաճառականներու ձեռնառութեամբ, և Բազրեւանդայ քովհանէն ետևիկոսի գործակցութեամբ: Նոյն ժամանակ Գարազիլիսէ ունէր 200 տուն զուս հայ բնակիչ: Վերջին ուս թուրքական պատերազմին ժողովրդեան մեծ մասը զաղթեց. մնաց միայն 80 տուն, բայց յետոյ Բաղիշէ, Պուլանիէ, Մանազկերտէ և այլ տեղերէ եկաւորներով բնակչաց թիւը աճեցաւ և հասաւ մինչև 250 տան: 1885 թուականին Թուրքը սկսան այս տեղ հաստատուիլ. առևտրական կրպակներ և արհեստանոցներ շինուեցան, ինչպէս նաև զօրանոց 1890—94 թուականներուն: Այսպիսով Թուրքը և քուրդ պաշտօնեայք բազմացան և մօտ 100 տուն ևս աւելցան: Զինուորական փաշան ուղած է Գարազիլիսէ (Ան եկեղեցի) անուրը փոխել և Ագ—շէ—հիր (Ալիտակ քաղաք) կոչել, սակայն չէ յաջողած: — Գիրքը հիւանդի է, ամէն կողմէ ունենալով բաց տեսարան. շուրջը կան առատ սաւն աղբիւրներ: Քօր գետի աջ եզրին վրայ շինուած է կառավարութեան պաշտօնատունը: Օր աուր նոր նոր շինութիւններով կը զարգարուի Գարազիլիսէ, և քիչ տարիներու մէջ քաղաք մը գտնուել կը խոստանայ: Ժողովուրդը երկրազորութեամբ կ'զբաղի, աղքատ, անկիրթ և վարքով ապահանուած է: Այս տեղ 1883ին Միաց. բնկերութիւնը ուսումնարան մը բացաւ և երեք տարի շարունակելէ վերջ փակուեցաւ, որովհետև տեղացիք իրենց խոստացած զու-

մարն վճարելու զլացան: Գարազիլիսէի առևտրականները Բաղիշեցի այն են, որք ունին 100 կրպակ, և նշանաւոր են անգութ վաշխառութեամբ: — Հայոց հին եկեղեցին, որ մեծ և սեւ քարերով շինուած լինելուն համար Գարազիլիսէ կոչուած է քաղաքաւանս, պատերազմի միջոց կրակի տրուած լինելով, ի վերջոյ նորը շինած են գիւղի արեւմտեան ծայրը: Եկեղեցին ունի 25 ի չափ կրպակներ, որոց հասոյթով բացուած է ուսումնարան մը: Այս տեղ կայ փոքր գերեզմանատուն մը, յորում միայն մէկ խաչքար կը տեսնուի ՌՃՀ (= 1721) թուականաւ արձանագրութեամբ: Օրացաձև քար մ'ալ գրուած է Աղաձև աղա Խաւաւիրեւնի գերեզմանին վրայ, արձանագրութիւն չունի, բայց վրան կայ բարձրաբանդակ մարդու պատկեր: Այս քարը բերել տուած են, Գարազիլիսէն 2 1/2 ժամ հեռու արեւելեան Հիւսիս գանուոյ փոխան գիւղի Բազկարեղէն: — Քաղաքաւանէս 1/2 ժամ յարեւել է Եզտոյի քիւր կոչուածը, որ Սինէկ լեռանց գէպի արեւմուտք խոնարհած թեւն է. արեւմտեան կողմն ալ, նոյնպէս 1/2 ժամ հեռու կը գտնուի Գաւաշի քիւր՝ որ զաշափ մէջ առանձնապէս բարձրացած է: Այս երկու քիւրերուն վրայ վերջին ուս—թուրքական պատերազմին հաստատուած էին երկու բանակները, առաջնոյն վրայ Ռուսը և երկրորդին Օսմանցիք. լծպահութիւնն ուսմբերը Գարազիլիսէի վրայէն կ'անցնէին մեծ շաշիւնով, յորում տակաւին կարգ մը բնատանիքներ աներկիւզ կը սպասէին Ռուսաց: — Բազրեւանդ, 253—257:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ կամ ՂԱՐԱՔԻԼԻՍԷ. — Գիւղ Այրարատայ վանանդ (կարս) գաւառի մէջ, ունի 72 տուն:


ԳԱՐԱԳԻԼԻՍԷ կամ ՂԱՐԱՔԻԼԻՍԷ. — Այս անուամբ Մեծ և Փոքր կրկին գիւղեր կան Գուգարաց այժմեան Պոչալու գաւառին մէջ: Երկուքն ալ հայաբնակ են, առաջինը ունի 674 հոգի, բաժնուած 65 տան. իսկ երկրորդը 500 հոգի, բաժնուած 50 տան:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ կամ ՂԱՐԱՔԻԼԻՍԱ. — Մեծ գիւղ Սինեաց Նճուկ (Զանգեզուր) գաւառի մէջ, Պազար—չայ գետի ձախ կողմը: Գիւղս



կը յիշուի ժԳՄ գարու մէջ : Բնակիչները  
 գաղթած են 1829 թուին խոյէն և Սալ-  
 մաստէն . կան նաև քանի մը տուն բնիկ-  
 ներ : 1886ի վիճակագրութեան համեմատ,  
 գիւղս ունի 106 տուն և 977 բնակիչ ,

բարձրամասնակի վրայ : Տները քարաշէն են՝  
 առանձին պարսպապատ բակերով . կանոնա-  
 ւոր փողոցներ չկան : Գետի եզերքը և մա-  
 նաւանդ գիւղի հարաւային կողմը կան ու-  
 ղնակներ , որք զեղեցիկ տեսք կու տան :



220 • Գարագիլիսէի Ս . Յովնանէս եկեղեցին •

680ը Հայք՝ բաժնուած 69 տանց , իսկ  
 մնացեալը Թուրքք . բայց յայտնի է թէ  
 ա յժ՛մ այս թիւերը բարձրացած են : Հայ-  
 կական թաղը զետեղուած է գլխաւորապէս  
 գետի եզերքը , իսկ Թուրքացը քիչ մը վեր

Գարագիլիսէի կեդրոնը կը գտնուի արքու-  
 նական միլատեան գարոցը , որ բացուած է  
 1882 թուին : Ս . Յովնանէս (Թ . 220) հին  
 եկեղեցին կառուցուած է գիւղի արեւմտեան  
 հիւսիսային կողմը , բարձր գիւղով : Սև



սրբատաշ քարերով զեղեցիկ շէնք մի է. 19, 17 մետր երկաթնութեամբ և նոյնչափ մետր լայնութեամբ: Ներքուստ խաչաձև է և անսիւն. չորս կիսաբոլոր, չորսական մետր լայնութեամբ թեւեր՝ երկեղեցիս կը բաժնեն չորս մասերու, որոնց անկիւնները կան խորհրդանոցներ՝ իւրաքանչիւրը մէկ պատուհանով: Կամարները՝ որ կը բոլորուին թեւերու պատերուն կից կեղծ սիւներու վրայ՝ սոմանական են. ասոնց վրայ կը բարձրանայ 7, 2 մետր բարձրութեամբ կաթուղիկէն, չորս պատուհաններով. զմբէթը քանդուած է: Կաթուղիկէն զարդարուած է աւետարիչներու և մի քանի այլ բարձրաքանդակ անդրիւններով, որոնք արձանադրութիւններ սնին: Ունի երկու գուն, արեւմտեան և հարաւային կողմերը, որոնց վրայ կան մէկ մէկ մեծ պատուհան: Արեւմտեան դրան մօտ կայ արեւակնային ժամացոյց և մօտը ՆԿԶ (= 1017) թուականաւ արձանադրութիւն: Եկեղեցիս վերջերս նորոգած են զիւղացիք. մէջը սեղանի աջ պատի վրայ ևս կայ արձանադրութիւն առանց թուականի: — Սիսական, 213—214: Զանգեզուրի գաւառ, Ա. 87—89: Եւ այլն

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ կամ ԳԱՐԱՔԻԼԻՍԷ. — Գիւղ Արարատականի Մակու գաւառի մէջ. ունի 223 հայ բնակիչ, բաժնուած 29 տան: Եկեղեցի և զարոց շունի:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ կամ ԳԱՐԱՔԻԼԻՍԷ. — Գիւղ Այրարատայ Նիղ (Պաշ Ապարան) գաւառի մէջ: Ունի 818 հայ բնակիչներ, բաժնուած 84 տան: Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի: Կը տեսնուին հին եկեղեցւոյն մնացորդները, որ կառուցուած է եզեր սեւ քարերով:


ԳԱՐԱԳԻԼԻՍԷ ԽԸԼԻ կամ ԽԸԼԻ. — Հայարնակ զիւղ նոյնպէս Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, թէքէնիի արեւմտեան հարաւային կողմը՝ երկու վերստ հեռաւորութեամբ և Ալեքսանդրապոլի հիւսիսային կողմը 1/4 վերստ հեռու: Կառուցուած է նեղ ձորակի մը եզերքը: Բնակիչք՝ որոց թիւը 900ի կը հասնի, բաժնուած են մօտ 100 տան. զաղթած են զանազան տեղերէ: Եկեղեցին կառուցուած է 1950 թուին, հին եկեղեցւոյ

տեղը. ունի սլեւոր անուամբ աւետարան մը 1601ին գրուած:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ ԽԸԼԻ կամ ԳԸԼԻ ԳԱՐԱՔԻԼԻՍԷ ՓՈՔՐ. — Բազմամարդ հայարնակ զիւղս կը գտնուի Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, Ալեքսանդրապոլի հարաւային կողմը վեց վերստ հեռաւորութեամբ զաշապին զիրքով: Ինչպէս Հասան խանի, նոյնպէս և 1854ի կոխնուուն ժամանակ ստնակոխ եղեր է: Պարսիկները շատ անդթութիւններէ և կոտորածներէ զատ, բաւական զերիներ ևս տարեր են, յորոց 80 հոգի կորուեր են, իսկ մնացեալը ցրուեր են Լոսիի և արեւմտեան Շիրակի կողմերը: 1854ի պատերազմին Պարսից փոխարէն Քրդերը մեծ փրաններ տուեր են և առ ժամանակ մի զիւղս անմարդաբնակ մնացեր է: Բնակչաց թիւն 3596ի կը հասնի, բաժնուած մօտ 500 տան. այս թուոյն մէջ են նաև կաթուղիկէ Հայք՝ 853 հոգի: Միայն 40 տուն եկած են 1854ի պատերազմէն վերջ Ալաշկերտի և Մշոյ գաւառներէն. կաթուղիկէ Հայք ևս եկած են նոյն ժամանակ: Միւսները բնիկ կը համարուին, թէ իրենց նախնիք շատ հին չեն, այլ Հասան խանի ժամանակ և առաջ եկեր են զանազան կողմերէ:

Տեղւոյս հայ կրկին հասարակութիւնը, որիչ տեղերու բազմամամբ, բացառութիւն կը կազմեն, իրարու հետ խաղաղ և սիրով ապրելով: Անին երգող Արարատեանի ծննդավայրն է զիւղս, և այս քրիստոնէական և արեւակցական սիրոյ գլխաւոր պատճառն է անոր խաղաղասիրական և ազգասիրական ոգին և ուղղութիւնը: Գիւղիս նախնական անունը եղեր է Գան—Գմա, զոր բնակիչներէն ոմանք կարպացի են հին եկեղեցւոյ յիշատակարանի մէջ. իսկ արդի անունը նախկին եկեղեցիէն առած է, որ շինուած է եզեր սեւ քարերով: Գընի յաւելուածն ուղ, Պարսկաստանի Գընի զիւղէն եկած քանի մը բնասնիքներ զրած են՝ իրենց հայրենի զիւղի անունը պահպանելու համար: Այժմեան եկեղեցին 1860—65 թուականներուն սրբատաշ քարով և փայտածածք շինուած է հին եկեղեցւոյ տեղը, որ մօտաւորապէս ինն հարիւր տարւոյ հնութիւն ունեցեր է: Երբ





221 . Խաչարձանի Մեծ Գաբարձիկիսկի .



քանդեր են նոր եկեղեցին հիմնելու համար, բացուեր է գերեզման մը և Գէորդ կաթողիկոսի հրամանաւ ամբողջեր են եկեղեցւոյ մէջ. և այն օրէն ուխտ սահմանուեր է: Քաղաքական իշխանութիւնը թէև աշխատեր է յաշտ ժողովրդեան ունայնացնել, բայց բարեպաշար իրենց ջերմեանոյ ուխտաւորութիւնը կը շարունակեն: Եկեղեցւոյ հիւսիսային կողմը կառուցուած է ուսումնարանը: Կաթողիկոսայ Հայոց եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին, կառուցուած է 1859ին: Գարագիլիսէի մէջ կայ մէկ աղբիւր. հողը մեծաւ մասամբ անջրլի է, Ախուրեանի և գերբը կը մշակեն բանջարեղէններ և վարունգ: Արագածի ջուրը կը հասնի մինչև այս տեղ և բաւական հողեր անով կը ջրուին: — Արեւելեան Մամուշ, Իր. 584—585:

ԳԱՐԱԳԻԼՍԷ ՄԵՆՐ. — այսբնակ աւան կը գտնուի Գուգարաց Տաշիր գաւառի Բաւրակիձորի մէջ, Տելիջանէն զէպի Ալեքսանդրապոլ տանող արբունական ճանապարհի վրայ, երկրորդ կայարան է: Հարաւային կողմը անտառաւէտ լեռներ են, իսկ հիւսիսային կողմը մերկ և գրեթէ անպաշար սարաւանդներ: Գիւղս քաղաքանման տեսք և ձև ունի, փողոցները բաւական լայն ու կանոնաւոր, շէնքերը մեծ մասամբ նոր ձևով մաքուր ու քարաշէն, աները պարտիզաւոր դարպարուած զլխաւորարար բալի խնձորենի և տանձենի ծառոց մի քանի տեսակներով, և բանջարանոցներով: Ունի երկաթուղւոյ կայարան, լիթիատուն, հեռագրատուն, և բաւական թուով վաճառականական և արուեստական խանութներ: Ունի 2686 բնակիչ, բաժնուած 380 տան, սովորութիւնը քաղաքացւոց նման են, անական կահարասիք կէս ասիական և կէս եւրոպական, անուանի են հայ կանանց և օրիորդաց ձեռագործ մաքուր գորգերն ու կապերաները: Չարգացման տեսակետով գոհացուցիչ վիճակ ունին Գարագիլիսեցիք, երկուստ ուսումնարանները իրենց փառքն ու պարծանքը կաւելցնեն: Կրօնական զգացմամբ ևս շատ տեղերու Հայոց կրնան բարի օրինակ լինել, ազգային և կրօնական ամէն բարենպասակ գործի սիրով և ինքնաշոժար կը փարին: Բնակչաց մեծամասնութիւնը բնիկներ կը հա-

մարուին, կան գաղթականներ՝ զլխաւորաւ բար Այրարատէն և մասամբ Սիւնեաց աշխարհէն, որոնց գաղթականութեան ժամանակը մթութեան մէջ թաղուած է: Կան նաև 1830 թուի կարոնյ մեծ գաղթականութեան մնացորդներէն, որոնք ի սկզբան բազմաթիւ էին, բայց ինչ ինչ հանգամանքներէ հարկադրուած շատերը գաղթիւր են Ալեքսանդրապոլ և մնացած են հազիւ 80 տուն: Աւանիս եկեղեցին կառուցուած է 1834 թուին, կեդրոնէն հետո հիւսիսային կողմը. ժողովրդեան բազմութեան և կրօնասիրութեան նայելով շատ փոքր է, բայց պատճառը շինութեան ժամանակ ժողովրդեան սակաւութիւնն եղեր է. Պ. Փաշա Եղիգարեան վերջին տարիներս մտադրութիւն ունէր իր հաշուով վերանորոգել եկեղեցի, և եթէ հնարուեր էր, քիչ մը մեծցնել: Աւանիս հիւսիսային արեւելեան կողմը կը միանան երեք գետակներ, մին Ալգուսեի ձիւղը արեւելքէն եկող, երկրորդը արեւմուտքէն՝ Բամբակի ջուրը, երրորդը հարաւային անտառաւէտ սարերէն, ասոնց զլխաւոր ձորը տեղացիք կանուանեն Վաւքի ձոր: Ի հնում այս ձորի մէջ կան եղեր Վաւեայ Չորի և Պապանի անուամբ երկու գիւղեր, հանդերձ վանքերով: Չորի զլուին է Մայմի բարձրագիւր լեռը, որուն գագաթէն կը տեսնուին Մասիսը և Տփիսիսի շրջակայքը: Այս լեռան ստորոտէն բղխող աղբիւրը երբեմն այլ և այլ հնութիւններ, ուլունքներ, մետաղեայ առարկաներ և փոքրիկ արձաններ գուրս կը բերէ. թէ և այս մասին ուշադրութիւն դարձուցիր է կառավարութիւնը, բայց չէ կարողացիր իմանալ այս ջրաբեր հնութեանց ծագումը: Մեծ Գարագիլիսեցիք կը պարսպին մասամբ վաճառականութեամբ և արհեստներով, և մասամբ հողագործութեամբ և անասնապահութեամբ: Հողը քիչ և անարգասաւոր լինելով, իրենց ապրուստի մէկ մասն ալ կը ձարեն փայտափաճառութեամբ և անասնապահութեամբ: Օղի պատուականութենէն ժողովուրդը ընդհանրապէս կայտառ և առողջ է մանկանց մէջ, որք աւելի կրնան ենթակայ լինել զանազան տկարութեանց, չես գտներ թոշնած գէմքեր, հիւանդութիւնք հազուագէպ են. ջերմը միայն ծանօթ է Գարագի-



լիսեցաց: Ժողովրդեան մէջ աւանդութիւն մը չկայ աւանիս հիմնուելու ժամանակին և անուան նկատմամբ, բայց հնագոյն խաչքարերը և զերեզմանները ապացոյց են թէ աւանս գոյութիւն ունէր հին անյայտ ժամանակներէ սկսեալ: Այժմեան անունը ստացեր է, բլրակի վրայ ամբողջովին սև քարերով կառուցուած փոքրազիւ եկեղեցիէն, որ ժժժ գարու երկրորդ քառորդի սկիզբնէն, որ կրկրաշարժէ քանդուեր է: Հին բնակիչները Հասան խանի հրտակներու կառագի յարձակմանց ենթարկուելով, մինչև խաղաղութեան վերականգնումը, ապաստաներ են Լոսիի քարերու և այրերու մէջ: Վերջ Հայաստանի մէջ մի քանի երես այս ազետալի անցքերուն և աւանիս աւերմանը նուիրուած է:

Մեծ Գարագիլիսէի արեւելեան կողմը, չորս վերստ հեռաւորութեամբ կայ Վարդանի գիւղը՝ որուն մօտ է Ս. Կիրակի ուխտատեղին: Նախ այս տեղ կայ եղեր խաչարձաններով հանդստարան, յետոյ Մեծ Գարագիլիսեցի բարեպաշտ մարդ մը մէկ տեղ հաւաքեր է այդ խաչարձանները, և շինել ատուր է մատառձեւ, այնուհետև սկսեր են յաճախել ուխտաւորք. թէև ամէն շաբաթ և կիրակի անդակաս են ուխտաւորք, բայց բուն ուխտի օրն է Կարմիր կիրակին: Աւանիս արեւմտեան կողմը, Ղշրաիի սահմանի մէջ կայ նոյնպէս Կամակատար անուամբ ուխտական մատուռ մը, որ և ամէն տարի վերափոխման Ս. Պատարագ կը մատուցուի, 1840 թուին վերանորոգած են մատուռ: Երրորդ ուխտատեղին Ս. Սարգիս՝ կը գտնուի Եղուպու գիւղը, որուն յատկացեալ ուխտի օրերն են Ս. Սարգիսի տօնին և Զատիկի տոնային երկուշաբթին: — Արեւելեան Մատուռ, ԻՉ. 236—237: Մարտ, Ե. 1579—1596: Եւ այլն:

ԳԱՐԱԳՈՒՄԷ ՆՈՐ. — Գիւղ Այրարատայ աշտիեան Ալեքսանդրապոլի գաւառի, Չիզիւլէր վիճակի մէջ: Ունի 332 հայ բնակիչներ, բաժնուած 34 տան:

ԳԱՐԱԳՈՒՄԷ ՆՈՐ կամ ԳԱԼՅՃԻԿ. — Հայարնակ գիւղ Սիւնեաց Թղուկ (Չանգեղուք) գաւառի մէջ: Ունի 379 բնակիչ, բաժնուած 43 տան:

ԳԱՐԱԳՇԼԱ. — Կիլիկիոյ մէջ, Ատանայի վիճակներէն մին:

ԳԱՐԱԳՇԼԱԳ կամ ՂԱՐԱՂՇԼԱՂ, — Հայարնակ գիւղս կը գտնուի Սիւնեաց Աղազէճք գաւառի արեւելեան և Երուշի հարաւային կողմը: Ունի 400էն աւելի տներ, և բաժնուած է քանի մը մասերու: Տներէն շատեր կը գտնուին լեռան գագաթը, իսկ միւսները լեռան ստորոտները: Գարագշլագի չորս կողմը կան խիտ անտառներ: Ունի քարաշէն եկեղեցի մը: — Այս անուամբ ուրիշ քանի մը գիւղեր ալ կան Սիւնեաց և Այրարատայ մէջ, որոց բնակիչք այլազգի են:

ԳԱՐԱԳՈՒՂՈՒ. — Լեռնակ Այրարատայ Երրակ գաւառի մէջ, բարձր՝ 1820 մետր:

ԳԱՐԱԳՈՒՂԱԳ. — Մեծ հայարնակ գիւղ կամ աւան Բարձր Հայոց Գերջան գաւառի մէջ, գրեթէ 3 ժամ Մամուրաթունէն հեռու, հարաւային կողմը: Գիրքը գաշտային է. տար մօտ է Եկրաւ տերեւի կոչուած ձորը, որ աւազակաց բոյն է:

ԳԱՐԱԳՈՒՂԷ. — Հանգրուան Այրարատայ Երրակ գաւառի մէջ, Անիի հարաւային և Ախուրեանի աջ կողմը: — Ուրիշ երկու գիւղեր ևս կան Իջմիածնի գաւառի մէջ, այլազգի բնակիչներով:

ԳԱՐԱԳՈՒՇ կամ ՂԱՐԱՂՈՒՇ, — Գիւղ Սիւնեաց Ճահակ գաւառի մէջ, համանուն լեռանց արեւելեան կողմը: Միաբանոյ Հայոց ամենէն փոքրիկ գիւղն էր սա: Ֆրիտոն ժէլ գարու սկիզբը 50 տուն բնակիչ կը նշանակէ Գարագուշի, 150 հոգի հազորայնկալք և 100 ազայք. եկեղեցին կը կոչուէր Ս. Աստուածածին: Կէս վար վերջը՝ Հ. Գոմինիկ Նազար, չորս տուն միայն կը գտնէ և 30 հոգի. Պետիկ՝ 1674ին հինգ տուն, իսկ նոյն գարուն վերջը և ոչ մէկ տուն ունէր: Գիւղիս մէջ վանք չկար, այլ միայն եկեղեցատուն՝ յորում կար քահանայ մը և սպասուոր կղերիկոս մը, և բնակչաց նուազած ժամանակ՝ երբեմն ճահակէն կու գար քահանայ, թէև 1725ին, գաւառին վանահարց ստորագրութեանց մէջ գրուած է նաև «Ֆրս Ագարիս Ղարայդուշոյ վանից»: Չի գիտցուիր թէ երբ բարբոսին աւերեցաւ և բնակիչներէ գաւառիկացաւ այս գիւղս, և համանուն ուրիշ գիւղ մը շինուեցաւ խոր վիճակին մէջ:



ԳԱՐԱԳՈՒՐՏ (Մեշ գոյլ). — Այրարատայ արեւելեան Ստորին Բասենի մէջ. գիրքը գեղեցիկ է: Այժմեան բնակիչք են Եղերացիք և պաշտպան կուզան Գազախները:

ԳԱՐԱԳՅՈՒՆԵՆԻՍ (Մեշահոյ). — Այս անուամբ կրկին թաթարաբնակ գիւղեր կան Այրարատայ ճակատք (Սուրբտոբ) գաւառի մէջ: — Այս անուամբ ուրիշ շատ գիւղեր կան Այրարատայ, Սիւնեաց և այլ նախնազաց մէջ, սակայն ոմէնն ուլ տըլաղգարնակ են:

ԳԱՐԱԳԱՇ կամ ՍԵՒ ԳԱՐ. — Հայրենակ գիւղ Արցախի Զաւէ (Գազախ) գաւառի. հիմնուած է Հաշա-Ջրի հիւսիսային կողմը, հոգտի մը մէջ: Բնակիչք՝ 2469 հոգի, բաժնուած 475 տան, գաղթած են կելըտան և Զրարերդ գաւառներէն: Ունի պատուական օղ և անողջարար ջուր: Եկեղեցին նսիրուած է Ս. Պետրոսի:



222. Գարաղաշ խամ:

ԳԱՐԱԳԱՇ. — Լեռ և գիւղ Այրարատայ ճակատք (Սուրբտոբ) գաւառի մէջ:

ԳԱՐԱԳԱՇ. — Գիւղ ծովային կիլիկիոյ, յորում կան 30 տուն Անսարի Ասորիք: Հոս կայ նաև իջեւանատուն մը Գարաղաշ խամ անուամբ:

ԳԱՐԱԵԱԳՈՒՊ. — Հայրենակ գիւղ Եղուգառի վիճակին, ունի վաճանեան վարժարան մը, 6) աշակերաններով:

ԳԱՐԱԵԱՋ. — Երկաթուղոյ կայարան Տփղիսի համանուն վիճակին մէջ: Բնակիչք 103 տուն գանազան ազգերէ:

ԳԱՐԱԲԷՓԷ. — Այս անուամբ քսնի մը այլազգարնակ գիւղեր կան Այրարատայ մէջ:

ԳԱՐԱ ԹՈՒԹ. — Տաճկարնակ գիւղ Կիլիկիոյ, Զէյթունի հիւսիս արեւելեան կողմը:

ԳԱՐԱՆԵՆԷ. — Լեռ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ:

ԳԱՐԱԻԿԻՆԵՆԷ. — Լեռ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ:

ԳԱՐԱԼ. — Աւերակ և ամայի գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ:

ԳԱՐԱԼԱՐ. — Փոքրիկ թաթարաբնակ գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ: — Այս անուամբ ուրիշ գիւղեր են կան գանազան կողմեր. ամէնքն ալ ալազգարնակ:

ԳԱՐԱՆԵՆԷ. Տես ՇԷՐԲԵՆԷԼԻ ԳԵՏ:

ԳԱՐԱՌԱՆ ՊԵՎԼԻ. — Հայրենակ գիւղ Սիւնեաց Կաթնուան գաւառի մէջ: Ունի 120 տունէն աւելի և եկեղեցի մը: Սա իւր գիրքովը կը կարծուի թէ լինի Երզնասիւս մեծ գիւղը, զոր կը յիշէ Թապալեանիէ, և երկու փարսախ հետը կը գնէ Երասխէն:

ԳԱՐԱՌԱՋ. — Լեռ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ: — Կիւրծի-եղ գիւղի արեւելեան կողմը, շերտնց մէջ կան մեծ շինուած սեղանայ աւերակներ, հինոյ ձիթահանք և շատ ջրաղացներ. այս աւերակները կը կոչուին Խարապա Գարախաչի, այսինքն աւերակ Գարախաչ շերտն. այս աւերակայ բարերէն տարած են յԱշերտան գրասուղ շինութեան համար:

ԳԱՐԱՌԱՋ. — Գիւղ Այրարատայ Երեւան գաւառի մէջ, ունի 786 հոգի. բաժնուած 64 տան, կէսը Հայք են և կէտը թաթարք: — Ուրիշ գիւղ մ'ալ կայ կարտայ վիճակին մէջ, 190 հոգի, բաժնուած 22 տան, ամբողջ հայ են:

ԳԱՐԱԿԷՅՈՋ. — Գիւղ Ռեբիոյ, ունի 42 հայ բնակիչ, բաժնուած 8 տան: Եկեղեցի և գորոց չկան:

ԳԱՐԱԿԷՅՈՋ. — Գիւղ Այրարատայ Բառեն գաւառի մէջ:

ԳԱՐԱԿԷՅՈՒ (Մեշ լիւ). — Սիւնեաց Եղուկ գաւառի մէջ, 8035' բարձր գիրքով: Կը կարծուի թէ հրաբխային ներդարձութեան ներէ գողացեր է:

ԳԱՐԱԿԷՅՈՒ. — Լճակ Այրարատայ Ռարժ և Արած գաւառի մէջ. եզերքը կը գտնուի Աղգիլիսէ գիւղը: — Տես ԱՐԱԳԱՇ:

ԳԱՐԱԿԷՅՈՒԼԻՐ. — Այս անուամբ լճակներ կան Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ:

ԳԱՐԱԿԻՆԵՆԷ. — Լեռ Այրարատայ Բասեն գաւառի արեւելակողմը: — Այս անուամբ երկու գիւղեր են կը յիշուին:



ԳԱՐԱՀԱՃԻԼԷՐ. — Գիւղ և բերդ կիլիկիոյ. Ատանայի արևելեան կողմը:

ԳԱՐԱՀԱՃԻԼԷ. — Այրարատայ և Սիւնեաց մէջ կան այս անուամբ բանի մը այլազգարնակ գիւղեր:

ԳԱՐԱՀԱՍՍՆ կամ ՂԱՐԱՀԱՍՍՆ. — Կարնոյ գիւղերէն մին. ունի 70 տուն բնակիչք, կէսը թուրքք: Հայք ունին Ս. Աստուածածիկն անունով եկեղեցի մը:

ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Հայաբնակ գիւղ կիլիկիոյ ատաջնորդական վիճակի մէջ: Ունի եկեղեցի մը և մէկ երկսեռ վարժարան, մտա 100 աշակերաններով:

ԳԱՐԱՀԻՍԱՐ կամ ԱՅԻՈՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. Գղ. KARA-HISSAR. — Գլխաւոր քաղաք Պրուսայի կուսակալութեան համանուն գաւառի մէջ: Կ'ինկնայ 28° 5' երկայնութեան և 38° 44' լայնութեան մէջ, և կը լծնած է հսկայ գառիվերի մը կողմին: Առջեւ բաւական ընդարձակ ու բեղմնաւոր դաշտազեալին մը կայ: Յիշեալ գառիվերին առջեւ անջատ և ուրոյն գիւրքով կը բարձրանայ (400 մետր) քաւածայտ մը, որ եզրիտական բուրգերը կը յիշեցնէ, և որուն վրայ կառուցուած է հնօրեայ բերդ մը: Քառորդ ժամու չափ հեռու են քաղաքէն Անատոլի և Գասապայի ընկերութեանց երկաթուղոյ կրկին կայարանները, որոնք տեղոյս վաճառականութեան մեծ գիրութիւններ կ'ընծայեն: Գարահիսարի նշանաւոր բերքն է ափսնը, որ ամէն տարի խնամով կը բերէ կողմանցս բարեմիտ գիւղացիներու գէմքերուն: Ելծէ աննպաստ եղանակներու արտուր բերմամբ այս փրկարար բերքը պակսի առեւարական հրապարակէն, զործունէութիւնները կը զգորին, ամէն շահագիտական ոյժեր կը սպառին, ապրուտի միջոցները կը զփուարանան և ժողովուրդը կը տարուբրի գրամական անձկութիւններու մէջ: Տեղս իւր այս բերքով ընդհանրապէս գերազանցած է ուրիշ մերձաւոր քաղաքները: Քաղաքին բնակիչները, ըստ վ. Քինէի, կը հաշուին 17436 հոգի, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք.	12606	հոգի
Հայք	4612	»
Յոյնք	218	»
Գուժարն.	17436	հոգի:

Երեւելի վաճառականները ընդհանուր առմամբ կը զբաղին ափսնի, պրոնի (թիֆթիկ) և աշարի ընդարձակ ու յանգուզն գործերով: Մէկ բանի բացառութիւններէ զատ ձեռաց և արհեստից վերաբերեալ զործով զբաղող վաճառականները երկրորդ կարգի կը վերաբերին. օտարական վաճառականներ ևս կան որոնց մէջ մեծամասնութիւն կազմած են կեսարացիք: Հոս կը գտնուին այնպիսի կալուածատէրեր ու զբամատէրեր, որոնք շատ մեծ հարստութիւն գիլած են: Հասարակաց շէնքերէն կան գաւառապետի և քաղաքական կառավարութեան պալատներէն զատ, 10 մկլիթ, 2 եկեղեցի Հայոց, 2 հասարակաց գրասուն, 7 խան կամ հիւրանոց, զինուորական շտեմարան մը, 5 վաճառատուն, 2 դեղարան, 1081 կրպակ, և այլն: Քաղաքի օդն ու ջուրը բաւական մաքուր և առողջարար են, բայց յաճախ պատահող խոնաութեանց պատճառաւ հարբուխը անպակաս է: Տեղոյս Հայք ունին Ս. Ահակեան վարժարան մը 250 մանչ և 200 աղջիկ աշակերաններով. կան նաև ուրիշ չորս աղջկին ուսումնարաններ՝ մտա 200 աշակերաններով: Վերջին (1895ին) ղէպքերուն շատ զոհ ունեցան մերազնեայք և ստացուածքնին թալանութեան: — Կ'ըսուի թէ քաղաքս Տրոյիոյ պատերազմէն վերջ կառուցուած ըլլայ մակեդոնական գաղթականութենէ մը: Նշանաւոր էին ի հնումն քաղաքիս մարմարիսնի հանքերը. Կ. Պոլսի Ս. Սոփիայի գեղեցիկ սիւներէն ոչ սակաւք հանուած են նոյն քաւածանքերէն: Տեղոյս քաղաքական կառավարութիւնը կը բաղկանայ մահմետական նախագահէ մը և 12 անգամներէ, 7ը մահմետական են, 5ը հայ և 2ը յոյն: — Սուրհանդակ, Բ. 294: Վ. Քինէ, Գ. 224-241: Եւ այլն:

ԳԱՐԱՀԻՍԱՐ ԹԵՔԵԷ. — Ծովային կիլիկիոյ վիճակներէն մին:

ԳԱՐԱՀԻՍԱՐ ՇԱՊԻՆ կամ ԳԱՐԱՀԻՍԱՐ ՇԱՐ. ԳՐԻ. Գղ. KARA-HISSAR-CHARKI. — Գլխաւոր քաղաք յիսարատայի կուսակալութեան համանուն գաւառի: Կ'ինկնայ կարնոյ և Եւզոկիոյ մէջ տեղ, Ազար գաշաի հիւսիսային կողմը, կերտուունէն 82 հազարամետր հեռու. կառուցուած է բարձրագագաթ քարա-



լերան մը ստորաըը և շատ նմանութիւն ունի Անկիւրիոյ: Սեա քարալերան գագաթը ունի փոքրիկ բերդ մը՝ Կոմենենանց ժամանակներէն մնացած: Տները և շուկաները շինուած են լերան ստորաըը: Քաղաքիս բնակիչք, ըստ վ. Քիւնէի, են 11700 հոգի, բաժնուած հետեւեալ կերպով.

Մահճատականք . . .	7500	հոգի
Հայք Լուսաւորչական . . .	1700	»
» Կաթողիկէ . . .	750	»
» Բողոքական . . .	500	»
Յոյնք . . .	1650	»
<hr/>		
Գումարն... 11700	հոգի:	

Շապին Գարահիսարու հայաբնակ գիւղերը հետեւեալք են, որոց բնակչաց նոր թրւահամարը չունենալով, չկարողացանք աստ գնել: Այս գիւղերէն զրեթէ ամէնքն ալ ունին մէկ մէկ վարժարան.

Անդրէաս	Ֆելմուհն արսուսու
Բիւրք	Սէվինտիք
Սիս	Քէչէյիւրս
Էսկի Ծէհիր (Հին քաղաք)	Կէրան, Ղրան
Եէնի քէօյ (Նոր գիւղ)	Ագարակ
Մէսայոց (Մշակոնց?)	Մանուստ
Քէրեմանս (Կեմանց?)	Կօլլա հիսար
Գոմէշտուն	Պուսէյիս
Ալամնիկ	Աներդի
Վարի Աճպտեր	Չրտախ
Վերի Աճպտեր	Ծիպերի
Արղավիս (Աղրախ)	Թամգարս
Աղուանիս	Համամ
Ապանա	Լէթարից
	Տէմիրճիլիք

Հայք ունին երկու եկեղեցի, Ս. Ստեփանոս և Ս. Աստուածածիկն. ունին նաև երկու ուսումնարան, Մուշեղեան և Ս. Փրբկչեան, միահամուռ մօտ 500 աշակերտներով: Ժողովուրդը աշալուրջ լինելով, տակաւին լաւ վիճակի մէջ է տեղւոյս վաճառականութիւնը: Քաղաքս նախ կառուցած է Պոմպէոս, և հին անունն կը կարծուի Նիկոպոլիս. 879 հիճրէթի թուականին Յրեթիճ Մէհմէմէար գրաւեց: Քաղաքիս մօտ կայ պողիզի առատ հանք: Ամբողջ Շապին Գարահիսարի տարեկան վաճառականական շարժումն կը հասնի միջին հաշուով 2133485

Ֆրանկաց. յորոց 1469305 ֆրանկը գուրս զրկած աղբանքներու գինն է և 464180 ֆր. ներմուծուած աղբանքներու գին: Գաւառին տարածութիւնն է 9800 քառ. հազարամետր. և կը պարունակէ 1100 գիւղեր: Գաւառիս բնօրէն բնակչաց թիւն է 77000, յորոց 1800ը Հայք են: — վ. Քիւնէ, Ա. 774-789:

ԳԱՐԱՃԱ. — Գիւղ Տրապիզոնի առաջնորդական վիճակի մէջ. ունի թաղային վարժարան մը:

ԳԱՐԱՃԱ. — Ամայի գիւղ Այրարատայ Կոտայք գաւառի մէջ:

ԳԱՐԱՃԱԱՍ. — Կիլիկիոյ (Ատանա) վիճակներէն մին:

ԳԱՐԱՃԱԱԸ ՏԷՐԷ. — Չորակ լեռնային կիլիկիոյ մէջ:

ԳԱՐԱՃԱՎԷՐԱՆ. Տես ԳԱՐԱՃԵՕՐԷՆ:

ԳԱՐԱՃԱՎԷՐԻՆ. — Գիւղ Կեսարիոյ առաջնորդական վիճակի մէջ: Ունի Սմբատեան անուամբ վարժարան մը, 30 աշակերտօք:

ԳԱՐԱՃԱ ՏԱՂ (Հն. Սեա շեստն). — Այսպէս կը կոչուի Տարսուի շրջային այն մասն, որ կ'ինկնայ Տիգրիսի և Կիբրատի մէջ տեղ: Սեա կոչուած են այս լեռները իրենց դոյնին համար. թէ՛ հողը և թէ՛ քարերը հին շիջեալ հրաբուլի մնացորդներ են:

ԳԱՐԱՃԵՎԷՐԿԱՄ ԳԱՊԱՃԵՎԷՐԿԱՄ. — Գիւղ ճանիկու առաջնորդական վիճակի մէջ: Ունի Ս. Կարապետեան վարժարան մը և 100 աշակերտ:

ԳԱՐԱՃԵՕՐԷՆ ԿԱՄ ԳԱՐԱՃԱՎԷՐԱՆ. — Գիւղ Այրարատայ Նիգ գաւառի մէջ. Չարարիայէն կոչուած է ՍԵԼԱԵՐ: Ունի 10 տուն հայ և 30 տուն այլազգի բնակիչներ: Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածիկ:

ԳԱՐԱՃՈՐԱՆ. — Գիւղ Բարձր Հայոց Մանանաղի գաւառի մէջ, մամախաթունի արեւելեան հիւսիսային կողմը:

ԳԱՐԱՄԱՆ ԿԱՄ ԼԱՐԱՆՏԱ. Գղ. KARAMAN. Յն. Λάρανονα. — Գլխաւոր քաղաք նոյն անուն գաւառի կեդրոնը, 75 հազարամետր իկոնիոնէն հեռու հարաւային արեւելեան կողմը, Կիւնաէրէ-սու վտակի եզերքը: Ի հնումն քաղաքս Լարանտա կը կոչուէր և իւր շրջակայքով Լիկայոնիոյ վիճակ մը կը կազմէր: Լեւոն Մեծագործ աիրած է քաղաքիս, որ և Սե-



ընկերան Երնուազէմի ասպետաց պարզեւած ժամանակ, կը խոտանար իրենց նուիրել նաեւ Լարանաան: Լարանաայէն էին հայրենօք Կեսաոր՝ և իւր որդին Պիտանդր բանասեղծները: Քրիստոսնէութեան սկիզբները եպիսկոպոսանիստ թեմ՝ եղած է իկոնիոյ նահանգին: Քաղաքիս մէջ չկան յունական կամ հասմէական հնութիւններ, բայց կան

դաքս այժմ ունի 21000 բնակիչ, զանազան ազգերէ, թուրք, հայ, յոյն, և այլն: Հայք ունին զեղեցկաշէն եկեղեցի մը, և վաճառականութիւնը Յունաց և իրենց ձեռքն է: Չիհաչէֆ 1848 ին այս տեղէն անցած միջոց, հոս դատւ շատ հայ գինեկաճառներ՝ Կիպրոսի՝ զինուոյ: Տէվիո ես 1875 ին հոս եկած է, և կարծեօք կը համարի 1000



223. Գարսունուցի սպիտակամ:



224. Տիլիկն Գարամանցի

սարակինեան մնացորդներ. ինչպէս վայելչաշէն կիսաւեր մզկիթներ, մանաւանդ մին՝ գեղեցիկ ճարտարապետութեամբ մանր արարական բանդակներով և մարմարեայ գոնով: Տափարակ և երկայնանիստ բլրիգագաթը կը գտնուի բերդը, որ ունի գանազան ձեւերով աշտարակներ, ինչպէս բոլորակ, քառակուսի, բազմանկիւնի. պարիսպները շինուած են մեծամեծ գեղին և կարմրագոյն քարերով: Քա-

տուն բնակիչ, յորոց 100ը բրիտանէից, և անոնցմէ զատ, ոչ սակաւ կեսարացի հայ և յոյն եկաւոր վաճառականներ: Քաղաքս նշանաւոր բան մը չունի. սալայատակ փողոցներն ալ մթին են՝ տանց պատշգամները անոնց վրայ կարկանտած լինելուն պատճառաւ. վաճառանոցներն ալ հարուստ չեն: Պարտէզներով զարդարուած է Գարաման, և իւր շրջակայից տեսարանը գեղեցիկ է: — Առաջ



հոս կը նստէր նահանգի կուսակալը, բայց աբեմ փոխադրուած է յիկանիսն. թէև ապաւին ամբողջ նահանգը՝ որ կը բովանդակէ Լիկայոնիա, Իսաւրիա, Պամփիլիա և Պիսիգիա հին աշխարհները, կը կոչուի Գարաման, քաղաքիս այժմեան անուամբը: — Սիսուան, 292-293:

Անոնցմէ մին էր Նուրե-Սուրբի ամխազորոքը, որուն համար Համիկը՝ Օսմանեան պատմութեան հմուտ հեղինակը, կ'ըսէ թէ ազգաւ հայ էր: Ասիկա շատ անգամ ամուսն վաճառելու համար Լարանտա կ'երթար, և այսպիսով կամաց կամաց հարստացաւ: Ասոր սրբիքը Գարաման կը կոչուէին, և սուլտանաց տէ-



225. Կիւն Ստորին Հայոց:



226. Ազնուական Ստորին Հայոց:

ԳԱՐԱՄԱՆԻԱ. — Այսպէս կը կոչուէր անցեալ գարուց մէջ հարաւային Անատոլիոյ երկիր մը, վերոյիշեալ քաղաքի անուամբ: Մեր ժամանակակից գրիչները խարաման անունը կու տան այս երկրին կամ գաւառին: Ալալէտտին սուլտանը Հայերէն Էրմէնէկը աննելով իրեն զօրավարներէն միոյն ուսու (1228ին), և հոն երկրին պահպանութեան համար բնակեցուց քանի մը թուրքմաններ:

բաւթեան վրդալման ժամանակ, սկսան գունդեր կազմել ու այս երկրի սահմանաց վրայ բռնանալ և ախրանալ, և այս պատճառաւ իրենց անուամբ երկիրը կոչուած է Գարամանիա: Մեր Կիլիկիոյ արքունի պատմիչը մանրամասն կը պատմէ ասանց ըրած գործերը, բայց չի յիշեր թէ ասանք ծագմամբ հայ էին: Մեր Հեթում թագաւորին կողմնապահ զօրքերն երկու անգամ կ'ատրեցան խարաման-



նէն: Հայոց Սմբատ սպարապետը խարամանի երկրի մէջէն Մանիւան անուամբ զղեակ մը՝ որ առաջ քրիստոսէից է եղեր, շատ աշխատութեամբ և առատ պարգեւներով ձեռք ձգեց: Բայց գոռոզ խարամանը շատ կը նեղէր զՍմբատ, որ երեք տարի զղեկին տիրեց և շատ զբամ վատնեց զինուորաց համար: Խարաման եկաւ պաշարեց նոյն բերդը և ինն ամիս սաստիկ նեղեց մէջինները. այս միջոցին Հեթում թագաւորը հաւաքելով հեծեալ և հեռեակ բազմաթիւ զօրքեր, եկաւ յաղթեց անօրէն խարամանին, որ և բիշ ժամանակէ սատկեցաւ, պատերազմի

զանեւելով, խարէութեամբ մտաւ և տիրեց Խկոնիսնի, խորասակեց նաև եգիպտական գունդ մը, և վերջը ընելով թաթարներու զաւուտը, խոյս տուաւ իւր լեռները: ԺԳ զարու վերջերը Գարամանիոյ աէրը Աւատ կը կոչուէր, և ասոր ժամանակ կը թուի, թէ Խկոնիսնի սուլտանութեան բարձմամբ (1294), աէրութեան սահմանները ընդարձակեր են: Նոյն զարու վերջը և ԺԳ<sup>ն</sup> սկիզբը, իշխողն էր Մուսաբեկ Պետրեատիկ: Ասոր զօրաւոր յաջորդներէն մին 1318 թուին բազմաթիւ հեծեալներով ասպատակեց Տարսնի սահմանները, բայց Պայլն Օշին հասնելով վեր-



227. Գարամանի խոյ:

մէջ առած սաստիկ վէրքէն. նոյն մարտի մէջ սպանուեցաւ նաև իւր եղբայրը Պոնսուզ՝ և փեսան: Պատմչի նկարագրէն կը հասկըցուի, թէ Մանիօն բերդի պաշարման սկիզբն եղած է 1259 թուին, իսկ պատերազմը և երկու խարաման եղբարց սպանուիլն պատահած է 1262ին: Խարամանի մահէն վերջ՝ Խկոնիսնի սուլտանը, բռնեց պաշեց անոր որդիքը, բայց բիշ ժամանակէն զանոնք ազատեցին թաթարները, և յաջորդեց անգլանիկն Շէմնէտալին Մուհամմէտ: Սա իւր հօրէն ժառանգած աւագակային բարքով, Էգիպտոսի Պիպարսայ սուլտանի կիլիկիա և փոքր Ատիա արչուած միջոց, յարմար առիժ

ջապահներու վրայ, Պոմպէուպոլսի մօտ կոտորեց և վանեց: Գարձեալ վերնոյն կամ անոր յաջորդի ժամանակ, 1336 տարույ սկիզբը, ժամանակակցի մը գրածի համեմատ, խարամանցիք մանեւելով Հայոց սահմանին մէջ, շատ փնտսներ հասուցեր են: Գարամանաց սուհմի նահապետ Նուրէ-Սուֆիէն վերջը, մինչև ԺԵ զարու վերջերը, իրարու ետև յաջորդեր են տասն հոգի: 1486-7ին այս առջմբ բոլորովին կը նուաճուի Օսմանցիներէն: Վենետիկցի կեսար ա նուամբ նկարիչ մը, հոչակաւոր թիցիանոյի եղբայրը, ԺԶ զարու վերջերը, զանազան ազգաց սարապներու հաւաքածոյին մէջ հրատա-



բախած է նաև Գարամանցուցը (թ. 224-2), ինչպես նաև նայն կողմի Հայոցը՝ (թ. 233-4) Ստորին Հայք կոչելով: Գաղղիացին Պերզրանտոն այս կողմերէն և Լարանտայէն անցաւ 1432 թուին: Պօֆրըթ անգղիացին ալ 1811-1812 թուականներուն բննեց այս կողմերը և հրատարակեց Karamania քա-

կը գտնուի Ռուսի Առանձնակ գաւառի մէջ, Ղահրիլարի հիւսիսային կողմը: Ժամանակաւ ամբողջապէս հայ եղած են գիւղիս բնակիչները, բայց այժմ մնացեր է միայն 7 բնտանիք, իսկ մնացեալքն մահմետական են: Հայք եկեղեցի չունին և իրենց հոգեւոր պէտքերը կը կատարեն Սարով գիւղի



### 228. Կզմուտ — Գարամելլոյ:

նուամբ գիրք մը ի Լոնտոն 1817ին: Այս կողմանց մեծամեծ խոյերը նշանաւոր են բրդի առատութեամբ, ինչպէս նաև գմակի մեծութեամբ. այժմ այս տեսակ խոյերը երկրին անուամբ Գարաման կը կոչուին: — Սխուռան, 293-296:

ԳԱՐԱՄԱՆԻԸ. — Այլբաղարնակի գիւղ ընտանային կիրիկիոյ, Զէյթունէն 9 ժամ հեռու:

ԳԱՐԱՄԱՆԻՈՒԻ կամ ՂԱՐԱՄԱՆԻՈՒԻ. — Գիւղս

եկեղեցւոյն մէջ: Աւանդաբար կը պատմեն թէ գիւղիս նախկին անունն էր Բօգի:

ԳԱՐԱՄԵԼԼԱ, ԳԱԼԱՄԵԼԼԱ կամ ԳԱՆԱՄԵԼԼԱ. — Հին նաւահանգիստ կիրիկիոյ. Այստի բարգաւաճումն առաջ բաւական նշանաւոր էր: Լեւոն 1214 թուին, ուրիշ տեղերու հետ կը յիշէ նաև Գանամելլա նաւահանգիստը, զբաւ տալու Հիւրընկալ ասպետաց, անոնցմէ փոխ առած զբամոյն համար:



ԳԱՐԱՅԱԼ. — Լեոնարդուր Այրարատայ  
Շիրակ գաւառի մէջ:

ԳԱՐԱՆԼԳ կամ ԳԱՐԱՆԼՈՒԽ. — Հա-

ռու, արեւելեան կողմը՝ կ'երեւի ամայի գիւ-  
ղաւեղին ճաննիկ, զոր Սիմէոն կաթողի-  
կոս իբրև շէն կը յիշէ:



229. Խաչարձան Վերին Կզմուտի (Գարանլղ):

յաբնակ գիւղ Այրարատայ Նիզ (Պաշ Ապա-  
րան) գաւառի մէջ: Ունի 469 բնակիչ,  
բաժնուած 45 տան: Եկեղեցին նուիրուած  
է Ս. Աստուածածնի: Գիւղէն միոն մը հե-

ԳԱՐԱՆԼԳ, ԳԱՐԱՆԼՈՒԽ (ՀՆ. Կզմուտ).  
— Այս անուամբ այժմ երկու գիւղեր կան  
Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ: Վերին  
Ղարանլուխ՝ ի հնումն կը կոչուէր Վերին



Կզնուտ, ունի այժմ մօտ 200 տուն հայ բնակիչներ, 1600 հոգիէ աւելի: Եկեղեցին, որ նուիրուած է Ս. Գեորգայ, հին է և անշուք, թէև 1875ին նորոգուած է, ինչպէս կը յայտնէ գրան վրայի արձանագրութիւնը: Եկեղեցւոյ շրջագաւան զարդարած են գերեզմանատան խաչքարերը: Գիւղիս գիրքն լաւ է, արեւմտեան ձորակի մէջէն խոխուժմունքով կը վազէ, այս գիւղերու անուամբ կոչուած Կզնուաներու գետակն է: Վերին կզնուաի մօտ, հին գերեզմանատան մէջ, կան շատ խոյածե գերեզմանաքարեր, ինչպէս նաև գրուագագարդ խաչարձաններ, որոց արձանագրութիւնք շատ հին չեն: Թիւ 229 խաչարձանի արձանագրութիւնն գրուած է ԺԸ դարու երկրորդ կիսուն մէջ: Ստորին կամ Ներքին Ղարակուլս (Կզնուա), կառուցուած է ծովակի մօտ, բնագրծակ դաշտավայրի վրայ: Ունի մօտ 230 տուն հայ բնակիչներ, և Ս. Աստուածածնի եկեղեցի մը: Ժամանակաւ կայ եղբեր նաև Միջին կզնուտ անուամբ գիւղ մը, որ ի վերջոյ ամայացած է: — Սիւսկան, 58: Գեղարքունի, 536-539.

ԳԱՐԱՆԼԳ կամ ԳԱՐԱՆԼՈՒԻ ԹԼՓԷ. — Լեռ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ:

ԳԱՐԱՆԿԱ. Տես ԿԱՐԿԱՋ:

ԳԱՐԱՋԱՄ կամ ԳԱՐԱՋԱՆԹԱ. — Գիւղ այժմեան Կարոի գաւառին մէջ. ունի 47 տուն բնակիչ, զանազան ազգերէ:

ԳԱՐԱՋԱՅԸՐ. — Հայաբնակ գիւղ Էջգրաւի տաջնորդական վիճակի մէջ: Ունի Արծրունեան վարժարան մը՝ 40 աշակերտներով:

ԳԱՐԱ-ՉԻՆԱՐ կամ ԳԱՐԱ-ՉԻՆԱՐ. — Գիւղ Արցախի Զրարերդ գաւառի մէջ, Սեւ գետակի աջ կողմը: Ունի արքունի գլորոց մը, Ս. Յովնանէս եկեղեցի մը և 805 բնակիչք, բաժնուած 120 տան:

ԳԱՐԱՉԼԸ. — Տայոց աշխարհի մէջ լեռնանցք մի է:

ԳԱՐԱՉՈՒԹԱ. — Այրարատայ Ստորին Բասնի մէջ ազարակ մի է Քեօփրի քեօյի մօտ: — Այս անուամբ գիւղ մի ևս կը յիշուի, Սիւնեաց Նախճատան գաւառի մէջ:

ԳԱՐԱՉՈՒՄԱԿ. — Լեռ Այրարատայ ձաւաք գաւառի մէջ:

ԳԱՐԱՉՊԱՆ կամ ՔԱՐԱՉՊԱՆ. — Մեծ գիւղ Հայոց Տուրուբրանի Հարք (Խնուս) գաւառի մէջ: Ունի 150 տուն՝ բաժնուած 3 թաղերու: Գեղեցիկ է տեսարանն, օդն կենսատու և ջուրն առատ: Գիւղացւոց նախնական վիճակն լաւ կրնայ համարուիլ. ունին Մ. Յակոբ անուամբ քարուկիր եկեղեցի մը 3 խորանաւ և 6 սիւներով: Տանիքին վրայ, երկու գերաններու մէջ աեղ կախած են Տփղիսէն բերուած երկու բաւական մեծ զանգակներ: Գարաշօպանի Հայոց մէջ կը գանուին այնպիսի անհասաներ, որք ձայն ունին խնուսայ գատարանին մէջ և մեծ ազգեցութիւն գաւառին վրայ: Տեղւոյս գիւղացիք սովորութիւն չունին իրենց ննջեցելոց տապանաքարինք օծել տալու, այլ քարին կիսակլոր ձեւ մը կու տան և կը նմանցնեն ըզտու և աւելի յաճախ ձիւ՝ հանդերձ թամբով, որ նշան է մեռնողի ձիավարութեան, և քաջասրտութեան: — Նկարագրական ուղեշրջարկ, Գ. 106:

ԳԱՐԱՊԱՂ. Տես ԳԱՐԱԲԱՂ և ՄՐԵՆ:

ԳԱՐԱՊԱՂԱՐ. — Այլազգաբնակ գիւղ Սիւնեաց Նախճատան գաւառի, Խոք վիճակի մէջ: Ունի մօտ 200 տուն: ԺԷ դարու վերջերը ձեռնքի խառացի ուղեւորը, որ 1694 տարւոյ յունիս 7ին հոս իջեալնեց, գիւղս կ'անուանէր Գարապա, և մօտը կը յիշէ մեծ և գեղեցիկ կարաւանատուն մը՝ քառակուսի ձեւով, և քաղցր ջրի աղբիւր մը, որուն համար աւանդեր են իրեն Հայք՝ թէ Նոյի Սեմ որդին ըղխեցուցեր է քարի մէջէն: Թավեանիէ ևս այցելած է տեղւոյս և անունն կը գրէ ճիշդ՝ Karabagler:

ԳԱՐԱՊԱՂԱՐ. — Այս անուամբ երեք գիւղեր կան Այրարատայ Սեւի և Արած (Վեաի պատար) գաւառի մէջ յորոց մին այժմ ամայի է: Միւս երկուքն Վերին և Ստորին կոչուածներն, ունին այժմ այլազգի բնակիչներ: Այս գիւղերու մէջ կը տեսնուին քննութեան արժանաւոր հին եկեղեցիներու աւերակներ:

ԳԱՐԱՊԱՃԱԿ կամ ԳԱՐԱ-ՊԱՃԱԿ. — Քրքաբնակ գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ:

ԳԱՐԱՊԱՊԱ կամ ԳԱՐԱԲԱԲԱ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց Շահապօնք գաւառի մէջ:



Ունի 22 տուն, և հին եկեղեցի մը: Գիւղիս սահմանաց մէջ կան հանքային բնածղուտ ջրերու փոսեր:

ԳԱՐԱՊԷԿ. — Գիւղ Բարձր Հայոց Ասիւծ գաւառի մէջ:

ԳԱՐԱՊԷԿ. — Այս անուամբ ՄԾԾ և Փարք կրկին հայաբնակ գիւղեր ևս կան այժմեան Գանձակ նահանգի Զուանշիրի գաւառին մէջ: Առաջինն ունի 62 և երկրորդը 78 տուն բնակիչ:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ (Սեւ աղբիւր). — Հայաբնակ գիւղ Այրարատայ Նիգ (Պաշ Ապարան) գաւառի մէջ. Արայի լիւրան հիւսիսային ստորոտքը: Ունի 84 տուն և Ս. Աստուածածնի եկեղեցի մը:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ. — Ամայի գիւղ Այրարատայ Երրակ գաւառի մէջ, Ղազարապատի հարաւ արեւելեան կողմը, կէս ժամ հեռաւորութեամբ:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ կամ ՂԱՐԱՅՈՒԼԱՂ. — Հայաբնակ գիւղ Գանձակի գաւառի Լըքէջի հասարակութեան մէջ: Ընկած է սարի մը լանջին, որոյ ստորուան կը հոսէ Կիւրակ գետի վտակներէն մին: Իւր գրից շնորհիւ գիւղս բաւական մաքուր է, և մեզմ կլլմայ ունենալով, գեղեցիկ ամառանոց է: Տները ընդհանրապէս հասարակ են, բացի մի քանի կանոնաւոր, երկարկանի գեղեցիկ շէնքերէ: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, բաւական հոյակապ է, վեց սիւներով: Արեւմտեան կրան ձակատակալ քարի վրայ կայ շինութեան արձանագրութիւնն՝ 1746 թուականաւ: Գիւղիս մէջ կան երկու աւերակ եկեղեցիներ, իսկ շրջակայքը չորս աւերակ գիւղատեղեր և եկեղեցիներ: Չորս եկեղեցիներէն առաջինը կը կոչուի Բ յի շինի եղցի, երկրորդը՝ Կոսի կալ, երրորդը՝ Միջին վանք և չորրորդը՝ Երի վանք (Վերին վանք): Այս եկեղեցիներու շուրջն կան ընդարձակ գերեզմանատներ: Կոսի կալի եկեղեցոյ խորանի կամարի վրայ, խաչքարի մը ստորուտը կայ հայկական ՈՂԹ (= 1230) թուականը: Գարապուլազի բնակիչները, որ ժամանակաւ բաւական շատ են եղեր, այժմ միայն 44 տուն են՝ 306 հոգի: — Գանձակի գաւառ, Ա. 125-126:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ կամ ՂԱՐԱՅՈՒԼԱՂ. —

Գիւղ Գանձակի գաւառի Միսկինլուի հասարակութեան մէջ, Ղալաքեանոյ բերդի հիւսիսային ստորուան բլրոյ աղբիւրէն յառաջացած առուակի ձախակողմը: Այս տեղ կայ հինաւորաց, գեղեցկաշէն և չորս սիւներու վրայ հաստատուած եկեղեցի մը, որուն միայն տանիքը քանդուած է: Եւրոյը և առուակի ափին կան բազմաթիւ գերեզմաններ: Գիւղիս այժմեան բնակիչք են 67 տուն թաթարք:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ կամ ՂԱՐԱՅՈՒԼԱՂ. — Գիւղ Արցախի վարանոց գաւառի մէջ, հիմնուած Քեօնդալան գետակի ձորի ձախ կողմը, Սեւ աղբիւր յոյլաւաւ աղբիւրի մօտ: Բնակիչք 532 հոգի հայ, բաժնուած 75 տան, ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը: — Այս անուամբ երեք այլազարնակ գիւղեր ևս կան Գուգարաց այժմեան Պոռչալու գաւառի մէջ:

ԳԱՐԱՊՈՒՌՈՒՆ (Սեւ Քիթ). — Այսպէս կը կոչուին Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ գտնուող շարք մը խոտաւէտ բլուրներու:

ԳԱՐԱՊՈՒՐՃ. — Այլազարնակ գիւղ Այրարատայ Եւրուր գաւառի մէջ:

ԳԱՐԱՍԻՎՐԻ. — Լեւ Կիլիկիոյ, 4800 սոք բարձրութեամբ:

ԳԱՐԱՍՈՒ (Սեւ ջուր). — Աղբիւր մի է Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, Արփա գիւղի արեւելեան կողմը քիչ մը հեռու: Աղբիւրիս մօտ քարաբլրոյ ստորոտքը կան երկու նահատակաց՝ Գրիգոր և Մարիամ կոչուած եղբոր և քրոջ, հանդստարաններ: Հոս կը յաճախեն բազմաթիւ ուխտաւորներ:

ԳԱՐԱՍՈՒ. — Գլխաւոր գետ Այրարատայ Մասեաց սոս գաւառի: Կը բլիէ Մասիսի արեւելեան հիւսիսային բարձունքներէն, և առաջ կ'իջնէ գէպի հիւսիս և ապա գտնուելով արեւելք, գրեթէ Երասխայ զուլահեան կը վազէ գէպի հարաւ, և անոր հետ կը միանայ Խալիսայ և Տէվէլի գիւղերու գլմաց: — Գետոյս անուամբ ամրոց մը կայ Այրարատայ Եւրուր գաւառի մէջ: Եւրոյ գաւառի մէջ կայ նաե Գարասուռ անուամբ քոլարնակ գիւղ մը: — Տես ՄԵՄԱՄՕՐԻ ԳԵՏ:

ԳԱՐԱՍՈՒ. — Գետ Բարձր Հայոց կարնոյ գաւառի մէջ, կը կոչուի նաե Կարնոյ գետ: Եփրատայ գլխաւոր ակն է. կը բլիէ Թոր-



թումի և Բասնի մէջ տեղ եղած լեռներէն, և գէպի արեւմտեան հարաւ վազելով, Կարնոյ դաշար երկուքի կը բաժնէ՝ հիւսիսային և հարաւային, և Սարչամայ գետոյն հետ միանալով Գաղտառիճ գիւղի մօտ, կ'անցնի Շողանի ձորէն և կ'սկզբնաւորէ Եփրատ գետը: Այս գետս կը ձեւացընէ Սաղըզ կոչուած լճակը, Կարնոյ հիւսիսային կողմը, Իլիճա և Սուր ջերմուկ գիւղերու մէջ տեղ: Մեր նախնիք ասոր Շուր Կարեւոյ անունը կու տային, վասն զի գարնան ջուրերը առատաւ նալով կը բուսնին անբաւ շամբեր, զորս ամբան ջրերու նուազած միջոց կը հնձեն և փայտի տեղ կը վառեն Կարնոյ բազնիքնու մէջ: Տեսակ տեսակ թռչուններ կը զբաւնուին այս շամբի մէջ ինչպէս կը վկայէ նաև խորհնացին, յորոց անուանի են վայրի բազր և սագր: Գետոյս վրայ կան երկու քարաշէն և բազմակամար կամուրջներ: Գաբառուի ջուրը հակառակ խը անուան միճիտ է, բայց համը գտն է, ուստի մէջը մարխ ձգելով կը բաղցրանայ և ըմպելի կը դաւնայ:

ԳԱՐԱՍՈՒ ԿԱՄ՝ ԱՆՐԱՍՈՒ. — Գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ. ունի 15 տուն կաթողիկէ հայ և 15 տուն քուրդ բնակիչներ: — Այս անուամբ քանի մը գետեր կան Կիլիկիոյ մէջ, ինչպէս նաև ուրիշ կողմեր:

ԳԱՐԱՍՈՒՎԱՇԻ. — Լեռ Սիւնեաց Աղա-հէճք գաւառի մէջ. բարձր է 6607 ոտք:

ԳԱՐԱՎԱՆՔ ԿԱՄ՝ ԱՆՐԱՎԱՆՔ (Սեշ վանք). — Հայարնակ գիւղ Այրարատայ Գարեղէնք գաւառի մէջ, Կաղզուանի հարաւային արեւմտեան կողմը, բարձր գիրքով: Ունի 70-80 տուն բնակիչներ և երկու եկեղեցիներ, յորոց մին հինաւուրց վանք մի է բարձր գրից վրայ և հոյակապ շինուած, բայց տեղ տեղ քանդուած է: Երկրորդ եկեղեցին շինուած է վանքի մօտ: Հինը վանք՝ և նորը եկեղեցի կը կոչուի: Այս տեղ կայ Ղազախներու նամակատուն և մաքսատուն. ժողովուրդը ունի բաւական երկիր և ըստ վիճակի: Գիւղիս շուրջն պարխապներու և հին գերեզմաններու բնկորներ կը տեսնուին: — Այս անուամբ վանք մը կամ գիւղ կը յիշուի նաև Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ:

ԳԱՐԱ ՎԵՐԱՆ. — Սակաւարնակ Վայոց գիւղ Արարատականի Միանդուար գաւառակին մէջ:

ԳԱՐԱՏԱՂ ԿԱՄ՝ ԱՆՐԱՎԱՂ. — Հին Հայաստանի փայտակարան նահանգի հարաւային մասն է սա, որ ըստ Պարսից պաշտօնական կոչման Ղարաձաղազ կը գրուի. կը գտնուի Գավրէժի հիւսիսային արեւելեան կողմը, երեք օր հեռաւորութեամբ. սահմաններն են հիւսիսէն՝ Երասխ, արեւելքէն՝ Մուզանի անապատը, հարաւէն՝ Հասանօվայի և Ահարի գաւառները և արեւմուտքէն՝ Մարանդի գաւառը: Գարատաղ ամբողջապէս լեռնապատ է, թէև շատ բարձր գագաթներ չունի, բայց անհամար լեռնաշղթաներ տարբեր ուղղութեամբ գիրար կարատելով և միանալով կը կազմեն բարձրաւանդակ մը, որ ծովէն 6500 ոտնաչափէն աւելի բարձրութիւն ունի: Այս լեռները ծածկուած են անտառներով: Ամբողջ Արարատականի մէջ միայն այս տեղ կան անտառներ, որ անխնայ կը կտրուին և կ'այրուին ածուխի համար: Լեռներէն կը բղխեն բազմաթիւ վտակներ, որք կը թափին Երասխի մէջ. նշանաւոր են Չոլիկի, Մարդաւաղըմի և Քեւաշեկ-բարի գետերը: Հանքային ջերմուկներով հարուստ է Քէյվանի գաւառակը: (Ոլը ցուրտ է և խոնա՝ բարձրաւանդակ տեղերը, ուր հազիւ կ'աճի ցորենը. մատախուղը մշտապատ է, շատ գիւղեր շարաթնելով արեւի երես շին տեսնար: Չորերը և գետաբերանները ձմրան բարեխառն են, իսկ ամբան սաստիկ տաք, այնպէս որ նոյն տեղերը յառաջ կու գան թղենի և նոսնի: Գարատաղ հարուստ է երկաթի և պղնձի հանքերով, կայ նաև արծաթ: Պղնձի քանի մը հանքեր գետ կը շահագործուին, ինչպէս Աղամալի, Ավանի և Աղաղանի մօտ եղածները: Աշխատողները Յոյներ են, որք կը գործեն Անդլիական ընկերութեան մը հաշուով: Հայերը ևս ժամանակաւ շահագործել տուեր են, և հանքերէն մէկ քանին գետ հայի անուն կը կրեն՝ ինչպէս Ալթ խանի պղնձահանք, և այլն: Սակայն նոքա այժմ երեսի վրայ ձգած են, գլխաւորաբար ճանապարհներու գծուարութեան և վարպետ հանքագործերու պակասութեան համար: Տեղացի հայ դար-



բինները երկաթի հանքը հալելով, երկրագործական պիտոյից համար պէտք եղածին չափ երկաթ կը պատրաստէին. բայց այժմ ուստի պատրաստ երկաթ ընդունելով, այլ ևս նեղութիւն չբաշխու պէտք չեն տեսնար:

Անտառները լի են կազնի և տոլասի ծառերով, կան նաև մոշի, հոնի, բնկուզի, և այլն: Չորերու և հովիտներու մէջ առատութեամբ կը բուսնին շատ պտղատու ծառեր՝ կեռասի, սալորի, թզենի, նանենի, թթենի, շատ լաւ կը յաջողի նաև խաղաղը: Բարձրաւանդակները զրկուած են պտղատու ծառերէ. մշակութեան հողի քիչութեան և օդի ցրտութեան պատճառաւ զիւղացիք չկարողանալով իրենց հարկաւոր արմախք արտադրել, Տղմարի և Մէլափարայի բնակիչները ստիպուած են ամէն տարի մեծ աշխատանքով Ահարէն արմախք բերել: Աւելի կը ցանեն կորեկ, որ խոնաւութեանէ չի փնտսիր. կանայք զիւղերու մտերքը կը մշակեն փոքր բանջարանոցներ, վարունգ, լուբիա, սոխ, գլուխ, և այլն: Երաստիի հովտի մէջ մեծ քանակութեամբ կը ցանեն կարմրագոյն բլբլինձ: Անտառներու մէջ վայրենի կենդանիներէն յայտնի են արջերը, որք ցանքերու և բանջարանոցներու մեծ փնտս կը հասցնեն, ուստի զիւղացիք զիշիրը հրացանը ձեռքերնին պահպանութիւն ընելու ստիպուած են: Գարատաղի մէջ է Պարսից գահաժառանգի նշանաւոր սրսատեղին, որ լի է ամէն տեսակ կենդանիներով: — Գաւառս բաժնուած է չորս գաւառակներու, Գիզմար, Մէլափար, Մոնովան և Քէյլան. առաջին երկուքը բոլորովին լեռնոտ և անտառային են. ճանապարհներ կրէք չկան, հունձը կաշատեղ կը բերեն շալակով կամ ջորիով: Գարատաղի բնակիչները են Հայք, թուրքք, Ալալաշիներ, Գարափափախներ և Ճահսէլաններ: Հայքը կը բնակին բարձրաւանդակներու և անմատչելի զառիվայրերու վրայ, իսկ թուրքքերը բռնած են ձորերը և հովիտները: Հայք կ'գրադին երկրագործութեամբ և մեղուարուծութեամբ, կը պահեն նաև ձի և ջորի. առանց ջորիի այս կողմերը ապրիլ անկարելի է: Թուրքքերը աւելի անխաղաղութեամբ կը պարսպին. զիւղացիք կ'սցնի փոյ անունով թեթեւ գումար մը աւալով, կարող են

որչափ որ կ'ուզեն փայտ կտրել: Հայք իրենց գրացոց հետ լաւ գրութեան մէջ չեն, և ստիպուած են միշտ արթուն մնալ և հրացանով պաշտպանուիլ, այսու հանդերձ զուլութիւնք և սպաննութիւնք անպակաս են: Գաւառիս զիւղերը մեծաւ մասամբ տեղացի կամ Գալիթեցի թուրք խաներու և մուլլաներու սեպհականութիւն են: Հայոց Առաջնորդարանը Գիզմարի մէջ գներ է հետեւեալ նորաչէն, Օղա հայարնակ և խոթ ու Ռաշու թըքքանակ զիւղերը, որոնց հասոյթը կ'ստանայ Արամեան ուսումնարանը: Պարտկաստանցի նշանաւոր վաճառական թուամանեանցները, որոնց հայրենիքն է Գարատաղ, գներ են բաւական թուով զիւղեր, և գաւառիս ամենէն մեծ կալուածատէրերը կը համարուին:

Գաւառիս մէջ կայ միայն մէկ վանք, Կորաչէն զիւղի սահմանաց մէջ, Ս. Կեօրիկ անուամբ: Սա Հայաստանի սբիշ վանքերու նմանութիւն չունի, աւելի մատուռ կարելի է համարել: Հրաշագործի համբաւ կը վայել և բոլոր գաւառէն ու մինչև անդամ Գալիթէն Հայեր ուխտի կու գան. թուրքերն ևս կը յարգեն: Գաւառս թէև հին Հայաստանի մէկ մասն կը համարուի, սակայն իւր մէջ չի գտնուիր նախնի Հայոց և ոչ մի հետք, ոչ բերդի կամ վանքի աւերակներ և ոչ հոյակապ եկեղեցիներ: Գարատաղ ի հնումն աւելի բազմաթիւ հայ բնակիչներ ունէր, որոնք զանազան ժամանակաց մէջ գաղթած են ի Գալիթէ մանաւանդ Ռուսի Հայաստանի գաւառները: Բնակիչներէն շատերն ալ կը պանդխտան Ռուսաստան, աւելի ճուշիի և մոտաւոր գաւառաց մէջ. սակայն երկայն տարիներ հայրենիքէ գուրս չեն մնար, զարնան մեկնողները աշնան կը վերադառնան. երթեկութիւնք կը կատարուին Երաստի խուտաֆրին կամուրջով: Գարատաղցիք խիստ սրամիտ և բնգոռակ ժողովուրդ են. այսօր Գալիթի մէջ աչքի ընկնող բոլոր մարդիկ, քիչ բացառութեամբ, կրնանք ըսել թէ գարատաղցիք են: Գաւառի մէջ զիտութեանց և ուսմանց լոյսը տակաւին մուտ գործած չէ, սակայն վերջին տարիներու առ այս մեծ ջանքեր պակաս չեն: Գարատաղցիք խիստ գժուարահասկանալի բարբառ մ'ունին, որ քիչ մը



նման է Ղարաբաղի լեզուին: Տես ԱՏԲՊԱՍԱԿԱՆ: — Արարատ ամառերը, ԼԱ. 500—503:

ԳԱՐԱՏԱՂ, կամ ԴԱՐԱԳԱՂ. — Լեռ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ: — Այսպէս կը կոչուին ի թորբաց Կիլիկիոյ Սեա: շեռիկը:

ԳԱՐԱՏԱՂԼԸ, ԴԱՐԱԳԱՂԼԻԻ կամ ԽԱՆՔԵԱՆԳ. — Հայաբնակ գիւղ Գանձակ գաւառի խանքեանոյի հասարակութեան մէջ: Կը գանուի Գանձակէն գէղի արեւելք 18 վերստ հեռաւորութեամբ: Բնակչաց նախնիք 1828 թուին գաղթած են Ասրպատականի Գարաւաղէն. կը հաշուին 172 հոգի բաժնուած 40 տան: Ունին աղիւտաշէն եկեղեցի մը Ս. Գեորգ՝ կառուցուած 1855 թուին: Հողը շատ քիչ է. միայն այգիներ կան, որոնք կ'ստոյգուին Սափիքիչոյ կոչուած ջրով և կուտան բաւական լաւ խաղող: Գիւղէն կէս վերստ հեռու կոչրակ չայ գետի ափունքը կը գրանուի Նախատակ անուամբ ուխտաւեղի մը: Ղարապաղուի մօտ է թորբաց նոյնանուն փոքրիկ գիւղը: — Այս անուամբ ուրիշ գիւղեր ալ կան գանազան կողմեր, որոնք գրեթէ ամէնքն ալ այլազգարնակ են:

ԳԱՐԱՍԷՆՔԷՆՏ կամ ԿԷՏԻՔ ՏԱՂ. — Լեռ Այրարատայ Բասեն և Բաղրեւանոյ գաւառաց մէջ անոյ, որ կը կոչուի նաև Տաղար գիւղի անուամբ. ունի շատ ձորակներ: Սմիտհէ կղիւս ամերիկացի բարոյիչը, 1834 թուին անցնելով լեռանցս անցքերէն ձեան և բքի միջոց, շատ նեղուեցաւ:

ԳԱՐԱՏԻԿԻՆ. — Ոյս անուամբ կրկին այլազգարնակ գիւղեր կան Սրաշի (Գանձակ) գաւառին մէջ:

ԳԱՐԱ ՏՈՒՐԱՆ. — Հայաբնակ գիւղ Անտիոքի առաջնորդական վիճակի մէջ: Ունի ազգային վարժարան մը 22 աշակերտներով:

ԳԱՐԱՐՁ կամ ԽԱՐԱՐՁ. — Գիւղ Բարձր Հայոց, կարնոյ գաշախի մէջ: Ունի 90 տուն բնակիչք, յորոց 60ը Հայք են և 30 թորբք: Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ գեղեցիկ տեսքով եկեղեցի մը. իւր խաչկալն ճարտարարուեստ գործ մի է, նուրբ և բնտիր: Իրերէն կ'աւանդուի թէ «Այս է Արծն քաղաք հոշակաւոր և պատմական, բազմաթիւ եկեղեցիներով և հազարաւոր բնակիչ»

ներով»: Այս աւանդութիւնը ճշմարտութեան կը մօտենայ երբ գիւղիս շրջապատի ընդարձակ աւերակաց տեղերն ի նկատի աւնուին, որոնցմէ Մանազկերա քաղաքի նման, դուրս եկած են երբեմն հին բաղանեաց և այլ շէնքերու հետքեր, սղոնձէ անօթք, այլիայլ զարդերու նշաններ և հիլլենական գրոշմ կրօղ գրամներ: — Նկարագրական աշխատութիւն, Գ. 164:

ԳԱՐԱՓՈՒՆՆԱՐ. — Աղբիւր Կիլիկիոյ մէջ, 3 ժամ Անուարդայէն հեռու՝ հարաւային կողմը: Ի հնումն այս աղբիւրէն մինչև քաղաք ջրանցք կար, բազմաթիւ քարաշէն կամարներու վրայ հաստատուած: Այս կամարներէն շատը քանդուած են, և այժմ միայն մէկ քանին կանգուն մնացած են:

ԳԱՐԱՔԷՆՏ կամ ԴՂՎԱՅԱՎԱ. — Հայաբնակ գիւղ Արցախի վարանդա գաւառի մէջ: Հիմնուած է Աշան գիւղի արեւելեան կողմը, սարերու մէջ գոգաւոր ձորի մը արեւելաւայեաց լանջի վրայ: Բնակիչք 800է աւելի, բաժնուած 103 տան. մեծա մասամբ բնիկ են, քանի մը տուն եկած են Ջրաբերդի Եղակեր գիւղէն: Երկիրը բարերեր է և գինեբեր. բերքերէն նշանաւոր են գինին, թութր, նուռն, գեղձն և թուզն: Օդն, կլիման և ջուրն պատուական են. տեսարանն ալ լաւ: Եկեղեցին նուիրուած է Ս. Առաքածածնի, կառուցուած՝ քարուկիր և կամարակապ: Եկեղեցոյ գրան ներսը, արեւելեան երկրորդ կամարի վրայ կայ շինողի արձանագրութիւնն. սակայն թուական չկայ: Փոքր Նախատակ կը կոչուի գիւղիս արեւերան կողմը բարձր բլրի գագաթը կառուցուած նորաշէն և կիսատ մատուոր: Նախատակի մարմինն վաղուց ամփոփուած է այս անոյ, խկ մատարան շէնքը քանի մը անգամ նորոգուած է ի հիմանց: Մեծ Նախատակ ևս մատուռ մի է, շինուած 2492 սաք բարձր սարի մը վրայ, որ սահման է Աշան, Նորշէն և Ղզղալա գիւղերուն: Նախատակի գերեզմանն կը գանուի մատարան մէջ, որուն շուրջը կան խուցեր և հանգստարան: Տես ԱՂՋԿԱՅ ԲԵՐԻ. — Արցախ, 122—124:

ԳԱՐԱՔԷՆՏ կամ ԳԱՐԱՔԷՆՈՅ. — Փոքրիկ գիւղ Այրարատայ կողմիս գաւառի մէջ: Կը անանուին գիւղիս մէջ հնութեանց մնա-



ցորդներ, բարձր աշտարակներ, որոնք վիայ են տեղույս հին ժամանակաց մէջ բարգաւաճ լինելուն:

**ԳԱՐԱՔԷՇԻՇ.** — Հայարնակ զիւզ Արծկէի (Վլան), ունի Գողգորայ անուամբ եկեղեցի մը: — Այսպէս կը կոչուի յայլազգեաց Բրաջուշ գիւղը, զոր նկարագրած ենք ի կարգին:

**ԳԱՐԱՔԷՅՅ. ՏԵՍ ԳԱՐԱՔԷՆՏ.**

**ԳԱՐԱՔԷՅՅՓՐԻԻ.** — Հայարնակ զիւզ Տուրուերանի Հարք (Խնուս) գաւառի մէջ:

**ԳԱՐԳԱՐԱՑԻՔ.** — Առանայ գաւակներէն սերած հայկական ցեղ մը էին, Մեծ Հայոց արեւելեան հիւսիսային կողմը: Ասոնց բնակավայրէն տեղն էր Աւաի աշխարհին մէջ, ուր և կայ Գարգարացոց կոչուած բնոպրծակ գաղար:

**ԳԱՐԳՄԱՆ կամ ԳԱՐԳՄԱՄ.** — Դշանաւոր և հին գաւառ Աւաի աշխարհի, որ նոյն կը թուի բլլալ Գարդմանայ ձոր անուն հետ, զոր յիշէ Խորենացին Աւաիի ուրիշ գաւառաց հետ: Գաւառիս անունը վրիպակազանազան ձեւերով գրուած կը գտնենք այլ և այլ հեղինակներէ. ինչպէս Գարդմանաձոր կամ Գարդմանաւոր, Գարդմանակոր, Գարբմանիկ, և այլն: Գաւառս ինկած է Կուրակ և Շամքոր գետերու և Մուսան լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան մէջ: Այնուամենայնիւ մտամբ մակերեւոյթը անհարթ է: Սարսափելի խոր խոր ձորեր, մալթ կիրճեր, օձապտոյտ խոխոմներ, բարձրագագաթ սարեր, բլուրներ և թանձրախիտ անասաններ գրաւած են գաւառիս մակերեւոյթը: Իսկ Մուս և Ալուրթին սարի կողմերն իրստ գուարճալի են՝ հոն կան լեռնահարթեր, ծաղկազարդ հովիտներ, արօտներ, զաւարագեղ լեռնալանջեր: — Գարգման գաւառի խոշոր անուամբ իշխանը կը յիշէ Խորենացին, և Յոհան կաթողիկոս Կորիձ անուամբ: Գաւառս ունէր նաև յատուկ եպիսկոպոս, յորոց սմանը անուամբ ծանօթ են, ինչպէս Յովնանեկս, Ներսես, Սարգիս, և այլն: Ս. Մեսրոպայ ձեռքով մտած է հոս բրիտոննէութիւն: — Դշանաւոր էր ի հնումն գաւառիս բերքն. որոյ բարձրութիւնն է մօտ 9000 սար. անջրգետուած է Պապա տաղէն և Գարգման գետակին խորանոցնոց ձո-

րով և հսկայաձև երկնցած է զէպի արեւելք: Սենի մօտ 15 վերստ երկարութիւն և 6-7 լայնութիւն: Վիմահերձ և ամենաբարձր ժայռեր են սարիս ամբողջ արեւմտեան հարաւային և հիւսիսային կողմերը: Գէպ ի Լահիճ գիւղաքաղաքը թեքուած են ձորակներ, ուրոնց մէջէն կը վազեն բերդիս ջրերը՝ կազմելով հիանալի ջրվէժներ: Կասկածելի տեղերը պարսպուած են, պարիսպներու բարձրութիւնն է 3-4 սաժէն և հաստութիւնն է սաժէնէն աւելի. շինուած է ամբողջապէս անտաշ և լեռնային քարերով և կրաշագախ ցեխով: Հիւսիսային դուռը և պարիսպն այժմ մասամբ քանդուած են: Բերդիս վրայ կը փայլի ոչ թէ մարդկային տկար հանճարի հնարագիտութեան արուեստն, այլ Բնութեան ճարտարագիտի գեղմարդկային ստեղծագործութիւնը: Այն կողմ անմատչելի է բերդս. իւր մէջ ունի ամէն կենսական պիտոյքներ, առատ վազող ջրեր, ծաղկազարդ և զաւարագեղ սարահարթեր, բերրի հող, գեղեցիկատես անտառներ և մացառներ: — Բերդիս նախկին բնակիչներն, Առանայ յաջորդները, արդէն ծանօթ են մեզ, որոնք Առանշահիկ կամ Եռանշահիկ կը կոչուէին: Գիտենք նաև թէ ինչպէս Քաջն Վարդան երեք տարուան մէջ շինեց Գարգման բերդս և նուաճեց Կովկասեան «վայրասուն ազգն», և ճաշի պատրուակա պիտատեց 60 հազի Առանշահիկ ցեղէն: Սասանեան Միհրանէն, որ բնակութիւն հաստատած էր բերդիս մէջ, մինչև վարազ-Վրիպոր, հեթանոս եղած են և իշխած միայն այս գաւառիս վրայ. իսկ վարազ-Վրիպորն և իւր բուրք ցեղը բրիտաննէութիւն կ'ընդունին: Վարազ-Վրիպորի սրդին Զուանշիբ իշխանը իւր ծննդավայրի Գարգման բերդիս մէջ կառուցանել կու տայ գեղեցիկաբարձր տաճար մը, և օձեղ տալով, մեծ հանդիսով տաճարի մէջ կը դնէ Քրիստոսի խաչափայտի այն մասը, զոր ընծայ ստացած էր Յունաց Հերակլ կայսրէն: 854 թուին Բուրա գալով Գարգման գաւառը, կը պաշարէ նոյնանուն բերդը և կը բռնէ, Կորիճ իշխանը: Տասներորդ դարու սկիզբը Առա Երկաթ՝ ձերբակալելով իրեն Սահակ աները և յետոյ Գարգմանայ ամբողջ գրաւելով, ամբողջ գաւառը իրեն իշխանութեան



ներքոյ ձգեց: Պարսիկները մեր աշխարհի վրայ բռնացած միջոց տիրեցին նաև Գարգմանայ, զոր Չաքարէ և Խանէ ազատեցին, բայց յետոյ իրենց վրայ ալ յարձակեցան թաթարք: — Այժմ հիմնադրուած է Գարգման, որուն տեղը հերկած են Լահճեցիք, բայց դեռ կ'երևան խեցեղէն անօթներու, ազիւսներու և տաշուած քարերու խոտն ի խոտն թափուած բեկորներ և անհրու քարուկիր հիմունքներ: Իսկ Չուանշիր իշխանի կառուցած Ս. Նշան տաճարը քանդած և քարերովը Լահճեցիք շինած են զմբէթ մը մահճակառուականի մը գերեզմանին վրայ: Գմբէթը այժմ կանգուն է, և քարերն սլահած են իրենց հեռուոր հնութեան գրոշմները: Բերդիս մակերևութի ամենաբարձր մասն է Հարուային կողմը, որ ունի հիանալի տեսարան: Հարուային կողմերը հեռուէն կ'երևան Փայտակարանի և Արազատականի լեռները, Էրասխը, Արցախի, Գանձակի և Կայենի լեռնագօտները, Գարգարացոց և Աղուանից գաշտերը և Կուր գետը: Արեւմտեան կողմէն կ'երևին Տիգրիսի ճառի, Շաքուայ լեռները և գաւառները: Բերդիս ստորոտըն են Գեաւոնք դալա (Գրիստոնէի բերդ), Բաախալ, Թրչան, Չառեւառ մահճակառանի և Միւսի հրէաբնակ գիւղերը: — Հարուային ելքն կամ գետն տեղական արասանութեամբ կը կոչուի Կեարդանա: Խիստ զստիւայր, օձապտոյտ, ամենանեղ և ամենավտանգաւոր ճամբայ մի է այս, որուն տեսքը միայն սոսկում կ'ազդէ նայողին, վասն զի երկու կողմերը խորանդունդ վիհեր են: — Աղուանք, 186-190:

ԳԱՐԳՄԱՆ ԱՆԱՆ. — Վերը նկարագրուած գաւառի գլխաւոր աւանն էր սա, որուն աւերակները, Բարխուտարեանց կը զնէ Ադիւսաշէն աւերակի արեւմտեան հանդէպ, Գարդան գետակի ձախ կողմը: Այժմ աւերակ է աւան և թրքաբնակ և կը կոչուի Գլլմմմմմմիկ: Գրքի մը յիշատակարանին մէջ 1699 թուին կը յիշուի աւանս Վարդան գետի կողմ, և նոյն ժամանակ ունէր Ս. Գրիգոր և Ս. Սիմեոն անուամբ երկու եկեղեցիներ: Կիտաւեր եկեղեցոյ արեւելեան որմի արտաքին երեսին վրայ քանդակուած է խաչքար մը, իսկ Հարուային կողմը քանի

մը քայլ հեռու, կը գտնուին 7 հատ միաձեւ մահարձաններ, յորոց միոյն վրայ կայ արձանագրութիւն, ի՞նչ գարու վերաբերեալ: Գրեթէ միւս մահարձանաց արձանագրութիւնք անընթեռնի են: Թէև բաւական թուով գերեզմանաքարեր և գեղեցիկ խաչարձաններ ջարդած են մահճակառուներ, բայց անոնցմէ ոչ սակաւք տակաւին կան աւանիս մէջ: — Սրբորոն՝ ուխտաւեցի մի է աւանիս հարուային կողմը քիչ մը հեռու, ուր կայ փոքրիկ մատուռ մը առանց արձանագրութեան: Մաարան մօտ կայ 3 1/2 մետր բարձր մահարձան մը՝ հանդերձ 1331 թուականաւ արձանագրութեամբ: Այս տեղ կայ ընդարձակ հին հանգստարան՝ յորում կը տեսնուին գեղեցիկ մահարձաններով զարդարուած շատ գերեզմաններ: — Գարգման աւանէն բաւական վեր կը գտնուի Գորամ բլուր (Ղարալ թէփէ) անուամբ ընդարձակ գիւղատեղի, հանդրատարան և եկեղեցի՝ որ տակաւին կանգուն է, ունի չորս սիւներ և Հարուային կողմէն է դուռը: Ունի նաև ՌՃԹԱ թուականաւ համառօտ արձանագրութիւն: Այս տեղ կը բնակին այժմ մահճակառուներ: — Արցախ, 301-302:

ԳԱՐԳՄԱՆ ԳԵՏԱԿ. — Գետակս կը գտնուի համանուն գաւառի մէջ, կը բղթէ Արուսիանայ սարի ստորոտներէն և կը թափի Շամբոր գետոյն մէջ:

ԳԱՐԳՄԱՆԱՅՈՐ. Տես ԳԱՐԳՄԱՆ:  
 ԳԱՐԿՆՅԵՒ, ՏԱՂ. — Լեռ կիլիկիոյ մէջ:  
 ԳԱՐԿԱԼ ՍՈՒ. — Գետակ Այրարատայ վանանդ գաւառի մէջ:

ԳԱՐԿԱՊԱՅԱՐ. — Լեռ Այրարատայ Բագրևանդ գաւառի մէջ, որուն մօտ բանակեցան Օսմանցիք 1554 թուին, Պարսից վրայ երթալու միջոց:

ԳԱՐԿՈՒՃԱՂ. — Կը յիշուի Ուաի Առանձնակի մէջ:

ԳԱՐՀԱՐ ԿԱՄ ԳԱՀԱՐ. — Հին ամբողջ մի էր Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Տօրոս լեռան վրայ, զոր շինեց Պարսից Վախթանի սպարապետը: — Հին պատմաբան:

ԳԱՐՈՒԱՅ ԼԵԱՌՆ. Տես ԳԱՐՈՒ:  
 ԳԱՐՈՒ, ԿԱՄ ԳԱՐԱՆՈՒ. — Գիւղ ժովային կիլիկիոյ մէջ, 500 մետր բարձր գիւղքով:  
 ԳԱՐՍԱՆ ԿԱՄ ԿԱՐՍԱՆ. — Գիւղ Այրարատ



տայ Բագրեանոյ գաւառի մէջ, Շեռանայ ձախ փին վրայ, Գոմք գիւղի զիմաց: Այժմ ունի 15 տուն քուրդ բնակիչ: 1822 թուին բազմամարդ մեծ գիւղ մի էր սա Հայոց՝ մեծաւ մասամբ կաթողիկէայք, որք այժմ հաստատուած են ի Մօլլա-Սիւլէյման: Գարսանի դաշար ունի լաւ հողեր, որք կ'ոտուցուին Չեռանայ ջրով:

ԳԱՐՍ-ՁԻՒՂԳԱՏՐԻԷ կամ ԿԱՐՍ. — Աւանտ կ'իսկնայ դաշտային կիլիկիոյ մէջ, Սաէն 30 վերստ դէպի արեւելք և Ասանայէն 85 վերստ դէպի հիւսիսային արեւելք, համանուն վիճակի կեդրոնը, գետակի մը աջ փունքը: Ունի 1800 բնակիչ՝ մեծ մասը հայ: Հմուտ արուեստով կառուցուած շարք ամրոցներ կարծես ցոյց կու տան, թէ այս վայրը հայկական իշխանութեան ամուր պատուարներէն մին պէտք է եղած լինի: Բայց՝ ամենեւին յիշատակութիւն մը չ'կայ, թէ ինչ գեր խաղացեր է աւանս Ռուբինեանց ժամանակ: Նշանաւոր շէնք մը այժմ չունի: Ութը ջրաղաց կը շարժեն բամբակ յտակելու մեքենան: Այստեղ կը զործեն նաև Քիլիմ կոչուած գորգեր: Գարսի Չիւլպատրիէ մակղիրը՝ համանուն նշանաւոր թուրքմէն սոսնձի անունէն է, որ Ռուբինեանց անկումէն վերջ կիլիկիոյ ամբողջ արեւելեան մասին տէր գործաւ և զօրանալով սկսաւ իւր երկրի սահմանները ընդարձակել: Սելիմ Ա 1515ին ստոնց իշխանութիւնը վերցուց: — Աւանիս մէջ և շրջակայքը շատ հնութիւններ կը գտնուին, մարմար քարեր, սիւներ, վերնախարիսիւններ, քանդակուած քարեր, տապանաքարեր, կոփածոյ քարերով աւերակ վանք մը, և այլն: Գետակի վրայ ևս կը տեսնուի հին կամուրջի մնացորդներ: Գարսի շրջակայքը շատ արդաւանդ են՝ Չահան գետոյն մօտիկութեան շնորհիւ: — Սխուսան, 199, Կիլիկիա, 200:

ԳԱՐՔԱՌՈՒՓ. — Կը յիշէ գիւղս Վախուշտ, Թոնգը (Վրահայաստան) գաւառի մէջ:

ԳԱՒԱՇ. — Նոր վիճակ Վասպուրականի Ռշտունեաց գաւառի, որուն սահմանքն են հիւսիսէն՝ Վանայ ծովակը, արեւելքէն Վանայ գաւառը, հարաւէն Շատախ՝ և արեւմուտքէն Կարճկան վիճակները: Բաժնուած է հինգ նահիէներու և ունի 59 գիւղեր: Եր-

կիրը ընդհանրապէս դաշտային և լեռնային, ջրաւէտ և օդասուն, գիւղերը ամբողջ մրգաբեր և անպատուղ ծառերով զարդարուած: Վիճակիս ընդհանուր բնակչաց թիւն է, ըստ Վ. Քինէի 13164, հետեւեալ կերպով բաժնուած.

Հայք Լուս. և Կաթ.	4830	հոգի
Մահմեդականք.	8130	»
Հրեայք.	39	»
Այլ և այլք.	123	»

Գումարն... 13164 հոգի:

Վիճակիս գլխաւոր տեղն է Ուսուան, իւր մէջն են Նարեկայ վանքը և Արտաս լեռը, ինչպէս նաև Չաղար Ս. Նշանի վանքը՝ ազու Եղիշէին հանպատարանը: Վիճակս Աղթամարայ թեմերէն մին է, որուն ջերմեանոյ ժողովուրդը ամէն տարի սևախ կերթայ յԱղթամար: Կը կարծուի, թէ հնումն կար նաև ԳԱԱՂ նունամբ աւան:

ԳԱՒԱՌ, ԿԻՒՎԱՐ կամ ԿԷՎԷՌ. — Վանայ կուսակալութեան վիճակներէն մին, Հաքեարի գաւառի մէջ Մահմանքն են հիւսիսէն՝ Աղբախայ վիճակը, արեւելքէն՝ Պարսկաստան, հարաւային արեւելքէն և արեւմուտքէն Շեմսիինան վիճակը, իսկ արեւմուտքէն Ռւրամար և Չուլամերկ վիճակները: Վիճակս բաժնուած է հինգ նահիէներու և ունի 260 գիւղեր: Բնակչաց թիւն կը համարուի 26200. Վ. Քինէ հետեւեալ կերպով կը բաժնէ.

Մահմեդականք.	14700	հոգի
Հայք.	1900	»
Նեոստորականք.	9000	»
Քաղչէայք.	500	»
Հրեայք.	500	»

Գումարն... 26200 հոգի:

Վիճակիս կէսը լեռնային է և կէսը դաշտային. նշանաւոր է Տիգէյի գաշարը, որ միջին հաշուով 40 հազարամետր երկայնութիւն, և մօտ 20 հազարամետր լայնութիւն ունի. կ'ոտուցուի Նէհիլ և Մեծ Չապ գետակներով: Այս տեղ կը սնուցանեն հօտերով գոմէշներ, եզներ, կովեր, սշխարներ և այլ ծեր. բայց մեծ գթաւարութեամբ, որովհետեւ ձմեռն խիստ դառնաշունչ է և անտանելի:


ԳԱՒԱՌ. Տես ԲԱՅԱՁԻՒ ՆՈՐ:



ԳԱՒԱՌՆԻ. Տես ՍՈԳՔ:

ԳԱՒԱՐՁԻՆ, կամ ԳԱՒԱԶԻՆ. — Արցախի սահմանակից Գուգարաց կողմից գաւառի մէջ, Ռսկեպար կամ Զողազ վտակի ձախակողմը կը գտնուի 1500 ոտք բարձրութեամբ քարալեռ: Գաղայ բերդէն և Ս. Սարգսի քարաբլրէն աւելի բարձր է և անկէ բիշ հետու: Արեւելեան ստորոտքը շինած են ի հնուց պարսկաց, որոյնքերի կողմը կը գտնուին խցեր, որոնցմէ միոյն մէջ կայ ջրհոր: Լեռանս գագաթը բարձրանալու համար միայն մէկ գժուարագնաց, նեղ, շափազանց զսոխիլը

պահուրտեր են. պաշարողն ալ ետեւէն վազելով և շկարենալով զուրս հանել՝ կրակ վտոներ և ծխով խեղզամահ բրեր է գանոնք: Երբեմն երբեմն արծիւները այս քարանձաւէն՝ որ ժայռի արեւմտեան կողմը կ'ինկնայ, կը հանեն գորգի և կապերտի փաած կտորներ և վար կը ձգեն: Գաւարդնի հարաւ արեւելեան կողմը Ռսկեպար վտակի ափի վրայ կը գտնուի Գամիր, յիար այլազգաբնակ գիւղը, որ կանխաւ հայաբնակ եղած է. հոս կայ ընդարձակ հանգստարան և աւերակ եկեղեցի: — Նշմարք, Ա. 22: Արցախ, 395:



230. Գաւազիմ քարալեռան տեսքը:

և վտանգաւոր ճանապարհ կայ հիւսիսային կողմէն: Գաղաթը հարթ է մօտ երկու կալաւեղ, ուր բուսած են զանազան թուփեր և վայրի ծառեր: Ի հնումն նշանաւոր էր Գաւազիմ բերդը, զոր անմատչելի ամրաց անուանած է վարդան: ԺԳ. գարու մէջ թաթարք, Վիրք և Հայ իշխանք իրարմէ յափըշտակել կը ջանային այս ամուր բերդը, որ վերջապէս այլազգեաց բռնութեամբ արուեստ և մնացորդք տակաւին կ'երեւին. գագաթն ալ պատուածքին մօտ քարակտոր ջրամբար մը: Մօտակայ բնակիչք կ'աւանդեն, թէ Հայ թագաւոր մը երբեմն պաշարեր է Գաւարդնի բերդը. բերդացիք նեղուած լեռան գլուխը ելեր և քարանձաւի մը մէջ

ԳԱԻԿԱԹԻ ՎԱՆՔ. — Այս անուամբ մեծ վանք մը կար կիլիկիոյ մէջ ի Սիս: ԳԱՓԱԳՂԸ. — Կիլիկիոյ մէջ լեռ: ԳԱՓՂՈՒ կամ ԳԱՓՈՒ ԳԱՅԱ. — Լեռ Այրարատայ Բասեն գաւառի մէջ: ԳԱՓՈՒ ԳԻՂԻՍԷ. — Կը յիշուի գիւղս Այրարատայ Բասեն գաւառի մէջ: ԳԱՓՈՒՂՈՒ կամ ՂԱՓՈՒՂՈՒ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ: Կառուցուած է Ախուրեանի աւելի մօտ, Պայնաուրի արեւելեան կողմը քարակարկառի մը շրջաբոլորը: Քարակարկառի վրայ երբեմն բերդ կայ եղեր, որուն մնացորդները ցարգ կ'երեւին: Գէպի Ախուրեան ձգուող դաշար գոգաւոր ձեւ ունի, ոչ



րոյ չորս կողմը թիվն բարձրութիւններ երբ-  
բակներ կը շրջապատեն: Գիւղս լժէ բաւական  
մեծ ե հարուստ է, բայց ժողովրդեան անմիա-  
բանութեամբը, շատ գիւղերէ յետ մնացիւր է:  
Բնակիչք եկած են այլ ե այլ տեղերէ, որոնց  
թիւն է այժմ մօտ 1300, բաժնուած 150  
տան: Վազաւն ջուր չունենալով, կը գործա-  
ծեն հորերու ջուր. բաւական հեռու ձորակի  
մը մէջ լժէ կայ փոքրիկ աղբիւր մը, բայց  
հեռաւորութեան պատճառաւ քիչեր միայն  
կ'օգտուին: — Արեւելեան Մասնոյ, ԻՒ. 857:

ԳԱՓՈՒՃՈՒԻ. — Երկրագաթ բարձր սրձա-  
քար լեռ Սիւնեաց Չորք գաւառի մէջ: Բարձ-  
րութիւնն է 26060 սաք:

ԳԵԱԼ. Տես ԳԱՂ:

ԳԵԱՄԻՍ. Տես ԳԱՄԻՍ.

ԳԵԱՌՆԱՔԱՐ. — Փոքրիկ շէն Արցախի  
Խաչնի գաւառի մէջ: Կառուցուած է Հաւա-  
պառակ աւերակ վանքի արեւելեան կողմը.  
բնակիչք եկած են Առաջաձոր ե վանք գիւ-  
ղերէն. այժմ են 12 տուն:

ԳԵԹԻՎԱՆ կամ Քէթիվչէն. — Գիւղ Այր-  
բարատայ Բասնի գաւառի մէջ, համանուն  
գետակի մը աջակողմը: Գիւղիս մօտ կայ  
6785 սաք բարձրութեամբ լեռնանցք մը:

ԳԵԼ. Տես ԳԵՂ:

ԳԵԼԻԵԳԵՆՄԱՆ. — Գիւղ Շատախու վերին  
մասին մէջ, Շէնքքի արեւմտեան հարաւային  
կողմը, ունի մօտ 40 տուն բնակիչ:

ԳԵԼԻՉՈՐ կամ ԿՈՒԱՍՈՐ. — Գիւղ Այրա-  
բատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Եփրատայ  
ձախ ափի վրայ: 1820 թուականին բազ-  
մաթիւ հայ ընտանիքներ կային հոս, որոնց  
մէջ իրրե հարուստ ե նշանաւոր կը յիշուի  
Հայրանի ընտանիքն: Գիւղիս Հայք մեծաւ  
մասամբ գաղթած են ի Կիւղէլ-աէրէ, ե աստ  
կան այժմ միայն 60 տուն պարսիկ ժո-  
ղովուրդ:

ԳԵԼՈՒՅ. — Սակաւաբնակ գիւղ Տուրու-  
բերանի Խոյթ գաւառի մէջ: Բնակիչք Հայք ե  
Քուրդք խառն:

ԳԵՂԵՆԻՔ. Տես ՃԱՂՈՒԿ:

ԳԵՂ, ԳԵՂԱՅ կամ ԳԵՂԱՄԱՅ ԼԵՊԵՏ. —  
Լեռնաշղթայ Սիւնեաց աշխարհի Գեղար-  
քունի գաւառի արեւմտակողմը, իւր անունն  
տոած է Գեղամ նահապետէն: Այրբարատայ  
կոտայք գաւառի արեւելեան կողմն կ'ինկ-

նայ. գիւրքը բարձր է ե լայն ստորաւով:  
Խր երկայնանիստ գրութեան ե բնդարձակու-  
թեան մէջ ունի հոյիաներ ե ջրերու շաւ-  
մարաններ, որոնք Գեղամայ ծովակը թափող  
զանազան գետեր կը ձեւացնեն: Ընդհանրաւ  
պէս լեռնաշղթայս բուսականութենէ զուրկ  
է ե հրաբոլխային մնացորդներով ծածկուած,  
ուղեւորը կը տեսնէ լեռանս վրայ զանազան  
գոյներով քարեր ե միապազաղ ապտաժներ:  
Լեռնաշղթայիս բարձրագոյն գագաթն կը հա-  
մարուի այժմեան Խչքեփէր (Էրեք գագաթ-  
ներ) կոչուածը, որ բարձր է 10054 սաք:  
Բնաշխարհի լեռանց մէջ, մեր նախնեաց յի-  
շատակներով պանծացող մէկն ալ սա է, ե  
ունի իր վրայ Այրի կամ Գեղարբայ վանք,  
Գառնի, Հաւուցթառ, արեւելեան լանջին  
վրայ՝ վանորայքն Շողաբայի, Վոնավանու,  
Մաքենոցաց, Կոթավանք, ե այլն: — Վա-  
ղարչապատ, 31-32:

ԳԵՂ, կամ ԳԵԼ, Գիւղ Այրբարատայ Ուրծ  
ե Արած գաւառի մէջ, որ անունը տոած կը  
թուի Գեղամէն:

ԳԵՂԱՊՈՒ. — Գիւղ Բարձր Հայոց կարնոյ  
գաւառի մէջ. ունի 45 տուն, յորմէ 35  
Հայոց ե 10 թուրքաց: Հայք ունին բարու-  
կիւր եկեղեցի մը՝ Ս. Սարգիս:

ԳԵՂԱՄԻՍԱԿ. Տես ՍՈՒՅ:

ԳԵՂԱՄԱՅ ԳԱԽԱԽ կամ ԵՐԿԻՐ. Տես ԳԵ-  
ՂԱՔՈՒՆԻ:


ԳԵՂԱՄԱՅ ԼԵՊԵՏ. Տես ԳԵՂ:

ԳԵՂԱՄԱՅ ԽՈՎԱԿ կամ ՍԵՆԱՆԱՅ ԱՊՃ.  
— Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ կը  
գտնուի այս Գեղամ նահապետին անուամբ  
կոչուած լիճս: Մեր պատմութեան մէջ ծա-  
նօթ է նաև Գեղաքունի լիճ անուամբ, իսկ  
այժմ օտարազգիներէն կը կոչուի Կեօք լոյ  
(Կապոյտ ջուր), ինչպէս նաև Սեւանայ յիճ  
նոյնանուն կղզւոյ անուամբ: Ընկած է 40°9'  
ե 40°37' հիւսիսային լայնութեան, 42°41'  
ե 43°22' արեւելեան երկայնութեան մէջ, իւր  
ամենամեծ երկայնութիւնն է 71 հազարա-  
մետր, ե ամենամեծ լայնութիւնն՝ 27 հա-  
զարամետր, իսկ տարածութիւնն է 1393  
քառակուսի հազարամետր: Գիտնոց ըրած  
մանր հաշւոյն համեմատ, ծովակա ամէն օր  
իւր մէջ հասող բազմաթիւ գետակներէ կ'ըն-  
գունի մօտ 33000000 քառակուսի ստնա-



չափ ջուր, և զարմանալին այն է որ դուրս կ'արձկէ միայն Հրազդան գետով 432000 բառ. ոսնաչափ ջուր և միշտ նոյն չափին մէջ կը մնայ, առանց սահմաններէն դուրս

ընակիչք, կը վկայեն թէ ծովակս զազանի օրէնք մ'ունի, որով պայմանեալ ժամանակաց մէջ կ'աճի և կը նուագի, և այս երկրայիլի չէ, վասն զի շատ վեպեր յայտնա-



231 • Գեղամայ ծովափը և Սեւան կղզին •


եցնելու և ողողելու: Ասոր պատճառ կը համարին ոմանք ծովակիս ջրերուն սաստիկ շոգիանալն, որով առիլի ջուրերը կը նուագին և ամպ գտնալով, կը մնայ միշտ հաւասար վիճակի մէջ: Բայց Սեւանայ և Գեղաքունեաց

պէս ցուցին և կը ցուցանեն ջրերու բարձրանալը և ցածնալը, և բառ այնմ մերթ կը ծածկուին ջրոց առի և մերթ կ'երևնան ժայտերը և եզերքները և նոյն իսկ ցամաքակղզիներու երևաները: Մերթ կը գաղբին



և անշարժ կը մնան ջրագացները, և մերթ կ'ստիպուին բնակիչը կողմանցս, ջուրը յորդովեան պատճառաւ պատսպարել իրենց արտերը և աները: Ոմանք կ'ըսեն թէ երկմարդաչափ կը բարձրանայ, իսկ այլը նոյնին կրկնապատիկը. իսկ բարձրանալու և ցածնալու ժամանակը, ոմանք 10 տարին անգամ մը կ'ըսեն, և ուրիշներ 14 կամ 20: Ոմանք ալ կարծիք յայտնում են, որ հառանական կը թուի, թէ ծովակս ստորերկրեայ ճանապարհներ և հազարակցութիւններ ունենայ ուրիշ ջրերու հետ, ինչպէս համարուած է նաև վանայ ծովակը: Իրական Սև ծովու երեսէն բարձր է 1932 մետր, և իւր ամենավերջին խորութիւնն է 110 մետր: Երկրի

հականներ, մտնելով նաւակի մէջ սկսեր են կտտել սառերը. և այսպէս մինչև ծովակի կէսը հասնելով, յանկարծ սաստիկ հովի բռնուելով ուզեր են ետ գտնուլ, բայց անկարելի եղեր է, ալիքները կտտրտած սառերը նաւակի մէջ լեցնելով՝ ծանրացեր է, և ընկզմեր են վարդապետը, արեղայն և երկու աշխարհական, իսկ սարկաւազը և մէկ աշխարհականը Աստուծոյ ողորմութեամբ ազատեր են: Այս զէպքս պատահեր է ապրիլի առաջին օրը: Տիպուայի ճանապարհորդութեան միջոց 1834 տարուայ փետրուար 4ին գարձեալ ստամ է ծովակիս ամբողջ երեսը: Կրնար զեռ աւելի թանձր ստույց կապել ծովակիս վրայ, եթէ մըրիկները և սաստ



232. Եղամասունկ Գեղամայ ծովակի:

զրից բարձրութեան պատճառաւ, ձմեռը բարեխառնութիւնը կ'իջնէ մինչև 20° Ռէոմիւրի: Կը պատահի երբեմն որ ամբողջ ծովակիս մակերեսը կը սառի բաւական թանձրութեամբ, մինչև վրան սոքոյով քաշելու չափ: Խիստ սաստիկ կերպով ստուցաւ 1660 թուականին, և ինչպէս կը պատմէ ժամանակագիր մը, ծովակիս միակ կղզւոյն Սեւանայ բնակիչը, քանի որ ստոր ամուր էր սոքոյով կ'երթային կու գային, և երբ սկսաւ սառոյցը թուլնալ և վրան մարդ չէր կրնար կենալ, այն ատեն ուզեցին սառերը ջարդել որ կարենան կղզիէն ցամաք անցնիլ: Բարեզ առնուամբ վարդապետ մը, հետք առնելով մէկ արեղայ և մէկ սարկաւազ ու երեք աշխարհ

կաշունչ հովերը զինքը չյուզէին: Սաստիկ հովը կը փչէ արեւելքէն Սոգից կողմէն, այս պատճառաւ նոյն անուամբ կը կոչուի, իսկ հիւսիսայինը՝ Քօյ, որ անսասային կը նշանակէ, արեւմտեանը՝ Գաշաի քամի, վասն զի Այրարատեան գաշաէն կու գայ. հարաւայինը՝ Չրնկիցներու քամի, վայցց ձորի զիւզի մը անուամբ: — Հանդարտ ժամանակ սկանակիտ և պայծառ են ջուրերը և շատ կապուտակ կ'երեւին, նոյն իսկ հետեւն և բարձրերէն զիտելով. այս պատճառաւ թութուրբաց կապոյտ կամ Երկեագոյն ծով (կեօքլայ տեւիզ) կոչուած է, իսկ Պարսիկներէն Տերեայի Շիրիւ, Գեղեցիկ կամ Քաղցր ծով: Եւ յիշուի ջուրերը քաղցր են, և բաս ոչ



մանց լաւագոյն ազբիւրներէն աւելի համով: Ջրերէն աւելի պատուականագոյն են ձկնիւրը, իրենց համեղութեամբ և տեսակաց զանազանութեամբ հոշտիւած: Սեւանայ շրջակայից բնակիչք աւանդութեամբ կը համա-

կը զանուի նաև զետոց մէջ, ծովէն մանեւ ըսով Հրազդանի մէջ և անկէ յէրասիս. ասոր աղածը աւելի բնախը կը համարուի քան՝ թարմը: Ոմանք կոզակի ձագերը, և այլք արիշ տեսակ ձուկ կը համարին Կապուտե



233. Գեղարկանայ:

րին, թէ ծովակո ունի տասուերկու տեսակ ձկներ՝ առանձին առանձին անուններով, զորս կարգաւ յիշենք: Կոզակ՝ պարարտ, համեղ և ուրիշ ձկնիւրէ աւելի առատ է և երկու հազարագրամէն աւելի կը կշռէ, որ յաճախ

կամ Կապիտ կոչուածը: Անուանի է Իշխաւնաձուկ և կը կշռէ 15 հազարագրամէն աւելի: Մեծութենէն զատ համեղ ալ է և կ'որսացուի ամառը, Գուգարաց կոզմերը խրամուրս կը կոչուի այս ձուկը, վասն զի ա-



ոստ կը գանուի խրամ գետի մէջ: Ասոր ձազը կը համարին սմանք կարսպեակի կոչուածը, և այլը՝ առանձին տեսակ: Միս տեսակները կը կոչուին Ամուսե, Աջիեճան, Բեխրու, Չարսձոճին, Պեռձեկ, Կարմրախայտ, Չուար կամ Ծուար, Գեղարուսի, Բաղրակ, Ճանար, Մուրծի և Կռակոռոց: Գիանականներէն սմանք բոլոր այս ձկները երեք տեսակաց կը վերածեն. անոնց մեծութեան և փոքրութեան համեմատ, կ'ըսեն, ոսմիկը կը կարծէ և կը համարի գանազան տեսակներ: Շարաէն, որ երկու գարե աւելի առաջ, քննութեամբ կ'անցնէր այս կողմերէն, ինն տեսակ ձկներ կը գնէ: Թէ՛ զիտունք և թէ սպէտք առ հասարակ կը գովին այս ձկանց համեղութիւնը և մտայնց պարարտութիւնը, վասն զի գետային ձկներու նման փշոտ չեն: Ինչպէս ի հնումն մեր ազգային պայրագասաց օրով, նոյնպէս և այժմ այս ձկներու որսորդութիւնը վարձու կու տայ աէրութիւնն, տարին մօտ 30000 ֆրանկաց: — Զրային թռչուններէն ծովակիս վրայ կը գանուի ճաշի եր բազեր, որոր, ձկնկուլ, հոգամաղ, և այլն: Գր. Տաթևացոյն քեոսրդին՝ Ստաբել Սիւնեցի, ծովակիս մէջ կը յիշէ կարափն, բեհլով. «Կարափն մեծ հաւ է սրպէս զոչխար մի, և բովանդակ սպիտակ, սրպէս գձին. և լինի ի ծով Գեղարքունի: — Սիւսական, 27-30:

ԳԵՂԱՄԱՐՆԷՆ. — Այս անուամբ ևս կը յիշուի Այրարատայ Մագազ գաւառը:

ԳԵՂԱՄԷ. Տես ԳԱՌՆԻ:

ԳԵՂԱՅ ԱՌՔՆԻՔ. Տես ԳԵՂ:

ԳԵՂԱՆԻ. — Հայանուն՝ բայց այլազգարնակ զիւղ Օլթիի (Տայք):

ԳԵՂԱՇԷՆ. — Սահաւարնակ Հայաց զիւղ Շատախու:

ԳԵՂ ԱՍՈՐԻ կամ ԲԵՂ ԱՅՍՈՐԻ. — Ասորարնակ 20 տուն) զիւղ Այրարատայ Մագազ գաւառի մէջ: Տես ԲԵՂ:

ԳԵՂԱՐՔՈՒՅՈՐ. — Այսպէս կը կոչուի Այրարատայ Մագազ գաւառի մէջ այն ձորն, յորում հիմնուած է Գեղարդայ վանքը:

ԳԵՂԱՐՔՈՒՍՈՐ. — Գեղայ լեռան ոստ մի է Այրարատայ Մագազ գաւառի մէջ երկնցած: Այսպէս կոչուած է հոչակաւոր Գեղարդայ վանքի անուամբ (Թ. 233):

ԳԵՂԱՐՔՈՒՅՈՒՅՈՐ ՎԱՆՔ. Տես ԱՅՐԻ ՎԱՆՔ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԵՆ կամ ԳԵՂԱՔՈՒՆԻՔ. — Սիւնեաց գաւառներէն մին, որ կ'ինկնայ նոյն աշխարհի հիւսիսային կողմն և ամբողջ Հայաստանի ամենէն աւելի զեղեցիատեսիլ մասն է: Խոր մէջն է կապուտակ ծովակն Գեղամայ, որ շրջապատուած է բարձրութիւններով: Հոչակուած է պայծաս օդովն, պաղպաղուն և պատուական ջրերով, զեղեցիկ և յուսիս բուսականութեամբ, կենդանիներով և ձկներով: Շրջապատուած է սահմանակից Այրարատ, Գուգարք, Ռաի, Արցախ աշխարհներէն և Սիւնեաց վայոց ձոր և Սոյք գաւառներէն: Տեսնենք նախ գաւառիս պատմական գէպքերը: Ամասիա նահապետին Գեղամ սրբին, ինչպէս կ'աւանդէ խորենացին, իւր հայրենի Արմաւրայ տունը թողլով իւր Հարմա անդրանիկ սրբոյն, «Ինքն գնացեալ գմիս կողմամբն արեւելեան Հիւսիսայ, յեղբ ծովակի միոյ, շինէ զեղբ ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զլեռանն անուանէ Գեղ, և զէննն Գեղաքունի, որով կոչի և ծովն»: Յետին գրիչներ, գաւառիս անունը կ'աւտու պարանեն Գեօղ-արքունի: Տօնական զրոց գրիչ մ'ալ խորենացիէն վերջ, գաւառիս Գեղաքունի անունը կու տայ, բեհլով «Ի գաւառին Գեղաքունի, որ յորջորջեցաւ յանուն նախարարին Գեղամայ»: Այս երկիրը Մովսէս կաղանկատուացիէն կոչուած է նաև Գաւառ Գեղամայ, յիշուած է նաև սոսկ Գեղամ անուամբ, և Աշխարհ Գեղամայ: Ինչպէս ընդհանուր Սիւնեաց աշխարհի, ևս առաւել այս գաւառիս պատմութիւնն և զէպքերը հազար տարոյ չափ անյայտ կը մնան և գրեթէ չի յիշուիր Հայկազանց և Արշակունեաց հարստութեանց ժամանակ. և կը կարծուի թէ նախկին զարուց մէջ Գեղամայ լեռները քաղաքական տնտեսութեան անջրբպետներ չէին, այլ անոնց երկու կողմերն ալ մէկ իշխանութեան ներքոյ էին: Երկրորդ պարս սիկրները քիչ ժամանակ գաւառիս մէջ բնակած կը յիշուի Այրարաջն Սմբատ: Հայկական դպրութեան ծագման ժամանակ, ինչպէս Մեծ Սիւնիք, նոյնպէս և անոր քյո մասը՝ մասաորական հրահանգներով և բարեպաշտութեան կարգերով զարգացաւ: Սա-



ասնեանց տէրութեան վերջին տարիները (629) խազրաց կամ Հոնոց արշաւանաց միջոց, անոնց հրոսակները և Պարսիցը՝ Շահր-Վարազայ զօրավարին առաջնորդութեամբ, իրարու հետ գարնուեցան բուն զօրութեամբ Գեղամայ ծովակին եզերքը. « Ի պարտութիւն մասնեալ կոտորեցան Պարսիկը. ոչ սք էր որ գուժկան լինէր այնչափ արանց »: Կարսնկայտուացի, Բ. ժԶ: Ութերորդ դարու սկիզբը (703) Մահմէա ոստիկանը արշաւելով գաւառիս վրայ, երկար ժամանակ պաշարեց և տիրեց Սեւան կղզւոյն: Տարիներ վերջը, Բարան Պարսիկը բանացաւ Սիւնեաց աշխարհին վրայ, Վասակ նահապետին դուստրը առաւ, և գաւառիս վրայ յարձակելով, բնակիչները սրէ անցուց, գրեթէ 15000 հոգի և Մարենոցաց հոշակաւոր ուխար այրեց և քանդեց: — Ութերորդ դարու վերջերը Սիւնեաց կը պայազատէր Վասակ՝ աշխարհին սերանց նոր նահապետը. սա Գեղարքունի գաւառը կամ ծովակին բոլոր սլորաքը ժառանգութիւն առաւ իւր երկրորդ Սահակ որդւոյն:

Իններորդ դարուն, ինչպէս բնիկ Սիւնեաց նահապետութիւնը, նոյնպէս և Գեղամեանցը՝ սկսաւ բարգաւաճել և պայծառանալ, եկեղեցիներու և վանքերու շինութիւններով, գրեթէ երկու դարու ժամանակ: Զանազան վանքերու արձանագրութիւններ, ցոյց կու տան շարք մը նշանաւոր իշխաններու, որք շինեց և պահպանեց են ոչ սակաւ վանքեր, մեծ մեծ կալուածներ նուիրելով: Օրինակի համար, Շապուհ Բագրատունին՝ Մմբատ Ա թագաւորի եղբայրը, նոյն Շապուհի բոլոր Մարիամ Սիւնեաց Տիկիներ, Բարայ մեծ սպարապետ, Գրիգոր Սուփան իշխան, Սահակ իշխան, Վասակ Գարուն, Աշոտ Ա թագաւոր, Գաղիկ Ա, և ուրիշ շատեր: — Բաց ի բարեպաշա իշխաններէ գաւառս ժամանակին տուեր է նաև բաւական հոգեւորականներ, որոց կարգէն են ութ կաթողիկոսներ, և բազմաթիւ եպիսկոպոսներ և վարդապետներ, որոնք բարեկարգեց և պայծառացուցեց են վանքերը և գրեց են զանազան գրքեր:

Երկրատասներորդ դարու կէսէն վերջ, վրաց զօրացած ժամանակ, Զաքարեան քաջ զօրավարները այլազգիներու ձեռքէ կտրեցած ա-

ռաջին դաւառաց հետ, Կիրակոսի պատմածի համեմատ, առին նաև « զգաւառն որ շուրջ գծովալն Գեղարքունոյ »: Թաթարաց աշխարհակալութեան միջոց, անոնց Զորմազան զօրավարը, Անին առնելէն առաջ, Գեղամայ ծովակի ափունքը գրած էր իւր խորանը: Ոչ միայն այս անգամ այլ և ի հնումն և յետոյ շատ անգամներ Գեղամայ գեղեցիկ հովիտները եղած են կուտատեղի և դաղարբանակաց Հայոց և աւելի օտարաց: Թաթարաց իշխանութեան ժամանակ, Մաղաբիա ժամանակագիրը կը յիշէ, թէ « Վէլիս պէկին թալանեաց գերկիրն Գեղամայ », բայց թէ Բնչպէս, յայտնի չէ: Քսան տարի վերջ (1319ին) ահաւոր երկրաշարժ մը պատահեցաւ, և Սամուէլ Անեցիի բսածի համեմատ, « ի Գեղարքունի բնկզմեաց զբազում գեօղս, հանդերձ արամբք և կանամբք »: Այս գաւառիս մէջ 1387ին բանակեցաւ նաև աշխարհաւոր Լէնկ-թիմուրը, և ասիէց արշաւեց Երնջակայ ամբողջին վրայ:

Կը թուի թէ ժԶ դարու մէջ անդորրացիք է Գեղամայ երկիրը, ուր սկսեց են պայազատօրէն տիրել Հայոց մէլիքները: Այս մելիքներու իշխանութեան ժամանակ ևս հանդիսա չէ մնացած աշխարհը այլազգիներու արշաւանքներէ: Մինչև Ռուսաց տիրապետելը, թէև Երևանի կողմնակալն կամ խանն կ'իշխէր գաւառիս, սակայն անոր հպատակութեամբ հայ Մէլիքներն ևս որպէս որդի կը պայազատէին: — Բոս եկեղեցական իշխանութեան չի յիշուիր ի հնումն յատուկ եպիսկոպոս Գեղամայ, և գաւառս անշուշտ կամ Գանոյ վիճակին և կամ Սիւնեաց մեծ եպիսկոպոսին իշխանութեան ենթակայ էր: Վերջին դարերու մէջ կը տեսնուի որ գաւառին իւրաքանչիւր գլխաւոր վանքերը, գեղեցիկը առանձին վիճակաց բաժնելով, սնէին առանձին եպիսկոպոսներ կամ թեմակալներ: Ոսկան վարդապետի ցուցակի համեմատ, այդ եպիսկոպոսաց աթոռներն էին Սեւան, Մարենոց, Շոգազայ և Հայր Յովհաննավանք, զորս կը յիշէ նաև Սիմէոն կաթողիկոսը իւր Զամրո (283-4) գրոց մէջ:

Գեղարքունին ի հնումն կը բաղկանար չորս մասերէ կամ գաւառիկներէ, որք են. Ա. Ծմակ 18 գիւղերով, որ կոչուած է նաև



Գաւառ և սրուն այժմ կը համապատասխանէ Նոր Բայազիդ բաղաբը և շրջակայքը. Բ. Կոնժ և Գուզարակ 30 զիւղերով, որ այժմ է Ատիեամանայ շրջակայքը. Գ. Սողք և Սողից գաւառ 47 զիւղերով, որ այժմ է Զօթայ կողմերը. Գ. Արեգունի կամ Արեւգունի գաւառ 17 զիւղերով, որ այժմ է Կիւնէիք՝ ծովակի հիւսիսային եզերքը: Այժմ Գեղարբունի գաւառին կը համապատասխանէ Նոր Բայազիդ գաւառի մէկ մասը, յորում կան 31 հայաբնակ, 10 մաշականի և 69 պարսկաբնակ զիւղեր:

Եկեղեցահարկի ցուցակին համեմատ սուրբև կը գնենք Գեղարբունեաց բառասուն և եօթն զիւղերու անուանք, և խրաբանչիւրի զիւղացը, իրենց սուած հարկի շափն: Այս զիւղերէն այժմ ամանք միայն ծանօթ են իրենց հին անուամբ, կարելի է որ ուրիշներ ևս շէն զիւճակի մէջ գտնուին, բայց անուննին այլափոխուած է:

Կոնժ կամ Կոնժի . . . . .	20
Կակոյք . . . . .	42
Գոնոյ-ծոր կամ Կոնոնոր . . . . .	42
Սկերտ կամ Ըսկերտ . . . . .	10
Յրցնի . . . . .	7
Խնձի-Թաղք . . . . .	7
Յոփեաց ձոր կամ Ոփեաց ձոր . . . . .	6
Նորաշէն . . . . .	7
Եւանակաց կամ Յիւնակաց հուն . . . . .	7
Ողենի . Ոլի ի . . . . .	42
Գանձաղանատառ . . . . .	7
Գողձոր . . . . .	7
Երիզկայք . Երիակոյք . . . . .	45
Գաստակերտ . . . . .	40
Վասակաշէն . . . . .	40
Զառագարակ . Զառանագարակ . . . . .	7
*Ամարիս (Մարիք) . . . . .	25
Վաժոց . . . . .	40
Կամբրիւն . . . . .	45
Հոգք . Հագք . . . . .	45
Խոկաւիւնճ . . . . .	42
Խորոսն . . . . .	45
*Արգիճի . Արգաճին . . . . .	40
Թմոկ . . . . .	45
Մեհոգաց . Մեհոգաճ . . . . .	40
Հովուաց սագարակ . . . . .	7

Չագ . . . . .	47
Կաճիք . . . . .	45
Ութբուն . . . . .	42
Յուշապերեկ . Յուլարերէք . . . . .	6
Վարդենիք Վերին . . . . .	6
Վարդենիք Ներքին . . . . .	15
Թամբարարք . . . . .	42
Երերուք . . . . .	45
Աւնոյ կամ Աւնոյ հուն . . . . .	15
Գոմք . . . . .	42
Պահավանք կամ Զահավանք . . . . .	6
Կուտրակագոմք . . . . .	40
Վանական . . . . .	7
Փառականք . . . . .	10
Բերան . . . . .	42
Ղեխք, Ղիղք . . . . .	10
Բրաի սյրք . . . . .	42
Շիկակարքն . . . . .	15
Գերափու . . . . .	15
Կողկայ . Ծախկայ . . . . .	7
Ախայիւնք . Ախայինք . . . . .	45

Աստ կը գնենք նաև Սիմէն կաթողիկոսէն յիշուած հայանուն զիւղերը, վանորէից թեմերուն բաժանամբ, Ա. Սեանայ, Բ. Հայրափանից, և Գ. Շաղապայ, զուր ձգելով այլազգարնակները: Վերոյգրեալ անուանց մէջ աստղանիշ անունները կը յիշէ նաև Սիմէն կաթողիկոս:

Ա. Կաղամախի	Գ. Կորզարակ
Բատակալ	Չագ փորք
Վարզել	Եգնիստ
Վարզել միւս	Շղուսք
Փշմակալ	Ծակքար
Կորատեղ	Քեմափոր
Բ. Փունադար	Կարմիրքար
Իլկախանք	Կարմիրքար միւս
Ափատար	Բալախատափ
Բիղնի	Վրացաշէն
Նորատուս	Ամբար
Սունեղի	Կարմիր աղբիւր
Գանձակ	Գառնակեր
Պարոնքէկի (գիւղ)	Գիլիշէն
Խշլածագ	Հարուլ
Բերդ	Մարուց անապատ
Ազատքաղաք	Վանք
Կարմիրշէն	



Իսկ նոյն Սիմէոն կաթողիկոսէն յիշուած թուրքաճոռն զիւզերն, վերոյիշեալ երեք թեմերու համեմատ, են հետեւեալքը.

- Ա. Պուշտարեփէ, Ղարապաղաւ.
- Բ. Տէրի դարտաւ, Ղարալի, Գրչապ կամ Ղաշախ, Պուզխանէ, Գարազիլիսէ, Գիւլպանկի, Երզրանկի, Սեպանկի (Երկազանկ, Միազանկ, Եռազանկ), Քեամանուպուրազ, Հասանպուրազ.
- Գ. Տիլեկնի. Եաստիեօրամ, Արուերախա:

Գաւառիս զառ ի վայրերն աւելի են բան տափարակները, նշանաւոր է միայն ծովակի արեւելեան ծայրի տափարակը, որ է Սողեց գաւառը, որոյ մասն կը համարուի նաև Մազազ գաւառակն իւր Մազրայ զիւզով: Գեղարբունոյ գետերը հետեւեալք են, որք կը թափին Գեղամայ ծովակը. Գաւառագետ որ է Նոր Բայազիդու գետը, Իլխանագետ կամ Ատիեամանի գետ, Սոյի կամ Մազրայի գետ. կան նաև մնա տասն և մէկ գետակներ: — Հարաւային ծովեզերքը Օրդակլուէ սկսած, կը գանձուն քաղաքաց, զիւզից բերդերու աւերակներ, խիտ հին ժամանակներէ մնացած: Այս աւերակներու միջէն գանուեր են Օրդակլուի, Ալամիանի, Ալիշալուի, և Զազալուի բեւեռածեւ արձանապրութիւնք: — Ստոր. Հայաս. 263-265: Սիսական, 27-39: Գեղարբունի՝ զրեց Մեհրաբ արքեպիսկոպոս Սմբատեանց, սպ. վաղարշապատ, 1895. Ա-ԺԱ և 1-843 էջ: Եւ այլն:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՈՑ ԲԵՐԻՒ. — Բերդս կը յիշէ միայն Ստեփանոս Օրդակլեան, Սիւնեաց աւառ բերդերու հետ, որուն վրայ սերիշ աւելակութիւն չունինք:

- ԳԵՂԱՐՔՈՒՆԻ. Տես ԲԱՂԲ:
- ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:
- ԳԵՂԳԻԿ. — Այլազգարնակ զիւզ, Սերաստիոյ հիւսիսային արեւելեան կողմը:
- ԳԵՂԵԱՆԻ. — Աջրաց և հանպրումն Սիւնեաց կողմական գաւառի մէջ:
- ԳԵՂԵՐԵՅԻԿ. — Կը յիշուի Սիւնեաց Գողթն գաւառի մէջ գանուսոյ Ալուլիսի Ս. Թովմայի վանաց արձանապրութեան մէջ:
- ԳԵՂԵՐՎԱՆԻՔ. — Կը յիշուի Զորբորդ Հայոց Հաշտեանք գաւառի մէջ, թերեւս լինի այժմեան Գեղ-Վանք զիւզն խարբերդի:

ԳԵՂԵՅԻԿ ՄԱՆՍՈՒՐ. Տես ՀԱՍՍԵ ՄԱՆՍՈՒՐ:

ԳԵՂԻ. — Հին ամրոց Սիւնեաց կապան գաւառի մէջ:

ԳԵՂԻԿ կամ ԳԵՂԻԿ. — Հայանուն՝ բայց այժմ այլազգարնակ զիւզ Տայոց Աբաղէ (Թորթում) գաւառի մէջ:

ԳԵՂԻՍ կամ ԿԵՂԻՍ. — Հայարնակ զիւզ Մսկաց աշխարհի Սպարկերս գաւառի մէջ: Ռեի Ս. Քրիստափոր անուամբ եկեղեցի մը: Հարաւային կողմը բլրակի վրայ կառուցուած է Ս. Յովնանէն: անուամբ հոյակապ վանք մը. իսկ արեւելեան կողմը քարակիր եկեղեցի մը Ս. Սարգիս զօրավարի անուամբ: — Գիւզիս մնա է նաև Ս. Կիրակոս անուամբ վանք մը:

ԳԵՂՈՑ ՎԱՆՔ. — Հին բնոյարձակ շէն, Սիւնեաց Զորք գաւառի Գեղուածոր վիճակի մէջ:

ԳԵՂՈՒԱԶՈՐ կամ ԳԵՂՈՒԶՈՐ. — Հին վարդիկ վիճակ Սիւնեաց, Զորք գաւառի հիւսիսային մասը:

ԳԵՂՈՒԱՆՔ. — Գիւզ Այրարատայ վերին Բասեն գաւառի մէջ, Հասանկլայի հիւսիսային արեւմտեան կողմը. ծանօթ է նաև Թուանց անուամբ: Տես ԳԵՂ-ՎԱՆՔ:

ԳԵՂՈՒՏ. Գիւզ կաթողիկէ Հայոց, Տայոց Առեացիոր (Բերդազրակ) վիճակի մէջ: Եկեղեցին է յանուն Ս. Աստուածածնի: Գեղուաի մէջ կան երկու հնագոյն մատուռներ Ս. Ստեփանոսի և Ս. Գևորգայ անուամբ:

ԳԵՂ-ՎԱՆՔ կամ ԳԵՂՈՒԱՆՔ. — Հայարնակ զիւզ խարբերդի (Զորբորդ Հայք) ստաշնորդական թեմի մէջ: Բնակիչք 50 տուն, հողագործ են. ունին Ս. Նշան անուամբ եկեղեցի մը և վարժարան:

ԳԵՄՂՈՉԳԵՐ. — Հին վանք լեանային կիլիկիոյ, կը յիշուի ԺԳ գարու վերաբերեալ յիշատակարանի մը մէջ: Եկեղեցին նուերուած էր Ս. Աստուածածնի:

ԳԵՆԳԻՐԻ. — Բանուփան և Գիտղորս այս անուամբ գետ մը կը յիշեն Կորդուաց և Հայաստանեայց բաժանիչ, որուն լայնութիւնն էր զրեթէ 200 սարք:

- ԳԵՆԵՆԹԱՂԲ. Տես ՀԱՐԱՆԳ:
- ԳԵՆՈՒԱ. Տես ձԵՆՈՎԱ:
- ԳԵՏԱՐԱԿ. Տես ՍՈՂԲ:



ԳԵՏԱՔԷԿ կամ ԳԵՏԱՔԱԿ ՀԻՆ. — Կը զանուի Գանձակի Չարգախըլուի հասարակութեան մէջ, Շամբոր զեաակի ձախ կողմը, Գանձակէն մօտ 56 վերստ գէտի արեւմտահարաւ, ձորակի մը մէջ ուսկից կը հոսէ Գետաբէկի առուակը: Հոս կը զանուին գերմանացի «Սիմեոսի և ընկ.» պղնձահանքը՝ գնուած 1864ին, բազմաթիւ կատարելագործուած հաշոցներով և վառարաններով, որոնք կը գործեն ածախի, փայտի և նաւթի միջոցով: Հանքի բոլոր ծառայողներու և բանուորներու բնակարանները ընկերութեան սեփականութիւն են: Ընկերութիւնը ունի ամէն ճիւղի պատկանող մասնագէտներ. բրժիշկ, ճարտարագիտ, և այլն: Ունի ուսումնարան, գեղատուն, հիւանդանոց, հեռագրատուն, երկաթագործարան, հիւանարան և նեղանիւ երկաթուղի թէ՛ գործարանի մէջ և թէ մինչև Ղալաքեանց և Պայրամ-Սլի, սրանցմէ առաջինի մէջ կը զանուի գործարանի բաժանմունքը և երկրորդի մէջ է ածուխի և փայտի պահեստը: Հում կամ սեւ նաւթը կը ստանան Բագուէ մինչև Գալլար անուամբ երկաթուղոյ կայարանը, և անկից ալ մինչև Գետաբակ 42 վերստ երկաթուղիով կայ նաւթանցը, պողոպատեայ խողովակներով: Այս գործարանաց մէջ կ'աշխատին մօտ 2000 բանուորներ, որոնցմէ ամենէն շատ են սարսիկները, յետոյ թափարները, ապա հայերը, յոյները, և այլն: Ի հնուսն այստեղ կայ եղբր Հայոց մեծ գիւղ մը, որուն վկայ է ընդարձակ գերեզմանատունը: Բլրակի մը վրայ կանգնած է Հայոց Ս. Գեորգ հին եկեղեցին: Կայ եղբր նաև ուրիշ եկեղեցի մը, զոր պղնձահանքի կապալառուն քանդել տալով քարերը գործածել է իւր շինութիւններու համար: Գետաբէկի երկինքը միշտ պատած է գործարաններու ծխով: — Գանձակի գաւառ, Ա. 71-73 և 120: Երբ Գար, 1893. 35: Արձագանգ, Բ. 532: Եւ այլն:

ԳԵՏԱՔԷԿ ԱՅՈՒ կամ ՂԱՋԱԽ. — Կը զանուի գիւղս վերայիշեալ համանուն պղնձահանքէն հազիւ 3 վերստ հեռաւորութեամբ զաշտակի մը վրայ: Բնակիչները եկած են հոս Հին Գետաբէկէն, որոնց նախնիք ալ եկած են Ղաղախի կոթ, Ոսկեպարիսպ և Ղալաշա գիւղերէն: Գիւղիս մէջ նշանաւոր

բան չկայ, նոյն իսկ եկեղեցի չուննալով կը յաճախեն Հին Գետաբէկի եկեղեցին: Բնակչաց թիւն է 327 հոգի, բաժնուած 44 տան: Պղնձահանքի ծուխը պատած է նաև այս գիւղս, որ և շատ փաս կը հասցնէ արանբուն. մերձաւոր տեղերու հասկերը կ'այրէ և հեռաւորները կը խանգարէ և կանոնաւոր անման արդելը կը լինի: Ժողովուրդն ճարահատուելով, պղնձահանքի մէջ եւ շատ գործ չզաննելով, խնդիր մատուցած է կառավարութեան՝ որ ուրիշ լաւագոյն տեղ մը փոխադրուին: — Գանձակի գաւառ, Ա. 120:

ԳԵՏԱՔԱԿ. — Հայարնակ գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի Լորաձորի մէջ, Լոր և Գարբաս գիւղերու մէջ տեղ Շնաթաղ գետի ձախակողմը: Գիւղիս արեւելեան կողմը կը բարձրանայ Եղիակ գագաթը, իսկ արեւմտեան կողմէն Սաւերձակերը: Վերջինս այսպէս կը կոչուի, որովհետև սարի գագաթը ժայռ մը կայ, որոյ ծակերուն մէջ սառոյցը (սառնր) ամառ ժամանակ եւ կը մնայ: Գետաթաղ ունի չորս սիւներու վրայ հաստատուած կամարակապ և առանց զմբէթի զեղեցիկ եկեղեցի մը: Չեղունի մէջ և խորաններու վերին կողմերը կան գաղանի պահարաններ և պաշտպանութեան տեղեր: Խորաններու մօտ կան մէկ մէկ գեղեցիկ խաչարձաններ: Եկեղեցին շինուած է ՌՃԾԱ թուին: Բնակիչներէն մեծ մասը գաղթած են Հին Կախիջեանէն, ընդ ամէնը են 362 հոգի, բաժնուած 39 տան. կը պարապին երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մեզուարութեամբ: — Այս գիւղէն Բաստամանց բնասնիքէն Փիլգասե անուամբ մէկը 1586-7 թուին, անշուշտ վաճառականական նպատակով, ճանապարհորդեր է ամբողջ Մեծ և Փոքր Հայաստանը, Փոքր Ասիա, Կ. Պոլիս, Լեհաստան, Միջին և Արեւմտեան Եւրոպա. ձեռքերնիս հասած է իւր այս ճանապարհորդութեանց յիշատակարանը, լի բազմաթիւ սխալներով: — Սխալակ, 220-221: Սխալակ, 63-64:

ԳԵՏԱԿԻՅ. — Սակաւարնակ Հայոց գիւղ Սասուն: Գուրդ բնակիչը աւելի են: Տես ՆՂՈՒԿ:

ԳԵՏԱԿԻՅՔ. — Այս անուամբ վանք մը կը յիշէ Կիրակոս (Գլ. ԺԷ), Մածնարբերի ախ-



բոջ Ազատութանայ վրայ գրած առևն. «...կրօնաւորեցաւ ի վանքն որ կոչի Գեօտակիցը»: Բայց թէ նոյն է սա Գեօտակայ վանքի հետ որ կից էր Ազատե գետոյն, որոշ չգիտենք:

**ԳԵՏԱԿՆ.** — Այս անուամբ տեղ մը կը յիշուի Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Սեան կղզւոյն մօտ, որ եպիսկոպոսք, վարդապետք և քահանայք, ժողովք գումարած են Չարքարիս սպասաւարի և Խանէ աթարէ կի ժամանակ:

**ԳԵՏԱՀԱՅԵԱՅ ԱՍՏՈՒԱՅՄԱՐԻՆ,** կամ ԲԱՐՁՐ ԱՍՏՈՒԱՅՄԱՐԻՆ. — Հինաւորց վանք վերին Կեղիի (Չորրորդ Հայք), Օսնակ գիւղի մօտ. կառուցուած է լեւի ու լալիանիսա շղթայի մը արեւմտեան կողմն վրայ. շէշա կը նայի Օրօր գետակի և կարծես կ'իշխէ ամբողջ Կեղիի վրայ: Վանքս նորոգ կառուցեր են անցեալ դարու մէջ, ամբապինոյ և հսկայագործ շէնք է և օրինակելի յատակապիմ ունի: Վերջին ժամանակներս վանացս յարակից սենեակք և պահարանք լերան գառիթափէն վար գլորեցան, բայց եկեղեցին մնաց անփոս:

**ԳԵՏԱՀԱՍԱՆ.** — Սիւնեաց հին գիւղերէն մին:

**ԳԵՏԱՄ.** — Գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի մէջ, համանուն Գեօտակայ շար վտակի մօտը: Ունի 20 տուն թաթար բնակիչներ:

**ԳԵՏԱՄԷՉ.** — Հին գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ:

**ԳԵՏԱՇԷՆ** կամ ՉԱՅ-ՔԵՆՊ. — Հայքնակ մեծ գիւղ Գանձակի Միխայլովիու հասարակութեան, Հաճի-Քենդէն գէպի արեւելահարաւ, խոր ձորի մը մէջ, սակից կը հսկ Կուրակ-չայ գետակը: Չորը ամբողջապէս ծածկուած է այգիներով: Տները կը գտնուին ձորի արեւելահայեաց լանջի վրայ, իսկ արեւմտահայեաց լանջին կան հին հնձաններու աւերակներ և նոր կառուցուած պետական գործքը: Շէնքերու մէջ նշանաւոր են Տէր-Գրիգորեանի բառայարկ գեղեցիկ տունը և Մեկիք-Մնացականեաններու նախկին մելիքական ապարանքը: Գրեթէ գիւղի կեդրոնը կը գտնուի Ս. Աստուածածին եկեղեցին, զոր վերջին ժամանակներս նորոգած են. պարբերապապատ է և գաթի մէջ կայ հինաւորց բոշնի ծառ մը, յորմէ կախուած են եկեղեցւոյ զանգակները:

Գետաշէնի վարի ծայրը կայ փոքրիկ մատու մը, նահատակի մը գերեզմանով: Այս մատուոր Աշագ Ս. Նշան անուամբ նշանաւոր սխառագի է: Գրան կամարակալ քարի վրայ կայ ՌՃԻՉ թուականաւ արձանագրութիւն: Մատրանս մէջ կը պահուին չորս նշանաւոր գրչագիր աւետարաններ և զանազան մատենքներ, յորոց յիշենք Եղիշէ առաքեալի բազկի մէկ մասը արծաթէ սուկեղօծ աջի մը մէջ ամփոփուած, ունի արձանագրութիւն, Ռիլէ թուականաւ: Գիւղի վարի ծայրն ալ կայ փոքրիկ կամարակապ անսխն եկեղեցի մը, որ ունի միայն մէկ խորան և մէկ աւազան: Գրան վրայ սա ես ունի արձանագրութիւն, և քիչ մը բարձրը ՌՃՂԸ թուականը: Աւանդութեան բնկով, սա կուսանոց է եղեր, և այժմ տակաւին Անպաւտ կը կոչուի. շուրջը կան խոցեր, մէկ քանին գետ կանգուն: Ասոր մօտ է Հայոց եկեղեցական նորակառոյց գործքի շէնքը: Անպատէն քիչ մը հեռու կայ սրիշ փոքրիկ կամարակապ, անսխն և անխորան մատու մը, որուն միակ գրան կամարակալ քարի վրայ բանդակուած է, թէ Քրիստոս ինչպէս պիտի կշտէ ննջեցելոց հոգիները:

Ըստ ասից տեղացոց, հին ժամանակները Գարապաղէն գաղթած հայք հիմներ են գիւղս այս անուամբ և ժամանակաւ ունէր մինչև 700 տուն. սակայն 1800-1828ին միջոցները բնակչաց շատերը ի Պարսկաստան գերի տարուեր են և շատերը գաղթեր են ի Գարապաղ: Այժմեան բնակիչներէն շատերը գաղթած են Բոլնիսէն, Չրաբերդէն և Ըստտակէն. այժմ կը հաշուին 2558 հոգի, բաժնուած 446 տան: Արք երկագործութենէ և այգեպանութենէ գտա, կը պարապին նաև հիւսնութեամբ, զարբնութեամբ, գերձակութեամբ, թամբագործութեամբ, և այլն: Կանայք առաւօտէ մինչև երեկոյ կ'աշխատին անգապար, անեցոց հագուստները կը կարեն, չուխա կը գործեն և լաւ գորգեր կը շինեն: — Գետաշէնի հողն ու ջուրը բազապատմամբ բնակչաց թուոյն հետ շատ քիչ են: Կուրակ-չայի վրայ շինուած է գեղեցիկ կամուրջ մը: Գետաշէնցիք բաւական կրթուած են, վասն զի անցեալ դարու կէսէն սկսեալ ունեցեր են գործք: Գիւղս ունի նաև բաւա-



կան թուով խանութներ, սրանցմէ միոյն մէջ կայ նոյն խի ձայնագիր (Phonographe) զեղացիները զուարճացնելու համար: Կը պատմեն, թէ ինչպէս զեղացիք առաջին անգամ ձայնը լսելով, սարսափած փախեր են, կարծելով թէ մէջը սատանայ նստած է: — Մշակ, 1890. 76-77: Գաեճակի գաւառ, 110-114: Արցախ, 258-265:

ԳԵՏԱՇԷՆ. — Գիւղ Աղուանից Հոյի գաւառի, կառուցուած Արջկան զեռակի ձախակողման բարձրութեան վրայ: Գեղեցիկ է տեսարանն, կլիման և օդն լաւ: Գլխաւոր բերքերն են ցորեն և գինի: Բնակիչք աւելցող հայ են 574 հոյի, բաժնուած 100 տան. իրենց նախնիք զաղթած են խաչեն և Զրարերոյ գաւառներէն և մէկ քանին Վարանդայէն: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, հին է և փայտածածք:

ԳԵՏԱՍ. — Առյուծ կը կոչուի Էրեւանայ սահմանայ մօտ վրակ մը, որ օժանդակ է Հրազդանայ:

ԳԵՏԱՎԱՆ. — Կը յիշուի Գուգարաց Տաշիր գաւառի մէջ. տեղեկութիւնք կը պակասին:

ԳԵՏԱՎԱՆԱՅ ԽՈՎ. — Կը յիշուի Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ գտնուող Վանեխաւու արձանագրութեան մը մէջ:

ԳԵՏԱՄՎԱՅՐ. — Հին զիւղ Սիւնեաց մէջ, որ կը յիշուի իրրե կալուած, Զորք գաւառի մէջ գտնուող Վահանայ վանաց:

ԳԵՏԱՄԳԵԼ. Տես ԶԱԳԱՎԱՆՔ:

ԳԵՏԵՉԻ կամ ԳԵՏԵՉԻՔ. — Հայաբնակ զիւղ Մսիաց աշխարհի մէջ, Ասուանից ձորոյն զխնայք: Ունի Ս. Ստեփանոս եկեղեցի մը:

ԳԵՏԻԿ կամ ԳՈՇ ՄԻԹԻՍԱՐԱՅ ՎԱՆՔ. — Երբեմն հոչակաւոր և աբով խր տեսակներով անգամ նշանաւոր վանքս կը գտնուի Արցախի Քուտաի գաւառի մէջ, Գեռիկ կամ Տաեճաւս կոչուած զեղատեսիլ հարթակի մը վրայ: Բարձր և անառտապատ լեռներ կը պատեն վանքիս հարաւային, արեւմտեան և հիւսիսային կողմերը, բաց է միայն արեւելեան կողմը: Երկրաստաներորդ գարու վերջերք, երբ բարբարոս Մոզոլները իրենց սպառակութեան սոսկաբէկ գարձուցին Սիւնեաց քաջարի իշխաններու օրրանը, երբ

այդ արխնարբու ցեղի հրոտակները անդրթօրէն սրէ անցուցին նաև Գանձակու բոլոր բնակիչները, ճիշդ այդ ժամանակ 1191ին, խր հայրենեաց աւերմանց ականատես աւտանի Միթիթար Գոշ վարդապետը, կը հիմնարկէ հոչակաւոր մենաստանս, փոխանակ հին Գեռիկ վանաց, որ երկրաշարժէն մեծապէս փաստուած էր, աջակցութեամբ Վախտանի իշխանի և նորա ամուսնի Արզու խաթունի: Վանքս, որ կը բաղկանայ քանի մը եկեղեցիներէ, խր զեղեցիկ զիրքովը ունի բնութեան հրազարիչ և վերին սասիճանի կենդանի տեսարան մը:

Առաջին եկեղեցին Ս. Աստուածածին, կառուցուած է մեծ ձարտարութեամբ, ընտիր սրբաառնչ բարերով, Գանձաւորի եկեղեցւոյ խիսական ձևով, չորս բարձրաչէն կամարներով: Ունի չորս փոքր և մի աւագ խորան, երկու խորհրդարան, տասներեք լուսամուտ, վեղարածն կաթնօղիկէ մը, երկու գուռն՝ արեւմտեան և հիւսիսային կողմերէն: Եկեղեցւոյս լայնութիւնն է 11, 50 մետր և երկայնութիւնն 15, 75 մետր: Երկրաշարժէ փաստուած են կաթնօղիկէն և արտաքուտ արեւելեան սրմն, խի ներքուտ արեւմտեան և հարաւային կողմերը: Աջակողման գաւի երկրորդ խորանի ձախալին վրայ կը կարգացուի ՈՒՍ (= 1191) թուականաւ վանացս շինութեան արձանագրութիւնն, Աւագ խորանին վրայ եւ կայ ուրիշ բնդարձակ արձանագրութիւն մը: Ս. Աստուածածնի արեւմտեան կողմը կից կայ բնդարձակ գաւիթ մը, կառուցուած չորս հրաշակերտ միասպազող և բուրբակ սխներու և ութ կիտասիւններու վրայ: Գաւիթս ունի չորս խորան, 11 լուսամուտ և երկու գուռն. երկայնութիւնն է 15, 79 մետր և լայնութիւնը 13, 40մ.: Արեւմտեան դրան վրայ կայ ՉԻԳ (= 1294) թուականաւ արձանագրութիւն:

Երկրորդ եկեղեցին, որ կը կոչուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, պատկից է գրեթէ Ս. Աստուածածնի հարաւային կողմին, համակ բարաչէն է և չքնաղ կերտուածներով: Չեւով յար և նման է վերնոյն, բայց առանց գաւթի: Ունի 11, 90 մետր երկայնութիւն և 9, 12 մետր լայնութիւն. ախսոս որ քանուցուած են ամբողջ կաթնօղիկէն, խորանակաւ



մարի մէկ քանի քարերը և այլ մասեր: Այս եկեղեցւոյ կից են զանազան հայ պալատաւորներ: Տաճարս ունի զանազան արձանադրութիւններ, որոնք կը վերաբերին շինութեանց և նախապատմեանց: Երբորք եկեղեցին Ս. Կարապետ, համարեա թէ կից է Ս. Աստուածածնի եկեղեցւոյ գաւթի հարաւային սրմին: Շինուած է համակ սրբատաշ քարով և նուրբ բանդակներով, որուն սեղանի զոյր շինած է Գրիգոր՝ Տղայ անուանեալ, կաթողիկոսը: Այս եկեղեցին հիմնարկած է Մարտիրոս անուամբ առաջնորդը, բայց Լուզիմ Սալահայկի արշաւանքներու պատճառաւ չէ կարողացեր աւարտել, սակայն վերջացուցեր է Կապալեցի Գրիգոր իշխանը ՌՂ. (= 1241) թուականին: Տաճարս ունի երկու փոքր և մէկ մեծ խորան, հինգ լուսամուտ և մէկ դուռն. երկայնութիւնն է 6, 90 մետր և լայնութիւնն 5, 38մ.: Հարաւային սրմի վրայ արտաբուստ կայ ՈԶԶ. (= 1237) թուականաւ արձանագրութիւն. նոյն սրմի քարերն սկսեր են թափթփիլ: Գրան երկու կողմերը կան, երկու հրաշակերտ խաչքարեր, որոնք իրենց ձարտար և նուրբ փորագրութեամբ, Հայոց հռչակուած խաչարձաններէն զլիստորները կրնան համարուիլ:

Ս. Աստուածածնի աջակողմը կը բարձրանայ զանդակատան բարձր և եռաշարի շէնքը, որոյ կաթողիկէն այժմ բոլորովին բանդուած է: Գեանայարկը մատանատուն է, որուն յատակի վրայ կան քարուկիր հարեր, ունի մէկ դուռն և շորս լուսամուտ: Միջնայարկն զազանի պահարան է, ուր կը մտցուի վերնաշարի մտից առջև գտնուած ծակէ մը: Վերնայարկն շինուած է խաչածեւ և ունի դուռ մը հարաւային կողմէն և երկու սեղաններ Գարբիէ և Միքայէլ հրեշտակապետաց անուամբ: Զանդակատան շինողք են երկու եղբարք Գասապեա վարդապետ և Կարապետ, ինչպէս կը յայտնէ ՉԽ. (1291) թուականաւ արձանագրութիւնը: Զանդակատան պատկից է սեղանատունը, որ ընդարձակ շէնք մ'է. տանիքը ամբողջապէս խնարհուած: Չորս պատերն շինուած են անտաշ մեծամեծ քարերով, երկայնութիւնն է 17 մետր և լայնութիւնը 12մ.: Այս ընդարձակութենէն զիրտ կարելի է մտկայարկել,


թէ որքան բազմաթիւ եղած են ուսանողները և միաբանները,

Այժմ բայբայուած են բոլոր միաբանից սենեակներն և վանացոյ շրջապարիսպն, թողլով միայն իրենց տխուր հետքերն և աւեր հիմքերը: Վերոյիշեալ եկեղեցիներու արևմտեան կողմերը կան բազմաթիւ տապանաքարեր, իսկ արեւելեան կողմերը աւելի սակաւաթիւ: Մեծ՝ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ արեւելեան կողմը կայ փոքրիկ մատուռ մը սրբատաշ քարով շինուած, որոյ համար ոմանք կը կարծեն, թէ գրապարան եղած լինի: Վանացոյ մօտ Թարսա-չայ գետակի ձախ կողմը, Չոպան տաղի (8435) ստորտը կը գտնուի համանուն Գետիկ կամ Գուշա-վանք-շէն կոչուած գիւղը, որուն բնակիչները 1855 թուին տեղափոխուած են այտեղ Զաւէ գաւառի կոթմ, Գոսալու, Գվեղ և Սոխ գիւղերէն: Օղն, կլիման և ջուրն պատուական են: Բնդամէնը կը հաշուին 270 հոգի, բաժնուած 25 տան: — Ս. Հովիվախմէ, այսպէս կը կոչուի գիւղի մէջ համակ սրբատաշ քարերով շինուած մատուռ մը, որ ունի 5, 70 մետր երկայնութիւն և նոյնչափ լայնութիւն: Հարաւային սրմի և կաթողիկէի վրայ կան արձանագրութիւններ: — Հոգի Սուրբ՝ ուրիշ մատուռ մի է, Ս. Հովիվախմէն վեր, գիւղի ծայրը, որ ունի նաև գաւթի: Մատուռս և գաւթին նորոգած է Պ. Սմբատ Փարսասանեան: Գաւթի մէջ կան երկու տապանաքարեր, որոց միոյն վրայ գրուած է Միխրոս: Այս է Միխրոս Գոշի գերեզմանն, որոյ զլիստակի հոյքը, բժշկութեան համար հաւատացեալները այնքան սարած են որ մեծ փող ձեւացած է: Մատուռնս հարաւային կողմը կայ պատուական խաչարձանով տապանաքար մը, հանդերձ արձանադրութեամբ: Յոյժ ցաւալի և սղորալի վիճակի մէջ կը գտնուի Միխրոս Գոշի հրաշակերտ վանքը, հետզհետէ բոլորովին կոչնչանան եկեղեցիները, որոնք ուշադրութեան և նորոգութեան կը կարօտին: Այժմ վանականներէ զուրկ է, և կիսակործան տաճարներն յանձնուած են քահանայի մը ձեռքը: Վանքս, ինչպէս կ'երևի արձանագրութիւններէն, ժամանակաւ ունեցած է սեղհական շատ անշարժ կալուածներ, այգիներ,



ջրագայներ, գիւղեր, երկիրներ, անտառներ և ամառանոցներ: Այժմ անտիրութեան պատճառաւ յափշտակուած են այդ բոլոր կալուածները, որոնցմով 700 տարի պայծառ կեանք և կենդանութիւն ունեցեր է վանքս: Այժմ աստուածային պաշտամունք կը կատարէ գիւղի քահանան Ս. Աստուածածկի և կեղեցւոյ մէջ: Ժամանակին մեծ հոշակ ու նենալով վանքս, հայ մեծատունները միշտ մեծամեծ նուէրներ բրած են անոր ապա-

վանքէս բիշ մը վար կը գտնուի աւերակ Ուտերակէ գիւղը, հանգստարանով և կիսաւեր եկեղեցիով: Իսկ բիշ հետս, հարաւային կողմն է Տգրեւածով անուամբ գիւղը, որ այժմ թրքարեակ է: Գարձեալ վանքիս հիւսիս արեւմտեան կողմը, սարի հիւսիսային լանջի վրայ կայ աւերակ գիւղ մը և հանգստարան, Հիւ Շար Խաչ անուամբ: Այս աւերակի և հանգստարանի մէջտեղ կայ բարձր ժայռ մը, որուն հարաւային և արեւմտեան



234 • Գետիկ կամ Գոշ Մխիթարայ վանքի ընդհանուր տեսքը:

հովութեան համար. ինչպէս 1289 թուին, Մանագիկերացի ճար իշխանը, ընդարձակ հող գնելով նուիրեր է, որուն արձանագրութիւնը գրուած է ներկիով: Ուրիշ նուիրատուններն յիշենք միայն Գալլ իշխանը 1186ին, իւր որդին Գալլաձագը, Սմբատ իշխանի որդին Գրիգոր Հէջուրը, Խոնաախոս անունով վարդապետը, Կիրակոս պատմագիր վարդապետը՝ որ առած է քսան կտոր գիրք, քսասուն գահեկան և մէկ շուրջաս:

Երեսներուն Պրայ շարքով շինուած են քսանեւթեց հաս մեծ ու փոքր խաչեր, և այս հանգամանքէն գիւղս առած է իւր անունն, որոյ անուամբ կը կոչուի նաև այժմեան Նոր Շար Խաչ գիւղն: Նոյն սարի ստորստը կը գտնուի Աշուղի գիւղատեղին, առուակի մը ձախ կողմը, ուր կայ նաև հանգստարան: Ասկէջ բիշ մը վերև է Եղզու—Թուրս կոչուած տեղը, որ ժամանակաւ գիւղ է եղեր և ունի հանգստարան ու եկեղեցի: Այս տեղէն



ոչ այնչափ հետա կը գտնուի Գեարգ ճգնաւորի բարայրը և գերեզմանը: Իսկ ասիէքիչ մը վարով Աղասե գետակի աջ ափի վրայ կայ կիսատեր եկեղեցի մը, որ հաւանականօրէն լինելու է Հին-Գետիկ վանքի տեղակին: — Ստորգր. Հայաս. 357-360: Կիրակոս ցատ. 79, 81, են.: Զարպետեց, Ա. 136-145: Արցախ, 349-357: Արարք, 1892 թ. 40 42: Արձագանգ, Ի. 116-118: Եւ այլն:

ԳԵՏԻԿ կամ ՔԷՏԻԿԼՅԻ. — Այլարատայ Շիրակի գաւառի մէջ այս անուամբ երեք իւրարու մօտ հայաբնակ գիւղեր կան: Առաջինը վերին Գետիկ՝ ունի 646 բնակիչ, բաժնուած 72 տան, երկրորդը Միջին Գետիկ՝ ունի 326 բնակիչ, բաժնուած 43 տան, և երրորդը Ստորին Գետիկ՝ ունի 384 բնակիչ, բաժնուած 55 տան:

ԳԵՏԻԿ կամ ԱՐՏԱ-ՉԱՅ. — Չորակ Սիւնեաց Արեղունի վիճակի մէջ:

ԳԵՏԻԿ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց Չոր գաւառի մէջ, որուն կը կարծուի թէ կը համապատասխանէ Չայքեկո թաթարաբնակ գիւղը: Գաղարագիկ և ծառերով զարգարուած ձորի մը մէջ է, որ կ'երեւին մնացորդներ և հետքեր Հայոց հին շինութեանց, և ձի թահանից մեծիակ երկանաքար մը:

ԳԵՏԻԿՈՒՏ. — Կը յիշուի Զէնկի-Պագարի (Այլարատ) մէջ:

ԳԵՏԱ ԱԻԱՆ. — Կը գտնուէր հին աւան՝ Վասպուրականի թոսնաւան կամ Ճուաշոտ գաւառի մէջ, Երասխայ մօտ գաւարձալի սեղուց մը վրայ: Հոս Գագիկ Ա թագաւորը իւրեն համար զբօսանաց սեղի կամ ամարանոց մը շինեց: Թաովմա Արծրունին (Գ. ԺԱ) ատոր համար կը գրէ. «Գարձեալ վերակնեալ յառաւօտինս կոյս խաղացեալ ի Ճուաշոտ ի Գետս առան՝ շինէ անց վայելչական տեղի խրախից՝ բլուր մի սրբօպեալ տաճարախիս շինուածութք, որոյ հայեցածն առ գաշտակողմն ի վայր կոյս բերի, ի խազս գետոյն Երասխայ, որ հոյլքն էրեցն խայտան, և վայրենեացն, և ասեծոցն մարիքն, և երամք ցոոց պատարասական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հըրովին, բնոյզմ նայելով լեռանց այլարատեան ազասն Մասեաց»:

ԳԵՏՐՈՆ կամ ՔԵԴՐԱՆ. — Փոքրիկ գիւղ թուրքաց, Այլարատայ կոտայք գաւառի մէջ, Արզնի գիւղէն կէս փարսախ հեռու, հարաւային կողմը: Գիւղիս մօտ կայ Հրազդան գետոյն վրայ ձգուած կամուրջ:

ԳԵՏՏԻԿ. — Անունս կը յիշուի Սիւնեաց Գողթն գաւառի մէջ գտնուող Ազուլիսի Ս. Թովմայի վանաց արձանագրութեան մէջ:

ԳԵՐԱՆ. — Գիւղ Վասպուրականի Արտայ գաւառի մէջ, որ կը թուի լինել, Ազատ Գիրան բնուածը:

ԳԵՐԱՆԱՅ ԳԱՇՏ. Տես ՔԵՐԱՆ:

ԳԵՐԱՏԱՅ կամ ԳԵՐԱՏԵԱՅ ԳԱՇՏ. — Գաշատ կը յիշէ թովմա Արծրունին Գագիկայ երկրորդ վարուց մէջ, բնելով. «Զհեա մտեալ սակաւ զօրօք հասանէ նոցա ի գաշտին Գերատայ»: Բայց Հայեանեաց խաչի պատմութեան մէջ յաւելուածով մը կը յիշուի նոյն գաշտը. «Եկեալ (Հերակլ կայսր) բնակեցաւ ի գաշտին Գերատայ մերձ ի բաղաքն Սանարուկ Շատարշայ»: Ասկէց կարելի է հետեցնել, թէ գաշատ կը գտնուի Վասպուրականի Ազատ կամ Շատարշան գաւառի մէջ, և կամ Սանարուկի գաշտի հետ նոյն է:

ԳԵՐԱՓՈՒ. — Հին Գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, որ բոս հին ցուցակի 15 բնոն հարկ կու տար Սիւնեաց եկեղեցւոյն:

ԳԵՐԵՉՄԱՆՔ. — Այսպէս կը կոչուի այժմ Վասպուրականի Երուանթունիք գաւառի Հայոց ձորի մէջ գտնուող այն բլուրն՝ որ իրեն բաջերովը ինկաւ Բէլ, և որուն անունը Հայկ դրած էր Գերեզման:

ԳԵՐԵՍ. Տես ԵՐԵՍ:

ԳԵՐՔ. Տես ՔԵՐՔ:

ԳԵՐՄԱԳԵՐԻ. Տես ՉԵՐՄԱԳԵՐԻ:

ԳԵՐՄԱՆԻԱ. Գղ. Allemagne. Գերմ. Deutschland. — Եւրոպիոյ զօրաւոր ակրութեաներէն մին, ունի 540, 667 քառ. հզրմ. տարածութիւն և 52 միլիոնէն աւելի բնակիչ՝ մայրաքաղաքն է Պերլին: Մեծն Լեոնի՝ խաղացոց հետ բրած գաշտակցութեան աւելի առաջ սկսած են Հայք ծանօթանալ և գործել այս ակրութեան հետ: Երրորդ խաչակրութեան ժամանակ, Գերմանիոյ Փրեզերիկոս կայսրը թուղթ գրեց Լեոնի և խընդրեց որ իրենց օգնէ: Լեոն ոչ միայն ա-



ուստ պաշար զրկեց իրենց, այլ նաև ազնիւ բնծաներ, ու առանձին թղթով մ'ալ կ'իմնացրնէր իւր պատրաստականութիւնը ամէն տեսակ օգնութիւն բնեւ, նաև զիրենք բնգունելու յօժարութիւնը: Փրեղերիկոս շատ հաճեցաւ Հայոց այս տատիճանի հիւրասիրութեանը վրայ և խոտաացաւ, որ Լեւոնը թաղաւորեցրնէ կրորդ ինքը Եւրոպա գտնուայ: Բայց զժրադղարար Սիւնեկիոյ պող ջրերուն մէջ լուացուելով հիւանդացաւ ու մեղաւ, որուն մահուան վրայ շատ ցաւեցան Լեւոն իշխանը, Գրիգոր Տղայ կաթողիկոսը, Կերսէս Լամբրոնացին, և ամբողջ ազգը: Յետոյ Փրեղերիկոսի որդին Հենրիկոս Զ, իւր հօր խոտամբը կատարեց. Հնովմայ բահահայտեալը կեղեցակնոս փառաւոր թաղ մը զրկեց Մոզուեալոյ կոնքատոս արքեպիսկոպոսին ձեռքով. Հենրիկոս ալ փառաւոր Գրօշ մը՝ վրան առիւծ նկարած: Այս միջոցին հաւանական է որ սկսած ըլլան հայ վաճառականներ երթեւեկել Գերմանիոյ զանազան բազարները. ասոր վրայ թէև հաւաստի տեղեկութիւններ և փաստեր կը պակասին, սակայն Պալմիրի ծովեզերեայ բազարաց մէջ գտնուած բազմաթիւ արեւելեան դրամները, արեւելեան վաճառականաց նոյն կողմերը գալուն արդասիք կը համարին զիտունը: Իսկ ԺԷ դարու կէսէն վերջ և ԺԸ մէջ, շատեր կը յիշեն հայ վաճառականաց գալուստն Գերմանիոյ վաճառաշահ բազարները, յորոց յիշենք Համբուրկ, Ֆրանքֆորթ, Պրեզբու, Տրեզուս, Լայպցիկ, և այլն: Թագլիսնիքի բուծի համեմատ, Հայք Եւրոպայի կ'ստնուին զարեղէններ և ծովեզերեայ բազարներէն սաթ, և շատ ձեռագործներ Լայպցիկէ: Անցեալ դարու մէջ (1824), վեց Հայեր Լայպցիկէն գնին 600000 ֆրանկաց ապրանք և տարին և Տիգրիս և Օտեսոս. յաջորդ տարին 1200000 ֆրանկաց և կրորդ տարին 2800000 ֆրանկաց ապրանք. այս թիւերը հանուած են նոյն բազարի վաճառահամար ցուցակներէն: Հայ վաճառականութիւնը տարուէ տարի շարունակած է և հասած է նաև մեր օրերը: Այժմ ևս Գերմանիոյ մի քանի վաճառաշահ բազարաց մէջ կը գտնուին հայ վաճառականներ. սակայն ուրիշ տէրութեանց նման, այս եր-

կրի մէջ Հայք մեծ թուով կամ գաղթականօրէն եկած և հաստատուած չեն: Այժմ Գերմանիոյ մէջ ունինք բաւական թուով հայ ուսանողներ: Վերջին տեղեկագրի համեմատ Պրեզբուի մէջ կան 26 ուսանող, որոնք կազմած են հայ ուսանողական գրական միութիւն մը: Պրեզբուի մէջ կան 7 ուսանող, Տրեզուայի մէջ 2, Լայպցիկի մէջ 11, Հալլէի մէջ 3, Միւնխէնի մէջ 11, և Ենայի մէջ մէկ ուսանող: Այս ուսանողները եկած են գլխաւորաբար Շուշիէն, Բագուէն, Տիգրիսէն, Շամախէն, և այլ հայաբնակ բազարներէ: Այս ուսանողաց սովորած գլխաւոր մասնագիտութիւններն են բժշկութիւն, հասարակական գիտութիւն, բնագիտութիւն, գիւղատնտեսութիւն, տարբարուծութիւն և մեքենայագիտութիւն:

ԳԵՐՄԱՆԵՒԱ. Տես ՄԱՐԱՇ:  
 ԳԵՐՄԱՆԵՒԱՅԻՊՈՒՊՈՒՄ. Տես ԵՐՄԷՆԷԿ:  
 ԳԵՐՄ. — Բիւզանդական պատմութեան մէջ կը յիշուի այս անուամբ փոքր բազար մը, Ատանայի (Կիլիկիա) սահմանաց մէջ:  
 ԳԵՐՄ. Տես ՔԵՌՄ:

ԳԵՅ. — Շարականի մը յիշատակարանին մէջ 1657ին այսպէս գրուած է Սինեաց Զորք գաւառի հին Կիցք գիւղի անունը:

ԳԵՕԳ-ԲՈՒՂԱԳ. — Գիւղ Աղուանից (Նուխի) Խենի գաւառի մէջ. օգն և տեսարանն պատուական է, բայց ոչ նոյնպէս ջուրը: Կնակչաց նախնիք գաղթած են Խաչեն և Զրաբիւղ գաւառներէն, կը զբաղին երկրագործութեամբ և ալրեղործութեամբ, այժմ կը հաշուին մօտ 1300 հոգի, բաժնուած 200 տան: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, հին է և անշուք. մէջը կը պահուի Տեսնն եղբոր Յակոբոս ասորեալի մատուցը՝ հաստատուած նրբագործ, արծաթեայ մեծ խաչի մը մէջ, որ ունի ՌՄԾԷ թուականաւ արձանագրութիւն: Կայ նաև հին գրչագիր մագաղաթի վրայ մետրոպեան տառերով մեծագիր աւետարան մը, որուն յիշատակարանէն կը տեղեկանանք, թէ գրուած է ՌՁԱ (=1232) թուին, Գեաղկայ հռչակաւոր վանքի մէջ: — Եղիշ-Աւաքել՝ կը կոչուի գիւղիս արեւելեան կողմը քարաշէն մատուռ մը, որուն տանիքը և արեւմտեան որմը այժմ խոնարհած են: — Աղուանք, 234-236:



ԳԵՕԳ-ՉԱՅ կամ ԿԵՕԲ-ՉԱՅ. — Գիւղ Աղուանից Լաճիջ գաւառի և Շամախույ թեմի աւրեմտեան վերջին ծայրը, ընդարձակ տափասանի մը վրայ, արեւելեան կողմէն կ'անցնի համանուն Գեօգ-չայ գետն, որ թէ խմելու և թէ ոռոգման համար առատ ջուր կը մատակարարէ շրջակայից, բայց ամառը կը նուազի և շատ տաքնալով փաստկար կը դառնայ, այս ջուրէն գետ աղբիւրի ջուր չկայ: Գիւղիս հարաւային և արեւմտեան կողմերն են վարեւահոգը, կը ցանն ցորեն, գարի, բամբակ, կորեկ, և այլն: Շրջակայ գիւղերու մէջ առատութեամբ կը մշակեն բամբակ: Օգն այնքան առողջարար չէ, ամառը շատ տաք կը լինի և անհամար մոծակներ յերեւան կ'երնեն: 300 տան չափ բնակիչ ու խանութպան ունի, 70ը հայ են, կան նաև բողոքականք, մեսցիաւք թուրք են Շիա կոչուած աղանդէն, ունին մզկիթ ու թաղական դպրոց: Կան հետադրասուն, նամակատուն և արքունի գանձարան: Հայք բաւական հարուստ վաճառականներ են, կը ստանան ընդհանրապէս ցորենի և բամբակի առևտրով, և վաճառքը կը գրկեն Ռշարի երկաթուղոյ կայարանն և անտի ի Պաթում: Գաղթած են Դուխիի և Շամախիի վիճակներէն: — Այս անուամբ կը կոչեն այլազգեք Գեղամայ ծովակը: Տես ԿԵՕԲ-ՉԱՅ:

ԳԵՕԳ-ՔԻՎԻՍԱՅ (Կրայցա եկեղեցի). — Գիւղ Այրարատայ Կրայք գաւառի, ունի 52 տուն հայ և 45 տուն այլազգի բնակիչ: Եկեղեցին կը կոչուի Ս. Յովնանէն: Գիւղիս հիւսիսային կողմը փոքր բլրակի մը վրայ կապառայն բարով շինուած եկեղեցի կայ, յորմէ ստացեր է գիւղս իւր անունը:

ԳԵՕՂԱԿՐՈՒԱՂ (Կրայձ աղբիւր). — Գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի, այսպէս կոչուելուն պատճառ եղած է մերձաւոր գարի տակէն բղխող յարգառատ աղբիւրն, որ հազիւ 10-15 քայլ յտուջ գնալով ծոյր կը թափի: Եկեղեցին հին է կառուցուած յանուն Ս. Աստուածածնի: Ունի 700 հայ բնակիչ, բաժնուած 82 տան: Գիւղիս մօտ գտնուած աւերակաց մէջ տեսնուած հին շինուածով քարէ պրան մը վրայ գրուած է «ԹՎԻԵ, ԺԳ. (= 564) Հասան կազմակերպողն»: — Գեղակերուլազէն վեր կան եր-

կու մատուցը Ս. Աստուածածին և Ս. Սարգիս անուամբ, ուր կը յաճախեն բազմաթիւ ուխտաւորներ վարդալատի և Աստուածածնի սօներուն: Այս մատուցներու մօտերը կան աներու, եկեղեցիներու և զանազան շինութեանց աւերակներ: Կայ նաև բերդապարբուպի հետքեր և մնացորդներ. Գիւղիս հարաւակողմը 4 վերսա հետաւորութեամբ կան շատ աներու աւերակներ, աւելացիք այս աւերակները կարծիր խարապու կը կոչեն, ուր կործանուած եկեղեցոյ շուրջը կան բաւական խաչքարեր: — Գեղարքունի, 596-7:

ԳԵՕՁԱԼ ԳԱՐԱՅ. Տես ԿԻՆՁԼ, ՏԵՐԷ:

ԳԵՕԼ, ԿԵՕԼ, ԼՃԱՏԵՂ կամ ԵՂԵԳՆԱԳԻՒՂ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, որոյ բնակիչք գաղթականներ են Ալաշկերտէն 46 անով եկած, և այժմ եղած են 140 տուն, 1400 հոգուով: Գիւղիս աւելը ի հստմն լին լինելուն պատճառաւ, ի թուրքաց Գեօլ անունն ստացեր է: Եկեղեցին Ս. Աստուածածին կառուցուած բարձր գրից վրայ, հին է և անշուք: Մօտը կայ հասարակ քարով շինուած մատուս մը, որոյ մէջ կարգաւ շարուած խաչքարներէն միոյն վրայ կայ ՉԼԳ (= 1284) թուակառու արձանադրութիւն: Կ'երեւի թէ գիւղիս նախկին հայ բնակիչք ստիպուեր են ամալի թողուլ և հետանալ գիւղէս, և կամ աւերիչ և արխնարբու ասպատակաց զոհ գացեր են:

Գիւղիս արեւմտեան կողմը կայ հին և եկեղեցի մը և մօտը հին վանք մը Երակե վան անուամբ: Այսպէս կոչուած է ծաղիկ հիւանդութեան փարատիչ լինելուն համար, ուր կը գիմեն նոյն հիւանդութեամբ վարակուածներ և կ'առողջանան: Գեօլի սահմանաձայրը Կրայգիւղի ճանապարհի վրայ կայ գիւղատեղի մը, որ Պօղոս անունով իշխանէ մը շինուած լինելուն պատճառաւ, Պօղոսի գիւղ կը կոչուի: Այս գիւղի աւերակաց մէջ կայ Ս. Հռիփսիմէ մատուս մը, որոյ մէջ կան խաչարձաններ և ԺԳ-ԺԵ գարուց վերաբերեալ արձանադրութիւններ: Գեօլ գիւղի շրջակայ բլրակներն զարդարուած են գրուած և անդիր խաչարձաններով և գերեզմանաքարերով: — Գեղարքունի, 516-518:

ԳԵՕՂ, ՈՒԹԻՑ կամ ԳԱՐԷԻ ԹՄԱՆԵՆ. — Այսպէս կը կոչուի Կորձայք նահանգի Կոր-



գուաց (ճէզերէ) գաւառի մէջ գտնուող աւան մը, ճուարի կամ կորգուաց լեւան ստորաբ: Մէջը կան մզկիթ, զպրոց և այլ շէնքեր: Կ'ըսեն, թէ նախ Դոյ այս աւանը իջեր է Իրեն հետ եզոզներով և անկէջ Գեօզ Ուրից կոչուած է, տապանէն կընող ութ անձանց համար: — Դ. Հայաստան, 351:

ԳԵՅՑ-ԲԷԿԼՈՒ. — Հայաբնակ գիւղ Ազուաւնից (Դուխի) Շարէ գաւառի մէջ, գաշտակի մը վրայ: Ամբան օդը քիչ մը ծանր է և ջուրն ոչ այնքան զովիւր: Բնակիչք 268 հոգի են բաժնուած 50 տան, ասոնց նախնիք գաղթած են Խաչենէն և Զարբերդէն՝ նախ Պաշնճաղ և ապա այստեղ: Եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին: — Գիւղիս հիւսիսային կողմն է Ղշաղ-Քուեղիս գիւղը, որ ունի այժմ մօտ 300 տուն մահմետականացեալ Հայեր, եկեղեցւոյ աւերակ և հանգստարան: — Արշաւեր, 261-2:

ԳԶԸՂ կամ ԳԶԵՆ. — Աղձնեաց աշխարհի հին գաւառներէն մին, որ ունէր Գազիկ քաղաքը Տիգրիս գետոյն մօտ: — Այս անուամբ այժմ գիւղ մը կայ Մօսկան գաւառակի մէջ, 14 տուն հայ բնակչօք:

ԳԶԸԼ-ԱՂԱՃ-ՕՏՈՒՍՈՒ. — Այս անուամբ Հայոց գիւղ մը կը յիշէ Տէվրի անգլիացին, գաշտային կիլիկիոյ մէջ. կայ և լեռ մը յԱրշարունիս: Այրարատայ

ԳԶԸԼ-ԳԱՆԷ. — Փոքրիկ գիւղ կամ հանգրուան Այրարատայ Շիրակ գաւառի մէջ:

ԳԶԸԼ-ԳԱՆԷ. — Ամայի շէն մը և բերդ Այրարատայ ճակատք գաւառի մէջ: — Այս անուամբ գիւղեր կան նաև Հայաստանի ուրիշ կողմերը, որոնց բնակիչք այլազգի են:

ԳԶԸԼ-ԳԱՅԱ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Բաղրեանոյ գաւառի մէջ. 1882ին ունէր 22 տուն: — Այս անուամբ գիւղ մը կայ նաև ճակատք գաւառի մէջ:

ԳԶԸԼ-ԳԱՅԱ. — Ծովային կիլիկիոյ (Պամփիլիա) միճակներէն մին:

ԳԶԸԼ-ԳԻՒՍՈՒ կամ ԳԶԸԼ-ԳԻՒՍՈՒ (Կարմիր եկեղեցի). — Գիւղ Կարնոյ (Բարձր Հայք), 6-7 ժամ ճանապարհ քաղաքէն հեռու, հիւսիսային արեւելեան կողմը, զեղեցկադիր գառնիւայրի մը վրայ: Մէջ անգլթերքական մզկիթ մը կառուցեալ է և շրջակայքը պատած են գրիթէ բոլոր բնակչաց աները՝

բաժնուելով երկու թաղի, վերին ու Ներքին անուններով: Տեղւոյս զիրքը բարձր է բոս երկրաշափից Կարնէն 700 կանգուն. այդ պատճառաւ սաստիկ ցուրտ և բքաբեր կը լինի ձմեռը, իսկ գարունը՝ քաղցր և զուարճալի. ամառը՝ գրիթէ բոլոր բնակիչք կ'երթան 2 1/2 ամսոյ շափ կը բնակին զիւղիս արեւելեան կողմը Խաչափայտի մօտ և սահմանակից կեակուր-տաղը բնուած լեռը: Օդը շատ մաքուր է և ջուրը պատուական և զովացուցիչ: Բնակիչք 65 տուն են, որոց 30ը Մահմետականաց և 35ը Հայոց: 1828ին տեղւոյս Հայք գաղթեր են Ի Ռուսիա, և այն ժամանակի բնիկներէն միայն երկու ընտանիք մնացած են, մին թուրք, միւսն՝ հայ: Արդի բնակիչք՝ մեծ մասամբ՝ Տրապիզոնի Համշէն գաւառակի գիւղերէն 1830ին գաղթուող սերունդներ են: Հայք՝ Մահմետականաց հետ արենակցութիւն և ազգականութիւն ունին, զեռ մինչև ցարդ կը գտնուին Հայոց մէջ այնպիսիք, որոց կամ մօրաբքով, կամ հօրաբքով և կամ հօրեգործ որդեք մահմետական են: Գիւղիս եկեղեցին՝ Ս. Նշան, բաւական մեծ և շքեղ է, կառուցեալ 1865ին, ջանիւք և զոհողութեամբ Տ. Մարտիրոս քահանայի և Քէհեա Սահակի: Գաղթեալ Հայք կանխաւ Ներքին թաղի մէջ՝ ձեզուեն ու դուր ցած և շուրջանակի հօգապատ հին եկեղեցի մը ունին եղեր: Հայք ունին նաև վարժարան մը 52 աշակերաներով 12ը ազջիկ: — Կը կարծուի թէ գիւղիս անտան պատճառ եղած է՝ բլրոյն վրայի մզկիթէն 10 քաղջ հետու գէպ յարեւելս կարմիր քարերով շինուած գմբէթ մը (անշուշտ եկեղեցւոյ), որ այժմ բոլորովին անհետացած է:

ԳԶԸԼ-ԳԻՒՍՈՒ կամ ԳԶԸԼ-ԳԻՒՍՈՒ. — Հայաբնակ մեծ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, որոյ բնակիչք եկած են Խօշալմանքէն և անմարդաբնակ գաւեր են գիւղս: Կառուցուած է չոր և ապառաժուա ձորի մը մէջ, Ախուրեանի ձախակողմը. Խօշալմանքէն հազիւ կէս ժամ հեռու է, գէպ ի հիսիսային արեւելք: Նշանաւոր է Ս. Գրիգոր (թ. 235) անուամբ հին եկեղեցին, կարմիր քարերով շինուած, յորմէ և մնացած է գիւղի անունը: Տակաւին կանգուն է հոյակապ գմբէթովը, չորս սիւ-



ներու վրայ հաստատուած. ձեզունին վրայ կան գեղանկար պատկերներ: Ինչպէս հարաւային որմոյն վրայի արձանագրութենէն կը տեսնուի, եկեղեցին կառուցուած է 985 թուին, Հոսոմոսի կամ Խոշալմանաց Սարգիս և Սողամոն վանահայրերէն և Սամեհանի անուն արեղայ ճարտարագետի ձեռքով: Խորանին աջ և ձախ կողմերը կան փոքրիկ աւանդատուններ, արեւմտակողմեան աւանդատան դրան վրայ կայ բոլորածեւ մեծ խաչ,



235. Գղլլ-Գիլիսէի Ա. Գրիգոր եկեղեցին:

նոյնպէս անոր վրայի լուսամտին երկու կողմերը կան խաչվէմեր: Հին շինութեան արձանագրութեան մտա կայ նաև համառօտ արձանագրութիւն մը նուիրատուութեան՝ Զաքարիա սրբապաշտի: Եկեղեցւոյ արեւելեան որմն վրայ կա կայ նուիրատուութեան արձանագրութիւն մը Ռեքան Քարիմաստի անուն անձի, 1271 թուականաւ: Գիւղիս բնակիչք այժմ հաշուին 837 հոգի, բաժնուած 120 տան: Այս գիւղէն գաղթած են Պոռթոս-շեկցիք և Հաճի-գոլիցիք:

ԳՁԸԼ-ԳԻԼԻՍԷ. — Հայաբնակ գիւղ Այրա-

բասայ Շիրակ գաւառի մէջ, որ վերինէն կը տարբերի Նոր կամ Երկրորդ Գղլլ-Գիլիսէ կոչուելով: Ունի եկեղեցի մը և 300 բնակիչ, բաժնուած 44 տան: Տես ԳՊԻԵՎԱՆՔ:

ԳՁԸԼ-ԳԻԼԻՍԷ. — Գիւղ Այրարատայ Բանին գաւառի մէջ, Քէօրօզլու բերդի աւերակաց հարաւային կողմը, Խոյի վանակի Խանի գետոյն խառնուրդի մտա: Անպիտացի ուղեւոր մը գիւղիս մտա կը յիշէ մեծամեծ անասաշ քարերով քառակուսի շինուածքի մը աւերակը:

ԳՁԸԼ-ԳԻԼԻՍԷ. — Հայաբնակ գիւղ Պօռչալու (Գուգարք) գաւառի մէջ: Ունի 610 բնակիչ, բաժնուած 76 տան: — Այս անուամբ գիւղ մը կայ ծովային Կիլիկիոյ մէջ: Ռերիշներ ալ կան Կարսի, Կաղզուանի, Պօռչալույի, և Արասհանի միծակաց մէջ, որոց բնակիչք այժմ այլազգիներ են:

ԳՁԸԼ ԳՈՒՂ. Տես ԵՐԵՐՈՒՔ:

ԳՁԸԼ ԳԱՇ. Տես ԳՁԸԼ ԹԱՇ:

ԳՁԸԼ ԳԻՁԷ. — Կը յիշուի այս անուամբ գիւղ, Այրարատայ կողմիտ գաւառի մէջ:

ԳՁԸԼԵԱՐ. — Արեւմտեան հիւսիսային սոս Արաղած լիբան:

ԳՁԸԼ ԶԱՔԻՐ ԿԱՄ ԶԱՔԻՐՈՒ. — Գիւղ Այրարատայ ճակատք (Սուրմաթ) գաւառի մէջ. ունի 484 հոգի, բաժնուած 77 տան, յորոց 32 տունը Հայք են, մնացեալք թաթարք:

ԳՁԸԼ ԶԵՅԱՐԷ. — Այրարատայ լիւններէն մին, Արաղածայ արեւմտակողմը:

ԳՁԸԼ-ԹԱՍՄԻՐ ԿԱՄ ԳՁԸԼԹԱՍՄԻՐ. — Հայաբնակ մեծ գիւղ Այրարատայ Արաղածոսն գաւառի մէջ Օշականի մտա: Ունի եկեղեցի մը Ս. Յովնանէն և 1282 բնակիչ, բաժնուած 159 տան:

ԳՁԸԼ ԹԱՇ ԿԱՄ ԳՁԸԼ-ԳԱՇ (Կարմիր քար). — Հայաբնակ գիւղ վասպուրականի Հայոց ձոր գաւառի մէջ, Հերձ գիւղէն մէկ ժամու ճանապարհ հեռու: Կարմրագոյն լիւնակի մը ստորտար շինուած լինելով, թուի թէ անկէց առած է անունն: Ունի 16-20 տուն բնակիչ, և Ս. Երրորդաբիւն անուամբ պորդ եկեղեցի մը, կառուցուած քարաժայռի մը ստորտար: 1885ին գիւղիս մէջ նշանաւոր էր Մխախր Մ. Փոսան աղայի նահապետական տունն, որ բաղկացած էր 40 հո-



գիւ, ի բաց թողլով խոտազները և այլ ծառայողները: Այս ատենը սիրով կը հիւրընկալէր ամէն ազգէ բազմաթիւ հիւրեր և ճանապարհորդներ:

ԳՋԸԼ-ԹԱՇ. — Աւերակ գիւղ Սիւնեաց Սոյքը գաւառի մէջ:

ԳՋԸԼ-ԹԵՓԷ (Կարմիր սար): — Բլուր Այրարատայ Արշարունեաց գաւառի մէջ, Ախուրեանի և Երասխայ խաւարոց արեւմտեան անկիւնը:

ԳՋԸԼ-ԹԵՓԷ. — Բարձր լեռ (10370) Սիւնեաց իջուկ գաւառի մէջ:

ԳՋԸԼ-ԹԵՓԷ. — Կիլիկիոյ լեռներէն մին, 8500' բարձր: Երկաթային և հրաբլխային կազմութեամբ կարմրագոյն և թխագոյն կերտի:

ԳՋԸԼԱՍ. — Լեռնակ (3990) Այրարատայ Արագածոտն (Թաշիշ) գաւառի մէջ:

ԳՋԸԼ-ԽԱՁ կամ ԳՋ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ Ելլի-աւրէ փոքրիկ վտակի մօտ: Քննելի է հին եկեղեցին, որ արձանագրութիւններ ևս ունի: Այժմեան եկեղեցին կը կաշտի Ս. Աստուածածին: Ունի 600էն աւելի բնակիչ, բաժնուած 71 տան: Շիշմէիէի հարաւահողմը, երկու մզոն հետաւորութեամբ, կայ սոյն անուամբ Ռուսաց պահանկատուն մը:

ԳՋԸԼ ԿԵՏԻԿ. — Լեռ Այրարատայ Արշարունեաց գաւառի, Կապոյտ գետոյն և Երասխայ մէջտեղ:

ԳՋԸԼ ԿԵՍԷ (Կարմիր լիւ). — Լճակ Այրարատայ Կոզոյի գաւառի մէջ: — Այսպէս կը կոչուի նաև Արագած լեռնի մեծագոյն լճակն:

ԳՋԸԼ-ԳՋ. Տես ԳՋԸԼ-ԽԱՁ:

ԳՋԸԼՃԱ. — Լեռ և գիւղ Այրարատայ Բասեն գաւառի մէջ, Խոտիկ գիւղի հիւսիսային կողմը:

ԳՋԸԼՃԱ. — Գիւղ Սիւնեաց Երնջակ գաւառի Ապրակունեաց վիճակի մէջ, Երնջակ գետոյն ձախակողմը: Բնակիչք 16 տուն են, 5ր Հայոց և մնացեալք՝ թաթարաց: Այսպէս կոչուած է հարաւահողմը գտնուող կարմրահողմը բլուրներուն համար: Գեակերքը կայ վանաբար անուամբ մեծ քար մը, որ կը համարուի Ս. Կարապետի վանաց սահմանածայր:

ԳՋԸԼՃԱ. — Բերդիկ Սիւնեաց Արագածք գաւառի մէջ:

ԳՋԸԼ-ՉԱԳՉԱԿ կամ ՉԱԵՉԱԵ. — Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, Արզնայի հիւսիսային կողմը, Գարախանէ գետոյն խոտորի մօտ: Ի հնումն բնակիչները էին Հայք, Թուրքք և Պարսիկք, որոնք փոքրիկ բերդ կամ աշտարակ մը կառուցեր էին, 1710ին ստեղծները, ստպատակներէն պաշտպանուելու համար: Մօտը կան հանքային ջրեր: Այժմեան բնակիչք ամբողջ հայ են, 1217 հոգի, բաժնուած 148 տան. գաղթած են Բամբակէ, Ալաշկերակ և այլ տեղերէ: Տունները քարաշէն են, իսկ եկեղեցին փայտաշարի է՝ բայց հիմունքը քարէ: 1877 թուին Ռուսները Շիրակայ արեւմտեան մասը նուաճելու միջոց, վարչութեան կեդրոնը հաստատուեցին: ԺԸ գարու վերջերը (1798) վրաց Գէորգ ԺԲ թագաւորին Գաւիթ և Յովհան որդիքը, Լեկաց գնդի օդնութեամբ, այս տեղ յաղթեցին Կարսի կուսակալի զօրաց և անոր սահմանները կողոպտեցին: — Շիրակ, 8:

ԳՋԸԼՉԸՊՈՒԳ. — Հայաբնակ գիւղ Քղիկ սոսաջնորդական վիճակի մէջ: Ունի եկեղեցի Ս. Յակոբ՝ և վարժարան 19 աշակերտներով:

ԳՋԸԼՉԸՊՈՒԳ. — Այս անուամբ գիւղ մը կը յիշուի Այրարատայ վանանոց գաւառի մէջ:

ԳՋԸԼ-ՊԱՇ. — Լեռ Այրարատայ Շիրակ գաւառի, 2284 մետր բարձրութեամբ:

ԳՋԸԼ-ՊՈՒԼԱԳ (Կարմիր աղբիւր). — Գիւղ վասպուրականի Տոսոյ գաւառի մէջ, որ երբեմն հայաբնակ էր, այժմ ունի 10 տուն քուրդ բնակիչներ:

ԳՋԸԼՊՈՒԼԱԳ կամ ՉԱԵՐԼՈՒ. — Գիւղ Սիւնեաց Սոյքը գաւառի մէջ, համանուն Կարմիր աղբիւր գետակի մօտ, որուն բնակիչք այժմ այլազգի են 160 տուն: Մէջը կայ փոքրիկ և կիտակեր հին եկեղեցի մը Ս. Բերդեմէ անուամբ, որուն սեղանին տակէն կը բխէ յորդ աղբիւր մը:

ԳՋԸԼՊՈՒԼԱԳ. — Գետակ՝ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, կը հոսէ Սպիտակաւոր Ս. Աստուածածնի վանաց արեւելեան կողմէն, զրեթէ կէս փարսան հետաւորութեամբ: Հոսանաց մէջ ոսկեղոյն աւաղնշմարտելուն համար, այսպէս կոչուած է:



ԳԶԸԼՊՈՒՉԱԳ. — Հանգրուան՝ Այրարատայ ճակատք (Կողբ) գաւառի մէջ:

ԳԶԸԼ-ՊՈՒՌՈՒՆ (Կորմիր բիր). — Արագած լեռան ոստերէն մին, արեւմտեան կողմը:

ԳԶԸԼ-ՊՈՒԱԶ (Կորմիր կապան). — Լեռ Սիւնեաց Իրզուկ գաւառի մէջ, 10370՝ բարձրութեամբ. սահմանակից է Աղահէճք գաւառին: Լեռ ունի իւր անուամբ Գղբրցօրաց տերեւի ձոր մը:

ԳԶԸԼ ՎԱՆՔ. — Գիւղ Սիւնեաց Սոյք (Կոր Բայրակի գւ.) գաւառի մէջ, սրուն բնակիչք այժմ այլազգի են, 74 տուն:

ԳԶԸԼ-ՎԵՐԱՆ. — Լեռ Այրարատայ Ուրծ և Արած գաւառի մէջ: — Այս անուամբ գիւղ մ'ալ կը յիշուի Գարեղէնից (Կելլուան) մէջ:

ԳԶԸԼ ՏԱՂ. — Լեռ Այրարատայ Մաղաղ գաւառի մէջ, Գառնոյ արեւմտեան կողմը:

ԳԶԸԼ ՏԱՂ. — Լեռ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ 5550՝ բարձրութեամբ: Տես ԲԱՅԱԶԻՒ: — Այս անուամբ լեռ մի ևս կը յիշուի Սիւնեաց մէջ: — Լեռ և ամառանոց Առանայի մօտ:

ԳԶԸԼ ՔԷՕՅ. — Գիւղ Լեզինէէ (Գարդանէլ) 25-30 վայրկեան հեռու. ունի 10-15 տուն հայ, առանց եկեղեցւոյ և վարժարանի:

ԳԶԻՐԱ. Տես ձԷԶԻՐԷ:

ԳԷԹԻ ԳՒՇՏ. — Կը յիշուի Սիւնեաց վայրց ձոր գաւառի մէջ:

ԳԷԱԶՁՐ ԿԱՄ ԿԷՕԼԵՍՈՒՐ. — Այրարատայ Գեղիգօր գիւղի անուան այլ կերպ գրութիւնը:

ԳԷԼՁՔ, ԿԵԱԼՁՔ ԿԱՄ ԳԷՂՈՒԿ. — Հալարնակ գիւղ Աղձնեաց (Բաղէշ) ու Տաաիկ գաւառակի մէջ. ունի 27 տուն և 184 հոգի, որք հոգադործ են:

ԳԷՂԸՄ. — Գիւղս կը յիշուի Բաղէշի Մօական գաւառակի մէջ:

ԳԷՂԸՐՎԱՆ. — Գիւղ Տիգրանակերտի Ալիվան գաւառի Խորի գաւառակի մէջ: Ունի 58 տուն հայ և Ս. Ստեփանոս անուամբ եկեղեցի մը:

ԳԷՆ. — Այրարատայ Արշարունեաց գաւառի մէջ որսի տեղ, զոր կը յիշէ Անանիա Շիրակացի. «Որս էր Կամարականայն ի Գեև, և կալեալ երէ բազում, ...»:

ԳԷՈՐԳ (Ս.). — Շաղկն Գարահիւարէն գրեթէ չորս ժամու չափ հեռու, Թամարայ անուն գիւղին կից է Ս. Գէորգայ նուիրուած

վանքս, որ 25 տարիի չափ կամ աւելի առաջ հրդեհի մը պատճառաւ մասամբ այրեցաւ և երկար տարիներ մնաց այնպէս հրդեհիգեալ: Սերաստիոյ առաջնորդ Տ. Պետրոսեպ. Թահմիզճեանի նախաձեռնութեամբ և ժողովրդեան ջանքը և նպաստիւք կարելի եղածին չափ նորոգուեցաւ և այժմ ուխտաւորք կը գիմեն վանքս Ս. Գէորգայ սօնին օրը:

Վերջին նորոգութեան ժամանակ եկեղեցւոյ խորանին աջակողմը ձեւին տակ արձանագրութիւն մը գտնուեցաւ բարի վրայ բանդակուած. որուն թէև թուականը շիտթ, բայց ժամանակին իշխող կաթողիկոսի անունը սրոշ բլլալուն, կը կարծուի թէ վանքս ժԷՂ գարու սկիզբները, այն է 1716-7ին շինուած բլլայ: Վանքս ունի սեփհական միայն տասնեւեօթն կտոր մշակելի արտօրայք և երկու պարակցք: — Բազանդիտե, 1900 թիւ 1333:

ԳԷՈՐԳ (Ս.). — Վանքս կը գտնուի Կեսարիայէն երկու ու կէս ժամ հեռու, զէպի արեւմտեան հիւսիս, Լըբիլէթ անուն գիւղի լեռնաբլուրին վրայ կառուցուած: Շինութեան թուականն անձանթթ է, սակայն մեծամեծ բարերն՝ որոնցմով շինուած է և զարգարուն բանդակներն, որոնց վրայ կը զմայլին Եւրոպացի ուղեւորք, իւր մեծ հնութեան վրկայք են: Վանքս այժմ ամայի է և սեփհականութիւնն ալ անցած է Յունաց, որոնք կը կոչեն Այիօս-Խըտրեյլէսի վանք:

ԳԷՈՐԳ (Ս.). — Այրարատայ Բազրեանդ գաւառի մէջ կը գտնուի նշանաւոր ուխտատեղիս, որ կառուցուած է բարձր գիւրքի վրայ, Գամբէն արեւելք մէկ ժամ հեռաւորութեամբ, Գառնոյ գիւղի զխմաց: Հրաշալի է ուխտատեղւոյս տեսարանն: Յիստատեղւոյս սրմերն անարուեստ կերպով բարձրացուցած է ջերմեանդ ժողովուրդը, որ տարին մէկ անգամ ժամերգութիւն կը կատարուի: — Ժողովրդեան աւանդութեան համեմատ Ս. Գէորդ մին եղած է Ս. Սուբխասանց բնակիւներէն: Երբ Սուբխասանք՝ Ալատաղ (Իրազկանց) Ոսկեանցմէ բաժնուեցան, լեռնէ լեռ մինչև այս վայրը եկան, այս տեղ հիւանդացաւ մնաց Ս. Գէորդ, իւր մէկ բնակիւնը հեռ, հոս մեռաւ և թաղուեցաւ: — Բազրեանդ, 210-204:



ԳԷՈՐԳ (Ս.). — Վանքս կը գտնուի Աղուանից Շարէ գաւառի մէջ, Օրարան գետի աջ կողմը, Պակզ (Պարտէզ) գիւղի մօտ, որուն բնակիչները մահմտականացեալ հայեր են: Արտաբուստ քարերը ամբողջապէս տաշուած են, իսկ ներքուստ անտաշ: Ունի աւազան, 2 խորհրդարան. խորանի վերելակ սանդուղն շինուած է բեմի մէջտեղէն: Չունի արձանագրութիւն և ոչ շինութեան թուական: Ուխտի համար հոս կը գիմեն ոչ միայն Հայք, այլ և մահմտականացեալներն: Վանքս ունի եղբր շրջապարիսպ և միարանից սենեակներ, որոնց հետքերը կ'երևին: Տաճարի հիւսիսարեւելեան կողմը քանի մը քայլ հետո ժայռէն կը բղխէ անուշահամ և առատ պատուական աղբիւր մը: Իսկ հիւսիսային և արեւելեան կողմը ամփոփուած են միարանից մարմինները, որոնց տապանաքարերը անարձանագիր են: — Արշակեր, 267:

ԳԷՈՐԳ (Ս.). — Այս անուամբ Լաւին Բենեդիկտեան կրօնաւորաց վանք մը կար կիլիկիոյ Սեաւ լեռան վրայ: — Այս անուամբ ուրիշ վանք մ'ալ Հայք ունէին ի Կիլիկիա, անշուշտ վերինէն գատ, որուն համար թէ և յայտնապէս չըսուիր թէ Սեաւ լեռան վրայ կը գտնուէր, սակայն հոն բլլալը հաւանական կը թուի: Այս Ս. Գէորգ վանքին առաջնորդ կը համարուի սմն Կերսէս, որ վանտականներէն Յակոբ անուամբ մէկը իրեն բնկեր աննելով, հաւանօրէն կոստանդին Բ թագաւորի մահէն վերջ, ուխտի գաղթած էր արեւմտաք և թերես նաև նուէրներ հաւաքելու: Կիտամար, որպէս զի նորոգէ ասպատակներէն աւերած վանքերը և եկեղեցիները: Սա 1364ին Լոնտոն երթալով Եղուարդ Գ թագաւորէն զբամ հաւաքելու արտօնագիր բնուցուներ է: — Սիտուան, 410:

ԳԷՈՐԳ (Ս.). — Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ, Երնջակ քաղաքի հիւսիսակողմը բարձր և զմտարամասշկի լեռան մը ծայրը կը գտնուի վանքս, որոյ տաճարի միայն որմերն կանգուն մնացեր են ցարդ: Ունի սեղան մը և երկու դուռն, արձանագրութիւնը կը պակսին: Ասոր մօտ ուրիշ փոքրիկ աղօթատեղի մը կայ, բոլորովին աւերակ վարձած: Հաւանական է որ վանացս մօտ ի հիւսմն բլլար Ս. Գէորգ գիւղ մը,

ինչպէս կը յիշուի Միարանոցայ 1601 տարւոյ վիճակագրի մէջ, այդ գիւղը ունէր 170 տուն հայ բնակիչ: Արդէն վանքի զիմաց զէպ յարեմուտս լեռան գաւիվայրին վրայ տարածուող բնոյարձակ զերեզմանատունն ալ կերպով մը մեր կարծիքը կը հաստատէ, թէ և կարծողներ ևս կան, թէ այդ գիւղմանատեղին Երնջակ քաղաքին հանգստարանն եղած լինի: Ս. Գէորգայ վանքէն քսան քայլ հետո հիւսիսակողմը կայ քարապատ խճիթ մը և մէջը շիրիմ մը՝ ճրգուաւորի կոչուած մերձակայ բնակիչներէն: Թէ՛ այս շիրիմը և թէ Ս. Գէորգայ վանքը ուխտատեղիք են մօտակայ հայ գիւղօրէից:

ԳԷՈՐԳ (Ս.). Տես ԱՂԱՇԷՃԲ և ՄՈՂՆԻ:

ԳԷՈՐԳ (Ս.) ԵՐԿԱՅՆԻ. — Վանքս կը գտնուի Բարձր Հայոց Եկեղեցաց գաւառի մէջ, Երզնկայէն 2<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ հետո հարաւային կողմը, Եկան և Կելնցիք գիւղերու մօտ, Տուփի լեռանց ստորտը: Ունի երկու տաճար, մին՝ ստորին յարկին մէջ, ներսէ ներս սեղ մը յանուն Ս. Գէորգայ, միւրն, անշուք ու նկղածու. միւսն՝ վերնայարկի մէջ, քառակուսի ու բնական ժայռի մը վրայ կանգնեալ, յանուն Տիրամօր, փոքրիկ քարուկիր ու հաստահիմն: Այս երկու տաճարներն ալ լքեալ և ազբառ են: Վանացս մէկ մասը աւերակաց կոչա մի է, բայց միւս մասն, շնորհիւ քաղաքին պղնձագործ արհեստաւորաց անշահասէր և փոթեխանոցն գործունէութեան, գեղեցիկ կերպով նորոգուած է մօտ 12 տարիներ առաջ: Ս. Գէորգ, ինչպէս կ'երևի իւր մէկ հին Յայամաւորքի յիշատակարանէն, երբեմն մեծ ու նշանաւոր վանք է եղեր, բազմաթիւ միայնակեցներով, արեւդաներով և վարպպեաներով, որոնց թիւն, պաշտօնն ու անուանքն յիշատակուած են նոյն գրքի մէջ: — Արևելք, Մամուշ, Է. 437-8:

ԳԷՈՐԳ (Ս.) ԽՆՉՈՐՈՒՏԻ. — Վանք Մոկաց աշխարհի այժմեան վերին կարկառու գաւառակին մէջ, խնձորուտ գիւղի մօտ: 1895ին աւերմանց ենթակայ եղաւ:

ԳԷՈՐԳ (Ս.) ՇԻՐՆԻՑ ԿԱՄ ՍԿԱՒԱՌԱԿԻ. — Վանքս կը գտնուի Մոկաց աշխարհի այժմեան Սոլաքիերա գաւառի մէջ, Շիրնից գիւղի մօտ: Աճէն տարի կ'ունենայ բազմաթիւ



ուխտաւորներ խիզան, կարկաս, նզար, ճէր-  
 վան, Պէրոյան, Մամրտունք, Մոխս և Սպար-  
 կերտ գաւառներէն: Ինչպէս վանացոյ բա-  
 րոյական, նոյնպէս և նիւթական վիճակն  
 խիտ սղրայի կացութեան մէջ է, հանդոյն  
 բուժիկու Ս. Գէորգայ վանաց: Տաճարն որ  
 պատկանելի հնութիւն և հայկական հին ճար-  
 տարապետութեան հրաշակերտ մը կը թուի  
 լինիլ, շրջապատուած և խճողուած է մութ,  
 խոնաւ, անկարգ և անկանոն խցիկներէ, ա-  
 խոններէ և զամբէ, որոց մէջ հաւատարա-  
 պէս կը բնակին վանահօր բնասներն և  
 կենդանիք: Գեղջուկ հին սան մը կը նմանի  
 վանքս, որ կը պատասպարուի հայ բնասները  
 մը՝ որ նշան է ապացուցման թէ այս ամայի  
 լեռան վրայ եզոզ սոյն հաստատութիւնը,  
 Հայոց սեփհականութիւն է: 1895 աղէտալի  
 տարուայ մէջ կողոպտուեցաւ վանքս և երեք  
 հոգի սպանուեցան: — Արեւելք. Զ 1748:  
 Տես ԲԱՆԱԽՈՒ և ԳՈՄՍ:

ԳԵՐԳՈՍԱՆՆԵՐ կամ ԿԵՐՍԱՊԱՍ. — Գիւղ Արար-  
 պատականի Ռեմիոյ գաւառի մէջ, Ռեմի քա-  
 զաքէն 7 վերտո հեռու գէպ ի հիւսիս, Սալ-  
 մաստի ճանապարհի վրայ: Ունի եկեղեցի  
 մը, 1895 թուին նորոգ կառուցուած վայն-  
 լուչ կերպով: Գիւղս զուտ հայաբնակ է 120-  
 130 տուն բնակչօք. սակայն պանդխտու-  
 թեան գնալու սովորութիւնը, արգելք կը  
 դանոյ հասարակական գործերու յառաջա-  
 գիմութեան: Ատրպատականի Հայուհեաց  
 Բարեկարծական Ընկերութիւնը չորս տարիէ  
 հետէ այս սեղ ունի պարոց, և իւր հա-  
 շուով կը կրթէ 20-35 աշակերտներ: Այս  
 գիւղի, ինչպէս նաև արիշ մօտակայ գիւղե-  
 րու տուրքերը խիտ ծանր են:

ԳԵՐԵՐ. Տես ԿԵՐԵՐ:  
 ԳԵՐԹԻՆ. — Գիւղ Հաճնոյ (Կիլիկիա),  
 բնակչաց մեծագոյն մասը թուրքք են, իսկ  
 Հայք սակաւաթիւ:

ԳԵՐՈՍԱՎԱՅ. — Գիւղ Պարսկաստանի  
 Սալուս գաւառակի. ունի 10 տուն հայ,  
 և եկեղեցի մը:

ԳԵՐ ԳԱՆԵՍԻ. — Լեւոնակ Սիւնեաց վայոց  
 ձոր գաւառի մէջ:

ԳԵՐԸՆ ԸՐՄԱԳ. — Սարոսի օժանդակ գետ  
 ի Կիլիկիա: Տես ԱԻՍ:

ԳԵՐԸՆ-ՔԵՆԻՍԻ. Տես ԳՐԸՆ-ԳԵՆԻՍԻ:

ԳԵՐԸՆ, սկզբնաւորութեամբ անունները բնո-  
 շանրապէս գրած ենք ԳԵՐԸՆ, ձեռով:

ԳԵՐ-ԱՍՄԱՆ կամ ԳԵՐԸՆ-ԱՍՄԱՆ. — Եր-  
 կայնաձև գեղեցիկ հրուանդան Կիլիկիոյ, Սիր  
 Առանայ աշխարհի մէջ. ի հնումն կը կո-  
 շուէր Պոսիդոն:

ԳԵՐՆԱՂ. — Գիւղ Պարսկաստանի Քեա-  
 զաղ գաւառակի Նոր Զուլայոս: Ունի 20  
 տուն հայ բնակիչ, եկեղեցի և վարժարան:

ԳԵՐՆԱՃԱ. — Գիւղ Սիւնեաց Աղահէճք  
 գաւառի մէջ:

ԳԵՐՆՃ կամ ԽԸՆՃ. — Գիւղ Եալուլայի,  
 Նիկիոյիոյ առաջնորդութեան և կառավար-  
 շութեան տակ: Շախաշէն գիւղէն ժամ մը  
 հեռու է և ծովու եզերքէն երկու ժամ ներս,  
 արեւմտեան հարաւային կողմը, փոքրիկ  
 բլրի մը վրայ: Ունի 500էն աւելի զուտ հայ  
 բնակիչ և Ս. Սարգիս անուամբ փոքրիկ քար-  
 ուկիր գեղեցիկ եկեղեցի մը. ունի նաև նոյն  
 անուամբ Սարգսեան վարժարան մը, 20 ա-  
 շակերտներով: Գիւղիս բնակիչք երկրագործ  
 և շիրամարոյծ են և հարստութիւննին միջակ.  
 Թէ և աշխատասէր են թէ՛ արք և թէ՛ կա-  
 նայք, բայց շտայլութեամբ ի զուր կը վառ-  
 նեն վաստակնին:

ԳԵՐՄՈՒՐ. — Գիւղ Ռումանիոյ Ֆոլչան  
 քաղաքի. բնակչաց մէջ ունի միայն երկու  
 տուն հայ:

ԳՐԵՆԳՐ կամ ԽՐԵՆԳՐ. — Գիւղաքաղաք  
 Զմիւռնիոյ կուսակալութեան և առաջնորդու-  
 թեան տակ, Գրբղաղաճէն 6 ժամու ճանա-  
 պարհ հեռու, բնորոշակածաւալ գաւառի մը  
 հարաւակողմը, Արշա-գայս և Պէշիկթաշ կո-  
 շուած լեռանց ստորտուր. շրջապատն է 280-  
 300 մետր: Բնակարանք երկյարկ և եռա-  
 յարկ են և բնոյհանրապէս փայտաշէն: Գիւ-  
 ղաքաղաքիս հիմնարկութիւնը շատերը Գա-  
 րս Օսմանի կը վերագրեն: Ունի մօտ 1200  
 տուն, յորոց 117ը Հայոց է՝ 230 արու և  
 195 էջ բնակչօք, Յոյնք 250 տուն են,  
 թուրքք՝ 720 և Չէրքէզք 80 տուն: Թուրքք  
 7 մզկիթ ունին մեծ ու փոքր միասին, Յոյնք՝  
 մէկ եկեղեցի: Շուկան կը բաղկանայ 200ի  
 չափ խանութներէ, և ունի բամբակի երկու  
 գործարան: Օղը չորս եղանակաց մէջ ևս  
 բաւական բարեխառն է. ամառն զով և ձմե-  
 ր ս՛չ այնչափ ցուրտ: 40 պարբեր կայ, ու



րոց գրեթէ ամէնքն ալ Յ ժամ հետու լաւայ-Հալիլուի լեռնէն կը բղխեն: Բերքերն են. բամբակ, ափսոն, բուրդ, ցորեն, գարի, սպիտակ կորեակ, սիսեոն, շուշմայ, բակլայ, լարիա, ձէթ, մեղր, խզ, պանիր, կոզի, ներկ և ըստ բաւականին ոչխար և այծ: Անուանի են խազողն, սևին և ձմերուկը: Վաճառականութեան առարկաներն են ընդհանրապէս բամբակ, ընկեղէնք և աւելի ցորեն: Բնակչաց 3/4 մասը հողագործ է, փոքր մասը արհեստաւոր՝ դերձակ, կօշիկահար, երկաթագործ, սափրիչ, նպարավաճառ, ևն.: Կանայք շատ բաներու մէջ աշխատակից են արանց:

Տեղւոյս Հայոց նահնիրը գրեթէ երկու դար առաջ գաղթած եկած են Հայաստանի զանազան կողմերէն: Հայք կառուցած են Ս. Աստուածածին անուամբ փայտաշէն եկեղեցի մը, զոր 1847ին ի հիմանց նորոգած են ընդարձակ, զեղեցիկաշէն և կամարակապ, 10 մետր լայնութեամբ և 16 երկայնութեամբ: Ունին Հայկազնեան և Վարդահան անուամբ արական և իգական վարժարաններ, 50ական աշակերտներով: Մ. Յովհաննէս ազա իւր ծախքով կառուցած է աղջկանց վարժարանը եկեղեցւոյն մօտ, պարզ ու կոկիկ և երկու դասարանաց բաժնուած: Եկեղեցւոյն բակին մէջ գէպ ի հիւսիս և յարեմուտս կ'ընդարձակի գերեզմանատունն, մէկ արաւմար շրջապատով: Եկեղեցին ունի իրեն սեփհականութիւն գերեզմանատան արեւմտեան կողմի պարտէզն՝ երկու արտավարէ աւելի ընդարձակութեամբ: Եկեղեցւոյն մէջ կը պահուին աւետարան մը՝ հանդերձ յիշատակարանու, և համակ արձաթագաս սաղաւարա մը՝ գրեթէ 100 տարուան յիշատակագրով: Գերեզմանատան մէջ կան արձանադրութիւններ ունեցող տաժարանաքարեր, յորոց ծանօթ հնագոյնն 130-5 տարուան է:

ԳՐՆԵՔ. Տես Գրեթեկ:

ԳՐՆԻԱԹ. Տես Գրեթեկ:

ԳՐՆՃԸՂԱՐ կամ ԳՐՆՃԸՂԱՐ. — Գիւղ կէյփէ գաւառակի Նիկիովիոյ, Գուրապէլէնէն մէկ ժամ հետու արեւելեան կողմը: Կառուցուած է ցած բլրոյ մը միջնամասին վրայ. մօտը կայ մայրեաց անտառ մը, որ կլիմային բարեխառնութեան մեծապէս կը նպաստէ. ու

նի նաև սառնորակ և բարեհամ մշտահոտան ագրերակներ, թիթենեաց պարտէզներ և այգեասաններ: Բնակիչք զուտ հայ են, որոց թիւն 1500ը կ'անցնի. հոս թէև մուտ գործած է բողոքականութիւնը, բայց չէ կրցած յառաջագիծել: Ունի Ս. Սարգիս անուամբ փառաւոր եկեղեցի մը, և Արշարունեան երկսես վարժարան մը, 260 աշակերտներով: Բողոքականը ունին ընդարձակ ժողովարան մը: Բնակիչք բաւական ուսումնասէր են. պարսպմունքնին է գիտաւորապէս շեքամբուծութիւն և այլեղործութիւն. երկրագործութիւնը շատ սահմանափակ է, որովհետև բաւական վարելի հող չունին: Կան նաև սակաւաթիւ արհեստաւորք և այլ բանի մը գործերով պարսպող անձինք. շատերն ալ կ'երթան Կ. Պոլիս աղիւսի գործարանները աշխատելու: 1885ին, գիւղիս բնակիչներէն փոքրիկ հատուած մը գնաց բնակութիւն հաստատեց մերձակայ Տաղլամ լեռան մօտ Թալ-օրազ ըսուած տեղը, կառավարական անտառի հողին վրայ և սկըսու շէնքընել: Այժմ այդ տեղը կը կոչուի Նոր գիւղ Գրեթեկարու:

Պատմական Սաղարիան՝ գիւղէս գրեթէ ժամ մը հեռաւորութեամբ շարք մը բլրոց ու լեռանց սասորտքը բերելով ու զաշառց կրծոց վրայէն հեւալով իւր օձապտոյտ ընթացքը կը շարունակէ. իւր վրայ ձգուած Քեօփրիպաչը կամրջին հնութիւնը կը կարծուի 460 տարուոյ, զոր շինած է Օսմանեան Սուլթան Պայազիա, և ո՛չ Յունաց Յուստիանոս կայսրը. ինչպէս ոմանք կը կարծեն: Եբբ Սուլթան Պայազիա՝ Ասիոյ ներքին գաւառաց հազարգակցութիւնը գիւրացնելու համար, այս կամրջը շինութեան ձեռք կը զարնէ, ստուարազանցուած և լիթիտարի քարերու միացման համար պէտք եղած ակիշները (քանձա), ճարտարապետք շինելու կը յանձնեն տեղւոյս երկաթագործաց, այնուհետև սկսեր են գիւղիս բնակչաց Գաւառաքար անունը սալ, յորմէ ազաւաղած և ծագած է այժմեան գիւղիս անունն Գրեթեկար կամ Գրեթեկար: Ի հնումն գիւղս կը կոչուի եղբ Նոր-գիւղ: Գիւղիս նախկին բնակիչք եկած կը համարուին Ակնէ 12 ընտանիք, որոց 5ը այստեղ կը հաստատուին, իսկ 7ը կը



Հիմնեն Գուրտպէլէն գիւղը: Գրնճըլարէն մէկ քառորդ ժամ հեռու կը գանուի Ս. Սարգիս անուամբ հին ուխտատեղի մը, որ հրաշալի վայր մ'է, իւր երկնարերձ հովանաւոր ծառերով, ուր կը սուղսկէ և վճիտ առուակ մը: Ուխտատեղոյս եկեղեցոյ Հիմունք ցարդ հաստատ կը կենան աւագ սեղանի կամարով միասին. մէջը քարայր մը կայ ուր հագի անձ մը կրնայ մանկէ. քարայրի ներսը կայ ինքնաբույխ քաղցրահամ ջուր մը, և եղբրքը՝ երեք հոսա խաշաձեւ արձաններ: Խիստ հին ժամանակաց կը վերաբերի այս ուխտատեղիս և յատուկ բնութեան և ուսումնասիրութեան կը կարօտի: — Գրնճըլարի Հիւսիսային և հարսուային ծայրերը կան երկու մետաքսի գործարաններ, որոց մին շինել առած ու գործածած է հանգուցեալ Մ. Գարրիէլ ազա անուն նշանաւուոր հարուստ անձը: Այս գործարանաց մէջ կ'աշխատին կանայք և աղջկուներ:

ԳՐԱՆՃՐԳ. — Հայաբնակ գիւղ Տրապիզոնի առաջնորդական վիճակի մէջ, ունի եկեղեցի և վարժարան՝ 45 աշակերտներով:

ԳՐԱՐ—ՏԱՂ. — Երկար շղթայ լեռանց, Սիւնեաց աշխարհի մէջ:

ԳՐ. — Գիւղ Տիգրանակերտի 1ճէ գաւառի մէջ, ունի 30 տուն հայ բնակիչ:

ԳՐԳՒԱՂԱՃ. Գ.Գ. KIRK—AGATCH. — Քաղաք փոխ-կուսակալանիստ Զմիւռնիոյ Հիւսիս-արեւելեան կողմը համանուն գաւառակի մէջ, երկաթուղոյ գծին վրայէն չափելով Զմիւռնիոյ կայարանէն 146 հազարամետր հեռաւորութիւն ունի: Մանիսայէն մինչև Գրրգաղաճ շոգեկաօրով  $3\frac{1}{2}$  ժամուան ճամբայ է: Երկաթուղոյ կայարանը քաղաքէս գրեթէ 20 վայրկեան հեռու շինուած է: Գիրքն ու տեսարանը շատ գեղեցիկ է, բարձր լեռան մը գտնիվայր կողին վրայ շինուած ըլլալով հեռուէն աստիճանաձեւ ու վրայէ վրայ կատուցուած աները գեղեցիկ կ'երեւան: Քաղաքիս արեւմտեան կողմը՝ հարաւէն Հիւսիս ասարածուոց լեռներու շղթան, կարծես թէ ժամանակը կը կարճեցնեն. ամառ առանձն  $5-5\frac{1}{2}$  ին լեռան ստուերը քաղաքին վրայ ասարածուած, արիւր լեռան ետեւ իւր մարը մասած կը տեսնուի: Այս լեռանց մէկ գագաթը Սարը Գայսա կը կոչուի: Գրրգա-

ղաճի արեւելեան կողմերը և հիւսիսայինը կը ասարածուին ընդարձակ դաշտադեղիններ, իսկ Հիւսիսային կողմը՝ բաւական հեռուն՝ կը տեսնուին ցած բլրակներ ու լեռներ, որոնց մէջ նշանաւոր է Պողոս կոչուած կիրճը. այս կրճէն ձմեռը ցրաշառնչ սառն կը շնչէ Գրրգաղաճի դաշտերուն և քաղաքին վրայ, ամառն ալ քաղցրասիւք հով մը՝ հաճելի կ'ընէ տեղւոյն կլիման:

Գրրգաղաճի անունը կամ շինութիւնն երկու իրարմէ տարբեր կերպով կը պատմուի տեղացիներէն: Ոմանք կ'ըսեն թէ քաղաքին նախկին հիմնարկողները՝ տեղւոյն վրայ քառասուն ծառ տնկելով, անոնց ստուերին տակ բնակիլ շատ սիրած են, ուստի շինած են իրճիթներ ու անակներ, որ երթալով ընդարձակուած և այժմեան զիրքը ստացած է: Ուրիշներ ալ կը պատմեն թէ լեռան ստորոտը քառասունի չափ իրճիթներ կային ժամանակաւ. ճանապարհորդին մէկը իջեւանելով, անօթի ծարաւ, տեղւոյն բնակիչներէն բիշ մը հաց խնորած է, որոնք զլացած են՝ բնելով թէ մենք ամենքնիս ալ հացի կարօտ և անօթի ենք, բեղի ինչ տանք: Օտարաւ կանը զարմանալով բացաղանչած է, ուրեմն քառասուն տունն ալ անօթի են, Գրրգը տա սե՛ձ բնելով, այս խօսքը ժամանակ անցնելով ժողովրդեան բերանը վարձած եղած է Գրրգաղաճ:

Գրրգաղաճի դաշտադեղինոյն վրայ կը բուսնին զանազան տեսակ արմախք. ընդարձակ մաս մը բոնած են աղիտատանները, որոց մեծագոյն մասը յառաջ կը բերէ անկուտ (սուլթանիէ կամ շէկիրաէքսիզ կոչուած) խազոց: Ունի ցորենի, գարիի, բամբակի, սիւրան, բակլայի ընդարձակ արտեր. նշանաւոր է համեղ սեխն, որ ուրիշ քաղաքներ՝ ինչպէս Զմիւռնիսա կա՝ Գրրգաղաճի սեխ՝ անուամբ կը ծախուի: Այլխտատանեայց, աղարակներու և դաշտերու վրայ աճող ծառերուն մէջ կը տեսնուին բնկուզենի, կեռասենի, թիթենի, թզենի, ձիթենի և ուրիշ ծառեր: Քաղաքի Հիւսիսային կողմը հեախոսն  $\frac{1}{2} - \frac{3}{4}$  ժամ հեռու՝ լեռան ստորոտը կը ասարածուի սոճի ծառերու անտառակ մը, որ տեղացիներէն Զամբար կը կոչուի. այս անտառակն է ժողովրդեան դուարճանալու և ուրախանալու



վայրն, ուր երբեմն երբեմն խմբովին կը դիմէ՝ սոճիներուն անուշ և ասղջարար օդն վայելու:

Գրքդադան ունի 1500 բնակիչ, երեք ազգերէ, հայ, յոյն և թուրք: Հայք նշանաւոր հասարակութիւն մը կը կազմեն այս տեղ: ԺԸ գարու կէսերը գաղթած են Գալիսթէն, Սարմատէն, Ղափանէն, Ղարապաղէն և Էրեւանէն: Հնագոյն յիշատակարանաց պահասութեան պատճառաւ՝ չէ կարելի որոշ թուական մը նշանակել, սակայն եկեղեցւոյ մէջ գտնուած պատկերաց վրայի յիշատակարաններն, որոնցմէ ամենահինն գրուած է ԺԸ գարու վերջերը, միացնելով ժողովրդական աւանդութեանց հետ, կրնանք բռնել թէ մէկ ու կէս գարու գաղթականութեան սերունդներ են տեղոյս Հայք: Իրենց գաղթականութեան սկիզբը՝ քաղաքին միջավայրը հաստատած կ'երեւին իրենց բնակութիւնն, ուր և Անեմ խաւի մէկ սենեկին մէջ սեղան կանդնելով՝ պաշտօն կատարեր են ժամանակ մը: Յետոյ քաղաքին հիւսիսային կողմը քաշուած և հոն կազմած են իրենց առանձին թաղ մը, ուր կը գտնուին այժմ: Այս թաղը քաղաքին ամենագեղեցիկ վայրը կրնայ բռնել. թաղին երեք կողմերը բաց, այդեւտաններ և արտեր պատած են, միայն հարաւային կողմը միացած է Տաճկաց անտուն հետ: Քաղաքիս Հայք այժմ կը համբուրին 160-170 տուն (800 հոգի). ունին Ս. Աստուածածիկ անուամբ եկեղեցի մը, որ տեղոյս բոլոր շէնքերուն մէջ առաջինը կըրնայ համարուիլ: Արտաքին գաւիթը շինուած է Զմիւռնիոյ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ գաւթին նման. երեք կողմերը 14 քարաշէն սիւներ կարգաւ շարուած են, որոնցմէ առաջակողմանները վեր կը բռնեն դէպի դուրս կառուցուած կանանց վերնատունը. խի աջու ձախ կողմանց սիւներուն վրայ հաստատուած է գաւթին հովանաւոր ծածկը: Շէնքին ետեւն աջ ու ձախ հաւասարաչափ մեծութեամբ դուրս ելած են երկու աւանդատանց մասերն, որոնք թէ՛ արտաքուստ գաւթի վրայ և թէ՛ ներքուստ գասին վրայ ունին իրենց յատուկ դռները: Աջակողման աւանդատան վրայ շինուած է զանգակատան աշտարակը: Եկեղեցւոյս տեղը կար 1796ին

շինուած ուրիշ հին եկեղեցի մը, որուն փոխան 1871ին վերաշինած են. այս շինութեան, բաց ի ուրիշ բարերարներէն միայն Արքահամ Փաշա Էջրամեանը նուիրած է 500 օսմ. սկիւ: Կարժէ՛ որ Գրքդադանցիք եկեղեցւոյ գրան ճակատը հաստատուած մարմարին քարին վրայ արձանագրել տան թէ՛ վերաշինութեան թուականը և թէ բարերարաց յիշատակարան մը: Եկեղեցւոյս երկայնութիւնն է մօտ 23, 50 մետր և լայնութիւնը 11, 50 մետր, քարաշէն հաստ ամուր պատերով. ձեղունը փայտաշէն և կամարաձև է: Ներքուստ պարզ է և լուսաւոր. աւագ գրան կողմը կան զոյգ մը սիւներու՝ վերնատան տակ հաստատուած: Մարմարակուս բեմին վրայ բարձրացած են խորանները, որոնցմէ աւագը նուիրեալ է Ս. Աստուածածնի, աջակողմանն է Գլխաղիր, ձախակողմանը՝ Պայծառակերպութիւն, աւանդատանց մէջ ևս կան մէկ մէկ խորան, աջակողմանը նուիրեալ է Լուսաւորչի և ձախակողմանը Որբուցն Որտաման: Եկեղեցիս թէ՛ արտաքուստ և թէ՛ ներքուստ գուրկ է արձանագրութիւններէ, ունի միայն քանի մը պատկերաց եղբրներու վրայ գրուած նուիրատուաց հին յիշատակարաններ, որոնք կը կրեն հետեւեալ թուականները ՌՄԽԲ ( = 1799), ՌՄՄԱ ( = 1802) և ՌՄՀԵ ( = 1826) թուականները: Եկեղեցիս ունի իրեն յատուկ դրամ, որ ժողովրդեան զիբուսութեան համար շինուած է. այս դրամն թիւթեղէ բոլորակաձև կարուած և վրան Եկ ( = եկեղեցւոյ) գրուած է. ժողովուրդն ի փոխարէն մէկ մերսիկի (10 փարայի) երեք հատ կ'առնու այս դրամներէն և յետոյ գանձանակներու կամ սնանակներու մէջ կը ձգէ: Ունի նաև քանի մը կտոր կալուած, երեք խանութ, երեք տուն, երեք ձիթատան և եօթն այգեստան, ամբողջին տարեկան հասոյթն կը հասնի 200-250 մէճիա, որ կը գործածուի եկեղեցւոյ պիտոյից և դպրոցներու. պակասը կը լեցընէ ազգը: — Եկեղեցւոյ պարաւզին մէջ կը գտնուի կրկնայարկ և բարձրաշէն երկսեռ վարժարանը, որ թէև մէկ շէնք է, բայց առանձին գտնելով և սանդղաներով երկու մասի բաժնուած է: Տղայոց վարժարանի ճակատը գրուած է «Նարեկեան



վարժարան», որ ունի երկու գասարան մտա 70 աշակերտներով: Աղջկանց վարժարանի ճակատն ալ գրուած է «Վարդուհեան վարժարան», և ունի նոյնպէս կրկին գասարան մտա 60 աշակերտուհիներով, որ կը սորվին նաև ձեռագործ:

Քաղաքին հայ երիտասարդաց և օրիորդաց մէջ կը տեսնուի յատաճաղիմութեան փափաք մը: Եղած են և կան զանազան անուամբ բնկերութիւններ, ինչպէս Ուսումնասիրաց, Հոգատար, Խնամակալ, Զիմենեաց, և այլն: Ընկերութեանց նպատակն է՝ կրթութեան և մարդասիրական սկզբանց համեմատ ուսմանց պարագիլ և կարօտեալներու օգնել: Ժողովրդեան մէջէն ձերերը առ հասարակ տաճկախօս են, բայց նոր սերունդը կը խօսի հայերէն, և տաճկերէն կը սորվի մի միայն գիտութեան համար: Գրքադասի ժողովուրդը բնաւորութեամբ ժիր, գործունեայ, եռանդուն և աշխատասէր է: Հայոց մեծագոյն մասը կը զբաղի տեղական արուեստներով, կոշիկարութեամբ, դարբնութեամբ, դերձակութեամբ, ևն.: Կան նաև վաճառականներ որոնք բաւական յաջողութիւն գտած են, ասոնց մէջ կը յիշուին Արթին Սիմիրսարեան (Զմիւռնիացի), Թաղէոս Հաճի Յովսէփեան, Միհրան Սահակեան, Կերակոս Զիվիճեան, Հաճի Գեորգ Եղաճրեան, վերջէս իրրև խոզկաղինի (փալամուտի) վաճառական՝ նշանաւոր է: Հայերը գործարաններ ևս ունին. քաղաքին հարաւային կողմը՝ բնակարձակ գեանի վրայ հաստատուած է գործատուն մը ալիւրի, բամբակի և ձիթոյ, շոգեշարժ մեքենաներով, որ կը պատկանի հայազգի Գարեգին Գաւթեանի, ինքը թէ և Զմիւռնիացի է, բայց տարիներ ի վեր բնկերակցութեամբ ուրիշներու՝ յաջողութեամբ յատաճ կը վարէ սոյն գործատունը: Եսյնպէս Յովհաննէս Գարախաչատուրեան, ունի բամբակի և ալիւրի գործատուն: Տեղոյս Հայոց մէջ կան նաև փաստաբաններ, յարաց յիշենք Յովհաննէս Էֆ. Մարտեան և Յարութիւն Էֆ. Տայեան: — Հայք ունին երկու գերեզմանոց, հին և նոր. նորը քաղաքէն չորս հինգ վայրկեանի ճանապարհ հեռու գէպ յարեմուտոս, չորս արտավար բնակարձակութիւն ունի, հաստատուն սրկերով

չըջապատեալ և ծառերով զարդարուած: Այս գերեզմանատանէն 10-15 վայրկեան հեռու գէպ ի հիւսիս լեռ մը կայ, որոյ արեւելեան և արեւմտեան կողմանք զարդարուած են ձիթենիներով. այս լեռան ստորտան է հին գերեզմանատունը, որոյ առջեւէն կ'անցնի վտակ մը. այս գերեզմանատան բնակարձակութիւնն է վեց արտավար: Գերեզմանատանց մէջ չկան նշանաւոր քանդակագործ տապանաքարեր, կան միայն մի քանի արձանագործիւնք անցեալ դարու կէսէն վերջը գրուած: — Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, Թ 141-153: Եւ այլն:

ԳՐԳ-ԲԶՈՎԱՆԳ. — Գիւղ Երեւանայ նահանգի, Քէմէրլիի վիճակի մէջ, ունի 26 տուն Հայոց և 2 տուն Քրդաց:

ԳՐԳ-ԿԷՉԻՏ. — Գետակ և ձորափոր լեռնային Կիլիկիոյ մէջ:

ԳՐԳ-ԿԷՉՁ. — Լեռ Սինեաց Աղաճէճը գաւառի արեւելեան կողմը, Արցախի սահմանակից. բարձր է 8770:

ԳՐԳ-ՊՈՒՎԱԳ. Տեա ԳՐԳՔՈՒՎԱԳ:

ԳՐԳ ՊՈՒՆԱՐ (Քառասուն աղբիւր). — Այս անուամբ գիւղ մը կը յիշուի Այրարատայ վանանոց գաւառի մէջ, որ 1887 տարւոյ յուլիս 4ին բանակ զբաւ Մուխթար փաշա: — Այս անուամբ լեռ մը կայ Կիլիկիոյ մէջ:

ԳՐԳ-ՏԷԿԻՄԵՆ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Երրակ գաւառի արեւելեան մասին մէջ: Ունի 853 հոգի, բաժնուած 94 տան:

ԳՐԳ-ՄԻՐՁԱ. — Հանդրուան՝ Այրարատայ կողմից գաւառի մէջ:

ԳՐԳՐՁԳ ԳԻՒԽԷ. — Փոքրիկ շէն Այրարատայ Երրակ գաւառի մէջ, Հոգեվանքի մտա:

ԳՐԵԷԷԻՐ. — Քաղաք Անկիւրիոյ կուսակալութեան համանուն գաւառի և Կեսարիոյ ստաջնորդական վիճակի մէջ: Ունի մտա 9000 բնակիչ, թուրք, հայ և սակաւաթիւ յոյն: Հայք ունին Ս Գեորգ եկեղեցի մը և Հայկական անուամբ դպրոց՝ 130 աշակերտներով. կան սակերիչք ու միտաբաստիվաճարք:

ԳԻՒՎԱՆԲ. — Կը յիշուի Սինեաց իրաւի գաւառի գիւղօրէից շարքի մէջ: Օրպէլեան կը յիշէ թէ Տարաւյիճ իշխանը Գթիվանքը կալուած տուեր է Տաթևու:

ԳԻ ԿԱՄ ԳԻՉԻ. — Գիւղ Երզնկայի, ի հնումն կը կոչուէր Այգի:



ԳԻՒԱՐՅԵՐԻ. — Վերջին գարուց մէջ Սիւնեաց Կոմսական գաւառի յասկացուած առնուներէն մին:

ԳԻՒԱԶՈՐ կամ ԳԵՒԱԶՈՒՐ. — Այլ կերպ գրուած անուն Գեղիգոր (աես) գիւղի:

ԳԻՒԱՆ կամ ԿԻՒԵԱՆ. — Գեա Սիւնեաց Գողթն գաւառի Բատաձոր վիճակի մէջ. կը համապատասխանէ հին Գիրաւայ:

ԳԻՒԵՆԷՆ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:

ԳԻՒԻՍԷ կամ ԳԻՒԻՍԷ-ԽԱՐԱՊԱ. Տես ԱՒԱԶԱՆՈՒ:

ԳԻՒԻՍԷ-ՏԷՐԷՍԻ (Եկեղեցաձոր). — Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ:

ԳԻՒԻՍԷՔԷՆՏ. — Փոքրիկ գիւղ (20 տուն) Հայոց, Սիւնեաց Կոմսական գաւառի մէջ:

ԳԻՒԻ. — Գեա Սիւնեաց Սողբ գաւառի:

ԳԻՂԻ. Տես ԳԻ:

ԳԻՃԻ. Տես ԿԻՃԻ:

ԳԻՆԱԹԱՂԱՅՐ. — Ամբոց կամ հանդուան Սիւնեաց Աղահէճը գաւառի, Արցախու լեռնասահմանաց մօտ, որ Հարանդի Գեկեկարար գիւղն կը յիշեցնէ:

ԳԻՆԱՆ. — Արցախու Մաւ լեռան գաղթիներէն մին, ասիէց սկիզբն կ'անու Սեւեաակը:

ԳԻՆԱԿԱՆ ԳԵՏ. Տես ԵՐԱՆԻ:

ԳԻՆԱՅ ՎՏԱԿ. Տես ԳԻՆԵԳՈՅՆ ԳԵՏ:

ԳԻՆԳՈՅՆ կամ ԿԵՆԳՈՅՆ. — Գիւղ վանայ Կարճկան գաւառակին: Ունի 25 տուն հայ բնակիչ, եկեղեցի մը և Ս. Պողոս առնամբ վանք մը, որ անաէր և լքեալ է:

ԳԻՆԵՆԵՐ ՎԱՆՔ. — Վասուրականի (Վան) Արճիշակոյի գաւառի Ականց գիւղաքաղաքէն չորս ժամու չափ հեռու, գեղեցիկ բլրակի մը վրայ շինուած էր վանքս, որ ի վաղուց ամայացեալ է: Վանքս կը կոչուի եղեր երբմն Գիկեքեր Ս. Նշան. գրուած կը գրանենք նաև Կեկեքեր Ս. Գեորգ և Կեկախուրի վանք:

ԳԻՆԵԳՈՅՆ, ԳԻՆՈՅ ԳԵՏ կամ ԳԻՆԱՅ ՎՏԱԿ. — Գեա Այրարատայ Մասեաց սան գաւառի, որուն կը համապատասխանէ աբման Գարսաւուն: Կ'անդուսի թէ զետոյս ալկանց մօտ Արաւազոյ որսի ժամանակ կորսուեր է, մեծ վհի մը մէջ գահալիծելով: Խիստ առատութեամբ կը գանուին զետոյս մօտերը գանազան տեսակ թռչուններ, ինչպէս

ճայ, Հողամաղ, Արաղիլ, Կարապ վայրի (Փոր), Բաղ, Քաջահաւ, և այլն:

ԳԻՆԵԿ. — Գիւղս կը յիշուի Բագնայրի (Շիրակ) արձանագրութեան մը մէջ, որ կը կարծուի լինել Գրեքք գիւղը, որկէ 1691ին (փետր. 23) անցած է Հ. Վիլլոզ Յիսուսեանը Էջմիածնէն եկած ատեն, և կ'ըսէ թէ ամէն կողմ ճամբուն վրայ հանդիպած է քաղաքաց, գիւղերու և եկեղեցիներու աւերակաց:

ԳԻՆԵՆԿԱԶՈՐ և ԳԵՏ. Տես ԳԻՆԵՆԻ:

ԳԻՆՈՅ ԵՒՈՒՐ. — Այրարատայ Մասեաց սան գաւառի մէջ, որուն անուամբ կոչուած է մեր վերը յիշած Գիկեյ գետը: Սա կը լծուի աբման թարեալորս կոչուած բլուրը: Երբ Արարացիք ները ձեցեցին մեր Արատ թագաւորը, Գագիկ Արծրունին եկաւ այս կողմերը և բլրանս մօտ գրաւ իւր բանակը. նոյն միջոցին Եղիսէ Հայրապետն ալ « ի կատարս բրիժ Գիկեյ » քահանայական դասուն հեա կ'ազօթէր պատերազմի յաջող ելից համար:

ԳԻՆԵՆԳԵՆ. — Գիւղ Պարսկաստանի Զարմահալ գաւառակի. ունի մօտ 50 տուն հայ բնակիչ և եկեղեցի մը:

ԳԻՍ կամ ԳԻՇ ՎԱՆՔ. — Աղուանից Շաքի գաւառի մէջ կը գտնուի հինաւորց նշանաւոր վանքս, Կուրիէն 5 վերսա կամ 1 ժամու ճանապարհ հեռու: Կազնկատուացիի վիկայութեան համեմատ այս Աղուանից առաջին և մայր եկեղեցին, հիմնուած է Եղիշէ առաքեալէն: Կառուցուած է Շաքի քաղաքէն վեր, Կովկաս սարի ստորաբ, Գիս գետակի աջ ափի վրայ: Հինգերորդ գարու մէջ Ս. Մեսրոպ աշակերտներով կու գայ այս տեղ և կը բարոզէ ճշմարիտ քրիստոնէութիւնը, և ապա շարագործներու երկիւղէն, գետնի մէջ կ'ամփոփէ արծաթէ խաչ մը, որուն մէջ կար կենաց փայտի մասն: Կոյն տեղը կը մարտիրոսանան Ս. Մեսրոպի աշակերտաց կէսը և հաւատացեալներէն մէկը շինելով փոքրիկ մատուռ մը, նահատակելոց մարմինները հոն կ'ամփոփէ խնամքով: Յետոյ նոյն տեղը կը հիմնեն եկեղեցի և աղիսաշէն գմբէթի մէջ կը գետեղեն Ս. Մեսրոպի վերայիշեալ խաչը: Եթեներորդ գարուն Առանշահիկ ցեղէն վարազ-Պերոժ իշխանը կամենալով նորոգել հին եկեղեցին, կը գտնէ Ս. Մեսրոպի խաչը (Մ. Կաղ. Ա. Իշ): Ա-



դուանից Եղիազար կաթողիկոսը բուրբ եկեղեցական ուխտով կը փութայ ի Գիւս, կը կատարեն մեծահանգէս նաւակաւորք և Մեսրոպեան խաչի կենաց փայտի մասէն, փոքրիկ կտոր մը կը գեանդէ խր ձեռաց խաչի մէջ (Մ. Կրօղ. Բ. 19): Նոյն օրերէն մինչև ցարդ մեծ ուխտատեղի եղած է վանքոսչ միայն շրջակայ Հայոց, այլ և մահմեդականաց, որք յաճախակի կը լեցուին մեծ բազմութեամբ: Վանքիս արտաքին ձեւն ու սճը, հին պատմութեան համապատասխան են, արտաքուստ կիտակըր է տաճարի արեւելեան կողմը, քառանկիւնի արեւմտեանը և խաչաձեւ վերի կողմն և հնապարհան ուճով շինուած կաթողիկէն: Արձանագրութիւններէ զուրկ է: Ունի մի քանի սենեակներ, թիթենաց պարտէզ մը և 2273 քառասուկէն հող, օդն և կլիման լաւ են և ջուրը պատուական: — Վանացոս կից է Գիւս գիւղը, գեղեցկազիր բարձրութեան մը վրայ: Արեւելեան հիւսիսային կողմէն կը հոսէ Գիւս կամ Քիշ գետը, որ գարնան և աշնան մեծ փնտներ կու տայ: Գիւղիս բնակիչները թէև ազգաւ հայ են, բայց բնութեամբ բնորոնած են մահմեդական կրօնը, գաւառին միւս բնակչաց հետ: — Արշաւեր, 269—270:

ԳԻՐԳԱԿՈՒԼ. — Գիւղ Աղուանից Հողի (Նուխի) գաւառի մէջ, հիմնուած Կոկիտան գեաակի աջ կողմի բարձրութեան վրայ, Բօզգաւանդ գիւղի վրեաց: Չուարճալի է տեսարանն, գիրքն բերդանման, օդն և կլիման անփնտ և ջուրն ոչ այնքան լաւ: Տեղական բերքերն են ցորեն, գարի, կորեկ, խաղող, լուբիտ, վարունդ և բակլայ: Բնակիչք 150 տուն, որոց նախնիք գաղթած են Արցախի խաչեն և վարանդա գաւառներէն: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին՝ շինուած է ըստ արձանագրին 1881 թուին: Հոս տան մը մէջ կը պահուի սրբատիի նման արծաթեայ անօթի մը մէջ Ս. Թադէոս առաքելոյն մատուցէն մեծ կտոր մը. վրան կայ անթուական բայց հին հայկական արձանագրութիւն. մատուցքո գանուած է գիւղի արեւելեան կողմի ձորով հասող վտակէն: Գիրդապուլի հանդատարանը ունի շատ հին հանդուցեալներ. տապանաքարերու ոմանց վրայ կան արձանագրութիւններ:

ԳԻՐԳԻՎԱՆ. — Հայաբնակ գիւղ Գանձա-

կու Գաղախի գաւառի մէջ: Ունի մօտ 500 բնակիչ, բաժնուած 50 տան:

ԳԻՐԵՆՀ կամ ԿՐԵՆՀ. — Գիւղ ջրառաս՝ Չորբորդ Հայոց Հաշահանք գաւառի մէջ, զոր յիշէ Յովհաննէս Մամիկոնեան:

ԳԻՐԿ կամ ԳԻՐՔ. — Հայաբնակ մեծ գիւղ Շամախույ, մեծութեանը պատճառաւ գիւղաքաղաք կարելի է համարել: Կը գրանուի Անդրկովկասեան երկաթուղույ Միխայլա կայարանէն 25 վերա հեռու: Ամենայն հարկաւոր բան աստ գանել կարելի է. ունի քարաշէն եկեղեցի մը Ս. Աստուածածին, և ուսումնարան: Գիրքը լեւնային է, օդը մաքուր, ջուրը առողջարար և հոգն արգաւանդ: Գիւղիս անուան վրայ հեռեկայը կը պատմուի. գիւղատեղը ծոցաւոր լինելուն պատճառաւ կոչեր են Գիրկ, վասն զի բլրակներով շրջապատուած է երեք կողմերէ և առջևը բաց. խի հզարա բնակիչները կը կոչեն Գիրք, իբր գրքերով և գրականութեամբ լիքը. սակայն ուրիշ տեղացիք տեղույս բնաչաց կըքուս և կուտարար բնաւորութիւնը տեսնելով, անոնց գիւղը կը կոչեն Կիրք, իբր կրքը լի մարդկանց բնակարան և գիւղ: Բնակիչք 250 տուն են. կը պարապին զխաւորարար երկրագործութեամբ՝ նահապետական եղանակով, սյգեպանութեամբ, անասնապահութեամբ և շերամարտւածութեամբ. արհեստաւորներ ևս կան, սկիւրիչ, հիւսն, գարբին, և այլն: Գինին ընտիր է, կը զրկեն ի Բագու, ինչպէս նաև օղի: Գիւղիս բնակչաց մեծագոյն մասը վաճառականութեամբ կը պարապին. ասոնց շատերու բնասնիրք Բագու կը գանուին, սը ունին լաւ լաւ խոնութիւն և բաւական հարուստ են: — Նոր-Գար, Լ. 163: Արշաւեր, 197: Տես ԿՈՎԱՆԱՆ:

ԳԻՐՁՈՒՆ կամ ԿԻՐՁՈՒՆ. — Հայաբնակ գիւղ Շամախույ, վերոյիշեալ Գիրք գիւղի մօտ. ունի 46 տուն, և մօտը Նաճատակ անուամբ ուխտատեղի:

ԳԻՒԼԱԳԱՐԱԿ. — Հայաբնակ գիւղ Լոսի (Գուգարք) գաւառի. ունի մօտ 1000 բնակիչ և Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը: Գիւղիս մօտ փոքրիկ բլրի մը վրայ կը գանուի Ս. Գեորգ ախտատեղույ մատուան, որոյ տունին օրն է Յարութեան երկրորդ օրը և Մոզնի Ս. Գէորդայ ուխտի օրը:



**ԳԻՒՂԱՄԲԱՐ.** — Գիւղապետի Գանձակ գու-  
 ւառի Պատիճորի հասարակութեան մէջ, Շամ-  
 բոր գետոյն վրայ, Գանձակի արեւմտակող-  
 մը: Մօտը կայ Հռոմաշէն անուամբ եկե-  
 ղեցի, ուր երբեմն կրօնաւորներ բնակած են  
 և այժմ աւերակ է. աւանդութեամբ կ'ըսուի  
 թէ այս եկեղեցին շինուած է եղեր Յանաս-  
 տանէն (751ին) Հայաստան փախչող կրօ-  
 նաւորներէն:

**ԳԻՒՂԱՓՈՒՈՒ.** — Մեծ գիւղ (Գանձակ) Շու-  
 շիի գաւառի մէջ: Այժմ ունի 1400 թուրք  
 բնակիչներ: Գիւղիս մէջ կ'երեսին հայկական  
 գերեզմանաց մնացորդներ, կը պատմուի թէ  
 թուրքը նկատելով գիւղիս լաւ ու բնաիր  
 գիւրքն ու տեղը, հեազհեաէ զՀայերը հա-  
 լածեր և իրենք հաստատուեր են. կան բն-  
 պարձակ այգիներ, ծառաստանք, ջրաղացք,  
 և այլն:

**ԳԻՒՂԱԶԱՆ.** — Գիւղ (Արարատական) Սալ-  
 մաստի, այժմ 3 տուն հայ կայ և ունին  
 եկեղեցի:

**ԳԻՒՂԱՍԱՆ.** — Գիւղ Գանձակու, Ղարա-  
 չինարի հասարակութեան մէջ, երկարաձե-  
 ւրբակի մը վրայ. շրջապատուած է խանա-  
 լան, Ղարաբուրդի, Գէօղ-Թէփէ, Սարաթ-  
 քէշմաշ, Ղազան-գրմազ, Չախմախ բուլբու  
 և Քամար-գէօղի լեռներով: Գիւղիս առջե-  
 ւէն կը հոսէ Խնջայ-չայք: Ունի մի աւեր  
 և մի նոր, բարաշէն և գեղեցիկ եկե-  
 ղեցի, որոյ մէջ կը պահուի «Մեր-աւե-  
 սարան» կոչուած ձեռագիր մը, որ շատ  
 հրաշագործ կը համարուի և շատ ուխտա-  
 ւորներ ունի: Գիւղիստանի մէջ նշանաւոր է  
 շին, երեք սենեակներէ բաղկացած բարա-  
 շէն ապարանք մը, որոյ գրան կամարակալ  
 բարի վրայ կայ արձանագրութիւն: Բնակչաց  
 թիւն է 350, բաժնուած 42 տան: Գիւղէս  
 հազիւ շորս ժամ հետո բարձր, սեպացած  
 բարաթայրի մը վրայ կը գտնուի Գիւղիստա-  
 նի հին մելիքներու նշանաւոր բերդը:

**ԳԻՒՂԱՍԱՆԻ ՄԱՃԱՍ.** — Մէլիք Բէկլարեան-  
 ներու յատուկ գաւառն կամ մասն, որ իւր  
 անունը ստացեր է համանուն գիւղէն և բեր-  
 գէն, կը կոչուի նաև թաղիչի մասն՝ թա-  
 լիչ գիւղի անուամբ, և Խիլիբիլորի՝ աքիբնն  
 Քասե և շորս, որովհետեւ կը բաղկանար  
 24 գիւղերէ: Ասոր նախնի սահմաններն են՝

Հիւսիսէն կուրակ գետը, հարաւէն թարթար  
 գետը, արեւելքէն այժմեան սուրհանդակաց  
 (poste) ճանապարհը և արեւմուտքէն Մուս-  
 սարը: Այս երկիրը ժամանակաւ կը կազ-  
 մէր առանձին գօրեղ մելիքութիւն մը, Մէ-  
 լիք Բէկլարեաններու իշխանութեան տակ,  
 այժմ ևս մեծ մասամբ կը պատկանի անոնց  
 ժառանգներուն: Այժմեան աշխարհագրական  
 բաժանմունքով Գիւղիստանի մեծագոյն մասը  
 կ'ինկնայ Գանձակի գաւառի երրորդ ստիկա-  
 նական շրջանի մէջ, իսկ մէկ մասը, ինչպէս  
 թաղիչ գիւղը, Գիւղիստանի բերդը, Հոսեկայ  
 վանքը, կ'ինկնան Ջիվանշիրի գաւառի մէջ:

Այս երկիրը ընդհանրապէս լեռնոտ է,  
 թէև զուրի չէ նաև գեղեցիկ տափաստաններէ.  
 Հոս կը բարձրանան Շիշ-թեփե, Գաղ-օ-գաղ  
 և այլ լեռներ, և կը տարածուին խրխափու-  
 րի, Աղջաղալի և այլ հարթութիւններ: Ամ-  
 բողջ երկիրը ծածկուած է հարուստ բուսա-  
 կանութեամբ. լեռները պտտուած են ան-  
 տաւանբով, որոնց մէջ կան նաև պտղատու  
 ծառեր: Գաշաւաժայրերու մէջ կը հասնի խա-  
 գող և կու տայ ընտիր գինի, մանաւանդ  
 մուշկեռ ըսուածը, որ հրաշալի է: — Գաւե-  
 ձակի գաւառ, Ա 121:

**ԳԻՒՂԱՅԻՆ-ԳԻՒՂ** (Վարդայի դաշտ). — Այս-  
 պէս կը կոչուի Սիւնեաց Վայոց ձոր գաւա-  
 ռի մէջ գտնուող բազմաստեակ վարդերով  
 և ծագիկներով լի դաշտ մը: Այս գաւառի  
 վրայ կան նաև վանքեր, մատուաներ և խաչ-  
 արձաններ:

**ԳԻՒՂԱՅԻՆ.** Տես ԿՈՒՂԱՅԻՆ:  
**ԳԻՒՂԱՅԻՆԻ ԿԱՄ ԿԻՒՂԱՅԻՆԻ.** — Հայտ-  
 բնակ գիւղ Այրարատայ (Երեւան) այժմեան  
 Ալեքսանդրապոլի գաւառի Մեծ Գարապիլի-  
 սէի վիճակի մէջ: Ունի 860 բնակիչ, բաժ-  
 նուած 55 տան: Տես ԿՈՒՂԱՅԻՆ:

**ԳԻՒՂ ՏԵՂՎԻՇ.** Տես ԳԻՒՂ ՏԵՂՎԻՇ:  
**ԳԻՒՂԱՍԵՆ.** Տես ՉՈՐՈՅԵՆԵՐԱՆ:  
**ԳԻՒՂԱՐՔՈՒՆԻ.** — Այլ կերպ գրութիւն  
 Գեղարքունի գաւառի անուան:

**ԳԻՒՂԻԿ.** — Կը յիշուի գիւղս Վասպուրա-  
 կանի ճուշ գաւառի մէջ:

**ԳԻՒՂՎԱՅԻՆ ԳԵՏ.** — Կը յիշուի միայն.  
 որ գաւառի մէջ գտնուին անյայտ:

**ԳԻՒՄԲԱ.** — Սիւնեաց Մօզուկ գաւառի մէջ  
 կը յիշուի այս անուամբ հանդրուան մը:



**ԳԻՒՄՒԽԻՇԻԱՆԵՒ** կամ **ԿԻՒՄՒԽԻՇԱՆԵՒ**. Գղ. GUMUCH—HANÉ. Յն. Ἰερουσόλιμα. (Արժարոյ բարբ). — Քաղաք Տրապիզոնի կուսակալութեան և առաջնորդութեան ներքին, համանուն գաւառին մէջ. կառուցուած է սարերու զառիվայրի վրայ, զոգաւոր և մանկկաձեւ գրիք. ստորաւն կ'անցնի Սասնաւառ կամ համանուն Գիւմիւշխանկ գետը՝ որոյ երկու եզերաց վրայ կը տարածուին

աղա խորայէրեան՝ որ բաց ի ամէն տեսակ աշխատութենէ՝ 3—400 լիրա ալ նուիրած է եկեղեցոյն շինութեան ժամանակ, ինչպէս կը վկայեն եկեղեցոյ և Ս. Փրկիչ վանաց յիշատակարանք և արձանագրութիւնք: Հայք սնին Մհարոպեան անուամբ երկսեռ վարժարան մը, եկեղեցոյն մօտ: 1886ին վարժարանին աշակերտք Սասնաց անուամբ ընկերութիւն մը կազմեցին՝ վարժարանին մէջ



236. Գիւմիւշխանէի տեսարանը:

պարտէզք, ծառաստանք և արտորայք: Կը գանուի Տրապիզոնի և Կարնոյ ճանապարհի վրայ, առաջնոյն հարաւային կողմը, գրեթէ 20 ժամուան ճանապարհ հետու: Օդն ու ջուրն ընտիր են և բնակիչք բաջաուղջ: Տները ընդհանրապէս ներկուած չեն: Ունի մօտ 600 տուն, յորոյ 200ը Հայոց, 300ը Յունաց և 100ը Թուրքաց են: Հայոց եկեղեցին Ս Աստուածածիկ՝ բաւական մեծ է ու գեղեցիկ, զոր կառուցած է Յարութիւն


մատենագարան մը հաստատելու նպատակաւ:

Տեղւոյս ժողովուրդը ընդհանրապէս աղքատ է. Թուրքաց շատը կառավարական պաշտօններով կ'ապրին, սմանք ալ ձորի մէջ պարտէզներ սնին, որք կու տան տանձ, խնձոր, թուխ, բնկոյզ, սալոր և պարկուկ. այս պատգները շատ ընտիր և համեղ են, մանաւանդ տանձն ու խնձոր՝ որ կը գրկուին Բարերդ, Կարին, Տրապիզոն և մինչև Ռու-



աստան: Հայր և Յոյնք առուաւոր կ'ընեն շրջակայ գիւղօրէից բնակչաց հետ: 25-30 տարի առաջ բոլոր առուաւորն Հայոց ձեռքն էր, բայց շնորհիւ Յունաց առաջնորդի քա-

ղի հայկական գիւղերը բաւական հետո են և անոնց առուաւորը Բարերդի և Երեզայի հետ է: Հայր, բաց ի 5-6 տունէ, ընդհանրապէս չքաւոր են. ուստի և շատերը տեղւոյս



237. Գիւմրիւշխանէի Ս. Փրկիչ վանքը:

րոզներուն, Յոյնք՝ քաղաքացիք և գիւղացիք, Հայոց հետ առուաւորը գաղթեցընելով սկըսան կեղրնանցնել իրենց ազգակցաց մէջ, որով Հայոց յոյն յաճակտորդք ձեռքէ ելան և մնացին միայն Թուրքք և Քուրդք, վասն

ապրուտի միջոցները անբաւական գտնելով 25 տարիէ հետէ սկսած են գաղթել Բարերդ, Երեզա, Տրապիզոն, Կարին, Կ. Պօլիս, մինչև ի Փարիզ և Ռուսիոյ քանի մը քաղաքաց մէջ կը գտնուին Գիւմրիւշխանէից



Հայր: Իրննդավայր է քաղաքս՝ Վինեակոյ Միսիլթարեանց միարան, Հայերէնէ Իտալերէն ընդարձակ բարգրի հեղինակ, Հ. Մանուէլ Վ. Զախլասիանի (1770-1835):

Քաղաքս հիմնուած է հանքաց շահագործման շնորհիւ. իւր անունը կ'առնու արծաթի հանքերէն. ունի նաև կապար և այլ հանքեր: Սուլթան Մահմուտ Ա՛ ժամանակ գտնուեցաւ գետին մօտ նաև սոկոյ հանք. նոյն ատեն և Սուլթան Մուսթաֆա Գ՛ ժամանակ բաւական ծախքեր ու ջանքեր եղան, բայց շահ չգոյացաւ: Տասնեւհինգ տարիէ աւելի է որ Եւրոպական ընկերութիւն մը սկսած է շահագործել տեղւոյս հանքերը: Հետաքրքրական է տեսնել հանքաց բացուած ու բանուած բոյները: Գեղնակարմիր գոյնով արնկուած քար մը կայ, զոր Աճ յոխարով քար կ'անուանեն, և ամէն բնակիչը միահամուռ կը հաստատեն թէ առատ ոսկի կայ այդ քարին տակ: Ասոր մօտերը կայ երկար փլածոյ մը, ուր կ'ըսեն, արծաթ հանելու համար աշխատող յոյներէն քառասուն անձինք փլածին ներքև մնացելու մեռել են, քառասունին անունն ալ Պաւլօ. առոնց ընտանիք և բարեկամք այս աղէտի պատճառաւ լալով կը ընուն քաղաքը՝ կրկնելով Պաւլօ, Պաւլօ: Այս գեղքէն շինուեր է առածն. «Ամէն որ իւր Պաւլօն կու լայ», այս տեղը կը կոչուի այժմ Գրդգ Պաւլօ: Գիւմիւշխանէյի ձորը թէպէտ աթաղին է ամառը, սակայն գարնան սրանչելի է, զարդարեալ պազաուու ծառերով, որոց պտուղները համեղ, խոշոր և ազնիւ տեսքով, տարուան ամէն եղանակին մէջ կրնան գտնուիլ:

Գիւմիւշխանէէն գրեթէ մէկ ժամ հեռու գէպի հիւսիս արեւմտեան կողմը, կը գտնուի Հայոց Ս. Փրկիչ կամ Ամենափրկիչ վանքը, զեղեցիկ ձորակի մը մէջ: Շրջապատեալ է զեղեցիկ բլուրներով ու անտառներով, առջևէն ու ձախ կողմէն փոքրիկ առուաց կարկաջահոս ընթացքը, շուրջը պատող վալար խոտերով և գոյնզգոյն ծաղիկներով զարդարուած փոքրիկ լեռնազաշտերն ու պարտէզը զեղեցիկ և հրապուրիչ տեսարան մը կ'ընծայեն: Սուրբ աածարն փոքր, սիրուն և վայելուչ շէնք մ'է. կառուցուած խիստ հին տեսակաց վրայ: Տաճարի մօտ կառուցուած

են գանազան շինութիւններ և մօտ 20 սենեակ ուխտաւորաց համար, սրբ ընդհանրապէս կու գան քաղաքէն և Բաբերդի թեմերէն և օրերով հօս կը մնան: Գիւմիւշխանէի հայ ազաներու ձեռքն է վանքի կառուցութիւնը: Վանքս բաւական հարուստ է. ունի ոչխարներ, զուար, արտեր, փայտի անտառներ, 2 խանութ, ջաղացք մը, կարասիներ, անօթներ և եկեղեցական ընտիր զարդեր: Ս. Փրկիչի վանքին հրովարտակն 20-25 տարի առաջ կորսուած լինելով շրջակայ գիւղօրէից Յոյնք ուղեցին զանազան պատճառներով վանքին տիրել և դատ բացին: Հայր 6-700 ոսկի վասնեցին և վանքին մեծագումար դրամն ալ մտնուեցաւ, բայց վերջապէս վանքն վերստացաւ նոր հրովարտակ մը, և հաստատեցաւ Հայոց իւրաւունքը: Յոյժ առողջարար և պատուական է վանացս օդն ու ջուրը:

ԳԻՒՄՈՒՐԳԱ. — Հայաբնակ գիւղ Գուգարաց Զաւախք (Ախալքալաք) գաւառի մէջ, Գօգաշէն գիւղէն գրեթէ 6 վերստի չափ դէպ արեւելահիւսիս: Ունի մօտ 1200 բնակիչ, բաժնուած 125 տան. ունի նաև ուսումնարան և եկեղեցի մը: Կառուցուած է ձորի մը զլուխը և ունի հրաշալի տեսարան: Նշանաւոր է գիւղս հին աւերակ եկեղեցիով մը, որը Զավախէթի մէջ գտնուող բոլոր պատմական յիշատակներէն կրնայ առաջինը համարուիլ և համեմատաբար աւելի քիչ փնտսուած: Կառուցուած է օրօրոցածեւ, սեւ և կարմիր սրբատաշ քարերով. ներքին ձեւովը բոլորովին նման է Անոյ Ս. Փրկիչ եկեղեցոյն, բայց անկէ անհամեմատ մեծ, իսկ արտաքին տեսքով շատ նման է Անոյ Կաթողիկէին, միայն ստոր քանդակները աւելի նուազ և կողտածեւ են: Եկեղեցոյս երկայնութիւնն է 6 սաժէն, լայնութիւնն 5 ս. և 1 արշին, իսկ բարձրութիւնը մինչև կաթողիկէն 7 սաժէն: Կիտարւոր բազմանկիւնի սիւներու վրայ ձգուած են կամարներ՝ որոնց վրայ կը բարձրանայ եղբ գմբէթը, որ այժմ կործանած է: Սեղանի կիսաուղեներու վերին հանդիպակաց անկիւնները կան մարզու մը և կ'նոջ փոքրագիւր քանդակագործ պատկերներ: Հարաւային կողմը կան պատկից քարեայ երկու աւազաններ: Եկեղեցիս



ունի նախագաւիթ և գաւիթ և ներքուստ բաւականաչափ զեղեցիկ քանդակներ. արձանագրութիւնները վրացերէն են:

Եկեղեցւոյ չորս բուրբ պատած է հաստ կրկնապատ պարսպով, անտաշ և կոպիտ քարերով շինուած: Պարսպէն զուրս կան ցորենի հորեր և ձիթահանքի հեռքեր: Գիւղիս այժմեան ընակիչք՝ Հայք, այս հին և կեղեցւոյ արեւմտեան քանդուած խորշի մէջ



238. Գիւմեի վանքի աւերակները:

շիներ են իրենց եկեղեցին, սեղանի համար տեղ առնելով եկեղեցւոյ մէջ, որ բունը է գրեթէ կէս մասը: Հին եկեղեցւոյ մնացած մասն ալ կը ծառայէ իբրև շտեմարան ցորենոյ: Վրացւոց իշխանութեան ժամանակ Գիւմուրպան նշանաւոր եպիսկոպոսանիտ տեղ էր, որ նստող առաջնորդը կ'իշխէր բոլոր Զաւլախէթի հոգեւորականներու վրայ: Այդ եպիսկոպոսներէն մին՝ Յովհաննէս, ԺԽՎ գարու կիսուն, Արիսագաց Լեւոն Գ թագաւորի ժամանակ շիներ է վերոյիշեալ

եկեղեցին: Հարիւր տարի վերջն ալ, Արիսագ-Գարպանիլացւոց Ռագրատ Գ թագաւորի մայրը Մարիամ թագուհին, շինել տուեր է և կեղեցւոյս գաւիթը: — Փորձ, Գ զեկա. 123 125: Զաւախք, 43-45:

ԳԻՒՄՐԻԱ կամ ԳՈՒՄՐԷԹ. — Ամայի զիւղ Այրարատայ վանանոց գաւառի, Կարսէն մէկ ժամ հեռու Ախուրեան գետոյն մօտ: Ունի բազմանկիւնի ձևով հին եկեղեցի մը, որուն միայն գմբէթը ինկած է: — Այս անուամբ այլազգաբնակ զիւղ մ'ալ ունի Կարին:

ԳԻՒՄՐԻ. — Լեւ Այրարատայ վանանոց գաւառի մէջ. բարձր է 2850 մետր: Տես ԱՂԵՐՍԱՆԿՐԱՊՈՒ:

ԳԻՒՆԷԻ կամ ԿԻՒՆԷԻ ՎԱՆՔ. — Սա է հին Կեկեվաքը, որ կը գտնուի Սիւնեաց վայոց ձոր գաւառի, Եղեղեաց գեակերքը, Ալազեաղի անտառային ձորի մէջ, որ կայ այժմ՝ նոյն անուամբ թրքաբնակ փոքրիկ զիւղ մը: Սիւնեաց պատմիչը՝ վանացոյ պատմութիւնն և սկզբնաւորութիւնը մեզ կը յայտնէ հետեւեալ տողերով. «Կնէվանք, զորմէ ասին մանկուծք անդէնորդք արածէին ջուլիս եզանց, և սկսան խաղալ. և կարեալ կնիւն մի՛ արարին խաշ և եղին ի վերայ քարի մի և սկսան երկրպագել և ասել. Զոր ինչ երէցն ասէ և ընթեանու՛ այն ի վերայ բո եղիցի, և յայց եզանցս այս երեքսքեզ մատաղ եղիցի: Եւ զոր նոքա ընդ խաղս արկին՝ Հոգին Աստուծոյ իջեալ անօրինէր նոյնպէս: Ապա ի ժամ երեկոյին սկսան գնալ. և թէ-

պէտ Զանացին՝ գայն նուիրեալ մատաղսն ոչ կարացին յարուցանել ի տեղոյն: Գնացին և ազգ արարին սերանցն, և նոքա և կեալ՝ ոչ կարացին շարժել. և հարցեալ զպատճառն ի մանկանցն՝ խոտտոլանեցին զուղիցն: Կոչեալ այնուհետեւ քահանայս օրհնեցին զխաշն և զենին զեղինան և պատուեցին ըզտեղին կնիւնոյն: Ազգ լինէր այս իշխանացն Սիւնեաց, և գային ի տեսութիւն. և հրամայեցին շինել եկեղեցի ի տեղոյն և սահմանեցին զնա տուն կրօնաւորաց, բայց զտե-



զի կնիւնոյն թողին ի մէջ եկեղեցւոյն փոս մի զուգնաբեայ, և մինչ յաւեր տեղւոյն՝ ձէթ բոցիւր ի փոսոյն այնքան, զի օտար ձիւ թոյ ոչ կարօտանային, այլ եկեղեցւոյն կանթեղունքն նուխ կերակրելու. և զեռ ևս կայ եկեղեցին և տեղի կնիւնոյն և խաչ ևս, որք վկայեն անսուտ գող» (Սահ.Վ. Պատ. Սիւնեաց, Գ. ԿԱ): Վանքս տակաւին կը մնայ լքեալ և ամայի վիճակի մէջ, ինչպէս կը տեսնուի նաև մեր պատկերէն (Թ. 238): Եկեղեցին սագաշէն է, կառուցուած կոթածոյ բարերով, 10 բայլ երկայնութեամբ և 8 բայլ լայնութեամբ, չորս սիւներով, երկու աւանդաարներով և մանր դրուագազարդ բանդակներով: Հիւսիսային սրմոյն վրայ կը տեսնուի կիսեղծ արձանադրութիւն մը, յորմէ կը տեղեկանանք, թէ Տարսայիճ իշխանը նուիրեր է Ս. Գրիգորի Խոսրոսի այգին: Այս արձանադրութենէն կը յայտնուի նաև թէ վանացս եկեղեցին կը կոչուէր Ս. Գրիգոր. ինչպէս հարաւային սրմոյն վրայ ալ գրուած է յայտնի կերպով. Դորոպեցաւ Ս. Գրիգոր: Եկեղեցւոյն ներսը մանկըր պտուար է, որովհետեւ թափուած բարերը դրան մուտքը ծածկած են. ներսը յատակը ծածկուած է ոչ խարի աղբով. սեղանը զեռ կանգուն է, որոյ երկու կողմերը կան մի մի խորան: Եկեղեցւոյ նորոգութեան ժամանակ, որոյ թուականն անյայտ է, սրմերու մէջ ազուցած են զանազան տապանաբարեր և խաչարձաններ: Վանքս շրջապատեալ է, փոքր հասարակ բարերով շինուած պարսպով, այժմ կիտակործան: Վանացս շուրջը կան պողպարեր և վայրենի ծառեր: Արեւելեան կողմը կան գամբաններ, մին Սիրովէ անուամբ եղիսկոպոսի մը՝ հանդերձ օձանիշ գաւազանի բանդակով: Ուրիշ մը ունի ՉՋԻ (= 1323) թուականաւ արձանադրութիւն: Եկեղեցւոյ արեւմտեան դրան վրայ ևս կայ 1524 թուականաւ և արձանադրութեամբ խաչարձան մը, զոր անշուշտ վերջը գրած են: Հարաւային կողմը կան 8 փոքրիկ սենեակներ, զորս թէև շատեր համարած են միաբանից սենեակներ, սակայն տեղացի այլազգիներու ըսածի համեմատ, զոքս շինուած են ի վերջոյ փրատակներու բարերով, և կը ծառայեն իբրև ակոս զիւղացոց: Միաբաններու

սենեակներն ևս լինելու են պարսպի մէջ, որոց հետքերն չեն երեւիր, ծածկուած լինելով փրատակաց տակ: — Սխալահ, 145:

ԳԻՒՆԷԼԷ-ՃԱՐՏԱՐ ԿԱՄ ԿԻՒՆԷԼԻ ՃԱՐՏԱՐ. — Գիւղ Արցախու (Շուշի) վարանդա գաւառի մէջ. երեք կողմերէ շրջապատեալ է լեռնաբով և միայն հարաւ-արեւելեան կողմը բաց է: Հիւսիսային սարը կը կոչուի Ղալին-խուշ, ուր երբեմն կառուցուած է եղեր ամբոց մը: արեւմտեան կողմինը Ս. Եղիշայ կուսի աւանապատի սարն է: Գիւղիս աները սփռուած են Ղալին-խուժ լեռան լանջերու վրայ, իսկ գոմերը և կաշերը կը գտնուին գէպի արեւելահարաւ, զիւղէն ժամ մը հեռու: Գրեթէ բոլոր աներու զիմաց կան թիթեւոյ ծառեր, այնպէս որ համարեա ամբողջ գիւղը ծածկուած է ծառերու մէջ և շատ զեղեցիկ տեսարան ունի: Կանոնաւոր փողոցներ չկան: Տներու մէջ կան բաւական թուով երկյարկանի՝ և եւրոպական ճաշակով շինուածներ: Գիւղիս հին եկեղեցին Ամենափրկիչ՝ բարուկիր է. ունի միայն աւագ խորան: Գրան ճակատակալ բարի վրայ կը կարգացուի ՌԳԼԶ թուականաւ արձանադրութիւն: Ուրիշ նոր եկեղեցի մ'ալ շինած են կաշերու մասին մէջ: Գիւղս ունի նաև Ս. Գրիգորեան աւանուամբ մկրտեան տաճարան մը: Օգր շատ ասողջարար է, ջուրն ալ համեղ և մաքուր: Գիւղի շուրջը կը տարածուին այգիներ, ուր կան նաև թիթեւիներ, տանձենիներ և խնձորենիներ. հստակուած է տեղւոյս ցորենը: Բնակիչները գաղթեր են խաչենէն, Չարպախուէն և Ազուլխէն. ընդամէնը մօտ 2000 հոգի են, բաժնուած 260 տան: Բնակիչը մեծաւ մասամբ հարուստ են, կը պարտպին երկրագործութեամբ, այգեպանութեամբ և անասնապահութեամբ: — Կոնակ աւանամբ ուխտատեղի մը կայ զիւղիս մօտ, ծածկուած ճապիի ծառերով. ուխտի օրն է Համբարձման սոնին: — Գաւե յիւղ աւանամբ աղբիւր մը կը բոցէ զիւղիս արեւմտեան կողմը, որոյ ջուրն բաժիշ է կարմրուկ (տեղական բարբառով խաւարեր) հիւանդութեան: — Արցախ, 117-118 վաւանդաւ, 34:

ԳԻՒՆԷԼԻՔ ԿԱՄ ԿԻՒՆԷԼԻՔ. — Թարբերէն անուն Արեւոտի վիճակին Սիւնեաց:



ԳԻՒՏԱՅ ՎԱՆՔ. — Կը կարծուի թէ վանքս կը գտնուի Սիւնեաց Բաղք գաւառի մէջ, և կոչուած է Գողթման գաւառի Շամբիթ իշխանի Գիւտ սրբուոյն անուամբ: Այս Գիւտը կանխաւ կը կոչուէր Վասակ, և ժառանգութեան համար պատերազմելով իւր Շապուհ կորայրը փրատորբը էր. բայց յետոյ զզջալով ուխտեց որ եթէ եղբայրը ասոզջանայ, ինքը աշխարհէ հրաժարի, և այնպէս ալ եղաւ: Հայրենի տունէն հրաժարելով եկաւ Բաղաց կողմերը, ուր առանձնացած տեղ մը բնակեցաւ: Այդամ մը Պարսից արքայորդին որսի ժամանակ հանդիպելով Գիւտայ, կ'ըքանչանայ անոր վրայ՝ որ արջերու մէջ կենալով անոնց վէրքերը կը բռնէր. ուստի հաւատալով ի Քրիստոս և մկրտուելով կաշուեցաւ Քրիստոսաւեր, և շատ արծաթ բերելով « շինեցին և ժողովեցին եղբարս բազումս », և Պարսից թագաւորէն ի սէր սրբուոյն, զրկուած հազար զործաւորաց աշխատութեամբ սոյն տեղը շինեցին երեք եկեղեցի Ս. Երրորդուրեան անուամբ: Այս համբաւը ամէն կողմ տարածուեցաւ, և շուտով վանքս լեցուեցաւ բազմաթիւ եղբայրներով: Վանքի մէջ կային 200 եղբարք և 300 ալ մերձակայ քարանձաւաց, անտառաց և աւապատաց մէջ: Յետոյ Գիւտ ինքզինքը յայտնեց իւր ընտանեաց և բռնեց կուրացած մայրը, և Գողթման եպիսկոպոսը հրաւիրելով անոր յանձնեց եկեղեցին: Կը պատմուի գարձեալ, թէ Քրիստոսասիրի եղբայրն ալ փնտայանալով Աղուանից Վաչագան թագաւորի, բերդ մը շինեց է նոյն կողմերը վանականները պահպանելու համար: « Սահման հատին վանիցն և ետուն հինգ զիւղ, սկիզբն արարեալ ի Սեռասարկ՝ ամեն ի Բարիբարեր ի վեր և վայր, մինչ ուր ի չուրե թօզեւոյն և յայգեստան Ռարիանցիկ, և անտի գնայ հասանէ մինչ ի շրջանս գետոյ Աղաւնոյ, հանդէպ եկեղեցւոյն Երկարզանու, և անտի ցտունն Աստուծոյ, զեղք հինգ այսու սահմանօքս »: Վանքս շատ ճոխացած էր, անէր 1000 արջատ, 1400 ոչխար, 700 ուզա, 800 ձի, 400 էջ և 700 այրէկործ: Այս պատմութիւնը մեզ թողած է Գիւտայ վանից Յովնանէն անուն միաբանն, որ յատկապէս եկեղեցւոյն կոչուած է Տարիներ վերջը,

Պարսից թագաւորի սրբին կամ թողը զօրքերը զրկելով աւերեց է կ'ըսեն վանքս և եկեղեցին, կրօնաւորներէ շատերն ալ կուտորելով: Սակայն մնացեալ կրօնաւորները կառուցին ուրիշ մը աւելի վայելուչ և ժողովեցան 600 հոգի. ուրկանոցներ սահմանեցին և անոնց պէտքերը վանքէն կու տային: Հայր Գիւտը սեթուսն և չորս տարեկան հասակին, Քրիստոսասիրի հետ նահատակուեցաւ անօրէններէն, քաղց ամսոյն 15 ին: Մեծ սգով Գիւտայ աշակերտները, նահատակելց սուրբ մարմինները ամփոփեցին, Գիւտինը եկեղեցւոյն գաւիթը և Քրիստոսասիրինը եկեղեցւոյն մէջ: Այս վանքին մէջ կրթուած էր ճշնասէր Երիցակը՝ որ շինած է Երեցու վանքը և Սիւնեաց եպիսկոպոս եղած: — Այս վանքի վրայ այսչափ տեղեկութիւնք միայն ծանօթ են մեզ: Յանկալի է հետազօտել և գտնել իւր բուն տեղը, և տեղակներն լուսապրութեամբ ծանօթացնել: Մի գուցէ սա լինի Աղուանից Գոսայ կամ Գոսայ վանք բուսածն, որոյ նկարագիրը տես ի կարգին: — Սիւսական, 274-283:

ԳԻՒՏԻ ԿԱՄ ԳՏԱՌՅ ՎԱՆՔ: — Այլարատայ Գարեղենից գաւառի մէջ կը յիշուի այս անուամբ վանք մը: Յայտնաւորքի մէջ գրուած է. « Յետ գտանելոյ զմարմին սրբոյն Վարսի, սրպէս զսուրբն կոչեցին Գիւտ, նոյնպէս և յայն անուն զմենաստանն: Այլ և գտեղի նորա շինեցին վանք, որ մինչև ցայսօր կոչի Գիւտի վանք »: Այս վանքը շինած է կամնարական Գաւիթ իշխանը, և Բագրեւանդայ Հեղ զիւղը, հաստատուն գրով սեփահականած է վանքին: — Դորանոր տեղեկութիւնք կարեւոր են վանացս նկատմամբ:

- ԳԱՎԱՅ ՎԱՆՔ. Տես ԿԱՐԱՊԵՏ (Ս.):
- ԳԱՎԱՅԱԿ. — Վախուշաէն յիշուած գիւղ Նորոսիորոյ (Շուրաղէրի ձոր):
- ԳԱՁՈՐ. Տես ԳԱՅԼԵՁՈՐ. և ԱՌԱՔԵԼՈՅ Վ.:
- ԳԱՎԱՅԻՉ ԹԵՓԷ. — Լեւոնաբլուր Այրաբատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ:
- ԳԼԻԵՔԱՐ. — Կը յիշուի այս անուամբ լեռ և բերդ Մանդղեացիորի մէջ:
- ԳԼՅՈՐ. — Սակաւարնակ Հայոց գիւղ Շատախու (Մոկր):
- ԳԼՃԻՔ. — Գիւղ Այրարատայ ճակատք



գաւառի, Տէրէքէնա միճակի մէջ: — Այս անուամբ այլազգայրնակ զիւզ մ'ալ կայ Սիւնեաց Վլայոց ձոր գաւառի մէջ, Գնդեվանից հարաւային կողմը:

ԳԼԸՃԿԵՏԻԿ կամ ԴԼԻՃ ԿԵՏՈՒԿ. — Կիրճ Այրարատայ Բազրեւանդ գաւառի, Բրձօի կրճի արեւելակողմը և Ալաշկերտի դաշտի ուղղակի հարաւակողմը: Այս կրճէն կը մտնեն Ալաշկերտի դաշտը Պուլանըխէ, Մշէ, Մանազկերտէ և Անթափէ եկող ճանապարհորդք:

ԳԼԻՁՆԱՁՈՐ. — Աւերակ զիւղատեղի Հազրատայ (Գուգարք) մօտ, ձորագաղտի մը մէջ, Գէրէզ գետոյն հարաւակողմը: Ունի բաւական վարեւահող, անտառներ և սպաղառու ծառեր: Անուն Գոյգեւաձոր՝ կը նշանակէ զի կամ զլորեցի զնա ի ձոր: Կ'ըսեն՝ թէ երկու տիրոջ իշխաններու մէջ մէճ ծագեր է կաշուածատեղոյս նկատմամբ, և մին միւսին յազմելով բարձր տեղէն զլորեր է և ձրգեր ձորի մէջ. նոյն օրէն մինչև ցարզ մնացեր է Գոյ-գեւա-ի-ձոր կոչումը: Փոքրիկ քարաբլրակի վրայ Ս. Նախատակ անուամբ խաչքար մը կայ: Կը պատմեն թէ մեծն վարգան՝ իւր զօրքերով բնոյզմ Պարսից պատերազմին համար, Աղուանից օգնութեան գացած միջոց, այս տեղ իջնաններ է, և իրեն նահատակութենէն վերջ ի յիշատակ իրեն կանգնած են այս խաչքարը: Աստ կը տեսնուի գերեզմանատուն՝ մեծամեծ տապանաքարերով: Գետոյն վրայ ալ կայ եղեր Յիշոցք կոչուած քարաշէն կամուրջ մը, այժմ քարուքանդ եղած, և հիմունքը միայն կը տեսնուին: — Հեախ. տեղի. Հայքատայ, 104:

ԳԼԻՁՈՐ. Տես ԳԱՅԼԵՁՈՐ:

ԳԼԻՈՅ ՎԱՆՔ. — Կը կարծուի թէ վանքս կը գտնուի Աղուանից կողմերը, որուն համար վարդան իւր պատմութեան մէջ կը գրէ այսպէս. «Եւ եկեալ Խորայէլ (ոմն) հրամանաւ վարազարդատայ Աղուանից իշխանի, և ինդրեալ զճոտ Լուսաւորչին՝ տարեալ եզ ի Գոյոյ վանս կոչեցեալ տեղոջ»:

ԳԼԻՈՆՅ. — Գիւղ Բարերդի՝ 4½ ժամու ճանապարհ հետի, արեւմտեան հիւսիսային կողմը: Ապառաժուս լեռանց զլուխը եկեղեցոյ կիսակործան շէնք մը կայ Ս. Լուսաւորիչ անուամբ. լեռան տափարակ գալաւրավայրին վրայ ուրիշ աւերակ եկեղեցի մ'ալ

կայ, որ կը կարծուի թէ համանուն վանք մ'էր ժամանակաւ: Գիւղս այժմ թրքաբնակ է:

ԳԼԻՏԵՂ. — Գիւղ Սեբաստիոյ հարաւ արեւելեան կողմը, ուր նահատակուեր է Սեւրիսեոս սերաստացին:

ԳԼՆՈՒԿ. Տես ԳԵԼՂՅՈՔ:

ԳՂՎԻՐԹՈՏ. Տես ՆՂՈՒԿ:

ԳՄԿԵԹ կամ ԳԻՒՄՊԵԹ. — Գետակ և զիւղ Այրարատայ վանանդ գաւառի Զարեշատ միճակի մէջ: Գիւղս այսպէս կոչուած է անշուշտ գմբեթաւոր եկեղեցոյն համար: Տես ԳՈՒՄԿԵԹ:


ԳՆԳԱՇԷՆ. Տես ՀԱՐԱՆԳ:

ԳՆԳԵՎԱՆՔ. — Սիւնեաց Վլայոց ձոր գաւառի մէջ, Արփա գետոյն ձախակողմը, գեղեցկագիր և ջրարբի բարձրութեան մը վրայ կը գտնուի այս երբեմն իւր հոյակապ եկեղեցիով և մենաստանով հռչակուած զիւղս, որ Հերեր զիւղի հարաւային կողմը կ'ընկնայ, գրեթէ Տ-Գ վերտո հեռաւորութեամբ: Պատմութեան մէջ ծանօթ է նաև Գնդեվանս անուամբ, վերջին դարերու մէջ ոսմիկներէն ծերուելով կոչուեր է Գնդեվաս կամ Գնդեվագ, և այսպէս կը կոչուի նաև այժմ: Գիւղս Սիւնեաց եկեղեցոյ հարկատուաց հին ցուցակի համեմատ, որովհետև տասը բն հարկ կուտար, յայտնի է թէ բաւական բնոյւրձակ և բազմամարդ լինելու էր նոյն ժամանակ: Ուրիշ բազմամիւ գիւղերու հանդոյն սա եւս Հայոց ձեռքէն անցեր է այլազգեաց. բայց անցեալ դարու մէջ գաւառին զանազան զիւղերէն Հայեր գալով բնակութիւն հաստատած են: Այժմ Հայր կը հաշուին 307 հոգի՝ բաժնուած 38 տան. իսկ թաթարք 127 հոգի՝ բաժնուած 20 տան. որով բոլոր բնակչաց թիւն կը լինի 434: Հիւսիսային կողմը կ'երեւին բերդի աւերակներ. արեւելակողմը՝ հին գերեզմանատուն և խաչքարեր. իսկ բուն զիւղի մէջ այլազգեաց թաղը կայ ոչ այնչափ հին եկեղեցի մը անտաշ քարերով և պատկերանկար սրմերով, որոյ վերնայարկին հիւսիսային մասը քակուած լինելով, ի վերջոյ փայտով նորոգած են: Գրան վրայ ունի ՌՃԼԵ (= 1686) թուականով արձանագրութիւն մը, յորմէ կը յայտնուի թէ շինողն է մմն Պետրոս վարդապետ, և եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի:



Գնդեվանից չքնադակերտ եկեղեցին կը զանուի զխոզն քիչ մը հետո հարաւային կողմը, զուարճալի ձորի մը մէջ. արեւմտեան կողմէն կը հոսի Արփա և ուրիշ ասուակ մ'ալ արեւելեան կողմէն: Շրջապատած է պողա- առու և վայրենի ծառերով, ինչպէս ընկուզե- նի, ծիրանի, շլորենի, կեռասնի, զեզձի, և այլն. կ'երևին նաև անբեր և երեսէ ձգուած

բազմաթիւ նշխարներ, և տեսնելով տեղւոյն զուարճալի զիրքն, կը մտածէր շինել փա- ասոր եկեղեցի մը և բնակեցնել հոն կրօ- նաւորներ: Այս մտածմամբ զիշերը տեսիլք ևս տեսնելով փութով կանչել կուսայ քաջ արուեստագործներ ու քարաւաշներ, և շինու- թիւնը կը սկսի, Յակոբ անունով մէկու մը յանձնելով հոգաբարձութեան և գործը ա-



239. Գնդեվանքի կիրճը կամ Պոտլի Կապ ըստւածը:

այգիներ: — Օրբելեան պատմիչն մանրա- մասն տեղեկութիւն կու տայ վանացո եկե- ղեցւոյ շինութեան և այլ պարագայից նկատ- մամբ: Սինեաց Սմբատ իշխանի բարեպաշտ ատկինն Սոփիա, որ զուտար էր Գերենիկ Արժրունայ, 936 թուականին կամ քիչ ա- ուաջ, ուխտի գալով այս խորածոր վայրը, ուր ի հնուց մենաստան կար և սուրբ վկայից


ւարտելու պաշտօնը: Պատմիչը կը յիշէ վա- նացո երէց ոմն Հ. Սարգիս և գործակալ Եղիշա երէց նկարիչ: Վանացո մէջ մեծա- մեծ ճգնութիւններով փայլող կը յիշուի հայրն Սուփիան Գեղունի: Եկեղեցւոյ շինութիւնը աւարտելով նկարներով կը զարդարեն առաւ- տաղը և սրմեքը, յետոյ մեծահանդէս նաւա- կատիք կատարելով, եկեղեցին կը կոչեն



Ս. Վկայից անուամբ, և վանքի մէջ կը բնակեցնեն պաշտօնեաներ ու կրօնաւորաց բազմութիւն: Նոյն ժամանակ ձորին զանազան կողմերը կը շէջուին խոտակրօն ճգնաւորներով: Բարեպաշտ տիկինը վանքս կ'անուանէ Գնդեվանք, և յետոյ կը շինէ համանուն գիւղն վանքէն վեր, անշուշտ ճիշդ այժմեան

մատանի եր սնահե վայոց ձոր, շինեցի զսա: Եւ եղի սկսի վերայ:

Հայկական ՆՅԹ (== 999) թուականին վանահայրն Քրիստափոր՝ կը շինէ եկեղեցոյ գաւիթը. նոյնպէս հայր Գուրգէնը՝ որ երանելի ու սուրբ կոչուած է պատմէն, մեծ արդիւնք ունեցեր է վանացս վրայ: Քիչ



240 • Գնդեվանքի ներկայ վիճակը:

գիւղի տեղը, և եկեղեցոյն ժառանգութիւն կու տայ ամէն հարկերէ ազատ, նոյնպէս եկեղեցոյս կը յատկացնէ Աստուր գիւղը: Խոյ ամբողջ ձորը վերէն վար մինչեւ Գաւրջաի քար ըսուած տեղը հրաման կու տայ անկիւ բազմութիւ պողատու ծառեր, նոյնպէս կը անկեն այգիներ: Կը գրէ նաեւ իւր յիշատակարանն, որը կը վերջանայ հետեւեալ գիտաւոր բացատրութեամբ. . . .

տարիներ վերջը (1008ին) Հայոց Տէր Սարգիս կաթողիկոսի և Աշոտի որդի Գագկայ թագաւորութեան օրով, վանացս առաջնորդ ուրիշ հայր Սարգիս մը, մեծամեծ արդիւնքներ ունեցեր է: Սա Գիտաւոր շինէն, ուր են Չկեարած գետոյն ախտնքը, մեծ ծախքերով և շատ աշխատութեամբ ջուր բերու վանքը և անջրդի առապարը ջրաբրի գարձուց: Եւ եկեղեցոյն վրայ սեւազիւղով յա-



տուկ արձանագրութիւն մը գրելով, նոյնպէս աակ կը ձգէ այն ամէնքը որ ջուրը կտրեն:

Քնաշխարհի ուրիշ բազմաթիւ վանքերու նման Գնդեվանքի ներկայ վիճակն ալ տխուր է: Վանացոյ քարաշէն պարիսպները և աշտարակները այժմ կիսակործան վիճակի մէջ կը գտնուին: Գեղեցիկ քանդակազարդ սեմերով զարդասն՝ քարերով ծածկուած է: Ներսի բակը կը մացուի միայն հիւսիսային կողմի պարսպի տեղ տեղ քանդուածներու վրայէն անցնելով: Բակի երեք կողմերը մեծ զարդասէն սկսելով զէպի հարաւ և մասամբ ալ զէպի արեւելք կան եղեր վանականներու բնակարաններ. այժմ կանգուն մնացեր են միայն դռը, հացատունը, խոհանոցը, սեղանատունը, երկու սենեակներ, ախոռը և ներքնատուն մը, իսկ մնացած բոլոր շինութիւնները կիսակործան դրութեան մէջ են: Կանգուն մնացածները մեծ մասամբ հարաւային կողմը կը գտնուին, զեղեցիկ և զուարճալի տեսարաններով: Գէմ՝ յանդիման խրոխտ բարձրացած սուր սուր կատարներով ժայռեր՝ կը ձևացնեն անտրիկ կիրճ մը, որ այժմ կը կոչուի Գնդեվագի կիրճ և ի հնումն Պոռի կայ:

Եկեղեցին կառուցուած է սեւ սրբատաշ մեծամեծ քարերով, շատ ընդարձակ չէ, ըստ Զալալիանի 10 քալլ երկայնութեամբ և նոյնչափ լայնութեամբ: Ունի զեղեցիկ և վայելուչ կաթուղիկէ, որոյ երեսը սալած է սրբատաշ քարերով, բայց ափսոս որ տեղ տեղ քանդուեր են, և քանդուելու վրայ են միշտ: Ներսը բաւական մաքուր պահուած է, չորս որմնափակ սիւներ վեր կը բռնեն կաթուղիկէն. բեմը բարձր է և անփնաս մնացած է սեղանը: Վերջին վանահայր Պետրոս վարպապետի օրով, գրեթէ 30 տարի առաջ, ամէն տաղաւարի օրեր պատարագ կը մատուցուէր, բայց այժմ միայն Ս. Աստուածածնի տօնին կը պատարագէ զիւրի քահանայն: Բեմին երկու կողմերը ունի մէկ մէկ փոքրիկ աւանդատներ. եկեղեցւոյս երկու հարաւային և արեւմտեան դռներէն միայն առաջինը կը գործածուի. երկրորդին վրայ կայ եղեր վայելչակերտ զանգակատուն, որ այժմ կործանած է, դուռն ալ քարերով հիւսուած: Զանազան ժամանակներ նորոգուեր է եկեղե-

ցիս. մեզ ծանօթ են նորոգողներէն երկու անձինք, մին 1309ին սին Գրիգոր, և միւսն 1671ին գիւղի եկեղեցին շինող Պետրոս վարպապետը, որուն արձանագրութիւնը կայ արեւմտեան դրան ճակատին վրայ: Սոփիա տիկնոջ, պատմչի յիշած արձանագրութիւնը չերեւիր, այլ միայն համառօտ յիշատակութիւն մը կայ արտաքին սրմոց հարաւային արեւմտեան անկիւնը, նոյնպէս կործանած զանգակատան վրայ, բայց կը թուի, թէ այս արձանագրութիւնը ի վերջոյ գրուած են փոխանակ հիներուն, որոնք անշուշտ մաշած և ջնջուած էին: Առաջին շինութիւնէն մնացած կան քանի մը արձանագրութիւններ, յորոց մին ունի 931 թուականը: Յիշելու արժանի է, արեւմտեան դրան կամարի մէջի, բազմադրուազ և այլ և այլ զարդերով և պաակերներով Քրիստոսի, սրբոց, թոշնոց, ձկանց, քանդակուած խաչվէմ մը, զոր ըստ արձանագրին, կազմած է Գարտաշ անունով մէկը Ռիֆ (= 1573) թուին: Եկեղեցին որ ի հնումն Ս. Վիլյայի կոչուած էր, այժմ ծանօթ է Ս. Նախավիլայի անուամբ: Չորս կողմը կան բազմաթիւ զերեզմաններ և խաչքարեր՝ հանդերձ արձանագրութեամբ: Վանացոյ մէջ և մտերը կը գտնուին հոյի տակէն հնութիւններ, բրտի անօթներ, տնական կահեր, պղնձէ անօթներ, կաթնասներ, և այլն: 1875 թուին Յովնանէն 8եր Յարաբիւնէն ծերունի վարպապետը, որ վանացոյ մէջ բնակելով բաւական մաքրեց և կարգաւորեց, հոյի տակէն գտաւ ուրիշ հնութիւններէ զատ, ծնծղաներ 1691 թուականաւ արձանագրութեամբ, երեք պղնձէ բուրվաններ և հին զանգակ մը 289 (= 1307) թուականաւ արձանագրութեամբ: — Վանքոյ այժմ անտէր մնալով, գիւղացիք կ'օգտուին անոր հողերէն և պտղատու ծառերէն: Վերջին վանահայր Տաթևացի Պետրոս վարպապետը, շատ նորոգութիւններ բրած է, որ եթէ մնար այստեղ, շատ հաւանական էր, որ Սոփիա տիկնոջ այժմեան կործանման ենթակայ եկեղեցին վերանորոգուէր, և Գնդեվանքը դառնար ծաղկեալ և բարգաւաճ վանք մը: — Սխալակ, 103-107: Հուրբիւնք վանքից, Թ. 276 և 277: Զարաբիւնց, Բ. 144-147: Եւ այլն:



ԳՆԳՈՒՌ. — Լեռ վասպուրականի նորասուգ գաւառակի մէջ, Հոգոց վանքի մօտ:

ԳՆԵԿԱՆՅ. — Հայաբնակ գիւղ Մոկաց աշխարհի. ունի Ս. Նշաւե և Ս. Գեորգ աւնուամբ բարաշէն եկեղեցի:

ԳՆԹՈՒՆԵՒՔ. — Նախարարական տոհմ, Հայոց վաղարշակ թագաւորի ժամանակ, որունը ծագմամբ Քանանացի էին: Ասոնց պաշտօնն էր թագաւորին ձեռնոցները հագցընել: Այս տոհմի բնակած երկիրը կը կարծուի Այրարատայ Նիզ գաւառը: Պատմութեան մէջ քիչ անգամ կը յիշուի տոհմիս անունն: Արքունի զօրաբաժնին ասոնք կը մասնակցէին 300 հոգով: Գնթունեաց երկիրը և տոհմը նուաճուեր է Բագրատունիներէն: Տասներորդ դարու մէջ Սիւնեաց կողմերը կը յիշուի տոհմիս անունն, և կը կարծուի թէ սերունդներէն սմանք այն կողմերը դաշած ըլլան:

ԳՆԻՇԻԿ, ԳՆՇԻՆ, ԳՆԻՇԿԱԶՈՐ և ԳԵՏ. — Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ կը գտնուի ձորս և գետակս: Չորս կոչուած է նաև Թմասնոր. ձուածու կ'երկնայ արեւելեան հարաւ գէպի արեւմտեան հիւսիս: Գետակն կը ձեւանայ գանազան վտակներէ, կ'անցնի համանուն Գեշիկ կամ Կեիշիկ գիւղի արեւմտեան կողմէն և գէպ ի հիսիս աստջ երթալով կը թափի Արփա գետը: Ամազուայ նորովանից արձանագրութեանց մէջ կը հանդիպինք Գիեկշիկաձոր գրուած. այս ձորս Սիւրատ իշխանաց իշխանը, ուրիշ նուէրներու հետ բնծայած է նայն վանքի:

ԳՆԶԻ. — Հայոց հին բերդերէն մին, որուն համապատասխան կը համարի Ինճիճեան, այժմեան Հրսեիքիքի բուածը:

ԳՆՈՒՆԵՒՔ. — Նախարարական տոհմ Հայոց, սերած Ասորեստանեաց Սենեքերիմ թագաւորի զաւակէն, որոց նախահաւը վաղարշակ թագաւորի տակառապետը լինելով, տոհմին անունը կոչուեցաւ Գեուեիք, իր թէ Գիեիքուեիք: Այս տոհմէն միջին Տիգրանի օրով, Հայոց թագաւորի Գեկ տակառապետը, հեծելագոր գնդաւ Երուսաղէմ գրկուեցաւ: Արշակ թագաւորը գործակալութեան և հազարապետութեան մեծամեծ պաշտօններու բարձրացուց այս տոհմը: Մեծ նախարարաց կարգէն էր տոհմն, և աշխարհախումբ բանակին կը մասնակցէր 500 հոգով: Աչ սա-

կաւ նշանաւոր անձինք ելած են տոհմէս, որոնք հայրենիքի և եկեղեցոյ համար պատանեակներ և նահապետներ են: Գնունեաց երկրին վրայ թէպէտ յայտնի բան մը գրուած չենք գտնիք ի գիրս, բայց վարդանայ խօսքերէն կը հասկցուի ըլլալ Տուրուբրանի Ազիովիտ գաւառը. մանաւնդ որ Թովմայի Արծրունոյ շարունակողը, Արճէշ բաղաբը կը գնէ Գնունեաց մէջ, ըսելով Սրահանոյ Հազարացի ներքինւոյն համար, թէ ժՈ գաւառ մէջ ասաւ «գԱրճէշ բաղաբ Գնունեաց գաւառի». թէպէտև նոյն բաղաբը վասպուրականի Արճիշակովիտ գաւառի կը վերաբերի, որ սահմանակից է Ազիովայ:

ԳՐՇԼԱԳ. Տես ԳՇԼԱՍ:

ԳՈՒՐԱՔԷՇԹ. — Գիւղ (Ռոմանիա) Ֆորքանի, յորում կան երկու տուն Հայք:

ԳՈՒՍՇԷՆ. — Վրաբնակ (30 տուն) գիւղ Գուգարաց Զաւախը (Ախալքալաք) գաւառի, Ախալքալաքի արեւմտեան կողմը՝ գրեթէ 16 վերսահաւորութեամբ: Երեք կողմերէ շրջապատած է մեծամեծ ձորերով: Գիւղս կը պատկանի Ախալցխացի Պ. Գրիգոր Բագրատունեանցի, որ հանգուցեալ Կարապետ արքեպիսկոպոսի ազգակիցն է:

ԳՈՒՐԿԱԶ. — Գիւղ (Ռոմանիա) Պսիտուանի, 2 ժամու ճանապարհ հեռու: Հայ բնակիչ միայն մէկ երկու տուն ունի:

ԳՈՒԿՍ. — Կը յիշուի Շիրակայ (Այրարատ) Մարմաշինու վանքի արձանագրութեան մէջ: — վասպուրականի Քաջբերունեաց գաւառի մէջ ևս կը յիշուի:

ԳՈԶՈՍ կամ ԳՈԶՈՍ. — Գիւղ Արճիկի (Խորխոտունիք). ունի Ս. Աստուածածին աւերակ եկեղեցի մը և 20-30 տուն բնակիչ:

ԳՈՒՍԱԶՈՐ. — Այս անուամբ Նեղրիկ և վերիկ երկին գիւղեր կը յիշուին Սիւնեաց Եղուկ գաւառի Այլախ վիճակի մէջ. որոց այժմեան անուանք կամ գրեթէրը բնութեան կը կարօտին:

ԳՈՒԹ. — Գիւղ Այրարատայ ճակատը գաւառի մէջ:

ԳՈՒԱՏԱԿԱՅ ԳԵՏ. — Սիւնեաց Գեղարբունի գաւառի մէջ, որուն կը համապատասխանէ այլազգիներու Կիւզեղ տեղեկ կոչածն:

ԳՈՒՈՇՏԻ ՎԱՆՔ. — Կը յիշուի Սիւնեաց



վայրոց ձոր գաւառի մէջ: Կը յիշուի նաև Գորշաթի բերդ: Տես և ԳՆԳԻՎԱՆՔ:

ԳՈՂԱՆԱՄ. Տես ՍԵՊՈՒՃ:

ԳՈՂԹՆ. — Սիւնեաց գաւառներէն մին, որոյ սահմանքն են արեւելքէն Արեւիք և Չորք, հիւսիսէն Ծղուկ և Երնջակ, արեւմուտքէն Երնջակ և հարաւէն Երասխ գետը: Ի հնումն Սիւնիք և Վասպուրական, Հայոց երկու իրարու նախանձընդդէմ աշխարհները կը մրցէին մէկմէկու ձեռքէ ասնուլ և իրենց սեփհականել այս փոքրիկ գաւառը, որ ժամանակ մը ինքնիշխան եղած կը թուի: Բայց որովհետև վերջին ժամանակները, Սիւնեաց աշխարհի սեփհական էր և բնական զիրքովն ալ անոր կը վերաբերի, աւելի պատշաճ է նոյն աշխարհի գաւառաց կարգը գասել, թէպէտ և Խորենացին ալ իւր ժամանակ Վասպուրականի գաւառ կը համարի: Գաւառիս հիւսիսային կողմը, Չորք, Ծղուկ և Երնջակ գաւառաց մէջ եղած մասը նեղ է, իսկ աւելի լայն է Արեւիքի և Երնջակայ մէջ գտնուած մասը: Գաւառս իւր արեւելեան մասին մէջ ունի զանազան ձորակներ, երկընցած հիւսիսէ գէպի արեւմտեան հարաւ, ուրոնց ջուրերը կը թափին յԵրասխ. իսկ արեւմտեան մասը ունի երկարագոյն ձոր մը և գետ, երկնցած հիւսիսէն գէպ ի հարաւ, և սա է Բաւաձորը, որ այժմ Կիլան—չայ կը կոչուի, և կը թուի լինել հին Ագաւ—Գիրան ըսուածը: Գաւառիս զետեակները կը կոչուին գլխաւոր աւանաց անուամբ, որոց մօտէն կ'անցնին, և ասոնց անուանք են, Գետամայ չորք, Որդաւատայ գետ, Ագաւ լեաց գետ, Տեւեխ, Ուտառփի, և այլն: Գողթան արեւելեան սահմանը կը պարբուպեն Արանկեզի և Ղազակեկի բարձրաբերձ լեաները, արեւմտակողմը կը բարձրանան Գիւռ—տաղ, Պեղեւ, Թաշ—պաշի, և այլն: Գաւառիս մէջ բարձրացող միւս լեաներէն յիշենք միայն Էշրի և Կեախոք գարեւի: — Երկրին հիւսիսային կողմը՝ մանաւանդ Բըստաձորը՝ անտառային է, հարաւայինը օդաակար բուսաբերութեամբ ձոխացած՝ այգիներով և պտղաբեր ծառերով, և հին հոշակին համեմատ գիւտաւտ: Այժմ Գողթան հին այգիներուն հաւասար կրնան պարծիլ և թերևս անոնցմէ աւելի շահարեր են բազմաթիւ թիթենիներ՝ որք շերամնց առատ սրնունդ կը մատակարարեն և մետաքսի նիւթ:

Գողթան գաւառը ի հնումն մեծ գեր խաղացած է մեր աշխարհի մէջ, թէ՛ զօրութեամբ և թէ՛ կրթութեամբ, և Հայկազանց աւանձնակ աշխարհաց և սոհմից նման, երկար ժամանակ իրարու յաջորդեր են իւր իշխանները: Հինգերորդ դարուն Վասպուրականի գաւառաց կարգը անցած է, բայց ի վերջոյ Սիւնեաց: Թողմա Արծրունին յայտնադէս կը վկայէ, թէ Ս. Վահանայ նահատակութենէն վերջ՝ գրեթէ 737 ին, Գողթան գաւառը վիճակած էր Սիւնեաց: Գաւառիս անունը Սիւնեաց միւս գաւառաց հանգոյն քաղցրալուր չէ, և ստոր պատճառ կը համարուի այս կողմերը գերի բերուած Մարաց գաղթն, ասոնցմէ եղած կը կարծուի նաև լեզուին այլալուծիւնը, որով մինչև ցարկ ևս կը սարբերի Գողթնեաց բարբառը: Գաւառիս անունն ծանօթ էր նաև Պողոսէոս աշխարհագրին որ ժամանակակից էր գաւառիս պայծառութեան, Արտաշէս Բ՛ օրով, այսինքն է Քրիստոսի Բ՛ գարու կիսուն, սա կը գրէ Κολλοθη (Գողթնի), և բաւ Լաւինայ Coltene. Գաւառիս մեծութեան կամ զօրութեան նշան են, իրեն տրուած հեռուեալ կոչումներն. Գողթնատան, Գողթան տան, Գողթանց գաւառ:

Մեր պատմութեան մէջ առաջին անգամ կը յիշուի Քրիստոսէ վեց դար առաջ, երբ Տիգրան Հայկազն Աժգահակայ զարմն կը բնակեցնէր «մինչև ի սահման Գողթան»։ Ինչպէս կը գրէ Խորենացի: Իշխանաց կամ նահապետաց կարգէն քիչեր կը յիշուին, և առաջինն կը յիշուի Շար կամ Շարիթ, Քրիստոսի Ա գարու կիսուն, և ստոր կինը Նշան, որդին Խոսրով և թոռն վաճան: Ասոնցմէ վերջ Գողթան առաջին իշխանն կը յայտնուի մեծ Առով՝ Գր՝ գարու չորրորդ քառորդի մէջ. նոյն ատենը Ներսիսեան զահնամակի մէջ կարգաւ 46րդ կը յիշուի Գողթնեաց աէրը. իսկ Սահակայ զահնամակի մէջ է գարու սկիզբը 15րդ կը յիշուի: Արքունի բանակին Գողթնեաց զօրաբաժինն էր 500 հոգի: Հինգերորդ դարու վերջերը ծանօթ է գաւառիս Շարիթ անուն նահապետը, որոյ երկու որդիքն էին Վաւակ և Շապուհ: Այս

Մեր պատմութեան մէջ առաջին անգամ կը յիշուի Քրիստոսէ վեց դար առաջ, երբ Տիգրան Հայկազն Աժգահակայ զարմն կը բնակեցնէր «մինչև ի սահման Գողթան»։ Ինչպէս կը գրէ Խորենացի: Իշխանաց կամ նահապետաց կարգէն քիչեր կը յիշուին, և առաջինն կը յիշուի Շար կամ Շարիթ, Քրիստոսի Ա գարու կիսուն, և ստոր կինը Նշան, որդին Խոսրով և թոռն վաճան: Ասոնցմէ վերջ Գողթան առաջին իշխանն կը յայտնուի մեծ Առով՝ Գր՝ գարու չորրորդ քառորդի մէջ. նոյն ատենը Ներսիսեան զահնամակի մէջ կարգաւ 46րդ կը յիշուի Գողթնեաց աէրը. իսկ Սահակայ զահնամակի մէջ է գարու սկիզբը 15րդ կը յիշուի: Արքունի բանակին Գողթնեաց զօրաբաժինն էր 500 հոգի: Հինգերորդ դարու վերջերը ծանօթ է գաւառիս Շարիթ անուն նահապետը, որոյ երկու որդիքն էին Վաւակ և Շապուհ: Այս



երկու հղբարց մէջ ժառանգութեան կռիւ ծաղկելով, վասնակ՝ Որդուատայ մօտ, որով մահացաւ կը վիրաւորէ եղբայրը, բայց յետոյ զզջալով և եղբայրը ասոզջանալով, ինքը բոլոր ժառանգութիւնը ճարտուհի թողլով, աշխարհէ կը քաշուի և կրօնաւորելով կը կոչուի Հայր Գիւտ: Ասոնցմէ վերջ գրեթէ ամբողջ դար մը անձանօթ կը մնան Գողթման գաւառի իշխեցողները և զէպքերը. յետոյ է գարու սկիզբը երեւան կ'երնէ ոմն վասմ. նոյն գարու կիսուն (652), ըստ պատմութեան Գեւորդայ, Արարացիք կ'ասպատակեն այս գաւառը, և զերիններ ու աւար ասած կ'անցնին Երասխէն: Եթեմերորդ գարուն վերջերն էր խոսքով, հոշակաւոր և երեւելի վիպյին վասնեայ Գարրեկեցոյ հայրը: Ծանօթ է վահանայ նահատակութիւնն 737 թուին, որոյ պատմութենէն կը յայտնուի նաև Գողթմ գաւառի աւերիլն: Սա չորս տարի զերի մնալով յԱսորեստան ամիրապետի մօտ, ակամայ և բռնի ընդունած էր անոնց զենք, բայց յետոյ յորդ արաստուքով, զզջմամբ, ճգնութեամբք և նուիրական աւրինովը, բարբառօր ջնջեց և մաքրեց խրբունի այլ մեղքը. հրաժեշտ տալով իւր նոր հարսին (զոր իրեն տուին Սիւնեաց իշխանները), ցանկալի հայրենիքի և բոլոր աշխարհի Երեսուն տարի վերջ Գողթման տէր կը յիշուի Սիւն կաթողիկոսի ժողովոյն մէջ ոմն Սանակ. իսկ անկէ վերջ չեն յիշուիր հայ իշխանք կամ տեսարք այս գաւառին: Տասներորդ գարուն սկիզբը, Յուսուփայ հարաւաններէն վերջ, կը յիշուի Ամիրայ Գողթման, զրուած Արարացիներէն: Նոյն գարու վերջերը գաւառին ամիրայ էր ոմն Ապուարուի կամ Ապուարի, որ 983ին ասպատակեց զէպ ի Ճուաշ և վասպուրականի սահմանները, բայց բռնի մը տարի վերջ իւր երկիրն ալ աւերեցաւ Ատրպատականի մեծ ամիրայ Ռոյսպայի որդի Ապրակայէն: Յետոյ Ապուարուի գարծնալ զօրանալով 989ին ստաւ նաև Գուին քաղաքը և Սմբատ ճահանշահի հետ խաղաղութեան գաշն գրաւ: Որոշ չի գիտցուիր թէ մինչև երբ տեւեց այս ամիրայից իշխանութիւնը, բայց կը կարծուի թէ տեւած ըլլայ մինչև Թաթարաց այս կողմերէն քաշուիլն: Այս կողմանց Ռուսիոյ

աւերութեան իշխանութեան ներքե մտնելէն առաջ, Պարսից տիրապետութեան օրով, անտարակոյս եղած են հայ իշխաններ կամ մելիքներ:

Գողթմ ընական բերքերէն և քաղաքական անցքերէն աւելի նշանաւոր է կրօնականովը. ժողովուրդը խիստ պաշտօնասէր կը գուշակուի, հին հեթանոսական կրօնից ժամանակէն սկսեալ, և հին աւանդութեանց ջերմ պաշտպան. սակայն ներկայն մեզ բուրդովին անձանօթ է: Քրիստոնէութիւնը՝ մեր պատմիչներու աւանդածի համեմատ, ընդունած են Բարդուղիմէոս առաքեալէն, թեւեւ նաև Թովմայէն, և ըստ այսմ՝ ոմնաք կ'ըսեն թէ Գողթմեցիները և Սիւնեցիները Հայաստանի միւս գաւառներէն առաջ ընդունած են ճշմարիտ կրօնը: Գաւառին մէջ Ս. Բարդուղիմէոս նախ շինեց եկեղեցի՝ զոր կոչեցին Տեսաւ ընդ առաւ, և Որդուատայ փնասակար ջուրերը բուրդովին անյայտ ըրաւ. մկրտեց ճար իշխանը բոլոր ընտանիքով, և ստաջնորդ եպիսկոպոս գրաւ Կուսի անտամբ իւր աշակերան: Առաքելոյս աշակերաններէ սկսուած կը համարուի Գողթման եպիսկոպոսաց կարգը, ընդհանուր ազգիս ի Ս. Գրիգորէ լուսաւորութենէն առաջ: Ս. Լուսաւորչէն սկսեալ մինչև ԹԻՐ գար, 303 տարիներու մէջ, Գողթման գաւառի ծանօթ եպիսկոպոսներն են. Մովսէս Տարօնացի, Սանակ Տարօնացի, Զրուանդատ, Ստեփանոս, Յովնանեկ, Մուշէ, Անաստաս, Սիոն, Մարտիրոս և Եսայի՝ որ յետոյ կաթողիկոս և գաւ: Իններորդ գարէն մինչև ԹԻՐ գրեթէ չեն յիշուիր Գողթման եպիսկոպոսները, և յայտնի է թէ Սիւնեաց մետրապօլիտներու իշխանութեան ներքոյ էր նոյն միջոցները: Նոյն գարէն վերջ գարծնալ կը յայտնուին եպիսկոպոսներ, Սիւնեաց կամ Տաթևի թեմէն անկախ, և ծանօթներն են. Սարկիսազ՝ 1280-1300, Տերուտովան՝ 1424, Խաչատուր՝ 1669, Պետրոս՝ 1680, Թովմաս վանակեցի՝ 1691-1712, Յովնանեկ՝ 1708, Թովմաս՝ 1737, Յովնանեկ՝ 1740 և Սիմեոն՝ 1830էն վերջը, որ է վերջին եպիսկոպոս Գողթման. վասն զի 1838ին գաւառին եպիսկոպոսութեան ամբողջ վերջաւ և այնուհետև զրուեցան ըսկ ստաջնորդներ:



Գաւառիս կրօնական զիւպաց մէջ, յետ Ս. Բարդղղիմէասի և Ս. Լուսաւորչի քարուզութեանց, յիշելու արժանի է մեր գպրութեան հօր՝ Ս. Մեսրոպայ Գողթման վրայ ունեցած արվիւնքն, որ կրկին անգամ լու-



241. Զրկիլ օրնորդ Գողթման կողմանց:

սատրեց այս կողմերը: Նախ հայերէն տառից զիւաէն առաջ, իբրև աստուածախոհ և մենասէր անձն, հոս առանձնացաւ, և տեսնելով որ տակաւին հեթանոսական ազանդը վերցուած չէ, գաւառին Շարիթ իշխանին օհնութեամբ և խր բարոզներով, բոլորովին

վերցուց այն ազանդը և բրիտաննէութեան մէջ հաստատանց ժողովուրդը: Հայերէն տառից զիւաէն վերջ վերագարձաւ Ս. Մեսրոպ «ի նախնի աշակերտեալն Գողթմ», ինչպէս կ'ըսէ խորենացին, կամ «յասալին գաստակերտն իւր», ըստ Կորննի, և կրկին աւետարանելով «կարդէր յամենայն զիւզս գաւառին գաստ սրբոց վանականաց, որում և հասնել ժամանեալ հայրաբարութիւն Գոսայ՝ սրբոյ Շարիթայ, անն բրիտանոսախրի, բազում սպասաւորութիւն՝ իբրև հաւասարի սրբոյ՝ վարգապետին աննէր»: Ս. Մեսրոպ իւր առաջին գալտեանն՝ գաւառիս մէջ հաստատած էր վանք մը, որ իրեն անուամբ յետոյ համատօսելով կամ ձեքելով կոչուեցաւ Մասրեւան, ուր կ'ուզէին ոմանք հանդուցանել սրբոյն մարմինը, բայց Վահան Ամատունին շթոգուց և տարաւ հանդոյց յ(Օշական: — Նոյն տեղերը յորս առանձնացած էր Ս. Մեսրոպ, ժամանակ մը առանձնացաւ, Աղան արծրունի՝ որ էր առաքինազարդ աշակերտ Ս. Սահակայ և ուսուցիչ Ղազար Փարպեցւոյն: Ժէ գարու սկիզբն ալ, Պօղոս վարգապետը, որ անապատական կենաց ի Հայս վերանորոգող երեք գլխաւոր հայրերէն մին եղած է, սկսաւ բարոզել գաւառիս մէջ, և բաւական հալածանք կրելով՝ ստիպուեցաւ երթալ ի Տաթև:

Ս. Մեսրոպայ երկրորդ գալուստն ի Գողթմ ոչ միայն կրօնական կրթութեան համար էր, այլ և զրականութեամբ ազահայել կրօնքը և զարգացնել: Գողթման գաւառս իրեն սեփական առանձնայատկութիւնն ունի՝ նաև զրականութեան մէջ՝ մեր աշխարհի ուրիշ գաւառներէն աւելի: Խր բնակիչները հեթանոսական պաշտամանց հետ պնդութեամբ անմոռաց պահած էին նաև իրենց նախնեաց զիւցազնական աւանդութիւնները և Հայոց բաջբու և թագաւորաց արութեան գործերը իւրենց քնարով և բանաստեղծութիւններով անմահացուցած. մեր պատմահայր խորենացին այդ բանաստեղծութիւնները, որոնք ծանօթ են Երզր բարեկեաց և Վլխարասևուրիւնք անուններով, սակայ կը յիշէ: Գլխաւորաբար երկու վիպասանութիւնք պահուած կ'երեւին Գողթման մէջ, որոնք են Հայկազն Տիգրանայ գործերը կամ Աժգահակայ հետ ըրած պա-



տերազմը և Արաաշէն Ի՛ն գործերը, և ինչ որ նոյն ժամանակները հանդիպած են: Արաաշէնի վրայ երգուածը, թերևս իւր որդին վրայը՝ որ նշանաւոր բանաստեղծ մ'էր, երգած լինի: Բուզանդ՝ կը կարծուի թէ Գողթնեցիները կ'ահնարիէ, երբ մեղադրելով Հայերը կ'ըսէ, թէ սիրելով և երգելով իրենց նախնեաց վիպասանութիւնները՝ կը թուլանային քրիստոնէական կարգերէն, Մեծին Ներսէսի մահէն վերջ: Այս երգերու մեր ձեռքն հասած առղերէն, կը տեսնուի թէ ինչ աստիճան զարգացեալ վիճակի մէջ կը գտնուէր գաւառս ի հնումն: Այդ երգերն չեն նմանիր այժմեան Գողթնեցոց սամկական լեզուին, այլ զրուած են ընտիր կամ պարզ հայկական բարբառով: Այժմեան Գողթնեցոց բարբառը իրաս կը տարբերի ուրիշ գաւառաբարբառներէ: Գաւառիս Ազուլիս վիճակի բարբառը, յատուկ և քննելի անուամբ Զոկ կը կոչուի, զոր սմանք կը համարին ծագած Պարսից Զոհակ անունէն (որ է Աժգահակ), իրբ թէ անոր սերնդոց խառնուրդ լինին Գողթնեցիք: Սարգիս Սարգսեան 1883ին հրատարակեց Մոսկուայի մէջ լեզուաբանական հետազոտութիւն մը Զօկրի լեզուն տիրազոտով. սա կերպով մը կը հաւանի Պատկանեանի կարծեաց, թէ Զօկ հայցական հօրով է Հօկ կամ Օկ գերանուան, զոր յաճախ Ազուլեցիք խօսելու միջոց կրկնելուն համար, օտարներէն հեղնօրէն նոյնպէս կոչուած է: Ոչ միայն Ազուլեցիք՝ այլ և Յոնեցիք և ուրիշ մերձարեաններ, նոյն բարբառը կը գործածեն: Ոմանք կը կարծեն թէ գաւառիս բնակիչք կամսովին այլափոխած են իրենց բարբառը, որպէս զի անհասկանալի բլլան այլազգիներուն: Նշանաւոր են Գողթնեցիք վաճառակութեան մէջ և միանգամայն հանձարեղ. յիշենք միայն վանանդեցի թովմաս եպիսկոպոսը և իւր քեռորդին Ղաւկաս՝ որք ժէ գարու վերջին քառորդին և ժէ՛ ըսկիզբները՝ Հոլանտայի Ամսթերսամ քաղաքի մէջ տպագրութեամբ ի լոյս ընծայեցին շատ գրքեր:

Օրբելեան պատմիչը Էրնջակ և Գողթն գաւառները միացուցած մէկ գաւառ կը նշանակէ և միայն 30 գիւղերու անուններ կը գրէ, յորոց՝ որովհետեւ միայն երրորդ մասը

մեզ ծանօթ է գրիւք, չգիտենք թէ միւս անձանօթները երկու գաւառներէն որուն կը վերաբերին: Այդ պատճառաւ մենք սոսա կը գնենք այդ գիւղերու անուանք հանդերձ և կեղեցոյ տրիւքը, նշանակելով միանգամայն փակազծի մէջ ծանօթներու գաւառը. այս ալ ըսենք, թէ նոյն պատմչի զրոց մի քանի օրինակաց մէջ զրուած է միայն Էրնջակ գաւառը՝ սասը գիւղերով.

Բուստ . . . . .	12 (Գողթն)
Տելի . . . . .	12 (Գողթն)
Ամասրոյ վանք . . . . .	12 (Գողթն)
Նորակերտ . . . . .	12
Ողոնի . . . . .	12 (Գողթն)
Թեղեակ . . . . .	8
Գունդալանք . . . . .	8
Ոսկեձոր միւս . . . . .	12
Անգուղիք . . . . .	12
Նորագիւղ . . . . .	12
Արեւք . . . . .	8
Շաղկերտ . . . . .	8 (Գողթն)
Ս. Գէորգ . . . . .	8 (Էրնջակ)
Զաւաչրի վանք . . . . .	12
Ապարանք . . . . .	12
Վան . . . . .	12 (Գողթն)
Գոչն . . . . .	8 (Գողթն)
Գաղ . . . . .	12 (Էրնջակ)
Ոփիկ . . . . .	8
Մայրեակ . . . . .	12
Վանանդ . . . . .	18 (Գողթն)
Ազուլիք . . . . .	12 (Գողթն)
Տերեկունիք կամ Բէ- բէրունիք . . . . .	12
Ամառաշէն . . . . .	10
Ողբաւ, Ողբու կամ Ովղաւ . . . . .	12
Քովնա կամ Տըովա . . . . .	8
Ապրակունիք . . . . .	12 (Էրնջակ)
Քարկոփ . . . . .	12
Բերդիկ . . . . .	12 (Էրնջակ)
Ռապատ . . . . .	12

Ասոնցմէ գաւ Գողթան բաժնին մէջ կը յիշուին նոյնչափ ևս գիւղեր, ըսա նոր վիճակագրութեանց և արձանագրութեանց, որք են հետեւեալները.



Թագաւորամարզ	Վերջնէ
Գաշտ . Ստորին Ա.	Գետցիկ
գուլիս	Գեղերեցիկ
Յղնա	Նունինց
Ռամիս	Որդուատ
Բուհրուտ	Վաղաւեր
Փառակա	Փառակերտ
Շրջու	Փորադաշտ
Աղախեցիկ	Մցգուն
Գաստակ	Աստուածաճճնի գլխ
Տրունիք	Բազմաւի
Տնակերտ	Գանձի
Օբովանիս	Գեղսար
Քաղաքիկ	Սալ
Անապատ	Պելել
Անդամէջ	Խոլըս

Գողթան գաւառի հայրենի պայազատութեան զարկէն վերջ, վերցաւ նաև իւր անունն, և կոչուեցաւ այլազգիներէն Որդուատ՝ ուր կը նստէր ամիրայ մը և կը կառավարէր ամբողջ հին Գողթն գաւառը: Այնուհետև Պարսից և Օսմանեանց տիրապետութեան միջոց և յետոյ Ռուսաց ժամանակ ևս մինչև ցայսօր, այս անուամբ ծանօթ է գաւառս, որ վիճակակից է Նախճատանի կուսակալութեան: Պարսիկները կոչած են նաև Էշրատ-ձիրակ, որ է մեր հին Ազատ Գիրակը: Թէպէտ գաւառս այնչափ բնագործակ չէ և չունի զօրաբար զեանք, բայց իւր ձորերու և ձորակաց համեմատ այլազգիներու իշխանութեան ժամանակ բաժնուած էր զանազան վիճակաց: Ըլ յիմ ևս բաժնուած է հինոց մասերու. Ա. Որդուատ իրեն գեաակալը. Բ. Աշրայիր. Գ. Տաստիկ, իսկ մեզ աւելի յարմար կը թուի կոչել Վանանդ և Վանանդաձոր՝ անուանի զիւրին համար, և կամ Տրունիք. Գ. Չիւնեար: որ է Վանանդայ և Բասաձորոյ մէջտեղ, և կարելի է կոչել Յղնա. Ե. Պելէ՝ որ ի նախնեաց կոչուած կը զանենք Բասաձոր, և կը թուի թէ նախապէս կոչուած լինի Ազատ Գիրակ, վասն զի ցարկ իւր զեար կը կոչուի Գիրեան և նոյն անուամբ աւերակ տեղ մի ևս կայ: Գաւառիս հարաւ արեւելեան ծայրը կայ Քեայիր անուամբ այլազգարնակ աւան մը, որ կը համարուի լինել հին Գողթն աւանը: — Սխալակ, 308-315: Եւ այլն:

ԳՈՂԹԱՆ ՏՈՒՆ. Տես ԳՈՂԹՆ:

ԳՈՂԹԱՆՅ ԳԱՒԱՌ. Տես ԳՈՂԹՆ:  
 ԳՈՂԹՆԱՍԱԿԱՆ. Տես ԳՈՂԹ:  
 ԳՈՂԶՈՐ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:  
 ԳՈՂՈՐԵԱՅ ՎԱՆՔ. — Սխնեաց հին վանքերէն մին կը կարծուի, տեղը և զիրքը անծանօթ:

ԳՈՂՈՅ ԱԳԱՐԱԿ. Տես ՍՈՂՔ:  
 ԳՈՂՈՅ ԱՂԻԻՐ. — Կը յիշէ Յովհաննէս Մամիկանեան, Տուրքերանի Տարօն գաւառի մէջ:

ԳՈՃԱՄԱՆ ՊԱՇԷ. — Հայաբնակ զիւր ճանիկի առաջնորդական վիճակի: Ունի Ս. Յակոբեան վարժարան մը՝ 70 աշակերաններով:

ԳՈՃՈՅ ՎԱՆՔ — Հին Մոկաց աշխարհի և աշխիան վանայ կուսակալութեան Մոկաց գաւառի մէջ կը գտնուի վանքս: 1870 ին՝ ինչպէս կը գրէ Հայրենիք յրազրի թղթակից մը. «Այս ազգային հաստատութիւնն ալ կուսակալներ, աւերեր ու ամայացեր է Պարսկերեան Օսման ազգէն և իւր խումբէն, ցերեկ ասեն՝ յայտնի համարձակ՝ հրապարակաւ, աներկիւղ և անարգել»:

ԳՈՃՈՅ ԶՈՐ ԿԱՄ՝ ԿՈՃՈՂՈՐ: Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:

ԳՈՄ. — Գիւղ Գուգարաց Զաւառը (Ախալքալար) գաւառի, աշխիան Բարայէթի վիճակի մէջ: Ունի 800 հայ բնակիչներ, բաժնուած 190 տան: Գիւղիս մէջ Խոսի սարի վրայ, խաչարձան մը կայ, որ սխալաբան է Ս. Գեորգ անուամբ:

ԳՈՄԱԶՈՐ. — Երբեմն մեծ շէն և աշխի գիւղ Այրարատայ Բասն (Հանուներ) գաւառի մէջ: Աստղիկ (Բ. 1) զիւրաբար ևս կը կոչէ զիւր, ուր Թէոփիլոս կայսեր ժամանակ (836-7), Յունաց ինքնազուխ սպառակները գալով, «զբազում խոյտուղիցին սրով». բայց յետոյ իրենք ալ կուսուրեցան Վանանդայ կողմերը: Ունի աշխի 80-100 տան հայ բնակիչ, որոց զեղջատակ ասէմը կը կոչուի Գոմաձոր-օղի:

ԳՈՄԱԶՈՐ. — Գիւղ Այրարատայ վարժանուանեաց գաւառի արեւելեան ծայրը, Գեղամայ ծովակէն գրեթէ քառորդ ժամ հեռու. շինուած է փոքրիկ ձորի մէջ, լերան մը ստորոտը: Աշոտ Ա զիւր շխալաւարած և իւր գուսարը Սոփի տիկինն Սխնեաց, այս զիւր նուիրեցին Սեւանայ Ս. Առաքելոց եկեղեց-



ւայն: Կը կարծուի թէ Գամաձոր անուն ստացած ըլլայ այն ժամանակ, երբ գիւղիս տեղը, Սեւանայ վանքի անասնոց գոմանոցն է եղեր: Գիւղս ունի այժմ 50 տուն հայ բնակիչք: Եկեղեցին Ս. Յակոբ՝ անշուք է: Առողջարար է տեղւոյս աղբիւրի ջուրը:

ԳՈՄԱԶՈՐ. — Գիւղ Այրարատայ վանանդ (Կարա) գաւառի մէջ, գետեզերքի մօտ, Գարածէօրէնի արեւմտեան հարաւային կողմը: Այս գիւղը այժմ գոյութիւն չունի, մօտը կայ սուլթանակ Ալեքրանդրովկա նոր գիւղը: — Այս անուամբ ուրիշ մի քանի գիւղեր ես եղած են մեր աշխարհի մէջ, որոց անունը յետոյ այլափոխած են և կամ գիւղերն ամայացած:

ԳՈՄԱՆ. — Գիւղ Տիգրանակերտի Հաղբոյ գաւառի մէջ: Հայ բնակիչք միայն 2 տուն են:

ԳՈՄԱՆՅ. — Հայաբնակ գիւղ Մոկաց աշխարհի կամ վանայ կուսակալութեան Մոկը գաւառի մէջ: Բնակիչք կը հաշուին 40 տուն, ունին Ս. Գեորգ անուամբ եկեղեցի:

ԳՈՄԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆԵՐ ԿԱՄ ՏԱՏՐԱԲԵՆԱԿ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. — Աղձնեաց Սալնոյ ձոր գաւառի մէջ կը գտնուի վանքս, Բաղէշ քաղաքի արեւմտեան կողմը, և Գոմս կոչուած գիւղի կամ քաղաքամասի հիւսիսային արեւելակողմը, երկու քարրնկէց հետու: Տարարեակ կոչուելու պատճառ եղած են այս տեղ գտնուող բազմաթիւ տաւրակները: Սրբատաշ քարերով կառուցուած վանացս գոգարիկ տաճարի գանդակատունը կը բարձրանայ վեհմ կերպով և կը հսկէ շուրջը գտնուող 8-10 խցիկներու և 2-3 խորատորոտգոմերու վրայ: Տաճարի մէջ կ'ըսեն թէ կը պահուի կենաց փայտի մասն մի, Բարսղի կետարացոյ աջը, Լուսաւորչի բեւեար և Ս. Գէորգայ նշխարներէն: Վանքս ունի հողային բաւական կալուածներ և մէկ քանի թեմական գիւղեր: Մենաստանս շրջապատող լեռները վեհութեան փայլ մը կու տան իրեն և անմահական բոյր մը կ'աղղեն օդին և ջրոյն. ծառերն ու ծաղիկները՝ որ կը պնդապարզեն տեղւոյս գարունը՝ խաչաթիակ և խոց աղբիւրներու մեղրածորան կայլակաց հետ, կ'սքանչացնեն զմարդիկ: — Վանքիս տաճարի աջ թեւին տակ կը գտնուի, Բաղէշի նշանաւոր վաճա-

սականներէն Շողիկեան գերդաստանի նահապետ Մ. Ղարիպեանի ծախքով կառուցուած վարժարանս:

ԳՈՄԱՅ ՁՈՐ. — Բաղէշ (Աղձնիք) քաղաքի ձորերէն մին:

ԳՈՄԱՅ ՎԱՆԵՐ. Տես ԳՈՄՍ:

ԳՈՄԱՄՏԵՐ. — Գիւղ Սասուն Շատախի, ըստ վիճակադրութեան Ազգ. Պատրիարքարանի: Բնակիչք հայ և քուրդ խան են:

ԳՈՄԵՐ. — Գիւղ Բարձր Հայոց (Գարանաղի) այժմեան Կամախ գաւառի, որ իւր մէջ անեցած աղի և քարածուխի հանքերուն պատճառաւ, նոյն գաւառի կեդրոնաւայրը կը համարուի: Աւելի յարկի են աղի լճակներն, որոց աղբիւրը՝ գիւղիս մէջ լեռնակի մը ստորակէ կը բղխէ: Արեւական սաստիկ ջերմութենէն, աղը կը բխրեզանայ մաքուր, սպիտակ և անուշահոտ: Ամառը վեց ամիս այս արծաթափայլ հարկուաւոր լճակաց եզերքը կը հաւաքուին շատ հեռուոր տեղերէ եկած յաճախորդք: Շատ առողջարար է տեղւոյս կլիմայն. ի հնուց հայ անուամբ կը կոչուի Գոմեր, իսկ ի թրքաց Բեօւխը: Կը գտնուի Եփրատայ եզերքը: Ունի 80 տուն բնակիչք, կէսը հայ և կէսը մահմետական: Հայք ունին Ս. Աստուածամայր անուամբ փոքրիկ եկեղեցի մը, և Արամեան անուն քարաշէն զարոց մը:

ԳՈՄԵՐ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշէն 2 ժամու ճանապարհ հետու: Ունի մօտ 100 տուն գուս հայ բնակիչ: Գիւղէս վար կը հոսէ փոքրիկ առուակ մը:

ԳՈՄԵՐ. — Գիւղ Մոկաց աշխարհի, ունի Ս. Գեորգ քարաշէն եկեղեցի մը և 50 տան չափ հայ բնակիչներ:

ԳՈՄԵՐ. — Յայտնաւորաց մէջ կը յիշուի գիւղս, Կոզովիս (Այրարատ) գաւառի մէջ:

ԳՈՄԵՐ. — Բարձր Հայոց Մասատ տեղիս սի կոչուած տեղը, որ Բարեբղէն մէկ ու կէս օրուան ճանապարհ հետու է, կը գրտնուին բազմաթիւ գոմեր և ախոսներ, հողի մէջ մէկ մէկու մօտ փորուած: Ասոնց մէջ կը պահեն, կ'ըսէ Խնձեմեան, արջառներ, ոչխարներ, ձիեր և գրաստներ, և կարծիք կը յայտնէ, թէ հին ժամանակներ ևս այս տեղ գոմեր եղած լինելու են, և հաւանա-



կան կը թուի իւր ենթադրութիւնն, թէ այս գոմերու շուրջն դանուող երկիրներն կը ձեւայնէին Բարձր Հայոց հին Շատգուր գաւառն, վասն զի նոյն իսկ Շատգուր անունն ալ նոյն նշանակութիւնն ունի գրաբար լեզուի մէջ, ինչ որ ունի աշխարհաբար Գոմերը:

ԳՈՄԵՐ. — Սիւնեաց Եղուկ գաւառն ունի այս անուամբ հին զիւղ մը: — Շահապօնից մէջ եւ կայ այս անուամբ Հայոց զիւղ մը: — Այս երկուքին եւ ներկայ վիճակն մեզ անձանօթ է:

ԳՈՄԵՐՈՒ ԶՈՒՐ. — Բարձր Հայոց կամարի գաւառի մէջ:

ԳՈՄԷՇՏՈՒՆ. — Գիւղ Շապին-Փարահիսարի. 50 տուն հայ եւ 2 տուն մահմետական կայ: Հայք հողագործ են, եւ ունին Ս. Աստուածածիկ անուամբ եկեղեցի մը եւ վարժարան՝ 50 աշակերտներով:

ԳՈՄԷԿԱՆ. — Ամայի զիւղ Բանաշէն գաւառի, Մշոյ դաշտի հարաւային կողմը: Հայկական աւերեալ եկեղեցին կը մնայ ժողովրդենէ զուրկ:

ԳՈՄԻԿ. — Այս անուամբ երկու զիւղեր կան Այրարատայ մէջ, որոց բնակիչք այժմ այլազգի են:

ԳՈՄԻԿՆԵՐ. — Կը յիշուի Բարձր Հայոց կամարի գաւառի մէջ:

ԳՈՄԿՈՒՆՔ. — Հին Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, զոր կը յիշէ Բուզանդ:

ԳՈՄՇԱԽՊԱՄ. Տես ԱՇՏԱՐԱԿ:

ԳՈՄՇԷՃՈՒՊԱՆ. — Այս անուամբ աղբիւր մը կայ Սիւնեաց Աղաշէճք գաւառի մէջ:

ԳՈՄՈՑ ԳԻՒՂ. — Սիսական հոլով Գոմք զիւղի:

ԳՈՄՍ կամ ԳՈՄՔ. — Գիւղ կամ քաղաքաման Բաղիշոյ (Աղձնիք), քաղաքէն բիշ հեռու արեւմտեան կողմը, որուն սահմանը կը զծէ Խոսրովու կամ Խոցիրու գետն՝ որ կորճինաց գետ եւ կ'ըսուի, աեղէս 2 ժամու ճանապարհի չափ զէպ ի հիւսիս եղող Կրճիկաց Ս. Գեորգ կոչուած աւերակ վանքի անուամբ: Գիւղս ունի մօտ 60 տուն հայ բնակիչներ, որոնց մէկ մասը կը գրազի թեթեւ երկրագործութեամբ, ամանք ջաղացականութեամբ, մէկ բանին նախնական արհեստներով եւ մնացեալը՝ պանդխտութեան

մէջ կը մաշին: Տես ԳՈՄԱՑ ԱՍՏՈՒԱՅՐԱՆՆԵՐ ԿԱՆՔ:

ԳՈՄՍ կամ ԿՈՄՍ. — Հայաբնակ զիւղ Տուրուբերանի հին Երեւաքք գաւառի եւ Վանայ այժմեան կարճկան գաւառակի մէջ: Գիւմաքը տարածուած է կարճկանի գաշալը: Ունի 50 տուն բնակիչ եւ Ս. Թովմայ անուամբ անձե եկեղեցի մը: Տղայք կ'երթան Եղեգիս զիւղի վարժարանը, որ մէկ ժամու ճանապարհ հեռու է: Գիւղէս 2 ժամու ճանապարհ հեռու զէպ ի հիւսիս լեռնէն անդին Վանայ ծովակի եկերքը շինուած է Գոմաց վանք կամ Զուցրախ Ս. Գեորգայ վանքը, որ այժմ անմարդաբնակ է, հակառակ իւր գեղեցիկ շինուածքին: Վանքին մէջ կը պահուէր Ս. Գեորգայ զուլիւր, զոր յետոյ փոխադրած են Գոմս զիւղը, ուր կը նստի նաև վանաց առջնորդը: Ունի բաւական հարուստ հողեր կարճկանի գաշալի մէջ:

ԳՈՄՍ կամ ԿՈՄՍ. — Վանայ շրջակայից Հայաբնակ զիւղերէն մին: Ունի մօտ 50 տուն բնակիչ եւ Ս. Ստեփանոս անուամբ եկեղեցի մը: Սիրուն է տեսարանը, բայց սակաւ է ծառաստանը:

ԳՈՄՍ կամ ԿՈՄՍ. — Հայաբնակ զիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւմտեան հիւսիսային կողմը: Բնակիչք 100 անէն աւելի են: Ունի վարժարան 1870ին հիմնուած:

ԳՈՄՅԵՑ ԶՈՐ. — Այրարատայ Շիրակ գաւառի Հաթիճոյ վանաց արձանագրութեան մը մէջ կը յիշուի:

ԳՈՄՔ. — Հայաբնակ զիւղ Չորրորդ Հայոց Հանձիթ (Խարբերդ) գաւառի մէջ: Բնակիչք 200 տուն կը հաշուին, ունին Ս. Կրայսպետ եկեղեցի մը եւ Ս. Փրկիչ անուամբ վարժարան: Ընտիր է զիւղիս զինին. ամէն տուն զինի կը շինէ եւ կը պահեն կարասներով:

ԳՈՄՔ. — Գիւղ Բարձր Հայոց կարնոյ գաւառի մէջ: Բնակիչք 70 տուն են, կէսը հայ եւ կէսը մահմետական: Հայք ունին Ս. Յակոբ անուամբ եկեղեցի մը:

ԳՈՄՔ. — Այս անուամբ մի քանի գոմեր եւ այլազգաբնակ փոքր զիւղեր կան Այրարատայ Բաղրեւանդ գաւառի մէջ: Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԵՐ, ՎԱՅՈՑ ԶՈՐ եւ ԿՈՒՍԳԵՏ:

ԳՈՅՄԱՀ. — Գիւղ Տիրաւակերտի Լճէ



գաւառի մէջ: Ունի 40 տուն հայ և եկեղեցի:

ԳՈՆ. Տես ԿՈՎԱՍԿԱՆ:

ԳՈՆԱԳԱՄԱՋ. — Գիւղ Խարրերդի առաջնորդական վիճակի: Ունի 50 տուն հայ և 100 տուն մահմետական: Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի և վարժարան. կը գրազին երկրագործութեամբ:

ԳՈՆԱԳՎԱԳ. — Գիւղ Ճանիկու առաջնորդական վիճակի և Չարչամպա գաւառակի մէջ: Ունի մօտ 60 տուն հայ բնակիչ. Ս. Լուսաւորիչ եկեղեցի մը և նոյն անուամբ վարժարան մը՝ 40 աշակերաններով:

ԳՈՆԻԷ ԼԱԼԷ. — Գիւղ Տիգրանակերտի Սլիվան գաւառի, 2 տուն հայ կայ:

ԳՈՆԻԷ ԶԱՆՈՅ. — Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի մէջ: Ունի 110 տուն բնակիչ և եկեղեցի:

ԳՈՆԻՎԿ. — Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի. 8 տուն հայ կայ:

ԳՈՆԵԱ, ԳՈՆԻԱ կամ ԻՈՆԻՈՆ. Գղ. KO-NIAH. — Գլխաւոր քաղաք և կեդրոնայւոր համանուն կուսակալութեան և գաւառին. Ի հնումն մայրաքաղաք Սելճուգեանց: Գիրքը թէև գեղեցիկ չէ, կառուցուած հարթ ու ընդարձակ դաշտի մը վրայ և շրջապատեալ բարձր լեռներով, բայց օդը լաւ է, խի ջուրը լաւ կը լինի եթէ քանի մը ամիս պահուելէ վերջը խմուի: Զրոյն այս յատկութեան պատճառ կը համարուի՝ հողին մէջ բորակ խառնուած բլլալն, ըստ հետազօտութեան բժշկաց: Բաւական հնութիւնք կան քաղաքի մէջ, սուլթան Ալայէտափնի գահն ու գամբանը հօդէ բլրոյ մը վրայ է. գահուն շէնքի հիմքը մնացած է: Նշանաւոր են Սէլիմ և Ապաիւլ Ազիզ սուլթանաց շինել սուած մզկիթները և Մէվլանայի գամբարանին կանաչ գմբէթը, որ 650 տարուան հնութիւն մ'է, համակ մարմարինէ և սքանչելի ցցուն քանդակներով:

Քաղաքն ունի 44,000 բնակիչ, և ըստ վ. Քիլնէի հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք . . . . .	39,300
Հայ Լուսաւորչականք . . . . .	3,000
Հայ Բողոքականք . . . . .	50
Յոյնք . . . . .	1,500
Գիտի կաթուղիկեայք . . . . .	150
Գումարն . . . . .	44,000

Հայք ունին փոքրիկ եկեղեցի մը Ս. Աստուածածին կամ Ս. Յակոբ անուամբ և վարժարան մը Ս. Սահակեան: Քաղաքիս հին սուլթանները, ինչպէս պատմութենէն յայտնի է, մերթ գաշնակից և մերթ թշնամի եղած են մեր Ռուբինեանց: Տեղւոյս Հայոց գրեթէ կէսը կհոտարացի են: Հայ Բողոքականք ունին ցերեկօթիկ և գիշերօթիկ պարոյ: Եւրոպացի Եզրարք (Ֆուէն) և Քուրք ունին վարժարաններ: Յոյնք անջատ թաղի մը մէջ կը բնակին, ունին իրենց եկեղեցին և վարժարանը: — Տեղական բերքերու (գորղ, բուրղ, այծեմաղ, բամբակ, մարթ, արմաիք, ափսն, են.) առատ արտադրութիւն կայ: Կ. Պոլսէ՛ Պրուսայի ճանապարհաւ գրեթէ 600 հազարամետր հետու է, և այժմ կը կաթուղիով 30 ժամու գծով մը մօտեցած է Կ. Պոլսի: Ընդարձակ է շուկայն, կան բաւական թուով վաճառատունք կոկիկ ու կանոնաւոր, մեծ մասն տարազագործարան (manufacture), մնացեալք՝ արհեստաւորաց և մանրավաճառաց խանութներ: — Քաղաքիս իբր միակ գրօտայլք՝ սուլթան Ալայէտափնի սարահարթը կայ. մահմետական, հայ ու յոյն ժողովուրդք հոն կը վազեն առուօտ և երեկոյ գրօսնելու և մաքուր օդ ծծելու համար: Այս սարահարթի վրայ են Հայոց, Յունաց եկեղեցիները ու սուլթան Ալայէտափնի մզկիթը, որ ամփոփուած է նոյն սուլթանը, ու կը կենայ տակաւին անաղբատ, կանդուն, առանձին կամարակապի մը մէջ: Հոն է նաև քաղաքին նախասելճուգեան ժամացոյցը, Յունաց եկեղեցոյ կաթողիկէի բոլ գետեղուած: Այս շէնքերէն բիշ մը հետու կը տեսնուին Սելճուգներու պալատը, բանար, զինարանը, և այլն. աւելնքն ալ կիրափուլ՝ բայց պատկառելի հնութիւններ են: — Գունեայի կուսակալութեան մէջ կան միահամուռ 1,088,000 բնակիչ, յորոց միայն 10000ը հայ են, մնացեալք մեծաւ մասամբ մահմետական, յոյն, են: Կուսակալութեանն և գաւառիս վրայ, մենք այսչափով կը բաւականանանք, փափաքողք կրնան կարգալ վ. Քիլնէի ընդարձակ նկարագրութիւնը (Հա. Ա. 881-884):

ԳՈՇ ՄԻԻԹԱՐԱՅ ՎԱՆՔ. Տես ԳԵՏԻԿ:  
ԳՈՇԱ.-ՎԱՆՔ.-ՇԷՆ. Տես ԳԵՏԻԿ:



ԳՈՉԱԹ. — Գիւղ Չարսանճագի, մօտ 200 բնակչօք, 50ը հայ:

ԳՈՉԱՆ. — Ահնէն գրեթէ կէս ժամ հեռու միապաղաղ քարածայր լին մ'է: Այսպէս կոչուած է այն պատճառաւ որ իւր գագաթին ձմեռ ժամանակ առատ ջուր սահանակարկաչ, մեծ բոնութեամբ և գոչմամբ վար կը հոսի:

ԳՈՉԵՆ. Տես ԳՈՐԳԵՆ:

ԳՈՉՈՎԻ. — Ալլազգարենակ գիւղ Կամախի (Բարձր Հայք):

ԳՈՈՒԹ. — Գիւղ Տիգրանակերտի Սլիվանու գաւառակի, Նիբիկերտ գիւղաքաղաքի հարաւային արեւելեան կողմը՝ կէս ժամ հեռու: Բնակիչք են մօտ 100 տուն Կաթողիկեայ Հայք. ունին զեղեցիաշէն մատուռ մը. կը գրազին երկրագործութեամբ և ջորեպանութեամբ: Տներն քարաշէն են, օդն ու ջուրը լաւ: Քրդախօս են և ունին վարժարան. կը յուսացուի որ նոր սերունդը սկսի ազգային լեզուի գործածութիւնը:

ԳՈՈՃԱՆ. — Գիւղ Չարսանճագի, 20 տուն հայ կայ և 8 տուն մահմեական: Հայք հողագործ են, ունին Ս. Աստուածածիկ անուամբ եկեղեցի մը:

ԳՈՈՉ ԿԱՄ ԳՈՐՈՉ. — Այսպէս կոչուած է Խաչենոյ և Սեւորդեաց մօտ եղող սեղ մը կամ երկրի մաս մը, ուր թ զարու մէջ Բուզայի ժամանակ վիայեցաւ Մուկաթը վանանկեցին. և որովհետեւ պատմիչն թոյլմաս Արժրունի կ'ըսէ «մերձ ի լեանն Քիչ» և այդ լեանն անունը կը յիշեցնէ Ալուանից Գիշ վանքը, հաւանական կը թուի կարծելն թէ այն կողմերը գանուի այս սեղոս:

ԳՈՐԳԵՇԳԻ. — Գիւղ Պոթուշանի (Ռումանիա), 1 ժամու ճանապարհ հեռու. բնակչաց մէջ 2 տուն հայ կայ:

ԳՈՐԵՅՅԵՆԻ. — Գիւղ Եաշի (Ռումանիա) գաւառի. բնակչաց մէջ 1 տուն հայ կայ:

ԳՈՏԱՌԻՃ ԿԱՄ ԿՈՏԱՐԻՃ. — Գիւղ Չարսանճագի փէրին գաւառակի: Ունի 30 տուն հայ, Ս. Գեորգ անուամբ եկեղեցի մը և վարժարան՝ 30 աշակերտներով:

ԳՈՏՈՂ ԿԱՄ ԳՈՏՈՉ ՎԱՆՔ. — Կը յիշուի այս անուամբ վանք մը Այրարատայ Մազազ գաւառի Գառնոձորի մէջ, զոր Սմբատ Ա թագաւորը նուիրեց Տաթևոյ վանաց:

Գորոզոյ խաչը որ կը պահուէր Եթիծենաւքարի վանաց մէջ, թերեւ այս վանացս սեփականութիւնն ըլլար, որ յ տարի ու փոխուելովն միայն կը տարբերի:

ԳՈՏՈՒՍ ԿԱՄ ԳՈՏՈՒՉ ՎԱՆՔ. — Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ Եղեղեաց զետակի աջակողմը: Վանացս մատուաներէն միոյն մէջ կը նշմարուի Չի թուական: Այս մատուռ և կամ ուրիշ փոքրիկ եկեղեցի մը կը կոչուի Սորիկ վանք: Վանութեան կարօտ է այս վայրը:

ԳՈՐԱԳԵՏ. — Կը յիշուի Սիւնեաց Բաղք գաւառի Քաշունիք վիճակի մէջ:

ԳՈՐԱՅՔ. Տես ՀԱՎԱՆԳ:

ԳՈՐԳՈՐ. — Կը յիշուի Աշոցք գաւառի մէջ:


ԳՈՐԳՈՓ. — Կը յիշուի Կամախի մէջ (Բարձր Հայք):

ԳՈՐԷՍ, ԳՈՐԻՍ ԿԱՄ ԿՈՐԷՍ. — Սիւնեաց Հարանց գաւառի մէջ, Չանգեղաւորի գաւառի կեղրանի մէջ կը գտնուի նշանաւոր տաճան՝ որ կը բաժնուի հին և նոր մասերու: Գորիսի արեւելեան կողմն է Տեղի և արեւմտեան կողմը Ուշ-Թեփեկեր բարձրաւանդակները. ասոնք գէպ ի հարաւ իրարու կը մօտենան, իսկ հիւսիսային կողմը իրարմէ հեռանալով կը ձեւացնեն փոքրիկ հովիտ մը, որոյ միջէն կը հոսի Գորիսի գետակը: Տեղի բարձրաւանդակը կը կտրուի ուրիշ ձորակով մը՝ որ արեւելքէն կ'իջնէ գէպի արեւմտահիւսիս: Չորակի մօտ կը բարձրանայ Լաստ գագաթը, իսկ ասոր մօտ՝ ապառաժ բարձր ժայռ մը՝ սրուն վրայ ի հնամենի բերդ կայ եղեր և ցարդ կը աննուին հեաքերը: Բերդի ժայռն իւր շարունակութեան վրայ ունի զանազան մեծութեամբ կոնաձեւ գագաթներ, սրոնք կազմուած են ջրոյ ազդեցութեամբ: Նոյնպիսի կոնաձեւ ժայռեր շարուած են նաև մօտակայ ձորակի երկու կողմերը: Ասոնք ընդհանրապէս բազկացած են կարմիր աւազի շերտերէ, սեղ սեղ ժայռ քարերու խոտնուրդով. իրեւ բացառութիւն կան նաև սպիտակներ: Նոյնպիսի կազմութիւն և կարմիր կամ սպիտակ գոյն ունի նաև բարձրաւանդակի բերդի հանդէպ գրանուոզ լանջը, որ ուղղահայեաց զառիվայր է: Այս լանջի, ինչպէս և ձորակի ու բերդի



քերժի մէջ կան բազմաթիւ մեծ և փոքր արհեստական քարայրներ, որոնք կրեմն ծառայեր են իբրև բնակարաններ և այժմ կը գործածուին աւելի իբրև խոանոց: Ի

համար, իսկ հարուստները սկսեր են շինել կանոնաւոր տներ: Գիւղի կեդրոնը կը գրաւուի Ս. Հովիտի մէջ հին եկեղեցին և մօտը Մելիք Հիւսէինեաններու նախկին ապա-



242. Գորէս ասանը:

հնունն այս արհեստական քարայրներն կը կազմէին մեղիքանիստ Գորիս գիւղը, որուն աղքատ գետակալը, գարձեալ կը շարունակէ այլոցիսի բնակարաններ կարել իրեն

րանքը, որ այժմ աւեր է: Գորիսի հին մասը բնակարանապէս կեղտոտ է, անկանոն և միմեանց վրայ զիջուած տներով, նեղ ու ծուռ ու մուռ փողոցներով:



Գորիսի նոր մասը հնոյն հակապատկերն է: Այս մասը հիմնուած է 1870 թուին, Ստարազիւի գաւառապետի ձեռքով և Մաւնուշար-բէկ Մելիք Հիւսէկինեանի խորհրդով: Կը գտնուի հնոյն զիմացը, գետոյն աջակողմը: Հինգ կանոնաւոր և շատ լայն փողոցներ կ'երկինան հարաւէ հիւսիս, ուրիշ հինգ փողոցներ ալ խաչաձև կը կարեն այս փողոցները: Գրեթէ կեդրոնը կը գտնուի մեծ հրապարակ մը, յորմէ վար կան շարք մը խանութներու: Կայ նաև նոր անկաճ քաղաքային պարակզ, որ փողոցով մը երկու՝ վերին և ներքին մասերու բաժնուած է. իսկ այս փողոցի եզերքը շինուած է Գ. Միրումեանի ապրիլը՝ չորս խողովակներով: Տնւորը բնակարարական զեղեցիկ են, մեծ մասամբ երկյարկանի, տաշած քարերով շինուած և փայտէ կաւերներով ծածկուած: Համարեա բոլոր տները իրենց ասիւ պարակզներ ունին: Կայ նաև նորաշէն եկեղեցի մը, ոչ այնչափ մեծ, որուն գոնքը անհամեմատ մեծ են և պատահանները չափազանց նեղ: Աստ կայ նաև պետական երկդասեան դըպրոց մը՝ անյարմար և հասարակ շէնքով: Գիւղիս բնակիչք ամբողջ հայ են մօտ 4000 հոգի, բաժնուած 490-500 տան: Կը պարագլին երկրագործութեամբ, այգեպանութեամբ և առևտրով: Ետեկան կենդանութիւն կը ստանայ՝ հրը սար գնացող թուրքերը կը ընցուին: — Գերմանացի ճանապարհորդ մը 1850ին աւանիս գաւառապետին տունը իջեանելով, որ էր հայկազն և ազնուատահմն ճիւղակիւր բեկը, գովութեամբ կը յիշէ աւոր հիւրընկալութիւնն: Ռուս արեւելագէտն Նիկոպոյոս խանիբով, այցելած է աւանիս 1848 տարոյ նոյեմբերի մէջ: — Նոր Գորիսն վերտա մը հետու զէպ ի հիւսիս, նոյն հովտի մէջ կը գտնուի բարաշէն գեղեցիկ վանքի մը աւերակները, քանդուած պարսկով և քանի մը խցերով: Գիշ մը վարով կը վազէ եզեր այն սառնորակ ազրիւրը, որուն ջուրը վերջերս Գ. Միրումեանի ծախքով տարուած է Նոր Գորիս: Աւերակաց մէջ արձանագրութիւններ չեն յայտնուիր, միայն աւանդութեամբ կը պատմուի, թէ երբեմն սա շատ հարուստ վանք է եզեր, ունեցեր է բազմաթիւ հօտեր, ու

րոնց տուած կամը խողովակներով սարէն մինչև վանքը կը հոսէր: Այս տեղ կայ և զեր և այնպիսի մեծ զանգակ մը, որուն ձայնը շատ հետու կը լսուի եզեր, ուստի և ժողովուրդը սովորեր է ըսել «Չանգը-գո» այսինքն զանգը զօրաւոր, և իրը թէ ասկից առաջ եկած է Չանգեղուր անունը: — Սիւսակն, 261-262: Չանգեղուրի գաւառ, Բ 26-28:

ԳՈՐԻՍ ՀԻՆ կամ վեբի Շէն. — Սիւնեաց Հարանգ (Չանգեղուր) գաւառի մէջ, Գորիս գետի ուղղութեամբ, զէպ ի հիւսիս կ'երկինայ բլրակներու շարք մը, որոնց մէջ կայ բարձր, կարմիր ժայռ մը, զոր տեղացիները կը կոչեն Պրեւարար՝ և նոյն անուամբ բոլոր բլրակներու շարքը՝ Պրեւարարի սարեր: Այս պղնձարարի ժայռի մէջ կայ 10, 65 մետր երկայնութեամբ, 8, 52մ. լայն և մօտ 6, 40 բարձրութեամբ բնական այր մը, որ այժմ ոչխարներ կը մակաղին: Սոյն ժայռէն բիշ մը հիւսիս, համանուն բլրակներու լանջի վրայ կը գտնուի Հին Գորիս կամ վերի Շէն կոչուած զիւղը: Տներու մեծագոյն մասը, մաւնուանց հները, փորուած են բլրի լանջին. շատերը այժմ ևս կը ծառայեն իբրև բնակարան: Գիւղս ունի փոքրիկ, կիսով չափ քերծի մէջ փորուած եկեղեցի մը Նարաւ կեռեր (Նորակեռեր) անունով, որոյ գրան վրայ գրուած է հետեւեալ արձանագրութիւնը. «Թ. Ռ. Հէ. Ես Նարաւ կանգնեցի սր. եկեղեցիս ի փրկաբխիս հոգոյս»: Այս եկեղեցին, այժմ ևս իբր աղօթատեղի է. կայ նաև ուրիշ հին եկեղեցոյ մը աւերակը: Աւետարանի մը յիշատակարանի մէջ, որ գրուած է «ի յերկիրս Չագաձոր, ի գեօղս՝ որ կոչի կորէս», կը յիշուին Ս. Գրիգոր և Ս. Աստուածածիկ անուամբ եկեղեցիներ 1667 թուին: Գիւղս այժմ ունի 312 հայ բնակիչներ, բաժնուած 40 տան. կը պարագլին երկրագործութեամբ և անասնապահութեամբ: — Մելիք Հիւսէկինեաններու տոհմը յառաջ և կամ է այս զիւղէս, խոջա Լազարի որդի Լալայէն, որու աւագ եղբայր Պարոնէն՝ սեբեր են այժմեան Պարոնեանները, իսկ կրթուներ եղբայր Աւագէն՝ Աւագեանները: Պարոնեանները առևտրական ասպարէզի մէջ նշանուոր եղած են և այժմ ևս Նոր Գորիսի



հարուստ աներէն մին կը համարուին: Երբ թարաքեամայ թափառականները, Պարսից իշխանութեան միջոց, յարձակելով Հին Գորիսի վրայ բնակիչները կը կոտորեն, նոյն մեղիքներէն թաղը մեռնելով կը թողու երկու որդի Յոհաննէս և Ամիր, որոնք թափառականներու հալածանքներէն փախչելով Չաւնախի զիւղը, կը մնան մեղիք Շահնազարի մօտ: Հոն Յոհաննէս իւր քաջութիւններով համբաւ կը ստանայ և կ'ամուսնանայ մեծատան մը աղջկան հետ: Քիչ ժամանակ վերջ Յոհաննէս, մեղիք կը հաստատուի փառահաճ իսանէն Գորիս, Խոսա, Հալիճօր, Քաւահանջ, Ալիզուլիքնոյ, Տաշքենոյ, Մաղանջուր և Գորու զիւղերու վրայ: Մեղիք Յոհաննէս բնակութիւն կը հաստատուէ նախ Չաղեճօրի մէջ, բայց յետոյ կը հիմնարկէ վերոյգրեալ Նոր Գորիս անանք: Մեղիք Յոհաննէս յաջորդեր են որդիքն Յովսէփ, և մեղիք Հիւսէին. վերջինս կը մեռնի 1815ին և իրեն կը յաջորդէ Մեղիք Ռուստամը, որ միայն երեք տարի իշխելով կը մեռնի անորդի և կը յաջորդէ եղբայրն Մեղիք Յարութիւն: Սա առաջին անգամ կը մտցնէ Չանգեղուր գաւառի մէջ գեանախընձօրի (կարսոֆիլի) մշակութիւն, որուն համար 1846ին Վարդգեսիւն Աննայի ժապաւնով արծաթ մեղալ կը ստանայ: 1827ին Ռուսաց ախրապետութեան միջոց, կը կարգուի Չանգեղուրի կառավարիչ. բայց երբ կառավարութիւնը այս գաւառի մէջ ևս մտցոց ընտրողական ամուսնաւորութիւնը, Մեղիք Յարութիւնը իրեն համար այլ անպատուութիւն համարելով՝ հրաժարեցաւ և հասարակաց գործերէ ևս բաշտած՝ մեռաւ 1880ին, թողլով որդի մը՝ Մանուշար-բէկ անուամբ, որ զեռ կենդանի է: Սա կը պատմէ թէ Հին Գորիսի մէջ կան եղբեր երկու բրգածե բարձր շէնքեր, որոնցմէ միոյն զլուխը քանդել տալով իւր հայրը մեղիք Յարութիւնը, մարդ մը մէջը կախելով, խորը սեւեր է երկու սենեակ և միոյն մէջ գտեր է ձիւ պղնձեայ սանձ մը. այդ ահագին սանձը այժմ կը մնայ Մանուշար բէկի մօտ: Վերջին ժամանակներս այդ հինաուրց շինութիւնները քանդուեր են:

Գիւղէս գէղ ի հիւսիս 2 վերստ հեռու

ձորակի մը մէջ կը բոլի ստանորակ ազրիւր մը, որուն մօտ կան ժայռերու մէջ քարայրներ: Այդ քարայրներէն մին կը համարուի ուխտատեղի, և այժմ ևս Գորիսէն բազմաթիւ ուխտատուներ կու գան: Գորիս գետի հովիտը կը շարունակուի նաև Գորիսէն վարձ գէղի արեւելահարաւ, և երթալով կը լայնանայ ու կը խորանայ: Չորի երկու կողմերը կան բաւական թուով քարայրներ, մէկ քանին բաւական մեծ: Նկատելի է որ այս այրերէն շատերը արհեստական են, և հաւանօրէն շինուած են պաշտպանութեան համար. կան նաև ջրի ազդեցութեամբ կալմուածներ: Չորը ամբողջովին պատած է բացի խաղողի սրթերէ, նաև թիթենիներով, կեռասենիներով, ինձորենիներով, և այլն: Պարսից ախրապետութեան օրով, շատ վրտանգաւոր էր այս ձորէն անցնիլը: Չորիս աջակողմը, Գորիսէն հազիւ երկու հազարամետր հեռու, կը գտնուի Ռիւստր կոչուած բերդը, ահագին ժայռի մը վրայ, որուն մէջ կան բաւական թուով քարայրներ: Պարիսպը ժայռէն փորուած է և տեղ տեղ պատ բաշած: — Չանգեղուրի գաւառ, Բ՝ 8-11 և 30-32:

ԳՈՐԻՍԹ կամ ԳՈՐԻՍ. — Նշանաւոր և բազմամարդ զիւղ Հայոց, Վասպուրականի Արեւրանի (Բերկրի) գաւառի մէջ: Ունի գեղեցիկ զիւրք և 80-90 տուն բնակիչք՝ որոց նիւթական վիճակը մերձակայ զիւղերու բաղատամբ կրնայ բաւական լաւ համարուիլ: Գիւղիս մէջ կան հեռեւեալ նախնական տեղերն, յորոց ոմանք կիսակործան են, ոմանք տաղաւարիկ և ոմանք փոքր մատուռ. ա. Ս. Յովնանեկ, բ. Ս. Կարապետ, գ. Ս. Սանդուխտ, դ. Ս. Վարս, և յ. Կապույտ խաչ, գ. Ս. Զրեմարտ (չղթայաւոր): Գիւղացիք յատուկ սնտուկի մը մէջ կը պահեն բոսի մանուկ անուամբ ձեռագիր աւետարան մը, զոր երբեմն միայն քահանայն մատուցի նման դուրս հանելով կը կարգայ հիւանդաց վրայ: Տեղւոյս Հայք հայհոյութեանց բանաստեղծ են: Գործաւ Բերկրիի ամենէն շէն զիւղը լինելով 1878ին պատեւաբար մի տարին շատ վնաս կրեց: Շէյխ Ճէլախատի զօրքերը սոսկալի սծիքներ գործեցին և աւերակ դարձուցին զիւղս, բայց



յետոյ վերստին շէնցաւ: Գործուցելը երկ-  
րագործութեամբ կը զրազին և ընդհանրապէս  
քաջ և աշխատասէր են: Միացեալ Լ'նկե-  
րութիւնը այս տեղ ունի նախակրթարան մը:  
Գիւղիս եկեղեցին կը կոչուի Ս. Կիրակոս:  
Գործարի զինաց, քառորդ ժամ հետո բարձր  
բլրի վրայ կը տեսնուի ամայի և աւերակ  
բերդ մը՝ մեծամեծ քարերով շինուած:

ԳՈՐԾՈՒ ՎԱՆՔ. Տես ԹԵՂՈՒԳՈՐԾ (Ս.) Վ.:

ԳՈՐԾ. Տես ԳՈՐԾՈՂ:

ԳՈՐԾՑ. — Այս անուամբ աւերակ զիւղ կը  
յիշուի Այրարատայ Կողովիս գաւառի մէջ:

ԳՈՒԳԱՐՔ կամ ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ. —  
Հայաստանի ընդարձակագոյն նահանգներէն  
մին, որ կը աւարածուի գրեթէ Հայոց Մեծաց  
ամբողջ հիւսիսային կողմը: Սահմանքն են  
հիւսիսէն՝ Վրաստան, արեւելքէն՝ Ուտի, հա-  
րաւէն Այրարատ և արեւմուտքէն Տայք: Նա-  
հանգիս հիւսիսային սահմանները խիստ հին  
ժամանակներէ և հարաւային սահմաններէն  
ստաջ Վրացիք զրաւելով՝ իրենց սեփհակա-  
նած են երկար ժամանակ, այդ պատճա-  
ռաւ չեն յիշուիր նոյն խի Գուգարաց գա-  
ւառներու շարքի մէջ: — Նշանաւոր է նա-  
հանգս բնական վայրերովն ու տեսարաննե-  
րով, բարձր և խորաձոր լեռներով, մացա-  
ռախիտ անտառներով, և մանաւանդ բազ-  
մաթիւ լճերովն ու գետերով: Արեւմտեան  
կողմէն Տայոց լեռներէն կը բղիժ Արտա-  
նուշայ գետը՝ Ճորոխի հզօր օժանդակը, ու-  
րիշ զօրաւոր օժանդակ մ'ալ Աձարս-տո՝  
կ'ոտոգէ նահանգիս հիւսիսային արեւմտեան  
եզերքները, ստոնց մէջ կը բարձրանան Շաւ-  
շէթու եւները: Այս լեռներու արեւելեան  
կողմէն Կուր գետը ելնելով Տայոց Կոզ գա-  
ւառէն՝ Արտահանէն կ'անցնի, ուր կայ Թեկե-  
կոյ փոքր լճակը, և անոր արեւելեան կող-  
մը կը գտնուի, նահանգիս և թերեւս բոլոր  
Հայաստանի, ի բաց առեալ Ուրմիոյ, վա-  
նայ և Գեղամայ ծովակներն, մեծագոյն լիճն  
Չրբոր-կոյ կամ Պարակացիս և լաւ ևս  
Ծովակի Հիւսիսոյ կոչուածը, որուն հիւսի-  
սային կողմն է Կեօք-տաղ և վերջնոյս հիւ-  
սիսային կողմն ալ ուրիշ լճակ մը խոզապիւն  
անուամբ: Այս լճակի արեւմտակողմէն գէպ  
ի հիւսիս կը վազէ Կուր գետը, և յետոյ  
գէպի արեւմտահիւսիս զիմելով՝ կ'անցնի Ա-

խալցխայի արեւելեան կողմէն, և ապա գի-  
մելով արեւելահիւսիս՝ կը հասնի մինչև Գօ-  
րի բազաբի սահմանները, այնուհետև կը  
սկսի վար իջնալ գէպի հարաւային արեւելք,  
մինչև նահանգիս սահմանածայրը: Խոր այս  
լիճացից մէջ կ'ընդունի բազմաթիւ վտակ-  
ներ՝ ոչ այնչափ զօրաւոր, բայց ստորին  
կողմերը կ'ընդունի աջակողմէն երկու բա-  
ւական հզօր օժանդակներ Ալկիք և Խրամ  
կամ Քջիս գետ կոչուածները՝ հանդերձ  
ստոնց ոչ այնչափ փոքր օժանդակներով, ու-  
րոնք են Տարտագետ, Մաշավերի կամ Փորը  
Խրամ, Քրտուարի, Պօռչարս կամ Չորոյ-  
գետ: Հիւսիսոյ ծովակի արեւելեան կողմն է  
Արփա-կոյ լճակը՝ յորմէ սկիզբն կ'անու  
Արփա-չայ կամ Ախուրեան գետը, և անոր  
հիւսիսային կողմը Լօրբիչիչ լեռը և Տեա-  
րակ լեռները, որոնց հիւսիսակողմն ալ է  
Սաղաւ կամ Խաւչալը լիճը: Խանչալրի ա-  
րեւելեան հիւսիսային կողմն է Թուռմակը  
կամ Տառմակ լիճը և անոր արեւելեան հիւ-  
սիսը Փառաւակ կամ Թոփորակ մեծ լի-  
ճը: Նահանգիս լեռներէն յիշենք. Քառեակ,  
Տիտկորի, Լեակօղոս, Արարտի, Քաւարի,  
Շիւտար, Մորթոյս (Խոնաւ), Արոց, Պե-  
զպտալ, Բամբակի լերիքը, Չարտակը, Չա-  
տըր տաղ, Կեօք տաղ, և այլն: Լեռանց խոր  
հովիտները շատ անգամ կը պարպեն նա-  
հանգիս հին գաւառները, որոնք կը ձեւա-  
նան Փոր և Չոր մասնիկներով, ինչպէս Չո-  
րոփոր, Կողբոփոր, Մանդլեաց փոր, և այլն:  
— Աշխարհիս բերքերը առատ են և զանա-  
զան տեսակ, փայտ, ընդեղէնք, լեռանց մէջ  
կան պղնձոյ և այլ հանքաց բովեր. մեր հին  
աշխարհագիրը կը յիշէ Գուգարաց մէջ «Վե-  
նալուծ, զՀաճարածառ, զՄերկիւիլ, և զՏօ-  
սախ». անալուծ անուանածը որոշ չզիտենք  
ինչ է, բայց աւելի բոյս կը թուի և ոչ ընձ-  
ուղա կենդանին: Սարբան՝ պողպատ ծառե-  
րէ գատ, կը յիշէ նաև նահանգիս մէջ ձի-  
թենիներ:

Աւելի նշանաւոր է նահանգս քաղաքա-  
կան հանդամանքներով և զանազան զինա-  
կաց բաժանմունքներով: Ի հնումն սահմա-  
նակից և մերձաւոր լինելով այլ և այլ աղ-  
զաց և աշխարհաց, անոնց տիրապետութեան  
ենթակայ եղած են իւր մասերը: Գուգարք



անուան ստուգարանութեան վրայ ևս քա-  
նի մը խօսք բռնեք. նախ կը թուի Գովգ-  
արքէն ծագած, հաւանական է մեկնիչներէն  
ամանց բաժնի թէ Գովգ և Մազովգ մէկ ազգ  
էին և իրենց բնավայրն էր այս նահանգս,  
յսրմէ սփռած տարածած է իրենց սերունդը  
կովկասու կողմերը և ի Սիկովիա: Արեւե-  
լեայց մէջ շատ առասպելներ և արեւմտեայց  
մէջ շատ կարծիքներ կան Գովգայ և Մա-  
զովգայ վրայ: Մենք աւելորդ համարելով  
երկարել մեր խօսքը այդ կարծեաց վրայ,  
յայտնենք նաև հնթագրութիւն մը, թէ Գու-  
գարքի մեծ մասը ժառանգելով Գուշար՝ Շա-  
րայի գաւակներէն մին, այսինքն կանգարք  
լեռնէն մինչև Հնարակերտ ամրոցը, թերև  
իւր անունովը այդ երկիրն Գուշարք բաւե-  
լաւ տեղ, կոչուեր է Գուգարք: Նահանգիս  
անունն ծանօթ էր նաև Յունաց Ղոզարիևի  
կամ կոկարիևի Բաղարիւի կոչուած Սարա-  
բունէն և ըստ Լատինաց Gogarene.

Գուգարաց բուն երկիրը Հայկականց մի-  
ջոց կը թուի թէ կը կառավարուէր առան-  
ձին նախարարներով և թագաւորով և Ազեք-  
սանդր Մեծէն վերջ գրաւուած է ի Վրաց  
և յետոյ գարձեալ Հայոց այն թագաւորաց  
իշխանութեան տակ է անցած, որոնք թա-  
գաւորեցին Վաղարշակէն առաջ, Սիւրեկիաց-  
ուց ժամանակ: Վաղարշակ թագաւորը հոս  
մեծ բղելութիւն հաստատեց, որպէս զի  
Հայաստանի հիւսիսային կողմը կովկաս լե-  
ռանց մէջ բնակող աւազակող ազգերէն պահ-  
պանէ, ահա խորենացոյն խօսքերը. «Կար-  
գեաց կողմնակալ հիւսիսայ զմեծ և զհզօր  
ազգն, և նահապետութեանն անուն կարգայ՝  
Բղելիս Գուգարացոց»: Այս բղելիւր կ'իշ-  
խէր միանգամայն երբեմն սահմանակից Վրաց  
վրայ. այդ պատճառաւ գրոց մէջ կը հան-  
դիպինք տեղ տեղ կոչուած Բղելիս Վրաց: Կը  
թուի թէ երբեմն բուն Վրաց թագաւորն իսկ  
Հայոց թագաւորի գերիշխանութեան ներքոյ  
եղած լինի միանգամայն նահանգիս բղելիս,  
ինչպէս Տրդատայ ժամանակ: Այս բղելի-  
սներէն անտամը կը յիշէ խորենացին ոմն  
Աշուշա՝ բղելի Գուգարացոց: Առաջին ան-  
գամ Հայոց Արտաշէս թագաւորը Գուգա-  
րաց բղելիս իշխանութեան վրայ աւելցուց  
նաև Պանտոս ծովու կողմնակալութիւնն, ինչ-

պէս կը յայտնէ խորենացին. «Բայց (Ար-  
տաշէս) զգուսար իւր զԱրտաշամայ՝ տայ  
կին Միհրդատայ ուժեմն Վրաց բղելիս մե-  
ծի... և հաւատայ ամս զկողմնակալութիւն  
հիւսիսային լեռանցն և Պանտոս ծովու»: Նահանգիս  
գաւառներէն մէկ քանին, ինչ-  
պէս խորենացին կը գրէ, Վաղարշակ թա-  
գաւորը ժառանգեցոյց Շարայի որդիներէն  
Գուշարայ. «Իսկ Գուշարայ որ յորդուցն  
Շարայի ժառանգեաց զլեռնն Միմն որ է  
կանգարք, և զիկէս մասինն Զաւախաց, զԿողք,  
զԾոր, զԶոր, մինչև ցամուրն. Հնարակերտ»:



243. Աշուշա բղելիս:

Երկրորդ Արշակայ օրով, որիչներու հետ  
սպառամբելով նաև այս նահանգ՝ Վրաց  
ձեռքը անցաւ. բայց Պսպ թագաւորի քա-  
ջակորով սպարապետն Մուշեղ, Բուզանդայ  
(Ե. ժե) գրածի համեմատ, շուտով նորէն  
Հայոց իշխանութեան ներքոյ նուաճեց. «Ա-  
պա խաղայր սպարապետն Մուշեղ ի վերայ  
Վրաց արքային, և նեղէր զնա մեծապէս, և  
հարկանէր գերկիրն, և վանէր զամենայն աշ-  
խարհն Վրաց, և հանէր ընդ սուր զամե-  
նայն ազատս և զազգս նախարարացն... և  
զբղելին Գուգարաց՝ որ յառաջն ծառայ էր  
թագաւորին Հայոց և սպառամբեաց, կա-  
լեալ զլիստե... և թափէր զամենայն գա-  
ւառն, և առնոյր պատանուս, և զմնացեալն  
ի հարկի կացուցանէր, և զհին սահմանն  
որ յառաջ ունէր լեալ ընդ երկրին Հայոց  
և ընդ երկրին Վրաց, որ է ինքն մեծ գետն  
կուր, այնուհետև յինքն վտարեալ զառնայր  
անտի»: Բայց տարակոյս չկայ որ քիչ ժա-  
մանակ վերջը նահանգիս տիրացան Վրա-  
ցիք. յետոյ Բաղրատունիք ժամանակ մը



ախրեցին արեւելեան և հարաւային մասին: Վերջին զարուց մէջ Օսմանցիք ախրեցին արեւմտեան մասին, իսկ միւս մասն՝ Վրաց թագաւորի իշխանութեան ներքոյ էր: Ռուսք՝ Վրաստանի ախրելով, այս մասն ալ իրենց անցաւ. անցեալ զարու մէջ ախրեցին նաև Օսմանեանց իշխանութեան ներքոյ գտնուած մասին: — Այս նահանգէս շատ անգամ հիւսիսային բարբարոս ազգիւր անցան ասպատակելով զէպ ի Հայաստան, և շատ անգամներ ևս Հայոց բաջիրը անոնց ետեւէն յարձակելով բշեցին այս սահմանածայր աշխարհէս, շատ արիւն խոտնելով կուր գետոյն ջրերու հետ:

Մ. Խորենացին Գուգարաց մէջ ինն գաւառ կը գնէ, որոնք են. Ա. Կղարջք՝ նահանգին արեւմտեան հարաւային ծայրը, Կողի արեւմտեան և Թափուսկեարայ հիւսիսային կողմը. Բ. Արտախան՝ Կղարջայ արեւելեան հիւսիսային կողմը. Գ. Չաւախք՝ Արտախանայ արեւելեան հիւսիսային կողմը. Դ. Թուեղք՝ Չաւախքի արեւելեան հիւսիսային կողմը. Ե. Կանգարք՝ Թուեղքի հարաւային կողմը. Զ. Տաշիլ՝ Կանգարաց արեւելեան կողմը զէպ ի հարաւ. Է. Ծորոփոր՝ Տաշրաց արեւելեան հիւսիսային կողմը. Ը. Չորոփոր՝ Ծորոփորի հարաւային և արեւելեան կողմը. Թ. Կողբոփոր՝ Չորոփորի հարաւ արեւելեան կողմը: Բայց հին օրինակի մը մէջ Զաւեշ անուամբ գաւառ մը ևս կը յիշուի, և է ըստ մեզ Ժ. Շաւշէտ: Ասոնցմէ զատ կան նաև երեք գաւառներ, զորս Վրացիք ի հնումն առած են ի Հայոց, ասոնք են՝ ԺԱ. Մանգլիացիոր՝ բոլոր գաւառներու հիւսիսային կողմը, Տփլիս և Գօրի բազաբաց մէջ տեղ. ԺԲ. Բողնոփոր՝ Մանգլեաց հարաւային և Ծորոփորոյ հիւսիսային կողմը. ԺԳ. Պարուար՝ Մանգլեաց և Բողնոփորի մէջ տեղ, Տփլիսեաց արեւմտակողմը: Ասոնց վրայ կարելի է յաւելուլ նաև ԺԴ. Կայէն գաւառը՝ որ սահմանակից է Ուախի և կը գտնուի, Չորոփորի, Կողբոփորի և Ազատեւ գետոյն մէջ տեղ, մանաւանդ որ Գուգարաց մասն ու գաւառ ևս կոչուած է: Այս բաժանմունքները, ըստ կարի սահմանները նշանակելով մենք զրինք հայկական աշխարհագրութեան համեմատ, բայց Վրաց

թագաւորութեան օրով նահանգս ունեցեր է ուրիշ գտնազան բաժանմունքներ: Նահանգին զուտաց ինչպէս նաև բազաբաց և վանքերու նկարագիրներն ըրած ենք իրենց կարգին:

ԳՈՒԶԱԼ-ԳԱՐԱՅ կամ ԿԻԶԼԷՍԷՐԷ. — Գիւղ Տիգրանակերտի Ալիւման գաւառի, համանուն գեղեցիկ ձորի մը հիւսիսային կողմը: 50 տուն թըրքախօս Հայք կան: Տներն հուրաշէն են, օդն՝ առողջ և ջուրը՝ միջակ:

ԳՈՒԶԱՅ. — Վիճակ Կարնոյ, ըստ Օսմանեան հին աշխարհագրական բաժանման:

ԳՈՒԶԻՉԱՆ կամ ԳՐԶՈՒՉԱՆ. — Կարնոյ կուսակալութեան ներքոյ, լեռնային և անստառախիտ վիճակ, ըստ հին բաժանման, բնակիչք բուրդեր են Բեւեան տոհմէն:

ԳՈՒԶՈՒ ԳԱՅԱ. — Գիւղ Այրարատայ Բաւսն գաւառի:

ԳՈՒԶՈՒՎՃՈՒՃ. — Հայաբնակ զիւղ Չարսանճագի: Ունի 30 տուն և Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը: Բնակիչք հուրապրծ են:

ԳՈՒԶՈՒԿՈՒՍԷՆ. — Գիւղ Այրարատայ Արտագածան գաւառի, Սարտարապատու վիճակի մէջ: Ունի 80 տուն հայ բնակիչ և Ս. Գեորգ անուամբ եկեղեցի մը:

ԳՈՒԹԱՆԻ. — Հանգրուան Այրարատայ Ռեք և Արած գաւառի մէջ:

ԳՈՒԹԱՆ ԼԵԱՌՆ կամ ՔԵՅԹԱՆՏԱՂԻ. — Լեւ Այրարատայ Կոտայք գաւառի հիւսիսային սահմանածայրը:

ԳՈՒԹԳՈՒՄ. Տես ԿՈՎԱՍԿԱՆ:

ԳՈՒԹՂՈՒ-ԳՐՇԷՍԿ. Տես ՂՈՒԹՂԻ:

ԳՈՒԹԵՐ, ԳՈՒԹԻ կամ ԳՈՒԹԻ. ԳՂ. KUTY. — Երբեմն բաղմահայ բաղաբ Լեհաստանի, և այժմ փոքրիկ գեղեցիկազիր և զուարճալի բաղաբ Կալիցիոյ (Աւստրիա-Հունգարիա) արեւելեան անկիւնը: Մօտէն կանցնի Զէրեմոշ գետը, որ Լեհաստանը Պուքովի նայէն կը բաժնէ: Տեղույս զիրքը անկիւնաձև լինելուն՝ Լեհաց լեզուով կոչուած է Գուքի՝ այսինքն անկիւն: Այս երկիրը նախ անաստապայք էր. յետոյ Ռուսմանիայէն 20 տուն Հայք եկան հոս, Օղոստոս Բ Լեհաց թագաւորի հրաւիրելովը, որ և յաատի արտօնութեանց պարգեւազիր տուաւ իրենց 1715 տարւոյ յուլիս 18ին: Այնուհետև սկսան



Հայք կառուցանել քաղաքս, և առաջին հիմնարկողն եղաւ Շատողէյ անուն հայ վաճառականք, որ եկաւ Մոլտավիայէն: Հ. Մինաս Բժշկեանի քաղաքին այցելած միջոց, քաղաքս ունէր 3000 բնակիչ, զանազան ազգերէ. իսկ այժմ ունի մօտ 7000 բնակիչ: Տեղւոյս Հայք կաթնուղիկութիւնք բնութեամբ են և այժմ կը հաշուին 1200 հազիբ: Ի հնումն խիստ անուանի էին հայ վաճառականները, որոց սմանք զիւրերը կը բնակէին և շատերը խաղախորդ էին, զի բնաիր է այս կողմանց կաշին Լեհաց ակութեան միջոց Հայք շատ արտօնութիւններ ունէին, առանձին գատարան և գատաւորներ: Քաղաքին մէջ երբ Հրեայք սկսան բազմանալ, Հայոց ձեռքէն մատամբ մը վաճառականութիւնք գնաց և սկսան ազբասանալ: Հայք գրեթէ առհասարակ վաճառականներ են և միանգամայն ձեռողէտք. ինչպէս կ'ըսէ վերջին գրող մը. կը ջանան միջին տեղի մը գրաւել ի մէջ առանին և մեծալաճառ գործոց և միանգամայն բլլալ միջնորդք, վաճառողք և իրենց սեփական ճարտարագործութեանց փոխադրողք: Արդի ժամանակները նպաստաւոր չեն Հայոց, և զարմանալու չէ՛ որ Գոթիի գործերն խեղճ կերպարանք մ'առին՝ մանաւանդ 1887էն ի վեր, յորում ուսմանական սահմանաց փախուելովն՝ արջառոց վաճառականութիւնն ևս Հայոց ձեռքէն ելաւ, որք հառաչանօք կը խօսին անցեալ դարու ճարպիկէն մտերու հին լաւ ժամանակաց վրայ: Տեղւոյս Հրեայք երբեմն կը խօսէին հայերէն:

Հայք ունէին մեծ և փաստաւոր եկեղեցի մը, հիմնուած 1756ին Լեհաց Օգոստոս Գլխաւորի ժամանակ և կոմսուհի Պատսկիի նախարարութեամբ. 1797ին Լեմպերկի հայ արքեպիսկոպոս Յակոբ Թումանովիչի ձեռքով օծուած է՝ Ս. Աստուածածեի Անարատ յղութեան անուամբ: Եկեղեցւոյն մէկ կողմը բարաշէն վանատուն մը կայ՝ մեծ պարտիզով շրջապատեալ: Հայք ունին զպրոց մը, ուր տղայք հայերէն հասարակ բնութեցումն կ'աւտանին: Հին եկեղեցին 1870ին այրեցաւ, բայց 1875ին նորէն շինուեցաւ: Քաղաքս ունի նաև հայկական մատուռ մը գերեզմանատան մէջ, զոր կանգնած է իւր

ծախքով Հոփսիմէ Ռամաշիան. ուրիշ մատուռ մ'ալ կայ Պանէլով զիւրի մէջ՝ Աննա Պողոտովիչի արգեամբ կառուցուած: Քաղաքին տեսքն ու զիրքը շատ գեղեցիկ է՝ անասուններով ու այգիներով շրջապատեալ, արները շինուած են պարաւզներու մէջ իրարմէ հեռու: Նշանաւոր են տեղւոյս Հայք իրենց հին ստվորութիւնները և արարողութիւնները անխփփս պահելու մէջ: — Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, 127-128: Բազմալեզ, ԾՁ. 421-422, 520-523: Եւ այլն:

ԳՈՒԻՐԳՈՒԿՆԵԹ. — Վախուշթէն յիշուած գիւղ, Գուգարաց Թոնղը գաւառի մէջ:

ԳՈՒՂԱ. — Գիւղաքաղաք Չմիւնիոյ կուսակալութեան Սարալեան գաւառի մէջ: Տեղւոյս հայ բնակիչք խիստ սակաւթիւ են: Աստ կը շինուին սքանչելի գորգեր, կանայք և օրիորդք իրենց տան գրան առջև նստած՝ ասեղնադործութեամբ կը պարապին: Բնակչաց բնդհանուր թիւն կը հասնի 6000ի, մեծ մասը մահմետական, մուսուլման, յոյն: Կան գեղեցիկ ու հոյակապ շէնքեր, մզկիթներ, եկեղեցիներ և կրթարաններ:

ԳՈՒՂԱԳՈՐԶ. — Ամայի գիւղ Այրարատայ Մագազ Ռստան գաւառի մէջ:

ԳՈՒՂԱԹԵՒՆՏԻ. — Գիւղ Միւնեաց Աղաւէճք գաւառի Աղարու ձորահովան մէջ:

ԳՈՒՂԵԼԻ. Տես ԳՈՒՂԱԼԻ:

ԳՈՒՂԵՄԵՐԱՆ. — Գիւղ Տիգրանակերտի Հազրոյ գաւառի. 11 տուն հայ կայ:

ԳՈՒՂԵՇԿԵՐ. Տես ԿԻՂԵՇԿԵՐ:

ԳՈՒՂԵՃԱՆ. Տես ԳՈՒՂԵՃԱՆ:

ԳՈՒՂԵՊԵԿ-ՏԵՁԷ. — Փոքրիկ գիւղ Հայոց, Միւնեաց Նախճաւան գաւառի մէջ, բնակիչք 36 տուն են:

ԳՈՒՂՈՒՏԻ. — Գիւղ Այրարատայ Նիդ գաւառի, հայերէն անունն է Չորոյրերան:

ԳՈՒՂՁԱԼԱՐ. — Գիւղ Պաֆրայի, յորում 80-90 հայ կայ:

ԳՈՒԿԱԿԱՆ. Տես ԲԱՂԲ:

ԳՈՒԿԱՆ. — Վասպուրականի հին գաւառներէն մին:

ԳՈՒԿԱՆՍ. — Գիւղս կը յիշէ Ղեւոնդ Պատմիչ (Գլ. 2) հետեւեալ տողից մէջ. «Չայնու ժամանակաւ գարձեալ ալ հէն գոյր ի վերայ գօրան՝ որ ի կողմանս Վասպուրաւ»



կանի աշխարհին, և եկեալ յանդիմանեալ լինէին ի դաւանն Ռշտունեաց՝ ի գիւղն ուրում Գուկանն կոչեն, անդ յանդիման լինէին միմեանց»:

ԳՈՒԿԱՌԻՆՃ. Տես ՍՈՒԲ:

ԳՈՒՀԱՆՏԱՊ. Տես ԿԻՒԼՀԱՆԳԱՊ:

ԳՈՒՂԷՆՅ. — Այնպի գիւղ Մամրատունքի, ունի Ս. Սարգիս անուամբ եկեղեցի մը:

ԳՈՒՄԲԵԹ կամ ԳՄԲԵԹ. — Գիւղ Բաղուի, քաղաքէն 5 ժամու ճանապարհ հեռու, հիւսիսային կողմը: Բնակիչք 30 տուն հայ են և 5-4 տուն մահմեական: Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը և զպրոց. կը պարապին հողագործութեամբ: Տես նաև բառարանին 500 էջը ԳԻՒՄԲԵԹ անունը, որ սխալմամբ իւր կարգէն գուրս գրուած է:

ԳՈՒՄԲԵԹԻՈՐ կամ ԳՈՒՄԲԵԹՓՈՐ. — Կիւլիկիոյ մէջ աղբւր ջերմ ջրոյ, Սոսյ հարաւային արեւմտեան կողմը, որուն այժմ թուրքք իրիճա անունը կու տան:

ԳՈՒՄ ԳԱԼԷ (Ասգարեւոյ). — Գաշտային Կիլիկիոյ մէջ, լեռան մը լանջին վրայ, մեծ բերդ մը, այժմ աւերակ դարձած:

ԳՈՒՄԳՈՒՅՈՒ. — Հայաբնակ գիւղ Եօզղաւի, 30 տուն բնակչօք, որք հողագործ են: Ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը և վարժարան:

ԳՈՒՄԼՈՒՃԱ կամ ՂՈՒՄԼՈՒՃԱ. — Գիւղ Այրարատայ Ծաղկոսն գաւառի, 1 ժամ Մալ-Խոտէ գիւղէն հեռու: Ունի 40 տուն քուրդ բնակիչ:

ԳՈՒՄԼՈՒ ՊՈՒՃԱԳ կամ ՂՈՒՄԼԻ ԲՈՒՃԱԽ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Ծաղկոսն գաւառի մէջ, 1/2 ժամ Մուրատ գեաւէն հեռու: Ունի 30 տուն բնակիչ:

ԳՈՒՄ ՊՈՒԼԱԳ. — Գիւղ Այրարատայ ճակատք գաւառի մէջ:

ԳՈՒՄՐՈՒԳ ԳԱՅԱ. — Գիւղ Այրարատայ Բասեն (Ստորին) գաւառի մէջ:

ԳՈՒՅԼԱՍԱՐ կամ ԳԱՅԼԱՋՕՐ. — Այս անուամբ Հիև և Նոր կամ Վերիև և Ստորիև կրկին գիւղեր կան Այրարատայ Ոստան գաւառի մէջ: Վերին Գուլլասար ունի 28 տուն հայ և 3 տուն թաթար բնակիչ. իսկ Ստորին Գուլլասար՝ 21 տուն հայ և 91 տուն թաթար բնակիչ: Վերջինս առաջնոյն արեւ-

մըտակողմը կը գտնուի երկու մղոն հեռու, գաշտերու և այգիներու մէջ սեղ:

ԳՈՒՅՈՒԼՈՒ. — Գիւղաւանդի Այրարատայ կոտայք գաւառի մէջ:

ԳՈՒՅՈՒ ՄԱՂԱՐԱ. Տես ԿԻՒԼԷԲ ՄԱՂԱՐԱ:

ԳՈՒՅՈՒ ՏԱՂ. — Լեռ Սիւնեաց աշխարհի, Վայոց ձոր գաւառի հիւսիսային մասին մէջ:

ԳՈՒՆԿՈՒՐ. — Լեռ Սիւնեաց Սոգք գաւառի մէջ:

ԳՈՒՇ ԱՍՍ (Scalanova). — Զմիւռնիոյ հարաւային կողմը ծովախորշի մը առջեւ շինուած քաղաք մ'է: Զմիւռնիայէն մինչև Այսուլուք 77 հազարամետր երկաթուղուով երթալէ վերջ՝ անկէ ձիով կամ կառքով երկուք ու կէս ժամու ճամբայ է մինչև Գուշ Ատա: Քաղաքին անունը, տեղը շտեմնողի մը կարծել կու տայ թէ կղզի մ'է, սակայն այնպէս չէ, անիբը շինուած են ծովեզերեաց բլրի մը կողքին վրայ, իսկ իւր անունն աւնուած է՝ քաղաքին առջեւը քանի մը մետր հեռու՝ ծովու մէջ բարձրացած կղզեակէն, որ բնակարան է նապաստակաց: Տեղւոյս անսարանը շատ զուարճալի է, օդը լաւ, ջուրը թեթեւ. երեք կողմերը կը պատեն այգեւաններ:

Ժամանակ մը բուսական վաճառաշահ նաւահանդիստ էր. Այսուլուի և Սէօքէի կողմերուն բերքերը ուղտերով ու ձիերով կ'իջնային հոս, և ասկից նաւերով ուրիշ տեղեր կը տարուէին. սակայն Զմիւռնիոյ-Այսուլուի երկաթուղոյն շինութեամբը՝ տեղւոյս վաճառականութիւնն կորսնցուցած է իւր նախկին փայլը, և այս կողմի բերքերն այժմ ուղղակի կ'իջնան Զմիւռնիա: Քաղաքս Նոր Եփեսոսս կ'անուանի. իւր մէկ կողմը կը տեսնուին Հին պարիսպներ և աւերակներ: Գուշ Ատայի կառավարութիւնն է Գոյլաւ գամըղգ. ունի մօտ 4000 բնակիչ, մեծաւ մասամբ Մահմեականք, որք ունին 5 մզկիթ: Յոյնք կը համարուին 600 հոգի, ունին և կեղեցի մը և երկու զպրոց և բաւական յաւաճազէմ են:

Հայք երկու վար առաջ գաղթած եկած են Գուշ-Ատա, եկեղեցւոյն պարաւէզի մէջ տակաւին կը տեսնուին երկու տապանաքարեր նոյն ժամանակէն: Յանցելումն աւելի բազ-



մաթիւ եղած են, իսկ յետոյ հեազհեաէ նուագելով, այժմ հազիւ 30 տուն մնացած են: Եկեղեցին Ս. Աստուածածին՝ փայտաշէն է և փոքրիկ, իւր կառուցման թուակա- նը յայտնող արձանագրութիւն կամ յիշա- սակարան չունի: Պարտէզին մէկ կողմը կառուցուած է գանգակատան աշտարակը՝ քարաշէն ու ցած, որ տեղւոյն սրբալայր լինելուն մի միայն նշանը կրնայ համա- րուիլ Եկեղեցին արտաբուսա չունի տեսք և շքեղութիւն. ներսն աջ ու ձախ կա- խուած են մոճաթի վրայ նկարուած պատ- կերներ, որոնց յիշատակարաններն անըն- թեանի գարձւած են, միայն Ս. Յարութեան պատկերի մը եզերքը կը կարգացուի. «Յիշատակե՛հեր Ժողովորդին Ղուշատառու և և կեղեցուն 1831. Յեկար»: Եկեղեցւոյն պար- տէզին մէկ կողմն կը գտնուի Ս. Սահակեան կոչուած երկսեռ վարժարանին փոքրիկ շէն- քը, որ կը յաճախեն 10-15 աշակերտ- ներ: Եկեղեցին շուրհիւ հին բարերարաց ու- նի բաւական կալուածք, որոնց եկամտովն կը հոգացուին քահանային և վարժապե- տին ամսականները: — Տասը տարի առաջ՝ Հայք իրենց ննջեցեալները կը թաղէին և կեղեցւոյ պարտէզին մէջ, սակայն այժմ քա- ղաքին հարաւային կողմը առանձին տեղ մը յատկացուած է իւր գերեզմանոց և հոն կը թաղուին մեռելք: Հին գերեզմանաց վրայ կան արձանագրութիւններ: — Քաղաքի մօտ է Ս. Յովհաննու աւետարանչի գերեզմանա- տեղին՝ բոլորչի լերան մը մէկ կողմն վրայ: Յարութեան սօնի երրորդ կիւրակէն Հայք գունդագունդ կը զիմեն անգը. կը կանգնուի ընդարձակ վրան մը իւր եկեղեցի. կը կա- տարուին ժամերգութիւնք և պատարագ կը մատուցուի. շուրջը կը զարնեն բազմաթիւ վրաններ ցանուցիլ՝ ուխտաւորաց համար, որք կու գան Զմիւսնիոյ նահանգի գանա- զան կողմերէն: Ռիտասաղիէս քիչ հետո կ'երևին հոսն Եփեսոսի շրջապատի մնա- ցորդք, և այլ աւերակներ՝ որք կը կարծուին թէ թատրոնի, կրկէսի, վաճառանոցի, բան- տից և այլ շէնքերու մնացորդներ են. քա- րաշէն կամ աղիտաշէն կամարք, կիսափուլ գմբէթք, մարմարեայ սիւնք, պատուանդանք, ծաղկէնկար խոյակք, գերեզմանաքարեր, և

այլն: — Հայք ի Զմիւսնիս և ի շրջակայս, Բ. 110-115: Էւ այլն:

ԳՈՒՇ ԹԵՄԻՐ. — Կիլիկիոյ մէջ, Տարսոսի վիճակներէն մին:

ԳՈՒՇ ԹԵՓԷՍԻ. — Լեւ Ալարատայ Շի- րակ գաւառի:

ԳՈՒՇԵՒԱՐ. — Գիւղ Սիւնեաց Աղահէճք գաւառի մէջ:

ԳՈՒՇԵՒԱ. — Համէշի գիւղերէն մին:

ԳՈՒՇԿՈՒՐԱԳԱՋ կամ ԳՈՒՇԿՈՒՐԱԹԱՂ. — Լեւ Սիւնեաց Կոլսական գաւառի:

ԳՈՒՇՃԻ կամ ՂՈՒՇՃԻ. — Հայաբնակ գիւղ Ծաղկայի (Պօռչալու), Խրամ գետոյն վրայ, 40 անէ բաղկացեալ: Գիւղս ունի քարաշէն և սրբասաշ եկեղեցի, զոր իրենց անձնա- կան ծախքով կառուցած են բնիկ գիւղացի Օհան և Յովակիմ Մեհարբեանք, 1866ին. շուրջը գեղեցիկ պարիսպ ունի, ծախք եղած է մինչև 10000 բուրլի: 1872ին վերոյիշ- շեալ բարերար եղբարք 12000 բուրլի ծախք ընելով Խրամ գետոյն վրայ քարաշէն կա- մուրջ մը շինել սուին, որ կը ծառայէ բու- վանդակ Ծաղկայի և Ախալքալաք գաւառի: Գիւղիս Մեհարբեանց Տ. Յովհաննէս քա- հանայի սան մէջ կը պահուի խաչածեւ մատ- նատուփ մը՝ որ ունի մագաղաթի վրայ Ռճ]Ս (= 1691) թուին գրուած վիպական, և վաւերացեալ է Նահապետ կաթողիկոսի կնքով: Այլ մասնատուփի մէջ կան Ս. Յա- կոբայ, Ս. Մինասայ և Ս. Պանդալէոն բժշկի մատուցները: — Այս անուամբ ուրիշ շատ գիւղեր կան զանազան կողմեր, որք մեծաւ մասամբ այլազգարնակ են: Տես ՂՈՒՇՃԻ և ԿԵՉՈՒՏ:

ԳՈՒՇՃԻՊԵՒԻԱՆ. — Լեւ Սիւնեաց, Սեւա- նայ և Վայոց ձորի մէջ տեղ:

ԳՈՒՇՃԻ ՏԷՒԼՍԻ. — Փոքր գիւղ, գետակ և ձորակ Սիւնեաց Գեղարբունեաց գաւառի, Արեգունի վիճակի մէջ:

ԳՈՒՇՆԱ կամ ԳՈՒՇՆԱ. — Հայաբնակ գիւղ Արարկերի՝ 5-6 ժամու ճանապարհ հետո: Բնակիչք հոգադործ են, ունին Ս. Աս- տուածածին անուամբ եկեղեցի մը: Գիւղիս մօտ կը գտնուի Աստուածամայր անուամբ վանք մը:

ԳՈՒՇՎՐԱՆՑ. Տես ԲԱՒԲ:

ԳՈՒՌՆԻՃ. — Կը յիշէ Ինճիճեան գիւղս



Այրարատայ Բասեն գաւառի հովտի մը մէջ: Գիւղիս մօտ է Գաւառին՝ չորրը՝ որուն հետ միա- նախով ուրիշ վտակներ ևս կը գարձնէ շատ ջրադաշններ և յետոյ կը խոնոտի Հասան- գաղալու ջրոյն հետ:

ԳՈՒՍ կամ ԳՈՒԶ. — Այսպէս կ'անուանէ Քրդաց պատմիչը, Այրարատայ Բասեն գա- ւառի և Կաղզուանայ մէջ տեղ բարձրացող լեռները:

ԳՈՒՌՈՒՊԱՇ. Տես ԿՈՒՌՈՒՊԱՇ:

ԳՈՒՍՆԵՆՅ. Տես ԿԻՒՍՆԵՆՅ:

ԳՈՒՍԱՆԻ. — Գիւղ Ռամանիոյ Գէղուջ գաւառի: 15 տուն հայ կայ. շունին ոչ և կեղեցի և ոչ վարժարան:

ԳՈՒՍԵՆԻ. — Հին գիւղ Սիւնեաց վայոյ ձոր գաւառի մէջ: Կայ նաև նոյն անուամբ ձորահովիտ և գետակ:

ԳՈՒՏԷՆ կամ ԿԷՕՏԷՆ. — Գիւղ քարային կիլիկիոյ մէջ, համանուն վտակի մօտ:

ԳՈՒՏՐՈՅ. — Փոքրիկ և սակաւարնակ Հայոց գիւղ Շուլավէրի մօտ, Պոռչալուի գա- ւառի մէջ:

ԳՈՒՐԱԳ ՉԱՅ. Տես ԿՈՒՐԱԿ:

ԳՈՒՐԱՓԱՆ. — Հանդրուան՝ Այրարատայ կողմից գաւառի մէջ:

ԳՈՒՐԱԿԷՆ ԲԱՐՁՐ. — Այրում գաւառի մէջ, Ծարայ հիւսիսային կողմը այս անուամբ լեռ- ներ կը բարձրանան:

ԳՈՒՐԳՈՒԹԱ. — Կը յիշուի Պարուար (Վրա- հայը) գաւառի մէջ:

ԳՈՒՐԿԱ կամ ԳԻՒՐԿԱ. — Յետամնաց գիւղ Աղուանից Գարգման գաւառի մէջ: Ու- նի 30 տուն հայ բնակիչներ, որոնք շատ սարիներէ ի վեր սկսած են կեղեցի շինել և ցորոջ շին կարողացած աւարտել:

ԳՈՒՐԻՉԱՅ. — Վիճակ Կամախ գաւառի, որ հին ժամանակները, ըստ Օսմանեան աշ- խարհագրական բաժանման, Կարնոյ կուսա- կալութեան գաւառներէն մին էր: Գոռքիւայ այսինքն Յամաք գետ կոչուեցաւ, վասն զի իւր միջէն վտակ մը կ'անցնի, որ Եփրա- տայ մօտեցած պահուն, ճ ժամ հետաւ- րութենէ սկսեալ կը սուզանի երկրի խճերու և աւաղներու տակ և կը ցամքի: Բայց գար- նան ժամանակ, երբ կ'առատանայ, ստանց ցամքելու կը խոնոտի Եփրատայ հետ: Գոռ- քիւայ գետոյն մօտ կայ լեռ մը, յորում կը

գտնուի թափանցիկ և լուսանցոյց մարմա- րին, զոր կողմանցս մեծամեծները կը գործ- ածեն իրենց պատուհանաց իրիւ ապակի: Եր- կիրը այնչափ արդաւանդ չէ: — Ն. Հայաս- տան, 105:

ԳՈՒՐՈՍԹԵՒԻ. — Վախուշմէն յիշուած գիւղ, Իրակաձորի մէջ:

ԳՈՒՐԿ. — Գիւղ Պարսկաստանի, Նոր Զու- գայու Պուրվարի գաւառակի մէջ: Ունի 14 տուն հայ, որը շունին կեղեցի և վարժարան:

ԳՈՒՐՀԱՄ. Տես ԳՐՀԱՄ:

ԳՈՒՐԱՍԵՆ կամ ՂՕՐԱՆ. — Լեռ Այրա- րատայ Մասեաց ոսն գաւառի:

ԳՈՒՐՇՈՒՆԵՂ. — Հայարնակ գիւղ Ճանիկու տաջնորդական վիճակի և Զարչամալայ գա- ւառակի մէջ: Ունի 400 տուն բնակիչ և չորս կեղեցի՝ Ս. Գեորգ, Ս. Աստուածածին, Ս. Լուսաւորիչ և Ս. Շողակար անուններով: Ունի նաև Ս. Գէորգեան անուամբ վարժա- րան մը 60 աշակերտներով:

ԳՈՒՐՈՒ. — Ամայի գիւղ Սիւնեաց Գե- ղարբունի գաւառի մէջ:

ԳՈՒՐՈՒ ԱՐԱԶ. Տես ԱՐՄԱԿԻՐ:

ԳՈՒՐՈՒ ԽԱՐԱՊԱ. — Աւերակ վայր Սիւ- նեաց Գեղարբունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի եզերքը:

ԳՈՒՐՈՒԿԷՕԻ. — Բարձր Հայոց այժմեան Երզնկայ գաւառի մէջ:

ԳՈՒՐՈՒՄՍՈՒՂՈՒ. — Գիւղ Գանձակու նա- հանցի Գաղտիս գաւառի մէջ: Ունի 72 տուն հայ բնակիչ:

ԳՈՒՐՈՒ ՉԱՅ. — Գետակ Մալաթիոյ: Տես ԿՈՒՐԱԿ:

ԳՈՒՐՈՒՊՕՂԱԶ. — Լեռ Այրարատայ, Նիզ գաւառի արեւմտեան սահմանածայրը. բարձր է 8625 ոտք:

ԳՈՒՐՈՒՉՈՒԿ. — Գիւղ Սյրարատայ Բա- սեն գաւառի մէջ:

ԳՈՒՐՊԱԳԱՂԷ. — Այս անուամբ վերին և Ստորին կրկին ամայի գիւղեր կան Այրա- րատայ Մաղազ Ոստան գաւառի մէջ:

ԳՈՒՐՊԱՆ ԹԷՓԷ կամ ԹՕՓՐԱԳ ԳԱՂԷ. — Թուի ամայի գիւղատեղի Այրարատայ Ոս- տան գաւառի, երկու Գուին գիւղերու մէջ տեղ:

ԳՈՒՐՊԷԹ ՄԷՉՐԷՍԻ. — Գիւղ Խարբերդի, 6 տուն հայ և 49 տուն մահմետական բնակ-



չօք: Հայք անին Ս. Կիրակոս անուամբ և կեղեցի մը:

ԳՈՒՐՏ ԳԱԼԷՍԻ (Գալլաքերդ). — Գաշաալին Կիլիկիոյ մէջ կը յիշուի այս անուամբ բերդ: Թէև չկայ բուն բերդ, այլ մեծ և աւմուր իջեւան մը կարուսանաց՝ որ բաւական է մինչև 2000 հոգի պատսպարելու իւր մէջ, հանդերձ իրենց զբառաներով: Կրտսի թէ շինուած է Սուլդան Մուրաա Գէն: Այժմ լքեալ վիճակի մէջ կը գտնուի:

ԳՈՒՐՏ ԳՈՒԼԱԿ (Գալլաքիսէ). — Սիւնեայ վայրց ձոր գաւառի մէջ այս անուամբ բուրշի լեռնաբլուր մը կայ: Տես ԱՄԱՆ:

ԳՈՒՐՏՈՒ ԿՈՒՐՏ ԳՅՈՅ. — Գիւղ ծովային Կիլիկիոյ, Աղեքսանդրեկի մօտ:

ԳՈՒՐՏՈՒ ԳՈՒԼԻ. — Գեա Այրարատայ Կոզովիա գաւառի մէջ:

ԳՈՒՐՏՈՒ-ՉԱՅ. — վտակ Այրարատայ Կոզովիա գաւառի, օժանդակ Առուն գետոյն:

ԳՈՒՐՏՊԷԼԷՆ, ԳՈՒՐՏՊԷԼԷՆ ԿՈՒՐՏՊԷԼԷՆ. — Գիւղ Կէյրէ գաւառակի, Նիկոմիդիոյ առաջնորդութեան և կառավարութեան ներքոյ. Գրնճըլար (տե՛ս) զիւղէն 3-4 ժամ հեռու, յորմէ ձորակով մը բաժնուած է: Ունի 750 տուն Հայրց, մօտ 3500 բնակչօք: Եկեղեցին Ս. Աստուածածին՝ մեծ է, հոյակապ և խաչազարդ զմբխով: Կայ Ներսիսեան-Հոփսիսիան անուամբ երկսեռ վարժարան՝ 400 աշակերտներով: Բնակիչք՝ արհեսաւար և շերամագործ են և բաւական հարուստ վիճակի մէջ կը գտնուին: 1864ին զիւղիս բնակիչներէն Շուշան անուն կին մը նշանուար էր. սա մերձակայ Գրնճըլար զիւղի մէջ կ'ամուսնանայ 30 տարեկան հասակին մէջ, 7 մանչ ու աղջիկ որդւոց տէր կը լինի. անոնցմէ 62 թոս կ'ունենայ՝ և ասոնցմէ ալ 42 թոսնորդի. 98 տարեկան մեներ է. և առուօտ ու երեկոյ ներկայ կը գտնուի եղբր ժամերգութեանց, և լաւ կը տեսնէր, կը կարէր, և վերաբոյժ լինելով՝ մինչև 3 ժամու տեղ ստքով կ'երթայ եղբր գառամեալ հասակին մէջ: — 1889 թուին ի հասոյթ զիւղիս վարժարանին, 110 լիւրայի գնուեցաւ Կէյրէի Ագհիսար զիւղի մէջ բազմիք մը, որ բոլորովին քարակիր է, և հին սճով հաստատուն հիմանց վրայ և կամարօք շինուած: ԳՈՒՐՏ ԳՅՈՅ. Տես ԳՈՒՐՏՈՒ:

ԳՈՒՐՏԻ. Տես ԿՈՒՐՏԻ:

ԳՈՒԶԱՐԱԿ. Տես ԿՈՒԶԱՐԱԿ:

ԳՈՒՆԵՐ. — Երբեմն հշակաւոր վանք լեռնային Կիլիկիոյ Մոշեւանի գաւառի մէջ, Բարձրբերդ զգեկի մօտ. մերթ Ահարատ կոչուած է և մերթ Սուրբ աշխատ: Այժմ վանացս բուն զիրբը անյայտ է, բայց իւր հին մեծութեան և համարաւոյն վկայութիւն կրնայ համարուիլ վարդան աշխարհադրին այն խօսքերը՝ որով Կիլիկիոյ չորս հոշակաւոր վանքերու հեա կը յիշէ (« և զԳոնեայ սուրբ ուխտն »): Այս վանքս թեմ էր Յովհաննուարքայեղբօր, որ պայծառացուցած և հոշակաւոր զարձուցած է: Աստ գրուած են ոչ սակաւ եկեղեցական զբքեր: 1263 թուին նոյն Յովհաննէսէ զբուած աւետարանի մը յիշատակարանն է հեանեալը. « Ի Սուրբ անապատն Գոնեայ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ և աստուածակիր Նշահիկե Կալսեկի կոչեցեալ, և Սյրայե Ախաւի մօր մեր »: Վանքէս առ մեզ հասած բոլոր յիշատակները այս Յովհաննէսին են, կամ իւր վրայ կը խօսին. միայն գաւազանադրի մը մէջ կը յիշուի Միխիթար կաթողիկոսը, որ առաջ եղած է Գոնեայ եպիսկոպոս: — Սխաւան, 144-145 և 533-534:

ԳՏԱՅ. Տես ԳՏԻԶ:

ԳՏԱՆՈՒ. Տես ԱՐԵՒԻՔ:

ԳՏԱՍԱ. Տես ՀԱՐԱՆԻ:

ԳՏԻԶ, ԳՏԱՅ ԿՈՒՐՏՊԷԼԷՆ ԿՈՒՐՏՊԷԼԷՆ. — Աղուանից Գիւղակ գաւառի մէջ, թաղար աւանի հանդէպ, Գուրու շայ գետակի աջ կողմի գեղեցկասեռ և հիւսիսահայեաց սարահարթակի մը վրայ կը գտնուի վանքս: Շինուած է համակ սրբատաշ տորսնագոյն քարով, խաչածեւ, քառակուսի, չորս կամարներով, որոց վրայ բարձրացած է գեղեցկածեւ կաթողիկէն՝ վրան բուսած է մի ճապիկի և մի ինձորի ծառ: Վանքիս տաճարն ունի մի աւազ՝ և չորս փոքր խորաններ, 13 լուսամուտ և մի գուռն: Երկայնութիւնն է 10 մետր և լայնութիւնը 7, 50 մետր: 1868 թուի մեծ երկրաշարժէն արտաքուստ թափած են տաճարիս հարաւ արեւելեան անկիւնի քարերը: Հիւսիսային որմի վրայ արձանագրուած է հիմնարկութեան յիշատակարանը, որուն մէջ լինելով նաև վանացս նուր-



րուած կալուածոց անուններ, կարենք կը համարինք աստ ամբողջութեամբը գնել.

«Յանուն Հաւր և Որդոյն և Հոգոյն սրբոյ, ևս Սարգիս և Վլարակեա կոյսկոյսոսք ձիմնարկեցաք զեկեղեցիս ի ՈՂ. (= 12.11) րվիս. շատ աշխատութեամբ աւագ խորանն խիեցաւ և եղբայրս իմ Տէր Սարգիս ի Քրիստոս փոխեցաւ: Եւ տէր Վլարակեա կոստոբեցի բազում աշխատութեամբ և նորայ արդեամբ իմով ՈՂ. րվիս ի դասն և ի եկե ժամանակիս՝ որ սոզնն եկտորաց գրաբում գաւառս աւերեաց և մնաց այրանելոց արոս և վիճակ սրբոյն Գրեգորիսի, որ և նաստատեալ աշուվ և սուրբ եղանակն և գաւազանակն սրբով, վիճակեցաւ և սանձակով ի յԱղուանոյ զեառյ միևնչ. ի Երասիս, միևնչ. ի Աւագն Գաւառնատի, Վախրէիս Վարազնագետով, ի Քաւասեիս և Խոզանագետովն, Չաւիտս իւր զեառովն. Հաքարի Հազարագետովն, Քրտագետ իւր զեառովն, իւր սանձակովն, Գրեգի, Բերուեան իւր զեառովն և նայրեկերն եկեղեցոյս առիկք, Փարսիս և Գոտանոցն, Եկեղեցաձորն իւր սանձակովն. Ա. Լուծ նոյ ի Տայիս. Ա. Լուծ ի Գոյ ի Գարս, Ա. ի Մոխրեկիս. ով որ այս սանձակն յետ առնէ կարողիկոս կամ իշխան կամ նայրապետ, երեք սուրբ ժորովոյն եզոված եղիցի, յԱստուծոյ և յամենայն սրբոց սեկեմալ, մասն և բաժին ընդ Յոզայի առցի»:

Երբբուտ հարաւային փոքր խորանի ճակատին կայ ՈՂ. Թուակնաստ ուրիշ արձանագրութիւն մը Տէր Վրդանէսի: Հիստորային փոքր խորանի ճակատն ևս կայ համաոստ արձանագրութիւն մը: Տաճարս ունի նաև հնաշէն գաւիթ, որոյ գոյութիւնը շատ աւելի հին է: Գաւիթս կառուցուած է մի կամարի վրայ. հոս ամփոփուած են քանի մը կոյսկոյսոսներու և վարդապետներու մարմիններ, որոնց վրայ կան տապանաքարեր: Տաճարի զբան երկու կողմը կանգնած են երկու գեղեցիկարձանակ խաչարձաններ՝ որոնց վրայ կան արձանագրութիւն: — Գաւիթի արեւելեան հիստորային կողման կից է աւելի հին եկեղեցի մը, որոց առջեւ տապանաքարի մը վրայ կայ հետեւեալ կարեւոր արձանագրութիւնը. «Այս և տապան տէր Սիմեոնի որդի Մեարոյ վարդապետին րվին

ՌՃՀԲ: Լուսանոցի Մեկր Եկանն ձեռնադրել տվաւ կոյսկոյսոս, կարգեց կոյսոյ վանքին առաջնորդ: Որ եկի նաստատեցի սուրբ արոսս րվին ՉՃՂ. ով որ կարգայ, մեկ բերան որորմի սակ»: — Վանքս այժմ քանի մը հին սենեակներ և մէկ աշխարհական պահապան ունի: Գրեթէ ամբողջապէս յափրտակուած են իւր կալուածները, և հեաղհեալ քայքայման վիճակի մէջ կը գտնուի: — Արցախ, 80-82:

ԳՏԿՈՅ ՎԱՆՔ. Տես ԳԻԻՏԻ ՎԱՆՔ:

ԳՐԱԳՌՄ. — Սակաւարնակ Հայոց զիւղ վաստորականի Արճիշակովիս գաւառի մէջ: Ունի Ս. Ստեփանոս անուամբ եկեղեցի մը:

ԳՐԱՄԲԱ. Տես ԿՐԱՄԲԱ:

ԳՐԳՌՈՒ. — Եղանաւոր և պատմական լեռ Տարուբերան աշխարհի մէջ, Երբրովր լեռան հարաւ արեւմտեան կողմը: Տարածութեամբ փոքր և հասակաւ կարճ է Երբրովթէն, սակայն իւր բնական զիրքովն աւելի հոգարս և գոտոզ քան գայն: Լեռս իւր հինոյ վիթխարի կըր գլուխներով վեհանձնօրէն բազմած է տափարակ և ընդարձակ երկրի մը վրայ: Իւր կողերը ծածկուած են անասուններով: Գրգուռ լեռան անուան ստուգարանութեան նկատմամբ կը պատմուի թէ Պարսից վախտանկ գորալարի Գրեգուռ որդայն անունէն ծագած է: Այս լեռը Հայաստանի բարձր լեռներէն մին կարծուելուն համար, սեղացիք յարմարցուցած են այս աւանդութիւնս որ մինչև ցայժմ մնացած է, իրրի թէ՛ Եոյի տապանը նախ այս լեռը եկեր է, ըսելով. «Գրգուռ առ զիս». լեռն ալ պատասխան տուեր է. «Գեա ի Մասիս, զի բարձր է քան զիս»: Լեռանս ստորտար կը գտնուի Ջրհոր անուամբ հայաբնակ զիւղ մը, որոյ բնակիչք մեծաւ մասամբ Գրգուռի անասուններով կ'ապրին: Լեռան բնական գոտուութիւնն կարծես թէ ազգած է այս բնակչաց վրայ: Երբեմն ուրիշ տեղերէ անասոտահատներ աստ գալով լեռնէն փայտ կարել ուզած ժամանակը, Ջրհորցիք գանոնք կը վանան բեկող թէ՛ Գրգուռ մերն է և անոր անտառներն ալ մեր են:

ԳՐԳՌՈՍ ԱՌԱՆ. — Տարուբերանի Տարոն գաւառի մէջ, վերոյդրեալ Գրգուռ լեռան մէկ կողին վրայ, ի հնումն Պարսից վախտանկ



զօրավարը իւր սրղոյն անուամբ աւան մը շինեց, որուն դիւրքը և աւերակները մասնաւոր քննութեան կը կարօտին:

ԳՐՁԻ ԿԱՄ ՔՐՁԻ. — Գիւղ Բաբերդի, 5 ժամու ճանապարհ հեռու յարեմտեան հիւսիս, հայ և թուրք բնակչօք: Այլ է Վարի Գրգին՝ բոլորովին թուրք բնակչօք: Գրգի անունն կը համարուի Գրգրի բառի աղաւաղեալն: Գիւղս առաջին օթեւանը կ'ընծայէ ուղեւորին՝ որ կ'երթայ ի Սիւրմէնէ կամ Տրսպիղոն՝ ընդհանրապէս ճանապարհաւ, սահմանակից է Օստեղ, Վանաւէնէ, Նիսիարա և Խափաշիկ գիւղորէից: Գիւղիս բնակիչք կ'աւանդեն շրջակայից վանքերու և ուխտատեղեաց պատմական անցքերն: Կառուցուած է բլրոյ մը ստորոտը և 50ի շափ բնակութեանց 30էն աւելին Հայոց են. նիւթական ու բարոյական յետին աղքատութիւն ընկճած է զիրենք. պանդխտութեամբ կը հայթհայթեն իրենց օրսպահիկի միջոցները: Երկրագործութենէ վաստակ չկայ. երկիրը թէև մեծ մասամբ ջրարբի, բայց գրեթէ ճախճախուս է. վասն զի զանազան առուններէ միութիւն կազմած վտակ մը, գաբնան՝ արտերուն աւելի աւելի կը զանայ քան թէ օգտակար: Քանի մը ասնց առջև գերեզմաններ կան. յարգանօք կը վարուին այդ գերեզմանական կոթողներու հանդէպ: Ունին եկեղեցի Ս. Պօղոս անուամբ, 1848ին կառուցուած կիւրինցի կարապետ վարդապետի ձեռամբ. ձախակողմեան խորանի մէջ ճարտարարուեստէ մը նկարուած ահագնահայեաց պատկեր մը կայ: Վարժարան չկայ, և աղայք ձմեռները ախոսի մը կից սենեկի մէջ կը ժողովին:

ԳՐԷ-ՄՐՐԻ. — Գիւղ Տիգրանակերտի Սլիվան գաւառի խորի գաւառակի մէջ. 10 տուն հայ կայ:

ԳՐԷ-ՍԻՔԱՆ. — Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի, 7 տուն հայ կայ:

ԳՐԸԻ ԹԷՓԷ. — Լեռ Սիւնեաց Եղուկ և Աղահէճք գաւառաց մէջ տեղ:

ԳՐԹՄԱՆԻԿ. — Այլ կերպ գրութիւն Գարդման անուան:

ԳՐԻԳՈՐ (Ս.) ՆԻՍԱՅԻ. — Վանքս կը գրասուի Կեսաբիայէն 3 ժամու ճանապարհ հեռու, հարաւ արեւելեան կողմը Նիբգի գիւղի մէջ: Այժմ կիսովին փլած ու աւերակ է, միայն

փաքրիկ եկեղեցին և արտաքին պարիսպը կանդուն կը մնան: Ներքէ գիւղի քահանային յանձնուած է եկեղեցին, որ երբեմն բարեպաշա ուխտաւորներու կը բանայ յուսա և յերկրպագութիւն: Վանացս արեմտեան պարսպի տակէն ջուր մը կը բղխէ մեծ քանակութեամբ:

ԳՐԻԳՈՐԻ (Ս.) ՎԱՆՔ. — Այրարատայ Արագածոտն գաւառի, Փարսի գիւղի արեւելեան կողմը այգեստաններու մէջ: Երջապատը բոլորովին քանդուած է, իսկ եկեղեցւոյն միայն որմերը մնացած ըլլալով, Փարսիցիք փայտայարկ ծածկելով առ ժամանակ մը իբր եկեղեցի կը գործածէին: Վանացս եկեղեցւոյ զրան վրայ կայ 1264 թուականու արձանագրութիւն մը: Ներկայ վիճակին վրայ տեղեկութիւնք կը պակսին:

ԳՐԻԳՈՐԻ (Ս.) ՎԱՆՔ ԽԱՍՏՈՐԻ. — Հին վանքս կը գտնուի Երզնկայի և Գերջանայ (Բարձր Հայք) մէջ տեղ: Հիմնարկուած է տասներորդ դարուն մէջ Սիմոն անուն ճոնաւորէ մը. շինութիւնն ժամանակակից է կամրջաձորի, Հոռոմոսի, Նարեկայ, Տաթևու վանքերուն, ինչպէս նաև Մշոյ Ղազարու վանքի շինութեան: Վանացս միաբանները իրենք զիրենք կամովին պարտաւոր կացուցած էին օրը մի անգամ կերակուր ուտելու և մի անգամ ջրով զովանալու: Խաձորի Ս. Գրիգոր վանաց ներկայ վիճակին վրայ մասնաւոր տեղեկութիւն մը չունինք:

ԳՐԻԳՈՐԻ (Ս.), ՍԱՆՏԱՊԱՏՈՒ ԿԱՄ ԶՈՐԱՎԱՆՔ. — Վասպուրականի Տուր գաւառի հին վանքերէն մին, որ կառուցուած է վարդայ լերան հիւսիսային լանջի վրայ, կողբանից հայարնակ գիւղի մտակերը, խոր ձորի մը մէջ: Վանացս հին կոնգակի մէջ գրուած է թէ ի հնում կը կոչուէր Սաբնապատ: Վանք, որուն ստուգաբանութիւնը ումանք կը համարին իբր սս-բաւ-անապատէն առաջ եկած, և ումանք ալ՝ մեծամեծ սալ քարերով շինուած ըլլալէն կը հետեւցնեն: Վարդայ սարը որ թետաւարած արձուի կը նմանի, կարծես խորհրդաւոր կերպով իբր երկու թեւերու վրայ, իբրև պահապան, կը կրէ երկու վանքեր՝ աջկողմը Վարազ, ձախ կողմը Ս. Գրիգոր, մէջ տեղ, որտին՝ վիւրին Վարազ, կրճքին վրայ՝ կարմրուր



Ս. Աստուածածին, իսկ կատարը՝ Աստղկան բերդ:

Ճարտարապետական սեփն նայելով սուրբ Գրիգորի վանքը Արժրուենաց ժամանակէն մնացած տասներորդ դարու պատմական յիշատակներէն մին է, հիմնարկութիւնը սմանք կու տան Մեծին Ներսէսի, իսկ ժողովրդական աւանդութիւնն ալ կը վերադրէ սուրբ Գրիգոր Լուսաւորչի, որ իբր այս վանքը հիմնէ է յանուն սուրբ Յովհաննու կաթողիկոսի. և յիրաւի վանքի աւագ խորանն ալ մինչև ցայսօր այդպէս կը կոչուի: Վանքս ունի երեք մատարանաչափ տաճարներ, նուիրուած Ս. Աստուածածնի, Ս. Յովհաննու և Ս. Գրիգոր Լուսաւորչի: Այս տաճարներէն միայն մին գործածելի է, և միւսներն՝ կիտակործան կամ աւերակ: — Ժողովուրդը կը պատմէ, թէ ժամանակ մը այս տեղ ապրեր է Ս. Գրիգոր, այս տեղ հանգիստ առեր է մեծ հայրապետը և այս տեղ ազօթներ: Վանքի արևմտակողմը շերան ընծի վրայ կայ փոքրիկ բայց գեղեցիկ անտառ մը, որ ամբողջ վարագի միակ բնական անտառն կարելի է համարել: Հոն ծառերու ստուերնէրու տակ փոքրիկ մատուռ մը կայ՝ Սուրբ Գրիգորի Աղօթատեղի կոչուած: — Յովհան կաթողիկոս յիշելով Գէորգ կաթողիկոսի մահը կը յայտնէ՝ թէ «Եղին զնա (գրէսրգ) ի բնարանի Չորոյ վանաց որ ի Տոսպ, մերձ յեկեղեցին՝ ուր եղեալ իսկ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ զգաւազանն իւր, և զսեղանն տէրունական խորհրդոյն՝ զոր նախ քան ըզհաստատեն եկեղեցեաց սրբոց ի Հայս՝ ընդ իւր շրջեցուցանէր»: Թուովնա Արժրուեն ալ կը յայտնէ՝ թէ այս վանացս մէջ հանգուցեր են Ռշտունեաց Համազասպուհի տիկնոջ մարմինը: Վանացս մէջ թաղուած են

նաև ուրիշ ազնուատուհմ և եկեղեցական անձանց մարմիններ: Կըսուի թէ վանացս եկեղեցոյ կամարի մէջ կը պահուէր Ս. Հաբիսիմեայ փոզպատը և հողաթափը: Վանքս ժա-



244. Ս. Գրիգորի կամ Սպիտակատու վանքը:

մանակ մը եպիսկոպոսանիստ եղած է, ինչպէս 1441 թուին, Կիրակոս Ա. Վիրապեցի կաթողիկոսի ընտրութեան առնն, Ս. Էջմիածնայ ժողովն մէջ զանուած է վանացս Կիրակոս անուն եպիսկոպոսը: Յովհաննէս կաթողիկոսը



իր վերջին օրերն այս Սալնապատու վանքին մէջ անցոյց և այս տեղ վախճանեցաւ 925 թուին. իր յաջորդն Սանփանոս Բ կաթողիկոս, աթոռը փոխադրեց Աղթամարայ վանքը:

Ինչպէս վարագայ ամէն մի անկիւն, նոյնպէս և Ս. Գրիգորի վանքն ունի բնութեան հրաշալի տեսարաններ: Սարնապատու շտրբ կը բոլիէ վանքէն զէպ ի հարաւ, սարի կուրծքէն, պաղրբակ ու յատակ. կարկաշկնով կ'անցնի վանքի պատի տակէն, իւր մէջ բնդունելով անառաճն վազող վճիռ աղբերակներ, այս ջրոյն եզերքը կան բարձր սօսիներ, հաստարուն բնիւզեհներ և ստուերախիտ ուռնիներ: Ս. Գրիգորի վանքս ունեցեր է և ունի միշտ իւր բազմաթիւ սխաւարները: — Վանքս վերջին տարիներս համարեա անբնակ և ամայի դարձած էր, բայց 1898 թուականին Որբանոց մը բացուեցաւ, որուն ծախքը կը հոգան Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ Նիւ Եորք բազաքի սրբախնամ ազգայինները: — Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ զեռ ուրիշ շատ վանքեր կան, որոց մէկ մասը նկարագրած ենք ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ՎԱՆՔ անուան ներքոյ: Տես նաև ԱՄԱՐԱՍ, ՀԵՐՄՈՆԻ, ԱՌԱՊԱՐԻ, ԽՈՐՎԻՐԱՊԻ ՎԱՆՔ. են.:

ԳՐԻԳՈՐԻՍ. — Գիւղ կամ արուարձան էւզոկիոյ: 60 ասն հայ բնակիչ կայ: Ունին եկեղեցի Ս. Աստուածածին անուամբ, և վարժարան: Լեռան մը կողին վրայ կը գտնուի. աստ է Ս. Գրիգոր Սրբանչեղագործ հայրապետի ծննդեան վայրը, և աստ գտնուած է նաև սրբոյն գերեզմանը, և այս պատճառաւ Գրիգորիս կոչուեր է զիւզս:

ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՒԽՍ կամ ԳՐԻԳՈՐԻՊՈՒԽՍ. Ռ. Գրիգորիոս. — Քաղաք Պետարապիոյ (Ռուսիա), Խերսոնի կուսակալութեան մէջ. 43 հզրմ. Տիրասպոլի հիւսիս արևմտեան կողմը: Քաղաքիս զիւրքը երկայնանիսա է, Տնտիթը գետոյն եզերքը, որ կ'անցնի իւր աջակողմէն: Տնեւտ և կրպակաց շէնքերը անշուք են, և վաճառականութիւնը շատ նշւազ: Քաղաքս հիմնուած է 1792 թուի յուլի 25ին, հրամանաւ Ռուսաց կատարիէ կայսրուհւոյն. որուն հիմունքը օրհնած է Տ. Յովսէփ Երկայնարազուի Արղութեանց արքեպիսկոպոսը: Գրիգորուպոլիս կոչուած

է վերակացու իշխանին անուամբ: Գրիգորուպոլիս հիմնարկութեան երկրորդ տարին, 1793ին, Հայք Ս. Փեթրպոլի մէջ փորագրել առւած և տպագրած են քաղաքիս յատակաձևը 44×34 հարիւրքամետր մեծութեամբ, որուն փաքրացուցած նմանահանութիւնը կը գնենք աստ: Ի սկզբան Հայոց համար շինուած է քաղաքս, որոնք գաղթած եկած են Խամայիլէ, Քիլիէ, Ղաւշանէ և Ռաշքովայէ. յետոյ եկեր են նաև Ռուսք և Հրեայք: Հ. Բժշկեան կը գրէ թէ կանխաւ կային 900 տունք Հայոց, բայց շատերը օրոյն վարժած չլինելով մեռան, և տմանք ուրիշ կողմեր ցրուեցան. իւր այցելութեան միջոց կային հազիւ 350 տուն, որոնք առանձին գասարան և հինգ պատուարներ ունէին: Ասոնք հայերէն գասաստանագիրք ունէին, որուն կանոնները մեծ մասամբ աննուած էին Ս. Գրքէն. այժմ կը գործածեն Ռուսաց կանոնագիրքը: Քաղաքս այժմ ունի 7000 բնակիչ, հայ, ռուս և հրեայ, բայց Հայոց ճիշդ թիւը մեզ յայտնի չէ: Ռուսաց Պօզոս կայսրը յատուկ հրովարակով մը 1799ին Հայոց գանազան արածնութիւններ տուեր է և 30 հազար հարիւրակալ երկիր, երկրագործութեան համար, որուն կէսը յետոյ առնելով Գերմանացոց տուին: Այս հրովարտակին պատճէնը հետեւեալն է.

« Աստուծոյ արագմաս ողորմւորեալն մեք Պօզոս առաջիկ կայսր ևւ իւքնակալ ամեկնայ Ռուսաց. . . Հաւատարմագոնից Հայոց քրիստոնեական օրինի ճատարակութեան քաղաքին Գրիգորիւպոլիս ամեկնայ կերպի կողմանց ամեկնցուն ընցմանբարաք ևւ ամեկնայ յատուկ կերպարական ողորմագոյն բան. . . ա. Չարմանել ի կոցան կոյրամս վաս յինւորեան տանց ևւ խակոքից, գործեաց ևւ վաճառականորեան. . . բ. Վասն աղքատաց յինւորեանց 8041 սուրբի, վասն յինւորեան կեւե վանիցն ևւ աւագ եկեղեցոյն. . . գ. Տացի 30 ճագար տեւերին երկիր վասն Հայոց բատ Գաղիստիս որ ի 1794. հոկտ, 12. յաւելուչ յայնմ կեւե 30 ճագար ևւ 400 տեւերին միւլեւ ցգեան Տաշիկ. . . դ. Կան քաղաքին բատ եոյն Գաղիստի պատարասել. . . ե. Ի 4 յուեմարի ևւ ի 19 ապր. 1799 ամի ճրովարտախոր մերովք վերածաստակեցուչ զիրաւունս ընդարմախրին վարել Հայոց ի կայսրուորեան մերուզ գոչանուորիւս իւրեանց քրիստոնեական օրինի. յինել վանորայս, եկեղեցիս, զանգակատունս. . . կախակալ գոյով մի միւսյն յիշխանութեան Հայոց Պատրիարքին Ղաչկասու Լյւմիսմեի, ևւ ի փոխակոքի երկրին. . . ճատարակով աւ ի դասել զնոգեւոր ևւ զմարմնուոր սնմինս ի Աստրախան զՀայոց ճոգեւոր կանցիստոյն ինել ի եմա ետարագանորեան







ուեօղ Արքիմանորից մի, եւ երեք դատաւորք յառազ քա-  
նակայց, երկուս սեկրետարք (այսինքն ասեկնագրիք) :  
մինն ի մասին Հայոց՝ վասն գիտողաց գեղուն Հայոց . իսկ  
մինն ի մասին Ռուսաց՝ յազգաւ այնց Հայոց, որք ա-  
ռաւել տեղեակ են յեզոչին Ռուսաց քան Հայոց, եւ յորս  
գրագիրք վասն գրագրութեան. եւր կառավարութեան սին  
կանցիստորի եղիցին ամենայն կեկեղեցիք Հայոց եւ ծախք  
նոցա . . . ց. Ունիցին սեպմկան Հայոց իրաւարան ընտրե-  
լով գզատաւորս ի ծոզովորեկ իւրեանց. գեկրետարս,  
եւ գրագիրս . . . ե. Արեւիկեց զնոսս յարքունեական ճար-  
կաց եւ ի ծառայութեանց, որպիսի կողմանց եւ իցե . . . ք.  
Ազատ վաճառակաւութեամբ արքիմանորեանցին ի ծոզով  
եւ ի ցամաքի . . . ք. Հրատմայեմք ամենայն նախարարաց  
պաշտպանել զայսոսիկ նստալուորեանս :

Յամի. 1799. և ի 28 հոկ :

**ՊԱՒԷԼ**

Գրաթի Բաւարայիցն :

Քաղաքիս Հայոց մայր եկեղեցին նուե-  
րուած է Ս. Կատարիկէի, փայտաշէն ըն-  
դարձակ և անշուք, կառուցուած մեծ հրա-  
պարակին վրայ, այս եկեղեցին քարաշէն  
կառուցանելու համար ի վերջոյ յարքու-  
նուսս գրամ տրուած է : Երկրորդ եկեղե-  
ցին է Ս. Լուսաւորիչ և երրորդն Ս. Խաչ՝  
զոր կառուցած են անցեալ դարու առաջին  
կիսուն մէջ. քարաշէն է բայց անձև, առաջ-  
նորդարանի մօտ, ուր կայ նաև Հայոց ազայոց  
ուսումնարան : Այս եկեղեցիներու վրայ այժմ  
նոր տեղեկութիւն չունինք, բայց կը յիշէ  
ոմն, թէ տեղւոյս Ս. Պօղոս Պետրոս եկե-  
ղեցւոյ մէջ կը պահուի Ս. Նշան անուամբ  
պղնձեայ խաչ մը, որոյ համար աւանդու-  
թիւն է թէ՛ Քրիստոսի աաշաէն թագէտս ա-  
ռաքեալի շինած երեք խաչերէն մին է, Ան-  
ւոյ հայ գաղթականներէն այս կողմերս բե-  
րուած : Ոչ միայն Հայք, այլ և Ռուսք,  
Հրեայք և այլք հեռաւոր տեղերէ կու գան  
յերկրպագութիւն այս Ս. Նշանին : Քաղա-  
քիս Հայոց եկեղեցիներու մէջ կը պահուին  
մագաղաթի վրայ գրուած հին յայտմաւորք,  
աւետարան, ճաշոց և այլ գրքեր : Քաղաքս  
ըստ հոգեւոր վարչութեան կը պատկանի  
Նախիջևանայ և Պետարպոլի թեմին : Հայք  
ունին նաև աղջկանց ուսումնարան Սրբու-  
հեան անունով : — Ճանապարհորդութիւն ի  
Լեհաստան, 184—186 :

ԳՐԻՒ. — Կը յիշուի Բարձր Հայոց Սպեր  
գաւառի մէջ :

ԳՐԻԶՔ ԿԱՄ ԿՐԻԶՔ. — Գիւղ Կարնոյ  
(Բարձր Հայք) 90 տուն բնակչօք : Հայք 50

տուն են, և ունին Քրիստոս քաղաւոր ա-  
նուամբ պարզ եկեղեցի մը : Թուրքք 40 տուն  
են : Գիւղէս յի՞ ժամ հեռաւորութեամբ քար-  
այր մը փորուած կայ, զոր քարաքիթ կա-  
նուանեն, որոյ նկամամբ անորոշարար կա-  
ւանդեն թէ՛ Քէհրատ անունով մէկէ մը մնա-  
ցած է :

ԳՐԻՎԷՇԹ. — Գիւղ Ռումանիոյ Եաշ գա-  
ւառի. բնակչաց մէջ կան քանի մը տուն հայ :  
ԳՐԻԿ ԿԱՄ ԳՐԻԿԻՔ. Տես ՎԱՅՈՅ ԶՈՐ :

ԳՐԻՈՄ. Տես ԲԱՂՔ :

ԳՐԶԱՄ ԿԱՄ ԳՈՒՐԶԱՄ. — Սիւնեաց Կով-  
սական գաւառի նոր անունն : Այս անուամբ  
բերդ մը ևս կը յիշէ Օրբէլեան, և կը գտնէ  
Սիւնեաց ամուր բերդերուն կարգը :

ԳՐՈԶՆԱՅ. — Քաղաք Ռուսիոյ Թերեքկան  
նահանգի մէջ, Վլադիկովկասէն 101 վերսա  
հեռու : Ամանային փողին և ձմեռնային ցեին  
անտանելի է. օդն և ջուրը բաւական լաւ  
են : Բնակիչք են՝ Հրեայք, Մահմետականք՝  
զանազան ցեղերէ, Ռուսք և մօտ 40 տուն  
Հայք, որոց մեծ մասն գաղթած է Վրաս-  
տանի Թէլաւ և Տուշէթ քաղաքներէն և վա-  
ճառականութեամբ կը պարապին. 12 տուն  
ալ Հին Նախիջևանէ գաղթած են, որք մեծ  
մասամբ բրուտ են : Հայք ունին մեծ քա-  
րաշէն եկեղեցի մը, զոր կառուցած են  
զանազան քաղաքներէ հանդանակութիւն ը-  
նելով :

ԳՐՈՒԱԿ. Տես ԵՂՈՒԿ :

ԳՕԶՈՒԼՃԱ. Տես ՂՕԶՈՒԼՃԱ :

ԳՕԶ—ՕԼՈՒԳ. — Գիւղ Տարսնի (Կիլիկիա),  
40 տուն հայ կայ, ունին Ս. Սարգիս ա-  
նուամբ եկեղեցի մը : Գիւղն զուարճալի է  
և կը ծառայէ իրբեւ ամառանոց Տարսնի :  
Երջակայքը կան զանազան տեսակ պտղա-  
տու ծառեր և մանաւանդ ընկուզենիներ :

ԳՕԼԱՆԵՂՂՆԱՆ ԿԱՄ ՔԷՕԼԱՆԵՂՂՆԱՆ. — Հա-  
յաբնակ գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւա-  
ռի մէջ, որ Բովհաննէս եպիսկոպոս Շահ-  
խաթունեանցի այցելութեան միջոց կը գրա-  
նուէր ծովեզերեայ փոքրիկ քարուա բլրակի  
մը մօտ, բայց յետոյ 1850 թուին, գիւ-  
ղացիք տեսնելով որ ծովակի ջուրը երբեմն  
բարձրանալով իրենց աները կ'ողողուն,  
գիւղս 100 քայլ ծովէն հեռու փոխադրեր  
են գէպ ի լեռանց վերջին ստորոտքը : Գիւղս



այժմ ունի 135 տուն, 1300 հոգուով: Ունին Ս. Աստուածածին անուամբ չափաւոր լաւ եկեղեցի մը: Քէօլանդոան անունն ստացեր է այն ժամանակ, երբ Լեզկիները այս կողմերը ասպատակելով՝ կոստրեր և ջարդեր են հոս Քէօլանի անուամբ թորքերը՝ որոցմէ բիշեր փախեր հասեր են Էջմիածնի գաշար, և հոն հիմներ են Քէօլանիւ գիւղը: — Քէօլանդոան գիւղէն համարեա 4-5 վերստ հեռաւորութեամբ հարաւ արեւելեան կողմը կայ աւերակ գիւղատեղի մը, ուր կը մնայ ամայի եկեղեցի մը երկու խորաններով. եկեղեցոյ միայն որմունքն մնացեր են կանգուն. շուրջը կան գեղեցիկ քանդակներով խաչարձաններ և գերեզմանաքարեր, որոց ամանց վրայ կը նշմարուին հայաստա արձանագրութիւններ. այս եկեղեցոյ մօտ կան նաև կարմիր քարերով խաչարձաններ, և այս պատճառաւ գիւղաւայրս կը կոչուի Կարմիր Խաչեր, որոյ հին անունն խաչքարի մը արձանագրութեան համեմատ, կը կարծուի լինել վաղաւեր: Քէօլանդոան գիւղէն 1890 թուականին 13 տուն Հայք, սեղափոխուելով այս Կարմիր Խաչեր կոչուած գիւղաւայրը, բնակութիւն հաստատեցին և հին եկեղեցին սկիզբն նորոգել: — Գեղարքունի, 551-553:

ԳՕԶԷՔԷՆԻ ԲԱՆԱՆԿԱ. — Սակաւարնակ Հայոց գիւղ Երզնկայի (Բարձր Հայք) առաջնորդական վիճակի մէջ:

ԳՕՅԹՈՒՎ. — Լեւ Այրարատայ Արագածոտն գաւառի:

ԳՕՅՈՒՆ ԿԷՉԻՏ. — Հուն Կուր գետոյն, Պարտաւի մօտ:

ԳՕԵ ՄԻԻԹԱՐԱՅ ԿԱՄ ԳՕՇԱՅ ՎԱՆՔ. — Նկարագրած ենք Գևորիկ անուան ներքոյ:

ԳՕԶԻՍՅՐ. — Գիւղ Սերաստիոյ, 6 ժամու ճանապարհ հեռու, 200 տուն բնակչօք: Հայք 150 տուն են և ունին Ս. Յակոբ անուամբ եկեղեցի մը և վարժարան:

ԳՕՎԱՆՏԻՔ. — Հայարնակ գիւղ Խնուսի (Տարսերեան), ունի 1000էն աւելի բնակիչ:

ԳՕՎՈՒԳ ԿԱՄ ԳՈՒՊՈՒԳ. — Այնայի գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ:

ԳՕՎՈՒԳ ՓԷԼԻՏ. — Գիւղ Նիկոմիտիոյ առաջնորդական վիճակի մէջ: Ունի Գեղաման անուամբ երկսեռ վարժարան մը՝ 40 աշակերտներով:

ԳՕՏԱՌԻՃ. — Գիւղ Չարսանձագի առաջնորդական վիճակի մէջ. ունի վարժարան՝ 30 աշակերտներով:

ԳՕՐԱԴԱՐԱ. Տես ԳՕՐԱԳԱՐԱ:

ԳՕՐԳՈՒՆ. — Գեա և ձորահողիտ լեռնային Կիլիկիոյ:

ԳՕՐԻ ԿԱՄ ԿՈՐԻ. Ռ. ԴՕՐԱ. — Գլխաւոր քաղաք համանուն գաւառի, Տփղիսի նահանգի մէջ. Տփղիս քաղաքէն հեռու է 70 վերստ: Շինուած է վրացիներէ յիս վարու սկիզբը: Գիրքը բաւական գեղեցիկ է. ունի մօտ 1370 տուն, յորոց 10ը պեաական շէնքեր են, իսկ մնացեալը՝ մասնաւորաց: Տները մեծ մասամբ քարեայ են և միայրիկ: Քաղաքի մէջտեղը կը բարձրանայ ժայռոտ բլուր մը, որոյ վրայ կ'երևի քանդուած Գօրու բերդը, որ կարծես կուլայ իւր ստորաքար կառուցուած աներու և քաղաքի բնակչաց վրայ: Գօրի ունի 8000 բնակիչ, յորոց 3500ը Հայք են, մնացեալը՝ վրացիք, Ռուսք, և ոչինչ թուով ուրիշ գանազան ազգեր: Քաղաքիս ինը եկեղեցիներէն հինգը Հայոց են. այս հայկական եկեղեցիներէն միայն երեքին մէջ ժամերգութիւն կը կատարեն, իսկ երկուքին մէջ երբեմն՝ իրրև ուխտատեղի: 36 փողոց կայ, որոց ամենէն կանոնաւորը կը կոչուի յանուն Ազիքսանդր Բ կայսեր, 1871ին հոս այցելելուն պատճառաւ: Գօրի նշանաւոր է ջրոյ կողմանէ Կովկասու ուրիշ քաղաքներէ: Հարաւէն կ'ուսոգէ Կուր գետը, որոյ վրայ ձգուած է երկաթեայ կամուրջ գէպ ի կայարանն երկաթուղոյ. քաղաքիս մօտ Կուր յինքն կ'ընկունի Լեախվա գետը, իսկ վերջնայս հեա կը միանայ փոքրիկ Լեախվա գետակը, յետոյ Պշոնկա կոչուած գետն, որոյ մէջ կը թափի Ծմինտա-Ծղալի անուն գետն, որ կը հոսի քաղաքիս միջէն. ամենաառողջարարն է Լեախվայի ջուրը. ասանցմէ զատ շատ աներ ջրհորներ ունին: Կլիմայն բնականաբար պէս բարեխառն է. ցրտերը երկար չեն աւելեր և գետերը ձմեռը գրեթէ չեն սառիր: Բուսականութիւնն աստտ է և բազմատեսակ, այդեպանութիւնն և պարտիզպանութիւնը գրլխաւոր գործ եղած են. խաղողի սեսակաները զանազան են: Վերջին ժամանակներս բնակիչք բաւական հմտացած են լաւ գինի պատրաստելու եղանակին: Կը պարսպին նաև երկրա-



գործութեամբ. արտագրութիւնք են ցորեան, դարի, եգիպտացորեան: Կը պահեն կով, հաւ, հնդկահաւ, սազ, բազ: Բնակիչք երեք կարգ են՝ վաճառական, արհեստաւոր և ծառայող: Շուկայն կը բաղկանայ 310 խանութներէ, վաճառատուններէ և 20 պանդոկներէ. շուկայն գուրս կան քանի մը մթերանոց և 4 հիւրանոց: Կան աղլուի, մեղրամոմի, ներկի, խղի, բրուտի, և այլ գործարաններ: Արհեստներն են հիւսնութիւն, որմնադրութիւն, սափրչութիւն, մաշկագործութիւն, կոշկակարութիւն, սղինձագործութիւն, զինագործութիւն, դարբնութիւն, և այլն: Կան նաև 1 գեղարան, 1 գործարան հանքային ջրոց, 6 ջրաղացք, 1 քաղաքային կրակ, 1 բազնիք և 1 քաղաքային այգի: Նախակրթարաններ ցունին Հայք, Ռուսք և Վրացիք: Հայոց օրիորդաց Մարիամեան անուանով ստումնարանը հիմնուած է 1870 թուին, որ ունի առանձին հոգարարձութիւն: Արուեստից վարժարան ևս կայ: Հայկական արական և իգական սեռի վարժարանները, եկեղեցիներու հասոյթներով կը մատակարարուին: Քաղաքիս մօտէն կ'անցնի երկաթուղոյ զիծը: — Տեղոյս Հայք Անիի՝ գաղթականներ են, բայց կորուսեր են իրենց մայրենի լեզուն և վրացերէն կը խօսին: Հայոց եկեղեցիներէն մին Ս. Ստեփանոս՝ երկյարկ է և կը բաղկանայ երկու եկեղեցիներէ. մին կը գտնուի գետնի տակ, իսկ միւսը բարձրը՝ նոյն եկեղեցոյ վրայ. ներքին եկեղեցին ուղղակի մեծ վրայի եկեղեցոյ սեղանի տակն է. ներքին եկեղեցին ունի մէկ պատուհան գաւթի արեւելեան կողմէն,

իսկ մուտքը մեծ եկեղեցոյ խորանէն է: Քաղաքիս Հայոց և եկեղեցիներու վրայ նորա նոր տեղեկութիւններ խնդրած էինք, սակայն ցարդ ձեռքերնիս չհասան: — Գօրիի սահմանաց մէջ հին աւանաց և եկեղեցիներու շատ աւերակներ կան. նշանաւոր է Ռափրուցիիւ գուտ հայարնակ զիւղը՝ բլրի մը մօտ. այդ բլրի գագաթը կը տեսնուին խիստ հին ժամանակները կախուղ քարի մէջ փորուած քաղաքի հետքեր: — Գօրիի գաւառի մէջ կան 70էն աւելի զիւղեր՝ սրոց բնակիչք կամ արողջովին և կամ մասամբ հայ են: Ամբողջ գաւառիս մէջ, հաշուելով նաև քաղաքի բնակչները, Հայոց թիւը կը հասնի 15,147 հոգոյ, բաժնուած 2860 տան:

ԳՕՐԵՁՈՒԿ կամ ԳԵՕՐԵՁԱԳ. — Հայարնակ զիւղ Գուգարաց, այժմեան Պոնչալու գաւառի մէջ, գեղեցիկ և զուարճալի գիրքով, շրջապատեալ անտառներով ու ծաղիկալար լեռներով: Ունի Ս. Գեորգ անուամբ համակ կոթածոյ քարերով շինուած եկեղեցի մը, զոր զարդարած և ճոխացուցած է ներքուստ և արտաքուստ հայազգի ազնուականն Գէորգ Եսայեան Փիլթօեանց: Ունի 30 տուն բնակիչ:

ԳՕՐՈՒ. — Հայարնակ զիւղ Սիւնեաց Հարանոյ (Զանդեզուր) գաւառի մէջ: Ունի 516 բնակիչ, բաժնուած 56 տան:

ԳՕՐՈՒԿ. — Սակաւարնակ զիւղ Այրարատայ կողովիս գաւառի մէջ, և Բագրեւանդայ առաջնորդութեան ներքոյ: Այժմեան վիճակն անձանօթ:

ԳՕՐՕԿ. — Գիւղ Ռումանիոյ Գէզուջ գաւառի: Բնակչաց մէջ կը գտնուին քանի մը սուն Հայք:



ԳՒԳԻ, ԽՈԹՈՒՅ կամ ԽՈՒԹՈՒՅ ՎԱՆԵՔ. — Կը գտնուի Արցախի Խաչեն գաւառի մէջ, Թարթուս գետի ձախ կողմը, Խաթրայ վանքի ուղղութեանն բաւական վեր: Վանքս առաջին անգամ հիմնարկուած է, ինչպէս աւանդու- թիւնը կը վկայէ, Թադէոս առաքելի Գա- զի անուն աշակերտի անուամբ: Կոչուած է նաև Խաթրայ վանք, խաթի մը վրայ շի- նուած բլրալուն պատճառաւ: Անյայտ է շի- նութեան թուականը, վասն զի հետզհետէ նորոգուած է վանքս, և խը մէջ գտնուած բազմաթիւ արձանագրութիւնք, վերջին նո- րագութեանց և շինութեանց յիշատակարան- ներ են: Արձանագրութեան մը համեմատ, ՈՒՍ ( = 1182) թուին վանացս վանահայրն էր Վախաանի Թագաւորազնի որդի Գրիգոր Եպիսկոպոսը, առ որ գալով կրօնաւորեցան խը Եղբայրն Հասակ, և Եղբօր կիներն Մամա Թագուհին, որոնք աէր էին Հարեղոս և Հակ- դարեղոս, Խաչենաւորդոս և Հաչքախաղա- ցիև: Յետոյ ՈՒԳ. (= 1214) թուին Թա- գաւորազն Վախաանի բարեպաշտ աիկինն Արգոս խարուն, չորս սիւներու վրայ կառու- ցանել կու տայ սրբատաշ քարերով վանացս կից հրաշալի եկեղեցի մը, և խը յիշատա- կարանը գրել կու տայ հարաւային որմի վրայ արտաբուստ: Եկեղեցւոյս մէջ կան մի քա- նի նուիրատուաց և միաբանողաց յիշատա- կարաններ: Վանքիս եկեղեցին, ինչպէս ըսինք, և գաւիթն Արղու խաթունն շինել տուած է այն նպատակաւ, որ ծառայէ իրրև հանգստարան

Վախաանիկեան տոհմին: Գաւթի մէջ ամփո- ւուած են Վախաանի Թագաւորազնի, Արղու խաթունի, Հասանայ, Գրիգորի, Մամքանայ, և Չաքարիա, Աթանաս, Յովհաննէս, Գրիգոր կաթողիկոսներու և Սարգիս Եպիսկոպոսի մարմինները. ասոնց տապանաքարերը ու- նին արձանագրութիւններ: Վանքս յաջորդա- բար Վախաանիկեան տոհմէն վերջ, Գոփեանց տոհմի պայազատներէն շէն մնացեր է: Այս տոհմէն Վահրամ իշխանի որդի Սարգիս և պիսկոպոսի ձեռքով շինուած է վանացս գե- ղեցիկ գանգակատունը: Չանգակատանս մօտ, արեւելեան կողմը կան երկու մատուաներ, ո- րաց մէջ աչքի կը զարնեն երկու հիւանդ/ ճարտարաքանդակ խաչեր՝ հանդերձ արձա- նագրութեամբք: — Վասակ նահատակի որ- ւին Գրիգոր Եպիսկոպոս, շինած է վանացս մէջ ուրիշ գաւիթ մը անտաշ քարերով: — Հասանի որդի Գրիգոր Եպիսկոպոսն ալ շի- նած է ուրիշ եկեղեցի մը չորս սիւներու վրայ, որ վանքէս քիչ հեռու է և կը գտնուի խղճալի և անմաքուր գրութեան մէջ: — Տիտըր է Գազի վանաց ներկայ վիճակն, բաց ի վանահայրէ մը ուրիշ միաբան չունի. այլ և այլ ժամանակաց մէջ, ինչպէս ար- ձանագրութիւնք կը յայտնեն, գանազան իշ- խաններէ վանացս նուիրուած ահագին կա- լուածներն, անտաններն և հողերն յաիրը- տակուած են, և վանքս օր աուր քայքայ- ման և աւերման ենթակայ է: — Վանացս մօտ ժամանակաւ կար թոր անուամբ գիւղ



մը, որ ունէր մօտ 300 տուն բնակիչ, որք նախ գաղթիկ են Երեւանի կողմերը և հսն հիմներ Եհիշու գիւղը և յետոյ աեղափոխուեր են Շուշուկի կողմերը: — Գաղի վանքէն վար թարթածուի ձախ կողմը կայ բարայր մը, որուն մուտքը գետնի երեսէն է: Լուսահոգի Բաղդասար մեարապօլաի կենդանութեան ժամանակ, Քէօլանի մահմետական որսորդ մը բռն մը կը զարնէ, որ թաաւղըր կ'անյայտանայ: Ետեւէն կը հասնի որսորդըն և կը տեսնէ որ բռնը ընկած միջոյ՝ ջարդուեր են այրի բերանի փոսած փայտերն, այրի մէջ ընկած է որսն, սը և շարուած կան շատ զրքեր: Որսորդը աննկալ զրքերէն մին կ'անապարէ Շուշի, կը յայտնէ Բաղդասար մեարապօլաին, որ պարզև կուտայ որսորդին և ձեաղբերը Շուշի փոխադրել կուտայ: Այս զրչադրերու մէջ կայ եղեր ընտիր մաշտոց մը՝ գրուած սուրբ Մեսրոպի աշակերտ Ստեփանոս վարդապետի ձեռքով, որ այժմ կը պահուի Ս. Էջմիածնի մէջ: — Զարայեանց, Բ 222-228: Արցախ, 203-210:

ԳԱԳԷԻ, ԳԱԿՈՅԻ կամ ԳԱԿՈՒԻ ՎԱՆՔ. — Սիւնեաց վանքերէն մին, կը յիշուի Քաշաթագրի մէջ:

ԳԱԳԻ-ՎԵՎԱՆՅ ՎԱՆՔ. — Կիսաւեր վանքս կը գտնուի Արցախի Կիւլտան գիւղէն վար, Ինջա գետի աջ կողմը: Մենաստանիս մօտ կան միարանից սենեակներ և հանգստարան: — Զարթե եանատակ անուամը գիւղատեղի, հանգստարան և կիսակործան փոքր եկեղեցի մը կայ վանացս հիւսիսային կողմը, Պարնապատ անուն անառի մէջ, Ինջայի ձախ կողմը:

ԳԱԿՎՈՅՆՔ. — Հին և մեծ աւան Սիւնեաց Նախնաւան գաւառի մէջ, Երասխայ եզերքը, Մասեաց ըբան արեւելեան կողմը. այժմ կը մնան միայն աւերակները:

ԳԱԱՆՆԻ. — Գիւղ Տիգրանակերտի Լճէ գաւառի Բէշար գաւառակի մէջ. 2 տուն հայ կայ:

ԳԱԱՌ. — Տուրուերանի հին գաւառնեւրէն մին:

ԳԱԱՐԻՍ կամ ԱՐՈՒՎ. — Հին գիւղ Տուրուերանի Ապահունեաց գաւառի. մեզ ծանօթ է պատմութեան մէջ: Բուզանդ (Գ. Ի)

կը գրէ. «Յորժամ եկն եմուս զօրաւարն Պարսից ի ներքս ի գիւղն Գալարիս, ածէր կապեալ զարքայն Տիրան ընդ խր. և առնէ վէարագ. աղէ՛ տեսէ՛ք ածուղ, որով երկաթ զօրացուցուեր, զի զաչս խարեցուեր զարքայիս Հայոց. և անգէն բերէին ածուղ, որով խարէին զաչսն Տիրանայ: Ապա ինքն խօսիլ սկսաւ Տիրան՝ և առէ. փոխանակ զի իմ՝ երկու աչքս լուսաւորքս խաւարեցան յայս աեղուջ, արդ՛ փոխանակ Գարայեացս անուան՝ Ածուղ անուն լիցի սմա՛ մինչև ցյաւրիտանս ժամանակաց, և այս երեւոյթ նշանակս մնացէ յիմ յիշատակ»: Վարդան այս գէպըս աեղի համոտօս կը պատմէ, որոշելով նաև գաւառը, բայց գիւղի անունն կը գրէ Արծուղ: Ասողիկ ևս նոյն Ապահունեաց գաւառի մէջ կը գնէ, բայց Արճ կաղ կ'անուանէ:

ԳԱԱՐԻՆՔ. Տես ձԱՀՈՒԿ: ԳԱԱՐՁՈՐ կամ ԳԱՐՁՈՐ. — Գիւղ Սասուն-Շատախի Գայմագամութեան ներքոյ, ունի 30 տուն բնակիչ, մեծադոյն մասը Հայք և մնացեալը՝ Քուրդք:

ԳԱԱՐՍ. — Սակաւարնակ Հայոց գիւղ, Մոկաց աշխարհի Սպարկերտ գաւառի: Ունի Ս. Գեորգ անուամը եկեղեցի:

ԳԱԼՎԱՐԿԱՇ կամ ՏԵՒԻ ԳԱՐՍԱՇ. — Գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ. ունի 3100 հայ բնակիչներ, բաժնուած 315 տան: Բնակիչք բնաւորութեամբ կոշտ ու կոպիտ են, և զուցէ այդ պատճառաւ գիւղս կը կուչուի Գալի Ղարդաշ (Գիծ կորայր): Էկեղեցին Ս. Խաչ՝ հին է և հասարակ ձեւով, շրջապատն խաչքարերով զարդարուած: Գիւղի ծայրը կան Ծաղկաւաեր և Ս. Գեորգ անուամը երկու մատուռներ: Կայ նաև թուրի մանուկ կոչուած մատուռ մը: Գերեզմանատան խաչքարերը ունին արձանագրութիւններ՝ վերջին գարուց վերաբերեալ թուականներով:

ԳԱԼՔ. Տես ԿՈՎԱՍԱԿԱՆ:

ԳԱԽԱՐԵԱՆ. Տես ԿՈՎԱՍԱԿԱՆ:

ԳԱԽՆ. Տես ԲԱԳՔ:

ԳԱՀԱՐԼՈՒ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասի մէջ: Ունի 661 բնակիչ, բաժնուած 78 տան: Գիւղին բնակիչք արեւմտեան Շիրակի գանապան գիւղերէ գաղթած են: Ունին Ս. Յով-



նանկես անուամբ բարաշէն եկեղեցի մը, 1868ին կառուցուած, և փոքրիկ ուսումնարան մը:

**ԳԱՆՐԱԶ.** — Հայաբնակ զիւղ Արցախի վարանդա գաւառի. հիմնուած Միրիշալուսյէն բաւական զիւր, արեւելահայեաց զիւրքով: Պատուական են օդն, կլիման և ջուրը: Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի, որ կառուցուած է հանդուցեալ Գաւիթ Ալամանի և Բաղդասար Սողոմոնեանի ծախքով. կամարակապ է և զեղեցիկ: Գիւղիս բնակչաց թիւն կը հաշուի 470 հոգի, բաժնուած 65 տան:

**ԳԱՆՐԱԻ.** — Գիւղ Արցախի Խաչին գաւառի, հիմնուած Մէլայի-շէնի արեւմտեան կողմը, բարձր և սեպացեալ բերձի մը սակ: Պատուական են օդն, կլիման և ջուրը: Եկեղեցին Ս. Յովնանկես կառուցեալ է երեք կամարներու վրայ, երկայնութիւնն է 17, 40 մետր և լայնութիւնն 8,60 մետր: Գրան ճակատակալ բարի վրայ կայ շինութեան համառօտ արձանագրութիւն մը 1885 թուականու: Բնակիչք 781 հոգի են, բաժնուած 110 տան:

Գիւղիս հիւսիս արեւմտեան կողմը կան երեք բեմեր, որոնք իրարմէ մէկ մէկ քարընկէց հետու են և ունին արձանագրութիւններ՝ ՇԻ (= 1071) և ՉԻԶ (= 1276) թուականներով: Այս բեմերէ միայն մօտ կայ նահատակի մը զերեզմանը, որուն վրայ շինուած է փոքրիկ մատուռ և ունի արձանագրութիւն: — Այցախ, 155-156:

**ԳԱՂԵԹ ԽԱԶԻՆ.** — Հայաբնակ զիւղ Տրփղիսու գաւառի մէջ, մօտ 1700 բնակչօք, բաժնուած 306 տան: Գիւղիս բնակիչք մեծ մասամբ աղքատութեան և թշուառութեան մէջ են: Ունին եկեղեցի և ծխական ուսումնարան: Գիւղիս անուամբ Տրփղիսու գաւառի մէջ կայ նաև ուրիշ Հայոց զիւղ մը, որ կը կոչուի Փոքր Գաղեր, և ունի 5 տուն բնակիչ:

**ԳԱՄԱՍԿՈՍ.** — Վախուշտ կը յիշէ այս անուամբ կրկին զիւղեր Թոնղք և Գամանիք գաւառաց մէջ:

**ԳԱՄԱՇ.** — Գիւղ Պաքովի (Ռումանիա), բնակչաց մէջ կան մէկ երկու տուն հայ:

**ԳԱՄԱՍԿՈՍ** կամ ՇԱՄ. Գղ. DAMAS. —

Գլխաւոր և նշանաւոր քաղաք համանուն կուսակալութեան: Բովանդակ բնակչաց թիւն է իբր 150000, որոց 110000ը՝ մահմետական են, 8000ը՝ հրեայ, և մնացեալն՝ այլ և այլ բրիտանեայք: 1860 թուականի կոտորածէն առաջ՝ 30 տան չափ բնիկ հայ բնակիչ կային և բաւական թուով պահպուստ վաճառականք, սակայն այդ տուներէն այժմ 5 միայն մնացած են, վաճառականք բնուչկան: Այժմ Հայք 40 տան չափ են՝ միջին հաշուով 300 հոգի, զանազան քաղաքներէ հաւաքուած, և հազիւ օրական սպրուստ կը հայթհայթեն: Քաղաքիս Հայք են ընդ հսկութեամբ Էրուսաղէմի Պատրիարքութեան: Գամասկոսի արեւելեան կողմը Ս. Սարգիս անունով Հայոց վանք մը կայ, որ քաղաքիս պարսպի կից շինուած է 1860ի հրդեհէն վերջը, Տ. Բաճնարաս վարդապետի տեսչութեան ժամանակ, բարձր կաթողիկէի, անտիւն, մինչև ցիկն սրբատաշ քարերով շատ վայելուչ: Կոտորածի ժամանակ այրեցան Հայոց եկեղեցին, որ 80 տարի առաջ շինուած էր, տեսչարանն և քանի մը եկեղեցական կալուածք: Վանքս շուրջն ունի ուխտաւորաց բնակարան և իրեն սեպհական քանի մը տուն: Կալուածական տարեկան եկամտան կը հասնի 100 լիւրայի, յորմէ կը լինին կալուածական նորոգութիւնք և տեսչարանի ծախք: Բաց ի տեսչէն՝ որ Էրուսաղէմի վանական վարչութեան կողմանէ կ'ընտրուի և միանգամայն ժողովրդեան հագնուր հովին է, կան երկու վարդապետք և երկու սպասաւորք: Վանքս ունի բաւական երկիրներ, որոց վրայ եթէ շէնքեր շինուին բաւական արդիւնաբեր կը լինին: Վանացս ելից և մալից մատակարարութիւն յանձնուած է ժողովրդէն բնարուած և հինդ անգամէ բաղկացեալ թաղական խորհուրդի մը, որ պարտական է ամէն տարի հաշիւ ներկայացնել ժողովրդեան: Էկեղեցւոյ մերձակայ սենեակ մը կը ծառայէ իբրև դպրոց, ուր կը յաճախեն մօտ երեսուն հայ երկեսու աշակերտներ:

Անուանի է Գամասկոս իւր հնութեամբն, որ կը յիշուի շատ անգամ ի Ս. Գիլրա՝ Աբրահամէն սկսեալ. և ի հնումն մայրաքաղաք էր Ասորոց: Հարաւային կողմը կայ



լերանց շղթայ մը, իսկ միւս կողմերն ընդարձակ դաշտ են չորս ժամու ճանապարհ տարածութեամբ, և զարդարուած են այգիներով ու պարտէզներով: Շնորհիւ Նաբան և Փարփարայ զեռոց, ամէն տուն չուր կայ և կ'ոտգութին պարտէզը: Օդը բուսական առողջարար է և պտուղը առատ: Քաղաքին մէջ կը շինուին լաւագոյն մետաքսեղէնք, ամէնքն ալ ձեռագործ: Ամէն ազգը ունին կանանաւոր պարոյններ. կան բազմութիւ մղկիթներ, որոց մին ի հումմի Ս. Յովնանու եկեղեցի եղած է: Քաղաքին բարեկարգութիւնը օր լստ օրէ կը յտաջանան և ճանապարհաց շինութեանց համար փոյթ կը տարուի: Արեւելեան կողմը կայ Պասայ իշ շարգ կոչուած դուռը, որոյ համար մահմտականք կ'ըսեն թէ՛ երբ մեծն Օմար աւրից քաղաքին, այս գոնէն ներս մտաւ. այս գրան վրայ կայ մինարէ մը. գարձեալ մահմտականք կ'ըսեն թէ՛ աշխարհին վերջին օրը Յիսուս երկնքէն այս մինարէի վրայ իջնելով պիտի մանէ քաղաքը և զմարդկութիւն պիտի կոչէ ի ճշմարտ կրօնս մահմտականութեան:

ԳԱՄՐԱԼՈՅ. — Գիւղ Տիգրսու նահանգի, Գոշէտի գաւառի մէջ: Ունի 14 տուն հայ և 9 տուն վրացի բնակիչներ:

ԳԱՄՐԱԼՈՅ. — Վախուշտէն յիշուած գիւղ, Գուգարաց թողնոխոր գաւառի մէջ:

ԳԱՅԵԿԻ ՔԱՐ. — Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ կը յիշէ Օրբելեան այս անուամբ քարաբլուր մը:

ԳԱՅԼԱԽԼՈՒ. — Այլազգարնակ գիւղ Սիւնեաց վայոց ձորգաւառի: Այս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ Շահապօնք գաւառի մէջ:

ԳԱՅՄԱ-ԳԱՂԼԸ. — Գիւղ Ալուանից Կուկիսն գաւառի, կառուցուած է Կոկիսն գետի աջ կողմը, Կոփիտ սարի ստորոտը: Նախ շինուած է եղեր գետի ափի մօտ՝ վատաւոր լեռ մը, բայց զրեթէ 20 տարի առաջ բնակիչք փոխադրած են այժմեան տեղն, որ բարեխառն է և ունի լաւ տեսարան: Բնակիչք գաղթած են Արցախի Մշկապատ գեղէն: Երկիրն բերրի է և տեղական բերքերն են՝ ցորեն, գարի, հաճար, սոս, սխտան, լուրիս, բակլայ, խաշիաշ, վարունի և զինի: Ունի 61 հայ բնակիչ, բաժնուած 15 տան:

ԳՆՆԱՐՈՒՐՈՒՆ. — Գիւղ Չարսանձագի Մեծկերտ գաւառակի. ունի 15 տուն հայ, առանց եկեղեցոյ:

ԳՆՆԻԼԻ (Ս.). — Գետակ Խնուայ (Տուրուերեան), որ կ'ոտոցէ Ախրդեման գրաւտանման ընդարձակ մարդադեախնը:

ԳՆՆԻԼԻ (Ս.) ՎԱՆՔ. — Հինաուրց վանքս Կիտարիոյ Ս. Կարապետի վանքէն 20 վայրեան հետու է. ունի 40 սենեակ և եկեղեցի մը յանուն Ս. Աստուածածի: Վանացս կասուցման կամ հիմնարկութեան վերաբերեալ որոշ յիշատակութիւն մը չկայ. միայն իբր վաւերական ինչ կ'ըսուի թէ՛ ի սկզբան կարտտ մատուռ մը յանուն Ս. Աստուածածնի, յետոյ Կիլիկիայէն գաւով Օշին անուամբ իշխան մը՝ կը մնայ անց և իւր Գանիէլ որդւոյն ի յիշատակ, եկեղեցին կը կոչէ յանուն Ս. Գանիէլի մարդարէի: Յայանի չէ թէ ո՞վ էր այս Օշին. գերեզմանը կայ վանքին եկեղեցոյն հարաւային կողմը պատի մէջ, որոյ վրայ կը տեսնուի հետեւեալ արձանագրութիւնը աձև և անձոննի գրերով. «Ի մեծ ք. վ. ձէ. փոխեցաւ Ոշին Ա. որ գայս կիրս կարդայ հայր մեր որ երկիև աւսս հոգոյն»: Ասոր կցեալ է ուրիշ ասպանաքար մ'ալ, որոյ վրայ արձանագրուած է. «Քրիստոս Աստուած ամենայն սրբոց բարեխօսարեանք նորմես Բեկի հոգուն»: Եկեղեցոյն գրան վրայ ալ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «Տեսչարիւն երկեայիև ի բարձանց ի լեռս ի յայց, գոտրուեան տաճարս այս վերստին ետրգեաց. յանուն Ս. Գանիկի քաջագարս սերեղի, քաջագուն Օշին վեմ մեծանուն իշխանի, օգնարեանք տրօք Հայկազնեան գրոնի, ջանեք առաջնորդ Խասնակ զգօն դետի, որ յաչարդ սրբագուն Կարապետ վեմի, ի գարմէ Գաշիբեան երկրորդ Կարմերցի: Յամի 1839 անգա (?) Նոյ. 14»: Սոյ Միքայէլ կաթողիկոսի մէկ կանգակը կայ՝ Գաիթ անուն վարդապետի մը յանձնեալ, ուղղեալ առ «Եկեղեցասէր բարեպաշտ Հայկազուն»: յարամ վանացս հնաթեան վրայ շատ ներբողներ հիւսել է վերջ, կը յարգուէ նպատամատոյց լինել նոյն վանաց շինութեան և նորոգութեան: Վանքիս մօտ այրի մը մէջ կան երկու գերեզմաններ, որոց ասպանագիրք թլև եղծեալ, սակայն միոյն վրայ



գեո կը կարգացուին «Նասնատակ Գրիտաուսի» բառերը: Վանքս յատուկ եկամուտ չունենալով, կ'ապրի ուխտաւորաց նուէրներով և խը արտերը մշակելով: Թեմներն են Կարմեր, Մուհնաուսե և Պարսկասի գիւղերը: Վանքս ունի գրատուն՝ որ բաւական հարուստ է ձեռագիր և տպագիր գրքերով, ամէնքն ալ բարեպաշտ անձինք նուիրած են: Տես ԿՈՒՅՅ ՎԱՆԻՔ:

**ԳԱՆԻՇՄԱՆ կամ ԳԱՆՇՄԱՆ.** — Այլադգարնակ գիւղ Բասենի (Այրարատ), Հասանդալէի մօտ:

**ԳԱՇԱԼՔԻ կամ ԲԱՐԱՏԱԿ.** — Հայարնակ գիւղ Շուշիի, 2 վերատ հետու. 150 հայ տունէ բաղկացեալ: Եկեղեցի ունին, բայց դուրկ են գտնուել: — Շուշիի գաւառի մէջ սերիչ նոյն անուամբ գիւղ մի ևս կայ 20 տուն բնակչօք:

**ԳԱՇԱՐԻ ՀԱՅՈՑ կամ ԽԱՐԱՊԱ ԳԱՇԱՐԻ.** — Գիւղ Այրարատայ Շարուր գաւառի մէջ: Ունի 136 հայ բնակիչներ, բաժնուած 30 տան:

**ԳԱՇԱՐՁԱՆ.** — Գիւղ Վասպուրականի Մարանդ գաւառի մէջ, Գուհի Նշան լեռան սնարից վրայ:

**ԳՍԵ-ԲՈՒՂԱՂ.** — Գիւղ Աղուանից Խենի գաւառի, շինուած ձորամէջ վայր մը, արեւելահայկաց գիրքով արեւմտեան կողմը կը բարձրանան քարածայտ լեռներ: Կլիման, օդն և ջուրն պատուական են, հոգն բերրի. նշանաւոր բերքերն են՝ ցորեն, գարի, կտաւաս: Գիւղիս մէջ կայ ձիթահան գործարան և հողմագորի: Բնակիչք՝ 1355 հոգի կը հաշուին, բաժնուած մօտ 200 տան, որոց նախնիք գաղթած են Ջրաբերց և Խաչեն գաւառներէն: Եկեղեցին կը կոչուի Ս. Գեորգ, ունի հեռեւեալ արձանապրութիւնը. «Յիշատակարարն շինուրեան ստրբ: Գեորգայ եկեղեցոյս ի հասարակ ժողովրդոց Գաշուրս թորս ՈՒՄՂԷ»: Եկեղեցոյս մէջ կայ հին ճաշոց գիրք մը, որ բերուած է Պաշնճագ գիւղէն և հին ճեմար մը, որ բերուած է Քուսիւս գիւղի եկեղեցիէն. ծննդան ունի 1695 թուականու յիշատակարան: — Գիւղիս նախորդ բնակչաց հանդստարանի մէջ կան շատ տապանաքարեր՝ առանց արձանապրութեան: Գիւղիս մերձակայ Ղարս-ղարս, Բելբիլի, Սօխիլքոյ, Մարս-ղարս,

Ինչիլոյ, Թեղեքա և Օնան-սար կոչուած տեղերը կան հին գիւղատեղեր, եկեղեցեաց աւերակներ և հանդստարաններ: — Աղուանք, 236-237:

**ԳՍԵ-ԲՈՒՂԱՂ.** — Գիւղ Արցախի Խաչեն գաւառի. շինուած է Խանձր գիւղի արեւելեան հիւսիսային կողմը, ձորակի մը հիւսիսահայկաց լանջի վրայ: Երկիրը բերրի է և տեղական բերքերն են՝ ցորեն, գարի, հաճար, կորեկ և խաշիաշ: Ամբան՝ օգր ճնշիչ է, իսկ ջուրն անվնաս: Եկեղեցին Ս. Գեորգ՝ բարեկիր է կառուցեալ երեք կամարներու վրայ, 17, 34 մետր երկայնութեամբ և 8, 45 մետր լայնութեամբ: Բնակիչք բնիկ են, 1124 հոգի, բաժնուած 136 տան: Գիւղս ունի նաև Ս. Միսրուբեան անուամբ աղայոց ուսումնարան մը, 25 աշակերաններով:

**ԳՍԵ ԳՍԷ.** — Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, Հօգեվանքի արեւմտեան կողմը: Ունի 776 հայ բնակիչ, բաժնուած 116 տան:

**ԳՍԵԳՍԱ.** — Լեւ Այրարատայ Վանանդ գաւառի մէջ, բարձր է 2007 մետր:

**ԳՍԵ ԳԻՒՍԷ.** — Բարձրադոյն և կոնաձեւ հրաբուխ կատար, Այրարատայ Մասեաց ոտն գաւառի, Ալտարպուլազայ և Աւագ Մասեաց մէջտեղ: Բարձրութիւնը 12000 է տեղի կը համարին:

**ԳՍԵ-ԵՈՒԳՈ.** — Լեւ Այրարատայ Բասեանդ գաւառի:

**ԳՍԵ-ԹԷՓԷ.** — Լեւ Այրարատայ, կը կոչուի նաև Գրդ Չիլարեք:

**ԳՍԷԼԸ կամ ԳՍԷԼԻ.** — Գեա Այրարատայ Բասեանդ գաւառի մէջ. օժանդակ Արածանոյ,

**ԳՍԷԽԱՉ.** — Բլուր Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, որուն վրայ է Ենկիձէ հայարնակ փոքրիկ գիւղը:

**ԳՍԷՆԱՒՈՐ.** — Այս մականունը արուած է Գեղամայ ծովակին, ի՞ դարու մէջ գրուած Տօնական գրոց յիշատակարանի մէջ. «Գաշուսար անուանեալ ծովուն Գեղարքունեաց», թէ ինչ մտքով այսպէս անուանած են, յայտնի չէ:

**ԳՍԷՆՈՒՃԱ.** — Այրարատայ Բասեանդ գաւառի մէջ այս անուամբ վերին և Ստու-



րին կրկին զիւղեր կան և նոյն անուամբ զեաակ մը:

ԳԱՇՊԱՇԻ կամ ՔԱՐԱԳՂՈՒԻՒ. — Հայա-  
րնակ զիւղ Արցախի Գիւղակ գաւառի, հիմ-  
նուած է Թավ-ձորի հիւսիսային կողմը բեր-  
ծի մը վրայ: Բնակիչք 25 տուն են՝ 203  
հոգի, մեծաւ մասամբ բնիկ, քիչեր գաղթած  
են Գարատաղէն: Կլիման, օդն և ջուրն լաւ  
են, երկիրը սակաւ արդիւնաբեր: Եկեղեցին  
բարուկիր է և կը կոչուի Ս. Աստուածածին:

ԳԱՇՊԱՇԻ կամ ՔԱՐԱԳՂՈՒԻՒ. — Գիւղ  
Արցախի Խաչեն գաւառի. հիմնուած է Շի-  
կարար կոչուած բերձի գլխիւր: Վլխահերձ,  
սեղաղեալ և բարձր ապաստաններ կը շրջա-  
պասեն զիւղս, ունի միայն երկու մասը  
արեւելեան և արեւմտեան կողմերէ, և մէկ  
խօսքով, զիւղս ի հնում նշանաւոր բերդ և  
ղած կը թուի: Բնակչաց կէսն բնիկ և միւս  
կէսն եկած են Սիւնեաց Արախս և Գարա-  
պաս զիւղերէն և Բարկուշտաէն: Բերքերն  
են՝ ցորեն, գարի, հաճար, կորեկ և խաշ-  
խաշ. այդի և պարտէզ չունին: Ունի զե-  
րագանց օդ և կլիմայ, բայց ջուրն նուազ  
է: Եկեղեցին Ս. Աստուածածին՝ ծածքն փայ-  
տաշէն է: Այժմ բնակչաց թիւն է 638,  
բաժնուած 79 տան: Եկեղեցեոյ հարաւային  
կողմը կայ խաչարձան մը, հանդերձ ան-  
թուական արձանագրութեամբ: — Գիւղիս  
հարաւ-արեւմտեան կողմը կը գտնուի հին  
հանդստարան մը, կան խաչազարդեալ նշա-  
նաւոր մահարձաններ, որոնց յիշատակա-  
րաններէն մին կը վերաբերի ՁԲ (= 1253)  
թուականին: Գաղղաշի հիւսիսային կողմը  
կայ աւերակ զիւղատեղի և հանդստարան.  
Իսկ հարաւային կողմը աւերակ եկեղեցի և  
հանդստարան: Գիւղիս շուրջը կան նշանա-  
ւոր բարայրներ, որոց միոյն առաջքը փա-  
կուած է բարուկիր պատով: — Արցախ,  
167-166:

ԳԱՇՊԱՇԻ. — Լեռ Սիւնեաց Գողթն գա-  
ւառի մէջ:

ԳԱՇՊՈՒՂԱԳ. — Գեաակ Այրարատայ  
Ռերձ և Արած գաւառի: — Նոյն անուամբ  
ջուր մ'ալ կը հոսի Սիւնեաց Երնջակ գա-  
ւառի մէջ:

ԳԱՇՊՈՒՂԱԳ. — Լեռ Այրարատայ Նիդ  
գաւառի արեւմտեան սահմանածայրը:

ԳԱՇՊՈՒՌՈՒՆ (Քարաբիր). — Հայաբնակ  
զիւղ Այրարատայ ճակատը (Սուրմառի) գա-  
ւառի մէջ: Ունի 1673 բնակիչ, բաժնուած  
184 տան: Ունի վարժարան և եկեղեցի:  
Գիւղիս մօտ Ազատիչ անունով ուխտատեղի  
մը կայ, ուր միայն իրական սեղը կ'երթայ  
յուրա:

ԳԱՇՏ. — Հայաբնակ զիւղ Սպարկերտ գա-  
ւառակի խիզանի: Ունի 15-20 տուն բնակիչ  
և Ս. Սարգիս անուամբ եկեղեցի մը: — Այս  
անուամբ ուրիշ հայաբնակ զիւղ մ'ալ կը  
յիշուի Մսիաց մէջ, 40 տուն բնակչօք:

ԳԱՇՏ. — Գիւղ Սիւնեաց Գողթն գաւա-  
ռի մէջ, այժմ կը կոչուի Սաարին Ազուլիս:

ԳԱՇՏ. — Մշոյ վիճակներէն մին՝ ծանօթ  
է այս անուամբ:

ԳԱՇՏԱԳԷՄ. — Գիւղ Մշոյ Բանաշէն գա-  
ւառակի. ունի 15 տուն հայ և 5 տան բուրդ  
բնակիչ:

ԳԱՇՏԱԿ. — Գիւղ Չարսանձագի խոզայ  
գաւառակի: Ունի 10 տուն հայ և 12 տուն  
մահմեդական բնակիչ: Հայր ունին Ս. Յա-  
կոբ անուամբ եկեղեցի մը:

ԳԱՇՏԱԿԱՐԱՆ կամ ԳԱՇՏԱՐԱՆ. — Կը  
յիշուի վայրս Չ գարու մէջ, որուն աէր էր  
Վարադներսէ:

ԳԱՇՏԱՀԱՏ. — Գիւղ Արցախի Բերդաձոր  
գաւառի մէջ, այժմ այլազգարնակ է. մէջը  
կը տեսնուին եկեղեցեոյ աւերակներ:

ԳԱՏԱՎԱՆՈՒՅ ՁՈՐ. — Կը յիշուի յիշա-  
տակարանի մը մէջ, գաւառն անյայտ:

ԳԱՇՏՈՒՆ, ԳԱՇՏՈՆ կամ ՏԱՇՏՈՒՆ. —  
Հին վիճակ և զիւղ Սիւնեաց Արեւիք գա-  
ւառի մէջ: Գիւղս կը յիշէ Օրբելեան պաա-  
միշը, կը յիշուի նաև 1684ին գրոց յիշա-  
տակարանի մը մէջ: Գաւիթ Բէկի Ժամանակ,  
Որդուառի խանին ասպատակաց ձեռքով ա-  
ւերեցաւ, և բնակիչները փախան Չաւրնդուր  
և ազատեցան: Գիւղիս եկեղեցին կը կոչուէր  
Ս. Ստեփանոս: — Այս անուամբ զեաակ մի  
ևս կայ, կար նաև Գաշտուէի յերդ կոչուած  
ամրոց մը:

ԳԱՇՔԷՍԷՆ կամ ՔԱՐԱՀԱՏ. — Հայաբնակ  
զիւղ Արցախի Գարդման գաւառի. հիմնուած  
է խոր ձորի մը մէջ, Բանանց զեաի ձախ  
ափին, որոյ արեւելեան, հարաւային և ա-  
րեւմտեան կողմերն պատած են բարձրադոյն



սարեր: Երկիրը ազատագրուած է և խիստ բիշ արդիւնաբեր. տեղական բերքերն են՝ ցորեն, գարի և կենդանիներէն ոչխար ու տաւար: Օդն, կլիման և ջուրն անվնաս: Բնակիչք 880 հոգի են, բաժնուած 80 տան. ունին Ս. Աստուածածին անուամբ փայտաշէն եկեղեցի մը: Գիւղիս մօտ Բանանց գետի աջ ու ձախ կողմերն, լի են երկաթի, սպինձի և զանազան սպառուական քարերու հանքեր: Մեծ Բանանց գիւղի բնակիչները ժամանակաւ շատ օգտուած են այս հանքերէն հալելով և շինելով զօլմանի խոփ, ձուիչ, ճամբարակ, արօրի խոփ, ետտանի, և այլն: Տեղւոյս սպինձահանքը այժմ կը բանեցնէ Գանձակեցի Կերտէս Բէկ Տէր Կերտիսեանցը: Քարահաար հարաւային կողմը կը գտնուի Խաչաղբէր անուամբ Հայոց աւերակ գիւղ մը: Անուոնք առած է եկեղեցւոյ ներքեւ յորդանաս աղբիւրէն որ ունի խաչածեւ աւազան: Աւերակիս մէջ նշանաւոր է եկեղեցին՝ շինուած սրբատաշ քարերով չորս սիւներու վրայ, որ ունի ՌՃԾԹ շինութեան թուականը, այս թուականը Լալայեանց կը գրէ ՌՃԹԸ: Հոս կայ նաև հանդստարան: — Արցախ, 286—287:

ԳԱՇՔԷՆՏ կամ ՔԱՐԱՇԷՆ. — Հայքանակ գիւղ Սիւնեաց Հարանոյ (Չանդեղուր) գաւառի: Ունի 600 բնակիչ, բաժնուած 58 տան: Գիւղիս մօտ հարաւային կողմէն կը բոլակն ծծմբային և թթուահամ ջուրեր, զոր այլազոյր կը կոչեն Գօրուր սու: — Այս անուամբ ուրիշ հայքանակ գիւղ մ'ալ կայ Շուշի գաւառի մէջ: Ունի 236 բնակիչ, բաժնուած 35 տան:

ԳԱՇ ՕՂՈՒԳ ԳԱՓՈՒՍՈՒ. — Լեռնային կիլիկիոյ մէջ, 8100' բարձրութեամբ լեռնանցք. հոս կը գտնուին գեղեցիկ մեխակներ և այլ գանգան ծաղիկներ: Իսկ թռչուններէ կան մեծամեծ արծիւներ և անոզներ և ձիւնակեաց մանր թռչնոց երամներ:

ԳԱՊԱՍՄԵՂԱ կամ ՋԱԿԱՍ. — Գիւղ Գուգարաց Պարուար գաւառի մէջ. Բալիճէն 2 վերստ հեռու: Բնակիչներէն 20 տունը վրացի և 16ը հայ են՝ վրաթօս, ունին փոքրիկ քարաշէն եկեղեցի մը գիւղի հարաւային կողմի բլրի վրայ, զոր իւր ծախքով կառուցած է հանդուցեալ Ղազար Աթարէկեանցը:

Գիւղս կալուած է վրացի իշխան Գաւիթ Քօրուլովի:

ԳԱՌՆԻ. — Վասպուրականի հին գաւառներէն մին:

ԳԱՍՆՈՒԱԿԵՔՏ. Տես ԳՐԱՍՈՒՆԱԿԵՔՏ:

ԳԱՍՆԱՒՈՐՔ. — Տուրուբերանի հին գաւառներէն մին:

ԳԱՍՄԱԶՈՐ կամ ԹԱՍՄԱՍՈՐ. — Սակաւարնակ գիւղ կարնոյ, բնակիչք Հայք և Թուրքք խառն: Հայոց եկեղեցին Ս. Թորոս՝ աւերակ է:

ԳԱՍՆՈՅ ԱՆԱՊԱՍ. — Միտիժարայ Գոշի գաւառատանազոց հեռեկալ յիշատակաւ ընտին մէջ կը յիշուի. «Ի դիտապետութեան տեսն Ստեփանոսի տան Արշակից, յաշխարհիս Առանայ. ի եանակիս որ կուի մայրաքաղաքիս Գանձակ, յանապատ և յեղբայրանոցս սևոռանեալ Գասնոյ, սկզբնաւորեալ ի յեռակորով մեհաստանիս կոչեցերոյ Հոռուաշէն, ընդ նոյնանաւ սրբոց եկեղեցեաց կառաստանացն յիշեցերոց»:

ԳԱՍՈՒՎ. — Լեռնանցք Խիզանի մէջ:

ԳԱՍՏ կամ ՏԱՍԳ. — Այլազոյրնակ գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի մէջ. սա է հին Գասաակ գիւղը: Տես ՅԵՊՆԱՅ ՎԱՆՔ:

ԳԱՍՏԱԿԵՔՏ կամ ԳԱՍՏԱԿԻՎ. — Արցախի Ջրարեղ գաւառի մէջ աւերակ գիւղականցի, յորում կայ նաև կիսաւեր եկեղեցի և հանդստարան: Կը գտնուի Գոնի շէնի հիւսիսային կողմը բարձր, տեսարանաւոր, անտառապատ և ուշագրաւ սարահարթի մը վրայ: Բաւական փառաւոր է եղեր քարուկեր եկեղեցին, 13 մետր երկայնութեամբ և 10մ, լայնութեամբ: Ունի շինութեան արձանագրութիւն ԶԻԷ ( 1276) թուականու. ունի նաև ուրիշ արձանագրութիւններ: Ժամատունը այժմ աւերակ գարձած է, որուն շինութեան յիշատակարանը կը տեսնուի եկեղեցւոյ ձաւկատակալ քարի վրայ: — Այժմ փոքրիկ շէն մը սկսեր է ձեւանալ աւերակ գիւղատեղիս. ունի 90 բնակիչ, բաժնուած 10 տան, որոնք կը զբաղին անասնապահութեամբ: Լաւ է տեղւոյս օդն և ջուրը: Այս անուամբ ուրիշ մի քանի գիւղեր ևս եղած են ի հնումն մեր աշխարհի Բաղք, Գեղարքունի, Իդուկ և այլ գաւառաց մէջ:

ԳԱՎԱՂՈՒ կամ ՏԷՎԷԼԻ. — Գիւղ Այրաւ



բառայ Ուրծ և Արած (վէզիրասար) գաւա-  
սի, Երեւանէ Կախիջեան աանող արքու-  
նական ճանապարհէ վրայ, ուր կայ և թըղ-  
թաաարութեան իջեան: Ունի 380 բնակիչ,  
260ը հայ, 30ը պարսիկ և 30ը բուրգ:  
20-25 Հայք աստիճանաւոր են և աէրու-  
թեան զանազան հաստատութեանց մէջ, կը  
ծառայեն: Ունի մօտ 100 այգի, բանի մը  
մանրավաճառ և արհեստաւոր, և փառաւոր  
կիկեղեցի մը: Գիրքը զաշառային, և երկրա-  
զործութեան ու այգեզործութեան նպաստա-  
ւոր: Ըստ պատմութեան ձերոց, Հայք զաղ-  
թած են Պարսկաստանէ: Գիւղացիք, գրե-  
թէ առանց բացառութեան, ունին իրենց սեղ-  
հական վարեւաճող և այգի: Օղը բարեխանն  
է, ջուրն՝ առողջարար բայց սակաւ: Արաս-  
բայք կ'ոտոզին վէդի-լայ գետէն, որ ամառ-  
ները բոլորովին կը նուազի: Գլխաւոր բեր-  
քերն են՝ ցորեն, բամբակ, գարի և բրինձ:  
Գիւղացիք բնդհանրապէս աշխատասէր և գոր-  
ծունեայ մարդիկ են: Գիւղիս մօտէն կ'անցնի  
Կախանովի ատուն, որոյ համար՝ բաւ վիա-  
յութեան ժողովրդեան, 200 հազար բուրլիէն  
աւելի ծախք ըրած է առուին նախկին աէ-  
րը Ն. Կախանով, և այս պատճառաւ սնան-  
կանալով, իւր 16 զիւղերու հետ վաճառք  
է Շերեմետեւիին:

ԳԱՎԱՍԻ. — Գիւղ Տիգրանակերտի. 10  
տուն հայ կայ:

ԳԱՎԱՍԻՍՈՒՆ, կամ ԹԱՎԱՍԻՍՈՒՆ. — Գիւ-  
ղաբաղաբ Կեսարիոյ, ձորի մէջ. հայ բնա-  
կիչը 120 տուն են. ունին կիկեղեցի մը Ս. Թու-  
րու և Մեղրոսեան անուամբ երկսեռ վար-  
ժարան մը՝ 45 աշակերտներով: Գիւղիս հայ  
բնակիչը, որ կէս դար առաջ հայախօս էին,  
այժմ թուրքերէն կը խօսին: Գիւղիս մէջ  
կան նաև 1000ի չափ թուրքեր և 450 Ֆոյնք:

ԳԱՎԱՁԻ կամ ՏԵՎԼԵՃԻ. — Գիւղ Բաղուի,  
3 ժամու ճանապարհ հեռի՝ արեւմտեան հիւ-  
սիսային կողմը: Ունի 25 տուն, որոց 15ը  
Հայոց և մնացեալը Քրդաց են:

ԹԱՎԱՍԻՍՈՒՆ. — Հոգաբարձր Ալբարասայ  
ճակատը գաւառի, սրան ներքեւէն 1886ին  
զանուեցաւ բեւեռածու արձանագրութիւն մը:

ԳԱՎՐԷՎ, ԳԱՒՐԷՎ կամ ԹԱՒՐԷՎ. Գղ.  
TAURIS, Պրսկ. تاوريس. Ռ. Шаврис. —  
Ատրպատականի Հայոց կեդրոնավայրն և ա-


րեւմտեան Պարսկաստանի ամենավաճառա-  
շահ քաղաքն է Գավրէժ, որ հեռու է Թէհ-  
րանէն 536 հզրմ. հիւսիսային արեւմտեան  
կողմը և Ռերմիոյ լճէն գրեթէ 53 հզրմ.  
յարեւելս: Կառուցուած է Ռերմիոյ լճի եզեր-  
քէն յարեւելս տարածուող ընդարձակ գաշ-  
տի մը ծայրը, Աճի գետի մօտ, Սըհանդի  
արեւմտեան ստորաբք. ծովի երեսէն բարձր  
է 1509մ. և կ'ինկնայ 38° 2' հիւսիսային  
լայնութեան և 43° 49' 37" արեւելեան եր-  
կայնութեան տակ: Եւրոպացիք կ'ենթադրեն  
թէ սա Պտղոմէոս աշխարհագրի յիշած Գա-  
րբիս կամ Տարբիս քաղաքն է: Հայկական  
աւանդութիւնը և պատմութիւնը կ'ըսեն թէ  
հիմնուած է երբորդ գարու մէջ Խոսրով Մե-  
ծէն, որ իւր եզրօրոգւոյն Արատանայ ա-  
րեան վրէժը առնելու համար, զոր սպան-  
նած էր Արտաշէր Ստանեան, առաւ տարի  
աւերեց Պարսից աշխարհը, և թէ յաղթու-  
թիւնէն վերջ, քաղաքիս սեղը կենալով բա-  
ցազանշած է «Գա ի վրիժ Արտաշէրի», յոր-  
մէ ծագեր է քաղաքիս անունը: Կոչուած է  
նաև Գասնակ: Արեւելեան պատմագիրք շի-  
նուած կը համարին Գավրէժը Ը (791) զա-  
րու մէջ Հարուն-էլ-Ռէշիա ամիրապետի  
Զուլէյատայ կնոջէն, որ կոչած բլլայ թեպ-  
րիզ, այսինքն՝ ջերմահալած. սակայն Զու-  
պէյատայի բրածը պարզ վերաշինութիւն է:  
Հայոց մէջ ուրիշ աւանդութիւն մ'ալ կայ,  
թէ Խոսրով թագաւորը Երուսաղեմէն զառ-  
նալով հոս թաղեց սուրբ խաչը, քաղաքին  
արեւելեան կողմը զանուսդ բերդին տակը:  
Մեր Տրդատ թագաւորը 321 թուին, զի-  
մեց Ատրպատական աշխարհը, և Պարսից  
Շապուհ թագաւորին ձեռքէն առաւ Գավրէժ  
քաղաքը ու նորոգելով ամրացուց: Մոնղո-  
լաց ժամանակ Գավրէժը զարձաւ Պարսկաս-  
տանի մայրաքաղաք և մեծապէս ծաղկեցաւ:  
Հուլաւուն խանը Վ. Գարու մէջ հոս հաս-  
տատեց իւր գահը, այդ պատճառաւ նոյն  
ժամանակ կոչուած է ի Հայոց Հուլաւու  
Թախտ: Սոֆիներու ժամանակ քաղաքիս  
տիրեցին Սէլիմ 1514ին, Սուլէյման 1534ին,  
Մուրատ Գե վեղիրն Օսման փաշա 1585ին:  
Թուրքերէն առաւ Շահ Աբբաս 1610 թուին.  
Պարսից ձեռքը անցաւ 1618ին. Մուրատ  
Գե օրով վերստին առնուեցաւ և կողոպ-



տուեցաւ թուրքերէն. 1732ին անցաւ Նաւարր Շահի և ժվ գարու վերջերը ինկաւ այժմեան տէրութեան ձեռքը:

Քաղաքս ենթակայ եղեր է ոչ միայն բազմաթիւ ազեաւոր սրտերազմներու, աւարատութեան, հրկիզման և աւերմանց, այլ և բնական պատահարներու: Կը յիշտին հինգ զլխաւոր երկրաշարժեր, որոնց չորսը

խարխուլ: Շէնքերէն նշանաւոր են լապտաւանդի պալատը, իշխանականաց և հարուստներու ապարանները, աները, և քարվանսարանները: Անցեալ գարու մէջ քաղաքիս աները բնդհանրապէս միայրակ էին թրծեալ աղիւսով շինուած և հողածածք. ժամանակի յառաջանալով շինութիւններն ալ սկսած են աւելի նոր և ծաշակաւոր ձեւեր անուլ:



246. Դավրէժի ընդհանուր տեսարանը:

պատահած են փրկչական 634, 1441, 1527 և 1780 թուականներուն: Առաջինները զրեթէ բոլորովին կործաներ են մեծ քաղաքը, իսկ երկու վերջինները տուեր են 70 000 և 40 000 զոհեր: Այսպիսով Գալթէժը զբրկուեր է հսկայաշորձ պալատներէ, մզկիթներէ և այլ ահաւակ հնութիւններէ. մի միայն մնացեր են այժմ՝ արեւելեան դրան մաս թէհրանի ճանապարհի վրայ կիսաքանդ կեօքմէնիար և 25մ, բարձրութեամբ Արք կոչուած միջնաբերդը, որ հետուէն տակաւին ամբողջ կանդուն կ'երեւի, բայց մօակն կործանուած և

Շրջապատուած են գեղեցիկ և զուարճալի պարտէզներով: Շարտէն՝ որ այցելած է քաղաքիս, 1675ին կ'ըսէ, անէր 250 մզկիթ, 15000 կրպակ՝ շատերը քարաշէն, լի աւէն տեսակ վաճառքներով, 300 իջեան, 9 թաղ, 15000 տուն և 550 000 բնակիչ: Այժմ բնակչաց թիւն կը համարուի 200 000, իջեաններն են 40 և կրպակները 4500: Պարսիկները բազմաթիւ են, Հայք 650-700 տան, իսկ եւրոպացիք, 20 տուն կը հաշտին: Գալթէժի խրաքանչխր թաղունի կառավարութենէն նշանակուած թաւ



զաղեալը, և իւր յատուկ գրօշակը: Հայոց թաղերու (կամ Պարսից կոչածի համեմատ՝ էրմէնիսթանի) թաղապետը կը կոչուի Ղալալբէկ՝ որոյ գրօշի գոյնը կարմիր է:

Հայերը կը բնակին Ղալալի (Բերդաթաղ) կամ Ներսի և Լիլաւայի կամ Գրսի թաղերու մէջ: Ղալալի Հայք մօտ 300 տուն են և բնդհանրապէս հարուստ վաճառականներ: Հոս է Ասորպատականի վիճակի Հայոց առաջնորդարանը, որ անցեալ գարու կիսուն Ս. Թապէս առաքելոյ վանքէն փոխադրուե-

նուած է Տէր Յովսէփ առաջ քահանայ Մեղիք Յովհաննիսեանի ջանքերով: Եկեղեցոյս մուտքի զբան ճակատը, մարմարին քարի վրայ արձանադրուած է հետեւեալն. «Շիւնեցաւ սուրբ Աստուածամայր Եկեղեցիս ի 1 Ապր. 1782 ամի և ի ք. Հայոց ՌՄԼԱ ի նայրապետութեան Տեսուն Ղալալառ, աշխատութեամբ Յովսէփ առաջ քահանայի Մեղիք Յովհաննիսեան արդեամբ շարեպաշտ նայազգի ժորովրդականոց»: Ստեփանոս Մխիթարեան սրբազանը, մեծ համարձակութեամբ



247. Գավրէփ. — Բերդաթաղի տեսարանը:

ցաւ քաղաքս: Ստեփանեան Սահակ եպիսկոպոսը կատուցած է առաջնորդարանը և Արամեան գպրոցը՝ 1857ին, որ ժամանակին նշանաւոր շէնք կրնար համարուիլ. առաջնորդարանը այժմ վերաշինութեան պէտք ունի: Արամեան գպրոցի անուամբ Հայոց տպարան մը բացուած է թաղիս մէջ, Ստ. Մխիթարեանց եպիսկոպոսի ժամանակ: Հոս կը տպուին զանազան բնկերութեանց տեղեկագրերը և այլ գրքոյկներ: Ղալալի Հայոց Եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածամայր, որուն հիմնարկութեան բուն թուականը մեզ անյայտ է, երկրաշարժէն կործանուած լինելով, 1782 թուականին հիմէն վերստին շի-

յաջողիւ է եկեղեցոյս գմբէթի վրայ խաշ մը գնել: Այս թաղի մէջ բաց ի Արամեան սղապոց ուսումնարանէն, որ ունի մօտ 140 աշակերտ, գասարան Ե, տարի Ը, կայ նաև Ս. Աննայեան օրիորդաց գպրոց՝ հաստատուած 1883 թուին, Թումանեան Եղբարց շնորհիւ, ունի 100 աշակերտուհի, գասարան Գ, տարի Ե: Այս երկուս գպրոցները ունին 13 ուսուցիչ և ուսուցչուհի: Այս թաղի մէջ 1895ին հաստատուած է նաև Մանկագարաւէլ մը, Հայուհեաց Բար. Ընկերութեան ծախքով, ունի 40ի մօտ և բնիսաներ. նոյն բնկերութիւնը միեւնոյն թուականին հաստատած է նաև աղջկանց համար



կարևձեւի Արհեստանոց մը, ուր կը յաճախեն 30 օրիորդներ: Ղալայի մէջ են Ռուսաց, Անգլիացոց, Գաղղիոյ և Թրքաց հիւպատոսարաններ և եւրոպացոց աններ: Լատինք 1888ին հոս եպիսկոպոսարան մը հաստատեցին և Հոռովայ Քահանայապետը 90 000 բուրլի առաւ. եպիսկոպոսարանի, եկեղեցոյ և ուսումնարանի շէնքեր գնելու համար. սակայն ցարդ եպիսկոպոսարանը մնացած է առանց եպիսկոպոսի, որուն պէտք ալ չկայ, սրովհետեւ խիստ քիչ են եւրոպացի լատինք: 1901 թուին Լագարեան Միարանութեան Հարք, բացին ազայոց զբարոց մը, ուր կը յաճախեն 40 հայ աշակերտներ: Այս թաղի մէջ Ամերիկացի միսիոնարները ունին օրիորդաց զարոց մը՝ 80 աշակերտուհիներով և Մանկապարտէզ մը՝ 30 երեխաներով, բոլորն ալ հայ. ունին 5 ուսուցիչ և ուսուցչուհի:

Լիլալայի կամ Գրտի թաղի Հայք 400 տան շափ են, մեծագոյն մասը հասարակ գասէ, կը պարապին հիւանդութեամբ, սկիւրջութեամբ, զերծակութեամբ, և այլ արհեստներով. կան նաեւ վաճառականներ, սակայն միայն չոր ապրանք կրնան վաճառել, վասն զի պարսիկները քրիստոնեաներէն թաց բան առնուլը մեղք կը համարին: Ռուս-Պարսկական պատերազմէն վերջ հայ արհեստաւորները ամէն տեսակ սուրբերէ ազատ էին. քանի մը տարի առաջ կառավարութիւնը փորձեր է այլ իրաւունքը խլել, այժմ՝ քիչ քանակութեամբ սուրբ կ'առնու: Թաղիս Հայոց եկեղեցին կառուցուած է 1845ին և կը կոչուի Ս. Սարգիս, աշխատութեամբ Չաքարիա աւագ քահանայ Տէր Չաքարեանցի և արդեամբ ժողովրդոց, ինչպէս կը յայտնէ արձանագրութիւնը: Լիլալայի մէջ Հայք ունին Հայկազնեան ազայոց ուսումնարան՝ 1877ին թուամենեան Եղբարց կողմէ հաստատուած. աշակերտ 150, գասարան Ե, տարի Ը. և Թամարեան օրիորդաց ուսումնարան՝ 100 աշակերտուհիներով, գասարան Բ, տարի Գ: Այս երկուսն զարոցները ունին 13 ուսուցիչ և ուսուցչուհի: Հայուհեաց Բարեգ. Ընկերութիւնը 1895ին այս թաղի մէջ ևս բացած է Մանկապարտէզ մը 25 երեխաներով և մէկ Արհեստանոց 40 աշակերտուհի-

ներով: Այս թաղի ուսումնարանաց մէջ, նշանաւոր է իւր յարմարութեամբ և ընդարձակութեամբ օրիորդաց Թամարեան ուսումնարանը, զոր կառուցած են իրենց ծախքով թումանեան յայտնի վաճառականները: Լիլալայի մէջ 1876ին Ամերիկացի միսիոնարներ «Պարա» ընկերութեան առաքելները, բացին ազայոց զարոց մը. ունին 100 աշակերտ, 6 ուսուցիչ և ուսուցչուհի. բացած են նաև Մանկապարտէզ մը 30 երեխաներով: Բողոքականք ևս ունին երկուսն զարոցներ մօտ 160 հայ աշակերտներով: Գալթի Հայք ունեցեր են և ունին նաև շատ ընկերութիւններ. Լիլալայի մէջ է «Թաւրիղի Հայուհեաց Բարեգործական Ընկ.» որ աւելի հին է և հարուստ, իսկ Ղալայի մէջ է «Ատրպատականի Հայուհեաց Բարեգործական Ընկ.» որ աւելի նոր է: Վերջին տարիներս (1898) հաստատուած է նաև «Թաւրիղի Լսարանական Ընկերութիւն», որ օգտակար դաստիարակութիւններ կ'ընէ և հասարակութեան մտաւոր յառաջադիմութեան մեծապէս կը նպաստէ: Արեւոյնքութեան պատճառով շարիքներէն ու վեասներէն նոր սերունդը փրկելու բարի նպատակով 1899 թուականին կազմուած է «Պարսկաստանի Հակալիւրակական Ընկերութիւն»: Գեղարուեստի ճաշակը հասարակութեան մէջ տարածելու և բարքերը ազնուացնելու նպատակով 1901 թուին կազմուեցաւ «Երաժշտասիրաց Ընկերութիւն»: Ուրիշ բազմաթիւ ընկերութիւններ ևս եղած և անյայտացած են զանազան ժամանակաց մէջ: Բարեգործական ընկերութիւններն մեծ օգտակարութիւն ունին, ոչ միայն քաղաքիս մէջ, այլ և գիւղերը տարածելով գիտութեան լոյսը նորահաստատ ուսումնարաններով: Գալթի կրկին հայուհեաց բարեգործական ընկերութիւնները 1901 թուին միացան, և այժմ կը կոչուին «Թաւրիղի Հայուհեաց Բարեգործական Միացեալ Ընկերութիւն»: Յիշենք նաև Ղալայի «Գրագարանական Ընկերութիւնը» որ մօտ 20 տարուան գոյութիւն ունի. իւր գրագարան — ընթերցարանի մէջ կան 2000էն աւելի գրքեր, բաւական թուով լրագիրներ ևս կ'ստանայ. ընթերցարան և գրագարան կայ նաև Լիլալայի թաղի մէջ:



Գափրէժի երկու հայկական թաղերն եւս ունին իրենց ասանձին թատերական գահ- լիճները, ուր երբեմն երբեմն կը լինին գրա- կան երեկոյթներ և ներկայացումներ, յօգուտ ուսումնարաններու և կամ ուրիշ բարեգոր- ծական նպատակներու: Ներկայացումներու ներկայ կը գանուին շատ անգամ գահա- ժառանգը, պարսիկ խաներ, պաշտօնեաներ և հիւպատոսներ: Գափրէժի բնակչաց մէջ ա- մէնէն աւելի մտաւորապէս յստաջակիմած

շակով, իսկ երիտասարդները եւրոպական տարազ: Կանանց տարազը կովկասեան է, միայն աներէն դուրս ելնելու միջոց վրանին կապոյտ ծածկոյթ կ'առնուն:

Գափրէժի օգն առողջարար է և աւելի օգտակար կրնար ըլլալ ժողովրդեան, եթէ քաղաքին մաքրութեան խնամք տարուէր: Խմելու ջուրը՝ ջրամբարներու մէջ անշարժ կենալով անմաքուր է և երբեմն գարշահոտ: Բնակիչները հակառակ քաղցր օդին և սի-



248. Գափրէժ. — Հայ Մանկապարտիզի աշակերտաց խումբը:

ժողովուրդը հայն է, որ հասկնալով ուսման կարիքը բոս այնմ կը գործէ: Նա Պարսկաստանի Հայերէն հոգարան է բնաւորութեամբ և միանգամայն մեհանձն: Թէև ի հնումն քաղաքիս Հայք բազմաթիւ էին և Մարթինի բսածի հռմեմատ Պարսիկներէն աւելի քաջ էին վաճառականութեան մէջ, բայց անցեալ դարու սկիզբը հազիւ կային 40 աուն: Գրեթէ մէկ դարու շրջանի մէջ այս տանց թիւն բազմացիր եզեր է մինչև 700: Այժմեան հայ բնակիչք մեծ մասամբ Գարաաղէն եկած են: Գափրէժի Հայ ծե- րերը կը գգնուին պարսիկ քաղաքացիի ճա-

րուն բնութեան, առհասարակ վատառողջ են. սակայն խոստովանելու է որ Հայք առու- գութեամբ իրենց գրացի ազգերէն շատ կը տարբերին: Բարեխառն գօտույ ամէն տեսակ բերքեր հոս առաջ կու գան, և պտուղնե- րէն շատերը, մանաւանդ նուշ և ծիրան՝ խիստ անուանի են. ունի 40 տեսակ խա- զող: Քաղաքիս ամենաշահաբեր արհեստն է գորգագործութիւնը, տեղական ապրանքը շատ նուրբ, ճաշակաւոր և յարգի է: Ամառը հա- բուսաները հանդիստ աննելու կ'երթան Սը- հանդի հովանաւոր և զուարճալի գիւղերը և հանրային ջրերու քովերը. Լալայի բաղնիք-




ները՝ Սիրաարունտի մօտ, շատ յաճախորդներ ունին:

Դավրէժը գտնուելով Պարսկաստանի Հիւսիս-արեւմտեան անկեան մէջ Թուրքիոյ և Ռուսիոյ սահմանաց մօտ, ոչ միայն ազմագիտական մեծ կարեւորութիւն ունի, այլ և կեդրոն մ'է միջազգային վաճառականու-

մէ Թէհրան հաստատուած « Պարսկաստանի կայսերական Պանքան » մեծ մասնաճիւղ մ'ունի բաղաբխ մէջ. 1901 թուին Ռուսական Սուանի պանքան եւ հոս մասնաճիւղ մը հաստատեց:

Քաղաքիս մօտ Հիւսիսային արեւմտեան կողմը, Աճի գետի վրայ կայ 18 ակն ու-



249. Դավրէժ. — Օրիորդաց Թամարեան ուսումնարանը:

թեան, մերոյիշեալ երկու տէրութեանց և Անգլիոյ հետ Պաղատաի և Թէհրանի միջոցով: Վաճառականական տարեկան ելեւմուտքը կը հասնի 30 միլիոն ֆրանկաց: Կերմնածուծեան գլխաւոր նիւթերն են բամբակեղէն, բրդեղէն, ապակեղէն, շաքար, թէյ, և այլն: Իսկ արտածութեան նիւթերն են գլխաւորաբար գորգեր, չամիչ, նուշ, շալեր, և այլն: Երկար տարիներ է ի վեր Անգլիացիներու կող-

նեցող հոյակապ կամուրջ մը: Իսկ մերձակայ շիրան վրայ ի հնուսն կար Հայոց գեղեցկաշէն մենաստան մը, որ յետոյ մզկիթ փոխուած է: Մեծ հրապարակին մօտ եւս կը յիշէ Ինճիճեան մզկիթ մը, որ կանխաւ Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցի է եղեր, որ կ'ըսեն՝ թէ կը պահուէր երկար ժամանակ նոյն սրբոյն մէկ ձեռքը: Դավրէժի մէջ ծներ է պատմարան Առաքել վարդապետ,




որ գրած է իւր ժամանակի 60 տարուան պատմութիւնը 1602 թիւէն սկսեալ մինչև 1662: — Տեղւոյ չայք կը գործածեն սուսահայոց լեզուն, գպրոցներն ալ նոյն սեղ-գաթեան կը հետեւին: Չայք քաղաքէն 40 վայրկեան հեռու Ս. Աստուածածին անունով տխասանդի մը ունին՝ փոքրիկ մասաւսով մը, շրջապատուած գերեզմանոցով և մեծ

ԳՍՏԱՆԵՔՏ. — Ի հնումն այս անուամբ մեծ բեյոյ մը կար Չայոց և Մարաց աշխարհի մէջտեղ:

ԳՍՏԱՅԻ. — Գիւղ Այրարատայ Մասեաց-սան գաւառի մէջ:

ԳՍՏԱՇԷՆ. — Աւերակ եկեղեցւոյ և գիւգասեղի Տայոց կոյ գաւառի մէջ: Կ'աւանդեն, թէ երբ վրացիներէն անկախ թագաւոր



250. Գավրէժի չայոց թաղի տեսարանը:

պարտիզով. պարտէզը ունի շրջապատ: Թէև Չայք ունին մասնաւոր գերեզմանատուն, բայց երբեմն այս ախտատեղւոյս գերեզմանոցին մէջ մեռելներ կը թաղեն: — Գավրէժի շուրջը հայաբնակ գիւղեր չկան, միայն հիւսիս արեւմտեան կողմը 6-7 ժամ հեռու կան Մուծաւբար, Սեօնրիչ և Աշլու մաշք հայ գիւղերը: Ալշամուլըրը Մուծամբարէն 5 վերստ հեռու է. ունի 36 տուն բնակիչ և եկեղեցի: Միւս երկու գիւղերու նկարագիրը տես իրենց կարգին: — Կ. Չայատատան, 404-408: Այրարատ անապիթ, 1898, էջ 301-302: Արարս, 1892 թ 52-54. և այլն:

Կ'իշխեր կոյ գաւառի վրայ, սա հրամայեր է տեղւոյս իշխանին հոս շինել եկեղեցի և պեակ. իշխանը նախ շիներ և փութով աւարտեր է մեծ եկեղեցի մը: Թագաւորը, որ ամառը հոս կ'անցընէր, խոյս տալով Արատանուչայ ասթէն, քաղաքէն կը մեկնի յունիսի մէջ, յուսալով որ աւարտած կը գտնէ պղկին շինութիւնը, և տեսնելով որ եկեղեցին աւարտած է և պղեակը ոչ, տեղւոյն իշխանը գիմացը կանչելով կը յանդիմանէ. իսկ նա կ'ըսէ. Երկրաւոր իշխանէ աւելի մեծ է երկնից Աստուածը: Թագաւորը այս լսելով զեռ աւելի բարկանալով, կը հրաւմայէ զիշխանը կտակել եկեղեցւոյն սիւնէն:



Իսկ գիւղի բնակիչները այնուհետեւ բոսնիացիները և տեղը լքուած թողին: Այլ եկեղեցւոյ որմերը ցարդ կը մնան: Գիւղս այսպէս կոչուած կը թուի Գատս իշխանի մը անուամբ: Այժմ կայ Գատուշէն անուամբ այլազգաբնակ գիւղ մը Տայոց նոյն գաւառի մէջ, 30 աուն բնակչօք:

**ԳԱՏԵՄ** կամ **ԹԱԳԷՄ**. — Հայաբնակ գիւղ Խարբերդի, 200 աուն բնակչօք: Ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը և համանուն վարժարան մը՝ 100 աշակերտներով: Բնակչաց զլիսուոր զբաղմունքն է հողագործութիւն:

**ԳԱՏԵՄՈՒ ՎԱՆԲ.** — Գատեմ գիւղի մօտ կը գտնուի վանքս, որ շքեղ և կամարակապ զմբէթաւոր քարաշէն տաճար մ'ունի Ս. Աստուածածնի անունով: Կ'աւանդեն թէ Ս. Թաղէս առաքեալէն հիմնուած է. տաճարի շէնքը հին է և անեղծ մնացած: Սենակները և միւս բոլոր շէնքերը աւեր, և կործանեալ միճակի մէջ են: Ընտիր այգիներ և պտղատու ծառեր կան վանքիս շուրջը, ունի նաև շատ արտեր և հողեր. տարին մօտ 100 բլիէ ցորեն, 50 բլիէ գարի և 100 քաշ բամբակ կ'ընդունի: Թեմերն են ինը գիւղ, որոնցմէ պտղի կ'ստանայ: Վանացս բոլոր հասցիքները այժմ յատկացեալ են Խարբերդի առաջնորդարանին:

**ԳԱՏԻԿ. Տես ՏՍՏԻԿ:**

**ԳԱՏՈՒԱՆ** կամ **ԳԱՏՎԱՆ.** — Հին և նշանաւոր հայաբնակ գիւղ կամ գիւղաքաղաք Բաղէշի՝ յորմէ հետու է 4 ժամու ճանապարհ, և Վանայ ծովակի արեւմտակողմը, տափարակ գաշափ մը վրայ: Նշանաւոր է ոչ միայն բազմաճղի և ցանցակերպ ուղիներով, գեղեցիկ և զուարճալի տեսարաններովը, պատուական օդովն ու ջրով, այլ և հին և պատմական սրբանուէր յիշատակաց համար: Ունի նաև անդորր և կարեւոր նաւահանդիստ մը, որ Խարխիս կը ձգեն Վանայ առազաստաւոր նաւերու մէկ մասը: Գատուանի անուանական ստուգաբանութեան համար բացատրութիւն կը արուի թէ Գատս և առաւ բառից բարդութեամբ Գատուան եղած է: Գատուանի սկզբնաւորութիւնը բաւական հին է. Բագրատունեաց հարբստութեան ժամանակ, երբեմն բնդ հովա-

նեաւ երկը իշխանաց կը կառայարուէր Հայաստան, յորս էին և Արծրունեաց պաշտպանները Ժ-ԺԱ դարուց ժամանակները: Ի հնումն հայ ինքնակալաց և իշխանաց սովորութիւն էր ամարել և ձմերել այս կամ այն պատշաճ վայրաց մէջ. անշուշտ Արծրունեաց սոհմի վեհագունը ևս այսպէս բարած են, ուստի ժողովրդական աւանդութիւնն՝ որ Գատուանի հանդիպակաց բլրակին վրայ գտնուած աւերակաց բեկորները Սենեքերիմի Ամարանոց կ'անուանէ, կարելի չէ առասպել համարել, քանի որ այդ սքանչելի աննման բարձրաւանդակն իրաւամբ ամաբանացի արժանի է: Արդ երբ Սենեքերիմ արքային ամարանոցն աստ էր, բնական է թէ, սճրագործը, եղեռնագործը, դողը, մարդասպանը, պէսպէս գատերու համար, կալուածական, ժառանգական, և այլն, հոս կը զրկուէին և հոս գատ կը կտրէին, և այդ պատճառաւ կարելի է եզրակացնել որ նախ Գատի առաւ կոչուած է և յետոյ Գատուան:

Գիւղաքաղաքս ունի խիտ առ խիտ, սրածայր կուտերներով աներ, որոց թիւն է 90-100՝ մօտ 650-700 բնակչօք, մինչդեռ ի հնումն ունի եղեր 1500-2000 աուն բնակիչ: Ունի Ս. Թեոփորոս անուամբ անշուք եկեղեցի մը. աստ կայ նաև Միայնալ Ընկերութեանէն բացուած նախակրթարան մը: Գատուան՝ իրեն երկու դրացի նահանգաց վանայ և Բաղէշի կեղրոնաւայրն և հազորակացութեանց միջոց լինելով՝ յինքն իւրացուցած է անոնց բարոյական, նիւթական յատկութիւնները, հանդամանքները ու բնութիւնները: Վասպուրական աշխարհի գաւառական արագասահ ու զժուարհասկանալի բարբառներու շեշտերն զուպախառնուելով Տուրուրերանի ծանրահնչիւն՝ այլ քաղցրաւոր գրարարատիպ և ճիւղն բացատրութեանց հետ, կը կազմեն Գատուանոց մեղրախառն լեզուն, միանգամայն պարունակելով միոյն կամ միւսոյն աղաւազումներն: Բնակչաց զլիսուոր զբաղմունքն է առհասարակ երկրագործութիւնը և ունին շատ կալուածներ: Ծովեկերեայ և ջրարբի վայրեր մաքուր ցորեն ու առատ առուստ կը մշակուի. իսկ լեռնային դար ու գուր արտերու մէջ ալ հաճար, որ տեղացոց տարեկան ցորենն



է, կը մշակեն նաև կաղամբ, վարունկ և բազուկ: Վերջին տարիներու մէջ անկած են ու կը անկեն բարախ, սալորի, ծիրանի, խնձորի և թթի ծառեր: Գիւղաքաղաքիս բնակչաց մեծագոյն մասը իրական սեռէ կը բաղկանայ, որ իւր մասնաւոր գեղեցիկութեամբ առաջին տեղին կը գրաւէ այս կողմերու գիւղօրէից մէջ: Արական սեռն կարին և աշխոյժ է: Տեղւոյս հարսանեաց եղանակը հետաքրքրական է: Բաղքեականութեան քարոյիչք աստ ևս մուտ գործած են և բաւական հետեւողներ ունին: Գատուանցոց երկրորդական դրազմունքն է վանէն եկող նաւուց բեռներն փոխադրել ի Բաղէշ և աւախ անդր. գարնան դրասաներով կը փոխադրեն, իսկ ձմեռը դահուկներով և բայխիրներով, զորս անձամբ կը վարեն, վասն զի նոյն եղանակի մէջ անհնար է դրասուց երթեւեկն. նաև վանայ համար նաւուց կը մատակարարեն մեծ քանակութեամբ ածուխ: Տեղւոյս նաւահանգիստը մեծ դիւրութիւն և զարկ առած է և կու տայ վանայ Բաղէշի հետ ունեցած առեւտրական դործին. վասն զի մինչդեռ ծովով 28 ժամուան մէջ կը փոխադրուին ապրանք Բաղէշէն վան՝ և փոխադարձաբար, ցամաքով 7-8 օր պէտք է, այն ալ երկիրդի կողմածներով և ճանապարհի բնական գծուարութեամբ: Մշոյ գաշտի մշուշն՝ որ ձմեռը այնքան տաք է, այս կողմերը գալով կը դանայ բքալիր հոգմ, որ ըստ տեղացւոց Բաջոյ կ'անուանուի:

Գատուանայ մօտակայ սահմանին մէջ իրարմէ 1/4 ժամ հեռաւորութեամբ կան 6 եկեղեցիք, որք են՝ Ս. Կիրակոս, Ս. Գրիգոր, Ս. Սիւնե, Ս. Սարգիս, Ս. Քառուսեան Մանուկ և Ս. Ստեփանոս. այս եկեղեցիներէն միայն Ս. Սարգիս կանդուն է, իսկ միւսները հիմնայտակ աւերակ են, սմանց հիմնաքարինք և այլոց տեղերը միայն կը նշմարուին: Ս. Սարգիս՝ ճարտարաբանս շինուած գեղեցիկ ու փոքրիկ տաճար մ'է, որուն տարին անգամ մը Գատուանցիք մատաղ ընկու սովորութիւնը ցարդ պահած են: Այս տաճարի շուրջը կը տարածուի Գատուանի ընդարձակ գերեզմանատունը, յորում կան ոչ սակաւ խաչքարեր՝ հանդերձ տապանադրութեամբք. ծանօթ թուականաւ

հնագոյն համարուածը ՎԳ դարու կը վերաբերի. սակայն կան դեռ աւելի հնագոյններ՝ որոց արձանադրութիւնք կրտսեղմ են: Գիւղաքաղաքիս արեւելեան հանդիպակաց կողմն դէպ ի ծովակ կարկանուալ թերակողին ունի երկու մասեր, մին շեղուակ և միւսն հրուանգան, որոյ աջ կողմը ձեւացած է նաւահանգիստը: Գէպ ի բլրակին բարձրաւանդակն է Սենեքերիմի Սմարանոց ըսուածի հսկայաշէն աւերակն. քառակ խորշեր խաչաձև կը ձեւացնեն շէնքին յատակադիմն, որոյ ճակատն կը նայի դէպ ի ծովակ. արեւմտեան զառիթափին վրայ զլանաձև միակտուր քարերէ ճարտարակերտաւ սենեակներն՝ էին գանձարաններ՝ ըստ աւանդութեան, ասոնցմէ երկուքը անվթար մնացած են: — Գատուանայ կեդրոնը կը բարձրանայ ամբաշէն մեծ աւերակ մը, որոյ հսկայ պարբուպաց մեծագոյն մասը քայքայեալ է: Այս շէնքը կը կարծուի թէ եղած լինի իւր ախրոջ նժոյղներու կամ հիւրընկալութեան տեղին: Տեղւոյս կեդրոնական հարաւը կը տեսնուի անկուած Յասմակ խաչ անուամբ խաչքար մը, զոր կանայք աւելի շատ կը յարգեն: Գատուանայ հիւսիսային կողմը 20 վայրկեան հեռու 6-7 տեղերէ ընտիր ջրեր կը բղխեն, որոց ամբողջութիւնը ջաղացք մը կը բանեցնէ. աստ կան նաև հանքային ջրոյ քանի մը աղբիւրներ: — Նիսրագրու կան ուղեւորաբիւն, Ա 81-84: Եւ այլն:

ԳԱՐԱՐԱՍ. Տես ԳԱՐԲԱՍ:  
 ԳԱՐԱՒԱԿ կամ ԳԱՐԱՒԼԳ. — Գիւղ Աւարդ պատականի Սօվոխպուլագ գաւառակի: 30 տուն հայ կայ և եկեղեցի մը:  
 ԳԱՐԱԿ. — Գետակ Այրարատայ կողմ վրա գաւառի, օժանդակ Ատուն գետոյն: — Նոյն գաւառի մէջ վերին և Ստորին Գարակ անուամբ կրկին գիւղեր կան:  
 ԳԱՐԱԿՆ. — Բարձր Հայոց Գարանաղի գաւառի Սեղուհ շերան ուխտատեղիներէն մին՝ ծանօթ է այս անուամբ, ուր հովիւներէն թաղուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որուն համար Յովհաննէս կաթողիկոսը հետեւեալ տեղերը կը գրէ. «Ատի հոգ օրհնութեան ի փլուզեալ Գարակէն, յորում պատուական գանձն հոգեւոր ի հովուաց էր ծածկեալ. յորոյ վերայ շինեալ էր եկեղեցի նախ քան



զայս խնով հրամանաւ ի մահարձանաց ինչ կրով ձուլածոյ» : Ուխտատեղւոյս ներկայ վիճակն անծանօթ է :

**ԳՐԱՆՈՒՆ.** — Գիւղս կը յիշուի սրբոյն Գրիգորիսի նշխարաց զիւտի պատմութեան մէջ, և կը թուի ըլլալ Աղուանից մէջ :

**ԳՐԱՆՆԱԿ.** Տես ՍՈՒԲ :

**ԳՐԱՆՆԱԿԻ.** — Բարձր Հայոց հին անուանի գատաներէն մին, որ սահմանակից է Եկեղեցաց գաւառի և այժմ կը կոչուի **ԳԱՄԱԽ** : Յոյներէն Պաղոմէոս կոչած է Գաւառնիստս (*Δαφνοισσα*). մեր մտանադիրնեւրէն կը կոչուի նաև Գաւառնաղեաց երկիր և աշխարհ, ինչպէս նաև Աղեաց գաւառ : Յովհաննէս վարդապետ Երզնկացին Ս. Լուսաւորչի ճառին մէջ հետեւեալ կերպով կը նկարագրէ գաւառն ձիբքերը և անուան ստուգարանութիւնը. « Լիբամբը ծագկաւէտ. ձորովք ջրաբուղիս, եղեմարուղի աղբերն Եփրատայ յորդաատս գետոյն ընդունակ. . . այլ և ի ծործորս քո լիբանց ի ներքոյ երկրի աղբերս աղի դարանացեալ սնիս, և ի խորութենէ ի վեր եկեալ ի ջերմութենէ արեգականն՝ զխառնեալ ջուրսն առանց աղի ծծէ հրոյն զօրութիւն. և յստակեալ պարզի աղն համեմիչ անուշահամ. որով և Գաւառնաղի կոչիս յայտմ՝ ներգործութենէ » : Նոյն Երզնկացին կը գրէ նաև թէ հրաշալի բան մը կը պատմուի գաւառն համար, իբր թէ ամաննային եղանակին երբ ձիւնները կը հալին՝ ջրոց կաթնուածքները գաւառն անձաներու մէջ վրայէ վրայ զիգտելով կը ստանն, որ ստոզարար զօրութիւն ունենանալով, ի հնումն հեռաւոր տեղեր կը առնէին թագաւորաց համար. իսկ ձմեռ ժամանակ երբ սերիչ ջրեր կը ստանն, տեղւոյս անձաւաց ստոերն կ'սկսին հալիլ :

Գաւառն նախնի բնակիչները զխթութեանց և կախարգութեանց ետեւէ շատ կ'ըլլային. իսկ ուղղափառ հաւատաբար բնորոնեցան մեծամեծ նշաններով և անմիջական քարոզութեամբ սրբոյն Գրիգորի՝ որ Ազգեմանգեղոսի (էջ 588-9) գրած ի համեմատ. « Երթալը հասանէր ի Գաւառնաղեաց գաւառն . . . ձեռնարկեալ զգաւառուս, հանդերձ միամիտ սատարութեամբ թագաւորին՝ զերէր զամենսին ի հայրենեաց աւանդելոյն ի ստատա

նայապաշա զիւտիան ի սպասարութենէն, ի հնազանդութիւն ծառայութեան Գրիգորոսի մատուցանէր. . . որ և յայտնի իսկ բնակչաց գաւառին՝ նշանք մեծամեծք երեւեալ, կերպակերպ նմանութեամբք զիւայն փախրատական լինելով անկանել ի կողմնսն խաղտեաց » : — Գաւառնաղեաց մէջ է պատմական և սրբանուէր Սեպուհ լեւոր՝ որ Գաւառնաղեաց լեռն ևս կոչուած է, Թորոսն աւանը և Անի ամրոցը : Տես նաև ԿԱՄԱԽ :

**ԳՐԱՆՆԱԿՆԱԿ.** — Վասպուրականի Գաւառի գաւառի մէջ կը գտնուի գաւառ, որ ամարան բնակութեան վայր էր Հուլաւուն խանի : Անուն կը յիշուի Վարդանայ պատմութեան յաւելուածի մէջ :

**ԳՐԱՆՆԱԿԻ ԿԱՄ ՏԱՐՈՆԵՔ.** Տես ՍՈՒԲ :

**ԳՐԱՆՆԱԿՆԱԿ.** Տես ՏԱՄԲ :

**ԳՐԱՆՆԱԿՆԱԿ.** Տես ԵՐԱՎԱՆՆԱԿ :

**ԳՐԱՆՆԱԿՆԱԿ.** — Այս անուամբ ըլլաւ մը կը յիշուի Այրարատայ Կոտայք գաւառի մէջ :

**ԳՐԱՆՆԱԿՆԱԿ.** — Էր թուի լինել հին գիւղ կամ այլ ինչ վայր Սիւնեաց Տաթևի վանաց կալուածներու շարքին մէջ :


**ԳՐԱՆՆԱԿՆԱԿ.** — Հին գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ : Այժմ այլապարենակ է, մտար կան հին եկեղեցոյ տեղակներ և գերեզմաններ :

**ԳՐԱՆՆԱԿՆԱԿ ԿԱՄ ՏԵՐՊԵՆՏ.** Գ. Դ. DERBENT. Թ. Դերբենտ. — Հին և հռչակաւոր ամար քաղաք, որ Աղուանից երկրի նախագուսն է, հիմնուած Կովկասեան փոքր լեռնաշղթայէն դէպի Կասպից ծով կախուած լեռնարագիլի մը վրայ : Բերպաքաղաքս երկու միջնապատերով բաժնուած է եզեր երեք մասի և միացած երկու զուգահեռական պարիսպներով, որոց արեւմտեան ծայրերը ներշալով հպած են վերնարեղին, որ կը կոչուի Նարին-Ղարս իսկ արեւելեան ծայրերը միացած են եզեր ծովի մէջ : Այս կերպով Գաւառնաղեաց բաժնուած է եզեր չորս մասի՝ ծովային բերդ, ստորին քաղաք, միջին քաղաք և վերին բերդ : Առաջին ծովային մասի համար խորենացին գրած է. « աշարակ ահագին ի ծովուն կացեալ » : Այրարացի Էդրէս անուամբ աշխարհագիր մը գրած է, թէ ծովի մէջ մտած մտար կը ներկայացնէր նաև երեք պաշտպանութեան համար ամար



նաւահանգիստ մը: Անգլիացի ճանապարհորդ մ'ալ ժ.Չ. դարուն, կ'ըսէ թէ կէս մղոն ծովի մէջ մտած էր պարիսպներու շարունակութիւնը և ունէր ահագին բուրգեր: Այժմ թէև բուրգովին քանդուած է այս մասը՝ սակայն դեռ կարելի է նշմարել պարսպի հետքերը՝ նաւակով հետազոտած ժամանակ, այդ պատճառաւ շոգնուներն ծովիցերբէն խիստ

երեքը հիստիային պարսպէն և հինգը հարաւային պարսպէն էին: Հիստիային գոնէրը ցարկ կանգուն են և ծովիցերբէն սկիզբնալ կը կոչուին՝ Գաշ-Ղափու (Քարեղուն), Ղրիշար-Ղափու (Քառասնից գուն) և Ջառչի-Ղափու (Մունետիկի գուն): Հարաւային պարսպի Բայաթ-Ղափու (Հին գուն) և Ղաւա-Ղափու (Բերդի գուն) դեռ կը մնան



251 • Գարբանաի ընդհանուր տեսարանը:

հետո խարխիս կը ձգեն, որպէս զի պարիսպներու հիմքերուն զարնուելով չփառուին: Երկրորդ մասը, որ կ'սկսի ծովիցերբէն, Հայոց և Ռուսաց բնակավայրն է. հոն են նաև վաճառանոցները: Երրորդ մասի մէջ կը բնակին Շիա և Սիւննի մահմետականները: Չորրորդ մասի՝ Նարին Ղալայի մէջ կը բնակին քաղաքապահ զինուորականները իրենց մեծաւորներով միասին: Երկրորդ և երրորդ մասերն ունեցած են ութ գոներ, որոնցմէ

կանգուն. իսկ հետեւեալ Գուպարա-Ղափու (Կրկնագուն), Ենի-Ղափու (Նոր գուն), Օրթա-Ղափու (Միջնագուն) երեք գոները և պարսպի մէկ մասը զնկապետ Երմուշովի ժամանակ քանդուած են: Բոլոր գոներու ճակատակալ բարերն ունին արձա՛ ազրութիւններ՝ արաբերէն և պարսկերէն լեզուներով: Գարբանաի բերդերու այժմեան ամբողջական շրջապատն է 5 վերսա, երկայնութիւնը 2 վերսաէն աւելի և լայնութիւնը



1 վերստէ պակաս. պարիսպներու բարձրութիւնը՝ 4-5 սաժէն է և հաստութիւնը՝ 1 սաժէն:

Աղուանից թագաւորական պալատը, կաթողիկոսական վեհարանը և մայր եկեղեցին կը գտնուին երրորդ մասի մէջ, իրարու կից: Այժմ՝ պարսիկները՝ պալատը փոխած են ուսումնարան, իսկ մայր եկեղեցին՝ աղօթատեղի, որ կը կոչուի Չուան-մէյտի: Եկեղեցին իւր մէջ ունի 40 հաստարուն սիւներ, և հաստ որմեր, որոնք ապացոյց են խիստ հեռուոր հնութեան: Արարացիք Գարբանդի պարիսպները քանդած ժամանակ՝ անքակ պահած են Աղուանից կաթողիկոսարանը, որուն կը վկայէ Մովս. Կազանկայաւացի (էջ 159) գրելով. «Եւ ի հարիւր ութսուն թուականին Հայոց (732ին) Գարձեալ Մոսլման շինէ զԳարբանա յանուն Տաճկաց (Արարացոց), այլ զկաթողիկոսարանն Աղուանից ս'չ աւերէ, որ զես ևս կայ ի նմա»:

Նարին Ղարս կոչուած բերդն, շինուած է շեանարազիկի դիրքով, այսինքն լայն է արևելեան կողմը, նեղ ու եռանկիւնաձև արեւմտեան կողմը, իսկ խորանդունդ ձոր պարսպի հիւսիսային կողմն: Բերդս ևս ունի հաստ և բարձր ամրագոյն պարիսպ, հաստատուն բուրգեր և երեք դուռն արեւելեան, հարաւային և արեւմտեան կողմերէն. ունի նաև մեծ, խոր ու խաչաձև ջրամբար մը: Չուրը սր այժմ ևս կը վազէ, բերուած է ստուրիկրիսայ խեցեղէն խողովակներով, երկու վերստ հեռուորութենէ: Նարին Ղալայի վերին ծայրէն սկսեալ շղթայաձև, հաստ, բարձր և ամուր պարիսպն կը շարունակուի մօտ 400 վերստ երկայնութեամբ: Գարբանաէ չորս վերստ հեռու, պարսպի շարունակութեան վրայ հին դղեակ մը կայ չորս բուրգերով և մի գոնով. դղեակս ամրողջապէս շինուած է տաշած քարերով: Գարբանաի հրակայադրած պարսպի շարունակութեան վրայ, զանազան հեռուորութեամբ շինուած են ամուր բուրգեր, որք ծառայած են թէ՛ պարբայի հաստատութեան և թէ՛ իբր պահականոցներ՝ պարսպապահ զինուորականներու համար: Թէև տեղ տեղ խրամատած է պարիսպս, սակայն զես կանգուն է ամենամեծ

մասամբ: Հոչակաւոր պարիսպս պատմութեանց և ճանապարհորդական գրուածոց մէջ կը գրուէ նշանաւոր էջեր:

Գարբանաի գոյութիւնն 2000 տարիներէ աւելի է, և միանգամայն հոչակաւոր իւր պատմական և քաղաքական անցեալով: Քաղաքիս երկար ժամանակ (Ն. Ք.) տիրեցին Հայք, Ա. գարէն մինչև Ե. դարու սկիզբը Աղուանք, Ե. դարուն մէջ Պարսիկք, Չ. դարուն խաղիբք, Է. դարու գարձեալ Պարսիկք, Ը. դարուն Արարացիք, ԺԱ-ԺԲ դարուց մէջ Աղուանից Սենեքերիմ և Գրիգոր թագաւորները, յետոյ Թաթարք, ապա Լէնկ Թիմուր, երրորդ անգամ գարձեալ Պարսիկք և հուսկ ուրեմն Ռուք 1806ին: Աւելորդ կը համարինք մեր խօսքը երկարել, այլ ժամանակաց մէջ հանդիպած պատմական զիպաց վրայ. միայն ըսենք, թէ մեծ տարածայնութիւն կայ և զանազան կարծիքներ Գարբանաի և իւր պարիսպներու հիմնադրի մասին: Ահազին պարիսպներով ամրափակել այս երկիրը և բոլորովին խզել Եւրոպայի հիւսիսային հաղորդակցութիւնը Ասիայէն, այսպիսի մեծ գործի մը հանճարն, սմանք կը համարին միայն Աղեքոսանդր Մակեդոնացին: Այս կարծեաց նպաստաւոր են նաև Հայոց պատմագիրներէն սմանք: Ազաթանգեղոս (էջ 30) գրած է. «Սկսանէր խոսքով Ա. թագաւորն Հայոց... բանալ գրտուս Արանաց և գիւրոյ պանակիւն, հանել զզօրս Հոնաց»: Այս խօսքերէն յայտնի կ'երևի, որ վաղարշի և խոսքովի ժամանակ արդէն կային թէ՛ Գարբանաի բերդերը և թէ՛ երկարաձիգ պարիսպը՝ պահակներով հանդերձ: Այսպէս կը վկայէ նաև Խորենացին. «ուր ածեալ էր զպարիսպն Գարբանատայ...»: Իսկ Ղեւոնդ պատմագիրը (էջ 40-41) գրած է. «Չորսվարին Մովսմայ... եկեալ և մարտ եղեալ ընդ զօրս Հոնաց՝ որ ի Գարբանալ քաղաքն՝ հարին գնտոս և հալածեցին, և քանդեալ աւերեցին զզղեակապարիսպ ամրոցին: Եւ մինչդեռ քանդէին զպարիսպ ամրոցին՝ գտին վէմ մի մեծ ի հիմունս նորա, որ ունէր վերնադիր գրոշմեալ օրինակ զայս. Մարկիանոս իերևակոյ կոչար շինեաց զբարաք և զաշտարակս զայս քաղաւ տարսևորք յիւրոց զակնոց. և ի յետին



ժամանակս որդիքն Խամաշի ըսկեացնե գաս  
 և յիշրեանց զանձոց վերատին շինեացնե:  
 Էւ իբրև զաին զգրոշմ գրոյն. . . զպարե-  
 ցին ի քահկելոյ զպարիսպն, և ևացուցեալ  
 զարծալարս ի վերայ՝ վերստին շինեցին զկոր-  
 ծանեալ պարիսպն»: Եւ այն խօսքերը կը կրկնէ  
 նաև Կիրակոս՝ բայց կը գրէ «Մակուն կայսր»:  
 Ասողիկ ալ կը գրէ նոյնպէս «Մակուն»:  
 Գրեթէ 15 տարի առաջ, Օտեսոսայի ընդ-  
 Հանուր պատմ. և Հնաստութեան ընկերու-  
 թեան անդամն Կարայիմ Ֆերկովիչ, փորել  
 տալով Գարբանաի հարուային կրկնապարս-  
 պի զբան ներսի կողմը կը գտնէ մեծ քար  
 մը յունարէն արձանագրութեամբ, որուն  
 սկզբնատառերն եղած են A. M.: Ռուս  
 ճանապարհորդն Պ. Ի. Բերեզինա (Բ. Հաս.  
 էջ 22) կը գրէ. «Էս տեսայ աչքովս Գ.  
 Բուշկիւիւի մօտ. . . Գարբանաի վերաբերեալ  
 վաղեմի հնութիւն, մահէ պաշտպանուելու  
 գործը (թուր) մը, որոյ վրայ կարդացուե-  
 ցաւ A. և M. (Աղբքսանոյր Մակեդոնա-  
 ցի)»: Պ. Ի. Բերեզինան յենլով այս երկու  
 փաստերու, քարի և թրի արձանագրութեանց  
 վրայ, Աղբքսանոյրեան դիակ և Աղբքսան-  
 ոյրեան պարիսպ կ'անուանէ քաղաքիս փո-  
 քրեկի զգեակը և երկարածից պարիսպը: —  
 Եղիշէն (էջ 228) և ակնատես Կաղան-  
 կայտուացին (էջ 105) Գարբանաի պարիսպ-  
 ներու շինութիւնը կը յատկացնեն Պարսից  
 թագաւորներուն. «Որպէս և յոյժ իսկ արբա-  
 մեալ էր թագաւորն (Յազկերտ), ո՛չ միայն  
 ընդ աւեր աշխարհացն և ընդ անկանել զօ-  
 րացն, այլ ևս ստաւել ընդ աւերել պահա-  
 կին՝ զոր ի բազում ժամանակաց հազիս  
 ուրեմն կարացին շինել. որ և յայնմ ժա-  
 մանակի զիւրիաւ առեալ քանդեցաւ»: «Բա-  
 գում ծախիւք թագաւորացն Պարսից մաշիալ  
 էր զաշխարհս իւրեանց՝ գումարելով ճար-  
 տարապետս և հնարելով ազդի ազդի նիւթս  
 ի շինուածս մեծաքանչ զործոյն, որով փա-  
 կեցին աղիսցին ընդ լեան Կովկաս և ընդ  
 մեծ ծովն արևելից»: Անտարակուսելի ճըշ-  
 մարտութիւն է, որ Հայոց Վաղարշ, Խոս-  
 րով և Տրդատ թագաւորներու ժամանակ ար-  
 դէն կային Գարբանաի բերդերը և պահակ-  
 ներու երկարածից պարիսպն: Ճշմարիտ է  
 նաև, որ ըստ Եղիշէի և Կաղանկայտուա-

ցիի, Պարսից թագաւորները հիմնական նո-  
 րոգութիւններ ըրած են քաղաքիս բերդերու  
 և պարսպի վրայ: Ստոյգ է որ Արարացիք  
 ևս քանդած և վերստին շինած են: Այդ  
 բոլոր նորոգութիւնները յայտնի կը նշմա-  
 րուին պարիսպներու և բերդերու վրայ, բաց  
 ի զգեկէն, որոյ գոյութիւնն իխտ հին է և  
 մնացած է անփոփոխ: Որոշակի կը տեսնուին  
 տարբեր ժամանակի, տարբեր քարերու և  
 տարբեր ճարտարապետութեան զանազանու-  
 թիւնները: Այս ամէնը կ'ապացուցանեն նաև  
 պարսկերէն ու արաբերէն արձանագրութիւն-  
 ները և առիւծի անդրին. անյայտ կը մնայ  
 ուրեմն միայն քաղաքիս և բերդերուս բուն  
 հիմնադիրն, այն ալ ժամանակն պիտի պար-  
 զէ: — Քաղաքէս զուրս Քառասնից զբան  
 հիւսիսային կողմը կայ Գրիսար կոչուած  
 արարական հանդուստրանն, ուր ամփոփուած  
 են 40 արարներ, որք իբրև թէ պատերազ-  
 մի մէջ մեռած են: Տապանաքարերու երկայ-  
 նութիւնն է 10-12 թիւղ, և զարդարուած են  
 արձանագրութիւններով. ասոնց անուամբ կո-  
 շուած է զուսն Գրիսար-Ղափու: Վերնա-  
 բերդի արեւելեան զբան հարաւակողմը ևս  
 կան երեք գերեզմաններ, արարական ար-  
 ձանագրութեամբք: — Գարբանաի մէջ սկսած  
 է Աղուանից թագաւորութիւնը Ավաշահանով  
 և վերջացած է նոյնպէս քաղաքիս մէջ Գրի-  
 գոր թագաւորով ԺԱ զարու վերջերը, կամ  
 ԺԲԻ սկիզբները:

Գարբանաի բնակիչք այժմ կը հաշուին  
 16000 հոգի, զանազան ազգերէ. բազմա-  
 թիւ են Պարսիկք, յետոյ կու գան Հրեայք,  
 Թաթարք, Հայք, Ռուսք, և այլն: Հայք  
 կը հաշուին մօտ 900-1000 հոգի. զաղ-  
 թած են մեծ մասամբ Արցախէն, Շամախէն  
 և Ղզլարէն: Գարբանաի օդն և կլիման ամ-  
 բան ծանր է: Հայք՝ ինչպէս կանխաւ ըսինք,  
 կը բնակին քաղաքիս երկրորդ մասի մէջ,  
 և ունին նորաշէն, խաչածե, միջակ մեծու-  
 թեամբ և սրբատաշ քարերով շինուած Ա-  
 մեկափոկիչ անուամբ եկեղեցի մը: Տաճա-  
 րիս հիմքը ձգած է ծխական ժողովուրդը  
 հին եկեղեցւոյն պատրաստի զբամով և զեա-  
 նէն բարձրացուցած է մօտ երեք կանգուն:  
 Իսկ մնացեալ մասերը ամբողջապէս աւար-  
 տած են իրենց սեպհական ծախքովը, բարե-



պաշտ եղբարքն Սարգիս և Ստեփան Կաճկաճեանց: Ստեփան և զեղեցկագոյն խաչկալը և մեծ կաթնաղիկէն ալ շինել տուած է բարեպաշտուհի տիկին Կաճկաճեանց: Զանգաւ կատունը իւր վայելուչ կաթնաղիկէով, շինել տուած են պատուարժան Առաքել Բարաւյանց և Յովհաննէս Փանեանց: Արձանագրութիւններն ասկաւին փորագրուած չեն, միայն եկեղեցոյ հարաւային կողմը՝ վերեւի քիւի մօտ՝ քարի մը վրայ գրուած է կառուցման համառօտ յիշատակարանը 1860 թուին: Եկեղեցին ունի մէկ բազանայ և 2250 բուրլի գրամազուխ. ունի նաև պատուական զարդեր և զգեստներ: Քաղաքին Հայք ունին Մարտիանան անուամբ պարոց և ընթերցարան մը 500 կտոր զրքերով, ուր կ'ստացուի մօտ 10 լրագիր, օրագիր, և շարաթատկերթ հայ և սուս լեզուներով: — Գարբանտը գարդարուած է ծառաստաններով, պարտէզներով և ծաղկանոցներով, ինչպէս նաև ընդարձակ այգիներով: Այգիները բացի առաս խազողէ, կու տան նաև առաս նուշ, այս այգիները մշակուած են տորոնի արտերու տեղերը 1877 թուականէն սկսեալ: Նոյն թուականէն առաջ տեղական նշանաւոր բերքն էր տորոն ներկի արտահանութիւնն, որոյ փութն կը ծախուէր 9-11 բուրլով, բայց երբ զանուեցաւ աշխարհն կոչուած եւրոպական քիմիական ներկը, տորոնի 1 փութի գինն իջաւ 1-2 բուրլի, և այդ պատճառաւ բաւական անձինք սնանկացիւր են: Այնուհետև սկսեւր են Գարբանտցիք այգեգործութեամբ զբաղիլ, բաւական լաւ գինի կը շինեն որ և այժմեան վաճառականութեան գլխաւոր նիւթն կրնայ համարուիլ: — Գարբանտ քաղաքի և շրջակայ զիւղերու, ինչպէս նաև Մօղս խոյիլի, Պօղս Քեանդի, և այլ զիւղերու հայ բնակիչներ, ինչպէս կը պատմեն տեղացիք, 1800-1810 թուերուն գաղթեր են Անգլիոյ կովկասեան քաղաքները ու զիւղերը, որք են Ղզլար, Մոզաօք, Պետրովսկի, Մաճառ, որոց լեզուն, սովորութիւնն և աւանդութիւնն այժմեան Գարբանտի, Խաչմատի, Քլիւարի Հայոց նման է: Քաղաքին մօտ կը տարածուի ընդարձակ վաճառեան գաշտը, ուր ըստ ազգային պատմութեան Աղուանից, նահա-

տակուեր է Ս. Գրիգորիս, Աղուանից առաջին կաթնաղիկուր, որոյ նահատակութեան տեղը, Մոլլա խալիլ զիւղի մօտ, այժմ ևս կայ Ս. Գրիգորիս անուամբ մատուռ մը, զոր 1879 թուին նորոգեր է բարեպաշտուհի տիկինն Եղիսարէթ Կաճկաճեանց, ինչպէս կը ցուցնէ գրան վրայի արձանագրութիւնը: — Գարբանտի երկաթէ գոնէն, Քրիստոսի 80 թուին, անցեր է մեծ յաղթանակաւ մեր Արտաշէս Ա թագաւորը, երբ յաղթելով Ալանաց՝ ստացաւ անոնց Սաթ կամ Շաթ թագաւորի դուստր Սաթինիկը իրեն կին: Նոյնպիսի հանդիսիւ 285 թուին անցեր է նոյն գոնէն Մեծն Խոսրով՝ Հայոց թագաւորը՝ յաղթելով բոլոր լեւնային և հիւսիսային ազգերուն, ինչպէս նաև Անգլիասպեան աշխարհի ազգերուն՝ մինչև Ամու: Գարիս նշանաւոր գետը: Նոյնպէս անցեր է Գարբանտի գոնէն 325 թուին Մեծն Տրդատ մեծ յաղթանակաւ, որ բոլոր լեւնականաց յաղթելով, արգիլեց այն գոնէն այս կողմն անցնիլ, ինչպէս երբեմն Մեծն Աղեքոսանգր Մակեդոնացին. Մեծին Արտաշէսի նման Տրդատ ևս իւր կինը թագուհին, Ալաններէն ստացաւ: Այսպէս մեր թագաւորներէն շատեր պատերազմով կամ խաղաղութեամբ եկած հանդիպած են Գարբանտի պարիսպներուն և զարձած, և շատ անգամ օգնած են Աղուանից ազգին, իբրև գրացոյց և կրօնակցի: — Աղուանք, 110-223: Նրկարագիր Շաւախոյ ըսմի, 505-533: Եւ այլն:

ԳԱՐՔԱՆՏ. — Հայաբնակ զիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասի մէջ, Ալեքսանդրապոլի հիւսիսային կողմը: Ունի 495 բնակիչ, բաժնուած 52 տան:

ԳԱՐՔԱՆՏԻ ԳՈՒՈՆ ԿԱՄ ԱՆՅՔ. — Գարբանտ քաղաքի անուամբ ծանօթ է այն հրաշակաւոր անցքն՝ որ ամբարտակուած է եղեր ծովեզերքէն մինչև Բաղաբեանի կիրճը շինական պատուարի նման ամուր պարիսպներով, անմատչելի բուրգերով, երկաթեայ գոներով և ամբարոյն պահակներով: Անցքս մերձարեան ազգաց և քաղաքներու անուամբ ստացած է զանազան դարուց մէջ այլ և այլ անուններ, ինչպէս են Գրուեր Ալանաց, Գրուեր Կասպից, Գուան, Պանակ կամ Կա-



պան ճորայ, Գուռն, Գրուներ կամ Կապան Չորս, Գուռն Արուանից, Գուռն Խազրաց, Գուռն Հանաց, և այլն: Հայաստանի, Վրաստանի, Աղուանից երկրի և մինչև անդամ Պարսկաստանի ապահովութիւնն, հիւսիսային ազգաց արշաւանքներու նկատմամբ, համարեա թէ կախուած էր այս նշանաւոր անցքի բերդերու, պահակներու, և զոններու ամրութենէն:

ԳԱՐԲԱՌՈՒ. — Գիւղ Աարպատականի Սալմաստ գաւառի Քեարդուբատ գաւառակի մէջ: 40 տուն հայ կայ:

ԳԱՐԲԱՍ կամ ԳԱՐԱԲԱՍ. — Գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի (Չանգեղուր), Լորս ձորի մէջ, Շնաթաղ գետի ձախակողմը: Արեւմտահիւսիսային կողմը կը բարձրանայ ճիւղիբ—տաշ մացառուտ սարը, արեւելեան կողմը՝ Մարահուէի լեռի լեռը, իսկ հիւսիսային կողմէն կը պատեն Հանգուշ բլրակները: Նեղ ձորակ մը զիւղս կը բաժնէ Հայկական և թրքական կրկին թաղերու, երկուքն ալ այլիներով պատած են: Հայկական թաղի մէջ կը գտնուի Ս. Սահփալուս և թրքաց թաղի մէջ Ս. Աստուածածին եկեղեցիները: Ս. Սահփալուսի եկեղեցին, յորում այժմ կը կատարեն ժամասացութիւն, շատ հասարակ և առանց գմբէթի շէնք է. շուրջը կան միաբաններու խցերու և պարսպի հետքեր: Խորաններու մօտ կան մի մի խաչարձան, որոնցմէ միոյն վրայ կայ ՉԼԷ. (= 1288) թուականաւ արձանագրութիւն: Ս. Աստուածածին եկեղեցին փոքր է, շինուած՝ կարմիր սրբատաշ քարերով, որուն ձեղունը այժմ բոլորովին քանդուած է: Ներսը հիւսիսային սրմի վրայ շինութեան բնագրծակ արձանագրութիւն մը կայ, ՉԻՈ. (= 1272) թուականաւ, յորմէ կը յայտնուի, թէ շինողն է Սիւնեաց Լիպարիտ իշխանի Տարսայիճ որդին. այդ արձանագրութեան ներքև կայ սրբի յիշատակարան մը, որով կը յայտնուի, թէ ՌՃԻՉ (= 1677) թուին եկեղեցիս նորոգած են: Ս. Աստուածածնի եկեղեցիէն բիշ մը վեր կայ գերեզմանատուն, թէ դարու վերաբերեալ արձանագրութիւններով: — Հին քարեայ կամուրջ մը ձգուած է գետի վրայ, որ ունի եղձուած արձանագրութիւն: Աւանդաբար այս կամուր-

ջը Արգուանի կամուրջ կը կոչուի: Այժմեան զիւղի տները բոլորն ալ, բաց ի մէկէն, կիսազեանափոր են, այլիներու մէջ ցրուած: Հայկական մասը համեմատաբար մաքուր է: Գիւղիս բնակչաց թիւը բնականօր 886 հոգի կը հաշուեն, բաժնուած 152 տան, յորոց Հայք են 333 հոգի, բաժնուած 42 տան: Հայք և թուրքք այս տեղ միմեանց հետ սիրով կ'ապրին, կրօնական ասելութիւն և կրիւներ չեն պատահիր: Թուրքք ունին մզկիթ մը. կ'ըսեն թէ իրենք Սիւնեաց Անդակ իշխանի ցեղէն են, իրենց պապերն հայ են եղեր: Բայցը Հայերը՝ զիսկ ան թուրքերէն լեզուն, իսկ թուրքերէն՝ միայն մէկ քանին կրնան հայերէն խօսիլ: Կը պարտալին երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ՝ այլեղործութեամբ և մեղուապահութեամբ: Գիւղիս վարելահողք կը գտնուին Խչ—թէփէլերի մօտ, Որտան գետոյն ձախ եղերը, որ Գարբատցիք շինած են կալեր, յարգանոցներ, ցորենի շահմարաններ և գոմեր՝ յորս ձմեռը կը պահեն իրենց անասունները: Այժմ այդ տեղը դարձած է զիւղ 24 տուն բնակիչներով, և տեղոյն ճահճային լինելուն պատճառաւ կը կոչուի Շամբ: Տեղոյս բնակիչք ուրիշ զիւղերու համեմատութեամբ աւելի կոպիտ են: — Չանգեղուրի գաւառ, Ա. 64—66:

ԳԱՐԲԱՐԻ. — Գիւղ Աարպատականի Բարանդուղ գաւառակի մէջ: 25 տուն հայ կայ, եկեղեցիէ և զպրոցէ զուրկ են:

ԳԱՐԳԱՆՅ ԲԱՐ կամ ԳԱՐԳԱՆՅԱՐ. — Վասպուրականի Անձեացեաց գաւառի մէջ, կանդուար ամրոցի մօտ կը յիշուի այս անուամբ տեղ մը:

ԳԱՐԳԱՆԷԼ կամ ՏԱՐՏԱՆԷԼ (Թ. Չանագ գալե, Գարայի—Սուրբանի). — Հին պատմական քաղաք թուրքիոյ համանուն նեղուցին վրայ. կառավարչանիսա է ընդ կուսակալութեամբ Էաիրնէի և ասաջնորդութեամբ Ռոստոյթոյի: Քաղաքիս մէջ Հայք ունին եկեղեցի մը նորաշէն և գոթածև Ս. Գեորգ անուամբ, Էրուպացիք մատուց մը, Մահմետականք 8 մզկիթ, Հրեայք ժողովարան մը և սակաւաթիւ Հայ բողոքականք ժողովարան մը՝ տան մէջ յարմա-



րեալ: Կառավարութիւնն ասա ունի աշխրհ գործարան և հիւանդանոց: Կան երկու սան՝ զսկր և հիւպատատարանք: Հայք 170 աւուն են. ունին բարակիր նորաշէն զպրոց մը՝ նպաստիւք Աբրահամ փաշայի Երամեան: Տեղւոյս Հայոց նոր սերունդը սկսած է խօսիլ հայերէն, շնորհիւ զպրոցին, ուր հայերէն լեզուի ուսումն պարտաւորիչ է, և ունի մօտ 200 աշակերտներ՝ երկու սեռը միասին: Կշանաւոր են Հայք եկեղեցասիրութեան և ուսումնասիրութեան մէջ, և սակաւին սրահած են իրենց հին հայկական կեանքն ու կենցաղ: Հայկական եկեղեցին՝ որ պարտօր ժամանակ առաջ կառուցուած էր, և Պեղճեան Ամիրայի ձեռնառութեամբ վերանորոգուած, 1889 թուին չորրորդ անգամ վերաշինեցաւ ժողովրդական հանգանակութեամբ: Աւանդաբար կը պատմուի, թէ տեղւոյս նախնի Հայք, Պիղայի Հայոց հետ՝ Պիղայէ 4-5 ժամ հեռու Թուրքիանը զիւզի մէջ կը բնակէին և եկեղեցի ու վարժարան ունէին, սակայն ի վերջոյ 1658ին տանները փոխադրուեալ են կէսն ի Պիղա և կէսը ի Գարգանէլ:

Թուրքք 800 աւուն են. գրեթէ նոյնչափ ալ Յոյնք կան, իսկ Հրեայք 180 աւուն են, բանի մը տուն ալ Երոտպացիք. ընդհանուր առնոց թիւն 2000ի կը հասնի, և բնակիչք 11000ի մօտ: Գարգանէլ՝ որ համանուն նեղուցին ամէնէն բանակ ու ծաղկեալ քաղաքն է, Միջերկրականի արեւմտեան կուշար ծովուն եզրը շինուած է և կ'ընդարձակի հարաւէն ի հիւսիս: Գիրքք տափարակ է. օգը թէև երբեմն մօտակայ ճահիճներէ ազականուելով վնասակար կը լինէր, բայց բանի մը տարիէ հետէ թէ՛ այդպիսի ակարբ լեցուելով և թէ՛ փոզոցաց մաքրութեան խնամ տարուելով՝ այժմ բաւական լաւացած է: Չորն այնչափ ընափր զիւրակեցիկք՝ հանդիպակաց յունակ Մայասու անուն զիւզէն բերել կուտան պատուական ջուր: Գաղաքիս Հիւսիսը և առաջին թաղաւորը եղած Գարգանոս անուամբ մէկը, որ Քրիստոսէ 1568 տարի առաջ օտար երկրէ ըր զալով Իպա լերին արեւմտեան բնակաւորմին վրայ շինած է քաղաք՝ այժմ Գարգալ կոչուած լայն գաշախն մէջ, և իւր

անուամբ Գարգանիա կոչուած է թէ՛ քաղաքն և թէ՛ արած երկիրը. իսկ յետոյ ասոր յաջորդաց միոյն՝ Տրոսի անուամբ ըսուած է Տրոյիս, Տրոյիս կամ Տրոյապոս: Գարգանիոյ ծաղկեալ քաղաքներն էին ի հնումն Սեոտոս և Արիւզոս, որոնք դէմ առ դէմ իրր մի մարմին նկատուելով՝ Գարգանեանք կը կոչուէին, և կիրճն Գարգանեան եկրոց, մինչդեռ յառաջագոյն Հեղեպոսեան կը կոչուէր, ինչպէս յայտնի է Հելլէսի և ոսկեղեզման առասպելաբանն պատմութեանէն: — Օսմանեան սուլթաններէն Ղազի Մէհմէտէա Գ., յիշեալ նեղուցին կարեւորութիւնն զգալով՝ բաւական չհամարեցաւ Պոլսը և Կաղարա անուն բերդերը, փութացաւ երկու հաս ալ կանգնել 1658 թուին, որք են դէմ առ դէմ այժմեան Չանաղ-գալէի և Քիլիս-իւլ-Պահր բերդերն: Այնուհետեւ քաղաքս ծաղկիլ սկսելով, կը ժառանգէ հին Սեոտոսի և Արիւզոսի յատկացեալ Գարգանէլ անունը, որոյ նեղուցը Օսմանեանք հետզհետէ ամրացնելով՝ իրեւ ամրափակ գուռ մը դարձուցած են զայն, և կը կոչեն Գալայի-Սուլթանիլէ, թէև սամիկն Չանաղ-գալէ ևս կ'անուանէ, ի վաղուց հետէ հոս գանուած բրախ գործարանաց պատճառաւ: Գարգանէլի ափական ափանց վրայ են Կաղարա, Քոնկարունը, Մէճիտիլէ, Համիտիլէ և Գուսկալէ անուն բերդերը, իսկ եւրոպական ափունքը կը գանուին Պոլսը, Չանդուրնը, Չիվէիլը, Տէլիբէնպուրնը, Քիլիս-իւլ-Պահր, Կամաղիեհէ և Ալտա-իւլ-Պահր անուն բերդերայք:

ԳԱՐԵՆՅԱԿ ԿԱՄ ԳԱՐԵՆՅԱԿ. — Այս անուամբ ծանօթ է Ազուանից աշխարհի նշանաւոր կիրճերէն մին՝ որ այժմ կը կոչուի Վլյախի կաւկասի կիրճ: Կովկասու բարածայտ բլուր մ'է, ձոր տեղ մը բարձրացած, ուր երկու կողմերէ իրար մօտեցած են ահաւոր սեպաձեւ լեռներ՝ ձեւացնելով սոսկալի կիրճ մը: Նոյն բլրոյն կատարը կայ հինաւուրց ամրաբերդ մը հանդերձ պատուարաւ, որ այժմ ամայի է: Թերէք գետը, որ կը բլլի Կովկասու բարձունքներէն, իւր մէջ բնորոնելով զանազան ձորերէ բազմաթիւ վտակներ, կ'անցնի կրճիս միջէն:

ԳԱՐԵՆՅԱԿ. — Այս անուամբ վերին և Կեր-



քին կրկին սակաւարնակ Հայոց գիւղեր կան Մոկաց աշխարհի Շատախու գաւառակի մէջ: Կերքին Գարենց ունի Ս. Շմառն աւնուամբ եկեղեցի մը: Վերին Գարենցի մօտ է Ս. Աստուածածին անուամբ վանք մը:

**ԳԱՐԵՆՑ.** — Հայաբնակ գիւղ Աղձնեաց աշխարհի այժմեան Խիզան գաւառակի մէջ. ունի մօտ 300 բնակիչ և Ս. Գեորգ աւնուամբ եկեղեցի մը:

**ԳԱՐԷ ԳՕԼ.** — Գիւղ Տիգրանակերտի. հայ բնակիչք 10 տուն են:

**ԳԱՐԷ—ԲԱՌԲԱՆՁ.** — Գիւղ Շամախու գաւառի, որ հետու է Արփաուտ գիւղէն 2 ժամ գէպի արեւմուտք, խոր ձորի մը մէջ: Բնակիչք 38 տուն, 210 հոգի, ամբողջ հայ են, որոց նախնիք 1798 թուին զաղթած են Արցախի Յոր, Ծամձոր, Թաղլար և Ճարտար գիւղերէն: Տեղւոյս օդը ամրան սօթած գին է և ջուրն ոչ լաւ:

**ԳԱՐՉՕՐ.** — Կը յիշուի Սասնոյ մէջ:  
**ԳԱՐՄԱՆ.** Տես ՏԱՐՄԱՆ:

**ԳԱՐՈՅՆՔ, ԳԱՐՕՆՔ** կամ **ԳԱՐՈՒՆԵՑ ԲԵՐԿ.** — Հին և հուշակաւոր ամրոց Այրարատայ կողովիս գաւառի, որ ԺԵ դարէն սկսեալ ծանօթ է Բայազիդ աւնուամբ: Կը յիշուի ի պատմութեան Գ դարու մէջ, նախ իբրև հզօր ամրոց և ապաստանարան արքունի անձանց և գանձուց, իսկ յետոյ իբրև հայրենի տուն Բաղրատունեաց պայազատներու: Նախ կը յիշուի Մեծին Տրդատայ մահէն վերջ, հիւսիսայնոց կամ Մազքըթիսի Հայս արշաւանաց ատեն, որոց երկիւղէն «Խոյս ետ թագաւորն Հայոց խոսրով... և անկաւ յամուր բերդն Գարօնից, և ընդ նմա ծերունին վրթաւ նէս կպիսկոպոսապեան Հայոց»: Բերդիս մէջ ամրացաւ երբեմն նաև Արշակ Բ, Պարսից Շապուհ թագաւորի հետ բրած երկար պատերազմաց ժամանակ, որոնք անոր զերութենէն վերջ տիրեցին նաև ամրոցիս. իսկ երբ խը որդին Պապ թագաւորեց, ուրիշ ամրոցներու հետ «թափեաց յինքն... և զբերդն Գարօնից որ է յերկրին կրգայ, ուր կային գանձք Արշակունեացն սաստիկ յոյժ»: Ամրոցս Բաղրատունեաց սկիհականութիւն եղած

միջոց, հոս էին ոչ միայն անոնց արքունիքը այլ և զերեզմանները. 616 թուին բազմաշաղթ Սմբատ մարզպանը Պարսից զուոր վախճանելով, հանդիսով և փառօք հոս բերին «Ի բնիկ հանգստարանին, և եպին ի ապանի, ի գեօզն Գարիւնս, որ է ի կողովիս գաւառի»: Նոյնպէս 642ին, խը որդւոյն վարազտիրոցի «բարձին զմարմին և



252. Գարեալի կիրճը:

տարան թագեցին առ հօր խրում ի Գարինս»: Աշոտ Պատրիկ անուանի իշխանապետն Հայոց եօթներորդ դարու մէջ, «շինէր զեկեղեցին Գարունից յիւրում ոստանին», յորում դրաւ նաև Քրիստոսի մարգեղութեան պատկերն՝ արեւմուտքէն բերած, և եկեղեցին անուանեց Ամենափրկիչ, ինչպէս կ'աւանդեն մեր պատմիչներէն ամանք: Վերոյիշեալ պատկերը՝ յետոյ տարած են ի Հուսոց Թաւ, և այժմ կը պահուի յձջմիա-



ծին: Հէշմ' ամիրապետէն 734 թուին իշխանապետ գրուած է այլ ոմն սպայազատ Բազրատունիներէն Աշոտ Պաարիկ՝ որդի վասակայ, որուն վրայ նախաձեռով Մամիկոնեանքն Գրիգոր և Գաւիթ, տասը տարի վերջ

առ իշխանն Իամայէլի Մրուան»: Մրուան ամիրապետի մեծ օգնութիւն բրաւ Աշոտ, անոր թշնամիները քաջութեամբ վանելով, և մեծարուելով գարձաւ իւր աշխարհը. բայց քանի մը տարի վերջ (751ին) Գրիգոր իշ



253. Գաւիթ Բէկի բերդը .

ազեցին գաւաճանել զինքը. իսկ Աշոտ « ժողովէր գախս ասն իւրայ յամբոցս Գարիւնից, և զաիկինն և զամենայն ընտանիս իւր, և թողոյր ի վերայ սահապան զամբոցն սահակ, և ինքն անցեալ գնայր յաշխարհն Ասորոց

խանէն ձերբախալուելով՝ զրկուեցաւ աչքերէն, որուն վրայ սգացին Հայոց աշխարհի բոլոր նախարարները: Այս զեպքէն վերջ Աշոտ տասներեք տարի ևս ապրելով վախճանեցաւ ծեր հասակի մէջ և փառաւորա



պէս թաղուեցաւ ի Գարբինս: 774 թուին Արարացոց զէմ միարանած Հայոց նախա-  
 րարներէն սմանը ապաստանեցան այս ա-  
 մուր բերդը: — Իշխանական գահուն հետ,  
 հարկ էր որ հոս ըլլար զէմ ժամանակ մը,  
 նաև Քաղբառուեակց տան եղիսկոպոսարանը,  
 վասն զի 628ին կը յիշուի Գարբինից եղիս-  
 կոպոս ոմն Քրիստափոր: Տասներորդ պարու-  
 սկիզբը Գաղիկ Արծրունի թագաւորը երթալով  
 կողովիս գաւառը, պաշարելով «գանառն  
 Գարբինս, գողացեալ առնու ի գիշերի, ըստ  
 յաջողելոյ նմա ի վերուստ»: պատմիչը չի  
 յայտնէր թէ որուն ձեռքէն, բայց կը թուի  
 Հաղարացիներէն: Այնուհետև ժամանակ  
 մը Արծրունեաց իշխանութեան ներքոյ մնա-  
 ցած է ամբոցս և նոյնանուն զիւրը: ԺԷ գա-  
 ըուն մէջ վերջին անգամ կը յիշէ բերդս և  
 զիւրս թ. Մեծոփեցի: — Այրարատ, 496-  
 499: Տես ԲԱՅԱԶԻԻ:

ԳԱՐՈՒ կամ ԳԱՐՈՒԱՅ ԼԵԱՌՆ. — Կը բարձ-  
 րանայ Սիւնեաց Կրնջակ գաւառի մէջ, Ջու-  
 դայի արեւելեան հիւսիսային կողմը. այժմ կը  
 կոչուի Տարրի տաղ և բարձրութիւնն է 750Յ  
 սար: Լեւանտ անունը կրուած կը գտնենք  
 նաև Գարուայ յետև: Անուանի է Գարուայ  
 երկանարարը, որ վաճառանոցաց մէջ ծա-  
 նոթ է Կաթնաւանի անուամբ, և կը զրկուի  
 Առուսաց Հայաստանի բոլոր գաւառները:

ԳԱՐՈՒՔ. — Կը յիշուի Սասնոյ մէջ, ան-  
 զեկութիւնը կը պահուին:

ԳԱՐՊԱՍ. — Գիւղ Պոռչալու գաւառի. ունի  
 սակաւաթիւ հայ բնակիչներ: — Այս անուամբ  
 ուրիշ զիւր մ'ալ կայ նոյն գաւառի մէջ, որոյ  
 բնակիչը այլազգիներն են:

ԳԱՐՊԱՍ. — Հայաբնակ զիւղ Այրարատայ,  
 Ալեքսանդրապոլի գաւառի մէջ: Ունի 340  
 բնակիչ, բաժնուած 36 տան:

ԳԱՐՊԱՍ. — Այս անուամբ գետ, ձոր և զիւղ  
 կան լեւոնային Կիրիկիոյ մէջ: Տես ԳԱՐՊԱՍ:

ԳԱՐՊԱՍՆԵՐ. — Արցախի Խաչնի գաւառի  
 մէջ ծանօթ է այս անուամբ Զալալեան մե-  
 ծախամբաւ իշխանացն սոհմի ապարանն: Կը  
 գտնուի վանքաշէն զիւղի հարաւային հան-  
 զէպ, Խաչնի գետակի աջ կողմի բարձրու-  
 թեան վրայ և Հաւապտուկ վանքի արեւմտեան  
 կողմը: Այժմ ամայի և բնակարձակ շինու-  
 թիւն մ'է ապարանս, ունի շատ սենեակներ

և քարուկիր պարսպով շրջապատեալ է: Այս  
 սենեկաց մէջ նշանաւոր են ընդունարանն  
 և ուրիշ սենեակ մը, որք կը ներկայացնեն  
 ժամանակին ճարտարագետութեան և ճաշա-  
 կին ոճը: — Ապարանէս քանի մը քաղ-  
 վար, կան անտաշ քարով շինուած միջակ  
 մեծութեամբ երկու եկեղեցիներ, որոց հիւսի-  
 սայինը ունի մի աւազ և մի փոքր խորան, իսկ  
 միւսն ունի երկու փոքր և մի աւազ խորան:  
 Վերոյիշեալ ապարանի և այս եկեղեցիներու  
 արձանագիրը քարերն անյայտացած են:

ԳԱՐՊԱԿ. — Երվային Կիրիկիոյ հին ամ-  
 բոցներէն մին:

ԳԱՐՈՆՔ. Տես ԳԱՐՈՅՆՔ:

ԳԱՒԱԼԱՆՈՅ. Տես ՍՈՒՐՔ:

ԳԱՌԹԻ ԲԵՐԻ. — Սիւնեաց Հաբանդ գա-  
 ւառի Հալիձորի մէջ կը գտնուի նշանաւոր  
 բերդս, ամայի վիճակի մէջ: Կառուցած է  
 բերդս ժէ՛ գարու Սիւնեցի կարիճն Գաւիթ,  
 իւր ընդզէմ Օսմանեանց մզած պատերազ-  
 մաց ժամանակ: Գաւիթ Բէկի պատերազմներն  
 և քաջութիւնքն, լաւ կերպով նկարագրած  
 է Բաֆֆի, իւր Գաւիթ Բէկի գրքի մէջ:

ԳԱՌԹԻ-ՄՐՁՕ կամ ՄԵՁՐԷ. — Գիւղ Բա-  
 լուի, ունի 30 տուն հայ՝ Ս. Թորոս ա-  
 նուամբ եկեղեցի մը և զպրոց: Բալու քաղա-  
 քէն 3 ժամու ճանապարհ հետու է՝ արևու-  
 մտեան կողմը լեւոնային ձորակի մը մէջ:  
 Բնակիչը հողագործ են:

ԳԱՌԹԻ ՇԷՆ. — Գաշապին Կիրիկիոյ մէջ,  
 այս անուամբ զիւր մը կը յիշուի. քննութեան  
 կը կարօտի:

ԳԱՌՈՅ. — Գիւղ Այրարատայ Բաղրեանոյ  
 գաւառի, Գարսանայ արեւելեան կողմը 1/2  
 ժամ հետու, և Շեռանայ ձախ ափին վրայ:  
 Գիրքովը Ալաշկերտի գաշաի մէջ գտնուած  
 զիւղերէն ամենաբնութիւնն է: Գիւղս 1852-  
 56ին գուռ հայաբնակ էր, 130-150 տուն  
 բնակչօք. բայց այդ միջոցի արիւնահեղ  
 պատերազմներուն մեծ մասամբ զողթած են  
 Այրարատեան գաշալը, փոքր մասն մ'ալ  
 Ալաշկերտ: Վերջինները մօտ 15-20 տարի  
 ժամանակ պաշտպանած ու հոկած են իրենց  
 կալուածոց վրայ և եկեղեցին ու հանդոտա-  
 րանը նախնական կրթութեան մէջ պահած:  
 Նոյն ժամանակները իրենց զիւղի պահպա-  
 նութիւնը յանձնած էին քանի մը աննշան



բրդերու, որք սակաւ առ սակաւ աճելով՝ այժմ գրաւած են ամբողջ զիւզս և ունին մօտ 40 տուն: Տխուր է զիւզիս այժմեան տեսիլն. եկեղեցին աղբանոց դարձուցած են անօրէնները, հարխրաւոր տասպանաբարեր և խաչարձաններ գործածած են բրդերը իրենց գոմերու սալալատակի համար, լաւաւ աներն և հիւրանոցները բրդական հիւղեակներու ձեւի փոխարկած: — Բագրեւանդ, 210-214:

**ԳԱՒՐԱՅ.** — Հայրենակ զիւզ Սերաստիոյ հիւսիսային կողմը, մէկ ժամու ճանապարհ հեռու, որուն մէջէն կ'անցնի նոյնանուն գետ մը: Գիւղս շինուած է Մայրազուս կոչուած լեռնաշղթայի ստորոտը բլրի մը վրայ: Կը պատմուի թէ կոպպաշտական դարուց մէջ աստ կը բնակէր Գաւուռ անուն գեւ մը, որով անոր անուամբ կը կոչուի եղեր բնակավայրն ալ. այս գեւն՝ զիւզիս զիմաց բարձրացած Սէյրան թեփեաի կոչուած բրգաձեւ լեռան վրայ մերթ կ'անդնելով՝ շուրջը կը զիտէ և ուղեւորաց շատ անդթութիւններ կ'ընէ եղեր, և բլուրն իբրև ապացոյց անոր տեղաբանն և գիտարանն լինելուն՝ Սէյրան անունը պահած է: Երբ բրիտաններէութիւնն մտեր է ի Սերաստիա, բրիտանեայք բերել տուեր են Ս. Ալմանագինէս հայրապետը, որու համար՝ աւանդութիւն է թէ, Սերաստիոյ արեւմտեան կողմն Աւստղիկ անուն լեռան և գետոյն մօտ Պետախտառն անուամբ վանք մ'ունէր, որուն աւերակաց մէկ մասն ցարդ կ'երեւի: Հայրապետն զալով Սէյրան-թեփեփեփի մօտ քանիցս խաչակիցքեր և հրէշն իսկոյն փախեր և ապաստաներ է Գաւուռի մէջ, հայրապետը ինքն ևս հասնելով անոր՝ հալածեր է այդ սահմաններէն, և այնուհետև ժայռերու վրայ հազարաւոր խաչանշաններ գրողմեր է, որք մինչև ցարդ կ'ան: Կը գտնուին նաև շատ այրեր և փապարներ, որոնցմէ նշանաւոր են Ս. Յակոբ, Ս. Վարվաւ և Չարաչ Ս. Սարգիս, վերջինս գեաւնէն քանի մը մետր բարձր, ապառաժէ փորուած աստիճաններով և նեղ երկղոնակով ընդարձակ այր մ'է, յորում փորուած են պահարաններ, խաչեր և խորաններ. կ'ըսուի նաև թէ Ս. Ալմանագինէս հայրապետը աստ պատարալ մատուցած է: Ոմանք այլ այրերը

բրիտանեական հալածանաց ժամանակին կը վերադրեն. քաղաքէն փախչող հաւատացեալք եկած ապաստանած են այդ ծակերու և ծերպերու մէջ, ոմանք անդ ծնած, ապրած և իրենց կրօնական ու նիւթական պէտքերն հոգացած և անդ մեռած են: Կ'ըսուի նաև թէ երբ Սենեքերիմ Արծրունին փոխադրեցաւ ի Սերաստիա, անոր որդին Գաւիթ, յիշեալ Գաւուռ վայրը ամառանոց մը կը հաստատէ և իւր անուամբ Գաւթաղիւղ կը կոչէ. մինչև մօտ ժամանակներս զիւզին մէջ աղօրիբի մօտն այլ ամառանոցի հնութեան ինչ ինչ հետքերն կը գտնուէին: — Խալիլ Բիֆաթ փաշայի նորակառոյց ալիւրի գործարանէն բակրահալ, մինչև զիւզիս ստորոտը և զէպ ի քաղաքը, լայն ձոր մը կայ որու մէջէն կը հասի Մայրազուս լեռներէն բղխած ջուրն՝ որ իւր բազմաթիւ վտակներով շատ ջրաղացներու երկանաբարերն կը շարժէ, և քաղաքին առատ ջուր կը մատակարարէ: Գիւղիս բնակիչք 160-180 տուն՝ առհասարակ ազօրեկաններ են և երկրագործ: Գաւրայի օլը շատ գեղեցիկ է և զիրքը՝ բարձրահայեաց: Բնակիչք ունին Ս. Սարգիս անուն եկեղեցի մը և Գաւթեան անուամբ վարժարան: — Ս. Յակոբ՝ զիւզիս զիմաց բլրակի մը վրայ կառուցուած է. շուրջը քիչ տարիներ առաջ ընդարձակ ծառաշատ պարտէզ մը շինուած է և չորս կողմը քարեայ պատնէշ հիստուած: Ետև քանի մը խաչերէ բաղկացեալ փոքրիկ և անշուք մատուռ մ'էր. իսկ այժմ բաւական մեծ և շքեղ վանք մը դարձած է և ունի ոչ սակաւ սենեակներ: Ս. Լուսաւորչի նշխարաց զիւտի աօնի օրը ամէն տարի Ս. Յակոբայ վանուց ուխտագնացութեան հանդէսը կը կատարուի, զոր տեղացիք Ս. Յակոբայ կամ Գաւրայ փառայորի կ'անուանեն: Ս. Յակոբայ վանքէն քիչ մը հեռու, կրկին գառիվայրի մը գազաթը կայ Ս. Վարվաւ սրբավայրն, որ ունի շրջապարիսպ:

**ԳԱՒՐԷԺ.** — Այս ձեւով ևս կը գրուի Գաւրեժ քաղաքի անունը:

**ԳԱՓՈՒՅ ՎԱՆՔ.** — Սինեաց Գեղարբունի գաւառի հին վանքերէն մին, որ է ըստ Սիմեան կաթողիկոսի (Չամբո, էջ 284), այժմեան Ս. Լուսաւորչի եկեղեցին, որ կը գտնուի Նորատուս զիւղի հարաւային կողմը՝ վերստ



մը հետու: Էկեղեցիո թէև փոքր՝ բայց գեղեցիկ է, անսխն և սուր գմբէթով: Շինուած է սրբատաշ քարերով, որմանքն և առաստաղը բաւական խախտուած և քայքայուած են: Ունի որմնց վրայ շատ արձանագրութիւններ, որոնցմէ կը յայտնուի թէ կառուցուած է ԺԳ գարու սկիզբը յանուն Ս. Գրի-

ննայ վտնքս, որ այժմ համարեա ամայի վիճակի մէջ կը գտնուի: Էկեղեցոյ մտական խաչքարեր, հանդերձ արձանագրութեամբք, հնագոյն ծանօթ արձանագրութիւնն սնի ՈԿ (= 1211) թուականը:

ԳԱՔ. — Յիշատակարանի մը համաձայն կը յիշուի Արցախի Գիգակ գաւառի մէջ:



254. Դափուց վանք կամ Ս. Գրիգոր Լուսաւորիչ նորաստուի:

գորի, և նորոգուած է 1344ին: Դեռ անվընտա մնացած են բնին խր սեղանով. բնի երկու կողմերը կան մէկ մէկ փոքրիկ պահարաններ՝ փոքրիկ լուսամուտներով: Թէ ինչ հիման վրայ կռասնոց վանք կը համարուի այս եկեղեցի, և թէ Դափուց վանք անունն երբ տրուեր է ասոր, յայտնի չէ և կը կարօտի քննութեան: Ս. Լուսաւորչի երեք տօներուն բազմաթիւ ուխտաւորներ կ'ու-

ԳԱՔԱ. Տեա ԹԱՔԱ:  
ԳԳՄԱՇ. — Հայաբնակ գիւղ Սիրաստիոյ՝ արեւելեան կողմը. 3 ժամ հետու: Ունի 80-90 տուն բնակիչ, Ս. Սարգիս եկեղեցի մը և գլխաց մը Գեւորեան անուամբ:

ԳԳՄԱՇԷՆ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ վարաժնունեաց գաւառի մէջ: Ունի հին քարաշէն կամարակապ եկեղեցի մը, որուն տանիքը կործանած լինելով՝ նոր բնակիչը



փայտով ծածկեցին և կոշեցին Ս. Թադևոս: Ունի մօտ 1700 բնակիչ, բաժնուած 210 տան: Գլմաշէնի այժմեան բնակչաց նախնիք դադարած են Մակուէն:

ԴԵԶՊԱՆԱՐՏ. — Այս անուամբ հարթ տեղ մը կը յիշուի Սիւնեաց Վայոց ձոր գաւառի Սուշեմայ ձորին մէջ:

ԴԵԿՆ. Տես ՎԱՅՈՅ ՁՈՐ:

ԴԵԿԱՊՈՒՄ. Տես ՍԵԼԵԿԿԱ:

ԴԵՂԱՍԱՐ. — Գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի, սակաւաթիւ հայ և թաթար բնակիչներով: Ոմանք գիւղիս անունը կը գրեն Գիւսար. Աղալիսի և Յղնա մէջնաղը կը գանուի:

ԴԵՂԱՍՊԱՐ. — Սակաւարնակ Հայոց գիւղ Շատարիս (Վան). ունի Ս. Յովնանեկ և Ս. Գեորգ բարուկիր եկեղեցի մը:

ԴԵՂԹԱՓ կամ ԱՂՏԱՍ. — Լեռ Բարձր Հայոց Մանանաղի (Թէքման) գաւառի. կը բարձրանայ Խնուսայ և Թէքմանայ մէջտեղ:

ԴԵՂԻՆՔԱՐ. — Կը յիշուի Բարձր Հայոց Դարանաղի (Կամախ) գաւառի մէջ:

ԴԵՂՁԱՁՈՐ կամ ԴԵՂՆԱՁՈՐ. — Կը համարուի թէ կը գանուի այս անուամբ տեղ Սիւնեաց Եղզուկ գաւառի մէջ, զոր Աշոտ Սիւնեաց եշխանը նուիրած է Տաթևի վանաց:

ԴԵՂՁԱՆԱԳԵՏ. — Կը յիշուի Սիւնեաց Սոգբ գաւառի Մաքենոցաց վանաց արձանագրութեան մը մէջ:

ԴԵՂՁԻՍ. — Գիւղ Վանայ Գաւառ գաւառակի, երբեմն հայաբնակ, իսկ այժմ Գրուգաց ձեռքն է:

ԴԵՂՁԿՈՒՏ. Տես ԴԵՂՁՆՈՒՏԻ ՎԱՆՔ:

ԴԵՂՁՄԵՐ. — Մշու գիւղերէն մին, Բոնաշինու, խաթայ կամ Սասնոյ սահմանաց մէջ: Բնակիչք այլազգի են և կը նեղեն մերձակայ հայ գիւղերը:

ԴԵՂՁՆԱՎԱՆՔ. — Կը յիշէ Սիմէոն կաթողիկոս, իբրև թեմ Այրարատայ (Ոստան) խոր վիրապի վանաց:

ԴԵՂՁՆՈՒՏԻ ՎԱՆՔ. — Կը գանուի Արցախի Չաւէ գաւառի մէջ. հիմնուած է Կեւրանց վանքի հարաւ-արեւելեան կողմի անտառապատ բարձր լեռան մը լանջին վրայ. Առաքելոց վանքէն հեռու է երկու ժամու ճանապարհ: Գրուած գտանք վանքիս անունը նաև Գեղձկուտ, չգիտեմ սխալմամբ թէ

այլ նպատակաւ: Շինուած է ամբողջապէս սրբատաշ քարերով և ունի գրեթէ Մակարայ վանքի մեծութիւնը: Տաճարը ունի երկու փոքր և մի աւագ խորան, երկու խորհրդարան և մի դռան արեւմտեան կողմէն: Տաճարի կից է 12 բայլ երկայնութեամբ և նոյնքան լայնութեամբ գաւթի մը, որոյ տանիքը խոնարհած է. կործանած է նաև տաճարի կաթողիկէն: Վանաց արձանագրութիւններէն չէ կարելի որոշել շինութեան ճիշդ թուականը, բայց խաչքարի մը գրութիւնէն կը յայտնուի թէ կառուցուած է ՉԻԻ (= 1275) թուին: Տաճարի գրան կղերքը ընտիր բարձրաքանդակներով զարդարուած է. ուշագրաւ են գաւթի մէջ երկու զեղեցկաքանդակ խաչարձաններ, որոց զեղարուեստի նրբութիւնն կը ներկայացնէ ժամանակին ճարտարագիտութեան յառաջադիմութիւնը: Տաճարի հիւսիսային կողմը կայ ուրիշ քարաշէն եկեղեցի մը, հասարակ կերպով շինուած:

ԴԵՂՆԱՁՈՐ. Տես ԴԵՂՁԱՁՈՐ:

ԴԵՂՆՔԱՐ. — Կիլիկիոյ հին ամրոցներէն մին, որոյ շինութեան կարեւոր արձանագրութեան սեղանն քարն 0, 80 մետր երկայնութեամբ և 0, 55 լայնութեամբ, այժմ կը գանուի ազուցուած Տարսնի եկեղեցոյն բեմի սեղանին մէջ: Արձանագրութիւնն անազարտ մնացած է, և կը յայտնէ թէ ամբողջ հիմնած է Օշին թագաւորը և աւարտած է Կոստանդին ՉԻԳ (= 1319) թուին: Հաւանօրէն Տարսնի մօտերը կը գանուի ամրոցս, որուն աւերակները հետազօտութեան կը կարօտին:

ԴԵՂԱՍԱՐ. Տես ԳՈՂԹՆ:

ԴԵՐԲԱՎԱՆՔ. — Կը յիշուի Սիւնեաց վանքերու շարքին մէջ:

ԴԵՐԲՆ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, որոյ բնակիչք այժմ այլազգի են:

ԴԵՐՁՆԻ. — Գիւղ Սղերաի (Աղձնիք), որ գրեթէ զար մը յառաջ Զարկանի գիւղաքաղաքն էր 700 տուն բնակչօք: Գիւղի երկու շառ աներու և երկու բաղանեաց աւերակները: Այժմ փոքրիկ գիւղ մ'է 20 տուն հայ և 10 տուն քուրդ բնակչօք: Հայք ունին Ս. Յովնանեկ անուամբ եկեղեցի: Այս եկեղեցոյն մէջ 1886ին տեսած են



շատ զբնակիչներ, յորոց 15ի շատ զբնակիչներ խառնաբերուին մէկմէկու կողմ և զանոնք մը զարձած են եղեր, մէկ բանին ալ հոգ զարձած :

ԳԵՐԻՇԿ. — Հայաբնակ գիւղ Արարատու կանի Սարգստո գաւառի: Ունի 144 բնակիչ, բաժնուած 23 տան, և եկեղեցի մը:

ԳԵՐԻՇԿԻ կամ ԹԵՐԻՇԿԻ. — Բարձր Հայոց գաւառներէն մին, կարնոյ կուսակալութեան և առաջնորդութեան ներքին: Գաւառի մէջ գտնուող աղբայինք 700 տուն կը հաշտին, արեւելքէ արեւմուտք ցիրուցան տարածուած 12 ժամու հեռաւորութեամբ: Այս տները բաժնուած են 32 զուգերու մէջ, որոց շատերու մէջ կան նաև բուրդ և թուրք բնակիչներ: Գերջան գաւառի Հայք շատ յետադեմ կացութեան մէջ կը գտնուին. բաժանայք բնակչանքս մշակութեամբ կը հայթհայթեն իրենց նիւթական ապրուստն, վասն զի ժողովուրդը առհասարակ աղքատ է: Կը զբաղին բնակչանքս ցորենի, գարիի, կորեկի և կաւառի մշակութեամբ. ունին ոչխար, այծ, կով, մեղր և սեր: Ոչն բարեխառն է. երկրագործութեան յարմար հոգ, ջուր և ամէն միջոց կայ. երկիրը բնակչանքէ աղբայինք, պողատու և անպատու ծառերու, բամբակի, կանեփի մշակութեան, բայց ժողովուրդը անհոգ, ծոյլ և ազէա լինելով՝ այս արդիւնաւոր մշակութեանց ձեռք չի զարներ: Գաւառի աղջկունք ամուրիութեան ժամանակ, և հարսնանայլն բանի մը տարի ետքն ալ եկեղեցի երթալ ամօթ կը համարին: Ամուսնացեալ կին մը կը պարտաւորի՝ գտնէ 30 տարեկն լրացունելէն վերջ եկեղեցի երթալ և ուսանիլ կրօնքն և եկեղեցիս խորհուրդները. այս հինաւուրց և արմատացեալ վատ սովորութիւն մ'է: Գաւառիս կեդրոնայինք է Մամախարուն գիւղաքաղաքն: Գերջանի արեւելեան կողմն է կարին, հարան Սասնին կեդի, հիսիսն՝ Խաղառնաց լեռինք (կոյի տաղի) և արեւմուտքն զիւղօրէք, Գուղչանի և Երիզայի հետ: Տարածութիւնն բաւական ընդարձակ է. Եփրատ գետը արեւելեան հիւսիսէ գէպի արեւմտեան հարաւ հասելով գաւառս երկու մասանց կը բաժնէ: Իսկու մակերեսութէն 1800 մետր բարձր լեռնապաշտ մ'է Գերջան, որոյ շրջ-

ջաղիծը կազմող լեռինք 2000-2500 մետր բարձրութիւն ունին. առնց մէջ են Պաղար-Պապա (Մանանաղի գաւառի հին Պախր լեռն) խալ լեռ՝ հարաւային սահմանաց վրայ, Չախլախ և Խալխալ՝ արեւելեան սահմանաց վրայ, Մարխա՛՛՛ արեւելեան հիւսիսային կողմն կոյի անուանի լեռնաշղթային մէկ գագաթն: Գաւառիս ցորենը բնախր է կարծրութեան և հիւթեղութեան պատճառու, և կը լիցնէ շրջակայ քաղաքաց հրապարակները: — Ս. Գրիգոր Լուսաւորչի առաջին աշակերտած գաւառներէն մին է սա, որուն համար Ագաթանգեղոս (էջ 593) կը գրէ. « Ագա փութացեալ հասանէր ի գաւառն Գերջան, զի և անց յառաջեալ լիցի ընտլ գտաբերական բարոյութեանն զարուստ մշակութեանն, և զերծուցանել զնոսա ի գարշելի պիւղական ստամայակիր բարուցն ձիւսղութեան: Չխուժալուժ կողմանն աշակերտելոյ, զխոշորագոյն և պիւցրեկաղոյն բարս հեթանոսութեան շրջել ի զգաստութիւն սաստածուսոյց իմաստութեան, և ծանօթն աւետարանական աւետանցն յարգարեալս բնուել կացուցանէր »: Գաւառիս եպիսկոպոսներէն յանուանէ կը յիշուի սմն Գիեր կամ Գերի: Գերջանի հին զուգերէն նշանաւոր է Բագասիճ, որ առկաւին զոյսութիւն ունի, իսկ վանքերէն կը յիշուին Խրաճորի վանք. Ծախքորի Ս. Գաւառի, Սրիսի Ս. Թորոսի կամ Գորոսի վանք:

ԳԵՐԻՇԿԻ կամ ՏԵՂԻՇԿԻ. — Հայաբնակ գիւղ՝ Սերասիայ արեւելեան հարաւային կողմը՝ 11 ժամ հեռու Բնակիչք սակաւաթիւ են. ունին Ս. Կարապետ անուամբ եկեղեցի մը: Գիւղիս մօտ երբեմն կար Ս. Գեորգ անուամբ վանք մը, որոյ աւերակները դեռ կ'երևին. վանքին սեփհական արտօրայք և անաւոր՝ մասնաւորաց ձեռքն են: Բնաւանդութեան՝ վանքին տեղը յառաջագոյն զեւեր կը բնակին եղեր, վերջը զեւք հալածուեր ու Ս. Գեորգայ վանքը շինուեր է, և այս պատճառու Գեւոցայ վանք բուեր է:

ԳԵՂՈՒՋ. — Չորրորդ Հայոց հին գաւառներէն մին:

ԳԵՂՈՒՋ. — Քաղաք Ռումանիոյ համանուն գաւառի ի հնումն քաղաքիս մէջ կային



շատ հայեր և անցեալ դարու սկիզբն իրենց թիւն 200է աւելի էր և ունէին եկեղեցի. իսկ այժմ միայն 7 տուն հայ կայ, առանց եկեղեցոյ և վարժարանի: Այս գաւառի հինգ զիւղաբարքաց և զիւղօրէից մէջ կան 25 հայ բնտանիք, առանց եկեղեցոյ և վարժարանի:

ԳԷԳ. — Այս անուամբ ամբողջ մը կը յիշէ Կիրակոս (էջ 176) Արցախի մէջ, զոր Շիրակնորար և ուրիշ զղեկաց հեռ կործաներ են այլազգի հարկահանները:

ԳԷՃԻՐԱՊԱՏ. Տես ՏԱՃԱՐԱԲԱԿ:

ԳԷՄԻՐՁԻ ԿԱՄ ՏԷՄԻՐՃԻ. — Գիւղ Բալուի՝ հիւսիսային կողմը: Կան 10 տուն հայ և 15 տան չափ ալ Զաղա: Հայք չունին ոչ եկեղեցի և ոչ գոբոց: Տես ՏԷՄԻՐՃԻ:

ԳԷՐԿՈՅՑ-ԱՄՈՅ. — Գիւղ Սղերտի Ռընու վան գաւառի Պշէրիկ գաւառակի. 15 տուն հայ կայ:

ԳԷՐԻՔԻ Ս. ԱՍՏՈՒԱՆԱՅԻՆ. — Վանքս կը գտնուի Արարատականի Սարմատ գաւառի մէջ. աւերակ վիճակի մէջ է: 1894 թուին յունիսի մէջ քրդերը ծպտեալ զինուորաց հեռ յարձակելով վանացս վրայ, յաջողեցան նախիրը միայն յափշտակել: Այնուհետև միարանութիւնը ցրուեցաւ և Սուքիաս Սրբազանի հրամանով, վանացս եկեղեցական գոյքը Հաֆիթլանի եկեղեցոյն պահ արուեցաւ: Այժմեան վիճակն ծանօթ չէ:

ԳԸՂԸՐ. Տես ՏԵՂԵՐ:

ԳԸՂՆԻԿ ԿԱՄ ԳՈՒՆԻԿ. — Գիւղ Կարնոյ. ունի 80 տուն բնակիչ, որոց 60ը հայ և մնացեալք մահմետական են: Արհեստաւ հողագործ են և սրմնագիր. ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը: Գիւղին մօտ 1880 թուին, Գոմգիլ Մամիկոնեան Յովհաննէս վարդապետը, գետնի տակ գաւառին աւերաց մատուց մը՝ 37 սոք երկայնութեամբ, 17 սոք լայնութեամբ. որմերը գրեթէ անփնաս մնացած: Ոմանք կը կարծեն թէ Լէնկիթմուրի երկրաշարժն և կամ գետնաշարժէ սեղւոյն բնակիչք մատրան մէջ ապաստանելով մնացեր են անոր փլատակաց տակ: Գիւղին երկսեռ գաղտոյր կառուցած է վերայիշեալ վարդապետը: Գրմիկի արեւելեան հիւսիսային կողմն երկու արաւաչափ հեռու կը գտնուի հին գերեզմանատունն, ուր գրաւ

նուած է մեր յիշուած մատուցն, և զանազան խաչարձաններ՝ հանդերձ արձանագրութեամբը:

ԳԺԱՐԱԲԱԿ. Տես ՏԱՃԱՐԱԲԱԿ:

ԳԺԱՐԱԳԷՄ. Տես ԱՐՋՆԻ:

ԳԺՆԿՈՒՏ. — Գիւղ և լեռնազաշա Հէքիմ խանէէն 1/2 ժամու ճանապարհ հեռու, Աղճատաղ լեռանց կից Քեաքըուկաղ լեռան վրայ: Գիւղի մէջ կայ մօտ 60 տուն հայ բնակիչ: Օղը շատ մաքուր է, լաւ ջուրեր, պարտէզներ և մշակեալ արտեր կան. աները պարզ խրճիթներ են:

ԳԻՎՈՅԻ ԿԱՄ ԹԻԹՈՅԻ ԽԱՐԱՊԱ. — Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասի մէջ: Ունի 30 տուն հայ (կաթուղիկէ) բնակիչներ:

ԳԻՋԱԹՈՒՓՈՅ. — Գիւղ Արարատականի Բարանուղ գաւառակի. ունի 25 տուն հայ:

ԳԻՋԱԿ ԿԱՄ ՊԱՋԿԱՆՔ. — Արցախի հին լեռնային գաւառներէն մին, որ այժմ ծանօթ է Ճիլարայիլ անուամբ: Սահմանքն են հարաւէն՝ Երասխ, արեւելքէն՝ Պիան, հիւսիսէն՝ Վարանդայ և արեւմուտքէն՝ Բերդաձոր գաւառի սահմանները: Գաւառի գլխաւոր սեղն է այժմ Ճիլարայիլ կամ Զարբայիլ աւանը:

ԳԻՋԱՓՈՒՅՑ ԿԱՄ ԳԻՋԱԿ. — Լեռնաշղթայ Արցախի Գիղակ գաւառի վերի ծայրը: Յայտնաւորաց մէջ հետեւեալը գրուած է լեռանս նկատմամբ. «Ուր ազնիւ Հանաց հիւսիսականաց նահատակեցին զբազումս ի գօրաց իւրեանց վասն ի Քրիստոս հաւատոցն, և զիղեալ զմարմինս նոցա իբրև զփայտ, այրեցին անդ. և վասն այնորիկ կոչեցաւ անուն լեռինն այնորիկ՝ Գիղափայտ»:

ԳԻՋԱՓՈՒՅՑԻ ԲԵՐԳԻ. — Կը գտնուի Արցախի Գիղակ գաւառի մէջ, որ կառուցուած է Գիղափայտ սարի մէկ բազկին վրայ, որ կախուած է Տումի զիւղի վրայ և առանձնացած ամէն կողմէ: Պարսպուած են սարի հարաւային և արեւելեան կողմերն և կասկածաւոր նեղուցներն ու կիրճերը: Պարսպի ներսը կան բնակութեանց բակեր, բերդիս անտառապատ մակերեւոյթը հարթ չէ: Ամբոցին մէջ ջուր կը բերեն եղեր արեւմտեան ստորտը եղած թաղալ անուն պատուական աղբիւրէն: Ամբոցին հիւսիսային կողմը բեր-



ծի գլուխը կայ աւերակ մատուռ մը՝ Օխտը-դռնե-խուր անուամբ։ Այս անգէն բաւական հեռու կը գտնուի Գիզափայտի հին վանքի անդը։ — Գիզափայտ սարի բարձրութիւնն է 8186 սոք. կատարի վրայ ի հնուան եղած է կատարոյ անուն նշանաւոր վանքը։ Այդ վանքի մէջ ապաստանարան գտած էին Սանեսան թագաւորի երեք որդիքը Մովսէս, Գանիէլ և Էղիա 3870 մարտի, որ հաւատացած էին Յիսուսի Քրիստոսի՝ քարոզութեամբ Ս. Գրիգորիսի։ Մասքթաց Սանեսան թագաւորը հոս գալով, կը նահատակէ թէ՛ իւր որդիքը և թէ՛ այն բուրբ հաւատացեալները՝ որք կատարոյ վանքը ապաստանած էին։

ԳԻՋԷ. — Գիւղ Խոյի. 8 տուն հայ կայ և եկեղեցի մը։

ԳԻՋԿԱՅ կամ ԳԻՋԿԻ. — Գիւղ Այրարատայ Բասեն (Վերին) գաւառի մէջ։

ԳԻԼԱՄԱՇԷՆ. — Վախուշտ կը յիշէ այս անուամբ գիւղ մը Գմանեաց երկրի մէջ։

ԳԻԼԱՆ ՕՂԼԻ. — Գիւղ Չարսանճագի Մեծ-կերտ գաւառակի. 10 տուն հայ կայ՝ առանց եկեղեցւոյ։

ԳԻԼԻՄԻԼԻ կամ ՏԵԼԻՄԷԼԻ. — Հայքանակ գիւղ Բալուի՝ 5 ժամու ճանապարհ հեռու, հիւսիսային կողմը։ Ունի 10 տուն բնակիչ, որոնց 5ը հայ են, և միւսներն՝ քուրդ։ Հայք ունին եկեղեցի, բայց գոյրոց չունին։

ԳԻԼԻՋԱՆ, ՏԵԼԻՋԱՆ կամ ՏԷԼԻՋԱՆ. — Արցախի Քուտաի գաւառի և Ղազախի ձորի ամենանշանաւոր ու մեծ գիւղն է, որ աւելի աւան կոչուելու արժանի է, և պատճառն՝ իւր հիանալի գիւղքն է. առտ կը միանան նամակատարաց կրկին մեծ ճանապարհները, որոց մէկը կը տանի յԵրեւան՝ Այրարատեան գաշան, և միւսը Բամբակի ձորով Ազերսանդրապոլ և կարս։ Հիմնուած է Էղջերուստարի (Մայմէխ) արեւմտահայեաց ընծի վրայ, Ազսաե գետակի աջակողմը։ Բնակիչք անդափոխուած են Սեւ-քար, Հաչա-Ղուր և Զրաբերդի գիւղերէն։ Գերազանց է օդն, կլիման և ջուրը։ Գիւղս ունի բաւական գեղեցիկ շէնքեր, բազմաթիւ խանութներ, թղթատարութեան և հեռագրութեան կայարան։ Գիլիջան իւր սքանչելի գիւղքովը, բարձրաբերձ անտառաց հովանայն ներքեւ

ամարանոց գարձած է շրջակայ քաղաքաց ազնուական գասուն։ Բնակիչք կը հաշուին 1048 հոգի, բաժնուած 133 տան. մեծամասնութիւն կը կազմեն Հայք՝ որոնց թիւը 1000ի կը հասնի և բաժնուած են 120 տան. միւսներն են սահալաթիւ Ռուսք և Թաթարք։ Հոս հաստատուած է նաև զօրանոց մը։ Ռուս Մալականք կը պարապին երկրագործութեամբ և կառագանութեամբ. իսկ Հայք՝ մեծ մասն երկրագործութեամբ, առեւտրով և արհեստիք։ Տեղական բերքերն են ցորեն, գարի, ոչխար, տաւար և գոմէշ։ Գիւղիս Հայոց եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածիկ, հնոցն սեղր կառուցուած է 1862 թուին. հասարակ քար ու կրով շինուած է կամարակապ. միայն սեղանը սրբատաշ է։ Գիլիջան երկու վերի և Կերքի թաղերու բաժնուած է։ Հայք այժմ շինած են նաև նոր եկեղեցի մը։ Ունին միգասեան երկուս ուսումնարան, գեղեցիկ է օրիսրդաց ուսումնարանի շէնք, ուր կ'ուսանին մօտ 30 օրիսրդներ։ — Գիլիջանի հանգիստահայեաց ընդարձակ տրեւմտեան ձորի մէջ կան ալիւրի գործարաններ և տախտակներ ձեւելու սղոցներ. ջրոյ գործութեամբ և բազմաթիւ մեքենաներով կ'ալան ցորենը և կը ձեւեն տախտակները։ — Ղազախի գաւառի մէջ այժմ կայ Գիլիջան անուամբ ուսարանակ նոր գիւղ մի ևս 76 տուն բնակչօք, յորս կան 2 տուն հայ։ — Գիլիջանի հովիտը հրաշալի է գեղեցիկութեամբն և կարելի է ըսել անմահն։ Մարտովցե ուս ճանապարհորդն՝ իւր Ոչեւորուարիւն յԱյրատ գրքին մէջ սքանչացած հալախ գեղեցիկութեամբն, էջէ մը աւելի նուիրած է անոր նկարագրին։ — Գիլիջանի ճանապարհի վերայ արեւելեան կողմն է Գիլի անուամբ աւերակ գիւղն, եկեղեցին և հանգստարանը։ Գիլիջանի մէջ կայ հին եկեղեցի մը աւերակ վիճակի մէջ, որոյ երկայնութիւնն է 14 մետր, լայնութիւնն 6, 80 մետր. կայ նաև հին ընդարձակ գերեզմանատուն։ Գիւղաքաղաքիս մօտ է Բախտիարի գիւղաանգիլն և հանգստարանը Ազսաեի աջակողմը։ Կիսաւեր եկեղեցի մ'ալ կը գտնուի Ազսաե գետի և Գիլիջան վտակի խոտնուրդի մօտ։

ԳԻ ԽԱՆ կամ ՕՋԱՆ ԽԱՆ. — Աւերակ




գիւղաանդի Ալլուանից, Քիլլար գիւղէն 1 ժամ հեռու, արեւելեան կողմը: Որոշ կը տեսնուին աներու տեղերը և հանդուարանները: Արձանագրութիւն ունեցող բարերը տարած են մահամտականները և հեազհեռէ կը տանին: Աւանդութեամբ կը պամեն թէ ()հան խանն Արցախեցի եղած է և հարիւր բնաանիք հեաք բերելով հաստատուած է այս տեղ և գիւղս կոչուեր է իւր անուամբ: Չի գիտցուիր թէ ինչ պատճառաւ ()հան խանին տուած են նաև Գի խան անունն:

բանդի մտ, հիւսիսային արեւմտեան կողմը: 1874 թուին հրատարակուած Տոմար Ընտանեկան գրքի համեմատ ունէր 809 բնաւ կիչ, յորոց 118 Հայք էին: Ռուսաց 1893 տարուայ վիճակագրութեան համեմատ գիւղս ունի 450 բնակիչ, բաժնուած 65 տան: Մեղ յայտնի չէ թէ այժմ ևս հայ բնակիչներ ունի:

ԳԻՆԱՐՁ. — Վախուշա կը յիշէ գիւղս Առոցք գաւառի մէջ:

ԳԻՆԷ. — Լեռ Սիւնեաց Գողթն և Երրնա



255. Դիլիջանի տեսարանը:

Գիւղին բնակիչը Թաղարի, Խաչնի, Ռ:բլար և ուրիշ գիւղերու բնակչաց հետ գաղթած են և հաստատուած Մոզտոքի կողմերը:

ԳԻՆԷՆԷ. — Գիւղ Ռ:բմիայ. ունի 25 տուն հայ և եկեղեցի մը:

ԳԻՆԷՔ կամ ՏԵԽԲ. — Հին գիւղ Սիւնեաց Միւս Բաղք գաւառի:

ԳԻՆԱՐԳՈՄ կամ ՏԻՆԱՐԳՈՄ. — Գիւղ կարնոյ: Ունի 50 տուն հայ և 40 տուն մահամտական բնակիչներ: Հայք ունին Ս. Միկեաւ անուամբ պարզ եկեղեցի մը և վարժարան: Ունին նաև գեանափոր եկեղեցի մը, որ այժմ անգործածելի է:

ԳԻՆԱՂԱՂԱՐ. — Գիւղ Տաղտանի, Գար-

ջակ գաւառաց մէջտեղ, բարձր է 8425 սար:

ԳԻՉՈՐ. — Վախուշան յիշուած գիւղ, Տալոյց կող գաւառի մէջ:

ԳԻՍԱՐ. Տես ԳԻՂՍԱՐ:

ԳԻՍՄԻՆԵՅ. — Փարբիկ բաղար Աւարիոյ (Կալիցիա), Ստանիսլաւն 1 ժամու ճանապարհ հեռու՝ արեւելեան կողմը: Ունի մտ 800 բնակիչ, մեծագոյն մասը Հրեայք են. կան նաև 30 տուն Հայք: Քաղաքիս Հայք գրեթէ երկու վար ու կէս առաջ 42 տուն եկած են Կամենիցէն և հոս բնակութիւն հաստատած: 1830ին տակաւին կային 50 տուն, բայց յետոյ երթմարտի նուազած են:



Այժմեան հայ բնակչաց շատերը հարուստ են. գծրաղգարար միայն մէկ քանին կրնան արտասանել հայերէն քանի մը բառ: Հայք կը սպարապին վաճառականութեամբ և մասնաւորաբար անասնոց վաճառական են: Հայք եկեղեցին ի սկզբան փայտակերտ եղած է, որ հրկեհէ մը այրելով, 1750 թուին շինուեցաւ փառաւորապէս, քարաշէն և վաշիւռչ. նուիրուած է Ս. Աստուածածնի, բայց աւագ խորանին հրաշապործ Ս. Գայէգանոսի պատկերին համար, նոյն սրբոյն անուամբ ևս կը կոչուի:

ԳԻՎԱ. Տես ՏԵԻԻ:

ԳԻՏԱՎԱՆՔԻ ԿԱՄ ԳԻՏՎԱՆՔ. — Լեւ Սիւնեաց Գեղարքունի գաւառի, Արդլա-սարի զիմաց, որոյ գագաթնան վրայ կան շիրիմներ և աւերակներ. գուցէ ի հնուին այդտեղ վանք եղած լինի:

ԳԻՏԱՆՈՐ, — Լեւ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, այս լեռնէն ժամանակաւ ջուր տարուած է Գնդեվանք. Չկեարած կոչուած գետոյն ահուհն ալ այս լեռնէն կը բղտն:

ԳԻՏԻ-ԿՈՆԳ. Տես ՕՇԱԿԱՆ:

ԳԻԲԲ. — Գիւղ Տիգրիսու նահանգի Կորիի գաւառի, Յիւնիվալէն դէպի հարաւ, 13 վերսահեաւորութեամբ: Ունի 250 տուն հայ և վրացի բնակիչներ: Հայք մօտ 450 հոգի են, բաժնուած 100 տան. ունին փոքրիկ եկեղեցի մը:

ԳԻԲԻ. Տես ԳՈՒՐԱՊԱՏ:

ԳԻԲԲԵՆ. Տես ԿՈՎԱՍԿԱՆ:

ԳԻԲԲԵՎԱՆՔԻ ԿԱՄ ՆԵՐՔԻՎԱՆՔԻ. — Մշոյ գիւղերէն մին, ուր բաւական տարածուած է բողոքականութիւնը:

ԳԻՅ ՄԱՅՐԻ. — Ըստ Յայմատարաց, կը թուի թէ այս անուամբ լեւ կար Այրարատայ Գարեղենից գաւառի մէջ, Վիշապաձորի մօտ. սուրբն վարոս «բնակեցաւ յանձաւս լեռանցն՝ որ կոչի Գից Մայրի»: Տես ԿՈՎԱՍԿԱՆ:

ԳԻԻԱԽՈՒ. — Լեռան մը անուն. գիրքն ու գաւառն անյայտ:

ԳԻԻԱԿՈՒ. — Այս անուամբ ժայռ մը կայ Խլաթի հիւսիսային կողմը:

ԳԻԻԱՁՈՐ. — Գիւղս կը յիշուի Տայոց աշխարհի մէջ:

ԳԻԻԱՏՈՒՆ. — Կը յիշուի Բջնիի (Այրա-

րատ) Ս. Աստուածածնի եկեղեցոյ արձանագրութեան մը մէջ:

ԳԻԻԱԽԱՆ. — Գիւղ Այրարատայ Բագրևանդ գաւառի մէջ, Մեծ Գօրմալուի արեւմտակողմը: Ունի 10 տուն բնակիչ և բազմաթիւ աւերակներ:

ԳԻԻԹԱԿԱՆ. Տես ԳՈՒՏԱԿԱՆ:

ԳԻԲՄԷՆ ՏԱՂ. — Կը գտնուի Այրարատայ Աշոցք գաւառի մէջ:

ԳԻԻԿԵՆ. — Ասողիկ (Գ. ԽԸ) կը յիշէ գիւղս Գուգարաց Զաւախք գաւառի մէջ, Սմբատ ԲԵ համար բնկելով, թէ «... գնաց տոնոս ի գաւառն Զաւախաց, բանակին ի գեօղն որ կոչի Գիլեկին»:

ԳԻԿԱԹ. Տես ՏԵԳՐԵՍ:

ԳՂԵԱԿ ԽՈՍՐՈՎՈՒ. — Կը յիշուի Վահան Գողթնեցոյ հօր անուամբ գղեակս՝ Սիւնեաց Գողթն գաւառի մէջ:

ԳՄՈՒՆՃ. — Գիւղ Շաղին Գարահիւսարի: 30 տուն հայ և 20 տուն մահաճական կայ: Հայք ունին եկեղեցի մը: Հողագործ ու հովիւ են:

ԳՄԱՆԵԱՅ ԵՐԿԻՐ. — Գուգարաց աշխարհի մէջ այս անուամբ երկիր մը կար, որուն գլխաւոր աեղն Գմանեաց քաղաք կը կոչուէր. այժմ այս քաղաքը ծանօթ է Գումանիս կամ Գմանիս անուամբ:

ԳՄԱՆԻՍ, ԳՄԱՆԻՔ ԿԱՄ ԳՈՒՄԱՆԻՍ ՄԵՆ. — Հին Գմանիս քաղաքի համապատասխանող գիւղ, Պոռչալու գաւառի մէջ, Տիգրիսի հարաւ արեւմտեան կողմը, մօտ 50 վերսահեաւորութեամբ: Ընդարձակ լեռնապաշտակի մը վրայ: Անման է զիրքը, օդը և ջուրը սպասուական. զարեւոր բարձրաբերձ անասններէ շրջապատեալ է: Կառուցուած է Մոշափար գետի եզերքը, որ վրացիներ կը նշանակէ գոտում գոչին բարձրացնող ջուր: Գիւղս կալուած է Օրբէլեան իշխաններու: Բնակիչք 264 հոգի, բաժնուած 39 տան. սրսնցմէ 216 հոգի վրախօս հայ են, բաժնուած 30 տան, և միւսներն՝ վրացի: Ունին քարաշէն և աղքատիկ Ս. Աստուածածին անուամբ և կեղեցի: Կը սպարապին գլխաւորաբար երկրագործութեամբ և անասնապահութեամբ. մերձակայ անտառաց մէջ կ'որսան վարազ, արջ, գայլ, աղուէս և այծեամն, որոնք երբեմն գիւղիս բնակարանաց ևս կը մօտենան:



Ձկնորսութիւն ալ կ'ընեն, ինչպէս նաև այգեգործութիւն և հովուութիւն: Գիւղիս անուներ վրացերէն կը նշանակէ « երկիր լի ամենայն բարութեամբ »: — Գիւղէս երեք վերսահեալ բարձր լեռան վրայ կառուցուած է ընդարձակ, հինաւուրց և ամուր բերդ մը, որուն մէջ բաց ի ուրիշ շինութիւններէ և բաղնիքներէ կան նաև երեք փառատոր և հոյակապ եկեղեցիներ՝ որոնցմէ միոյն վրայ արտաքին կողմէն կան վրացերէն արձանագրութիւններ. այդ եկեղեցւոյ և նրբանկար զեղարանդակ գաւթի մէջ կան շատ գերեզմաններ առանց արձանագրութեանց: Նշանաւոր է նաև եկեղեցիներու կից գանուոյ երկյարկեայ քարաշէն շտեմարանն, որուն ճակատը կայ մէկ սոյ վրացերէն արձանագրութիւն: Տասներորդ դարու մէջ Ասողկէն (Գ. 1) յիշուած քաղաքակառ զրեակն այս բերդն է, որուն տիրեց Գաւթի Անհոյ՝ իւր Սմբատ եղբոր հետ միասին. իսկ ԺԳ դարուն Գմանիսի տիրեց թաթարաց Չաղալա իշխանը: Բերդիս զիմաց լեռան լանջակողմի վրայ հարաւ արեւմտեան կողմը կան քանի մը մզկիթաձև փոքրիկ շինուածոց մնացորդներ:

ԳՄԱՆԻՍ ՓՈՒՔՐ. — Մեծ Գմանիսի հարաւային կողմը, ոչ այնչափ հեռու կը գտնուի փոքրիկ զիւղս 12 տուն բնակիչներով, մէկ տունը հայ է, իսկ միւսներն վրացի:

ԳՆՈՍ. — Գիւղ Տուրուբերանի Բզնունեայ գաւառի մէջ, իւրաքի՜ս արեւելեան հարաւային կողմը, Հարկընծան և Սոս գիւղերու մէջտեղ: Գիւղիս ներկայ վիճակը անծանօթ է: — Այս անուամբ զիւղ մ'ալ կը յիշէ Վախուշտ Գմանեայ մէջ:

ԳՈՂՊԱՆ. — Լեւ Սիւնեայ՝ Վայոց ձոր գաւառի, Ամաղուայ արեւմտեան կողմը. բարձր է 6385 անգլիական սուր:

ԳՐՂ. — Աւան Արցախի Գիղակ գաւառի մէջ. հիմնուած է համանուն բերդասարի արեւելահայեաց լանջի վրայ և ունի գեղեցիկ տեսարան: Պատուական են օդն, կլիման և ջուրը, իսկ երկիրը բերրի: Տեղական բերքերն են ցորեն, գարի, խաղող, գինի և բոժոժ: Բնակիչները 1460 հոգի են, բաժնուած 280 տան: Ունին Ս. Յովնանէս անուամբ հոյակապ եկեղեցի մը, կառուցուած չորս սիւներու վրայ. երկայնութիւնն է 21,70

մետր և լայնութիւն 12,92 մետր: Եկեղեցիս ունի նաև կաթուղիկէ, որուն նորոգութեան արձանագրութիւնն կայ գրան ճակատակալ քարի վրայ ՌՃՉԵ թուականաւ: Եկեղեցիս ունի քարեայ խաչկալ, որ և ունի յատուկ յիշատակարան ՌՃԼ թուականաւ: Եկեղեցւոյս մէջ կը պահուին հինոց սրբական մասունքներ, որոնցմէ ոմանք ունին յիշատակարաններ: Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հարաւային կողմը պատկից շինուած է նեղ և երկայն մատուռ մը, իբրև գամբարան աւանիս մեկերներու, հոս ամփոփուած են բոլոր մեկերները և անոնց սերունդը: Տապաններու վրայ փորագրուած են ստանաւոր և արձակ յիշատակարաններ, ՌՃԿԳ թուականէն սկսեալ մինչև ՌՄԼԸ թուականը: Մեկերներու մէջ նշանաւոր է Մեկեր-Եկանն, որուն յիշատակն է եկեղեցւոյ խաչկալը: Ասոր սպարանը կը գտնուի աւանիս մէջ, որ երկյարկ շինութիւն է և կառուցեալ է համակ սրբատաշ քարով. գեանայարկի գրան ճակատակալ քարի վրայ կայ ՌՃԺԶ թուականաւ արձանագրութիւն: Գող աւանս ունեցած է ամուր շրջապարիսպ, բայց այժմ այնպէս քանդած և քարերը տարած են, որ հազիւ տեղ տեղ կը նշմարուին շրջապարիսպի հետքերը: — Աւանիս հարաւային կողմի հանդստարանի մէջ կայ Ս. Խակոբանու Նախավկայ անուամբ մեծամեծ քարերով շինուած եկեղեցի մը: Եկեղեցիս հին է, համարեա վեց դար առաջ շինուած. գրան ճակատակալ քարի վրայ կայ Մեկեր-Եկանի նորոգութեան յիշատակարանը ՌՃՂԶ թուականաւ: Նոյն հանդստարանի վերևի ծայրը կայ ուրիշ քարուկիր եկեղեցի մը, կառուցեալ մէկ կամարի վրայ. ճակատակալ քարի վրայ կը կարդացուի միայն « Խաչս Վարդան »: Եկեղեցւոյ մէջ է Մեկեր Բախտամի գերեզմանը: Կը պատմեն թէ այս եկեղեցիս ժամանակաւ կուսական Սևապատ կոչուած մենաստան մը եղած է, եկեղեցւոյ շուրջը նշմարուող խուցերու և այլ աւերակաց մնացորդները նոյնը կը հաստատեն: — Արցախ, 73-78:

ԳՐՂ. — Հին զիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի, Վաղարշապատու հիւսիսային կողմը, Սամնդար և Ֆրանկանոց գիւ-



գերու մէջանդ: Ունի Ս. Ստեփանոս անուամբ եկեղեցի մը և 501 բնակիչ, բաժնուած 76 տան: Հայը 25 տուն են, իսկ մնացեալը այլազգի են: Իննբորորդ գարուն վերջերը գիւղիս մօտ բանակեցաւ Ափշին Հագարացին, երբ կը գիմէր Սմբատ Ա թագաւորի վրայ, յորմէ յազմուելով հաշտութիւն բրաւ:

**ԳՈՄԵԱ. ՏԵՍ ԹՈՄԵԱՆ:**

**ԳՈՆԵՎԱՆԻՔ.** — Գիւղ Տուրուբրանի Հարք գաւառի մէջ: Կը յիշուի Չիէ (= 1316) թուին գրուած աւետարանի մը յիշատակաբանին մէջ. «Արդ գրեցաւ ի գաւառիս Հարքայ, ի գեղս որ կոչի Գոնեվանք, ընդ հովանեաւ որբուհոյ Աստուածածնիս»:

**ԳՈՆԻ-ՇԷՆ.** — Գիւղ Արցախի Զրարերդ գաւառի. հիմնուած է Թարթաս գետի ձախ կողմը, Մասաղիս գիւղէն բաւական վեր: Բնակիչք տեղափոխուած են Մաղաւղուէն: Երկիրը լեռնային է, ունի գերազանց օդ և պատուական ջուր: Եկեղեցին Ս. Գեորգ՝ խիստ հին է և փոքր, շինուած անտաշ բարերով, 6 մետր երկայնութեամբ և 4 մետր լայնութեամբ, գրան ճակատակալ բարի վրայ կայ նորոգութեան արձանագրութիւն՝ աւանց թուականի: Գիւղս խիստ հին է ինչպէս նաև հանգստարանը. առ ժամանակ մի գրկուելով նախկին բնակիչներէն, յետոյ ունեցիք է աքիմեանները. որոնց թիւը 250ի կը հասնի, բաժնուած 35 տան: — Հին գիւղատեղոյ մը աւերակներ կը գտնուին Գոնի Շէնէն վեր, ուր օդն պատուական է և կայ առատ ջուր, անտառ և բնիւզի հինաուրց ծառեր: — Զոխտակ մատուռ՝ երկու բարուկիր մատուռներ են, գիւղէն վեր, շինուած Ուղար-կերանք կոչուած տեղը: Հոս ևս կայ գիւղի աւերակ, բարուկիր շինութեանց հետքեր և կազամախի ծառեր: — Արցախ, 231-232:

**ԳՈՍՏՈՒ.** — Գիւղ Արցախի Զաւէ (Գաւախ) գաւառի. շինուած է Գիւղ գիւղի աւրելեան կողմը, սարի մը հիւսիսահայեաց լանջի վրայ: Ունի 623 բնակիչ, բաժնուած 72 տան: Եկեղեցին՝ Ս. Գեորգ՝ ծածքն փայտաշէն է: Գիւղիս արևմտեան կողմը կայ Ամենափրկիչ կամ Բարձրեայ անուամբ բարուկիր, հին ու խարխուղ մատուռ մը:

**ԳՈՎԵՂ. կամ ԳՎԵՂ.** — Գիւղ Արցախի Զաւէ (Գաղախ) գաւառի. կառուցուած է

Գովեղայ Ս. Սարգիս վանքէն վար: Ունի 30 տուն բնակիչ, որոնք գաղթած են Բերգաղիւղէն: Եկեղեցին Ս. Սարգիս՝ նորաշէն է, փայտեայ ծածքով:

**ԳՈՎԵՂԱՅ կամ ԳՎԵՂԱՅ Ս. ՍԱՐԳԻՍ.** — Վանքս կը գտնուի Արցախի Զաւէ (Գաղախ) գաւառի մէջ, հիմնուած անտառապատ և խոր ձորի մը աջ լանջի հարթակի վրայ, որուն հիւսիսային կողմը վիսահերձ ապաստոժ է: Վանքս շինուած է ամբողջապէս սրբատաշ քարերով. ունի երկու փոքր և մի աւագ խորան. առանձին խորան մ'ալ հիւսիսային սրմի մէջ, գուսն մը հարաւային կողմէն, բանի մը լուսամուտ և զանգակատուն մը: Հին են աւագ և հիւսիսային երկու խորանները, իսկ մնացեալ բոլոր մասերը նորուցուած են: Եկեղեցոյ գրան ճակատը կայ շինութեան յիշատակարանը, որ կը ցուցնէ, թէ հիմնարկուած է 1845ին և աւարտած 1849ին, արիւք բարեպաշտից և վերակացութեամբ Տփիսիսեցի Եռայեան Նուրենց: Հարաւային կամարի վրայ կայ սարիչ՝ յատակի շինութեան յիշատակարան մը: — Վանքիս հիւսիսային կողմը Ս. Կիչրակե անուամբ մատուռ մը կայ, որուն հիւսիսային խոր ձորի մէջ ժայռէն կը բլլէ Օրնեւած աղբիչը անուամբ պատուական ջուր մը: Ս. Սարգիս վանքի մօտ շինուած են ուխտաւորաց մի բանի սենեակներ: Զատիկին է ուխտի օրն, ուր կը գիմեն մեծ բազմութեամբ: — Արցախ, 382-383:

**ԳՈՐՊԱՏ. ԳՂ. DORPAT.** — Քաղաք Ռուսիոյ, գեղեցկազարդ գաշտի մը մէջ. նշանաւոր է փոզոցաց մաքրութեամբ և զբօսավայրերով: Անուանի է քաղաքիս գերմանական համալսարանը, զոր հիմնեց Կուստաւոս Աստրիս 1632ին և կրկին կարգաւորուեցաւ 1802ին: Ունի մասնենադարան, պարտէզ բուսարանութեան, գիտանոց, և այլն: Այս համալսարանին ուսուցիչ եղած են Ալիխ և Պարրոտ, որոնք Մասիս լեռը ելան, մին 1829ին և միւսն 1845ին: Այս համալսարանի մէջ կ'ուսանին նաև Հայք: Սահակ Ասկարեան Երեսնցի Հայ ուսանողն 1858ին մեներ է քաղաքիս մէջ, որուն գերեզմանը՝ հանդերձ խաչարձանաւ կը գտնուի գերմանական գեղեցիկ գերեզմանատան հարաւային



ւային կողմը: Քաղաքիս բնակչաց թիւն է 30000:

ԳՈՎՈՐԷՔ. — Չորրորդ Հայոց գաւառներէն մին, որ Ակւլայ արեւելեան հիւսիսային կողմը Գիրիքի կամ Տերիքի երկիր բուսածին կը համարատարտուանէ:

ԳՈՒ. — Հին պատմական գիւղ Այրարատայ Բասնն գաւառի մէջ, Հասանգալէի աւելմտեան կողմը և Կարնոյ լեռանց թիւշ տաղի կոչուածի արեւելեան ստորտար: Այլ-ազգէք թիւշ կ'անուանեն գիւղս և լեռն ալ նոյն անուամբ կը կոչեն: Գիւղիս մօտ է հին Որդորո: գիւղը: Այս երկու հին գիւղերն այժմ ծանօթ են Մեծ և Փոքր Գուանուամբ: Գու գիւղի վերաբերեալ պատմական տեղեկութիւններ կը գնենք Որդորո: գիւղի նկարագրի մէջ:

ԳՈՒԱՐԻ ՇԷՆ. Տես ՏՈՒԱՐԻ ՇԷՆ:

ԳՈՒՈՒՆ, ԳՎՈՒՆ կամ ԳՈՒՆ. Գղ. DOUIN. Ռ. ДУИНЬ. — Հին հնչակաւոր քաղաք Այրարատայ Ոստան գաւառի մէջ, գրեթէ Արտաշատի փառաց հաւասար, որուն արեւելեան հիւսիսային կողմը կը գտնուին քաղաքիս ծանօթ աւերակները: Գուին այժմ բաժնուած է կրկին գիւղերու, ստորինը կամ Արտաշատի մօտ եղողը կը կոչուի Հայ-Գուիւ, իսկ վերինը և Ազատ գետոյն մերձագոյնը՝ Ասորի-Գուիւ: Ըստ մեզ ծանօթ պատմութեան, քաղաքս շինած է չորրորդ դարու մէջ, Մեծին Տրդատայ որդի Խոսրովէն, որ «և զարքունիսն փոխ վերոյ անառտին յոսամի, ապարանս հովանաւորս շինեալ, ըստ պարսկական լեզուին Գուիւ կոչի, որ թարգմանի բլուր»: Երասխ գետը Արտաշատէն հեռանալով, քաղաքը չզովացնելէ դատ, գետոյն հին հունն ճախճախուտ ձեւանալով կ'ապականէր քաղաքին օգն, ուստի Խոսրովի սկզբան Գունայ տեղը կառուցանել տուաւ իրեն համար ապարանք: Գունայ շէնաւուն և պայծառանալուն սկիզբն կը լինի Ե գարու վերջերը, երբ բոլորովին սկսաւ Արտաշատ նուազել բնակիչներէ և ամայանալ: Այնուհետև Գուին կոչուեցաւ Ոստան և Բուն Ոստան Հայոց: Սակայ կը յիշուի քաղաքս վաճան Մամիկոնեանի ժամանակ, իրբև միակ և բուն ոստան Հայոց, ուր կը գիւմէին յաղթանակաւ հայ զօրքերը: վաճա-

նայ երկրորդ դարձն ի Պարսից շատ պանծալի եղած է, որ յետ երկար պատերազմաց, քաջութեանց և յաղթանակներու, Սասանեաց վաղարշ թագաւորի հաճութեամբ, իրբև սպարապետ Հայոց մտաւ քաղաքս: Գարձեալ մեծ հանդէս կատարեցին քաղաքիս մէջ, երբ վաճան մարզպանութեան արքունի հրովարտակ ընդունեցաւ, և կը «խնդրէր վաղվազակի անդրուլար՝ երթալ ի տուն Աստուծոյ և լուեալ զայս մարդկանն որ ի քաղաքին՝ գրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ՝ նախարարաց և ազատաց, ոստանեաց և սամկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց... զիմեալ ընթանային յեկեղեցին, և ոչ բաւեալ ընդունել զամենեանն՝ տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահը եկեղեցոյն և փողոցը և ամենայն տեղէք հրապարակացն շուրջանակի, և էր այն օր անյագ խնդութիւն և անսպասու ռախտութիւն ասուածասէր բարեսիրացն և ողջատրհուրդ մտաց լաւահայեցաց, և սուղ թանխանձալից և արամութիւն անմխիթար՝ խօթամտացն և խարդախաց: Եւ որոյց կաթողիկոսին Հայոց Յովհաննու (Մանգակունւոյ)... բերկրեալ ցնծալից սրախ՝ տայր սաղմուսել ի ժամուն. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, և զՏէր յաղբերացն Խորայիլի, և տուեալ զխաղաղութեան ողջոյնն», գահութիւն կը մատուցանէր Աստուծոյ և յարգութեան խօսքեր կ'ուղղէր առ իւր հօտը, որոնցմով ճարտար պատմիչն Գաղար՝ կը կնքէ իւր պատմութիւնը:

Հինգերորդ դարու մէջ Գուին պարսպապատ եղաւ և զարձաւ կաթողիկոսանիստ, ինչպէս կը յայտնուի թոթմայի Արժրուոյ հետեւեալ տողերէն. «Քանդեն աւերեն զմեհեանն (որմըզական, որուն մէջ կը վառէին հուր) և յատակեալ զտեղին, շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զՊոքր Գրիգորի ի Բլուր (= Գուին) տեղուջն, և փոխեն անդ զկաթողիկոսն Հայոց զԳիւա. և շինեն նախարարք Հայոց իւրաքանչիւր պալատս արքունականս և գաստակերտս ականաւորս, և զքաղաքն (Գուին) սրմափակօք պարսպեն»: Կաթողիկոսական աթոռոյն վաղարշապատէն Գուին փոխադրութիւնը կը յիշեն նաև միւս պատմիչները, ինչպէս նաև Յովհաննէս



կաթողիկոս՝ որ Մեծին Վարդանայ կու տայ եկեղեցւոյ շինութիւնն, և կաթողիկոսական ամսոոյն փոխադրութիւնը: Այս Վարդանաշէն եկեղեցիս ինչպէս նաև ուրիշներ՝ Պարսիկներէն քակուելով, վերստին նորոգուեցան Վահանէն, ինչպէս կը վկայէ Սեբիոս պատմիչ. «Շինեաց (Վահան) զեկեղեցիս մեծամեծս՝ զորս աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաք և ի Գուին և ի Մգրայս և ի բազում տեղիս աշխարհիս Հայոց»: Այս նորոգութենէն վերջ, զարձեալ Զ պարու մէջ Վարդանայ կ'ընծայուի փայտաշէն և աղիւսակերտ եկեղեցւոյ շինութիւնն. նոյն ժամանակ Վարդանէն և Վահանէն վերջ առաջին քաջն Հայոց Սմբատ Վրկան մարզպան՝ քաղաքիս մէջ «արկանէ հիմն եկեղեցւոյն սրբոյ՝ կոսածոյ քարամբ, զեղեցկադիր շինուածով, կրով ձուլեալ ի մի»:

Գունայ մէջ կը նստէին պարսիկ մարզպաններ, որոնցմէ ոմանք լաւ կը ինամէին ազգն և ոմանք ալ կը նեղէին: Վեցերորդ պարու մէջ 553 թուին պարսիկ ոմն Յիզիտրազիս՝ կը նահատակուի հոս, քրիստոսական կրօնից համար, և Հայոց Ներսէս հայրապետն մեծ հանդիսով կը թողէ անոր մարմինը կաթողիկոսարանի եկեղեցւոյ արեւելեան կողմը, վրան կոսածոյ քարերով վրկայարան շինելով: Նոյն Ներսէս Բ կաթողիկոսը 553ին կամ յաջորդ տարին, քաղաքիս մէջ մեծ ժողով գումարեց բազմաթիւ եպիսկոպոսներով որոնցմէ քսանը յանուանէ կը յիշուին, և քառասնի չափ իշխաններով: Բարզէն կաթողիկոսն ալ սոս ժողով գումարած է. յետոյ գումարուած են նաև ուրիշ եկեղեցական ժողովներ, որոնք ի պատմութեան կը յիշուին Գունայ անուամբ: Ամենէն աւելի հռչակաւոր է Ներսէս Բ ժողովն, որ ոչ միայն եկեղեցական այլ և քաղաքական և ոսումնական անակէտով նշանաւոր է. այս ժողովոյն մէջ եղած է նորոգութիւն տաճարին և հաստատութիւն Հայոց թուականին, սկսած Քրիստոսի 552 թուականի յուլիս 11էն: — Նոր թուականին քսաներորդ տարին, այսինքն է 572ի փետրուար 3ին, Մամիկոնէից Վարդան իշխանը՝ Վասակայ որդին՝ պայազատն Մեծին Վարդանայ և Վահանայ, այլ

ևս չհանդուրժելով Պարսից մարզպանաց զգուելի գործոց, բոլոր Հայոց հետ միաբանած Պարսից գէմ ապստամբեցաւ, և հարստակութիւնն ձգեց, Սուրէն մարզպանը քաղաքիս մէջ սպաննելով, շատ աւարով գնաց Յունաց կողմը անցաւ և սկսաւ աշունց հպատակիլ: Յայնրը կայսերական զօրքով զիմեցին Գուին քաղաքի վրայ և պաշարելով զայն կործանեցին և մէջը գտնուող Պարսից զօրքերը հալածեցին: Այս և յաջորդող ուրիշ պատերազմաց մէջ լծէ շատ բաջութիւն ցոյց տուին Հայք, բայց միևնոյն ժամանակ շատ ազիտից, խռովութեան և բաժանմանց պատճառ եղան, վասն զի երկրին և ազգին բաժանումն Պարսից և Յունաց հետ, շատ բնդարձակեցաւ: Վարդանայ հետ Կ. Պոլիս գնաց նաև Մովսէս կաթողիկոսը և աւանձին առաջնորդ եղաւ Յունաց բաժնի Հայոց, ամօտը հաստատելով մերթ Աւան գիւղը և մերթ կարնոյ քաղաքը, որ փոխադրեցին նաև Գունայ Ս. Գրիգորի եկեղեցւոյ սպասները: Պարսից բաժնի Հայոց վրայ ալ գրուեցան անդապահներ, Վրդանէս և ուրիշներ, և այսպիսի բաժանեալ վիճակի մէջ մնացին աշխարհն ու ազգը երեսուն տարիէն աւելի: Այլ միջոցին շատ արեւհեղութիւններ եղան Հայաստանի մէջ, երկու աշխարհակալ ազգաց պատերազմաց պատճառաւ, և Գուին մերթ միոյն և մերթ միւսոյն պատուանդան կամ գահ կը լինէր: Գունայ Վարդանէն շինուած եկեղեցին վերոյիշեալ պատերազմաց միջոց այրելով, ինչպէս արդէն յիշեցինք, 606 թուին Սրբբառ Բագմալաղիք՝ Պարսից թագաւորի հրամանաւ փասուարապէս շինեց, և եկեղեցւոյ շինութեան հետ հոգաց նաև ազգին միութիւնը, ժողով գումարելով երկու կողմանց եպիսկոպոսներով, և երկար տարիներ ամսոոյն պարապութենէ վերջ կաթողիկոս զրին Ալբրանամ՝ Գունայ մէջ: Պարսից թագաւորն ալ երախտեաց համար Հայաստանի մեծ մասը Մօրիկ կայսեր տուած ժամանակ, միայն Գուինը իրեն պահեց՝ մերձաւոր քանի մը գաւառներով: Քսան տարի վերջ նոյն թագաւորը Սմբատայ որդին Վարդապիտոյը իրրև մարզպան քաղաքս զրկեց, «զի զաշխարհն ի շինութեան պահեցէ, և իրրև եկն



նա ի Հայս՝ խնդութեամբ ընկալաւ զնա ամենայն աշխարհն Հայաստանեայց»։ Բայց ոմանք ասոր վրայ նախանձեւով, զրգուցին Ասորպատականի կողմնակալը, որ իւր եզրայրը զրկեց Գուին, ձեռքը հոն ընակելու և գաւելու զմարդպանը, իսկ վարազտիրոց սիրելի ըլլալով Պարսից՝ անոնցմէ խնցատ գաւր, և փախաւ անցաւ Յունաց բաժինը։ Քիչ տարիներ ատաջ (622-3), Հերակլ կայսրը իւր ի Պարսս բրած մեծ արշաւանաց միջոց՝ Գուինը ևս աւերեց։

Բաւական տարիներ վերջը, 640ին, յանկարծ Արարաց գունդ մը Ասորեստանէն գալով, « թափեցան յԱլլարաա, և ոչ ոք կարաց ի զօրացն Հայոց արկանել զոյժ ի Գուին, բայց արք երեք յիշխանացն որք ժողովեալ զզօրն ճապաղական, Թեոդորոս վանեւուելի և Խաչեան Աւանդեան և Շարպան Ամատուելի, որք գնացեալ փախտական ի Գուին և հասեալ ի կամուրջն Մեծամօրի՝ ի բաց աւերեցին, և ինքեանք անցեալ զոյժ արկանել ի յաւանին, և ի բերդն ժողովեցին զամենայն մարդիկ, որք եկեալ էին ի կուրծս այգեստանի։ Եւ հասեալ թշնամոյն անցեալ ընդ կամուրջն Մեծամօրի՝ հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ՝ եկեալ բանակեցան ի յեզր մալբուոյն Խոսրովակերտի, և եղև յաւուրն հինգերորդի (6 հոկտ.) զիմեցին ի վերայ քաղաքին. մասնեցաւ քաղաքն ի ձեռս նոցա բանդի արկին մուխ շուրջանակի, մերժեցին միտիւն և նետաձգութեամբ զգահապանս պարսպին, և կանգնեալ սանդուխտ ի պարիսպն և անկեալ ի ներքս՝ բացին զլուսն քաղաքին, և զիմեալ ի ներքս զօրք թշնամեայն՝ սասակեցին որով զբազմութիւն քաղաքին, և առեալ զաւար և զկապուտ բանակին՝ ելին և բանակեցան ի նմին բանակեացն, որ (օր) քրան էր արև ամսոյն յաւուրն ուրբաթի, և զազարեալ աւուրս ինչ ելին և գնացին ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալ էին, և խաղաղացին զբազմութիւն գերոյն երեսուն և հինգ հազար հոգի»։ Այս ազիտալի գեպըն վեց կամ եօթ տարի վերջ զարձեալ յարձակեցան Արարացիք և Գուին մանելով բաւական կտորբած ըրին, բայց մեր պատմիչները այս կրկին գեպրերը

կը շփոթեն, և կը կարծուի թէ երկրորդ յարձակման միջոց Կերուէս Գ Շինոզ կաթողիկոսը (« Հաւաքեալ զբազմութիւն զիսկանցն՝ թաղէր, և ի նմին աեգուջ շինէր զհրդեհեալ վիշապարսն Սրբոյն Սարգսի »)։

Երբ Հայք կամայ և ակամայ նուաճուեցան Արարացիներէն, Կոստանդին կայսրը փաթաց Հայաստանը անոնց ձեռքն անուլ, կարնէն անցնելով (651-3 թուին), « Գնայ յԱլլարաա քրան հազարաւ, և երթեալ ի Գուին նստաւ ի սան կաթողիկոսին »։ Քաղաքէս մեկնելով աշխարհին զօրավար և պահապան թողոց Մաւրիանոս անուամբ մէկը, որ առնելով Արարացոց նորէն գալը, Գունայ բերդը աւերեց և գնաց Կաթուսան, և հոն ալ Արարացիներէն յաղթուելով վրաստան փախաւ։ Հայերը անգամ մը ևս փորձելով ապստամբիլ Արարացիներէն (656-7 թուին), և չկարենալով զիմանալ, նուաճուեցան անոնց իշխանութեան ներքոյ, մանաւանդ կըր Արարաց ամիրապետը իրենց իշխան կարգեց Գրիգոր Մամիկոնեանը (661-2)։ Վերջոյս մահէն վերջ, թէպէտ զարձեալ խլրանցան, զարկին և զարնուեցան, բայց էր զարու վերջերը բոլորովն նուաճուեցան, և Ռատիկան անուամբ Արարացի կուսակալներ զրուեցան Հայոց, զրեթէ երկուք ու կէս գար։ Արարացիներէն ինչպէս նաև ի թուրքաց քաղաքս կոչուեցաւ Տուխն ܩܘܨܘܢ, կամ Տեպի ܩܘܨܘܢ։ Կայն ժամանակները զբամիւն և շինուած են Գունայ մէջ Ամիրապետաց անուամբ, ինչպէս Ա Վլիթի 712 թուին, և ուրիշներու՝ 735 տարիէն ատաջ։ Կախ սատիկան եղած է Մրուան, յետոյ Արդլլա խոյն Հայիւմ, որ եկաւ 693 թուին, և բոս ժամանակակից գրչի մը, էր « գան և չարաբարոյ, որ միշտ հեղմամբ արեամբ անմեղաց զուարճանայր յազգմանէ չարին. յայնմ ժամանակի ըմբոնեալ լինէր երանելին Գուիր »։ Սա է յատկապէս Գուեկցի կոչուածն, որ ազգաւ արար էր և Հայաստանի մէջ ընդունած քրիստոնէութիւնը, և նոյն սուրբ կրօնից համար վիպեցաւ քաղաքիս մէջ, և մարմինը մեծ պատուով, Սարգսակ՝ Ամատուեանց եպիսկոպոսը բազմութիւն քահանայիւք, Մուշեղ Մամիկոնեան Հայոց սպարապետը՝ եզրայրը Այ-



տառապոյ, և ուրիշ իշխաններ ու բազմաթիւ ժողովուրդը, կը տանին նախ Ս. Գրիգոր եկեղեցին և յետոյ կը գնեն Ս. Յիզկարուզտի վիայարանի մէջ: Սրբոյն նահատակութիւնը եղաւ 695 տարուոյ յունուար 24ին. որուն յիշատակը ամէն տարի կը տօնէ մեր եկեղեցին: Արխնահեղ Արղլըւայէն վերջ, ստաիկան եղաւ անոր Արղրազիկ եղբայրը, որ թէև ականջօք խաւ էր, բայց շատ խորագէտ և իմաստուն: Գեանոյ պատմէի աւանդածի համեմատ. «Շինէր (Արղլազիկ) վերստին գրաղաքն Գուին, հզօրագոյն և ընդարձականիստ մեծութեամբ քան զտաւջինն, և ամրացուցանէր զբամբը և զանափակօք. անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից, լցեալ ջուր, ապաստան ամրացին»: Յաջորդները իրեն նման չեղան, այլ շատ կամ քիչ կը նեղէին զՀայոց, մանաւանդ Հասակ խոյն Կանդարի ժամանակ, որ գրեթէ 769ին տանները եկաւ խորասանիկ գնդաւ և հայ աշխարհի աղէաքը և հեծութիւնները բազմացուց, մինչև նախարարները խորհուրդ ըրին ապստամբիլ. «և սկիզբն բանիցս այսոցիկ լինէր ի ձեռն Արտաշատոյ որ ի տանէն Մամիկոնից, որոյ երթեալ ի մայրաքաղաքն Գովին՝ կազմութիւն մեծ տանէր զօրաց իւրոց, և ստանայր անոյ զէնս և անօթս պատերազմի, և վասէր զինքն զրահիւք և սաղաւարտիւք և ամենայն սպառազինութեամբ»: Երոյն խառնաշփոթ խռովութեան միջոց, երբ հայ քաջ նախարարներէն ամանք Արարացիներուն տեղ տեղ կը յաղթէին (770-1), «լուր աղետի հասանէր ի քաղաքն Գուին առ զօրավարն Խամայէի Մահմէտ, յամենայն կողմանց տափնայ մեծ յտնէր ի վերայ նորա. և զումարեալ զզօրս քաղաքին Գվնայ», կը զրկէր Աբու Եֆիպ անուն ոմն՝ շորս հաղար զօրքով ապրատամբաց վրայ, որ թագաւանի մէջ Հայոց հետ զարնուելով յաղթուեցաւ և սպանուեցաւ, իսկ իւր զօրքերէն ազատողները «փախտեալք անկան ի քաղաքն Գովին, սակաք ի բազմաց. ապա ընդ առաջ լինէին նոցա համազօրքն արք և կանայք, վայսք և ճօք, հոգ ի զլուս լինելով զճակատ հարկանէին և զօճիս պատառէին, և ողբով և աշխարհնօք ընտր ամենայն փո-

զոցը լայնանիստ քաղաքին. և ահ մեծ անկանէր ի վերայ ստոակինոս գնդին, և ոչ լինէր նոցա համարձակ ելանել ի քաղաքէն, այլ անձնապահ լինէին յամրութեան քաղաքին», մինչև որ ամիրապետը իրենց օգնութեան զրկեց երեսուն հազար խորասանիկ զօրք, և վերջապէս նուանեց զՀայոց: Տառ տարի վերջը ստաիկան եկաւ խաղիմայ կամ «խազմ ոմն, որ արպարեւ ըստ անուանն իսկ խազմարար և զժոխաձեւ. որ իրեկ եհաս ի քաղաքն Գովին՝ ընդ առաջ եղին նմա ամենայն նախարարք Հայոց. ընդ առաջ լինէին նմա և իշխանք տանն Արժրունեաց՝ Համազասպ և Սանակ և Մեհրուժան», և որովհետեւ վերջինքս կանխաւ Արարացուց հետ կուռելով յաղթմը էին, անմիջապէս բանաարկուեցան: Մեհրուժանը կրօնքը ուրացաւ, իսկ Սահակ և Համազասպ իշխանները նահատակուեցան Յայաստանի տօնին օրը:— Խազմին յաջորդեց վասթարազոյն ոմն Խոյն-Գոյկ, «որ եկեալ ի քաղաքն Գուին՝ ստոսիկ զժնդակութեամբ խոշտանգէր զընակիչս հարկապահանջութեամբ. առ որ ժողովեալ ամենայն նախարարք և սամիկք, հանդերձ եկեղեցականօք և կաթողիկոսին որոյ անուն էր Եսայիսա, ազաչէին թիթեացուցանել զանուր ծանրութեան սակին՝ զոր պահանջէր, և ոչինչ օգտէին». մանաւանդ որ կ'սկսէր զեռ աւելի նեղել, և շատերը անանկացած կը թողուին ու կը հեռանային իրենց հայրենի աշխարհէն: Երոյն ժամանակ Գուենայ կաթողիկէ եկեղեցոյն ընտիր գանձերը և սպասները եւ այս անյազ ստաիկանէն կողոպտուեցան: Աւթերոյզ պարուն վերջերը, ժամանակին անօրէն ստաիկանը սկսաւ նախանձիլ կաթողիկոսարանին զատտակիրտաց վրայ, որոնք կը գանուէին Արտաշատի, Կաւակերտի և Հոռոմոց-Մարզի մէջ, և Յովսէփ կաթողիկոսը բանաարկելով զանոնք յախշտակեց, որոնցմէ երկուքը շատ աշխատութեամբ հայրապետը ետ առաւ, բայց Արտաշատինը ձեռքէն բոլորովին ելաւ:— Տարիներ վերջը (818-9) Հօլոյ ստաիկանութեան ժամանակ, Սեւադա Զահապեան «ի կայսիկ տահմէ որ առեալ էր իւր կին զԱրուսեակ ի Բագրատունի տանէ, և ի ձեռն այնորիկ զմեծ մասն երկրիս բըռ-



նախաբանալ սեփհականարար իմն տրերը», միարանցուց իրեն հետ Սմբատ Հայոց սպարապետը և Սանակ Սիւնեաց աէրը, պատերազմեցաւ Հօլայ հետ Կաւակերտի մէջ, Հրազդան գետոյն մօտ և յաղթուելով փախաւ: Իսկ Սիւնեաց աէրը սպանուեցաւ, սրուն մարմինը «բարձեալ տանէր մեծ հայրապետն Գաւիթ ի հայրապետանոցն սուրբ և անդ գնէր ի քնարանի մօտ ի սուրբ քաւարանն»: Իններորդ գարու կիսուն (852) հասաւ մեր երկրի վաթթարագոյն պատուհասներէն և բռնակալներէն մին՝ Բազու, որ խարէսթեամբ և բնութեամբ բռնելով և սպաննելով Հայոց նախարարները, ձմեռը մտաւ Գաւին, հետը սնննալով բազմաթիւ կապեալներ և գերիներ, «սրոց ոչ գոյր թիւ» կ'ըսէ պատմիչը: Այս միջոցին հայ ազնուականներէն շատերը շարանալով քրիտանկական սուրբ կրօնը, անօրէնի հրամանով նահատակուեցան, ասոնցմէ յիշենք հետեւեալները. Աստմ Անձեացի, Մրեան Վարաժնեանի, Գեորգ Դոքիացի և Վասակ: Թողմա Արծրունին կը նկարագրէ, թէ ինչպէս Բուզա, կըր ձմեռն սկսաւ մեղմանալ «... և հարաւային ջերմագոյն օդն շնչեաց ի խորագոյն գաշան Գունայ. . . (սկսաւ Բուզա) սանատրօփ լինել, փոնգայր իրրե զձի խրտերախ, մերթ սապալէր իրրե զօձ, մերթ գոչէր իրրե զառիւծ և իրրե զխոզ վայրենի կնչէր կոնչէր, փրփուր ի վեր բերելով, գատամունս կրճտելով... հրաման տայր փութով ամենեցուն պատրաստական գտանել ի գաշան քաղաքին. . . և գումարեալ այնուհետև գանհուն բազմութիւն զօրացն՝ բարձրագոյն քան գտաղիւնն, և ել խաղաց հասանել ի վերայ արեւելից աշխարհին»: — Բուզայի մեկնելէ վերջ, Հայոց սպարապետ եղաւ Աշոտ՝ Սմբատ խոստովանողի սրղին, սրուն քանի մը տարի վերջը արուեցաւ Իշխանաց իշխան Հայոց կոչուելու պատիւը. այլ պատճառաւ սատիկանները չէին կրնար համարձակ նեղել, այլ աւելի գաւերով. իսկ Աշոտ խոհականութեամբն և քաջութեամբ կը պաշտպանէր իւր անձը, քաղաքը և աշխարհը: Անձատ սատիկանի Գաւին եկած միջոց, «եկն (Աշոտ) առ նա մեծաշուք պատուարութեամբ, և պարզեւս և պատիւս ոչ

ստիպաւ նմա յառաջաբերեաց. այլ նա ի նոյն միտս շարախօրհրդութեան յամասեալ պնդեալ կայր... բայց իշխանաց իշխանն Աշոտ անհանգուրծելի մնալով խորհրդոց շարին ի գլուխ ելանել», իրեն Աթաւ սպարապետ եղբայրը, գաղա զինուած զօրքերով սատիկանին զրկեց և անոր տաւաւ այն մասնութեան թուղթը՝ զոր գրած էր ուրիշ զօրավարի մը՝ Հայերը գաւելու համար, ու անարգութեամբ զինքը հեծցնելով «ի ջորաջն զոր պատրաստեալ սնէին անդէն առ գրանն վրանին. և հանին արտաքոյ դաշիկ բանակին պարճուցեալ՝ գաննալ ընդ նոյն ուստի եկն», Թովմ, Արծրունի:

Այսքան շփոթութեանց և սճիրներու միջոց, Գաւին ավժու լինելով անօրէն սատիկաններուն, կը մնար տակաւին շէն. բայց Բուզայի հարուածներէն վերջ և Ահմատի զէպրէն առաջ՝ 862 թուին ձմեռը, «ահագին իմն շարժմանց եզելոց ի Գլին քաղաքի՝ բազում սասանութիւնս և փլուզմունս տանց և պարսպաց և ապարանից լինէր, և առ հասարակ քանդումն և զղլուումն աննոյր քաղաքն. այլ և մահ յուղից մարդկան ի վերայ հասանէր. և այնպէս ահագին իմն լինէր վտանգ տաղնաղին՝ մինչև ոչ սը մնալ ընդ յարկաւ, այլ ի հրապարակս և ի փողոցս ելեալ հառաչէին. իսկ ցրտաշունչ սասանմանիք ձմերայնոյն առաւել բերէր զլրումն հեծութեանն, զի յուղբ մնեալք և ծայրատեալք լինէին»: Յովհ. Կարոյիկոս: Աւելի ստատիկ և շատ փլասաբեր եղաւ Գունայ երկրորդ ժաճն ու կործանումը, երեսուն տարի վերջ (893), զոր կը յիշեն ժամանակակից պատմիչներէն երկու երեք հօդի, սրանցմէ մին (Թովմաս), ժաճին պատճառն ալ իրեն գիտութեան համեմատ կը յայտնէ բռնելով. «Բարկութեան հոգմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց ի կոխակս անդողաքակս, զթանձրայասակ երկրի զկարծր և ծանրալիր անկշիւ անբաւութիւնն սատանեալ, մինչև յերես երկրի ի վեր մղեալ, հանդէպ քաղաքին Արտաշատու սր Բլուրն ստի. յսրում Շահաստանէ Գաւին մարգաթիտ, պարսպպատա պատնիշօք պատուարեալ, և տարեւաթիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրա-



րեալ յգլխացեալ. զնա ի հիմանց սապա-  
 լեալ, բերանարաց զժոխարար լայնեալ զբե-  
 րան խոր, յորունց քան թէ սակաւուց ա-  
 րար վիճել յանդունդս. որոց ոմանց և աունք  
 նոցա զերեզմանք նոցին եղեն... նաև սե-  
 ղիք սրբութեանց աունք ազօթիցն՝ զշարժ-  
 մանն կիրս կրեալ՝ պատասմամբ որմաշարժ  
 լինելով... և ասի լինել թիւ մարդկանն ա-  
 պականելոցն ի շարժմանէն՝ սլիս առաել  
 քան ևօթմանսուն հաղարս... Անդ հանգի-  
 պեալ լինէր և երանելի եղիտիւստան Գրի-  
 գոր Աշտուհեաց... ոչ կարաց խորայնովքն  
 զերծանել... և նորայքն ոմանք ի նմին  
 շարժմանէ զերեզմանացան ի նմին: Բայց  
 երանելի հայրապետն Տէր Գեորգ... թողեալ  
 զբնակելն ի Գուին՝ ելեալ բնակեցաւ ի Նոր-  
 քաղաքն»: Աւելի կսկիծով կը նկարագրէ  
 Յովհաննէս կաթողիկոս, որ թերեւս զէպրին  
 սկանառես ևս եղած լինի, որ և Մաշաու-  
 ցի զեղեցիարանն և սրատուշ ու միթմարա-  
 կան սրբո՛ր՝ առ մահատանէ զերծողս, ի մէջ կը  
 բերէ: — Այսպիսի մեծ երկրաշարժէ մը հար-  
 կառ վնասուած լինելու են նաև Գունայ սահ-  
 մանքն, սակայն պատմիչը միայն մեծ քաղա-  
 քիս սղով վարակուած, բան մը չեն յիշեր:  
 Մեծն Աշոտ՝ երբ արքայական պատուոյ հա-  
 սառ (887), խոր գահէր Գունայ մէջ շահառու-  
 աեց, այլ յԵրզրպուտար, և ասոր պատճառ կը  
 համարին կամ առաջին ժամը և կամ ամիրա-  
 պետաց երեսփոխանները և հարկահանները  
 մեր աշխարհէն բոլովին վերցուած չլինելն.  
 Բայց հան նստելով հանդերձ՝ խոր որդին Արմ-  
 բատ Ա, երկրորդ և մեծ ժառէն վերջ, նոյն  
 միջոցին քաղաքիս տիրոջ այլազգիներու հետ  
 պատերազմեցաւ և Գունայ տիրեց 894ին,  
 առաջ որբաթօ օրը: Գունայ մէջ (913—4  
 թուին), անողորմ՝ և ապրտամբ Յուսուփ  
 ոստիկանէն, Սմբատ՝ փայտէ կախուելով,  
 խոտափանական մահուամբ վիպայացաւ. նոյն  
 անդամ զագանը արքայազուն տիկիները  
 քաղաքիս մէջ բանտարկած էր, որանցմէ  
 Շուշան՝ Սիւնեաց տիկինը՝ հոն վախճանեցաւ:  
 Յուսուփ բնաւորին հրամանաւ նահատա-  
 կուեցան ոմն մանուկ Միրալէ՛ր՝ Գուգարաց  
 աշխարհէն, երկու Գուննի եղբարքն Գուրգեև  
 և Գուրիս: — Արխանահեղ Յուսուփայ Հայաս-  
 տանէն մեկնելէ վերջ՝ անոր տեղակալները՝

Սպար, Նըսր և Բշր, նստան դարձեալ Գու-  
 նայ մէջ, բայց զիջանելով Սիւնեաց իշխան-  
 ներու ադաշանաց, փրկանք աննելով գե-  
 րիները արձակեցին: Սպար տեղակալի օրով,  
 Սմբատայ որդին Աշոտ թագաւորը, այլազ-  
 գիներու հետ հաշտուած կը թուի, վասն զի  
 Ասողկայ պատմածի համեմատ, 919ին ժա-  
 մանակները, երբ Յունաց զօրքերը եկան  
 պաշարեցին քաղաքս և չկարենալով տիրել  
 ևս դարձան, Գունայ մէջ էր իրբն օգնու-  
 կան Սպարքի նաև Աշոտ Շահնշահը: — Ա-  
 շոտի եզրօր՝ Աբասայ օրով՝ տաններորդ դա-  
 րու երկրորդ քառորդի մէջ, արիշ ինքնա-  
 զլախ արարացի մը բռնաթմեամբ տիրեց  
 Գունայ և մերձակայ գաւառաց, որուն հետ  
 պատերազմելով Աբաս՝ յաղթուեցաւ և փա-  
 խաւ. իսկ Գազիկ Արժրունին, Աբասայ հօ-  
 րաբեւ թուրը, յաղթեց արարացոյն զօրաց  
 Գինոյ բլեր սահմանայ մօտ: — Ասոնցմէ վերջ  
 ալ չեն յիշուիր Հայաստանի մէջ ամիրա-  
 պետաց ստաթիկաններ, վասն զի միահեծան  
 տիրապետութիւնը տկարացաւ և զանազան  
 տեղեր շատցան ինքնիշխան աւերեր. ասոնց  
 նման Հայք ևս սկսան, ինչպէս յայտնի է  
 պատմութենէ, առանձին թագաւորութիւններ  
 կանդնել: Բայց այլազգի ամիրաները կամ  
 իշխանները որ մեր աշխարհէն մէկ քանի  
 մասերուն կը տիրէին, կը նստանէին նաև  
 Գուինը, երբեմն առանձին անոր ինքնազլախ  
 աէր լինելով, և երբեմն՝ արիշ հզօրագոյն  
 տիրոջ մը հնազանդելով, այսպիսիներէն կը  
 յիշուի ժ գարուն վերջերը ոմն Ապրնաձի,  
 որուն ձեռքէն առաւ Գուինը Ապրտուրփ՝  
 Գաղթան ամիրայն 982 թուին, ասոր ձեռ-  
 քէն ալ առաւ 987ին Ատրպատականի մեծ  
 ամիրայն Ապրնաձաւ: Վերջնայս մեծնելուն պէս  
 Ապրտուրփ դարձեալ նուաճեց Գուինը, նոյն  
 միջոցին « երգմունն զաշունց հաստատէ թա-  
 գաւարն Հայոց Սմբատ բնոյ նմա, միջնուր-  
 գութեամբ Տէր Խաչկոյ, խաղաղութեամբ  
 կեալ առ միմեանս »:

ԺԱ զարու սկիզբը Գուին անցաւ Շեռ-  
 սատեան կամ Շուարեան պարսիկ սոհմի  
 ամիրաներու ձեռքը. ասոնց սոհմապետը  
 Փատարու Ա, երբ « տիրեաց Գունայ, եղ  
 հարկս ի վերայ Հայոց երեք հարիւր հա-  
 զար գրամ ». վարդաւ պատմ. ՆԶ: Սմբատ



Գե (Յալհաննէս) թագաւորութեան սկիզբը, Ալփրամ՝ Հայոց բաջ իշխանը ապստամբելով՝ աստուերիս հազար ձիաւորներով եկաւ Գուին Ապուստար Պարսից զօրավարի մօտ, և դառով անորմէ սպանուեցաւ: Կոյն ժամանակները Անույ տեղակալն Ասխա՝ «բազում զօրօք խաղայ ի վերայ քաղաքին Գունայ, իսկ Ապուստար աէր քաղաքին պատերազմ աուեալ ընդ նմա՝ անշափ կատարածս ասնէ ի գունն քաղաքին»: յարում տեղուջ մեռա մեծ իշխանն Հայոց Վաւրամ՝ հանդերձ սրբափն (Գրիգորիս), որ մեծ սուգ հասոյց Հայոց»: Այս յաղթութեան և թափուած արեանց ի վրէժ՝ կայսրէն զրիուեցաւ (1046-7) ներքինի զօրավար մը, զոր Տէլիարիս կ'անուանէ մեր Ռուհայեցի պատմիչը, որ «գայր ահագին բազմութեամբ և անթիս զօրօք ի վերայ քաղաքին Գունայ, և բանակ հարկանէր ի գունն քաղաքին, և էր ձմերնային ժամանակ, և ի սաստկութենէ սասամանեացն և ի բախմանէ յարգարուզի անձրեացն՝ ոչինչ կարաց ասնել, այլ գառնայր անյաղթելի, խաղայր զնայր ի Հոտմաց աշխարհն, իսկ յորժամ փոխեցաւ թուականն Հայոց ԿՂԶ (= 1047-8) ամին, զարձեալ գայ Տէլիարին զօրօք բազմօք և իջանէ ի վերայ քաղաքին Գունայ, և բազում շարչարանս և սագնապո զործեաց այնմ գաւառի, որով և զերութեամբ ապաւանեաց զամենայն ազգն Տաճկաց, և զարձաւ յաշխարհն Յունաց խաղաղութեամբ»: — Ապուստար զօրավարը կը յիշէ նաև Լաստիլերացին 1055 թուին, ըսելով «այն որ զԳուին և զԳանձակ ունէր»: Ասոր սրբին էր Մանուէլ, որ Սրփաղանէն Անի քաղաքը գնեց և իրեն պայազատաց ձեռքը մնաց մինչև ԺԲ դարու վերջերը: Մեր պատմիչներն կիրակոս և Վարդան կը պատմեն, թէ 1105ին, Պարսից իշխանութեան շփոթութեան միջոց, Ղզըր անուամբ սկիւթացի ամիրայ մը մէջտեղ ելաւ, որ Լոռէ աւանը ասնելով կու գայ բանութեամբ կը մանէ նաև Գուին և կ'սպաննէ Մանուէլի Այուսար եղբայրը. իսկ Մանուէլ՝ Պարսից թագաւորէն զօրք ասնելով զՂզըր կ'սպաննէ իւր եղբորը գերեզմանին վրայ և Գուին քաղաքը Պարսից կու տայ: Գրեթէ քսան տարի վերջը,

կըր Անին վրացիներէն անցաւ զարձեալ Շէտատեանց ձեռքը, Փաարուե (Ք) աւանաւ Գուինը: Փաարունի վրայ գալով Խուրր անուամբ թուրք մը՝ Ղօզ սահմէ, 1130ին կը տիրէ Գուին քաղաքին, «վերաւորեալ ի պատերազմին զՓաարուն, զոր նենդիչք գաղտ խեղդեցին պատճառելով զվէրն՝ որ չէր մահու և առ զամիրայութիւնն կրասեր եղբայրն Փաարունի Խուշշէրե, և զկնի սակաւու՝ աւագն Մահմուս»: Վերոյիշեալ խարթ բարբարօր, Գաանիի մէջ Վրացոց ևս յաղթելով, մերային «կարեաց զզուխն՝ եփեաց թանով, և զգանխն զնէր ի բարձրութեան (Գունայ) ի շարս քարսրմացն»: Բայց ասոր ի վրէժ Վրաց յաղթող թագաւորն Գէորգի՝ Անին ասնելէ վերջ (1161), «կուտէ առ ինքն զկաթկասային զօրան, և գայ ասնու զԳուին (1163), խտաղոյն խայտառակեալ զնոսա ի սուր և ի հուր, բաց ի քրիտանէիցն որ անդ, և զգաղաթմունն թանեփեացս՝ առեալ ի մերայէն, զարդարէ սակեթել հանդերձիւք, և եղեալ ի գաղագս՝ բտնայ ի յուս մակրեաց, և բոկ սախք սայ ասնել մինչև ի Տփլիս...: Չոր լուեալ էլախուզն՝ գայ յայրեցեալն և ի քանդեալն Գուին, և խոցառեալ սրախ» կը հեռանայ: Անիէջ վերջ ստեղ մերթ վրացիներէն և մերթ այլազգիներէն կը նեղուէր քաղաքս, զոր 1184ին թաւար թագաւորն պայազատութեան սկիզբը՝ ասին Վրացիք. երկու տարի վերջ (1186) կը յիշուի Աթիչըր անուամբ սմն ամիրայ Գունայ: — ԺԳ դարու սկիզբը քաջարի սպասաւարն Զաբարիս և իւր Խանէ եղբայրը՝ ուրիշ գաւառներէ և քաղաքներէ վերջ՝ ասին նաև Գուին (1203ին), երկու անգամ յաղթելով այլազգիներու և շատ աւար ասնելով. նայն ժամանակ տեղոյն իշխողը կը կոչուէր Ապուպէրը: Ճէլալէտաին Խորատանի սուլտանը թաթարներէն փախչելով սուպատակեց այս կողմերը (1225) և պաշարելով Գուինը առաւ ու կողոպտելով շատ աւարաւ մեկնեցաւ: Այս միջոցին կը թուի թէ զեռ սուլտանին բուր զօրքերը չմեկնած, հոս հասնելով քաջն Պոսշ, կը կոտորէ «զխորագմն և զՏաճիկն», ինչպէս կ'ըսէ ժամանակագիր պատմիչն մեր Մխիթար Արքիմաննից:



Հոշակաւոր քաղաքս, զրիթէ չորս կամ հինգ զար Հայոց սասան լինելէ վերջ, ժԳ գարու աստջին կիսուն մէջ կը գաղբի յիշուիլ մեր ազգային պատմութեան մէջ: Զարմանալի է մանուանդ այն, որ թաթարաց արշաւանաց միջոց, մինչդեռ կը յիշուին բոլոր նշանաւոր քաղաքներու աւերմունքները, Գունայ վրայ ամենեւին խօսք չի լինիր: Այսպիսով անձնօթ կը մնայ մեզ թէ ինչպէս եղած է քաղաքին վախճանը, լքումը, աւերումը և ամայութիւնը. արդեօք թշնամեայ ձեռքը հրօշակաւոր քաղաքս իսպառ ամայութեան և լքման մասնած է, թէ երկրաշարժը: — Նշանաւոր եղած է քաղաքս և շատ ծագկած վաճառականութեան մէջ, ամէն կողմէ և հեռաւոր աշխարհներէ բնդանելով ամենազգի վաճառականաց կարաւաններ: Ասոր վկայ է նաև հին, համառօտ, բայց կարեւոր ցանկ մը Մարտիկոս Կոստանայ, որ Գունէն՝ իրրև մեծ կեդրոնէ մը սկսելով, կ'երկնայ գէպի գանաղան քաղաքներ և աշխարհներ, նշանակելով անոնց հեռաւորութիւնները մղանով (= 100 բայի): Գունին նոյն ժամանակները կեդրոն էր վաճառականութեան և յատկապէս շանսասակ կոչուած, ոչ միայն մեր աշխարհի քաղաքաց մէջ իրրև աստջին կը համարուէր, այլ և մտաւոր աշխարհաց շահաստաններու հետ կը մրցէր: Պրօկոսիոս՝ Զ գարու կիսուն, Գունայ մարգաշատ աւանները և զիւրերը յիշելէ վերջ, կը վկայէ թէ շատ գործատուներ կային և գործակատարներ, որոնք վաճառականութեան համար կը բնակէին Գունայ մէջ: Հնդկաստանէն եկողները կը բերէին նաև ձենաց պատուականագոյն վաճառքները, յորս նշանաւորն է մետաքս. Յունաստանէն եկող վաճառականներն ալ կը բերէին արեւմտեան աշխարհաց Եւրօպիոյ բոլոր վաճառքները և փոխադարձաբար կը ամուլին այն ամենայն բերքեր և վաճառքներ, որոնք չէին գանուեր իրենց աշխարհը: Մեր վերը յիշած Մղոնագիրը կը ցուցնէ Գունէն սկսեալ հինգ դռերը կամ ճանապարհներ. Ա, գէպի արեւմտք, որ երկնալով մինչև կարին քաղաքը (200 մղան հեռու), անկէ Մեծ և Փոքր Հայոց սահմաններէն գէպի կոպսիա (Գարահետար), Նեոկետարիա, Ամասիա, և այլն,

կը հասնէր մինչև Կ. Պօլիս, ուրկէ կ'երթային Եւրօպիոյ գանաղան քաղաքները: Բ, գէպի հարաւային արեւմտք՝ նախ խլաթ, Բզնու-նեաց ծովուն եզերքը (170 մղան), անկէց Բլիմար (Անդձնիք), Ռուհա, Եմեսիա (Հեմս), Գամասիոս, ուրկէ Երուսաղէմ, Աղէքսանդրիա (Եգիպտոս) և Ալքրիկէի ծանօթ քաղաքները: Գ, գէպի արեւելք՝ Բերդիուսն (60 մղան) որ կը թափ ըլլալ Սիւնեաց կամ Արցախի մէջ, անկէ անցնելով Աղուանից Պարտաւայրաքաղաքը, կը հասնի կասպից ծով: Դ, գէպի հարաւային արեւելք, Նախճուան (60 կամ 70 մղան), անկէց Գալբէ, Տիգրոն, Ակոզա (Գալֆա), Պարթա, և Պարսկային ծովով նաւերով մինչև Հնդկաստան: Գալբէժէն (որ Գանձակ Շահաստան կոչուած է) կը զատուէր ուրիշ գիծ մ'ալ տանելով Նիսուէ, Մծրին, Ռուհա, և այլն: Գարձեալ Նախճուանէն ալ ուրիշ գիծ մը կը ասնէր Արտասիլ, Վարդանակերտ, Փայտակարան և կը հասնէր կազբից ծովը: Ե, գէպի հիւսիս, կոպր (30 մղ.), յայտնի է թէ ճակատք գաւառի կոպր չէ, այլ Գուգարաց կոպրօփոր գաւառը, Տիգրոն՝ Վրաց մայրաքաղաքը, Հունարակերտ (կոտրած կամուրջը) և կը վերջանար Պարտաւ, որ կը միանար Գ դիւն հետ: Այսպէս Գունին հրօշակաւոր եղած է ոչ միայն ազգային եկեղեցական և քաղաքական վարչութեանց բնակավայր լինելով, այլ և բարգաւաճ կեդրոն մը՝ համագրային վաճառականութեան:

Բազմապիմի անցքերով հոշակաւած քաղաքին մնացորդներն ալ նշանաւոր պէտք են լինել, որոնք յատուկ բնութեան կը կարօտին: Մեզ ծանօթ են այժմ, ինչպէս կանխա յիշեցինք, Հայ և Ասորի Գունի՛ կրկին զիւրեր: Ռուսաց վերջին վիճակագրութեան համեմատ այժմ կան երեք Գունի զիւրեր, մէկ մկուսմտ: Ասորի Գունիը ունի 327 բնակիչ, բաժնուած 63 տան, որոնցմէ 2 տուն Հայոց են: Յայտնի չէ թէ այս Ասորիք Գունաբարդաւանանաց միջոց անդ բնակող Ասորի սերունդ են, թէ վերջին գարուց գաղթականներ: Բնգհանբապէս ազբաւ են, և պատճառն այն է որ հողերու մեծ մասին վրայ այդի անկած են, և ստացած խաղողէն զինի պատրաստելով, փոխանակ ծախե-



լու և իրեց պիտոյքը հոգալու, անինայաբար կը խմեն ամբողջ տարին: Քաջ են և չարքաշ, ասորի կանայք կ'օգնեն իրենց արանց նաև դաշապին աշխատութեանց մէջ: Ունին Ս. Յակոբ անուամբ եկեղեցի մը: — Հայ Գուինը՝ Արտաշատի մօտ է, և Ռուսաց վիճակապրութեան մէջ ծանօթ է լսի Գուին անուամբ: Ունի 484 բնակիչ, բաժնուած 100 տան, որոնցմէ 365 հոգի հայ են, բաժնուած 77 տան, իսկ մնացեալը՝ այլազգի: Գիւղիս բոլոր բնակիչը կը խօսին հայերէն, Հայք ունին եկեղեցի մը Ս. Առաքաձածիկ անուամբ: Տները բնգհանրապէս կէս գեանափոր են: Հայոց նիւթական վիճակը բաւական լաւ է. վերին աստիճանի հիւրասէր են ու գովելի է իրենց մարդասիրական վարմունքը: Ռուսաց վիճակագրի համեմատ երբորդ Գուինը կը կոչուի Գուին Քարդրեկո և հաւանօրէն կը գտնուի վերին և Ստորին Գուին գիւղերու մէջտեղ: Ունի 433 զուտ հայ բնակիչ, բաժնուած 71 տան: Այս գիւղս չեն յիշեր ոչ Քաջբերունի և ոչ Յովհ. Ալմանասեանց իրենց ճանապարհորդութեան նկարագրութեան մէջ (1877). և բնի ի վերջոյ ձեւացած է գիւղս, որուն մանրամասն տեղեկութիւնը մեզ կը պակասին: — Վերին Գունայ մօտ կայ բարձրաւանգակ մը, որ լինելու է անշուշտ, պատմական հին Յրտրե, որուն պատճառաւ Գուին կոչուեցաւ հին քաղաքը: Հոն կը տեսնուին անբու և եկեղեցիներու հետքեր և այլ աւերակներ, բայց տակաւին մէկը ինամբով բննած չէ: Փափաքելի է որ ազգատէր սը հետազօտէ այս երեք գիւղերու մերձակայ վայրերը, և հին Գունայ ճիշտ տեղն յայտնէ: Տիւպուս՝ որ այս կողմերը հետազօտեց 1834 տարւոյ մարտ 21—2ին, կ'ուզէր մանրամասն բննութիւն ընել և գտնալ Գունայ տեղը, բայց իրեն առաջնորդները Ստորին Գուին տարին գինքը, որ բան մը չգտաւ: Տիւպուսայէն 160 տարի առաջ Շարսէն հոչաւիտը ճանապարհորդը, Գունայ մէջ գիշերեց 1673ի ապրիլ 8ին, և կը յիշէ իրրե շատ գեղեցիկ և մեծ գիւղ: ԺԷ դարու սկիզբը, բոս Առաքէլ պատմաշի, Մոկացի Պօղոս վարդապետը գիշերեց Գունայ մէջ և բժշկեց մանկան մը զօսացած ձեւքը:

Աճիւնացած և աւերակօքն անձանօթ մնացած մայրաքաղաքէս էր վեհմագոյն հանձաբը կամ բանահիւան և հոգեբոյն Հայոց եկեղեցւոյ՝ Ստեփանոս, Էր դարու կէսէն վերջ, որ քաղաքին աւալ երկցին որդին էր և կոչուեցաւ Սիւնեցի՝ նոյն աշխարհին եպիսկոպոս լինելուն պատճառաւ: Նոյն դարուն սկիզբը սակից էր նաև Եպիփան Գրեակոյ վանահայրը, և Էր դարուն Ստեփանոս կաթողիկոսը, որ տարի մը միայն պաշտօնավարեց (787), և յետոյ իրրե կաշառք ուսաց՝ պաշտօնէն զրկուեցաւ: Էրեկելի վարդապետաց հետ ԺԳ դարու սկիզբը կը գտնուի Գրիգոր Գունեցի, որ գտնուեցաւ Էջնուայ ժողովին մէջ: Տես ՈՍՏԱՆ: Ստորգր. Հայոտ. 462—469: Մշակ, Զ. 83: Փորձ, Ա. 380: Այլարատ, 404—414: Էս այլն: ԳՈՒԿԷՅՎԱՐԱ. — Զուտ հայաբնակ գիւղ Աարդատականի Գարատաւ գաւառի Քէլիան գաւառակին մէջ: Ունի 180 բնակիչ, բաժնուած 33 տան և եկեղեցի մը:

ԳՈՒՄԱՆՈՍ. Տես ԳՄԱՆՈՍ:

ԳՈՒՄՊՈՒԼ, ԹՈՒՄՊՈՒԼ կամ ԹՄՊՈՒԼ. — Գիւղ Սիւնեաց Նախճատան գաւառի, Հին Նախճատանէն 3 վերսա հետո գէղի հարաւ, Էրաստի սփանց վրայ: Հ. Ալիշան այս գիւղս կը համարի հին Տաճրատը, զոր Հայկազն Տրդրանը տուաւ Աժգահակայ զարմին բնակութեան համար. թէև Փոքր Մասեակոս տուրտան ալ կայ համանուն տեղ մը: Ունի 855 բնակիչ, բաժնուած 174 տան, որոնցմէ 542 հոգի հայ են, բաժնուած 132 տան, իսկ մնացեալը՝ այլազգի: Գիւղիս բնակիչը նշանաւոր են և ծանօթ թուաբարցի անուամբ. գաղթած են Աարդատականի Սարմատս քաղաքէն, բարձրահասակ և նիհարազէմ են: Ամբողջ տարւոյն մէջ միայն ձմեռները տուն կու գան բնգհանրապէս, միւս եղանակաց հետաւոր վայրեր կը լնափասին, կ'այրին ուրիշ հաշուով մուրացութեամբ և սպարմութեամբ. շատերը՝ Տէրիշի անուամբ կը շրջագային այն քաղաքները, որ սրբազան են մահմետականութեան, Մեքքէ, Մէսինէ և Բրսէլա. կ'իւրացընեն անոնց սովորութիւններն ու ձէները և կ'ազօթեն անոնց հետ. ջերմեանց մահմետականաց սպարմութեամբ և առատաձեան նուէրներով կը հաւաքեն



շատ գրամ, և յետոյ կ'անցնին ըրիստոնէից մէջ. Երուսաղեմի մտանալով կը փոխեն տեմբլիակա՛ն զգետան և կերպարանքն, կը հազնին սեւ պատմունձան, կը դառնան կրօնաւոր, և հեղուժեան ու աստուածաբաշատ լեան գիմակաւ կը մանեն Երուսաղէմ: Կարելի է թուարկուցոյն հանդիպիլ Հնդկաստանի, Ալֆղանիստանի, Սաբիոյ, Ռուսիոյ, Սիպերիոյ մէջ և վերջապէս ամէն տեղ: Մտրացոյժեամբ հաւաքած գրամով շքեղօրէն կը պահեն իրենց բնականիբբ. զեղեցիկ տուն մի, կոկիկ սենեակներ կը կազմեն իրենց պլանտոր հոգն ու ինամբբ. իրենց ասնր մէջ աւելի կը նմանին վաճառականի: Գիւղիս շատ աներու մէջ կը գտնաին բլլար ժամանակաց ու ազգաց ձեռակերտ արծաթէ աւոթներ, անդդիական, գազգիական, ուսուական և առիական, մատարեայ ծածկոյթներ, վարագոյրներ, թաւիշ, Քաշմիրի շալեր, խորասանի գորգեր, և այլն, և այլն: Արբ և կանայք կը հազնին մարտր, ճոխ ու շքեղ մատարեայ պատասաներ են անոնց ամենօրեայ զարդերը. ազամանոյ, յակինթ, պերպակ, զմբուխ, մարդարխ, յանախ կը զործածուին իբր զարդ կանանց: Վերջին ժամանակներս կատարութիւնը բոլորովին պարեցուցած է ասոնց թափասաշէի կեանքը, և հարկապրօծմ են գրապիլ զիւզական գործերով: Կը ցանեն ցորեն, զարի, կաւաւա, բամբակ, այգեղործութիւն ևս կ'ընեն: Հայր սնին աղիսաշէն կեղեցի մը և վարժարան:

**ԳՈՒՆԵՒԿ.** — Հայաբնակ գիւղ Տարսիսի տանի Տարօն գաւառի, Մշոյ գաշտի մէջ, սնի մօտ 50 տուն բնակիչ: Տես ԳՂՎՆԵՒԿ:

**ԳՈՒՇԱԹ.** Տես ՏԻՒՇԱՏ:

**ԳՈՒՌՆ** կամ **ԳՊՈՒՆԲ.** — Այս անուամբ ծանօթ են Կիլիկիոյ մէջ քանի մը կապաններ և անցքեր. ինչպէս Գուսն՝ Ասորոց, Կիլիկիոյ, Անտիոքայ Գրուներ, և այլն: Տես ԳԱՐՄԱՆՅԻ ԳՈՒՌՆ:

**ԳՈՒՌՆԱ.** — Այս անուամբ ընս մը կայ Մարաշի կողմերը:

**ԳՈՒՌՆԱ ԿԷՍԻ** (Կարճի յիմ). — Այս անուամբ լճակ մը կայ Այրարատայ Գարեղէնք գաւառի մէջ, Պոչար-բեկի լեռան մօտ:


**ԳՈՒՌՆԱ ՕՎԱՍԻ.** — Հովիտ լեռնային Կիլիկիոյ մէջ:

**ԳՈՒՌՆՈՒԿ.** — Գիւղ Տփղիսու գաւառի: Անի 596 բնակիչ, բամբուած 92 տան, որոնցմէ 580ը հայ են բամբուած 76 տան, իսկ մնացեալը՝ մեծաւ մասամբ Յոյնք: Հայր սնին կեղեցի և վարժարան:

**ԳՈՒՏԱԿԱՆ** կամ **ԳԻՒԹԱԿԱՆ** ԳԻՒՂ. — Հին գիւղ Արցախի Զրարեղ գաւառի, որուն աւերակները ցարդ կը տեսնուին թաւիշ և Մասաղիս գիւղերու գրեթէ մէջտեղ, թարթա զեռոյն եղբրբբ: Շարքն թաւթուփ անտառ է և մացառապատ: Փոքրիկ բլլան մը վրայ, կը տեսնուի բաւական ճաշակով շինուած կիսաւեր կեղեցի մը՝ 15 մետր երկայնութեամբ, 7մ. լայնութեամբ: Բոս Զալալեանցի՝ այս փոքր կեղեցիին կամ մատուր կատուցած է սնն Ներսէս կոյսիսպոս հին Աղուանից վաչական թագաւորէն շինուած կեղեցոյ աւերակաց վրայ, հայկական Ո (= 1151) թաին: Վաչական թագաւորի շինած կեղեցոյն, որուն մէջ ամբուփուած էին Ս. Գրիգորի մատուցները, Զալալեանց տեսած է միայն հիմունքը, որուն երկայնութիւնն էր 17 բայլ և լայնութիւնը 11 բայլ: Այժմեան կիսակործան մատարան արեւմտեան և հիսսիսային կողմերը լի են զերեզմաններով, սակայն ամենամեծ մատուր ծածկուած՝ անտառի ծառերով: Հիւսնալի ագրիս, ուշագրաւ տեսարան սնի աւերակս: Անշուշա իսր այլ յատկութիւններով և Ս. Գրիգորի նշխարները իսր մէջ ամբուփուուն համար, ժամանակաւ եղած է ամարանոց Աղուանից կաթագիլոսներու, սուտի և կոչուած է կաթագիլոսարան. կոչմանցս բնակիչք տակաւին կ'անուանեն Կրք-դուխտար, այսինքն կաթագիլոսարան կամ կաթագիլոսի սար, որ կը նշանակէ ամարանոց: Վաչական թագաւորը կատուցանել տուաւ նաև վարժարան մը, և ժողովելով զիսներու, քրմաց, և մասնահատ ազանդաւորաց մանուկները, սկսաւ անոնց ստուցանել աւղեկացնել ըրիստոնէական սուրբ կրօնի վարդապետութիւնները, ինչպէս կը պատմէ Աղուանից պատմիչը. « յԱստուծոյ պատկեալն այն Վաչական ժողովեալ զգաստ մանկանց զլիժից և քրմաց և մասնահատաց, հրամայեաց սնիլ ի գոյրոցս և ստուցանել զաս-



սուածեղէն ուսմանս և տեղեակս ասնել վա-  
րաց բրիտաննէութեան. . . : Իսկ զյուզովս  
մանկանցն յիւր սեպհական զիւզոն Գռասակ  
անուն ժողովիլ և կարգիլ ոսճիկս և զպրա-  
պեաս ի վերայ: Եւ հրամայէր վարժիլ և  
հմուտ լինել կարգի բրիտաննէութեան, և ի  
զայն իւրում ի զիւզոն կատարել զյիշատակ  
սրբոցն. նսակը ինքն թագաւորն ի տան  
զպրոցացն և զսրբիս զլիթացն և բրմայն



256. Կարմիր վանք կամ Կարմիր վանք:

զինքեամբ կացուցանէր գործարար, բակ  
տակալ բազմութիւն յոյժ, և ոմանց զիրս և  
ոմանց տախտակս ի ձեռս սննդով և առ  
հասարակ ի մի ձայն հրամայէր ամենեցուն  
կարգալ և ինքն զուարճացեալ ի մէջ նոցա  
յօրանայր իրբն մեծագոյն իմն գտեալ պար-  
զեւս համարէր անձին»: Գիւտական զիւզը  
թէ և բնական զիրբոյն ի հնումն Զարբերդ գա-  
ւառի կը վերարկէր, սակայն յետոյ կիւլլըս-  
տանի մեկերթութեան ենթարկած են: — Զա-  
րայեանց, Բ. 348-9: Արցախ, 230-1:

ԳՈՒՐԱՊՈՍ կամ ԳԵՐԻ. — Գիւղ Սիւնեաց  
Բագը գաւառի, որ կը կարծուի լինել հին  
Տրեայ զիւզը: Կը գտնուի Զարնգուրի Ե-

րասիի հետ խոտնբրոց արեւելեան անկիւնը  
բլրոյ մը կողք, որուն գագաթը կայ բերդի  
աւերակ: Այժմեան բնակիչը 325 հոգի,  
բաժնուած 82 տան, ամբողջ այլազգի են:

ԳՈՒՐՈՒՇ. — Հանգրուան Ալլարատայ,  
Շիրակ գաւառի մէջ, Թուրքիի հարաւակողմը:  
ԳՊՐԱՎԱԿ. Տես ՍՈՎԻՔ:

ԳՊՐԱՎԱՆՍԱՅ ԱՅԳԻ. — Ալլարատայ Արա-  
զածսան գաւառի Յոխհաննավանից արձա-  
նագրութեան մը մէջ կը յիշուի այգիս, զոր  
ոմն վահրամ և ամուսինն Թայիկ, 1218  
թուին բնծայած են նոյն վանքին:

ԳՊՐԱՎԱՆԻՔ, ԳՊՐԱՎԱՆԻՔ կամ ԿԱՐՄԻՎ  
ՎԱՆԻՔ (Գղը-Գիլիս). — Հայարնակ զիւղ  
Արարատայ Շիրակ գաւառի մէջ, Անիի հիւ-  
սիսային կողմը 2 ժամ հեռու, գետակի մը  
աջակողմը: Ունի 151 բնակիչ, բաժնուած  
18 տան: Հողը շատ արգասանոց է, իսկ  
ցորենը՝ կարմրահաստ, ազնիւ ու բնախի:  
Նշանատու է զիւզս հոյակապ եկեղեցիովն,  
որ Է՞՞՞ գարու կը վերարկէր, և թէպէտ  
շատ մեծ չէ, բայց շինուածքին նրբու-  
թեամբն՝ նախնեաց բնորելագոյն շէնքերէն  
մին կրնայ համարուիլ: Այ միայն խորանի  
երկու կողմն ունի աւանդատուններ կամ  
մատառներ, այլ և արեւմտեան գրան երկու  
կողմը, որոնցմէ միոյն գրան վրայ կայ ՈՒՅԷ  
(= 1228) թուականու արձանագրութիւն:  
Այս մատառներն՝ ինչպէս արձանագրութեան  
թուականն ևս կը յայտնէ, կառուցուած են  
եկեղեցիէն շատ վերջը: Աւանդատանց միայն  
գրան վրայի խանդարտած արձանագրու-  
թեան մէջ կը կարգացուի ճոն Բարդի ա-  
նունը, որուն անուամբ ևս կը կոչուի եկե-  
ղեցիս կամ վանքս: Այս ճոնը, որ Ներսէս  
Գե հրամանատ. Շարականաց բնորութիւնը  
բաւ, է՞ գարու կիտուն էր, և բոս վարդա-  
նայ (19) « առաջնորդ սուրբ ախախն՝ որ  
Գպրեվանքն՝ կոչեցաւ »: Ժամանակու հրու-  
շակաւոր մենաստան է եղեր Գպրեվանք, որ  
թէ և զոյութիւն ունէր եօթներորդ գարուն,  
բայց ժ՞ գարու առաջին կիտուն մէջ, Աբաս  
թագաւորի օրով նորոգուեցաւ և մարան-  
ներով նորոգ հաստատեցաւ, ինչպէս կը վը-  
կային Ասողկէն սկսեալ մեր բոլոր պատմիչ-  
ները և Մանահնի վանաց զիւանբը: Սա-  
կայն յայտնի չէ թէ Գպրեվանք անունն Է՞՞



գարուն ստացեր է, թէ ի վերջոյ: Տ. Գաւթեան Տ. Սաղաթիկէ բաժնային խոր ծախքով վերանորոգած է եկեղեցոյն աւերակ դրէթը և խորխորեալ որմերը, անձամբ ևս աշխատելով. իսկ ասոր կինն Շողակաթ կանոնած է կաթնագինի խաչը: Վանացս մէջ կար հոշակաւոր խաչ մը՝ որուն համար կը գրէ Վարդան. « Ի Գարափանից տարան զխաչն որ յանուն սուրբ Աստուածածնին, որ արդ Վարժիոյ կոչի, յայնժամ ճսխեանց կոչսր... և է սրբոյն Մեղրապոյ օրհնեալ, և կամ Բարսղի սրբոյ ճննին, և ունի զիր հայերէն յաջ թեան, և ծածկեալ են սոկւտի: Այս խաչն հրաշքով բժշկուեցաւ Վրաց Գեմեար թագաւորի կինը, և այլ պատճառաւ Գարեփանքէն փոխադրեցին ի վարձիս: »

ԳՈՒԱՇԵՆ. Տես ՏՈՒԱՇԵՆ:

ԳՈՒՆԱԿԵՐՏ. Տես ԿՈՎԱՍԿԱՆ:

ԳՈՒՆԱՎԱՐՁ. — Հայրենակ զիւր Արցախի վարանդա գաւառի. հիմնուած է Պօղոսանայ սարի հարաւ արեւմտահայեաց լանջի վրայ: Երկիրը աւազուտ, անջրլի և սակաւ արդիւնարեր է. բերքերն են ցորեն, գարի, կորեկ, խաղող, պտուղներ և բոժոժ: Ամբան օդն և կլիման ջերմին է, իսկ ջուրն պտասական: Բնակիչք 828 հօգի են, բաժնուած 120 տան: Արեւի միջանեան ուսումնարան՝ 65 աշակերաներով: Եկեղեցին Ս. Աստուածածին հիմնուած է Հայոց ՌՄԳ թուին. երկայնութիւնն է 17, 60 մետր, իսկ լայնութիւնը 8, 90 մետր: — Այլին Կանաւակ՝ կը կոչուի զիւր հիւսիսային կողմը բլրակի մը վրայ անտաշ բարերով շինուած հին ու փոքրիկ եկեղեցի մը, 7, 94 մետր երկայնութեամբ և 5, 12մ. լայնութեամբ: Բնի ժողովրդահայեաց կողմը խաչազարդ է. եկեղեցոյն շուրջը կան հանգստարան և սենեակ մը, իսկ բլրի վարի կողմը զիւրառակ: Անեկին վրայ կայ «Էս Արամ Աստուծով սուրբ խաչս կանգնեցի» արձանադրութիւնը. կան նաև ուրիշ յիշատակարաններ: Եկեղեցիէս բիշ մը վերի կայ սրբատաշ քարով շինուած բն մը, որուն արեւմտահայեաց ճակատը գեանեալ են երեք զեղեցիկաքանդակ և նրբագործ խաչարձաններ, ՇԻ (= 1071) թուականաւ արձանադրութեամբ: — Արցախ, 130-131:

ԳՈՒՆՎ, կամ ԳՐՍԵՎ. — Հայրենակ զիւր Գաւթապ Չորոփոր գաւառի Չորագետի աջ եզերաց վրայ, ուր կը միանան անոր երկու մեծ ճիւղերը: Կը կարծուի թէ Գաւթ անունը Գաւթ անոյ բառէն ձեւացած է, և այս անունը արուած է, զիւրն գաւառած զիրքին պատճառաւ: Արեւի 1095 բնակիչք, բաժնուած 97 տան. բաջ են ու կորովի, կը պարապին երկրագործութեամբ և որսորդութեամբ: Գիւղիս զիրքը շատ ամուր է. բազմաթիւ աւերակներ կ'աղագայցանեն թէ աշխարհաւեր փոթորիկներ անցեր են այս անոյն վրայ: Հին բնակիչք խոտլութեան, սրոյ և հալածանաց պատճառաւ ցրուեր են գաւթան կողմեր և նոր զիւղեր կազմեր. ժամանակ եղեր է որ ամբողջ զիւր ամայի և անմարդարնակ մնացեր է: Հին նշաններէն կ'երեւի թէ երբեմն մեծ ու հարուստ տան մը եղեր է: Գիւղիս սահմանաց մէջ շինութեան համար քար հանած միջոց, գետնի սակէն գտած են տան սրմեր, զանազան տեսակ անական անօթներու բեկորներ և այլ իրեր: Գիւղացիներէն մին տան անոյ փոքրիւ ժամանակ զեանի սակ տեսած է երկու մեծ սենեկաց անոյն՝ կարմրաներկ ալիսներով սարեալ, մէկ կողմը փոքրիկ տաշաձեւ քարեայ աւազան. զիւրացիք թագաւորի աղջկայ բարանիս կ'անուանեն այլ անոյ: Գաւթը շրջակայքը կան շատ հանգստարանք, որոնցմէ մէկ քանին արդէն անհետացած են և անոյն երկրագործի խօփը կը վարէ: Գիւղիս մէջ կը գտնուին երկու հանգստարանք՝ հին և նոր. հինն որ բաւական մեծ է, լի է խաչարձաններով, որոնցմէ երկուքը նշանաւոր են, զորս զիւրացիք բոյր և եղբայր կ'անուանեն և բաւական փաստերով կը հաստատուի թէ ստաջինը Գրեգոր Մամիկոնեան Մարգարի կը վերաբերի, որ կ'ապրէր ժԲ գարու մէջ և սպանուեցաւ շարաշար, իսկ երկրորդը՝ անոր խորիշահ քրոջ: Հանգստարանիս մէջ կայ սազաշէն եկեղեցի մը ճԳ թուին շինուած. կայ նաև ուրիշ զեղեցիկաքանդակ խաչ մը, Փրիչի, Աստուածամօր, Յովհաննա աւետարանչի, Յովսեփայ և Երկոյթմուսի պատկերաքանդակներով և արձանադրութեամբ: Գիւղս ունի Ս. Լուսաւորիչ անուամբ եկե-



ղեցի մը և արական վարժարան : Գոեղի մօտ կը գտնուի Գիւղ անուամբ փոքրիկ բլուր մը, և կ'երևի թէ զիտեղ բառէն յորինուած է անունն : — Գիւղէն վար կայ գմբէթազարդ փոքրիկ եկեղեցի մը Գաւառուէ մակերեց, որուն շուրջը՝ խաչազարդ հանդստարան է. իսկ զիւղէն վեր կայ փոքրիկ լճակ մը լի ազրուկնեքով, որուն մօտ է Ս. Սարգիս անուամբ մատուռն՝ անտառներով շրջապատուած. ասկէ վար հիստիսային կողմն խաչազարդ հանդստարանի մը մէջ աչքի կը դարնէ, Մամիկնեան իշխաններու յիշատակին կանդնած Սիրուէ խաչն, որուն մօտ է Բարձրաբարձ Ս. Աստուածածնի վանքն, զոր նկարագրած ենք իրեն կարգին : Գոեղի ստորաք կայ Աւանայ քար կոչուած բերդասեղը. նոյնպէս զիւղիս ստորաք կան երկաթուղոյ կրկին ներքնուղիներ : Գոեղի բարձրութենէն կ'երևի Խաչահատ, (Ճաւն զիւղերու և Լալբար սարի տեսարանն :

ԳՎԵՂ. Տես ԳՈՎԵՂ :

ԳՐԱԶԱՐԿ կամ ԹՐԱԶԱՐԿ. — Կիլիկիոյ վաղեմի մայրաքաղաքի Սոսի սահմանաց մէջ պէտք է լինի հոչակաւոր վանքը, որ ոչ միայն իր բն մայրաքաղաքի եպիսկոպոսի տեղան ալ և իւր կարգ ու կանոններով զերազանց էր Կիլիկիոյ միւս բոլոր վանքերէն : Ընծիման՝ հետեւեալ տղերով կը յայտնէ, այժմ մեզ անյայտ վանաց սեղը. « Գրագարի անապատ, եկեղեցի յանտատախիտ ձուրամիջի, հետի ի Սոսի իր բն միօրեայ, յարեմանեան կողմն նորա, իսկ յԱնուարդայ իր բն երկօրեայ. անցանէ առ նովա և առ ու. երևին անպէս նաեւ տերակը ինչ նախնի հոչակաւոր մենատանին . . . : Լինի ի Գրագարի ուրբուսից (պատու) գունով զեղին, և կաղին առատ, որպէս և ի Սիս » : Այս տղերու բացատրութեան համեմատ հարկ է բննել և ծանօթանալ անուանի մենատանին աւերակաց : Մեր պատմիչներէն տեղւոյս տուածին յիշատակողն է Մատթէոս Ռուհայեցին, որ « ի պատան Անուարդայ » կը գնէ, և պէտք է նկատել որ նոյն ժամանակ Սիս այնչափ մեծցած էր, իսկ Անուարդա՝ ոչ միայն գաւառ ալ և աշխարհ կը կոչուէր, Սիսն ևս իրեն մէջ բաժանուած լիւր : Իսկ ուրիշ գրիչներ ամենաին վանաց գիրքը չեն նշանակեր,


իրենց ժամանակ աշխարհածանօթ լինելուն պատճառաւ : Արեւմտեայք՝ զուարճալի պարզ մտածեամբ մը, Գրագար անուան հայերէն ձայնին զուգիւրով զազգիականք, թարգմանած են *Trois—arcs*, և լատիններէնի մէջ Երից կամարաց վանք կամ Աբբայ, *Abbas Trium Arcium*. Հետաքննելի է նաեւ հայերէն անուան ստուգարանութիւնը, մեր պատմիչները և յիշատակագրերը միտքան կը գրեն Գրագարի, որ կարելի է ստուգարանել Գրանգարի՝ բախումն, բայց սրովհետեւ հնագիր և ընտիր արքունի պատմիչը թէ սասով կը գրէ միշտ Թրագարի, հարկ է թէ աւելի հիմնաւոր պատճառ մը լինի, սրով և աւելի հաւանական կը լինի ստուգարանել զայն իր բն թրի կամ սուսերի զարկուած : Հիմնարկութեան ժամանակը յայտնի չէ : Երկուստաներով զարու սկիզբը Ա թուրուսն նորագուտ կ'աւանդուի, Գրիգոր Վիպայտիրի երկու աշակերաներու և զորմակիցներու ձեռքով, որոնք էին Գէորդ Մեղրիկ և Կիրակոս : Առաջինը կողմեց վանքի խիտ կանոնները, կարգաւորեց ճաշոց գիրքը՝ աւելցնելով նորանոր սօսեր և պատշաճ ընթերցումներ, հրամանաւ և հաճութեամբ Գր. Վիպայտիրի վանքս զանազան գրաց յիշատակարանաց մէջ կը յիշուի հետեւեալ ամականներով մեծ, սուրբ, նրշտակաբնակ, սկանաւոր, նոչակաւոր, գերանշուակ : Մեղրարան վարդապետն Գէորդ՝ եթանատուն տարեկան վախճանեցաւ և թաղեցաւ վանաց մէջ 1114 թուին. ինչպէս նաեւ Կիրակոս վարդապետը, և նոյն ժամանակին ասոնց յաջորդող ոչ սակաւ նշանաւոր աշակերաներ : Գրագարի բացի վարդապետներէ հանդստարան եղած է նաեւ զանազան թաղաւորաց և հայրապետաց : Ինչպէս Ռուբինեան Ա և Բ թուրուսներու, և Ա Հիմնեց թաղին՝ թուրուս Գե, որ թաթարօրէն սղանուեցաւ իւր Սմբատ եղբօրէն : Հոն հանդեպեալ նաեւ Մեծին Լուսնի եղբայրը, Ռուբէն Բ հոանպուն երեսասարկը. հոն՝ Հիմնում Ա, որ մեր թաղաւորաց մէջ ամենէն աւելի երկարացոյն իշխեց (45 տարի), և յետոյ սրբնազգեալ Մակար անուան ներքեւ ծածկելով իւր փառքն հանդեպեալ անո՞ւ սը իրմէ աստուտիկն տարի սասջ կանխեր խաղաղը էր (1252) իւր



զուգակիցը և կիլիկիոյ հայ թագուհիներս  
 մէջ պանծալոյնը՝ Լեւոնածին Զապէլ Ա  
 րամբիշը: Հոն իւր մեծամեծ և զօրաւոր  
 նախնեաց մէջ ամբօրհեցաւ նաև Լեւոն  
 թէ որպէն՝ մանկիկն Սահֆանէ, բիշ վերջը  
 իրեն հանգստակից սննեալով նաև իւր եղ-

աւազրեարի կամ արնուականութեան հան-  
 զրտարան եղած է:

Վանացո եկեղեցին նախրուած էր Ս. Աւ-  
 տաւածածնի, ինչպէս զրուած կը հանդիպինք  
 զրոյց յիշատակարանաց մէջ: Գրազարկի վա-  
 նահայրերէն զսա մեկ ծանօթ ստաջնորդ-



257. Լեւոն Գ զատաստանի մտած:—Նկար Սարգիս Պիծակի:

բայնսրէն Ալինախ և Օշին թագաւորը: Իսկ  
 եկեղեցական կարգէ վանացո բնարանին մէջ  
 ամբօրհեցաւ մեծոյի Պահլաւի կաթողիկոսն  
 Գրիգոր Տղայ. որ յետոյ զբռեցան նաև  
 կաթողիկոսներէն, Գրիգոր Քարալէփ, Մե-  
 ծարարոյ Յովհաննէս է, Կոստանդին Բարձր-  
 բերդցի, և Կոստանդին Գ Լամբրոնացի:  
 Այսպէսով Գրազարկը նոյն ժամանակի հայ

ները և միանդամայն Սոյո արքեպիսկոպոս-  
 ները են՝ Գէորգ Մեղրիկ, Կիրակոս, Սա-  
 մուէլ, Յովհաննէս, Հեղի—Հեթում, Յովհան-  
 նէս, Բարսեղ, Բարսեղ արքայեղբայր, Յով-  
 հաննէս, Կոստանդին Գ կաթողիկոս, և այլն:  
 Գրազարկի վանքն, անշուշտ իւր զրից պատ-  
 ճառաւ, և կամ անոր մէկ մասն կոչուած է  
 փոսոյ վանք. վանքս կոչուած է նաև Աչազ



վանք: — Վանացս միտրաններէն յիշելու արժանի է նախ թորոս երաժիշան կամ դասապետ, որ 1307 ին Լեւոն Գ.էն և Հեթում Բ.էն գեղական զրկուած էր, Անգղիոյ Եղուարդ Բ թագաւորին: Յիշենք նաև սրբաւէր քահանայն Սարգիս Պիժակ՝ որ ժամանակին հայ նկարչաց, սկսողաց և ծաղկողաց մէջ առաջինն կրնայ համարուիլ: — Գրագրիկ շէն և բարգաւաճ եղած է գրեթէ ժ.Բ. դարու սկիզբէն մինչև ժ.Գ. դարու կէսը: Այլ ժամանակաց մէջ յայտնի է թէ շատ, մեծամասամբ եկեղեցական, զրքեր գրուած են վանացս մէջ, որոնցմէ մէկ քանին ազատուելով կարտենէ կը պահուին այժմ՝ զանազան գրագրարանաց մէջ: — Սխուռան, 230—236:

ԳՐԱԽՏ. — Այրարատայ Իրազկոսն գաւառի մէջ կը յիշէ Ասաբէլ զանձատացը այս անուամբ լիս, որ նահատակուեցան Ս. Սուկանք:

ԳՐԱԽՏԱԿ. — Գիւղ Պարոկաստանի փերիս գաւառակի. ունի 20 տուն հայ և եկեղեցի մը:

ԳՐԱԽՏԻԿ. — Գիւղ Սինեաց Գեղարքունի գաւառի Արեղունի վիճակի, համանուն ձորագետոյն մէջ: Այժմ՝ այլազգիներէն կը կոչուի Թօթիւրձա և ունի 104 տուն այլազգի բնակիչներ: Տես ՃԱՀՈՒԿ:

ԳՐԱԽՏԻԿ ԿՈՐ. — Հայտնակի գիւղ Արցախի վարանդա գաւառի. հիմնուած է սարի մը ծայրը՝ արեւելահայեաց լանջի վրայ: Գիրքն վեհապանձ և տեսարանն զմայլելի է, իսկ օդն, կլիման և ջուրն գերազանց: Բնակիչք 250 հոգի են, բաժնուած 47 տան. ունին Ս. Գրիգոր Նարեկացոյ քարուկիր եկեղեցի մը, շինուած հայոց ՌՂԳ ( = 1645) թուին, բլրի մը վրայ, որ կան հին ծառեր և հանդսարաններ:

ԳՐԱԽՏԻԿ ԼԻՆ. — Այս անուամբ գիւղատեղի մը կայ քարուկիր եկեղեցիով՝ Նոր Գրախտիկ գիւղէն վար, կաշերու մէջ: Գիւղատեղիէն գէպի հիւսիս բարձր բլրի մը գաղթը կայ Կախան անուամբ սխառտեղի մը: Կ'երեւի որ այս հին ս. փոքր վանքի մը աւերակն է, հինաւորց ծառերու փա-

ռուր հսփանիներու ներքև լքեալ մնացած:

ԳՐԱՇՊԵՏ. — Հին գիւղ Այրարատայ վանանդ գաւառի, զոր կը յիշէ Գեւորդ պատմիչ: Հոս Հայք թօթափելով Հողարացիներու ծանր լուծը՝ Յունաց օգնութեամբ և Սմբատ Կիրապաղատի առաջնորդութեամբ, 705 թուին, պատերազմեցան Մահմէա զօրաւորին հետ:

ԳՐԱՍԻՍՆԱԿԵՐՏ կամ ԳԱՏՆՈՆԱԿԵՐՏ. — Ի հնամե այս անուամբ մեծ գաստակերտ կամ աւան մը կար Այրարատայ մէջ, զոր շինեց Հայոց Արտաշէս թագաւորը: Կանխաւ կը կոչուէր Գաստակերտ Արտաշէսի, բայց վերջը կոչուեցաւ Գասնակերտ, զոր Հայոց Տրդատ թագաւորը ժառանգութիւն առաւ Կամարայ: Ասկէց էր Յովհաննէս պատմարան կաթողիկոսը, ինչպէս գրուած կը զանենք զաւագանազրի մէջ, « Հայրենեօք ի մեծ գաստակերտէն Գրասխանակերտէն»: Պատմական աւանիս աւերակներն և զիրքն անգամ ցարդ անձանթմ կը մնան մեզ:

ԳՐԱՍՊԱՐ. — Կը յիշուի Այրարատայ Երբակ գաւառի Հոտամիսի վանաց արձանագրութեան մը մէջ:

ԳՐԻՇԿ կամ ԳԵՐԻՇԿ. — Հայտնակի գիւղ Արարատականի Սարմատա գաւառի: Ունի 144 բնակիչ, բաժնուած 23 տան, և եկեղեցի մը:

ԳՐԿԵՐՏ. Տես ՏՐԿԵՐՏ:

ԳՐՈՒՆԲ. Տես ԳՈՒՈՒՆ, ՍՈՒԲ և ՎԱՅՈՅ ՉՈՐ:

ԳՐԱՂ. Տես ԳՈՒՂ:

ԳՐՍԻ ՏՈՒՆ. Տես ԱՂԹԱՄԱՐ:

ԳՏՈՐԷՇՏ. Տես ՍՈՒՉԱԿԱՆ:

ԳՐՐԱԿԱՌԻ կամ ՏՈՒՐԱԿԱՅ ՄԵՆՐ. — Գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ. Գիւղատանէն 1 ժամ հեռու՝ արեւելեան կողմը: Ունի 24 տուն բնակիչ:

ԳՐՐԱԿԱՌԻ ՓՈՒՐՐ. — Նոյնպէս գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ. ունի 16 տուն բնակիչ: Գիւղիս մօտ կայ բարձր սարի վրայ հին բերդ մը:

ԳԻԹԱԳԻՒՂ. — Այսպէս ևս կոչուած է, Սիրատախոյ Գաւրայ գիւղը:



**ԵԱԳՈՒՊԻՅԷ.** — Գիւղ Հալէպի նահանգի, ընդամենն բլրոյ մը արեւեանին վրայ: Ունի 120 տուն զուտ հայ բնակիչ, որոնցմէ ոմանք լատինացած են: Հիւղանման խարխուղ ու անշուք եկեղեցի մը ունին. նաև ունին կիսաւեր մենաստան մը Ս. Գեորգ անուամբ: Օգը մաքուր և զով է: Գիւղիս բերքն ու եկամուտն են գլխաւորաբար ձիթապտուղ, խաղող, թուղ, նուռ, ցորեն, գարի, սոս, և այլն: Անասունք են՝ ձի, ջորի, էշ, աթ, սշխար, հաւ, աղանի, և այլն: Մայրենի լեզուէ զուրկ են և արաբերէն կը խօսին. ունին նաև վարժարան մը:

**ԵԱԳՈՊԷՇԳ.** Տես ՍՈՒՉԱՒԱ:

**ԵԱՁԵՐՈՒՏ** կամ ՄԱՐՏԻՐՈՍ. — Գեառաձորակ Սինեայ վայոց ձոր գաւառի հարաւային մասի մէջ, որ արեւելեան հարաւային կողմէն ընթանալով գէպի արեւմտեան հիւսիս կը խաւնուի Արփայի հետ:

**ԵԱՁԸԸ** կամ ԵԱՁԸԻ ԳԱՇ. — Քսան տունքուրդ բնակչօք գիւղ մ'է Այրարատայ Բագրեանց գաւառի, ահագին ու մեծ քարայեւրան մը հարաւ արեւմտեան ստորաբ: Այս լեռը հիւսիսային կողմը ունի խոր ձոր, ամբողջապէս կազմուած է գիրքասառ քարերէ, որոնք հսկայ շերտերու բաժնուած՝ իրարու վրայ կուտուած են: Այս հսկայ և անսպասելի քարահանքը կրնայ քար մատակարարել ամբողջ Բագրեանցի և Բասենի, սակայն գիրքամաշկի ճանապարհներ չկան: Գիւղս իւր անունն առած է բեհուաձե ար-

ձանազրութենէ մը, որ կը գտնուի գրեթէ մէկ հազարամետր գէպի հարաւային արեւելք և Տաղարայ հիւսիս արեւմտեան կողմը երկու փարսախ հեռաւորութեամբ, աղաւած լեռան մը հարաւային երեսին վրայ: Արձանազրութիւնը գրուած է յղուած տախտակի նման բարի մը վրայ, և ամբողջ երեսուն և վեց տող է. բաւական անազարտ մնացած, ինչպէս կը տեսնուի պատկերի մէջ:

**ԵԱՁԻՈՒ.** — Հայաբնակ գիւղ Այրարատայ կողովիս (Պայազիս) գաւառի: Ունի 40 տուն երկրագործ բնակիչներ, Ս. Ստեփանոս անուամբ եկեղեցի մը և վարժարան:

**ԵԱԹՄԸՇ.** — Գիւղ Էպոսիոյ. 38 տուն հայ կայ: Ունին Ս. Գեորգ անուամբ եկեղեցի մը և երկեսու վարժարան:

**ԵԱԱԳ** կամ ԵԱԱՍ ՏԵՒԷ. — Հայաբնակ գիւղ Նիկիովիոյ առաջնորդական վիճակի մէջ, Գարամուսպէ 3 ժամու ճանապարհ հեռու: Ունի 140 տուն, 650 բնակիչներով: Էկեղեցին Ս. Հրեշտակապետ՝ 50 տարի յառաջ ի հիմանց կառուցուեր է վերջուտին: Կը կարծուի թէ 250 տարուան գիւղ մ'է սա: Օգն այնչափ լաւ չէ. բայց մտաներն ունի լաւ ջուր և օդատուն վայրեր: Գրեթէ կէս ժամ հեռու կը գտնուի մեծ անտառ մը, որ Հիւն գիւղ կը կոչուի և ուր յառաջագոյն կը բնակին եղեր Էալազ Տէրեցիք, բայց ձմրան խոտութեան պատճառաւ փոխազրուեր են ձորին մէջ, որուն ախտամբ կոչուած է նոր գիւղն: Տեղույս բնա-







կիչք աշխատաւէր են և հիւրընկալ. կը պարապին երկրագործութեամբ և շերամագրահայտութեամբ: Ունին Կերտիսեան անուամբ վարժարան մը՝ 60 աշակերտներով:

**ԵԱՒՐՆՐԶ-ՊԱՂ.** — Գիւղ Բարձր Հայոց Եկեղեցաց (Երզնկա) գաւառի մէջ: Ունի 10 տուն հայ և 11 տուն մահմադական բնակիչներ. կը պարապին երկրագործութեամբ:

**ԵԱՒՔԱ. Ռ. ՅԱՄԱ.** — Կոր և փոքր քաղաք Ռուսիոյ, Խրիմա թերակղզոյն հարաւային ծայրը, Սև ծովու վրայ: Ունի շատ գեղեցիկ գիրք և ատոզարար օգ՝ մանաւանդ կարծրի հիւանդութիւն ունեցողներու համար: Քաղաքս շինուած է ծովեզրեայ և ետանկիւնաձև, երեք կողմն զօղաւոր լեռներէ շրջապատեալ է, իսկ արեւելեան կողմէն զէպի հարաւ՝ ծովն է: Ունի փոքրիկ և աղահամ նաւահանգիստ: Թագերը՝ գրեթէ ձորերու մէջ են: Կան լաւ լաւ լողարաններ, հեռուոր տեղերէ հազարաւոր անձինք կու գան զարմանի և օգտփոխութեան համար, և մայիսի սկզբէն մինչև հոկտեմբերի կէսը կը մնան: Տեղւոյ ձմեռն ալ մեղմ է և զրեթէ զարնան պէս: Քաղաքիս բնակիչք են՝ ոսու, հայ, յոյն, լիւթար, հրեայ, և այլք: Ամէն ազգ ունի իւր սեղահական եկեղեցին: Հայք 30 տուն հազիւ կան. եկած են Կ. Պոլսէն, Տրապիզոնէն, Բարերզէն և Կոստանէն. ունին առ ժամանակեայ ազօթատուն մը. կան նաև 300ի չափ պանդուխտ հայ զիւղացի գործաւորներ, որոնց մեծամասնութիւնը Բարերզէն են. Մշէն, Շապին Գարահիտարէն և այլ տեղերէ ևս կան: Հայք կը զբոսայտ վաճառականութեամբ, գերձակութեամբ, կոշիակարութեամբ, ևն. արհեստաւորաց զրեթէ մեծամասնութիւնը հրեայ է: Եւրոպայի տուններն սարուէ տարի սունկի նման կը շատնան, սրովհետեւ երկրին ներսերէն կողան հարուստ անձինք, և բարձր գիներով կը գնեն պարսպ գետինները կամ իրենց համար ամարանոց կը շինեն պարտէզներով, և կամ վարձու կու տան սուղ գնով: Քաղաքէս կէս ժամ հեռու հարաւային արեւմտեան կողմն Լիփաւտիյէ բուսած տեղը շինուած է կայսերական ամարանոցը, ուր սարուէ տարի Ռուսաց

կայսրը կու գայ բնաանեօք: Այլ տեղւոյ ջուրը ու օդը գերազանց է. սպարանքը շինուած է լեռանց կարծրի վրայ անստատիս ծառոց մէջ, գեղեցիկ գիրքով: Եւրոպայի հիւսիսային արեւելեան կողմն ալ է Մասսահարա բուսած տեղը 1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ հեռուորութեամբ, ուր է կայսերական նորակառոյց ամարանոցը. հոն ևս բնութեան սքանչելիք կը փայլին, օդոյն անուշութիւնը, պատուական ջուրն, երփներանգ ծաղկանց անուշահոտութիւնը, թռչնոց ճրլլոցը զմարդ կը զմայլեցնեն: Եւրոպա 55-60 տարի առաջ, անտառի մը մէջ՝ 10 տունէ բազկացեալ փոքրիկ գիւղ մ'է եղեր, յետոյ հեազհեաէ ատոզարար օդոյն և կլիմային պատճառաւ բազմացեր են բնակիչք և սկսեր է շինուալ, քաղաք դառնալ. կայսերական ամարանոցի շինուելովն ալ զեւ աւելի սկսաւ զարգանալ: Տեղւոյս գլխաւոր բերքն է ծխախոտ, խաղող և ամէն տեսակ պտուղներ. խաղողին ազնիւ ու զիւրամարտելի տեսակն է շաշա բուսածն, սրուն համար կու գան տակու 20 օրի չափ, և ոմանք ալ կը մնան մինչև խաղողին հատնիլը: Ռուսիչք կը բերեն Սիմֆերոպոլէն և Թէպոսիայէն՝ խոյ, հաւ, ձու, և այլն. իսկ սպրանք ամէն կողմէ: Կը վերջացնենք քաղաքիս համառօտ նկարագիրն, տկանատեսի մը հետ բնելով թէ՛ Եւրոպա՝ յիւրախ իւր գեղեցիկ ծոցովն, մշտապալար լեռներով, գեղեցիկ սպարանքներով և ճեւոցի վերնատուններով, կրանիտեայ լիւթարներով, և այլն, բնութեան և արուեստի սակաւագիւտ տեսարանաց մին կ'ընծայէ. աւոր ծովու կողմէն տեսիլն ևս անման է:

**ԵԱՒՊՈՒԶ-ՈՂԱՃ.** — Վաղարշապատի Տոսոյ գաւառի մէջ Խառակօնիս գիւղի արեւմտեան կողմը և Հասչակ լճակի մօտ, զրեթէ 70-80 տարի առաջ, այս անուամբ գիւղ մը կար 100ի չափ Հայոց աներով. իսկ այժմ քանի մը կանգուն՝ և քանի մը գեանատարած խաչքարեր կը տեսնուին, և անոնց մօտ կը բնակին քանի մը տուն Քուրդք:

**ԵԱՂՈՒԶՏԱՄ.** — Գիւղ Սինեայ Ալազէճը գաւառի մէջ:

**ԵԱՒՐՆ** կամ **ԵԱՒՈՒ.** — Այսպէս կոչուած է ի Հայոց Այստի այն ծովեզրը, ուր Վենետիկիչք կը հանէին վաճառքները, սրուն



համար յատուկ աղերսագրով հրամանագիր ատին 1320 թուին:

ԵԱԼՊՈՒՉ. — Գեաակ դաշապին Կիլիկիոյ, կը թափի Չահան գետը:

ԵԱԼՉՎԱ. — Փոքր Ասիոյ եզերաց վրայ այս գիւղաբազաթս, պատմութեան մէջ նշանաւոր տեղ մը կը գրաւէ՝ հնութեամբը և այն ահաեղի պատերազմներով, զորս Սարակինսոսը մղեցին մերթ ընդ մերթ Բիւթանիոյ փոքրիկ պետութեան և ապա Խաչահրաց

գիւղին հոն տարւոյն զանազան եզանակաց մէջ: Թաւուս հովտի մը մէջ, որուն երկու կողմերը կը բարձրանան կրաքարային կազմութեամբ լեռնակներ, այս ջերմուկները կը ստանան առկնահաճոյ տեսարան մը ամբան եզանակի մէջ: Այն կամարակազ գմբէթները, որ ցարդ կը ծածկեն այս ջերմուկները, ըստ պատմութեան՝ Հեղինէ կայսրուհւոյն շինուածներն են: Քիչ մը հետո կը տեսնուին զանազան աւերակներ, որ Հեղինէի և սր-



259. Եալթայի տեսարանը:

գումարտակաց գեմ: Հոյն Տրեփանոնի՝ որ Սարակինսոսներէն աւերեցաւ և բանդեցա՝ աւերակաց վրայ վերստին կառուցաւ գիւղաբազաթս՝ շնորհիւ Հեղինէ կայսրուհւոյն, որ Երուսաղէմէն զանազէ վերջ այցելելով, շրջակայքը զանաւած ջերմուկները՝ մեծամեծ շէնքերով զարգարեց: Այս ջերմուկները, որ կը գտնուին գիւղաբազաթիս արեւմտեան հարաւային կողմը  $4-4\frac{1}{2}$  ժամ հետո, ի հնումն համբաւուոր էին, և Բիւզանդիանէն շատ ազնուականներ և բարեկեցիկներ կը

այն կրտսանդիանոսի հիւրանոցի և ապաւանաց մնացորդներն են: Մեծն կրտսանդիանոս ի պատիւ մօրը՝ Տրեփանոն գիւղը բազաթաց կարգը անցուց, և Հէլէնոպոլիս կոչեց զայն, և այս անունը բաւական ժամանակ մնաց: Կը պատմուի, թէ Մեծն կրտսանդիանոս իւր կենաց վերջին օրերու մէջ բանի մը անգամ այցելեց այս կողմերն, և մեռաւ Անտիոնի ամարանոցի մէջ՝ Նիկովիոյ մօտ: Խաչահրաց բանակը, Պետրոս ճգնաւորի և անարժամ կօթիկի հրամանա-



տարածեամբ, ստիպուեցաւ Հէլէնոսցոյի մէջ պահ մը մնալ. Նիկիան Սարակինոսաց ձեռքը թողլէ վերջ՝ եկաւ քաղաքս, որպէս զի ծախային ճանապարհսու հազարակցութիւն ունենայ և կազդուրէ իւր երկարատե սպասերազմներով սկարացած զօրութիւնը, և վերջը պատահէ առթիւ վերոսին յարձակի Նիկիա քաղաքի վրայ: Այս աղետալի պատերազմէն վերջ, Սարակինոսը խաչակիր զօրաց սկիւրներով բարդ մը կանոնեցին, որոնցմէ պատերազմին մէջ ինկան, բոս պատմադրին Ալեքսիս Կոմենենոսի, 25000 հոգի:

Եւրօլա անունը՝ որ յաջորդեց Տրեփանոս և Հէլէնոսցոյիս անուանց, գրուած է աշխարհագրական զիրքէն աննկոյժ: Ընդարձակ, բարերեր և արգասանդ հովիտ մը կը տարածուի շուրջանակի մինչև ջերմուկները, որ այժմ ծանօթ են Տաօ-նամանը անուամբ, և ջուրերը երկրէն զօրս կը ժայթքեն եռացեալ վիճակի մէջ, և խումայի-տերեսի աւնուամբ գետակ մը՝ բովէն հոսելով կը բարեխանէ տաքութեան աստիճանը: Վերջին ժամանակներս հիւրանոցներ և բնակարաններ շինուեցան, այցելուաց զխրութեան և հանգրտեան համար: Այս ջերմուկներու արեւմտեան կողմը, 1 ժամ հեռու, ընտիր քարահանը կայ, 150 մետր երկայնութեամբ և 70մ. լայնութեամբ տարածութեան վրայ: Եւրօլա՝ Նիկիովիտի ծոցի հարաւային արեւմտեան եզրաց վրայ կը գտնուի, և Գարամնոսայի գայմագանաքեաններք է: Ունի 150 տուն թուրք բնակիչներ, շուկայի մէջ 10է աւելի խանութ չկայ: Շրջակայ զիւղերու Հայք կ'երթեկեկեն շարունակ ասուտարով և գանազան գործերով:

ԵԱՒՆԻ-ԹԷՓԷ. — Հայաբնակ զիւղ Այրարատայ Կողովիտ (Պայազիտ) գաւառի: Ունի 50 տուն բնակիչ, Ս. Մակեմեոս աւնուամբ եկեղեցի մը և վարժարան: Կը պարսպին երկրազորութեամբ:

ԵԱՆԻԷ. — Կը յիշուի Տուրուբերանի Տաւրածատոսի գաւառի մէջ:

ԵԱՆԻ. — Այս անուամբ Մեծ և Փոքր կրկին լեռներ կան Այրարատայ վանանդ գաւառի արեւելակողմը: Մեծ Եւհանի բարձր է 2270 մետր, իսկ Փոքր Եւհանի՝ 2080մ.:

ԵԱՂԱՆ. — Հայաբնակ զիւղ Այրարատայ Բասեն գաւառի մէջ բարձր և զուարճալի զիրքով. ունի 60 տուն բնակիչ: Գիւղիս մօտ կ'երևին հին շինուածոց աւերակներ: Գերեզմանատան մէջ կայ գեղեցիկ մատրանաձև շինուած մը, զոր կը համարին մարտիրոսի մը կամ թաղաւորի մը գտեր շիրմը:

ԵԱՂԻՆ. — Գիւղ Սիւնեաց Աղահէճը գաւառի մէջ:

ԵԱՂԼՃԱ. — Լեռ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ. 9752' բարձրութեամբ:

ԵԱՂԼԻ. — Գիւղ Այրարատայ ճակատք գաւառի մէջ, ունի սակաւաթիւ այլազգի բնակիչներ:

ԵԱՂՈՊՈՒ. — Հայաբնակ զիւղ Նսիլի՝ 40 վերտա քաղաքէն հեռու: Ունի 160 տուն հայ բնակիչներ: Եկեղեցին զիւղի վերի ծայրն է: Բարձր զիրք, մարտը օդ և ասոզջարար ու մարեկցուցիչ ջուր ունի: Թէ՛ արք և թէ՛ կանայք ասոզջակազմ են և յաղթանդամ. կանայքը՝ աշխատին արանց հատառար: Կը վարեն ցորեն, գարի, կառաւա և կորեկ, ցորենն համրուաւոր է սարուչա անուամբ: Գիւղս ունի սխառտեղի մը, Ս. Սարգիս անուն, որուն յատուկ սխառ օրերն են Յարութեան տօնի երկուշաբթին, և Ս. Սարգիս տօնին:

ԵԱՂՎԼՔՏ. Տես ԵՂԻՎԱՐՔ:

ԵԱՄԱՆՃԱՂ. — Փոքրիկ այլազգաբնակ զիւղ Այրարատայ Ուտան գաւառի:

ԵԱՄԱՐ. — Կը յիշուի զիւղս Այրարատայ Բագրեանդ գաւառի մէջ. 1877ին ունէր 98 տուն, իսկ 1882ին 67 տուն. այժմեան վիճակն չգիտենք:

ԵԱՄԻԱՆԱ. — Գիւղ Սիւնեաց Նախճատան գաւառի, Երասխի աջակողմը: Ունի 110 տուն Պարսկաստանէն գաղթած հայ բնակիչներ և քանի մը այլազգիներ:

ԵԱՅՃԻ. — Հայաբնակ զիւղ Այրարատայ վարամնունեաց գաւառի, Ռնամուղայ հիւսիսային կողմը: Ունի 905 բնակիչ, բաժնուած 78 տան: Եկեղեցին Ս. Մակեմեոս՝ հին և անշուք է: — Այս անուամբ աւերակ զիւղատեղի մը կը յիշէ Սմբատեանց՝ Այրարատայ Մազազ գաւառի մէջ, որ կան երկու եկեղեցոյ հետքեր և գերեզմանաւ տուն:



**ԵԱՅՃԻ.** — Գիւղ Սիւնեաց Իրգուի գաւառի, Լորաձորի և Տաթևի սահաններու մէջ, որ կը կարծուի ըլլալ հին Հարժիք զիւղը: Կը գտնուի Պաղար-չայի ձախակղզմը, հովտի լանջին վրայ. հիւսիսային կողմէն պատած է բարձր ժայռերով, որոնց մէջ կան մի մեծ և քանի մը փոքր բարայրներ: Արեւմտեան կողմն ալ, զետի աջ ափունքը կը տեսնուին հին ամրոցի մը հետքերը: Գիւղին կեդրոնը կը գտնուի հին և չափաւոր

բար մը **ՉՀԷ**: Թուականաւ արձանագրութեամբ և ձիաւորի մը քանդակով: Գրան մտախաշքարի մը վրայ կայ **ՆՂԲ** (= 1043) թուականը, իսկ կամարին վրայ՝ արձանագրութիւն մը: Եկեղեցիս պարսպապատ է. շուրջը կան հին զերեզմաններ և տներու աւերակներ: — **Զանգեզուրի գաւառ, Ա. 67-68:**

**ԵԱՂՊԱՍԱՆ.** — Գիւղ Հաճնայ (Կիլիկիա), տնի 20 հայ և 600 այլազգի բնակիչներ:


**ԵԱՆԱՐ.** — Պամփիլիոյ արեւմտեան հարաւային ափունքը, այս անուամբ հրորոց վիհ մը կայ, Տէլիկաշ զիւղի և լիբան մտա: Ի հնուց շուրջը որմ հիւսած են. ասիէ միշտ պայծառ կրակի բոց կ'երնէ:

**ԵԱՆԵԱ.** Տես ՍԷԼԱՆԵԿ:

**ԵԱՆԵՂ.** — Գիւղ Սիւնեաց Գեղարքանի գաւառի, այժմ տնի 53 տուն այլազգի բնակիչներ: Մէջը կը տեսնուի եկեղեցւոյ աւերակ:

**ԵԱՆՇԱՂ.** — Արցախի վտակներէն մին:

**ԵԱՆՇ. ԳՂ. JASSY.** — Ի հնումն Մուսաօվիոյ մայրաքաղաքն էր, իսկ այժմ համանուն նահանգի զլիստար քաղաքն է, կառուցուած Գորսուլ և Շօրօկան ըլլոց հիւսիսային ծայրը Պահլաւ գետակի ափունց վրայ. Պուրբէշի հիւսիսային արեւելեան կողմը 585 հզրմ. հաստ, և կալապէն հաստ է 354 հզրմ.: Գիրքն իրստ զեղեցիկ է, օդն ասողջարար և երկիրն բերրի: Բնակիչը 90000 հոգի են, մեծագոյն մասը հրեայ: Ի հնումն



260. Եանար հրաբոց վանը:

բազմաթիւ Հայք գաղթած են հոս. բայց այժմ միայն 70 տուն են, և ամէնքն ալ կառու վարչական և մասնաւոր բարձր պաշտօններով կը զբաղին. առեւտրական հրապարակի վրայ կան միայն վերականգնործներու շարս կրօցակ. կան նաև երկու սրճագործներ՝ որոնք վերջին հայկական զէպրերուն, Եկեղեցաց Բագաօվիզ զիւղէն փախստական եկած հոս հաստատուած են: Կը պատմուի, թէ 1551 թուին Պուլտանու Ստեփան բէկը մեծ հալածանք հաներ է Հայոց զեմ, և շատ շարչարեր է որ յունապուտան լինին, բայց չէ յաջողեր, վասն զի Հայերէն շա-

բազմաթիւ Հայք գաղթած են հոս. բայց այժմ միայն 70 տուն են, և ամէնքն ալ կառու վարչական և մասնաւոր բարձր պաշտօններով կը զբաղին. առեւտրական հրապարակի վրայ կան միայն վերականգնործներու շարս կրօցակ. կան նաև երկու սրճագործներ՝ որոնք վերջին հայկական զէպրերուն, Եկեղեցաց Բագաօվիզ զիւղէն փախստական եկած հոս հաստատուած են: Կը պատմուի, թէ 1551 թուին Պուլտանու Ստեփան բէկը մեծ հալածանք հաներ է Հայոց զեմ, և շատ շարչարեր է որ յունապուտան լինին, բայց չէ յաջողեր, վասն զի Հայերէն շա-



սերը ելեր ուրիշ սեղեր գացեր են: Ճամանակաւ քաղաքին մէջ կան եզեր բազմաթիւ Հայք, բայց զանազան պատճառներով հեռագհեակ այս ու այն կողմն զազմելով, մնացած են, բարդամամբ ուրիշ ազգաց, սակաւաթիւ հասարակութիւն մը, որ օր աւուր նուազելու վրայ է: Ազգասիրական զգացումնին ցարդ վառ պահած են և հայ եկեղեցւոյ ծէսերուն ու սովորութեանց խիտ նախանձախնդիր. բայց ցաւ է ըսել, որ կորուսած են ազգային լեզուն, ու կը գործածեն արող կասալարութեան լեզուն: Իրրե զգայուն Հայեր, ցաւելով իրենց նախնեաց հայրենիքի մէջ, համազօրի բերց և եղբարց կրած բազմազիմի հալածանաց և հարստահարութեանց վրայ, իրենց կարեաց չափով օգնած են անոնց նիւթական օժանդակութեամբ, որ ապացոյց մ'է իրենց ազգասիրական սուրբ զգացմանց:

Ի հնումն Հայք բազարին մէջ շինեցին քանի մը եկեղեցիներ, և ունէին տառնձին կախուր պոս: Այլ եկեղեցիներէն այժմ մնացած են միայն Ս. Լուսաւորիչ և Ս. Աստուածածին: Ս. Լուսաւորիչ՝ որ երկուք ու կէս դարէ աւելի հնութիւն ունի, այժմ գոց է: Իսկ Ս. Աստուածածին՝ այժմեան գործածական եկեղեցին է, որ շինուած է յոյժ փառաւոր, մեծազիր և վայելուչ, ու կը մնայ իրրե զողարիկ յիշատակ մը, Հայոց անցեալ փառաց: Եկեղեցւոյս զբան ճակատին վրայ սակեզօծ տառերով քանդակուած է, թէ՛ հին շինութեան և թէ՛ նորոգութեան արձանագրութիւնը հետեւեալ կերպով. «Շնորհիւ և սրբամաքեանքն Աստուծոյ նիւթարկեցաւ Էւաչու Ս. Աստուածածնայ եկեղեցիս անուար եկեղեցւոյս խաչքոյի և Սիսիանցի Տեր Յակոբի, Զուրաբի մանուկի Մարգարի և մանուկի Գրիգորի րպիս Հայոց ՊՃԻԿ (— 1395): Էւ այժմ վերանորոգեցաւ ի անս բարեպաշտս իշխանաց և նամայն ժողովրդոց աշխատանք և ծախիւք ի րպականոքեան Փրկչի 1803ի»: — Եկեղեցիս այժմ ունի նիւթական բարեղաւ վիճակ մը, և տարեկան եկամուտն կը հասնի 18-20000 ֆրանկի. այլ եկամուտն կը գոյանայ առեւտրական հրապարակի վրայ ունեցած իրեն սեպհական կրպակներէ՝ որոնք նոր

և գեղեցիկ շինուածքներ են, և շատ մը բնակարաններէ՝ զորս կաւակած են Էւաչի հայ գաղութի երջանկայիշատակ նախնիքը: Այս եկամուտներով կը մասաւարարուին, մէկ բահանայի, երկու պարի, երկու ժամակաշի, մէկ մամալաճառի, մէկ հաւաքիչ գանձապետի և անոր օժանդակ բարատեղարի թուշակները. ասոնցմէ զատ եկեղեցին թուշակ յատկացուցած է կարգ մը այրի կանանց: Եկեղեցւոյ կալուածոց և բոլոր գործանութեան վերահսկող մարմինն է Ազգային թագական խորհուրդը՝ երեք անպամներէ բաղկացած: Այս անպամները կ'ընտրուին կարող և գործուն Հայերէ և բնդհանրապէս Պրյորքեան ազնիւ գերգաստանի ազգասէր անպամ



261 • Եւաչի հայոց Ս. Աստուածածնի եկեղեցին:

ներէն, որոնք ազգային կալուածոց, հաստատութեանց պայծառութեան և շէնութեան, նմանապէս եկեղեցւոյ շրջապատեան ոյր ի բոլին հոգ տարած են և կը տանին միշտ, անոնց հոգատար ջանից շնորհիւ անշարժ կալուածոց թիւն հեազհեաէ կ'աւելնայ: Էւաչի Հայք՝ ժամանակաւ ունեցեր են բարձրագոյն նախակրթարան մը և կարող ուսուցիչներ. սակայն այժմ, հակառակ իրենց նիւթական բարեղաւ վիճակին՝ զպրոց չունին, որ իրենց սերունդը ուսանի ազգային լեզուն ու պատմութիւնը: Հոս կար նաև հայ ապարան մը, որ կը սպազբուէին մասնաւոր գասագրքեր, սակայն սպազային լեզուի բարձման պատճառաւ այժմ փակուած է: Քաղաքէս զրեթէ կէս ժամ հեռու գէպի հիւսիս՝ բարձր գրեց վրայ, Հայք ունին Եւական բնդարձակ գերեզմանատուն, ու



բուն գեղերը գնած են Ազգին գրամով 1876 թուին, և հսն կառուցած են 1882ին, փոքրիկ ու շքեղ մատուռ մը և հսկող պահակին լաւ բնակարան մը:

**ԵԱՍԱԳՈՒՄ, կամ ԵՍԱԳՈՒՄ.** — Հայաբնակ գիւղ Այրարատայ Ծիրակ գաւառի, Կամիւռա լեռան ստորոտը. ունի 1121 բնակիչ, բաժնուած 139 տան:

**ԵԱՎԱՐ կամ ՌԱՍԻՒՄ-ԳՐԵՆԱՎԱՐ.** — Պարուկաբնակ գիւղ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ, ուր կ'երևին Հայոց հին բնակութեանց հետքեր, գերեզմաններ և խաչվեմեր:

**ԵԱՐԸՄՃԱՅ.** — Գիւղ Սիւնեաց Կախճաւան գաւառի, Հին-Կախճաւանէն 3 վերսահեաւ, 148 տուն հայ բնակիչներով: Կը պարապին երկրագործութեամբ. առատ են ցորեն, դարի, կորեկ, և այլն, և պտուղք: Գիւղս կ'ստորաւ Գոսիբան առուով: Գրեթէ 75 տարի առաջ Սարմատի մերձակայ գիւղացի գաղթականները վերանորոգեր են գիւղս: Եարմաճացիք բնաւորութեամբ և կերպարանքով բաւական նման են Թուրքացիներուն, որոնց հետ բարեկամական կապեր ևս ունին: Կը սիրեն երկրագործութիւնը և առուտորը: Ժիր են և բաւական քաղաքավար. որքան կարելի է լաւ կը հագնին, մանաւանդ կանայք: Տները մեծ մասամբ պարտէզներով շրջապատուած են, փողոցները ջրի նուազութեան պատճառաւ այնչափ մաքուր չեն: Գիւղս շրջապատուած է լաւ մշակուած այգիներով: Տեղւոյս զլիսաւոր բերքերէն մին է նախ րեմպիլի, որով գիւղացիք կը պատրաստեն տեսակ մը կծու բլիթափոշի՝ որ անուանի է այս կողմերը և բաւական կը ծախուի: Եկեղեցին շինուած է 1860 թուականին, ազիւսաշէն կամարներով, այս կողմերը հոշակուած Տէր Սարգսի (այժմ մեռած) ձեռքով: — Մշակ, է: 87: — Կարնայ գաշախն մէջ ևս այս անուամբ գիւղ մը կայ:

**ԵԱՐ-ԹՎՓԼ.** — Լեւանակ՝ Սիւնեաց վայոց ձոր գաւառի հիւսիսային արեւմտեան կողմը:

**ԵԱՐՀԻՍԱՐ.** — Գիւղ Սիրասախոյ՝ 8 ժամ հեռու արեւելակողմը, 80 տուն հայ կայ. ունին Ս. Սարգիս եկեղեցի՝ և Պարթևեան անուամբ վարժարան մը:

**ԵԱՐՄՋԱՆ.** — Հայաբնակ գիւղ Արցախի Ռաի Առանձնակ գաւառի, Թարթուս գետի

աջ կողմը, Սէյսուլան գիւղի մօտ: Ունի 55 բնակիչ, բաժնուած 11 տան. երկիրը բերրի է:

**ԵԱՐՓՈՒԶ.** — Գիւղ Զէյթունէ 10 ժամու ճանապարհ և Լըպիստանէ 3 ժամու ճանապարհ հեռու: Ունի 70 տուն հայ և բազմաթիւ մահմեդական բնակիչներ: Հայք ունին եկեղեցի և վարժարան՝ 60 աշակերտներով:

**ԵԱՐՓՈՒԶԱՌՈՒ.** — Այլազգարնակ գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի, Զաղալուէն 4-5 վերսահեաւ հեռու: Ի հնումն կը կոչուէր Գաղձակոց, մէջը կայ տեւրակ եկեղեցի՝ խաչքարերով շրջապատած:

**ԵԱՐՓՈՒԶԱՌՈՒ.** — Սիւնեաց մէջ, Մարեանոցայ գետն այլազգիներէ այսպէս կը կոչուի, վերոյիշեալ գիւղի անուամբ:

**ԵԱԻՐԻ ԽՈՒԹ.** Տես ԵՆՐՒԱՋՈՐ:

**ԵԱՅԱ.** Տես ՅՈՊՊԼ:

**ԵՅՈՒՐԻՆԻ.** — Գիւղ Պոթուշանի (Ռուսմանի), 2 ժամու ճանապարհ հեռու: Այժմ բնակչաց մէջ կան միայն 2 տուն հայ: Գիւղս սեպհականութիւն է խաչերես աղայի Մանուկեանց:

**ԵՎԵՐԱՍՏԱՆ կամ ԶԼԻՔԷԶԻ ԵՐԿԻՐ.** — Կաթիլաս լեռանց արեւմտեան ծայրը, Քուպան գետոյն ձախակողմը կը գտնուի այս երկիրը, որուն լեռներուն ու գաշակուն մէկ մասին մէջ բնակած են ժամանակաւ, գրեթէ ինքնազուտ, հայ բնակիչներ, որոնք յետոյ կառուցած են Կոր Արմախիր քաղաքը: Այս Հայոց վրայ Պ. Սարգիս Ղահրամանեան Յովհաննիսեան, սուսերէն զբոսածքէ մը քաղելով կարեւոր տեղեկութիւններ հրատարակեց 1856ին, Մասեաց Աղաւնիի մէջ, մենք ալ նոյնն կամփոփենք հետեւեալները: Այս Եղերասայք, կամ ինչպէս երեսը կ'ըսեն, Զէրքէզ-Հայք՝ կը պատմեն աւանդութեամբ թէ իրենց նախնիքը Խրիմէն, Տրապիզոնէն, Սինոպէն ու Տաճկաստանի ուրիշ նաւահանգիստներէն գացեր են հսն: Առկէց 250 տարի առաջ այն տեղերուն հայ վաճառականները առուտորի համար Զէրքէզի երկիրը երթալով ու գալով, լեւանական իշխաններուն հետ բարեկամացիք ու տեղական սովորութիւններուն վարժեր են և անոնց բոլոր վաճառականութիւնը Հայոց ձեռքը ան-



ցեր է: Կամայ կամայ այնչափ սիրելի ե-  
 գիր են Հայք Չէրքէզի իշխաններուն՝ որ զա-  
 նոնք իրենց երկրին մէջ բռնելու մարտով շատ  
 հայ երիտասարդներու իրենց ազջիկները  
 հարսնացուցեր են: Կոյն ժամանակները այն  
 կողմի Չէրքէզները զեռ մահաձեռական չէին,  
 այլ իրենց հաւաարքը բրիտաննէութենէ,  
 կոտորաշտութենէ ու մահաձեռականութենէ  
 ձեւացած խառնուրդ մ'էր: Տրապիզոնի ու  
 Սինոպի Հայերէն շատ մարդիկ, վերջն ալ  
 խորթն շատ հարուստ անձինք, լսելով թէ  
 Չէրքէզի երկիրը գնացող Հայք մեծ հանգըս-  
 տութեան ու պատառայ մէջ են, հեազհեաէ  
 հան անցան սեղաւորուեցան: Շատ սիրով  
 բնուօնուեցան Չէրքէզներէն ու փեսայացան  
 անոնց, բայց այս պայմանով որ իրենց հար-  
 սերն ալ մկրտուին բրիտաննեայ բլլան, և  
 Չէրքէզ իշխանները ամենեւին չխառնուին ի-  
 րենց կրօնական պաշտամանց: Չէրքէզներն  
 ալ խօսք տուին որ ոչ միայն Հայոց աւ-  
 տուածպաշտութեանը արդիւր չբլլան, այլ  
 և թող տան որ բազաբական ինդիւրները ու  
 դասաստաններն ալ Հայք իրենց մէջ որո-  
 շեն, ու իրենք զիրենք ուզածնուն պէս կա-  
 սալարեն: Այնուհեակ Հայք համարձակ  
 ցրուեցան լիոնականաց զիսկերուն մէջ, խնա-  
 մութիւն բրին անոնց հեա ու բանի գնացին  
 շաացան, այնպէս որ շատ զիսկերու բնակ-  
 շաց մեծ մասը հայ եղաւ, և ամէն մէկ  
 զիսկի մէջ եղած Հայոց զլխաւորը Երեցփո-  
 խակ կ'ըսուէր, երբեմն ալ Թաճատա: Երէց-  
 փոխան բուսելուն պատճառն այս էր որ  
 Հայք այն կողմերը սեղաւորուած ասեննին  
 չէին կրնար միշտ հեաերնին բահանայ  
 ունենալ. բահանայն մէկ զիսկին հպեւոր  
 պիտայքը հողալէ վերջ մէկալին կ'երթար,  
 և իր սեղը փոխանորդ կը գնէր ժողովրդեան  
 հաւնած մէկ անձը, որ դասաստանները կը  
 կարէր, և երբեմն եկեղեցական պաշտամունք  
 անգամ կը կատարէր: Չէրքէզները Հայոց  
 գեճագ՝ այսինքն ինչ անունը կու տային,  
 որ իրենց մէջ բարեկամ լսելու չափ գորու-  
 թիւն անի, և յիրաւի հիւրասիրութիւնը  
 Չէրքէզաց համար սրբազան պարաք մ'է:  
 Հայք անոնց հիւրասիրութեան ուժովը ա-  
 մենեւին ներքին կամ արտաքին թշնամի-  
 ներէ վախ չանէին: Չէրքէզ իշխանները բիշ

ասենն իրենց հայ հիւրերուն Էջօղտէն՝ այս-  
 ինքն ազնուական լսելու պատիւն ալ տուին,  
 ասով Հայք ևս իրաւունք ունեցան զերիներ  
 ունենալու, և մինչև յիսուն անուար զերի  
 ունեցող Հայեր կային մէջերին, բայց այս  
 պատճառաւ իրենց բազաբական ազատու-  
 թիւնը բիշ մը պակեցաւ, վասն զի գերի-  
 ները երբեմն գանդաա կ'ընէին նոյն սեղի  
 Չէրքէզ իշխանին իրենց աէրերուն զեմ. իշ-  
 խանն ալ եթէ գաժան մարդ հանդիպէր, շատ  
 նեղութիւն կու տար աէրերուն: Հայք Խրի-  
 մէն և Թաճանէն կ'անցընէին Չէրքէզներուն  
 երկիրը գանազան սեաակ վաճառքներ ու  
 ձեռագործներ, և մանաւանդ աղ ու երկա-  
 թեղէն. իսկ ասոնց փոխարէն ոչ միայն  
 մարթ, կաշի, ձի, ոչխար, մեղր, մսմ և  
 ասոնց նման բերքեր կ'աննէին անոնցմէ,  
 այլ երբեմն նաև մանչ ու ազջիկ պատա-  
 նինե՝ գորս կը տանէին ծախելու Խրիմու  
 թաթար խաներուն: — Ասկէց զրեթէ 150  
 տարի տաջ, երբ Տաճկաստանէն մահաձե-  
 տական բարոզիչներ գնացին Չէրքէզներու  
 երկիրը և շատ մարդ սրնացին, սկսաւ  
 Հայոց խաղաղութիւնն վրդովիլ, որովհեաև  
 Չէրքէզները սկսան Հայոց վրայ ծուռ նայիլ,  
 ու անոնց բրիտաննէութիւնը աչքերնուն փուշ  
 եղաւ: Պեղկրատի գաշնաղբութեան ասեն՝  
 1739ին, Կապարթայի բնակիչները որ Ռու-  
 սի աէրութեան հպատակ ճանչցուած էին,  
 որոշուեցաւ որ ինքնաղլուխ բլլան, անով  
 մահաձեռականութիւնը աւելի գորացաւ Չէր-  
 քէզներու մէջ: Հայք ի սկզբան հաստատուն  
 մնացին իրենց կրօնքին վրայ. բայց սրով-  
 հեաև մինչև այն ժամանակները Չէրքէզնե-  
 րու մէջ ցրուած կը կենային, վասնզ կար  
 որ իրենց հայրենի հաւաարքը ձեռքերնէն եր-  
 թայ, ուտաի սկսան իրարու հեա խօսք գնել  
 որ հեոանան Եգերաց երկրէն: — Կրօնն թէ  
 նոյն ժամանակները Աթաճըխ-Էյթէր անու-  
 նով Չէրքէզ իշխանին մէկը խորհուրդ տուաւ  
 Հայոց որ ամէնքը մէկաեղ ժողովուին ու ի  
 միասին բնակին, սեղ մը ևս որոշեց երկրին  
 մէջ Շահվաշէ գեախն մօա, որ հոն հաստատեն  
 բնակութիւննին: Հայք բաժնուելով լիոնա-  
 կան Չէրքէզներէն սկսան զալ բնակիլ այն  
 որոշուած սեղերը, որով շուտ մը երեք  
 մեծամեծ տաններ և բանի մը մանր զիւ-



ղեր ձեռացան: Նոյն միջոցին խրվէն և ապա Էջմիածնէն մէկ մէկ այցելու վարդապետներ եկան Եզերասայոց հոգևոր պիտոյքը հսկալու: Արդարեմանց Յովսէփ արքեպիսկոպոսն, շատ անգամ բաճանայ գրկից ընտանական Հայոց, և երբ 1781ին խրվում Հայք Նոր Նախիջևեան փոխապրուեցան, առաջարկուեցաւ նաև Չէրքէզի Հայոց որ եթէ կ'ուզեն Ռուսաստան անցնին: Երկրորդ անգամ ևս նոյն առաջարկն եղաւ բայց միայն հինգ ընտանիք փոխապրուեցան, իսկ միւսները տեղերնին մնացին, որովհետև իրենց Չէրքէզ կանայք չէին ուզած հայրենիքնին թողալ:

Անցեալ դարու սկիզբները բանի մը հայ ընտանիք Շէյխ Մանուուր անունով սուա մարզարէին խօսքերուն հաւատալով տաճկացան և գնացին բնակեցան Անափա քաղաքը: Այնուհետև ընտանական իշխանները ամէն ջանք բրած են որ բաճանայ շերթայ Հայոց, որով ստիպուին տաճկանայու: Ռուսաց և Օսմանեանց մէջ 1828-29ին եղած պատերազմներէն վերջ, Սև ծովուն եզերքը Ռուսաց ձեռքն անցնելով, Չէրքէզներու և Հայոց վաճառականութիւնն ալ ծովու կողմէն կրտրեցաւ, և Հայք սկսան կովկասի հիւսիսային կողմը գանուոյ Ռուսաց դատաներուն հետ առուուր բնել: Չէրքէզները այնուհետև սաստիկ հալածանք հանեցին Հայոց գէմ, ձեռքերնէն շատ ազատութիւններ առին, իրենց գերիներու կարգը անցուցին, շատ մարդ մեռացին և շատեր ալ ընտներու ներսի կողմերը բռնեցին: Իսկոճ Հայերը գիմեցին 1838ին Ռուսաց Չաս զօրապետին և անոր պաշտպանութեամբ գիմեցին Ռուսաց սահմանին մօտ անտաններու մէջ վրաններով բնակեցան հինգ հարիւր անուորէ տելի: Չաս զօրապետը տէրութեան ծախքով եկեղեցի մը շինեց և յարպրեց Հայոց որ անոր քով հաստատուն բնակարաններ շինեն և քաղաք մը ձեռացնեն: Չէրքէզները 1841ին յարձակեցան Հայոց վրայ, աներնին այրեցին, կողոպտեցին, բանի մը հողի մեռուցին և շատեր ալ գերի տարին. բայց Հայք ասով ալ չլուսահաւեցան. Ռուսաց տէրութենէն և Ռուսահայերէն ստակ ընդունելով իրենց քաղաքը շինեցին և անուոր գրին Նոր Ար-

մաւր՝ զոր նկարագրած ենք ի կարգին: — Մասնաց Արաբի, Բ. 319-323:

ԵՊԻՊՏՈՍ, ՄՍԲ. ԳՂ. EGYPTE. — Ափրիկէի ամենէն ծանօթ և ամենէն նշանաւոր աշխարհ, մասնաւորապէս հին հայտնապ շինուածոց պատճառաւ, որոնք անթիւ են: Խիստ հին ժամանակներէ սկսեալ Հայք վերաբերութիւն ունեցած են Եգիպտոսի հետ, որուն հինուուրց և անեղծանելի արձանագրութեանց մէջ, գիտուններէն ոմանք զըռջմուած կը համարին ազգիս անունը Արմենէն: Արտահետ և պատմական դարուց սկիզբէն ի վեր միշտ բարգաւաճ եղած է Եգիպտոս իրեն այլ և այլ քաղաքներով և շահաստաններով, մեր ազգն ալ նոյն ժամանակներէն սկսեալ անընդհատ վաճառականական յարաբերութեան մէջ եղած է: Միջին դարուց մէջ Հայոց գաղթականութիւն սկսեր է ձեռնալ սոտ և կամաց կամաց բազմանալ. ԺՊ դարուն հազարաւոր հայտուններ կային, երբ մեր մեծ Վիպաւսէրը Գրիգոր՝ իրենց այցելութիւն բրաւ և իւր բեռորդին անունց հովիւ կարգեց: Նոյն ժամանակ և վերջն ալ երկար տարիներ հազարապետ և գրեթէ տէրութեան վարիչն էր հայազգի ոմն Պեար-էր-Ճեմալ, ինչպէս նաև ուրիշներ՝ ԺԲ դարու մէջ: Նոյն դարուն Հայք հաճութեամբ Սալահէտային Գլխայիններու ձեռքէն առին իրենց կրկին եկեղեցիները՝ զորս անունք գրաւած էին. անտարակոյս այդ միջոց Հայոց վաճառականութիւնն ալ լաւ վիճակի մէջ էր: Թէպէտև ԺԳ-ԺԳ դարուց մէջ շատ անգամներ հակառակութիւններ եղան Եգիպտոսի սուլթանաց և մեր կիրիկիոյ թագաւորաց մէջ, բայց հաշտութեան ժամանակ վաճառականութեան պաշտակցութիւն ունէին: Կիրիկիոյ գլխաւոր վաճառքի նիւթն էր երկրին երկաթը, որուն հին ժամանակի փարաւունները ևս կը փափագէին: Իսկ յաջորդ դարուց մէջ և Շահ Աբասի ժամանակ զեռ տելի զարգացած է Հայոց վաճառականութիւնը, ինչպէս ուրիշ աշխարհաց, նոյնպէս և Եգիպտոսի հետ: Յիշելու ենք նաև, որ ԺԱ-ԺԲ դարուց հանդոյն մեր ժամանակներն ևս, Եգիպտական տէրութեան յառաջադէմ պաշտօնականեր և հազարապետներ եղած են և կան տակաւին Հայեր, մասնաւանդ Անգղիոյ Եգիպտոս մասնա-




լէն անաջ: Եգիպտոսի զլիաւոր քաղաքներն այժմ են Աղեքսանդրիա և Գազիրէ, որոնց նկարագիրը իրենց կարգին բրած չլինելով, կը գնենք ահա ասա:

ALEXANDRIE (Alexandrie) քաղաքն հռոմային զատակերտն է Մեծին Աղեքսանդրի, որուն ուրիշ ձեռակերտները շատով անհետացան, բայց սա կայ և կը մնայ իր գրից պատճառաւ, որ կը գարձընէ զինքը կեդրոն միջնորդութեան և յարարութեան Ափրիկէի, Եւրոպոյ և Ասիոյ: Հիմնարկութեան անմիջապէս վերջ, Միջերկրականի և բոլոր ծովոց անհամեմատ և անգիծազրելի գլխոյն եղաւ, ոչ միայն յաջորդելով աշխարհի հնագոյն նաւագնաց աղբին մեծահաշակ մայրաքաղաքին Տիրոսի, այլ և գորեղապէս մրցելով Կարբեղոսի հետ: Աղեքսանդրիա միայն վաճառականութեամբ և հարստութեամբ շտիրեց Միջերկրականի, այլ նաև քաղաքակրթութեամբ, ուսմամբ, գիտութեամբ և արուեստիբ, որոնց միակ վառարանն եղաւ՝ իր մէջ ամբողջելով և լաւ կերպով փայլեցնելով բնիկ եգիպտական, Աղեքսանդրի բանակաց ետեւէն յորոզ յունական, և այլ երկուքի հետ խառնուող պարսկական քաղաքակրթութիւնն՝ երեքին բազմազան երեսփնեթովն և վառ ու յոսի կողմերովն: քաղաքակրթութիւն մը՝ որ Աղեքսանդրեան կրնայ կոչուիլ, ինչպէս զարն իրօք Աղեքսանդրեան կոչուեցաւ: Աղեքսանդրիա այդ ժամանակներն իր փասաց գազաթը կը գտնուէր, բաւ որում իւր մէջ ձուլուած էին Մեմփիս և Թերապիս, Ալեքսիս ու Կարբեղոս: Քաղաքս միշտ կարեոր գիրք մտնեցաւ: մինչև փրիչական 640 թուականը, երբ նուաճուեցաւ Արաբացիներէն Ալիու զօրավարի ձեռքով՝ որ արարական մեծ արշաւանաց երեք դիւցազներէն մին է: Երբ Ալիու Աղեքսանդրիոյ տիրեց, մէջը 4000 պալատ, 4000 բազմիք և 400 թատրոն կային. ասոնցմէ կարելի է ենթադրել նաև բնակչաց թիւը: Կ. Պոլսի Հերակլ կայսրը, լսելով քաղաքիս կորուստը, սրտին ցաւէն մեռաւ: Աղեքսանդրիոյ կորուստն էր միանգամայն կորուստ Բիւզանդեան իշխանութեան ներքոյ եղած բոլոր Ափրիկէի գաւառաց. Աղեքսան-

դրիոյ տէրը, տէր էր և Եգիպտոսի: Այսպէս եղաւ Մեծին Նաբոլէոնի օրով, այսպէս և 1882ին, երբ անգլիական բանակը անարգել մտաւ յԵգիպտոս՝ Աղեքսանդրիան սրբախոծելով գրաւելէն անմիջապէս ետքը: — Երկու գարէ տելի էր, որ Պարսիկները կը տիրէին բուրգիբը շինուցաց աշխարհին, երբ Մակեդոնացի աշխարհակալն Յ31ին (Ն. Ք.) իւր ազատարար Եգիպտացիներէն ընդունուեցաւ: Պարսիկները բնութեամբ կը նեղէին զԵգիպտացիս և անոնց կրօնքը կ'արհամարհէին: Աղեքսանդր անոնց կրօնից և օրինաց նկատմամբ շատ ազատութիւններ շնորհեց և հիմնեց իւրանուն քաղաքս: Աղեքսանդրիա թէպէտ համաշխարհական վաճառականութեամբ հարստացուց Եգիպտոսը, բայց պատճառ եղաւ Մեմփիսի և ուրիշ նշանաւոր քաղաքաց անկման: Աղեքսանդրի մահէն (Յ23էն) սկսեալ մայրաքաղաք եղաւ իւր այս ձեռակերտը, անոր աշխարհածաւալ պետութեան բեկորներէ կազմուած նախ բազմաթիւ, ապա երեքի յանգած այն երեք պետութիւններէն միայն, որ Պաղոմեան անուամբ ծանօթ է և որ աւելի երկար տեւեց քան միւս երկուքը, Մակեդոնականը ու Սելեւկեանը, և վերջացաւ հազիւ Յ1ին (Ն. Ք.): Պաղոմեան նախկին երեք թագաւորները, հայր, որդի և թոռն, Պաղոմէոս Սոսեր, Փիլապիկոս և Եւերգիսէս անուամբ, որոնք իշխեցին յաջորդաբար զրեթէ 100 տարի, աշխարհի սակաւաթիւ միապետներէն են. անոնց օրով Եգիպտոս հասաւ բարգաւաճութեան, պայծառութեան վերջին ժայր, մտաւորական՝ գիտական՝ արուեստական ու բարոյական առաւելտով: Ասոնց ժամանակ կառուցուած է Փարոսի տիեզերահոշոյն նաւորգաց լուսատու աշաարակն՝ որ աշխարհիս եօթն հրաշալիաց մին կը համարուէր. նոյնպէս ասոնց օրով Կարմիր ծովը միացաւ Միջերկրականի հետ՝ միջնորդութեամբ Նեղոսի: Այդ ջրանցքն Եգիպտոսի նախկին փարաւաններէն Նեքաւով սկսած էր նախ փորել տալ, որ Գարեհ Վշտասպեան պարսիկ աշխարհակալը շարունակեց, բայց կարծելով թէ Կարմիր ծով Եգիպտոսէն աւելի բարձր լինելով պիտի սղոզէ ձգեց, իսկ Պաղոմէոս Փիլապիկոս գիտնալով այդ երկիւղին ան-



Հիմն լինելը՝ աւարտեց, որ թէև ներկայ ջրանցքին նման կանոնաւոր գիւրութիւն մը չէր բնծայեր, բայց ժամանակին պիտոյից և նաւուց կը բաւէր: Պաղտմեան մեծագործութեանց արգասեաց մին է նաև Ազգերանդրեան գրատան հաստատութիւնն, որուն մէջ 700 հազար գիրք զեւեղուած էր, երբ ոչ թուղթ և ոչ տպագրութիւն կար, այլ ստապիրոս կամ մագաղաթ և ձեռաց մատանք կը տեսնէին այդ գործեր. հստ գրուեցաւ նաև



262. Ազգերամղորդոյ Հայոց Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին:

Էջօթանանից թարգմանութեամբ Աստուածաշունչը: Այն ժամանակները ոչ մի գիտան կամ խմատուէր առանց այս գրատունն այցելելու չէր կրնար հեղինակութիւն մը լինել: Նախ Յուլիոս կեսարու արշաւանաց ժամանակ (48 Ն. Ք.) հրդեհ մը գրատանն կէտր լափեց և վերստին նորոգուեցաւ: Յետոյ, ըստ սմանց, Արարացոց նուաճման ժամանակ Ամրու զօրաւորը հարցուցած լինի Էսմէր Ամիրապետին թէ ինչ ընելու է մատենադարանին գրքերը, և

նա պէտք է այրել ըսեր, որով Ազգերանդրեայ բազմիքներն այնուհետև վեց ամիս միայն գիրք վաւեր են: Սակայն, ըստ այլոց և աւելի հմտաց, Մեծին թէոզոս կայսեր ժամանակ (378-395 Յ. Ք.) Ազգերանդրեայ մէջ սակաւին կանգուն էր Սերուպիան հինաւորաց մեհեանն, ուր երբեմն Ապիս եզր կը պաշտուէր: Քրիստոնեայք նախանձայրագութեամբ կործանել կ'ուզէին զայն, բարձրը և իրենց կուսակիցք կը զխմարեն, կոխը կը մեծնայ. կայսրը խմանալով կը հրամայէ զինու զօրութեամբ վանել ընդ զիմութիւնը և կործանել: Նոյն ժամանակ, կ'ըսեն, Սերուպիոնին հետ կը կործանի նաև գրատունն՝ որ անոր մօտն է եզեր և կ'այրաւին գրքերը իբրև ներկայացուցիչը հեթանոսութեան և մուրեքեցուցիչը բրիտաննէութեան: Բայց ճիշդ է թէ Ամրու ևս գրքեր այրեց բազաբլիս մէջ, սակայն անոնք նոր գրուած և գրուած էին հստ բրիտաննէական սցով և գրչով: — Երբք Պաղտմեանց յաջորդները ամէն տեսակ մուլութեամբ լի էին, մանաւանդ յաջորդական կամ ժառանգական ինչորոց համար: Այնուհետև անուանապէս անկախ, բայց իրապէս Հռոմէացիաց հրամանով կը կատարուէր Պաղտմեան տէրութիւնը, մինչև որ վերջապէս կործանեցաւ Ակաիոնի ճակատամարտով, կղէտպարսթագուհւոյն օրով: Այս վաստուէր կղէտպարսթան, որ Պաղտմեանց վերջին ժառանգն և զաւ, զիտատել տուաւ մեր Ա Արտաւազը որ և իրեն որդոց ու ազգականաց ալ չէր ինայած: Հռոմէացիաց տիրապետութեամբ կորաւ Ազգերանդրեայ և Եգիպտոսի կեանքը: Ի վերջո, Արարացիք գրաւելով գԳահիրէ հիմնեցին, հետեւապէս Ազգերանդրեա երկրորդական քաղաք դարձաւ, պահելով միայն իւր ծովային առաւելութիւնն:


Այժմ Ազգերանդրեա, Միջերկրականի եզերքը՝ Նեղոսի անցքէն մօտ 12000 բայլ հետու, Գահիրէէն վերջ, Ափրիկէի մեծագոյն քաղաքն է, բայց զեղեցկութեամբ ու ճախութեամբ զերազանց քան զնա, և թէպէտ ափրիկեան հողի վրայ, բայց ամենայն մասամբ երրօրական քաղաք մ'է: Երկայնատարած ու լայնարձակ փողոցները, յատուկաց ամենամաքուր սալարկութիւնն, տանց



պաշտամանն շինուածքն և սքանչելատեանի շքեղութիւնն, կրկնակ նաւահանգստին անհամար նաւերով և անտառախիտ կայմերով ծածկուելին, առեւարական մեծ շարժումն, բանուկ ձոխ վաճառանոցն՝ ուր ամբարուած կան աշխարհիս ամէն վաճառք, Նեղոսի ձեռագործ ջրանցքին բնթերակայութիւն, յորմէ կ'ընդունի խմելու և գործածելու ջուրն անհաստալի առատութեամբ, Գահիրէի հեռ միացնող երկաթուղին՝ որ անդադար մարդ ու իր կը փոխադրէ, հազարաւոր կառքերն որ զիշեր ու ցերեկ կը շոտաչեն հարթայաւակ սալարկներու վրայ, զիշերային լուսաւորութիւնն, զբոսարանաց՝ խաղատանց՝ թատրանաց՝ սրճարանաց ու զինտանց յաճախութիւնն, որոնք զրեթէ զիշերներն ալ բաց են մինչև առաւօտ, աշխարհի ամէն մասանց հեռ հեռագրական ու շղկնաւական հազարակցութիւնը, բխրաւոր երեսպացոց տեղաբնակութիւնը և հազարաւորաց յաճախական այցելութիւնըն, այլ և անհամար սեռ ու ճերմակ, ասխալի ու ափրիկեցի բնակչաց եռալ ու զեռալն և անոնց զանազան լեզուներու ու բարբառոց խժալուր ու ներգաշնակ խոսնուորը, և ամէն բանէ աւելի քաղաքական կանոնաւոր ու ապահով վարչութիւնն զԱղեքսանդրիա հռչակաւոր կ'ընեն: Բնակիչք մօտ 320000 կը հաշուին: Ասիէ 16 տարի առաջ Հայոց թիւը 400ը չէր անցնէր, իսկ այժմ՝ 3000ի կը մօտենայ:

Քաղաքիս արեւելակողմը կառուցուած է Հայոց եկեղեցին՝ 1884 թուականին. այս թուականէն առաջ եկեղեցական արարողութիւնը կը կատարէին այժմեան եկեղեցոյ շուրջը տարածուող պարսէլի տան մը մէջ, որ ժամանակաւ սեպհականութիւն էր Պօղոս Պէյ Երուստֆեանի: Երբ Պօղոս Պէյ 1844 թուին մեռաւ և թաղուեցաւ եկեղեցոյ տեղ ծառայող շէնքին մօտ, յաջորդ տարին իրեն ազգականներէն մէկը Երուստֆ Պէյ՝ Զմիւռնիայէն գալով աճուրդի հանեց հանդուցելոյն բոլոր կալուածները, որոնց մէջ էր նաև եկեղեցոյ շուրջը տարածուող 18-20 արատաւար երկիրը, ուր կը հանդէսէր Պօղոս Պէյ և ուր կը գտնուէր Հայոց առժամանակեայ եկեղեցին: Երուստֆ Պէյ անշուշտ այդ շէնքը և Պօղոս Պէյի գերեզմանը պիտի գա-

տէր և մնացած գետինը պիտի ծախէր: Բայց խախտ Մուհամմէա Ալի Փաշան՝ չուզեց որ իւր սիրեցեալ եպարքոսին գերեզմանին շրջակաները օտարաց սեպհականութիւն գտնան, ուստի ինքն ալ աճուրդին մասնակցելով աճեանաբարձր զինը վճարեց և ամբողջ գետինը Հայոց նուիրեց: Եկեղեցին կառուցուած է ազգին զբամով և հանդուցեալ թաղուր փաշայ Յակոբեանի նախաձեռնութեամբը, որ նոյն տան թագական խորհրդոյ տանապետն էր: Կուրուած է յանուն Ս. Պօղոս Պետրոսի՝ ի յիշատակ հանդուցեալ Պօղոս Պէյի: Եկեղեցիս տարեկան մօտաւորապէս 1500 անդ. սովի հաստատուն եկամուտ ունի: — 1800 թուին կատարուած բրիտանէից կոտորածէն



263. Աղեքսանդրիոյ Հայ ուղղափառաց եկեղեցին:

վերջ, Գահիրէի հայ ուղղափառներէն տմանք եկած հաստատուած են քաղաքս, որոնք մինչև 1890 թուականը առանձին եկեղեցի չունենալով, Լատինաց եկեղեցոյն մէջ կը կատարէին իրենց հոգեւոր պէտքերը: 1890ին Գեր. Ազշէհիրլեան Բանարաս եպիսկոպոսի ջանքով ունեցան գեղեցիկ առաջնորդարան մը և մասուտ մը՝ նուիրուած Ս. Աւստուածածեի Անարատ Յրաբեան: Այս մասարան փոքրութեան պատճառաւ հարկ եղաւ 1894ին փլցընել զայն և տեղը կառուցանել այժմեան եկեղեցին, որ զրեթէ 20 մետր երկայնութիւն և 12մ. լայնութիւն ունի: Եկեղեցոյս շինութեան համար, նոյն հայ հասարակութիւնէն ազնուաշուքն խալիլ խալիսթ Փաշայ տուած է 35000 ֆրանկ: Եի-



նախնին աւարտելէ վերջ, նոյն տոնին վաշան և եղբայրն՝ Նասրի Պէյ, խնամքով զարգարեցին զայն վայելուչ կերպով, և 1895 տարույ մարտ 24ին կատարուեցաւ մեծ հանդիսով անոր օծութիւնը: — Քաղաքիս Հայք ունին մէկ մանչ աղայոց ու մէկ աղջրկանց նախակրթարան. երկուսն երախայից

են, և աւրութեան զանազան պաշտօններու զբախ կեցած: Փոքր թուով վաճառականներ են, և մասնաւորապէս ծխախոտի գործը անոնց ձեռքն է. արհեստներու մէջ սակերչութիւնը ի հնուց ծաղկած է Հայոց ձեռքը. կան նաև ուրիշ զանազան զասակարգի արհեստաւորներ: Վերջին հայ գաղթականու-



264. Խալիլ Խայաթ Փաշայ:

համար ունին նաև մանկապարտէզ մը: Աշակերտաց համապատման է 210, կէսը մանչ, կէսը աղջիկ. տարեկան եկամուտն է 700 անգլ. սօկի: Հայկական վարժարանն ալ Պօղոս Պէյի շնորհիւ հաստատուած է. բաւական բնօրրձակ շէնք մ'է՛ յատուկ գասարաններու բաժնուած: Աղեքսանդրիոյ Հայք, ի հնուց բարձր զիրք մը ունեցած

թիւնն (մեծ մասամբ Պոլսէն) ի վեր, վաճառատանց և զբամատանց պաշտօնեաներ, մեծ թուով բանուորներ, կոշիկակարներ, զերձակներ, և այլն, աւելցած են: Գափաֆառեան մէջ կեստարացի Հայք հնուց ի վեր մեծ տեղ զբաւած են: — Աղեքսանդրիոյ մէջ հաստատուած բնիկ թաւաացի Բակոր էֆ. Ալբրեան, կենդանութեան միջոց, բազաքիս



մէջ իրեն սեպհական 7 կալուածոց տարեկան հասուցին (մօտ 2000 լիբա) 100ին 58 մասը կտակած է ազգային այլ և այլ հաստատութեանց համար, եղիպտական Ճեյրիի Մանքեակի մէջ արձանագրել տալով ըստ օրինի, հետեւեալ բաժանմամբ. 100ին 5՝ Երուսաղեմայ վանքի ժառանգաւորաց վարժարանին. 100ին 5՝ Կ. Պոլսի Ս. Փրբիչեան հիտանդանոցի. 100ին 3՝ Կեսարիոյ թաղաս աւանի մէջ իւր անունը կրող օրիորդաց վարժարանին. 100ին 3՝ Կեսարիոյ Ս. Կարապետ վանքի վարժարանին. 100ին 2՝ Աղեքանդրիոյ Հայոց վարժարանի ազբատ ուսանողաց. իսկ 100ին 40ը պիտի գործածուի կալուածոց գնման, և երբ 15000 անգլիական լիբա լինի գնուած կամ շինուած կալուածոց արժէքն, անոնց հասուցով Հայաստանի մէջ արուեստից վարժարան մը պիտի բացուի 3000 լիբա ծախքով, և 2000 լիբա ալ պիտի գործածուի Հայաստանի մէջ եկեղեցական հաստատութեան մը համար: — Քաղաքիս մէջ հաստատուող նշանաւոր ազգայիններէն ընդ Չմիւսնիացի Կարապետ էֆ. Յակոբեան 1887ի հոկտ. 13ին մասնաւոր հանդիսով կատարուեցաւ և մարմինը խափին հրամանաւ թաղուեցաւ եկեղեցոյն պարտիզին հին գերեզմանատան մէջ: Ասոր ետբայրը ևս թաղուոր Փաշայ 1888ի օգոստ. 7ին կնքելով մահկանացուն, նոյնպէս խափին հրամանաւ մեծ հանդիսով թաղուեցաւ նոյն գերեզմանատան մէջ: Սա 5000 սոկեոց գումար մը կտակած է Չմիւսնիոյ մէջ օրիորդական դպրոցի մը հաստատութեան համար, պայմանաւ որ այս գումարը շահու գրուի իրեն կտակակատար Երուսաղի և որդւոյն Պօղոս Փաշայի ձեռամբ, մինչև որ շափահաս լինի իրեն Լեւոն Պէյ որդին և գործադրէ հօրը կամքը: Վարժարանը պիտի կոչուի Գարուհեան իրեն վախճանած գտեր անուամբ: Հայկական կրկին՝ հին և նոր գերեզմանատաններ կան քաղաքիս մէջ: Հինն՝ որ բազմաթիւ ծառերով և զմբէթայարի մահարձաններով զարդարուած է, եկեղեցոյն մօտ է և ունի զրեթէ 1<sup>1/2</sup> արտափար ընդարձակութիւն: Գերեզմանատանս մտից ալ կողմը մարմարեայ քարի մը վրայ հետեւեալ ար-

ձանագրութիւնը կայ. « Յիշեցիք գնդի մեծաւուն Եւստաֆեան Պօղոս Պէյի Զմիւսնացոյ բարերարին Ազգի և Երբի ի Տէր նակզուցեոյ նամայն բարեպաշտ ընտանեացն: 31 յեկտ. 1888 »: Հին գերեզմանատունը առաջ փոքր էր և վերջը պարտիզէն մաս մը աւելցուցին. ստոր յիշատակարանը կը տեսնուի մտից ձախ կողմը. « Երոզ շինեալ գերեզմանատունս միացաւ ընդ նախնայն, արպեամբք և ծախիւք ազգային եկամտից ի



265. Աղեքանդրիոյ Հայոց Առաջնորդարանը և Վարժարանը:

նոցարարձութեան վսեմ. Եւստաղ Փաշայի և վերակացութեանը նորին գործակատարի »: Եւստաֆեան Պօղոս Պէյի գերեզմանն կը գտնուի եկեղեցոյն ձախակողմը համակ մարմարիտեայ և զմթացի զմբէթաձև կամարի մը ներքև: Մահարձանի վարի կողմի ձախալին վրայ՝ ուսման, հանձարի, արհեստի և վաճառականութեան վերաբերեալ պատկերներ քանդակուած են. վերի կողմն թագ և կշիռ, որոնց վրայ կը կենան խաչ և Սիրա Ս. Կուսին Մարիամու արձանով. աջ կողմը արևողգեցիկ հրեշտակ մը, իսկ ձախ կողմը



ստիորը ձեռքը գլխիկը կոյս մը: Մահար-  
 ձանիս ձախ կողմը հետեւեալ արձանագիրը  
 կայ. «Ո՛վ նոցի պզգասեր, Պօղոս Եռուստ-  
 ֆեւան, որ գմայրև Հայաստան և զերսս նա-  
 ռագասս ի սոչ տարածամ բոցեալ վերա-  
 ցար. Հայոց 29 ղեկտեւեր 1843. գայս  
 յաւերթ յիշատակ շնաշխարհիկ նանձարոյ  
 ի քոյիկոյ դաստակերտ տաճար տերունեան  
 յազգակցացոյ սիրոյն ընկալ և նակցիր. Յրան-  
 կաց 10 յունվար 1844»: Այս արձանա-  
 գրութեան մէջտեղը գաղղիերէն ևս գրուած  
 է: Պօղոս Պէյի ղերեզմանին զէմ՝ զէս յա-  
 բնմուտս, խարթումի կառավարիչ Առաքել  
 Պէյ Եռուարի ղերեզմանը կայ շորջանակի  
 վանդակապատ. այս ղերեզմանի փառաւոր  
 և հոյակապ մահարձանն՝ որ քառակուսի ձև  
 մ՝ունի, հինգ աստիճան կը բարձրանայ  
 ձիւնափայլ մարմարինններով. մահարձանին  
 զազաղաձև շորս անիլունները մարդակերպ  
 շորս առիճներ նստած են. զազաղին կա-  
 փարչին վրայ երկայն խաչ մը տարածուած  
 է, և խաչին ներքեւէն մտա Յմ. Լայն և Կմ.  
 երկայնութեամբ սաւան մը ձգուած է, որուն  
 ծայրերը այնպէս սքանչելարուեստ ձարսա-  
 րութեամբ գրուագրուած են, որ սոցիտակ կատի  
 մը բնական ղիբքը կը ներկայացընեն. մա-  
 հարձանին զլիսի կողմը իբր 8 տարեկան  
 աղիկ մը նստած է ձեռնամած և գլխիկը,  
 շապիկն երկուքի բաժնուած, սիրար բաց,  
 որունքնները մերկ և զլուխը գտակ մը: Գրե-  
 թէ 1000 սակի ծախք եղած է այս մահ-  
 արձանին համար. վրան հետեւեալ տա-  
 պանագիրը կայ. «Առաքել Պէյ Եռուար  
 ձեւեալ ի Զմիւռեխա 27 ղեկտ. 1826 ամի.  
 կուսակալ Սեւասարի և խարրուսի, վախձանե-  
 ցաւ ի խարրուս 13 սեպ. 1858 ամի. յիշե-  
 ցեք յարօրս»: Այս տապանագրին ներքև նոյն  
 խմատով գաղղիերէն ևս գրուած է: Եռու-  
 պար Փաշայ Եռուարեանի գամբարանն ալ  
 այս հանդատարանի մէջ կը գտնուի: Իսկ եր-  
 կրորդ և նոր ղերեզմանատունը քաղաքին հա-  
 բնակողմը կրպար-շարդի կոչուած տեղն է,  
 մտա 17000 մետր տեղ, որ առաջնորդ Տ.  
 Մերսոյ արքեպիսկոպոսի միջնորդութեամբ  
 շնորհուած է խախլէն, քաղաքին մէջ մեռել  
 թաղելն արդիւրած ժամանակ:

Աղեքսանդրիա՝ իբրև արիւրիկեան երկիր

բնականարար ունի յատուկ կլիմայ. կը բե-  
 րէ սոսկալիթիար բոյսեր, առնկեր և պատու-  
 ներ՝ ոչ շատ աստա: Քաղաքին մէջ կը  
 շրջարերին ոչ միայն բնիկ եղիպական  
 գրամն, այլ և բոլոր ծանօթ ազգաց գրամներ:  
 Տիրող պաշտօնական լեզուն թէև արաբերէն  
 է, բայց հաւատար և աւելի կը գործածուին  
 կարեւորութեան կարգաւ յունարէն, իտա-  
 լերէն, գաղղիերէն և անգլիերէն: Կրօնական  
 տեսութեամբ ևս կարեւորութիւն ունի Աղեք-  
 սանդրիա, վասն զի Մարիսս Աւետարանչին  
 ղերեզմանն ունի և է Ալթոս Խոփաի Էկեղեց-  
 ւոյն. Յոյնք ևս ունին իրենց շորս պատրիար-  
 քական Աթոսներէն մին. Լատինք ևս ունին  
 եպիսկոպոսական Ալթոս. իսկ մեր կրկին հայ  
 հասարակութեան համար ալ առաջնորդա-  
 կան երկրորդ կամ հաւատար բնակավայրն  
 է հանդոյն կամ յետ Գաշիլէի: Քաղաքին  
 կեդրոնական հրապարակին մէջ, որ արա-  
 բերէն Մեկէյե կը կոչուի, կանգնուած է  
 Մէհմէա Ալի Փաշայի արտուէ վիթխարի ար-  
 ձանը՝ ձիւս վրայ նստած: Այս հրապարա-  
 կը բարէ սիւնակներով և երկաթեայ շղթա-  
 ներով շրջապատուած է. քաղաքին ամենէն  
 բանուկ տեղն է, որուն շորս կողմը կը բարձ-  
 րանան ղեղեցիկ շէնքեր և որ ղիշեր ու  
 ցերեկ կը գրօնու ժողովուրդը:

ԳԱԶԻՐԵ (Le Caire) մայրաքաղաք է Է-  
 ղիպատոսի խախթութեան, ունի 580000 բնա-  
 կիչ: Կառուցուած է Ենեդոսէն քիչ հեռու աջ՝  
 կամ արևելեան կողմը. Աղեքսանդրիայէն  
 ձեղքնթաց կառախարով 4 ժամու ճանապարհ  
 հեռու է ղէպի հարաւային արևելքը: Քաղաքս  
 հեղհեաէ մեծցած, բնդարձակած ու ղե-  
 ղեցիկացած է. ունի ոչ սակաւ Լայն ու կա-  
 նանաւոր պողոտաներ, որոնց ղրեթէ իւրա-  
 քանչիւրին ծայրը կան փոքրիկ հրապարակ-  
 ներ, ամէնքն ալ իրենց աւազանով շրջապա-  
 տուած ծառերով. հրապարակները բաժնուած  
 են ծառուղիներու: Աղնուական թաղերու մէջ  
 մասնաւորաց բնակարանները փառաւոր տեղք  
 ունին, որ եւրոպական և արաբական ճար-  
 տարապետութիւնք միմեանց հետ կը մրցին.  
 հանրային շէնքերն ընդարձակ ու ղեղեցիկ  
 են: Ապտինի պալատան ուր կը բնակի խախթն,  
 հսկայ շէնք մ՝է, համանուն հրապարակին  
 վրայ կառուցուած. արաբքին տեսքը թէև



պարզ ու միօրինակ է, սակայն հրաշալի են ներքին ճոխությունները: Կարծես թէ՛ բազալքիս մէջ եկած միացած են արեւելք և արեւմուտք, բարուց՝ սովորութեանց և տեսարանաց ներդաշնակ խառնուրդ մը կազմելով: Սքանչելի է Շուպրան ծառազարդ շքեղ ազին. նշանաւոր են Էօզոփէրիյէ և Խամախիյէ թաղերն՝ որ կը պարզեն գեղեցկաշէն ապարանաց ու զարդարուն պարտիզաց երկար շարք մը. նշանաւոր է Թեփիփիյէ թաղն, որ կը տեսնուին բնաշէնի վա-

հաստատուած ճիւղէի կամուրջը՝ բազալքին ու անապատին միութեան զիծ մ'է. մէկ կողմը կը պարզուի Գահիրէ՝ իւր բոլոր ճարտարարուեստ շքեղութեամբք, և միւս կողմը ծառուղի մը՝ լայն ու հսկայուն, որ կը տարածուի գետոյն երկայնութեամբ բաւական տեղ, և յետոյ կիսաբուրգակ մը կազմելով կը յանդի մեծատարած գաշտօրէկց անհուն անապատին, ուր կը գտնուին բարագերը: Նեղոսի միւս կողմը, ծառուղիներէն բիշ մը հեռու, եզերաց երկայնութեան վը-



266. Գահիրէի ընդհանուր տեսարանը:

ճառատունք, մեծ մասն սինագարդ գաւիթներով ու պաշտօնատներով, կան փառաւոր զրօսալայրք, թատրոններ և իջեւաններ՝ որոնց մեծագոյնն ունի 200է աւելի սենեակ ու պաակառակի տներ: Գահիրէ բազալքին հին մասերը նորին հակապատկերն են, ուր կը բնակին բնիկք, արարներու բնակարանները հաս բնոջանրատէս կիսախուշ հիւպակներ են, հոգէ կամ գէշ թրծուած ազիւսէ շինուած. կարգութեան տէր եզոզներուն աները ունին մինչև երեք յարկ, և գաւիթներ՝ տեղ տեղ փանաթիզներնրով ծածկուած: Նեղոսի վրայ


րայ, փոքրիկ սիրուն տապաւարներ կան՝ պարտիզակներով զարդարուած և սարսիլաններով ծածկուած: Հանդիպակաց եզերքին վրայ կը բարձրանայ Փասար-էլ-Նիլ կոչուած հոյակապ զօրանոցը, որուն հիմունքը ջրի մէջ միտուած են, զօրանոցիս զանազան կողմերը կ'երեւին ցիրուցան բնակարաններ և հեռուն ծառազարդ կղզեակ մը: Փազալքիս մէջ կան հարիւրաւոր մզկիթներ, մեծ մասն՝ այժմ աւերակ, ամենահոյակապն է Մուհամմէա Ալլիի մզկիթն, բազալքին արեւելահարաւային կողմը բերդի շրջապատին մէջ: Բերդը իւր ամբակուս շի-



նուածով և ընդարձակութեամբ նշանաւոր է, որուն շրջափակին մէջ կը գտնուի նաև Յովսեփայ ջրհորն, նեղ ու մամուսպատ ճանապարհով մը. ահագին քարաժայռի մը մէջ փորուած է 300 սոքէն աւելի խորութեամբ. աեղ աեղ ունի պատուհանի ձեւով բացուածքներ. միին ու խոնար յատակը կ'իջցուի քարէ ուրրասպառոյտ աստիճաններով: Կեղտոսի ափանց մօտ կառուցուած է Պուլքի թանգարանը, որ միայրի, պարզ ու անշուք շէնք մ'է, բայց կը պարունակէ ապակեւոր դարակներու մէջ աշխարհի նշանաւորագոյն հնութիւնները. սրոշեալ օրեր կը բացուի հասարակութեան համար. բոսնի չափ սրահներէ կը բաղկանայ, յորս ճաշակաւոր կերպով զետեղուած են թանկագին առարկաները՝ փոքրագունն սկսեալ մինչև մեծամեծները, իրենց թիւերով և յիշատակութեամբ. դրամներ՝ ամէն դարուց, անօթներ, զէնքեր, մետաղներ, զարդարանք՝ անական և կանացի, սպասներ, հանդերձեղէնք, անցած ժամանակաց սովորոյթները ու բարբերը ներկայացնող հազարաւոր յիշատակներ: Գարակներէն վերջ կու գան արձանները՝ մարմարէ, կրանիտէ և ոսկիէ. հոշակաւոր մուսիաներ՝ որոնք կը ներկայացնեն հազարաւոր տարի առաջ ախրապետող աշխարհակալներէն զամանս, իրենց խսկական մարմնով անեղձ մնացած: Վեհմաշուք Պօղոս Պէյ Եւուսեֆեան՝ 1825 թուին վեհակոյ Ս. Ղազարու վանաց Միսիթարեան Միարանութեան նուիրեց եգիպտական հնագոյն մուսիայ մը, որ Եւրոպիոյ մուսէսներու մէջ գտնուածներէն լաւագոյն պահուածը համարուած է:

Պատմութիւնը և զանազան յիշատակարաններ կը յայտնեն թէ ի հնուսն քաղաքիս մէջ Հայոց մեծ գաղթականութիւն մը կար, սակայն ասոնց թիւն նուազած է զբլլաւորարար անցեալ դարու սկիզբը եղած մեծ սրածուրթեան պատճառաւ: Մուհամմէտ Ալիէն ասդին հայ գաղթականութեան նոր հոսանք մը սկսած է. բայց զեւ 12 տարի առաջ Գահիրէի և շրջակայից մէջ հագլու 1000 Հայք կը գտնուէին: Գլխաւորարար կ. Պուլի 1896ի զէպրերուս հետեւանքով մեծ յաւելումս կրեց այդ թիւը և այսօր նոյն շրջանակին մէջ

3000է աւելի Հայք կը հաշուուին: Հին և նոր գաղթականաց մէջ մեծամասնութիւն կը կազմեն Պալեստինացիք, Կիսարացիք, Արարկիացիք և Վանեցիք: Անցեալ դարու մէջ շատ թուով Հայք պետական ծառայութեանց մէջ գտնուած են, իբր նախարար, նախարարապետ, նախարարութեան խորհրդական, գատաւոր, և այլն, որոնցմէ սմանք այժմ ևս պաշտօնի վրայ են: Պօղոս Պէյ Եւուսեֆեան և Եուպար Փաշայ Եուպարեան, երկուքն




267. Եգիպտական մուսիայ Ս. Ղազարու:

ալ Զմիւռնիացի, կրնան իրաւամբ համարուիլ Եգիպտոսի վերանորոգիչները: Հայոց մեծ մասը անցելոյն մէջ եղած է սեղանաւոր, բայց այժմ բիշ է անոնց թիւը և կան կալուածատէրներ, փաստաբաններ, բժիշկներ, վաճառականներ, արուեստաւորներ, ևն.: Հայք ունին երկու եկեղեցի, մին Ս. Սարգիս՝ 1749ին շինուած է կամ վերաշինուած տան մը վերնայարիը և այժմ լքուած է. երկրորդն որ է մայր եկեղեցին կառուցուած է 1839ին: Եուպար Փաշայի նախարարապետութեան



օրով և իրեն միջնորդութեան շնորհիւ, կառավարութեան կողմանէ 1000 ֆէտատան հող նուիրեցաւ եկեղեցւոյս, ինչպէս նաև 500 ֆէտատան՝ Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյն: Աղեքսանդրիոյ ազգային երեսօններէն Թագուր Փաշայ Յակոբեան, 1888ին, 2000 լիրայի չափ ծախք ընելով

ընդմանատունը, ուր զամբարանք մեծ խնամքով ու մաքրութեամբ կը պահուին: Ս. Միլասի մատարան մօտ է Խփախներու եկեղեցին: Գաճիրէի Հայք 1870ին հաստատուին Բարեգործական ընկերութիւն մը՝ որ Էջմպէի լիբանոնի բազմաշէն թաղին մէջ գեղեցիկ զրօտարան մ'ունի. շահուն 100ին՝ 25ր՝



268. Նուպար Փաշայ Նուպարեան:

նորոգել տուաւ Ս. Աստուածածին եկեղեցին, հոգեւանք, գերեզմանատունը և Ս. Միլասի մատուռն՝ որ յուշարկաւորութեան և հոգեհանգստեան պաշտամանց յատկացուած է: Քաղաքիս մէկ կողմը կը գտնուի լեռնանման հողակոյս մը՝ Քօմ-էլ-Արակ անուամբ, որ կը նշանակէ Հայոց բաղ, զանազի հնումն հսն են եղեր Հայոց տուները. այս տեղւոյն ծայրն է հայկական ընդարձակ գե-

րարեգործութեան, և 75ր՝ բաժանորդաց յատկացուած է: Ընկերութիւնս՝ 1887ին, երբ Պ. Սաևփան Միքայէլեան յեթովպիա կուգետրէր, զիր մը յանձնեց անոր աս Մէնէլիք Բ թագաւորը սուղոյցուած, և թագաւոր՝ որ համակիր է Հայոց ազգին, գիրն ընդունելով, 1900 Քրանկի արժողութեամբ 30 եթովպական ոսկի նուիրեց ընկերութեան՝ յիշեալ պալանի միջոցով, հանդերձ ընկերու



Թեան նպատակը ջառագոյնը պատասխանազորով մը: Եւոյն Մէնէլիք թագաւորը՝ 1891ին, արքայական հրովարտելով արծաթեայ խաչ մը զրկեց Եգիպտոսի Հայոց (նախկին) առաջնորդ Գեղ. Իզմիրլեան Տ. Մատթէոս եպիսկոպոսին, և պատուանշան մը՝ Գահիրէի ազգայիններէն Կարապետեան Պօղոս Էֆէնտի: Գաղաքիս հայ գաղթականներէն վանեցի Գալստեան Կարապետ ազա կառուցած է Խորէնեան երկսեռ վարժարանն ազգային գեանի մը վրայ, և նոյն վարժարանին պահպանութեան և աղքատաց նպատի համար, կտակաւ Ազգին թողած է երեք ազարակ իրենց շէնքերով և հազարաւոր արմաւենիներով և Աղեքսանդրիոյ մէջ Մահմուտիէլ գետակին վրայ երկու տուն՝ հանդերձ պարտիօք: Հայոց յիշեալ վարժարանը՝ որ Գալստեան ևս կը կոչուի, կառուցուած է եկեղեցւոյ մօտ, ունի մօտ 140 երկսեռ աշակերտներ. հոս ընդունեալն կ'ուսանին հայերէն, արաբերէն, անգլիերէն և ֆրանսերէն: Կարապետ ազա Գալստեան՝ մանկութեան հասակին եկած է Գահիրէ, ուր և մետեր է 1864 տարւոյ ապրիլ 8ին, և ունի յատուկ շիրիմ՝ ազգային զերեզմանատան մէջ:

Գահիրէի մէջ ի հնուց կան եղեր ուղղափառ Հայեր, որոնք 1734 թուականէն սկսեալ կը կազմեն եղեր զատ հասարակութիւն մը, լատին բարոզաց պաշտպանութեան ներքեւ, ունեցեր են շատ անգամ ևս առանձին հայ քահանայ: 1837 թուին քաղաքիս մէջ կը գտնուի եղեր, ըստ արձանագրութեանց, Կիպրացի Յակոբբոս առնուն վարդապետ մը, որ Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ մատարան մը մէջ կը կատարէ եղեր աստուածային պաշտամունք, մկրտութեան և պսակի խորհուրդները. իսկ ննջեցեալները կը թաղեն եղեր լատինաց զերեզմանատունը: Մինչև 1800 թուականը՝ քաղաքիս հայ ուղղափառք 30 բնասնիք կը հաշուուին, որոնց հօգեւոր պիտոյքը հոգալու համար Լիբանանու կաթողիկոսները զրկած են շարունակարար քահանաներ: 1832ին Սեբովրէ վ. Այրապետի և Ահարոնեան Պետրոս վարդապետի ձեռքով Սանաճըզ կոչուած տեղը՝ Հին Եգիպտոսի մէջ, երկու կտոր երկիր գներ են ուր և կառուցեր են Տիրա-

մօր Կուսի անուամբ մատուռ մը: Արտաքին գործոց և վաճառականութեան նախարար Աբթին Պէյի արժանընտիր որդին Յակոբ Աբթին Փաշայ իւր առաքինի ամուսնոյն հետ 1898 թուին, մատարան մօտ գտնուող հայ ուղղափառաց զերեզմանատունը ընդարձակեցին և ծառեր անկելով զեղեցիկ տեսք մը տուին: Մասուս ցարդ կը մնայ խարխուղ վիճակի մէջ, զոր մտադիր է Մեծ. Յակոբ Աբթին Փաշայ նորոգելու և վայելչապէս զեղեցեացնելու: Մահմուտ Ալիի օրով հայ ուղղափառք հին Եգիպտոսն թողով, սկսեր են խմբովին գալ բնակիլ ի Գահիրէ, ուր և Ահարոնեան Պետրոս վարդապետի անխնջ ջանիւք կառուցած են եկեղեցի մը Ս. Գրիգոր Լուսաւորչի՝ որուն օծումն կատարեր են 1841 թուին Ս. Կուսի վերափոխման տօնին օրը: Եկեղեցիս շինուած է կամարակապ, աւագ խորանը նուիրուած է Ս. Գրիգորի, ունի նաև ուրիշ չորս խորաններ, երկուքը գատէն վար. երկայնութիւնն է 25 մետր, լայնութիւնը 12մ. իսկ բարձրութիւնը 18մ.: Եկեղեցւոյս գաւիթն մեծ և ընդարձակ է, որուն հարաւային կողմը շինուած է առաջնորդարանը եօթն խուցերով: 1849էն Եգիպտոսի հայ ուղղափառք սկսեր են ունենալ յատուկ եպիսկոպոս՝ որուն աթոռն հաստատուած է քաղաքիս մէջ: 1868ին Ս. Գրիգորի կամարակապ եկեղեցին երկրաշարժէ միասուելով, վերստին շիներ են, առաստաղը ամրոջջապէս փայտաշէն ընելով: Եգիպտոսի ընդհանուր հայ ուղղափառաց թիւն կը հաշուուի 2000 հոգի 230-50 տուն. որոնք մեծ մասամբ կը բնակին Գահիրէի և Աղեքսանդրիոյ մէջ: — Հայք ի հնումն Եգիպտոսի մէջ հրատարակած են Արմաւենի և Երզնս անուն թերթերը, առաջինը Գահիրէի մէջ 1865ին և երկրորդը Աղեքսանդրիոյ մէջ 1889ին, սակայն երկուքն ալ կարճ կեանք մը ունեցած են: Վերջին գաղթականութեան շնորհիւ Եգիպտոսի հայ թերթերուն թիւն սկսաւ շատնալ, որոնցմէ ներկայիս կը հրատարակուին Գահիրէի մէջ Արշարյուս, Փարոս, Երբ Օր, Արտեմիս. իսկ Աղեքսանդրիոյ մէջ Փիլեիկ:

Գահիրէէ քանի մը միսն հետու գեղպի արեւելեան հարաւ, Էյ-Պօսրան կամ Էյ-Պե-



սարին կոչուած բնդարձակ այդեստանին յարակից հայ վանք մը կար երբեմն Ս. Յակոբ անուամբ: Այս վանքին հիմնարկութեան ժամանակն անծանօթ է. վերաշինութիւնն եղած է ժՄ. զարու վերջին քատրդի մէջ, յորում Գրիգոր Վիայասէր կաթողիկոսը՝ որ 1065ին գահակալած և 1105ին վախճանած է, սրբոց վիայարանութիւններ հաւաքելու և թարգմանելու համար Բիւզանդիոն գացած և անկէ Պաղեստին երթալու ատեն, նաևն փոթորիկ բնուեր և Վիայասէրն սախպուեր է Էջիպատս ելնել՝ հաւանարար 1076 թուին: Այս վանքն՝ որ գոյութիւն ունէր մինչև ՃԳ. զարու սկիզբները, Էջիպատսի Մուսթանգիր վեհապետի (1036-1094) Պետր-էլ-Ճէմալ կամ Էմիր-էլ-Ճիւլաշ-Պետր կոչուած հայազգի պաշտօնակալին կալուածն էր, և անոր ամսական 10 սակի զահեկան տուրք կը վճարէր: Պետր-էլ-Ճէմալ՝ որ նոյն ատեն վրացի էր, օժանդակած է վանաց շինութեան, որ կը կատարուէր նախաձեռնութեամբ Գրիգորի Վիայասիրի, որուն համար վարդան պատմիչ կը գրէ, թէ եկաւ «ի Մսր, և մեծարեցաւ յոյժ ի սուրբանէն, և շինեաց վանս Հայոց, և ձեռնադրեաց զեղբօրորդի իւր Գրիգորէս՝ և պիտկոպոս»: Գրիգորիս եպիսկոպոսի յաջորդեր է Անանիա եպիսկոպոս, և 1140ին սպանուեր է Զուհրիի վանքին մէջ: Ս. Յակոբայ վանքն ու տաճարը՝ որ ունէր բարձրաբերձ գմբէթ կամ կաթողիկէ, կամարակապ շինուածք և մեծամեծ դռներ, ամայացեր է 1168ին, երբ Սալահէէտաին սիրեր է այդ կողմանց: Էլ-Շէյխ Ապու-Սալհ-էլ-Էլբէնի կամ Աբուսահլ անուն հայ կրօնաւոր մը՝ որ յէջիպատս ապրած է ՃԳ. զարու սկիզբները, թողած է արարերէն գրուած պատմութիւն մը, որ կը խօսի Էջիպատսի վանքերուն ու և կեղեցիներուն վրայ: Այդ գրքի ձեռագիր մէկ օրինակն գտնուեցաւ ՃԻ. զարու վերջերն, և հրատարակուեցաւ Անգլիոյ Օքսֆորտ քաղաքը՝ անգղիերէն թարգմանութեամբ հանդերձ, յորմէ և մերս Մեծ. Հ. Ալիշան՝ թարգմանարար գրքոյի մը հրատարակեց ինքնազիր յաւելուածներով 1895ին, Արաւսանց հայ վերնագրով: Այդ պատմիչը կը գրէ թէ «Սալահէէտաինի տիրապետութեան

ատեն ապոնագներ եկան Էջիպատս բնակողաց վրայ. Հայոց պատրիարքը և կրօնաւորները հանուեցան Ս. Յակոբայ վանքէն, անոր դռները գոցուեցան և ոչ ոք կը համարձակէր մօտենալու ամայացած եկեղեցիներուն»: Այս վանքի տաճարին մօտ՝ Պետր-էլ-Ճէմալ շինած էր արիշ եկեղեցի մ'ալ, որ սպա թաղուած է իւր մարմինն: Ս. Յակոբայ վանքէն արտաքուտած պատրիարքին և կրօնաւորաց վրայ արդահատելով Գամասկոցի գիտնական արար մը՝ Էլ-Ֆապի-էլ-Պահա-Ալի անուն իրեն սեպհա-կանութիւնն եղող վերայիշեալ այդեստանն անոնց արամագրութեան ներքե կրեր կամ նսիրեր է Ս. Յովնանեոս Մկրտչի եկեղեցին, որ շինուած էր Հարա-Չաւիլա թաղին մէջ Տիրամօր կուսի եկեղեցոյն վրայ. նոյն պատրիարքը քանի մը տարի ընակեր է սոյն եկեղեցոյ մէջ, որուն յարակից Ս. կուսի (Էլ-Ասորա) եկեղեցին ցարդ կը մնայ հնութեան յայտնի նշաններով: Հայոց պատրիարք ըսուածը, 1172ին իւր սեղը փոխանորդ կարգելով քահանայ մը, գացեր է Երուսաղէմ, հետը տանելով 75 հատ Ս. Գիրք, որոնց հետ գրչապիր ընտիր Աեհաարան մը՝ պատկերազարդ՝ զանազան գոյներով ու սակելով նկարուած, որ՝ կը կարծուի թէ կիլիկիայէն բերուած բլլայ Գրիգոր Վիայասիրի ձեռքով: Այս պատրիարքին վրայ, որուն անունը անծանօթ է, պատմիչը տեղեկութիւն կու տայ, թէ նախ եպիսկոպոս էր Գահիրէի հարաւակողմը գտնուող Աթֆիհ փոքր քաղաքին, ժամանակին վեհապետ Էլ-Խուսամ-Հաֆրդ-Մանսուրի (1130-1149) սիրելի էր և անոր շնորհիւ՝ Էջիպատսի Հայոց պատրիարք եղած է: Ընդհանուր հասակ. տեղեկ էր Ս. Գրոց, յաջող մեկնիչ և գիտուն պատմագէտ. շարաթը երկու օր վեհապետի Գասր-էլ-Չիմրիւս կոչուած պալատը կ'երթար ներկայ կը գտնուէր Էմիրներու և մեծամեծ պաշտօնատարաց ժողովին. տօնական օրերը կը մասնակցէր շնորհաւորական արարողութեանց, և շատ անգամ մասնաւորապէս ընդունուելով վեհապետէն՝ Էջիպատսի վրայ պատմական նորագիւտ ծանօթութիւններ կը հազարդէր: Այս








պիսիոսոսի փոյթեանդն աշխատութեամբ, և կրօնասէր ու առատաձեռն ժողովրդեան սրոյ արգեամբք, և մասնաւորապէս Մ. Ղազար Տասեանի՝ որ 1000 օամ. սօկի առած է: Միխիթարեան Տ. Խորէն եպիսկոպոսի առջնորդութեան ժամանակ ևս ազգային հաստատութիւններ վարդարուած են նորոգութիւններով ու յաւելումներով: Քաղաքին արեւմտակողմը <sup>1</sup>/<sub>4</sub> ժամու ճանապարհ հեռու Ս. Սարգսի վանաց մէջ ալ նոր շի-

զանէն բանի մը բայլ հեռու ազգային պանդոկ մը շինուեցաւ, որ աարին 180-200 զազգիական սօկի հասոյթ կը բերէ: Տ. Խորէն եպիսկոպոսը ջուրի համար ալ շատ աշխատեցաւ և հազարաւոր լիւրաներ հայթհայթելով գործը յաջողցուց: Եպիսկոպ հիւսիսային արեւմտեան մասը Թրքիոսեր կոչուած բլրակի մը գաւիթայրին վրայ շինուած լինելով, գետար էր ջրհորներ պեղել, ուստի այս բլրակի համանուն թաղի



269. Եղեւիոյ ընդհանուր տեսարանը:

նութիւններ եղան Միխիթարեանի ջանքով, վանքի գաւիթն և մէջի սենեակները որ անշուք ու անկերպարան վիճակ մ'ունէին, վերցուեցան և անոնց տեղ փառաւոր շէնքեր կառուցուեցան: Այս վանքի հիմնարկութեան թուականը տակաւին անյայտ է. կ'ուսանդուի թէ Թաղէսու առաքեալ հիմնած է, և կ'ըստի թէ Արգարու թագաւորութեան տակն զոյսութիւն ունեցեր է: Քաղաքին հիւսիսային կողմը Սամաւր գաւիտար կոչուած

բրիտանեայ և սչ բրիտանեայ բնակիչները անջրտեմնէ ազատեց, բազաբէն 2 ժամու ճանապարհ հեռու Թաւաւա-Սիքի կոչուած տեղը եղած ջուրը բերել տալով այս թաղի մէջ, ինչպէս նաև Ս. Աստուածածնի եկեղեցւոյ գաւիթի մէջ: Վերջին գէպքերուն Հայք մեծ կորուստներ և անթիւ գոհեր ունեցան: Եկեղեցւոյ գաւիթն մէջ է ազգային վարժարանն, որ կ'ուսանին 475 աղջիկ և 665 մանչ աշակերտներ: Կոյ նաև ազգային



սրբանոց մը Ս. Սարգսի վանքին մէջ հաստատուած, և ունի 66 սրբեր: Ասոնցմէ զատ հայ Լուսաւորչականաց մօտ 450 աշակերաներ՝ մանչ և աղջիկ, կը յաճախեն քաղաքին Կաթուղիէ Հայոց, Հայ Բողոքականաց և մասնաւոր անձի մը զպրօցներ: — Եղեւիոյ մէջ կան նաև Հայ Կաթուղիէ և Հայ Բողոքական հասարակութիւնք, որոնց ճիշտ թիւն չգիտենք: Կաթուղիէ Հայք ունին իրենց յատուկ եկեղեցի և 6 տարրական դպրոցներ մօտ 350 աշակերտներով: Բողոքական Հայք ևս ունին ժողովարան և տարրական դպրոց, ժողովարանը կը գտնուի Թրքիտերի հայաբնակ թաղին մէջ բլրոյ մը ստորոտը. թէ՛ արաքուստ և թէ՛ ներքուստ գեղանի զիրք մ'ունի՝ հիմնուած հաստատուն սինեկաց վրայ, և ունի արուեստաշէն գմբէթ մը՝ զարդարուն զանգակատնով: — Տեղւոյս կլիմայն բարեխառն է. ձմեռը շատ կ'անձրեւէ: Շէնքերը քարուկիր են, և մեծ մասը ճարտարապետական հին ոճով կառուցուած: Վաճառականութիւնը Բերիացի զաղթականք իւրացուցած են. տարեկան առ նուազն 400 հազար լիրայի արտածուած ապրանքները՝ բուրդ, խոզ, շուշմայ, ցորեն, ոչխար, ձի, և այլն, անոնք կ'անեն կը զրկեն Արարիս և Էւրոպանոյնպէս անոնց ձեռքով կու գայ ու կը սպասի ներմուծուած ապրանքն ալ: Նշանաւոր են քաղաքին Պոյաձի և Պասմաձի արհեստաւորք, մեծ մասն հայ. հազարաւոր ընտանիք կ'ապրին այս արհեստներով, և կանայք ու օրիորդք ալ կը մասնակցին. սպառնոյն և կարմիր կտաւը մինչև Գամասիոս կ'երթայ, Բերիոյ մէջ շատ կ'սպասի, Ի Կ. Պոլիս ալ բաւական կը զրկուի անկողնոյ, վերմակի, բարձի, վարագուրի, և այլն, համար: Այժմ թէ՛ այս և թէ՛ ուրիշ արհեստներ ևս կամաց կամաց կ'ոչնչանան. արհեստաւորք չքաւորութեան կը մասնուին և ազքատութիւնը կը ծանրանայ Հայոց վրայ: — Քաղաքին հարաւարեւելեան դաշտերը կը տարածուին մինչև Պաղատա. ձմեռնային և զանակի մէջ, գրեթէ բոլոր գիւղացի խաշնարածները իրենց հօտերը կը տանին այս ընդարձակագոյն դաշտին խորք, որուն բարեխառն կլիմայն և արօտները շատ կը յար-

մարին դուարաբայծներու գործին և կը նպաստեն անասնոց արագ պարարտացման:

Քաղաքին ազգայիններէն մին 1888ին վրանարեակ արաբէ մը գնել է կնիք մը. զանազան առարկութիւններով Պետրոս առաքելոյն գործածած կնիքն համարելով զայն՝ հնագիտաց ուշադրութիւնն հրաւիրեց: — Կը պատմուի թէ Սուլթան Մուրատ Գ Ի Միջագետ ուղևորած ատեն, Թոփճըօղլու մահանուամբ հայ գերդաստանի մը գլուխը, անոր անցնելիք ճանապարհին վրայ, գրեթէ մէկ ժամուտակ երկայնութեամբ, մինչև քաղաքս զիտակ կը փռէ, և հանգիստաւ անցքէն վերջը հասարակութեան աւար կը թուգու գիտակը և արժանաւայել կոչուէր մը կու տայ վեհապետին. երբ Սուլթանն ըստ աւանդական սովորութեան նախնի թագաւորաց, կ'առաջարկէ հայ երեւելոյն՝ իրմէ շնորհ մը ինչպէս, սա կը յայտնէ թէ անձնական բան մը չի ինչպէր, այլ անոր ուշադրութիւնը կը հրաւիրէ Հայոց Ս. Աստուածածին մայր եկեղեցւոյն վրայ, որ շատ մօտ գտնուող մզկիթին պաշտօնէից և յաճախորդաց կողմանէ զանազան նեղութիւն ու հաւածանք կը կրէ եզեր: Սուլթանը քննել տալով և տեսնելով որ Հայոց եկեղեցին հիմնարկուած է մզկիթէն շատ առաջ, կը հրամայէ մզկիթը անկէց վերցնել, որ կը գտնուէր եկեղեցւոյ գաւթին արեւմտեան հարաւային անկեան զիմաց. այժմ այն մըզկիթին տեղ հաստատուած են հայկական տներ, որոնցմէ իբրև իւզագին տարեկան թեթեւ տուրք մը կը վճարուի ցարդ ուրիշ մզկիթի մը: Կը պատմուի նաև, թէ Ս. Սարգսի վանոց վանահայրն ևս, Մուրատ Գ վանքին մօտէն անցնելու ատեն, ճանապարհին վրայ հարիւրաւոր ոչխարներ զոհել կու տայ, և ինքնակալը գոհ լինելով, յատուկ հրովարտական ազատ կ'ընէ վանքը ոչխարաց և ուրիշ տուրքերէ: Այս հրովարտակը և ուրիշ կարեւոր հրովարտակներ և յիշատակագրեր, կը սրահուին եկեղեցւոյն մատարան մէջ: 1889ին քաղաքին հիւսիսային պարբային զիմաց, նոր շինութեանց առթիւ, գետնին մէջ թագուած այր մը յայտնուեցաւ, որուն յատակը գտնուեցան գոյնզգոյն բարեկներով սքանչելապէս ձուլուած երեք կարգ



պատկերներ, որոնցմէ կարելի է գաղափար առնուլ Հին դարերու զգեստուց և այլ հանգամանաց վրայ: Առաջին կարգը՝ անսական պատկեր մը, երկու կողմը ունենալով երկու կին և երկու մանուկ, երկրորդ կարգը՝ երկու արք և երեք կանայք, երրորդ կարգը՝ երեք արք և երկու կանայք: Պատկերաց քաղվէարէն արձանագրութիւններէն կը մահարերուի թէ այս այլը Քրիստոսէ առջ զամբարան մ'է և կը վերաբերի Պալայի և Ապրանի գերպատանաց: — Քաղաքիս Հիւսիսակողմը, 3-4 ժամու ճանապարհ հեռու գաշտավայրին մէջ, կայ Հին ու աւերած աւազան մը, որ երբեմն նշանուար ուխտասան զի էր, և Թագչես առաքելոյն ասնին օրը Հայք խնկով ու մոմով ուխտի կ'երթային, փոքրիկ դաւակնին ուսոց վրայ առած երեսնին խաշակնքելով՝ աւազանին մէջ կը լողային կամ լողանք կ'ընէին, և յետոյ մերձակայ ծառոց հովանույն ներքե կը զրօսնուին համեստութեամբ: Աւանդաբար կը պատմուի թէ Թագչես առաքեալ այս աւազանին մէջ մկրտած է քանի մը հազար հայ: Երբեմն երեք մեար խորութեամբ ջուր պարունակող աւազանս այժմ կէս մեար ջուր հազիւ ունի և ուխտագնացութիւնը դարձած են: Քաղաքիս վերի ծայրն է գով, քաղցր, առողջաբար և վճիռ ջրոյ լճակ մը, որուն երեք կողմերը զարդարուած են սոսիի, բարատիի և թթենիի ծառերով: Այս լճակի ափունքը ամասնային սօթազին աւուրց մէջ ժողովրդեան զրօսավայրն են: Գրեթէ խորանարդ աւազանի մը ձեւն ունի լճակս, շուրջը անկանոն կերպով շինուած քարափանց վրայ յաճախող բազմութեան զրօսանաց առակայն են ջրոյն մէջի ձկները, որ մարդոց բնակեցած՝ չեն վախնար, կը յափշտակեն մարդոց ձեռաց կերը ու կը փախչին, ոչ որ կը համարձակի որսալ այս բնասանի ձկները: Եզեռացիք, մանաւանդ երիտասարդները, հայ, թուրք և արաբ, այս լճակի մէջ կը լողան մրցմամբ զանազան ձեւերով: Այս լճակն՝ որ այժմ ծանօթ է Ան-զըյիսս անուամբ և ուրիշ մը որ Հայր Աբրահամ կը կոչուի, գեղեցիկ կերպով կը նկարագրէ Ծնորհալին՝ Եզիսիոյ ողբոց մէջ: Պատմական աշխարհագրութիւնը և ժողովրդ-

գական աւանդութիւնը կը հաւատան թէ Արգար թագաւորի գերեզմանը քաղաքիս հարաւային արեւմտեան կողմն երեք քառորդ ժամու ճանապարհ հեռու լեռանց ծայրն է: Յունիսի առաջին օրը, քաղաքիս Հայք, առտուն կանուխ ճամբայ կ'ընեն, ձորերէ՝ հովիտներէ ու կիրճերէ կ'անցնին, կը հասնին տափարակ վայր մը, որ կը կարծուի ըլլալ Արգարու ամարանոցի լեռնազաշան կամ ձիարշաի ասպարէզն, ուխտաւորք տեղւոյս արեւելակողմէն կը մտնեն և զէպ ի հարաւ կ'երթան, կիրճէ մը կ'անցնին և արեւմուտք կը գտնան, աջկողմը քարայր մը կը տեսնեն, որուն ներքին կողմը քառակուսի փառաւոր սրահի մը բարէ կամարները և վիմափոր ակոսներու հեաքերը վկայ են անոր Հին թագաւորի մը խորհրդարանը կամ բնակավայրն լինելուն, այժմ ամառը թուշոց բոյն և ձմեռը գնչու արարներու որջ եղած է: Ռիտաւորները այս սրահի առջեւի բնդարձակ գաշտավայրէն կը քաղին զէպի արեւմուտք, և կը մտնեն երկու բարբնկէց հեռու, ճակատն արեւելք նայող նկուղաձեւ բնդարձակ քարայր մը, որուն ներսը գրան մօտ կան Արգար թագաւորի գերեզմանին նշխարները, կ'ըսուի թէ Արգիու իշխանի գերեզմանն ալ այս տեղն է: Արգարու յիշատակը պահելու համար շատ անգամ հսկայ տապանաքարեր դրած են այդ գերեզմանին վրայ, բայց անգութ ձեռքեր միշտ կ'արասած են, երբ տակաւին տապանաքարն ամբողջ էր, հայ քահանայք՝ մեծ հանդիսով Պատարագ կը մատուցանէին հոս, բայց բաւական սարի է որ կրօնական պաշտամունք վերջացան: Ռիտաւորները գերեզմանի հեաքին վրայ Հայր մեր բնէն վերջ, կը հանգչին բնդարձակ քարանձաւաց ներքե գովապին տեղեր, թմբուկներու և փողի ձայները օդը կը թնդացնեն: — Եզեռայէն մէկ քառորդ ժամու ճանապարհ հեռու, Ս. Սարգիս վանքին արեւմտեան կողմը գտնուած բլրոյն հարաւային կողմքին վրայ կը գտնուի քրդերէ բնակուած Գրդ-Սարգարս (Քառասուն քարայր) կոչուած գիւղակն, որ հաւանականաբար՝ ի հնումն մասն էր վանքին շրջակայ Սարգստապոյիս անուն արուարձանին, որուն հետ թեանց հեաքերը, գրեթէ կը գտնուին ամէն



անգամ, երբ պեղումներ տեղի կ'ունենան: Նոյն գիւղակի արեւելեան կողմը՝ որ մերձաւորագոյն է վանքին, կայ զէպի հարաւ նայող մի թին ու նկուղածու բարայր մը՝ անյիշատակ ժամանակէ ի վեր սեպհականութիւն խելիքներ կոչուած աղբատիկ ընտանեաց մը. բայց 1889ին այս ընտանիքը թողուց զայն՝ սարափելով բանի մը երեսցիմներէ, որ տեղի ունեցեր են. բանի մը զիշեր երբ ճրագը մարեր են, բարայրին մերթ արեւելեան և մերթ արեւմտեան կողմէն բաւական խոշոր քարեր ուժգնութեամբ արձակուեր և գնացեր բազմեր են զխմացի պատերուն, առանց սակայն ընակչաց վնասելու. բանի մը անգամ ալ երբ կ'ընթերն եզեր, անբեւոյթ սգի մը գալով կերակրոյն մէկ մասը կը լափէ եղեր. և զիւղացիներէն ոմանք ասոնք լսելով և շհատաաւով՝ բանի մը զիշեր սկանառես եզեր են բարածգութեան: — Քաղաքին հարաւակողմը, բաւոր ժամ հեռու, Արգարու ամարանոցի լեռանց շղթայի վերջին օղակը կազմող բլրակի մը արեւելեան լանջքին վրայ՝ աւերակ մատրան մը բեկորներուն մէջ, չորս հատ անշուք բարերէ տապաններ կան, իւրաքանչիւր բարի վրայ հնգական խաչ փորուած. շատ տարիներ չեն, որ զեռ կանգուն էին մատրան որմերը: Նոյններէ 15րդ օրը քաղաքին Հայք ուխտի կու գան այստեղ, կանխապատրաստելով մատաղի համար աքաղաղ, լաւ ծեծուած՝ բայց չեփած միս, ձուար և այլն. երբ ուխտաւորաց բազմութիւնը կը հասնի, բահանայք «Եկեալ եմք ի տեղիս սրբոց վկայեց» շարականը կ'երգեն. ժամակոչը խունի կը ծխէ. ուխտաւորները իրենց մատաղները կը մտրվեն կէս մետր խոր և ՏԹ. արամաղիծ ունեցող փոսի մը մէջ գեղեմանաց վրայ, որոնց երեքին մէջ Գուրխասյ, Սամնասայ և Արիւայ սարկաւազ նահատակաց չարչարեալ մարմնոց նշխարները ամփոփուած են, և բաւ Եղեռացոց՝ Երեք Աղբար կը կոչուին: Թուրքն Աղբար—տաղը կ'անուանէ այս ուխտատեղին. խոկ անցած զարուց մէջ տարբեր անուն ունէր: Փրկչական 239 թուին, երբ քաղաքը Արգարէն սերած Զոհարայի իշխանութեան ներքեւ էր, Հոսովմայեցի Անտոնիոս զուրըր Գիտկեղեփանսս

ինքնակալի հրամանաւ Գուրխաս և Սամնաս անուն երկու բրիտանեայ չարչարեղէն վերջը, զիշեր առեն Եղիսիոյ հարաւային Ռոմանիա անուն գոնէն (այժմ Հատան գաւուար) հանելով գլխատել կու աայ Վերակիրոս կամ Փերեքակիրոս անուն չարչարանաց լեռան վրայ. հետեւեալ օրը բրիտանեայք անոնց մարմինները կ'ամփոփեն գերեզմանաց մէջ: Վեց տարի վերջը թըլսէ զիւրի (արդի թըրքմուսս անուն զիւրը) եկեղեցոյ Արիւայ սարկաւազը Անտոնիոսի յաջորդին հրամանաւ նոյն լեռան վրայ կ'ողջակիղի, և աճինը նախորդ երկուքին քով կ'ամփոփուի: Ասոնց քով կը լծաղուի նաև նոյն գարուն Եղեռիոյ Գոգնատ եպիսկոպոսը՝ Հոսովմայեցիներէն սպանուելով: Կրտսի թէ Զոհարայի մարմինն ալ աստ լծաղուած է: Մեծին կոստանդիանոսի հրամանաւ հոյսակապ եկեղեցի մը շինուած է այդ շիրմաց վրայ: Ըստ ոմանց՝ արդի Եկի Մագուռի միջազգային ուխտատեղին է այդ, որ կ'իշնայ Երեք Աղբար լեռան արեւմտեան հիւսիսային կողմը՝ բաւոր ժամու ճանապարհ հեռու:

Քաղաքին հարաւակողման Խառանագոնէն կէս ժամու ճանապարհ զէպի հարաւ, կայ Ս. Գաստառակ կամ Աղբիւր դաստառակի բուսած ուխտատեղին, և ասոր արեւմտեան կողմը 1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ հեռու բարձր լեռան մը գաղաթման վրայ Ս. Յակոբ Մծրեայ Հայրապետի վանուց աւերակները, որուն ընդարձակ տարածութեանէն, զեռ կանգուն մնացած բանի մը միջնայարկաց և մանաւանդ ներքնայարկաց երեսութէն կը մակարերուի թէ ի հնումն բազմութիւ վանականաց ընակալայր և զարգացած հաստատութիւն մ'էր: Թուրքը Տէր Եւագոս կ'անուանեն. զեռ անփուլ կը մնան երկու բարձրաբերձ բրգածեղէնք. կը կարծուի թէ արեւելակողմանը՝ տաճարին մնացորդ մէկ մասն է, որուն հիւսուարց թանձրախաւ ծեփին վրայ զեռ բանի մը տարի առաջ կը տեսնուէին սրբոց պատկերաց նշխարներ. խոկ արեւմտակողմանը՝ վանքին զանգակատունը կը կարծուի. ասոր վրայ բանի մը տարի առաջ լատիներէն հակիրճ արձանագրութիւն մը կար, որ կը յայտնէր թէ Աղբար չորրորդէն շի-



նուած է: Մեծն Արգարէ վերջ՝ Եղեւիոյ կուսակալութիւնը ստանձնողը՝ յաջորդարար անխտիր կը կրէին Արգար մակդիրը, որ Եղեւիոյ իշխանութեան պատուանունը դարձած էր: Այս մենաստանը՝ որուն սեղը կ'ըսուի թէ ի հնումն մեհնաստան էր, կառուցուած կը համարուի Մծրնայ Հայրապետէն, բայց անշուշտ յետագայ ժամանակաց մէջ նորոգութիւններ կրած է: Հայրապետին աօնին օրը՝ ուխտաւորաց խումբեր, կէս գիշերէն սկսեալ մինչև երեկոյ, երկու ժամուան ընտանային զմեզակ ճամբորդութեամբ հետիտն ուխտի կու գան այս տեղ, և բաճանայր ալ գարով պարզ ժամերգութիւն կը կատարեն, վասն զի Պատարազ մասաւջանկու սովորութիւնը քանի մը տարիէ հետէ վերցուած է: Մենաստանիս հիւսիսային արեւելեան կողմը կան երկու վիմափոր եկեղեցիներ, մին՝ բաւական ընդարձակ, և հարաւ արեւելեան կողմն ալ ստանձին օթարան մը, զոր ձեռք կ'անուանին Ս. Յակոբայ ձգեարան:

Քաղաքին Հայոց Ս. Առաւածածին մայր եկեղեցւոյն մէջ թաղուած է սուրբ Թադէոս առաքեալէն ձեռնադրուած Ազգէ Հայրապետը, որ Արգարու Անանուն սրբոյն հրամանաւ նաճատակուած է: Կ'աւանդեն թէ այս եկեղեցին ի սկզբան եօթն յարակից զմբէթ կամ կաթուղիէ ունէր, և 6ր քանդեց զիցամըն Անանուն՝ հօրը մահէն վերջ: Գապէնձեան Տ. Յարութիւն կախկոպսի անունն, իբր վերաշինողի, ցարդ կը յիշատակուի Պատարազի տանն Առաքելոցի և Եւս առաւելի մէջ, սակայն այս եկեղեցականը քիչ մը կը մեզապրուի՝ առաքելական աւանդ ամբակուս հոյակապ կաթուղիէն քանդել տալուն համար, զոր պահել կարելի էր, կ'ըսեն: Ս՝ Ազգէի տապանը բացած, անոր նշխարքը խնկալից վիմափոր յիշատակարանի մը մէջ զետեղելով՝ վերաշինած եկեղեցւոյ ձախակողման պատուն կից՝ արծաթեայ մշտալուս կանթեղով զմբէթաւոր փասաւոր գամբարանի մը մէջ ամփոփած է վերստին: Հայրապետի աօնին օրը կը գարգարուի այս գամբարանը և նախատօնակ ու առաւօտեան ժամերգութիւնը կը կատարուին: Ասոր արեւելակողմը պահարան մը կայ, ի

յիշատակ Ս. Ալեքսիանոսի քանդուած մատարան, ուր՝ Ազգէի տապանին մօտ կը ճրգնէր կամաւոր ազբատը: Աջակողման գատուն մտաքին կից ալ, Ազգէի տապանին զխնաց, համանուն զմբէթաւոր խորանի մը մէջ պահուած է այն աւանդական վէմն, որուն վրայ եկեղեցւոյն անուանակոչութեան նախընթաց զիշերը, Թադէոս առաքեալ գտեր է Տիրամօր պատկերը՝ հանդերձ Ասաւածորդով, և այն օրէն մինչև ցարդ եկեղեցին կոչուեր է Իւրեմակար Աստուածածին: — Եղեւիոյ արեւմտեան պարսպէն քաւոր ժամու ճանապարհ հետու, Ս. Սարգսի վանուց տանարին տակ եզոյ կրկին քարայրներու ներքնոյն մէջ՝ որ ի հնումն գամբարան կախկոպսաց կը կոչուէր, փոխադրուած է Արբայ Եփրեմի մարմինը, որ ժամանակ մ'ալ ճգնութեամբ առանձնացեր է վանքին զէմ պարսպին ներքև գանուած քարայրի մը մէջ: Այս շիրմին տապանաքարին վրայ՝ զոր վերահանած էին 1873ին, 1889ին շինուեցաւ զմբէթաւոր վայելչաձե խորան մը, նուիրատուութեամբ Պաղատար և Եղբարը Պատմանեան զերդաստանի: Երբ մարմարեայ տապանաքարի վրայ փորագրուած է հետեւեալն. «Այս է շիրմ Հայր Եփրեմի մենաստանի Հայոց աշրի, արձանագրեալ ի տապանի, բաժնէ Հայոց ինն նարիքի: Երբոց աւանդութեամբ կ'ըսուի թէ յիշեալ քարայրներէն արտաքնոյն մէջ, հարաւային պատին վրայ գուր ձեփով ծածկուած երբորդ այր մը կայ, որ՝ նախկին անապահով դարերու մէջ վանքին եկեղեցական թանկագին նիւթոց պահարանն է եղեր: Եփրեմ խորի յիշատակին հետ կապուած սրիշ ուխտատեղիներ ես կան: — Քաղաքիս հարաւային կողմը, Երբոյթի մայ և ի վերջոյ Մանիակայ բերդ կոչուած ամբոցին արեւելեան ստորսպին մօտ եզոյ Երեւոյ Արբանումս բուսած համազգային ուխտատեղոյն արեւմտեան հիւսիսի կողմերը գտնուած Հայր Արբանում աւան ձկնաւէտ զեղածիծաղ լճակին շուրջը, որուն համար կ'ըսուի թէ սեպհականութիւն էր Արբահամու՝ անոր խառանէն ելնելէ առաջ, կան հնութիւններ ի հնումն հոչակուած Եղեւիոյ ճեմարանին: Այս ճեմարանին յարակից եկեղեցւոյ բառանկիւսի հնա-



գարեան զանգակաառնն զեռ կանգուն է, բայց բիշ շատ խորխում: Միւս կողմն, բաղաբին հիւսիսային արեւմտեան անկեան զիմաց՝ կէս ժամ հեռու գանուող բլրոյն հիւսիսային կուրծքի արեւելակողմը, ուր վերջին ժամանակներս անկուած են սրվեր, կը տեսնուին Եփրեմ խորի լանաց աւերակները: Հոն՝ ամէն բայլափոխի գրեթէ՝ կը հանգիւլին սիւներու, ճարտարադրուագ սիւնադլուիններու, յիշուած կարմիր կամ ձերմակ մարմարտնի և կրանիտի բեկորներու և այլ ուշագրաւ առարկաներու: Յովհաննէս անուն ազգայնոյ մը կտակի շնորհիւ, այս բլուրը վերջին ժամանակներս հայկական սեպհակահնութեանց կարգն անցաւ:

Տեղացի սերնդեան մէջ աւանդութիւն է թէ՛ երբեմն Եզեխիոյ մերձաւոր շրջակայից մէջ ՅՅԱ եկեղեցիներ կային, և այս անհաւանական չէ, քանի որ պատմական ծանօթութիւններ կան թէ բաղաբին շրջակայքը հազարաւոր վանորայք և վանականներ կային, և ցարզ շրջակայ լեռանց մէջ կը տեսնուին կրօնական նշաններ և տեղ տեղ արձանագրութիւններ ունեցող անհամար բնակարաններ, վանքեր կամ ազօթավայրք: Քաղաքին մէջ և պարսպաց մօտ տեղերը շատ հին եկեղեցիներու հետքերը կը տեսնուին, բայց բիշերու միայն անուանք ծանօթ են, ինչպէս Ս. Աստուածածին, Ս. Պետրոս-Պողոս, Ս. Փրկիչ, Քառասուն Մանկուք, Ս. Սոփիա, Ս. Յովնանեկ Մկրտիչ, Ս. Առաքելայք, Գօտեւոր Ս. Գեորգ, Ս. Թորոս, Ս. Կիրակոս՝ երկու հաս, Ս. Գաստառակ, Ս. Միկաս, Ս. Անարծար բժիշկը, Ս. Նուստակաց եկեղեցի, Ս. Թորոսի մեծ վկայարան՝ բերդին մէջ, Ս. Սարգիս՝ բերդին մէջ, Ս. Վկայք, Ս. Սարգիս (վանք), Ս. Աբգարու եկեղեցի, Խուլավանք կամ Նոր Վկայարան, Արձիճի վանք: — Եզեխիոյ արեւմրտեան կողմը, քառորդ ժամու ճանապարհ հեռու, 1890ին, կառուելոյ շինութեանց առթիւ, գուրս ելան զեանի տակ թաղուած հնազարեան ամրակուռ շէնքեր, որոնց մօտերէն քանի մը տարի առաջ գանուած էին նաև մարմարեայ սիւներ և ուրիշ առարկաներ. կը կարծուի թէ այս տեղ կանխաւ եկեղեցավայր էր. կը կարծուի նաև թէ գա-

րեր առաջ հոն զօրանոց կար, ուր կը բնակէին պահակներ՝ մերձակայ Ազապեան նեղուցէն բաղաբին վրայ անակնկալ յարձակումներու գէմ առնելու համար: — Վերջերս ներքնուղեաց շինութեանց առթիւ պեղմանց առնն փոզոցներու մէջ գուրս ելան շատ հին շէնքեր, որոնց մէջ նշանաւոր են Ս. Աստուածածին եկեղեցիէն 1-2 բարբնկէց հետու գէպի արեւելք տեսնուած Ս. Գրիգոր Նարեկացոյ անուամբ եկեղեցոյ մը աւերակները. չէ կարելի բնագրաբանութեանը վրայ գաղափար ունենալ, վասն զի գեանի տակ ծածկուած աւերակներու մէկ մասին վրայ կը գտնուին խիտ առ խիտ կառուցուած Հայոց տները: Այս աւերակներու կից կայ տուն մը, որ ի հնուց Տուն Նարեկացոյ կոչուած է, որուն մէջ կը գտնուի եզեր ձև ուղիւր հրաշագործ Նարեկ մը, և 1845ին՝ Ս. Աստուածածնի եկեղեցոյ վերաշինութեան առնն, Գապէնճեան Յարութիւն եպիսկոպոսի ձեռքով գրեթէ բոնի փոխադրուեր է եկեղեցին, ուր կը պահուի ցարդ՝ անազարա յիշատակարանով մը, յորմէ կ'իմացուի թէ Հայոց ՊԻԱ (= 1372) թաին գրուած է: Աւանդաբար կը պատմուի թէ՛ այլ Նարեկը, համանուն եկեղեցոյն աւերումէն վերջ, աւերակներու կից բնակող բնատանիք մը պահած է, և առնն անցնելէ վերջ, այդ բնատանեաց ժառանգորդ եղբայր և քոյր մը, հայրենի ժառանգութեան բաժանման միջոց չեն կրցած համաձայնիլ Նարեկին համար, և վերջապէս քոյրն առած է զայն՝ անոր ծանրութեամբ ոսկի տալով եղբօրը, այլ պատճառաւ Ոսկեկէի Նարեկ կը կոչուի: Մինչև ցարդ այս Նարեկին անուամբ շատ հրաշքներ կը պատմուին: — Եզեխիոյ արեւմտեան պարսպի ներքե, 1891ին, հայազգոյ մը տան տակ գտնուեցաւ գամբանարան մը, որ՝ կը կարծուի թէ Աբգարու զերդաստանին յատուկ գերեզմանատունն է. աստ յայտնուեցան զեղանկար քարերով կառուցուած կամարներ, զանազան քանդակազարծութեամբ խոշոր քարեր, որմերու վրայ խճանկարներ, ճարտարարուեստ արձաններ, և այլն: Կ. Պոլսէն կայսերական թանգարանի տեսչութիւնը ձեռք գրաւ այս հնութեանց վրայ:



Արցի պատմագէտները կասկած ունին քաղաքին նախնեաց Ռբր քաղաքի յաջորդը լինելուն: Հնախոյզները կ'երթման Սասրին Քաղզէս՝ վարքս անուն ընդարձակ աւերակներն պրպակել Ռբր քաղաքի հետքը գրանելու համար. բայց քաղաքին խորերէն ելած արձաններու, կիսանդրիներու և բուեւոսորոց վկայութիւնք կը հաւաստեն թէ արցի Եզեխիան հին Ռբր քաղաքի յաջորդն է. մեծ ապացոյց է Թարայի այն արձանը՝ որ մօտ 35 ասրի տոսջ քաղաքին հարաւ արեւմտեան պարսպին մէջէն ելաւ և ի Կ. Պոլիս օսմանեան թանգարանի մէջ գրուեցաւ, և որուն վրայ հին քաղզէական առնելով Թարա անունը գրուած է: Աստուածաշունչը՝ Քաղզէացոց Ռբր քաղաքը Էրկիր Թարայի կ'անուանէ, հոն ծնաւ Արբա-համ՝ նահապետը. Թարայի ձեռակերտ արձանները՝ ինչպէս Քաղզէացոց, նոյնպէս Ռբր քաղաքի բնակչաց աստուածներ էին. Թարա ևս իւր ձեռակերտաց երկրպագուն էր մինչև Արբահամը. Ռբր քաղաքէն Խատան գաղթելն, որ մեռաւ Թարա: Խատան՝ Եզե-սիոյ հարաւակողմը աւազուս, ընդարձակ ու տափարակի գաշա մ'է, ունի շատ աւերակ և ամայի գիւղեր և տեղեր, որոնց մէջ եթէ նոր բնակիչներ զեռեղովն և երկիրը հազարակցութեան մէջ գրուելով երկրագործութեան նոր մղում արուի, Եզեխիա երկրորդ Եզիլպասս մը կրնայ գառնալ. մանաւանդ այն ասնն՝ երբ փոխանակ Դեղոսի, Էփրատայ ջուրը ողողէ այս ընդարձակ գաշաները: Պատմութիւնը Դերբովթի կը վերագրէ Ռբր քաղաքի հիմնարկութիւնը: Դերբովթ գայն հիմնարկելով՝ մօտ 200 ասրի կ'ունենայ իրեն իշխանութեան ներքե, Էրկիր Թարայի անուամբ, մինչև այն ժամանակ, երբ Մեծին Աղեքսանդրի զօրապետներէն Սելեւկիոս (Թագաւոր Անտիոքայ) կը գրաւէ, անոր օրին գեղեցկութեամբ և ջրոյն պատուահանութեամբ հրապարակելով՝ իւր Եզեխ անունը գտանք կը նուիրէ, և քաղաքն այնուհետեւ կոչուէր է Եզեխ կամ Եզեխիա: Իսկ Ռաւնա անունը Ռաւն անուն տիրապետէն մնացած է, որ ժամանակ մը տիրած է քաղաքին: Ռաւնա անուան ի տառն ի վերջոյ ֆի փոխուելով՝ այժմեան թրքական

Ռֆրա անունը ստացած է: — Եզեխիա ի հետմն մայրաքաղաք եղած է Ռբրայեայ գաւառին, որ և կոչուած է Եզեխացոց գաւառ: Կրկին անգամ վերանորոգուելով մեր Արշամէն և Արգարէն՝ եղաւ մայրաքաղաք Հայց և Ասորի-Արշակունի թագաւորներու և անոնց յաջորդաց: Ազգային պատմութենէ յայտնի է, թէ Արգար Մծրինէն արքայական գահը հոս փոխադրած ժամանակ, քաղաքին մէջ տիեզերահոչակի գիւան մը բանալ տուաւ, որուն մէջ զեռեղել տուաւ նաև Մծրնայ բոլոր գիւանական գրուածները, ինչպէս նաև Պոնտացոց Մինոս քաղաքին մեհենական պատմութեանց գրքերը: Այս գիւանը Էրուանդ երկրորդի օրով զեռ աւելի ճոխացաւ, երբ Հայք Հոսովմայեցոց հարկատու եղան, ու անոնց կողմանէ գրուած կուսակալները ջանացին զարգարել գայն: Ասա աւելորդ կը համարինք երկարել մեր խօսքը, յիշելով հանրաժանօթ գէպը մը՝ Արգարու առ Քրիստոս Տէրն մեր գրած թուղթն իրեն բժշկութեան համար, անոր պատու խանն, Թաղէտի գալուստն, և սուրբ գաւառական պատմութիւնը: — Խաշակրաց ժամանակ մի միայն քաղաքն եղաւ սա Արիոյ մէջ, որ ազատ մնաց մահմետականաց յաղթանակէն և եղաւ իշխանանիտ: 1144ին Բերիոյ Չանդի ամիրան Եզեխիոյ տիրեց շատ արիւն հեղով, զոր սրբացած է մեր Ծնոր հալին: 1393ին աւարի տունուած է Լէնկ-թիմուրի ձեռքով, և վերջը ժամանակ մը Պարսկաստանի կցուած: — Հայրենիք կը համարուի քաղաքս մեր պատմիչներէն ԺԲ գարու մեջ ազրոզ Մատրես Ռաւնայեգոյն, որ գրած է ժամանակագրական պատմութիւն մը՝ որ կ'սկսի 952 էն և կը հասցընէ մինչև 1136 թուականը, որուն շարունակութիւն ալ բրած է Գրիգոր Էրեց և հասուցած է մինչև 1162 ասրին: Այս պատմութեան նիւթն է նոյն ժամանակի մեծամեծ յեղափոխութիւններն, որոնց թատար եղած է Եզեխիա: — Եզեխիոյ գաւառի բնակչաց բնդհանուր թիւն կը համարուի մօտ 150000: Կը պարունակէ Սուբուճ, Պիրէճիկ և Բումպալէ գաւառակները և 1326 գիւղ: Եզեխիոյ ազգային վարչութիւնը սահմանադրական է, և քաղաքս տոսջնորդաւ



նրաւ է, որուն թեմերն են Կարմուէշ, Աւ-  
ւերեկ, Նիզից, Էմեէշ, Ճիպեհ, Սուրուս,  
և Պիրեւիկ: — Ն. Հայաստան, 330-336:  
Արարս, 1889 թ 17-21: Վ. Քիւն, թ 248-  
-271: Էւ այլն:

ԵՒԵՍԻԱ. — Քաղաք Ռուսիոյ Մոզդոկի  
գաւառի, Ասարախանի առաջնորդութեան  
ներքե, Մոզդոկ քաղաքի մօտ՝ հիւսիսային  
կողմը: Տեղւոյս Հայք թէև թրքախօս են,  
սակայն մեծ փոյթ կը տանին զգրոցական  
յտառջակոմսութեան համար, 1885ին շինե-  
ցին չորս սենեկէ բաղկացած ուսումնարան  
մը եկեղեցոյ գաւթի արեւմտեան կողմը,  
հանդանակութեամբ տեղացոց և սրիշ տե-  
ղերու ազգայնոց: Փորրիկ քաղաքս այժմ  
ի Ռուսոց կը կոչուի Քասայեփա Եւմա.  
ներկայ վիճակն մեզ անծանօթ է:

ԵԶԱՏՈՒՅՔ. Տես ՃԱՀՈՒԿ:

ԵԶԻՏԱԷՐ. Տես ԱՍԱԳԻՆՅՔ:

ԵԶՆԱԳՈՄԵՐ. Տես ԱՂԱՀՆՃՔ:

ԵԶՆԱՆԻՍ. Տես ՎԱՅՈՅ ՉՈՐ:

ԵԶՆԹԼՓԷ կամ ԲԼՈՒՐ. — Գիւղ Քաղրե-  
ւանդայ (Այրարատ). Տես ԲԼՈՒՐ:

ԵԶՆԻ. Տես ՀԱՅԱՆԻ:

ԵԶՆԿԱՅ, ԵՐԶՆԿԱ, ԵԻԶՆԱ կամ ԱՐԶՆԿԱՅ.  
Գղ. ERZINDJAN. Թ. عَزِنْجَان. — Քարձր  
Հայոց ութ գաւառոց միոյն Եկեղեցոց գրը-  
խաւոր, հին ու պատմական քաղաքն է, սր  
կաշուած և նաև Յուստինիանոսարոյիս, յայտ-  
նի է թէ Յուստինիանոս կայսրէն վերակա-  
ռուցուած կամ նորոգուած բլլալուն հա-  
մար: Այժմ՝ համանուն գաւառի գլխաւոր  
քաղաքն է, ուր կը նստի միւրասարիֆը:  
Կը գտնուի Կարնոյ արեւմտեան կողմը՝ 176  
հղրմ. հեռու, Եկեղեցոց ձուածե գեղեցիկ  
գաշաի արեւմտակողմը՝ գրեթէ երկու մղոն  
Եփրատէն (Յրաթ) հեռու գէպի հիւսիս և  
մղոն մը վրասկերա վտակէն հեռու գէպի ա-  
րեւելք: Երզնկայ ինչպէս պիտի տեսնանք,  
գանազան երկրաշարժներէ կործանուելով  
հեղհեղէ հեռացած է գեանդըն, աոսրապա-  
ցոյց քաղաքիս մէկ թաղը, որ ցարզ Հիւ  
քաղաք կ'ըսուի, և է անասարակոյս նախկին  
ընդարձակ քաղաքատեղոյն մէկ մասը. այս  
մասին օգը վնասակար է, ջուրը ոչ բոլո-  
բովին լաւ, հողը ծծմբային և բորակաւոր,  
ենթակայ երկրաշարժի, որով շատ անգամ

ներ ցնցումներ կրած է: Օղին ու ջրին անյար-  
մարութեան և Եփրատայ մերձաւոր ճահիճ-  
ներուն պատճառաւ, Երզնկացիք ամբան մի-  
ջոց ջերմային հիւանդութիւններ և աչացաւ  
կ'ունենան. ասոնցմէ զատ ոչ նուազ հիւան-  
դութիւններու բնապատճառ են ասոնց ազ-  
անդի ջրոց ընդունարան ստորերկրեայ ճա-  
հերն, սմանց բացօթեայ տանիքները պատ-  
կիլը, գեանախոր թոնիք գործածելու սո-  
վորութիւնը, և այլն: Քաղաքիս բոլոր շէ-  
քերը աղիւսակերտ և փայտեայ են, իսկ  
քարակիրք սակաւ. շատերու տանիքները  
հողամած, իսկ քիչերունը կղմնարաւոր:  
Փողոցները հողոտ, այնպէս որ երբ քամին  
փչէ՝ մալոց աչքեր, սենեակներ և տներ  
փշուով կը լեցնէ: Այս տուներէն հնաշէնը  
սմանք հակասակ են առողջապահական օրի-  
նաց և անճաշակ, իսկ նորաշէնը առ հա-  
սարակ լաւ են և ճաշակաւոր. ունին ջրարբի  
պարտէզներ և ծառաստաններ և են միայակ  
կամ կրինայարկ: Երզնկա կը գտնուի բոս  
փարսեան միջօրէի երկայնութեան 39, 5  
և հիւսիսային լայնութեան 37 տասնմանոց  
վրայ, ըստ որում ամենաերկայն օրը կը  
լինի գրեթէ 14<sup>3</sup>/<sub>4</sub> ժամ, իսկ ամենակարճն՝  
9<sup>1</sup>/<sub>4</sub>: Կլիման ամբան տաք է և այս ջերմու-  
թեան ժամանակ մահմէտականները օգափո-  
խութեան կ'ենին գիւղերը, իսկ Հայք ուխ-  
տագնացութիւն մը միայն ունին:

Քաղաքիս բնակիչը են Հայք, Յոյնք, Բու-  
ղոքականք և Թուրքք: Վ. Քիւնէ ընդհանուր  
բնակչաց թիւը 23, 000 կը գնէ, հետեւեալ  
կերպով բաժնելով.

Մահմէտականք	15000
Հայք	7500
Յոյնք	200
Առ և այլք	300
Գումարն	23000

Ազգային տեղագրոյի մը համեմատ, Հայք  
ունին մօտ 1600 տուն՝ չորս թաղի բաժ-  
նուած. Յոյնք և Բողոքականք տասն և հին-  
գական տուն են, իսկ Թուրքք 2500: Այս  
ամէն ազգերն ալ ունին իրենց մէջ գրեցի  
գաղթականներ Ակնէն, Գիւմիւշխանէն, ևն.:  
Հայոց և Թուրքաց թաղերը զատ են, փոքր  
մաս մը կայ խան:



Մեր պատմութեան մէջ Քրիստոսէ վար մը առաջ կը սկսի Երզնկայի անունը ու փառքը՝ որ նոյն ժամանակները Երեզ աւանամբ քաղաքաւան մ'էր: Տիգրան Միջին կամ Բ, իր հօրը տեղը անցնելով, Արտաշէսի Յունաստանէն դրկած Արտեմիայ կամ Անահայոյ սակի արձանը, որ առ ժամանակեայ կը պահուէր Անի Ամրոցը, հրամայեց որ զայն փոխադրեն և կանդնեն Երեզ աւանին մէջ: Հայք որ ի հասց Անահայոյ ջերմեանոյ էին՝ մեծ յարգութեամբ

քաղաքը Եզնկայ ըսուած է՝ այսինքն եզին կայք: Տիգրան Բն օրով Միհրդատայ ետեւէն արշաւոյ Հասթիայեցիք տեսնելով Երեզայի մարդագեղաններու մէջ զիցուհւոյն նուիրական այս եզները, շին համարձակած աւանց մտանալու: Արտաշէս Բ թագաւորը իրեն վերջին հիւանդութեան ժամանակ, որ կը բաղձար տեսնել «զծուխ ծխանի և գաւառոտն նաւասարդի», սերիշ անթիւ մեհենները թողլով հոս կը զրկէր Արեւիկեց Արեզ նահապետը, որ իրեն համար բժշկութիւն և



270. Եզնկայի ընդհանուր տեսարանը:

սկսան պաշտել այս կուորը. թագաւորներն ալ գաւառին շատ երկիրները՝ տաճարին կալուածք տուին, անոր համար բոլոր այն երկիրները Անահայոսեան գաւառ ըսուեցան, և մեհեններով ու քուրմերով լեցուեցան. աւելն կողմէ նուէրներ կու գային այս տաճարներուն: Գիցուհւոյն նուիրուած եզներ ևս կային, որոնցմէ ճերմակները և բնախնները իրեն հաճոյագոյն զոհ համարուած էին. ասոնց ճակատը ջահաձև խարան գարկած որ մարդ չի գայի՝ կը թողուին որ խամբ խամբ արածեն Եփրատայ և Գայլի խտաւէտ ավազները. գուցէ այս պատճառաւ

երկար կեանք խնդրէ կուորէն: Երեզի բնակչաց մեծ մասը Անահայոյ ծառայութեանը նուիրուած էին իբրև քուրմ և ծառայոյ տաճարներուն մէջ: Գարնան և աշնան մեծահանդէս թափօրով ջահերով կը պարտեցընէին կուորը մեհենէն զուրս շուրջանակի. յատուկ Անահայոյ մեծ տօնը նաւասարդի 15ին կը կատարէին:

Շարունակաբար պատուուած է Երեզայի մեհենն և Անահայոյ անդրին 400 տարի, մինչև Գ գարու սկիզբը Տրդատայ օրերը, որ թագաւորութիւնը առած կու գար Երեզ աւանս շնորհակալութիւն և պատարագներ



մատուցանելու «Մեծի Անահայտ ակինսը, որ է փառք ազգին մերոյ և կեցազնիչ, զոր թաղաւորք ամենայն պատուեն, մանաւանդ թաղաւորն Յունաց», և պատուէր կու տար Լուսաւորչին՝ որ նոյն ասան իւր զինակիրն կամ սպասաւորն էր, գալար և տերեւայից սասեր ու ծաղիկներ նուիրէ զիցուհոյն բազնին, և հոն կը յայտնուի Մեծ Լուսաւորչին քրիստոնէութիւնն: Նոյն ինքն Գրիգոր Լուսաւորիչ յետ անշափ սիրալի նահատակութեանց և ասանջանաց, զիբասկէն ելնելով կը կործանէ ուրիշ մեհեններու հետ նաև այս մեհենն և տեղը կը կառուցանէ Աստուածամօր տաճար մը: Բայց յայտնի է թէ, ինչպէս կանխաւ ըսինք, հին Երեզայի տեղը ճիշդ այժմեան Երզնկայի վայրը չէ, այլ աւելի վեր գէպի հիւսիս, և ինչպէս կ'ըսեն, Վասկերա ասանի մօտ կամ Խախայ և թիլն ասանի մօտ: — Երզնկայի երկրաշարժները իրեն նշանաւոր գէպերէն կրնան համարուիլ, և թերևս քիչ քաղաքներ գանուին սասր նման ստէպ փնատուած, կործանուած և վերստին շինուած: Մեր պատմիչները քսան անգամէն աւելի կը հաշուեն քաղաքիս ժամերը ՎԱ զարէն սկսեալ մինչև ցայժմ, զորս կարգաւ յիշելը աւելորդ չեմ համարիր: Առաջին մեծ և ահաւոր սասանութիւնը եղաւ 1045 թուին, երկիրը պատռելով և շատ եկեղեցիներ և շէնքեր կործանելով ամբողջ Եկեղեցաց գաւառի մէջ, և քաղաքս «փլաւ առ հասարակ, և պատուեցաւ երկիրն, և արք և կանայք ի խորս անդնոց, և զաւուրս բազումս գայր ձայն ազաղակի նոցա ի խորոց անդնոց, և էր յամանային ժամանակին և աւուր աւուր շարժէր երկիրն յամին յայնմիկ», յայտնի է թէ շուտով վերստին շինուեցաւ քաղաքս, վասն զի քիչ տարիներ վերջը (1057ին) աւարի և աւերման մասնեցաւ Թուրքերէն: — Մտադարձա գպիր կը գրէ, թէ 1066ին «Շարժ եղև յԵրզնկան և կործանեցաւ»: — Սուիէ երկու տարի վերջը 1168ին, ըստ Վարդանայ. «Ահազին շարժ եղև և կործանեցաւ Երզնկայն», «և երկոտասան մարդիկ մեռան» կը յաւելու Առաքելը: — Ըստ ժամանակագրաց, 1236ին ևս շարժ եղաւ և եկեղեցի մը փլաւ: — Տասր տարի վերջը 1246ին զարձեալ շարժ եղաւ և փլաւ

Ս. Գրիգոր եկեղեցին: — Իսկ ութ տարի վերջ 1254ին, մեծ սասանութիւն եղաւ և 14000 հոգի կորան. գրեթէ ասոր աւանաւան եղաւ հին ուղեւոր միանձն ոմն փոանկ Բիւպրինդի անուն, որ կու գար Թաթարաց երկրէն և անցաւ Երզնկայէն 1255ին, որ կ'ըսէ մեծասուններէն և հարուստներէն 10000 հոգի մեռան, չհաշուելով ազբասները, և երեք օր ձիալարելով տեսեր է ահաւոր պատուածներ և վհեր զեանի մէջ և կոյտ կոյտ գերբուկներ և քարեր՝ բարձր շէնքերէ հօլաի մէջ գլորած, այնպէս որ, կ'ըսէ, եթէ ժամն քիչ մ'ալ երկարած լինէր, պիտի կատարուէր Եռայի մարդարէի խօսքը, «Ամենայն ձորք լցցին, և ամենայն շէնքեր և բլուրք խոտարհեցին»: — Այսպէս նաև 14 տարի վերջ 1268ին, կիրակի օրով պատահեցաւ մեծ շարժ մը, մեռցնելով 15000 հոգի: — 13 տարի վերջ ալ, ըստ Առաքելի, 1281 թուին շարժ եղաւ, բայց Աստուծով ստանց մեծ փնատու: — Քիչ տարիներ վերջ 1287 տարւոյ մայիս 6ին սասանի ժառնգաւ և շատեր մեռան, Աստուծոյ յայտնի է, կ'ըսէ ժամանակագիրը: — Գարձեալ 1290ին բաւական սասանեցաւ քաղաքս, բայց չի փլաւ: — Վերջ գարու վերջին կիտուն բուսն և սաւազ եղած շարժերէն վերջ, մինչև 1356 թուականը շարժ չի յիշուիր, յորում սաւազ կը շարժէր Երզնկա, օրը եօթն և ութ անգամ, բայց չլիտանգուեցաւ: — Իսկ 1374 տարւոյ գեկաւ. Տին անգամ մը շարժեցաւ և ժամ մը հանգարտեցաւ. կարծեցին թէ ալ չի շարժիր, բայց կրկին շարժեցաւ և պարսպը փլաւ: — Վաթսուն տարի վերջ, յիշատակագիր ոմն կը գրէ. «Ի թուին ՊՁԲ (= 1433) ի մարտի 28, Երզնկա քաղաքս եօթն անգամ շարժ եկաւ, որ ամենեքեան տարակուսի կանք, թէ ահա աշխարհս այժմ կ'անցնի, և թէ մէկալ պահն կ'անցնի աշխարհս, զոր ալը Աստուած վերացուցէ ցատումն»: — Բայց գրեթէ 25 տարի վերջը 1458ին պատահած շարժն, խիստ ահաւոր կը յիշուի, վասն զի 32000 հոգի մեռած են: — Նոյնպէս քիչ տարիներ վերջը 1462ին, երկրաշարժէ կորան 30000 հոգի: — Նոյնչափ ալ քսան տարի վերջը 1482ին, եթէ գրուցներու թիւերու մէջ զրիպակ չկայ, «30000



հոգեք ներքև հոգին մնացին»։ — Ասկէջ վերջ գրեթէ ամբողջ դար մը շէնք գանար երկրաշարժի յիշատակ, բայց ԺԶ գարու վերջերը սակայ. 1576 թուին «շարժ եղև յեզրնկան յոյժ ահագին ի նոյեմբերի հնգին ի մէջ գիշերին. մարդ ի շէն չկարաց պառկել չորս ամիս, և ապա գաղարեցաւ»։ Ուրիշ ժամանակագիր մը այս շարժը հանդիպած կը գնէ յաջորդ 1577 թուին, և շատ գիւղեր գետին անցան, կ'ըսէ։ — Նոյնը կը յիշէ նաև 1583ին եղած սասանութիւններ։ Իսկ յաջորդ տարին, 1584ին, ըստ Մաղաքիայի. «շարժ եղև յեզրնկան յունիսի ժէ, սուրբ Լուսաւորչի երկուշարաթի, գ ժամն. յանկարծ գոգումն եղև, քաղաքն առ հասարակ փլաւ. 15000 այր և կին մեռան. 5000 մարդ այլ ի ներքոյ հոգոյն մնացին՝ դամանո կիսամահ հանեցին»։ Այս գէպըստրիշ ժամանակագիր մը, հինգ տարի առաջ հանդիպած կը գնէ 1579 թուին։ — Ասկէջ վերջն ալ Երզնկային անուամբ շարժ չի յիշուիր դար մը, մինչև 1667 տարին, յորում կ'ըսէ ժամանակագիրը, «փլան շատ շէնք՝ հինգ եկեղեցոյ»։ — Իսկ ամենէն վերջի ժամն և մեծ կործանումը եղաւ 1784 տարուայ յուլիս 30ին, երբ գրեթէ բոլորովին հիմնայատակ եղաւ Երզնկա և իրեն բնակչացը գերեզման, սրուն հետ նաև երեք մտաւոր գիւղերը։ Ասկէջ վերջ չի յիշուիր քաղաքին պատահած մեծ սասանութիւն, որ ի հնումն ինչպէս կը սեռնուի մեր այս յիշածներէն, շատ անգամ կործանեցաւ և բիրաւոր մարդկանց մահուան պատճառ դարձաւ։ Վերջոսին նորոգուելով շինուեցաւ Երզնկա իւր գեղեցիկ և յարմար գրիցը, ինչպէս նաև շարժուն ճանապարհի վրայ լինելուն պատճառաւ, զանուկով կարնոյ և Փոքր Ասիոյ մէջտեղ, նոյնպէս Պոնտոսի և Քրդաստանի։ Հին ժամանակները քաղաքէս կ'անցնէին անոնք՝ որ մեր աշխարհի արեւելեան կամ հարաւային կողմէն կ'երթային Յունաց երկիրը, ինչպէս նաև Տրդատ և Լուսաւորիչ և ուրիշներ կեսարիա երթալու միջոց, ինչպէս և Հերակլ և կայսրներէն ու զօրավարներէն շատեր. մանաւանդ որ Հայաստանը երկու մասանց բաժնուած միջոց, Յունաց բաժնին մէջ մնաց Երզնկա, և հագին երբէր

բոնարարուեցաւ Պարսիկներէն և Արարացիներէն, մինչև որ Թուրքերը իրենց առաջին արշաւանքին առին և աւերեցին 1057ին, և իրենց իշխանութիւնը Փոքր Ասիոյ վրայ սփռած միջոց՝ Երզնկա ալ իրենց ենթակայ եղաւ։ ԺԲ գարու կիսուն Արիստաւան կը տիրէր քաղաքին. յետոյ Իկոնինոնի սուլտանաց իշխանութեան տակ անցաւ։ ԺԳ գարու սկիզբը, Օսմանեանց նախահաւը Սիւլէյման շահ, Թաթարներէն հոս ապստամնեցաւ։ 1230 թուին քաղաքին սահմանները զարնուեցաւ ճէլալէտաին Խորազմի շահը, որ փախած էր Թաթարներէն։ Թաթարք փութով հասան և զուլտանը զարնելով մեծ կոտորած բրին նաև Երզնկայի և սահմանաց մէջ. հոն հաստատեց իւր բանակն, անոնց Բաշու մեծ զօրավարը։ Հոն նստաւ նաև ժամանակ մը Թաթարաց մեծ զանն Ապաղայ (1279), սրուն միջոց Երզնկայի շահապ կամ Հայոց իշխան գրուած էր Պարսն Յովնանեկս՝ սրուն հայրն ալ քաղաքին հոգեւոր տէրն էր, Սարգիս անուն արքեպիսկոպոսը (1250—1279), որ խոհական և իմաստուն մարդ մ'էր, «պատուեալ յԱստուծոյ, մեծարեալ յազգաց և յազանց և ի թագաւորաց մեծաց, որ և շինեաց զհրաշագից խորանն Աստուծոյ զգեղեցկականարն եկեղեցի, որ յանուն Փրկչի մերոյ և Տեան Յիսուսի, բարեւէր և աստուածապարզ կատական Յովհաննիսի», ինչպէս կը պատմէ ժամանակակից գրիչն։ Ս. Փրկչի եկեղեցոյ հիմնարկութիւնը ժամանակագրի համամաս, եղաւ 1269ին, զոր և գեղապաճոյճ տաճար կ'անուանէ և «ի թուին ԶԻԳ (= 1274) կատարեցաւ զմրէթ սուրբ Փրկչին, և եզ Տէր Սարգիս գիսան ի վերայ գրմբէթին»։ Սարգիս արքեպիսկոպոսը, Հուլազու զանի հրամանաւ Յունաստան գնաց, և 1266ին, Գեսինա օրիորդը՝ ինքնակալի դուստրը՝ զանին կնութեան բերաւ, և սրովհետև հուլազու մեծ էր՝ զայն առաւ Ապաղայ զան, զոր կ'ըսեն թէ մկրտեց Սարգիս՝ Անտիոքու պատրիարքին հետ։ Նոյն ժամանակները հոս կը փայլէր նաև մեծ բանասէրն Յովնանեկս Վարդապետ Պրազ, որ և քաղաքին անուամբ կը կոչուի Երզնկացի, ինչպէս նաև Ծործորեցի, ուսումն և կրթու



Թին անելով Կամուխայ և Եկեղեցաց գաւառի վանքերու մէջ: 1275 թուին, Մեծին Դերսիսի նշխարները յայտնուելով Թին աւանի մէջ, Տ. Սարգիս անելով բերաւ Երզրնկա, «մինչև շինեցի եկեղեցին ի վերայ գերեզմանին... Իսկ զաջն ասաքելաշորհ և զեալ արքեպիսկոպոսն Տէր Սարգիս յերաշէն եկեղեցին որ ի քաղաքն, ի նորոգուպէս շինեալն հրաշատես և զարմանալի փառօք և մեծածախ զարդօք երկից թուով խորանաց, յանուն Փրկչին մեր Գիտուսի գաւազ խորանն, և միւսն Կաթուղիկէ, և մինն յանուն սրբոց Առաքելոցն. և եղեալ անց զաջն սրբոյն Դերսիսի ի զարդ և ի պահպանութիւն սրբոյ տաճարին, մնալ մշանջեանոր կայլոք: Եւ զմիւս բազուկ ձեռնն կազմեալ մատամբքն մաքուր, տարեալ ի հոշականուն և ի զեկեղեցիաշէն ուխտն Տիրաշինիկէ, անգէն մնալ յեկեղեցոջն փատաւորապէս. որ և բնոյ մէջ լինելով եղեմաբուխ գետոյն Եփրատայ... Խմաստարար և մեծ յուսով արարեալ խոհեմականն Տ. Սարգիս, զի զերկոսեան բազուկսն և զձեռն առասաձիք շորհչիւ լցեալ Ս. Դերսիսի, զերկրորդ մեր Լուսաւորչին, սահմանէր յերկուս կողմանս գետոյն, որպէս թէ տարածեալ սննելով զթեւն հովանի գաւառին», և այլն: Թուրքերը 1279ին վերստին անելով քաղաքս, նախանձով սպաննեցին Տ. Սարգիսը և իւր սրբին, 38 հոգւով, ինչպէս կը գրէ նոյն ժամանակի յիշատակագիր մը. այս լսելով Ապաղայ շատ արտրմեցաւ և նորէն Երզնկայի տիրելով, կ'արգահատէր սպանուողներու մերձաւորաց և կը մեծարէր անոնց թոռները: Ապաղայի մահէն վերջ, Թաթարները Երզնկայի մէջ սպաննեցին Իկոնիսնի Ղիաքետի Բ սուլտանը. այնուհետև 1285ին Երզնկա եկած ձմերձ է Ապաղայի եղբայրը Հուլայու, և Քայրաթուն մեծ զօրավարը: — Թաթարաց տիրապետութեան ժամանակ, ԺԳ զարու վերջերը (1300ին) վենեակեցի մեծ աշխարհաշարժիկ ճանապարհորդն Մարկոս-Պոլոս՝ Երզնկայէն անցաւ և սքանչացաւ արհեստաւորաց գործած բամբակեայ բնափր կտաններուն և ջերմ ջրոյ բազանիքներուն. զեկեղեցի շինուածոց վրայ. սա կը յիշէ բնակչաց մեծ մասն հայ ըլ-

լալ, Թաթարաց իշխանութեան ներքոյ, և անոնց Դերսիս արքեպիսկոպոսը: Այս երկու հանգամանքները՝ հայ բնակչաց բազմութիւնն և անուանի կտաւը՝ կը յիշէ նաև Խպե-Պատուր՝ որ բանի մը տարի վերջը անցած է քաղաքէս, կը յիշէ նաև պղնձահանք՝ Երզնկայի մտա կամ մէջը: Թուրքաց մէջ տակիր կարգ անցած է անդույս անուանի կտաւն, որուն համար կ'ըսեն. Երզրեճանըն պեգի, Պոսյարքըն գրգը, Քեմախըն դուզու: — 1314 տարոյ մարտ 15ին քաղաքիս մէջ նահաւտակուեցան երեք փրանկիսիկեան կրօնաւորներ, Մանալաս Անքնացի, Փրանկիսկոս և Անտոնիոս, մահովեականաց մէջ համարձակ գերիտասս քարոզելուն համար. որոնք իրենց զենպետին լեղլուութեամբ հրապարակին մէջ սրակոտոր ըրին, և անոնցմէ միւսն զլուխը կապեցին Հայոց երէցի զուխը՝ որ զկրօնաւորները խնամած էր, և մերկ շրջեցուցին քաղաքին մէջ զանահարելով: Բայց նոյն երէցը, յետոյ իրեն հետ հաւատարիմ մարդիկներ անելով, ժողովեց նահատակելոց նշխարները և լծպեց. յետոյ զալով անոնց կրօնակիցները փառքով և շքով լծպումն կատարեցին, Հայոց եպիսկոպոսի բնթերակայութեամբ. իսկ կաթողիկոսը, բոս գրեւոյ ժամանակակիցի մը, պատուիրեց անոնց յիշատակը կատարել: Կը թուի, թէ բիշտարիներ առաջ հոս նահատակուեր է նաև ուրիշ փրանկիսիկեան մը՝ Անճերոյ անուն: — Թաթարները ի սկզբան սիրով կը վարուէին Հայոց հետ, բայց ոչ երկար ժամանակ, վասն զի 1343ին յիշատակագիր մը կ'ըսէ. «ի գտն և յանհանգիստ ժամանակի, զի զօրացեալ են ազգն Դետողաց ի վերայ Քրիստոնէից, և ի սուր սուտերի մաշն և յուարի հարկանն և ի գերութիւն վարեն զբազում գաւառս, և բազում անիրաւ հարկապահանջութիւն գաւառն զամենեւեան». ևն: Այս ԺԳ զարուն մէջ շատերէն նեղուեցաւ Երզնկա քաղաքը, երբ սկսաւ տկարանալ Թաթարաց բռնակալութիւնը և սկսան տիրել Թուրքերը և Թուրքմէնները: 1386ին քաղաքիս տէր կը յիշուի ոմե Թախրաթման, որ Լէնկթիմուրի հոս եկած միջոց նուաճուեցաւ և հաստատուեցաւ իւր իշխանութեան մէջ (1393 . բայց քրիստոնէից շատ



վասնզներ հասան, վասն զի բնաւոր Լէնկ-  
 թիմուրը հրամայեց բակել «գմեծ կաթնու-  
 զիկէն գՍ. Սարգիս ի հիմանէ, և զայլ և-  
 կեղեցիս զամենայն կործանեաց, շարաթու-  
 սութեամբ թախրաթան պարսնին, և այլ  
 ամենայն Տանկաց բաղաբին: Եւ վարդա-  
 պեան Գէորդ աշակերտ ֆովհաննու Ռոսա-  
 նեցոյ գնաց առ նա. և յաճէ և յերկիւզէ  
 պղծայն՝ շրթունքն պատանեցան, և արին  
 իջանէր. և ըստով և արտասուօք յետս դար-  
 ձաւ այլն Աստուծոյ. վասն զի հրաման ետ  
 բակել զամենայն եկեղեցիսն, և սուգ մեծ

բայց Փիր Էօմէրի միջնորդութեամբ, առջին  
 անգամ հաշտուեցաւ անոր հետ. յետոյ Օս-  
 ման որ կը տիրէր Ամրայ մէջ գէօմէր (1418)  
 սարսնեց և բաղաբին տիրեց մինչև 1435  
 թուականը, յորում Լէնկթիմուրի թուր խու-  
 կէնաէր, սպաննեց զինքն և Պայէզիտ սրգին:  
 Եւ յն ժամանակ (1425) կը յիշուի բաղա-  
 րիտ Հայոց զլիսուսրը կամ վերակացուն  
 Էսգուպ աղա՝ հօրեգործարդի խաթմուշ և  
 Սիւլէյման պարսններուն, սրանք Հայոց իշ-  
 խաններէն էին: — Բնաշխարհի պատիւ թուր-  
 բաց և թաթարաց վրայ անեցան նաև Ե-



271. Եզգնկայի նայ պառաւներ:

եղև »: Անոր մեկնած ժամանակ ՃԳ վարու  
 վերջերը, սուլթան Պայէզիտ իրեն իշխանու-  
 թեան ներքոյ ձգեց. բայց Լէնկթիմուր առանց  
 գանդաղելու ետ գարձաւ (1400) և վերստին  
 նուաճեց զայն, հետացնելով միանգամայն  
 Գարապոյսնուլու թուրքմէններու սոհմապեա  
 Գարա Էստաֆը, որ թախրաթանի մահէն  
 վերջ սկսեալ էր բնանալ այս կողմանց: Գէ-  
 վարու սկիզբը բաղաբիտ տէրն էր Շէյխ Հա-  
 սան, զոր հալածելով Ազգոյսնուլու սոհմէն  
 սմն Գարա Օսման (1410), իշխան գրաւ  
 զՓիր Էօմէր. յետոյ գարձեալ զօրանալով  
 Էստաֆ Օսմանի վրայ Երզնկայի տիրեց,

զիպատացիք, սրանք 1437ին գալով Երզն-  
 կայի մէջ կոտորեցին խոկնաէրի զօրքերը,  
 և թիմուրեանները նուազելով վերտախի զօ-  
 րացան թուրքմէնները, մանաւանդ Ազգօ-  
 յունուլու սոհմը, մինչև ուրիշ նոր երկրակալ  
 մ'ալ ելաւ ի Պարսս՝ Ռեզան Հասան ա-  
 նուամբ. սա հակառակորդ լինելով Օսմա-  
 նեանց Սուլթան Մէհմէտ աշխարհակալին,  
 անոր վրայ գնաց և Երզնկայի սահմանները  
 յաղթեց ճիւղաշահի և 1473ին Օսմանեաց.  
 բայց յետոյ ինքն ալ անոնցմէ յաղթուելով  
 սեղիք աուաւ: Այնուհետև Օսմանեանց իշ-  
 խանութիւնը սարածուեցաւ այս կողմերը.



բայց սակաւին ժՁ դարու սկիզբը (1502) շահերու նոր ցեղապետը Խամայէլ, Երզնկա գալով զօրք կը հաւաքէր Օսմանեանց զէմ, որոնք բոլորովին տիրացան կողմանցս 1514 թուին, քաջայաղթ Ալիմի օրով: 1548ին Շահ Թահմազ քաղաքին տիրեց և աւերելով գնաց: — Երզնկայի այսքան բնաբարութիւնները, կը ցուցնեն իրեն միջին դարուց մէջ ունեցած բարգաւաճ վիճակը, այս պատճառաւ ժԳ դարէն սկսեալ, ինչպէս վերը յիշեցինք, Եւրոպացի ճանապարհորդներ և ուղեւորներ այցելած են քաղաքս և գովութեամբ յիշած իրենց գրքերու մէջ, սասնց շարքէն է նաև Յովսէփաս Պարպա-

մէկէ հետո կան մարտկոցներ կամ բուրգեր. երեք պարիսպներով պատած է, որոնց բարձրութիւնն է մօտ 30 սոք և թանձրութիւնը 6-8 սոք: Արտաքին պարիսպը խրամ ունի և միջինը բնակութիւն է քաղաքացւոց, իսկ ներքինը զօրաց սպաստան, աշատակները քայքայած են, բայց պարիսպները գեա կանգուն: Բերդին մէջ կը պահուին հին զէնքեր, աղեղներ, նետեր և մեծամեծ տէգեր: Բնակիչք կ'ըսեն, թէ բերդս շինուած է ճինովացիներէն (ճինովից), և կամ Ալայէտային փաշայէն՝ փոխանակ ըսելու Իկոնիոնի Ալայէտային խոն ֆէյքոսպաս սուլտանէն, որուն կը վկայէ նաև Մուսթաֆի աշխարհագիրն ժԳ դարու: Արմերուն վրայ կան արձաններ և զանազան ազգաց գրբերով արձանագրութիւններ: Բերդին մէջի շէնքերը մեծ մասամբ աւերակ ըլլալով, ի վերջոյ նոր շէնքեր շինուած են արքունի զօրաց համար: Մարտկոցի մը վրայ կը տեսնուի Ալէնուզեան նշան, երկու առիւծներ և մէջտեղ օձ մը քանդակուած: Բերդին մէջ ի հնումն կար նաև մեծ բաղնիք մը, որ ի վերջոյ բոլորովին քայքայուեր է:



272. Եգիպտի սահմանները գտնուած հին քանդակաստղեր:

Մեր հին պատմիչներէն նշանաւոր շէնքեր չեն յիշուիր յԵրզնկա, բայց եթէ, մեր վերոյիշեալ Տիրամօր անուամբ եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորչէն շինուած փոխանակ Անահապ մեհենին, անկէջ վերջ յայտնի է թէ ուրիշներ ևս շինուեցան, մանաւանդ քաղաքին Յուստինիանոս կայսրէ նորոգուած ժամանակ. նոյն միջոցին եպիսկոպոսանիստ է եղած Եզնկա Յունաց կամ Յունահայոց, որոնցմէ 4 կամ 5 հոգի կը յիշուին Զ-Ը գարուց ժողովոց պատմութեան մէջ, իսկ հայոգի եպիսկոպոսներէն կը յիշուի նախ մեարդէն ծանօթ Սարգիսն, և անկէ վերջ յիշուած կը գտնենք քանի մը հոգի միայն, ինչպէս, Երեսե՛ 1278ին, Յովնանեա՛ 1439ին, Մարտիրոս՛ 1489 96, Երեսե՛ 1561, Աշեաթե՛ (յետոյ պատրիարք Կ. Պաւսի) ժէ՛ դարու վերջերը, Սարգիս Սանարճի՛ (Եւպիկտացի) ժԼ՛ դարու սկիզբը: Երզնկայի ազգային հոգեւոր կառավարութիւնը, եղեր է ժամանակ մը որ 12 առաջնորդներէ կը բաղկանայ եղեր, իւրաքանչիւրը մէկ մէկ վանքի մէջ՝ գիւղեր և թաղեր մէջնրնին

բոյ վենեակեցին, որ 1471ին քաղաքէս անցաւ և մեծ մասն երկրաշարժէ կործանած գտաւ. սա կը յիշէ նաև Եփրատայ քարաշէն մեծ կամուրջը՝ տասն և եօթը կամարներով, զոր կը յիշէ Անդրիացի Նիսպրի անուն ճանապարհորդն ևս 1581ին: Ռուս գուն Հասանի պատերազմաց միջոց՝ վենեակեցիք անոր հետ գաշնակցելով գետափաները դրկած էին յԵրզնկա, որոնց հետ էր նաև Քաթիկոսիոյ Եննոյ՝ որ գրեց նոյն պատերազմաց վրայ:

Նշանաւոր է քաղաքին բերդը՝ որ կը գտնուի արեւելեան հարաւային կողմը, բարձրը գիրքով. շինուած է կոփածոյ քարերով, անկանոն բազմանկիւն ձևով. ունի գրեթէ 250 բայլ երկայնութիւն և 12 բայլ լայնութեամբ արամագիծ. քանական բայլ մէկ



բաժնեկրով: Երբեմն ունեցեր է երկու առաջնորդ՝ մին քաղաքի և զեւզորէից, միւսն ալ Մէրճանի վանուց և հինգ զեւզերու: 1860էն սկսեալ քաղաքս կը նստի միակ առաջնորդ՝ եպիսկոպոս կամ վարդապետ, իրեն իշխանութեան ներքեւ ունենալով բոլոր վանքերը ու զեւզերը: 1860էն մինչև ցարժմ Երզրն կա ունեցած է եօթնէն աւելի առաջնորդներ և անզապահներ, որոնցմէ յիշելու արժանի է Ալեարձեան Գրիգորիս վարդապետը (յեւսոյ եպիսկոպոս Տարօնոյ), որ շինած է Վերսալիսեան օրիորդաց վարժարանը հանգանակութեամբ. ինչպէս նաև Հմայեակ Գիմարեան եպիսկոպոսը, որ ներկայ առաջնորդարանը շինելէ վերջ, մեծ զարկ աւանդ է նաև կրթական գործին: Այժմեան առաջնորդն է Գանիէլ Ծ. Վ. Յակոբեան՝ որ իւր իշխանութեան ներքեւ ունի 33 եկեղեցի և 11 վանք: Հայք ունին չորս նորաշէն եկեղեցիներ, վասն զի հիները 1784ին երկրաշարժէն կործաներ են. առաջինը Ս. Նշանքարաշէն է օրոցաձեւ տանիքով և վեց սիւներով, որուն շինութիւնը աւարտած է 1849 թուին. կրտսի թէ նախ Ս. Լուսաւորիչ շինած է ասա Ս. Նշան կամ Ս. Խաչ անուամբ եկեղեցի, մէջը գնելով Հոովմէն բերած խաչ մը, որ և ցարդ կը պահուի և Տրդատայ խաչ կը կոչուի: Եկեղեցւոյս մէջ թաղուած են Յովհաննէս վարդապետ Պլուզ՝ ինչպէս կը ցուցնէր հին եկեղեցւոյն սեան վրայի արձանագրութիւնը՝ և Գէորդ վարդապետը: Եկեղեցւոյս նորոգ շինութեան միջոց առաջնայն նշխարները հանելով, նորէն ամրապնդին արկղով սեան մօտ գասուն աջակողմը, որուն տապանաքարին վրայ գրուած է. «Այս է տապան հանգստեան, Յովնան Պլուզ Ծործորեան, էր վարդապետ ձարտասան»: Երկրորդ և երրորդ եկեղեցիները Ս. Երրորդաբլուր և Ս. Սարգիս՝ փայտաշէն են: Չորրորդ եկեղեցին Ս. Փրկիչ՝ քարաշէն է ու փոքրիկ: Կայ նաև հինգերորդ եկեղեցի մը Ս. Աստուածածիկ՝ 1784ին կործանած, որ լինելու է անշուշտ 1343 թուին յիշուածը: Երզնկայի մէջ 1850ին կար միայն մէկ ազգային վարժարան 140 աշակերտներով. տարեկան ծախքն էր միայն 10—20 սակի եւ կեղեցիներու սնտուկներէ: 1886ին պարս-

ցաց թիւն եղեր է ութ, իսկ աշակերտները՝ երկու սեւը միասին՝ 1000է աւելի, զաստիարակ, սասուցիչ, և այլն, 30—40 հոգի և տարեկան ծախքը 7—800 սակի: Այս համեմատութենէն կարելի է եզրակացնել քաղաքիս ազգային վարժարանաց նաև ներկայ վիճակն: Այս վարժարանները չունին մեծ կալուածներ և որիչ եկամուտի աղբիւրներ. բոլոր ծախքը Ազգը կը հոգայ եկեղեցւոյ կալուածներէ, ազալոց թոշակներէ և նուիրատուութիւններէ: Ասոնցմէ զաս կրթական գործին կը նպաստեն նութապէս և բարոյապէս Պատ. Միացեալ և Հայուհեաց ընկերութիւնները: Յիշելու արժանի են Թուրքաց զինուորական և քաղաքական վարժարանները: Յոյնք և Բողոքականք ևս ունին մէկ մէկ ազօթատեղի և պարոց: Երզրնկայի ազգային կրթական գործը բազմամամբ Հայաստանի ուրիշ գաւառներու բաւական միութարական է: Պակաս չեն քաղաքիս ազգայնոց մէջ օգտակար և առ Ազգն ունեցած որբազան պարտատրութիւնները կատարող անձինք՝ Խօսքով, Կրամով և անձնական ծառայութեամբ: Տեղւոյս հայ երիտասարդութիւնն ալ ունի տասնէ աւելի բարի նպաստակներու ծառայող ընկերութիւններ: Ռուսեմական յիշատակով նշանաւոր եղած են նաև քաղաքիս ԺԳ և ԺԵ պարերը, որոնց մէջ ծաղկեցան բաց ի Յովհաննէս Պլուզէն, Մովսէս, Կիրակոս, Գէորդ և Գրիգոր վարդապետները, և այլն:

Հետեւեալ ցանկերէն կարելի է գաղափար մը առնուլ թէ՛ քաղաքիս և թէ՛ գաւառին բերոց վրայ. այս ցանկերը պատրաստուած են համարեա տասը տարի առաջ, և կը ներկայացնեն միջին հաշուով մէկ տարուան մէջ առաջ եկած բերքերը:

Յօրեն . . . . .	4935000	շինիկ
Սարք-պաշ . . . . .	2236000	»
Գարի . . . . .	4767000	»
Հանար . . . . .	215000	»
Կտաւաս . . . . .	17000	»
Կորեակ . . . . .	42000	»
Ոսպ . . . . .	400	»
Ընկեր . . . . .	25000	»
Գումարն . . . . .		12337400
		շինիկ



Լուրիա	646000	Հոխայ
Նրխախոս	1450	»
Սեխ և ձմերուկ	315000	»
Սոխ	355000	»
Էղիպտացորեն	5000	»
Գեանախնձոր	33000	»
Բալ	89300	»
Կեռաս	69900	»
Խնձոր	18900	»
Տանձ	42950	»
Խաղող	512000	»
Սերկեի	5000	»
Թուխ	199800	»
Դեղձ	15000	»
Նրխան	47000	»
Սալոր	31400	»
Շաղկամ	75000	»
Կաղամբ	108000	»
Պածիս	20000	»
Սխես	87600	»

Գումարն... 2677300 Հոխայ

Չաևագան բերքեր

Փեխակ մեղուաց	30450
Կաշի և մորթ գամշի և եզան	35000
Բուրդ	Հոխայ 75000
Պրոն կամ այծամաղ	53000

Տարւան մէջ միջին Հաշուով կենդանիներէն առաջ կու գան Երզնկա գաւառի մէջ.

Եղ	31755	} 97885
Կոլ	36700	
Գամէշ	7580	
Ֆուլ	2350	
Հորթ	19500	

Արջառաց ցեղէն ամբողջ... 97885

Ձի կատարեալ	2638	} 11308
» մալեալ	3250	
Մասակ ձի	3735	
Մարուկ	1685	

Ձիաց ցեղէն ամբողջ... 11308

Էշ	13400	} 20525
Ջորի	7125	

Էշաց ցեղէն ամբողջ... 20525

Ուխար	174700	} 495361
Խոյ	9141	
Գասն	55594	
Նոխաղ	6775	
Արծ	160840	
Ուլ	91311	

Ուխարաց ցեղէն ամբողջ... 495361

Ամբողջ կենդանեաց գումարն... 625079

Տեղային արհեստներն են զլիաուրարար տարազագործութիւն և պղնձագործութիւն: 2000 ընտանիքէ աւելի կ'ապրին մանրաց շինելով. կան նաև խաւարաձի, երկամձի, ներկարար, սոկերիչ, դերձակ, կոշիկար, նկարատպագործ, զարբին, առաջձագործ, երկրագործ. այս արհեստները ընդհանրապէս Հայոց ձեռքն են: Տաճիկներն են փերեղակ, բրուս, երկաթագործ, պարտիզպան և կասափարութեան պաշտօնեայ: Նպարեղէնք Յու-

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԵԶՆԿԱՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՐԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒԱՆԵՐ ԳԻՐԿՆԵՐ	ՀԱՅՐ		ՌՈՒՄԻՆԱԿ	ՌՈՒՄԻՆԱԿ
	Տուս	Հոգի		
Սուրբ Օհան	17	99	—	5
Գոլէշքէնի Բալանկա	10	48	—	—
Միմնի	85	540	—	—
Կարմրի և Էյսէսի	22	123	60	10
Եսայիք Պաղ	3	23	100	—
Տընկեակ	3	17	10	—
Ախոսնոց	13	?	—	—
Հայրապետի	20	114	20	10
Շիւրի	9	30	42	19
Խնձորեկ	30	227	—	25
Ս. Ներկողաբոսի վանք	2	10	—	—
Բժժառիճ	50	245	80	20
Վարս Բիլիսէ	26	111	—	44
Աղճաքէնոս	6	31	14	—
Վերի ագարակ (շեֆթիլի)	42	254	—	—
Կամուրջ գլուխ Բալանկա	4	27	1	—
Քուրդ	1	9	—	30
Տաճրակ կամ Տաճարակ	17	130	—	7
Եկան	67	420	8	—
Կէլէնցիք	31	183	—	—
Հասամ ագարակ	18	141	40	10
Ռսեկ	5	30	40	—
Մաթիգիւղ	52	285	10	—
Մեղուցիկ	185	1150	35	—
Ղարաթաշ	20	133	17	4
Մեծ ագարակ	57	354	50	8
Բոզման	54	205	24	—
Մանժուացիք	67	397	—	—
Վարի ագարակ (շեֆթիլի)	23	141	—	2
Ղարաուկերն	19	141	—	3
Գիւլիսէ	66	408	—	—

նաց, և մանրալաճատութիւնը մասամբ մը Բողբաքահանաց ձեռքն է: Խորաբանչիւր աարի Էրոտպէն Տրապիզոնի ճամբով 15000 Հազարագրամէն աւելի պղնձեայ տախտակներ կը ներմուծուին Երզնկայ և իւր շրջակայքը, որ ճարտար արհեստաւորք կը շինեն ամէն տեսակ անօթներ, գաւաթներ, գործիքներ, և այլն: Երզնկայի պղնձագործութիւնը նշա-



նաւոր հանդիսացած և պարգև բնդունած է Փարիզու, Վիեննայի և Ֆիլաւաէֆիոյ համալսարանային արուեստահանդէսներու մէջ : Այս գաւառիս հայ արհեստաւորք նոյնպէս շատ ճարտար են արծաթէ և պողպատէ ճարտարագործ իրեղէններ շինելուն մէջ :

Երզնկա ունի շատ մը գիւղեր, որոնցմէ զատ հայաբնակք և թիւքաց ու Քրդաց հետ խառն բնակողաց միճակաղիրն կը պնենք առանձին, յայտնելով միանգամայն, թէ նոր մարդահամարը ձեռքբերնիս չունենալով, ստիպուած ենք դնել ասկէ 20 ասրի առաջ նշանակուած թիւերը, որոնց վրայ յայտնի է մեծ փոփոխութիւն եղած է մինչև ցայժմ : Մեր միճակացոյց տախտակի մէջ գտնուած գիւղերէն զատ Երզնկայի շրջակայքը կան սրիշ 40է աւելի գիւղեր՝ այլազգի բնակիչներով, որոնց բազմաց անունները հայերէն են, ինչպէս Ս. Գրիգոր, Մեղրաշուր, Ճակնիկ, Փրկչի բաղ, Գարաթիձ, Նոր գիւղ, Վաղաւեր, Վարդաւաճ, Վասկերտ կամ Վասակակերտ, Խախ, և այլն :

Երզնկայի մէջ կան վեց բազմիք և 5 աղբիւրներ՝ որոնց ջուրը յաակապէս վաստակակերտէն ապուպաներով բերուած է, երեք պանդոկ՝ Սուրու խան, Թաշ խան և Փասխա (Օղրու խան՝ միւսներն աննշան են : Կայ թիւքաց զինուորական շայախի գործարան, հիւանդանոց, զօրանոց, վասոպարան, կաշիի, զգեստուց, կօշիկ գործարաններ՝ որոնք բանակի զօրաց զգեստուց և կօշիկներու պատրաստումը կը հոգան, ինչպէս նաև միմադրատուն մը : Շէնքերու մէջ նշանաւոր են պէյկերու և փաշաներու բնակարանները, հայ և թուրք երեւելիներու տունները, զինուորական վարժարանը, նոյնպէս ազգային թատրոնն՝ որ այժմ տանց վերածուած է : Երզնկա ունի նաև բնդարձակ վաճառանոց մը և երեք հրապարակներ, յորս կը վաճառեն փայտ, ցորեն, և այլ ամէն տեսակ վաճառքներ : Երզնկայի հնութիւններն են վանքերը և վանքերու աւերակները, միջնաբերդը, զհանուղին, Խակէնտէր անուամբ բազմիքը՝ որ ի հնումն եկեղեցի եղած է և Գուրշունի մզկիթը՝ որ քարուկիր շէնք է և ունի արձանադրութիւն : Երզնկայի վանքերու նկարագրութիւնները բրած ենք իրենց կարգին :

— 1888 տարուայ սպրիլի սկիզբները 10—12 օր շարունակ յորդահոս անձրևներ աւաղալով, և Եփրատ գետն ու հետեւարար Գայլ, Վասկերտ և այլ գետակներ յորդելով՝ ողողեցին գիւղ ու քաղաք : Փլան քայքայեցան շատ տուններ, ջրաղացներ, կրպակներ, կամուրջներ, և այլն : Հեղեղներէն քաղաքիս հիւսիսակողմը Ազթաշ անուն 50 տուն քրդաբնակ գիւղի վրայ լեռ մը փլչելով՝ 30 տունը գետնին խոր անպնդց մէջ թաղեց հանդերձ 142 բնակիչներով և անասուններով : Այս սղողումն մեծ թշուառութեան պատճառ եղաւ քաղաքիս և շրջակայ բնակչաց համար : — Երզնկայի ժողովուրդը նկատմամբ անցելոյն բաւական քաղաքակրթութուած է. լեզունին ու առողջանութիւնին մաքուր է, շատ քիչ անգամ ազաւաղեալ բառեր կ'արտասանեն : Մեր (թ. 271) պատկերը կը ներկայացնէ Երզնկայի պատաներու տարազը. այժմ սկսեր է բնդհանրանալ եւրոպական տարազը, թէ՛ արանց և թէ՛ կանանց մէջ : — Երզնկայի դաշտի երկայնութիւնը 7 ժամու և լայնութիւնը 3 ժամու ճանապարհ է. զարդարուած է պաղատու և անպաուղ ծառերով, այգիներով և պարաէզներով : Ընդհանրապէս լեռներու ստորասները ցրուած են գիւղերը և վանքերը. օդը բարեխառն է : Ունի քաղցրաշամ ջուրեր, մանաւանդ գիւղերու և վանքերու մէջ : Երզնկայ շրջապատուած է Տաւրոս լեռան շղթաներով, Գոհանամ և Քէշիշ աաղի լեռներով, ամէնքն ալ ապառաժ : — Վերջին ծանօթ գէպքերուն Երզնկայ քաղաքի և գիւղերու հայ բնակիչը ևս զոհեր, կորուսաներ և տառապանքներ ունեցան : — Ե. Հայաստան, 98—99 : Ստոր. Հայաստ. 12—20 : Թորոս Աղբաւր, Բ 47—51 : Խառն Կամակներ, 9—21 : Բազմապէս, Ը 296—300 : Մասիս, 3841 : Վ. Քիլեկ, Ա 210—216 : Եւ այլն :

ԵԶՆԿԱՅ. — Կը յիշուի Այրարատայ Շիրակ գաւառի Մարմաշինու վանաց արձանագրութեան մը մէջ :

ԵԶՆՁՈՐ. — Կը յիշուի Բարձր Հայոց կամախ գաւառի մէջ :

ԵՆՆԻ ԳԻՒՂ. — Գիւղ Շաղին Գարահիւսարի, 30 տուն հայ և 7 տուն մահմէտական բնակչօք : Հայք ունին Ս. Մկրտիչ ա-



նուամբ եկեղեցի և վարժարան մը՝ 30 աշակերտներով: Տես նՈՐ ՇԷՆ:

ԵՒՆԻ ԽԱՆ կամ ՆՈՐ ԽԱՆ. — Գիւղ Սեբաստիոյ արեւմտակողմը, ուր կը նստի գալմազամ: 150 տան չափ հայ կայ, և ունին Ս. Խաչ անուամբ փայտաշէն եկեղեցի մը՝ սրուն մօտ կայ նաև Սենեքերիմեան անուն գաղտոց մը: Այս տեղէն կը կատարուի Սամսոնի ճանապարհաւ ի Կ. Պոլիս երթեւեկութիւնը.

ԵՒՆԻՃԷ. — Ձուս հայաբնակ գիւղ Պրուսայի կուսակալութեան և առաջնորդութեան ներքեւ կառուցուած է Ողիմպոս շերան աբեղեան հարաւային ծայրը կրկին բլրակաց հարթ կողերուն և բլրակներն իրարմէ բաժնող ստուակի մը երկու եզերաց վրայ: Ունի 1200 տուն. բնակիչք զլիարարար երկրագործ են: Ունին Ս. Յակոբ անուամբ եկեղեցի և երկսեռ վարժարան մը գեղեցիկ ու հոյակապ, 1885ին կառուցուած՝ առաջնորդ Տ. Բարթոլոմէոս արքեպիսկոպոսի մասնաւոր ջանիք և առաջարկութեամբ ժողովրդեան: Վարժարանին օգնելու համար հաստատուած է նաև ուսումնասիրաց բնկերութիւն մը, որ բաժանորդութեամբ ու հանդանակութեամբ զրօսարան մը շինած է: Տեղւոյս բերքն է ցորեն, եղիպացորեն, գարի, և այլն: Հեքամարուծութեամբ ևս կը զբաղին: Կը պատմուի թէ մօտ հինգ զար առաջ Հայաստանի խորերէն եօթն երկրագործ բնասնիք եկած բնակութիւն հաստատած են նախ գիւղէս կէս ժամ հեռու գէպի հարաւ բլրակի վրայ. սակայն թուրք զրացեաց թեղազրութեամբ յետոյ փոխուեր են այժմեան վայրը. ուստի թուրքերը ուրիշ գեղացիներէ սրոշելու համար կոչած են Ենիտէն խրեան օրսերար (Նոր բնակիչք), և ապա կրճատուելով և գեր է Եւնիճէ: Գիւղս Ողիմպոս շերան 1 ժամ հեռու է: Եւնիճէն 1/2 ժամ հեռու կը ահնսուին բերդի մը աւերակներ. շերան ու գիւղի մօտ ալ գետ կը նշմարուին յունական գերեզմանաց մնացորդներ: Կան քանի մը տուն բողբոջական, ինչպէս նաև կաթուղիկէ Հայք: Գիւղիս մէջէն հոսող ստուակը կը բլիէ Ողիմպոսի կողերէն ապառաժէ մը, ու շագանակներններէ, կեռասներններէ և սալորեններէ ձեւացած ստուերախիտ անտառակ-

ներն ձեղքելով՝ առատութեամբ կը բաշխէ գիւղացոց բազմաթիւ ազրիւրներու ջուրն, և գիւղէն դուրս դաշան անցնելով՝ կ'ստոգէ թթմնիններն, ձմերուկներու, վարունգներու և առատեղներու պարաւէղները: Գիւղացիք գարնան ու ամրան կը գիմեն Տերեւ-պաշի բուսած տեղը և կը զրօսուեն: Գիւղիս օդը թէև աշնան ու ձմրան քիչ մը խոնաւուս է, սակայն սրիշ ժամանակներ շատ սոռզարար է:

ԵՒՆԻՃԷ. — Հայաբնակ գիւղ Խարբերդի առաջնորդական թեմի մէջ: Բնակիչք են 16 տուն՝ 94 հոգի. ունին Ս. Աստուածած ծիւն անուամբ եկեղեցի մը:

ԵՒՆԻՃԷ. — Մարզուսի մերձակայ գիւղ. 50 տուն հայ կան և ունին եկեղեցի:

ԵՒՆԻՃԷ, ՍՍԱՆՈՍ կամ ԽՍԱՆՈՋ. — Գիւղ Սեբաստիոյ. քաղաքէն 8 ժամ հեռու՝ աբեղեան կողմը: Բնակիչք հայ և թուրք խան են: Հայք 70 տուն են, և ունին Ս. Թորոս անուամբ եկեղեցի ու Սիւնեաց անուն վարժարան մը:

ԵՒՆԻՃԷ ԳՍԱՆ (Նոր բերդ). — Հայաբնակ գիւղ լեւոնային Կելիկիոյ, Ֆրոնտուէն 4 ժամ հեռու: Ունի մօտ 400 տուն բնակիչ և վաշելուչ եկեղեցի մը:

ԵՒՆԻ ՓԱՋԱՐ. — Հայաբնակ գիւղ Պիլճիկի առաջնորդական վիճակի մէջ: Ունի խորէնեան անուամբ վարժարան մը՝ 20 աշակերտներով:

ԵՒՆԻ ՔԷՅՅ (Նոր գիւղ). — Գիւղ Տուրբերանի խնուս գաւառի: Ունի 30 տուն՝ 350 բնակչօք: Տես նՈՐ ԳԻՎ:

ԵՒՇԻՆ, ԸՐՄԱՔ. — Փոքր Ասիոյ գեաներէն մին, որ կը կոչուի նաև Թօքար սաչք, Ամասիոյ գետ, Չարչեկոյին սաչք, և ի հնումն Իրիս: Կը ձեւանայ երկու մեծ վտակներէ, որոնց մեծագոյնը Սեբաստիոյ հիւսիսակողմի լեռներէն բղիւնելով կու գայ կ'անցնի Թօքարէն, Թրիսալէն, Ամասիոյէն, և այնուհետև կ'երթայ կը միանայ միւս վտակին հետ՝ որ Երջարդ-սաղիէն կը բլիէ: Եւշիլ բրմաք այսպէս երկու վտակներու միաւորութենէն վերջը կ'երթայ կը թափի Սեփուր: Մեծ վտակը ի հնումն Լիգրոս կ'ըսուէր՝ որ Գայլ բուել է, և փոքրը՝ Իրիս կ'անուանէր՝ որ Ծխածան բուել է. այս վեր-



ջինը բուն գետը կը համարուէր. իսկ Լիզոս  
անոր մէկ վտակը: — Ճնորհ, ի Քարերուն, Ծ:  
ԵՒՇԻՒՆ ՏԵՐԻՆ. — Մարտշի շրջակայ գիւ-

ղերէն մին:

ԵՒՏԻ ԳԱՐՏԱՇ (Եօրն եղբայրներ). — Լեւ  
Կիլիկիոյ, Չէյթունի հիւսիսային կողմը:

ԵՒՏԻ ԳԻՒԼԻՈՒՆ (Եօրն եկեղեցիներ). — Այ-  
րարտայ վանանդ գաւառի արեւմտակողմը  
փոքրիկ հովիտ. այս անուամբ գիւղատեղի  
ես կայ, ուր կան եօթն եկեղեցիներու աւե-  
րակներ:

ԵՒՏԻ ՊՈՒԼԱԳ (Եօրն վտակներ). — Սիւնիաց  
Հարանդ գաւառի մէջ այս անուամբ աղբե-  
րակունք կան:

ԵՒՎԵՊՏԻԱՆ. — Գիւղ լեւնային Կիլիկիոյ,  
Սարոս գետոյն մօտ: Ունի շատ այգիներ:  
Բնակիչք 1863ին էին 80 տուն հայ. այժ-  
մեան թիւն չգիտենք:

ԵՒՎԵՊՏ. Տես ձՈՒՐՃՈՎԱՆ:

ԵՒՎՄԱԼ. — Հայաբնակ գիւղ Տուրուբե-  
րանի Մանազկերտ գաւառի, 11 տուն բնակ-  
չօք:

ԵՒՎԱՆ. — Գիւղ լեւնային Կիլիկիոյ մէջ  
1100մ. բարձր գիրքով, համանուն Երբան-  
տայ լեւնաբլրոց ստորոտը:

ԵՒՎԱՆ ԳԱՆԼԻՍ. Տես ՇԱՆԻՒՄԱՐԱՆ:

ԵՒՎԱՆԻԸ (Օնուս). — Լեւ Այրարտայ  
Մաղաղ-Ոստան և Ուրծ-Արած գաւառաց  
մէջակոյ:

ԵՒՎԱՆԻԸ. — Թուրքարնակ գիւղ Այրա-  
րտայ վանանդ գաւառի մէջ: Դոյն անուամբ  
գիւղ կայ նաև Երբակայ մէջ:

ԵՒՎԱՆՉԱՆԱՆ. — Հայաբնակ գիւղ Այրա-  
րտայ Արագածոտն գաւառի Կարբի Պա-  
սարի սիճակի մէջ: Այս գիւղը ըստ Շահ-  
խաթունեանի է Չաքարիս պատէի Որդիանը:

ԵՒՎԱՆ ՏԱՂ. — Լեւ Տիբրիկու. ունի  
հանքային ջուր, որուն մէջ կը լուացուին  
բորոսներ: Տես ԲՕԼՈՒ ՍԱԲ:

ԵՒԼՏԵՁ ՏԱՂ. Տես ԱՍՏԻԿ:


ԵԹՈՎՊԵՏ, ԱՊԵՍԻՆԵԱ կամ ՀԱՊԵՇԱՍ-  
ՏԱՆ. Գղ. ABYSSINIE, ÉTHIOPIE. — Ան-  
կախ աւերթիւն Ափրիկէի. տարածութիւնն  
է 540000 քառ. կիլմ. և ունի 6500000  
բնակիչ. մայրաքաղաքն է Ալախ Այգե-  
պա: Վերջին գարուց մէջ եկեղեցական  
յարնչութեան մէջ եղած է աշխարհն Հայոց

հետ, ունեցիր է հայ վերահասուչներ: Ե-  
գիպտոսի հայ առաջնորդներէն ոմանք պար-  
բերաբար յարաբերութեան մէջ գանուած են  
Հասկէ կառավարութեան հետ: Գետ շատ  
ժամանակ չէ, որ Հասկէաստան Երուսաղէ-  
մայ Հայոց պատրարքէն ինպրեց կրկու  
վարդապետ քարոզիչ կարգել Հասկէներու,  
սակայն յանձնառու վարդապետ չգանուե-  
լուն համար՝ ինպիսի մերժուեցաւ, և Հա-  
սկէները հարկադրուեցան Խոպիններուն գի-  
միւ: Իսկ Ուստիոյ խորերէն Օրբատարս կղե-  
րը՝ յանձն առաւ մինչև այս աշխարհը գա-  
լու, ոչ միայն կրօնական այլ և ուրիշ նպա-  
տակներով: Հայք վաճառականութեամբ ևս  
եկած են այս երկիրը, գոնեաւ յաջողու-  
թիւն և համակրութիւն: Հայերէն եղած են  
նոյն իսկ թագաւորի գանձապետ՝ ինչպէս  
ալթեասաներով գարու մէջ Սեյիֆ ուստու  
կոչուած Արարկերցին, որուն յաջորդեց  
1762ին Յովն. Թովմաճան, և յետոյ ասոր  
որդին Պօղոս: Հայոց Եթովպացոց հետ  
ունեցած յարաբերութեան սկիզբը շատ հին  
լինելու է: Հետեւեալ գէպրէն ևս կը յայտ-  
նուի Հայոց Եթովպացոց. հետ ունեցած  
յարաբերութեան հնութիւնը. Հիթում՝ Կա-  
սիկոսի աէրը գրած է Հոսովմայ քահանայա-  
պետին, որ յորդորական թուղթ գրէ Եթով-  
պացոց թագաւորին խաչակրութեան երթա-  
լու համար, և այդ թուղթը գրիէ Հայոց  
թագաւորին, որ թարգմանել աւարով Եթով-  
պացոց լեզուի՝ այնպէս գրիէ կամ տանի  
առ թագաւորն: — Այս աշխարհի վաճառք-  
ներուն մէջ ծանօթ է փղոսկին կամ փղաց  
ժանիքը, Հնդկաց աշխարհի մէջ եղածներէն  
մեծագոյն, զորս հայ վաճառականներ կը  
տանէին մինչև Հնդկաստան և Չինաս-  
տան: — Սերասացի հայ մը՝ Վառման  
տոհմէն՝ որ բժշկական նախնական ծանօ-  
թութիւններ ունի եղեր, այս երկիրն մէջ  
հաստատուելով և մինչև անգամ հասկէ  
աբբունեաց բժիշկ ըլլալով, մեծ հարստու-  
թեան աէր եղեր է, և 1899ին կանչեր է  
Մարգար անուն երիտասարդ եղբորորդին,  
և նա գացեր Էգիպտոս վերադարձեր է՝ հե-  
տը բերելով ձոյլ սակի, փղոսկր, ախածի,  
գայլի, ալուէսի մորթ, և այլն: 1899ին  
Հասկէներու բանակին պիտայից հայթհայ-



Թիշը Թէրզեան մականուամբ հայ մ'էր, և իւր գործին կեդրոնը Ճիպուլի հաստատած էր: Այժմ ևս կը գտնուին Հայեր Եթովպիոյ մէջ, վաճառականական գործերով: Այս երկրի բնակչաց բարոյական, բազարական և կրօնական պատմութիւնն գրած է Տիմոթէոս վարդապետ Սափրիչեան, և տպած է 1871ին Երուսաղէմ, «Երկրակայ պատմութիւն ի Հայկէստան» վերնագրով:

ԵՒԻԶՎՈՒՄ կամ ԵԻԶՎՈՒՄ. — Գլխաւոր շէն ծովային կիլիկիոյ մէջ, 130 տունն աւելի բնակչօք:



273. Ելեւսայի մէջ շիրիմ:


ԵՒԻԶՎՈՒՄ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Բասեն գաւառի մէջ. Հասանդալէէն գէպի արեւելք 6 ժամու ճանապարհ հեռու: Բնակիչք հոգը մշակելու լաւ կերպը գիտնալով, 1 սոմար ցորեն ցանալը արտի մը մէջ 100 սոմար վերուցիր է, և այս պատճառաւ գիւղս կոչուեր է Իռգվերան (Հարիր սուտոյ):

ԵԻԶ կամ ԵԻԶ ՔԻՎՈՒՄ. Տես ԲԱԳՍԱՍԵՆ և ՎԱՐՁՈՒՀԱՆ:

ԵԼԻԲԵՆ. Տես ԵԼԻԲԵՆ:

ԵԼԵՆԵՆԳՈՐՓ. Ռ. Еленендорфъ. — Աւան և գերմանական գաղթավայր Գանձակ գաւառի. քաղաքի հարաւակողմը մտա 7 վերստ հեռու, հարթութեան մը վրայ, Գանձակ գետի աջ կողմը: Հինգ կանոնաւոր, լայն և ուղիղ փողոցներ կը ձգուին գրեթէ մէկ վերստ երկայնութեամբ, որոնց երկու կողմը արնկուած կաղամախի, բարախի և սօսիի ծառեր, յատուկ զեղեցիութիւն մը կու տան: Գրեթէ կեդրոնը կը բարձրանայ գոթական ոճով սրբատաշ կաթիլը բարէ շինուած և կեղեցին, որուն մէկ կողմը կը գտնուի պետական երկրատեսան զեղեցիկ պարոցը: Եկե-

ղեցին ունի հրապարակ, նոյնպէս կաղամախի ծառերով հովանաւորուած: Տները մէկ երկու և մինչև եռաբարեանի են, իրենց առջև ունենալով ընդարձակ բակեր և փոքրիկ բանջարանոցներ: — Աւանիս մէջ կան բաւական թուով զեղեցիկ, հարուստ խանութներ, արհեստանոցներ, հիւրանոց, հասարակաց այլի, նամակատուն, հեռագրատուն, և այլն: Բնակիչները 249 տուն՝ 1457 հոգի են, վարժեման զեղեցի Գերմանացիներ, և 50 տուն՝ 160 հոգի մտակայ զեղեցի և Գանձակէ եկած հաստատուած Հայեր. կան նաև երկերկու տուն ուս և թուրք: Հայերը ունին շարժական խորան գահշիճի մը մէջ, ուր կը կատարեն իրենց հոգեւոր և ծիսական պէտքերը: Գերմանացիք գլխաւորապէս կը պարտային երկրագործութեամբ, այգեպանութեամբ, գինեկործութեամբ և գարեջրոյ պատրաստութեամբ, իսկ Հայերը՝ բացառապէս առևտրով ու արհեստներով: Այս գաղութի մէջ նշանաւոր է Ֆորէր գերմանացին, որ միլիոնաւոր է, ունի բաւական թուով այգիներ, արաեր, ընդարձակ արօտանոցներ, ձիարուծարան, գինոյ և գարեջրոյ գործարաններ, և այլն: — Գանձակի գաւառ, Ա 146-147:




274. Ելեւսա քաղաքի դրամ:

ԵԼԵԻՍԱ, ԵԼԵՈՒՍԱ, ՍԵԲԱՍՏԷ կամ ԱՅԱՆՑՆ. Ἐλεούσα, Σεβάστη. — Ի հիւսիս նշանաւոր քաղաք ծովային կիլիկիոյ. կրօնիսի հիւսիսային արեւելեան կողմը, որուն աւելը այժմ կայ Այաշ գիւղը զեղեցիկաղիր բարձր և ծովահայտաց: Կանխաւ բարձրաժայռ կղզեակ մ'էր, ուր կապապատկացուց Արքեղայոս թագաւորը, փրկչական թուէն քիչ առաջ բերդ մը կառուցց. յետոյ աւազով լեցուելով և միանալով ցամաքի հետ դարձած է թերակղզի: Այժմ կը տեսնուին հին աւերակաց մնացորդներ, շիրիմներ, ջրամբար, ևն.: Փաղաքիս անուամբ կրամներ ևս կան:



ԵԼԹԻ. — Լեռ Սիւնեաց Գողթն գաւառի: ԵԼԻ. — Նոյն կը համարուի Ալլիի հետ: ԵԼԻՍԱՐԵՓՈՒՊՈՒ. — Գանձակի կամ Եղիւսարեթուպոլի անունն այսպէս եւ կը գրուի: ԵԼԻՋԱՅ կամ ԲԱԼԻՋԱՅ. — Աւերակ գիւղատեղի Այրարատայ Մազազ գաւառի, ուր կան եկեղեցոյ հետքեր և խաչքարեր՝ հանդերձ արձանագրութեամբ:

ԵԼՂԱԻԱՆ կամ ԲԱՐՁԱՐԻ. Տես ԷԼՔՈՎԱՆ: ԵԿԱՆ. — Այս անուամբ կրկին վերին և Սասրին գիւղեր կան Մարանդէն կէս մղոն հեռու: Գիւղիս անուան համար այլազգիք աւանդութեամբ կ'ըսեն, թէ Էփրանք նասանքէն տաջ եկած է. ուր տաջին անգամ յետ ջրհեղեղի եկած է Նոյայ կինը:



275. Ելեւսայի մէջ շիրիմ:

ԵԿԱՏԵՐԻՆՈՎԱՐ. Ռ. Екатеринославъ. — Մեծ և վաճառաշահ բազար Ռուսիոյ, Տնփերի վրայ: 1781ին, 80 տուն կաթուղիկէ Հայք խրիմէն հոս գաղթեցին, Տ. Յակոբ Վարդերեսեիչ վարդապետի առաջնորդութեամբ, և կառուցին փայտաշէն եկեղեցի մը՝ Ս. Լուսաւորիչ անուամբ. բայց մեծագոյն մասը 1790ին զնացին հաստատուեցան ի խարասու՝ խրիմու կեդրոնական բազարը:

ԵԿԱՏԵՐԻՆՈՎԱՐ. Գ. Գ. ЕКАТЕРИНОДАР. Ռ. Екатеринодаръ. — Որոշ յայտնի չէ, թէ առաջին անգամ, ո՞ր թուականէն սկսեալ այստեղ բնակութիւն հաստատուած է. բայց կը պատմուի, որ 200 տարի առաջ Ռուսիոյ խորերէն զրկուած են աս կողմերը մարդիկ և բնակութիւն հիմնած են, զլիսաւորաբար Քուպանի ափերը Չերքէզներու յարձակումներէն պաշտպանելու համար. իսկ Եփրատերիկոյար անունը, առաջին անգամ պաշտօնապէս դրուած է տեղւոյս վրայ,

1793 թուի գեկա. 1ին, ի պատիւ Ռուսաց Եփրատերինա մեծ թագուհւոյն: Եփրատերինոյար՝ Քուպանեան երկրի նահանգական բազարն է, և կը գտնուի Քուպան գետոյն աջ ափունքը, ու լրեն շէնքերով և այգիներով կը բնէ 10 բառակուսի վերաս գաշտային հարթ տարածութիւնը: Երկիրը շատ արդաւանդ է և պտղաբեր, կլիման բարեխառն, իսկ օդը և ջուրը բաւական անողջարար: Քաղաքս իւր բնակչաց բազմութեամբը հիւսիսային կովկասի բազարներու մէջ առաջին տեղը կը բռնէ, իսկ ամբողջ կովկասի մէջ երրորդ: Բնակիչներն են ուս, հայ, յոյն, հրէայ, թուրք, գերմանացի, կարայիմ և պարսիկ՝ սակաւամիտ: Քաղաքիս բնակչաց թիւը հեղահեղ զգալի կերպով աճած է, այդ կարելի է տեսնել հետեւեալ ցանկէն.

- 1871ին երկուսն բնակչաց թիւն էր 17222
- 1881ին       »       »       »       28017
- 1897ին       »       »       »       65697

Մեծամասնութիւնը կը կազմեն Ռուսները, որոնք ունին 12 մեծ ու փոքր եկեղեցիներ և զանազան միջնակարգ բազարային երկուս գպրոցներ: Լուսաւորչական Հայոց թիւն է 1391 հոգի, բաժնուած 300 տան, որոնք բոլորն ալ գաղթած են զանազան տեղերէ, խրիմէ, Նոր-Նախիջևանէ, Նոր-Ալմարէ, Տաճկաստանէ, Պարսկաստանէ, և այլն: Ռուսին փայտաշէն փոքրիկ, գեղեցիկ եկեղեցի մը նուիրուած Ս. Աստուածածոր անուան, որ օծուած է 1868 թուին հանդուցեալ Քէրոյ արքեպիսկոպոս վիճապետեանի ձեռամբ: Այժմ ժողովրդեան բազմութեան պատճառաւ պէտք կայ աւելի մեծ աղիւսաշէն եկեղեցոյ, զոր կառուցանելը պիտի է տեղւոյս հայ ժողովրդեան համար, քանի որ վերջինս բոս նիւթականին բաւական ապահով վիճակի մէջ է: Ռուսէին նոյնպէս, 1863 թուին հիմնած Մերոպեան անուամբ հոգևոր ծխական գպրոց մը, որուն մօտ 1870ին բացին նաև օրիորդաց ուսումնարան, տեղացի աիկնանց խնամատարութեամբ: Հայոց ծխական գպրոցի մէջ մինչև 1897 թուականը կ'ուսանէին միայն հայ մանուկներ, բայց նոյն թուին սկսեալ երբ գպրոցը անցաւ նախարարութեան ձեռքը,



կ'ընդունուին նաև ուսմանուհիներ և գրպուցը կը կոչուի այժմ՝ «Եկատերինոպոլի հայ հասարակութեան դպրոց»։ Թէև գարձեալ գպրոցի պահպանութեան համար եկեղեցին կը ծախէ իւր սեպհական գրամէն տարեկան 3000 ռուբլի. երկուս մանուկներու թիւն է 100 հայ և 40 ուսուցիչներ։

Կաթուղիկէ Հայոց թիւր 250 կարելի է հաշուել, որոնք են խոտընուրցի (հագագործք), Արդուինցի (արհեստաւորք հողաթափ շինելու), Ախալցխացի ու Տրապիզունցի։ Ասանցմէ մնայուն 10-15 բնասանիք կան միայն։ Կաթուղիկէ Հայք առանձին եկեղեցի չունին, իսկ քաղաքիս մէջ կայ 1893ին կառուցուած քարաշէն եկեղեցի Համալուան հասարակութեան համար՝ որոնց թիւր 6000ի կը հասնի։

Եկատերինոպոլի Հայք առ հասարակ մեծ մասամբ կը պարապին վաճառականութեամբ, կան նաև քանի մը արհեստաւորներ, ինչպէս սակերիչներ, ժամագործներ, կոշիկարներ, գերձակներ, և այլն։ Տեղական նշանաւոր վաճառականական աները գլխաւորաբար Հայոց կը պատկանին, որոնց մէջ ամենէն նշանաւորն է Թորոսեանց եղբայրներու «Վաճառականական բնկերութիւնը», որ տարեկան քանի մը միլիոններու շրջանառութիւն կը կատարէ։ 1895 թուի փետր. 15ին Հայոց վեհափառ Հայրիկը իջեանեց այս անուանի բնասանիքի տունը և ամբողջ շարաթ մը անոնց մօտ հիւրասիրուեցաւ։

Նշանաւոր է նոյնպէս Պարսկաստանցի հայ Աւետիսներու ձիթագործարանը, որ իր տեսակին մէջ ամենամեծը և ամենաառաջինն է ամբողջ Ռուսիոյ մէջ։

Իբրև Ռուսաց քաղաք, գործածական լեզուն ուսուերէնն է։ Տեղական Հայերը, բացի Տաճկաստանի և Պարսկաստանի գաղթականներէ, մնացած բոլոր մասը կը խօսի օտար լեզուով, և ցաօք որաի պէտք է խոստովանել, որ մայրենի լեզուն օրէ ցօր բոլորովին կը մոռցուի բազմաթիւ հայ բնասանիքներու մէջ։

Փողոցները շատ կանոնաւոր են և ուղղադիր՝ Մեծամեծ աները կը գտնուին քաղաքի կեդրոնը՝ հրապարակներու և գլխաւոր փողոցի վրայ, մեծ մասամբ շինուած են բակերու մէջ և հովանաւորուած տերեւախա

ժառերով, այնպէս որ հեռուէն նայողի վրայ Եկատերինոպոլ գիւղի տպաւորութիւն կը թողնէ։ Ամենազլխաւոր փողոցը կը կոչուի Կարմիր փողոց՝ որ կը ձգուի հիւսիսէն հարաւ և գերշերները կը լուսաւորուի երկարական լուսով, և բոլոր փողոցի սեղաութեամբ կ'անցնի երկարաշարժ հանրակառքը՝ որ կը պատկանի Պիլճիակիան բնկերութեան մը։ Կարմիր փողոցի հիւսիսային ծայրը քաղաքիս հաշուով կանգնուած է գեղեցիկ կաթոլ մը՝ ի պատիւ Ղազարի գօրաց քառանկանայ երկրորդ դարեգարձի, որ կատարուեցաւ 1896 թուին. կաթոլը կը ներկայացնէ քառանկանաձև սիւն, որուն վրայ սակեղէն տառերով գրուած են 1696-1896 թուականները. նոյն փողոցի հարաւային ծայրը կը գտնուի բաւական բնագործակ հրապարակ մը, ուր շուտով պիտի կանգնուի Ռուսաց Եկատերինա Քմեծ կայսրուհւոյն փառահեղ արձանը։

Վաճառականութիւնը բաւական ծագկած վիճակի մէջ է. ամենախոշոր վաճառականական ձեռնարկութիւնները կը կատարուին քաղաքիս հիւսիսային ծայրը, որտեղ տարուան մէջ երեք անգամ ասօնավաճառ կը լինի։ Արասահանութեան գլխաւոր նիւթերն են՝ ցորեն, ալյուր, ձէթ, խզ, ձի, եղն, ոչխար, կաշի, խոտ, փայտ, երկրագործական մեքենաներ, և այլն։ Ասանցմէ զատ քաղաքս ամէն տարի կ'արասահանէ մեծ քանակութեամբ գանազան տեսակ պտուղներ և բնոյեղէններ, ինչպէս խաղող, տանձ, խնձոր, կիտառ, բալ, սալոր, գեղձ, ծիրան, սևիս, ձմերուկ, լուբիայ, պամիս, կալամբ, ճակնպեղ, գեանախնձոր, գազար, սոխ, սխտոր և ուրիշ շատ տեսակ կանաչեղէններ։ Եկատերինոպոլի առեւտրական շրջանառութիւնը կը հասնի տարեկան 20 միլիոն ուրբլի, որուն մէջ ամենազլխաւոր տեղը կը բննեն ցորենը, ծխախոտը և ձէթը. այս վերջին բերքերը ոչ միայն բնագործակ պետութեան հետաւոր գաւառները, այլ և մեծ քանակութեամբ կ'ուղարկուին արասասահման։ Քաղաքիս արեւմտահիւսիսային կողմը, Գուպան գետի ափունքը շինուած են բազմաթիւ գործարաններ՝ կաշիի, օճառի, աղիսի, և այլն։ Եկատերինոպոլ ունի սեպհական հիւանդանոց, գրապարան, արական



և իրական գիմնագիտններ, ազայոց և աղջկանց ուսումնարաններ, ուսուցչական դպրատունոց, արհեստական դպրոց, ջրմուղ և սպանդանոց: Քաղաքին մէջ կան երկու փառաւոր բաղնիքներ և քանի մը մեծ, զեղեցիկ ու մաքուր կահաւորուած հիւրանոցներ: Վերջիններու մէջ իր զեղեցիկութեամբ և մաքրութեամբ առաջին տեղը կը բնէ «Կեդրոնական հիւրանոցը», որուն փառաւոր շինուածքը կը պատկանի Արմաւիրցի Բողարուկեան հայ եղբայրներուն: Շէնքերու մէկ մասը՝ մօտ 2300ը, կառուցուած է թրծած աղիսով, իսկ աւելի մեծ մասը 12500 շինուածքներ՝ կառուցուած են փայտէ, եղէգէ և ուրիշ նիւթերէ. որոնք ներսէն և զրսէն ծեփուած են կաւով և գածով ճերմկացուած: Քաղաքս իւր յաջող վաճառականութեան և ճանապարհներու զիւրութեան շնորհիւ կը ծագիլի օր աւուր և հսկայաքայլ կը յտաւ ծաղիմէ: Երկաթուղւոյ գծով միացած է թէ՛ Սեւ ծովի հետ Նովոռոսիքի նաւահանդրատով և թէ՛ բոլոր Ռուսիոյ և Կովկասի նշանաւոր քաղաքաց: Եկատերինոպարի շրջակայ զիւրութից մէջ ևս կը գտնուին հազարէ աւելի Հայեր, ամէնքն ալ պաղթած են Տրապիզոնէ և մօտակայ տեղերէ. որոնց զխաւոր զբաղմունքն է ծխախոտի մշակութիւն: Ըստ հոգեւոր վարչութեան Եկատերինոպար և Քուպանի աշխարհը կը պատկանի Նախիջևանու և Պետարապոլոյ թեմին:

ԵԿԱՏԵՐԻՆՈՎՊՈ. — Հայաբնակ զիւղ Նոր Նախիջևանի 1886ին հաստատուած. քաղաքէն 12 վերստ հեռու է դէպ ի թաղան գնացող ճանապարհէին վրայ: Սա Նախիջևանի հայաբնակ զիւղերէն վեցերորդն է:

ԵԿԵԱՆ. Տես ՎԱՅՈՑ ԶՈՐ:

ԵԿԵՂԵԱՑ ԳԱՐԱՌ. — Բարձր Հայոց հին գաւառներէն մին, որուն կը համարատարանէ այժմ Եղնիա: Յունաց ծանօթ էր Ազիլիսիէի (Αζιλισηγή) անուամբ, և Հոսլմայեցոց Աշիլիզէն (Acilisene) և կրճատելով Գեթիէի (Κελετσινη) կամ Չերզիէն. որուն նմանութիւն սնի այժմ գաւառիս զիւղերէն մին՝ Չերզիէի կամ Ճրոզրէի: Կոչուեցաւ նաև Անանուսիակ գաւառ՝ Անահտայ զից պաշտաման համար, որ հոշակուած էր նաև այս կողմերը: Յայտնի չէ Եկեղեաց

անուան ծագումը, բայց անուած է Եկեղեաց անունը տոհմէն, որ կը յիշուի Ներսիսի գահնամակին մէջ. գրուած կը գտնենք նաև Եկեղեցեաց: Վեցերորդ դարու մէջ, Յուստինիանոս կայսեր բազմամթիւ շինութեանց պատճառաւ, Բիւզանդացիներէն Յաւատիկանու սրբոյ գաւառ կոչուած է: Ստարած կը յիշէ գաւառս և կը գնէ Եփրատայ ու Անտիատարսի մէջտեղ. կ'ըսէ թէ կանխաւ Կոփաց նախարարի իշխանութեան ներքև էր, և Արշակունեաց թագաւորէն առաջ՝ Չահրիատ զայն Սելեւկիացոց կուսակալներու ձեռքէն աննկրով մերձակայ գաւառներով հանդերձ, հաստատեց Փոքր Հայոց թագաւորութիւնը, որ տեւեց, ըստ Ստարբոնի կարծեաց, մինչև Վաղարշակայ թոսնորդայն Տիգրանայ թագաւորութիւնը: Տիգրանայ քեռայրը Միծն Միհրդատ իւր իշխանութիւնը տարածած



276. Չահրիատ թագաւորի դրամ:

էր մինչև Եկեղեաց սահմանները, որուն ընթաց և Գաւառիս (Δασειρα) ամրոցի մէջ ապաւինեցաւ ժամանակ մը, Պամպիլի և կած միջոց. այս ամրոցը այժմ անձանօթ է, որ կը թուի լինել գաւառիս հիւսիսային արեւմտեան կողմը, և գուցէ բնիկ հայկական սահմաններէն ալ դուրս: — Գաւառս՝ ինչպէս ի հնումն հեթանոսական պաշտամանց մէջ, նոյնպէս քրիստոնէական կրօնից մէջ ևս զերազանց եղաւ, «մանաւանդ քան զբնու աշխարհս, գաւառս այս Եկեղեաց, զճարտարայեան հիմնարկութեան և շինութեան և կեղեցոյ Հայաստանեայց յինքն բնկալեալ կենօք, ի բարիօք կենաց պատճառ. և չարչարանօք՝ յանմտաց երախտեաց յիշատակ, և մահուամբ՝ զեղ բժշկական միշտ մահացելոց մարդկան»: Վասն զի ոչ միայն Լուսաւորչի՝ այլ և անոր սրբուցը ու թոսանցը հանգստավայր եղաւ գաւառս: Եկեղեաց



բերոց, վիճակագրութեան, և այլ հանդա- մանաց մասին, ընդարձակ գրած ենք Եղբն- կայի նկարագրութեան մէջ:

ԵԿԵՂԵՑՍՁՈՐ. — Կը յիշուի Արցախի մէջ:

ԵԿԵՂԵՑՍՁՈՐ. — Հայարնակ գիւղ Այրարատայ Ծիրակի գաւառի արեւե- լեան մասին մէջ. Պաշ-Գիւղի հիւսիսային կողմը և Կարկաջանի ձորի ազատաժուտ եզրի վրայ: Բնակիչք 65-70 տուն, եկած են Կարսի Բուխի և Ճամուշի գիւղերէ: Արդի եկեղեցւոյ մօտ ի հստամն բերպ կայ եզեր, որուն փորուածքներէն դուրս կու գան բազ- մաթիւ փատած գիւղեր: Կը պատմեն, թէ երբ Լէզկիները եկեր են, ժողովուրդը պա- արսպարուեր է բերդի մէջ, թշնամին առնե- լով՝ ապաստանածները սրահոտար բրեր է: Բուխի գիւղէ Հալաճեան մականուամբ աչ- գային մը՝ իւր անձնական ծախքով և իւր սեպհական գեանի վրայ վարժարան շինել տուեր է գիւղիս մէջ, ուր կ'ուսանին նաև շրջակայ գիւղերու աղայք:

ԵԿՄԱԼ. — Սահաւարնակ գիւղ վասպու- րականի վանայ շրջակայքը. թեմ Կոտց անապատի:

ԵԿՄԱԼ կամ ԵԲՄԱԼ. — Եոյնպէս սա- կաւարնակ (6 տուն) գիւղ Այրարատայ Բա- գրեանոյ գաւառի, Գոմքէն 1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ հեռու, Պէտղիկի գիւմաց:

ԵԿՏԱՍՏԱՆ. — Սիւնեաց Արեւիք գաւառի մէջ, Կաշեր գիւղի հիւսիսակողմը, վտակի մը եզերքը կը նշանակուի աւանս, որ հայ- բերնիք եղած է Ստեփանոս Շահումեանցի: Սա թեղազիր եղած է Գաւիթ բէկի կամ Ղափանեցւոց պատմութեան գրուելուն, ո- րուն հայրը վարդանէս Ղափանեցւոց զօ- րավարներէն մին էր: ԺԷ պարու կէսէն մին- չե ԺԸ կէսը Շահումեանց տոհմի անուամբ հաստատուած բարգաւաճ վաճառատուն մը կար վիճակակ: Այս տոհմի պայազատներէն հետեւեալ երեքը՝ Ստեփանոս, Զարար և Կահապետ, 1736 թուին Ս. Ղազարու վա- նաց եկեղեցւոյն մէջ իրենց ծախքով շինել տուին վայելուչ խորան մը Ս. Լուսաորչի՝ և սեղանին գիւմաց 1737 ին պատրաստեցին իրենց տոհմի պամբարան մը՝ հանդերձ ար- ձանագրութեամբ: Շահումեանք նշանաւոր եղած են ուրիշ զանազան բարեգործութիւն-

ներով և միշտ նոյն ժամանակի վիճակոյ հայ գաղթականութեան մէջ առաջին կը յի- շուին, մանաւանդ Ստեփանոս Շահումեանցը՝ որ վիճակոյ Հայոց Ս. Խաչի եկեղեցւոյ սասպանակի շինութեան 100 վիճակեան լիբայ տուած է: Եկաստան աւանի պատ- մական զէպրերն և ներկայ վիճակն ինձ ան- ծանօթ կը մնան: — Սիւսկան, 300-301:

ԵՂ. Տես ՕՂՈՒ:

ԵՂԱԿԵՐ. — Գիւղ Արցախի Զարբերոյ գա- ւառի. հիմնուած է սարի մը հարաւային լան- ջի վրայ, խոր ձորի մէջ: Բնակիչք 35 տուն, որոնք 20 տարի առաջ փոխադրուած են Մեծ Սիւնեաց Տեղ աւանէն: Երկիրն ըն- նոս է և անասնապահութեան յարմար. օզն, կլիման և ջուրն զերազանց են: Եկե- ղեցին Ս. Աստուածածի՛ն՝ քարակիր է և հին, կառուցուած կամարի մը վրայ, երկայն 12, 5 մետր և 7, 50մ. լայն: Եկեղեցւոյս մօտ կայ հին մեծ հանդստարան, որուն մէջ կայ նաև ՌՃՂԹԹ Թուականու և արձանա- զրութեամբ սասպանաքար մը:

ԵՂԱՆՅ ԲԵՐՒ կամ ԵՂԱՆՈՒՏ. — Հին ժա- մանակ ամրոց Տուրուբերանի Տարօն գա- ւառի մէջ: Կը յիշէ Յոհան Մամիկանեան բնիւով. «Ետ տանիլ յեղանց բերդն, զոր զեռ Եզնուան կոչեն»: Կը յիշէ նաև Լաս- արիվերացին (Գլ. ժԳ) Լիպարտին սրբւոյն իւանէի համար բնիւով. «Գնաց և խարա- նօք էառ զամուրն Եզանց բերդ կոչեցեալ»:

ԵՂԱՆՅ ՄՈՐՊ. — Կը յիշուի Այրարա- տայ Ծիրակի գաւառի Բովաձորի մէջ:

ԵՂԲԱՐՅ ՍԱՐԱԿ. — Պատմութենէ մեզ ծա- նօթ է անունս՝ Այրարատայ կողովիս գա- ւառի մէջ: Թէպէտ որս Ռշաւանի իշխանը եօթ- ներորդ պարու մէջ, ինչպէս կը գրէ Ղեւոնդ պատմիչ, Արարացւոց արշաւէն խմանալով, «... հրամայէր զօրացն, սրբ բնոյ իշ- խանութեամբն էին... Եւ նորս... զարա- նամուտ եղեն ի Սարակե որում Եղբարսն կոչէին. և կաշեալ զառաջս կրծիցն՝ զրա- զուսն ի նոցանէ սատակէին»:

ԵՂԵԳՈՒԿ. — Հին գիւղ Տուրուբերանի Հարք գաւառի, զոր կը յիշէ Ասողիկ (Բ. Ռ) Սահակ Բ Կաթողիկոսի համար գրած ա- տեն. «Տէր Սահակ ի գաւառէն Հարքայ ի գեղջէն Եղեգակայ: Գիւղիս անունը ուրիշ-



ներէ զբուսած կը գտնանք. « Ի գաւառէ Հար-  
բայ Յղկայ », և « Ի զեղջէն Ուղկայ »:

ԵՂԵԳԵԱԿ կամ ԵՂԵԳԵԿ. — Հին գիւղ  
Այրարատայ Բագրեւանդ գաւառի, ուսկից  
էր Ս. Արշէն երէցը՝ նահատակակիցն Ղե-  
ւանդեանց, և զիւղիս քահանայ, ինչպէս կը  
յայտնէ պատմիչն Ղազար րոնելով. « Տէր  
Արշէն երէց Եղեգեկի »:

ԵՂԵԳԵԱՅ ԱՒԱՆ. Տես ԵՂԵԳԻՔ:

ԵՂԵԳԵԱՅ ՁՈՐ. — Սիւնեաց Վայոց ձոր  
գաւառը թէև այս անուամբ ևս կը կոչուի,  
սակայն աւելի ծանօթ է Եղեգեաց աւանի  
ձորն՝ որ Վայոց ձորի զեղեցիկագոյն մասն  
է: Չորոյս արեւելեան մասը շատ զիւղեր  
չունի. իսկ ծանօթ զիւղերն զբաժ կնք ի-  
րենց կարգին:

ԵՂԵԳԻՍ, ԵՂԵԳԻՍ կամ ԿԵՕԼԼԻՎ. — Կեղ-  
րոնական զիւղ վանայ կարծեմ գաւառա-  
կի. որ խեղանու ուսումնասիրաց ընկերու-  
թիւնն Պոյսոյ, վարժարան մը ունի: Բար-  
րովին հայաբնակ է, 60 տուն ունի և քարու-  
կիր հոյակապ եկեղեցի մը՝ Ս. Թովմաս  
անուամբ: Արեւելեան և արևմտեան կող-  
մերն կան մէկ մէկ աւերակներ և հին հան-  
գըստարաններ, որոնց համար կ'ըսուի թէ ի  
հնումն մէկ մէկ եկեղեցի էին: Գիւղիս բնա-  
կիչը համբաւուր են իրենց նահապետա-  
կան ազնիւ հիւրասիրութեամբ: Բերիայէն  
մինչև Բաղէշ և Վան տանող ճանապարհը  
զիւղիս մէջէն կ'անցնի, և գրեթէ ամէն օր  
ձրի կը կերակրուին 20-30 ուղեւորք: Ե-  
ղեգիսէ վեր կը գտնուին ճերմակ կրաքարե-  
րու հանքեր, որ շինութեանց առատ նիւթ  
կու տան: Գէպ ի արեւելք բարձրացող լե-  
րան գագաթը կը տեսնուին ընդարձակ բեր-  
զի մը դարուսը հեաքերը. այս լեռան գա-  
գաթէն մինչև սիրտը կը նշմարուին նաև  
հին պարսպի մը հիմունք, և այս շրջապա-  
սի մէջ, 1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ քառակուսի տարածու-  
թեամբ, կան հին շէնքերու տեղեր և աւե-  
րակներ, որոյ համար տեղացիք աւանդա-  
բար կ'ըսեն, թէ քաղաք էր ի հնումն:

Եղեգիսի դաշար, թէև ոչ զեղեցիկ, բայց  
խիտ բերրի է: Այս երկրի տարօրինակ  
կազմութեան պատճառաւ կարճեկանի վտա-  
կը որ շրջակայքերէն ծնունդ կ'անու, Եղե-  
գիսցիներուն կը շտալէ այն բարիքները,

ինչ որ Նեղոսը կ'ընծայէ Եղիպտացիներուն:  
Գաշաի հիւսիսային կողմը՝ այսինքն ծովա-  
կի և դաշտին միջև երկարած դուռն է Բն-  
ձանաքիսարի կրային լեռի ժայտերու շղթան,  
որուն հոծ կազմութիւնը չի թողուր անձ-  
րեալի կամ ձիւնահալքի թափանցումը եր-  
կրի ներսը, այնպէս որ անձրեւի և ձեան ջրե-  
րը քերելով սրբելով ժայտերու վրայի պա-  
րարտութիւնները՝ դաշար կ'իջնան: Եղեգիսի  
դաշտի մէջ աղբիւր չկայ և բնակիչները սաի-  
պուած են ջուրն հորերու մէջ փնտռել:  
Այս դաշար երբեմն շատ աւելի մեծ բազ-  
մութիւն անուցեր է իւր բեղմնաւորութեամբ  
և զանոնք պահեր է իրեն բնական ամբու-  
թիւններով: Այսօր թէև անհամեմատ կեր-  
պով քիչ մարդկանց ստացուածն է արգա-  
ւանդ դաշտս, բայց բնակիչները նախանձե-  
լի վիճակ մը ունենալէ շատ հետո են: Բա-  
ղէշցի տղրուկներ՝ որ Վանցիներէն աւելի  
անզուժ և գործունեայ են վաշխառութեան  
մէջ, դաշտիս գիւղացուց կալուածոց շատե-  
րուն տէր դարձած են: Եղեգիսի դաշտեցի-  
ներու պարագամունքը գլխաւորապէս հողա-  
գործութիւն և ոչխարաբուծութիւն է: Ուրիշ  
տեղացիներու պէս անոնք չեն կրնար սա-  
րին երկու անգամ ցանք ընել: Աշնցան չի  
յաջողիր, որովհետև դաշար գարնան ջրով  
կը ծածկուի: Ոչխարներու ուսեստը՝ կը  
հայթհայթեն կաղնիի պտուղներէ: — Այ-  
մեկիս, Գ 25-26:

ԵՂԵԳԻՔ կամ ԵՂԵԳԵԱՅ ԱՒԱՆ. — Հին  
աւան Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, Եղե-  
գեաց ձորի մէջ, որ այժմ Արագեսոյ կը կո-  
չուի և ունի մօտ 40 տուն այլազգի բնա-  
կիչներ: Նշանաւոր է աւերակներով և բարձր  
գիրքովը: Երբեմն աթոռ եղած է Վայոց ձո-  
րի իշխաններու և նոյն իսկ Սիւնեաց երկ-  
րորդ հարստութեան բազոր տեղանց, և յե-  
տոյ Օրբելեան մեծաշուք իշխաններու: Այս  
պատճառաւ ոչ միայն զիւղաքաղաք, այլ և  
մայրաքաղաք դրուած կը գտնենք: Եղեգեաց  
շինութեան ժամանակը յայտնի չէ, բայց  
կը գուշակուի Սիւնեաց աշխարհի հնագոյն  
աւաններէն մին լինել և գաւառապետի ա-  
թոռ. անունն առած է այս կողմանց եղեգ-  
նարեր լճակներէն: Սիւնեաց իշխանութեան  
վասակ նահապետէն նորոգուած միջոց, կ'ե-



րեւի թէ հոս հաստատուած է աթոռը, ինչպէս յայտնապէս կը վկայուի Վասակայ թոնոնորդոյն Մեծին Սմբատայ համար, որ Բշրայ կամ Նարայ արշաւանաց միջոց՝ 923 թուին, « Հորդան տեսալ զօրացն՝ ամբոխ բազումս սպայակոյտ զօրու շուրջ զիւրեա կացուցանէր յիւրում արքունական ազարանն՝ ի գիւղաքաղաքն Եղեղիս. եկեալ ապա Նարն, և տեսեալ զնա այնպիսի պատրաստութեամբ և անվանելի զօրութեամբ, զգուշացեալ՝ ոչ ինչ կարաց յայտնել յիւրայոց անախ, այլ ի խղաղութիւն խօսեցեալ ընդ նմա... շուէ և երթայ»։ Յոնն. Կար: Այս Սմբատ իշխանը 936 թուին կը յիշէ նաև Օրբելեանն, որուն համար կ'ըսէ «...եղեալ յաւուր միում՝ յարքունեաց իւր՝ որ էր յԵղեղիս գիւղաքաղաքի»։ Ասոր վերջին պայազատները ուրիշներու ձեռքը թողլով Եղեղիս, իրենց գահը փոխեցին Բաղաց և Կապանի մէջ. բայց երբ Զաքարեանները այս կողմերը այլազգիներու ձեռքերէ ազատեցին և Օրբելեանց տուին, ասոնք իրենց աթոռը հաստատեցին Եղեղիսի մէջ՝ Ելիկումն և որդին Սմբատ. իսկ ասոր եղբայրը Տարսայիճ մեծ՝ յետոյ իրեն բնակավայր ընտրեց Արփա գիւղը. բայց կը թուի թէ անոր որդին նորէն այս տեղս հաստատուեր է. վասն զի կը յիշուի տեղոյս իշխող ուրիշ Տարսայիճ անուամբ մէկը 1314ին: Հաւանաւ կան է թէ այս Տարսայիճը Չալալայ որդին լինի: Այս անուամբ ուրիշ պայազատներ ևս եղած են, որոնց իշխանութիւնը տեսած է մինչև ժիշ գարու սկիզբը, երբ Շահարաս ուրիշ գաւառաց հեա Եղեղեաց ձորի բնակիչներն ալ Պարսկաստան տարաւ: Նոյն միջոցին թերևս ազատեցան այս իշխանաց սերնդէն ումանք, Սիւնեաց և Օրբելեանց անշքացեալ ստանիս ծերպերու մէջ, ուր գրեթէ 700 տարիէ աւելի կամ նուազ, պանծալի իշխաններ իրարու յաջորդեցին:


Հոյակապ և գեղեցիկ են տեղոյս աւերակներն, որոնց զլխաւորը կը համարուի բերդը՝ որ ամուր պահպանն էր տեղոյն արքունեացը և ճոխութեանցը: Կառուցուած է աւանիս արեւմտեան հիւսիսային կողմը, կէս փարսախ հեռու՝ երկու ձորակաց մէջտեղ. զօրաւոր պատնիշով ամրացած է, սա-

շած և անտաշ քարերով շինուած: Բուն բերդը կը գտնուի բլրի մը վրայ. ներս մտնելու ճանապարհը հիւսիսային կողմէն է: Նոյն այդ ճանապարհն որ հին ժամանակները ծառայեր է բերդին, աստիճանաբար կը բարձրանայ Գիւմիշ-Բուլախի ձախ փեղն, յետոյ բերդատարի հիւսիսային մասի արեւմտեան լանջով անցնելով մացաներու մէջէն կը մտնեայ բերդին: Որովհետև բերդիս արեւելեանն, հարաւային և արեւմտեան կողմերը բնական գիբքով ամուր են անմատչելի ուղղահայեաց ցից ժայռերով և մատչելի և թոյլ կողմերն են հիւսիսային, հիւսիսարեւելեան և հիւսիս-արեւմտեան մասերը, այդ պատճառաւ պատնէշը շինուած է միայն այդ կողմերը, որոյ հիւսիս-արեւելեան անկիւնը արդէն քանդուած է: Հիւսիսային պարսպի հաստութիւնը երկու սաժէնէն աւելի է, իսկ միւս պարսպներու հաստութիւնը մէկ սաժէն: Այս աղեղնաձեւ պարսպը ամրացած է տասը մեծ աշտարակներով: Բերդուունի երեք կամարաշէն մեծ գարպաններ, սրբառաշ քարերով արեւելեան, հիւսիսային և հիւսիս-արեւմտեան կողմերը. ամենէն մեծն ու լայնը հիւսիսայինն է, որ եղած է անշուշտ իւր ժամանակին աւազ գունն, որուն առջև կան քանդուած քարէ աստիճաններ: Բերդի ներսը կը տեսնուին սեպաձեւ ժայռեր, սենեակներու փլատակներ, և խիտ առ խիտ քարակոյտներ: Խտրվւած սենեակները շինուած են պարսպներու կից անոնց երկայնութեամբ. ամէնքն ալ աւերակ գարձած են, աւերակներէն հաշուելով բոլոր սենեակներու թիւն 120էն աւելի է: Բերդիս կեդրոնը բարձր ժայռի գլուխը կան չորս միմեանց կից կրապատ սենեակներ, որոնք թերևս իշխանաց բնակավայր եղած լինին. ասոնց մօտ կայ նաև կրապատ շրտաբար մը: Այս սենեակներէն քիչ հեռու, դէպի հիւսիս, սուր ժայռի մը ծայրը կայ երեք պատով սենեակ մը՝ առանց չորրորդ՝ հիւսիսային պատի, գուցէ այս գիտանոց եղած լինի: Բերդիս մէջ կանդնած ժամանակ, մարդուս աչաց կը ներկայանան չորս կողմի գեղեցիկ տեսարաններ. հեռուէն կ'երեւին Տարալազրդի ալիծածան զօտիները, սեպաձեւ ժայռերը և սոս-



կալի ձորերը, և աւելի մօտիկ գէտ ի հիւսիս, բերդէս աւելի բարձր զիրքի վրայ կ'եւրեւն Ղօշա վանքերը, իրենց սրածայր կաթաղիկէիւք: Գէտ ի արեւելք անդունդի մէջ ինկած է Եղեգեաց (Ալագեազ) ձորը, նոյն

կիչք կ'աւանդեն, թէ Սմբատ շինած է բերդս և անոր անուամբ Սմբատոսյ շերտ կը կոչեն. եթէ այս ճիշդ է, լինելու է այդ Մեծն Սմբատ գահերէց իշխանը, որ՝ ինչպէս աեսանք իրեն ամուր զիրքովը ետ գարձուց Յուսուփայ



277. Եղեգեաց կամ Սմբատայ բերդ:

անուն գետով, որոյ աջկողմը և բերդիս ստորոտը ցանուցիր թափթփած են բարակոյտներ՝ հին Եղեգեաց աւանի աւերակները. այս աւերակներէն բխ մը վեր, նոյն ձորի մէջ է այժմեան Ալագեազ գիւղը ծառերով, այգիներով և հին վանքերով:—Կողմանցս բնա-

զօրավարը. — ԺԵ գարու վերջերը աւանիս մէջ աւետարան մը գրելով սմն Զաքարիա բահանայ, կրեք կ'ըսէ և չորս կը գնէ եկեղեցիները գրելով. «... ընդ հովանեաւ և ըից տաղաւարացս, Սուրբ Կարոզդիկէիս և Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Ստեփանոս



սխ, և կենդանարար Սուրբ Եշանիս)։ Չալաղիան ևս չորս եկեղեցի կը յիշէ առանց անուան աւանիս և բերդիս այլ և այլ կողմերը։ Մին կը գտնուի ամրոցի արեւելակողմը, պարսպապատ գերեզմանատան մէջ, վայելուչ կաթնուղիկէով, շինուած Ստեփանոս Սիւնեաց պատմիչ եպիսկոպոսէն, ինչպէս կը յայտնէ արեւելեան կողմի լուսամբտի ճակատին արձանագրութիւնը։ Լուսամբի եզերքն ալ արձանագրութիւն կայ, իսկ և կեղեցույս շուրջը կան գամբաններ, հանգերձ ԺԳ՝ գարու վերաբերեալ արձանագրութեամբք։ Եկեղեցիէն քիչ մը հեռու գէպ ի վար, բարաժայտի մը ստորտը կայ Յ մեար բարձր խաչարձան մը՝ ՉԻԳ (== 1279) թուականաւ արձանագրութեամբ մը՝ Տարսայիճի որպէս Գրիգորի։ Երկրորդ եկեղեցին աւանիս արեւելակողմն է 10 քայլ երկայնութեամբ և 8 քայլ լայնութեամբ, բայց քայքայած է. ունի նաև ընդարձակ գաւիթ՝ չորս սիւներով. պատին վրայ 1290 թուականաւ տապանագիր մը կայ։ Երրորդ եկեղեցին աւելի հեռու է գէպի արեւելք, երկրորդէն աւելի ընդարձակ՝ 20 քայլ երկայն և 18 լայն, բարձրացած չորս սիւներու վրայ սազաշէն, մանր և նուրբ քանդակներով։ Խորանին երկու կողմերը ունի աւանդատուններ՝ հանդերձ պատարագի սեղաններով։ Յատակը սալարկուած է. աւազ սեղանոյն եզերքները քանդակներու մէջ կը նշմարուին Սլավրատ, Աշտ և Շանկշան կիսեղծ անունները։ Եկեղեցույս հիւսիսային արեւելեան կողմը ընդարձակ գերեզմանոց է և կան շատ տապաններ ու խաչվէմեր, գեղեցիկ քանդակներով և արձանագրութեամբք։ Չորրորդ եկեղեցին փոքր է 6 քայլ լայն և նոյնչափ երկայն, և կը գտնուի գերեզմանատան հիւսիսային կողմը գետոյն ձորափը։ Ունի վայելուչ կաթնուղիկէ. որուն մէջը շինուած է կարմիր և սև քարերով, երկու որմայեց սիւներու վրայ։ Առջեւը ունի 10 քայլ երկայն և 8 քայլ լայն գաւիթ մը, որոյ զրան շրջանակն զարդարուած է մանր քանդակներով։ Հարաւային որմի վրայ քանդակուած է երկգլխի վիշապ մը և մէջը ժամացուցակ։ — Գերեզմանատան արեւմտակողմը նախատակի մը տապանը կայ պատուուած կողմանցս

Հայերէն և Պարսիկներէն, որուն վրայ արձանագրութիւն ևս կայ՝ բայց խանգարուած։ Գերեզմանատան պարսպի հարաւակողմը ազուցուած է նշանաւոր քար մը՝ Տարսայիճի և իւր Մինայ կնոջ քանդակապատկերներով, այլը պերճ գզեսախբ՝ գլուխը թագ և գահոյեց վրայ նստած. իսկ կիներ գանգրահեր և զարդարուն գզեսախբ ու գլուխը խոյր. քարիս վրայ կայ 1274 թուականաւ արձանագրութիւն։ — Բերդի հիւսիսային կողմը ձորի մէջ կայ ուրիշ ընդարձակագոյն գերեզմանատուն մը, բազմաթիւ մանրաքանդակ մահարձաններով, յորս նշանաւոր են երեք մեծամեծ խաչքարեր՝ խիստ ճարտար կերպով քանդակուած. արձանագրութիւնք ԺԳ և ԺԳ՝ գարուց կը վերաբերին։ Այս բոլոր խաչարձանները և աւերակներուն շատերը կը ցուցնեն Օրբելեանց իշխանութեան բարգաւաճ ժամանակն՝ ԺԳ՝ գարու կէսէն մինչ ԺԳԻ կէսը։ — Եղեղեաց աւանի մօտ այգիներու մէջ ծառերու ներքե կայ խաչարձան մը՝ գեղեցիկ քանդակագործ շրջանակով, որուն մէջտեղ քանդակուած է խաչ. բայց ափսոս, որ անձրեկ և այլ պատճառներէ, գուցէ և բիրտ ձեռքերէ մասամբ մը ոչնչացեր է. խաչի վերեւի կիսաբոլոր քարի վրայ քանդակուած է Ս. Աստուածածնի պատկերը գահի վրայ նստած, և երկու կողմերն են Մարիամ Մազաղեանացին և միւս Մարիամն։ Քանդակազարդ շրջանակի լուսանցքի մէջ բոլորակի գրուած է արձանագրութիւն մը, որ տեղ տեղ քանդուած և մաշուած լինելով, գժուարընթեոնելի է։ Այս խաչարձանը շինուած է մասքուր սրբատաշ մեծ քարերով։ Երկայնութիւնն է վեց արշին և լայնութիւնը երկու արշին. քանդակը արեւմտեան ճակատի վրայ է. իսկ երեք կողմերը բան չկայ։ Ս՝ կը գտնուի Եղեղեաց աւանի կամ Ալագեազ գիւղի թուրքի մը այգիին մէջ. վրան ս և է աւանդութիւն կամ տեղեկութիւն չկայ։ — Սխական, 146—152։ Հետքիւնք վսեռութից, Թ. 288։ Եւ այլն։

ԵՂԵԳՆԻՍ. — Կըրուի, թէ այսպէս ևս կը կոչուի Բագրեւանդայ Բողի գիւղը։

ԵՂԵԳՆԱԶՈՐ. — Այսպէս ևս գրուած կը գտնանք Եղեղեաց ձորի անունն։



ԵՂԵԳԻ. — Գիւղ խարրերդի. 125 տուն հայ, 15 տուն բողոքական և 470 տուն թուրք կայ: Հայք ունին եկեղեցի մը Սուրբ Գեորգ անուամբ, և վարժարան՝ Ս. Նշան: Կը պարապին հողագործութեամբ:

ԵՂԵԳՆԱՔԵՐԱՆ. — Այրարատայ Մազազ-Ոստան գաւառի մէջ կը յիշուի այս անուամբ վայր մը:

ԵՂԻ. — Գիւղ Սղերաի (Տիգրանակերտ) խիան գաւառակի. 76 տուն հայ կայ, ունին Ս. Եղիս անուամբ եկեղեցի մը: Եկեղեցւոյն վրայ հող լցած չեն, միայն տեւրեներով ծածկած են և կ'ըսեն, «Մեր սուրբը չէ մտեր, հող չհէմէր, կնիկէ չհէմէր յինէ, կոյս է»:

ԵՂԻԱ (Ս.). — Հին և աւերակ վանք Բարձր Հայոց Եկեղեցայ (Էրզնկա) գաւառի մէջ:

ԵՂԻՆԳՆ. — Հին գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի Աճանան վիճակի մէջ: Կը յիշուի ժէ. դարուն գրուած գրոց բանի մը յիշատակարանաց մէջ: Գիւղս գրուած կը գրանենք նաև Եղիեկ 1671ին:

ԵՂԻՆԳԻ. — Ղազար Փարպեցի կը յիշէ գիւղս վասպուրականի Արտազ գաւառի մէջ. «Էս եկեալ Մամիկոնեանն վահան ի գաւառն որ կոչի Արտազ, ի գեօղն որ անուանեն Եղինգ»:

ԵՂԻՇԱՅ ԿՈՒՍԻ ԱՆԱՊԱՍ. — Կը գանուի Արցախի վարանդա գաւառի մէջ, Շուշիէն գէպի արեւելք, Սօս գիւղի, Լուսաւորչի սարի, Քեթիժ և Ղուգի ճարտար գիւղերու միջև բարձրացող բաւական բարձր սարի վրայ: Մարիս գաղաթը զարդարուած է թեղի և տիկի ծառերով և հին ու նոր տապանաքարերով: Եկեղեցւոյ երկայնութիւնն է 16 մետր, լայնութիւնը 8, 75 և բարձրութիւնը 5 մետր: Երկու հասարակ սիւներու վրայ կը բողբոջին ոտմանական կամարներ և կամարակազ ձեղունք, որու մէջտեղէն կը բարձրանայ փոքրիկ կաթնուղիկ մը՝ որ կը ծառայէ եղեր իրբև զանգակաւուն: Շինուած է անտաշ որձաքարով, բացի կամարներէն և անկիւնաքարերէն, որոնք սրբատաշ են: Ունի երկու փոքր և մի աւագ խորան, երկու խորհրդարան, աւագան, չորս (ըստ Բարխուդարեանի վեց) լուսամուտ,

և մէկ դուռն արեւմտեան կողմէն: Աւագ խորանի ներքեւ ամփոփուած են Ս. Եղիշայ կուտի նշխարները, և բեմի մէջ կայ փոքրիկ խորանաձև բացուածք մը, ուր կայ նաև փոքրիկ՝ բայց շատ խոր ծակ, որ հաւանականօրէն կը հասնի մինչև սրբուհւոյն գերեզմանը: Հիւանդները աղօթելէ և մտմ վասեղէ վերջ անմեղ երեխայի մը ձեռքը շորերով փաթածելով երկնցքնէ կուտան այդ խորանի մէջ: Կ'ըսեն թէ բանի մը բողբոջի վերջը հիւանդի ցաւած տեղին համապատասխանող սուկր մը կը թռչի կը կանդնի երեխայի թեւին վրայ: Անմիջապէս կը վերցնեն այդ սուկրը, ջրի մէջ կը ձգեն և այդ ջրով կը լուան հիւանդի ցաւող մասը, որ իսկոյն կ'առողջանայ: Անապատս ունի նաև քարեայ խաչկալ հանդերձ ՌՃԳԻ թուականաւ արձանագրութեամբ: Գրան ճակատակալ բարի վրայ կայ շինութեան հետեւեալ արձանագրութիւնը. «Կարողութեամբ սմեկնագորիև Աստուծոյ ևս եռաւա տեր Յուսև սեճամբ տկար սեղեղաչս և որդեգիր Փոքր տեր Յովսևս շինեցար սուրբ գեկեղեցիս ըստ սեռաև Սրբուհոյ կուսիև Եղիսեի ի կարողիկրտարեան տեսաև Երեմիայի և սաևս Արտաեկց որ ի մայր արտաոյն Գաւձասարայ յիշեղ աղաչեմք հանդերձ ձեռորովք մերովք ՌՃԳԻ.»:

Եկեղեցւոյ արեւմտեան պատի արտաքին երեսն զարդարուած է խաչքարերով: Նոյն պատի լուսամտի վրայ կայ եկեղեցիս շինող արհեստաւորի աշտոյ կրթիկի կամ Գարբէլի արձանագրութիւնը: — Արցախ, 115—117: Վարանդա, 46—47:

ԵՂԻՇ-ԱՌԱՔԵԱՆ, կամ ՋՐՎՇՏԻԿ ՎԱՆՔ. — Կը գանուի Արցախի Ջրաբերդ գաւառի մէջ, Մաւ սարի բարձրէն երկու ձորերու մէջ խոնարհած լեռնաբազկի մը բլրակի վրայ: Շրջապատուած է աղխաղխեալ և սոսկալի կիրճերով. այդ պատճառաւ լայնարձակ հօրիզոնէ զուրկ է: Վտակ մը՝ Ջրվշտիկ անուամբ, արեւմտեան կողմէն շոշալով կը վազէ շատ բարձրէն, կ'անցնի վանքիս հաբաւային ստորոտի խորագոյն ձորով, կը գանայ գէպի արեւելք և սրնթմաց կը վազէ գէպի թարթաւ: Բլրակիս հարաւային կողմը սոսկալի վիմահերձ է, իսկ միւս երեք կողմերն՝ պարսպուած բարուկիր պատով, որ



ունի երեք դուռն՝ արևմտեան, հիւսիսային և արևելեան կողմերէն: Վանքս կառուցուած է բլրակի գագաթը անաս թարերով. շինութիւնը շատ հին է, ճարտարապետութիւնն հասարակ ու անճաշակ ոճով և բարձրութիւնն չափազանց: Այսու ամենայնիւ այցելուաց վրայ պատկառանք և սրբութիւն կ'ազդէ: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ վանքս հիմնարկած է բարեպաշտ վաշական Գ թա գաւորը: Նախ կոչուեր է Ներսիմոնաց կամ Ներս-Մինրայ ուխտ, և յետոյ Ջրվաթիկ անշուշտ մօտէն վիժող ջրվէժի պատճառաւ: Բայց սուրբ Եղիշէ առաքելոյն մարմինը Հիւրեկայ կամ Ուոհկան վանքէն սաս փոխադրել վերջ, կոչուած է Եղիշ Առաքեալ: Տաճարն ունի երկու դուռն հարաւային և արևմտեան կողմերէն. երկայնութիւնն է 10 մետր և լայնութիւնն 5, 80մ.: Այժմ խոնարհուած է ամբողջ ձեղունը և խորանի արևելեան պատը: Ունի նաև գաւիթ կամ ժամատուն՝ շինուած անաս թարերով միևնոյն ճաշակով և չորս սխներու վրայ. 9, 5 մետր երկայն և 8, 45 մետր լայն. միակ դուռն կը գտնուի արևմտակողմը: Ունի ՉԳԳ (= 1264) թուականաւ արձանագրութիւն, որ կը յայտնէ թէ շինուցն է ոմն խաչատուր, աէր Սիմէոնի առաջնորդութեան ժամանակ: Թէ՛ տաճարի շուրջը և թէ՛ գաւթիս յատակը ծածկուած է հանդուցեալ և պիտկողուաց, վարդապետաց և միաբանից տապանաքարերով հանդերձ արձանագրութեամբ: Մենաստանիս երկու կողմերը կան մատուաներ: Հիւսիսային կողմէն գէպի հարաւ երթալով, Ա. մատուոր ունի երկու խորան և երկու սեղան, որ շինուած է անաս թարով: Բ. մատուան, նոյնպէս անաս թարով շինուած է և ունի մէկ խորան և մէկ սեղան: Գ. մատուան մէջ, որ շինուած է սինոյն ոճով, կայ Աղուանից վաշական Գ թագաւորի գերեզմանն, որուն վրայ ձրգուած է 1, 60 մետր երկայնութեամբ և անկիւնի տապանաքար մը, պատրաստուած տանձին ինամըզով և լաւ յղկուած. բայց արձանագրութիւն չունի: Տապանաքարիս մօտ կայ խաչարձան մը, որ նշանաւոր է խիստ հնութեամբ և ճարտարաբուեստ քանկակազորութեամբը. այսպէս է նաև խորանի

աջկողմը եղած ուրիշ խաչարձան մը: Մատուան ունի մէկ խորան. գրան ճակատակալ քարի վրայ քանդակուած է. «Այս է հանգիստ վաշական րագաւորիս. Աստուած պորովի Հայրապետայ և ոյր (խր) ձեռքացե, որ շինեց զեկեղեցիս յառաջնորդութեան տէր Սիմոնի թիւ 917. էր» : Մատուան գրան զիմացն է Ջրաբերդ գաւառի իշխող հոշակաւոր Մէլիք Աղամ մեծի գերեզմանը: Յաւալի է տեսնել որ անկիրթ այլազգիները ջարդեր են արձանագրութիւն կրող մարմարինը, որ գետեղուած է եղեր մէլիքիս տապանաքարի մէջ. սակայն գաւառիս բնակիչք մեծ ու փոքր ամէնքն ալ աւանդութեամբ գիտեն իրենց սիրելի իշխանի գերեզմանը: Գ. մատուոր, որ կանգնած է վանքի հարաւակողմը, բաւական հին է և ունի երկու խորան: Մէջը կայ աէր Մետրոպ անուամբ մէկու մը գերեզմանը, որ ունի ՌձՂԳԹ թուականաւ տապանագիր: Ե. մատուան՝ որ ԳԹ հարաւային կողմն է, ունի մէկ խորան: Չ. մատուոր ունի մէկ սեղան, աւելի հնաշէն է և ունի կիսատ արձանագրութիւն, որով կը յայտնուին շինողաց անուններն, որք են Առաքել վարդապետ և աէր Մատթէոս: Է. մատուան ունի միայն մէկ սեղան: Վանացս մէջ կան երկու գանգակներ. մին հնազոյն երկայնաձեւ է ու կոպիտ, իսկ միսն կոտրած, և ունի արձանագրութիւն, որ կը յայտնէ թէ նուիրողն է ոմն Ղազար, և ձուլոյն Շահնա. զինն է եղեր նոյն ժամանակ երեք թուման: Վանքս ցարդ սրբութեամբ պահած է Գաղանիք Ղարաբաղի զլեցազներէն երկու քաջերու յիշատակը, որոնք են Գալի-Մանրասան և Տանձագ: Վանքիս արևելեան պարսպի մօտ է Աւագ-Վարդապետ-Գալի-Մահրասայի բնակած սենեակը, որ ունի նեղ և փոքր լուսամուտներ և ամուր զիրք: Հիւսիսային պարսպի փակուած գրան մօտ ներքուստ գրուած է Տոմնագի ՌձՂԷ թուականաւ յիշատակարանը: Պարսպի ներքը կան նաև քանի մը հին սենեակներ և գոմ: Վանքիս ներկայ գրութիւնը խիստ խղճալի է. անյիմարելի ժամանակը կը քանդէ ամենայն ինչ. կարօտ է նորոգութեան, բայց խը սեղհական կալուածները վիճի տակ ընկած են և արդեանց պրիւրները սպա-



սուած: Իբրև պահապան մէջը կայ միայն տիրացու մը, որ շինած է վանքին ճանապարհը և նորոգած է Չ. մասուսը: — Ոչորտի մասուս՝ կը կոչուի վանքին մասակայ սարի ուսին վրայի կիսուեր մասուն, որ կայ նաև գիւղատեղի և հանդատարան: — Եղիշ-Սոսարեալ վանքի և Եղակեր գիւղի մէջտեղ, տեսարանաւոր բլրի մը վրայ կը գտնուի Մասուս անուամբ կիսուեր և փոքրիկ հին շինութիւն մը, որուն զբան վրայի արձանազրութենէն կը յայտնուի շինողի անունն Գրիգոր: Մասարան մօտ կայ հանդատարան մացառուաներով ծածկուած: Այսպիսի կիսուեր եկեղեցի, հանդատարան և գիւղատեղի կայ նաև Թրոտ կոչուած տեղը, որ կը գտնուի աւերակիս հարաւակողմը: — Արցախ, 234-237:

ԵՂԻՇ-ԱՌԱՔԵԱԼ. — Աղուանից մէջ այս անուամբ կը կոչուի հայ և թուրք հասարակութիւններէն այն սրբավայրն, որ կը գտնուի Կովկաս սարէն Բուսի վրայ կախուած լեռնարագիկի մը վրայ: Հոս եղած է մահապարաներու այն հորը, որուն մէջ չարագործները ձգած են Եղիշ-Սոսարեալի սուրբ մարմինը նահատակութենէն վերջ: Յետոյ Աղուանից վաչական թաղաւորը սուրբ մասունքները հանել աւելով կը փոխադրէ Արցախ, և վերոյիշեալ վանքը Թարթաս գետակի ձորի մէջ կառուցանելէ վերջ, հոն դնել կու տայ: Քայց խոր հորին վրայ շինել կու տայ նաև սխն մը, որ այժմ անյայտացած է և հորն ալ լցուած, բաց ի մէկ կանգուն խորութենէ: Հոս կը յաճախէ հայ և մահամեական ուխտաւորաց մեծ բազմութիւն: — Աղուանք, 256:

ԵՂԻՇԷ ԱՌԱՔԵԱԼ. — Այս անուամբ ևս կը կոչուի Աղուանից Գիս կամ Գիշ վանքը, զոր նկարագրած ենք ի կարգին:

ԵՂԻՊԱՏՐՈՒՇ կամ ԱՂԱՊԱՏՐՈՒՇ. — Հին գիւղ Այրարատայ Նիգ գաւառի մէջ: Ասկից էր Ը գարու վերջին քաղաքի մէջ (774-87) Եսայի կաթողիկոսը, որուն համար Անցի պատմիչը կը գրէ. «... էր միամօր որդի, որ վասն աղքատութեան մտրացիկ գողով ստընգեայ մանկամբն յարեցաւ ի սուն կաթուղիկոսարանին, և ոչ մտեալ ընդ յարկաւ խորշակաւ և ցրտով տառապեալ պաշտէր

զգրունս եկեղեցւոյն. զոր հարցեալ քահանայիցն՝ թէ զի՞ այլչափ տառապիս, և նա ասէ. Ոչ գիտէք՝ սակա կաթողիկոսութեան սնուցանեմ զօրդեակս իմ. որ և սնեալ ի նմին եկեղեցւոյ, լինի նախ եպիսկոպոս Գողթան, և ապա կաթողիկոս Հայոց»:

ԵՂԻՍԱՔԵԹՈՒՊՈՒԿ, ԷԼԻՉԱՊԷԹՇԹԱՏ, ԻՊԱՇՎԱԼՈՎ, ՊԱՇՊԱԼՈՎ կամ ԷԲԵՏԲԵՏՈՒՊՈՒՅԷՏՏ. ԳՂ. EBESFALVA. ԳԵՐՄ. ELISABETHSTADT. Հունգ. ERZSEBETVAROS. — Երբեմն նշանաւոր զուտ հայաբնակ քաղաք Հունգարիոյ Թրանսիլւանիա նահանգի մէջ: Քաղաքս ի սկզբան Էպուշ-Փօլվո կը կոչուէր՝ մերձակայ գիւղի մը անուամբ, որ նախ բնակած են Հայք, և ապա երբ ԺԷ գարու կէսէն վերջ (1658) սկսան շինել այս քաղաքը՝ Իպաշվալով անուանեցին. նոյն գիւղը այժմ քաղաքին մէկ արուարձանը կը համարուի: Քաղաքս շինուած է լայն ձորի մը մէջ, երկու կողմէն շրջապատեալ մշակելի տափարակ բլուրներով, Թարնովա գետոյն աբեւակակողմը, որուն վրայ փայտաշէն՝ բայց չափաւոր մեծութեամբ կամուրջ մը ձգուած է: Այլ արեւելակողմն է Հայոց բնակավայրը, լայն ու ուղղահայեաց փողոցներով, միայակ կամ երկայակ քարաշէն ու աղիւսակերտ մեծ տուներով. ամէն տուն իրեն սեփհական գետին ունի քաղաքի շրջակայքը: Գար մը առաջ 2300ի չափ հայ կար 450 աներով. օր ըստ օրէ ցրուելով, օտարաց հեռ ինամութեամբ և մասամբ մ'ալ ուրիշ տեղեր փոխադրուելով՝ այժմ հազիւ 400-500ի չափ հայ մնացած է, և այս՝ անուամբ միայն: Հայոց մեծամեծ ու փառաւոր տները այժմ Մաճաններով ու Ռումաններով լեցուած են: Քաղաքս մինչև 1848 թուականը շատ վաճառաշահ էր, սակայն Մաճառաց նոյն թուի յեղափոխութենէն վերջն ալ նախնի յիճակ կը չունեցաւ: Հայոց տներու մէջ հազիւ 40-50 այր կը գտնուին. որովհետեւ շատեր շահու համար ուրիշ տեղեր կը պանդրիտին: Հայք ունին չորս եկեղեցիներ. առաջինն է հին տաճարն Ս. Երրորդութեան, միջակ մեծութեամբ. զբան վրայի արձանագրութիւնը կը յայտնէ թէ շինուած է բոլոր հայ հաւատացեալ ժողովրդոց գործակցութեամբ: Այս փոքրիկ տաճարը բաւական



չլինելով, անցեալ դարու առաջին կիսուն մէջ հիմնեցին մեծ հրապարակին վրայ ընդարձակ քարաշէն մայր եկեղեցի մը՝ Մաճառաց Ս. Եղիսաբէր զշխոյին անուամբ. ճակատը երկու բարձր զանգակատուն կայ: Աւագ խորանի երկու կողմերը ունի վեց զեղեցիկ խորաններ, և կրկնաշարի աւանդատուններ. աջակողմեան վերնատունը ազնուական ընտանեաց յատկացուած է. իսկ ձախակողմեանը՝ թանգարան կամ գրատուն մ'է,



278. Եղիսաբեթուպոլիս. — Կաթողիկէ հայոց մայր եկեղեցին:

որուն մէջ ժամանակաւ, Անիէն բերուած և մագաղաթի վրայ գրուած, շատ զբքեր կային, որոնց մէկ մասը առանձնականաց սեփհականութիւն զարձած է, մէկ մասն ցրուած և մէկ մասն ալ զողջուած է, այժմ աննշան մաս մը կայ փոշիներու տակ թաղուած: Սոյն եկեղեցւոյ ճակատն արձաններով ու սիւներով զարդարուած է. վրան սրգնձայարկ բարձր դմբէթ մ'ունի. դռնէն մինչև աւագ խորանը՝ երկայնութիւնն 105 ոտք է: Եր-

բորդ եկեղեցին վերնոյն զմասցն է՝ հրապարակին արեւմտեան կողմը, կառուցուած 1795 թուին, մեր Մխիթարեան Միաբանութենէն: Գեղեցիկ է և համեմատական. ունի երեք սեկեղօծ խորաններ՝ զարդարուած արձաններով, արուեստական պատկերներով ու զեղեցիկ սիւներով: Աւագ բովին երկու կողմերը կան աւանդատուններ և անոնց վրայ կրկին վերնատուններ՝ շրջապատեալ սեկեղօծ վանդակներով ազնուահասց համար: Եկեղեցին միակամար է և որմերը զարդարուած են զանազան գրուազներով. նուիրուած է զշխուար առաքելոց Պետրոսի և Պօղոսի: Մօսն է Ս. Գաղարու Մխիթարեան Հարց վանատունը որ ժամանակաւ բակին մէջ ունէր պարտաւուն, ուր հայ մանուկները կ'ուսանէին հայերէն լեզուն, բայց ի վերջոյ բարձաւ հայերէն լեզուի ուսումն, և հայ սղայք կը յաճախէն քաղաքին զպրոցը: Այժմ քաղաքիս մէջ չկայ հայ երեսասարկ կամ օրիորդ մը, որ հայերէն բառ մը գիտնայ: Չորրորդ եկեղեցին Յովնանեոս Մկրտչի անուամբ, զոր Թուրքեանց ցեղէ հայ իշխանէ մը շինուած է, որուն անունը եկեղեցւոյն ճակատը գրուած կը կենայ: Ունի երեք խորան և զեղեցիկ զարդեր: Ասոնցմէ զատ ընդան զազաթն ալ հայկական մատուռ մը կայ և մեծ խաչկուլթիւն մը: Աւագ շարժուն Հայք քահանայիւք մեծ թափօրով հոն ուխտի կ'երթան իբր Գողգոթայի լեռը: Քաղաքիս մէջ Մաճառները և Ռուսիներ ևս ունին իրենց յատուկ եկեղեցիներ և ժողովրդապետներ: Հայոց նախնիք 60000 Ֆիօրինի չափ տարեկան եկամուտ թողած են քաղաքիս հայ քահանայից, եկեղեցիներու և ազբատաց համար, բայց այժմ օտարներ կը վայլեն զայն: 1874ին քաղաքիս Հայերէն Մեղիք անուամբ հարուստ ու բարեպաշտ անձ մը Վիեննայի մէջ մեռնելով 80000 Ֆիօրինի արժէքով մէկ տունը, կտակած է տեղւոյս Հայոց համար եկամուտը զործածելու սղամասու. բայց յայտնի չէ թէ ինչ եղած է: Մաճառ կառավարութիւնը Հայերէն ևս զօրք կ'անու. հայ զօրականաց մէջ մեծ ու նշանաւոր մարդիկ եղած են և կան. բայց իբրև մաճառ կը յիշուին և կը ճարչցուին օտարներէն: Հայ ծերունիներու սրտին մէջ



գետ սակաւ մը կենդանի մնացած է հայասիրութիւնը: Հայերէն գիր գրել գիտցող գրեթէ չկայ, հունգարերէն աստերով կը գրեն հայերէն բառերը: Հայոց խօսած լեզուն խրճողեալ է հունգարերէն, ուսմաներէն, գերմաներէն, լատիներէն և թաթարերէն բառերով: — Հին շինուածոց մէջ նշանաւոր է Աբաֆի բռնակալէն կառուցուած բերդը, որուն

տաքըքրական պատմական տեղեկութիւններ՝ բազաքիս սկզբնաւորութեանը, արտօնութիւններու և արքունի կալուածոց վաճառման մասին: Եղիսաբեթուպոլսի Հայոց կառավարութեան, գաւառորաց ընտրութեան և այլ սովորութեանց մասին գրուած է նաև Ճանապարհ. Ի Լեւոնտոսն գրոց 195-199 էջերու և Բազմալէպի Խթ տարւոյ մէջ:



279. Եղիսաբեթուպոլիս. — Վեներտկոյ Միխիլարեան հարց վանատան նակատը:

անունը հին լատին գրով փորագրուած է գրան վրայ: Երբեմն բազաքիս կառավարութիւնն ծերակուսական էր և Հայք կ'իշխէին ու կը կառավարէին իրենց հասարակութիւնը և ուրիշ ազգերը՝ որոնք կը համարուէին իբրև իրենց ծառաներ: Ունէին յատուկ արտօնութիւններ և սովորութիւններ, որոնց վրայ չենք կրնար աստ երկարել: 1892 տարւոյ Հանդէս Ամսօրեայի էջերուն մէջ, փափաքողը կրնան գտնել ընդարձակ և հե-

ԵՂԻՎԱՆՔ. — Յիշատակարանի մը մէջ կը յիշուի այս անուամբ վանք մը Բարձր Հայոց կամախ (Պարանապի) գաւառի մէջ:

ԵՂԻՎԱՐԴ, ԵՂՈՒԱՐԴ կամ ԱՂԻՎԱՐԴ. — Ի հնումն նշանաւոր բազաքուան Ալլարատայ Արագածոտն գաւառի և այժմ՝ բազմամարդ հայաբնակ գիւղ Երևանու նահանգի Էջմիածնի գաւառի: Կը գտնուի գաշտի մէջ և հաւասարապէս հետու է հարաւային կողմը բարձրացող Խչթէփէլէր և հիսփոսային

բնաշխ. Բառարան



կողմը գանուոյ Սրայի լեռնէն. հաւասարապէս հետու է նաեւ և գրեթէ մէջտեղ կը գանուի արեւելեան ու արեւմտեան կողմերէն հասող Հրազդան և Քասաղ գետոց: Տեղւոյս հնութեան և մեծութեան նշան են քաղաքագետ կոչումն ի պատմագրաց և հին շինուածոց մնացորդները: Առաջին անգամ կը յիշուի Չ գարու մէջ իբրև հայրենիք Մովսէս Բ կաթողիկոսի, և նոյն գարուն վերջերը կամ յաջորդին սկիզբը՝ նախագաս և

բախարն ի պատերազմին, և զմնացեալսն փախստական արարեալ հարածական տանէին. և առեալ զառ և զաւար բանակին Պարսից՝ դարձան ի բանակեալ իւրեանց, որ կայ ի վերայ գեաեզերն, որ կոչի Հոռոմոց մարզ»: — Նոյն գարուն վերջերը աւելի պայծառացաւ Եղիշլարը՝ Գրիգոր Մամիկոնէն կառուցուած մերձակայ մանքի շինութեամբը, ինչպէս վարը պիտի տեսնենք. բայց տեղւոյս զարգացումն և փառքն յայտնի է նաև



280. Եղիսարեթուպոլիս. — Վեներաբոլոյ Մխիթարեան հարց Ս. Պետրոս—Պողոս եկեղեցին:

րիցանց հետ կը յիշուի նաև աւանիս վանաց երէցն ոմն Յաշիտեան: Նոյն ժամանակները կը հանդիպին (603ին) նաև Պարսից և և Յունաց պատերազմները, որոնք կատարուեցան Եղիշլարայ գաւառին վրայ. ինչպէս յայտնի է Սերիոս պատմչի հեռեւեալ խօսքերէն. «Յայնժամ ապա և զօրն Յունաց ժողովեալ զամարեցան ի բազաբագեօզն Եղիշլարդ. և հասեալ ի վերայ նոցա զօրն Պարսից՝ եղև պատերազմ ի գաւառն Եղիշլարայ. հարին զզօրն Պարսից, կործանեցին կործանմամբ մեծաւ. և սպանին զզօ-

ւերիւ հայրապետներովն զօրս ընծայեց թ գարու վերջերը, Գեորգ Բ և Մաշտոց՝ որ նորոյ շինեց Սեւան կղզւոյ մենաստանը և եկեղեցիները: Բայց նոյն ժամանակներէն մնացած հին եկեղեցի կամ արձանագրութիւն յայտնի չէ այժմ Եղիշլարայ մէջ: Այժմ զանուոյ փոքր բարաշէն, վայելչագեղ և բարձր եկեղեցեակը, շինուած է ժԿ գարու սկիզբը, ինչպէս կը յայտնեն արձանագրութիւնները. հապարկ է, մէկ մէկու վրայ շինուած են պատարալի խորանները, և երբորդին վրայ կը բարձրանայ սիւնազարդ



զանգակահար կաթողիկէն, որուն մէջ սպիտակաղեղով գրուած է. « Ի բժիկն ՉՀէ շինեցաւ », այսինքն է 1328ին. իսկ գրան վրայ գրուած է. « Ի բժիկն ՉՀ. շինեցաւ և կեղեցիս »: Էկեղեցւոյն արեւմտեան կողմէն կցուած է յետոյ հասարակ քարուկիր և փայտայարկ ժամատուն մը, ուր կը կատարեն ժամասացութիւնք: Էկեղեցւոյն շինուող կը թուի Ազիզբէկ անուամբ ոմն տեղույս պայագասնեղէն և Զաքարեանց Շահանշահի պաշտօնեայն, նորոգողն Էղիվարդայ վանաց և բոլոր սահմանաց, որ ամսանոյն վախտիս Երևանի հետ, ինչպէս կը գտնանք ՉԼԹ թուին գրուած աւետարանի մը յիշատակարանին մէջ. « ... գնացեալ ի սուրբ ուխտն Աստուածընկալ և տեսեալ զգնացս Զրոյն Էղիվարդայ աւերեալս և խոպանացեալ, որպէս զի գեռ եւս երեւելին հետք նորա, և աստուածային նախախնամութեամբն վանեալ սիրա նոցա, և աշովն ապենիազ թագաւորին Քրիստոսի զօրացան և պնդեցին իբր այր գմէջս... արխացան, ոչ հաշիվելով զծախան, որպէս զուարթուն հրեղէն տաղանակէն, ոչ ունելով զհանդիսս և զքուն ի տուէ և ի զիշերի. և շրջապատեալ զեանն Արարատեան հասուցին զջուրն յորդառատ վտակօք փոյթընթաց Էղիվարդ. և զգոտարութիւն սահմանացն և զյուրով աշխատութիւնս և զտուրս արուստաւորացն և զամենայն ծախան ո՛վ կարէ ընդ գրով արկանել, և զանհասանելի երկրաչափ զհեռուարութիւն տեղուոյս... որ ի քաղաքէն Քջնոյ մինչև կարբի ոչ գատնէին ջուր յարբում մարդկան, և պապակէին անցորդք ճանապարհաց ի սասոյց յաւուրս ամարայնոյ... »: Քասազ գետոյն մօտ գանուող Աստուածընկալ գիւղի գիրքէն յայտնի է թէ նոյն գետէն առու բանալով անուած է ջուր և ստորերկրեայ խողովակներով բերուած մինչև Էղիվարդայ գաշտը, ինչպէս կ'երեւի նաև այժմ, որ արեւմտեան կողմէն կ'ուռոգէ անոր այգիները, ինչպէս նաև արեւելեան կողմէն բերուած ուրիշ առու մը: Դոյն Ազիզբէկն շինասէր և աղին, իւր զուգակցի հետ կը թուի թէ բուն Էղիվարդի մէջ կամ մօտը, ժամանակակից յիշատակագրի մը համեմատ « սկսան շինել վանս ի կորոյց, գՌիւարն Սրբոյն Յակոբայ, յանուն սուրբ Ա-

սարեոցն, և զարդարեցին զնա մեծամեծ վայելչութեամբ. ստացան բազում այգիս շուրջ գրնակութեամբն ուխտին և զներքս եկեղեցին զարդարեցին, քանդակով նաղաշու թեամբ՝ ձեացուցին զպատկեր Ամենափրկչին և զմօրն իւրոյ Աստուածածնին, և զառաքելոց և զմարդարէկոց... և զմեծագին գրեանս ազգի ազգի, և մեծագին զգետաւք զարդարեցին զսա և արարին բնակութիւն կուսանաց, և ետուն զամենայն ուխտս զգետաից և կերակրոց, և ոչինչ կարօտք եղին յամենայնէ՛ զոր ինչ պէտս էր հոգեւոր և մարմնաւոր: Եւ աստուածասէր Երևանն մեր ուրախութիւն և ցնծութիւն մեծ արար բազում գաւառաց և մեծ մենաստանիս Էղիվարդայ »: Մեծ մենաստան ըսուածը զոր յետոյ պիտի յիշենք հնագոյն է, իսկ Ս. Յակոբայ վանքս փոքր է և հետեւեալ ԺԷ զարու յիշատակարանին մէջ առանց անուան կը յիշուի, Սիմեոն Բարաւնուպետի († 1428) համար ըսելով թէ « ... նախ բնակեցաւ յաստուածաշէն և ի տիրախնամ գեղն Էղիվարդ, ի փոքր վանսն որ ի մէջ գեղին. և բազում արդիւնս արարեալ ի ինչորոյ աստուածասէր և բարեպաշտ մեծագին և փառաւոր աղքատասէր ազատածին ան՝ Ազիզ բէկին և սրբուոց նորին Առաքիւն և Զարարիային, բազում կրօնաւորս և աշակերտեալ մանկունս եկեղեցւոյն ժողովեալ յասուցանել զհին և զնոր մասեանս աստուածաշունչ գրոց, զնորք և զարատքին փիլիսոփայութիւն, ամս տասն »: Վերոյիշեալ Առաքի սրբին Մանուէլ արքեպիսկոպոսը՝ հետեւելով հայրենի շինարարութեանց, վայելչացուց Էղիվարդայ եկեղեցիները և սահմանները, ինչպէս կը յիշեն ժամանակի յիշատակագիրները՝ ԺԷ զարու կէսէն վերջ. և ինքն ալ արձանագրած է 1471ին, եկեղեցւոյ գրան միջին յարկին վրայ իրեն նուէրներու յիշատակարանը: Յիշատակագիրներէն մին 1469ին կը նկարագրէ եկեղեցւոյն կամ գանգակատան շինուածքը ըսելով. « Ի գիւղաքաղաքն Էղիվարդ, որ կայ առ ոռոս հարաւոյ ընդ հովանաւ սուրբ և կմբերաձեւ և իսարսխայատակ և հաստակառոյց վիճօք շինեալ սուրբ Զանգակատանս՝ որ յանուն սուրբ Աստուածածնի անուանեալ, և սուրբ Յակոբիս, և սուրբ



կուսակց, և աստուածընկալ լուսատու սուրբ Նշանիս, յառաջնորդութեան վանիցս նմին Տէր Մանուէլի և եզրօրն Բիշքէնի»: Թէ ինչ սուրբերու նշխարներ գրուած էին նոյն ժամանակ աստ յայտնի չէ. բայց երկու դար վերջը եկեղեցւոյս մօտ հանգուցին նոր պարկեշտութեան նահատակ կոչս մը՝ Թաճաճ կամ Կատարեալ անուամբ, որ էր Գողթան Շաղկերտ գիւղէն, Մալխաս անուն ժանտ մարդու մը զուտորը: Մալխաս՝ գիւղին աւազն էր, և պարաքի փոխարէն խոտացախը զուտորը տալ Նախիջևանի խանին և բռնի զրկեց Երեւան. իսկ կոչսը ինքզինքը ապարանի բարձրէն նեակեց Հրազդանի քարափը, և ողջ մնալով՝ փախչելով եկաւ մինչեւ Եղիվարդ, ուր գիւղի վաստակիրա Սահակ անուն աւագը, երկիւղէն՝ արիասիրտ օրիորդին դահիճ և մասնիչ եղաւ, խեղդել տալով և ծածկելով քարերու տակ սրբուհին և յետոյ հայրը գալով թաղեց զայն եկեղեցւոյ հարաւային սրմոյն մօտ: Ասոր վրայ մանրամասն գրելով ժամանակակից Զարարիա Սարկաւագը (Բ. ՀԲ) իւր պատմութեան մէջ, կը յաւելուլուսոյ կայծերու երևումը գերեզմանին վրայ. «Գնացի խմացայ հաւաստեալ ի Մկրտիչ երիցոյն (որ հաղորդած էր նահատակը), և գրեցի զանունն ի վերայ տապանին և զթուական ՌճԽ», 1691: Եկեղեցւոյն մօտ կան նաեւ ուրիշ շատ գերեզմաններ՝ բազմաթիւ խաչարձաններով: — Թաճաճայ նահատակութենէն քիչ ժամանակ առաջ պատահած է աւանիս գլխաւորի Աւագի սպաննութիւնը, որ էր «այր ճարտար և առնախօս և պնդերես և առաջի մեծամեծաց յարգոյ»: Ստեղծոյս ջրի պակասութեան պատճառաւ, Աղիգրէկի նման հնարը գտաւ ջուր բերելու Հրազդանի օժանդակներէն, Նոյայ Գարանէօրէն գիւղի սահմաններէն. իսկ Հապուշ Ղասիմ անուն մահմէտականը քակել տալով աղուգանները՝ ջուրը իրեն գիւղը դարձուց. ասոր համար ամբաստանուելով Երեւանայ խանին, անոր հրամանով Եղիվարդեցիներէն շարաշար ծեծուեցաւ. բայց յետոյ խաբէութեամբ Աւագը բռնելով սպաննեց: — Եղիվարդ Էջմիածնի աթոռոյն սեփհական կալուած հինգ գիւղերէն մին էր, ԺԶ դարու կիսուն մեծ մասամբ (4<sup>1</sup>/<sub>2</sub>) կալուած էր Երեւ-

անցի Խօճա—Սէրի, որուն սրբին Յակոբըսն շնորհեց Յակոբ կաթողիկոսի. յետոյ Պարոնիկներէն գրաւուելով աթոռոյն վերադարձուց Սիմէոն կաթողիկոսը 1768ին: ԺԷ դարու սկիզբը կը յիշուի Կիրակոս վարդապետ Էղիվարդեցի եպիսկոպոս ձեռնադրուած Աղիքսանը կաթողիկոսէն, 1708 թուին: Բայց Եղիվարդայ եպիսկոպոսական աթոռը, ըստ Ռոկանայ, խափանուած էր ԺԷ դարու կիսուն: Եղիվարդ այժմ ունի 1358է աւելի բնակիչ՝ բաժնուած 202 տան:

Եղիվարդայ Ս. Թեոդորոս կամ Ս. Զօրավար մենաստանը կը զանախ աւանին արեւելեան հիւսիսային կողմը, գրեթէ կէս ժամ հեռու: Էջմիածնորդ դարու վերջերը ճոխ կերպով կառուցուած է Հայոց իշխանապետ Գրիգոր Մամիկոնէն, և կը յիշուի շատ պատմիչներէ, որոնցմէ մին է և Յովհաննէս կաթողիկոս, որ կ'ըսէ. «Շինէ նաեւ նուիրանոց ուխտի կրօնաւորական գասուց, յորում և եկեղեցի պայծառապաճոյճ ի նմա յարգարեալ, ըստ արեւելից կուսէ պատակերտին մեծի Եղիվարդայ, աուն բնակութեան կուսակրօնից գնա հաստատէն, ի փրկութիւն հոգւոյ իւրոյ»: Մենաստանը կամ բնակարանները քայքայած են այժմ և քիչ բան կը մնայ քարեայ շինուածքէն՝ եկեղեցւոյն արեւմտեան հարաւային կողմը: Իսկ արդարեւ պայծառապաճոյճ բուռելու արժանաւոր և եկեղեցին, բայց ի կործանած գմբէթէն, զեռ կանգուն է տասուերկու գարեթէ ի վեր: Արտաքին ձեւը բոլորովն ութանկիւնի է, իսկ ներսը կան ութը կիսաբոլորակներ, որոնք առանց սեան վեր կը բռնէին զմբէթը: Շինութեան արձանագրութիւն չերեւիր, բայց վերջիններէն գրուած կայ 1191 թուականաւ նաւ նուիրատուութեան յիշատակարան մը: Եկեղեցիէն գրեթէ քարընկէց մը հեռու հիւսիսային կողմն է գերեզմանատունը, որ կայ մատրանանման սրացած շիրիմ: Նուիրատուաց ուրիշ արձանագրութիւններու մէջ Ս. Զօրավար կը կոչուի եկեղեցիս, իսկ յիշատակարանաց մէջ՝ Ս. Թեոդորոս. ինչպէս Մաշտոց կաթողիկոսի վարուց մէջ, գրուած անոր Ստեփանոս աշակերտէն 894 թուին, թէ նա էր «ի ժառանգաւորաց մենաստանին՝ որ անուամբ սրբոյն Թեոդորոսի



էր. և ի զօրանալ բռնակալութեան Տաճկաց ի վերայ գաւառին (որուն մէջ էր Էղիվարդ), ելեալ հայր նորա ի տիւ մանկութեան և գնաց բնակեցաւ պանդխտութեամբ ի գաւառին Սողից», և այլն: Գրոց նորագոյն յիշատակարան մը՝ 1427ին գրուած, բնագրին համար կ'ըսէ թէ գրուած է 1197ին «Ի սուրբ ուխտն Էղիվարդու, ի դուռն սուրբ եկեղեցոյն թէպօրոսի»: Այս մենաստանն ևս նորոգեցին մեզ նախածանօթ Աղիզբէկը և իւր կինը, որոնք Էղիվարդ աւանը գաւառով և տեսնելով ամենայն ինչ կործանուած, շատ նեղութիւններով «... բազում և յուով աշխատութեամբ, ծառայութիւն կատարելով մեծափառ տերանց իւրեանց Ծահլինշահի և Խուանդալային... և ամենայն զխօք հաստատեցին զմեծ մենաստանս Էղիվարդ, շինեալ զամենայն քանդեալս»: — Մեզ յայտնի չեն թէ ինչ գէպքեր հանդիպեցան Էղիվարդայ կրկին վանքերուն, որոնք եղած են առաջնորդներ և սրշափ ժամանակ շէն մնացին՝ անթիւ ասպատակաց և պատերազմներու երեսն, որոնք մղուեցան Էղիվարդայ ընդարձակ դաշտի վրայ: Ինչպէս վերոյիշեալ Պարսից և Յունաց մարտէն հազար տարի վերջը, Հոս իրարու հետ զարնուեցան Ծահարատի օրով Պարսիկները և թուրքերը: Վերջինքս խմանալով որ Էրեսանայ խանը թահմազ Դուլի Ամիրգունայ որդին գացած էր վրաստանի վրայ, ասպատակելով Շիրակ, Նիզ և Կոտայք գաւառները, եկան Էղիվարդ գիւղը և ամբողջ շրջապատեցին. իսկ զիւզացիք քարերով պատերազմեցան, և քարերը սպառելով Օսմանցիք զիւրութեամբ տիրեցին, կոտորեցին երեսուն հոգի և մնացածները գերի առին, «ըմբռնեցին ևս այր մի Ծաւաուր անուն, և կապեցին զձեռս յետս, և ձաղէին զնա ցուցանել զինչս, քանզի աւագ էր գեղջն, և նա ցանցեալ և խղեաց զկապն, և յերդոցն անկաւ ի տուն մի, և հնարիւք ելեալ յառաստաղս, և ստամբ և ձեռք ըմբռնեալ զգերանն և եկաց ի կախ, և Օսմանցիք մտին ի տունն, որոնեցին և ոչ գտին. ելին արաքս և գնացին փախտեայ. քանզի լուան թէ թահմազ խանն զարձեալ է ի վրաց աշխարհէն և գայ»: Որ եղած վնասները տեսնելով սաստիկ բարկացած

զօրք ժողովեց նաև հրացանակիր Հայերէն և Էղիվարդեցիներէն, և մանկով Օսմանցուց սահմանը մինչև Կարս քշեց: Այս պատերազմի գէպքերն գրած է Չաքարիա պատմիչ, լսելով ականատես Յակոբ անուն միայնակեցէ մը: — Գետ աւելի նշանաւոր արիւնահեղ պատերազմներ անգի ունեցան այս կողմերս դար մը վերջը, Նաաիր Ծահլի օրով: Այս պատերազմներէն վերջնոյն և զըլխաւորին ականատես եղած է Աբրահամ կաթողիկոս թրակացին: Թահմազ խանը յազմող հանդիսացած է այս պատերազմի մէջ, և Մուպարէք րեփե կոչուած բլրոյն վրայ շինել տուած է Աբրահամ կաթողիկոսի բրկաձև յիշատակարան մը, որ այժմ կործանած և աւերակ զարձած է: Էղիվարդայ մօտ է Մուրատ րեփե կոչուած մեծ բլուրն, որ վերջին պատերազմիս զլխաւոր հանդիսավայրն եղած է: — Այսպէս, 196-201: Եւ այլն:

ԵՂՆԱԿ կամ ԵՂՏՈՒՆ. — Ի հնումն հայրնակ և այժմ Յունաց գիւղ Լօսի (Գուգարք) գաւառի մէջ: Հոս խաչ մը կանդնած է Գրիգոր Ամիրայ Մամիկոնեանց, որ պատուանդանէն խանարհած է: Հոս պահուեցաւ երբեմն երբեմն Սանահնի վանաց Քեօրիկ կոչուած կալուածագիրք:

ԵՂ-ՄՈՒԿ. — Գիւղ Տիգրանակերտի Բէշար գաւառի. 4 տուն հայ կայ:

ԵՂՆԱՔԵՐ Ս. ԱՍՏՈՒԱՆԱՅԻՆ. — Բարձր Հայոց Եկեղեցաց (Էրզնկա) գաւառի աւերակ վանքերէն մին:

ԵՂՆԱԽԱՂ. — Կը յիշուի Գուգարաց Չորփոր գաւառի մէջ:

ԵՂՆԱՉՈՐ. — Մոկաց աշխարհի Շատակ գաւառի մէջ, որուն միջէն հոսող վտակն օժանդակ է Տիգրիսի:

ԵՂՆԱՍԱՐ ԱՆԱՊԱՏ կամ ՎԱՆՔ. — Արցախի Գարդման գաւառի մէջ. հիմնուած է Գեառաշէն աւանի հարաւային կողմի լեռնաբազկի սարահարթի վրայ՝ Էղիշէ ասաքեղոյն անտամբ: Եկեղեցին կառուցուած է երկու սիւներու վրայ, ամբողջ սրբատաշ քարով, երկայնութիւնն է 12, 43 մետր և լայնութիւնը 10, 33 մետր: Գրան հարաւային սեմի վրայ կայ ՌՃՂԷ թուականաւ կիսեղծ արձանագրութիւն: 1311 թուականաւ ար-



ձանապուղիներն կայ նաև հիւսիսային սեմի վրայ: Կ'երեւի թէ վանքս երբեմն երբեմն նորոգուած է: Ունեցած է շրջապարիսպ և գեղեցիկ սենեակներ, սրահովէ աշտմ եօթն կանդուն և եօթն կիտակործան են: Կոյնպէս կործանուած են շրջապարսպի արեւելեան և արեւմտեան պատերը և վանքի հիւսիսային որմի արտաքին երեսը:— Արցախ, 265—266:

ԵՂՆՔԱՐ. — Սինեաց Ծղուկ գաւառի մէջ այս անուամբ կոչուած են երեք սեւ բարեր: ԵՂՆՈՒՏ. Տես ԵՂԱՆՅ ԲԵՐՈՒ:

ԵՂՈՒԷՃԻՆ. — Սահաւարնակ գիւղ Սպարկերտի (Մոկր):

ԵՂՈՒՆԳ. — Յիշատակարանի մը մէջ կը յիշուի այս անուամբ գիւղ յԱղուան չայոց:

ԵՂՁԵՐՈՒԱԳՈՄ. — Գիւղ Արցախի Զարգաւորի մէջ: Աշտմ թէև ալլազգարնակ է, բայց ունի հայկական եկեղեցոյ և հանդիսարանի ձեւորումներ:

ԵՂՁԵՐՈՒԻ ԽՈՒ ԿՈՒՄ ԵՂՁԻՐԻՈՒ. — Լեւ Սինեաց Աղահէճք գաւառի:

ԵՂՁԵՐՈՒԵՆԻՔ. Տես ՍՈՒՊ:

ԵՂՁԵՐՔ. — Հին անուամբ ծանօթ ընտանիքարատայ կողմից գաւառի. այսպէս կոչուած է անշուշտ եղջերածե ցցուած ժայռերուն համար, ինչպէս կը տեսնուի նաև աշխարհացոյց տախտակաց վրայ: Պատմութիւնը կը յայտնէ թէ Մերութան Արծրունին ուղեւոր կողմէն Բագրեւանդ երթալ՝ ձանապարհը կը հարցնէր. « և ուղեորացն տեսալ պատասխանի ասացին (ձագրածութեամբ), ձանապարհ ընդ Եղջերս է. և մեծապէս խորեաց Մերութանն ընդ միտս իւր... տայր հրաման չարաչար քաշել զուղեւորն և ծեծել, և ինքն անցեալ ընդ ուղին՝ իջանէր... » և այլն:

ԵՂՁԻՐԻՈՒՈՒ. Տես ԵՂՁԵՐՈՒԻ-ԽՈՒ:

ԵՂՏՈՒՆ. Տես ԵՂԻՏԱԿ:

ԵՂՐՈՒՍԻ ԿՈՒՄ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ. — Կը գտնուի Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւմտակողմը՝ 4 ժամ քաղաքէն հեռու: Վանքս կը կոչուի նաև Եղեգեի Ս. Յովնանէս և Շիշ խոյր վանք: Երբորդ պարէն ի վեր գոյութիւն ունեցած կը թուի և հիմնարկութիւնը աւանդութեամբ Ս. Թադէոս առաքելոյն կը տրուի, բայց խորհնացին Ս. Վրդանէսի կու տայ: Կառու-

ցուած է Մշոյ գաղափ արեւմտեան հարաւային կողմը Սիմ շերան վրայ՝ անաստախիտ տեղ մը, շրջապատեալ բերդանման պարսպով, ունի աննման դիւրը մը, գեղեցիկ և ակնապարար տեսարան, սքանչելի և առողջարար օդ ու ջուր. վանքէս գիտողի աչքի առաջ կը պարզուի Մշոյ բնագրծակ գաղափ իրբև կանաչ ծով մը՝ իւր պատմական և սրբատառոյ յիշատակներով: Ինճիճեան՝ մենատանին եկեղեցոյ խորանները երեք կը զնէ, մին Ս. Կարապետի անուամբ, ուր է սրբոյն ձախ թուր. միւս երկուքը նուիրուած են Ս. Աստուածածնի և Ս. Սահիանոսի: Հոն կը ցուցնեն նաև Յովսէփ արեւմտացոյն աջը, նարեկան աղնիւ իւղի շիշն, կենաց փայտի մաս մը և ուրիշ նշխարներ: Իսկ ակնատեսն Հ. Կերտէս Սարգսեան՝ երկու եկեղեցի կը զնէ, մին յորում պաշտօն կը կատարէին անշուք և մթին. իսկ միւս եկեղեցին Ս. Սահիանոս՝ որմնակից առաջնոյն՝ վայելուչ ճարտարապետութեամբ շինուած է և ունի դմբէթ: Վանքիս եկեղեցոյն կաթուղիէն ծածկող կապարը, վերուցեր է Ալատտին պէշն: Մենատանին միւս բոլոր շինուածքները սենեակները ու անձուկ սրահները բոլորովին անշուք են ու մթին: Վանքիս պարսպի մօտ կայ փոքրիկ մատուռ մը, որուն մօտը եղբորտախ ծառ մը գտնուելուն պատճառաւ Եղբորտախ վանք անունն ստացած է. հոս կայ նաև պատուական սառըոյ աղբիւր մը: Սուրբ իւզոյն պատմութեան մէջ մանրամասն գրուած է նաև վանաց հիմնարկութեան վրայ: Վանքիս աշտման վիճակը աննախանձելի է, մէկ կամ երկու վարդապետ միարաններ ու քանի մը հասաշխարհական սպասաւորներ միայն կը զբաղուին: Պարիսպն և եկեղեցոյ պատերը երկրաշարժէ ճեղքատուած են: Ռեխտաւորաց ժամանակն է վարդապետի, Աստուածածնի և Խաչիկեացի տօնի օրերը. իւր թեմերն են՝ Սլիւսան, Խուրի, Խիան և Սասուն:

ԵՃԵՂԻ. Տես ՎԱՅՅՅ ԶՈՐ:

ԵՄԱՆՈՒ ԶՈՐ. — Կը յիշուի Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ:

ԵՄԽԱՆԱ. — Այսպէս եւս կը գրուի Սինեաց Կաթնաւան գաւառի Եւսիսանս գիւղի անունը:



ԵՅՍԻՔ. — Քաղաք Ռուսիոյ Քուպանի նա-  
հանգի Եկատերինսկաւ գաւառի, Ազախու  
ծովուն վրայ: Քաղաքին մէջ կան 25 հայ  
ընտանիք Ետիջեւանէն եկած, և ունին  
անշուք եկեղեցի մը՝ փարբիկ բակով:

ԵՆ-ԳԻՒՎ. — Չարսանձաղի մէջ կը գտնուի  
գիւղս, որ երբեմն հայաբնակ եղած է: Յե-  
տոյ ամանք գաղթած են և մէկ մասն բըր-  
գացած: Կը տեսնուին եկեղեցիներու աւե-  
րակներ:

ԵՆԿԻՃԷ. — Հայաբնակ գիւղ Սիննայ  
վայոց ձոր գաւառի մէջ: Ունի 400 բնակիչ,  
բաժնուած 30 տան: Կը կարծուի ըլլալ հին  
Նորիք գիւղը:

ԵՆԿԻՁԱ. — Գիւղ Արցախի  
վարանդա գաւառի. հիմնուած է Նինկի գիւ-  
ղէն բաւական վար: Բնակիչք 30 տան  
ամբողջ հայ են և եկած են Նինկի գիւղէն.  
ունին նարաշէն եկեղեցի:

ԵՈՒՄՈՒԹԱՆԸԳ (Չուսնոց). — Գիւղ ծո-  
վային Կիլիկիոյ, Այասի արևմտակողմը.  
ունի անուղի հանք:

ԵՈՒՎԱ. — Գիւղ Այրարատայ Ռոտան  
գաւառի, Քէմէրլու գիւղերու արևելեան  
կողմը, արքունի ճանապարհի վրայ: Ունի  
1710 բնակիչ, բաժնուած 241 տան, սրնոց-  
մէ 1550 հոգի հայ են, բաժնուած 212  
տան և մնացեալք թաթար: Հայք ունին  
մեծ եկեղեցի մը, սորա կը շինեն մեծամեծ  
կարաններ: Հ. Ալիշան՝ սա կը համարի  
Ովայոց գիւղը, որ երբեմն ի հնումն կոտայք  
գաւառի մէջ կը գրուէր, ոսկից էր Յովհան-  
նէս Ե կաթողիկոսը (832-853):

ԵՈՒՎԱՃԸԳ. Տես ՕՎԱՃԸԳ:

ԵՈՒԹՊԱՆ. — Լեւոնաբլուք Շիրակ գաւառի:

ԵՈՒՍՏ. Տես ԱՌԵՍ:

ԵՍԱՂՈՒՎ. Տես ԵՍՍԱՂՈՒՎ:

ԵՍԱՎԱՆՔ. — Հայանուն՝ բայց այժմ այ-  
լազգաբնակ գիւղ կարնոյ գաշաի. Սալաձոր  
և Բազկասիճ գիւղերու մէջտեղ:

ԵՍՐՈՆՔ. Տես ՅԵՍՐՈՆՔ:

ԵՍՂՈՒԻՏ կամ ԵՂՈՒՎԻՏ. — Ինճիճեան՝  
կը յիշէ գիւղս Համշինի վիճակին ծայրը,  
որուն բնակիչները կանխաւ հայ էին, բայց  
վերջը տաճկցիք են: Երկիրը բարերբ է:  
Այժմեան վիճակն անձանթթ: Գիւղին ա-  
նուամբ գետ մը կայ Համշինի մէջ:

ԵՏԵՅԻՔ. Տես ՍՈՂԻՔ:

ԵՏՈԹ. — Վախուշաէն յիշուած գիւղ Մանգ-  
լեացիսորի մէջ:

ԵՐ. — Լեւ Այրարատայ վանանոց գաւա-  
ռի Չարիշաա վիճակի մէջ. բարձր է 2400  
մետր:

ԵՐԱԶԳԱՒՈՐՔ. Տես ՇԵՐԱԿԱՒԱՆ:

ԵՐԱԶՄՈՅՆ ՄԵՀԵԱՆ. — Այրարատայ Ռո-  
տան գաւառի մէջ այս անուամբ մեհեան մը  
կար ի հնումն Արաաշէս Բէն կառուցուած,  
Արաաշաա բազարէն գորս, որուն մէջ  
կանգնած էր Ապոզոնի պատակերը:

ԵՐԱՄՕՆԱ. Տես ԱՐԱՄՈՒՍ:

ԵՐԱՆԳԱՆԻ. — Փորբիկ գիւղս կը յիշէ  
Թովմա Արժրունի տանոց գաւառն յայանե-  
լու. բայց հասանախան է որ կը գտնուէր  
Վասպուրականի մէջ. «Էս երթեալ հասանէր  
(Պարզէն) ի զեօղակ մի Էրանգաւնի անուն,  
առ մանագն մի որ էր երէց վանիցն»:

ԵՐԱՆՈՍ. — Գիւղ Այրարատայ Բագրե-  
անոց գաւառի Գարա Քիլիսէի վիճակի մէջ,  
Պաշի գետակի ձախ ափին վրայ: Ունի 15  
տան հայ և 10 քուրդ բնակիչներ: Հայք  
ունին նորաշէն Ս. Յակոբ անուամբ եկեղե-  
ցի մը, զոր մեծ աշխատանքով շինած է նո-  
րաբնակ Սասունցի Շիրին Ավայի կրպոյ սը-  
ղան: Կաշուածներու մեծ մասը Հայոց կը  
պատկանի. շատ ջրատ վայր մը լինելուն՝  
շուրջը զարգարուած են բազմաթիւ ուսնի-  
ներով: Բնակիչք հոգադործ են:

ԵՐԱՆՈՍ կամ ՉԱԳ. — Գիւղ Սիննայ  
Գեղարքունի գաւառի մէջ: Ունի Ս. Աստուա-  
ծածնի նախրուած եկեղեցի մը. բեմի վրայ  
յարեարցուցած են երկու հասարակ խաչքա-  
րեր, սրնոց միոյն վրայ կայ 1215 թուակա-  
նաւ արձանագրութիւն: Գիւղին բնակիչք են՝  
1470 հոգի հայ, բաժնուած 116 տան: —  
Երանոս գիւղի գաշաի հիւսիսային ծայրը  
կայ Ղուռո: Խարապո (Յամար աւերակ) ա-  
նուամբ գիւղատեղի, որուն աւերակ եկեղե-  
ցոյն շուրջը գտնուող խաչքարի մը վրայ կայ  
1595 թուականաւ արձանագրութիւն: Նոյն  
տեղը կան նաեւ սրիշ գերեզմանաբարեր ՔԶ  
գարու վերաբերեալ արձանագրութիւններով:  
Եկեղեցոյն մէջ կանգնած նրբաբանոցակ  
խաչքար մը ունի 1337 թուականր: Այս  
Յամար աւերակ կոչուած գիւղատեղը ծով-